

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔ

ՊԵՏԱԳՐԻՔԻ ՓՐԵՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԵՐԵՎԱՆ - 2012

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Իրավագիտության ֆակուլտետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

5-րդ լրամշակված իրատարակություն

Երաշխավորվել է ՀՀ կրթության և գիտության
նախարարության կողմից որպես դասագիրք
իրավաբանական բուհերի համար

Պատասխանատու խմբագիր՝ իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ն. Ա. Այվազյան**

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

ՀՏԳ 342 (479.25) (075.8)
 ԳՄԴ 67.99(2Հ)01 ց73
 Հ 247

Դասագրքի հեղինակներ՝

Այվազյան Ն.Ա. , իրավ. գիտ. դոկ., պրոֆ.	Նախաբան, գլխ. 1 §7, գլխ. 3, 5, 9, 14, 15, 16, 18, 21
Այվազյան Վ.Ն. , իրավ. գիտ. թեկ., դոց.	գլխ. 10, 11, 12, 13
Դանիելյան Գ.Բ. , իրավ. գիտ. դոկ.	գլխ. 4, 6, 23
Եղյան Ռ.Հ. , իրավ. գիտ. թեկ., դոց.	գլխ. 19, 22
Հարությունյան Գ.Գ. , իրավ. գիտ. դոկ., պրոֆ.	գլխ. 7, 24
Հարությունյան Ա.Շ. , իրավ. գիտ. դոկ., պրոֆ.	գլխ. 1, 2, 20, 25
Հովհաննիսյան Վ.Հ. , իրավ. գիտ. թեկ., դոց.	գլխ. 9 § 5, գլխ. 13 § 4, գլխ. 15 § 9
Մուրադյան Ս.Վ. , իրավ. գիտ. թեկ., դոց.	գլխ. 17
Ստեփանյան Վ.Վ. , իրավ. գիտ. դոկ., պրոֆ.	գլխ. 8


Հ 247 **Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք/Վ.**

Այվազյան և ուրիշներ՝ Երևանի պետ. համալս. – Երվ.: Երևանի պետական համալս. հրատ., 2012, 736 էջ:

Դասագրքում համակարգված և ամբողջական տեսքով շարադրված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի դասընթացը: Հեղինակների համար երկնադրյալ է համարվել այն գաղափարը, որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է սահմանադրական պետություն և քաղաքացիական հասարակություն կառուցելու սկզբնական փուլում և նոր է ձևավորվում նրա սահմանադրական իրավունքը: Այդ առումով դասընթացը շարադրելիս հեղինակային խումբը փորձել է ներկայացնել Հայաստանի անկախությունից հետո երկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում կատարված փոփոխությունների հետևանքով նոր ազգային պետականության կազմավորման և զարգացման առանձնահատկությունները, Սահմանադրությամբ ամրագրված նրա ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման գործընթացը, հայրենական և համաշխարհային սահմանադրական շինարարության առաջավոր փորձի ազդեցությունն այդ գործընթացի վրա:

Դասագրքում անհրաժեշտ խորությամբ տեսական վերլուծության են ենթարկվել գործող սահմանադրության բոլոր դրույթները և այն օրենքներն ու ենթօրենսդրական ակտերը, որոնք առնչվում են Սահմանադրական իրավունքի ճյուղի առարկային:

Նախատեսված է իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողության, ասպիրանտների, դասախոսների, ինչպես նաև պատգամավորների, պետական իշխանության մարմինների պաշտոնատար անձանց և մասնագետների համար:



Դասագրքը հրատարակվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ:
 Դասագրքի մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանությունները ու եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի տեսակետներին:

ISBN 978-5-8084-1576-8

ISBN 978-92-9235-895-2

ՀՏԳ 342 (479.25) (075.8)
 ԳՄԴ 67.99(2Հ)01 ց73

© Հեղինակային խումբ, 2012

© ԵՊՀ հրատ., 2012

ԵԱՀԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	11
ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾՅՈՒՂ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ.....	15
ԳԼՈՒԽ 1.	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾՅՈՒՂԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ.....	15
§ 1. Սահմանադրական իրավունքի հասկացությունը.....	15
§ 2. Սահմանադրական իրավունքի առարկան և մեթոդը.....	17
§ 3. Սահմանադրաիրավական նորմերը և իմաստաբանությունները.....	21
§ 4. Սահմանադրաիրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները.....	26
§ 5. Սահմանադրական իրավունքի աղբյուրները.....	30
§ 6. Սահմանադրական իրավունքի համակարգը.....	34
§ 7. Սահմանադրաիրավական պատասխանատվությունը.....	38
§ 8. Սահմանադրական իրավունքի տեղը Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգում.....	41
§ 9. Սահմանադրական իրավունքի զարգացման հիմնական միտումները.....	42
ԳԼՈՒԽ 2.	
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ.....	46
§ 1. Սահմանադրական իրավունքի գիտության առարկան, համակարգը և աղբյուրները.....	46
§ 2. Սահմանադրական իրավունքի գիտության մեթոդները.....	50
§ 3. Հայաստանի սահմանադրական իրավունքի գիտության զարգացումը արդի փուլում.....	52
§ 4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի ուսումնական դասընթացը.....	54
ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.....	56
ԳԼՈՒԽ 3.	
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.....	56
§ 1. Սահմանադրության հասկացությունը և բնորոշ գծերը.....	56
§ 2. Սահմանադրության հատուկ իրավաբանական բնույթը.....	61
§ 3. Սահմանադրության էությունը.....	69

✓ § 4. Սահմանադրության տեսակները և ձևերը.....	77
✓ § 5. Սահմանադրության գործառնությունները (ֆունկցիաները).....	91
§ 6. Սահմանադրության գործողությունը.....	95
✓ § 7. Սահմանադրության ընդունման և փոփոխման կարգը	98
ՔԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	
104	
ԳԼՈՒԽ 4.	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ	
104	
✓ § 1. Սահմանադրական կարգի հասկացությունը	104
§ 2. Սահմանադրական կարգի ինստիտուտի տեղը Հայաստանի սահմանադրական իրավունքում.....	109
ԳԼՈՒԽ 5.	
ՀԱՅՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	
120	
✓ § 1. Ինքնիշխան պետություն.....	121
✓ § 2. Ժողովրդավարական պետություն	125
✓ § 3. Սոցիալական պետություն	131
✓ § 4. Իրավական պետություն	135
✓ § 5. Աշխարհիկ պետություն	141
ԳԼՈՒԽ 6.	
ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	
146	
✓ § 1. Իշխանության պատկանելը ժողովրդին	146
✓ § 2. Ժողովրդաիշխանության իրացման ձևերը	149
✓ § 3. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը	156
ԳԼՈՒԽ 7.	
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	
162	
§ 1. Տնտեսական հարաբերությունների սահմանադրական հիմունքները	162
§ 2. Սոցիալական հարաբերությունների սահմանադրական հիմունքները	169

§ 3. Հոգևոր-մշակութային հարաբերությունների սահմանադրական հիմունքները	175
ԳԼՈՒԽ 8.	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	
182	
§ 1. Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի հասկացությունը և տարրերը	182
§ 2. Պետությունը հասարակության քաղաքական համակարգում ..	186
§ 3. Կուսակցությունները Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում	189
§ 4. Հասարակական միավորումները Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում	194
§ 5. Ձանգվածային լրատվության միջոցները.....	199
ՔԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ	
ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	
205	
ԳԼՈՒԽ 9.	
ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՅՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ	
205	
§ 1. Անձի իրավական կարգավիճակի հասկացությունը.....	205
§ 2. Մարդու և քաղաքացու իրավական վիճակի սկզբունքները.....	209
§ 3. Սահմանադրական իրավունքների, ազատությունների և պարտականությունների հասկացությունն ու բովանդակությունը...215	
§ 4. Օտարերկրացիների իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում.....	220
§ 5. Մարդու իրավունքների միջազգային իրավական հիմքերը	224
§ 6. Իրավունքների և ազատությունների սահմանափակումը.....	229
§ 7. Իրավունքների և ազատությունների դասակարգումը	234
ԳԼՈՒԽ 10.	
ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
237	
§1. Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների հիմք	237
§2. Կյանքի իրավունք	239
§3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք	242
§ 4. Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք.....	246
§ 5. Բնակարանի անձեռնմխելիության իրավունք	250
§ 6. Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք.....	253
§ 7. Խղճի և հավատքի (կրոնի) ազատության իրավունք.....	255

§ 8. Մտքի և խոսքի ազատության իրավունք	260
ԳԼՈՒԽ 11.	
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	264
§ 1. Միավորվելու իրավունք.....	264
§ 2. Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք	267
§ 3. Տեղեկատվության ազատության իրավունք	273
§ 4. Պետության կառավարմանը մասնակցելու իրավունք	277
ԳԼՈՒԽ 12.	
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	285
§ 1. Մասնավոր սեփականության իրավունք	286
§ 2. Աշխատանքի ընտրության ազատություն	292
§ 3. Ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու իրավունք ..	296
§ 4. Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք	298
§ 5. Բավարար կենսամակարդակի, կենսապայմանների բարելավման և բնակարանի իրավունք	302
§ 6. Ամուսնության և ընտանիք կազմելու իրավունք: Մայրության և մանկության պաշտպանությունը	304
§ 7. Սոցիալական ապահովության իրավունք	309
§ 8. Առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունք	314
§ 9. Կրթության իրավունք	319
§ 10. Ստեղծագործության ազատության իրավունք	323
§ 11. Մշակութային կյանքին մասնակցելու իրավունք	327
ԳԼՈՒԽ 13.	
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ	329
§ 1. Իրավունքների և ազատությունների երաշխիքների հասկացությունը և բովանդակությունը	329
§ 2. Իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետության պարտականությունն է	331
§ 3. Իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը	337
§ 4. Իրավունքների և ազատությունների միջազգային իրավական պաշտպանությունը	343
§ 5. Իրավունքների և ազատությունների ինքնապաշտպանությունը	347

§ 6. Իրավաբանական օգնության և պաշտպան ունենալու իրավունքը	349
§ 7. Անմեղության կանխավարկածը	351
§ 8. Օրենքի հետադարձ ուժի արգելումը	353
ԳԼՈՒԽ 14.	
ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ	
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	355
§ 1. Սահմանադրական պարտականությունների հասկացությունը և հիմնական գծերը	355
§ 2. Սահմանադրության և օրենքների պահպանումը	357
§ 3. Հայրենիքի պաշտպանությունը	360
§ 4. Այլ պարտականություններ	363
ԳԼՈՒԽ 15.	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ	368
§ 1. Քաղաքացիության հասկացությունը	368
§ 2. ՀՀ քաղաքացիության սկզբունքները	372
§ 3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերը և կարգը	380
§ 4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցումը	385
§ 5. Երեխաների քաղաքացիության որոշման կարգը	387
§ 6. Քաղաքացիության վերաբերյալ գործերի լուծման կարգը	389
§ 7. Փախստականների իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում	392
§ 8. Քաղաքական ասպատանի իրավունքը	397
ԱՄԺԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ	
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	400
ԳԼՈՒԽ 16.	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ	400
§ 1. Հայաստանի Հանրապետության տարածքը	400
§ 2. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն	402
§ 3. Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները	404
§ 4. Հայաստանի Հանրապետության մաքսային, դրամական և հարկային համակարգերը	416

§ 5. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային միավորումներին.....	421
ԳԼՈՒԽ 17.	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԺԻՄԸ.....	423
§ 1. Կառավարման ձևի հասկացությունը և տեսակները.....	423
§ 2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառուցվածքը.....	430
§ 3. Հայաստանի Հանրապետության պետական ռեժիմը.....	433
§ 4. Հայաստանի Հանրապետության անկախացման իրավական հիմքերը.....	438
ՐԱԺԻՆ ՎԵՑԵՐՈՐԳ	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.....	445
ԳԼՈՒԽ 18.	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....	445
§ 1. Պետական իշխանությունը որպես սահմանադրական իրավունքի ինստիտուտ.....	445
§ 2. Պետական իշխանության մարմնի հասկացությունը.....	451
§ 3. Պետական մարմինների տեսակները և սահմանադրաիրավական առանձնահատկությունները.....	456
ԳԼՈՒԽ 19.	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....	464
§ 1. Ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկացությունը և հարաբերակցությունը.....	464
§ 2. Ընտրություններին ՀՀ քաղաքացիների մասնակցության սկզբունքները.....	468
§ 3. Ընտրական գործընթացի փուլերը.....	474
§ 4. Ընտրությունների մախապատրաստումը.....	475
§ 5. Զվեարկության կազմակերպումը և անցկացումը.....	506
§ 6. Զվեարկության արդյունքները որոշելու և դրանք հրապարակելու կարգը.....	512
§ 7. Երևան քաղաքի ավագանու ընտրությունը.....	520
ԳԼՈՒԽ 20.	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ.....	525
§ 1. Հայաստանի Հանրապետության Նախագահի իրավական կարգավիճակը պետական իշխանության մարմինների համակարգում.....	525

§ 2. Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրության և լիազորությունների դադարման հիմքերն ու կարգը.....	529
§ 3. Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունները.....	533
§ 4. Հայաստանի Հանրապետության Նախագահի ակտերը և աշխատակազմը.....	547
ԳԼՈՒԽ 21.	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ.....	550
§ 1. Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության պառլամենտն է, նրա ներկայացուցչական և օրենսդիր մարմինը.....	550
§ 2. Ազգային ժողովի կազմակերպման կարգը և կառուցվածքը.....	556
§ 3. Ազգային ժողովի պատգամավորը.....	564
§ 4. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները.....	582
§ 5. Ազգային ժողովի իրավասությունը.....	588
§ 6. Ազգային ժողովի աշխատանքների կազմակերպման ձևերը.....	607
§ 7. Օրենսդրական գործընթացը Ազգային ժողովում.....	614
§ 8. Ազգային ժողովի աշխատակազմը.....	620
ԳԼՈՒԽ 22.	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	625
§ 1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ՀՀ պետական մարմինների համակարգում.....	625
§ 2. Կառավարության կազմավորման կարգն ու կառուցվածքը.....	627
§ 3. ՀՀ կառավարության իրավասությունը.....	630
§ 4. ՀՀ կառավարության գործունեության կազմակերպումը.....	641
§ 5. ՀՀ կառավարության և վարչապետի ակտերը.....	646
§ 6. ՀՀ պետական կառավարման տարածքային կազմակերպումը.....	651
ԳԼՈՒԽ 23.	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.....	657
§ 1. Դատական իշխանության էությունը և սկզբունքները.....	657
§ 2. Դատական իշխանության մարմինների համակարգը, կազմակերպման և գործունեության կարգը.....	669
§ 3. Դատավորների սահմանադրաիրավական կարգավիճակը.....	679
§ 4. ՀՀ դատախազության կազմակերպման և իրավասության սահմանադրական հիմունքները.....	682

§ 5. Փաստաբանությունն ու դատական իշխանությանն աջակցող մյուս մարմինները..... 686

ԳԼՈՒԽ 24.

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 689

- § 1. Սահմանադրական արդարադատությունը սահմանադրական վերահսկողության համակարգում 689
- § 2. Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը, կազմավորման կարգն ու անկախության երաշխիքները 696
- § 3. Դատական սահմանադրական վերահսկողության ձևերը 703
- § 4. Սահմանադրական դատարանի լիազորություններն ու դրանց իրականացման առանձնահատկությունները 708
- § 5. Սահմանադրական դատավարության ընթացակարգն ու դրա առանձնահատկությունները 712
- § 6. Սահմանադրական դատարանի ակտերը..... 716

ԳԼՈՒԽ 25.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ..... 718

- § 1. Տեղական ինքնակառավարման հասկացությունը 718
- § 2. Տեղական ինքնակառավարման համակարգը..... 721
- § 3. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները 726
- § 4. Տեղական ինքնակառավարման երաշխիքները 730

ՆԱԽԱԲԱՆ

Բազում հարյուրամյակներ զրկված լինելով պետականությունից, հայ ժողովրդի կյանքը կարգավորվել է տիրապետողների կողմից քելադրված կանոններով, նրանց պետությունների կողմից սահմանված իրավական նորմերի միջոցով: Մոտ արդեն երկու տասնամյակ է, ինչ հայ ժողովուրդը ձեռք է բերել անկախություն և ձեռնամուխ եղել իր կյանքի կանոնները սահմանող իրավունքի համակարգի ձևավորմանը:

Սահմանադրական իրավունքը հանդիսանում է պետության իրավունքի համակարգի հիմքը, որը սահմանում է պետական իշխանության կազմակերպման հիմնական սկզբունքները: Այդ է պատճառը, որ տարբեր քաղաքական ուժերի պայքարն ընթանում է, ամենից առաջ, Սահմանադրության շուրջ, որը սահմանադրական իրավունքի հիմնական աղբյուրն է: Թափանցել այդ պայքարի բովանդակության մեջ, նշանակում է հասկանալ, թե որ ուժերն են երկիրն առաջնորդում առաջադիմության ուղիով և որ ուժերը՝ հետադիմության: Այս հանգամանքի հաշվառմամբ է, որ դասագրքի հեղինակային խումբը փորձել է հնարավորինս քննարկվող հիմնախնդիրները կապել Հանրապետությունում առկա քաղաքական իրողությունների հետ, առանց որի սահմանադրական իրավունքը կմատուցվեր որպես կյանքից կտրված և անշունչ մի իրավական երևույթ:

Սահմանադրական իրավունքը, որպես իրավունքի ճյուղ և ուսումնական դասընթաց, Հայաստանի Հանրապետությունում իր ձևավորման առաջին քայլերն է անում: Խորհրդային Միության կազմում մեր Հանրապետությունը (ինչպես նաև մյուս միութենական հանրապետությունները) չուներ իր ինքնուրույն իրավունքի համակարգը, բնականաբար՝ նաև իրավունքի ճյուղերը:

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում մինչև 1990-1991 ուս. տարին ներառյալ դասավանդվում էր «ԽՍՀՄ պետական իրավունք» դասընթացը: Հայաստանի անկախացումից հետո առաջին անգամ մեր կողմից կազմվեց «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» դասընթացի ծրագիրը և 1991-1992 ուս. տարում այդ ծրագրով դասընթացը մատուցվեց իրավագիտության ֆակուլտետի ուսանողությանը: Կարծում ենք, հարկ չկա ներկայացնելու այն դժվարությունները, որոնք կապված էին նոր դասընթացի դասավանդման հետ: Հրասպարակի վրա էին ընդամենը Հայաստանի անկախության մասին հոշակագիրը և մի քանի օրենքներ, որոնք, ըստ էության, այնքան էլ

չէին հեռացել խորհրդային իրավունքի համակարգից, իսկ Հայկական ԽՍՀ Սահմանադրությունը գրեթե չէր գործում: Բնականաբար, ուսումնական նյութը մատուցվում էր հիմնականում արտասահմանյան (առավելապես ռուսական) իրավաբանական գրականության առաջավոր գաղափարների և ժողովրդավարական բովանդակությամբ օրենսդրական նյութերի վերլուծության հիման վրա:

Հայաստանի Հանրապետության 1995 թ. Սահմանադրության ընդունումը հիմնարար նշանակություն ունեցավ Հանրապետության իրավունքի համակարգի ստեղծման համար՝ ընդհանրապես, և սահմանադրական իրավունքի ձևավորման համար՝ մասնավորապես: Այն ամփոփեց նախորդ տարիներին Հանրապետությունում ծավալված պետական շինարարության փորձը և ամրագրեց պետական իշխանության կազմակերպման և ժողովրդաիշխանության իրականացման հիմնական սկզբունքները:

1996 թ. հրատարակվեց «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» դասընթացի նոր ծրագիրը, որը հաշվի էր առնում Սահմանադրության ընդունմանը նախորդած տարիներին Հանրապետության հասարակական և քաղաքական կյանքում կատարված տեղաշարժերը:

Սահմանադրության ընդունումից հետո ավելի ակտիվացավ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեությունը և անկախությանը հաջորդող տաս տարիների ընթացքում պետական և հասարակական կյանքի մի շարք հիմնական ոլորտների վերաբերյալ ընդունվեցին օրենքներ: Այդ ամենը հնարավորություն ընձեռեց ներկա հեղինակային խմբին ձեռնամուխ լինել «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» դասագրքի ստեղծմանը: Հեղինակային խումբը ելնում է այն իրողությունից, որ Հայաստանի Հանրապետությունում աստիճանաբար ձևավորվում է նոր սահմանադրական իրավունք, որի տեսական հիմքն են կազմում Սահմանադրությամբ ամրագրված ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական և աշխարհիկ պետության սկզբունքները:

Չունենալով նախկինում մշակված ազգային իրավունքի համակարգ և իրավական հարուստ ավանդույթներ (ժամանակակից իմաստով), Հայաստանի Հանրապետության ներկա սահմանադրական իրավունքը որոշ իմաստով ընդօրինակում է արտասահմանյան ժողովրդավարական կարգ ունեցող երկրների սահմանադրական շինարարության փորձը: Այդ առու-

նով դասագրքի հեղինակներն առանձին հիմնահարցերի շուրջ կատարում են համեմատական-իդեոլոգիական վերլուծություններ՝ ուսանողությանը ծանոթացնելով արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի տեսության մեջ ընդհանուր ճանաչում գտած առավել կարևոր գաղափարներին:

Դրա հետ մեկտեղ, դասագրքի հեղինակային խումբը մի շարք տեսական հարցերի հիմնավորման ժամանակ ելնում է մեր հանրապետությունում առկա անցումային շրջանին հատուկ իրողություններից: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձևավորման, մարդու իրավունքների և արժանապատվության գերակայության, իշխանությունը ժողովրդին պատկանելու, պետության իրավական, սոցիալական, ժողովրդավարական բնութագրությունների և Սահմանադրությամբ ամրագրված մի շարք այլ հիմնահարցերին: Դրանք աշխարհայացքային սկզբունքներ են, որոնց կենսագործումը պահանջում է ժամանակ և համապատասխան իրավագիտակցության ձևավորում: Այլ խոսքով, դրանք ավելի շատ նպատակներ են, քան մեր օրերում առկա իրողություններ:

Դասագրքի առաջին հրատարակությունն իրականացվեց 2000 թ., երկրորդ հրատարակությունը՝ 2003թ., իսկ երրորդ լրամշակված հրատարակությունը՝ 2005թ.:

2005թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեով ընդունված «Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին» օրենքով ՀՀ Հիմնական օրենքի բոլոր բաժիններում կատարվեցին էական փոփոխություններ: Մասնավորապես՝ նորովի արժևորվեցին մարդու իրավունքները և ազատությունները, էապես վերանայվեցին պետական իշխանության մարմինների իրավական վիճակի և փոխհարաբերությունների հիմնախնդիրները, ընդլայնվեցին սահմանադրական արդարադատության ոլորտները և դիմող սուբյեկտների շրջանակը: Դրանց հիման վրա Հանրապետության պետական իշխանության օրենսդիր մարմնի և ենթաօրենսդրական գործունեություն իրականացնող իշխանության մյուս մարմինների կողմից ընդունվեցին բազմաթիվ իրավական ակտեր, որոնք կարգավորում են ինչպես նոր հասարակական հարաբերություններ, այնպես էլ վերանայում են նախկինում գործողները: Նկատի առնելով այդ հանգամանքը, հեղինակային խումբը ձեռնամուխ եղավ դասագրքի նոր լրամշակված 4-րդ հրատարակության աշխատանքներին, որն ավարտվեց 2008 թ.:

Դասագրքի չորրորդ հրատարակությունից անցել է պատկանելի ժամանակ, որի ընթացքում ընդունվել է նոր ընտրական օրենսգիրք, էական փոփոխություն է կրել Ազգային ժողովի կանոնակարգը, Սահմանադրական իրավունքի առարկային առնչվող բազմաթիվ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում կատարվել են յուրջ փոփոխություններ, ինչը հեղինակային խմբին ստիպեցին ձեռնամուխ լինել դասագրքի նոր՝ հինգերորդ լրամշակված հրատարակության պատրաստմանը: Այն ինչպես ուսանողությանն, այնպես էլ ՀՀ սահմանադրական իրավունքի հիմնախնդիրներով հետաքրքրվողներին կապահովի սահմանադրական իրավունքի կողմից կարգավորվող հիմնախնդիրների վերաբերյալ թարմ տեսական և օրենսդրական նյութերով:

Դասագրքում նորմատիվ իրավական ակտերն օգտագործվում են առ 2012թ. մարտի 1-ը դրանցում կատարված փոփոխություններով և լրացումներով:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃՅՈՒՂ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՃՅՈՒՂԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

§ 1. Սահմանադրական իրավունքի հասկացությունը

Սահմանադրական իրավունքը Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգի առաջատար ճյուղն է: Այն իրավական նորմերի համակցություն է, որը կոչված է պաշտպանելու մարդու իրավունքներն ու ազատությունները, և այդ նպատակով սահմանում է պետական իշխանության որոշակի համակարգ: Այդ նորմերը մարդկանց վարքագծի համապարտադիր կանոններ են, որոնց պահպանումն անհրաժեշտության դեպքում ապահովվում է պետական հարկադրանքի տարրեր ձևերի կիրառմամբ: Այդ նորմերը բնութագրվում են ներքին միասնությամբ, որոշակի ընդհանուր հատկանիշներով՝ պայմանավորված հասարակական այն հարաբերությունների առանձնահատկություններով, որոնց կարգավորմանը նպատակաուղղված են դրանք:

Սահմանադրական իրավունքը կարգավորում է հասարակական կյանքի առավել կարևոր և բարդ ոլորտները, այդ իսկ պատճառով իրավունքի համակարգում այն ձեռք է բերում առաջատար տեղ: Ըստ էության, սահմանադրական իրավունքից է սկսվում ազգային իրավունքի ողջ համակարգի, դրա բոլոր ճյուղերի ձևավորումը:

Սահմանադրական իրավունքն ավելի սերտ է կապված **քաղաքականության և քաղաքական համակարգի հետ**, քան իրավունքի որևէ այլ ճյուղ: Խնդիրն այն է, որ քաղաքական կուսակցություններում և հասարակական այլ միավորումներում ընդգրկված քաղաքացիներն ընտրություններին մասնակցելու միջոցով հանդես են գալիս որպես պետական իշխանության կազմակերպման գործընթացի մասնակիցներ, իսկ խորհրդարանում պատգամավորական տեղեր ստանալուց հետո՝ նաև որպես պետական իշխանության մարմինների գործունեության մասնակիցներ:

Պետական իշխանության կազմակերպման հիմնախնդիրները մշտապես գտնվում են սահմանադրական իրավունքի ուշադրության կենտրոնում, որը կանխորոշում է քաղաքականության ոլորտում «խաղի» յուրօրինակ կանոններ և պետական իշխանությունը ենթարկում ժողովրդի կամքին:

Սահմանադրական իրավունքը Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում քաղաքացիական հաշտության և համաձայնության համար: Այն լուրջ խնդիրներ ունի քաղաքական տարբեր ուժերի կողմից հանուն իշխանության մղված պայքարը քաղաքակիրթ վարքագծի շրջանակներում պարփակելու իմաստով: Այդ պատճառով դժվար է գերազանահատել սահմանադրական իրավունքի դերը, քանի որ մեր հասարակության կյանքում դեռևս լիարժեք կերպով չեն արմատավորվել քաղաքական մշակույթի և քաղաքական բարոյականության հանրաճանաչ նորմերը, անբավարար են գործում հասարակական կարծիքի ձևավորման և բացահայտման կառուցակարգերը:

«Սահմանադրական իրավունք» արտահայտության փոխարեն որոշ երկրներում օգտագործվում է **«պետական իրավունք»** արտահայտությունը: Նշված հասկացություններից մեկը կամ մյուսը օգտագործող երկրների իրավունքի համապատասխան ճյուղի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների շրջանակի հարցում չկան սկզբունքային տարբերություններ: Ավելի շուտ դրանց ընտրությունը թելադրվում է բառօգտագործման ազգային ավանդույթով: Այսպես, անգլոսաքսոնական և ռոմանական իրավական համակարգերն ավանդաբար օգտագործում են «սահմանադրական իրավունք», իսկ գերմանական համակարգը՝ «պետական իրավունք» արտահայտությունը: Մինչդեռ իրավաբանական գրականության մեջ կարելի է հանդիպել սահմանադրական և պետական իրավունքների տարբերության որոշ մեկնաբանությունների: Այսպես, սահմանադրական իրավունքի գերմանացի մասնագետ Կ. Հեսսենի կարծիքով, քանի որ սահմանադրությունը չի սահմանափակվում միայն պետության կառուցվածքի սահմանմամբ, այլ ներառում է նաև ոչ պետական կյանքի կառուցվածքի հիմքերը (ընտանիք, մշակույթ, սեփականություն և այլն), սահմանադրական իրավունքն ավելի ընդգրկում է, քան պետական իրավունքը, որն իր իմաստով և բովանդակությամբ վերաբերում է սոսկ պետության իրավունքին: Մյուս կողմից, սահմանադրական իրավունքը պետական իրավունքի համեմատ սահմանափակ է այն իմաստով, որ վերջինս ներառում է նաև վարչական և դատավարական իրավունքները¹:

Ներկայումս համեմատաբար մի ոչ մեծ խումբ երկրներում է միայն օգտագործվում «պետական իրավունք» արտահայտությունը, իսկ երկր-

ների մեծ մասում իրավունքի հիմնարար ճյուղն անվանվում է «սահմանադրական իրավունք»:

§ 2. Սահմանադրական իրավունքի առարկան և մեթոդը

Սահմանադրական իրավունքն ունի իր յուրահատուկ կարգավորման առարկան: **Իրավունքի ճյուղի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների ամբողջությունն** իրավագիտության մեջ ընդունված է անվանել նրա կարգավորման առարկան:

Սկսելով սահմանադրական իրավունքի ուսումնասիրությունը, առաջին հերթին պետք է իմանալ, թե որ հասարակական հարաբերություններն են կազմում դրա կարգավորման առարկան: Խնդիրն այն է, որ այդ հարաբերությունները բնութագրվում են էական առանձնահատկություններով: **Առաջին** կարևորության առանձնահատկությունն այն է, որ սահմանադրական իրավունքը կարգավորում է **հասարակական կենսազոր-ծունեության բոլոր ոլորտներում (քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր և այլն) ձևավորվող հասարակական հարաբերությունները**: Մինչդեռ իրավունքի մյուս ճյուղերը ներգործում են հասարակական հարաբերությունների ոլորտներից միայն որևէ մեկի վրա: Այսպես, աշխատանքային իրավունքի առարկան աշխատանքային հարաբերություններն են, ֆինանսական իրավունքինը՝ ֆինանսական հարաբերությունները, քաղաքացիական իրավունքինը՝ գույքային և դրանց հետ կապված ոչ գույքային հարաբերությունները, մտնիցիպալ իրավունքինը՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հետ կապված հարաբերությունները և այլն:

Սահմանադրական իրավունքի առարկայի **երկրորդ** առանձնահատկությունն այն է, որ սահմանադրական իրավունքի նորմերը կարգավորում են ոչ թե հասարակական կյանքում առկա բոլոր հարաբերությունները, այլ **միայն հիմնական հարաբերությունները**, այսինքն՝ այնպիսիք, որոնք կանխորոշում են համապատասխան ոլորտի բոլոր մնացած հարաբերությունների բովանդակությունը: Լրիվ ծավալով դրանց կարգավորման իրականացվում է իրավունքի այլ ճյուղերի կողմից: Այսպես, հասարակության **տնտեսական** կյանքի ոլորտում սահմանադրական իրավունքի առարկան են կազմում միայն այն հարաբերությունները, որոնք բնութագրում են տնտեսության կազմակերպման հիմնական սկզբունքները, սեփականության ձևերը: Իսկ լրիվ ծավալով տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորումը իրականացվում է քաղաքացիական, տնտեսական, ֆինանսական և իրավունքի մի շարք այլ ճյուղերի կողմից:

¹ Տե՛ս Կեսսե Կ. Основы конституционного права ФРГ. М., 1981, էջ 29:

Սահմանադրական իրավունքի առարկայի **երրորդ** առանձնահատկությունն այն է, որ հասարակության կյանքի առանձին ոլորտներում (օրինակ, ընտրական իրավունքի և ընտրական համակարգի, քաղաքացիության հարցերը և այլն) սահմանադրական իրավունքի առարկան կարող է ընդգրկել **հասարակական հարաբերությունների ամբողջ համալիրը**: Առաջին հերթին, դրանք այն հարաբերություններն են, որոնք կապված են պետության կառուցվածքի, պետական իշխանության, հասարակության քաղաքական ողջ համակարգի կազմակերպման հետ և հանդիսանում են բոլոր մյուս հասարակական հարաբերությունների ձևավորման հիմքը:

Այսպիսով, սահմանադրական իրավունքի **առարկան** կազմում են **այն հարաբերությունները, որոնք հասարակության կյանքի ոլորտներից յուրաքանչյուրում ունեն հիմնարար նշանակություն**:

Սահմանադրական իրավունքի առարկան ընդգրկում է հիմնական հասարակական հարաբերությունների երկու ծավալում ոլորտ.

ա) մարդու իրավունքների և ազատությունների պահպանումը (հարաբերություններ մարդու և պետության միջև).

բ) պետության և պետական իշխանության կառուցվածքը (իշխանական հարաբերություններ):

Մարդու և պետության փոխհարաբերությունները կարգավորվում են ոչ միայն սահմանադրական իրավունքի, այլև իրավունքի այլ ճյուղերի (վարչական, աշխատանքային և այլն) կողմից: Սակայն սահմանադրական իրավունքը, ինչպես արդեն նշվել է, ներառում է հիմնարար բնույթի նորմեր, որոնք կազմավորում են մարդու իրավական կարգավիճակը, նրա հիմնական իրավունքներն ու ազատությունները: Դրանք իրենց համակարգումն են ստացել Սահմանադրության 2-րդ գլխում:

Մարդու ազատության, որպես նրա բնական վիճակի, ճանաչման հետ կապված հարաբերությունների կարգավորումը բարդ գործընթաց է: Այն ենթադրում է այլ մարդկանց և պետության նկատմամբ անհատի ոչ միայն իրավունքների, այլև պարտականությունների ամրագրում: Ազատությունը չի կարող լինել բացարձակ, այն ենթակա է սահմանափակումների, որպեսզի կանխարգելվի դրա չարաշահումը: Բացի դրանից, սահմանադրական իրավունքը ոչ միայն հռչակում է մարդու իրավունքները, այլև ստեղծում դիմաց իրականացման իրավական երաշխիքներ, սահմանում այնպիսի պետություն, որը ստանձնում է մարդկանց բարօրության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու պարտականություն:

Նման պետության շրջանակներում աստիճանաբար ձևավորվում է **քաղաքացիական հասարակություն**, որտեղ պետության կարգավորիչ դե-

րը մղվում է երկրորդ պլան, որովհետև քաղաքացիական հասարակությանը հատուկ են **ինքնակազմակերպումը և ինքնակառավարումը**:

Ազատ մարդու իրավունքների իրականացման համար անհրաժեշտաբար ձևավորվում է որոշակի **հասարակական (սահմանադրական) կարգ**՝ տնտեսության կազմակերպում, քաղաքական համակարգ, սոցիալական հարաբերություններ և այլն: Ժողովրդավարական պետությունը կարող է ունենալ որոշակի սոցիալ-տնտեսական ուղղվածություն՝ կախված այն հանգամանքից, թե ազատ բնորոշությունների միջոցով ինչպիսի քաղաքական ուժեր են եկել իշխանության: Բայց ինչ ուժեր էլ որ դրանք լինեն, եթե խոսքը գնում է ժողովրդավարական պետության մասին, պետք է իրենց գործունեության և քաղաքականության մեջ ելնեն մարդու հիմնական և անօտարելի իրավունքներից ու ազատություններից, մարդու արժանապատվությունը որպես գեյուագույն արժեք ճանաչելու գաղափարից: Իսկ այդ ամենն ի սկզբանե կանխորոշում է այնպիսի **սահմանադրական կարգի հիմունքներ**, որոնք հիմնվում են համընդհանուր ժողովրդավարական սկզբունքների վրա՝ քաղաքական և գաղափարախոսական բազմակարծություն, իշխանությունների բաժանում, տեղական ինքնակառավարում, սոցիալական արդարություն, սեփականության ձևերի բազմազանություն և դրանց հավասար իրավական պաշտպանություն և այլն: Վերջապարտյալը ցույց է տալիս, որ **սահմանադրական կարգի հիմունքները նույնպես մտնում են մարդու և պետության փոխհարաբերությունների ոլորտի մեջ, ընդ որում, մարդու իրավունքների գերակայությամբ** և պետության պարտականությունների հստակ սահմանմամբ: Այս ոլորտի մեջ են մտնում նաև քաղաքացիության հետ կապված հարաբերությունները, քանզի քաղաքացիությունը մարդու և պետության միջև քաղաքական-իրավական կապն է, որը պայմանավորված է երկկողմանի իրավունքներով ու պարտականություններով: Նշված հարաբերությունները կարգավորող նորմերն իրենց ամրագրում են ստացել Սահմանադրության առաջին գլխում:

Ներկայիս անցումային ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում դեռևս չի ձևավորվել քաղաքացիական հասարակություն: Հանրապետության բնակչությունը դեռևս չի հասել ազատության ու կարգապահության փոխկապակցվածության ընկալման գիտակցության, ուստի դեռևս զգացվում է հասարակության նկատմամբ պետության կարգավորիչ դերի անհրաժեշտությունը: Սակայն, ժամանակի ընթացքում, երբ հակահասարակական բացասական երևույթները կհաղթահարվեն և երկրում կստեղծվի իրական քաղաքացիական հասարակություն, պետության կարգավորիչ դերն աստիճանաբար կնվազի և հասարակական կյանքի

մի շարք ոլորտներում իրավական կարգավորումն իր տեղը կզիջի ինքնակարգավորմանը և ազատ մարդկանց նախաձեռնությանը:

Սահմանադրական իրավունքի առարկան հանդիսացող **երկրորդ կարևոր ոլորտը** պետության և պետական իշխանության կառուցվածքին վերաբերող հարաբերություններն են:

Պետական իշխանության կառուցվածքը ենթադրում է ինչպես պետական իշխանության մարմինների համակարգի կազմակերպում, այնպես էլ դրանց միջև փոխհարաբերությունների լայն շրջանակի կանոնակարգում: Պետական իշխանության մարմինները, չնայած իրենց առջև ուղղված խնդիրների և լիազորությունների տարբերությանը, կազմում են մեկ միասնական ամբողջական համակարգ և գտնվում են մարդկանց ու նրանց շահերի հետ սերտ հարաբերությունների մեջ:

Սահմանադրական իրավունքը իշխանական-իրավական գործընթացների զարգացման ելակետ է հանդիսանում և կոչված է դառնալ պետական բոլոր մարմինների համակարգված-նպատակամղված փոխգործակցության հիմք: Մինչդեռ նման ներքին միասնության բացակայությունը կարող է խաթարել այդ մարմինների ներդաշնակ գործունեությունը, պետական կյանքում առաջացնել սահմանադրական ճգնաժամեր և քառսային վիճակ: Սահմանադրական իրավունքի այդ **համակարգակազմիկ գործառույթը** պահանջում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների, կարգավիճակի, նրանց կազմավորման կարգի, իրավասության, գործունեության ձևերի և այլնի հստակ սահմանադրական ամրագրում: Այդ խնդիրն իր լուծումն է ստացել Հանրապետության Սահմանադրության 3-7 գլուխներում, որտեղ ամրագրված են պետական իշխանության բոլոր թևերի և տեղական ինքնակառավարման մարմինների կարգավիճակը:

Իրավունքի այլ ճյուղերից սահմանադրական իրավունքի սահմանազատման հիմք է հանդիսանում նաև **իրավական կարգավորման մեթոդը**, այսինքն՝ հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործության եղանակների և հմարքների ամբողջությունը:

Հասարակական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման գերակայող ձևը **պարտավորեցման մեթոդն է**: Հենց այդ ձևով է հռչակվում սահմանադրական իրավունքի՝ իշխանության կազմակերպմանը վերաբերող նորմերի մեծամասնությունը: «Կառավարությունն իր կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը՝ ասված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 74 հոդվածում:

Դրա հետ մեկտեղ, սահմանադրական իրավունքում հաճախ կարելի է հանդիպել նաև **արգելող նորմերի**: Այսպես, Սահմանադրության համաձայն (հոդվ. 17)՝ մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, կամ կուսակցությունների գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին (հոդվ. 7) և այլն:

Սահմանադրական իրավունքին հաշտնի է նաև **բույլավության մեթոդը**, որը առավելապես կիրառվում է մարդու և քաղաքացու կարգավիճակն ամրագրելիս, այսինքն՝ նրանց իրավունքները և ազատությունները սահմանելիս: Ընդհանուր առմամբ, հասարակական հարաբերությունների կարգավորման սահմանադրաիրավական մեթոդը հենվում է առավելապես **իշխանական-երամայական սկզբունքների վրա**: Դա բացատրվում է այն հասարակական հարաբերությունների բնույթով, որոնք ենթակա են սահմանադրական իրավունքի նորմերի ներգործությանը: Իշխանական հարաբերությունները պայմանավորում են այդ նորմերի եթե ոչ մեծամասնության, սպա գոնե զգալի մասի բովանդակությունը:

§ 3. Սահմանադրաիրավական նորմերը և ինստիտուտները

Իրավունքի ճյուղի բնութագրումն անհնար է առանց այն կազմող նորմերի առանձնահատկությունների բացահայտման: Դիտարկելով սահմանադրաիրավական նորմերի հասկացությունը, առաջին հերթին անհրաժեշտ է նշել, որ դրանց ներհատուկ են և՛ **ընդհանուր հատկանիշներ**, ինչպես բոլոր իրավական նորմերին՝ անկախ դրանց ճյուղային պատկանելությունից, և՛ **առանձնահատկություններ**, որոնց շնորհիվ այդ նորմերն առանձնանում են որպես իրավունքի համակարգի ինքնուրույն մաս:

Սահմանադրաիրավական նորմերի յուրահատուկ գծերը հանդիսանում են իրավունքի այդ իսկ ճյուղի առարկայի արգասիքը: Իրավունքի այլ ճյուղերի նորմերից սահմանադրաիրավական նորմերը **տարբերվում են**.

1) **իրենց բովանդակությամբ**, որը պայմանավորված է հասարակական հարաբերությունների այն ոլորտով, որի կարգավորմանն են նպատակաուղղված այդ նորմերը,

2) **աղբյուրներով**, որոնցում այդ նորմերն ամրագրված են: Դրանցից (այդ նորմերից) առավել կարևորները բովանդակվում են հատուկ իրավական ակտում, որն իրավունքի ողջ համակարգում օժտված է իրավաբա-

նական բարձրագույն ուժով՝ **Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունում,**

3) **բովանդակած հանձնարարականների հիմնարար բնույթով:** Առաջնային են հենց սահմանադրաիրավական նորմերը, որոնք էլ սահմանում են բոլոր մյուս իրավական նորմերի ստեղծման համար համապարտադիր կարգը՝ կանխորոշում են իրավական հիմնական նորմատիվ ակտերի ձևերը, դրանց ընդունման և հրապարակման կարգը, իրավաստեղծ ոլորտում պետական մարմինների իրավասությունը, վերջիններիս կողմից ընդունված իրավական ակտերի անվանումները: Մահմանադրական իրավունքի նորմերը որոշում են նաև պետական մարմինների բուն համակարգը:

4) **սուբյեկտների յուրահատուկ կազմով,** որոնց միջև ծագող փոխհարաբերությունների կարգավորմանն են նպաստակառուղված տվյալ նորմերը: Նման հատուկ սուբյեկտներ կարելի է համարել ժողովուրդը, պետությունը, ազգերը, պետական իշխանության ներկայացուցչական (օրենսդիր) մարմինները, որոնք իրավունքի այլ ճյուղի իրավահարաբերության սուբյեկտ լինել չեն կարող:

5) **կառուցվածքի առանձնահատկությամբ:** Մահմանադրաիրավական նորմերի համար հատկանշական չէ իրավական նորմի կազմում առանձնացվող ավանդական եռանդամ կառուցվածքը՝ հիպոթեզ, դիսպոզիցիա, սանկցիա: Դիտարկվող նորմերում սովորաբար առկա են հիպոթեզը և դիսպոզիցիան, և, միայն առանձին դեպքերում՝ սանկցիան: Օրինակ կարող են ծառայել Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 21, 22, 43 և այլ հոդվածներում ամրագրված նորմերը:

6) **յուրահատուկ տեսակներով:** Մահմանադրաիրավական նորմերի մեջ զգալի թիվ են կազմում հասակարգավորիչ նորմերը: Դրանք են՝ **նորմատիվները, նորմ-խնդիրները, նորմ-սահմանումները:** Այդ նորմերը հավասարապես վերաբերում են բոլոր իրավակիրառող սուբյեկտներին, անկախ իրավահարաբերության տեսակից (քաղաքացիաիրավական, վարչաիրավական և այլն), որի մասնակիցներն են իրենք: Այդպիսի նորմեր են, օրինակ, Մահմանադրության 1, 2, 3, 5 և այլ հոդվածներում ամրագրված նորմերը:

Իրավունքի այլ ճյուղերի նորմերի համեմատ օժտված լինելով յուրահատկությամբ, սահմանադրաիրավական նորմերը ինքնին չափազանց բազմազան են: Ճիշտ կիրառելու համար անհրաժեշտ է քազմակողմանիորեն վերլուծել դրանք, բացահայտել այդ նորմերին ներհատուկ առանձնահատկությունները, տվյալ ճյուղի այլ նորմերի հետ ունեցած կապերը: Ահա թե ինչու է կարևորվում սահմանադրաիրավական նորմերի

դասակարգման խնդիրը: Դրանք ընդունված է դասակարգել ըստ հետևյալ հիմքերի:

ա) **ըստ բովանդակության,** այսինքն՝ ըստ կարգավորվող հասարակական հարաբերությունների շրջանակի: Որոշ նորմեր առնչվում են **սահմանադրական կարգի հիմունքներին,** մյուսները՝ **մարդու և քաղաքացու իրավական վիճակի հիմունքներին,** երրորդները կապված են **պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:** Նորմերի այդ խոշոր խմբավորումների ներսում իրենց հերթին առանձնանում են նորմերի փոխկապակցված առանձին խմբեր, որոնք կարգավորում են հարաբերական առումով միմյանց ճոտ հասարակական հարաբերություններ, ինչը արտացոլվում է **սահմանադրաիրավական ինստիտուտների** կառուցվածքում:

բ) **ըստ իրավաբանական ուժի:** Այս հիմքը անմիջականորեն կախված է նրանից, թե որ նորմատիվ իրավական ակտում է արտահայտված այս կամ այն նորմը, նորմատիվ ակտերի ընդհանուր համակարգում տվյալ տեսակի նորմատիվ իրավական ակտերն ինչ տեղ են զբաղեցնում: Առավել կարևոր ոլորտների և իրավական կարգավորման մակարդակի վերաբերյալ նորմերն ամրագրված են Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունում, որն օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով: Իրավական նորմերից և ոչ մեկը չի կարող հակասել Մահմանադրությանը: Մահմանադրաիրավական նորմեր բովանդակող այլ նորմատիվ իրավական ակտերի շարքում իրենց իրավաբանական ուժով հաջորդը՝ օրենքներն են: Մահմանադրության և օրենքների հիման վրա հրապարակվում են մյուս բոլոր նորմատիվ իրավական ակտերը:

գ) **ըստ գործողության տարածքի:** Ըստ այս հիմքի տարբերվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կամ այդ տարածքի մի մասում գործող նորմերը: Որպես ՀՀ ողջ տարածքում գործող նորմի օրինակ կարող է ծառայել 1995թ. նոյեմբերի 16-ի (2007թ. փետրվարի 26-ի փոփոխություններով և լրացումներով) օրենքը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին»: Իսկ ՀՀ տարածքի մի մասում գործող նորմի օրինակ կարող է ծառայել որևէ համայնքի ավագանու որոշումը, որն իրավաբանական ուժ ունի միայն տվյալ համայնքի տարածքում:

դ) **ըստ դրանում բովանդակված հանձնարարականի բնույթի:** Այս հիմքը բացահայտում է սահմանադրաիրավական նորմի կարգավորիչ ներգործության մեխանիզմը: Նորմերում բովանդակվող հանձնարարականները կարող են լինել տարբեր բնույթի՝ լիազորող, պարտավորեցնող և արգելող:

Հիագորոզ նորմերն ամրագրում են իրավահարաբերության սուբյեկտի՝ այդ նորմերով նախատեսված գործողություններ կատարելու իրավունքը, սահմանում նրա իրավասության շրջանակը: Այդպիսին են, օրինակ, բոլոր այն նորմերը, որոնք ամրագրում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2 գլուխ): Որպես լիազորող կարող են դիտարկվել նաև Սահմանադրությունում բովանդակվող նորմ-սկզբունքները, նորմ-նպատակները, նորմ-խնդիրները և այլն: Այդ նորմերը ամրագրում են համապատասխան հարաբերությունների բոլոր սուբյեկտների իրավասությունը՝ գործել ըստ դրանցում նախատեսված նպատակների: Օրինակ, Հանրապետության Հիմնական օրենքի 5 հոդվածը սահմանում է, որ պետական իշխանությունն իրականացվում է իշխանությունների բաժանման սկզբունքի հիման վրա:

Պարտավորեցնող նորմերն ամրագրում են իրավահարաբերության սուբյեկտների կոնկրետ պարտականությունները՝ տվյալ նորմերով նախատեսված որոշակի գործողություններ կատարելու, ինչպես նաև ընտրելու դրանց պահանջներին համապատասխանող վարքագիծ: Այդ խումբը ներառում է քաղաքացիների սահմանադրական պարտականությունները սահմանող, ինչպես նաև բոլոր այն նորմերը, որոնք բացառում են այդ նորմերով չնախատեսված վարքագծի ցանկացած տարբերակ: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55 հոդվածը (2-րդ կետ) Հանրապետության Նախագահին պարտավորեցնում է հնգօրյա ժամկետում ստորագրել և հրապարակել օրենքը, եթե Ազգային ժողովի կողմից վերստին քննարկվելու ընթացքում այն արժանացել է պատգամավորների ընդհանուր քվի մեծամասնության հավանությանը՝ նախկին խմբագրությամբ:

Արգելող նորմերն իրենց հանձնարարականներում բովանդակում են դրանցում նախատեսված որոշակի գործողություններ կատարելու արգելք: Նման դեպքերում, սովորաբար, Սահմանադրության մեջ օգտագործվում են հետևյալ ձևակերպումները. «արգելվում է», «չի թույլատրվում», «պարտավոր են», «իրավասու չեն» և այլն: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92 հոդվածը (3-րդ մաս) արգելում է արտակարգ դատարանների ստեղծումը.

ե) **ըստ բովանդակված հանձնարարականի որոշակիության աստիճանի**: Այս հիմքով տարբերվում են հրամայական (ինվերատիվ) և դիսպոզիտիվ նորմերը:

Հրամայական նորմերը միանշանակորեն որոշում են համապատասխան հանգամանքներում իրավահարաբերության սուբյեկտների

վարքագծի և գործողությունների միակ տարբերակը: Օրինակ, ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 69 հոդվածի (2-րդ մաս)՝ «Ազգային ժողովի նիստերը դռնբաց են: Դռնփակ նիստը կարող է գումարվել Ազգային ժողովի որոշմամբ »:

Դիսպոզիտիվ նորմերը նախատեսում են սուբյեկտի գործողության տարբերակի ընտրության հնարավորություն՝ հաշվի առնելով համապատասխան նորմում նշված պայմաններն ու հանգամանքները: Որպես օրինակ կարելի է բերել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 90 հոդվածը. «Բյուջեի հաստատման առնչությամբ կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը».

զ) **ըստ իրավական կարգավորման մեխանիզմում ունեցած նպատակաուղղվածության**: Ըստ այդ հիմքի ընդունված է տարբերել նյութական և ընթացակարգային նորմեր:

Եթե **նյութական նորմը** նախատեսում է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման վերաբերյալ գործողությունների բովանդակությունը, ապա **ընթակարգային նորմը** սահմանում է նյութական նորմի իրագործման ձևերը: Ընթացակարգային են այն նորմերը, որոնք նախատեսում են ներկայացուցչական մարմինների աշխատանքի, օրենքների և այլ ակտերի ընդունման կարգը և այլն: Որպես ընթացակարգային նորմերի հատուկ ժողովածու կարող է դիտվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգը: Ընթացակարգային շատ նորմեր են բովանդակվում Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների անցկացման վերաբերյալ օրենսդրական ակտերում:

Սահմանադրաիրավական նորմերի դասակարգման քննարկված հիմքերը սպառիչ չեն: Կախված իրավական նորմերի կիրառման ընթացքում հետապնդվող նպատակներից, կարող են օգտագործվել նաև այլ չափանիշներ, որոնք հնարավորություն են ընձեռում առավել խորությամբ ըմբռնել սահմանադրաիրավական նորմի կարգավորող ներգործության էությունը, դրա յուրահատկությունը, հարակից նորմերի հետ դրա հարաբերակցությունը:

Կարգավորման կոնկրետ նպատակի կամ ոլորտի որոշակի ընդհանրությամբ միավորված իրավական նորմերի համախումբը կազմում է իրավական ինստիտուտ: Նման ինստիտուտներ են, օրինակ, քաղաքացիների անձնական իրավունքներն ու ազատությունները, ընտրական իրավունքը, խորհրդարանը և այլն: «Իրավական ինստիտուտ» հասկացությունը չի կարող շատ հստակ լինել, քանի որ ինստիտուտների միջև

սահմանները պայմանական են և խիստ շարժունակ. միևնույն նորմը կարող է դիտարկվել որպես երկու և ավելի իրավական ինստիտուտների բաղկացուցիչ մաս:

Իրավական ինստիտուտ կազմող նորմերի միավորման գլխավոր չափանիշը՝ դրանցով *կարգավորվող հասարակական հարաբերությունների որոշակի համասեռության հատկանիշն է*, ինչը հանգեցնում է ինստիտուտի մեջ միավորված համապատասխան նորմերի անհրաժեշտ իրավական միասնության, դրանց համար ընդհանուր իրավական առանձնահատկության: Այդպիսիք են այն նորմերը, որոնք սահմանում են սահմանադրական կարգի հիմքերը, մարդու և քաղաքացու կարգավիճակի հիմունքները, ինչպես նաև նորմերի այլ համախմբերը, որոնք հանդես են գալիս որպես տվյալ ճյուղային համակարգի հիմնական բաղկացուցիչներ, տարրեր:

Իրավունքի տեսության մեջ արտահայտվում են կարծիքներ, որոնց համաձայն՝ ճյուղի կառուցվածքային ստորաբաժանումները կազմող նորմերի համախումբը միայն կարելի է ինստիտուտ անվանել:

Իրավական ինստիտուտում միավորվում են ամենատարբեր տեսակի նորմեր՝ հաշվի առնելով դրանց վերը շարադրված դասակարգումը: Դրա մեջ կարող են ընդգրկվել և՛ Հանրապետության Սահմանադրության նորմերը, և՛ ընթացիկ օրենսդրության նորմերը, այսինքն՝ իրավաբանական տարբեր ուժով օժտված նորմեր: Այն կարող է ներառել նորմեր, որոնք տարբերվում են իրենց գործողության տարածքով, իրավական հանձնարարականի որոշակիության աստիճանով և այլ հատկանիշներով:

Այս կամ այն իրավական ինստիտուտին նորմի պատկանելության որոշումն անհրաժեշտ է այն պատճառով, որ առանձին վերցրած յուրաքանչյուր նորմ միշտ չէ, որ դրսևորում է ամբողջական ինստիտուտին բնորոշ հատկություններ, իսկ վերջիններս անհրաժեշտ է հաշվի առնել, որպեսզի ճիշտ պարզաբանվի նորմի իրագործման կառուցակարգը:

§ 4. Սահմանադրաիրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները

Արդեն նշվեց, որ սահմանադրաիրավական նորմերի նպատակը սահմանադրական իրավունքի ճյուղի առարկան կազմող հասարակական հարաբերությունների կարգավորումն է: *Սահմանադրաիրավական նորմերի գործողության արդյունքում առաջանում են սահմանադրաիրավական հարաբերություններ*: Վերջիններս օժտված են ընդհանուր գծերով, որոնք ներհատուկ են բոլոր իրավահարաբերություններին՝ անկախ նրանից, թե իրավունքի որ ճյուղի նորմերով են կարգավորվում դրանք:

Իրավահարաբերությունների այլ տեսակների համեմատությամբ, սահմանադրաիրավական հարաբերությունների առանձնահատկությունը կայանում է հետևյալում.

1) սահմանադրաիրավական հարաբերություններն ունեն *իրենց սեփական բովանդակությունը*՝ առաջանում են հասարակական հարաբերությունների հատուկ ոլորտներում, որոնք կազմում են սահմանադրական իրավունքի կարգավորման առարկան,

2) սահմանադրաիրավական հարաբերությունների համար բնութագրական է *սուբյեկտների առանձնահատուկ կազմը*՝ այդ հարաբերությունների որոշ սուբյեկտներ չեն կարող լինել իրավահարաբերությունների այլ տեսակների մասնակիցներ: Այդ սուբյեկտներն են պետությունը՝ ամբողջովին վերցրած, ժողովուրդը և այլն,

3) սահմանադրաիրավական հարաբերությունները բնութագրվում են *մեծ քազմազանությամբ*, ինչը սուբյեկտների միջև ստեղծում է քազմաշերտ իրավաբանական կապեր, որոնք պայմանավորված են սահմանադրական իրավունքի կարգավորման առարկաների քազմազանությամբ:

Այսպիսով, *սահմանադրաիրավական հարաբերությունը հասարակական հարաբերություն է, որը կարգավորվում է սահմանադրական իրավունքի նորմով, և որի բովանդակությունը կազմում է սուբյեկտների միջև իրավաբանական կապը*՝ տվյալ իրավական նորմով նախատեսված փոխադարձ իրավունքների և պարտականությունների ձևով:

Սահմանադրական իրավունքի առարկայի յուրօրինակությունը, դրա նորմերի տեսակների քազմազանությունը իրենց հերթին առաջացնում են սահմանադրաիրավական հարաբերությունների տարբեր տեսակներ: Իրավահարաբերությունների առավել դասական տեսակն առաջանում է վարքագծի *նորմ-կանոնների* իրագործման արդյունքում: Դրանց հիման վրա ձևավորվում են կոնկրետ սահմանադրաիրավական հարաբերություններ, որոնցում հստակորեն սահմանված են սուբյեկտները և նրանց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները:

Նորմերի այնպիսի տեսակների իրագործումը, ինչպիսիք են *նորմ-սկզբունքները, նորմ-նպատակները, նորմ-հռչակագրերը* և այլն, առաջացնում են իրավահարաբերությունների այլ ձևեր, որոնց միջոցով կենսագործվում են նշված նորմերում ներառված հանձնարարականները: Դրանք *ընդհանուր բնույթի* իրավահարաբերություններ են, որոնցում *կոնկրետ սահմանված չեն հարաբերությունների սուբյեկտները*, որոշված չեն նրանց կոնկրետ իրավունքներն ու պարտականությունները: Ասվածն ամբողջությամբ վերաբերում է այն բոլոր նորմ-սկզբունքներին, որոնք ամրագրված են, օրինակ, Հայաստանի Հանրապետության սահմա-

նադրական կարգի հիմունքներում: Մասնավորապես, իշխանությունների բաժանման սկզբունքն իր կոնկրետ իրագործումն է գտնում իրավահարաբերությունների բարդ համակարգի միջոցով, իրավահարաբերություններ, որոնցում որպես սուբյեկտներ հանդես են գալիս օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինները:

Սահմանադրաիրավական հարաբերությունների հատուկ տեսակ է, այսպես կոչված, **իրավական փճակը**: Վերջինիս յուրօրինակությունը պայմանավորված է իրավահարաբերության սուբյեկտների հստակ որոշակիությամբ: Մակայն սուբյեկտների փոխադարձ իրավունքների և պարտականությունների բովանդակությունը, որպես կանոն, կոնկրետ սահմանված չէ, այն բխում է սահմանադրաիրավական գործող նորմերի մեծ զանգվածից: Սահմանադրաիրավական նման հարաբերության օրինակ է անձի քաղաքացիությունը:

Որպես սահմանադրաիրավական հարաբերությունների տեսակ կարելի է առանձնացնել **Մշտական և ժամանակավոր** իրավահարաբերությունները:

Մշտական իրավահարաբերությունների գործողության ժամկետը սահմանված չէ, սակայն դրանք կոնկրետ պայմաններում կարող են նաև դադարել գոյություն ունենալուց: Օրինակ, քաղաքացու մահը դադարեցնում է քաղաքացիության հետ կապված հարաբերությունները:

Ժամանակավոր իրավահարաբերությունները, որպես կանոն, առաջանում են կոնկրետ նորմերի՝ վարքագծի կանոնների, իրագործման արդյունքում: Դրանք նախատեսված պարտականության կատարումից հետո դադարում են գոյություն ունենալ: Այսպես, ընտրողի և տեղամասային ընտրական հանձնաժողովի միջև իրավահարաբերությունները դադարում են, երբ վերջինս կատարում է ընտրողին քվեաթերթիկ հանձնելու և քվեարկության համար սահմանված պայմաններն ապահովելու իր պարտականությունը:

Սահմանադրաիրավական հարաբերությունների առանձին տեսակներ են **նյութական և ընթացակարգային** իրավահարաբերությունները: **Առաջիններում** իրացվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, որոնք կազմում են իրավահարաբերության (իրավասահմանիչ հարաբերություն) բովանդակությունը, իսկ **ընթացակարգային** իրավահարաբերություններում՝ այն իրավունքներն ու պարտականությունները, որոնք կապված են իրավական նորմում բովանդակված հանձնարարականի պահպանման հետ, որով սահմանված են սուբյեկտների այս կամ այն պարտականությունները (իրավապահական հարաբերություններ): Օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8 հոդվածի 2-

րդ մասում բովանդակվող նորմի հիման վրա, որով երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու տնտեսական մրցակցությունը, առաջանում են իրավապահական սահմանադրաիրավական հարաբերություններ, իսկ այն նորմի հիման վրա, որն ամրագրում է Հայաստանում սեփականության իրավունքի ճանաչումը և պաշտպանությունը (հոդված 8, 1-ին մաս)՝ իրավասահմանիչ հարաբերություններ:

Իրավական նորմի հիման վրա սահմանադրաիրավական կոնկրետ հարաբերության առաջացմանը սովորաբար նախորդում է **իրավաբանական փաստը**: Հենց իրավաբանական փաստից է սկսվում իրավական նորմի իրացումը: Իրավաբանական փաստի շնորհիվ իրավունքի կոնկրետ սուբյեկտը դառնում է տվյալ իրավահարաբերության մասնակիցը և համապատասխան իրավունքներ ու պարտականություններ կրողը:

Իրավաբանական փաստը իրադարձություն կամ գործողություն է, որին հետևում է իրավահարաբերության առաջացումը, փոփոխությունը կամ դադարումը: Իրադարձությունը տեղի է ունենում սուբյեկտի կամքից անկախ, իսկ **գործողությունը** պայմանավորված է վերջինիս կամահայտնությամբ: Գործողությունները, իրենց հերթին, կարող են հանդես գալ որպես **իրավաբանական ակտեր** և **իրավաբանական արարքներ**:

Որպես կանոն, իրավահարաբերության ծագմանը, զարգացմանը կարող է նախորդել իրավաբանական փաստերի մի ամբողջ շրջա: Օրինակ, քաղաքացիության հետ կապված իրավահարաբերությունների առաջացումն սկզբնավորվում է այնպիսի իրադարձությամբ, ինչպիսին է քաղաքացու ծնունդը: Կամ այնպիսի իրավահարաբերության ծագմանը, որի բովանդակությունը կազմում է քաղաքացու ընտրական իրավունքի իրացումը, նախորդում է իրավաբանական փաստերի մի ամբողջ շրջա՝ ընտրությունները նշանակելու, ընտրատարածքներ, ընտրական հանձնաժողովներ, տեղամասեր կազմելու մասին ակտերի ընդունումը, ընտրացուցակների կազմումը, ընտրացուցակում տվյալ քաղաքացու ընդգրկումը, քվեարկությունն սկսելու համար սահմանված ժամկետի վրա հասնելը և այլն: Քվեաթերթիկն ստանալուց հետո, քաղաքացու ընտրելու իրավունքի իրացման հետ կապված իրավահարաբերությունը դադարում է:

Սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտների շրջանակը շատ լայն է: Դրանց թվում են յուրաքանչյուր այնպիսի սուբյեկտներ, ինչպիսիք են **ժողովուրդը, պետությունը, պատգամավորները, պետական իշխանության մարմինները, ընտրական հանձնաժողովները** և այլն:

Ժողովուրդը սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտի դերում հանդես է գալիս հանրաքվեների, Ազգային ժողովի պատգամավորների, Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությամբ:

յունների ժամանակ: Թվարկվածներից գատ, սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտներ են նաև *պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքական կուսակցությունները և քաղաքացիների հասարակական այլ միավորումները, քաղաքացիները, նրանց ժողովները* և այլն:

Ընդհանրացնելով, կարելի է ասել, որ սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտներ կարող են լինել այն սուբյեկտները, որոնց համար իրավունքի տվյալ ճյուղի նորմերը սահմանում են որոշակի իրավունքներ և պարտականություններ:

Որոշ դեպքերում, որպես սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտներ, հանդես են գալիս նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք (օրինակ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու վերաբերյալ խնդրագիր ներկայացնելիս):

§ 5. Սահմանադրական իրավունքի աղբյուրները

Սահմանադրական իրավունքի առաջացման և գոյության օբյեկտիվ պատճառների (աղբյուրների) արժատները գտնվում են հասարակության կենսապայմաններում: Իսկ իրավական գիտությունը մշակել է «իրավունքի իրավաբանական աղբյուրներ» արտահայտությունը, որը հասկացվում է երկու առումով՝ նյութական և իրավական:

Նյութական առումով «իրավունքի աղբյուր» ասելով, հասկացվում են այն գործոնները, որոնք բնորոշում են իրավունքի բուն բովանդակությունը: Ընդունված է դրանց շարքը դասել հասարակության կյանքի *նյութական պայմանները*, նրան ներհատուկ ամտեսական հարաբերությունները:

Իրավաբանական առումով «իրավունքի աղբյուր» ասելով՝ հասկացվում են այն ձևերը, որոնց միջոցով սահմանվում և պարտադիր ուժ են ստանում իրավական նորմերը: Այդպիսի ձևեր են հանդիսանում *իրավական ակտերը*: Ընդհանուր առմամբ, ավելի ըսյն իմաստով, սահմանադրական իրավունքի աղբյուրներ են համարվում *բնական իրավունքը և պոզիտիվ իրավունքը*:

Իրավունքը, ընդհանրապես, չի կարելի հանգեցնել միայն նրա գրված (արձանագրված) մասին՝ պոզիտիվ իրավունքին: Նման պնդումը առավել ևս ճիշտ է սահմանադրական իրավունքի նկատմամբ, որը կոչված է պահպանելու մարդու ազատությունը: Բացի պոզիտիվ իրավական կարգավորումից, գոյություն ունեն ազատության և արդարության մասին

համամարդկային պատկերացումներ, որոնք կազմում են իրավունքի էությունը: Այդ պատկերացումները մշտնջենական արժեքների ոլորտում են և հանդիսանում են իրավունքի ցանկացած համակարգի ժողովրդավարության գլխավոր չափանիշը: *Դա բնական իրավունքն է:*

Բնական իրավունքի, որպես մարդուն օբյեկտիվորեն (ի ծնե) ներհատուկ ազատ կեցության և որոշակի անքակտելի իրավունքի, ըմբռնումը ձևավորվել է դեռևս անտիկ աշխարհում: Այդ գաղափարը զարգացրել են Արիստոտելը և այլ հայտնի իմաստասերներ:

Բնական իրավունքը պայմանավորեց 17-18-րդ դարերում Եվրոպայում և Ամերիկայում տեղի ունեցած ժողովրդավարական հեղափոխությունների գլխավոր նպատակները և դրվեց իրավական պետության հայեցակարգի հիմքում, որն այսօր սահմանում է պետության կարգավիճակը զարգացած երկրներում: Ներկայումս սահմանադրական իրավունքն ամենուրեք լայնորեն զարգացել է և նրանում արտացոլված են համամարդկային իդեալները: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում հստակորեն անբազրված են մարդու բոլոր հիմնական բնական իրավունքները (կյանքի, անձի անձեռնմխելիության, մասնավոր սեփականության, խոսքի ազատության և այլն): Դա նշանակում է, որ պոզիտիվ իրավունքն ավելի ու ավելի է միաձուլվում բնական իրավունքին:

Բնական իրավունքը պետք է շարունակի հանդիսանալ քաղաքացիների, օրենսդիրների, պետական պաշտոնյաների, դատավորների իրավագիտակցության հիմքը և մշտապես առկա լինի պոզիտիվ իրավունքի կիրառման գործընթացում:

Բնական իրավունքը խորհրդարանի, Հանրապետության Նախագահի, գործադիր և դատական իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմինների համար պետք է հանդիսանա քարձրագույն արժեք: Եվ միայն այն ժամանակ, երբ բնական իրավունքն անխզելիորեն կմիաձուլվի պոզիտիվ իրավունքին և նրա կիրառմանը, Հայաստանում աստիճանաբար ձևավորվող քաղաքացիական հասարակությունը ապահովագրված կլինի հետընթաց շրջադարձերից և սոցիալական տարբեր ցնցումներից:

Ժողովրդի կյանքի մեջ պետք է ներթափանցի հետևյալ ճշմարտությունը՝ եթե օրենքը հակասում է բնական իրավունքին, ապա այն չունի գոյության իրավունք:

Սահմանադրական իրավունքի պոզիտիվ աղբյուրներն են այն նորմատիվ իրավական ակտերը, որոնց միջոցով սահմանվում և իրավաբանական ուժ են ստանում սահմանադրաիրավական նորմերը: Ինչպես ի-

րավունքի այլ ճյուղերի, այնպես էլ սահմանադրական իրավունքի աղբյուրների շարքն են դասվում միայն այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք գործում են ներկա ժամանակահատվածում: Սահմանադրական իրավունքի աղբյուրներ հանդիսացող նորմատիվ իրավական ակտերը բազմազան են:

Սակայն իրավունքի կոնկրետ ճյուղի աղբյուր լինելու հիմնական չափանիշն այն է, թե որքանով է **տվյալ նորմատիվ ակտը նորմեր բովանդակում իրավունքի այդ ճյուղի վերաբերյալ**: Այդ իմաստով սահմանադրական իրավունքի աղբյուրների շարքում առանձնակի տեղ է գրավում Հայաստանի Հանրապետության **Սահմանադրությունը**: Այն հանդիսանում է սահմանադրական իրավունքի ճյուղի հիմնական աղբյուրը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության այդ դերը պայմանավորված է հետևյալով.

1) Սահմանադրությունն ամրագրում է ընդհանուր բնույթի սահմանադրաիրավական նորմեր, որոնք **հիմնարար են** սահմանադրաիրավական կարգավորման համար: Եյուղի մյուս բոլոր աղբյուրները բխում են Սահմանադրության նորմերից, մանրամասնում են դրանց դրույթները,

2) Սահմանադրությունը բնութագրվում է իր նորմերի **բովանդակության լայն ընդգրկմամբ**: Այդ նորմերը ներազդում են հասարակության կյանքի բոլոր ոլորտների (քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր) վրա: Դրանով իսկ Սահմանադրությունը տարբերվում է սահմանադրական իրավունքի աղբյուրների այլ տեսակներից, որոնք կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունների որևէ մեկ ոլորտ,

3) Սահմանադրությունն օժտված է **բարձրագույն իրավաբանական ուժով, գործում է անմիջականորեն և կիրառվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում**: Հայաստանի Հանրապետությունում ընդունվող օրենքները և իրավական մյուս ակտերը չպետք է հակասեն երկրի Սահմանադրությանը,

4) Սահմանադրության, որպես սահմանադրական իրավունքի ճյուղի հիմնական աղբյուրի, նշանակությունը պայմանավորված է նաև նրանով, որ այդ փաստաթղթում ներառված նորմերը **մարմնավորում են ժողովրդի պետական կամքը**: Սահմանադրությունում ամրագրված են այն մայատակները, որոնք հասարակությունը դնում է իր առջև, ինչպես նաև հասարակության կազմակերպման և կենսագործունեության սկզբունքները,

5) Սահմանադրությունը, ճյուղի այլ աղբյուրների համեմատությամբ, հանդիսանում է բարձրագույն ակտ ոչ միայն իրավական մակարդակի, այլև՝ հասարակական նշանակության առումով: Դրա նորմերը վերաբե-

րում են յուրաքանչյուր քաղաքացու, հասարակական գործունեություն ծավալող յուրաքանչյուր սուբյեկտի:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որպես սահմանադրական իրավունքի ճյուղի հիմնական աղբյուրի, ամրագրում է նորմեր, որոնք կազմում են սահմանադրական իրավունքի ամբողջ ճյուղի առարկան հանդիսացող հասարակական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման միջուկը:

Սահմանադրական իրավունքի ընդհանուր նշանակության նորմեր բովանդակող աղբյուրների շարքն են դասվում սահմանադրաիրավական նորմեր պարունակող **օրենքները**: Օրենքը հանդիսանում է սահմանադրական դրույթների և սկզբունքների հիման վրա և ի գարգացումն դրանց ընդունվող ու սահմանադրաիրավական նորմեր բովանդակող առավել տարածված ակտի ձև:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, նկատի առնելով օրենքով կարգավորվող հասարակական հարաբերությունների առանձնակի կարևորությունը, ոչ միայն իր բազմաթիվ հոդվածներում (24, 42, 44-46, 51, 65, 76 և այլն) մատնացույց է անում այն հարաբերությունները, որոնք պետք է կարգավորվեն օրենքով, այլ բովանդակում է հատուկ հոդված (83.5), որով թվարկվում են այն ոլորտները, որոնք պետք է կարգավորվեն բացառապես օրենքով:

Սահմանադրական իրավունքի ճյուղի աղբյուրների թվին են պատկանում նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության կողմից ընդունված՝ սահմանադրաիրավական նորմեր բովանդակող ակտերը: Դրանք Նախագահի **հրամանագրերն** են, Ազգային ժողովի և կառավարության **որոշումները**: Այդ ակտերն ունեն ենթաօրենսդրական բնույթ, ընդունվում են օրենքների հիման վրա և ի կատարումն դրանց: Օրինակ կարող է ծառայել ՀՀ Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին»: Այս հրամանագիրն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85 հոդվածի հիման վրա և ի կատարումն դրա:

Սահմանադրական իրավունքի աղբյուրների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում **հոշակագրերը** (օրինակ, Հայաստանի անկախության մասին հոշակագիրը), որոնք ունեն հատուկ իրավական նշանակություն: Դրանցում ձևակերպվում են այն սկզբունքները, որոնք պարտադիր են պետության ամբողջ սահմանադրաիրավական զարգացման համար: Հոշակագրերը սահմանում են այն հայեցակետերը, որոնք կանխորոշում են պե-

տականության հետագա զարգացումը, և այն սկզբունքները, որոնց համապատասխան պետք է ձևավորվի օրենսդրությունը:

Սահմանադրական իրավունքի աղբյուրներ են նաև **տեղական ինքնակառավարման մարմինների որոշ ակտեր**: Վերջիններս, միաժամանակ, նաև Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունքի աղբյուրներ են: Օրինակ կարող են ծառայել համայնքների ղեկավարների կամ ավագանիների **որոշումները**:

Եվ, վերջապես, ՀՀ սահմանադրական իրավունքի աղբյուրներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կամ հաստատված բոլոր միջազգային պայմանագրերը: Համաձայն Սահմանադրության 6 հոդվածի, այդ պայմանագրերը հանդիսանում են Հանրապետության իրավունքի համակարգի բաղկացուցիչ մասը և, եթե ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքով, ապա կիրառվում են պայմանագրերի նորմերը:

§ 6. Սահմանադրական իրավունքի համակարգը

Սահմանադրական իրավունքն ունի բարդ համակարգ, որը ներառում է նրա ներքին կառուցվածքը բնութագրող և նրան առանձնացնող բազմաթիվ փոխգործակցող մասեր ու տարրեր: Սահմանադրական իրավունքի համակարգի հիմնական մասերն ու տարրերն են՝ նրա ընդհանուր **սկզբունքները, ինստիտուտները և նորմերը**:

Սահմանադրական իրավունքի **ընդհանուր սկզբունքներն** իրավունքի տվյալ ճյուղի բովանդակությունում արտահայտված այն հիմնական դրույթներն են, որոնց համապատասխան այդ ճյուղը կառուցվում է որպես իրավական նորմերի համակարգ, ինչպես նաև իրականացվում է հասարակական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորումը: Հիմնական սկզբունքները կարծես կազմում են սահմանադրական իրավունքի համակարգի հիմնամասը և նրան հաղորդում միասնական ուղղվածություն: Գրանց հասարակական հարաբերությունները կարգավորում են ոչ թե անմիջականորեն, այլ սահմանադրաիրավական կոնկրետ նորմերի միջոցով և իրենք էլ (այդ սկզբունքները) մարմնավորվում են այդ նորմերում և իշխանության մարմինների իրավակիրառ գործունեության մեջ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ հռչակված այդ սկզբունքներն են՝ ժողովրդի ինքնիշխանությունն ու ժողովրդավարական ներկայացուցչությունը (հոդվ. 2), իշխանությունների բաժանումը

(հոդվ. 5), քաղաքացիների իրավահավասարությունը (հոդվ. 14.1), պատգամավորների անկախությունն ընտրողներից (հոդվ. 66), սահմանադրական իրավունքների դատական պաշտպանությունը (հոդվ. 18) և այլն:

Սահմանադրաիրավական ինստիտուտները սահմանադրական իրավունքի նորմերի որոշակի համակարգ են, որոնք կարգավորում են համասեռ և փոխկապակցված հասարակական հարաբերություններ և կազմում են հարաբերականորեն ինքնուրույն մի խումբ:

Սահմանադրական իրավունքի համակարգում ընդունված է առանձնացնել հետևյալ ինստիտուտները, որոնք կազմում են ճյուղի հիմնական տարրերը և միավորում են այն նորմերը, որոնք ամրագրում են՝

- 1) սահմանադրական կարգի հիմունքները,
- 2) մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի հիմունքները,
- 3) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման համակարգը,

4) պետական կառուցվածքի հիմունքները:

Սահմանադրական իրավունքի ճյուղի նման կառուցվածքը համապատասխանում է նրա առարկան կազմող հասարակական հարաբերությունների ոլորտների ներքին համակարգվածությանը:

Սահմանադրական իրավունքի համակարգի տարրը հանդիսացող յուրաքանչյուր ինստիտուտ բնութագրվում է առանձնահատուկ գծերով, որոնք ներհատուկ են հենց տվյալ ինստիտուտի նորմերին և որակապես տարբերվում են սահմանադրական իրավունքի այլ ինստիտուտներից: Այսպես, **սահմանադրական կարգի հիմունքներն** ամրագրող նորմերը միավորող ինստիտուտը բնութագրվում է նրանով, որ դրա նորմերը, 1) հասարակական հարաբերությունների վրա ներազդում են հասարակության և պետության կառուցվածքի որոշակի սկզբունքների ամրագրման և սահմանման միջոցով, 2) որպես կանոն, կոնկրետ իրավահարաբերություններ չեն առաջացնում, 3) պայմանավորում են հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտների, սոցիալական իրականության բոլոր կողմերի վրա իրավական ներգործության բուն բովանդակությունը, 4) հասցեագրված են իրավունքի բոլոր սուբյեկտներին, բոլոր իրավակիրառիչ սուբյեկտներին, 5) սեփական պաշտպանության միջոց են դիտում Սահմանադրության, սահմանադրական կարգի պահպանության ընդհանուր ռեժիմը, կարող են փոփոխվել միայն նոր Սահմանադրության ընդունման միջոցով, 6) սահմանվում են, առավելապես, սահմանադրական մակարդակով, 7) իրենց տեսքով գերազանցապես նորմ-սկզբունքներ, նորմ-սահմանումներ, նորմ-նպատակներ են, 8) բովանդակվող նպատակների գործնական և իրավական իրագործման համար ենթադրում են պե-

տության ամբողջ իրավունքի համակարգի, իրավունքի բոլոր ճյուղերի ներառում, 9) ըստ նպատակամղվածության կոչված են ապահովելու տվյալ հասարակության և պետության համար հիմնարար ճանաչված հայեցակարգային գաղափարների համակարգային ամրագրումը: Խնդրո առարկա ինստիտուտի նորմերի ամբողջությունը իր գործառույթներով որոշիչ է սահմանադրական իրավունքի մյուս բոլոր ինստիտուտների համար: Դրանք ուղղորդում են սահմանադրաիրավական ողջ կարգավորումը:

Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի հիմունքների ինստիտուտը, որպես սահմանադրական իրավունքի համակարգի հարաբերականորեն ինքնուրույն մաս, նույնպես դրսևորվում է առանձնահատուկ գծերով: Նրա նորմերը՝ 1) հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործություն են իրականացնում պետության կողմից մարդու բնական, անօտարելի իրավունքների հռչակման, ճանաչման միջոցով, 2) իրագործվում են, առավելապես, կոնկրետ իրավահարաբերությունների շրջանակից դուրս, 3) վերաբերում են պետության և անհատի փոխհարաբերությունների ոլորտին, 4) իրավունքի սուբյեկտի դերում դրանցում հանդես է գալիս մարդը, քաղաքացին, անհատը՝ որպես այդպիսին, անկախ որևէ հատուկ իրավական կարգավիճակի հետ նրա կապից, 5) նախատեսում են պահպանության հատուկ համակարգ, չեն կարող վերանայվել առանց նոր Սահմանադրության ընդունման, 6) գործնական իրագործման համար ենթադրում են իրավունքի բազմաթիվ այլ ճյուղերի ներգրավում, որոնցում քաղաքացիների սահմանադրական իրավունքների կենսագործումն իրականացվում է կոնկրետ իրավահարաբերությունների (աշխատանքային, քաղաքացիական, ընտանեկան և այլն) առաջացման միջոցով:

Հայաստանի Հանրապետության կառուցվածքը կարգավորող նորմերը միավորող ինստիտուտը տարբերվում է սուբյեկտների, դրանց (այդ նորմերի) հիման վրա ծագող սահմանադրաիրավական հարաբերությունների բնույթով, դրանց հատուկ իրավունակությամբ: Այդ նորմերը, սուբյեկտների իրավական կարգավիճակի սահմանման մասով, կրում են ոչ միայն սահմանադրաիրավական, այլև՝ մուեիցիպալ բնույթ:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման համակարգերը սահմանող նորմերը միավորող ինստիտուտի վերաբերյալ կարելի է նշել հետևյալ առանձնահատկությունները. 1) դրանք առավելապես անմիջական կարգավորիչ գործողությամբ օժտված նորմեր են և իրագործվում են կոնկրետ իրավահարաբերություններում, 2) այդ նորմերի հիման վրա ծագող իրավահարաբերությունների սուբյեկտների դերում հանդես են գալիս պետության մարմինները և տեղական ինքնակառավարման

մարմինները՝ ժողովրդապետության մարմինների իրենց կարգավիճակով, 3) նորմերի՝ քանակական առումով, գերակշռող մասը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հիման վրա ընդունված ընթացիկ օրենսդրական ակտերով, որոնք մանրամասնորեն որոշում են վերոհիշյալ մարմինների կազմավորման կարգը, իրավասությունը, գործունեության ձևերը:

Այսպիսով, նշված իրավաբանական առանձնահատկությունների համակցությունն է, որ սահմանադրաիրավական նորմերի որոշակի խմբին դարձնում է տվյալ ճյուղի տարր, որը ճյուղի համակարգում զբաղեցնում է հարաբերականորեն ինքնուրույն տեղ: Ընդ որում, ճյուղի տարրերի բոլոր իրավաբանական հատկանիշները պայմանավորող ելակետային դրույթը հանդիսանում է սահմանադրական իրավունքի կարգավորման առարկան:

Սահմանադրական իրավունքի համակարգի բնութագրության համար կարևոր նշանակություն ունի **նրա (սահմանադրական իրավունքի) և սահմանադրության համակարգի հարաբերակցության հարցը**, քանի որ վերջինս հանդիսանում է ճյուղի հիմնական աղբյուրը: Դրանք թեև փոխկապակցված են, սակայն ամբողջությամբ չեն համընկնում: Սահմանադրական իրավունքի ճյուղի համակարգն ընդգրկում է սահմանադրության նորմերի ողջ համակցությունը, իսկ սահմանադրության համակարգը՝ այդ նորմերի միայն մի մասը, որը հանդիսանում է ամբողջ սահմանադրաիրավական կարգավորման հիմքը:

Սահմանադրական իրավունքի և՛ ճյուղի համակարգը, և՛ սահմանադրության համակարգը ինչ-որ կարծրացած, մեկընդմիջ տրված համակարգեր չեն: Դրանք զարգանում են՝ արտացոլելով հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործության մակարդակը, որը օբյեկտիվորեն պայմանավորված է սոցիալական իրականության պահանջմունքներով:

Ինչ-որ փուլում սահմանադրությունը և սահմանադրական իրավունքի ճյուղը կարող են հետ մնալ հասարակության օբյեկտիվորեն փոփոխվող պահանջմունքներից: Անհրաժեշտ պայմանների ստեղծման դեպքում տեղի է ունենում ճյուղի և սահմանադրության համակարգերի էական վերակառուցում: Արդյունքում ընդունվում է նոր սահմանադրություն, փոփոխվում է սահմանադրության համակարգը: Փոփոխության է ենթարկվում նաև ճյուղի համակարգը: Նման գործընթաց տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի զարգացման ներկա փուլում՝ 1995 թ. Սահմանադրության ընդունմամբ: Վերջինս (նրանում 2005թ. նոյեմբերի 27-ին կատարված փոփոխություններով ու լրա-

ցումներով հանդերձ) ձևակերպեց հասարակական զարգացման նոր հայեցակարգեր, հիմնադրեց սահմանադրաիրավական կարգավորման նոր սկզբունքներ և այլ իրավական ինստիտուտներ: Դա, բնական է, իր ազդեցությունը թողեց նաև սահմանադրական իրավունքի ճյուղի ողջ համակարգի և, հատկապես, նրա ինստիտուտներից յուրաքանչյուրի ներքին կառուցվածքի վրա:

§ 7. Սահմանադրաիրավական պատասխանատվությունը

Նախկինում շրջանառվում էր այն սխալ կարծիքը, որ Սահմանադրական իրավունքն իր նորմերի իրացման կապակցությամբ սանկցիաներ չի բովանդակում, և որ այդ նորմերում (սահմանադրաիրավական) բովանդակված հանձնարարականների կատարումն ապահովվում է իրավունքի այլ ճյուղերի (քրեական, քաղաքացիական և վարչական իրավունքի) սանկցիաներով: Ընդհանուր սկզբունք է այն, որ եթե կա իրավունքի ճյուղ, ապա, այն (իրավունքի ճյուղը) պարտավոր է ապահովել իր նորմերի իրացումն, ամենից առաջ, **սեփական միջոցներով**, այդ թվում՝ պատասխանատվություն նախատեսող սանկցիաներով, նոր միայն՝ իրավունքի այլ ճյուղերի միջոցներով:

Խնդիրն այն է, որ սահմանադրաիրավական նորմերի հիման վրա կառուցվում են իրավունքի մյուս ճյուղերը (այդ թվում՝ քրեական, քաղաքացիական և վարչական), որոնց նորմերը կիրառվում են ոչ թե սահմանադրաիրավական նորմերի սահմանադրությամբ նախատեսված խախտման համար, այլ՝ այդ նորմի այնպիսի խախտումների համար, որոնք առաջ են բերում քրեաիրավական, վարչաիրավական և նյութական պատասխանատվության միջոցների կիրառման անհրաժեշտություն: Այսպես օրինակ, եթե ԱԺ ընտրությունների ժամանակ քվեարկության արդյունքները կեղծվում են, ապա որպես **սահմանադրաիրավական պատասխանատվության միջոց** Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունները ճանաչվում են անվավեր (ՀՀ ընտրական օրենսգրքի 125 հոդ. 9-րդ կետ և 126 հոդ. 5-րդ կետ) և լուծարվում են համապատասխան ընտրական հանձնաժողովները: Ինչ մնում է դրանում **մեղավոր անձանց**, ապա վերջիններս ենթարկվում են պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքի 150 հոդվածով սահմանված կարգով:

Իրավական պատասխանատվությունը, որպես կանոն, վրա է հասնում համապատասխան իրավական նորմով սահմանված անհրաժեշտ խախտման դեպքում: Մինչդեռ **սահմանադրաիրավական պատասխանատվության դեպքում** միշտ չէ, որ համապատասխան իրավախարաբե-

րության սուբյեկտը պատասխանատվության է ենթարկվում սահմանադրաիրավական նորմի խախտման համար: Քիչ չեն դեպքերը, երբ պատասխանատվության միջոցը կիրառվում է **քաղաքական նկատառումներից ելնելով**: Այսպես, ՀՀ Սահմանադրության 74 հոդվածի համաձայն կառավարությունն իր կազմավորումից հետո քառօրյա ժամկետում Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը, որը հավանության չարժանանալու դեպքում **կառավարությունը պարտավոր է հրաժարական տալ**:

Ակնհայտ է, որ ինչպես ՀՀ Սահմանադրության մեջ, այնպես էլ որևէ իրավական ակտում նշված չէ, թե կառավարության կողմից ինչպիսի վարքագծի դրսևորման, կամ ինչ իրավական նորմի խախտման դեպքում է, որ կարող է ԱԺ հավանության չարժանացնել կառավարության ծրագիրը, որի արդյունքում վերջինս պետք է հրաժարական տա: Կամ Սահմանադրության 84 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ կարող է անվստահություն հայտնել կառավարությանը: Այստեղ ամենևին խոսքը այն մասին չէ, թե **կառավարության վատ աշխատանքի պատճառով** է, որ պատգամավորները կարող են անվստահություն հայտնել կառավարությանը: Ընդ որում **կառավարությունը կարող է տվյալ դեպքում հաջողակ լինել**, որը սակայն ձեռնադրում չլինի խորհրդարանական այս կամ այն քաղաքական ուժին, որն էլ պահանջի կառավարության հրաժարականը: Ակնհայտ է, որ այստեղ սահմանադրաիրավական պատասխանատվությունը վրա է հասնում ոչ թե իրավական նորմի խախտման արդյունքում, այլ **քաղաքական նկատառումներից ելնելով**:

Սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցները կարող են կիրառվել սահմանադրաիրավական հարաբերությունների **գրեթե բոլոր սուբյեկտների**, այդ թվում ֆիզիկական և իրավաբանական անձանց, քաղաքական կուսակցությունների, այլ հասարակական միավորումների և կրոնական կազմակերպությունների, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց նկատմամբ:

Այսպես, **ֆիզիկական անձանց** նկատմամբ սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցների կիրառումը ուղղված է պետության հետ անձի փոխհարաբերությունների ճիշտ ձևակերպմանը և նպատակ ունի այդ ճանապարհով ապահովել պետության և ժողովրդի շահերը: Այդպիսի պատասխանատվության միջոց կարող է լինել **անձի քաղաքացիության դադարեցումը** քաղաքացիությունից զրկելու միջոցով: «Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը անձին քաղաքացիությունից զրկելու հիմք է համարում արտասահմանում քնակ-

վող ՀՀ քաղաքացու կողմից յոթ տարվա ընթացքում անհարգելի պատճառով հյուպատոսարան հաշվառման շկանգները, կեղծ փաստաթղթերով այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը, ինչպես նաև ՀՀ օրենսդրության խախտմամբ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը:

Նույն կերպ սահմանադրաիրավական **սանկցիա է կիրառվում փախստականի** նկատմամբ՝ նրան փախստականի կարգավիճակից զրկելու ձևով, եթե պարզվում է, որ վերջինս նախքան Հայաստանի Հանրապետություն մուտք գործելը կատարել է խաղաղության և մարդկության դեմ ուղղված հանցագործություն, զինվորական կամ ոչ քաղաքական բնույթի հանցագործություն, կամ նրա նկատմամբ ուժի մեջ է Միջազգային դատարանի վճիռը՝ Միացյալ ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին հակասող հանցագործության համար, ինչպես նաև «Փախստականների և ապաստանի մասին» 2008թ. ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում նախատեսված այլ հիմքերի առկայության դեպքում: Փախստականի կարգավիճակը կորցրած անձը կամովին երկրից չիեռանալու դեպքում՝ վտարվում է հարկադրաբար:

Քաղաքական կուսակցությունների, հասարակական և կրոնական կազմակերպությունների նկատմամբ սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցների կիրառումը նպատակ ունի ապահովել նրանց կողմից Հանրապետության օրենսդրության և պետության հանդեպ կոռեկտ (լոյալ, օրինապահ) հարաբերությունների ձևավորումը: Այսպես, ՀՀ Սահմանադրության 7 հոդվածի համաձայն՝ կուսակցությունների գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին: Սահմանադրության այդ նորմի պահանջներից ելնելով՝ «Կուսակցությունների մասին» 2002թ. հուլիսի 3-ի (փոփոխություններով և լրացումներով) ՀՀ օրենքը **արգելում է այն կուսակցությունների ստեղծումը**, որոնց գործունեությունն ուղղված է ՀՀ սահմանադրական կարգի և տարածքային ամբողջականության բռնի փոփոխությանը, զինված կազմավորումների ստեղծմանը, ազգային, ռասայական, կրոնական ատելության բորբոքմանը, բռնության և պատերազմ քարոզելուն (9 հոդվ.): Նշված հիմքերի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության Նախագահի դիմումի հիման վրա սահմանադրական դատարանի որոշմամբ կարող է արգելվել կուսակցության գործունեությունը:

Գրեթե նույն հիմքերով, և «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով (21 հոդվ.) նախատեսված այլ հիմքերով դատարանի վճռով կարող են հարկադիր կերպով լուծարվել նաև հասարակական կազմակերպությունները:

Ինչ մնում է **պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների** վերաբերյալ կիրառվող սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցներին, սպա դրանք նախատեսվում են առավելապես ՀՀ Սահմանադրության նորմերով: Այսպես, Հանրապետության Նախագահի կողմից Ազգային ժողովը արձակելու վերաբերյալ հիմքերը նախատեսված են Սահմանադրության 74.1 հոդվածում, կառավարության հրաժարականի հիմքերն ու կարգը՝ 55 (4-րդ կետ), 75 և 84 հոդվածներում, Հանրապետության Նախագահի պաշտոնանկության հիմքերը՝ 57 հոդվածում, պատգամավորների լիազորությունների դադարեցումը՝ 67 հոդվածում, համայնքի ղեկավարի պաշտոնանկությունը՝ 109 հոդվածում և այլն:

§ 8. Սահմանադրական իրավունքի տեղը Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգում

Հայտնի է, որ յուրաքանչյուր պետության իրավունքի համակարգը բաղկացած է բազմաթիվ ճյուղերից, որոնց շարքում սահմանադրական իրավունքը գրավում է **առաջատար տեղ**, որը պայմանավորված է իրավունքի այդ ճյուղով կարգավորվող **հասարակական հարաբերությունների կարևորությամբ**, ինչպես նաև նրանով, որ սահմանադրական իրավունքը գտնվում է իրավունքի բոլոր ճյուղերի փոխգործակցության կենտրոնում: Սահմանադրական իրավունքում հոչակվում են այնպիսի դրույթներ, որոնք հանդիսանում են իրավունքի այլ ճյուղերի համար ելակետային:

Այսպես, սահմանելով հասարակության և պետության կառուցվածքի հիմնարար սկզբունքները, հասարակական բոլոր գործընթացների կառավարման ընդհանուր հիմունքները՝ սահմանադրական իրավունքը դրանով իսկ տալիս է հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտների **իրավական կարգավորման կողմնորոշիչները**: Իրավունքի բոլոր ճյուղերը, ըստ էության, հիմնվում են իշխանության համակարգի կազմակերպման և պետական իշխանության բոլոր մարմինների գործունեության վերաբերյալ սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների վրա:

Սահմանադրական իրավունքի, որպես իրավունքի առաջատար ճյուղի, դերը պայմանավորված է նաև նրանով, որ հենց նրա նորմերն են կարգավորում **իրավաստեղծման բուն գործընթացը**: Այդ նորմերը սահմանում են իրավական ակտերի, որանք հրատարակող մարմինների տեսակները, այդ ակտերի իրավաբանական ուժի հարաբերակցությունը: Սահմանադրության, որպես սահմանադրական իրավունքի հիմնական

աղբյուրի, **նորմերը երկնաշարին են իրավունքի բոլոր ճյուղերի համար:** Այսպես, սահմանելով գործադիր իշխանության մարմինների համակարգը, դրանց իրավական կարգավիճակը, իրավասությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նորմերը դրանով իսկ **որոշում են վարչական իրավունքի հիմնական սկզբունքները:** Անրագրելով սեփականության տարբեր ձևերը, սեփականատիրոջ իրավունքները, տնտեսավարման սկզբունքները, սահմանադրական իրավունքը դրանով իսկ հիմք է հանդիսանում **քաղաքացիական իրավունքի համար:** Կարգավորելով Հայաստանի Հանրապետության **բյուջետային համակարգի** հիմունքները՝ սահմանադրական իրավունքի նորմերը կամխորոշում են **ֆինանսական իրավունքի հիմունքները** և այլն:

Պետությունների իրավունքի համակարգերում սահմանադրական իրավունքի կենտրոնական տեղը չպետք է հասկանալ այն իմաստով, թե այն ներառում, միավորում է իրավունքի բոլոր ճյուղերը: Սահմանադրական իրավունքը սահմանում է իրավունքի այս կամ այն ճյուղը կազմող կարևորագույն սկզբունքները միայն: Այն նախատեսում է նաև իրավունքի տարբեր ճյուղերի իրավական նորմերի ընդունման և փոփոխման կարգը:

§ 9. Սահմանադրական իրավունքի զարգացման հիմնական միտումները

Եթե մի հայացք ձգենք 18-րդ դարում սկզբնավորված համաշխարհային սահմանադրական իրավունքի պատմության վրա, ապա դժվար չէ նկատել **մի քանի հստակորեն դրսևորված միտումներ**, որոնք բնութագրում են հասարակական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման զարգացումը: Այդ միտումները վերաբերում են, առաջին հերթին, իրավաբանական սահմանադրությունների՝ հիմնական օրենքների բովանդակության, ինչպես նաև սահմանադրական իրավունքի մնացած աղբյուրների բովանդակության զարգացմանը:

Նշված միտումները փոխկապակցված են և փոխալայնմանավորված (համենայն դեպս, կյանքի են կոչված հասարակության զարգացման օբյեկտիվ պայմանների թելադրանքով), սակայն, միաժամանակ, աչքի են ընկնում անհրաժեշտ չափի առանձնացվածությամբ, ինչը թույլ է տալիս առանձին-առանձին վերլուծել դրանք:

Առաջին, ինչը այդ պարագայում առանձնապես կարևորվում է, դա սահմանադրությունների և ընդհանրապես սահմանադրական իրավունքի **սոցիալականացման** միտումն է:

Սահմանադրական կարգի ձևավորման արշալույսին մարդու, հասարակության և պետության միջև սահմանադրաիրավական հարաբերությունները սահմանափակվում էին, որպես կանոն, **քաղաքական ոլորտով:** Սահմանադրությունները հեշակում էին մարդու և քաղաքացու քաղաքացիական (անձնական) և քաղաքական (հանրային) իրավունքներն ու ազատությունները, իսկ **սոցիալ-տնտեսական իրավունքներից**, սովորաբար, ամրագրում էին միայն սեփականության իրավունքը: Բնական է, որ սահմանադրական մակարդակով ամրագրվում էին նաև պետական իշխանության կառուցվածքը, նրա բաժանումը՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, որոշվում էին իշխանության այդ ճյուղերի միջև փոխհարաբերությունները: Ահա, թերևս, սահմանադրական իրավունքով այն ժամանակներում կարգավորվող բոլոր ոլորտները:

20-րդ դարում սոցիալ-դասակարգային բարեփոխումների ուժեղացումը հանգեցրեց նրան, որ սահմանադրություններն սկսեցին այս կամ այն ձևով կարգավորել հասարակության ոչ միայն քաղաքական, տնտեսական, այլև **սոցիալական և հոգևոր-մշակութային ենթահամակարգերը՝** պետությանը պարտադրելով այդ ոլորտներում իրականացնել մարդու սոցիալական շահերի ամրապնդմանը նպաստող քաղաքականություն: Մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների ցանկը լրացվեց **սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային իրավունքներով և ազատություններով:**

Սահմանադրական իրավունքի զարգացման **մյուս միտումը նրա ժողովրդավարացումն է:** Այդ միտումը լիովին դրսևորվեց արդեն 19-րդ դարում, երբ ցենզեր նախատեսող ընտրական իրավունքից աստիճանաբար անցում կատարվեց համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի, որպիսի գործընթացն ավարտվեց արդեն 20-րդ դարի կեսերին:

Մարդու և քաղաքացու սահմանադրորեն հռչակված իրավունքների և ազատությունների ցանկի ընդլայնման, դրանց երաշխիքների կատարելագործման հետ մեկտեղ, առաջանում և զարգանում են **ժողովրդավարական նոր ինստիտուտներ:** Որպես օրինակ կարելի է նշել **վարչական և սահմանադրական արդարադատությունը**, քաղաքացիների իրավունքների գծով **խորհրդարանական լիազորները** (օմբուդսման), տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ **վարչական խնամակալության փոխարինումը վարչական հսկողությամբ** և այլն:

Դիտարկված միտումների համեմատությամբ իր յուրահատուկ գծերով առանձնանում է սահմանադրական իրավունքի **ինտեգրացիոնալացումը:** Այն, առաջին հերթին, դրսևորվում է յուրաքանչյուր **ժողովրդավարական երկրի ազգային սահմանադրական իրավունքի և միջազգային**

հանրային իրավունքի մերձեցման մեջ, որի հետևանքով երբեմն վերանում է նրանց միջև եղած հստակ սահմանը: Առանձին երկրների **սահմանադրական իրավունքի նվաճումներն ընդհանրացվում են միջազգային մակարդակով** և ներառվում միջազգային իրավունքի ակտերում՝ դաշնագրերում, համաձայնագրերում և այլ փաստաթղթերում, որոնք մասնակից պետություններին պարտավորեցնում են իրենց ազգային օրենսդրությունում ընդգրկել այս կամ այն ժողովրդավարական սահմանադրափրավական ինստիտուտները (օրինակ, մարդու որոշ իրավունքներ): Բազմաթիվ սահմանադրություններում այժմ ուղղակիորեն արձանագրված է, որ **միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերը հանդիսանում են ազգային իրավունքի (այդ թվում նաև՝ սահմանադրական) բաղկացուցիչ մասը, իսկ ազգային օրենսդրության նորմերի հետ չհամընկնելիս՝ գերակա են վերջիններիս նկատմամբ:**

Նշված միտումների գոյությունը չի նշանակում, որ յուրաքանչյուր երկրի սահմանադրափրավական զարգացումն իրականացվում է դրանց ճիշտ համապատասխան: Սակայն աշխարհի երկրների սահմանադրությունների հիմնական մասի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերոհիշյալ միտումներն անհատափառելի են, քանի որ պայմանավորված են սոցիալական առաջադիմությամբ՝ հասարակական կարգի այնպիսի զարգացմամբ, որը մարդուն տրամադրում է ինքնադրսևորման ավելի մեծ և ավելի բարենպաստ հնարավորություններ:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի ձևավորման գործընթացում առանցքային ուղղություն հանդիսացավ Հայաստանի 1995 թ. Սահմանադրության մշակումը և ընդունումը: Եթե ամբողջությամբ վերցրած վերլուծենք Հայաստանի հետխորհրդային շրջանի սահմանադրական իրավունքի զարգացման հիմնական միտումները, ապա կարելի է առանձնացնել հետևյալ ուղղությունները.

1) **Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության իրական իրավական ապահովումը**, նրա կայացումը որպես ինքնուրույն, անկախ պետություն,

2) **սահմանադրափրավական օրենսդրության ապագադափարայնացումը**: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում բացակայում է պետության էության գաղափարախոսական բնութագրումը: Սահմանադրորեն ամրագրված է բազմակուսակցականության սկզբունքը և ճանաչված է գաղափարական բազմազանությունը,

3) **իշխանությունների բաժանման սկզբունքի ամրագրումը**, ինչը դրսևորվում է այդ սկզբունքը սահմանադրական կարգի հիմունքներից մեկը ճանաչելու մեջ: Այդ սկզբունքն արտահայտված է Սահմանադրության

այն բազմաթիվ դրույթներում, որոնք ամրագրում են պետական մարմինների համակարգը և իրավասությունը, նրանց միջև լիազորությունների սահմանազատումը,

4) **անցումը տնտեսավարման շուկայական համակարգին, տնտեսության մեջ շուկայական հարաբերությունների ճանաչմանը**: Սահմանադրորեն ամրագրված են սեփականության ձևերի բազմազանությունը, դրանց հավասար պաշտպանությունը պետության կողմից:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի ճյուղի զարգացումը արդի պայմաններում կապված է հետևյալ հիմնական խնդիրների իրագործման հետ.

1. Սահմանադրությամբ և 2005թ. նոյեմբերի 27-ին նրանում կատարված փոփոխություններով նախատեսված բոլոր օրենքների մշակման և ընդունման գործընթացի ավարտումը,

2. գործող սահմանադրափրավական օրենսդրության կատարելագործումը և նորացումը:

3. սահմանադրափրավական կարգավորման, սահմանադրափրավական նորմերի իրացման կառուցակարգի արդյունավետության բարձրացում, այդ նորմերի խախտման համար պատասխանատվության տարբեր ձևերի կատարելագործում:

Նշված և դրանցից բխող այլ խնդիրների իրականացումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության, որպես իրավական պետության, կայացման կարևորագույն մախապայմանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԸ

§ 1. Սահմանադրական իրավունքի գիտության առարկան, համակարգը և աղբյուրները

Իրավական երևույթներն ուսումնասիրվում են իրավաբանական տարրեր գիտությունների կողմից: Դրանցից յուրաքանչյուրին ներհատուկ է յուրօրինակ մտեցում ուսումնասիրվող օբյեկտի նկատմամբ: Տարբեր են պատմական վերլուծության վրա հիմնված ճանաչողության մակարդակը, ուսումնասիրման մեթոդը և առարկան: Նշված գործոնները հաշվի առնելով, տարբերվում են հետևյալ իրավաբանական գիտությունները. **ընդհանուր տեսական, պատմական, ճյուղային, իրավահամեմատական, կիրառական:**

Սահմանադրական իրավունքի գիտությունը դասվում է **ճյուղային գիտությունների շարքին**, որոնց տարբերիչ հատկանիշն այն է, որ դրանց ուսումնասիրության առարկան հանդիսանում է իրավունքի նույնամուկ ճյուղը: Այդ գիտությունները կազմում են իրավաբանական գիտությունների համակարգի առավել մեծաթիվ մասը:

Սահմանադրական իրավունքի գիտությունը ուսումնասիրում է **սահմանադրաիրավական նորմերը և ինստիտուտները, ինչպես նաև այն հասարակական հարաբերությունները, որոնք կարգավորվում կամ կարող են և (կամ) պետք է կարգավորվեն այդ նորմերով և ինստիտուտներով:**

Սահմանադրական իրավունքի գիտությունը ուսումնասիրում է նաև **սահմանադրաիրավական նորմերի և ինստիտուտների իրագործման պրակտիկան**՝ ձգտելով ճանաչել դրանց զարգացման օրինաչափությունները և օրենսդրին ու իրավունքը կիրառողներին առաջարկել համապատասխան նորմերի կատարելագործմանն ու կիրառմանը նպատակաուղղված հիմնավոր հանձնարարականներ: Այդ նպատակով գիտության կողմից ուսումնասիրվում են նաև սահմանադրական իրավունքի հետազոտողների կողմից մշակված **տեսություններն ու հայացքները**, վերջիններիս զարգացման վրա ազդող պայմանները:

Այսպիսով, սահմանադրական իրավունքի գիտության ուսումնասիրության առարկան հանդիսանում է սահմանադրաիրավական կարգավորման ենթակա **հասարակական հարաբերությունների** ամբողջ ոլորտը: Հասարակական հարաբերությունների վերլուծության հիման վրա գի-

տությունը պետք է առաջարկի տեսական հիմնավորումներ դրանց իրավական կարգավորման սահմանների մասին, նկատի ունենալով, որ այդ հանձնարարականները չպետք է լինեն չափազանցված, կյանքի պահանջմունքներով չարդարացված կամ չափից դուրս նեղ՝ առանց իրավական ներգործության թողնելով այն հասարակական հարաբերությունները, որոնք պահանջում են նման ներգործություն:

Ելնելով սահմանադրական իրավունքի ճյուղի առարկայի բովանդակությունից և այդ առարկան կազմող հասարակական հարաբերությունների առանձնահատկություններից, որոշվում է նաև սահմանադրական իրավունքի գիտության հիմնական տեսական հայեցակարգերի բնույթը: Դրանց թվին են պատկանում այնպիսի խոշոր տեսական հիմնախնդիրներ, ինչպիսիք են **ժողովրդական ներկայացուցչությունը, պետական, ժողովրդավարական և ազգային ինքնիշխանությունը, ամբողջությանը վերջրած պետական և տարածքային կառուցվածքի ձևերը և այլն:** Կարևոր տեղ են զբաղեցնում անձի իրավական կարգավիճակի, մարդու և քաղաքացու իրավունքների, պետության և անհատի փոխադարձ կապի, քաղաքացիական հասարակության կազմակերպման սահմանադրական հիմքերի հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությունը, ինչպես նաև այն տեսական եզրահանգումները, որոնք կապված են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման համակարգերի, իշխանությունների բաժանման սկզբունքի և այլ դրույթների ընկալման հետ: Այդ հիմնախնդիրների ուսումնասիրությունը կազմում է գիտության **առարկան**, իսկ բուն եզրահանգումները և տեսական դրույթները՝ դրա **բովանդակությունը:**

Սահմանադրական իրավունքի գիտությունը, ցանկացած այլ գիտության նման, հանդիսանում է **գիտելիքների, գաղափարների համակարգ:** Այդ համակարգը ներառում է տեսական դրույթների հարաբերականորեն առանձնացված խմբեր, որոնք բովանդակում են սահմանադրական իրավունքի ճյուղի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների զարգացման օրինաչափությունների ուսումնասիրության հիման վրա արված եզրահանգումներ: Այս կամ այն տեսական եզրահանգումներն ու դրույթները կարող են հիմք ծառայել այլ տեսական եզրահանգումների ու դրույթների համար:

Տեսական դրույթների հարաբերականորեն ինքնուրույն համալիր խմբերի հանրագումարը, նրանց միջև եղած տրամաբանական կապը կազմում են սահմանադրական իրավունքի գիտության համակարգը:

Սահմանադրական իրավունքի ճյուղի տարրերից յուրաքանչյուրին համապատասխանում է սահմանադրական իրավունքի գիտության **ինքնուրույն բաժին:** Այսպես, սահմանադրական իրավունքի գիտության կող-

մից հետագոտվում է ճյուղին ներհատուկ ընդհանուր գծերը, նրա առարկայի յուրահատկությունն ու բնույթը, նրա նորմերի տարատեսակները, դրանց իրագործման եղանակները, տվյալ նորմերից բխող սահմանադրաիրավական հարաբերությունների առանձնահատկությունները, ճյուղի առջյուրները, համակարգը:

Վերոհիշյալ բոլոր հիմնախնդիրներին վերաբերող տեսական եզրահանգումների, դրույթների ամբողջությունն էլ հենց կազմում է սահմանադրական իրավունքի գիտության **առաջին բաժինը**, որը նվիրված է **սահմանադրական իրավունքի ճյուղի և նույնանուն գիտության ընդհանուր բնութագրմանը**: Այդ բաժինն առաջինն է նաև այն պատճառով, որ առանց նրանում ընդգրկված հիմնախնդիրների իմացության հնարավոր չէ ճիշտ հասկանալ այն կապերը, որոնք գոյություն ունեն սահմանադրաիրավական ինստիտուտների միջև:

Քանի որ սահմանադրական իրավունքի գիտությունը ճյուղային է, ապա **նրա առաջնահերթ խնդիրը սահմանադրության**, որպես նույնանուն ճյուղի հիմնական աղբյուրի, էության, իրավաբանական հատկանշների, գործառույթների ճանաչումն է, որը կազմում է սահմանադրական իրավունքի գիտության **երկրորդ բաժինը**:

Գիտության համակարգի **հաջորդ (երրորդ) բաժինը կազմում է սահմանադրական կարգի հիմունքները**: Տվյալ բաժինն ընդգրկում է բազմաթիվ տեսություններ, որոնք կապված են հայտնի պետականության էության, կառավարման ձևի, երկրի քաղաքական կյանքին մասնակցող հասարակական կառույցների հետագոտման հետ: Գիտության այդ բաժինն են վերաբերում նաև քաղաքացիական հասարակության, տնտեսական հարաբերությունների, տնտեսավարման սահմանադրական սկզբունքների, շուկայական տնտեսության պայմաններում պետության դերի մասին տեսական դրույթները:

Սահմանադրական իրավունքի գիտության հարաբերականորեն **ինքնուրույն բաժին են կազմում** այն տեսական մշակումները, որոնք կապված են **պետության և անհատի** փոխհարաբերությունների, մարդու և քաղաքացու կարգավիճակի, վերջինիս իրավունքների, ազատությունների և պարտականությունների վերլուծության հետ: Գիտության, ինչպես նաև ճյուղի համակարգում այդ հարցերին վերաբերող տեսական եզրահանգումներն ընդգրկվում են **«մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի հիմունքները»** ընդհանուր հասկացության մեջ:

Սահմանադրական իրավունքի գիտության համակարգում առանձնացված է ևս մեկ բաժին, որը միավորում է այն հետազոտությունները, որոնք վերաբերում են **պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգերի կազմակերպման և գործունեության**

հիմնախնդիրներին: Գիտությունն ուսումնասիրում է դրանց կառուցվածքի սկզբունքները, իշխանությունների բաժանման սկզբունքի իրագործման կոնկրետ ձևերը, պետության տարբեր մարմինների իրավական կարգավիճակը, ներկայացուցչական մարմինների գործունեության ձևերը և կարգը, ընտրական համակարգը, օրենսդրական գործընթացը և սահմանադրաիրավական կարգավորման հետ կապված այլ հիմնախնդիրներ:

Այսպիսով, սահմանադրական իրավունքի գիտության համակարգը իր հիմքով համապատասխանում է նույնանուն ճյուղի համակարգին, սակայն ավելի լայն է, քանի որ գիտությունը չի կարող ուշադրությունը կենտրոնացնել միայն կոնկրետ սահմանադրաիրավական ինստիտուտների վրա, այլ ուսումնասիրում է նաև ճյուղի ընդհանուր բնութագիրը, նրա յուրահատկությունը, տեղն ու դերը իրավունքի համակարգում:

Գիտության այս կամ այն բաժնում հետազոտվող հիմնախնդիրների կոնկրետ ցանկը մեկընդմիջ տրված չէ: Պետության, հասարակության զարգացման, հասարակության սոցիալական պայմանների փոփոխման, առաջանում են իրենց տեսական հիմնավորումը պահանջող նոր հայեցակարգեր:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի գիտությունն ունի իր **առջյուրները**: Չնակելուպելով տեսական եզրահանգումները, սահմանադրական իրավունքի գիտությունը հենվում է **աղբյուրների** ընդարձակ համակարգի վրա: Նման աղբյուրների թվին են պատկանում **հայրենական և արտասահմանյան գիտնականների աշխատությունները**, որոնք բովանդակում են սահմանադրական իրավունքի գիտության կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ դատադրություններ: Այդ աշխատանքներում կատարված քննական վերլուծությունները կազմում են գիտական ճանաչողության գործընթացի կարևոր փուլը և հանդիսանում են քաղաքակրթության զարգացման համաշխարհային փորձի նվաճումներով գիտության հարստացման մախաղթյալներ:

Սահմանադրական իրավունքի գիտության աղբյուրներ են հանդիսանում նաև **սահմանադրաիրավական նորմեր բովանդակող նորմատիվ իրավական ակտերը**, առաջին հերթին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Գիտությունը բացահայտում և տեսականորեն հիմնավորում է նորմատիվ իրավական ակտերում զետեղված հայեցակարգերը, սահմանադրաիրավական նորմերում օգտագործվող հասկացությունները, պարզաբանում դրանց փոխադարձ կապերը:

Գիտությունը չի կարող պատշաճ կերպով կատարել իր խնդիրները, եթե չեն մի գիտական ճանաչողության այնպիսի կարևոր աղբյուրի վրա, ինչպիսին է **պրակտիկան**, այսինքն այն գործընթացները, որոնք տեղի են ունենում կյանքում՝ սահմանադրաիրավական նորմերի և ինստիտուտներ

րի գործողությունների հիման վրա: Այդ պատճառով էլ սահմանադրական իրավունքի գիտության աղբյուր է հանդիսանում նաև պետական իշխանության մարմինների, իրավական հարաբերությունների բոլոր սուբյեկտների կոնկրետ պրակտիկ գործունեությունը, որն իրականացվում է սահմանադրական իրավունքի նորմերի հիման վրա:

§ 2. Սահմանադրական իրավունքի գիտության մեթոդները

Սահմանադրական իրավունքի գիտության ընդհանուր բնութագրում կարևոր նշանակություն ունեն հետազոտության ժամանակ նրա կողմից օգտագործված գիտական մեթոդները: Այդ մեթոդները բազմազան են՝ պատմական, իրավական-համեմատական, համակարգային, վիճակագրական, կոնկրետ սոցիոլոգիական և այլն:

Գիտությունը սահմանադրաիրավական բոլոր գործընթացները հետազոտում է դրանց **պատմական զարգացման** համատեքստում: Դա անհրաժեշտ է իրավական կարգավորման մեջ շարունակականության բացահայտման, իրավական կարգավորման և հասարակական զարգացման հիմնարար գործընթացների կապի, տվյալ փուլում ինչպես քաղաքական առումով, այնպես էլ նորմատիվ ակտերում նախապատվություն ստացած արժեքների մասին եզրահանգումներ անելու համար: Ահա թե ինչու է սահմանադրական իրավունքի գիտությունը բոլոր իրավական ինստիտուտներն ուսումնասիրում պատմական զարգացման համատեքստում՝ բացահայտելով դրանց կապը հասարակական գործընթացների հետ: Խնդրո առարկա գիտությունը ուսումնասիրում է նաև սահմանադրությունների և ընթացիկ սահմանադրաիրավական օրենսդրության զարգացման պատմությունը:

Սահմանադրական իրավունքի գիտությունը լայնորեն օգտագործում է նաև հետազոտման **իրավահամեմատական մեթոդը**: Այն ենթադրում է տարբեր երկրներում հասարակական հարաբերությունների միասեռ ուղղությունը կարգավորող սահմանադրաիրավական նորմերի համեմատական վերլուծություն: Այդ մեթոդը տվյալ բնագավառում կուտակված դրական փորձի օգտագործման, սահմանադրաիրավական կարգավորման արդյունավետ մոդելների բացահայտման կարևոր միջոց է:

Համեմատական առումով գնահատվում են աշխարհի տարբեր երկրների, այդ թվում նախկին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող պետությունների նորմատիվ իրավական ակտերը: Հասկապես հետաքրքիր է Ռուսաստանում սահմանադրական իրավունքի գիտության զարգացման փորձը, քա-

նի որ այն վերջին հարյուրամյակի ընթացքում բազային է համարվել (ժամանակակից իմաստով) հայկական սահմանադրական մտքի համար:

Գիտական հետազոտություններում առավել արդյունավետության հասնելու համար կարևոր պայման է ուսումնասիրման առարկայի նկատմամբ **համակարգային մոտեցման** կիրառումը: Սահմանադրական իրավունքի գիտությունը սահմանադրական իրավունքի ճյուղը դիտարկում է որպես ինքնուրույն համակարգ, ուսումնասիրում է դրա կառուցվածքը, բաղկացուցիչ տարրերը, դրանց հարաբերակցությունը, փոխադարձ կապերը, վերլուծում է նաև տվյալ ճյուղի յուրաքանչյուր ինստիտուտի համակարգը: Մեծ ուշադրություն է հատկացվում նաև սահմանադրական իրավունքի ճյուղի տեղին՝ Հայաստանի Հանրապետության իրավունքի ընդհանուր համակարգում (օրինակ, այլ ճյուղերի հետ նրա հարաբերակցությանը): Դա նպաստում է ճյուղի առարկայի ճիշտ սահմանմանը, իրավահարաբերությունների այլ տեսակներից սահմանադրաիրավական հարաբերությունների սահմանազատմանը, դյուրինացնում է իրավակիրառական գործունեությունը:

Վիճակագրական մեթոդը օգնում է վերլուծել սահմանադրաիրավական նորմերի գործողության արդյունավետությունը, հասարակական գործընթացների վրա դրանց ազդեցությունը: Սահմանադրական իրավունքի գիտությունը վերլուծում է նույնանուն ճյուղի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներին վերաբերող վիճակագրական տվյալները և վերջիններիս հիման վրա կատարում եզրահանգումներ: Այսպես, գիտական հետաքրքրություն են ներկայացնում ընտրություններին ընտրողների մասնակցության, նրանց ակտիվության մակարդակի բանական ցուցանիշները:

Մշակելով նմանատիպ տվյալները, սահմանադրական իրավունքի գիտությունը հիմնավորում է իրավական, քաղաքական և կազմակերպական այն միջոցները, որոնք կարող են նպաստել այդ ոլորտում բացասական երևույթների հաղթահարմանը:

Հետազոտությունների կոնկրետ սոցիոլոգիական մեթոդը սահմանադրական իրավունքի գիտության կողմից օգտագործվում է այն սոցիալական և քաղաքական ոլորտների ուսումնասիրության դեպքում, որոնց շրջանակներում տեղի է ունենում սահմանադրաիրավական նորմերի իրացումը: Այդ գործընթացում բացահայտվում են հասարակական գիտակցության զարգացման, հասարակական կարծիքի ձևավորման վրա ներգործող պայմանները, որոնք կանխորոշում են սահմանադրաիրավական այս կամ այն նորմերի բովանդակության նկատմամբ քաղաքացիների վարքագիծը:

§ 3. Հայաստանի սահմանադրական իրավունքի գիտության զարգացումը արդի փուլում

Հայաստանի սահմանադրական իրավունքի գիտությունը երբեք ինքնուրույն չի եղել: Այն կազմել է մինչև 1917 թվականին Ռուսաստանի պետական իրավունքի գիտության, հետագայում՝ Խորհրդային Միության պետական իրավունքի գիտության բաղկացուցիչ մասը: Ցարական Ռուսաստանի պետականագետների գիտական մշակումները 1917 թվականից հետո դեռ են մետվել, քանի որ չեն համապատասխանել իշխող նոր գաղափարախոսությանը՝ մարքսիզմ-լենինիզմին:

Խորհրդային շրջանում ձևավորվեց սոցիալիստական տիպի գիտություն, որի ելակետային դրույթները դարձան պետության և իրավունքի, ժողովրդավարության մասին մարքս-լենինյան ուսմունքի գաղափարները: Միայն վերջիններիս հիման վրա էին թույլատրվում նաև սահմանադրաիրավական հետազոտությունները:

Ցանկացած հետազոտության ելակետային դրույթները և եզրահանգումները պետք է հավաստեին խորհրդային պետության սոցիալիստական բնույթը, պետություն, որտեղ իբր հաստատվել է իրական ժողովրդաիշխանություն, վերացվել է մարդու կողմից մարդու շահագործումը, ձևավորվել է պատմական նոր հանրության՝ խորհրդային ժողովրդի բարոյաքաղաքական միասնությունը, իսկ հասարակական զարգացման օրինաչափություն է հանդիսանում ԽՄԿԿ-ի՝ քաղաքական ողջ համակարգի միջուկի, ղեկավար և ուղղություն տվող դերի բարձրացումը: Մարքսիզմ-լենինիզմի այդ բոլոր և այլ գաղափարախոսական դրույթները պետաիրավական գիտության համար կրում էին ղեկավար բնույթ, հանդիսանում նրա մեթոդաբանական հիմքը: Այդ պատճառով, մեթոդաբանական առումով, գիտական հետազոտություններին բնորոշ էր եզրահանգումների գաղափարախոսական կանխորոշվածությունը՝ եզրահանգումներ, որոնք պետք է հաստատեին սոցիալիստական գաղափարախոսության հիմնադրույթները:

Ասվածը, սակայն, հիմք չի տալիս դեռ նետել այդ ժամանակաշրջանի պետականագետների հետազոտությունների բոլոր արդյունքները: Եթե վերանանք զուտ գաղափարախոսական-քաղաքական գնահատականներից, որի շրջանակներում էր դրված սահմանադրական իրավունքի գիտությունը, ապա անվիճելի են զուտ իրավական տեսական հիմնախնդիրների ճանաչողության բնագավառի ակնառու նվաճումները:

Դա, առաջին հերթին, վերաբերում է ճյուղի ընդհանուր տեսական հիմնախնդիրներին, նրա յուրահատկության, առարկայի առանձնահատկությունների, պետաիրավական նորմերի իրացման եղանակների, պետաիրավական հարաբերությունների տեսակների, դրանց սուբյեկտների ուսումնասիրությանը: Լուրջ հետազոտություններ են կատարվել պետական իրավունքի աղբյուրների ուսումնասիրության, սահմանադրության՝ նրա գործառույթների և իրավաբանական հատկանիշների իրավաբանական նշանակության հիմնավորման ուղղությամբ:

Ծանրակշիռ հետազոտություններ են նվիրվել պետության ինքնիշխանության էությանը, ժողովրդավարական ներկայացուցչության տեսության տարբեր ասպեկտներին, անմիջական ժողովրդավարության ձևերին, անձի իրավական կարգավիճակի հիմնախնդիրներին և այլն: Ընդհանուր գաղափարախոսության շրջանակները որոշակի հնարավորություններ էին թողնում պետաիրավական հիմնախնդիրներին վերաբերող բանավեճերի, պետաիրավական գործող օրենսդրության, այդ թվում նաև սահմանադրական դրույթների քննադատության համար: Գիտությունը եզրակացություններ էր անում պետաիրավական կարգավորման զարգացման, դրանում առկա բացթողումների վերացման ուղիների վերաբերյալ:

Գիտական հետազոտությունները նպաստում էին օրենսդրական կոնկրետ ակտերի մշակմանը, պետաիրավական օրենսդրության համակարգմանը, օրենսդրական աշխատանքների ծրագրերի հետ կապված պրակտիկ գործունեությանը:

Գիտական հիմնախնդիրներով զբաղվում էին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող բոլոր միութենական հանրապետությունների գիտնականները: Դա վերաբերում է ինչպես պետականագիտության ընդհանուր տեսական ասպեկտներին, այնպես էլ յուրաքանչյուր ազգային հանրապետությանը բնորոշ յուրահատուկ հատկանիշներին:

Գիտական մշակումները կենտրոնացած էին միութենական և հանրապետական գիտությունների ակադեմիաների համապատասխան ինստիտուտներում, իրավաբանական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հայաստանում նման կենտրոններ էին Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը և Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

Նախկին ԽՍՀՄ տարածքում անկախ պետությունների կազմավորումը, դրանցից յուրաքանչյուրում ինքնուրույն իրավունքի համակարգե-

րի ձևավորումը նշանավորեցին պետաիրավական գիտության զարգացման նոր փուլ: Հայաստանի Հանրապետությունում հաստատվեց դրան անվանումը որպես **սահմանադրական իրավունքի գիտություն:**

Օգտագործելով պետական իրավունքի գիտության զարգացման նախորդ փուլի տեսական ներուժը, միաժամանակ սահմանադրական իրավունքի գիտությունը հրաժարվեց ճյուղի հիմնախնդիրների ուսումնասիրության նկատմամբ քարացած մոտեցումներից: Համամարդկային արժեքների գերակայության ճանաչումը, երկրի զարգացման, սոցիալիստական փուլին բնորոշ «ամեն ինչ պետության միջոցով» դրույթից ազատագրված քաղաքացիական հասարակության ձևավորման անհրաժեշտությունը, մարքս-լենինյան կամ որևէ այլ մենաշնորհային գաղափարախոսությունից, միակուսակցության սկզբունքից հրաժարումը՝ սահմանադրաիրավական ժամանակակից հետազոտությունների ելակետային կողմնորոշիչներն են:

Փոխվում են նաև հասարակության տնտեսական կյանքի կարգավորման իրավական ձևերի մեկնաբանության նկատմամբ գիտության մոտեցումները: Անցումը տնտեսավարման շուկայական եղանակին, սեփականության ձևերի բազմազանությանը (այդ թվում նաև մասնավոր սեփականության հաստատումը) պահանջում են նոր մոտեցումներ այդ ոլորտի սահմանադրական դրույթների տեսական վերլուծության նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի գիտության կարևորագույն խնդիրն է նաև Հանրապետության Հիմնական օրենքի հայեցակարգերի հիմնավորումը, որը (Հիմնական օրենքը) խտացված ձևով ամրագրել է պետության և հասարակության կառուցվածքի հիմնական սկզբունքները, սահմանադրաիրավական բոլոր ինստիտուտների ելակետային դրույթները:

§ 4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի ուսումնական դասընթացը

Հայաստանի Հանրապետության իրավաբանական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերը նախատեսում են ուսանողների կողմից իրավունքի բոլոր ճյուղերի, այդ թվում նաև Հայաստանի սահմանադրական իրավունքի ուսումնասիրությունը:

Սահմանադրական իրավունքի ճյուղի ուսումնասիրությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի գիտության բովանդակությունը կազմող տեսական մշակումների հի-

ման վրա: Գիտության տեսական դրույթների համակարգը, որն **իր ծավալով համարվում է նվազագույն անհրաժեշտը՝ ուսանողների կողմից ճյուղի էական բնութագրերի և նրա ինստիտուտների բովանդակության ընկալման, պրակտիկայում դրա նորմերը կիրառելու ունակություն մշակելու համար**, կազմում է Հայաստանի սահմանադրական իրավունքի ուսումնական դասընթացի բովանդակությունը: Ուսումնական դասընթացի համակարգի և բովանդակության համակողմանի արտացոլումը դասագիրքն է, որը հանձնարարվում է իրավասու պետական մարմինների կողմից:

Մակայն, հաշվի առնելով տարբեր մասնագիտացման իրավաբանների պատրաստման հետ կապված յուրահատուկ խնդիրները, սահմանադրական իրավունքի գիտության դասընթացի բովանդակությունը և համակարգը կարող են կրել այս կամ այն փոփոխությունները, ինչը արտացոլվում է տվյալ դասընթացի ծրագրում:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳԼՈՒԽ 3.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

§ 1. Սահմանադրության հասկացությունը և բնորոշ գծերը

Սահմանադրությունը, որպես իրավական ակտ, ժամանակակից ժողովրդավարական պետության իրավունքի համակարգում զբաղեցնում է ինքնուրույն և հատուկ տեղ, որը մյուս բոլոր իրավական ակտերից տարբերվում է մի շարք բնորոշ գծերով: Եթե ամենաընդհանուր ձևով փորձենք համակարգել այդ գծերը, ապա կարելի է ասել, որ **սահմանադրությունն այնպիսի նորմատիվ ակտ է, որը պետության իրավունքի ողջ համակարգի նորմերի նկատմամբ ունի բարձրագույն իրավաբանական ուժ և կոչված է կարգավորելու, մի կողմից, մարդու և հասարակության, մյուս կողմից, մարդու և պետության միջև հարաբերությունները, ինչպես նաև հենց իր՝ պետության կազմակերպման հիմունքները:**

Բերված սահմանումից երևում է, որ՝ ա) սահմանադրությունը նորմատիվ ակտ է, բ) այն ունի բարձրագույն իրավաբանական ուժ իրավական մյուս ակտերի նկատմամբ և գ) ունի հատուկ կարգավորման առարկա:

Սահմանադրության հասկացությունը ճիշտ ընկալելու համար փորձենք պարզաբանել սահմանադրության նշված հատկանիշներից յուրաքանչյուրի բովանդակությունը:

Սահմանադրությունը նորմատիվ ակտ է: Սովորաբար պետության իրավունքի համակարգը ներառում է տվյալ պետության մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը, ժողովրդի անմիջական կամաարտահայտությամբ (հանրաքվեով) ընդունված ակտերը, ինչպես նաև նրա (պետության) կողմից վավերացված միջազգային պայմանագրերը:

Բոլոր ժողովրդավարական պետությունները գործում են **իշխանությունների բաժանման սկզբունքի հիման վրա:** Դա նշանակում է, որ միասնական պետական իշխանությունն իրականացվում է երեք թևերով, երեք ուղղություններով՝ **օրենսդիր, գործադիր և դատական** իշխանությունների ձևերով: Ընդ որում, իշխանության յուրաքանչյուր թևը իրականացվում է պետական ապարատում այդ նպատակով ստեղծված հատուկ մարմնի

կամ մարմինների միջոցով: Օրենսդիր իշխանությունն իրականացվում է խորհրդարանների միջոցով, գործադիր իշխանությունը՝ կառավարությունների և կառավարման մյուս մարմինների, դատական իշխանությունը՝ արդարադատության մարմինների միջոցով:

Պետական յուրաքանչյուր մարմնի գործունեությունը, որպես կանոն, իրականացվում է համապատասխան իրավական ակտեր ընդունելու ձևով: Այսպես, խորհրդարանն իր գործունեությունն իրականացնում է **օրենքներ, որոշումներ** և այլ ակտեր ընդունելու ձևով, երկրի նախագահը՝ **հրամանագրեր և կարգադրություններ**, կառավարությունը՝ **որոշումներ**, արդարադատության մարմինները (դատարանները)՝ **դատավճիռներ, վճիռներ և որոշումներ** ընդունելու ձևով:

Կան երկրներ, որոնց իրավունքի համակարգը կազմված է միայն օրենսդիր և գործադիր մարմինների կողմից ընդունված ակտերից և միջազգային պայմանագրերից: Կան նաև այնպիսի երկրներ, որոնք իրենց իրավունքի համակարգի բաղկացուցիչ մասն են համարում արդարադատության մարմինների (դատարանների) կողմից ընդունված ակտերի մի մասը: Իրավունքի այդ հատվածը կոչվում է **նախադեպային իրավունք կամ դատական նախադեպ:** Դրա իմաստը կայանում է նրանում, որ կոնկրետ քրեական կամ քաղաքացիական գործերով դատարանի ընդունած դատավճիռը կամ վճիռն օգտագործվում է հետագայում նմանատիպ գործերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Ավելին, Մեծ Բրիտանիայում, օրինակ, նախադեպային իրավունքը ոչ միայն մտնում է երկրի իրավունքի համակարգի մեջ՝ ընդհանրապես, այլև համարվում է նրա չգրված սահմանադրության նորմերի կարևոր մասը:

Պետության իրավունքի համակարգը կազմող բոլոր այդ իրավական ակտերը, ելնելով դրանց իրավաբանական ուժից և այն ընդունող մարմնի տեղից պետական մարմինների համակարգում, բաժանվում են երեք մեծ խմբերի: Դրանք են՝ 1) օրենքներ, 2) ենթաօրենսդրական ակտեր և 3) միջազգային ակտեր: Իրավական ակտերի այս խմբերը գտնվում են որոշակի աստիճանական ենթակայության հարաբերության մեջ: Սանդղակի վերին մասում են **օրենքները**, որոնք կազմում են պետության իրավունքի համակարգի հիմնական և կարևոր մասը և գերակա են ենթաօրենսդրական ակտերի նկատմամբ:

Ենթաօրենսդրական են համարվում այն ակտերը, որոնք ընդունվում են գործադիր իշխանության մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Ենթաօրենսդրական ակտերի բնորոշ գիծն այն է, որ դրանք ընդունվում են օրենքների հիման վրա և ի կատարումն դրանց: Պետության գործադիր մարմիններն ստեղծվում են,

որպեսզի կենսագործեն, կյանքում ի կատար ածեն օրենքներում ամբողջաբար համձնարարականները: Ուստի, ինչպես նրանց գործունեությունը, այնպես էլ նրանց կողմից ընդունված ակտերը չեն կախող հակասել օրենքին կամ բովանդակել այնպիսի նորմեր, որոնք չեն նախատեսված օրենքում: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6 հոդվածում գրված է. «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին», իսկ 56 հոդվածում՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագրեր ու կարգադրություններ, որոնք չեն կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին:

Ենթաօրենսդրական ակտերի նկատմամբ ունենալով գերակայություն, օրենքներն իրենց հերթին միատարր չեն: Դրանք կազմում են մի ամբողջական համակարգ, որի ներսում տարբեր տեսակի օրենքները համակարգվում են ըստ իրավաբանական ուժի:

Պետությունների օրենքների համակարգը, որպես կանոն, բաղկացած է Սահմանադրությունից, սահմանադրական օրենքներից և սովորական օրենքներից (որոնց մեջ են մտնում նաև օրենսգրքերը):

Դրա հետ մեկտեղ, պետական կառուցվածքի դաշնային ձև ունեցող երկրներում, նշված օրենքներից բացի, ընդունվում են նաև դաշնային օրենքներ, որոնք իրենց իրավաբանական ուժով գերակայում են դաշնության սուբյեկտների կողմից ընդունված օրենքներին: Նման օրենքներ կան, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում և դաշնային կառուցվածք ունեցող մյուս երկրներում:

Մակայն, անկախ այն բանից՝ պետությունը ունիտար է, թե դաշնային և նրա օրենքների համակարգն ինչպիսի անվանումներով օրենքներ է պարունակում, գործում է պետությունների համար պարտադիր մի կանոն, բոլոր օրենքների, ուրեմն և պետության ողջ իրավաունքի համակարգի **բուրգի գազաբին գտնվում է Սահմանադրությունը**:

Խնդիրն այն է, որ Սահմանադրությունն, որպես իրավական ակտ, մյուս բոլոր իրավական ակտերից տարբերվում է մի շարք հատկանիշներով:

Առաջին, սահմանադրությունը ժամանակակից իմաստով, ի տարբերություն մյուս իրավական ակտերի, **ընդունվում է ժողովրդի կողմից (հանրաքվեի միջոցով) կամ նրա անունից**: Այդ սկզբունքի գործողությունն սկսվել է այն ժամանակներից, երբ ստեղծվել է սահմանադրության ընդունման համար անհրաժեշտ պայմաններ (XVIII դար):

Այդ իմաստով համընդհանուր ճանաչում ունի այն տեսակետը, որ սահմանադրությունը բուրժուական հեղափոխությունների ծնունդ է, որի միջոցով բուրժուական ցանկանում էր սահմանափակել միապետների և ֆեոդալների իշխանությունը: Ժողովրդական լայն զանգվածներին այդ հեղափոխական պայքարին ներգրավելու համար նա գտնում էր, որ սահմանադրության մեջ պետք է ամրագրվի ողջ ժողովրդի կամքը որպես բարձրագույն իշխանություն, և նրան պետք է տրվի բարձրագույն իրավաբանական ուժ: Այդ միտքը միջնադարում Ժան Ժակ Ռուսոյի կողմից ձևակերպվեց որպես **հասարակական դաշինքի** տեսություն, համաձայն որի՝ սահմանադրության ստեղծման համար անհրաժեշտ է բոլոր քաղաքացիների համաձայնությունը:

Սահմանադրության այս էական հատկանիշն ընդունելի է նաև ժամանակակից ժողովրդավարական երկրների սահմանադրական պրակտիկայում, որն իր արտացոլումն է գտնում, մասնավորապես, նրանց սահմանադրությունների նախաբաններում (պրեամբուլա): Այսպես, Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրության (1787 թ.) նախաբանում ասված է. «Մենք, Միացյալ Նահանգների ժողովուրդս, ... հիմնադրում և ընդունում ենք այս Սահմանադրությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների համար», իսկ Գերմանիայի Դաշնային Հանրապետության 1949 թ. Սահմանադրության նախաբանում՝ «... Գերմանական ժողովուրդը իր հիմնադիր իշխանության ուժով տվեց իրեն ներկա հիմնական օրենքը...»: Նման ձևակերպումներ են բովանդակում նաև մի շարք այլ երկրների սահմանադրությունների նախաբանները²:

Սահմանադրություններն ընդունվում են ոչ միայն ժողովուրդների կողմից, այլ նաև **ժողովրդի անունից**՝ նրա կողմից ազատ ընտրությունների միջոցով ձևավորված կառույցների (խորհրդարան, կոնվենտ, սահմանադիր ժողով և այլն) միջոցով: Այսպես, Իտալիայի Հանրապետության Սահմանադրության նախաբանում նշվում է, որ այն հավանության է արժանացել և ստորագրվել Սահմանադիր ժողովի կողմից՝ 1947 թ. դեկտեմբերի 22-ին: Ճապոնիայի 1946 թ. Սահմանադրության նախաբանում գրված է. «Մենք, Ճապոնիայի ժողովուրդս, գործելով Խորհրդարանում պատշաճ ձևով ընտրված մեր ներկայացուցիչների միջոցով... հաստատում ենք ներկա Սահմանադրությունը»: Խորհրդարանի և Սահմանադիր

² Տե՛ս նաև Ֆրանսիայի (1958թ.), Իռլանդիայի (1990թ.), Իսպանիայի (1978թ.) և այլ երկրների սահմանադրությունները (Конституции государств Европейского Союза. М., 1997, С.Ш.е.ո.Ն.Յ.Գ.Կ. 181, 665, 325, 371 էջեր):

ժողովի կողմից են ընդունվել մաս մի շարք այլ երկրների (Կանադա, Պորտուգալիա և այլն) սահմանադրությունները³:

Հայաստանի նախորդ երեք սահմանադրությունները (1922 թ., 1937 թ., 1978 թ.) ընդունվել են ժողովրդի անունից: Միայն 1995 թ. Սահմանադրության նախաբանում գրված է, որ «Հայ ժողովուրդը ... իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը... ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»: Եվ Հայոց պատմության մեջ առաջին անգամ 1995 թ. հուլիսի 5-ին հայ ժողովուրդը հանրաքվեի միջոցով ընդունեց իր Սահմանադրությունը:

Երկրորդ, ժողովրդի կողմից ընդունվելու հանգամանքը պայմանավորում է սահմանադրության հաջորդ կարևոր առանձնահատկությունը՝ **նրա հիմնարար բնույթը:**

Ժողովրդավարական պետություններում ժողովուրդն ինքնիշխանության կրողը և իշխանության միակ աղբյուրն է: Պետական իշխանությանը ժողովրդի կամքի արտահայտման, դրանորման բարձրագույն ձևն է, ուստի միայն այդ իշխանությունն է, որ կարող է ունենալ հիմնարար բնույթ: Վերջինիս բովանդակությունը ներառում է մաս ժողովրդի իրավունքը՝ ընդունելու սահմանադրություն և դրանում ամրագրելու հասարակության և պետության կառուցվածքի այնպիսի սկզբունքներ ու հիմքեր, որոնք ընտրում է իր համար տվյալ ժողովուրդը: Հետևաբար, **միայն ինքնիշխան ժողովուրդն է իրավասու սահմանադրության ընդունման և դրա մեջ փոփոխություններ կատարելու ճանապարհով սահմանելու և փոփոխելու հասարակության և պետության կառուցվածքի հիմունքները:** Այդ է վկայում սահմանադրական զարգացման համաշխարհային պատմությունը: Սահմանադրության աշխարհ գալու պահից սահմանադրություն ունեցող բոլոր երկրների հասարակական և պետական կառուցվածքի հիմնախնդիրներն իրենց սահմանումն ու փոփոխումն են ստացել սահմանադրական ամրագրման ճանապարհով: Այդ մասին են վկայում Հայաստանի Խորհրդային Հանրապետության 1922 թվականի, Հայաստանի Հանրապետության 1995 թվականի և ժողովրդավարական այլ երկրների սահմանադրությունները:

Սահմանադրության հիմնարար բնույթն արտահայտվում է մաս նրանում, որ **դրա հանձնարարականները նախահիմք են համարվում բոլոր տեսակի իրավահարաբերությունների կարգավորման համար:** Այդ է

պատճառը, որ ինչպես օրենքները, այնպես էլ ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սահմանադրության հիմքի վրա և չպետք է հակասեն դրան: Իսկ այն իրավական ակտերը, որոնք ընդունվել են սահմանադրությունից առաջ կամ սահմանադրության մեջ կատարված փոփոխություններից առաջ, պարտադիր կարգով պետք է համապատասխանեցվեն սահմանադրությանը կամ դրանում կատարված փոփոխություններին:

Երրորդ, սահմանադրության կարևոր առանձնահատկություններից է նրա **յուրահատուկ կարգավորման առարկան,** այսինքն՝ հասարակական հարաբերությունների այն հատուկ բնագավառները, որոնք պահանջում են սահմանադրական կարգավորում: Ի տարբերություն մյուս իրավական ակտերի, որոնք կյանքի են կոչվում կարգավորելու որևէ կոնկրետ բնագավառ կամ որոշակի խումբ հասարակական հարաբերություններ, սահմանադրության կարգավորման առարկան ունի **համապարփակ բնույթ:** Այն ընդգրկում է հասարակության կյանքի բոլոր ոլորտները՝ քաղաքական, տնտեսական, հոգևոր և այլն, ընդ որում, կարգավորելով այդ ոլորտների առավել կարևոր, հիմնային, առանցքային հասարակական հարաբերությունները: Այդպիսիք են հանդիսանում սեփականության ձևերն ու բովանդակությունը, անհատի և պետության փոխհարաբերությունները, պետական իշխանության պատկանելությունը և իրացման ձևերն ու կառուցակարգերը, պետության և քաղաքական կուսակցությունների տեղն ու հարաբերակցությունը քաղաքական համակարգում և այլն:

§ 2. Սահմանադրության հատուկ իրավաբանական բնույթը

Սահմանադրության, որպես իրավական ակտի, բնորոշ գծերի շարքում առանձնակի կարևորվում է նրա **հատուկ իրավաբանական բնույթը:** Այն դրսևորվում է ամենից առաջ նրա **բարձրագույն իրավաբանական ուժի մեջ,** որն իր ամրագրումն է ստացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6 հոդվածում: Համաձայն այդ հոդվածի՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին»:

Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը նշանակում է.

առաջին, ցանկացած իրավական ակտ, լինի օրենք, թե ենթաօրենսդրական ակտ, **պետք է համապատասխանի սահմանադրությանը:**

³ Ժողովրդի անունից սահմանադրություններն ընդունվում են առավելապես խորհրդարանական կառավարման ձևի երկրներում:

Բոլոր իրավական ակտերի համապատասխանությունը սահմանադրությանը ամենևին չի նշանակում, որ վերջիններս անպայման պետք է վերարտադրեն այն: Այդ ակտերի նորմերն ուղղակիորեն չպետք է հակասեն սահմանադրության նորմերին և չպետք է դուրս գան դրանց պահանջների շրջանակներից: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4 հոդվածում գրված է. «Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ»: Հայաստանի Հանրապետության 2011թ. մայիսի 26-ին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ընտրությունները կազմակերպվում և անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Եթե օրենսգրքն անտեսեր Սահմանադրությամբ նախատեսված ընտրական սկզբունքներից որևէ մեկը, ապա Սահմանադրության 6 հոդվածի ուժով այն կհամարվեր անվավեր,

Երկրորդ, սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը նշանակում է նաև, որ պետական իշխանության (երեք թևերի) **բոլոր մարմինների և նրանց պաշտոնատար անձանց գործողությունները պետք է համապատասխանեն սահմանադրությանը:** Այսինքն՝ բոլոր պետական մարմինները և պաշտոնատար անձինք ոչ միայն պետք է պահպանեն սահմանադրությունը, այլև գործեն սահմանադրությամբ և այլ օրենքներով իրենց համար որոշված լիազորությունների շրջանակներում: Այդ պահանջն ուղղակիորեն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5 հոդվածում. «Պետական իշխանությունն իրականացնում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով»:

Սահմանադրական այս նորմի պահանջներից ամեն մի շեղում պետական ասպարատի այս կամ այն օղակի, կամ պաշտոնատար անձի կողմից (գործողության կամ անգործության ձևով) առաջ կբերի օրենքով սահմանված պատասխանատվություն: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66 հոդվածում (3-րդ մաս) գրված է. «Պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխա-

նատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության»: Եվ եթե ՀՀ ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության, արդարադատության կամ այլ պետական մարմնի կողմից Ազգային ժողովի պատգամավորի ազատությունը սահմանափակվի բերված հողվածում չնախատեսված որևէ այլ ձևով, ապա մեղավոր պետական մարմնի կամ նրա պաշտոնատար անձի գործողությունը կդիտվի որպես իշխանազանցություն, և նա կենթարկվի ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի: Կամ Սահմանադրության 88 հոդվածում ասված է. «Կառավարության անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնկառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք»: Եթե անձը կառավարության անդամ է, միաժամանակ Ազգային ժողովի պատգամավոր և սահմանված ժամկետում չի հրաժարվում իր պատգամավորական մանդատից, ապա Հանրապետության Նախագահի հրամանագրով նա կատարվի կառավարության անդամի պարտականություններից.

Երրորդ, սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը արտահայտվում է նաև այն բանում, որ օրենքները և մյուս ակտերն ընդունվում են **սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից և սահմանադրությամբ նախատեսված կարգով:** Այդ հատկանշի շնորհիվ սահմանադրությունը հանդես է գալիս որպես ազգային միասնական իրավունքի հիմնական աղբյուր, նրա միջուկը, որի հիմքի վրա կառուցվում է պետության ողջ նորմատիվ իրավունքի համակարգը: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսվում է, որ «Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը» (62 հոդվ.): Այդ նույն հոդվածով նախատեսվում է, թե որ հարցերի վերաբերյալ և որ դեպքերում Ազգային ժողովը ընդունում է որոշումներ, որոնք ստորագրում և հրապարակում է ԱԺ նախագահը:

Նույն կարգով սահմանված են նաև ՀՀ գործադիր մարմինների կողմից ընդունվելիք ակտերի տեսակները և դրանց ընդունման կարգը: Այսպես, Սահմանադրությամբ ամրագրված է, որ «Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագրեր և կարգադրություններ...» (56 հոդվ.): Կամ՝ ՀՀ կառավարությունն ընդունում է որոշումներ, որոնք ստորագրվում են վարչապետի կողմից (86 հոդվ.): Սահմանադրությամբ նախատեսվում են նաև վարչապետի, դատաբանների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, սահմանադրական դատարանի և մյուս պե-

տական մարմինների կողմից ընդունվելիք ակտերի տեսակները, ընդունման կարգը, իսկ երբեմն էլ՝ դրանց իրավաբանական ուժը:

Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի նման դրսևորումները հասուկ են նաև ժողովրդավարական մյուս երկրներին: Այսպես օրինակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (ընդունվել է 1993 թ. դեկտեմբերի 12-ին) 15 հոդվածում գրված է. «Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, անմիջական գործողություն և կիրառվում է Ռուսաստանի Դաշնության ողջ տարածքում: Ռուսաստանի Դաշնությունում ընդունված օրենքները և մյուս իրավաբանական ակտերը չպետք է հակասեն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը»:

Սակայն հարկ է գիտենալ, որ արտասահմանյան որոշ (մասնավորապես՝ զարգացած) ժողովրդավարական պետությունների հիմնական օրենքները սովորաբար նման նորմեր չեն բովանդակում: Սակայն դա չի նշանակում, որ նրանց սահմանադրություններն իրենց ազգային իրավունքի համակարգում չունեն բարձրագույն իրավաբանական ուժ: Երկրագնդի առաջին սահմանադրությունից (որն ընդունվել է ԱՄՆ-ում 1787 թ.) անցել է ավելի քան երկու հարյուր տարի: Սահմանադրական կարգի զարգացման ավելի քան երկդարյա փորձի շնորհիվ սահմանադրությունների մասն հատկանիշներն այդ երկրների բնակչության կողմից ըմկվում են որպես ինքնըստինքյան ենթադրվող, որպես անառարկելի օրինաչափություն, որպես սահմանադրական սովորույթ: Սահմանադրությունն այդ երկրներում օգտվում է այնպիսի լայն հեղինակությունից, որ հազիվ թե որևէ մեկը կասկածի տակ առնի դրա բարձրագույն իրավաբանական ուժ ունենալու հանգամանքը: Պատահական չէ, որ տարբեր երկրներում սահմանադրությունը անվանվում է Հիմնական օրենք կամ օրենքների օրենք:

Սահմանադրությանն իրավական մյուս ակտերի նկատմամբ տրված նման գերակայությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

առաջին. այն պայմանավորված է, ամենից առաջ, դրանով կարգավորվող հասարակական հարաբերությունների ***առանձնակի կարևորությանը***: Սահմանադրությունը կարծես թե հիմնադրում է պետության հիմնական ինստիտուտները, առաջին հերթին, մարդու իրավական վիճակը և դրանով իսկ ազդում նրա (պետության) ամբողջ իրավաստեղծ գործունեության բովանդակության վրա: Խնդիրն այն է, որ պետականորեն միավորված հասարակության մեջ բոլոր հանրային բնույթի իրավահարաբերությունները, վերջին հաշվով, պետության և անձի միջև ծագած

հարաբերություններ են: Պետության բոլոր ինստիտուտների անմիջական և հիմնական մպատակը մարդկանց անհատական և կոլեկտիվ իրավունքների ու ազատությունների իրականացումն է: Իսկ այդ իրավունքները և ազատություններն իրենց ամրապնդումն են ստանում միայն պետության հիմնական օրենքում.

երկրորդ. սահմանադրության գերակայության հիմքերից է նաև այն, որ դրանում հաճախ ուղղակի մատնանշվում է, թե այս կամ այն իրավաբարաբերությունն ինչ իրավական ակտով պետք է կարգավորվի: Այդ պատճառով հիմնական օրենքը խթանում է պետական մարմինների իրավաստեղծ գործունեությունը և նպաստում ազգային իրավունքի ձևավորմանն ու զարգացմանը: Այսպես, օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30.1 հոդվածում նշված է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարման կարգը սահմանվում է օրենքով» կամ 61 հոդվածում՝ «Հանրապետության Նախագահի վարձատրության, սպասարկման և անվտանգության ապահովման կարգը սահմանվում է օրենքով», 85 հոդվածում՝ «Կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով»: Նմանատիպ հանձնարարություններ են բովանդակում նաև Սահմանադրության 68, 76, 95, 97, 100, 103, 110 և այլ հոդվածները:

Դա նշանակում է, որ համապատասխան պետական մարմինները (սովյալ դեպքում ՀՀ Ազգային ժողովը և Հանրապետության Նախագահը) պարտավոր են Սահմանադրությամբ նշված հարցերի վերաբերյալ ընդունել համապատասխան իրավական ակտեր: Այդ առնչությամբ ՀՀ Ազգային ժողովը 1995-2011թթ. ընդունել է բազմաթիվ օրենքներ և օրենսգրքեր: Կամ 2007թ. հուլիսի 18-ին Հանրապետության Նախագահն ընդունեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» հրամանագիր: Սահմանադրությամբ որոշված բնագավառների վերաբերյալ իրավական ակտերի ընդունման գործընթացը շարունակվում է.

երրորդ. սահմանադրության գերակայությունը՝ իրավական մյուս ակտերի նկատմամբ, թելադրված է նաև ***ազգային իրավունքի համակարգի ամբողջականության և ներդաշնակ կիրառության անհրաժեշտությանը***: Այսպես, Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգը ընդգրկում է. ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, բ) Հայաստանի Հանրապետության օրենքները, գ) Սահմանադրական

դատարանի որոշումները, դ) ԱԺ որոշումները, ե) Հանրապետության Նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները, գ) կառավարության որոշումները, է) վարչապետի որոշումները, ը) ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումները, Կենտրոնական բանկի նախագահի որոշումներն ու կարգադրությունները, թ) ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, ժ) կարգավորող հանձնաժողովների որոշումները, ի) նախարարների հրամանները, յ) մարզպետների (Երևանի քաղաքապետի) որոշումները և կարգադրությունները, խ) տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները և այլն⁴:

Իրավական ակտերի այդ հսկայական զանգվածում որպեսզի հնարավոր լինի ապահովել դրանց կիրառությունը և խուսափել բախումներից, դրանց միջև սահմանվում է համաստորադասություն՝ բերված հերթականությամբ: Սահմանափակ յուրաքանչյուր աստիճանի վրա գտնվող ակտ իր իրավաբանական ուժով ստորադասվում է վերին աստիճանի վրա գտնվող ակտին, ուստի չպետք է հակասի դրան: Իսկ իրավունքի համակարգի բոլոր ակտերը չպետք է հակասեն սահմանադրությանը:

Իրավական ակտերի նման աստիճանականություն է սահմանված սահմանադրություն ունեցող բոլոր երկրներում: Որոշակի ինքնատիպությամբ առանձնանում է Ռուսաստանի Դաշնության հիմնական օրենքը, որը չի սահմանափակվում միայն Սահմանադրության գերակայությամբ: Դրա առաջին գլուխը («Սահմանադրական կարգի հիմունքները») ժամանակակից Ռուսաստանի կյանքի և գործունեության հիմնարար ոլորտների սահմանադրական կարգավորման ելակետային սկզբունքներն ամրագրելուց զատ՝ հիմք է հանդիսանում Ռուսաստանի ոչ միայն գործող օրենսդրության և մյուս իրավական ակտերի ողջ համակարգի համար, այլև հենց իր՝ Սահմանադրության մյուս գլուխների դրույթների համար: Դա նշանակում է, որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մյուս գլուխների նորմերը չեն կարող հակասել առաջին գլխի («Սահմանադրական կարգի հիմունքները») նորմերին, հակասակ դեպքում դրանք կճանաչվեն որպես ոչ սահմանադրական և կդադարեցվի դրանց գործողությունը: Այդ միտքն ուղղակիորեն ձևակերպված է ՌԴ Սահմանադրության առաջին գլխի 16 հոդվածում (2-րդ մաս), ուր ասված է. «Ներկա Սահմանադրության ոչ մի այլ դրույթ չի կարող հակասել Ռուսաստանի Դաշնության սահմանադրական կարգի հիմունքներին»:

⁴ Տե՛ս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (փոփոխություններով և լրացումներով) (ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N15 2002) 8-23 հոդվածները:

Ստացվում է, որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության առաջին գլուխը՝ («Սահմանադրական կարգի հիմունքները»), փաստորեն, Սահմանադրություն է Սահմանադրության մեջ: Համաշխարհային սահմանադրական շինարարության պրակտիկան նմանատիպ այլ դեպք չի արձանագրել:

Որոշակի յուրահատկությամբ առանձնանում է սահմանադրության և *միջազգային-իրավական նորմերի* միջև գոյություն ունեցող կապը: Ինչպես արդեն ասվեց, պետությունների ազգային իրավունքի բաղկացուցիչ մասն են կազմում նրանց կողմից վավերացված միջազգային-իրավական ակտերը: Սակայն երկրի հիմնական օրենքի և միջազգային-իրավական ակտերի միջև փոխհարաբերությունները կառուցվում են ոչ ամբողջովին այն սկզբունքներով, որոնք առկա են հիմնական օրենքի և ազգային օրենսդրության միջև: Ավելին, այդ հարցում միատարր չեն նաև տարբեր պետությունների մոտեցումները:

Առաջին, առավել տարածված է այն ձևակերպումը, համաձայն որի կնքված և վավերացված միջազգային պայմանագրերը հանդիսանում են պետության ազգային օրենսդրության, իրավունքի համակարգի բաղկացուցիչ մասը: Նման բովանդակությամբ նորմեր են ամրագրված Ֆրանսիայի, ԳՖՀ, ՌԴ, ՀՀ հիմնական օրենքներում:

Երկրորդ, կան երկրներ, որտեղ առավելությունը տրվում է միջազգային հանրաճանաչ նորմերին՝ ազգային օրենսդրության համեմատ, ինչպես նաև ճանաչվում են քաղաքացիների համար այդ նորմերով սահմանված իրավունքները և պարտականությունները: Այդպիսին է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, որի Սահմանադրության 25 հոդվածում նախատեսված է, որ «Միջազգային իրավունքի ընդհանուր նորմերը հանդիսանում են Դաշնության իրավունքի մաս: Դրանք ունեն առավելություն օրենքների նկատմամբ և դաշնային տարածքի բնակչության համար անմիջականորեն առաջացնում են իրավունքներ ու պարտականություններ»:

Միջազգային նորմերի նկատմամբ մոտավորապես նման մոտեցում է նկատվում Իտալիայի Հիմնական օրենքում: Դրա 10 հոդվածում գրված է. «Իտալիայի իրավակարգը համաձայնեցվում է միջազգային հանրաճանաչ նորմերի հետ»:

Երրորդ, երկրների մեծ մասում սահմանադրական մակարդակի է բարձրացված հետևյալ դրույթը. եթե պետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը: Այդպիսին են, օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադ-

րության 6 հոդվածի 4-րդ մասը, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 15 հոդվածի 4-րդ մասը և մի շարք այլ երկրների հիմնական օրենքների համապատասխան հոդվածները:

Չորրորդ, կան պետություններ, որտեղ կնքված միջազգային պայմանագրերի նորմերն առավելություն ունեն ոչ միայն ազգային օրենսդրության և ողջ իրավունքի համակարգի նկատմամբ, այլև հենց իր՝ սահմանադրության նկատմամբ: Այդ մասին է վկայում Ֆրանսիայի Սահմանադրության 54 հոդվածը, որտեղ ասված է, որ եթե Սահմանադրական խորհուրդը (Ֆրանսիայի սահմանադրական հսկողության մարմինը) հայտարարում է, թե միջազգային որևէ պայմանագիր բովանդակում է Հիմնական օրենքին հակասող դրույթներ, ապա այդ միջազգային ակտի վավերացման հարցը կարող է լուծվել միայն Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

Դիշտ այդպիսի բովանդակություն ունեւ Հայաստանի Հանրապետության 1995թ. խնդրադրությամբ Սահմանադրության 6 հոդվածի 6-րդ մասի շարադրամբը: 2005թ. փոփոխություններով՝ «Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել» (6 հոդվ., 4-րդ մաս):

Արդեն ասվեց, որ եվրոպական շատ երկրների իրավունքի համակարգում չի հռչակվում սահմանադրության գերակայությունը՝ որպես ինքնըստինքյան հասկանալի, որպես օրինաչափ, բնական երևույթ: Ուրեմն, եթե այդ երկրները ճանաչում են միջազգային հանրաճանաչ նորմերի գերակայությունն իրենց ազգային օրենսդրության նկատմամբ, ապա այն հավասարապես վերաբերում է նաև նրանց սահմանադրություններին:

Հինգերորդ, մի շարք երկրներում չի ճանաչվում միջազգային պայմանագրերի գերակայությունը ներպետական օրենսդրության նկատմամբ: Օրինակ, Ճապոնիայի Սահմանադրության 98 հոդվածում (2-րդ մաս) գրված է. «Ճապոնիայի կողմից կնքված պայմանագրերը և միջազգային իրավունքի սահմանված նորմերը պետք է բարեխղճորեն պահպանվեն»: Սահմանադրական այս ձևակերպումից զատ, Ճապոնիայի Հիմնական օրենքում միջազգային իրավական նորմերի մասին որևէ այլ նշում չկա:

Շվեդիայում միայն բացառիկ դեպքերում է թույլատրվում միջազգային պայմանագրի անմիջական գործողությունը, երբ խորհրդարանն ընդունում է որոշում՝ այն հրապարակել «Շվեդիայի օրենքների ժողովածու»-ում, դրանով իսկ այդ պայմանագրին տալով օրենքի ուժ: Մնացած դեպքերում միջազգային պայմանագրերը որևէ ազդեցություն չունեն երկրի ներպետական օրենսդրության նկատմամբ:

§ 3. Սահմանադրության էությունը

Սահմանադրության հասկացության և դրա իրավաբանական բնույթի բացահայտման համար կարևոր է նաև դրա էության լուսաբանումը: Այն վիճաբանությունների առարկա է հանդիսացել հենց իր՝ սահմանադրության մասին գաղափարի ծննդյան պահից: Կարծիքները բաժանվում են, մասնավորապես, այն հարցի շուրջ, թե երբ, ինչպես և ինչի համար այն ծագեց, հասարակական ինչ անհրաժեշտության թելադրանքով այն կյանքի կոչվեց:

Սահմանադրությունը, որպես գաղափար և որպես իրավական ակտի ձև, մարդկությանը հայտնի է դարձել և նրա կողմից օգտագործվել անհամեմատ ուշ ժամանակներում, քան իրավունքի մյուս ձևերը՝ օրենքներն ու մյուս իրավական ակտերը: Վերջիններս նրա կողմից օգտագործվել են դեռևս մեր թվարկությունից առաջ՝ 4-3 հազարամյակում: Մեզ հայտնի առաջին օրենքների ժողովածուն Շումերական պետության թագավոր Ուր-Նամուի ժողովածուն է (մ.թ.ա. 3-րդ հազարամյակ): Նշված ժամանակաշրջանում է, որ աշխատանքներ են կատարվում օրենսդրության և դատական պրակտիկայի համակարգման ուղղությամբ: Այդ կապակցությամբ հայտնի է եղել, մասնավորապես, Լագաշ քաղաքապետությունը (մ.թ.ա. 3-րդ հազարամյակ), որտեղ կատարվել են լայն կոդիֆիկացիոն աշխատանքներ: Գրեթե նույն ժամանակաշրջանում համակարգված օրենսդրություն են ունեցել Եգիպտոսը (Համուրաբիի օրենքները), Հնդկաստանը (Մանուի օրենքները) և այլ ստրկատիրական պետություններ:

«Սահմանադրություն» արտահայտությունն առաջին անգամ օգտագործվել է մ.թ.ա. 4-րդ դարում՝ հունական մեծ մտածող Արիստոտելի (384-322 մ.թ.ա.) կողմից: Սակայն Արիստոտելի մոտ «սահմանադրություն» հասկացությունն ուներ շատ նեղ, սահմանափակ իմաստ: Այդ արտահայտությունը նա օգտագործում էր այն ժամանակ, երբ խոսք էր գնում պետության կառուցվածքի, պետական իշխանության արդյունավետ կազմակերպման, նրա՝ ժողովրդավարական և արդարացի լինելու մասին: Այդ է պատճառը, որ իրավաբանական տարբեր աղբյուրներում սահմանադրության ծագման մասին գրելիս՝ հեղինակները սովորաբար նշում են, որ այն առաջացել է լատինական «constitution» բառից, որը նշանակում է «սահմանում» կամ «կառուցվածք»:

Չնայած դրան, ոչ ստրկատիրական և ոչ էլ դրան փոխարինելու եկած ֆեոդալական պետություններում չստեղծվեցին սահմանադրություն-

ներ, որպես պետության հիմնական օրենք, որում ամրագրվեր թեկուզ նրանց պետական կառուցվածքը:

Հին Հունաստանում և Հին Հռոմում երկար ժամանակ սահմանադրություն էին կոչվում կայսրերի, միապետների կողմից ընդունված առանձին ակտերը, որոնք ունեին իրավունքի աղբյուրի ուժ: Այսպես, բյուզանդական կայսր Ֆլավի Հուստինիանոսի (կառավարել է 527-565թթ.) անվան հետ է կապված հանրահայտ հռոմեական իրավունքի կողմնակա-ցիան, որը Արևմտյան Եվրոպայում արդեն 12-րդ դարում ստացել էր «Corpus Juris Civilis» («Քաղաքացիական իրավունքի ժողովածու») անվանումը: Այդ ժողովածուն բաղկացած է չորս մասերից: Դրա առաջին մասը կոչվում է «Հուստինիանոսի ժողովածու» («Codex Justinianus»): Այդ ժողովածուն (որը ուժի մեջ մտավ 529թ.) ընդգրկում է բյուզանդական կայսրերի հրամանագրերը՝ սկսած Ադրիանայից մինչև Հուստինիանոս կայսրը: Այդ բոլոր հրամանագրերը անվանվում են սահմանադրություններ (constitutiones):

Ժողովածուի երկրորդ մասը կոչվում էր «Դիգեստներ և Պանդեկտներ»⁵ («Digesta seu Pandectae»): Այն իր մեջ ընդգրկում է հռոմեական դասական իրավաբանների (40 հոգի) մոտ 2 հազար աշխատություններից վերցված հատվածներ, որոնք համակարգված են որոշակի հերթակա-նությամբ:

Հատկանշական է, որ Հուստինիանոս կայսրը Դիգեստներ կազմելու, հաստատելու և հրատարակելու կապակցությամբ ընդունած ակտերը նույնպես անվանում է սահմանադրություններ: Այսպես, «Դիգեստները կազմելու վերաբերյալ» սահմանադրությունը հրապարակվել է 530թ. դեկտեմբերի 15-ին, «Դիգեստների հաստատման մասին» սահմանադրու-թյունը՝ 533թ. դեկտեմբերի 16-ին: Հետաքրքիր է, որ Հուստինիանոս կայսրը սահմանադրություն է անվանում նաև իր ակտը, որով իր գոհունակու-թյունն է հայտնում Դիգեստների ստեղծմանը մասնակցող իրավաբաններին (Ֆենոֆիլ, Դորոֆեյ, Ֆեոդոր, Իսիդոր, Անատոլի, Ֆալլեյ, Կրատին, Սաքամինի) և հանձնարարում կազմակերպել առաջին տարվա իրավուն-քի ուսուցումը՝ ըստ նոր կազմված իրավունքի աղբյուրների:

Ասվածից պարզորոշ երևում է, որ «սահմանադրություն» հասկա-ցությունն իր ծագման պահից չի օգտագործվել այն իմաստով, ինչ ժամա-նակակից պետությունների հիմնական օրենքները: Այն գրեթե նույնպիսի

⁵ «Դիգեստը» հունական բառ է, որը նշանակում է բաժանել (անջատել) և համա-կարգել: «Պանդեկտը» նույնպես հունական բառ է, որը նշանակում է վիակատար ժողովածու:

բովանդակություն է ունեցել նաև ֆեոդալական կարգերի օրոք: Որոշ ֆեո-դալական պետություններում գոյություն են ունեցել սահմանադրության տիպի ակտեր, որոնք կոչվում էին «խարտիաներ»: Այդ ակտերը հիմնա-կանում ուղղված էին թագավորական իշխանության սահմանափակմանը՝ հօգուտ ֆեոդալների, և հանդես էին գալիս որպես միապետի ու ազնվա-կանության միջև ձեռք բերված փոխհամաձայնության արդյունք: Այդպի-սին էր, օրինակ, Անգլիայում 1215թ. ընդունված «Ազատությունների մեծ խարտիան», որը ստորագրվեց միապետ Հովհան Անհողի կողմից՝ ֆեո-դալների ճնշման տակ, և այն հպատակների համար սահմանում էր ժա-մանակի առումով բավական լայն իրավունքներ և ազատություններ:

Թերևս իր յուրահատկությամբ առանձնանում է 5-րդ դարում Հայոց արքա Վաչագանի նախածնունդությամբ ընդունված «Կանոնական սահ-մանադրությունը», որն իր նախապատրաստման և ընդունման եղանա-կով, հետապնդման նպատակներով և հասարակական հարաբերությու-նների կարգավորման առանձնահատկությամբ զգալի ընդհանրություններ ունի սահմանադրության վերաբերյալ ժամանակակից պատկերացումնե-րի հետ:

Ինչպես հայտնի է, 481-484թթ. հայ ժողովուրդն ազատագրական պատերազմ էր մղում պարսկական տիրապետության դեմ, որովհետև Պարսկաստանը ձգտում էր դավանափոխ անել հայերին և նախարարնե-րին գրկել իրենց ավանդական իրավունքներից (տուրք պահել, հարկեր հավաքել և այլն): Արդյունքում, 484թ. Նվարսակ գյուղում կնքվում է պայ-մանագիր, որով Պարսկաստանը ճանաչում է Հայաստանի ներքին ան-կախությունը: Ահա այդպիսի նպաստավոր հանգամանքներում է, որ Հա-յոց արևելից կողմանց՝ Արցախ-Ուտիք Առանշահիկ հին նախարարական տոհմից Վաչագանը 5-րդ դարի վերջին Արցախ-Ուտիք իշխանությունը հռչակում է թագավորություն, որը ճանաչվում է Պարսկաստանի կողմից:

Մակայն Վաչագան Բարեպաշտի գահակալության թերևս ամենա-փառավոր էջը կազմում է նրա օրինաստեղծ գործունեությունը, որի պսակն է կազմում նրա նախածնունդությամբ ընդունված «Կանոնական սահմանադրությունը»: Այդ սահմանադրության առանձնահատկությունը նրանում է, որ այն ոչ թե մի հզոր իշխանավորի, թագավորի կամ բազմա-կարող իմաստունի հեղինակած օրենքների ժողովածու էր, ինչպիսիք որ աշխարհում հայտնի էին մինչ այդ և դրանից հետո՝ մինչև XVIII դարը, այլ ժողովրդի բոլոր կարող ուժերի մասնակցությամբ ստեղծված, բոլոր խավերի ներկայացուցիչների կողմից քննարկված և հավանության ար-ժանացած՝ հիմնավորապես նոր բնույթի փաստաթուղթ:

Պատմական իրողություն է, որ Վաչագանի Սահմանադրության վրա կատարված աշխատանքն իրականացվել է բոլոր այն փուլերով, որոնք հատուկ են ժամանակակից սահմանադրություններին և օրենքներին՝ ընդհանրապես. ա) նախապատրաստական (կամ նախագծի մշակման), բ) քննարկման և գ) ընդունման փուլ:⁶

Նախապատրաստական փուլում Վաչագան թագավորը դիմում է Հայոց աշխարհի նշանավոր մարդկանց, խորհուրդ հարցնում նրանցից, ստանում իրեն հուզող հարցերի վերաբերյալ գրավոր պատասխաններ: Ընդ որում, նա հարցումներ է արել ոչ թե սուկ Արևելից աշխարհի, այլ ամբողջ Հայաստան աշխարհի ճանաչված մարդկանց և ստացել «պատշաճ լուծումով պատասխաններ»:

Աշխատանքի երկրորդ (քննարկման) փուլի իրականացումը կազմակերպվել է այնպիսի սկզբունքներով, որոնք շատ դարեր անց միայն արմատավորվեցին քաղաքակիրթ աշխարհի տարբեր երկրների սահմանադրությունների ընդունման գործընթացում: Իր Աղվեն ամառանոցում Վաչագան թագավորը հրավիրում է բազմամարդ ժողով: «Միաբան ձևով», ինչպես գրում է Մովսես Կաղանկատվացին, թագավորին ներկայանում և ժողովին մասնակցում են Պարտավի արքեպիսկոպոսը, թեմի բոլոր աչքի ընկնող հոգևորականները, «ազնվական մարդիկ և Արցախի նահապետները... և այլ բազմաթիվ մարդիկ»:⁷ Ուշագրավ է այն, որ ժողովը նախագահել է ոչ թե Վաչագան թագավորը, այլ Գարդմանի տեր Վարդանը: Եվ քանի որ Սահմանադրությունն ամրագրում էր թագավորության «կյանքն ու կենցաղավարությունը, կարգ ու կանոնները»⁸ սահմանող նորմեր, ուստի այն մանրամասն քննարկվում է ժողովականների կողմից:

Իր ամբողջական տեսքով մեզ է հասել Աղվենում ընդունված «Կանոնական սահմանադրությունը»՝ քսաներկու հոդվածներով, որոնցից վերջինը պարունակում է օրինանք դրա ընդունման առթիվ և տեղեկություններ՝ հաստատման վերաբերյալ: Փաստաթուղթը մատանիներով կնքել են արքայի հրամանակատար Մուսետիկը, պալատի վերակացու Միրհորիկը և տոհմապետներ Մարութը, Տիրագղը, Սպարակոսը, Ղամանը, Բակուրը, Ռատանը, Արչեսը, Գարդմանա տեր քաջ Վարդանը, Խուրսը, Գերմանոսանը, Խոսկենը, Փիրոզ Նահապետը, Աղվանքի բոլոր ազնվականները:

⁶ Մանրամասն տես՝ Կիմ Ղահրամանյան, Վլադիմիր Հովհաննիսյան, 1500-ամյա Հայկական Սահմանադրությունը: Երևան, 1999, էջեր 15-16:

⁷ Տես՝ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի: Գրաբարից քարգմանությունը Վարդա Առաքելյանի: Երևան, 1969, էջ 66:

⁸ Նույն տեղում, էջ 237:

Փաստաթղթի բարձրագույն իրավաբանական ուժն ավելի ընդգծելու համար այն կնքվել է նաև Վաչագան թագավորի մատանիով:

Սահմանադրության բոլոր քսաներկու հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ այն հիմնվել է երկրում գործող վարքագծի կանոնների ու նորմերի վրա և նպատակ է ունեցել լուծել փոքր, կիսանկախ թագավորության խնդիրներն ու հիմնահարցերն այն առումով, որ հասարակության մեջ խաղաղությունն ու ներդաշնակությունն ապահովվեն ոչ թե բիրտ հարկադրանքի, այլ հասարակական համերաշխության և միաբանության հաստատման միջոցով: Այդ իմաստով Աղվենի Սահմանադրությունն իր բովանդակությամբ (որպես հասարակական դաշինքի արդյունք) նմանվում է ժամանակակից սահմանադրություններին: Այն հանդիսացել է երկրի հիմնական օրենք և դրանով իսկ կողմնորոշիչ դեր է ունեցել հասարակական կյանքի կարգավորման գործում:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ Վաչագան թագավորի նախաձեռնությամբ մշակված և ընդունված Սահմանադրության նորմերը մեծամասամբ վերաբերում են հոգևոր կյանքի հարաբերությունների կարգավորմանը, ինչը պայմանավորված էր տվյալ ժամանակահատվածում (5-րդ դար) հասարակության և պետության կառավարման գործում եկեղեցու ունեցած ազդեցությամբ և դերով: Բնականաբար, այդ Սահմանադրության մեջ տեղ չեն գտել (և չէին էլ կարող գտնել) նորմեր մարդու իրավունքների և ազատությունների, պետական իշխանության կազմակերպման և իրականացման վերաբերյալ: Պատահական չէ, որ Աղվենում ընդունված իրավական ակտն հետագայում մտել է «Կանոնագիրք հայոց» ժողովածուի մեջ՝ որպես «Վաչագան արքայի Կանոնական սահմանադրություն»:⁹

Առաջին սահմանադրական ակտերը կամ սահմանադրությունները, ժամանակակից իմաստով, ի հայտ եկան 17-18-րդ դարերում, չնայած պետությունը և իրավունքը գոյություն ունեին ավելի քան 50 դար: Մարդկությունը շատ վաղ է գիտակցել անձնական ազատության բարձրագույն արժեք լինելը, սակայն ի գորտու չի եղել սանձելու իշխանություններին, ստիպելու պետությանը հարգելու մարդու բնական իրավունքներն ու ազատությունները:

Այդպիսի հնարավորություն մարդկությանն ընձեռվեց 17-18-րդ դդ. բուրժուական հեղափոխությունների հաղթանակների շնորհիվ, որոնց նպատակը ոչ թե լուրջ իշխանության վերակառուցումն էր, այլ իշխանութ-

⁹ Տես՝ Կանոնագիրք հայոց, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, հատոր Ա, Երևան, 1964, էջ 69:

յան և մարդու իրավունքների ու ազատությունների միջև ամենաբարենպաստ հարաբերակցության ստեղծումը: Ուստի, ինչպես անգլիական չգրված սահմանադրական համակարգը, այնպես էլ առաջին գրված սահմանադրությունները (ԱՄՆ, Ֆրանսիա, Լեհաստան) ժողովրդավարական հեղափոխությունների հաղթանակից հետո առաջին հերթին լուծեցին հենց այդ խնդիրը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների 1787թ. Սահմանադրությունը (մարդկության պատմության մեջ պաշտոնապես ընդունված առաջին սահմանադրությունը) ընդունվեց առանց մարդու իրավունքների վերաբերյալ բաժնի: Պատճառն այն էր, որ նահանգների օրենսդրությամբ քաղաքացիների համար սահմանված էին լայն իրավունքներ և ազատություններ: Բացի դրանից, ԱՄՆ-ը մարդու իրավունքների հարցում առաջնորդվում էր անգլիական սկզբունքով՝ «Թույլատրվում է այն ամենը, ինչը օրենքով արգելված չէ»:

Երկու տարի անց (1789թ.) ընդունվեց «Իրավունքների մասին» բիլլ, որն ընդգրկվեց ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ որպես առաջին 10 ուղղում: Եվրոպական առաջին սահմանադրություններն ընդունվեցին Ֆրանսիայում և Լեհաստանում՝ 1791թվականին:

Այսպիսով, սահմանադրությունը հանդիսանում է պետության, պետականության զարգացման արդյունք և արտահայտություն: Այն, հոգևոր մարդու ազատության և բարօրության, կոչված է սանձելու պետական իշխանության անսահմանափակության վտանգավոր ծագումը: Սահմանադրության խնդիրն է պետական իշխանությունը պահել քաղաքացիների տեսադաշտում, նրանց մշտական վերահսկողության ներքո:

Սահմանադրության էության վերաբերյալ գրականության մեջ առկա են տարբեր մոտեցումներ, որոնք, ընդհանուր առմամբ, կարելի է բաժանել երկու խմբի՝ *արևմտյան և մարքսիստական*:

Արևմտյան երկրների սահմանադրական իրավունքի բազմաթիվ ուղղություններ (դպրոցներ) տարբեր կերպ են ներկայացնում սահմանադրության էությունը: Առավել տարածվածներից է *բնական իրավունքի* դպրոցը, որի ներկայացուցիչները սահմանադրությունը համարում են մի յուրատեսակ հասարակական պայմանագիր, որը հանդիսանում է ժողովրդի ընդհանուր կամքի, ինքնիշխանության արտահայտություն: *Նորմատիվիստական* դպրոցի ներկայացուցիչների կարծիքով սահմանադրությունը բարձրագույն իրավական նորմի արտահայտություն է, ըստ *աստվածաբանական տեսության* ներկայացուցիչների՝ բարձրագույն արդարության, բարձրագույն բանականության արտահայտություն և այլն:

Չնայած հսկայական բազմազանությանը, որ առկա է սահմանադրության էության բացահայտման կապակցությամբ արևմտյան հեղինակների մոտեցումներում, հիմնական հարցում նրանք միասնական են. *սահմանադրությունը կոչված է սահմանափակելու պետական իշխանությունը և որոշելու սահմանափակման շրջանակները*:

Այդ շրջանակների վերաբերյալ պատկերացումները ժամանակակից պետության սահմանադրական զարգացման տարբեր փուլերում կրել են առանձին փոփոխություններ: Սակայն այդպիսի սահմանափակումների անհրաժեշտությունը, որպես սահմանադրության էության բնորոշ գիծ, ամբողջովին մնացել է անփոփոխ: Այն բնութագրական է նաև սահմանադրության էության վերաբերյալ ժամանակակից մոտեցումներին: «Ուժեղացնել սահմանադրությունը, նշանակում է ուժեղացնել պետության իշխանության սահմանափակման արդյունավետությունը» գրում է ճապոնացի պետականագետ Հ.Յոիչին:

Սահմանադրության էության մասին բոլորովին այլ մոտեցում ունի *մարքս-լենինյան տեսությունը*, որը հանդիսանում էր խորհրդային պետականագիտության տեսական հիմքը: Այդ տեսության հիմքում դրված էր սահմանադրության դասակարգային էությունը, համաձայն որի ցանկացած պետության սահմանադրություն արտահայտում է ոչ թե ողջ հասարակության կամքը, այլ հանդիսանում է դասակարգային պայքարի արդյունք, որպես գործիք, որի օգնությամբ այս կամ այն դասակարգը ամրագրում է իր քաղաքական տիրապետությունը:

Սահմանադրության էության դասակարգային բնույթն իր տեսական հիմնավորումն է ստացել նաև Վ.Ի.Լենինի աշխատություններում: «Սահմանադրության էությունը նրանում է, որ պետությունների հիմնական օրենքները... արտահայտում են ուժերի իրական հարաբերակցությունը դասակարգային պայքարում» լենինյան արտահայտությունը հանդիսացավ սոցիալիստական երկրների սահմանադրական իրավունքի գիտության մեթոդաբանական հիմքը:

Սահմանադրության ուսումնասիրության և բնութագրման մարքս-լենինյան մեթոդը սահմանադրական իրավունքի գիտության կողմից վերջին տարիներին ենթարկվել է արդարացի քննադատության: Ճանաչել սահմանադրության էության դասակարգային բնույթը, նշանակում է իրավաչափ համարել մի դասակարգի կողմից մյուս դասակարգի նկատմամբ, մարդկանց մի խմբի կողմից մյուսի նկատմամբ կիրառվող բռնությունների, մարդկանց զանգվածային ոչնչացման, մարդու իրավունքների ոչնչով չսահմանափակված ոտնահարումների օրինաչափ լինելը:

Սակայն սահմանադրության էության դասակարգային բնույթի շտապի միջոցով նույնպես չի լուծում հիմնահարցը: Ընդհակառակը, այն կարող է տանել մեկ այլ ծայրահեղության: Հայտնի է, որ առանձին սահմանադրություններ ի հայտ եկան բուրժուական հեղափոխությունների (XVIII-XIXդդ.) դարաշրջանում, երբ հասարակության սոցիալական կառուցվածքն ուներ վառ արտահայտված դասակարգային բնույթ և հասարակական հարաբերություններն ու քաղաքական գործընթացներն ընթանում էին դասակարգային հակամարտությունների պայմաններում: Ուստի, այդ հարաբերությունները կարգավորող իրավունքի համակարգը ընդհանրապես, իսկ սահմանադրությունները՝ մասնավորապես, չէին կարող չարտացոլել այդ սոցիալական երևույթները: Նման երևույթներ առկա են նաև ժամանակակից աշխարհում, առավելապես Ասիայի և Աֆրիկայի զարգացող երկրներում:

Խնդիրն այն է, որ վառ արտահայտված դասակարգային կառուցվածք ունեցող երկրներում անգամ սահմանադրության էությունը չի կարելի ամբողջովին հանգեցնել որոշակի դասակարգի շահերի արտահայտմանը, որովհետև հենց թեկուզ այն չափով, որքանով որ այն սահմանափակում է պետական իշխանությունը, պաշտպանում է մարդու իրավունքները և ազատությունները, այդ չափով էլ սահմանադրությունը պաշտպանում է համաշխարհային արժեքները, արտահայտում ողջ ժողովրդի շահերը:

Ժամանակակից պետությունների սահմանադրական զարգացման պատմությունը վկայում է, որ սահմանադրության էության համար որոշիչ է դրա ընդունման պահին պայքարող հակադիր ուժերի փոխհամաձայնությունն այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են. անհատի և հասարակության կյանքին պետական իշխանության միջամտության սահմանափակման շրջանակները, պետական իշխանության կազմակերպման և իրականացման ձևերը, անձի իրավունքները և ազատությունները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (1995թ.) ընդունվել է այդ տարիներին Հանրապետությունում գործող սոցիալ-քաղաքական ուժերի բուռն հակամարտության պայմաններում: Չնայած նրանում որևէ նշում չկա դասակարգային բովանդակության մասին, սակայն դա չի նշանակում, թե այն գերծ է մնացել ընդունման ժամանակահատվածում երկրում տիրապետող քաղաքական ուժերի ազդեցությունից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հիմքում դրված են ժողովրդավարական սկզբունքներ, որոնք վերաբերում են ինչպես դրա ընդունման կարգին, այնպես էլ պետական իշխանության կազմակերպման և իրականացման ձևերին: Եթե սահմանադրությունն ըն-

դունվում է հանրաքվեի միջոցով (և ոչ թե խորհրդարանի կողմից), արդեն իսկ նշանակում է, որ այն հասարակական համաձայնության արդյունք է: Իսկ պետական իշխանության երեք թևերի մարմինների իրավական վիճակի սահմանումը, ինչպես նաև քաղաքացիների լայն իրավունքների և ազատությունների ամրագրումն ինքնըստինքյան վկայում են, որ Սահմանադրությունը հստակ կերպով ամրագրում է պետական իշխանության կողմից քաղաքացիական հասարակության գործերին միջամտելու շրջանակները: Դրանում էլ արտահայտվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ժողովրդավարական էությունը:

§ 4. Սահմանադրության տեսակները և ձևերը

1. Սահմանադրության տեսակները: Սահմանադրություններն իրենց խնդիրներով ու նպատակներով, կարգավորման առարկայով, ներքին ու արտաքին հատկանիշներով և որոշ այլ չափանիշներով մեծան են միմյանց և ունեն շատ ընդհանրություններ: Ներկայումս կազմավորված մոտ 200 պետություններից յուրաքանչյուրն ունի իր Հիմնական օրենքը: Սակայն համընդհանուր է, որ պետության սահմանադրությունը պարտադիր կերպով *արտացոլում է սովյալ ժողովրդի, ազգի պատմական, տնտեսական, մշակութային, հոգեբանական, կրոնական, սովորուբային, անգամ աշխարհագրական տարածքի և բազմաթիվ այլ առանձնահատկություններ:*

Այդ հանգամանքը, բնականաբար, առաջացնում է տարբեր սահմանադրությունների յուրահատկություններ, որոնցով դրանք տարբերվում են միմյանցից: Նշված տարբերությունները հաճախ լինում են այնքան էական, որ հիմք են հանդիսանում հիմնական օրենքների *սահմանազատման, խմբավորման համար:* Այդպիսի տարբերիչ գծեր են համարվում *պետական իշխանության պատկանելության և դրա իրացման ձևերի ու եղանակների ամրագրումը, կարգավորման առարկայի ծավալը, դրա արտահայտման ձևը, կիրառման ժամկետի տևողությունը, լեզվի ու ոճի տարբերությունները, ընդունման և փոփոխման կարգը և այլն:*

Ահա սահմանադրությունների այդ խայտաբղետության մեջ կողմնորոշվելու, դրանց հիմնական առաքելությունը ճիշտ հասկանալու և ուսումնասիրությունն ու կիրառությունն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտություն է առաջանում դրանք *դասակարգել ըստ որոշակի հատկանիշների:* Այն հեշտացնում է նաև համաշխարհային սահմանադրական օրենսդրության և դրա զարգացման գործընթացների ընդհանուր պատկերի ընկալումը:

Դրա հետ մեկտեղ, ցանկացած դասակարգում, այդ թվում նաև սահմանադրությունների դասակարգումը, ունի զուտ պայմանական բնույթ, քանի որ, ինչպես արդեն ասվեց, հիմնական օրենքները միմյանցից տարբերվում են բազմաթիվ յուրահատուկ գծերով: Այդ պատճառով էլ սահմանադրությունները որոշակի խմբերի մեջ ընդգրկելուց առաջ անհրաժեշտ է որոշել սովյալ խմբին բնորոշ առավել ընդհանուր և կարևոր չափանիշները, որոնցով առաջարկված խմբերը տարբերվում են միմյանցից:

1) Հայտնի է, որ յուրաքանչյուր սահմանադրության առաջնահերթ խնդիրներից մեկը պետական իշխանության հարցն է, որա պատկանելության ու կազմակերպման ձևերի ու եղանակների ամրագրումը: Կախված այն բանից, թե երկրի հիմնական օրենքում ինչպես է ամրագրված **պետության կառավարման ձևը**, սահմանադրությունները բաժանվում են **միապետականի և հանրապետականի**:

Ժամանակակից **միապետական** կառավարման ձևի (պառլամենտական միապետության) երկրներ են՝ Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Նիդեռլանդները, Շվեդիան, Կանադան, Ավստրալիան և մի քանի այլ երկրներ, որոնց հիմնական օրենքները համարվում են **միապետական** սահմանադրություններ:

Հանրապետական են համարվում ժամանակակից հանրապետական կարգ ունեցող բոլոր երկրների սահմանադրությունները (ԱՄՆ, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, Ֆինլանդիա, Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստան և շատ ուրիշներ):

Սահմանադրությունների բաժանումը միապետականի և հանրապետականի՝ ժամանակակից աշխարհում կրում է զուտ ձևական բնույթ: Միապետական կառավարման ձևը հատուկ է բարձր զարգացած երկրներին, և նրանց սահմանադրություններն իրենց ժողովրդավարական սկզբունքներով ոչնչով չեն զիջում հանրապետական կարգ ունեցող երկրների սահմանադրություններին: Գլխավոր տարբերությունն այն է, որ ներկայիս միապետական կառավարման երկրներն ընթացել են առավելապես էվոլյուցիոն (աստիճանական) զարգացման ճանապարհով և անհրաժեշտ չեն համարել միանգամից վերացնել հին պետական կառուցակարգերը: Այդ բոլորը նրանք կատարել են աստիճանաբար: Այն, որ այդ երկրների գլուխ կանգնած է ժառանգական միապետը, իսկ հանրապետական կառավարման երկրներում՝ ընտրովի նախագահը, ամենևին չի նշանակում, որ առաջիններն ավելի քիչ ժողովրդավարական են, քան երկրորդները: Ավելի շուտ՝ ընդհակառակը: Խորհրդարանական միապետության երկրների սահմանադրությունները հիմնականում չգրված սահ-

մանադրություններ են, ինչը վկայում է այդ երկրների խաղաղ, առանց հասարակական լուրջ ցնցումների, զարգացման մասին:

2) Հիմնական օրենքները տարբերվում են նաև ըստ նրանցում ձևակերպված **քաղաքական ռեժիմների**: Այդ հատկանշի հիման վրա դրանք բաժանվում են **ժողովրդավարականի և ավտորիտարի**:

Ժողովրդավարական են այն սահմանադրությունները, որոնք ամրագրում են քաղաքացիների համար լայն իրավունքներ ու ազատություններ (կյանքի, անձեռնմխելիության, արժանապատվության, սեփականության, աշխատանքի և այլ իրավունքներ, խղճի, մտքի, խոսքի, միավորման, ցույցերի, հանրահավաքների, ազատ տեղաշարժման և այլ ազատություններ), իշխանության մարմինների ընտրովիություն, բազմակուսակցություն և կուսակցությունների իրավահավասարություն, խորհրդարանում ընդդիմության գոյություն և այլն:

Մինչդեռ **ավտորիտար** բովանդակություն ունեցող սահմանադրություններն արգելում են քաղաքական կուսակցությունների գոյությունը կամ սպանում են մեկ կուսակցության գերիշխանությունը, սահմանափակում են քաղաքացիների իրավունքներն ու ազատություններն ընդհանրապես, իսկ նրանց քաղաքական իրավունքները՝ մասնավորապես:

Տոտալիտար սահմանադրությունները, ունենալով ավտորիտար սահմանադրությունների բոլոր հատկանիշները, այքի են ընկնում ևս մեկ կարևոր, լրացուցիչ առանձնահատկությամբ: Նրանցում ամրագրվում է երկրի համար պարտադիր գաղափարախոսություն (օրինակ, կոմունիզմ, իսլամ և այլն), հիշատակվում են երկրի համար անընդունելի, վնասակար համարվող գաղափարախոսությունները:

Դրա հետ մեկտեղ, քիչ չեն դեպքերը, երբ երկրի սահմանադրությունն արտաքուստ ժողովրդավարական է, սակայն երկրի քաղաքական ռեժիմը, ըստ էության, ավելի քան տոտալիտար: Սահմանադրությամբ ամրագրված իշխանությունների բաժանման, իրավական պետության, ժողովրդահիշխանության, ազատ ընտրությունների ու հանրաքվեի և այլ ժողովրդավարական սկզբունքները գոյություն ունեն միայն թղթի վրա: Նման պարագաներում ժողովրդավարական կոչված սահմանադրությունն ավտորիտար քաղաքական ռեժիմի համար ծառայում է զուտ որպես քող, դիմակ:

3) **Ըստ քաղաքական-տարածքային կառուցվածքի** սահմանադրությունները բաժանվում են **դաշնայինի և ունիտարի**:

Դաշնային սահմանադրությունները սովորաբար բովանդակում են այն հիմնական սկզբունքները, որոնք ընկած են միութենական պետության կազմակերպման հիմքում, քվարկում են այն պայմանները, որոնց հի-

ման վրա պետությունները միավորվում են դաշնության մեջ, որոշում են նրա անդամների իրավական վիճակը, սահմանում են նրանց հիմնական լիազորությունները, որոնք, որպես կանոն, ավելի մանրամասն կարգավորվում են դաշնություն կազմած պետությունների սահմանադրություններում:

Դաշնային սահմանադրության տարբերիչ հատկանիշ է նաև այն, որ դրանում ամրագրվում է դաշնային իշխանության բարձրագույն մարմինների ստեղծումը և սահմանվում կենտրոնի ու դաշնության սուբյեկտների միջև փոխհարաբերությունների բնույթը:

Դաշնային պետություններում սահմանադրությունները կարելի է նաև բաժանել **դաշնայինի (ազգային) և դաշնության սուբյեկտների** (ճահանգներ, հողեր, պրովինցիաներ և այլն): Այս դեպքում դաշնային սահմանադրությունը բնութագրվում է նաև նրանով, որ սահմանում է միութենական պետության և սուբյեկտների սահմանադրությունների փոխհարաբերության հիմնական սկզբունքները:

4) Սահմանադրությունները տարբերվում են նաև ըստ գործողության ժամանակի տևողության: Այդ առումով սահմանադրությունները լինում են **ժամանակավոր և մշտական**:

Ժամանակավոր սահմանադրություններն ընդունվում են որոշակի ժամանակահատվածի համար կամ մինչև որոշակի դեպքի, իրադրության վրա հասնելը: Այսպես, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից 1991թ. սեպտեմբերի 25-ին ընդունված «Անկախ պետականության հիմնադրյալների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 16 հոդվածում գրված է. «Մինչև Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրության ընդունումը գործող Սահմանադրությունն ու օրենքները գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին և Հայաստանի անկախության մասին հռչակագրի հիման վրա ընդունված օրենսդրական ակտերին»:

Այստեղ խոսքը վերաբերում էր նախկին Հայկական ԽՍՀ Հիմնական օրենքին, որի գործողության ժամկետը նախատեսվում էր մինչև Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրության ընդունումը: 1995թ. հուլիսի 5-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումից անմիջապես հետո Հայկական ԽՍՀ Հիմնական օրենքը դադարեց գործելուց:

Մշտական են այն սահմանադրությունները, որոնց գործողությունը սահմանափակված չէ ժամկետով: Այդպիսին է ժամանակակից հիմնական օրենքների ճնշող մեծամասնությունը:

5) Ըստ **ընդունման կարգի** տարբերվում են **շնորհված և ժողովրդական սահմանադրություններ**:

Շնորհված սահմանադրությունները, որպես կանոն, ադրյունք են գաղութային լծից ազատվելու ազգային-ազատագրական պայքարի: Գաղութատեր երկրներն այլևս չկարողանալով պահպանել տիրապետությունը գաղութների վրա՝ նրանց ժողովուրդների համար մշակում են սահմանադրություն և սահմանադրական ճանապարհով նրանց տալիս անկախություն: Մետրոպոլի (մայր երկրի) կողմից գաղութի համար մշակված և ընդունված սահմանադրությունը կոչվում է շնորհված սահմանադրություն: Ներկայումս շնորհված են համարվում Հորդանանի, Նեպալի և մախլին բրիտանական գաղութ հանդիսացած մի շարք այլ երկրների հիմնական օրենքները:

Շնորհված են համարվում նաև **միասպեսների կողմից ընդունված սահմանադրությունները**: Բացարձակ միապետության մայրամուտին, երբ բուրժուական հեղափոխություններն արդեն լրջորեն խարխլել էին ֆեոդալական կարգերի հիմքերը, վերջինիս կյանքը երկարած գելու համար թագավորները մշակում և ընդունում էին սահմանադրություն, որով սահմանափակում էին իրենց իշխանությունը՝ օրենսդիր գործունեությունը ժողովրդի կողմից ընտրված խորհրդարանին հանձնելու ճանապարհով: Բացի դրանից, նրանում ամրագրվում էին նաև հպատակների որոշ իրավունքներ ու ազատություններ: Միապետների կողմից ընդունված և ժողովրդին հանձնված հիմնական օրենքները կոչվում են շնորհված սահմանադրություններ:

Ժողովրդական են կոչվում այն սահմանադրությունները, որոնք ընդունվում են ժողովրդի կողմից անմիջականորեն՝ հանրաքվեի միջոցով, կամ ժողովրդի կողմից ընտրված սահմանադրական մարմինների (խորհուրդ, **կոնվենա**, ժողով և այլն) միջոցով, կամ էլ նրանց կողմից ընտրված ներկայացուցչական մարմինների՝ խորհրդարանների կողմից: Երկրների ճնշող մեծամասնությունում (այդ թվում Հայաստանի Հանրապետությունում) սահմանադրությունները ժողովրդական են:

6) Ըստ **փոփոխման կարգի** տարբերվում են **«կոշտ» և «ճկուն»** սահմանադրությունները:

Կոշտ են կոչվում այն սահմանադրությունները, որոնց փոփոխության համար նախատեսված է բարդացված կարգ: Նման մոտեցման նպատակն է ապահովել հիմնական օրենքում ամրագրված պետական իշխանության կազմակերպման ժողովրդավարական սկզբունքներն անհարկի փոփոխություններից՝ երկրի կառավարման դեկի մոտ հայտնված առանձին անձանց, մարդկանց խմբերի կամ կուսակցությունների կող-

մից: Այդպիսիք են համարվում ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և մի շարք այլ պետությունների հիմնական օրենքները:

Ճկուն են կոչվում այն սահմանադրությունները, որոնց փոփոխությունները կատարվում են սովորական օրենսդրական ճանապարհով: Այդպիսիք են Մեծ Բրիտանիայի, Նոր Զելանդիայի և այլ երկրների հիմնական օրենքները:

Սահմանադրությունների բաժանումը «կոշտի» և «ճկունի», ամենևին չի նշանակում, թե ճկուն սահմանադրությունների հիմնական սկզբունքներն ավելի անկայուն են, քան «կոշտ» սահմանադրություններինը: Օրինակ, Մեծ Բրիտանիայի Սահմանադրության անբաժան մասերն են համարվում սովորությանը նորմերն ու նախադեպային իրավունքը, որոնք բազմաթիվ հարյուրամյակների ընթացքում (սկսած 13-րդ դարից) գործում են գրեթե անփոփոխ:

7) Գործնականում կիրառական նշանակություն ունի սահմանադրությունների բաժանումը **իրավաբանականի և փաստացիի:**

Իրավաբանական սահմանադրությունը որոշակի ձևի (գրված կամ չգրված) շրջանակներում, սահմանված կարգով (շեղով, Հիմնադիր ժողովի, կոնվենտի, խորհրդի, հանրաքվեի, պառլամենտական ճանապարհով) ընդունված իրավական **նորմերի համակարգ է**, որը կոչված է կարգավորելու սահմանադրական կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունները:

Փաստացի սահմանադրությունը սահմանադրական կարգավորման առարկա հանդիսացող այն հարաբերությունների ամբողջությունն է, որոնք գոյություն ունեն իրականում: Եվ միշտ չէ, որ սահմանադրությունում ամրագրված նորմերի և գոյություն ունեցող իրականության միջև առկա է լինում համապատասխանություն: Պատճառները տարբեր են:

Առաջին, սահմանադրությունը, որպես կանոն, իրավաբանորեն հռչակում է պետության ոչ թե իրական, այլ անհրաժեշտ վիճակը: Այսինքն՝ սահմանադրությունը ոչ թե արտացոլում է գոյություն ունեցող իրականությունը, այլ հանդես է գալիս որպես այդ իրականության տիպարը, դրա նմուշը (ինչպիսին որ այն պետք է լինի): Այդ իմաստով սահմանադրության նորմերը և իրականությունը կարող են հայտնվել հակասության մեջ: Նման վիճակը, սկզբնական շրջանի համար, ընդունելի վիճակ է, որովհետև պետությունը պետք է ջանա մոտակա ապագայում գործնականում իրականացնել հիմնական օրենքով նախատեսված հանձնարարականները:

Սակայն այդ հակասությունը չպետք է դուրս գա թույլատրելի շրջանակներից, որից այն կողմ վտանգվում է սահմանադրական նորմերի գործողության արդյունավետությունը: Նման արդյունավետությունն ի սկզբանե հարցականի տակ է դրվում, եթե օրենսդիրը կամ իրավական նորմը հաշվի չի առնում կարգավորվող հասարակական հարաբերությունների իրական վիճակը և զարգացման հեռանկարը, այդ հարաբերություններն իրականացնող ուժերի հնարավորությունները և կողմնորոշվում են անհասանելի գաղափարներով:

Իրականությունից կտրված իրավական նորմը, որը լոկ վեհ մտադրության արդյունք է, կարող է ոչ միայն ուղեցույց չհանդիսանալ պետության կյանքում, այլև կասկածներ սերմանել պետական կարգի սահմանադրականության, նրա (պետության) լեգիտիմության (օրինական լինելու) վերաբերյալ: Այսպես, Հայաստանի Հանրապետությունը, տուրք տալով համազգային շարժման ժամանակ (1990-ական թվականներին) առաջ քաշված կարգախոսներին և գայթակղվելով արտասահմանյան զարգացած երկրների ժողովրդավարական ավանդույթներով, իր 1995թ. Սահմանադրությամբ երկիրը հռչակեց սոցիալական, իրավական պետություն: Անկասկած, նպատակը բարի էր ու վեհ: Սակայն սոցիալական է այն պետությունը, որն իր քաղաքացիներին կարողանում է ապահովել աշխատանքով և նվազագույնից ոչ պակաս կենսապայմաններով (ինչպես, օրինակ Իտալիան): Մինչդեռ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը քաղաքացիների համար անգամ աշխատանքի իրավունք չի նախատեսում: Տնտեսության անմխիթար վիճակի պատճառով բնակչության զգալի մասը գործազուրկ է և հայտնվել է սոցիալապես անպաշտպան վիճակում: Հայաստանի նորանկախ Հանրապետությունը թևակոխել է իր կյանքի երրորդ տասնամյակը, սակայն այդ ոլորտում դեռևս քիչ են տեղաշարժերը:

Գրեթե նույնն է վիճակը Ռուսաստանում, Բելոռուսում և ԱՊՀ երկրների մեծ մասում:

Երկրորդ, սահմանադրական նորմերի մի զգալի մասն ուղղակիորեն արտացոլում է գոյություն ունեցող իրավիճակը, ամրագրում հասարակության կյանքում տվյալ պահին առկա իրական հարաբերությունները: Այդ նորմերը պայմանավորված են և կողմնորոշվում են այն ուժերով, որոնք տվյալ պահին կազմում են պետությունը, հանդիսանում են նրա հենարանը: Սակայն իշխանության հասնելուց հետո ինչ-ինչ պատճառներով այդ նորմերի մի զգալի մասը ենթարկվում է մոռացության: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երկիրը հռչակվել է սոցիալական պետություն, մարդու արժանապատվությունը՝ բարձրա-

գույն արժեք: Սակայն աշխատավորների մեծամասնությունը, կենսաթուշակատուները, ուսանողները ստանում են չնչին միջոցներ, որը չի հոգում նրանց անգամ նվազագույն պահանջները: Հետևաբար, համաձայն իրավաբանական սահմանադրության՝ այդ հարաբերությունները կան, անրագրված են, մինչդեռ համաձայն փաստացի սահմանադրության՝ դրանք բացակայում են:

Երրորդ, իրավաբանական և փաստացի սահմանադրությունների անհամապատասխանությունը կարող է արդյունք լինել նաև հիմնական օրենքի ընդունումից հետո քաղաքական ուժերի միջև հարաբերակցության՝ տեղի ունեցած փոփոխության: Այսինքն՝ սահմանադրության ընդունման պահին գոյություն ունեցող կարող քաղաքական ուժերը հետագայում իրադրության փոփոխության պատճառով ի գործու չեն իրականացնելու հիմնական օրենքում ամրագրված հանձնարարականները:

Կարելի է բերել իրավաբանական և փաստացի սահմանադրությունների անհամապատասխանության նաև այլ օրյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ և դրանք հիմնավորող օրինակներ, սակայն խնդիրն այն է, որ նշված հիմնական օրենքների ցանկացած անհամապատասխանություն իրավաբանական սահմանադրությունը դարձնում է **ֆիկտիվ** (կեղծ, շինծու, գոյություն չունեցող):

Սահմանադրությունը **իրական** չի դառնում անգամ դրա մեջ կատարված բազմաթիվ փոփոխություններից, որոնք նպատակ ունեն այն մոտեցնել իրականությանը, ինչպես նաև դրա տեքստի վերաբերյալ կատարված անթիվ մեկնաբանություններից հետո: Ասվածից պարզորոշ հետևում է, որ **սահմանադրության մշակման և ընդունման ժամանակ չի կարելի անտեսել այն օրյեկտիվ իրողությունները, որոնք ընկած են դրա մշակման հիմքում**, այլ կերպ՝ վաղ, թե ուշ դրանք անխուսափելիորեն սահմանադրությունը կանգնեցնելու են փոփոխելու անհրաժեշտության առաջ: Սակայն **ֆիկտիվ** սահմանադրությունը **իրական** դարձնելն, այդ դեպքում, դառնում է չափազանց դժվար խնդիր:

2. Սահմանադրության ձևերը: Սահմանադրության կազմավորման գործում էական դեր ունի նաև դրա **ձևը**: Սահմանադրությանը հատուկ է նրա ներքին և արտաքին ձևը:

Սահմանադրության ներքին ձևն իրենից ներկայացնում է, ամենից առաջ, որոշակի եղանակների համակցություն, որոնց միջոցով դրանք վավեր են սահմանադրության բովանդակությունը: Այն ընդգրկում է հետևյալ տարրերը՝ ա) սահմանադրության մշակման կարգը, բ) ընդունման կարգը, գ) հաստատման կարգը, դ) ներքին կառուցվածքը:

Սակայն այդ տարրերը բավարար չեն սահմանադրությունը կյանքի կոչելու, այն գործողության մեջ դնելու, իրացնելու համար: Այդ խնդիրների լուծումը հնարավոր է դարձնում միայն սահմանադրության **արտաքին ձևը** կազմող տարրերի համակցությունը կամ, այլ կերպ ասած, դրա բովանդակության իրացման ձևը:

Սահմանադրության արտաքին ձևը կազմող տարրերի թվին են դասվում՝ ա) սահմանադրության անվանումը, բ) դրա ուժի մեջ մտնելու կարգը, գ) իրացման կարգը, դ) դրա մեջ փոփոխություն կատարելու կարգը, ե) պահպանության կարգը:

Այստեղ դժվար չէ նկատել, որ սահմանադրության ձևի արտաքին կողմը հանդիսանում է, մի տեսակ, նրա ներքին կողմի շարունակությունը, որով ամբողջական տեսք է ստանում սահմանադրությունը:

Դրա հետ մեկտեղ, սահմանադրությունն իր ներքին կառուցվածքով ձեռք է բերում որոշակի ամբողջականություն, երբ ձևավորվում է համապատասխան տեսքով, ծածկվում կազմով և ստանում է հատուկ անվանում, որը նրա արտաքին ձևի տարրերից է:

Սակայն հայտնի է նաև, որ սահմանադրությունն իր ներքին կառուցվածքով կարող է միասնական չլինել, հանդես գալ մի քանի իրավական ակտերի ձևով և չունենալ իր հատուկ անվանումը: **Այն սահմանադրությունները, որոնք հանդես են գալիս մեկ միասնական իրավական ակտի ձևով, ունեն իրենց հատուկ անվանումները (սահմանադրություն, հիմնական օրենք, քաղաքական սահմանադրություն և այլն) և կարգավորում են տվյալ երկրի հիմնական հասարակական հարաբերությունները**, ընդունված է անվանել **գրված սահմանադրություն**:

Իսկ այն սահմանադրությունները, որոնք հանդես են գալիս մի քանի իրավական ակտերի տեսքով և չունեն միասնական անվանում, ընդունված է անվանել **չգրված սահմանադրություն**:

Ա) **Գրված սահմանադրությունը** միասնական ակտ է, որի նորմերը շարադրվում են որոշակի համակարգով և համախմբվում են միմյանց տրամաբանական շարունակությունը կազմող ինստիտուտների մեջ: Այդ ինստիտուտների հերթականությամբ անգամ կարելի է որոշել, թե տվյալ երկրում կառավարման ինչ ձև է գործում, պետական իշխանության որ թևն է ավելի ուժեղ, և, վերջապես, ինչպիսին են փոխհարաբերությունները պետության և անհատի միջև:

Գրված սահմանադրությունը ոչ միայն միասնական ակտ է, այլև **միակը** համապատասխան երկրում, ինչպես, օրինակ, Ռուսաստանի Մահմանադրությունը, Գերմանիայի Հիմնական օրենքը, Մեքսիկայի Բաղաբանական սահմանադրությունը (1917թ.), Հայաստանի Մահմանադրությունը, Իտալիայի, Ֆրանսիայի սահմանադրությունները և այլն:

Գրված սահմանադրությունները, կարգավորվող հասարակական հարաբերությունների շրջանակների առումով, լինում են **Ծավալուն և համառոտ** (ոչ ծավալուն):

Ծավալուն սահմանադրության օրինակ է ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Սահմանադրությունը (ավելի քան 60 000 բառ), Ջորջիայի նահանգի Սահմանադրությունը (մոտ 50 000 բառ), Հունաստանի, Ռուստուգալիայի, Հնդկաստանի սահմանադրությունները:

Համառոտ սահմանադրության օրինակ է ԱՄՆ-ի Սահմանադրությունը (մոտ 5000 բառ), Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (մոտ 6500 բառ), Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և այլ երկրների սահմանադրությունները:

Ծավալուն սահմանադրությունների առանձնահատկությունն այն է, որ դրանցում բովանդակվում են նորմեր, որոնցով կարգավորվող հարաբերությունները մեկ այլ երկրում կարգավորվում են ընթացիկ օրենսդրությամբ: Իսկ **համառոտ սահմանադրությունները**, կարծես, թե իրենց շարադրանքում ոչինչ «ավելորդ» չունեն:

Ծավալուն և համառոտ սահմանադրությունները, ըստ էության, միմյանցից տարբերվում են զուտ քանակական չափանիշներով, որը ոչնչով չի ազդում (ինչպես դրական, այնպես էլ բացասական առումով) դրանց որակական կողմի, մասնավորապես, դրանցում ամրագրված սկզբունքների և կարգավորվող հարաբերությունների կայունության վրա: Սահմանադրության, որպես իրավական ակտի, հիմնական իմաստն այն է, որ դրա նորմերով պետք է կարգավորվեն տվյալ պետության հիմնական, առավել կարևոր հասարակական հարաբերությունները: Եթե այդ պահանջը բավարարված է, ապա սահմանադրության կոչման, մյուս հեղինակության համար լրացուցիչ (այսպես կոչված, ոչ սահմանադրական) հասարակական հարաբերությունների կարգավորումը որևէ «վտանգ» չի ներկայացնում:

Մինչդեռ համառոտ սահմանադրության համար, ընդհանրապես, նման «վտանգի» հնարավորությունը բացառված չէ: Խնդիրը հետևյալում է.

առաջին, որոշ համառոտ սահմանադրությունների (որտեղ կարծես ոչինչ ավելորդ չկա) առանձին նորմեր երբեմն այնքան սեղմ են գրված, որ միտում ունեն չընկալվելու, ոչ ճիշտ հասկացվելու հասարակության լայն զանգվածների կողմից, որը կարող է խանգարել բնակչությանը՝ անշեղ կերպով իրացնելու դրա պահանջները,

երկրորդ, սահմանադրությունը քաղաքացիներին «հասկանալի» դարձնելու համար պետության համապատասխան լիազորված մարմիններն ստիպված են պարբերաբար անդրադառնալ դրա տարբեր նորմերի մեկնաբանմանը, որն, ինչպես ցույց է տալիս պետությունների սահմա-

նադրական շինարարության պրակտիկան, հաճախ հանգեցնում է հիմնական օրենքի հիմնարար սկզբունքների խաթարման.

երրորդ, ձգտելով հնարավորինս սեղմ, համառոտ շարադրել սահմանադրությունը, օրենսդիրը երբեմն հնարավորություն չի ունենում նրանում ամրագրել սահմանադրական կարգավորման ենթակա բոլոր հիմնական հարաբերությունները, ինչը պատճառ է դառնում հետագայում պարբերաբար անդրադառնալու դրա տեքստի լրացմանն ու փոփոխությանը:

Եզրակացությունն այն է, որ սահմանադրությունների հայրերը իրենց «զավակներին» կերտելիս պետք է ձգտեն հնարավորինս այն կատարյալ դարձնել: Մյուս կողմից, նպատակահարմար չէ այն ծանրաբեռնել հարցերով, որոնք կարելի է կարգավորել նաև ընթացիկ օրենսդրությամբ:

Գրված սահմանադրության ձևի հետ սերտորեն առնչվում է դրա **կառուցվածքը**: Գրեթե բոլոր սահմանադրություններն ունեն միատեսակ կառուցվածք՝ նախաբան (պրեամբուլա), հիմնական բովանդակություն, եզրափակիչ և անցումային դրույթներ:

Նախաբանում, սովորաբար, ներկայացվում են սահմանադրության ընդունման նպատակները, դրա ընդունման պատմական անհրաժեշտությունը, երբեմն էլ՝ պետական քաղաքականության հիմնական սկզբունքները: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանում նշվում է, որ Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները... ինքնիշխան պետության վերականգնման իր ազատանք նախնիների սուրբ պատգամը... ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը... ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

Որպես կանոն, սահմանադրության նախաբանի դրույթները չեն համարվում իրավական նորմեր, սակայն ունեն կիրառական նշանակություն այն առումով, որ նորմատիվ հիմք են հանդիսանում սահմանադրության մյուս դրույթների կիրառության և մեկնաբանման համար:

Այդ կանոնից կան, իհարկե, բացառություններ: Այսպես, Ֆրանսիայի 1958թ. Սահմանադրության նախաբանում գրված է, որ ֆրանսիական ժողովուրդը հանդիսավոր հայտարարում է իր հավատարմությունը մարդու իրավունքներին և ազգային ինքնիշխանության սկզբունքներին, որոնք սահմանված էին 1789թ. հռչակագրով և հաստատված ու լրացված՝ 1946թ. Սահմանադրության նախաբանում: Իսկ այդ նախաբանը, որտեղ սահմանվում են Ֆրանսիայի քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, ամբողջովին ընդգրկված է Ֆրանսիայի 1958թ. Սահմա-

նադրության մեջ: Բնականաբար, այդ նախարանի դրույթները համարվում են իրավական նորմեր և օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով, ինչպես Սահմանադրության մյուս նորմերը:

Սահմանադրության հիմնական տեքստում շարադրվում են երկրի սահմանադրական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների մասին նորմեր, պետական մարմինների առանձին տեսակների իրավական վիճակի, սահմանադրության ընդունման և փոփոխության կարգի մասին նորմեր:

Պետական մարմինների կարգավիճակի վերաբերյալ նորմերը, որպես կանոն, տեղադրվում են իշխանությունների բաժանման սկզբունքով սահմանված հերթականությամբ՝ խորհրդարանի, պետության գլխի, կառավարման մարմինների, ապա դատական իշխանության մարմինների վերաբերյալ: Սակայն քիչ չեն դեպքերը, երբ այդ հերթականությունը որոշվում է ըստ իշխանությունների համակարգում տվյալ պետական մարմնի գրադեցրած դիրքի: Այդ սկզբունքով է շարադրված, օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ պետական մարմինների կարգավիճակի վերաբերյալ տեքստը, որը բովանդակում է նորմեր սկզբում Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին, այնուհետև՝ Ազգային ժողովի, կառավարության, դատական իշխանության և վերջում՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ (3-7-րդ գլուխներ):

Սահմանադրության կառուցվածքի բաղկացուցիչ մաս են համարվում նրա **եզրափակիչ դրույթները**, որ սովորաբար վերաբերում են սահմանադրության ընդունման, դրա փոփոխության և ուժի մեջ մտնելու կարգին:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն այդ կապակցությամբ բովանդակում է առանձին գլուխ (8-րդ)՝ «Սահմանադրության ընդունումը, փոփոխումը և հանրաքվեն» վերտառությամբ: Դրանից երևում է, որ միայն սահմանադրության ընդունման և փոփոխման ժամանակ է կիրառվում հանրաքվեն: Սակայն, ինչպես հետևում է այդ գլխի բովանդակությունից, դրանում խոսք է գնում ոչ թե հանրաքվեի նշանակման, կազմակերպման և անցկացման հիմնական սկզբունքների, այլ սակայն Սահմանադրության և օրենքների նախագծերը հանրաքվեի դնելու մասին:

Նկատի առնելով, որ արտասահմանյան և ոչ մի երկիր սահմանադրության ընդունման և փոփոխման դրույթներում չի ընդգրկում հանրաքվեի մասին նորմեր (իսկ եթե ընդգրկում է, ապա հիմնական տեքստում՝ ընտրական համակարգի հետ կապված հարաբերությունները կարգավո-

րելիս), ուստի նպատակահարմար կլիներ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ գլուխը ուղղակի վերնագրել՝ «Սահմանադրության ընդունումը և փոփոխումը», իսկ հանրաքվեի վերաբերյալ նորմերը ամրագրել առանձին գլխով կամ հոդվածով:

Անցումային դրույթներում որոշվում են սահմանադրության առանձին նորմերի ուժի մեջ մտնելու ժամկետները, որոնք չեն կարող իրականացվել ընդունման պահին, ինչպես նաև նոր ընդունված սահմանադրությանը հակասող նախկին իրավական ակտերի գործողության դադարման ժամկետներն ու կարգը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության անցումային դրույթները ներկայացված են առանձին գլխով (9-րդ), որը բաժանված է հոդվածների (հոդվ. 115, 116, 117) ի տարբերություն շատ երկրների սահմանադրությունների, որոնցում, որպես կանոն, անցումային դրույթները ներկայացված են ոչ իրավական նորմերի տեսքով:

Բ) Չգրված սահմանադրությունները ևս միատեսակ ու միատարր չեն: Դրանց ձևավորման վրա նույնպես իրենց կնիքն են թողնում կոնկրետ երկրի բնակչության ազգային կազմը, պատմամշակութային, սովորութային, կրոնական, լեզվական, աշխարհագրական և այլ առանձնահատկությունները, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածի սոցիալ-քաղաքական իրավիճակը:

Կան երկրներ, որոնց չգրված սահմանադրությունը բաղկացած է մի քանի օրենսդրական ակտերից, որոնցից **բոլորն էլ սահմանադրական են** և հավասարապես ունեն բարձրագույն իրավաբանական ուժ: Այսպես, Շվեդիայի սահմանադրությունը բաղկացած է երեք նորմատիվ ակտերից: Դրանք են՝ 1810թ. ընդունված «Գահաժառանգության մասին ակտը», 1974թ. ընդունված «Կառավարման ձևը», որտեղ կարգավորված են պետական կարգի հիմունքները, քաղաքացիների հիմնական իրավունքներն ու ազատությունները և պետական մարմինների համակարգը, , 1974թ. ընդունված «Մամուլի ազատության մասին ակտը»: Նշված բոլոր ակտերն էլ ունեն միատեսակ սահմանադրական բնույթ:

Չգրված սահմանադրության **ուրույն տեսակ է Մեծ Բրիտանիայի Սահմանադրությունը**: Այն բաղկացած է 4 բաժիններից՝ **ստատուտներ, դատական նախադեպեր, սահմանադրական սովորույթներ և դոկտրինալ աղբյուրներ**:

Ստատուտները Մեծ Բրիտանիայի խորհրդարանի կողմից սահմանադրական իրավունքի վերաբերյալ ընդունված օրենսդրական ակտեր են: Մեծ Բրիտանիայի Սահմանադրությունն ընդգրկում է խորհրդարանի կողմից ընդունված Շոտլանդիայի հետ միավորման մասին ակտը

(1701թ.), Խորհրդարանի մասին 1919 և 1949թթ. ակտերը, Համայնքների պալատի մասին ակտը (1978թ.), Ընտրական իրավունքի, ժողովրդական ներկայացուցչության մասին (1949, 1969, 1974, 1983թթ.), տեղական ինքնակառավարման կազմակերպման (1972 և 1985թթ.) վերաբերյալ ակտերը և այլն: Ներկայումս հաշվվում է նման ավելի քան 40 ակտ:

Նախադեպային իրավունքը, որպես Մեծ Բրիտանիայի Սահմանադրության աղբյուր (դրա մի մասը), սահմանադրական հարցերի վերաբերյալ դատական վճիռների համակցություն է, որը պարտադիր է ապագայում նմանատիպ գործերի քննության դեպքում: Պարտադիր նախադեպերն Անգլիայում կարող են ստեղծվել ոչ բոլոր դատարանների կողմից, այլ միայն, այսպես կոչված, բարձր (բարձրատիճան) դատարանների (Գերագույն դատարանի և Լորդերի պալատի) կողմից: Պատմականորեն նախադեպային իրավունքը լուրջ դեր է խաղացել անգլիական սահմանադրության ձևավորման գործում: Սակայն դատական վճիռներով և որոշումներով կարգավորվող հարաբերություններն ժամանակի ընթացքում աստիճանաբար իրենց արտահայտությունն են գտնում ստատուտային նորմերում:

Սովորույթային իրավունքը ներկայումս ունի ավելի լայն կիրառություն, քան նախադեպային իրավունքը: Սահմանադրական սովորույթները, որոնք անվանվում են նաև սահմանադրական **համաձայնագրեր**, կարգավորում են պետական գործունեության կարևոր հարցեր: Օրինակ, սովորույթի համաձայն միապետը չի կարող չստորագրել իրավական ակտը, որն ընդունվել է խորհրդարանի երկու պալատի կողմից: Սովորույթով է կարգավորվում նաև կառավարության կազմումը խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցության առաջնորդի կողմից և այլն:

Դեկտրինայ աղբյուրները բրիտանական սահմանադրության յուրահատուկ մասն են կազմում: Դրանց տակ հասկացվում է սահմանադրական իրավունքի բնագավառի ճանաչված գիտնականների կարծիքը: Անգլիայում այդ աղբյուրի օգնությանն են դիմում սովորաբար այն ժամանակ, երբ բացակայում է կոնկրետ հարաբերությունը կարգավորող ստատուտը, նախադեպը կամ սովորույթը: Այսպես, Մեծ Բրիտանիայի պատմությունից տեղեկանում ենք, որ 1920թ. Լորդերի պալատը սահմանել է թագավորի արտոնությունները՝ հենվելով 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի անգլիական ճանաչված սահմանադրական իրավունքի մասնագետ Ա.Վ.Դայսի կարծիքի վրա:

§ 5. Սահմանադրության գործառնությունները (Ֆունկցիաները)

Սահմանադրությունը բարդ հասարակական երևույթ է, որը կարող է եական ազդեցություն ունենալ ինչպես երկրի կյանքի վերընթաց զարգացման, այնպես էլ այդ զարգացումը խոչընդոտելու, հետ պահելու գործում: Այդ կապակցությամբ առաջնային կարևորության հարց է դրա գործառնությունների ճիշտ ընկալումը, քանզի սահմանադրության դերը հասարակության կյանքում ամենից առաջ դրսևորվում է դրա գործառնությունների մեջ:

Սահմանադրության հիմնահարցերով զբաղվող հետազոտողների մոտ դրա գործառնությունների տեսակների հարցում կան տարակարծություններ, սակայն հիմնականների կապակցությամբ բոլորի մտեցումները միատեսակ են: Դրանք բաժանվում են երեք խմբի՝ **իրավական (իրավաբանական), քաղաքական և գաղափարական (դաստիարակական):**

1. Իրավական (իրավաբանական) գործառնությունն արտահայտվում է նրանում, որ, ինչպես արդեն ասվել է, սահմանադրությունը պետության իրավունքի համակարգի միջուկն է, որը սահմանում է հիմնարար իրավական դրույթներ, որոնք համարվում են ելակետային և որոշիչ իրավունքի առանձին ճյուղերի համար: Սահմանադրությունը կարծես թե համախմբում, միավորում է գործող օրենսդրությունը մեկ միասնական համակարգի մեջ՝ տալով դրան փոխհամաձայնեցված, ներդաշնակ բնույթ: Ունենալով բարձրագույն իրավաբանական ուժ, այն ապահովում է հասարակական հարաբերությունների կանոնակարգումն ու պատշաճ իրավական կարգավորումը: Իսկ այդ հարաբերությունների իրացման հիմքում ընկած են սահմանադրության անկյունաքարային այնպիսի դրույթներ ու սկզբունքներ, ինչպիսիք են պետության ինքնիշխանությունը, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, օրենքի գերակայությունը, իշխանությունների բաժանումը օրենսդիր, գործադիր և դատական թևերի և այլն:

2. Քաղաքական գործառնությունն արտահայտվում է նրանում, որ հենց սահմանադրությամբ են ամրագրվում պետության կառուցվածքի ձևը, պետական մարմինների համակարգը, պետության և քաղաքացիների, ինչպես նաև քաղաքական և այլ հասարակական միավորումների միջև փոխհարաբերությունների հիմունքները: Նրանում բովանդակվում է պետության արտաքին և ներքին քաղաքականության նորմատիվ արտահայտությունը: Բոլոր քաղաքական ուժերը՝ կուսակցությունները, շար-

ժուճները և այլն, փոխազդում են միմյանց, մրցակցում են, պայքարում, օգտագործում պետական իշխանությունը՝ սահմանադրությամբ որոշված կանոնների շրջանակներում:

Իհարկե, պատահում է այնպես, երբ *հիմնական օրենքներում այդ կանոններն ամրագրվում են միայն այն բանից հետո, երբ դրանք արդեն տեղ են գտել իրական կյանքում*: Սակայն պատահում է նաև, որ *այդ նորմերը նախատեսվում են սահմանադրությամբ և հետո իրականացվում կյանքում*:

Առաջին դեպքի համար օրինակ կարող են ծառայել ԱՊՀ երկրների սահմանադրությունները, որոնց ընդունումից առաջ, արտասահմանյան երկրների օրինակով, արդեն ձևավորվել էին բազմաթիվ քաղաքական կուսակցություններ և շարժումներ, իսկ հիմնական օրենքներին մնում էր միայն ճանաչել դրանց գոյությունը և ամրագրել իրավական վիճակը: Այսպես, 1991թ. կեսերին, երբ դեռ չէր փլուզվել Խորհրդային Միությունը, Հայաստանի Հանրապետության նորընտիր Գերագույն խորհրդում արդեն սկսում էին ձևավորվել կուսակցական խմբակցությունները: 1991-1995թթ., երբ աշխատանքներ էին տարվում նոր սահմանադրության նախագիծը կազմելու ուղղությամբ, պաշտոնական նախագծից զատ, մի քանի կուսակցությունների կողմից առանձին-առանձին, իսկ այնուհետև՝ մեց կուսակցություններ համատեղ, այսպես կոչված, «Ազգային համաձայնության» նախագիծ ներկայացրին Գերագույն խորհրդի քննարկմանը, որպես Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրության նախագիծ: Ավելին, հետագայում, երբ փոխադարձ համաձայնությամբ մշակվում էր Սահմանադրության նախագծի մեկ միասնական տարբերակ, կուսակցությունների ներկայացուցիչներն ընդգրկվեցին Գերագույն խորհրդի կողմից կազմված Սահմանադրության նախագիծը մշակող հանձնաժողովի կազմում: Այնպես որ, Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրության ընդունման նախօրյակին ՀՀ արդարադատության նախարարության կողմից արդեն պաշտոնապես գրանցվել էին հինգ տասնյակից ավելի քաղաքական կուսակցություններ: Ուստի հանրապետության Հիմնական օրենքին այլ բան չէր մնում, քան ճանաչել այդ կուսակցությունների գոյությունը և սահմանել պետական իշխանության համար նրանց պայքարի կանոնները: Գրեթե նույնն էր վիճակը Ռուսաստանում, Բելոռուսում, Ուկրաինայում և ԱՊՀ մյուս երկրներում:

Երկրորդ դեպքը հատուկ է առաջին սահմանադրություններին, որոնց ընդունման ժամանակ դեռևս չէին ձևավորվել քաղաքական կուսակցությունները, ուստի դրանք, բնականաբար, չէին կարող բովանդակել նորմեր քաղաքական կուսակցությունների մասին: Հետագայում, երբ

անհրաժեշտ է դառնում պետական իշխանությունն ավելի մոտեցնել ժողովրդին, դրա կազմակերպման ընթացքում կիրառել ավելի ժողովրդավարական սկզբունքներ, ապա սահմանադրությունները հնարավոր են համարում քաղաքական կուսակցությունների գոյությունը: Այսպես, ԱՄՆ-ի Սահմանադրությունն ընդունվել է 1787 թվականին, մինչդեռ քաղաքական առաջին կուսակցություններն այդ երկրում ձևավորվել են մոտ կես դար հետո (Դեմոկրատական կուսակցությունը՝ 1828թ., Հանրապետական կուսակցությունը՝ 1854թ.): Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից 1791թ. ընդունված Սահմանադրությունը լայն տեղ էր հատկացնում մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին: Սակայն դրանում ոչինչ չէր ասվում ժամանակակից պետության հիմքերի և կառուցվածքի ժողովրդավարական սկզբունքների մասին, որի շնորհիվ դեռ երկար ժամանակ Ֆրանսիայի պետական իշխանության կազմակերպման բնագավառում էական ազդեցություն ունեին բացարձակ միապետությունից ժառանգություն մնացած սկզբունքները: Քաղաքական առաջին կուսակցությունները Ֆրանսիայում ասպարեզ են իջել միայն 20-րդ դարի սկզբներին (սոցիալիստական և կոմունիստական կուսակցությունները ձևավորվել են 1920թ. մյուսները՝ ավելի ուշ), իսկ նրանց կարգավիճակը առաջին անգամ Ֆրանսիայի պատմության մեջ ամրագրվել է 1958թ. Հիմնական օրենքում:

Այսպիսով, սահմանադրությունը պետության քաղաքական համակարգի իրավական հիմքն է, և դրա նորմերի զգալի մասն ունի վառ արտահայտված քաղաքական բովանդակություն:

3. Գաղափարական (դաստիարակչական) գործառնությունը: Սահմանադրական նորմերում բովանդակված կանոններն ու սկզբունքներն ունեն նաև լուրջ գաղափարական, դաստիարակչական նշանակություն: Դրանք ուղղված են քաղաքացիների դաստիարակությանը, հասարակությունում ճանաչված համամարդկային արժեքների հարգմանը: Այդ արժեքների շարքում հիմնական օրենքները հատկապես առանձնացնում են մարդու իրավունքներն ու ազատությունները, սեփականությունը, ժողովրդավարությունը, ընտանիքը և այլն: Ընդ որում, որպես առավել հեղինակավոր իրավական ակտ, սահմանադրությունը կարծես թե համոզում է մարդուն՝ եթե քեզ համար քանկ են այդ արժեքները, ապա հետևիր այն պատգամներին, որոնք գրի են առնված հիմնական օրենքում:

Առանձին հեղինակների մոտ սահմանադրության գործառնության ինքնուրույն տեսակ է համարվում, այսպես կոչված, «**մարդասիրական գործառնությունը**», որն ըստ էության նույնացվում է գաղափարական-

դաստիարակչական գործառնության հետ: Դրա իմաստն այն է, որ հիմնական օրենքն ամրագրում է քաղաքակիրթ հասարակությանը հարիր մարդու իրավունքների և ազատությունների ծավալ, միջազգային հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները, ինչպես նաև վավերացված միջազգային պայմանագրերը հայտարարում է պետության իրավունքի համակարգի անբաժան մաս: Իսկ որոշ երկրների սահմանադրություններ մարդու իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը համարում են բարձրագույն արժեքներ (Գերմանիա, Ռուսաստան և ուրիշներ) և պարտավորեցնում պետությանն ապահովելու դրանց իրականացումն արժանավայել և քաղաքակիրթ ձևով:

Որոշ հեղինակներ սահմանադրության կարևորագույն գործառնությունների թվին են դասում **պետականության զարգացման մեջ իրավահաջորդության, պետական իշխանության անընդհատության ամրագրումը**, որով սահմանադրությունն ընդգծում է պետականության անխախտությունը՝ անկախ ցանկացած հեղափոխությունից, հեղաշրջումից և վերակառուցումից¹⁰: Այդ գործառնությունը, օրինակ, Ֆրանսիայի Սահմանադրության մեջ արտահայտվում է նրանում, որ Ֆրանսիան հայտարարվում է «անբաժան ժողովրդավարական, աշխարհիկ և սոցիալական հանրապետություն» (հոդվ. 2): Խնդիրն այն է, որ Ֆրանսիայի կազմում, բացի հիմնական երկրից, կան նաև անդրծովյան մի շարք տարածքներ, որոնք միացել են նրան կամովին: Ֆրանսիայի Հիմնական օրենքն այդ տարածքների անջատման համար որևէ պայման չի նախատեսում: Ասել է, թե Ֆրանսիան ժամանակակից կազմով ու տարածքով մնալու է անփոփոխ՝ անկախ երկրում կատարվելիք փոփոխություններից: Ռուսաստանի Դաշնությունում այդ դրույթն իր արտահայտությունն է գտել Սահմանադրության նախաբանում, որտեղ խոսվում է «պատմականորեն ձևավորված պետական միասնության պահպանման» մասին, անկախ Ռուսաստանի կյանքում կատարված և կատարվելիք փոփոխություններից:

Իրավահաջորդության գործառնությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ իր արտահայտությունը գտել է մի փոքր այլ կերպ: Դրա նախաբանում կարդում ենք. «Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները... ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»:

¹⁰ Сб.и Баглай М.В., Габричидзе Б.Н. Конституционное право Российской Федерации. М., 1996, с. 67.

Այստեղից պարզորոշ երևում է, որ «համազգային նպատակների հարցում Հիմնական օրենքը վկայակոչում է հռչակագիրը: Իսկ դրանում հայ ժողովուրդը գիտակցում է իր «պատասխանատվությունը ... համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում»: Պատմական անարդարությունը հայ ժողովրդի նկատմամբ այն է, որ նրա տարածքների մեծ մասը նվաճվել է Թուրքիայի և մեր մյուս հարևանների կողմից, իսկ մեր ժողովրդի «իղձերի իրականացումը» նշանակում է այդ հողերի վերամիավորումը Հայաստանի Հանրապետության հետ, և աշխարհասփյուռ հայության վերադարձը հայրենիք, որն էլ կազմում է Հանրապետության Հիմնական օրենքի նախաբանի բովանդակության կարևոր մասը:

Ասվածից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավահաջորդն է ոչ միայն Հայաստանի առաջին (1918թ. դաշնակցական) և երկրորդ (1920թ. խորհրդային հանրապետությունների), այլ նաև նրանցից շատ ավելի վաղ մեր նախնիների կողմից ստեղծված պետականության:

§ 6. Սահմանադրության գործողությունը

Սահմանադրության գործողությունը սովորաբար հասկացվում է մի քանի առումներով: Դրանք են.

ա) սահմանադրության գործողությունը ժամանակի մեջ:

Սահմանադրությունը, որպես կանոն, ուժի մեջ է մտնում դրա եզրափակիչ կամ անցումային դրույթներում նշված պահից, ավելի հազվադեպ՝ դրա կիրառման վերաբերյալ ընդունված օրենքում նշված պահից և գործում է առանց ժամկետի սահմանափակման: Անցումային դրույթները սահմանադրության առանձին նորմերի կիրառման վերաբերյալ կարող են նախատեսել ավելի ուշ ժամանակ՝ կապելով այն այս կամ այն երևույթի առկայության հետ: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 115 հոդվածում (9-րդ գլուխ) ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունները, բացառությամբ 55 հոդվածի 9-րդ կետի առաջին նախադասության, 63 հոդվածի երկրորդ մասի առաջին նախադասության դրույթի, 74.1 հոդվածի առաջին մասի, 83.4 հոդվածի, 85 հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի, 86 հոդվածի... ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» իրապարակվելու հաջորդ օրվանից:

Իսկ 116 հոդվածում նշվում է, որ Սահմանադրության փոփոխությունների 55 հոդվածի 9-րդ կետի առաջին նախադասության դրույթները, 74.1 հոդվածի առաջին մասը, 86 հոդվածը... ուժի մեջ են մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից, կամ 85 հոդվածի վեցերորդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթն ուժի մեջ է մտնում 2008թ. հուլիսի 1-ից և այլն,

բ) սահմանադրության գործողությունը տարածության վրա:

Սահմանադրությունը, որպես կանոն, ուժի մեջ է մտնում պետության ողջ տարածքի վրա: Սակայն որոշ դեպքերում, մասնավորապես դաշնային կառուցվածք ունեցող պետություններում, դրա առանձին տարածքների կամ դրան ավելի ուշ միացող տարածքների վրա սահմանադրությունը կարող է ուժի մեջ մտնել միացման պահից: Այսպես, Գերմանիայի Դաշնային Հանրապետության 1949թ. Սահմանադրությունը (23 հոդվածի համաձայն) ընդունման պահից գործում էր այն ժամանակվա արևմտագերմանական հողերի վրա և կարող էր գործել Գերմանիայի մյուս տարածքների (Արևելյան Գերմանիայի) վրա՝ Դաշնային Գերմանիայի հետ վերանիավորման պահից:

Սահմանադրության տարածքային գործողությունը վերաբերում է ոչ միայն տվյալ պետության տարածքում գտնվող պետական մարմիններին, քաղաքացիներին, իրավաբանական անձանց ու կազմակերպություններին, այլ նաև *արտասահմանում գտնվող* նրա քաղաքացիներին, իրավաբանական անձանց և կազմակերպություններին: Արտասահմանյան պետությունները և միջազգային կառավարական կազմակերպությունները պարտավոր են հարգել պետության սահմանադրությունը, բացառությամբ այն նորմերի, որոնք հակասում են միջազգային հանրաճանաչ նորմերին ու սկզբունքներին (օրինակ, մարդու իրավունքների խախտմանը, ագրեսիվ պատերազմներ վարելուն ուղղված նորմերը և այլն):

գ) սահմանադրության նորմերի անմիջական գործողությունը:

Ժամանակակից սահմանադրություններն ընդլայնել են ոչ միայն իրենց կարգավորման առարկան, այլև սոցիալ-քաղաքական բովանդակությունը, դրանց նորմերի զգալի մասն ունի նորմ-ծրագրերի, նորմ-սկզբունքների բնույթ, որոնք չեն առաջացնում կոնկրետ իրավահարաբերություններ: Այդպիսի նորմ-սկզբունքների օրինակ կարող է համարվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5 հոդվածի շարադրանքը. «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա»:

Հասկանալի է, որ այդ նորմը չի առաջացնում կոնկրետ իրավահարաբերություն՝ իր պարտավորեցնող մասով, և որևէ անձ այդ նորմից բխող իր պահանջների չկատարման վերաբերյալ չի կարող դիմել դատարան:

Սակայն սահմանադրությունների նորմերի ճնշող մասը գործող են և առաջ են բերում կոնկրետ իրավահարաբերություններ, որոնց խախտման համար կողմերը կարող են իրենց իրավունքները պաշտպանել դատական կարգով: Դրանք առավելապես վերաբերում են մարդու իրավունքներին և ազատություններին: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 22 հոդվածում ասված է. «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ»: Նախաքննության կամ դատական իշխանության մարմնի ամեն մի գործողություն՝ ուղղված նշված անձանց վերաբերյալ ցուցմունք կորզելուն, բնականաբար, կոյտվի որպես անձի իրավունքների խախտում և, հենվելով իր սահմանադրական ազատությունն ամրագրող նորմի (22 հոդվ.) վրա՝ անձը կարող է դիմել դատարան և պահանջել, որպեսզի իրավազանցներին ենթարկեն պատասխանատվության: Կամ նույն հոդվածում գրված է. «Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի» (6-րդ մաս): Եթե քաղաքացու գործողությունը կատարման պահին չի համարվել իրավախախտում և որոշ ժամանակ անց ընդունվել է նորմատիվ ակտ, որով այն ճանաչվել է զանցանք կամ հանցագործություն, ապա անձի նկատմամբ այդ իրավական ակտը չի կարող կիրառվել, հակառակ դեպքում վերջինս, հենվելով նշված սահմանադրական նորմի վրա, կարող է դիմել դատարան և պահանջել, որպեսզի այդ նորմը չկիրառվի իր արաբքը գնահատելու համար:

Բերված օրինակներից ամառարկելիորեն հետևում է, որ սահմանադրությունն անմիջական գործող իրավական ակտ է և դատարանները իրենց գործունեության ընթացքում վճիռներ և դատավճիռներ կայացնելիս կարող են անմիջականորեն հենվել դրա համապատասխան նորմի վրա: Առավել ևս, որ նման հնարավորությունն ուղղակի բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6 հոդվածից, ուր ասված է. «Հանրապետության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն»: Մնում է, որ Հանրապետության դատական իշխանության մարմինները իրենց գործունեության ընթացքում առաջնորդվեն Սահմանադրության այդ նորմի պահանջներով, որն ավելի կբարձրացնի նրանց կողմից ընդունված վճիռների և դատավճիռների հեղինակությունը:

Դրա հետ մեկտեղ, սահմանադրություններում ամրագրված նորմերի մի մասի գործողության համար պահանջվում է *օրենքի ընդունում*:

Դրանք, այսպես կոչված, *հենվող բնույթ ունեցող նորմերն են*, որոնց կիրառության համար նախատեսվող պայմանը բովանդակվում է սահմանադրության հիման վրա ընդունվող օրենքի մեջ: Այդպիսի նորմի օրինակ կարող է հանդիսանալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109 հոդվածը, որի համաձայն՝ կառավարությունը օրենքով նախատեսված դեպքերում սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է պաշտոնաձև անել համայնքի ղեկավարին: *Ո՞ր դեպքերում նշված հոդվածը կարող է անմիջապես գործել, եթե՝ ա) որոշվում է, թե ով իրավունք ունի պաշտոնաձև անելու համայնքի ղեկավարին (կառավարությունը), բ) թե ում ներկայացնամք կառավարությունը կարող է պաշտոնաձև անել համայնքի ղեկավարին (մարզպետի):* Ինչ վերաբերում է, թե որ արարքների կամ իրավախախտումների դեպքում մարզպետի ներկայացնամք կառավարությունը կարող է պաշտոնաձև անել համայնքի ղեկավարին, ապա այդ հարցի կապակցությամբ նշված նորմն անմիջապես գործել չի կարող, որովհետև Սահմանադրությունը դրա լուծումը վերապահում է օրենքին: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը բովանդակում է նման մի շարք այլ նորմեր (76, 81, 85, 95, 97 հոդվ. և այլն):

§ 7. Սահմանադրության ընդունման և փոփոխման կարգը

1. Սահմանադրության ընդունումը: Սահմանադրական շինարարության համաշխարհային ավելի քան երկհարյուրամյա գործընթացը կյանքի է կոչել սահմանադրությունների ընդունման մի քանի եղանակներ: Դրանք միմյանցից տարբերվում են մասնակիցների կազմով և ժողովրդավարության մակարդակով:

Դրանցից առավել նվազ ժողովրդավարական են, այսպես կոչված, **չնորոգված սահմանադրությունները**, որոնց ընդունման կարգի մասին խոսվեց վերևում:

Սահմանադրությունների ընդունման ավելի ժողովրդավարական (քան նախորդը) եղանակ է ընտրովի **Սահմանադիր ժողովի** կողմից դրանց ընդունումը: Իրենց առջև դրված խնդիրների ու ստանձնած լիազորությունների առումով տարբերվում են սահմանադիր ժողովների երկու տեսակ:

Առաջին դեպքում Սահմանադիր ժողովը ոչ միայն մշակում է սահմանադրության նախագիծը, այլ ընդունում է այն: Նման դեպքում Սահմանադիր ժողովը, որքանով որ քնակչության կողմից ընտրված մարմին է,

փաստորեն, ժամանակավոր կատարում է խորհրդարանի դեր: Սովորաբար նման իրավագրությամբ օժտված Սահմանադիր ժողովը իր առջև դրված խնդրի իրականացումից հետո արձակվում է: Այդպես է ընդունվել օրինակ, ԱՄՆ-ի 1787թ. Սահմանադրությունը Ֆիլադելֆիայում՝ Ազգային կոնվենտի կողմից, Ֆրանսիայի 1848թ. Սահմանադրությունը՝ Ֆրանսիական Սահմանադիր ժողովի կողմից և այլն:

Երկրորդ դեպքում Սահմանադիր ժողովը միայն մշակում է սահմանադրության նախագիծը, որը հետո հաստատվում կամ ընդունվում է այլ եղանակով, ավելի հաճախ՝ հանրաքվեի միջոցով: Այդ ճանապարհով են ընդունվել Ֆրանսիայի 1946թ., Իտալիայի 1947թ., Պորտուգալիայի 1976թ., Բուլղարիայի 1990թ., Ռումինիայի 1991թ. և այլ երկրների սահմանադրությունները:

Քիչ չեն դեպքերը, երբ սահմանադրության նախագիծը մշակում է կառավարության կամ խորհրդարանի կողմից ստեղծված սահմանադրական հանձնաժողովը, հետո այն դրվում է հանրաքվեի: Նման եղանակով են ընդունվել ԱՊՀ երկրների մեծ մասի սահմանադրությունները:

Սահմանադրության ընդունման ինքնուրույն եղանակ է **խորհրդարանի կողմից** դրա ընդունումը: Այդ դեպքում, ի տարբերություն սովորական օրենքների, խորհրդարանը երկրի հիմնական օրենքն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ: Այդպես էին ընդունվում նախկին Խորհրդային Միության և նրա կազմի մեջ մտնող միութենական հանրապետությունների սահմանադրությունները:

Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրությունը (ի տարբերություն Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության սահմանադրությունների) երկրի Հիմնական օրենքի ընդունման իրավունքը չի վերապահել պետական իշխանության օրենսդիր մարմնին: Սահմանադրության նախագիծը մշակել է ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմված հանձնաժողովը և դրա 111 հոդվածի համաձայն՝ Սահմանադրությունն ընդունվել է հանրաքվեի միջոցով, որի նախաձեռնության սուբյեկտներ են ճանաչվել Հայաստանի Հանրապետության Նախագահը և Ազգային ժողովը: Ըստ նշված հոդվածի, հանրաքվեն նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնության առաջարկով կամ համաձայնությամբ:

Այստեղից պարզորոշ հետևում է.

ա) հանրաքվեի դեպքում համար սահմանադրության նախագիծ կարող է ներկայացնել ինչպես Ազգային ժողովը, այնպես էլ Հանրապետության Նախագահը.

բ) հանրաքվե նշանակելու իրավունքը բացառապես պատկանում է Հանրապետության Նախագահին.

գ) հանրաքվեի նշանակման թույլտվությունը բացառապես վերապահված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին:

Այն դեպքում, երբ Հանրապետության Նախագահի նախաձեռնությամբ է Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծը ներկայացվում հանրաքվեի, ապա Ազգային ժողովը նախագիծն ստանալուց հետո՝ եռամսյա ժամկետում, այն հանրաքվեի դնելու հարցը ներկայացնում է քվեարկության: Եթե Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնությունը կողմ է քվեարկում նախագծին, ապա վերջինս համարվում է ընդունված, և այն Հանրապետության Նախագահը հանրաքվեի է դնում իր սահմանած ժամկետում:

Եթե Ազգային ժողովի կողմից է ներկայացվում (ստանդարտների ընդհանուր թվի մեծամասնության *առաջարկով*) Սահմանադրության նախագիծը, ապա Հայաստանի Հանրապետության Նախագահն այդ նախագիծն ստանալուց հետո քսամենկօրյա ժամկետում կարող է այն իր առաջարկություններով և առարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում (այսինքն՝ կարող է օգտվել իր վետոյի իրավունքից): Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով վերստին առաջարկված Սահմանադրության նախագիծը Հանրապետության Նախագահը պարտավոր է դնել հանրաքվեի՝ Ազգային ժողովի սահմանած ժամկետում:

Հանրաքվեի դրված սահմանադրության նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ են քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը (1/3 հոդվ.):

2. Սահմանադրության փոփոխումը: Սահմանադրությունը պետության իրավունքի համակարգի միջուկն է, նրա հիմքը: Դրանում կատարվող ամեն մի փոփոխություն առաջ է բերում համապատասխան փոփոխություններ իրավունքի համակարգում: Այդ պատճառով էլ սահմանադրության որակական որոշակիությունը բնութագրում է պետության ողջ իրավունքի համակարգի որակական կողմը: Եթե կայուն է սահմանադրությունը, ուրեմն ներդաշնակ է գործում նաև իրավունքի համակարգը, հակառակ դեպքում անխուսափելի են անգամ միատեսակ հասարակական հարաբերություններ կարգավորող նորմատիվ ակտերի միջև հակասություններն ու քառուրդը:

Սակայն հասարակության կյանքի զարգացումը, քաղաքական ուժերի հարաբերակցության էական փոփոխությունները կարող են առաջ բերել սահմանադրության փոփոխության անհրաժեշտություն:

Սահմանադրությունները, դրանցում կատարվող փոփոխությունների առումով, ինչպես արդեն նշվել է, լինում են երկու տեսակ՝ *կոշտ և ճկուն:*

Ճկուն սահմանադրությունները դրանք սովորաբար չգրված սահմանադրություններն են (օրինակ, Մեծ Բրիտանիայի, Նոր Զելանդիայի, Իսրայելի), որոնցում փոփոխությունները կատարվում են սովորական օրենքներ ընդունելու ձևով: Ամեն մի նոր ընդունված օրենք, որը բովանդակում է սահմանադրական նորմեր, կարող է փոփոխություն մտցնել նրանից առաջ ընդունված օրենքում կամ կարգավորել նոր իրավահարաբերություն, որը նախորդ օրենքով չէր կարգավորվում: Ընդ որում, ինչպես նոր, այնպես էլ նախորդ օրենքների համար սահմանվում է ընդունման նույն կարգը:

Սակայն կան նաև գրված սահմանադրություններ, որոնց փոփոխությունը նույնպես կատարվում է սպարզեցված եղանակով: Այսպես, խորհրդային սահմանադրությունների փոփոխության համար պահանջվում էր բարձրագույն ներկայացուցչական մարմնի պատգամավորների ձայների որակյալ մեծամասնությունը: Հայկական ԽՍՀ Սահմանադրությունն, օրինակ, ամբազան էր, որ դրա մեջ փոփոխություն կատարելու համար պահանջվում է Գերագույն խորհրդի պատգամավորների ընդհանուր թվի ոչ պակաս, քան երկու երրորդի համաձայնությունը:

Սահմանադրության փոփոխության մասն պարզեցված եղանակը հանգեցրել էր նրան, որ խախտվել էր սահմանադրության կայունությունը և, ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ նրա կազմում գտնվող միութենական հանրապետությունների սահմանադրություններում նրանց բարձրագույն ներկայացուցչական մարմինների գրեթե բոլոր նստաշրջանների ժամանակ առաջարկվում էին մեծ թվով փոփոխություններ: Միայն Խորհրդային Հայաստանի Սահմանադրության մեջ 1978-1988թթ. մտցվել է մոտ 350 փոփոխություն:

Նոր սահմանադրության ընդունումը միշտ էլ արդյունք է հասարակության կյանքում տեղի ունեցող էական փոփոխությունների: Նրանում կատարվող փոփոխությունը նույնպես պետք է լուրջ հիմնավորում ունենա: Անկասկած, դա է պատճառը, որ երկրների մեծ մասը զերադատում է ունենալ *կոշտ* սահմանադրություն, որի փոփոխության համար նախատեսվում է *բարդացված* կարգ:

Մեր օրերում աշխարհում գործող շատ սահմանադրություններ իրենց փոփոխման կարգը փորձել են նմանեցնել ԱՄՆ-ի Սահմանադրությանը, որն անցած 220 ավելի քան տարիների ընթացքում կրել է ընդամենը 27 փոփոխություն: Հետաքրքիր է, որ ԱՄՆ-ի Կոնգրեսը սահմանադրության վերջին 27-րդ փոփոխության տեքստը ներկայացրել էր դեռևս 1789 թվականին, սակայն այն ուժի մեջ է մտել միայն 1992 թվականին՝ Միչիգանի նահանգի վավերացումից հետո:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նույնպես կարելի է դասել կոչո սահմանադրությունների շարքը: Այդ միտքը հիմնավորված է հետևյալ հանգամանքներով.

առաջին. Սահմանադրության 111 հոդվածը կտրուկ կերպով սահմանափակում է դրանում փոփոխություն կատարելու նախաձեռնություն ունեցող սուբյեկտների շրջանակը՝ այն վերապահելով միայն Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին: Ընդ որում, եթե նախաձեռնությունը գալիս է Նախագահից, ապա առաջարկված փոփոխությանը պետք է համաձայնություն տա Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Եթե նախաձեռնությունը գալիս է Ազգային ժողովից, ապա՝ ա) առաջարկությունը պետք է պաշտպանի պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին, բ) ստանա Հանրապետության Նախագահի հավանությունը, գ) իսկ եթե Նախագահն այն իր առարկություններով և առաջարկություններով վերադարձնում է Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում, ապա Նախագահի վետոն Ազգային ժողովի կարող է հաղթահարել, եթե ներկայացված առաջարկության օգտին քվեարկում է պատգամավորների ընդհանուր թվի որակյալ մեծամասնությունը (երկու երրորդը):

երկրորդ, Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ Նախագահի և Ազգային ժողովի առաջարկությունները կարող են իրավաբանական ուժ ստանալ միայն հանրաքվեի միջոցով: Ընդ որում, պահանջվում է, որպեսզի դրանց օգտին տրվի քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը:

երրորդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 114 հոդվածի համաձայն՝ 1, 2 և 114 հոդվածները փոփոխման ենթակա չեն: Այսինքն՝ Հիմնական օրենքն ինքն է ամրագրում իր կայունության գաղափարը, պետության որակական որոշակիության անփոփոխելիության պահանջը: Սահմանադրության թիվ 1 հոդվածում ամրագրված է պետության բնույթը (ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրա-

վական), իսկ 2 հոդվածում՝ պետական իշխանության պատկանելությունը, դրա իրականացման սահմանադրաիրավական ձևերը: Եթե փոխվում են այդ հոդվածների պահանջները, ապա չի կարող չփոխվել պետության բովանդակությունը, ուրեմն՝ և ամբողջ Սահմանադրությունը:

Ինքնակայունությունը ապահովող նորմեր բովանդակելու սկզբունքը հատուկ է արտասահմանյան գրեթե բոլոր երկրների սահմանադրությունների: Ընդ որում, կան սահմանադրություններ, որոնք արգելում են ավելի մեծ թվով նորմերի ու սկզբունքների փոփոխում: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության համաձայն, փոփոխության ենթակա չեն թիվ 1 գլուխը («Սահմանադրական կարգի հիմունքները»), 2 գլուխը («Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները») և 9 գլուխը («Սահմանադրության փոփոխությունները և Սահմանադրության վերանայումը»):

Նման բնույթի հոդվածներ են բովանդակում ԳՖՀ-ի 1949թ. Սահմանադրությունը (հոդվ. 20, 79), Հունաստանի 1975թ. Սահմանադրությունը (հոդվ. 110) և շատ ու շատ երկրների սահմանադրություններ:

ՔԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԳԼՈՒԽ 4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ

§ 1. Սահմանադրական կարգի հասկացությունը

«Սահմանադրական կարգ» հասկացության էությունն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքի «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ թիվ 1 գլխում: Դրա բովանդակությունը, ամենից առաջ, արտահայտվում է նրանում, որ պետությունը ստանձնի Սահմանադրությունը պահպանելու գործառույթը և լիովին ենթարկվի իրավունքի պահանջներին:

Այդ կապակցությամբ առանձնակի կարևորվում է Սահմանադրության **ժողովրդավարական բնույթը**: Ժողովրդավարության սկզբունքներին անհարիր, դրանք անտևող Սահմանադրության պահանջների անգամ խիստ հետևողական կատարումն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ Սահմանադրական կարգի առկայությանը: Սահմանադրական կարգ, փաստորեն, կարող է գոյություն ունենալ բացառապես այնպիսի նախադրյալների պայմաններում, երբ Սահմանադրությունը երաշխավորում է մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները և անշեղորեն պահպանվում է այն: Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ **սահմանադրական կարգը դա մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պահպանումն ու պետության կողմից Սահմանադրությանը համապատասխան գործելն է**:

Սահմանադրական կարգի հիմունքների բովանդակությունը պայմանավորված է պետություն, քաղաքացի և հասարակություն փոխհարաբերությունների բնույթով: Թերևս դրանով է բացատրվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության թիվ 1 գլխի դրույթների նպատակատողվածությունը: Նշված գլխում, առաջին հերթին, ամրագրված են պետության հիմնական հատկանիշները, որոնց արդյունքում վերջինիս համար ծագում է քաղաքացիական հասարակության բնականոն առա-

ջընթացն ապահովելու, Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված **պետական իշխանության շրջանակներով խստորեն սահմանափակվելու պարտավորություն**:

Հայաստանի սահմանադրական կարգի բնույթով է պայմանավորված նաև երկրում **ժողովրդավարական քաղաքական ռեժիմի** ձևավորումը, մարդու և քաղաքացու երաշխավորված իրավունքների ու ազատությունների սահմանումը և դրանց իրացման գործում պետական կառույցների կողմից կամայականությունների բացառումը:

Սահմանադրական կարգը հանդիսանում է Սահմանադրությամբ ամրագրված մյուս ինստիտուտների **հիմնաքարը**, որը կանխորոշում է դրանց հիմնական բովանդակությունը և զարգացման ուղղությունները:

Ավելին, ընդհանուր գծերով ներկայացնելով պետության կազմավորման սկզբունքները, սահմանադրական կարգին նվիրված գլխի դրույթները միաժամանակ սահմանում են յուրաքանչյուր սահմանադրական ինստիտուտի տեղն ու դերը քաղաքական համակարգում, երաշխավորում դրա նորմերի իրացման բնականոն գործընթացն ու ներդաշնակ համագործակցությունը մյուս ինստիտուտների հետ:

Հարկ է նկատել, որ Սահմանադրության թիվ 1 գլխի էական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ վերջինս ուղղակիորեն ամրագրում է այն հիմնական սկզբունքները, որոնք հիմք են հանդիսանում երկրի Հիմնական օրենքի հետագա դրույթների ձևավորման և հստակ ամրագրման համար: Այսպես, իշխանության տարբեր ճյուղերին նվիրված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-7 գլուխներում ամրագրված դրույթների հիմքում, որպես **կողմնորոշիչ սկզբունք**, ընկած է իշխանությունների բաժանման գաղափարը, որն ուղղակիորեն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության թիվ 1 գլխում. «Ուետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա» (5 հոդվ.):

Նույն կերպ, պետական իշխանության մարմինների լիազորությունների շրջանակը նախանշված է սահմանադրական կարգի հիմունքները գլխի դրույթներով: Այսպես, հայտնի է, որ Սահմանադրության բոլոր գլուխներն այս կամ այն չափով անդրադառնում են պետական իշխանության մարմինների կարգավիճակին և դրանց կողմից իրենց գործառույթների իրականացման հիմնադրույթներին: Սակայն պետական իշխա-

նության մարմինների կողմից հնարավոր կամայականությունների դրսևորումների նախականիման երաշխիքն ամբողջական տեսքով ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5 հոդվածում. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Սահմանադրական կարգի ապահովման և, միաժամանակ, կամայականությունների ու հնարավոր այլ չարաշահումների կանխարգելման հուսալի իրավական երաշխիք է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության թիվ 2 հոդվածում ամրագրված դրույթն այն մասին, որ «Էշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»: Միայն այդպիսի դրույթների առկայությունն է իրական նախադրյալներ ստեղծում երկրում նախատեսված սահմանադրական կարգի գործնական ապահովման համար:

Սահմանադրական կարգի կարևոր հիմնադրույթներից է նաև **օրենքի գերակայության** սկզբունքի ամրագրումը երկրի Հիմնական օրենքում, որի 6 հոդվածը հանգամանորեն կանոնակարգում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների գերակայությանն առնչվող հիմնահարցերը, մասնավորապես պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից բացառապես Հանրապետության Սահմանադրության և օրենքների շրջանակներում գործելու և իրավական ակտեր ընդունելու՝ պարտավորությունը, օրենքների նկատմամբ այլ իրավական ակտերի ստորադասությունը և այլն:

Սահմանադրության և օրենքի **գերակայության անհրաժեշտությունը** պայմանավորված է նրանով, որ հենց Հիմնական օրենքում են ամրագրված սահմանադրական կարգի հիմնական սկզբունքները, հասարակության առաջընթացն ապահովող կարևորագույն ինստիտուտները և դրանց երաշխիքները: Սահմանադրության գերակայությունը իրավունքի համակարգում հնարավոր կդարձնի խուսափել Սահմանադրությամբ նշված հասարակության առաջընթացին խոչընդոտող այլ իրավական ակտերի ընդունումից:

Բացի այդ, օրենքների գերակայությունն այլ իրավական ակտերի նկատմամբ պայմանավորված է նրանով, որ օրենքներն ընդունվում են երկրի օրենսդիր իշխանության ճյուղը ներկայացնող Ազգային ժողովի

կողմից և կարգավորում են հասարակության համար բացառապես կարևոր և սկզբունքային նշանակություն ունեցող հարաբերություններ, կանխորոշում են երկրի իրավունքի համակարգի զարգացման հիմնական ուղղությունները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և մյուս օրենքների գերակայության սկզբունքի երաշխավորմանն է նվիրված հետևյալ իրավական նորմը. «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին ...» (6 հոդվ.):

Դա նշանակում է, որ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող ընդունել Սահմանադրությանը և օրենքներին հակասող իրավական ակտեր: Իսկ դա նույնպես սահմանադրական կարգի կարևորագույն տարրերից է, քանի որ միայն Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված դրույթների կայունության և այլ իրավական ակտերի նկատմամբ գերակայության պարագայում է երաշխավորվում մարդու և անհատի իրավունքների ու ազատությունների հուսալի պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ հստակ ամրագրված չէ իրավունքի գերակայության սկզբունքը, սակայն այն բխում է սահմանադրական կարգի բնույթից. բոլոր այն սկզբունքային դրույթները, որոնք ընկած են սահմանադրական կարգի հիմքում, համաձայնորեն կանխորոշում են իրավունքի գերակայությունը ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեությունում: Այդ առնչությամբ, նպատակահարմար կլիներ, եթե իրավունքի գերակայության սկզբունքը, այնուամենայնիվ, իր միանշանակ ամրագրումն ստանար Սահմանադրությունում, ինչը կկանխորոշեր առավել բարձր իրավական մշակույթ:

Սահմանադրական կարգի կարևոր բաղադրիչներից է նաև օրենքների կիրառման, ինչպես նաև **իրավական ակտերի ուժի մեջ մտնելու հատուկ կարգի սահմանումը**. «Օրենքներն ուժի մեջ են մտնում միայն «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո: Այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո» (6 հոդվ.): Իրավական ակտերի հրապարակման խնդիրն ունի իրավական և սոցիալական մեծ նշանակություն, այն բխում է անհատի իրավունքների և ազատությունների համակողմանի պաշտպանության խնդիրներից, քանզի

միայն հրապարակված իրավական ակտը կարող է դառնալ դատական կարգով բողոքարկման առարկա: Իրավական ակտերի ուժի մեջ մտնելու կարգն ամրագրված է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60 հոդվածով: Նույն օրենքը նախատեսում է նաև հրապարակման ոչ ենթակա իրավական ակտերի շրջանակը: Խոսքը պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող իրավական ակտերի մասին է (59 հոդվ.):

Հարկ է նկատել, որ սահմանադրական կարգն ունի ոչ միայն ներպետական, այլև ընդգծված **միջազգային նշանակություն**: Խնդիրն այն է, որ յուրաքանչյուր պետություն պատասխանատվություն է կրում ստանձնած միջազգային պարտավորությունների համար՝ սահմանված կարգով վավերացված միջազգային պայմանագրերն ընդգրկելով պետության իրավունքի համակարգի մեջ: ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի համաձայն՝ «Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Այսպիսով, սահմանադրական կարգի հիմունքների դասակարգման հիմքում, ըստ էության, ընկած են Սահմանադրության հիմնական ինստիտուտները, որոնք արտացոլված են Սահմանադրության հետագա գլուխներում:

Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի գիտությունը նույնպես ընդունում է «սահմանադրական կարգ»-ի կարևորությունը: Եվ անկախ այն հանգամանքից, թե «սահմանադրական կարգ» վերտառությամբ գլուխներ պարունակում են այդ երկրների սահմանադրությունները, թե՛ ոչ, և ինչպիսին են դրանց անվանումները, դրանցում մշտապես առկա են դրույթներ, որոնք առնչվում են սահմանադրական կարգի հիմունքներին: Առանձին դեպքերում այդ հիմունքներն իրենց ամբարձրումն են ստանում նաև սահմանադրական օրենքներում կամ ճանաչվում դատական պրակտիկայում: Ուստի, եթե որոշ պետությունների սահմանադրությունները չեն բովանդակում «սահմանադրական կարգ» եզրույթ և այդ ինստիտուտի համար սկզբունքային նշանակություն ունեցող մի շարք այլ դրույթներ (ինչպես, օրինակ, իրավական պետություն), վկայում է այն մասին, որ այդ երկրներում ձևավորված իրավագիտակցությունը նմանաբնույթ ինստիտուտներն ընկալում է որպես ինքնուստիքյան հանրաճանաչ և անվիճելիորեն անհրաժեշտ իրավական

երևույթներ, որոնք կյանքի են կոչվում առանց լրացուցիչ իրավական ամրագրումների:

Սակայն Հայաստանի և բոլոր այն երկրների համար, որոնք դեռևս գտնվում են ժողովրդավարության կայացման ճանապարհին, այդ ինստիտուտների սահմանումն ավելի քան տրամաբանական է և հիմնավորված: Այդպիսի դրույթների հստակ ամրագրումը նրանց հիմնական օրենքներում ավելի հուսալի է դարձնում դրանց իրավական երաշխավորվածությունը, նպաստում է իրավունքի գերակայության սկզբունքի համակողմանի ներդրմանը և համարժեք իրավագիտակցության ու իրավական մշակույթի ձևավորմանը:

Հայաստանի Հանրապետությունում իրականացված սահմանադրաիրավական բարեփոխումների արդյունքում օրենքի գերակայության սկզբունքը առնվազն բովանդակային հարթության վրա իր տեղն է գիջում առավել ժողովրդավարական սկզբունքին՝ **իրավունքի գերակայության սկզբունքին**: Այդպիսի մոտեցումը արմատապես նոր պահանջներ է առաջադրում ներպետական օրենսդրությանը. որպեսզի ձևական իրավունքի ակտերը նաև բովանդակային որակով հիրավի դառնան իրավունք (իրավունքի աղբյուր), ապա պետք է լիարժեք համապատասխանեն սոցիալական արդարության պահանջներին և արտահայտեն երկրի բնակչության մեծամասնության կամքը:

§ 2. Սահմանադրական կարգի ինստիտուտի տեղը Հայաստանի սահմանադրական իրավունքում

Սահմանադրական կարգի ինստիտուտը Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքում զբաղեցնում է առաջնային ու սկզբունքային տեղ: Այն սահմանադրական իրավունքի բոլոր մյուս ինստիտուտների համար հանդիսանում է իրավունքի սկզբնաղբյուր և դրանց կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների կարգավորման կողմնորոշիչ:

Ինչպես արդեն նշվեց, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ սահմանադրական կարգի ինստիտուտի հիմնական դրույթների ամրագրումը կրում է երկակի բնույթ: Դրանք ընդհանրացված տեսքով ամրագրվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության թիվ 1 գլխում, այնուհետև իրենց համակողմանի ու հանգամանալից արտացոլումն ստացել Սահմանադրության համապատասխան ինստիտուտների նորմերում:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի համակարգում սահմանադրական կարգի իրական տեղը համարժեք պատկերացնելու համար, քերևս, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վերջինիս յուրաքանչյուր կառուցվածքային տարր (հոդված, նորմ) հանդիսանում է սահմանադրական իրավունքի առնվազն մեկ կամ մի քանի ինստիտուտների նորմերի սկզբնաղբյուր, երանկտային հիմնադրույթ: Այսպես, Սահմանադրության հենց **քիվ 1 հոդվածում** փորձ է արվում ամրագրել Հայաստանի Հանրապետության պետականության էությունը, պետության առավել ընդհանրացված և առավել վճռորոշ հատկանիշները. պետության և հաարակության փոխհարաբերությունների հիմնական բովանդակությունը. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»:

Նշված սահմանադրական դրույթն ուղղակի վկայում է այն մասին, որ Հայաստանը **կառավարման հանրապետական ձև ունեցող պետություն է**, ինչն իր հերթին նշանակում է, որ պետական իշխանության բարձրագույն մարմինները կամ ընտրվում, կամ այլ եղանակով ձևավորվում են ներկայացուցչական ինստիտուտների միջոցով: Եվ, որպես հանրապետական կառավարման ձևի ժողովրդավարական երկիր, Հայաստանի Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովը և տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են ժողովրդի կողմից, իսկ գործադիր և դատական իշխանության մարմինները նշանակվում են Հանրապետության նախագահի կողմից:

Հայաստանում սահմանադրական կարգի հաջորդ կարևոր հիմունքը դա **ժողովրդաիշխանության սկզբունքն է**, որն ամրագրված է Սահմանադրության 2 հոդվածում. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»:

Լեդոնիշյալ դրույթներից ուղղակիորեն բխում է, որ պետական իշխանությունն աճանցված է ժողովրդից, որ հենց վերջինս է հանդիսանում պետական իշխանության մյակ աղբյուրը և կրողը: Սահմանադրական 2 հոդվածի պահանջներին համապատասխան էլ իրականացվում է պետական իշխանության բոլոր թեերի կազմակերպումը, գործունեությունը և նրանց կողմից իրականացվող լիազորությունների վերահսկողությամբ

ժողովրդի մասնակցության պահանջը, որոնք իրենց արտացոլումն է ստացել Սահմանադրության 3-7 գլուխներում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի կարևոր հիմունքներից է նաև **մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը**: Սահմանադրության 3 հոդվածը մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները ճանաչում է որպես բարձրագույն արժեքներ և պարտավորեցնում է պետությանը ապահովել դրանց պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը համարվում է ժողովրդավարական պետության հիմնական հատկանիշներից մեկը:

Պետության այս գործառույթն արտացոլում է ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքական ռեժիմի սերտ կապը: Խնդիրն այն է, որ միայն իրապես **ժողովրդավարական ռեժիմի** պայմաններում է մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը ձեռք բերում իրական բնույթ, հարգվում օրինականությունը և բացառվում որևէ կամայականություն պետական կառույցների կողմից: Ընդ որում, խոսքը գնում է ոչ թե այլ իրավունքների ու ազատությունների սոսկ հռչակման, այլև դրանց փաստացի պաշտպանության մասին: Այսպես ամրագրված իրավունքների ու ազատությունների շրջանակով սահմանադրական կարգի մասին դատողություններ անելն իրավաչափ չէր լինի:

Ցանկացած սահմանադրական դրույթ, որքան էլ այն իր էությամբ լինի ընդգծված ժողովրդավարական, չի կարող կյանքի կոչվել և ներագրել իրերի վիճակի վրա, եթե այն գերծ է փաստացի գործելու հուսալի երաշխիքներից: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված են մարդու՝ միջազգային իրավունքի նորմերով նախատեսված և քաղաքակիրթ երկրների պրակտիկայում գործող գրեթե բոլոր իրավունքներն ու ազատությունները:

Դրա հետ մեկտեղ, մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական ամրագրումը և պետության կողմից դրանց պաշտպանությունն ապահովելու պարտականությունը ոչ միայն չի բացառում, այլև ենթադրում է անհրաժեշտության դեպքում **պետական հարկադրանքի** միջոցների կիրառում: Ընդ որում, դա դիտվում է որպես օրինականության ամրապնդման, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության և հանցավորությունն ու այլ իրավախախտումները բացառելու

կարևոր լծակ: Պետությունը կարող է և պարտավոր է մարդու իրավունքների ու ազատությունների իրականացման գործառույթներ իրականացնելիս, անհրաժեշտ հիմքերի առկայության պարագայում, դիմել օրենսդրությամբ սահմանված պետական հարկադրանքի միջոցների: Ասվածը վկայում է այն մասին, որ ժողովրդավարությունը չի կարող նույնացվել ամենաթողության հետ:

Դրա հետ միասին, ՀՀ օրենսդրությունը պահանջում է, որպեսզի հարկադրանքը կիրառվի *բացառապես* օրենսդրությամբ սահմանված կարգով ու շրջանակներում և բացառի պետական կառույցների կողմից օրինականության ամրապնդման պատրվակի տակ անհարկի ու հնարավոր կամայականությունները:

Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական հատկանշի՝ մասնավորապես, իշխանությունը ժողովրդին պատկանելու սկզբունքի ուղղակի արտահայտությունն է հանդիսանում Սահմանադրության 4 հոդվածի բովանդակությունը, որն ամրագրում է Հանրապետության Նախագահի, օրենսդիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման հիմնադրույթները. «Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ»:

Սահմանադրական կարգի կառուցվածքում առանցքային նշանակություն ունի *իշխանությունների բաժանման սկզբունքը*, որն ամրագրված է Սահմանադրության 5 հոդվածում: Այս սկզբունքի կիրառումը հնարավորություն է տալիս, մի կողմից, երաշխավորելու պետական ապարատի կառուցվածքային տարրերի (պետական իշխանության մարմինների) ինքնուրույն, իսկ դատական իշխանության պարագայում նաև՝ անկախ ու արդյունավետ գործունեությունը, մյուս կողմից՝ հստակ հավասարակշռելու դրանց փոխհարաբերությունները: Այդ սկզբունքի գործողությամբ է պայմանավորված իշխանության բոլոր թևերի մարմինների իրավական վիճակի սահմանադրական ամրագրումը:

Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքով ամրագրված սահմանադրական կարգին առնչվող հաջորդ սկզբունքը *օրենքի գերակայության* սկզբունքն է (6 հոդվ.), որի էության մասին հանգամանորեն խոսեցինք վերևում: Սահմանադրական այս դրույթը դրված է բոլոր օրենսդրական ակտերի դասակարգման հիմքում և կանխորոշում է դրանց միջև ծագող հնարավոր հակասությունների լուծման ընթացակարգը: Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ սահմանադրական մշակույթի հետա-

զա զարգացումները պետք է միտված լինեն իրավունքի գերակայության հստակ ու միանշանակ ամրագրմանը:

Սահմանադրական կարգին բնորոշ և առանցքային նշանակություն ունեցող սկզբունք է համարվում *բազմակարծությունը և բազմակուսակցությունը*. «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը: Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին: Կուսակցություններն ապահովում են իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությունը» (7 հոդվ.):

Նշված հոդվածում ամրագրված դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք սահմանադրական կարգի կայացման համար ունեն կարևոր քաղաքական և սոցիալական նշանակություն: Սահմանադրությամբ որևէ կուսակցության մախապատվություն չի տրվում, ոչ մի կուսակցություն չի կարող ի սկզբանե ղեկավար դիրք ունենալ քաղաքական համակարգում: Ժողովուրդն ինքն է իր քաղաքական կամքի դրսևորման ընդունելի ձևերով լիազորում այս կամ այն կուսակցությանը ներկայացնելու իր շահերը և խորհրդարանում տեղեր ստանալուց հետո հանդես գալու պետաիրավական լիազորություններով, ինչը դարձյալ պայմանավորված է ժողովրդաիրազմության սկզբունքով:

Բազմակուսակցության սկզբունքը ենթադրում է երկու, առաջին հայացքից իրարամերձ, մախադրյալների ներդաշնակ համակցում. մի կողմից, այն ապահովում է *կուսակցությունների կազմավորման և գործունեության ազատություն*, մյուս կողմից, հստակ *սահմանազծում է այն շրջանակները, որոնց սահմաններում կարող են գործել կուսակցությունները*: Մասնավորապես, վերջիններիս գործունեությունը պետք է համապատասխանի ինչպես Սահմանադրությանը և օրենքներին, այնպես էլ՝ ժողովրդավարության սկզբունքներին:

Այնհայտ է, որ բազմակարծության և բազմակուսակցության առկայությունը նպաստում է այնպիսի սահմանադրական կարգի ձևավորմանը, որն առավել համաբեռն է արտացոլում ժողովրդի քաղաքական համահավաք կամքը: Բնականաբար, կուսակցությունները սույլ ժողովրդի քաղաքական կամքի կրողներն ու արտահայտողները չեն, նրանք՝ Սահմանադրության, օրենքների ու ժողովրդավարության սկզբունքների շրջանակներում, նպաստում են *ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանը*:

Սահմանադրության 7 հոդվածի դրույթներն իրենց համակողմանի կոնկրետացումն ու ամրագրումն են ստացել 2002թ. հուլիսի 3-ին ընդունված (փոփոխություններով և լրացումներով) «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում: Դրանում կարգավորված են՝ կուսակցություններում միավորվելու իրավունքի իրականացման, կուսակցությունների ստեղծման, նրանց իրավական կարգավիճակի, գործունեության, վերակազմակերպման և լուծարման հետ կապված հարաբերությունները (թիվ 1 հոդվ.):

Սահմանադրական կարգի հիմունքների համակարգում իր ուրույն տեղն ունի **սեփականության ինստիտուտը**: Այս ինստիտուտի դրույթների ամրագրումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ պայմանավորված է վերջինիս ոչ միայն զուտ տնտեսական, այլև սոցիալ-քաղաքական մեծ նշանակությամբ: Նշված դրույթները իրավական հիմք են հանդիսանում մարդու և քաղաքացիների իրավահավասարության, պետության և անհատի միատեսակ կարգավիճակի համար՝ քաղաքացիաիրավական հարաբերություններում, տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ապահովման համար: Սահմանադրության 8 հոդվածը հետևյալ կերպ է ամրագրում նշված ինստիտուտը. «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը»:

Սեփականության իրավունքի ազատ իրականացման համար նախատեսված սահմանափակումները պայմանավորված են բացառապես շրջակա միջավայրի, այլ անձանց, հանրության և պետության իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հիմնախնդիրներով:

Սեփականության ինստիտուտի նշված դրույթներն սկզբունքային նորամուծություն են Հայաստանի սահմանադրական իրավունքի համար: Խնդիրն այն է, որ նախորդ՝ Հայաստանի խորհրդային հանրապետության բոլոր սահմանադրությունները միանշանակ ամրագրում էին սոցիալիստական սեփականության և տնտեսավարման սոցիալիստական համակարգի բացառիկությունը:

Սեփականության ինստիտուտի հիմնադրույթների սահմանումը բնավ չի նշանակում պետության կողմից տնտեսական հարաբերությունների սպառնիչ ու կամայական կանոնակարգում, ինչը բնորոշ է ավտորիտար ռեժիմի պետություններին: Պետությունը պարզապես երաշխավոր

ում է ազատ տնտեսական գործունեության, ազատ ձեռներեցության սկզբունքը, ինչը ոչ թե անհարկի գերատեսչական միջամտություն է, այլ հիշյալ սկզբունքի փաստացի կիրառման արժեքավոր **երաշխիք**:

Հռչակելով տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության սկզբունքը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը դրանով իսկ կանխորոշում է պետության դերը տնտեսական հարաբերություններում: Տնտեսության լիիրավ կառավարողից պետությունը վերածվել է տնտեսական հարաբերությունները կանոնակարգող կառույցի: Տնտեսական հարաբերություններում պետությունը հանդես է գալիս ոչ միայն իրավունքներ կրողի դերում, այլև ստանձնում է որոշակի պարտավորություններ, իսկ քաղաքացիաիրավական հարաբերություններում հանդես է գալիս մյուս մասնակիցների հետ հավասար հիմունքներով. «Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով» (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128 հոդվ., 1-ին մաս):

Դրա հետ մեկտեղ, տնտեսության ազատականությունը բնավ չի ենթադրում պետական միջամտության իսպառ բացակայություն: Հենց տնտեսական գործունեության ազատությունն ապահովելու անհրաժեշտությունն է ենթադրում որոշակի կանոնների առկայություն, որոնք, բնականաբար, կարող է սահմանել միայն պետությունը: Այսպես, ազատ մրցակցություն ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ հակամենաշնորհային, ազատ մրցակցություն ապահովող օրենսդրություն, կանոնակարգել ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական ներդրողների իրավունքների պաշտպանությունը և այլն:

Սահմանադրական կարգի կարևոր հիմունքներից է նաև **պետության և եկեղեցու** փոխհարաբերությունը (8.1. հոդվ.): Սահմանադրական բարեփոխումների արդյունքում, թերևս առաջին անգամ, փորձ արվեց Երկրի Հիմնական օրենքում ամրագրել նշված փոխհարաբերությունների բնույթը. «Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից»: Կարևոր նորամուծություն էր նաև այն, որ սահմանադրական նորմերով ամրագրվեց հայ ժողովրդի հոգևոր կյանքում Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու դերն ու նշանակությունը. «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու, որպես ազգային եկեղեցու, բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա սզգային մշակույթի զարգացման և ազ-

գային ինքնության պահպանման գործում»։ Ընդ որում, այս սահմանադրական դրույթները խիստ համահունչ են խղճի ազատության սկզբունքին. քանզի հենց նույն հոդվածով երաշխավորվում է Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը։

Սահմանադրական կարգի պաշտպանությունն իրականացվում է ինչպես երկրի **ներքին**, այնպես էլ **արտաքին** հարաբերություններում։ Թերևս, այս առանցքային սկզբունքով է պայմանավորված սահմանադրական բարեփոխումների արդյունքում Սահմանադրությունը 8.2 հոդվածով լրացնելը. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և օտարաձեռն ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը»։

Դրա հետ մեկտեղ, նույն հոդվածի (2-րդ մաս) համաձայն՝ զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո։ Այս դրույթը պայմանավորված է բազմակարծության և բազմակուսակցության սկզբունքի բնականոն իրականացումն ապահովելու անհրաժեշտությամբ, որպեսզի քաղաքական կամքի ձևավորման գործընթացը գերմ մեծային հնարավոր միջամտությունից։

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հստակ կարևոր տարրը Հայաստանի Հանրապետության **արտաքին քաղաքականության ինստիտուտն** է։ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածում այդ ինստիտուտը ներկայացված է հակիրճ, բայց հստակ ձևակերպմամբ. «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով»։

Նշված ինստիտուտը որոշում է երկրի սահմանադրական կարգի միջազգային հարաբերությունների ոլորտում դրսևորման սահմաններն ու սկզբունքները, ինչի հիմքում դարձյալ ընկած է իրավունքի գերակայությունը։ Վերջինս արտահայտվում է ներպետական օրենսդրության նկատմամբ գերակայությամբ օժտված և այդ նույն օրենսդրության համակարգի մասը կազմող միջազգային իրավունքի նորմերի պահանջները կատարելու պարտավորությամբ։

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված են նաև սահմանադրական կարգի բնականոն կայացման համար անհրաժեշտ այնպիսի դրույթներ, ինչպիսիք են **չրջակա միջավայրի պահպանությունն ու վերարտադրությունը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը, պատմության և մշակույթի հուշարձանների, մշակութային այլ արժեքների պաշտպանությունը**։

Նշված դրույթները սահմանադրական կարգի ամրապնդման գործընթացում ունեն ինչպես տնտեսական, այնպես էլ բարոյահոգեբանական նշանակություն։ Հենց այս գործոններով է մասնատեղված պետության շահագրգռվածությունը բննարկվող ոլորտում։ Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10 հոդվածն ամրագրում է, որ պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը։

Սահմանադրական կարգի հիմունքների մեկ այլ հոդված կանոնակարգում է **պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությանն** առնչվող հիմնարար հարաբերությունները. «Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո։

Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը» (11 հոդվ.)։

Տվյալ պարագայում կարևորվում են մարդու համար ինչպես նյութական, բնապահպանական, այնպես էլ հոգևոր բարեկեցաստ պայմանների ստեղծման գոյամեղքը։ Պետությունն այս երկու սրբանկրամ էլ որոշակի պատասխանատվություն է ստանձնել։ Նշված դրույթներն իրենց կոնկրետացումն են ստացել մի շարք օրենսդրական ակտերում¹։

Պետության վարչատարածքային միավորների սահմանադրական հիմքերը ևս հանդիսանում են սահմանադրական կարգի բաղադրիչ. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները» (11.1. հոդվ.)։ Վարչատարածքային այս տիպի հա-

¹ Մասնավորապես, այդ հարաբերությունների կարգավորմանն են նվիրված 1998թ. նոյեմբերի 11-ին ընդունված «Պատմության և մշակույթի հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին» և 2003թ. ապրիլի 11-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի հուշարձանների մասին» ՀՀ օրենքները և այլն։

մակարգը բնորոշ է պարզ (ունիտար) պետական կառուցվածք ունեցող պետություններին:

Նշված հիմնադրույթն իր արտացոլումն է ստացել 1995թ. նոյեմբերի 7-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչառարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման բացառիկ նշանակությունը և այդ ինստիտուտի նկատմամբ պետության հոգածության անհրաժեշտությունը, 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ներմուծվեց Հայաստանի Հանրապետության կողմից տեղական ինքնակառավարումը երաշխավորելու վերաբերյալ հիմնադրույթ և այն ես դարձավ սահմանադրական կարգի բաղադրիչ (11.2. հոդվ.): Այս իրավական կարգավորման հիմքում դրվել է այն գաղափարը, ըստ որի տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության, ժողովրդի կողմից իրեն պատկանող իշխանության իրականացման ձևերից է:

Տեղական ինքնակառավարման երաշխիքները բազմաբնույթ են (իրավական, կազմակերպական, ֆինանսատնտեսական և այլն) և սահմանված են ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ՝ օրենքներով:

Սահմանադրությունը «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերստառությամբ 2 գլխում բովանդակում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները և ազատությունները, ինչպես նաև ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հիմքեր: Սակայն դրանց համար ելակետային նշանակություն ունեն սահմանադրական կարգի այն հիմունքները, որոնք ամրագրում են **պետություն և Հայաստանի Հանրապետության քաղաքացի փոխհարաբերությունների առանցքային հարցերը**. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում եւ նրա սահմաններից դուրս գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո: Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով» (11.3. հոդվ.):

Նշված հիմնադրույթը ևս հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2005թ. նոյեմբերի 27-ին կատարված փոփոխությունների արդյունք:

Սահմանադրական կարգի հիմունքներին ուղղակի առնչվում է **լեզվի հիմնահարցը**: Սահմանադրության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է» (12 հոդվ.): Սահմանադրույթ-

յան նորմերը հստակ չեն մեկնաբանում «պետական լեզու» հասկացության իրավական նշանակությունը: Ըստ էության, այդ խնդիրն իր ամրագրումն ու մեկնաբանությունն է ստացել «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

Պետական լեզվի վերաբերյալ դրույթներ ամրագրված են եղել նաև Հայկական ԽՍՀ 1937թ. և 1978թ. սահմանադրություններում, ինչը բացառիկ երևույթ էր, եթե նկատի ունենանք, որ այն մյուս միութենական հանրապետությունների հիմնական օրենքներում (բացի խորհրդային Վրաստանի) բացակայում էր մանաբնույթ իրավական նորմ: Ընդ որում, Հայկական ԽՍՀ 1978թ. Սահմանադրության տեքստում դրանք հայտնվել են միայն քաղաքական բնույթի լուրջ հուզումների արդյունքում, քանի որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին առընթեր հանձնաժողովի կողմից փորձ էր արվել հանել 72 հոդվածում ամրագրված պետական լեզվի վերաբերյալ դրույթը:

«Լեզվի մասին» օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կանոնակարգվում է պետական իշխանության և կառավարման մարմինների ու կազմակերպությունների գործունեությունը պետական լեզվի կիրառման ոլորտում:

Վերջապես, սահմանադրական կարգի բաղադրիչներից են համարվում պետության խորհրդանշաններին՝ Հայաստանի Հանրապետության դրոշին, զինանշանին, օրհներգին և մայրաքաղաքին նվիրված հիմնադրույթները (13 հոդվ.): Իրավական կարգավորման այսպիսի մոտեցումը վկայում է պետության խորհրդանշաններին վերապահված առանցքային նշանակությունը. դրանք սոսկ սոցիալ-մշակութային ինստիտուտներ չեն, այլ արտացոլում են պետության ինքնիշխանությունը, ընդգծում նրա ինքնատիպությունը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքի «Սահմանադրական կարգի հիմունքները» գլուխը ամբողջությամբ հանդիսանում է Հայաստանի պետականության կայացման ու զարգացման առավել կայուն իրավական հիմքը, որի ժողովրդաիշխանության հիմնարար սկզբունքների ամրագրմանը նվիրված թիվ 1 և թիվ 2 հոդվածներն ընդհանրապես փոփոխման ենթակա չեն: Այն, («Սահմանադրական կարգի հիմունքները»), միաժամանակ, իրավական հիմք է հանդիսանում ոչ միայն երկրի ողջ իրավունքի համակարգի, այլև հենց Սահմանադրության դրույթների հետագա զարգացման համար:

ԳԼՈՒԽ 5.

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պետությունը, լինելով հասարակության բնականոն զարգացման արդյունք, ծագել է որպես դասակարգային իշխանության քաղաքական կազմակերպություն: Այդ դրույթը ապացուցվել է համաշխարհային գիտությամբ և պատմական պրակտիկայով: Իրոք, ստրկատիրական պետությունն իր էությանը, հիմքով, ամենից առաջ, ստրկատերերի քաղաքական կազմակերպություն էր: Ֆեոդալական պետությունը՝ ամենից առաջ, ֆեոդալների, ինչպես նաև սյուս հարուստ դասերի (արհեստավորների, վաշխառուների, հոգևորականների) քաղաքական իշխանության հիմնական մարմինն էր: Կապիտալիստական պետությունն իր զարգացման սկզբնական փուլում հանդես էր գալիս որպես բուրժուազիայի շահերն արտահայտող կազմակերպություն:

Սակայն պատմական զարգացման ընթացքում հասարակության կյանքի փոփոխման հետ կատարվել է պետության, որպես տնտեսապես իշխող դասակարգի շահերը պաշտպանող կազմակերպության, բովանդակության փոփոխություն, որը բնութագրում է պետությանը որպես ամբողջ հասարակության շահերը պաշտպանող կազմակերպության:

Նախկինի պես, լինելով հասարակության գլխավոր կառավարող համակարգ, պետությունն սկսում է ավելի ու ավելի վերածվել սոցիալական հակասությունները հաղթահարող, բնակչության տարբեր խմբերի շահերը հաշվի առնող այնպիսի մարմնի, որի կողմից ընդունված որոշումները պաշտպանության են արժանանում հասարակության տարբեր շերտերի կողմից:

Եականորեն փոխվել է պետության դերը նաև միջազգային ասպարեզում: Նրա գործունեությունն արտաքին հարաբերություններում կառուցվում է փոխընթացման, փոխզիջումների, խաղաղության և փոխօգնության հիմքի վրա:

Այս ամենը թույլ է տալիս ասելու, որ ժամանակակից պետությունը ճնշման, հարկադրանքի միջոցից վերածվել է հասարակության կյանքում տեղ գտած հակասությունները հաշտեցնող, սոցիալական արդարության բազայի վրա հասարակության գործերը քաղաքակիրթ ձևով կառավարելու կազմակերպության: Այդ է պատճառը, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդունված շատ երկրների սահմանադրություններում (Իտալիա, Գ.ՖՀ, Ֆրանսիա և այլն) պետությունը ներկայացված է

ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական և այլ բնութագրություններով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (թիվ 1 հոդվ.) նույնպես Հայաստանը ներկայացնում է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն:

§ 1. Ինքնիշխան պետություն

Պետությունը, որպես պետականորեն միավորված ժողովրդի, հասարակության հիմնական ներկայացուցիչ, ի վիճակի է արտահայտելու իր քաղաքացիների կամքը, ամբողջ ծավալով ապահովելու նրանց իրավունքներն ու շահերը, երբ հանդիսանում է ինքնիշխան: **Դա պետական իշխանության գերակայությունն է ու անկախությունն իր տարածքի ներսում և այլ պետությունների հետ հարաբերություններում:**

Հիմնադրույթի մեծան սահմանումը հետազոտողների մոտ երբեմն տարակարծության տեղիք է տալիս, թե ում է պատկանում ինքնիշխանությունը՝ պետությանը, թե՞ պետական իշխանությանը:

Ինքնիշխանությունը պետության այնպիսի էական հատկանիշ է, ինչպիսին ինքը՝ պետական իշխանությունը: Ուստի, ելնելով պետության, որպես հասարակության միակ համապարփակ կազմակերպության գաղափարից, չի կարելի ինքնիշխանությունը վերագրել պետության որևէ մեկ տարրին: Այդ իմաստով **ինքնիշխանությունը պատկանում է ոչ թե պետական իշխանությանը, այլ պետությանը:** Այն առավել ակնառու է միջազգային հարաբերությունների ոլորտում, երբ միջազգային իրավունքը որպես իրավունքի սուբյեկտ ճանաչում է ոչ թե պետական իշխանությանը, այլ պետությանն ամբողջովին վերցրած, քանզի անհրաժեշտ է լինում լուծել պետության ճանաչման, պետությունների պատասխանատվության և այլ հարցեր:

Դրա հետ մեկտեղ, քանի որ պետության, որպես ներպետական և միջազգային իրավունքի սուբյեկտի, բոլոր իրավունքները, պարտականություններն ու ողջ գործունեությունը **պետության անունից կենսագործվում է նրա պետական իշխանության կողմից**, ուստի և պետական իշխանությունն իրենով մարմնավորում է պետությունը և **օժտված է ինքնիշխանության հատկությամբ:**

Այսպիսով, ինքնիշխանությունը, լինելով պետության հիմնական հատկությունը, այդ տրամաբանությամբ նաև պետական իշխանության հատկությունն է: Ուստի, պետության ինքնիշխանության իրավաբանա-

կան բովանդակությունը դրսևորվում է **պետական իշխանության գերակայության, նրա միասնության և անկախության մեջ:**

1) Պետական իշխանության **գերակայությունը** նշանակում է.

ա) պետական իշխանությունը **ենթակա չէ որևէ այլ իշխանության**, և պետության տարածքում գտնվող բոլոր քաղաքացիների, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ այդ իշխանությունը բարձրագույն է ու գերագույն.

բ) պետության սահմաններում պետական իշխանությունը չունի **ոչ միայն իրենից բարձր, այլև իրեն հավասար** կանգնած որևէ այլ իշխանություն, ինքն է իշխում բոլոր տեսակի իշխանությունների վրա.

գ) պետական իշխանությունն է **սահմանում** պետության տարածքում գործող իրավակարգը, իրավական հարաբերությունների ողջ համակարգը, պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների իրավունակությունը, իրավունքներն ու պարտականությունները: Այդ գաղափարի ապացույցներն են պետության սահմանադրությունը և պետական իշխանության օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենսդրական ակտերը, որոնք երկրի տարածքում ունեն բարձրագույն իրավաբանական ուժ: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5 հոդվածն ազդարարում է, որ «Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ».

դ) պետական իշխանության գերակայությունը նշանակում է նաև, որ պետության տարածքում այդ իշխանության պատվիրաններն օժտված են **համապարտադիր բնույթով**. դրանք պարտադիր են բոլոր պետական մարմինների, ոչ պետական կազմակերպությունների, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների համար: Դրանց անշեղ իրականացումը նշված սուբյեկտների կողմից ապահովելու համար պետական իշխանությունը օժտված է **հարկադրանք** կիրառելու իրավազորությամբ:

Այսպիսով, **պետական իշխանության գերակայությունը իշխանության այնպիսի վիճակն է, որի դեպքում նրանից վեր չկա և չի կարող լինել որևէ այլ իշխանություն:**

Մակայն պետական իշխանության գերակայությունը չի նշանակում նրա **բացարձակ անսահմանափակ** լինելը, ինչպես երբեմն այն ներկայացվում է իրավաբանական գրականության մեջ: Սահմանադրական կարգ ունեցող պետություններում այն միշտ էլ սահմանափակված է իրավունքով: Ինչպես ամեն մի այլ իշխանություն սահմանադրական պետու-

յունում, ինքնիշխան քաղաքական իշխանությունը հիմնված է իրավունքի վրա և սահմանափակված է իրավունքով: Իրավունքի կարևորագույն խնդիրներից է **զսպել «կապանքներից» ազատվելու ձգտող** պետական իշխանությանը, որի արդյունքում միայն հնարավոր է դառնում հավասարակշռել քաղաքական և քաղաքացիական հասարակությունները, ներդաշնակ դարձնել նրանց միջև գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները:

2) Պետական ինքնիշխանությունն ի հայտ է գալիս նաև նրա (պետական իշխանության) **միասնության** մեջ: Պետական իշխանության միասնությունը դրսևորվում է միասնական մարմնի կամ մարմինների համակարգի առկայության մեջ, որն իր համակցությամբ կազմում է պետական բարձրագույն իշխանությունը: Պետական իշխանության միասնության իրավաբանական արտահայտությունը կայանում է նրանում, որ պետական բարձրագույն իշխանությունը կազմող մարմինների համակարգի իրավասության համակցությունն ընդգրկում է այն բոլոր լիազորությունները, որոնք անհրաժեշտ են պետությանը իրականացնելու իր խնդիրներն ու գործառնությունները: Իսկ այդ համակարգի տարբեր մարմիններ, որոնք գործում են իշխանությունների բաժանման սկզբունքի հիման վրա, չեն կարող իրավունքի միևնույն սուբյեկտին վերագրել վարքագծի իրար հակասող կանոններ: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ «Կառավարության անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում...»: Դա նշանակում է, որ ոչ Ազգային ժողովը, ոչ Հանրապետության Նախագահը, ոչ էլ կառավարությունը իրավասու չեն իրենց կողմից ընդունված ակտերով կառավարության անդամներին վերապահել ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու իրավունք: Այն կարող է կատարվել միայն Սահմանադրության մեջ հանրաքվեի միջոցով փոփոխություն կատարելու ճանապարհով:

3) Պետության ինքնիշխանության կարևոր հատկանիշ է նաև իշխանության **անկախությունը**: Այն արտահայտվում է երկու իմաստով՝ **ներքին և արտաքին**:

Ներքին իմաստով պետական իշխանության անկախությունը դրսևորվում է նրա գերակայության մեջ, այսինքն՝ պետությունը հանրային իշխանության (օրենսդիր, գործադիր և դատական) լիակատար կրողն է, նրա տարածքում **բացառվում է օտարերկրյա իշխանությունը**: Ինչ վերաբերում է պետական իշխանության **արտաքին անկախության իմաս-**

տին, ապա դա այդ իշխանության անկախությունն է միջազգային հարաբերություններում, որը նշանակում է պետական իշխանության չենթարկվելն օտարերկրյա պետությունների իշխանություններին: Պետություններն իրենց փոխադարձ հարաբերություններում պետք է հարգեն միմյանց պատմական և սոցիալ-քաղաքական զարգացման տարբերությունները, դիրքորոշումների և հայացքների զանազանությունը, ներքին օրենքներն ու գործող կանոնները:

Պետության իշխանության անկախությունն արտաքին հարաբերություններում սմենեկին չի նշանակում, թե նա կարող է այլ պետությունների ազատությունն ու անկախությունը ոտնահարող կամայական քաղաքական ակցիաներ իրականացնել: Յուրաքանչյուր պետություն գոյություն ունի ոչ թե մեկուսացած, այլ պետությունների համակարգում, ուրեմն և պարտավոր է հարգել մյուս պետությունների ինքնիշխանությունը: Այդ սկզբունքի հիման վրա է կառուցված Միացյալ ազգերի կազմակերպության ողջ համակարգը: Այդ սկզբունքն իր ամրագրումն է ստացել ՄԱԿ-ի կանոնադրության 2 հոդվածի 1-ին կետում, որ ասված է. «Կազմակերպությունը հիմնված է նրա բոլոր անդամների ինքնիշխանության և իրավահավասարության վրա»: Այդ սկզբունքն ամրագրված է նաև ՄԱԿ-ի համակարգի մեջ մտնող միջազգային կազմակերպությունների, տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների ճնշող մեծամասնության կանոնադրություններում:

Միջազգային հարաբերություններում ինքնիշխան հավասարության սկզբունքի բովանդակությունը՝ բոլոր պետությունների իրավաբանական հավասար մասնակցության ապահովումն է՝ անկախ տնտեսական, սոցիալական, քաղաքական, տարածքի մեծության, բնակչության թվի կամ այլ բնույթի տարբերություններից: Քանի որ պետությունները հանդիսանում են միջազգային հաղորդակցության իրավահավասար մասնակիցներ, նրանք բոլորն էլ սկզբունքորեն օժտված են միատեսակ իրավունքներով և պարտականություններով:

Ժամանակակից աշխարհում գնալով բարդացող հասարակական կյանքը նորանոր խնդիրներ է առաջադրում մարդկությանը, որոնց լուծման համար պահանջվում են պետությունների ջանքերի համախմբում, նրանց ուժերի ու հնարավորությունների ինտեգրացում: Արդյունքում ծնունդ առած միջազգային կազմակերպությունների գործունեությունն ապահովելու համար **պետությունները կամավոր կերպով իրենց իրավասության որոշ մասը փոխանցում են այդ կազմակերպություններին**: Սակայն դա չի նշանակում, որ նրանք սահմանափակում են իրենց ինքնիշխան իրավունքները: Պետություններն այդ իրավունքները փոխանցելիս

ակնկալում են ավելի մեծ շահ, քան կարող էին ստանալ, եթե ինտեգրացման առարկա հանդիսացող խնդիրը իրականացնեին առանձին-առանձին: Բացի դրանից, պետությունները, որպես կանոն, վերահսկողություն են իրականացնում իրենց ստեղծած միջազգային կազմակերպության գործունեության նկատմամբ:

Դրա հետ մեկտեղ, միջազգային հարաբերությունների զարգացման, պետությունների ինտեգրացման և միմյանց հետ փոխադարձ կապվածության աճի հետ մեկտեղ, որոշ իմաստով, փոխվում է նաև պետության **ներքին իրավասության** հասկացությունը: Մասնավորապես, արտաքին հարաբերություններում պետության անկախությունից բխող նրա ներքին գործերին չմիջամտելու հիմնադրույթը չի նշանակում, թե պետությունները կարող են կամայականորեն իրենց ներքին իրավասությանը վերագրել ցանկացած հարց: Նույնիսկ կոնկրետ պետության տարածքի սահմաններում տեղի ունեցող որոշ իրադարձություններ կարող են դիտվել որպես ոչ բացառապես նրա ներքին իրավասությանը վերաբերող խնդիրներ: Օրինակ, եթե ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն արձանագրում է, որ որևէ պետության տարածքում տեղի ունեցող իրադարձությունները սպառնում են միջազգային անվտանգությանն ու խաղաղությանը, ապա այդպիսի իրադարձությունները դադարում են լինել տվյալ պետության ներքին խնդիրը, և ՄԱԿ-ի գործողություններն այդ իրադարձությունների հանդեպ չեն համարվում միջամտություն տվյալ պետության ներքին գործերին: Նման բովանդակություն ունեն, օրինակ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից 1998թ. ընդունված երկու որոշումները, որոնցից մեկը վերաբերում էր Իրաքին, որը գաղտնի կերպով փորձում էր ստեղծել ատոմային զենք, իսկ մյուսը՝ Սերբիային, որի տարածքում կրոնական հողի վրա խախտվում էին մարդու իրավունքները:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բնութագրությունների շարքում առանձնակի կարևորվում է նրա **ժողովրդավարական** լինելը:

§ 2. Ժողովրդավարական պետություն

Ժողովրդավարական է համարվում այն պետությունը, որի կառուցվածքն ու գործունեությունը համապատասխանում են ժողովրդի կամքին, մարդու և քաղաքացու հանրաձայնաչ իրավունքներին ու ազատություններին: Ժողովրդավարական պետությունը հանդիսանում է մարդու՝ երաշխավորված ազատության հիման վրա կառուցված քաղաքացիական հասարակության կարևորագույն տարրը:

Քաղաքացիական հասարակությունը, որպես ինքնակառավարվող մեխանիզմ, իր մեջ ներառում է բարոյական, իրավական, տնտեսական, քաղաքական հարաբերությունների ամբողջությունը, ինչպես նաև սեփականությունը, աշխատանքը, ձեռներեցությունը, հասարակական կազմավորումների գործունեությունը, կրթության, գիտության, մշակույթի, ընտանիքի բնագավառները, զանգվածային լրատվության միջոցները, մայրկանց վարվելակերպի չգրված կանոնների բնագավառները և այլն: Հենց քաղաքացիական հասարակության շրջանակներում է իրականացվում մարդու իրավունքների և ազատությունների մեծ մասը: Ժողովրդավարական պետության խնդիրն է օգնել այդ ինքնակառավարվող համակարգի ներդաշնակ գործունեությանը և հնարավորինս ձեռնպահ մնալ նրա գործունեությանը միջամտելուց: Դրա համար ամեն մի ժողովրդավարական պետության սահմանադրությամբ պետք է որոշվեն հասարակության ինքնակառավարմանը պետական միջամտության օպտիմալ սահմանները, որպեսզի նման միջամտությունը չկարողանա վնաս պատճառել քաղաքացիական հասարակության շրջանակներում գործող ինքնակառավարման ինստիտուտներին ու կառուցակարգերին:

Պետությունը ժողովրդավարական հռչակելը ղեկս քավարար չէ այդպիսի պետություն ունենալու համար: Իրենց ժողովրդավարական են հռչակում նաև ամբողջատիրական (տոտալիտար) ռեժիմի պետությունները: Կարևորը նրա կառուցվածքի և գործունեության ասպեկտներն է համապատասխան իրավական ինստիտուտներով, իրական ժողովրդավարության երաշխիքներով:

1. Պետության ժողովրդավարական բնույթն ամենից առաջ պայմանավորված է կրանով, թե ում է պատկանում պետական իշխանությունը, ով է հանդիսանում այդ իշխանության կրողն ու աղբյուրը և ինչպիսի ձևերով ու եղանակներով է իրականացվում այդ իշխանությունը:

Հայաստանի Հանրապետության Մահմանադրության համաձայն (2 հոդվ.)՝ Հայաստանի Հանրապետությունում **իշխանությունը պատկանում է ժողովրդին**: Դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունը իրեն հռչակում է ժողովրդաիշխանության պետություն կամ, այլ կերպ ասած, ժողովրդավարական պետություն:

«Ժողովրդաիշխանություն» հասկացությունը բաղկացած է «ժողովուրդ» և «իշխանություն» բառերից: Պետականորեն միավորված հասարակության մեջ **ժողովուրդը առավելապես պետության քաղաքացիներն են**, որոնք իրենց ամբողջությամբ կազմում են պետության հիմքը, նրա գոյության պայմանը: Ինչ վերաբերում է **իշխանությանը**, ապա այն իրենից

ներկայացնում է **հնարավորություն կառավարել ինչ-որ մեկին կամ որևէ բան, ենթարկել սեփական կամքին այլոց**:

Իշխանությունը սոցիալական երևույթ է, որը հանդես է եկել մայրկային հասարակության հետ մեկտեղ: Պետության ծագման հետ իշխանությունը ձեռք է բերում **քաղաքական** բնույթ և հանդես է գալիս որպես նրա էական հատկանիշներից մեկը: Պետական իշխանությունը հենվում է ընդհանուր (ժողովրդի) կամքի վրա և հնարավորություն ունի իրեն ենթարկելու հասարակության բոլոր անդամներին: Այդ խնդիրը իրականացվում է հատուկ մարմինների միջոցով, որոնց համակարգը կազմում է պետական ապարատը:

Ժողովրդավարական կամ ժողովրդաիշխանության պետություններում **իշխանության միակ աղբյուրը և կրողը ժողովուրդն է**: Հանդես գալով որպես պետական իշխանության միակ աղբյուրը և կրողը՝ ժողովուրդը դրանով իսկ դրսևորում է իր ինքնիշխանությունը, որը նրան հնարավորություն է տալիս ինքնուրույն կերպով իրականացնելու սահմանադրությամբ իրեն պատկանող իշխանությունը, առանց այն կիսելու որևէ մեկի հետ: Պետական ապարատի կողմից ժողովրդին պատկանող իշխանության իրականացումը համարվում է ժողովրդաիշխանության իրականացման ձևերից մեկը, որը կատարվում է նրա անունից:

Ժողովրդաիշխանության բովանդակությունը մեծ չափով պայմանավորված է նաև նրանով, թե ժողովուրդը **ինչպես, ինչ ձևերով ու եղանակներով է** իրականացնում իր իշխանությունը: Մահմանադրության համաձայն (2 հոդվ.)՝ ժողովուրդն իր իշխանությունը իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձնաց միջոցով:

Նշված սահմանադրական ձևերի շարքում ժողովրդաիշխանության դրսևորման գործում առավել կարևոր է **անմիջական ժողովրդաիշխանությունը**՝ ազատ ընտրությունների և հանրաքվեի միջոցով իշխանության իրականացումը: Ազատ ընտրությունների միջոցով պետական կարևորագույն ինստիտուտների (խորհրդարան, Նախագահ, տեղական ինքնակառավարման մարմիններ) ձևավորումը, որոնց միջոցով **իրականացվում է** ժողովրդին պատկանող իշխանության հիմնական մասը, կազմում է **ժողովրդաիշխանության գլխավոր իմաստը**: Ընտրովի մարմինները համարվում են ժողովրդի լիազոր ներկայացուցիչները, որոնք կոչված են իրենց կողմից ընդունված որոշումներով ժողովրդի մեծամասնության կամքը վերածելու համապարտադիր վարքագծի, պետական կամքի:

Դրա հետ մեկտեղ, ժողովրդավարական պետությունում կարևոր ուղղումներ ընդունելիս պետք է հաշվի առնվի նաև փոքրամասնության

կարծիքը: Համաշխարհային պետաիրավական պրակտիկայում դա նշանակում է, ամենից առաջ, սահմանադրական ընդդիմության առկայություն ղեկավար կուսակցության (խորհրդարանում), գործադիր իշխանության (կառավարությունում), պետության գլխի նկատմամբ: Հետևաբար, **պետությունը ժողովրդավարական կարող է կոչվել միայն այն դեպքում, երբ ապահովում, երաշխավորում է ազատ և արդար ընտրությունների անցկացումը և ընդդիմության առկայությունը հասկապես իշխանության օրենսդիր և գործադիր քննում:**

Այդ խնդիրն իր կոնկրետ լուծումն է ստացել Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքում: Որպես ժողովրդավարական պետություն, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (7 հոդվ.) ճանաչվում է բազմակուսակցությունը: Ազգային ժողովում ընտրությունների արդյունքում համամասնական ընտրակարգով ընտրված կուսակցության կամ ընտրական միավորման նախընտրական ցուցակներում բնդգրկված պատգամավորները կազմում են նույնանուն խմբակցություններ՝ անկախ պատգամավորների թվաքանակից: Ազգային ժողովում փոքրամասնություն կազմող խմբակցությունները մեծամասնություն կազմող կուսակցության (կուսակցության դաշինքի) նկատմամբ հանդես են գալիս որպես ընդդիմություն: Ազգային ժողովի նիստերի դաիլիճում նրանցից յուրաքանչյուրին հատկացվում է առանձին հատված: Նրանք Ազգային ժողովի շենքում ապահովվում են առանձին կահավորված, տեխնիկական և կապի միջոցներով հագեցված աշխատասենյակներով, կապի և ՀՀ պաշտոնական տեղեկագրերով (ԱԺ կանոնակարգի 16 հոդվ.) և այլն:

Սակայն մի բան է ժողովրդաիշխանության կազմակերպման սկզբունքների օրենսդրական ամրագրումը, այլ բան է դրանց կենսագործումը: Մասնավորապես, ազատ և արդար ընտրության իրավունքի սկզբունքների իրականացումը գործնականում առայժմ մնում է որպես բարի ցանկություն, ապագայի երազանք: Քաղաքակիրթ մարդկության համար անհասկանալի են ընտրությունների արդյունքները կեղծելու միջոցով «ժողովրդի ընտրյալը» դառնալու մեր հասարակության առանձին անդամների բուռն ցանկությունները: Մանավանդ երբ դրա իրականացման համար վերջիններս չեն խորշում օգտվել քաղաքացիների սոցիալական անմխիթար վիճակից, որոնք հարկադրված են իրենց ձայնը «վաճառել» մի կտոր հացով: Ամերիկյան ժողովրդական իմաստությունն ավանդում է. «Մոլված մարդուն Աստվածը ներկայանում է հացի տեսքով»:

2. Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովումը հանդիսանում է ժողովրդավարական պետության **հաջորդ**

կարևոր **հատկանիշը**: Ժամանակակից պետությունների ճնշող մեծամասնության սահմանադրություններում արտացոլված են Մարդու իրավունքների հռչակագրի, Մարդու սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավունքների ու ազատությունների մասին միջազգային դաշնագրերի դրույթներն ու նորմերը: Սակայն դա դեռևս բավարար չէ պետության ժողովրդավարական բնութագրության համար: Ոչ մի վերամբարձ նպատակ և ժողովրդավարական թվացող հռչակագիր չեն կարող պետությանը տալ իրական ժողովրդավարական բնույթ: Անհրաժեշտ է, որ **պետությունն իրող ցանկանա և կարողանա գործնականում ապահովել մարդու իրավունքների և ազատությունների իրականացումը**, որը հնարավոր է միայն պետության կողմից սահմանված ժողովրդավարական ռեժիմի պայմաններում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (գլուխ 2), օրինակ, ամրագրել է մարդու՝ միջազգային իրավունքին հայտնի բոլոր իրավունքներն ու ազատությունները: Ավելին, համաձայն Սահմանադրության 3 հոդվածի՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»: Մնում է, որ այդ իրավունքները պետության համապատասխան կառույցների կողմից իրականացվեն:

Դրա հետ մեկտեղ, ժողովրդավարական պետությունը ոչ միայն **չի ժխտում հարկադրանքը, այլ, ընդհակառակը, ենթադրում է դրա կիրառությունը օրենքով սահմանված դեպքերում**: Մասնավորապես, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ամեն տեսակի ոտնձգություններից, հանցավորության և այլ իրավախախտումների նախազգուշացումն ու վերացումը հանդիսանում է ամեն մի պետության առաջնահերթ պարտականությունը: **Ուստի ժողովրդավարությունը չպետք է նույնացնել ամբոխավարության, ամբոխաիշխանության հետ, որը հաճախ կարող է տարվել ամենազորության և անպատժելիության կեղծ զգացումներով**:

Սակայն հարկադրանքը պետք է ունենա հստակ սահմաններ և իրականացվի միայն օրենքին համապատասխան: Կիրառվող պատասխանատվության միջոցները պետք է համարժեք լինեն կատարված մեղքին ու բխեն օրենքից: Ժողովրդի ոչ մի հատված կամ մաս, կազմակերպություն կամ անհատ իրավունք չունի իշխանությունը յուրացնել: Հայաստանի

Հանրապետության Սահմանադրությունը հռչակում է, որ «Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է» (2 հոդվ.):

3. Ժողովրդավարական հիմունքներով պետության կազմակերպման կարևորագույն սկզբունքներից է **իշխանությունների բաժանման սկզբունքը**: Այն իր ամրագրումն է ստացել ժողովրդավարական կարգ ունեցող շատ երկրների հիմնական օրենքներում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5 հոդվածը ազդարարում է, որ «Պետական իշխանությունը իրականացվում է Սահմանադրությամբ և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա»: Այդ սկզբունքի իմաստը կայանում է նրանում, որ քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման համար պետական իշխանության առանձին գործառույթներ՝ օրենսդիր, գործադիր և դատական, իրականացվում են պետության տարբեր մարմինների կողմից, որոնք իրարից անկախ են և փոխադարձաբար զսպում են միմյանց: Բացի դրանից, անիրաժեշտ է նաև որպեսզի այդ մարմինները իրենց իրավական վիճակով լինեն հավասարակշռված, մեկը մյուսի նկատմամբ չունենան գերակշռություն, յուրաքանչյուրի անկախությունը ապահովագրված լինի մյուսի ուսման գործունեության: Նման պահանջը ոչ միայն չի բացառում, այլ ընդհակառակը՝ պայմանավորում է այդ մարմինների փոխգործունեությունը միմյանց հետ, փոխհամաձայնեցված գործունեությունը, որի միջոցով ապահովվում են պետական իշխանության միասնությունն ու նրա տարբեր թևերի ներդաշնակ աշխատանքը:

Իշխանությունների տարանջատման սկզբունքի հռչակումը դեռևս պետությանը չի հաղորդում ժողովրդավարական բովանդակություն: Խնդիրը գործնականում այդ սկզբունքի պահանջների անշեղ իրականացման մեջ է: Իսկ այդ պահանջները, ինչպես արդեն ասվեց, վերաբերում են իշխանության տարբեր թևերի անկախության ու հավասարակշռության, նրանց միջև փոխադարձ զսպման և հակակշիռների կառուցակարգերի ապահովմանը, որը նույնպես համարվում է Հայոց պետականության կայացման ապագա նպատակներից մեկը:

Ժողովրդավարությունը պետության կազմակերպման լավագույն ձևը չէ, սակայն ավելի լավը, ցավոք, դեռևս չի հայտնագործել մարդկությունը, ասել է մի առիթով Ուինստոն Չերչիլը:

§ 3. Սոցիալական պետություն

Պետության սոցիալական բնութագրությունն առաջին անգամ իր արտահայտությունն է գտել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդունված Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների (Իտալիա, ԳՖՀ, Ֆրանսիա և ուրիշներ) սահմանադրություններում: Այնուհետև այն իր ամրագրումը ստացավ ներկա ԱՊՀ շատ երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ:

Սոցիալական է համարվում այն պետությունը, որն իր առջև խնդիր է դնում հոգ տանել սոցիալական արդարության, իր քաղաքացիների բարեկեցության և սոցիալական պաշտպանվածության մասին: Նա կոչված է երկրում ստեղծելու այնպիսի պայմաններ, որոնք կարող են ապահովել յուրաքանչյուր մարդու համար **արժանավայել** կյանք:

Սոցիալական պետության խնդիրը չէ պետության միջոցների հաշվին կերակրել հասարակության բոլոր անդամներին կամ հետևել, որպեսզի վերջիններս գտնվեն հավասար վիճակում, ինչպես որ սոցիալիստական կարգերի օրոքը: Նման մոտեցումը հակասում է ձեռներեցության, տնտեսական գործունեության ազատության և շուկայական հարաբերությունների բուն գաղափարին: **Սոցիալական պետության խնդիրն է, ամենից առաջ, յուրաքանչյուր քաղաքացու համար ապահովել մարդու արժանավայել նվազագույն կենսապայմաններ**: Ընդ որում, այդ խնդրի կենսագործման համար յուրաքանչյուր չափահաս անձ պետք է ունենա հնարավորություն վաստակելու իր և իր ընտանիքի կենսաապահովման համար անհրաժեշտ միջոցներ: Պետության միջամտությունն այդ գործին կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե անձը համապատասխան օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով **չկարողանա օգտվել ընձեռված հնարավորություններից**, և եթե նրա պահանջմունքները հավոր պատշաճի չեն բավարարվում:

Սեփական ուժերով վաստակելու և իր ընտանիքին ապահովելու հնարավորությունը, բնականաբար, ենթադրում է, ամենից առաջ, **աշխատանքի առկայությունը**: Սոցիալական պետությունը, որպես կանոն, նախատեսում է այդ կապակցությամբ **աշխատանքի իրավունք**: Այսպես, Իտալիայի Սահմանադրության թիվ 1 հոդվածում գրված է. «Իտալիան աշխատանքի վրա հիմնված ժողովրդավարական պետություն է», իսկ դրա 4 հոդվածի համաձայն՝ «Հանրապետությունը ճանաչում է բոլոր քաղաքացիների համար աշխատանքի իրավունքը և ստեղծում է պայմաններ, որպիսիք այդ իրավունքը դարձնում են իրական»:

Սահմանադրական այդ նորմերում չկան նշումներ, որ Իտալիան սոցիալական պետություն է: Սակայն պետության կողմից իր քաղաքացիներ-

քի համար աշխատանքի իրավունքի իրական ապահովումը Իտալիան դարձնում է սոցիալական պետություն:

Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրությամբ (1 հոդվ.) հռչակվում է սոցիալական պետություն: Հանրապետության Հիմնական օրենքում նախատեսված է միայն, որ **«Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն»** (հոդվ. 32): Նման վիճակը, անկասկած, հարցականի տակ է դնում սոցիալական պետության կարևորագույն պայմաններից մեկը, համաձայն որի՝ յուրաքանչյուր անձ ինքը պետք է սեփական աշխատանքով վաստակի նյութական միջոցներ՝ իր և իր ընտանիքի կարիքները հոգալու համար:

Թերևս կարելի էր հասկանալ սոցիալական քաղաքականության բնագավառում Հայաստանի Հանրապետության դրսևորած նման վարքագիծը: Մեծաքանակ աշխատատեղեր ունեցող ձեռնարկությունները սեփականաշնորհվել են, գտնվում են մասնավոր անձանց ձեռքում, այդ պատճառով էլ պետությունը օբյեկտիվորեն ի վիճակի չէ ստանձնել քաղաքացիներին աշխատանքով ապահովելու պարտականությունը: Մակայն այդ բացը պետությունը կարող էր լրացնել **ճիշտ տնտեսական քաղաքականության շնորհիվ**: Այսպես.

Ա) իրեն սոցիալական հռչակած պետության էկոնոմիկան, անկասկած, պետք է **ունենա սոցիալական ուղղվածություն**: Դա նշանակում է, որ արտադրությունը և սպասարկման ոլորտը պետք է ուղղված լինեն, առաջին հերթին, մարդկանց նյութական և հոգևոր պահանջումներին բավարարմանը: Առանց այդ խնդրի լուծման, հանրապետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականությունը հազիվ թե կարողանա հասնել շուշափելի արդյունքի:

Բ) Երկրի տնտեսությանը սոցիալական ուղղվածություն տալու համար անհրաժեշտ է, որպեսզի **այդ տնտեսությունը նախ և առաջ աշխատի**: Մինչդեռ ինչպես սեփականաշնորհված, այնպես էլ դեռևս պետության ձեռքում գտնվող ձեռնարկությունների զգալի մասը աշխատում է ոչ լրիվ հզորությամբ:

Դրա հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ հուսալի կերպով պաշտպանված են սեփականատիրոջ իրավունքները. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգուտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը» (հոդվ. 31): Դա նշանակում է, որ պետությունը, պետական մարմինները **իրավասու չեն միջամտելու քաղաքացու սեփականատիրական իրավունքների իրականացմանը**:

Սակայն հարկ է նշել, որ տնտեսական կազմակերպություններն այդ առումով ունեն լուրջ առանձնահատկություններ: Հանդիսանալով առան-

ձին անձանց կամ խմբի սեփականությունը, ձեռնարկությունները միաժամանակ հանդիսանում են նաև պետության և հասարակության նյութական բազան: Դրանց արտադրական գործունեությունից է գոյանում պետական բյուջեի հիմնական մասը: Բացի դրանից, անտեսական կազմակերպությունները հանդիսանում են նաև տվյալ պետության տարածքում ապրող **քաղաքացիների հիմնական նյութական բազան**, որտեղ նրանք պետք է աշխատեն և ապրուստի միջոցներ վաստակեն իրենց ընտանիքի գոյությունն ապահովելու համար: Ուստի սոցիալական պետությունը պարտավոր է ոչ միայն միջոցներ ձեռնարկել, որպեսզի մասնավոր սեփականության ձեռնարկություններն աշխատեն, այլև պահանջել, որպեսզի աշխատանքները կազմակերպվեն պատշաճ մակարդակով և բնակչության համար արտադրվեն միայն բարձրորակ ապրանքներ:

Այդ կապակցությամբ օգտակար կլինի իմանալ Իտալիայի փորձը: Երկրի Հիմնական օրենքի 43 հոդվածի համաձայն պետությունը իրավասու է ցանկացած ժամանակ ոչ պետական սեկտորին պատկանող ձեռնարկությունները, որոնք հասարակության համար առավել կարևորություն են ներկայացնում, պետականացնել և պետականորեն կազմակերպել դրանց տնտեսական գործունեությունը:

Գ) Եթե հանրապետությունում անհրաժեշտ հզորությամբ չեն աշխատում պետական և մասնավոր ձեռնարկությունները, ապա **անհրաժեշտ է դառնում նաև Սահմանադրությամբ նախատեսված «աշխատանքի ընտրության ազատության իրավունքը»**: Դա արտահայտվում է նրանում, որ չկարողանալով գտնել իրենց մասնագիտական որակին համապատասխանող աշխատանք, շատ բարձրորակ մասնագետներ՝ ինժեներներ, բժիշկներ, արվեստագետներ, գրողներ, մանկավարժներ, գիտնականներ (այդ թվում նաև գիտության դոկտորներ, պրոֆեսորներ) ստիպված աշխատանքներ են կատարում շուկաներում, առևտրական կետերում, շինարարական հրապարակներում, սպասարկման ծառայություններում և այլուր, իսկ նրանց որոշ մասն էլ ուղղակի հեռանում է երկրից:

Սոցիալական պետության գոյության համար կարևոր չափանիշ է նաև **բնակչությանը նվազագույն կենսամիջոցներով ապահովելը**:

Հայաստանի Հանրապետությունում ներկա դրությամբ ոչ օրենսդիր և ոչ էլ գործադիր մարմինների կողմից չի ընդունվել բնակչության նվազագույն կենսամիջոցները սահմանող որևէ իրավական ակտ: Այդ ուղղությամբ չեն իրականացվում պետության կողմից նաև գործնական միջոցառումներ: Դրա փոխարեն 2007թ նոյեմբերի 5-ին ընդունվեց օրենք, որով 2008 թ. հունվարի 1-ից սահմանվում է նվազագույն աշխատավարձի չափը՝ 32.5 հազ. դրամ: Սակայն հազիվ թե անհրաժեշտություն կա հիմնա-

վորելու, որ Հանրապետությունում ատկա զնային քաղաքականության պայմաններում այդ թիվը չի կարող արտահայտել բնակչության նվազագույն կենսամիջոցները:

Ամեն մի հասարակության բարոյական պարտքն է առանձնացնելու որոշակի նյութական միջոցներ՝ օգնություն ցույց տալու այն անձանց, որոնք իրենց ֆիզիկական և մտավոր կարողությունների պակասի և այլ պատճառներով անկարող են սեփական ուժերով հոգալ իրենց կարիքները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37 հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդանության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»: Սահմանադրական այդ նորմի հիման վրա Հանրապետությունում ընդունվել են մի շարք օրենքներ (այդ թվում՝ «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Երկարատև ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու պայմանների մասին» և այլն), որ սահմանվում են նշված կատեգորիայի անձանց կենսաթոշակների չափն ու նշանակման պայմանները:

Բացի դրանից, Հանրապետությունում կիրառվում է սոցիալական օգնության մի նոր տեսակ, որը կոչվում է ընտանեկան նպաստ: Դրա իմաստն այն է, որ համայնքներում հաշվառվում են առավել կարիքավոր ընտանիքները և նրանց ցույց է տրվում նյութական օգնություն:

Սակայն սոցիալական այս կարևոր խնդիրների լուծումը ոչ միշտ է տալիս ցանկալի արդյունք: Պատճառը պետության կողմից իրականացվող ոչ արդարացի հարկային քաղաքականությունն է: Գաղտնիք չէ, որ ունեզուրկ բնակչությունից զանձվող հարկերն ու տուրքերը հաճախ գերազանցում են նրանց ստացած կենսաթոշակների, նպաստների, եկամուտների, իսկ երբեմն էլ՝ աշխատավարձի գումարը: Մինչդեռ սոցիալական պետության կարևորագույն չափանիշներից մեկը հենց խելամիտ, ճիշտ *հարկային* քաղաքականությունն է:

Իր առջև նպատակ դնելով կառուցելու սոցիալական պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը ներկա շրջանում գտնվում է դեռևս այդ նպատակին հասնելու ճանապարհի սկզբին: Նորանկախ պետականության առաջին տարիներին ձեռնարկված տնտեսական բարեփոխումների, շուկայական հարաբերությունների ձևավորման անհաջող փորձերի արդյունքում գնալով ավելի խորացան և սպառնալից ծավալներ ընդունեցին աղքատությունն ու բնակչության անպաշտպանվածությունը: Հանրապետությունում նկատվում է բնակչության շերտավորման ուժեղացում՝ ըստ

եկամուտների և նյութական ապահովվածության: Այն կրում է տարերային բնույթ, քանզի այդ գործընթացների վրա պետության կողմից գործնականում շոշափելի ազդեցություն չի նկատվում: Տնտեսական բարեփոխումների սոցիալական ուղղվածության գրեթե բացակայության պատճառով ստեղծվել է այնպիսի մի իրավիճակ, երբ ապրանքների գները մոտ են համաշխարհայինին, իսկ երբեմն էլ գերազանցում են այն, իսկ աշխատանքի գինը, աշխատավարձը անհամեմատ ցածր է համաշխարհային մակարդակից: Ահա թե ինչպիսի ոչ մարդասիրական ձևերով ու մեթոդներով են ոտնահարվում մարդու արժանապատվությունը, նրա ապրելու, գոյատևելու իրավունքը: Արդյունքում, չգտնելով փիճակից դուրս գալու ելք, հուսալքված մարդիկ ստիպված հեռանում են հանրապետությունից՝ մի մասն ընդմիջա, մի մասն էլ օտար երկրներում վաստակ փնտրելու հույսով: Հետևանքը լինում է այն, որ քայքայվում են բազմաթիվ ընտանիքներ, որբանում, ապրուստի միջոցներից զրկվում են անմեղ երեխաներ, որոնց պաշտպանությունը սոցիալական պետության առաջնահերթ խնդիրներից է:

Մինչդեռ Հայաստանի Հանրապետության 2005թ. նոյեմբերի 27-ի խմբագրությամբ Սահմանադրության (հոդվ. 35) համաձայն՝ «Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է», որի պահպանման և ամրապնդման համար սակայն պետությունը որևէ ուղղակի պարտականություն չի կրում, ինչը նախատեսված էր Հանրապետության 1995թ. խմբագրմամբ Սահմանադրության 32 հոդվածում:

Նման պայմաններում իրական սոցիալական պետության մասին հնարավոր կլինի ինչ-որ չափով խոսել միայն այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը գտնե շոշափելի չափով առաջընթաց կունենա սոցիալական պետությունը բնութագրող նշված բոլոր ուղղություններով, երբ գործնականում կիրացվեն Հայաստանում մարդու սոցիալ-տնտեսական իրավունքները որոշող սահմանադրական նորմերը:

§ 4. Իրավական պետություն

Ի թիվս բերված սահմանադրական բնութագրությունների, Հայաստանի Հանրապետությունը իրեն համարում է նաև իրավական պետություն:

Ամենաընդհանուր ձևով *իրավական պետությունը կարելի է սահմանել որպես մի պետություն, որտեղ իշխում է իրավունքը, որտեղ հանրային-քաղաքական իշխանությունը կազմակերպվում է միայն իրավական հիմքի վրա և երաշխավորվում է մարդու իրավունքներն ու ազատություն-*

ները, պետության ու քաղաքացիների, որպես իրավունքի սուբյեկտների, փոխադարձ պատասխանատվությունը:

ա) Իրավունքի գերակայությունը. նրա տիրապետությունը հասարակության կյանքի բոլոր կողմերի վրա, անկասկած, իրավական պետության գոյության կարևորագույն պայմաններից է: Դա նշանակում է, որ բոլոր պետական մարմինները, հիմնարկ-ձեռնարկություններն ու կազմակերպությունները, բոլոր պաշտոնատար անձինք ու քաղաքացիները (պալատներից մինչև խրճիթներ) ոչ միայն պետք է անշեղորեն կատարեն Հանրապետության Սահմանադրությունն ու մյուս իրավական ակտերը, այլև հավասար պատասխանատվություն կրեն օրենքի առաջ: Այդ մասին է վկայում Հանրապետության Հիմնական օրենքի 5 հոդվածի շարադրանքը, որի համաձայն՝ «Պետական իշխանությունը իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան...»

Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ:

Դրա համար անհրաժեշտ է, ամենից առաջ, կարևոր հասարակական հարաբերությունների կարգավորման համար ընդունել կատարյալ, սոցիալական արդարության պահանջներին համապատասխան օրենքներ: Այդ օրենքները պետք է այնքան մանրամասն ու համակողմանի լինեն, որ իսպառ բացառեն (կամ գոնե նվազագույնի հասցնեն) գերատեսչական ակտերի ընդունումը, որոնք հաճախ ոչ միայն աղավաղում են օրենքով կարգավորվող հասարակական հարաբերության բովանդակությունը, այլև հաճախ հակադրվում են այդ օրենքին:

Սոցիալական արդարության պահանջներին համապատասխան օրենքներ ունենալու համար լուրջ անելիքներ ունեն օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտները՝ Ազգային ժողովի պատգամավորներն ու ՀՀ կառավարությունը: Նրանք պարտավոր են պարբերաբար ուսումնասիրել հասարակության կյանքի տարբեր բնագավառներում ազգաբնակչության հոգսերը, կարիքներն ու պահանջմունքները: Եվ երբ որևէ բնագավառում այդ հոգսերն ու կարիքները արդեն ներթափանցում են բնակչության զգալի զանգվածների կենցաղը, ապա օրենսդրական նախաձեռնության սուբյեկտները պարտավոր են այդ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ մշակել օրենսդրական ակտի նախագիծ և ներկայացնել Ազգային ժողով: Այդպիսին է օրինաստեղծ գործունեության օբյեկտիվ ընթացքը բոլոր քաղաքակիրթ երկրներում:

Մինչդեռ հայտնի է, որ մեր օրերում, զգալիորեն խախտվել է հանրապետությունում օրենքների մշակման և ընդունման օրինաչափ կարգը, ո-

րի պատճառով լուրջ խզում է առաջացել օրենքների և իրավունքի միջև: Խնդիրն այն է, որ խորհրդարան ներկայացված օրենքների նախագծերի ոչ քիչ մասը առավելապես ընդօրինակվում է արտասահմանյան երկրներից, և փորձ է արվում դրանք տեղայնացնել, հարմարեցնել Հայաստանի Հանրապետության պայմաններին: Սակայն ուրիշ ժողովուրդների օրենքները մեր պայմաններին հարմարեցնելը ունի լուրջ դժվարություններ: Ամենից առաջ, օրենքը պետք է հաշվի առնի տվյալ ժողովրդի պատմական, տնտեսական, մշակութային, հոգեբանական, սովորութային, անգամ տաճարների աշխարհագրական և բնակլիմայական առանձնահատկությունները: Իսկ նման որակավորում ունեցող մասնագետ պատգամավորներ, որոնք կարողանան հաշվի առնել այդ ամենը, հանրապետության Ազգային ժողովում այնքան էլ շատ չեն: Բերենք մի հասարակ օրինակ: ՀՀ Ազգային ժողովն ընդունեց ՀՀ ընտրական օրենսգրքը (1999թ.), որը հիմնականում ընդօրինակվել էր Ֆրանսիայի ընտրական օրենսդրությունից: Մակայն այդ օրենսդրության հայկականացման ջանքերը (անգամ դրանում տարբեր տարիների կատարված բազում փոփոխությունների) ապարդյուն անցան. ՀՀ ընտրական օրենսգրքի հիման վրա առայսօր անցկացված բոլոր ընտրությունները ընթացել են աղաղակող թերություններով:¹² Այդ է պատճառը, որ Ազգային ժողովում օրենքների նախագծերի քննարկումը շատ դեպքերում ընթանում է կարծիքների սուր բախման, անպտուղ խոսակցությունների ու բանավեճերի պայմաններում: Արդյունքում ծնվում են օրենքներ, որոնք, ըստ էության, չեն համարվում համաժողովրդական կամքի արտահայտություն:

Նման վիճակը ինչ-որ չափով, թվում է, հնարավոր է մեղմել Հայաստանի Հանրապետության Նախագահի *վետոյի իրավունքի* արդյունավետ իրականացման միջոցով:

Վետոյի իրավունքի իմաստն այն է, որ Ազգային ժողովի ընդունած օրենքները ուժի մեջ են մտնում Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց հետո: Նախագահը, Սահմանադրության 55 հոդվածի (2-րդ կետ) համաձայն, օրենքն Ազգային ժողովից ստանալուց հետո, եթե գտնում է, որ դրանում տեղ են գտել թերություններ ու անճշտություններ, ապա քսանմեկօրյա ժամկետում կարող է այն առարկություններով ու առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Սակայն Նախագահն իրեն առընթեր չունի համապատասխան բարձրորակ մասնագետներից կազմված փորձագետների հանձնա-

¹² Արդյունքում ՀՀ Ազգային ժողովը 2011թ. մայիսի 26-ին ընդունեց նոր ընտրական օրենսգրքը:

խումբ (ինչպես բնորոշված է արտասահմանյան շատ երկրներում), որը կարողանար նրան ցույց տալ անհրաժեշտ օգնություն:

Եզրակացությունն այն է, որ նման թերություններով ընդունված օրենքների **գերակայության ապահովումը** մեզ ոչնչով չի մտնեցնի իրավական պետության ստեղծմանը: Միաժամանակ, նման օրենքները, ըստ էության, իրավունք չեն դառնում: Ընչու է, իրավունքը օրենքների, իրավանորմների համակցություն է, սակայն ոչ բոլոր օրենքներն ու իրավանորմներն են, որ կարող են իրավունք դառնալ, այլ դրանք, որոնք հենվում են սոցիալական արդարության, առաջադիմության վրա, բացառում են սուբյեկտիվիզմն ու կամայականությունը, հրապարակային-քաղաքական իշխանության ի շարս գործադրումը:

Նման օրենքներ ստեղծելու համար հարկ է, որ հասարակության կյանքի կարևորագույն բնագավառներին վերաբերող իրավական ակտերի նախագծերը մշակվեն չեզոք, բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից՝ հասարակական կարծիքի բազմակողմանի հաշվառմամբ (ինչպես ամեն մի քաղաքակիրթ երկրում): Մեր Հանրապետությունում, անհասկանալի պատճառներով, անկախացումից հետո, իշխանությունները հրաժարվել են օրենքների նախագծերը համաժողովրդական քննարկման ներկայացնելու ինստիտուտից: Մինչդեռ դա, ինչպես և համաժողովրդական քվեարկությունը (հանրաքվեն) հասարակական կարծիքի որակորման արդյունավետ միջոցներ են, որոնց արդյունքները Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կողմից ամփոփվելուց հետո կարող են լայնորեն օգտագործվել օրենսդրական գործընթացում:

Այսպիսով, իրավական պետության մեջ օրենքը պետք է համապատասխանի իրավունքին: Մարդկային միտքը բոլոր դարերի ընթացքում՝ Սոկրատեսից ու Պլատոնից մինչև մեր օրերը, ձգտել է լուծել այդ խնդիրը՝ որպես հասարակության կառավարման կարևորագույն խնդիրներից մեկը: Այն ազգերն ու ժողովուրդները, որոնք հասել են այդ խնդրի լուծմանը կամ ընդհուպ մոտեցել դրան, համարվում են քաղաքակիրթ և ապրում են բարեկեցիկ կյանքով:

բ) Իրավունքի գերակայության հետ մեկտեղ (և դրան սերտորեն առնչված), իրավական պետությանը հատուկ է մեկ պարտադիր պայման-սկզբունք եւ՝ **«Թույլատրելի է այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով»:**

Տասնամյակներ շարունակ գրեթե օրինականացվել է այն, որ առանձին անձանց կարելի է ամեն ինչ (թեկուզ օրենքով արգելված), իսկ մյուսներին՝ ոչինչ (թեկուզ օրենքով թույլատրված): Վերջիվերջո, այն դարձավ հասարակական հոգեբանություն:

Պետության խնդիրն է, ամենից առաջ, քաղաքակիրթ վարքագծով համոզել, որ օրենքի առջև բոլոր քաղաքացիները (անկախ զբաղեցրած պաշտոնից, պետական ապարատի հետ ունեցած կապերից) հավասար են, դրանով իսկ նպաստելով հասարակության գիտակցությունից ստրկամտության վերացմանը, քանզի **առանց ազատ մարդկանց, քաղաքացիների անհնար կլինի ազատ հասարակարգի ստեղծումը:**

«Թույլատրելի է այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով» սկզբունքը վերաբերում է, անշուշտ, միայն քաղաքացիներին, քանի որ քաղաքացիների պարտականությունները պետության հանդեպ հանգամանորեն սահմանված են ինչպես Մահմանադրությամբ, այնպես էլ օրենքներով: Իսկ ինչ մնում է պետական մարմիններին, ապա վերջիններս, անկախ իրենց իրավունքների և պարտականությունների չափից ու բովանդակությունից, պարտավոր են գործել բացառապես օրենքի շրջանակներում: Դրա համար անհրաժեշտ է, որ պետական մարմինների իրավունքներն ու պարտականությունները օրենսդրությամբ ամրագրվեն հնարավորության սահմաններում սպառիչ:

Դրա հետ մեկտեղ, սահմանված ամեն մի նորմի խախտման համար պետական ապարատի նկատմամբ, որպես սկզբունք, անհրաժեշտ է նախատեսել խստագույն պատասխանատվության միջոցներ, հաշվի չառնելով խախտողի զբաղեցրած տեղը պետական ապարատի աստիճանասանդղակում: Այդ է պահանջում պետության և քաղաքացիների **փոխադարձ պատասխանատվության սկզբունքը**, որը իրավական պետության կարևոր հատկանիշներից է: Դրանով ինչ-որ չափով կմոտենան այն անդունդի կզրերը, որոնցով բաժանված են պետական պաշտոնատար անձինք ժողովուրդից:

Մյուս կողմից, այս չափազանց կարևոր սկզբունքի կիրառությունը անառարկելիորեն պահանջում է, որ **քաղաքացիներն իմանան, թե օրենսդրությամբ հատկապես ինչն է արգելված և ինչու:** Ժողովրդական բանահյուսության վկայությամբ հողագնդի առաջին մարդիկ իրենց գործողություններում եղել են լիովին ազատ և նյութապես ապահով: Ըստ Աստվածաշնչի արգելվում էր միայն մի բան՝ **ձեռք տալ խնձորին:** Եվ քանի որ մարդուն հասկանալի չէր, թե ինչու՞ չպետք է ձեռք տալ խնձորին, ուստի նա խախտեց այդ պայմանը և այդտեղից էլ սկսվեց այն խառնաշփոթը, ինչը այսօր տեղի ունի մարդկային հասարակության մեջ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության իշխանությունները ջանում են օրենսդրական ակտերում հնարավորինս հասկանալի շարադրել այն ամենը, ինչը արգելվում է: Սակայն խնդրի լուծման արդյունավետությունը մեծ չափով կախված է ընդունված **օրենքների որակից** և

դրանք ժողովրդական լայն զանգվածներին **հասցնելու մակարդակից**: Կյանքը ցույց է տալիս, որ պատշաճ իրավական քարտզության բացակայության պատճառով զգալի քանակ են կազմում այն իրավախախտումները, որոնք կատարվում են օրենքի չիմացության պատճառով: Մինչդեռ օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից: Այդ կապակցությամբ ոչնչով արդարացված չէ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների հրապարակման արգելումը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, որը մեծ չափով խոչընդոտում է բնակչության օրենքներին հաղորդակից լինելու խնդրի լուծմանը:

գ) Իրավական պետությունը և իրավական օրենքները չեն կարող գոյություն ունենալ առանց **իշխանությունների բաժանման**: Այդ սկզբունքի իմաստն այն է, որ պետության ներսում պետք է գործեն միմյանցից անկախ երեք իշխանություններ՝ օրենսդրական (իրավաստեղծ), կատարողական (գործադիր), դատական (իրավապահական): Ընդ որում, ցանկացած համակցության կենտրոնացումը մեկ անձի կամ մեկ պետական մարմնի ձեռքում անխուսափելիորեն կհանգեցնի իշխանության չարաչափման, ընդհանուրի շահերի ոտնահարման:

Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունը Հանրապետության Նախագահին օժտել է բավական լայն լիազորություններով: Դրա հետ մեկտեղ, Մահմանադրությունը հստակ չի սահմանազատում Հանրապետության իշխանության օրենսդիր և գործադիր թևերի լիազորությունները, նրանց միջև գործող զսպումների և հակակշիռների համակարգը, դրանով իսկ խախտելով իշխանության երեք թևերի միջև հավասարակշռությունը: Այդ հանգամանքը, ըստ էության, հարցակազմի տակ է դրել իշխանության մարմինների անկախությունը և իրավական պետությունում իշխանությունների բաժանման սկզբունքի բովանդակության կարևորագույն մասը կազմող՝ փոխադարձ զսպումների և հակակշիռների ինստիտուտի արդյունավետությունը:

Խնդիրն այն է, որ եթե Մահմանադրությամբ բավարար չափով ներկայացված են Ազգային ժողովի լիազորությունները, իսկ Կանոնակարգ օրենքում՝ դրանց իրականացման եղանակներն ու ձևերը, ապա այդ չի կարելի ասել ՀՀ կառավարության մասին: ՀՀ Մահմանադրության 89 հոդվածում գրված է, որ կառավարությունը իրականացնում է պետական քաղաքականությունը՝ իննսուստոնտեսական, հարկային, վարկային, տարածքային գարգացման, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության, բնապահպանության, ազգային անվտանգության, օրինականության և հասարակական կարգի պահպանության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների

ապահովման ուղղությամբ և այլ ոլորտներում (3-8-րդ կետեր): Մակայն որևէ իրավական ակտում համալիր կերպով չի ամրագրված, թե նշված ոլորտներում երկրի գործադիր իշխանության բարձրագույն մարմինը կոնկրետ ինչ լիազորություններ է իրականացնում:

Նույն կարգով, հստակ իրավական կարգավորման ենթարկված չէ նաև նախարարությունների և գործադիր գործունեություն իրականացնող բազմաթիվ գերատեսչությունների իրավական վիճակը:

Նման պայմաններում, հարկավ, լուրջ դժվարություններ են առաջանում մարդու իրավունքների պաշտպանության, քաղաքացու հանդեպ պետության պատասխանատվության և մի շարք այլ խնդիրների լուծման գործում, առանց որոնց անհնար է դառնում իրավական պետության գոյությունը:

Հարցի լուծմանը մեծ չափով կնպաստի Հայաստանի Հանրապետության կառավարության և գործադիր գործունեություն իրականացնող մյուս մարմինների վերաբերյալ ՀՀ օրենքի ընդունումը, որտեղ հանգամանալից կարելի է սահմանել նրանցից յուրաքանչյուրի լիազորությունները հասարակության կյանքի տարբեր ոլորտներում և այդ լիազորությունների իրականացման կառուցակարգերը:

Եթե քննարկելու լինենք իրավական պետության գաղափարը նրան վերագրվող բոլոր հատկանիշների ու սկզբունքների ամբողջության մեջ, ապա հայտնի կդառնա, որ ժամանակակից և ոչ մի պետություն (այդ թվում և զարգացած երկրները) չի բավարարում առաջադրված պահանջներին: Ուրեմն, եթե պետությունները սահմանադրություններում իրենց բնութագրում են որպես իրավական, դա ամենևին չի նշանակում, որ նրանք արդեն այդպիսին են: **Իրավական պետությունը նպատակ է, որի իրականացմանը պետք է ձգտեն բոլոր ժողովուրդները:**

§ 5. Աշխարհիկ պետություն

Պետության աշխարհիկ բնույթը նշանակում է, ամենից առաջ, պետության անջատումը եկեղեցուց, նրանց գործունեության ոլորտների սահմանազատում: Այդպիսի պետության մեջ գոյություն չունի պաշտոնական, պետական կրոն, և նրանում գործող կրոնական միավորումները, եկեղեցական կանոնները և նորմերը չեն կարող ազդել պետական կարգի, պետական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց գործունեության, պետական կրթական համակարգի և պետության գործունեության այլ ոլորտների վրա:

Երկրների մեծ մասը (ԱՄՆ, Ֆրանսիա, Լեհաստան և ուրիշներ) հատուկ կերպով չեն ամրագրում այդ սկզբունքը, որովհետև նրանց մոտ առանձնակի չեն կարևորվում այդ երկու հասարակական կատույցների միջև առկա հիմնախնդիրները: Հաճախ պետության աշխարհիկ բնույթը ընդգծվում է այն երկրների սահմանադրություններում, որտեղ եկեղեցին ինչ-որ պատմական ժամանակահատվածում ժողովրդի կյանքում ունեցել է քախտորոշ նշանակություն: Այսպես, Իտալիայի Սահմանադրության 7 հոդվածում ամրագրված է, որ «Պետությունը և կաթոլիկ եկեղեցին անկախ են և ինքնիշխան նրանցից յուրաքանչյուրին վերաբերող ոլորտներում»: Հայտնի է, որ Հռոմը համարվում է քրիստոնեության կաթոլիկական հավատքի կենտրոնը: Ավելին, Հռոմի մի մասը գրադեցնում է Վատիկանի պետությունը:

Ի հակակշիռ աշխարհիկ պետության, ժամանակակից աշխարհում կան պետություններ, որոնցում առանձին կոնկրետ կրոն պաշտոնապես հայտարարվում է պետական: Օրինակ, Անգլիայում այդպիսի կրոն է համարվում անգլիականը, Իսրայելում՝ հուդայականը, Սկանդինավյան երկրներում՝ լութերական եկեղեցին և այլն:

Կախված եկեղեցուն պետության գործերին ներգրավելու աստիճանից, տարբերվում են նաև **կղերական բնույթի պետություններ և աստվածապետություններ**: Եթե **աստվածապետությունում**, ինչպես, օրինակ, Վատիկանը և Սաուդյան Արաբիան, պետական իշխանությունը ամբողջովին պատկանում է եկեղեցական հիերարխիային, ապա **կղերական բնույթի պետությունը** (ինչպես օրինակ, Իրանի իսլամական հանրապետությունը) չի ձուլվել եկեղեցու հետ, նրա գործունեությունը համեմատաբար ավելի քիչ է ենթարկվում եկեղեցակրոնական կանոններին, սովորույթներին ու ծիսակատարություններին: Սակայն եկեղեցին օրենսդրությամբ սահմանված կատույցների միջոցով էական ազդեցություն է ունենում պետության քաղաքականության վրա՝ ընդհանրապես, և կրթական համակարգի կազմակերպման վրա՝ մասնավորապես:

Հայաստանը առաջին երկիրն էր, որ քրիստոնեությունը հռչակեց որպես պետական կրոն (301թ.): Այն բազմադարյան պատմության տարբեր ժամանակահատվածներում անգնահատելի դեր է խաղացել ինչպես Հայոց պետականության ամրապնդման, այնպես էլ պետականությունը կորցրած հայ ժողովրդին ֆիզիկական և հոգևոր բնաջնջումից փրկելու գործում: Եկեղեցին առանձնահատուկ խնդիր է լուծում նաև ներկայումս՝ համախմբելով, միավորելով աշխարհով մեկ սփռված հայությանը:

Ելնելով դրանից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրելով եկեղեցու՝ պետությունից անջատ լինելու հանգաման-

քը, միաժամանակ շեշտում է. «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու քացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ինքնության պահպանման գործում» (հոդվ. 8.1): Սահմանադրության այդ նորմի հիման վրա Հանրապետության Ազգային ժողովը 2007թ. փետրվարի 22-ին ընդունել է օրենք («Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին»), որով մանրամասն կարգավորում է Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները: Ըստ այդ օրենքի, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին իրավունք ունի կառուցել վանքեր, եկեղեցիներ և պաշտամունքային այլ շինություններ, գործող դարձնել հուշարձանների կարգավիճակ ունեցող վանքերն ու եկեղեցիները, որոնց պահպանությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետությունը և Առաքելաց սուրբ եկեղեցին համատեղ (հոդվ. 6): Օրենքով սահմանված են նաև Առաքելական սուրբ եկեղեցու իրավունքները կրթության (հոդվ. 8), ամուսնության գրանցման (հոդվ. 9), բարեխմամ գործունեության (հոդվ. 10) ոլորտներում և այլն:

Դրա հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրությամբ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը, և յուրաքանչյուր անձի վերապահվում է մտքի, լսողի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունները և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը (հոդվ. 26):

Սահմանադրության այդ նորմի բովանդակությունն ավելի մանրամասն շարադրվել է 1991թ. հունիսի 17-ին ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում, ուր ասված է, որ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն որոշում է իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ կատարելու կրոնական ծեսեր (թիվ 1 հոդվ.): Օրենքը արգելում է քաղաքացու նկատմամբ որևէ հարկադրանք կամ բռնություն՝ ժամերգություններին, կրոնական ծիսակատարություններին և արարողություններին, կրոնի ուսուցմանը մասնակցելու կամ չմասնակցելու հարցերի նկատմամբ իր վերաբերմունքը որոշելիս: Դավա-

մանքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների ուղղակի կամ անուղղակի սահմանափակումները, կրոնական հողի վրա հետապնդումները կամ կրոնական թշնամանքի հարուցումը առաջ են բերում օրենքով սահմանված պատասխանատվություն (2 հոդվ.):

Օրենքը բովանդակում է ևս մի շարք նորմեր, որոնք նվիրված են պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերություններին:

Սակայն, որպես աշխարհիկ պետություն, Հայաստանի Հանրապետությունը ընդհանրապես չի ներառում, որ էկեղեցին անջատված է պետությունից (Սահմանադրության 8.1 հոդվածի առաջին մաս): Դա նշանակում է, որ պետությունը, նրա մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու չեն միջամտելու կրոնի նկատմամբ քաղաքացու վերաբերմունքի ուրույն հարցերին. եկեղեցու և կրոնական կազմակերպությունների օրինական գործունեությանը և ներքին կյանքին, արգելվում է եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների կառուցվածքում որևէ պետական մարմնի կամ նրա հանձնարարությունը կատարող անձի գործունեությունը:

Դրա հետ մեկտեղ, պետությունը արգելում է նաև եկեղեցու մասնակցությունը պետական կառավարմանը, եկեղեցու և կրոնական կազմակերպությունների վրա չի դնում որևէ պետական գործառույթ: Միևնույն ժամանակ կրոնական կազմակերպությունների անդամներին ու սպասավորներին վերապահում է երկրի հասարակական և քաղաքական կյանքին մասնակցելու իրավունք՝ այլ քաղաքացիների հետ համահավասար:

Կրոնական կազմակերպությունն առնվազն 50 չափահաս անձանց միություն է, որն ստեղծվում է հավատքի համատեղ դեկլարության, ինչպես նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով: Այդպիսի կազմակերպություններ են եկեղեցական ու կրոնական համայնքները, թեմերը, վանքերը, կրոնական միաբանությունները, նրանց կրթական ու հրատարակչական հաստատությունները և այլ կրոնական կազմակերպություններ: Կառավարության աշխատակազմի «Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունում» գրանցվելուց հետո, կրոնական համայնքը կամ կազմակերպությունը ճանաչվում է իրավաբանական անձ: Դրանից հետո կրոնական կազմակերպությունը իրավունք է ստանում կատարել ժամերգություններ աղոթատներում և դրանց պատկանող տարածքում, ուխտատեղերում, քաղաքացիների տներում, հիվանդանոցներում, գինվորական մասերում և այլուր՝ այնտեղ գտնվող և տվյալ կրոնական կազմակերպության անդամ հանդիսացող քաղաքացիների խնդրանքով: Նրանք կարող են ստեղծել համապատասխան կրոնական ուսուցման խմբեր՝ իրենց անդամների ու նրանց երեխա-

ների կրոնական կրթության համար, իհարկե, ծնողների համաձայնությամբ, այդ նպատակով օգտագործելով միայն իրենց պատկանող շինությունները:

Գործող օրենսդրությունը կրոնական կազմակերպություններին իրավունք է վերապահում գբաղվել նաև բարեգործությանը, անհրաժեշտության դեպքում կապեր հաստատել այլ երկրների եկեղեցական կազմակերպությունների հետ՝ անկախ նրանց ազգային կամ դավանական պատկանելությունից, իր հավատացյալներին գործուղել արտասահման՝ ուխտագնացության, ժողովների ու կրոնական այլ միջոցառումների մասնակցելու, ինչպես նաև կրթական նպատակով:

Համայն հայության հավաստի՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին, որպես ազգային եկեղեցի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնով, իր մեջ ներառում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունների նվիրապետական արքեպիսկոպոսները («Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքի 2 հոդվ.): Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին գլխավորում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որն ընտրվելու պահից ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերությունները կարգավորելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում ստեղծվել է «Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն», որը խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքով (հոդվ. 23) սահմանված կարգով գրանցում է կրոնական կազմակերպությունների կանոնադրությունները, անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս պետական մարմինների կողմից կրոնական կազմակերպություններին վերաբերող հարցերի լուծմանը, պետության անունից, որպես միջնորդ, մասնակցում է կրոնական կազմակերպությունների միջև ծագող հարցերի և վեճերի լուծմանը:

**ԺՈՂՈՎՐԴԱԻԾԵԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ**

§ 1. Իշխանության պատկանելը ժողովրդին

Ժողովրդաիշխանության սկզբունքն ամրագրված է ժողովրդավարական կարգ ունեցող բոլոր երկրների սամնամատրություններում: Այն համարվում է ցանկացած ժողովրդավարական սահմանադրության պարտադիր երակետային, առանցքային սկզբունքը, և մի դեպքում, ուղղակի ամրագրված է պետության հիմնական օրենքում, մեկ այլ դեպքում՝ բխում է սահմանադրության մի շարք նորմերից:

Ժողովուրդը ոչ միայն հանդես է գալիս որպես պետական ինքնիշխանության աղբյուր, այլև՝ յուրահատուկ երաշխիք, քանզի պետության անկախության ցանկացած խաթարում ռսնձգություն է ժողովրդի արմատական շահերի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում պետության ինքնիշխանություն և ժողովրդաիշխանություն հասկացությունները հստակ սահմանազատված են: Սահմանադրության 2 հոդվածում ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»: Ժողովուրդը, այսպիսով, հանդիսանում է միասնական և անբաժանելի իշխանության միակ սուբյեկտը: Սահմանադրական հիշյալ նորմից ուղղակիորեն բխում է, որ պետական իշխանությունը կարող է սահմանափակվել բացառապես Սահմանադրությամբ և օրենքներով, ինչը ժողովրդի կամքի գերակայության վկայությունն է:

Պատմականորեն «ժողովուրդ» հասկացությունը ձևավորվել է քաղաքականության ոլորտում: Այսպես, Հին Հունաստանում և Հին Հռոմում ժողովրդավարական (*դեմոկրատական*) էին կոչվում այն *քաղաք-պետությունները*, որոնցում գերագույն իշխանությունը պատկանում էր բնակչության մեծամասնությունը կազմող ազատ քաղաքացիներին: Այս տեսանկյունից առանձնակի կարևորվում է պետության և հասարակության (ժողովրդի) փոխհարաբերությունները: Այսպես, դեռևս Ցիցերոնի աշ-

խատություններում, օրինակ, պետությունը ներկայացված է որպես ժողովրդի արգասիք, իսկ ժողովուրդը՝ ոչ թե մարդկանց պատահական համակցություն, այլ այնպիսի սոցիալական միավորում, որի անդամներն ունեն իրավունքների և շահերի ընդհանրություն և այդ ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ձեռք բերված համաձայնություն¹³: Ուստի պատահական չէ, որ *պետության ծագումը* բացատրվում էր, առավելապես, «*հասարակական պայմանագրի*» տեսությամբ, որի համաձայն՝ մարդկանց բազմությունը միավորվում և փոխադարձ համաձայնությամբ ստեղծում է պետական իշխանություն: Այն պայմանավորված էր ժողովրդի սոցիալական *առանձին խմբերի միջև առկա հակասությունների հաշտեցման անհրաժեշտությամբ*:

Հասարակության զարգացման *արդի փուլում* ժողովրդաիշխանության սկզբունքն ընկալվում է որպես ինքնըստինքյան անհրաժեշտ և *բնական երևույթ*, ինչը երբևէ չի եղել վեճի առարկա: Իսկ այդպիսի պարագայում երբեմն առանձին երկրներում անգամ անհարկի է համարվում այդ ինստիտուտների սահմանադրական ամրագրումը: Սակայն դա բնավ չի նշանակում, որ ցանկացած երկրում ժողովրդաիշխանության իրացման ոլորտում չեն ծագում հիմնախնդիրներ և չկան լուծում պանահջող հակասություններ:

Պատմականորեն *ժողովրդաիշխանության սկզբունքը, որպես կոտ տեսություն*, ձևավորվել է ֆեոդալական բացարձակ միապետության դեմ մղված հեղափոխական պայքարի ժամանակ և հակադրվել է միապետների՝ անսահմանափակ իշխանություն ստանալու նկրտումներին, որն իբրև նրանց տրված է աստծո կամքով (17-18-րդ դարեր): Մասնավորապես, 16-րդ դարում *Ժ.Բոդենի* կողմից մշակված ինքնիշխանության սկզբունքը, որը վերագրվում էր միապետին, արդեն 18-րդ դարում *Ժ.Ժ.Ռուսսոյի* կողմից վերափոխատարվելով, ձեռք է բերում նոր նշանակություն՝ այն ներկայացվում է որպես պետական իշխանության և ժողովրդաիշխանության ժողովրդավարական լինելու սկզբունք:

Հետագայում, արդեն 20-րդ դարի սկզբներին, շրջանառության մեջ դրվեց «*ազգի ինքնիշխանություն*» հասկացությունը, որը նույնացվում էր ազգի լիիշխանության կամ ազգի ինքնորոշման՝ ընդհուպ մինչև ազգային պետություն ստեղծելու, իրավունքի հետ:

Ժողովրդաիշխանության սկզբունքն իր արդիականությունը չի կորցրել նաև այսօր. *այն իշխանությամբ օժտված մարմիններին և պաշտոնյաներին ուղղակիորեն հավաստում է և հիշեցնում, որ պետական իշխա-*

¹³ Ст'и Цицерон. Диалоги. О государстве. О законах. М. 1966, էջ 20:

նության սկզբնաղբյուրը ժողովուրդն է, որ այդ իշխանությունը պետք է օգտագործվի բացառապես ի շահ ժողովրդի:

Ժողովրդահիշխանությունը չի կարելի դիտել սոսկ պետական մարմինների (ընտրությունների միջոցով) ձևավորման սկզբնաղբյուր: Այն միաժամանակ հանդիսանում է պետական **իշխանության ձևերի ու կառուցվածքի յուրաքանչյուր փոփոխության կանխորոշող:** Ժողովրդահիշխանությունն իրենում ներառում է սահմանադրական կարգին ուղղված ցանկացած բռնությանը դիմակայելու ժողովրդի բնական իրավունքը և ղեկավարվում է իշխանության իրականացման բացառապես սահմանադրական ձևերով, ինչը վկայում է այն մասին, որ ժողովրդահիշխանությունը պետք է կարողանա հուսալիորեն պաշտպանվել, և այդ պաշտպանությանն ուղղված է պետության ողջ սահմանադրական կարգը:

Սահմանադրական կարգի անբաժան և անբաժան անբաժան **ժողովրդահիշխանության դեմ ուղղված ռոնձգություններին դիմակայելու** քաղաքացու իրավունքը ոչ միշտ է ուղղակիորեն ամրագրված լինում սահմանադրությամբ: Նման դիմակայության մասին ուղղակի հիշատակում չկան և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ: Սակայն այդ իրավունքի ամրագրման օրինակներն ավելի քան առատ են առանձին արտասահմանյան երկրներում: Այսպես, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքն ամրագրում է, որ քաղաքացին «իրավունք ունի դիմակայելու յուրաքանչյուրին, ով կփորձի վերացնելու այս (սահմանադրական) կարգը, եթե այլ միջոցներն անհնարին են»: Համաձայն դրույթներ են բովանդակում նաև ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և մի շարք այլ պետությունների սահմանադրությունները, որոնք նման իրավունքը համարում են բնական իրավունքի անբաժանելի տարր:

Ժողովրդահիշխանությունը պետք է ժողովրդակավարական բնույթ ունենա ոչ միայն **ձևական հատկանիշներով** (օրինակ՝ իրավական համապատասխան դրույթներ ամրագրելով), այլև այդ խնդրի համալիր լուծմանն ուղղված փաստացի, իրական ազդեցություն ունեցող միջոցների գործադրմամբ: Ժողովրդի, հատկապես սոցիալ-տնտեսական վատթար պայմանների պարագայում, ժողովրդահիշխանությունը կեղծ հնարքներով ժողովրդավարական ներկայացնելու ձգտումը կարող է հանգեցնել սոցիալական սուր հակասությունների: **Այդպիսի իրավիճակում ժողովրդի մեջ աստիճանաբար անվստահություն է ձևավորվում անզամ ակնհայտ ժողովրդավարական բնույթ կրող ինստիտուտների նկատմամբ:**

Իր հերթին ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ բացասական միտումների առկայությունը նախապայմաններ է ստեղծում ժողովրդահիշխանությունը ոչ թե ժողովրդավարության սկզբունքներին, այլ

բացահայտ իշխող էլիտայի նպատակներին ծառայեցնելու համար: Իսկ պատմական փորձը վկայում է, որ ժողովրդավարական սկզբունքները զանազան պատճառներով մերժած հասարակությունը նման դեպքերում իշխանության եկած քաղաքական ուժերի համար ապահովում է անհարկի երկարատև գոյություն:

Այսպիսով, ժողովրդահիշխանությունը ինքնին ժողովրդակարական ինստիտուտ լինելով հանդերձ, կարող է յիովին համապատասխանել իր սահմանադրաիրավական նշանակությանը միայն այն դեպքում, երբ դրա ամրագրումն ու գործնական կիրառությունն ուղեկցվում է հիրավի ժողովրդավարական սկզբունքներով:

§ 2. Ժողովրդահիշխանության իրացման ձևերը

Ժողովրդին պատկանող իշխանությունն իրացվում է երկու ձևով՝ անմիջականորեն և պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Ժողովրդի իշխանության **անմիջական դրսևորման** ու արտահայտման բարձրագույն ձևեր են հանդիսանում **հանրաքվեն և ազատ ընտրությունները:** Նշված ձևերով իշխանությանը մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին կարող են մասնակցել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (Սահմանադրության 30 հոդվ.):

Քաղաքացիների կամքի անմիջական դրսևորման այլ ձևեր էլ են հնարավոր, որոնց էությունը սակայն Սահմանադրությամբ ամբողջովին բացահայտված չէ: Այդպիսիք են համարվում ընտրողների ժողովները կամ որոշակի տարածքի բնակչության (համայնք, կոլեկտիվներ) ժողովները, հանրահավաքները, երթերը, ցույցերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղված դիմումները և այլն:

1. **Հանրաքվեն.** ըստ 2001թ. սեպտեմբերի 12-ին ընդունված «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի (թիվ 1 հոդվ.), ժողովրդի կողմից անմիջականորեն իշխանության իրականացումն է՝ Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու, օրենքներ ընդունելու, ինչպես նաև պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու եղանակով: Այսինքն՝ հանրաքվեն արդյունավետ իրավական միջոց է կարևոր օրենսդրական ակ-

տեր ընդունելու կամ պետության համար վճարող նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ ժողովրդի դիրքորոշումը պարզելու համար:

Հանրաքվեի ինստիտուտի հիմնական դրույթներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 8 գլխում («Սահմանադրության ընդունումը, փոփոխումը և հանրաքվեն»): Ընդ որում, ամրագրված են նորմեր ինչպես *Սահմանադրության* ընդունման, փոփոխման, այնպես էլ՝ *օրենքների* առնչությամբ անցկացվող հանրաքվեների մասին:

Սահմանադրության 111 հոդվածի համաձայն՝ հանրաքվե նշանակում է Հանրապետության Նախագահի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր քվի ձայների մեծամասնության առաջարկով կամ համաձայնությամբ: Ըստ Սահմանադրության 112 հոդվածի դրույթների՝ օրենքները հանրաքվեի են դրվում Ազգային ժողովի կամ կառավարության առաջարկով՝ Սահմանադրության 111 հոդվածով սահմանված կարգով:

Հանրաքվեի ինստիտուտը լայն տարածում ունի օտարերկրյա պետություններում. այն իր ամրագրումն է ստացել ինչպես սահմանադրություններում, այնպես էլ հատուկ այդ ինստիտուտին առնչվող հարաբերությունների կանոնակարգմանը նվիրված օրենքներում:

Իշխանության իրականացման այս ձևի կիրառումը Հայաստանի Հանրապետությունում դեռևս լայն տարածում չի գտել:

Երկրում այդ ինստիտուտի կիրառումն առաջին քայլերն է կատարում: Թերևս նշանակալից էր Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի՝ 1991թ. սեպտեմբերի 1-ին ընդունած «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին» որոշումը: Այդ պատմական ակտի միջոցով, 1991թ. սեպտեմբերի 1-ին նշանակված հանրաքվեն, ժողովրդին առաջադրել էր հետևյալ հարցը. «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ-ի կազմից դուրս»:

Հանրաքվեի միջոցով են ընդունվել նաև Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրությունները, իսկ 2005թ. նոյեմբերի 27-ին կայացած հանրաքվեով փոփոխություններ են կատարվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում:

Ինչ վերաբերում է տեղական հանրաքվեին, ապա այդ ինստիտուտը կանոնակարգված է 2002թ. փետրվարի 6-ին ընդունված «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, նշված օրենքի թիվ 1 հոդ-

վածի համաձայն՝ «Տեղական հանրաքվեն տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության կարևոր հարցերով քվեադրությունն է»:

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ, *քստ արդյունքների բնույթի*, ընդունված է հանրաքվեի երկու տարատեսակ. *պարտադիր կամ որոշիչ* և *խորհրդակցական*: Որոշիչ հանրաքվեի դեպքում քվեարկության արդյունքները վերջնական են և ենթակա չեն որևէ մարմնի հաստատմանը: Իսկ խորհրդակցական հանրաքվեների արդյունքները պարտադիր չեն այն անցկացնողի համար և առաջ չեն բերում իրավական հետևանքներ:

Տարածքի քաղաքական ճակատագիրը որոշելու համար հարցումը, միջազգային իրավունքի տեսությունում, կոչվում է *«պլեբիսցիտ»*, որը համարվում է հանրաքվեի տարատեսակ: Սակայն մի շարք երկրներում (Ֆրանսիա) պլեբիսցիտը համարվում է ավելի լայն հասկացություն, քան հանրաքվեն: Այնուամենայնիվ, իրավաբանական հատկանիշների առումով հանրաքվեն ու պլեբիսցիտը միմյանցից չեն տարբերվում:

Հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը սահմանված է օրենքով, որի 4 հոդվածի համաձայն՝ «Հանրաքվեի կարող են դրվել Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու, օրենքներ ընդունելու, ինչպես նաև պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու վերաբերյալ հարցերը»:

Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է այն *հարցերի շրջանակը, որոնք չեն կարող դրվել հանրաքվեի*.

«ա) Սահմանադրության թիվ 1, 2 և 114 հոդվածների փոփոխության վերաբերյալ հարցերը.

բ) Հանրապետության գործող Նախագահի և գործող Ազգային ժողովի, ինչպես նաև գործող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետի երկարաձգման կամ կրճատման հարցերը.

գ) մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին, դրանց իրականացումն ապահովող սահմանադրական երաշխիքների վերացմանը կամ սահմանափակմանը վերաբերող, ինչպես նաև Սահմանադրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բացառիկ իրավասությանն ուղղակիորեն վերապահված հարցերը»:

Նշված օրենքը ամրագրում է նաև *հանրաքվեն բացառող հանգամանքները*. «Հանրաքվե չի կարող անցկացվել Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում մինչև նորընտիր Նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը, Հայաստանի Հանրա-

այետուքյան քնակչության ավելի քան մեկ երրորդն ընդգրկող տարածքում արտակարգ եւ ռազմական դրություն հայտարարվելու դեպքում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ կամ ռազմական դրությունը վերացվելուց հետո՝ երկամսյա ժամկետում» (5 հոդվ.):

Այս հանգամանքերի մի մասը, թերևս, հանրաքվեն բացառում են ժամանակավորապես և բխում են Մահմանադրության 60 հոդվածի դրույթներից՝ Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում վերջինիս պարտականությունները սահմանված կարգով կատարող Ազգային ժողովի նախագահը կամ վարչապետը չեն կարող այդ ընթացքում հանրաքվե նշանակել:

Հանրաքվեն, հանդիսանալով ժողովրդաիշխանության իրացման կարևոր ձև, ունի նաև **իրավաստեղծ նշանակություն**: Այն, ըստ էության, հանդիսանում է անմիջական իրավաստեղծ գործունեության հիմնական գործոն և առանձնանում է հետևյալ հատկանիշներով՝

ա) հանրաքվեին մասնակցում են ընտրողները, որոնց հավաքական կամքը հանդիսանում է սահմանադրության, որոշ դեպքերում նաև օրենքների ընդունման և փոփոխության միակ և անմիջական աղբյուրը:

բ) հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները փոփոխվում են միայն հանրաքվեով:

գ) հանրաքվեի արդյունքները համարվում են վերջնական, դրանք ենթակա չեն որևէ պետական մարմնի կողմից հաստատման և օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով:

դ) հանրաքվեի նախապատրաստումն ու անցկացումն իրականացնում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, համապատասխան հանձնաժողովները և այլն:

Այսպիսով, հանրաքվեն ընտրություններից հիմնականում տարբերվում է ընտրողների կամքի արտահայտման օբյեկտով: Ընտրությունների ընթացքում այդպիսի օբյեկտ է համարվում պատգամավորության կամ այլ պաշտոնի (օրինակ, Հանրապետության Նախագահի) թեկնածուն: Հանրաքվեի ընթացքում կամքի արտահայտության օբյեկտը ոչ թե մարդն է, այլ պետության կամ հասարակության կյանքին առնչվող առավել կարևոր հիմնահանդիսը:

Հանրաքվեի միջոցով ընդունված Մահմանադրությունը և օրենքներն ուժի մեջ են մտնում հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կամ սահմանադրական դատարանի՝ հանրաքվեի արդյունքների վերաբերյալ օրոշումը հրապարակվելուց հետո հնգօրյա ժամկետում (36 հոդվ., առաջին մաս):

2. Ժողովրդի իշխանության իրականացման անմիջական մյուս ձևը **ազատ ընտրություններն են**: Ընտրությունների միջոցով քաղաքացիները՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, մասնակցում են Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը՝ զաղտնի քվեարկությամբ: Ընտրությունները ձեռք են բերում արժեք, իրավական նշանակություն և իմաստ միայն այն դեպքում, երբ **հանդիսանում են ազատ**, հնարավորություն են տալիս քաղաքացիներին առաջադրված թեկնածուներից ընտրելու մեկին, և դրա արդյունքները չեն կեղծվում: Պարբերաբար անցկացվող ընտրությունները երաշխիք են ժողովրդավարական բնույթի սահմանադրական կարգի և օրինական իշխանության համար:

Ընտրությունների միջոցով ժողովրդի իշխանության իրացման շրջանակները կախված են նաև պետության **կառավարման ձևից** և պետական մարմինների համակարգից: Ընդ որում, ընտրությունների սոցիալական նշանակությունը պայմանավորված է ոչ այնքան ընտրովի մարմինների քանակով, որքան պետական մարմինների համակարգում այդ մարմինների դերով:

Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունում բացակայում է ընտրությունների մասին առանձին գլուխ: Ընտրական իրավունքի ինստիտուտը Հիմնական օրենքում ներկայացված է առանձին իրավական նորմերով: Ընտրական իրավունքի դրույթներ են պարունակում, մասնավորապես, Մահմանադրության 30 (քաղաքացիների ընտրական իրավունքը), 50-53.1 (Հանրապետության Նախագահի ընտրության հիմունքները), 64 (պատգամավորի ընտրության կարգը), 107 (տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության հիմունքները) հոդվածները: Հայաստանի Հանրապետության ներկայիս գործող ընտրական օրենսգրքը ներառում է բոլոր նշված մարմինների ընտրություններին առնչվող իրավական նորմերը:

Որպես ժողովրդի իշխանության և ժողովրդի կամքի արտահայտության միջոց, ընտրական իրավունքի ինստիտուտն օժտված է ժողովրդավարական սկզբունքներով, որպիսի հանգամանքը բացառում է քաղաքացիների որևէ սոցիալական խմբի՝ ընտրությունների գործընթացից հեռացնելը: Հատկանշական է, որ ընտրություններին մասնակցելու իրավունք չունեցող անձանց շրջանակը սպառիչ սահմանված է հենց Մահմանադրությամբ, ինչը բացառում է ընթացիկ օրենսդրական ակտերի միջոցով այդ շրջանակն ընդլայնելու հնարավորությունը: Մասնավորապես, Մահմանադրության 30 հոդվածի համաձայն՝ «Ընտրել և ընտրվել չեն կարող

դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները»:

Ընտրական իրավունքի բարդ և ծավալուն ինստիտուտը կոչված է ըստ ամենայնի ապահովելու ժողովրդի իրական կամքի դրսևորումը, նրա ինքնիշխանության արտահայտումը:

3. Ժողովրդին պատկանող իշխանության իրականացման **միջնորդավորված ձևեր են հանդիսանում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ժողովրդին պատկանող իշխանության իրականացումը**: Սահմանադրությամբ նախատեսված կարգով, քաղաքացիներն ընտրում են այդ մարմինները, իրենք են ընտրվում դրանցում, վերադասության կամ դատական կարգով բողոքարկում են այդ մարմինների ապօրինի գործողություններն ու դրանց կողմից ընդունված իրավական ակտերը, աշխատում են քաղաքացիական ծառայության համակարգում և այլն:

Ժողովրդի կամքի արտահայտությունը հանդիսանում է պետական իշխանություն իրականացնող բոլոր մարմինների բնականոն գործունեության հիմքը: Այն առավելապես վերաբերում է **օրենսդիր իշխանությանը**, քանի որ ներկայացուցչական մարմիններն ամփոփակաճանաչում են քաղաքացիների կողմից: Սակայն ժողովրդի կամքի արտահայտությունը՝ համակարգի ձևավորման տեսանկյունից, վճռորոշ նշանակություն ունի նաև գործադիր ու դատական իշխանությունների համար, քանի որ վերջիններս ձևավորվում են ընտրովի ներկայացուցչական մարմինների կամ ընտրովի պետության գլխի կողմից:

Չնայած դրան, այդ պարագայում հիմնախնդիրներ են ծագում **գործադիր մարմինների** գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և դատարանների անկախությունն ապահովելու ոլորտներում: Տարաբնույթ չարաշահումներից ու կամայականություններից խուսափելու նկատառումով անհրաժեշտ է գործադիր իշխանության նկատմամբ նախատեսել **պետական վերահսկողության** գործուն միջոցներ: Կառավարման խորհրդարանական ձևի պայմաններում դա կառավարության նկատմամբ ուղղակի խորհրդարանական վերահսկողությունն է: Մինչդեռ նախագահական կամ կիսանախագահական կառավարման ձևերի դեպքում վերահսկողությունն իրականացվում է նախագահի կողմից՝ մասնակիորեն նախատեսելով նաև խորհրդարանի կողմից իրականացվող վերահսկողության տարրեր: Ընդ որում, այդ մարմինների կողմից իրականացվող վերահսկողությունը առավելապես կրում է քաղաքական բնույթ, մինչդեռ՝ գուտ իրավական վերահսկողություն իրականացնելու առաքելությունը վերապահված է դատական իշխանությանը:

Դատարանների գործունեության առանձնահատկությունն այնպիսին է, որ դատարանների անկախությունն ու միաժամանակ օրինական ու հիմնավորված գործունեությունն ապահովվում է **դատական ակտերի բողոքարկման** ինստիտուտի, կարգապահական և այլ բնույթի պատասխանատվության համակարգի, ինչպես նաև գործադիր իշխանության մարմինների կողմից դրանց **հարկադիր կատարումն** ապահովելու միջոցով:

Ինքնին հասկանալի է, որ ժողովուրդն անմիջականորեն չի կարող վերահսկողություն իրականացնել պետական ողջ ապարատի կողմից պետության առջև դրված բոլոր բարդ ու բազմաճյուղ գործառույթների օրինականության ու արդյունավետության չափանիշներով, դա, առաջին երթին, պահանջում է համապատասխան մասնագիտական գիտելիքների առկայություն, և մարդկային, ֆինանսատնտեսական որոշակի ռեսուրսներ:

Պետական մարմինների համակարգն են կազմում նաև **քանակը, իրավասպահ մարմինները**, զանազան ոլորտների կառավարման համար հատուկ մասնագիտացված կառույցները և այլն: Բոլոր այդ մարմինների ու հիմնարկների նկատմամբ իրականացվող վերահսկողությունը չի կարող լինել համաժողովրդական: Սակայն այն կարող է և պետք է լինի ժողովրդավարական, ունենա հրապարակային բնույթ, ինչը ժողովրդի կողմից իրեն պատկանող իշխանության միջնորդավորված կերպով իրականացնելու կարևոր պայման է:

Այս ոլորտում կարևոր դեր ունեն նաև **զանգվածային լրատվության միջոցները**: Գործող օրենսդրությունը, մասնավորապես՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը պետական մարմինների և պաշտոնատար անձանց համար նախատեսում է որոշակի պարտավորություններ՝ զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերություններում: Այսպես, նշված օրենքի 4 հոդվածի (3-րդ մաս) համաձայն՝ «Արգելվում է՝ 1) գրաքննությունը, 2) որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակառոտված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ, 3) լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը, 4) խտրականությունը լրատվության համար անհրաժեշտ սարքավորումների և նյութերի քաղաքացիական շրջանառությունում, 5) ցանկացած, այդ թվում՝ այլ երկրներում թողարկված և տարածված լրատվության միջոցներից օգտվելու՝ անձի իրավունքի սահմանափակումը»:

Կարևոր նշանակություն ունի նաև գործադիր մարմինների կազմավորման ու գործունեության ոլորտում ժողովրդավարության սկզբունքների հետևողական ներդրումը: Քաղաքացիները պետք է օժտված լինեն պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում հանրային ծառայության անցնելու հավասար հնարավորություններով:

Այսպիսով, Սահմանադրությամբ նախատեսված՝ ժողովրդի իշխանությունն իրացվում է նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով՝ անուղղակի ձևերով, ինչը երաշխավորված է Սահմանադրությամբ ամրագրված քաղաքացիների իրավունքներով, ինչպես նաև պետական իշխանության համապատասխան ընտրովի մարմինների լիազորություններով:

§ 3. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը

Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանության կազմակերպման կարևոր հիմունքներից է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, որն, ինչպես արդեն նշել ենք, սահմանադրական կարգի կարևորագույն բաղադրիչներից է: Իշխանությունների բաժանման գաղափարը դարեր շարունակ հանդիսացել է հնարավորինս իդեալական պետություն ստեղծելու մարդկության ձգտումների արգասիք: Ըստ իշխանությունների բաժանման սկզբունքի, պետության գործառույթների բնականոն ընթացքն ապահովելու նպատակով պետք է գործեն հարաբերականորեն իքնուրույն իշխանություններ՝ օրենսդիր, գործադիր և դատական: Ընդ որում, օրենսդիր իշխանությունը պետք է պատկանի խորհրդարանին, գործադիր իշխանությունը՝ կառավարությանը և դատական իշխանությունը՝ դատարաններին: Այս տեսության էությունն այն է, որպեսզի բացառվի իշխանության անգամ երկու ճյուղերի կենտրոնացումը մեկ անձի կամ մարդկանց որոշ խմբի ձեռքում, ինչն անխուսափելիորեն կհանգեցնի ժողովրդավարության և ժողովրդի ինքնիշխանության սկզբունքների խաթարման:

Մյուս կողմից, հիշյալ սկզբունքը ոչ միայն չի բացառում, այլև ենթադրում է մի ճյուղի ներազդեցությունը մյուս ճյուղերի նկատմամբ: Սակայն այդ ներազդեցությունը պետք է լինի ոչ թե ինքնամպատակ, ոչ թե խախտի իշխանությունների հստակ տարանջատումը և դրանց ինքնուրույնությունը, այլ ապահովի անհրաժեշտ հավասարակշռություն և յուրաքանչյուր ճյուղի բնականոն գործունեությունը:

Իշխանությունների բաժանման սկզբունքն անցել է հասարակական-քաղաքական մտքի զարգացման երկարատև ճամապարհ: Մադմոնային միճակում այդ տեսությունն արտացոլվել է դեռևս Հին հունական փիլիսոփաներ Արիստոտելի (մ.թ.ա. 384-322թթ.) և Պլոլիբիի (մ.թ.ա. 200-120թթ.) հայացքներում: Ընդ որում, այդ տեսությունը հանրապետական Հռոմում ուներ նաև գործնական կիրառում:

Սակայն իշխանությունների բաժանման սկզբունքը, որպես ժողովրդավարական պետության մասին ուսմունքի բաղկացուցիչ մաս, ձևավորվել է 17-18-րդ դարերի հեղափոխություններին զուգընթաց: Այդ սկզբունքն իր դասական ձևակերպումն է ստացել անգլիացի փիլիսոփա Ջոն Լոքի¹⁴ (1632-1703թթ.) և ֆրանսիացի ականավոր լուսավորիչ, իրավագետ Շարլ Լուի Մոնտեսքյոյի¹⁵ (1689-1755թթ.) կողմից: Ջոն Լոքի մշակած սկզբունքի համաձայն՝ իշխանության ճյուղերի համակարգում նախապատվությունը տրվում է օրենսդիր իշխանությանը. այն համարվում է բարձրագույն, բայց ոչ բացարձակ իշխանություն: Մյուս իշխանություններն ստորադասվում են օրենսդիր իշխանությանը, սակայն սահմանված կարգով կարող են ակտիվ ներազդեցություն ունենալ վերջինիս վրա:

Բոլոր դեպքերում իշխանությունների բնականոն գործունեության երաշխիքը համարվում էր օրինականությունը: Ըստ Ջոն Լոքի՝ չկան այնպիսի իդեալական պետություններ, որոնք ամբողջովին երաշխավորված լինեն բռնապետության վերածվելու, իրավունքի շրջանցմամբ իշխանություն իրականացնելու վտանգից: Նման իրավիճակում Ջոն Լոքը գտնում էր, որ «անօրինական և անարդարացի» ուժի դեմ ժողովուրդն իրավասու է ևս ուժ կիրառել, քանի որ պետության ինքնիշխանությունը ստորադասվում է ժողովրդի ինքնիշխանությանը:

Ջոն Լոքի կողմից առաջ քաշված տեսությունն իր տրամաբանական ավարտին հասավ Շ.Մոնտեսքյոյի աշխատություններում: Վերջինիս կողմից առավել մեծ նշանակություն էր տրվում փոխադարձ «զսպումների» և «հակակշիռների» ձևավորման հարցադրումներին: Ըստ Մոնտեսքյոյի՝ անհատի ազատությունը կարող է ապահովված լինել միայն այն պետության մեջ, որտեղ առկա է իշխանությունների բաժանում:

Իշխանությունների բաժանման տեսությունը, զանազան տարբերակներով, իր արտացոլումն ստացավ առաջին իսկ սահմանադրություններում, մասնավորապես, ԱՄՆ-ի 1787թ. և Ֆրանսիայի 1791թ. սահմանադրություններում: Նշված սահմանադրություններում իշխանություններն

¹⁴ Տե՛ս Լոք Ժ. Избранные философские произведения. М., 1960:

¹⁵ Տե՛ս Մոնտեսքե III. Избранные произведения, М., 1955:

րի բաժանման սկզբունքը ներկայացվել է որպես պետության հիմնական գործառույթ. մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրում իշխանության երեք հիմնական ճյուղերի միջև հավասարակշռությունն ապահովելու կարևոր գործոն:

Իշխանությունների բաժանման տեսության իրական դերի համար առանցքային նշանակություն ունի Մարդու և քաղաքացու իրավունքների հոչակագրի հետևյալ դրույթը. «Այն հասարակությունը, որտեղ ապահովված չէ իրավունքներից օգտվելը և որտեղ իշխանությունների բաժանում չի անցկացվել, չունի սահմանադրություն» (16 հոդվ.):

Իշխանությունների բաժանման սկզբունքի դերն ավելի բարձրացավ 19-20-րդ դարերում, երբ այն աստիճանաբար վերածվեց քաղաքակրթության և ժողովրդավարության հանրաճանաչ սկզբունքի: Նշված սկզբունքը, թեևս, մերժվեց միայն մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի կողմից, ինչն անխուսափելիորեն հանգեցրեց բռնատիրության հաստատմանը Խորհրդային Միությունում:

Իշխանության վերաբերյալ խորհրդային հայեցակարգը ելակետ էր ընդունում այն, որ պետական իշխանությունը միասնական է և անբալկտելի: Ըստ ԽՍՀՄ Սահմանադրության 2 հոդվածի՝ «ԽՍՀՄ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդը պետական իշխանությունն իրականացնում է ժողովրդական պատգամավորների խորհուրդների միջոցով, որոնք ԽՍՀՄ քաղաքական հիմքն են:

Մյուս բոլոր պետական մարմինները ենթակա են ժողովրդական պատգամավորների խորհուրդների վերահսկողությանը և հաշվետու են նրանց»:

Իշխանությունների բաժանման տեսության անհրաժեշտության առումով խորհրդային իշխանության քաղաքական ղեկավարության հայացքներում վերափոխումներ նկատվեցին միայն, այսպես կոչված, վերակառուցման (1985-1990թթ.) տարիներին: Մակայն այդ ուղղությամբ հոչակագրային բնույթի քայլերից զատ, այլ գործուն միջոցներ չձեռնարկվեցին:

Իշխանությունների բաժանման սկզբունքն առավել կան նշանակություն է ձեռք բերում *նախագահական հանրապետություններում*, որովհետև հենց կառավարման այս ձևի դեպքում է առավել ընդգծելի դառնում այդ սկզբունքի անհրաժեշտությունը: Այսպես, որպես կառավարման դասական նախագահական երկիր ԱՄՆ-ն իր Սահմանադրության մեջ այդ սկզբունքը համարեց «զսպումների և հակակշիռների» ազդեցիկ համակարգով, ինչը հնարավորություն տվեց ոչ միայն տարանջատել երեք

իշխանությունները, այլև այդուհանդերձ հավասարակշռել դրանք: Խնդրի նմանաբնույթ լուծումը հնարավորություն տվեց ԱՄՆ-ին խուսափելու սահմանադրական ճգնաժամներից, թեպետ օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև հաճախ էին ծագում էական հակասություններ:

Իշխանությունների բաժանման սկզբունքը կառավարման *խորհրդարանական ձև* ունեցող պետություններում (խորհրդարանական հանրապետություններում և խորհրդարանական միապետություններում) դրսևորվում է մի շարք առանձնահատկություններով: Այստեղ նույնպես իշխանության ճյուղերի համար պահպանվում է հարաբերական ինքնույնություն և անկախություն, սակայն դրանց միջև հավասարակշռությունը իրականացվում է յուրահատուկ միջոցներով: Մասնավորապես, օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև հավասարակշռությունը, որպես կանոն, պահպանվում է այնպիսի լծակներով, ինչպիսիք են խորհրդարանի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելը, դրա նկատմամբ վերահսկողական լայն լիազորությունները և այլն:

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման սկզբունքը առաջին անգամ ամրագրվել է Հայաստանի անկախության մասին հոչակագրում. «Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է ... օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը» (9 հոդվ.): Նշված սկզբունքն իր հետագա ամրագրումն ստացավ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5 հոդվածում:

Իշխանությունների բաժանման սկզբունքն իր արտացոլումն է ստացել նաև դատաիրավական համակարգին նվիրված մի շարք այլ օրենսդրական ակտերում՝ 2006թ. ընդունված Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում, 2007թ. ընդունված Դատախազության մասին օրենքում և այլ իրավական ակտերում: Ընդհանուր առմամբ, իշխանության որևէ ճյուղին պատկանող պետական մարմինների կարգավիճակին նվիրված յուրաքանչյուր օրենսդրական ակտ զուգահեռաբար լուծում է իշխանությունների բաժանման և դրանց հավասարակշռման խնդիրը, ապահովում այդ սկզբունքի գործնական կիրառումը:

Իշխանության տարբեր ճյուղերի բարձրագույն մարմինների փոխհարաբերության խնդիրները մշտապես առանձնացել են իրենց բարդությամբ: Սահմանադրական դրույթները ոչ միշտ են բավարարել այդ ոլորտում ծագող սոցիալական հակասությունները հարթելու համար: Պետական իշխանության բարձրագույն մարմինները հավասարապես արտահայտում են ժողովրդի ինքնիշխանությունը և ապահովում վերջինիս միասնականությունը: Իշխանությունների բաժանումը սոսկ լիազորու-

յունների տարանջատում է, առանց խաթարելու պետական իշխանության միասնականությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ իշխանությունների բաժանման սկզբունքն ուղեկցվում է որոշակի իրավական պահանջներով՝

ա) օրենքները պետք է օժտված լինեն բարձրագույն իրավաբանական ուժով, ընդունվեն օրենսդիր (ներկայացուցչական) մարմնի կողմից և խստորեն համապատասխանեն Սահմանադրությանը:

բ) գործադիր իշխանությունը հիմնականում պետք է զբաղվի օրենքների կիրառմամբ, դրանց կատարման ապահովմամբ և միայն խիստ սահմանափակ դեպքերում կարող է իրականացնել նորմատիվ գործունեություն:

գ) օրենսդիր և գործադիր մարմինների միջև պետք է ապահովվի լիազորությունների հավասարակշռություն, որը կբացառի կամայական որոշումներ կայացնելը, առավել ևս՝ ամբողջ իշխանության կենտրոնացումը նրանցից որևէ մեկի ձեռքում:

դ) դատարաններն անկախ են, գործում են ինքնուրույն և օժտված են գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ:

ե) իրավասությանն առնչվող վեճերը կարող են լուծվել բացառապես սահմանադրական ճանապարհով՝ պահպանելով իրավական ընթացակարգը:

զ) սահմանադրական համակարգը պետք է նախատեսի յուրաքանչյուր իշխանությունը մյուս երկու իշխանությունների կողմից զսպելու իրավական ընթացակարգ, այսինքն՝ բովանդակի այլ իշխանությունների համար փոխադարձ հակակշռելիության լծակներ:

Նշված նախապայմաններն ամբողջությամբ ամրագրված չեն Սահմանադրության մեջ, սակայն դրանք անվերապահորեն բխում են դրանում ամրագրված երեք իշխանությունների միջև փոխհարաբերությունների վերաբերյալ մի շարք առանցքային նշանակություն ունեցող դրույթներից և կազմում են վերջիններիս ներքին տրամաբանությունը:

Իշխանությունների բաժանման հիմնարար սկզբունքի իրականացման նախապայմանները տարբեր դրսևորումներ ունեն: Այսպես, եթե որոշ երկրներում միևնույն անձը չի կարող միաժամանակ լինել և՛ խորհրդարանի պատգամավոր, և՛ կառավարության անդամ (Ֆրանսիա), ապա առանձին երկրներում նախարարներ կարող են լինել բացառապես խորհրդարանի պատգամավորները (Մեծ Բրիտանիա): Դապոնիայում պետական նախարարների առնվազն կեսը պետք է լինեն խորհրդարանի

պատգամավորներ: Խիստ սահմանափակումներ են նախատեսված հատկապես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ. «Կառավարության անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից » (88 հոդվ.):

Առանձնահատկություններ կան նաև օրինատեղծ ոլորտին առնչվող նախապայմանների առումով: Մի շարք պետություններում բացառվում է գործադիր իշխանությանն օրենք ընդունելու իրավասությամբ օժտելու հնարավորությունը, մինչդեռ առանձին երկրներում, որոշակի պայմաններում, ուղղակի կամ անուղղակի կերպով դա թույլատրվում է: Վերջին տարբերակն ընդունված էր նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ. «...Ազգային ժողովը կարող է լիազորել կառավարությանը ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք գործում են Ազգային ժողովի կողմից սահմանված ժամկետում և չեն կարող հակասել օրենքներին: Այդ որոշումներն ստորագրում է Հանրապետության Նախագահը» (78 հոդվ.): Ներկայումս այդ հոդվածը հանված է, իսկ Սահմանադրության 83.5 հոդվածով հստակ ամրագրված են այն հարաբերությունները, որոնք կարող են կարգավորվել բացառապես օրենքներով:

Այսպիսով, իշխանությունների բաժանման սկզբունքի արդյունավետ կիրառման և, մասնավորապես, իշխանությունների ճյուղերի միջև հնարավոր հակասություններն ու տարածայնությունները հարթելու գործընթացն ապահովելու համար սահմանադրական դրույթներն ունեն գործնական մեծ նշանակություն, սակայն սոցիալական և քաղաքական հարաբերությունների ոլորտն այնքան հարուստ է բարդություններով ու աննախադեպ իրավիճակներով, որ սահմանադրական ընթացակարգից զատ, անհրաժեշտ է բարդախոզեբանական անհրաժեշտ մթնոլորտի ձևավորում, ինչը դժվարին, բայց առաջնահերթ խնդիր է:

ԳԼՈՒԽ 7.

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

§ 1. Տնտեսական հարաբերությունների սահմանադրական հիմունքները

Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքների համակարգում առանձնակի կարևորվում է տնտեսական հարաբերությունների հիմնախնդիրը: Ներառելով սեփականության տնօրինման, տիրապետման ու օգտագործման, ինչպես նաև արտադրության, փոխանակման, բաշխման և նյութական ու հոգևոր արժեքների սպառման ոլորտները, տնտեսական հարաբերություններն իրենց բնույթով ու դերով հիմնարար նշանակություն ունեն ժողովրդաիշխանության հաստատման, հասարակության անդամների իրական ազատությունները երաշխավորելու համար:

Տնտեսական հարաբերություններն ունեն **օրյեկտիվ բնույթ**, կախված չեն մարդկանց կամքից ու սուբյեկտիվ ցանկություններից, առաջանում և դրսևորվում են անհրաժեշտ ու բավարար նախադրյալների առկայության դեպքում: Տնտեսական հարաբերությունների հիմքում ընկած են օրյեկտիվ տնտեսական օրենքների պահանջները, որոնց չիմացությունը և, առավել ևս, անտեսումը միշտ բացասական անդրադարձ է ունենում ցանկացած հասարակության համար:

Հասարակությունը և պետությունը տնտեսական հարաբերությունների բնույթի վրա կարող են ազդել միայն տնտեսական օրյեկտիվ օրենքները ճանաչելով և դրանք պայմանավորող նախադրյալների վրա խելամիտ ներգործելով: Օրինակ, չի կարող շուկայական մրցակցության օրենք գործել առանց մասնավոր սեփականության առկայության և սեփականության բազմաձևության, ինչպես նաև առանց շուկայական անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայության:

Ժողովուրդների պատմության ընթացքում միշտ էլ օրակարգի հարց է եղել, թե **պետությունն ի՞նչ ազդեցություն ունի և կարող է ունենալ տնտեսական հարաբերությունների վրա:** Համայնավարական տնտեսական հարաբերությունների պայմաններում (ԽՍՀՄ և սոցիալիստական այլ երկրներ) արտադրության միջոցների՝ գլխավորապես պետական սե-

փականության հիմքի վրա ձևավորվեցին պետության կողմից կենտրոնացված կառավարվող տնտեսական հարաբերություններ, որոնք պատմական կարճ ժամանակահատվածում դրսևորեցին իրենց ոչ կենսունակ լինելը և համակարգային փլուզումների պատճառ դարձան: Պատմության դասերը վկայում են, որ սեփականության բազմաձևության հիմքի վրա խարսխված ազատ շուկայական տնտեսական հարաբերություններն այլընտրանք չունեն: Դրանք հասարակության ակտիվ ու ներդաշնակ զարգացման գլխավոր նախապայմանն են:

Սակայն մույնչափ վտանգավոր է նաև **մյուս ծայրահեղությունը:** Վերջին տարիների համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամը վկայում է, որ հասարակությունը և պետությունը չեն կարող պասիվ դիտորդի դերում հանդես գալ: Պետությունը կարող է և ունի բազմաթիվ տնտեսական լծակներ՝ հասարակական հարաբերությունների այս ոլորտի վրա ներազդելու համար: Սակայն այդ ազդեցությունը պետք է լինի օրյեկտիվ տնտեսական օրենքների պահանջների գիտակցմամբ և խելամիտ տնտեսական մրցակցություն երաշխավորելու անհրաժեշտությունից ելնելով: Այն երբևիցե չպետք է փոխարինվի վարչարարության և պետական իշխանության թեպաղյանքի, որի պայմաններում տնտեսական հարաբերություններում ի հայտ են գալիս բազմաբնույթ անհամամասնություններ և իջնում է հասարակական արտադրության արդյունավետությունը:

Հասարակության տնտեսական հարաբերությունների հիմքը **սեփականության ձևն** է: Սեփականության իրավունքը հանդես է գալիս որպես յուրաքանչյուր տնտեսական ու քաղաքական համակարգի էության, անձի իրական ազատությունների երաշխավորման հիմնական բնութագրիչ: Սեփականությունն ինքնին հարաբերություն է, բնութագրում է արտադրության միջոցի, կոնկրետ գույքի տնօրինման, տիրապետման ու օգտագործման նկատմամբ անձի կամ անձանց խմբի իրավունքն ու պարտականությունը:

Ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող բոլոր երկրներում սեփականությունը հանդես է գալիս հիմնականում **մասնավոր և հանրային սեփականության** ձևով: Մնացած բոլոր ձևերը (կոլեկտիվ, նահանգային, համայնքային և այլն) դրանց տարատեսակ դրսևորումներն են:

Հանրային սեփականության իրավունքի սուբյեկտներ կարող են լինել, օրինակ, պետությունը՝ ամբողջապես, նրա ինքնավար սուբյեկտները, տեղական ինքնակառավարման մարմինները:

Մասնավոր սեփականության իրավասուբյեկտ կարող է լինել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Սեփականության այս ձևը կարող է հանդես գալ ինչպես մասնավոր, այնպես էլ կոլեկտիվ, խառը և այլ ենթաձևերով:

Հասարակական պրակտիկայում հնարավոր են նաև սեփականության այս ձևերի վերափոխում՝ հանրայինից՝ մասնավորի (սեփականացնողում) և մասնավորից՝ հանրայինի (ազգայնացում):

Հասարակության կայուն և ներդաշնակ զարգացման համար բացառիկ կարևոր է, որպեսզի թե՛ տնտեսական հարաբերությունների բնույթը և թե՛ սեփականության ձևերի **վերափոխման նախադրյալներն ու կարգը սահմանադրական լուծում ստանան, ճանաչվեն որպես հասարակական համաձայնությամբ ամրագրված կյանքի հիմնական կանոն** ու այդ սկզբունքային լուծումների հիման վրա դառնան օրենսդրական կարգավորման առարկա:

Հայաստանը 1990թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի կողմից ընդունված Անկախության հռչակագրում ամրագրեց. «Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձևության հիման վրա որոշում է իր տնտեսավարման սկզբունքները և կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայություններ»: Այնուհայտ է, որ նման ձևակերպումը ներառում է ինչպես տնտեսական հարաբերությունների արմատական վերափոխման (սեփականության բազմաձևության արմատավորում, որը շուկայական տնտեսական հարաբերությունների հիմքն է), այնպես էլ պետության ինքնիշխանության ամրապնդման նախադրյալներ (ինքնուրույն տնտեսավարման սկզբունքների ու կարգի որոշում, սեփական դրամ և այլն):

Հայաստանի համար բացառիկ կարևոր դեր ունեցավ 1990թ. հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» օրենքը (որն ուժը կորցրեց միայն 01.01.1999թ.՝ Հ քաղաքացիական նոր օրենսգրքը գործողության մեջ դնելուց հետո), որի նպատակն էր, մինչև հանրապետության քաղաքացիական օրենսդրության համակարգում, ապահովել շուկայական հարաբերությունների ձևավորման ու զարգացման իրավական հիմքերի ստեղծումը, տնտեսական համակարգի և սեփականատիրական հարաբերությունների ամրապնդումն ու տարբեր ձևերի զարգացումը:

Հասարակության տնտեսական հարաբերությունների բնույթը, դրանց դրսևորման սահմանադրական սկզբունքները հետագայում ամրագրվեցին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ, որի «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխի (1) 8 հոդվածում սահ-

մանված է. «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը»: Իսկ Սահմանադրության 31 հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Սահմանադրական այս նորմերի բովանդակությունից պարզորոշ ուրվագծվում են հանրապետությունում ձևավորվող նոր տնտեսական հարաբերությունների հիմնական սկզբունքները.

առաջին՝ պետությունը ճանաչում է սեփականության իրավունքը՝ առանց որևէ խտրականություն դնելու դրա ձևերի միջև.

երկրորդ՝ պետությունը սահմանադրորեն երաշխավորում է սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով կայուն տնտեսական համակարգի ձևավորման, երկարաժամկետ ներդրումների և արդյունավետ տնտեսական մրցակցության համար.

երրորդ՝ սեփականատերն օժտված է իրեն պատկանող գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման ամբողջական իրավունքով և ազատությամբ.

չորրորդ՝ հստակեցված են սեփականության իրավունքի՝ քաղաքացիական հասարակությանը բնորոշ ազատ դրսևորման շրջանակները.

հինգերորդ՝ պետությունը սահմանադրական երաշխիքներ է ապահովում սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության համար, որոնք շուկայական տնտեսական հարաբերությունների հիմնաքարն են:

Թվարկված սկզբունքների հետևողական իրացումն անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ կարող է ապահովել շուկայական հարաբերությունների վրա խստիված արդյունավետ զարգացող տնտեսական համակարգ ձևավորելու համար: Միաժամանակ, շատ երկրներում, հասկապես անցումային փուլում գտնվող, տնտեսական հարաբերությունների սահմանադրական կանոնակարգման հատուկ խնդիր է համարվում նաև պետության կողմից **հակամենաշնորհային քաղաքականության** իրականացումը, խելամիտ մրցակցության ապահովումը, դրանց համար անհրաժեշտ օրենսդրական և ենթակառուցվածքային նախադրյալների ստեղծումը: Շուկայական տնտեսական հարաբերությունները ենթադրում են

դրանց իրավական կարգավորման հատակ, հարաբերականորեն կայուն համակարգ, այն ապահովելու հարցում պետական իշխանության ինստիտուտների գործառնությունների ու լիազորությունների ներդաշնակում, այդ հարաբերություններում **պետության դերի** օրենսդրական մանրակրկիտ կանոնակարգում: Մասնավորապես, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» 2000 թ. նոյեմբերի 6-ին ընդունված ՀՀ օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և ապառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Տնտեսական հարաբերությունների առանցքային հիմնահարցերը ոչ միայն կանոնակարգվում են Հանրապետության Հիմնական օրենքի «Սահմանադրական կարգի հիմունքները» բաժնում, այլև՝ որպես մարդու հիմնական իրավունքների և ազատությունների դրսևորման կարևոր ուղի, ամրագրվում են նաև Սահմանադրության՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» բաժնում: Այս առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի վերևում հիշատակված՝ ՀՀ Սահմանադրության 2 գլխի 31 հոդվածը, որում, մասնավորապես, սահմանված է, որ «Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, քացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով»:

Դժվար չէ նկատել, որ սահմանադրական այս նորը կայուն նախադրյալներ է ստեղծում հանրապետությունում ձևավորվող նոր տնտեսական հարաբերությունների արմատավորման համար, այդ թվում.

առաջին՝ նախատեսված է սեփականության իրավունքի պաշտպանության ամուր սահմանադրական երաշխիք, համաձայն որի՝ սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

երկրորդ՝ առանձնահատուկ մտեցում է դրսևորվել պետության կողմից սեփականության իրավունքի նկատմամբ հնարավոր ոտնձգությունների կանխման և, մասնավորապես, մասնավոր սեփականության իրա-

վունքի պաշտպանության երաշխիքներ ստեղծելու հիմնահարցի առնչությամբ՝ ամրագրելով, որ սեփականության օտարումը՝ հասարակության և պետության կարիքների համար, կարող է կատարվել միայն. ա) բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, բ) օրենքով սահմանված կարգով, գ) նախնական համարժեք փոխհատուցմամբ:

երրորդ՝ առանձնահատուկ վերաբերմունք է որդեգրվել հողի՝ որպես կարևորագույն արտադրության միջոցի, սեփականության իրավունքի հարցում: Այդ իրավունքից չեն կարող օգտվել օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

չորրորդ՝ մտավոր սեփականության պաշտպանության խնդիրը բարձրացվել է սահմանադրական մակարդակի:

Սահմանադրությունը տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորման առանցքային հարցերից առանձնացնում է նաև քաղաքացու **աշխատանքի իրավունքի** հիմնահարցը: Դրա 32 հոդվածում ամրագրված է. «Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն:

Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:

Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք, որի իրականացման կարգը և սահմանափակումները սահմանվում են օրենքով:

Մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

Հարկադիր աշխատանքն արգելվում է»:

Այստեղ ոչ միայն շեշտվում է աշխատանքի ազատ ընտրության պարագան, այլև սահմանվում են սոցիալական պաշտպանվածության ուրուշակի երաշխիքներ, ի դեմս՝ աշխատելու դեպքում պետության կողմից սահմանված նվազագույն աշխատավարձի երաշխավորման, աշխատանքի պայմաններին առաջադրվող պահանջների, ինչպես նաև քաղաքացիների շահերի պաշտպանության իրավական հիմքերի:

Հայաստանի Հանրապետությունում, սահմանափակ արտագաղթի պայմաններում, առանձնահատուկ կարևորություն ունի **զբաղվածության խնդիրը**, ինչպես նաև ոչ աշխատանքային տարիքի երեխաների աշխա-

տանքին հատուկ վերաբերմունք դրսևորելու հարցը: Այդ առումով կարևոր է մինչև 16 տարեկանների աշխատանքային գործունեության նկատմամբ Սահմանադրության հատուկ մոտեցումը: Իսկ բնակչության զբաղվածության կարգավորման, աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրականացման, ինչպես նաև գործազրկության դեպքում՝ պետության կողմից տրվող սոցիալական պաշտպանության երաշխիքները սահմանված են 2005թ. հոկտեմբերի 24-ին ընդունված՝ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև 2004 թ. նոյեմբերի 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

Սահմանադրությունը հասարակության ժողովրդավարական ինքնուրույն համակարգ է ճանաչում **տեղական ինքնակառավարումը**, որն ամենից առաջ ենթադրում է սահմանադրական հատակ վերաբերմունք համայնքային սեփականության և դրա իրավունքի իրացման կարգի նկատմամբ: ՀՀ Սահմանադրության 105 հոդվածում ամրագրված է. «Համայնքի սեփականությունը կառավարելու և տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու և համայնքի պահանջներին բավարարմանն ուղղված այլ լիազորությունները համայնքն իրականացնում է որպես սեփական լիազորություններ...»:

Այստեղ ուշադրություն պետք է դարձնել ոչ միայն համայնքային սեփականության սահմանադրորեն ճանաչմանը, այլև այն բանին, որ տեղական ինքնակառավարման ինստիտուտների ձևավորման նպատակը հենց պայմանավորվում է այդ սեփականության տնօրինման և համայնքային նշանակության հարցեր լուծելու խնդրով: Սահմանադրությունը հատուկ կարևորում է տնտեսական հարաբերությունների առանձնահատուկ բնույթը համայնքային մակարդակում՝ որպես տեղական ինքնակառավարման սկզբունքի հատակ իրականացման կարևոր երաշխիք:

Սահմանադրականության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ տնտեսական հարաբերությունները կարգավորող սահմանադրական հիմնական սկզբունքներն իրագործելի են միայն երկրում ժողովրդավարական ազատությունների և դրանց հուսալի իրավական պաշտպանվածության պարագայում, ինչպես նաև՝ տնտեսական գործունեության արդյունավետությունն այդ իսկ գործունեության սոցիալական հետևանքների հետ խելամիտ գույություն պայմաններում:

§ 2. Սոցիալական հարաբերությունների սահմանադրական հիմունքները

Քաղաքացիական հասարակության համար առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում սոցիալական հարաբերությունները, որոնց ամբողջությունը ներկայացնում է հասարակության սոցիալական համակարգը: Յուրաքանչյուր հասարակությունում անհատը սոցիալական արժեք է, և նրա իրավունքներն ու ազատությունները դրսևորելի են միայն սոցիալական որոշակի երաշխիքների առկայության պայմաններում:

Ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ շատ այլ երկրների, սահմանադրություններ ճանաչում են մարդու բնական ու անօտարելի իրավունքներն ու ազատությունները՝ **որպես բարձրագույն արժեք**, որոնք պետության ու ժողովրդի կողմից իշխանության իրականացման չափորոշիչներ են, և ամրագրում են մարդու արժանապատվության ճանաչումն ու դրա անօտարելիությունը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (10.12.1948թ.) նախաբանում ասվում է. «... մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվությունը և հավասար ու անօտարելի իրավունքներն ազատության, արդարության ու աշխարհի խաղաղության հիմքն են, ...անհրաժեշտ է օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները »:

Նման մոտեցում է արտահայտված նաև ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, որի նախաբանում նույնպես փաստվում է հավատարմությունը մարդու հիմնական իրավունքների, նրա արժանապատվության հանդեպ:

Կարելի է հատուկ առանձնացնել նաև Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (4.11.1950թ.), որի նախաբանում ոչ միայն ամրագրված են վերոհիշյալ դրույթները, այլև շեշտադրված են այնպիսի հասկացություններ ու ձևակերպումներ, ինչպիսիք են՝ «մարդու իրավունքների համընդհանուր և արդյունավետ ճանաչում», «ազատությունների հարգում և իրավունքի գերակայություն» և այլն: Հատկապես ուշադրության է արժանի վերջին ձևակերպումը: Այն օգտագործվում է կոնվենցիայի նախաբանում՝ որպես եվրոպական երկրների քաղաքական ավանդույթների ու իրողելների, միասնական արժեքնկալման արտահայտություն:

Իրենց հիմքում մեծ ընդհանրություն ունեցող մեթոդաբանական այս մոտեցումները ելակետային նշանակություն ունեն հասարակության սոցիալական հարաբերությունների բնույթի ճանաչման և սահմանադրորեն

ամրագրման հարցում: Բանն այն է, որ **երբ պետությունն իրեն հռչակում է սոցիալական, ապա ստանձնում է հստակ պատասխանատվություն հասարակության սոցիալական հարաբերությունների իրավական կարգավորման հուսալի երաշխիքներ սպահովելու հարցում:**

Ինչպես նշվել է, հասարակության սոցիալական համակարգը **սոցիալական հարաբերությունների** մի ամբողջություն է: Գործնականում սոցիալական հարաբերությունները դիտարկվում են տարբեր հարթություններում: Մի դեպքում այն ներկայացվում է որպես **մարդկանց սպասարկմանն առնչվող որոշակի ոլորտ** (կրթություն, առողջապահություն, գիտություն, սպորտ, մշակույթ և այլն). մյուս դեպքում նկատի է առնվում որպես **հասարակական խումբ կամ շերտ** (այդ թվում՝ առանձնացնելով սոցիալական տարբեր խմբերի ու նաև ազգամիջյան հարաբերությունները, ընտանիք-հասարակություն, անհատ-շրջակա միջավայր փոխհարաբերությունները և այլն), երրորդ դեպքում ընկալվում է որպես **մարդկային համահավաք հանրության** (միավորված ընդհանուր շահերով, արժեհամակարգերով, կեցության կանոններով, ընդհանուր նպատակներով և այլն) **սոցիալական հիմնական բնութագրիչներ:**

Սոցիալական հարաբերությունները ներառում են մարդկանց համակեցության մի այնպիսի համակարգ, որտեղ առկա են փոխհամաձայնեցված մարդկային հարաբերություններ, **որտեղ փոխադարձ պարտավորություն է ստանձնվում օգնել կարիքավորին, ներագրել հասարակական բարիքների վերաբաշխման վրա՝ արդարության այնպիսի սկզբունքներից ելնելով, որպեսզի յուրաքանչյուրի համար արժանապատիվ ապրելու երաշխիքներ ստեղծվեն:** Սա հասարակական համակեցության ավելի բարձր որակ է, ուր պետության **կառավարման ամբողջ համակարգը խարսխված է հասարակական շահերի ներդաշնակման սկզբունքի վրա:**

Երբ երկրում առկա է քաղաքացիական հասարակություն, ուրեմն այն իր անդամների ազատ ինքնադրսեորման ներդաշնակ համակարգ պետք է ունենա: Իսկ վերջինս անհնարին է առանց **պետության կողմից հասարակության անդամների երաշխավորված սոցիալական պաշտպանվածության սպահովման:** Մի կողմից, հասարակության մեջ անհատը չի կարող լինել մեկուսացված: Նրա գոյության բնականոն վիճակը փոխկապվածությունն է. ու պատասխանատվությունը հասարակության ներկայի ու ապագայի հանդեպ: Մյուս կողմից, **պետության համար հստակեցված պետք է լինեն հասարակության անդամի նկատմամբ ոչ միայն վաղվա, այլև՝ այսօրվա պարտավորությունները:** Բոլոր պարագաներում ելակետն այն է, որ **սոցիալական հարաբերությունների կենտրոնում մարդն է՝ պետականորեն ճանաչված, սահմանադրորեն ամրագր-**

ված, պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ սպահանջող իր իրավունքներով ու ազատություններով, ինչպես նաև հասարակության հանդեպ ունեցած իր պարտավորություններով: Ուստի սոցիալական հարաբերությունների **սահմանադրական հիմունքներն** ամենից առաջ ենթադրում են.

- ա) մարդկանց իրավահավասարության երաշխավորում,
- բ) նրանց ամուսնության, ընտանիքի իրավունքների պաշտպանության, երեխաների դաստիարակության կապակցությամբ հասարակական փոխադարձ պարտավորությունների ստանձնում,
- գ) քաղաքացիների սոցիալական պաշտպանվածության և բարեկեցության սահմանադրական երաշխիքների սպահովում, այդ թվում՝ սոցիալական պաշտպանվածության պետական և ոչ պետական անհրաժեշտ ինստիտուտների համակարգի ստեղծման ու դրա հստակ աշխատանքի ապահովման սկզբունքների սահմանում,
- դ) կենսամվազագույնի երաշխավորում.

ե) անհատի ազատ զարգացման, դավանանքի ու նախասիրությունների անկաշկանդ իրացման, ինչպես նաև բանական ինքնադրսեորման երաշխիքների ապահովում.

զ) անհատի և շրջակա միջավայրի բնականոն փոխազդեցության սկզբունքների սահմանում և դրանց ապահովում:

ՀՀ Սահմանադրությունը, հատուկ կարևորություն տալով այս ոլորտում պետության դերին, 48 հոդվածում ամրագրել է. «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրները», որոնք կոչված են երաշխավորելու սոցիալ-մշակութային ոլորտում մարդկանց սահմանադրական իրավունքների իրացումը:

Իրավական, ժողովրդավարական և, առավել ևս՝ սոցիալական պետությունը չի կարող բացառել **իր անդամների հավասարության սկզբունքը.** սակայն այն ոչ թե պետք է բացարձականացվի, այլ դիտվի որպես հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունք. **որի իրացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը պետության պարտավորությունն է:** Այս սկզբունքը ենթադրում է նաև, որ պետության պարտքն է երաշխավորել, որպեսզի հասարակության առանձին անդամներ, սոցիալական կամ այլ խմբեր կողմնակալ վերաբերմունքի չարժանանան: Փաստորեն, սոցիալական պետությունը. մի կողմից՝ ապահովելով սոցիալական պաշտպանվածության որոշակի միջավայր, մյուս կողմից՝ անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի, որպեսզի հավասար իրավունքներ ունեցող ամեն մի անհատ իր բանական կարողություններին ու օրինական

հնարավորություններին համապատասխան ինքնադրսևորման ասպարեզ ունենա: **Հենց դա է սպառնալից ազատության և հավասարության ներդաշնակումը:**

Սոցիալական պետության կայացումն անընդհատ և մշտական գործընթաց է: Միայն է այն մտաեցումը, թե պետությունը կարող է սոցիալական համարվել միայն այն դեպքում, երբ արդեն ստեղծել է հզոր տնտեսական նախադրյալներ և կարող է ժամանակ գտնել մտածելու մարդկանց սոցիալական կարիքների մասին: Մարդկանց պահանջումներին և դրանց բավարարման հնարավորությունների արդարացի ներդաշնակման խնդիրը գոյություն ունի յուրաքանչյուր պահ, և այն դիմամիկ երևույթ է: Եվրոպական երկրների փորձը վկայում է, որ **պետության սոցիալական գործառույթները հատկապես ընդգծվում և սահմանադրորեն ամրագրվում է հասարակական կյանքի արմատական վերափոխումների ժամանակ:** Հետևաբար, անցման շրջանում գտնվող պետության հիմնական խնդիրն է շուկայական հարաբերություններին անցնելու թափը հավասարակշռել **սոցիալական պաշտպանվածության հուսալի համակարգով:** Հակառակ պարագայում կաղճատվի, ընդհուպ՝ կվտանգվի տնտեսական ամեն մի բարեփոխում: Բանն այն է, որ հատկապես անցման շրջանին բնորոշ այնպիսի վիճակներ, ինչպիսիք են **խաթարված վերարտադրական համակարգը, անորոշության գործոնը, անվստահությունն ապագայի հանդեպ, աղճատված հասարակական գիտակցությունը, փրուզված արժեհամակարգերը և այլն,** թելադրում են անհատի ու հասարակության փոխհարաբերությունների նոր սկզբունքների ակտիվ ու համակարգված ձևավորում: Առանց դրա անհնարին է հաղթահարել մոտեցումների ծայրահեղ բևեռացումն ու անհամորժոհական հակադրությունը, մեղմել հասարակական լարվածությունը, ապահովել ներդաշնակ զարգացում: Ավելին, մեծանում են ամբողջ հասարակությանը սոցիալական ծայրաստիճան լարված վիճակի մեջ գցելու և տևականորեն նման իրավիճակում պահելու քաղաքական և այլ շարժառիթները, որի բանիմաց հաղթահարման դեղատոմսը չգտնելու դեպքում անխուսափելի են քաղաքական առճակատումների և սոցիալական անհանդուրժողականության ավերիչ հետևանքները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սոցիալական հարաբերությունների կանոնակարգման ելակետ է սահմանել, առաջին հերթին, մեր երկիրը հռչակելով սոցիալական պետություն (հոդվ.1)՝ այդ կապակցությամբ, միաժամանակ, սահմանելով սոցիալական հարաբերությունների հստակ կանոնակարգման մեխանիզմներ: Ամենից առաջ,

ամրագրված է, որ քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները (հոդվ.14.1):

Մեր երկիրը մշտապես աչքի է ընկել նաև **ընդգծված ինտերնացիոնալիզմով,** տարբեր ազգությունների ներկայացուցիչների հետ ներդաշնակ փոխհարաբերությունների բարենպաստ միջավայր ստեղծելու ձգտումով: Սոցիալական այս կարևոր հարցի սահմանադրական մոտեցումն այն է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիներին վերապահվում է նաև իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման իրավունք (հոդվ. 41):

Մեր երկրի Հիմնական օրենքում ճանաչվում է յուրաքանչյուրի կյանքի (հոդվ. 15), ինչպես նաև ազատության ու անձեռնմխելիության (հոդվ. 16), ընտանեկան ինքնուրույն և ապօրինի միջամտություններից պաշտպանված միջավայրի իրավունքը (հոդվ.23): Քաղաքացին օժտված է ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու, խոսքի ու մտքի, ստեղծագործելու ազատության, այլ անձանց հետ միավորումներ կազմելու, ինչպես նաև հասարակական ինքնադրսևորման բոլոր համրաճանաչ հնարավորություններով ապահովված լինելու իրավունքով: Այս իրավունքները պահանջում են իրականացման հուսալի երաշխիքներ՝ սահմանադրական նորմերի ու օրենքների պահանջների հստակ ու արդարամիտ կիրառումն ապահովելու առումով:

Կարգավորելով **տնտեսական հարաբերությունների սոցիալական անընթացությունները,** Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ինչպես նշվեց, միաժամանակ ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք (հոդվ.33), որ ճանաչվում է յուրաքանչյուր անձի՝ իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բնրելավման իրավունքը: Պետության պարտավորությունն է համարվում անհրաժեշտ միջոցների ձեռնարկումն սպառողների շահերի պաշտպանության համար (հոդվ.31.1): Ընդհանրապես պետությունը պարտավոր է մարդկանց սոցիալական իրավունքների իրացման հավասար ու արդարամիտ նախադրյալներ ստեղծել:

Սոցիալական հարաբերությունների մեջ առանձնահատուկ տեղ ունի **ընտանիքը:** ՀՀ Սահմանադրության 35 հոդվածի համաձայն ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է: Ընտանիքը, մայրութ-

յունը և մանկությունը գտնվում են հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո: Կանայք և տղամարդիկ անուսանալիս, անուսնության ընթացքում, անուսնալուծվելիս օգտվում են հավասար իրավունքներից:

Հայաստանի Հանրապետությունում ոչ միայն իրավական առումով, այլև ավանդաբար ընտանիքը հատուկ դեր ու նշանակություն ունի: Այն ոչ միայն ազգային ավանդույթների, սովորույթների, անհատի քաղաքացիական յուրատիպ ինքնադաստիարակման կրող է, այլև հասարակության առավել կայուն սոցիալական ենթահամակարգերից է:

Քաղաքացիական հասարակությունը որպես այդպիսին կոչվելու իրավունք է ձեռք բերում նաև այն դեպքում, երբ առկա է **սոցիալական պաշտպանվածության հուսալի համակարգ**: Մեր երկրի Հիմնական օրենքը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք (հոդվ. 37), բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք (հոդվ. 38): Իր հերթին, 1996թ. մարտի 4-ին ընդունված՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները, առողջապահական պետական նպատակային ծրագրերի մշակման կարգը:

Սոցիալական այս իրավունքների իրացումը համեմատաբար ավելի մեծ չափով է պայմանավորված պետության տնտեսական հնարավորություններով: Սակայն էական է նաև, թե այդ խնդիրներն ինչպիսի հետևողականությամբ են լուծվում, և **թույլի ու իր կամքից անկախ կարիքավոր դարձածի հանդեպ ունեցած բարոյական պարտքը տվյալ հասարակության մեջ որքանով է գիտակցված ու հարգված**: Իսկ վերջինս ենթադրում է անհրաժեշտ սահմանադրական երաշխիքների ամրագրում: Այս առումով ՀՀ Սահմանադրության 36 հոդվածնը ամրագրում է, որ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում: Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների մասին:

§ 3. Հոգևոր-մշակութային հարաբերությունների սահմանադրական հիմունքները

Հասարակական հարաբերությունների այս ոլորտը բացառիկ կարևոր դեր ունի ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող երկրների համար: Այդ հարաբերությունների սահմանադրական կանոնակարգման **առանձնահատկությունը** կայանում է նրանում, որ առավել մեծ ուշադրություն է պահանջում **համամարդկային արժեքների և ազգային առանձնահատկությունների ներդաշնակման խնդիրը**: Յուրաքանչյուր երկիր պարտավոր է ապահովել սերունդների ներդաշնակ հաջորդայնությունը, ազգային պատմական ու մշակութային արժեքներին ազատ հաղորդակցվելը, հասարակության անդամների հոգևոր զարգացման ու ստեղծագործական ազատության դրսևորման անհրաժեշտ երաշխիքների ստեղծումը:

Կարևոր **առանձնահատկություն է նաև** այն, որ խոսքը վերաբերում է **մարդու ներաշխարհին**, նրա ազատ դրսևորմանը, անկաշկանդ ինքնաարտահայտմանը: Այդ է պատճառը, որ սահմանադրորեն այս ոլորտը համեմատաբար **ավելի քիչ է կանոնակարգվում**. սահմանվում են միայն հիմնական սկզբունքները՝ նվազագույնի հասցնելով մարդու ստեղծագործական ազատությունների հնարավոր սահմանափակումները:

Այս հարաբերությունները հատուկ կարևորություն ունեն մեր ժողովրդի համար ոչ միայն այն առումով, որ **հայերը մեծ հոգևոր-մշակութային ժառանգություն ունեն**, այլև այն պատճառով, որ վերահաստատված անկախ պետականությունն ազգային զարթոնքի նոր հնարավորություններ է ստեղծում: Պակաս կարևոր չէ նաև **մեր ազգի աշխարհաստիճան վիճակը**. երբ ազգային արժեքները կարող են ակտիվ վերարտադրվել ոչ միայն Հայաստանում:

Յուրաքանչյուր ազգի մշակույթը նրա իմաստավորված գոյությունն է ժամանակի մեջ: Հոգևոր-մշակութային արժեքներն **ազգային ինքնաճանաչման գլխավոր չափորոշիչներն են**, և դրանց նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը, ամենից առաջ, արտահայտված է ՀՀ Սահմանադրության նախաբանում. «Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները... ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»:

Այստեղ ներդաշնակված են ոչ միայն պետականության կեդրոնական հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, սերունդների ազատությունն ապահովելու համար ինքնիշխան պետության վերականգնման ցանկությունը և քաղաքացիական հասարակության կայացման երազանքը, այլև ներկյուսված են ազգային իդեոլոգիան ու համամարդկային արժեքները: Նման մոտեցումը ելակետային բացառիկ կարևոր նշանակություն ունի սահմանադրական նպատակների, սկզբունքների ու կոնկրետ նորմերի հետագա հստակ ձևակերպման ու ամրագրման համար:

ՀՀ Ազգային ժողովը 2002թ. նոյեմբերի 20-ին ընդունեց օրենք «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին»: Համաձայն այդ օրենքի (հոդվ.4)՝ պետության մշակութային քաղաքականության նպատակներ հռչակվեցին.

1. հասարակության կողմից մշակույթի՝ որպես զարգացման միջոցի գիտակցումը,
2. նոր արժեքների և նոր գաղափարների որոնումը,
3. հասարակության ստեղծագործական ներուժի վերաբարձումը և զարգացման համար պայմանների ստեղծումը,
4. քաղաքացիական հասարակության ձևավորումը:

Այդ օրենքով խնդիր դրվեց **ապահովել և պաշտպանել** ՀՀ քաղաքացիների՝ խոսքի, ստեղծագործության ազատության, հասարակության մշակութային կյանքին մասնակցելու սահմանադրական իրավունքը, ինչպես նաև կարգավորել մշակութային գործունեության սուբյեկտների միջև առաջացող հարաբերությունները, ստեղծել ՀՀ մշակութային հարստության պահպանման, տարածման և զարգացման համար իրավական երաշխիքներ:

Սահմանադրության 11 հոդվածը սահմանադրական կարգի հիմունքներից մեկն է ընդունում այն, որ պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո: Ավելին, ամրագրվում է, որ Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը: Դարձյալ, ելնելով մեր ազգային առանձնահատկություններից, պետությունը սահմանադրական պարտավորություն է ստանձնում ոչ միայն հոգ տանել մշակութային արժեքների պաշտպանության հանդեպ, այլև աջակցել հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը նաև **մեր պետության սահմաններից դուրս**՝ հարգելով միջազգային իրավունքի նորմերը:

Սահմանադրական հիմնական սկզբունքներից ելնելով՝ օրենսդրությամբ, մասնավորապես, 1998թ. նոյեմբերի 11-ին ընդունված՝ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սահմանվում են պատմության ու մշակույթի հուշարձանների պահպանության ու օգտագործման բնագավառի իրավական հիմքերը, ինչպես նաև այս բնագավառում պետական քաղաքականության հիմնադրույթները, կառավարման տարբեր մարմինների իրավասությունը, դրանց իրականացման կարգը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը լուրջ կարևորություն է տալիս մարդու **հոգևոր-մշակութային իրավունքների պաշտպանությանը** և դրանց իրականացման երաշխիքների ապահովմանը: Մարդու և քաղաքացու ընդհանուր իրավունքներից ու ազատություններից զատ, Սահմանադրության 39 հոդվածը սահմանում է մարդու **կրթության իրավունքը**: Ընդ որում, մեր երկրի Հիմնական օրենքը նախատեսում է, որ միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Բացի դրանից, յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար քարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք: **Կրթությունը** կարևորագույն մտադրյալ է հասարակության տնտեսական, սոցիալական և հոգևոր առաջընթացի, յուրաքանչյուր անհատի լիարժեք կենսագործունեության համար: Դա առավել ևս վերաբերում է զարգացման սահմանափակ բնական հնարավորություններ ունեցող Հայաստանին, որի համալիր վերելքի գլխավոր ներուժը եղել ու շարունակում է մնալ մարդը, նրա մտավոր ներուժը:

Սահմանադրությունը, ամրագրելով կրթության իրավունքը, միաժամանակ **բացառում է պետական մեծաշնորհը կրթության բնագավառում**: Դրա շնորհիվ էր, որ վերջին տարիներին ստեղծվեցին և գործում են մեծ թվով մասնավոր կրթօջախներ, այդ թվում՝ բարձրագույն ուսումնական հաստատություններ: Գլխավոր խնդիրն այն է, որ մրցակցության միջոցով ապահովվի կրթության ավելի բարձր որակ և մասնագիտական կարների պահանջի ու դրանց պատրաստման բնական ներդաշնակություն: 1999թ. ապրիլի 14-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Կրթության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեցին կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, ինչպես նաև կրթության համակարգի կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը: Սույն օրենքով խնդիր դրվեց ապահովել և պաշտպանել կրթության բնագավառում քաղաքացիների՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները, սահմանել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման

մարմինների իրավասությունն այդ ոլորտում, ստեղծել անհրաժեշտ իրավական երաշխիքներ կրթության համակարգի գործառնության ու զարգացման համար: Առաջնորդվելով կրթության ոլորտի կառավարումն ապակենտրոնացնելու և ինքնակառավարումն ամրապնդելու սկզբունքով, պետությունը, միաժամանակ, պահպանում է կրթական հիմնական չափորոշիչների սահմանման գործառույթը, իսկ ոչ պետական կրթական հաստատությունների համար սահմանվել է արտոնագրման որոշակի կարգ:

Սահմանադրության 40 հոդվածով սահմանվում է, որ **յուրաքանչյուր ոք ունի զրակյան, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք**: Հատուկ ուշադրության է արժանի այն, որ մեծ կարևորություն է տրվում մտավոր սեփականության պաշտպանությանը (հոդվ. 31), նախատեսելով այն իրականացնել օրենքի միջոցով: Սահմանված են նաև պետական կառավարման մարմինների կոմկոնտ պարտականություններն այս իրավունքների երաշխավորված պաշտպանության հարցում: Մասնավորապես, Սահմանադրության 89 հոդվածով (5-րդ կետ) նախատեսվում է, որ ՀՀ կառավարությունն ապահովում է պետական քաղաքականության իրականացումը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում: Հայեցակարգային առումով էականն այն է, որ ստեղծագործական ազատությունը սահմանադրական երաշխիքներ է ստանում և **քաջատուն է պետական իշխանության ինստիտուտների վարչական միջամտությունը ստեղծագործական գործունեությանը**: Այս երաշխիքներն ամրապնդվում են նաև օրենքներով ու Հայաստանի Հանրապետության մի շարք միջազգային պարտավորություններով: Մասնավորապես, 2006թ. հունիսի 15-ին ընդունված՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով նպատակ է դրվել կարգավորել.

ա) զրականության, գիտության, արվեստի բնագավառների ստեղծագործությունների նկատմամբ դրանց հեղինակների իրավունքների (այսուհետ՝ հեղինակային իրավունք) հետ կապված հարաբերությունները:

բ) կատարողների՝ իրենց կատարումների, հնչյունագրեր արտադրողների՝ իրենց պատրաստած հնչյունագրերի, ֆիլմ արտադրողների՝ իրենց արտադրած ֆիլմերի, հեռարձակող կազմակերպությունների՝ իրենց հաղորդումների, հրատարակիչների՝ իրենց հրատարակությունների հրատարակչական ձևավորումների, տվյալների բազաներ պատրաստողների՝ իրենց պատրաստած տվյալների բազաների նկատմամբ իրավունքների (հարակից իրավունքներ) հետ կապված հարաբերությունները:

գ) գույքային իրավունքների կռիվներով հիմունքներով կառավարումը:

Օրենքով պահպանվում են գիտության, գրականության և արվեստի բնագավառներում ինչպես հրապարակված, այնպես էլ չհրապարակված երկերի հեղինակների հեղինակային իրավունքները՝ անկախ այդ երկերի նշանակությունից, արժանիքներից, բովանդակությունից, նպատակից, ծավալից, ինչպես նաև արտահայտման եղանակից:

Հոգևոր-մշակութային հարաբերությունների կարևոր ոլորտ է **գիտությունը**: Հայաստանի Հանրապետության համար **գիտությունն** առանձնահատուկ կարևորություն ունեցող ոլորտ է՝ որպես մեր տնտեսական առաջընթացի գլխավոր ներուժ: ՀՀ կառավարության որոշմամբ դեռևս 1992 թվականից գիտության բնագավառի թեմատիկ ֆինանսավորման կարգի արմատավորումն այս բնագավառում դրական տեղաշարժ ապահովող առաջին արմատական քայլն էր: ՀՀ Ազգային ժողովը 2000թ. դեկտեմբերի 5-ին ընդունեց օրենք «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին»: Սահմանվեց, որ գիտությունը, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն, գտնվում է պետության հովանավորության ներքո: Այդ օրենքով կարգավորվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև գիտական արդյունքներն օգտագործողների հարաբերությունները, սահմանվում են գիտության և գիտատեխնիկական գործունեության բնագավառում պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման սկզբունքները:

Յուրաքանչյուր երկրի հոգևոր-մշակութային հարաբերությունների համակարգում առանձնահատուկ տեղ և դեր ունի **եկեղեցին**: Կրոնը և կրոնական կազմակերպությունները դասեր շարունակ տիրապետող դիրք են ունեցել բոլոր ժողովուրդների հասարակական կյանքում, մեծապես նպաստել են ժողովուրդների հոգևոր ու բարոյական դաստիարակությանը, ազգային արժեհամակարգերի ձևավորմանը, ինչպես նաև էական դերակատարություն են ունեցել հասարակական հարաբերությունների կարգավորման գործում: Այնքան է, որ բոլոր պետությունները, առանց բացառության, մեծ ուշադրություն են դարձնում եկեղեցու հետ հարաբերությունների բնականոն զարգացմանը և, որպես կանոն, այդ հարաբերությունները կարգավորվում են, առաջին հերթին, սահմանադրական մակարդակով:

Սահմանադրական շինարարության պրակտիկայում պետության և եկեղեցու փոխհարաբերությունները սովորաբար բնորոշվում են «աշխարհիկ պետություն» և «պետական կրոն» հասկացությունների միջո-

ցով: Աշխարհիկ է համարվում այն պետությունը, որտեղ պետությունը և եկեղեցին անջատված են միմյանցից, չեն կարող միջամտել միմյանց գործերին: Դրա հետ մեկտեղ, պետությունը պարտավոր է բոլոր կրոնական ուսմունքների և կրոնական կազմակերպությունների համար, օրենքով սահմանված կարգով, ապահովել հավասար պայմաններ: Աշխարհիկ պետությունը ենթադրում է նաև, որ պետական կրթությունն աշխարհիկ է (դպրոցն անջատված է եկեղեցուց):

Պետք է նաև նշել, որ որոշ պետություններում, այդ թվում ժողովրդավարական, սահմանադրությունների մակարդակով ամրագրված է նաև այդ պետությունների ոչ-աշխարհիկ լինելը, այսինքն՝ այդ պետություններում գործում է պետական (ազգային) կամ պաշտոնական (երբեմն՝ «տիրապետող կրոն») եկեղեցու ինստիտուտը, և պետությունը տարբեր չափերով հովանավորում ու աջակցում է այդ կրոնական կազմակերպություններին:

Եկեղեցու նկատմամբ այսպիսի պետական վերաբերմունքն առաջին հերթին բնորոշ է **բացարձակ և սահմանադրական միապետություններին**, որոնց պետության գլուխը՝ միապետը, որպես կանոն, միաժամանակ նաև հոգևոր առաջնորդն է: Սակայն նման դիրքորոշում նկատելի է նաև **հանրապետական կառավարում** ունեցող պետություններում: Օրինակ, Հունաստանում, սահմանադրորեն չարձանագրելով պետական (պաշտոնական) եկեղեցու հանգամանքը, Քրիստոսի արևելյան-ուղղափառ եկեղեցու դավանանքը հայտարարվում է տիրապետող կրոն, և եկեղեցին կառավարվում է Սուրբ Մինողի կողմից (հոդվ.3.1):

Ինչ վերաբերում է **խլամ** դավանող ժողովուրդներին, ապա նրանց մի մասի երկրներում ուղղակիորեն հռչակված է իսլամական հանրապետություն (Իրան, Պակիստան և այլն), իսկ մի մասն էլ իսլամը համարում է պետական (պաշտոնական) կրոն (Ալժիր, Թունիս, Եգիպտոս և այլն):

Ժողովրդավարական պետությունների սահմանադրությունների գերակշիռ մասը, հռչակելով ցանկացած կրոն դավանելու, կրոնական համայնքներում մարդկանց միավորվելու իրավունքները, միաժամանակ ամրագրում է, որ այդ իրավունքների իրագործումը չպետք է փտանգի պետության անվտանգությունը, խաթարի հասարակական կարգուկանոնն ու բարոյականությունը, վնաս պատճառի մարդկանց առողջությանը, մյուս անձանց իրավունքների ու ազատությունների իրականացմանը, հանգեցնի կրոնական մոլեռանդության: Բացի դրանից, կրոնական հանդուսները չեն կարող լինել սահմանադրական ու քաղաքացիական պարտականություններից հրաժարվելու հիմք: Նման մոտեցումն ամբողջովին համահունչ է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի և

մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջազգային մյուս փաստաթղթերի դրույթներին:

Մեր երկրի Հիմնական օրենքում Հայ եկեղեցին և նրա վարդապետությանն անդրադարձ է կատարվում 8.1 հոդվածում, որում ամրագրված է. «Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց աշխարհական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով»:

ՀՀ Ազգային ժողովը 2007թ. փետրվարի 22-ին օրենք ընդունեց «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին», որի 2-րդ հոդվածով սահմանվեց, որ. «1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես ազգային եկեղեցի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնով, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունների նվիրապետական աթոռներով, և նրա բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

2. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ինքնակառավարումն իր նվիրապետության սահմաններում»:

ՀՀ Սահմանադրությունը, կառուցված լինելով ընդհանուր ժողովրդավարական սկզբունքների և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային նորմերի վրա, ամրագրում է խղճի և դավանանքի ազատության իրավունքը (հոդվ. 26): Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

**§ 1. Հայաստանի Հանրապետության քաղաքական
համակարգի հասկացությունը և տարրերը**

Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքի «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխում ամրագրված տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային հարաբերությունների հիմունքների հետ միասին իրենց կարևորությամբ առանձնանում են Հայաստանի քաղաքական համակարգի հիմունքները:

Գրականության մեջ տրված են «քաղաքական համակարգ» հասկացության տարբեր բնորոշումներ: Սակայն առավել տարածված է այն մոտեցումը, որ քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգը քաղաքական կազմակերպությունների ամբողջությունն է, որոնք իրավունքի (օրենքի) շրջանակներում և պետության միջոցով իրականացնում են քաղաքական իշխանությունը կամ պայքարում են դրա իրականացման համար:

Այդ հարաբերությունների միջոցով է հասարակության մեջ իրականացվում քաղաքական իշխանությունը, որի **խտացված արտահայտությունն է հանդիսանում պետական իշխանությունը**: Այդ պատճառով էլ պետական իշխանության իրականացմանը մասնակցող ինստիտուտներն ընդունված է անվանել **քաղաքական համակարգի տարրեր**: Այդպիսի տարրեր են հանդիսանում **պետությունը, քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները**: Վերջին տարիներին քաղաքական համակարգի տարրերի թվին են դասվում նաև **գանգվածային լրատվության միջոցները**: Հենց այդ ինստիտուտներն են ուղղակի կամ միջնորդավորված ձևով մասնակցում պետական իշխանության իրականացմանը:

Քաղաքական համակարգի ձևավորման և գործառնության կառուցակարգերը, դրանց հիմնական օրինաչափություններն ուսումնասիրվում են **պետության և իրավունքի տեսության առարկայի** կողմից: «Քաղաքական համակարգ» հասկացությունը սահմանադրական իրավունքի ոլորտ առաջին անգամ ներմուծվել է **Բուլղարիայի 1971թ.** Սահմանադրության միջոցով, որն ամրագրում էր սոցիալիստական քաղաքական համակարգի որոշ սկզբունքներ: Հետագայում այդ հասկացությունն օգտագործվել է

ԽՍՀՄ 1977թ., Նիկարագուայի 1987թ., Սալվադորի 1983թ. և մի շարք այլ երկրների սահմանադրություններում: Մասնավորապես, Հայկական ԽՍՀ 1978թ. Սահմանադրության **հենց առաջին գլուխը** նվիրված էր քաղաքական համակարգին: Դրանում ուղղակի ամրագրված էր, որ կոմունիստական կուսակցությունը հանդիսանում է Հայկական ԽՍՀ քաղաքական համակարգի միջուկը, նրա ղեկավար և ուղղություն տվող ուժը (հոդվ. 6):

Ի տարբերություն Հայկական ԽՍՀ 1978թ. Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության 1995 թ. Սահմանադրության մեջ «քաղաքական համակարգ» հասկացությունը **չի օգտագործվում**: Միևնույն ժամանակ, դրանում ամրագրված են մի շարք դրույթներ, որոնց նպատակն է մարդկանց քաղաքական ակտիվության խթանման, նրանց իրավունքների և ազատությունների իրագործումը երաշխավորելու միջոցով նպաստել առավել արդյունավետ և դինամիկ գործող քաղաքական համակարգի ձևավորմանը:

Այսպես, Սահմանադրությամբ ամրագրված են քաղաքական համակարգի տարբեր օղակների (տարրերի) կազմավորման և գործունեության սահմանադրական հիմունքները: Դրանք, մի դեպքում, հանդես են գալիս որպես սահմանադրական կարգի հիմունքներ (7 հոդվ.), մեկ այլ դեպքում՝ որպես քաղաքացիների հիմնական իրավունք կամ ազատություն (28 հոդվ.): Դրանով իսկ սահմանադրությունը էական ազդեցություն է գործում հասարակության քաղաքական համակարգի ձևավորման վրա, միևնույն ժամանակ, մանրամասն չկանխորոշելով նրա բոլոր հատկանիշներն ու գծերը:

Գրականության մեջ գոյություն ունեն քաղաքական համակարգերի **տարբեր դասակարգումներ**: Առավել տարածված և գործնական առումով ավելի կիրառական է դրանց դասակարգումը **ըստ քաղաքական ռեժիմների**՝ ժողովրդավարական, ավտորիտար և տոտալիտար:

Ավտորիտար և տոտալիտար քաղաքական ռեժիմների պայմաններում ընդունված և գործող սահմանադրություններում համապատասխան քաղաքական համակարգերը հաճախ ներկայացվում են որպես ժողովրդավարական: Ուստի կոնկրետ քաղաքական համակարգի ուսումնասիրության և գնահատման ընթացքում չի կարելի ամբողջովին հիմնվել նրա ինքնաբերական գրանցման վրա: Այդ առնչությամբ գործնական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչ էական հատկանիշներով է բնութագրվում **ժողովրդավարական քաղաքական համակարգը** և Հայաստանի Հանրապետության ներկայիս քաղաքական համակարգը նշված խմբերից որին է համապատասխանում:

ժողովրդավարական քաղաքական համակարգի հիմնական հատկանիշներն են՝ **բազմակարծությունը՝ գաղափարախոսության** ոլորտում,

և **բազմազանությունը** (սլյուրալիզմը)՝ **քաղաքական** ոլորտում: Տոտալիտար համակարգերը հիմնված են լինում քաղաքական և գաղափարախոսական միասնականության վրա:

1. Բազմակարծությունը մարդկանց հնարավորություն է տալիս ազատորեն արտահայտել իրենց կարծիքները և այդ կարծիքին համապատասխան գործել քաղաքական ոլորտում: Դրա հետևանքով էլ ձևավորվում է ժողովրդավարական քաղաքական համակարգ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ **ուղղակիորեն ամրագրված է բազմակարծության սկզբունքը**: Սահմանադրությունը նաև ուղղակիորեն **չի արգելում** որևէ մեկ գաղափարախոսության հռչակումը որպես պետական կամ պարտադիր գաղափարախոսություն: Միևնույն ժամանակ, Սահմանադրության մի շարք հոդվածներում ամրագրված նորմերը նպատակ ունեն **բացառել պարտադիր գաղափարախոսության** հաստատումը և ապահովել բազմակարծությունը: Այսպես, Սահմանադրության 26 հոդվածում ամրագրված է յուրաքանչյուր մարդու մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, իսկ 27 հոդվածում՝ իր կարծիքը ազատ արտահայտելու իրավունքը: Բազմակարծության ձևավորման համար մեծ նշանակություն ունի նաև Սահմանադրության 27 հոդվածի մեկ այլ դրույթ, որն արգելում է մարդուն հարկադրել՝ հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն:

Բացի դրանից, բազմակարծության ապահովման նպատակով Սահմանադրությունը կարծիք ունենալու և այն պնդելու իրավունքը ամրագրում է ոչ միայն որպես անհատական, այլ նաև որպես կոլեկտիվ իրավունք: Այսպես, համաձայն Սահմանադրության 7 հոդվածի, կուսակցությունները նպաստում են ժողովրդի, հետևաբար, և մարդկանց առանձին խմբերի, սոցիալական խավերի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Բազմակարծության ապահովման համար այս դրույթի նշանակությունն ակնհայտ է դառնում, եթե հաշվի առնենք, որ քաղաքական կամքը հիմնվում է որոշակի գաղափարախոսության վրա, ինչպես նաև այն՝ որ կայացած քաղաքական համակարգում տարբեր կուսակցությունների գաղափարախոսությունը չի կարող լինել նույնը:

Բազմակարծության ճանաչումը նշանակում է նաև, որ յուրաքանչյուր մարդ, քաղաքական կուսակցություն և հասարակական կազմակերպություն իրավունք ունի ազատորեն մշակել, դավանել և քարոզել հասարակության ցանկալի և անհրաժեշտ տնտեսական, սոցիալական և քաղաքական համակարգերի մասին գաղափարներ, տեսություններ, հայեցակարգեր:

2. Գաղափարախոսական բազմակարծության հետ սերտորեն կապված է **քաղաքական բազմազանությունը**, որի դրսևորման հիմնական ձևը **բազմակուսակցությունն է**: Բազմակուսակցության սկզբունքը ամրագրված է և՛ որպես Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքներից մեկը (հոդվ. 7), և՛ որպես Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու՝ այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու սահմանադրական իրավունք (հոդվ. 28):

Բազմակարծության և քաղաքական բազմազանության (բազմակուսակցության) սկզբունքների սահմանադրական ամրագրումն անհրաժեշտ օրենսդրական հիմք է մեր երկրում իրական ժողովրդավարական քաղաքական համակարգի ձևավորման համար: Այդ համակարգին յուրահատուկ պետք է լինեն իշխանության պատկանելությունը ժողովրդին, քաղաքական համակարգի բոլոր օղակների որոշակի ինքնավարությունը, հավասար մրցակցության ապահովումը քաղաքական ընթացակարգերում, իրավունքի գերակայությունը և այլն: Հարկ է նկատել, որ ժողովրդավարական քաղաքական համակարգին հատուկ այդ բոլոր սկզբունքները ամրագրված են Հայաստանի Հանրապետության գոյծող Սահմանադրության տարբեր հոդվածներում:

Սակայն **վերը նշվածը բավարար հիմքեր չի տալիս եզրակացնելու**, որ մեր երկրում արդեն ձևավորվել է իսկապես ժողովրդավարական քաղաքական համակարգ: Բանն այն է, որ **անցումային շրջանի** բոլոր երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության, համար յուրահատուկ է **էական խզումը Սահմանադրությամբ ամրագրված քաղաքական համակարգի ժողովրդավարական սկզբունքների և իրական քաղաքական իրողությունների միջև**: Սահմանադրությամբ ամրագրված հնարավորություններն առայժմ լիովին չեն կենսագործվել: Նամանակաճ, **բազմակուսակցության** սկզբունքի սահմանադրական ամրագրումը չի հանգեցրել հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող ուժեղ կուսակցությունների ձևավորման: Դրա վկայությունն է երկրում ավելի քան 70 կուսակցությունների գոյությունը: Դրա վկայությունն է նաև այն, որ խորհրդարանում բացարձակ մեծամասնություն ունեցող կուսակցությունների դաշինքի հիմքը կազմող Հայոց Համագգային Շարժումը 1999թ. (ընդամենը 4 տարի անց) նոր խորհրդարանական ընտրությունների ժամանակ չկարողացավ հաղթահարել 5%-ի արգելքը, իսկ կուսակցությունների նորաստեղծ դաշինքը («Միասնություն» դաշինքը) իր ձևավորումից ընդամենը 1-2 ամիս հետո կարողացավ խորհրդարանում ունենալ բացարձակ մեծամասնություն, որն, իր հերթին, 2007թ. մայիս ամսին խորհրդարանական ընտրությունների ժամանակ չկարողացավ հաղթահարել 5%-ի արգելքը:

Քազմակարծության ապահովմանն ուղղված սահմանադրական դրույթները նույնպես դեռևս չեն բովանդակում քաղաքական գաղափարախոսության հստակ ուղղությունները: Հասկանչական է, որ մեզանում քաղաքական դաշինքների ձևավորման գործընթացում քաղաքական գաղափարախոսությունը որևէ դեր զրեթե չունի: Ե՛վ իշխանական, և՛ ընդդիմադիր դաշինքներում հեշտությամբ միավորվում են նույնիսկ ծայրահեղ աջ և ծայրահեղ ձախ քաղաքական ուժերը: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության ներկայիս քաղաքական համակարգը դեռևս չի կարելի միանշանակ դասել քաղաքական համակարգերից որևէ խմբի մեջ: Այն **գտնվում է սաղմնային վիճակում** և պետք է բնորոշվի որպես անցումային շրջանի կամ ժողովրդավարական քաղաքական համակարգի **սկզբնական փուլում գտնվող** քաղաքական համակարգ:

§ 2. Պետությունը հասարակության քաղաքական համակարգում

Հասարակության քաղաքական համակարգում պետությունն ունի կարևորագույն դեր: Այն հանդես է գալիս որպես **քաղաքական իշխանության իրականացման գլխավոր ուժ**: Հասարակության քաղաքական համակարգում պետության բացառիկ դերը պայմանավորված է **նրա մի շարք էական հատկանիշներով**:

Առաջին, պետությունը քաղաքական համակարգի **ամենազանգվածային կազմակերպությունն է**: Քաղաքական համակարգի ոչ մի այլ օղակ՝ լինի դա կուսակցություն, թե հասարակական միավորում, իր զանգվածայնությամբ չի կարող համեմատվել պետության հետ: **Պետությունը միավորում է բնակչության բոլոր շերտերը**, հասարակության բոլոր անդամներին: Նա հանդիսանում է (կամ առնվազն իրեն ներկայացնում է) երկրի տարածքում բնակվող ողջ ժողովրդի ներկայացուցիչը: Այս հանգամանքը առավել հստակորեն արտացոլված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **նախաբանում**, որտեղ հանրապետության Հիմնական օրենքի ընդունման իրավունքը վերապահված է հայ ժողովրդին:

Պետության՝ ամբողջ ժողովրդի ներկայացուցիչ լինելու հանգամանքն իր արտահայտությունն է գտել նաև **Սահմանադրության 2 հոդվածում**, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին... Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»:

Քաղաքական համակարգում **ժողովրդավարական պետության դերը էապես տարբերվում է ստատիստար պետությունների դերից**:

Նախ՝ սահմանափակ են հասարակական կյանքի այն ոլորտները, որտեղ պետությունն ունի **մենաշնորհային կամ բացառիկ դիրք**: Օրինակ, խորհրդային կարգերի ժամանակ պետությունը (այդ թվում Հայկական ԽՍՀ-ն և, առավել ևս, Խորհրդային Միությունը), փաստորեն, արտադրության միջոցների և գործիքների բացառիկ սեփականատերն էր: Այդ հանգամանքը արհեստականորեն ուժեղացնում էր պետության դերը նաև քաղաքական ոլորտում: Դրա հետևանքով հասարակության, ըստ էության, **միակ գործատուն՝ պետությունը**, իր կամքը թելադրելու հնարավորություն էր ստանում ոչ միայն քաղաքական համակարգի մյուս բոլոր օղակների նկատմամբ, այլև ամբողջ հասարակության, նրա յուրաքանչյուր անդամի նկատմամբ:

Հայաստանի երրորդ Հանրապետությունն իր ստեղծման հենց առաջին քայլերից հրաժարվել է այդ մոտեցումից: Նախ, Հանրապետությունում ճանաչվել է սեփականության բազմաձևությունը և Սահմանադրության 8 հոդվածի ուժով Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Սակայն դա չի նշանակում, որ կարելի է անտեսել պետական սեփականության կարևոր նշանակությունը երկրի տնտեսական կյանքում: Պետական սեփականությունը հանդիսանում է պետության նյութական հիմքը: Առանց նյութական հիմքի պետությունը չի կարող արդյունավետ իրականացնել իր գործառնությունները ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական և քաղաքական ոլորտներում: Այս հանգամանքը անհրաժեշտ է նկատի ունենալ մեր երկրում ապապետականացման ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում:

Ժողովրդավարական քաղաքական համակարգի առկայության պայմաններում, քաղաքացիական հասարակության ինստիտուտների ձևավորմանը զուգընթաց, պետության ակտիվության ինքնասահմանափակումը օբյեկտիվ օրինաչափություն է: Սակայն **ինքնասահմանափակման գործընթացի չափից ավելի արագացումը** հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կարող է հանգեցնել **անկառավարելի իրավիճակների**: Օրինակ, սպառողների շահերի պաշտպանության, բնակֆոնդի (ներառյալ սեփականաշնորհված) շահագործման և սպասարկման ոլորտներում անցանկալի հետևանքներից խուսափելու համար նպատակահարմար է, որ պետությունը սահմանափակի իր միջամտությունն այդ ոլորտների խնդիրների լուծմանը միայն այն բանից հետո, երբ այն ստանձնած հասարակական հիմունքներով գործող կառույցների և համատիրությունների համակարգը վերջնականապես կայանա:

Երկրորդ, հասարակության քաղաքական համակարգում պետության դերի բացահայտման համար կարևոր նշանակություն ունեն Սահմանադրության **թիվ 1 հոդվածում** թվարկված Հայաստանի Հանրապետության բոլոր բնութագրիչները: Սակայն այդ շարքում **կարևորագույնը ինքնիշխանությունն է, որը հանդիսանում է պետության որակական հատկանիշը:** Հասարակության քաղաքական համակարգի բոլոր տարրերից միայն պետությունն է, որ օժտված է ինքնիշխանությամբ:

Ինչպես արդեն ասվել է, **ինքնիշխանությունը** դա պետության գերիշխանությունն է երկրի ներսում և անկախությունը (ինքնուրույնությունը)՝ արտաքին քաղաքականության ոլորտում: Պետությունը ի վիճակի է արտահայտել իր քաղաքացիների շահերն ու կամքը, լրիվ ծավալով երաշխավորել նրանց իրավունքներն ու ազատությունները միայն այն դեպքում, **եթե նա ինքնիշխան է:** Գրանով է բացատրվում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության ապահովման նկատմամբ այն մտահոգությունը, որն իր արտահայտությունն է գտել Սահմանադրության 114 հոդվածում: Ինչպես հայտնի է, համաձայն այդ հոդվածի՝ Սահմանադրության թիվ 1, 2 և 114 հոդվածները փոփոխման ենթակա չեն:

Պետության գերիշխանությունը **երկրի ներսում**, առաջին հերթին, ենթադրում է պետական իշխանության սահմանափակված շլիճելը որևէ այլ հասարակական կամ քաղաքական հաստատության, քաղաքական համակարգի որևիցե այլ օղակի կողմից:

Արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստանի Հանրապետության անկախության երաշխիքներն ամրագրված են Սահմանադրության մի շարք հոդվածներում, որոնց թվում ատավել **կարևոր է 9 հոդվածը**, որով սահմանված են պետության արտաքին քաղաքականության հիմնադար սկզբունքները: Համաձայն այդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատման նպատակով: Այս սկզբունքների իրականացումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության **անկախության քաղաքական երաշխիքը:**

Միևնույն ժամանակ, Սահմանադրության 46 հոդվածի համաձայն, օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելը յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է: Այս հոդվածը հանդիսանում է Հայաստանի անկախության **ազգանական երաշխիքների** համակարգի հիմքը:

Երրորդ, պետության կողմից երատարակվող **նորմատիվ իրավական ակտերն ունեն բացարձակ գերակայություն երկրի տարածքում**

գործող բոլոր այլ սոցիալական նորմերի նկատմամբ: Հասարակության քաղաքական համակարգի որևէ այլ օղակ լինի դա կուսակցություն, թե հասարակական միավորում, **չի կարող ընդունել իշխանական լիազորություններ թվանդակող նորմեր:** Նրանց կողմից ընդունված ներկայումս կարող մրցակցել իրավական նորմերի հետ: Ավելին՝ **իրավական նորմերի միջոցով սահմանվում են քաղաքական համակարգի մյուս բոլոր օղակների կազմավորման, գործունեության, իրավական վիճակի հիմնական սկզբունքները:**

Չորրորդ, քաղաքական համակարգում պետության տարրերակիչ գծերից է նաև այն, որ **միայն պետությունն ունի կառավարման և հարկադրման հատուկ ապարատ:** Իհարկե, կուսակցությունները և հասարակական միավորումները հաճախ նույնպես ձևավորում են իրենց մշտական գործող աշխատակազմերը: Առանց այդպիսի աշխատակազմի՝ անհնար է խոշոր հասարակական միավորումների բնականոն գործունեությունը: Սակայն, ի տարբերություն պետության, քաղաքական կուսակցությունները և հասարակական միավորումներն **իրենց կազմում չունեն և չեն կարող ունենալ այնպիսի մարմիններ, ինչպիսիք են ռատիկալությունը, դատախազությունը, դատարանները, պետական անվտանգության մարմինները և այլն:**

Այսպիսով, պետության առաջատար դերը Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում պայմանավորված է նրա էական հատկանիշներով, որոնք ամրագրված են Երկրի Հիմնական օրենքում՝ Սահմանադրության մեջ:

§ 3. Կուսակցությունները Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում

Կուսակցությունները գոյություն են ունեցել դեռևս **Հին Հունաստանում և Հին Հռոմում:** Սակայն դրանք նորմալ գործել են միայն այն ժամանակ, երբ պետությունների քաղաքական ռեժիմներում սկսել են արմատավորվել ժողովրդավարության որոշակի տարրեր, քանզի բռնապետական, ամբողջատիրական ռեժիմների պայմաններում քաղաքայում են կուսակցությունների գործունեության համար նպաստավոր պայմանները:

Ժողովրդավարական երկրների հասարակական-քաղաքական և պետական կյանքում կուսակցությունների կարևոր դերը բացատրվում է նրանով, որ **միջկուսակցական պայքարի արդյունքում է ձևավորվում քաղաքական իշխանությունը:** Ռուստի այդ պայքարի արդյունքներից է կախ-

ված, թե տվյալ երկրում ում ձեռքում կգտնվի քաղաքական իշխանությունը, ինչ նպատակներով այն կօգտագործվի, ինչ ձևերով և մեթոդներով այն կիրականացվի և ում շահերին կծառայի:

Կուսակցությունները քաղաքական համակարգի մյուս տարրերից տարբերվում են նրանով, որ **քացեհրաց պայքարում են խորհրդարանում և կառավարությունում տեղեր ստանալու համար**: Այդ տեղերը նրանց անհրաժեշտ են պետության և, դրանով իսկ, հասարակության կառավարմանը մասնակցելու համար:

Ժամանակակից քաղաքական համակարգերում կուսակցությունների դերի ուժեղացումը հանգեցրել է նրան, որ սահմանադրությամբ և օրենքներով բավականին մանրամասն կարգավորվում են կուսակցությունների կազմավորման և գործունեության ընթացքում ձևավորվող հասարակական հարաբերությունները:

Այդ հարաբերությունների կարգավորմանը նվիրված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **երկու (7 և 28) հոդվածներ**, որոնց դրույթներն ավելի ընդարձակ ու մանրամասն իրենց ամրագրումն են ստացել **«Կուսակցությունների մասին» 2002թ. հուլիսի 3-ին ընդունված օրենքում**:

Սահմանադրության 7 հոդվածը հռչակում է քազմակուսակցությունը որպես Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքներից մեկը, իսկ 28 հոդվածում ամրագրված է այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունում **կուսակցությունները կազմավորվում են ազատորեն** իրենց անդամների հիմնադիր համագումարի որոշմամբ: Կուսակցության, որպես իրավաբանական անձի, իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից:

Կուսակցություններ ստեղծել և դրանց **անդամագրվել կարող են տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները**: Պետական գրանցման պահից ոչ ուշ, **քան վեց ամիս հետո, կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 2000 անդամ**, ընդ որում, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ոչ պակաս, քան **100 անդամ**, և տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում, ներառյալ՝ Երևան քաղաքում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 28 հոդվածում սահմանված է, որ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը կարող է սահմանափակվել գինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայ-

յողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի համար: Դրան համապատասխան **«Կուսակցությունների մասին» օրենքի 10 հոդվածը սահմանում է, որ կուսակցության անդամ չեն կարող լինել՝ դատավորները, դատախազները, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, ոստիկանության և այլ իրավապահ մարմինների աշխատակիցները, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի ծառայողները**: «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 3 հոդվածի համապատասխան՝ սահմանադրական դատարանի անդամը չի կարող լինել կուսակցության անդամ:

Կուսակցությունների գործունեության **հիմնական նպատակն է** նպաստել ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Այդ նպատակը կարող է իրականացվել կուսակցությունների կողմից որոշակի գործառնությունների իրականացման միջոցով: Օրենսդրությունը չի սահմանում կուսակցությունների գործառնությունների համակարգը: Սակայն սահմանադրական իրավունքի գիտության կողմից առանձնացվում են, մասնավորապես. ա) կուսակցության քաղաքական կուրսի մշակումը, բ) նոր անդամների հավաքագրումը, կուսակցության ակտիվի ձևավորումը, առաջնորդների ընտրությունը, գ) մասնակցությունը իշխանության մարմինների ձևավորմանը, դ) կուսակցության անդամների և կողմնակիցների վրա գաղափարական ազդեցություն գործելը, կուսակցության արժեքների և աշխարհայացքի տարածումը և այլն:

Հասկանալի է, որ Սահմանադրության 7 հոդվածում ամրագրված նպատակը (նպաստել ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանը և արտահայտմանը) կարող են ավելի արդյունավետ իրագործել խոշոր, համապետական կադրեր ունեցող և հասարակության մեջ հեղինակություն վայելող կուսակցությունները: Ուստի կուսակցական համակարգն առավել արդյունավետ է գործում այն դեպքում, երբ ձևավորված են խոշոր հեղինակավոր կուսակցություններ: Առաջնորդվելով այդ տրամաբանությամբ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածը ամրագրում էր, որ լուծարման են ենթակա այն կուսակցությունները, որոնք.

ա) ՀՀ ԱԺ իրար հաջորդող ցանկացած երկու ընտրություններում համամասնական կարգով ընտրություններին չի մասնակցել,

բ) ԱԺ իրար հաջորդող ցանկացած երկու ընտրություններից յուրաքանչյուրում ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի մեկ տոկոսից պակաս ձայն,

գ) չի մասնակցել ԱԺ համամասնական ընտրակարգով մեկ ընտրության, իսկ դրան նախորդող կամ հաջորդող ընտրության ժամանակ

ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ արված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի մեկ տոկոսից պակաս ձայն:

Ալենալայա Է. որ գործնականում Օրենքի վկայակոչված դրույթները հազիվ թե կարող են նպաստել հզոր և հանրության շրջանում հեղինակություն վայելող կուսակցությունների ձևավորմանը, սակայն հաջողությամբ կարող են նպաստել փոքր և միջին մեծության կուսակցությունների լիկվիդացմանը: Այդ գործընթացը (կուսակցությունների լիկվիդացումը) ինքնաշերտաբար չի կարող ապահովել լուծարված կուսակցության անդամների ընդգրկումը մեծաթիվ անդամներ ունեցող կուսակցությունների շարքերը:

Դրա հետ միասին, ժամանակակից ժողովրդավարական երկրներում կողք-կողքի գործում են հզոր և փոքր ու միջին կուսակցություններ, որոնք արդյունավետ համագործակցում են միմյանց հետ: Այստեղ հզոր կուսակցությունները չեն օգտագործում իրենց հզոր ֆինանսական միջոցները ընտրողների ձայնները հավաքագրելու համար, որը կարող է խանգարել փոքր կուսակցությունների ընտրագանգվածի ձևավորմանը: Ավելի շուտ, րնդհակառակը՝ այդ երկրներում գործում են այնպիսի ընտրական համակարգեր, որոնք բովանդակում են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի փոքր և միջին կուսակցությունները հնարավորինս ընդգրկված լինեն իշխանության օրենսդիր մարմիններում:

Բացի այդ, Օրենքի նշված դրույթները էականորեն սահմանափակում էին քաղաքացիների միավորվելու, այդ թվում՝ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու սահմանադրական իրավունքը: Այդ հանգամանքի հաշվառմամբ, ՀՀ սահմանադրական դատարանը 2006թ. դեկտեմբերի 22-ին Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի քննարկման արդյունքում ընդունած ՍԴՈ- 669 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 28 հոդվածի 2-րդ մասին և 43 հոդվածին հակասող ճանաչեց «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի դրույթները:

Իրենց գործառնությունների իրականացման ընթացքում կուսակցությունները **չեն կարող անտեսել գործող օրենսդրության պահանջները**: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին: Մասնավորապես, «Կուսակցությունների մասին» օրենքի 5 հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, իրավապահ մարմիններում, նախադպրոցական, դպրոցական և այլ ուսումնական հաստատություններում, կազմակերպություններում կուսակցությունների կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծումը և գործունեու-

յունը արգելվում է: Կուսակցությունների ղեկավար մարմիններն ու նրանց կառուցվածքային ստորաբաժանումները կարող են **գտնվել միայն Հայաստանի Հանրապետության տարածքում**: Օրենքի 9 հոդվածը **արգելում է այն կուսակցությունների ստեղծումը**, որոնց նպատակները կամ գործունեությունը ուղղված են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի թոնի փոփոխությանը, Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության խախտմանը, զինված կազմավորումների ստեղծմանը, ազգային, ռասայական, կրոնական ատկության բռնաբարկմանը, բռնություն և պատերազմ քարոզելուն:

Նշված հոդվածում նախատեսված իվնքերով կուսակցության գործունեությունը **կարող է արգելվել սահմանադրական դատարանի որոշմամբ**: Այդ դեպքում սահմանադրական դատարան է դիմում Հայաստանի Հանրապետության Նախագահը: Կուսակցությունը կարող է լուծարվել կուսակցության համագումարի որոշմամբ, որն ընդունվում է պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ժողովրդավարական պետությունների օրենսդրությամբ առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում **կուսակցությունների ֆինանսավորման խնդիրներին**: Որոշ պետություններում այդ հարցերը կարգավորվում են սահմանադրություններով: Ըստն այն է, որ ֆինանսավորումից է կախված ոչ միայն տվյալ կուսակցության դերը երկրի քաղաքական համակարգում, այլ նաև ամբողջ կուսակցական համակարգի վիճակը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 7 հոդվածի համաձայն՝ կուսակցությունները պարտավոր են ապահովել իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությունը:

Օրենքը սահմանում է **կուսակցությունների դրամական միջոցների ձևավորման աղբյուրները**: Այդ միջոցները կարող են գոյանալ անդամավճարներից, նվիրատվություններից, օրենքով նախատեսված կարգով բյուջետային ֆինանսավորումից, քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից: Օրենքը կուսակցություններին **չի քույլատրում նվիրատվություններ ստանալ** բարեգործական և կրոնական կազմակերպություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, բացառությամբ այդ մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով կատարվող ֆինանսավորմանը, պետական կառավարչական հիմնարկներից, օտարերկրյա պետություններից, օտարերկրյա քաղաքացիներից ու իրավաբանական անձանցից, միջազգային կազմակերպություններից և միջազգային հասարակական շարժումներից և որոշ այլ աղբյուրներից:

Հայաստանի Հանրապետությունում կուսակցությունների սահմանադրական իրավական կարգավիճակը հիմնականում համապատասխանում է միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված ժողովրդավարական սկզբունքներին: Հանրապետության օրենսդրությամբ սահմանված են կուսակցությունների ազատ ձևավորման և գործունեության համար բոլոր անհրաժեշտ երաշխիքները:

Միևնույն ժամանակ, բազմակուսակցական համակարգը մեր երկրում դեռևս գտնվում է կայացման փուլում: Կուսակցությունները դեռևս լիարժեք չեն ձևավորել իրենց գաղափարախոսությունը և չունեն հստակ ընտրազանգված:

§ 4. Հասարակական միավորումները Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում

Հասարակության առանձին անդամների, տարբեր սոցիալական խմբերի և շերտերի շահերը չեն կարող արտացոլվել և իրականացվել միայն պետական մարմինների և քաղաքական կուսակցությունների միջոցով: Կենսական նպատակների իրագործման և իրավունքների ու ազատությունների իրականացման համար հաճախ *անհրաժեշտ է լինում միավորել մարդկանց ջանքերը*, ստեղծել այնպիսի հասարակական կազմակերպություններ, որոնք կարող են ներկայացնել և *պաշտպանել առանձին խմբերի կոլեկտիվ շահերը*: Այդ կազմակերպությունների համակարգը արտացոլում է քաղաքացիական հասարակության ինքնակառավարման՝ առանց պետական իշխանության միջամտության հանրային նշանակության հարցեր լուծելու ունակությունը: Որքան զարգացած է քաղաքացիական հասարակությունը, այնքան լայն է հասարակական միավորումների միջոցով հասարակության ինքնակառավարման ոլորտը: *Ուստի, ոչ առևտրային բնույթի* սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային և այլ հասարակական միավորումների դերն ու նշանակությունը քաղաքացիական հասարակության ձևավորման ընթացքում էականորեն բարձրանում է:

Այդ կազմակերպությունները չափազանց բազմաբնույթ են: Դրանց թվին են դասվում՝ *արհմիությունները*, տարբեր տեսակի *շարժումները*, *«քաղաքացիական նախաձեռնությունները»*, *ձեռնարկատերերի, սպառողների միությունները*, *բնապահպան կազմակերպությունները*, *մշակութային միությունները*, *հայրենակցական և ազգային հատկանիշներով ձևավորված կազմակերպությունները*, *երիտասարդական և կամանց միությունները*, *բարեգործական կազմակերպություններն ու ֆոնդերը*:

Դրանց թվին են դասվում նաև այլ կազմակերպաիրավական ձևեր ունեցող ճնշման խմբերը՝ առևտրային և արդյունաբերական միությունները, զանազան հիմնադրամները, խորհրդատվական ֆիրմաներն ու քաղաքական գործողության խմբերը և նմանատիպ այլ՝ ոչ ֆորմալ միավորումները:

Նշված կազմավորումների ձևավորման նպատակները, գործունեության ձևերն ու մեթոդները, դրանց կազմում միավորված անձանց շրջանակը *տարբերվում են միմյանցից*: Մասկայն բոլոր այդ կազմավորումներն *ունեն էական ընդհանուր հատկանիշներ*, որոնք հիմք են տալիս դրանք առանձնացնել որպես քաղաքական համակարգի յուրահատուկ օղակ:

Բոլոր այդ միավորումները **շահույթ ստանալու** նպատակ չեն հետապնդում: Այդ հանգամանքը դրանց ընդհանրացնում է քաղաքական կուսակցությունների հետ:

Միևնույն ժամանակ, *քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների միջև կան նաև որոշակի տարբերություններ*: Ճիշտ է, հասարակական կազմակերպություններից շատերը (օրինակ՝ ձեռնարկատերերի միությունը, արհմիությունները) ակտիվությամբ են դրսևորում նաև քաղաքական ոլորտում և որոշ դեպքերում էական ազդեցություն են գործում պետական քաղաքականության վրա, *սակայն քաղաքականությանը մասնակցելը վերջիններիս հիմնական նպատակը չէ*: Դրանց հիմնական նպատակը իրենց կամուսակցություններով ամրագրված ոլորտներում և շրջանակներում համապատասխան *կազմակերպության անդամների շահերի հայտնաբերումն ու իրագործումն է*:

Միաժամանակ, ինչպես վերը նշվեց, հասարակական կազմակերպությունները հանդիսանում են հասարակության քաղաքական համակարգի տարրեր, իսկ դա նշանակում է, որ վերջիններս մասնակցում են պետական իշխանության իրականացմանը: Եթե պետությունը և քաղաքական կուսակցությունները պետական իշխանության իրականացմանը *մասնակցում են անմիջապես* (պետությունն իր մարմինների միջոցով, իսկ կուսակցությունները՝ պառլամենտում և կառավարությունում ունեցած իրենց ներկայացուցիչների միջոցով), ապա հասարակական կազմակերպություններն այն իրականացնում են *միջնորդակողմած ձևով*: Այսպես, հաճախ պառլամենտական ընտրությունների ժամանակ կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների միջև պայմանավորվածություններ են ձեռք բերվում: Հասարակական կազմակերպությունը (օրինակ՝ արհմիությունը) օգնում է կուսակցությանը (համոզելով իր անդամներին քվեարկել նրա օգտին) պառլամենտում ստանալու մեծամասնություն (կամ հնարավորինս շատ պատգամավորական տե-

դեր), իսկ կուսակցությունը պարտավորվում է պառլամենտական գործունեության ընթացքում **նպաստել, որպեսզի այդ կազմակերպությանը ձեռնառու տարրերակով օրինագիծն ընդունվի պառլամենտի կողմից**: Այդ ճանապարհով հասարակական կազմակերպությունները էական ազդեցություն են ունենում պետական իշխանության իրականացման վրա:

Կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների միջև երկրորդ տարրերությունը կայանում է նրանում, որ հասարակական կազմակերպությունները, ինչպես ասվեց, դրսից, անուղղակի կերպով են ներգործում պետական քաղաքականության վրա, մինչդեռ կուսակցությունները ձգտում են օրենքով թույլատրելի ձևերով ու միջոցներով տիրանալ քաղաքական իշխանությանը, որը նրանց կանոնադրական խնդիրն է:

Հայաստանի Հանրապետությունում հասարակական կազմակերպությունների ձևավորման և գործունեության միակ սահմանադրական հիմքը՝ Սահմանադրության 28 հոդվածում ամրագրված՝ այլ անձանց հետ միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու յուրաքանչյուր անձի իրավունքն է: Այսինքն՝ միավորման իրավունք ունեն ոչ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, այլև օտարերկրացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք: Միևնույն ժամանակ, Սահմանադրությունը նախատեսում է, որ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը օրենքով սահմանված կարգով կարող է **սահմանափակվել** զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամների նկատմամբ:

Հասարակական կազմակերպությունների ձևավորման և գործունեության համար սկզբունքային նշանակություն ունի նաև սահմանադրական այն դրույթը, որն արգելում է **անձին հարկադրել անդամագրվելու որևէ միավորման**: Դրանով իսկ ընդգծվում է հասարակական կազմակերպությունների ստեղծման կամավորությունը և դրանց անդամագրվելու մարդու ազատությունը:

Սահմանադրական այդ դրույթներն իրենց կոնկրետացումն ու զարգացումն են ստացել «Հասարակական կազմակերպությունների մասին» 2001թ. դեկտեմբերի 4-ին ընդունված ՀՀ օրենքում, որտեղ հասարակական կազմակերպությունը դիտվում է **որպես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպության տեսակ, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրացիներ, քաղաքացիության չունեցող անձինք**:

Հասարակական կազմակերպություններն ինքնուրույն են որոշում իրենց կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը: Պետությունն ապահովում է հասարակական կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Միևնույն ժամանակ, պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք **չեն կարող միջամտել** հասարակական կազմակերպության գործունեությանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով ուղղակիորեն սահմանված է նրանց համապատասխան իրավասությունը:

Հասարակական կազմակերպության **հիմնադիր կարող են լինել անվազն երկու ֆիզիկական անձ**: Կազմակերպություն հիմնադրել ցանկացող անձինք կնքում են պայմանագիր, որով սահմանվում է, մինչև կազմակերպության պետական գրանցումը, հիմնադիրների համատեղ գործունեության կարգը: Կազմակերպության կանոնադրությունը հաստատում է հիմնադիրների ժողովը:

Հասարակական կազմակերպությունները պետական գրանցումից հետո ձեռք են բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Հասարակական կազմակերպությունների պետական **գրանցումն անհիմն մերժելու** հնարավորությունը բացառելու նպատակով օրենքում սպառիչ կերպով թվարկվում են ինչպես արդարադատության նախարարություն ներկայացվող փաստաթղթերի ցանկը, այնպես էլ հասարակական կազմակերպության պետական գրանցումը մերժելու հիմքերը (հոդվ. 12): Փաստաթղթերն ընդունելուց հետո 21 օրացուցային օրվա ընթացքում նախարարությունը պարտավոր է քննարկել կազմակերպության պետական գրանցման մասին դիմումը և գրանցել կազմակերպությունը կամ մերժել դրա գրանցումը: Հասարակական կազմակերպության պետական գրանցման մերժումը կարող է բողոքարկվել դատարան:

Հասարակական կազմակերպությունների կողմից իրենց կանոնադրությամբ նախատեսված խնդիրներն իրականացնելու համար օրենսդրությունը նրանց վերապահում է **որոշակի իրավունքներ**: Մասնավորապես, հասարակական կազմակերպությունը իրավունք ունի տեղեկություններ տարածել իր գործունեության մասին, կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի ժողովներ, համրահավաքներ, երթեր և ցույցեր, օրենքով սահմանված կարգով ներկայացնել և պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերը, համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպությունների հետ (հոդվ. 15):

Հասարակական կազմակերպության սեփականությունը գոյանում է անդամավճարներից, դրամաշնորհներից, նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ օտարերկրյա աղբյուրներից: Կազմակերպությունը իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

Միևնույն ժամանակ, հասարակական կազմակերպությունների գործունեության ընթացքում դրանց անդամների կողեկոսիվ շահերի և պետական ու հասարակական շահերի զուգորդումն ապահովելու նպատակով նրանց վրա օրենսդրությամբ դրվում են նաև **որոշակի պարտավորություններ (հոդվ. 16):**

Օրենսդրությամբ որոշ պահանջներ են ներկայացվում նաև հասարակական կազմակերպությունների կառուցվածքի և դրանց մարմինների միջև լիազորությունների բաշխման նկատմամբ: Հասարակական կազմակերպության **քարճրագույն մարմինը համագումարը կամ ընդհանուր ժողովն է**, որն ունի կազմակերպության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Հասարակական կազմակերպությունների շարքում կարևորագույն դեր ունեն **արհմիությունները**: Հատկանշական է, որ Սահմանադրության 28 հոդվածում հատուկ շեշտվում է արհմիություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը: Արհմիությունների **հիմնական խնդիրը վարձու աշխատողների շահերի պաշտպանությունն է**: Այդ խնդիրն առանձնակի արդիականություն է ստանում անցումային շրջանում:

Ինչպես արհմիությունները, այնպես էլ մյուս հասարակական կազմակերպություններն իրենց կանոնադրություններին համապատասխան կարող են **անդամակցել միջազգային** հասարակական կազմակերպություններին, ունենալ միջազգային կապեր, կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում հասարակական կազմակերպությունների կարգավիճակի կարևոր մասն է կազմում նրանց **պատասխանատվության հարցը**: «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 20 հոդվածի համաձայն՝ կազմակերպության **հարկադիր լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը**՝ պետական լիազորված մարմնի պահանջով և միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Օրենքը (21 հոդվ.) սպառնիչ կերպով թվարկում է հասարակական կազմակերպության հարկադիր լուծարման հիմքերը: Այդ հիմքերն են՝

ա) կազմակերպության գործունեությունն եթե ուղղված է սահմանադրական կարգի բռնի տապալմանը, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելուն, բռնություն և պատերազմ քարոզելուն.

բ) կազմակերպությունը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոալիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

գ) կազմակերպության հիմնադիրը կամ լիազորված անձը կազմակերպություն հիմնադրելիս թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

Հարկադիր լուծարումից զատ, հասարակական կազմակերպությունը կարող է դադարել գործելուց նաև իր բարձրագույն մարմնի որոշմամբ (ինքնալուծարվել), որի կարգը մանրամասն սահմանված է օրենքի 20 հոդվածում:

Անկախ լուծարման եղանակից (հարկադիր կամ ինքնակամ), հասարակական կազմակերպության իրավունքները և պարտականությունները լուծարումից հետո իրավահաջորդության կարգով այլ անձանց կամ կազմակերպությունների **չեն փոխանցվում**:

§ 5. Չանգվածային լրատվության միջոցները

Քաղաքական համակարգի տարրերի շարքում իրենց ուղղում տեղն ունեն զանգվածային լրատվության միջոցները: Հասարակության քաղաքական համակարգում դրանց դերն ու նշանակությունը, գործառույթները պայմանավորված են **առկա քաղաքական ռեժիմով**: Ավտորիտար և բռնատիրական քաղաքական ռեժիմների պայմաններում ՉԼՄ-ների հիմնական գործառույթը՝ իշխանությունների կողմից վերահսկվող տեղեկատվության տրամադրումն է քաղաքացիներին:

Ազատ մամուլը ժողովրդավարության հիմնաքարն է, քանի որ առանց մամուլի ազատության չի կարող լինել ո՛չ քաղաքացիական հասարակություն, ո՛չ իրավական պետություն: Արևմտյան երկրներում ՉԼՄ-ները հանդիսանում են ժողովրդի ազատության և սահմանադրական կարգի պահպանման ամենաարդյունավետ երաշխիքներից մեկը: ՉԼՄ-ների կարևորագույն խնդիրներից է հանրությանը տեղեկացնել այն ամենի մասին, ինչը հետաքրքրում է կամ կարող է հետաքրքրել ամբողջ հասարակությանը կամ նրա որևէ մասին:

Մակայն ՉԼՄ-ների նպատակները, որպես կանոն, չեն սահմանափակվում զուտ այդ խնդրի լուծման շրջանակներում: Տեղեկատվություն ընտրելիս և այն հանրությանը ներկայացնելիս ՉԼՄ-ները ձգտում են դի-

տողի, լսողի, **ընթերցողի գիտակցության մեջ ձևավորել իրենց համար ցանկալի գաղափարներ**, հասարակական երևույթների և գործընթացների վերաբերյալ գնահատականներ, դրդել նրանց որոշակի գործողությունների կամ հորդորել ձեռնպահ մնալու որոշակի գործելակերպից: Հետևաբար, ՁԼՄ-ները դրանով իսկ **իրականացնում են նաև հասակ գաղափարական և քաղաքական գործառնություն**: Դրանով էլ բացատրվում ՁԼՄ-ների փոխգործակցությունը քաղաքական համակարգի մյուս օղակների, առաջին հերթին, պետության և քաղաքական կուսակցությունների հետ: Այդ փոխգործակցությունն առանձնապես **սերտանում է ընտրությունների** և այլ զանգվածային քաղաքական միջոցառումների ընթացքում: Քաղաքական կուսակցությունները և գործիչները գլխավորապես հենց ՁԼՄ-ների միջոցով են հանրությանը ներկայացնում իրենց դիրքորոշումներն ու ծրագրերը:

Սահմանադրության 27 հոդվածի համաձայն՝ «Լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է»: Համապատասխան երաշխիքները ամրագրված են «Զանգվածային լրատվության մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի օրենքով:

Ըստ այդ օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունում **լրատվական գործունեություն կարող է իրականացնել ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ**, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր: ՁԼՄ-ները թողարկվում և տարածվում են նշված սուբյեկտների անունից՝ **առանց նախնական կամ ընթացիկ պետական գրանցման**, լիցենզավորման, պետական կամ որևէ այլ մարմնում հայտարարագրման: Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետությունում **նյութական կրիչի վրա թողարկված** և Հայաստանի Հանրապետությունում տարածվող լրատվության միջոցի յուրաքանչյուր թողարկման **երկուական օրինակ անվճար պետք է ուղարկվի արդարադատության նախարարություն, Ազգային գրադարան և Ազգային գրապալատ**: ՁԼՄ-ները, ըստ ստացված պարտադիր օրինակների և թողարկման տվյալների, հաշվառվում են լրատվության միջոցների **վարչական ռեգիստրում**, որը գործում է արդարադատության նախարարության համակարգում:

Իհարկե, ՁԼՄ-ների հաշվառումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե պահպանվում են նրանց անվանման հետ կապված որոշակի կանոններ: Այդ կանոններն ամրագրված են «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 10 հոդվածում: Լրատվության միջոցի անվանումը պետք է տարբերվի լրատվության այլ միջոցի անվանումից, այդ թվում՝ վերջին երկու տարիներին տարածումը դադարեցրած լրատվության այլ միջոցի անվանումից, եթե վերջինիս տարածողը լրատվական գործունեություն իրա-

կանացնող նույն անձը չի եղել: Բացի դրանից, լրատվության միջոցի անվանումը պետք է ընդունելի լինի նաև հասարակական բարոյականության տեսանկյունից:

Այդ ընդհանուր կարգից բացառություն են կազմում հեռուստատեսությունը և ռադիոն, որոնց գործունեությունը կապված է որոշակի հաճախականությունների օգտագործման հետ: Այդ լրատվամիջոցների լիցենզավորումը 2000թ. հոկտեմբերի 9-ին ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի համապատասխան իրականացվում է հեռուստատեսության և ռադիոյի **Ազգային հանձնաժողովի կողմից**՝ մրցութային կարգով: Ըստ այդ օրենքի, Հայաստանում կարող են լինել հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերություններ՝ իրավաբանական անձի կարգավիճակով: Օրենքի 16 հոդվածի համաձայն, Հայաստանում պետք է գործի առնվազն մեկ հանրային հեռուստաընկերություն և մեկ հանրային ռադիոընկերություն:

ՁԼՄ-ների կարևորագույն խնդիրներից մեկը հանրությանը տեղեկացնել է այն ամենի մասին, ինչ հետաքրքրում է կամ կարող է հետաքրքրել ամբողջ հասարակությանը կամ նրա որևէ մասին: Ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիներ իրավունք ունեն տեղեկություններ ստանալ իշխանությունների գործունեության մասին, մանավանդ այն դեպքերում, երբ այդ գործողությունները անմիջական կապ ունեն իրենց հետ:

Շարքային քաղաքացիների համար ՁԼՄ-ները հաճախ պետական մարմինների, կուսակցությունների և նրանց ծրագրերի մասին միակ տեղեկատվության աղբյուրն են: Ուստի Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը արգելում է ցանկացած, այդ թվում՝ այլ երկրներում թողարկված և տարածված լրատվության միջոցներից օգտվելու՝ անձի իրավունքի սահմանափակումը:

Օրենսդրությամբ ամրագրված են **լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման որոշակի երաշխիքներ**: «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4 հոդվածի համաձայն, լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա: Ավելին, լրագրողին, օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձի, պաշտպանում է օրենսդրությունը: Դրա հետ մեկտեղ, ժամանակակից միջազգային փորձը վկայում է, որ ՁԼՄ-ներին տեղեկատվություն տրամադրելը անձի (լրագրողի) համար հաճախ հղի է իրական վտանգներով՝ ընդհուպ մինչև նրա նկատմամբ բացահայտ **ֆի-**

գիկական բռնության կիրառումը: Այս առումով, կարևոր նշանակություն ունի օրենքի 5 հոդվածում **տեղեկատվության աղբյուրների պաշտպանության սկզբունքի** ամրագրումը: Լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը: Տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է պարտադրվել **դատարանի որոշմամբ**՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով: Ընդամին, դատարանը նման որոշում կարող է կայացնել միայն այն դեպքում, եթե հասարակության շահերի քրեա-իրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է և սպառված են հասարակության շահերի պաշտպանության մնացած միջոցները:

Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի երաշխավորման նպատակով, **օրենքը մի շարք արգելքներ է նախատեսում** պետական և ոչ պետական կազմակերպությունների, ֆիզիկական անձանց նկատմամբ: Մասնավորապես, արգելվում է գրաքննությունը, տեղեկատվություն տարածելուն կամ դրա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ, ինչպես նաև լրագրողի մասնագիտական օրինական գործունեության խոչընդոտելը:

Օրենսդրությամբ հատուկ կարգավորվում են պետական մարմինների՝ լրագրողի **հավատարմագրման հետ** կապված հարաբերությունները: Հավատարմագրման մասին լրագրողի դիմումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում համապատասխան պետական մարմինը պարտավոր է օրենքի և տվյալ մարմնում լրագրողների հավատարմագրման կարգին համապատասխան հավատարմագրել լրագրողին: Միևնույն ժամանակ, հավատարմագրման կարգում չպետք է սահմանվեն այնպիսի դրույթներ, որոնք՝ կսահմանափակեն հավատարմագրված լրագրողի իրավունքը՝ մասնակցելու տվյալ մարմնի, նրա ստորաբաժանումների նիստերին, այլ միջոցառումներին, բացառությամբ դրանց դռնփակ լինելու դեպքերին, կբացառեն տվյալ մարմնում անցկացվող միջոցառումների մասին լրագրողների՝ ողջամիտ ժամկետում տեղեկացված լինելը, անհավասար պայմաններ կստեղծեն հավատարմագրված լրագրողների համար, կսահմանափակեն լրագրողի՝ տեղեկատվություն ձեռք բերելու օրենքով սահմանված իրավունքները:

Սկզբունքային նշանակություն ունի նաև «Չանգվածային լրատվության մասին» օրենքով (6 հոդվ.) ամրագրված դրույթը, ըստ որի՝ տվյալ մարմնում հավատարմագրման կարգ սահմանված չլինելը լրագրողի **հավատարմագրումը մերժելու հիմք չէ**: Այս դրույթը բացառում է արհեստա-

կան պատրվակով լրագրողի հավատարմագրումը մերժելու հնարավորությունը:

Նման սկզբունքի ամրագրման նպատակն է՝ լրագրողներին հնարավորություն ընձեռել հաղորդակից լինելու պետական մարմինների գործունեությանը, լուսարարներու նրանց գործունեության **լուսավոր և սովերային** կողմերը և այնտեղ տիրող իրավիճակի մասին տեղյակ պահել հասարակության լայն զնգվածներին: Նման գործունեությունը, եթե իսկապես նպատակաուղղված է **հասարակության մաքրագործմանը**, անկասկած ունի լուրջ նախագուշացնող, զսպող նշանակություն՝ մանավանդ այն պաշտոնատար անձանց համար, որոնք չեն կարողանում զերծ մնալ պետական իշխանությունը չարաշահելու, այն անձնական նպատակներով օգտագործելու գայթակղությունից:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով մարդկանց գիտակցության և վարքագծի, ինչպես նաև ամբողջ քաղաքական համակարգի գործունեության վրա ՉԼՄ-ների հզոր ազդեցությունը, և այդ ոլորտում մամուլի ազատության հնարավոր չարաշահումները, որը հղի է **վտանգավոր հետևանքներով**, ժամանակակից պետությունները սահմանադրական արգելանքների միջոցով ձգտում են պաշտպանել հասարակությանը այդպիսի չարաշահումներից: Դրանք կարող են ապակայունացնել հասարակությունը, խախտել հասարակական համաձայնությունը, ինչն իր հերթին կարող է ճանապարհ բացել դեպի ավտորիտարիզմը, էական վնաս հասցնելով նաև ազատ մամուլին:

ՉԼՄ-ներին արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը:

Քաղաքացիները և կազմակերպությունները կամ նրանց օրինական ներկայացուցիչները իրավունք ունեն մամուլի միջոցներից պահանջելու **հերքելի** իրենց օրինական շահերը խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ և (կամ) պահանջել իրենց պատասխանի հրապարակումը: Օրենքը մանրամասն սահմանում է հերքման կամ պատասխանի հրապարակման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև դրանց հրապարակումը մերժելու հիմքերը: Եթե լրատվական գործունեություն իրականացնողն անհիմն հրաժարվում է տպագրել հերքումը կամ պատասխանը կամ խախտում է դրանք տարածելու օրենքով սահմանված կարգն ու ժամկետը, ապա անձը, որի օրինական շահերը խախտվել են, իրավունք ունի դիմել դատարան՝ հերքումը տարածելու կամ իր պատասխանը հրապարակելու հայցով:

Լրատվության մասին օրենսդրության պահանջների խախտումը լրատվական գործունեություն իրականացնողի համար առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն: Լրատվական գործունեություն իրականացնողը ազատվում է տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, եթե դա՝ ստացվել է լրատվական գործակալությունից, բխում է վիճարկող կողմի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթերից, հրապարակային ելույթի, պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցների կամ հեղինակային որևէ ստեղծագործության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն է, և դա տարածելիս ինքը կատարել է հղում այդ աղբյուրին:

Խոսքի ազատությունը մեր հասարակության վերջին ավելի քան տասը տարիների կարևորագույն նվաճումն է: Մակայն դա չի նշանակում, որ ՁԼՄ-ների գործունեության ոլորտում այլևս չկան չլուծված խնդիրներ և հիմնահարցեր: Ազատ մամուլը մեզանում դեռևս գտնվում է կայացման փուլում: Իրենց հայտարարելով «չորրորդ իշխանություն», ՁԼՄ-ները սկզբունքորեն չեն կարող գործել որակապես ավելի լավ կամ ավելի վատ, քան առաջին երեք իշխանությունները:

Հասարակության սոցիալ-տնտեսական ծանր պայմանները ՁԼՄ-ներին հնարավորություն չեն տալիս ինքնաֆինանսավորվել և ձեռք բերել տնտեսական անկախություն: Ձերբազատվելով քաղաքական տոտալիտար ճնշումից՝ պետական գրաքննությունից, դրանք անմիջապես հայտնվեցին սուրբեր տեսակի հովանավորներից կախվածության մեջ: ՁԼՄ-ների մեծամասնության հիմնադիրները կամ հովանավորողներն են կուսակցությունները և այլ քաղաքական ուժերը: Ստիպված լինելով կատարել քաղաքական պատվեր, ՁԼՄ-ները լրատվության սպառողների ուշադրությունը հաճախ կենտրոնացնում են իշխանությունների, պետական տարբեր մարմինների, քաղաքական համակարգի այլ օղակների գործունեության միայն դրական կամ միայն բացասական կողմերի վրա: Դեռևս քացառություն չէ պատվիրված հոդվածների և այլ լրատվության հրապարակումը:

Լինում է նաև, երբ ՁԼՄ-ների նկատմամբ ճնշում են իրականացնում, որն ուժեղանում է հատկապես ընտրությունների ժամանակահատվածում:

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԳ

ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 9.

ՄԱՐԴՈՒ ԵՎ ԶԱՂԱՔԱՅՈՒ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

§ 1. Անձի իրավական կարգավիճակի հասկացությունը

Մարդու դերը հասարակության և պետության մեջ ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչպիսին է նրա հասարակական դիրքը, այսինքն՝ ինչ տեղ է զբաղեցնում տվյալ անձը հասարակական արտադրության և բարիքների քաշխման մեջ, հասարակության և պետության գործերի կառավարման մեջ, հասարակական կյանքի այլ կարևոր ոլորտներում: Այնուհայտ է, որ արտադրության ղեկավարների հասարակական դիրքը գերադասելի է այն իրականացնողներից, հասարակական բարիքներ տիրապետողներին՝ ունեզուրկներից, պետական ապարատում պաշտոններ զբաղեցնողներին՝ ոչ պաշտոնատար անձանցից և այլն: Պետությունն իրավունքի միջոցով ամրագրում է մարդկանց հասարակական, այսինքն՝ փաստացի վիճակը՝ նրանց իրավական դրության, իրավական կարգավիճակի ձևով: Ասվածից հետևում է, որ անձի իրավական վիճակը նրա փաստացի վիճակն է տվյալ հասարակության և պետության մեջ, որն ավելի կամ պակաս լրիվությամբ (մայած պետության կառավարման ձևի և քաղաքական ռեժիմի) իր արտացոլումն է գտնում իրավունքի մեջ:

Մարդու և քաղաքացու իրավական վիճակը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում (սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային և այլն) սահմանվում է իրավունքի կոնկրետ ճյուղի նորմերով, որոնցով կարգավորվող հարաբերությունների մասնակից է տվյալ անձը: Այդ հարաբերությունները բազմաթիվ են ու խաչտարբետ, ուստի դրանք կարգավորվում են ոչ թե իրավունքի մեկ կամ մի քանի ճյուղերի կողմից, այլ իրավունքի բոլոր ճյուղերի կողմից:

Առանձնահատուկ դեր ունեն այստեղ սահմանադրական իրավունքի նորմերը: Եթե իրավունքի մյուս ճյուղերից յուրաքանչյուրն ամրագրում է

մարդու իրավական վիճակը **հասարակական կյանքի որոշակի բնագավառում** (գույքային, ֆինանսական, աշխատանքային և այլն), ապա սահմանադրական իրավունքը, շնորհիվ իր համապարփակ կարգավորման առարկայի, ամրագրում է մարդու կարգավիճակը հասարակական կյանքի գլխավոր, որոշիչ բնագավառներում, այսինքն՝ նրա իրավական վիճակի **հիմունքները**: Այդ մասին է վկայում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2 գլխի 42 հոդվածը, ուր ասված է. «Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ »:

«Մարդու իրավական վիճակի հիմունքները» հասկացությունն արտացոլում է, ամենից առաջ, **պետության և անձի փոխհարաբերությունների համակարգը**, նրանց միջև կապերի բնույթը: Այդ կապը գոյություն ունի կամ տվյալ պետությանն **անձի քաղաքական-իրավական պատկանելության** (քաղաքացիության) ուժով, կամ էլ որպես **օտարերկրացի** կամ **քաղաքացիություն չունեցող անձ**՝ տվյալ պետության տարածքում ապրելու ուժով, որի վրա տարածվում է այդ պետության ինքնիշխանությունը:

Անձի իրավական վիճակի հիմունքների **առաջին** տարրը **քաղաքացիությունն է**, քանի որ այն որոշում է նրա (անձի) և պետության միջև կապը: Վերջինս արտահայտվում է նրանում, որ պետությունը **միայն իր քաղաքացուն է վերապահում իրավունքների, ազատությունների և պարտականությունների ողջ ծավալը**, ինչպես նաև ստանձնում նրա **պաշտպանությունը**, որտեղ էլ որ նա գտնվելիս լինի (երկրի ներսում, թե նրա սահմաններից դուրս):

Անձի իրավական վիճակի հիմունքների **երկրորդ**, առավել կարևոր, տարրն է նրա **հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները**, որոնք անօտարելի են մարդուց, քաղաքացուց, պատկանում են ամեն մի անձի, որպես իրավունքի սուբյեկտի՝ անկախ վերջինիս կողմից իր **իրավունակության իրացման**, կազմում են նրա անբաժանելի հատկանիշը: Հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները կազմում են մարդու **իրավական վիճակի հիմքը, նրա միջուկը, այն նվազագույն քանակը**, առանց որի մարդը չի կարող հանդես գալ որպես քաղաքական և քաղաքացիական հասարակության լիարժեք անդամ:

Դա բացատրվում է նրանով, որ հենց այդ իրավունքներն ու ազատություններն են, որ բնութագրում են պետության և անհատի միջև գոյություն ունեցող կապերի ու հարաբերությունների ամենածավալուն և անենաէական մասը: Այդ է պատճառը, որ Հայաստանի Հանրապետությու-

յան սահմանադրական իրավունքի համակարգում հատուկ տեղ է զբաղեցնում **մարդու և քաղաքացու իրավական վիճակը սահմանող ինստիտուտը**, որն իր ամրագրումն է ստացել Հանրապետության Սահմանադրության՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» 2 գլխում: Այդ գլխի նորմերում իր կոնկրետ արտահայտությունն է ստացել Հայաստանի սահմանադրական կարգի կարևոր հիմունքներից մեկը, համաձայն որի՝ «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան» (3 հոդվ.):

Այդ ինստիտուտի նորմերն իրենց լայն արտացոլումն են գտել նաև ընթացիկ օրենսդրության մեջ, որտեղ ավելի հանգամանալից բացահայտվում են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների վերաբերյալ սահմանադրական նորմերի բովանդակությունը և իրացման կարգը: Այդպիսի ակտերից են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» (1995թ.) օրենքը (2006թ. փոփոխություններով), ՀՀ 2011թ. ընտրական օրենսգրքը, «Հանրաքվեի մասին» (2001թ.) ՀՀ օրենքը և այլն:

Անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների ծավալի (ուրեմն՝ և իրավական վիճակի) վրա էապես ազդում է նրա **գործունակությունը**: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն այն կապում է, ամենից առաջ, անձի **տարիքի և առողջական վիճակի** հետ:

Ըստ ընդհանուր կանոնի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն իրենց իրավունքների ողջ ծավալից օգտվում և իրենց գործողությունների համար ամբողջ ծավալով պատասխանատվություն են կրում **յափահաս (18 տարեկան) դառնալուց հետո**:

Սակայն նրանք իրենց որոշ սահմանադրական իրավունքներից կարող են օգտվել ավելի վաղ հասակում: Այսպես, ծնված օրվանից Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն սեփականության և ժառանգություն ստանալու իրավունք, առողջության պահպանման իրավունք, կենսաթոշակ ստանալու իրավունք՝ կերակրողին կորցնելու դեպքում, բնակարանի իրավունք և այլն: Կրթության իրավունքը ծագում է 6 տարեկան հասակում, հասուն աշխատանքային տարիքը՝ 16 տարեկանում և այլն: Որոշ սահմանադրական իրավունքների իրականացումը հնարավոր է դառնում ավելի հասուն տարիքում: Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու համար պահանջվում է 25 տարեկան հասակ, Հանրապետության Նախագահ ընտրվելու համար՝ 35 տարեկան և այլն:

Անձի առողջական վիճակը կարող է հիմք հանդիսանալ որոշ սահմանադրական իրավունքներից զրկվելու, ինչպես նաև որոշ սահմանադրական պարտականություններից ազատվելու համար: Օրինակ, դատարանի վճռով անգործունակ (հոգեկան հիվանդ) ճանաչված անձինք ընտրել և ընտրվել չեն կարող: Կամ օրենքով սահմանված կարգով մտավոր և ֆիզիկական արատ ունեցող անձինք ազատվում են զինվորական պարտականություններից և այլն:

Հասարակության անդամների իրավական վիճակի առանձնահատկությունը կարող է պայմանավորված լինել նաև առանձին անձանց **սոցիալական (մասնագիտությունը, գործունեության բնագավառը, բանակում և վարչական մարմիններում ծառայելը և այլն) վիճակի առանձնահատկություններով**: Այսպես, ՀՀ Սահմանադրությամբ նախատեսվում է, որ կառավարության անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից (88 հոդվ.): Պատգամավորը նույնպես չի կարող զբաղվել նշված գործունեության տեսակներով, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից (65 հոդվ.): Սահմանադրությունն արգելում է դատավորներին և սահմանադրական դատարանի անդամներին՝ լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ (98 հոդվ., 2-րդ մաս) և այլն:

Անձի իրավական վիճակի հիմունքների **երրորդ տարրն իրավաբանորեն ամրագրված այն ընդհանուր սկզբունքներն են**, որոնց վրա կառուցվում է մարդու իրավական վիճակը: Դրանք դրսևորվում են անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրացման բոլոր ոլորտներում, անկախ այն բանից, թե **իրավունքի որ ճյուղի կողմից են կարգավորվում** այդ հասարակական հարաբերությունները: Խոսքը վերաբերում է իրավական վիճակի այնպիսի հիմնարար սկզբունքների, ինչպիսիք են՝ իրավունքների, ազատությունների և պարտականությունների **համընդհանրությունն ու հավասարությունը, դրանց անօտարելիությունն ու երաշխավորվածությունը**: Վերջինս արտահայտվում է նրանում, որ պետությունն իր վրա պարտականություն է վերցնում՝ ստեղծել անհրաժեշտ պայմաններ և ապահովել համապատասխան միջոցներ, մարդու իրավունքներն ու ազատությունները կենսագործելու համար (Սահմանադրության 3 հոդվ.):

§ 2. Մարդու և քաղաքացու իրավական վիճակի սկզբունքները

Մարդու և քաղաքացու իրավական վիճակի **սկզբունքներն** արտացոլում են **պետության և անհատի միջև արմատական հարաբերությունները՝ ելնելով հասարակության մեջ նրա ունեցած դիրքից**: Դրանց ազդեցությունն անձի իրավական վիճակի ձևավորման վրա՝ իսկայական է: Այդ սկզբունքների գործողության միջոցով է հնարավոր պարզել, թե արդյոք պետության մեջ ապահովված է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հավասարությունը, ընձեռված են արդյոք մարդուն հնարավորություններ՝ սեփական միջոցներով պաշտպանելու իր օրինական իրավունքներն ու ազատությունները և այլն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրել է անձի կարգավիճակի վերաբերյալ **մի շարք սկզբունքներ**, որոնք անմիջականորեն պայմանավորում են Հանրապետությունում ընդունված մարդու իրավունքների հայեցակարգի բովանդակությունը: Այդ սկզբունքներն են.

1. **իրավունքների, ազատությունների և պարտականությունների համընդհանրությունը**: Այդ սկզբունքի իմաստը կայանում է նրանում, որ **յուրաքանչյուր անձ, յուրաքանչյուր քաղաքացի**, որը հասել է օրենքով սահմանված տարիքի, անձի կարգավիճակի ձևավորման վրա ազդող օրենքով նախատեսված պայմանների առկայության դեպքում պետք է ունենա **փաստացի հնարավորություն՝ ձեռք բերելու իրավունքներ և կրելու պարտականություններ**: Այն առավել պարզորոշ դրսևորվում է սահմանադրական իրավունքներում, ազատություններում և պարտականություններում: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2 գլխի գրեթե բոլոր հոդվածներում ամրագրված իրավունքները, ազատություններն ու պարտականություններն ունեն համընդհանուր բնույթ, որովհետև պատկանում են կամ յուրաքանչյուր մաշդու, կամ յուրաքանչյուր քաղաքացու:

Համընդհանրության սկզբունքը հավասարապես տարածվում է բոլոր իրավունքների, ազատությունների և պարտականությունների վրա, անկախ նրանից, թե **իրավունքի որ ճյուղի կողմից են դրանք ամրագրված**: Օրինակ, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում սահմանված է, որ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, սոցիալական ծագումից և այլ դրույթումից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն (3 հոդվ.): Կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի քաղաքացիական իրա-

վունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն) բոլոր քաղաքացիների համար ճանաչում է հավասարապես (20 հոդվ.):

2. **մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և պարտականությունների հավասարությունը (իրավահավասարությունը)** անձի իրավական վիճակի առանցքային սկզբունքներից է: Այդ սկզբունքի բովանդակությունն իր արտահայտությունն է ստացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բազմաթիվ հոդվածներում, սակայն ամբողջովին և համակողմանի այն բացահայտվում է Սահմանադրության 14.1 հոդվածում: Այդ հոդվածների շարադրանքից հետևում է, որ **իրավահավասարության սկզբունքը դրսևորվում է մի քանի ձևով: 'Դրանք են՝ ա) մարդու իրավական վիճակը և քաղաքացու իրավական վիճակը՝ իրավահավասարության տեսանկյունից. բ) անձանց սահմանադրական իրավունքների, ազատությունների և պարտականությունների հավասարությունը՝ անկախ նրանց փաստացի տարբերություններից. գ) բոլորի հավասարությունն օրենքի և դատարանի առջև.**

Ա) Ինչպես ցանկացած պետությունում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները **իրավահավասար չեն** Հանրապետությունում բնակվող օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ: Խնդիրն այն է, որ ՀՀ քաղաքացիներն ունեն Հայաստանի Հանրապետության կողմից և՛ մարդու համար երաշխավորված իրավունքները, և՛ միայն ՀՀ քաղաքացիների համար երաշխավորված իրավունքները: **Մինչդեռ օտարերկրացիները և սպաքաղաքացիները** Հայաստանում օգտվում են միայն **յուրաքանչյուր մարդու համար** սահմանված իրավունքներից և ազատություններից: Ընդհանուր սկզբունքն այն է, որ օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք օգտվում են ՀՀ քաղաքացիների հետ հավասար բոլոր իրավունքներից, բացառությամբ քաղաքական իրավունքներից և ազատություններից, ինչպես նաև հողի նկատմամբ սեփականության իրավունքից, որոնք Սահմանադրությամբ երաշխավորված են միայն ՀՀ քաղաքացիների համար, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1 հոդվածն ազդարարում է. «Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, **արգելվում է** »:

Սահմանադրության այս նորմի բովանդակությունից հետևում է, որ իրավահավասարության սկզբունքի հետ ուղղակի հակասության մեջ է մարդկանց նկատմամբ **խտրականության ցանկացած դրսևորում՝** նրանց միջև առկա այս կամ այն բնական կամ սոցիալական տարբերությունների համար: Բերված սահմանադրական նորմը խտրականության արգելումը վերապահում է ոչ միայն քաղաքացիների իրավական վիճակին, այլև՝ օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց: Վերջիններս մարդուն վերապահված սահմանադրական իրավունքներից և ազատություններից օգտվում են ՀՀ քաղաքացիների հետ հավասար հիմունքներով:

Առանձնակի կարևորություն է ներկայացնում մեր ժամանակներում **տղամարդու և կնոջ իրավունքների և ազատությունների հավասարության և դրանց իրացման հավասար հնարավորությունների** հիմնահարցը: Ինչպես արտասահմանյան շատ երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում իրավունքների հավասարեցումը՝ սեռի հատկանիշով, հեռու է իր լուծումից, չնայած այդ կապակցությամբ դեռևս Խորհրդային Միությունը վավերացրել էր «Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականությունների վերացման մասին» ՄԱԿ-ի 1979 թ. դեկտեմբերի 18-ի դաշնագիրը:

Հայաստանի Հանրապետության իշխանություններն իրենց պարտականությունների և ընձեռված հնարավորությունների (օրենսդրական, կառավարման, դատական գործունեության) շրջանակներում **ձգտում են կանխել սեռի հատկանիշով խտրականության հնարավոր դեպքերը:** Այսպես, ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է մախատեսում այն անձանց նկատմամբ, ովքեր առանց հիմնավոր պատճառների **մերժում են հողի կնոջը կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձին** այդ շարժառիթով աշխատանքի ընդունել, կամ աշխատանքից ազատել (հոդվ. 156):

Չնայած դրան, կանանց իրավունքների իրականացման համար Հանրապետությունում ապահովված չեն հավասար հնարավորություններ: Կանայք քիչ են ներկայացված ղեկավար պաշտոններում, քիչ է նրանց թիվը ներկայացուցչական մարմիններում, գործարարների շրջանում: Աճող գործազրկության պայմաններում աշխատանքը կորցնելու կամ մոր աշխատանքի ընդունվելու մերժում ստանալը կանանց համար ավելի հավանական է դառնում, քան տղամարդկանց:

Սակայն, հարկ է նշել, որ տղամարդկանց և կանանց իրավահավասարությունն իրականում ամենևին էլ չի նշանակում նրանց հավասար իրավունքների և ազատությունների իրացման համար **հավասար հնարա-**

վորությունների ապահովում: Մասնավոր սեփականության պայմաններում սեփականատերերն աշխատանքի ընդունելիս պարտավոր չեն ապահովել տղամարդու և կնոջ իրավահավասարությունը: Երանք իրավասու են ընդունելու միայն տղամարդու (կամ միայն կնոջ), չնայած այդ նույն գործը կարող է կատարել նաև կինը: Այլ է խնդիրը, որ **պետական կազմակերպություններն իրավունք չունեն կամանց դնել տղամարդկանց համեմատ ոչ հավասար պայմանների մեջ** (եթե ծառայությունը չի պահանջում դրա կատարումը հատկապես տղամարդու կողմից):

Այդ նույնը կարելի է ասել Սահմանադրության 14.1 հոդվածում քվարկված անհատների միջև եղած փաստացի բոլոր տարբերությունների վերաբերյալ: **Տարբեր անհատների փաստացի իրավահավասարությունը, իրավունքների և ազատությունների հավասարությունը** նրանց համար նշանակում է **տարբեր հնարավորություններ** իրենց հավասար իրավունքների և ազատությունների իրացման գործում: Յուրաքանչյուր մարդ սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառների ու հանգամանքների ուժով տարբեր կերպ է իրացնում իր հնարավորությունները: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (39 հոդվ.) յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Սակայն կրթության համընդհանուր վճարովիության պայմաններում, անկասկած, **ունեղք քաղաքացիների՝** կրթություն ստանալու հնարավորությունն անհամեմատ մեծ է, քան **ունեզուրկ քաղաքացիներիը**: Բնականաբար, պետությունը պարտավոր է օգտագործել իրավական միջոցներ, որպեսզի կրճատի քաղաքացիների՝ կրթություն ստանալու հնարավորությունների էական տարբերությունը: Այդ առնչությամբ սահմանված են առանձին խումբ անձանց համար արտոնություններ (հաշմանդամների, ազատամարտիկների և ծնողազուրկ երեխաների համար և այլն):

Սակայն, չէ՞ որ ցանկացած արտոնություն, անգամ այն անձանց համար, ովքեր իրավահավասարության պայմաններում գտնվում են **փաստացի ոչ նպաստավոր վիճակում**, նշանակում է անհավասարություն: Այլ կերպ ասած, իրավահավասարությունը նշանակում է **արտոնությունների արգելք**, իսկ սուբյեկտիվ իրավունքների փաստացի ձեռքբերման հավասարեցումը հնարավոր է միայն արտոնությունների տրամադրման միջոցով, առավելապես նրանց, **ովքեր չեն կարող մյուսներին հավասար օգտվել իրենց իրավունքներից** և ազատություններից (երեխաներ, կենսաբույժականներ, հաշմանդամներ, պատերազմի մասնակիցներ, մյութապես աննպաստավորներ և այլք):

Գ) իրավահավասարությունը դրսևորվում է նաև **օրենքի առջև բոլորի հավասարության** և **օրենքով հավասար պաշտպանության** սկզբունք-

քների ձևով, որն իր ամրագրումն է ստացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1 հոդվածում:

Օրենքի առջև բոլորի հավասարությունը նշանակում է, որ օրենքը, դրա հանձնարարականները հավասար կերպով պարտադիր են բոլոր հասցեատերերի համար, **անկախ նրանց փաստացի տարբերություններից**: Սակայն, պետաիրավական առումով, ինչպես զարգացած երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում, առանձին դեպքերում բույլատրվում է **անհավասարություն** օրենքի առջև, մասնավոր, երբ **անհրաժեշտ է պաշտպանել այլ սահմանադրաիրավական արժեքներ**: Գա վերաբերում է, մասնավորապես, իշխանության ներկայացուցչական մարմինների **պատգամավորներին, դատավորներին, որոշ կատեգորիայի պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու կարգին**: Վերջիններիս անձեռնմխելիությանը օժտելը նպաստակ ունի ապահովել նշված պաշտոնատար անձանց անվտանգությունն ու անկախությունը:

Օրենքով հավասար պաշտպանությունը նշանակում է բոլորի հավասարությունն անկողմնակալ դատարանի առջև անկախ նրանց նյութական ու պաշտոնական դրությունից և այլ փաստացի տարբերություններից: Օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սկզբունքը վերաբերում է ոչ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, այլև օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց: Այդ է վկայում ՀՀ քրեական օրենսգրքը (7 հոդվ.), ուր ասված է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հանցագործություն կատարած ցանկացած անձ ներսկա է քրեական պատասխանատվության սույն օրենսգրքով:

3. Մարդու իրավական վիճակի կարևորագույն սկզբունք է **իրավունքների և ազատությունների անօտարելիությունը**: Այդ սկզբունքի համար հիմք է հանդիսանում **մարդու բնական իրավունքների ճանաչումը**, որոնք պատկանում են նրան ի ծնն, ուստի ոչ ոք չի կարող նրան զրկել այդ իրավունքներից ու ազատություններից: Այդ միտքն ամրագրվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3 հոդվածում, որի համաձայն՝ պետությունը ապահովում է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին համապատասխան: Եթե նկատի ունենանք, որ Սահմանադրության 6 հոդվածի համաձայն՝ միջազգային նորմերն ու սկզբունքները համարվում են Հայաստանի իրավունքի համակարգի բաղկացուցիչ մասը և գերակայություն ունեն ազգային օրենսդրության նկատմամբ, ապա կարելի է ասել, որ Սահմանադրությունը ճանաչում է

մարդու իրավունքների և ազատությունների՝ միջազգային-իրավական ամրագրման առաջնությունը դրանց օրենսդրական ամրագրումից: Փաստորեն ստացվում է, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները ոչ թե սահմանվում են օրենսդրությամբ, այլ պետք է ճանաչվեն (երաշխավորվեն, պաշտպանվեն) պետության կողմից՝ որպես **արդեն գոյություն ունեցող** մարդու բնական իրավունքներ և ազատություններ:

Մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական ամրագրման համար հիմք են հանդիսացել այնպիսի կարևոր միջազգային փաստաթղթեր, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1948թ. դեկտեմբերի 10-ին, Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների մասին 1950 թվականի եվրոպական համաձայնագիրը, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրերը և այլն:

Դրա հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետությունն ընդգրկվել է Եվրախորհրդի կազմում, ուստի օրենսդրական գործընթացը (մասնավորապես, մարդու իրավունքների վերաբերյալ) Ազգային ժողովի կողմից իրականացվում է եվրոպական այդ կառույցի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան: Արդեն մահապատիժը, որպես պատժամիջոց, հանվել է ՀՀ քրեական օրենսգրքից: Վեներիկյան սահմանադրական հանձնաժողովի խորհրդով վերանայվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որի մեջ կատարված փոփոխությունները հիմնավորվել են մարդու իրավունքների և ազատությունների ընդլայնման և երաշխավորվածության տեսանկյունից:

Մարդու հիմնական իրավունքները և ազատությունները **բնական ճանաչելու փաստից** տրամաբանորեն հետևում է դրանց **անօտարելի լինելը**: Դա նշանակում է, որ այդ իրավունքներն ու ազատություններն այն նվազագույն քանակությունն է, որի թելուգ **աննշան օտարումը՝ հոգուտ պետական իշխանության**, կխաթարի մարդու բուն ազատության գաղափարը, իշխանությունը կդարձնի բռնատիրական:

Իրավունքների և ազատությունների անօտարելիությունը չի բացառում որոշակի արտակարգ իրադրությունների դեպքում, օբյեկտիվ անհրաժեշտությունից ելնելով, **դրանց ժամանակավոր սահմանափակումը**: Սահմանադրության 43 և 44 հոդվածներում նշված են, որ մարդու և քաղաքացու որոշ հիմնական իրավունքներ և ազատություններ կարող են ժամանակավորապես սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակա-

կան կարգի, հանրության առողջության, այլոց իրավունքների պաշտպանության, ռազմական դրության և այլ դեպքերում:

§ 3. Սահմանադրական իրավունքների, ազատությունների և պարտականությունների հասկացությունն ու բովանդակությունը

Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչպես վերը նշվեց, կազմում են նրանց իրավական կարգավիճակի հիմնական տարրը: Վերջիններիս բնույթն ու բովանդակությունը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է քննարկել դրանց հասկացությունը և դրանց միջև եղած կապերին բնորոշ առանձնահատկությունները:

Մարդը բնությունից ծնվում է ազատ և այդ վիճակում, ինչպես պետության, այնպես էլ հասարակության առջև որևէ պարտականություն չի կրում: Ավելի շուտ, ընդհակառակը, որտեղ էլ որ նա ծնված կամ ապրելիս լինի, որպես մարդ կամ քաղաքացի, նա գտնվում է միջազգային հանրության պաշտպանության, ինչպես նաև իր երկրի (որի քաղաքացին է հանդիսանում) պաշտպանության ներքո:

Ազատությունը՝ որպես մարդու բնական վիճակ, պետականորեն միավորված հասարակության մեջ իրացվում է բնական իրավունքների միջոցով, որոնք պետության կողմից ճանաչվելուց և իրավական նորմերում ամրագրվելուց հետո դառնում են նրա (մարդու) սուբյեկտիվ իրավունքները: Մակայն իրավունքների ճանաչումը, որպես ազատության իրացման միջոց, ամենևին չի նշանակում, որ այդ երկու հասկացությունները նույնական են և դրանց միջև չկան տարբերություններ: «Ազատությունը» առավելապես առնչվում է անձի այնպիսի իրավագործությունների հետ, որոնք մատնանշում են նրա **ինքնուրույնության ոլորտները**, պաշտպանում են միջամտությունից նրա ներքնաշխարհը (խղճի, հավատքի, մտքի, ստեղծագործության ազատություն): Պետության կողմից օրենքներում ամրագրվելուց հետո ազատությունը ձեռք է բերում **քույրասարելի սահմանները**: Ազատության իրացման դեպքում անձը պետության կողմից որևէ դրական կամ բացասական վերաբերմունք չի սպասում: Օրինակ, անձը հաճախում է եկեղեցի, մասնակցում ժամերգությունների, ծիսակատարությունների, մի խոսքով՝ իրականացնում է սահմանադրությամբ իրեն վերապահված խղճի ազատությունը: Այս պարագայում անձի և պետության միջև առկա չէ որևէ փոխադարձ պարտավորվածություն:

Աինչդեռ **մարդու (քաղաքացու) իրավունքը**՝ նրա վարքագծի թույլատրելի չափն է, որն ապահովվում է պետության կողմից: Դա նշանակում է, որ անձն ունի հնարավորություն ընտրելու թույլատրելի վարքագծի դրսևորման տարբերակներից որևէ մեկը և այդ կապակցությամբ պահանջելու պետության (կամ պարտավոր պետական մարմնի, քաղաքացու, կազմակերպության) աջակցությունը: Պետության կողմից անձի իրավունքների ապահովման հիմնական միջոցը հանդիսանում է պարտավոր կողմի (պետական մարմնի, կազմակերպության, անձի կամ անձանց) վրա համապատասխան պարտականություն դնելը: Օրինակ, քաղաքացին ունի կրթության իրավունք, որին համապատասխանում է պետության համապատասխան մարմնի, տվյալ դեպքում՝ կրթության և գիտության նախարարության պարտականությունը՝ ապահովելու պատշաճ պայմաններ քաղաքացու կրթության իրավունքի իրականացման համար:

Իրավաբանական պարտականությունը՝ անձին վերապահված պարտադիր, անհրաժեշտ վարքագծի չափն է: Իրավաբանական պարտականություններին բնորոշ առանձնահատկությունները (ի տարբերություն բարոյական բնույթի, սովորության պարտականությունների)՝ դրանց միանշանակ հրամայական, անառարկելի լինելն է, ինչպես նաև կողմերից մեկի (տվյալ դեպքում պետության) իրավունքը՝ պահանջելու մյուս կողմից (տվյալ դեպքում՝ քաղաքացուց) կատարելու իր վրա դրված պարտականությունը: Սահմանադրությամբ ամրագրված պարտականությունների չկատարման կամ անբարեխիղճ կատարման դեպքում կարող է վրա հասնել պետական հարկադրանքի կիրառումը:

Սահմանադրական իրավունքները և ազատությունները մարդու ունեցած բոլոր իրավունքներն ու ազատությունները չեն, այլ դրանց ոչ մեծ, առավել կարևոր և հիմնական մասը: Այդ մասին է վկայում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42 հոդվածը, ուր ասված է. «Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ»: Դա նշանակում է, որ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների զգալի մասը կարգավորվում է իրավունքի այլ ճյուղերի կողմից, որոնք իրենց բովանդակությամբ չեն համարվում հիմնական, ուստի և սահմանադրական ամրագրում չեն ստանում:

Իրավունքների և ազատությունների այս կամ այն քանակության ամրագրումը սահմանադրության մեջ, մյուսներից՝ ընթացիկ օրենսդրությամբ, պայմանավորված չէ օրենսդրի ցանկությամբ: Դրա համար կան հիմնավոր պատճառներ:

Առաջին, Սահմանադրության մեջ ամրագրվում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք առավել կենսական նշանակություն ունեն անձի, հասարակության և պետության համար, որի համար էլ կոչվում են **հիմնական**: Այսպես, որպես բնական արարած մարդը կարիք ունի սննդի, հագուստի, բնակարանի և այլ անհրաժեշտ կենսապայմանների, որպեսզի կարողանա պահպանել իր գոյությունը: Դրա համար անհրաժեշտ են համապատասխան հնարավորություններ, որպեսզի նա կարողանա տեղի տալ այդ պայմանները: Ուստի մարդուն տրված (ավելի ճիշտ՝ նրա համար ճանաչված) **սոցիալ-տնտեսական իրավունքներն ու ազատությունները** համարվում են բնական իրավունքներ և ազատություններ, որոնք ամրագրվում են պետության սահմանադրության մեջ:

Որպես հասարակական արարած մարդը կարիք ունի հասարակական ակտիվության, այսինքն՝ այլ անձանց հետ քաղաքական կուսակցությունների, հասարակական միավորումների մեջ ընդգրկվելու և այդ ճանապարհով պետության և հասարակության գործերի կառավարմանը մասնակցելու անհրաժեշտություն: Այդ պահանջը նույնպես բնական է, որի իրականացման վերաբերյալ անձին տրված հնարավորությունները սահմանադրություններում ձևակերպվում են որպես **քաղաքական իրավունքներ և ազատություններ**:

Մարդու համար ավելի քան կենսական նշանակություն ունեն նրա **արժանապատվության հարգումը**՝ երաշխավորող իրավունքներն ու ազատությունները: Հայտնի է, որ մարդը, որպես այդպիսին, կարող է գոյություն ունենալ միայն հասարակության մեջ, այլ անձանց հետ սեղան կապի պայմաններում: Դրա հետ մեկտեղ, յուրաքանչյուր անձ անհատականություն է, կյանքի ինտիմ կողմեր, որոնք անմիջականորեն շոշափում են նրա արժանապատվությունը, ուստի կարիք ունի պաշտպանելու դրանք կողմնակի միջամտությունից: Այդ կապակցությամբ պետության կողմից անձին տրված հնարավորությունները սահմանադրության մեջ ամրագրվում են որպես մարդու **անձնական իրավունքներ և ազատություններ**, որոնք կազմում են նրա հիմնական իրավունքների և ազատությունների կարևոր բաղկացուցիչ մասը:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական ամրագրումը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ դրանք կարևոր են անձի համար, այլ նաև այն պատճառով, որ **այդ իրավունքներն ու ազատությունները ոչ պակաս կարևոր են նաև պետության համար**: Պետության և հասարակության գոյությունը պայմանավորված է հենց մարդկանց գործունեությամբ՝ իրենց կենսաապահովման բոլոր բնա-

զավարճեցում՝ **քաղաքական, տնտեսական և հոգևոր**: Այսպես, առանց սեփականության իրավունքի իրացման՝ չի կայող գոյություն ունենալ տնտեսական միջավայր, ուստի և պետության տնտեսական քաղաքականություն: Կամ՝ առանց քաղաքացիների կողմից իրենց ընտրական իրավունքի իրացման՝ անհնար կլինի հասարակության կառավարման կառույցների ստեղծումը և այլն: Այդ պատճառով էլ պետությունը ոչ միայն ճանաչում է հիմնական իրավունքներն ու ազատությունները և դրանք ամրագրում սահմանադրության մեջ, այլև պաշտպանում է դրանք՝ **որպես իր գոյության անհրաժեշտ պայմաններ**:

Երկրորդ, հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական ամրագրման պատճառներից մեկն էլ այն է, որ դրանք ունեն **սկզբնական** բնույթ: Դա նշանակում է, որ՝ ա) այդ իրավունքներն ու ազատությունները մարդու բնական իրավունքներն ու ազատություններն են, բ) պատկանում են յուրաքանչյուրին ի ծնե, գ) անօտարելի են:

Երրորդ, հիմնական իրավունքներն ու ազատություններն ունեն մի շարք իրավաբանական հատկանիշներ և իրացման եղանակներ, որոնցով տարբերվում են իրավունքի այլ ճյուղերի կողմից ամրագրվող իրավունքներից և ազատություններից՝

Ա) ունեն **սկզբնական բնույթ** և կազմում են մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի միջուկը: Մյուս բոլոր իրավունքները և ազատությունները ծագում են հիմնական (սահմանադրական) իրավունքներից և ազատություններից: Այսպես, **քաղաքացիական իրավունքի նորմերից** բխող բոլոր իրավունքներն իրենց հիմքում ունեն սեփականության և ժառանգման իրավունքի ու դրանց պաշտպանության վերաբերյալ սահմանադրական դրույթներ: **Աշխատանքային իրավունքի նորմերով** ամրագրված իրավունքները հենվում են աշխատանքի վերաբերյալ Սահմանադրության համապատասխան դրույթների վրա, և այդպես իրավունքի մյուս բոլոր ճյուղերի կողմից ամրագրվող իրավունքներն ու ազատությունները: Այդ է պատճառը, որ, ինչպես արդեն նշվել է, հիմնական կամ սահմանադրական իրավունքներն ու ազատությունները կազմում են մարդու իրավական կարգավիճակի գլխավոր տարրը:

Բ) հիմնական իրավունքներն ու ազատություններն արտահայտում են, ամենից առաջ, անմիջականորեն **մարդու և քաղաքացու կապերն ու հարաբերությունները պետության հետ**, որովհետև դրանց իրականացման ասպեկտումը հենց պետության սահմանադրական պարտականությունն է: Մինչդեռ մարդու և քաղաքացու ոչ սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացումն ընթանում է մարդու (քաղաքացու) և պետական մարմինների միջև փոխհարաբերությունների ձևով, նրանց և պետա-

կան ու հասարակական կազմակերպությունների միջև, կամ էլ քաղաքացիների՝ միմյանց միջև հարաբերությունների ձևով:

Գ) հիմնական իրավունքներն ու ազատություններն առանձնանում են իրենց **ծագման հիմքերով**: Հայաստանի Հանրապետության **քաղաքացիների** հիմնական իրավունքների և ազատությունների ծագման միակ հիմքը հանդիսանում է պատկանելությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությանը: Այդ իրավունքները և ազատությունները չեն կարող օտարվել կամ ձեռք բերվել **օրենսդրի հայեցողությամբ**, անկախ այն բանից՝ դրանք իրացվում են անձի կողմից, թե՛ ոչ: **Քաղաքացին չի կարող հրաժարվել** ոչ միայն իր սահմանադրական պարտականություններից, այլ նաև իր սահմանադրական իրավունքներից, քանզի դրանք կազմում են նրա իրավական կարգավիճակի գլխավոր տարրերը և կարող են դադարել միայն քաղաքացիությունը կորցնելու հետ մեկտեղ:

Դ) հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականություններն ունեն **իրավաբանական ամրագրման հատուկ ձև**: Դրանք ամրագրվում են պետության Հիմնական օրենքում, որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Ընդ որում, Սահմանադրությունը որոշում է հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների ինչպես բովանդակությունը, այնպես էլ ծավալը:

Ե) հիմնական իրավունքները և ազատություններն **ունեն պաշտպանության յուրահատուկ միջոցներ և մեթոդներ**, որոնց թվում՝ ա) միջազգային-իրավական, բ) դատական պաշտպանության (ընդհանուր իրավապետության դատարանների միջոցով), գ) գործադիր իշխանության մարմինների վարչաիրավական գործունեության միջոցներով, ինչպես նաև մարդու կողմից իր իրավունքների՝ օրենքով սահմանված ինքնապաշտպանության միջոցով:

Արտասահմանյան մի շարք երկրներում, սահմանադրական իրավունքների պաշտպանության թվարկված մեխանիզմներից գատ, նախատեսվում են պաշտպանության նաև այլ մեխանիզմներ, ինչպիսիք են, օրինակ, մարդու և պետական կառավարման մարմինների միջև վեճերի քննարկման վարույթը (մասնավորապես, վարչական դատարանների կողմից) աշխատանքային, ֆինանսական վեճերով (համապատասխան ճյուղային դատարանների կողմից) և այլն: Հայաստանի Հանրապետությունում 2008թ. գործում են վարչական դատարանները, որոնք կարևոր դեր են խաղում մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ **սահմանադրական (հիմնական) իրավունքները, ազատությունները և պարտականությունները դրանք մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի բովանդակությ-**

յունը կազմող ասավել կարևոր իրավունքները, ազատությունները և պարտականություններն են, որոնք նրան տրվում են ի ծնե, անօտարելի են և արժանանում են պետության կողմից բարձրագույն իրավաբանական պաշտպանության:

§ 4. Օտարերկրացիների իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն առանձին նորմեր չի բովանդակում օտարերկրացիների իրավական վիճակի մասին: Սակայն Սահմանադրության հոդվածների ճնշող մեծամասնությունը, որ վերաբերում է անձի քաղաքացիական իրավունքներին, որևէ տարբերություն չի դնում օտարերկրացիների և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջև, նշելով, որ դրանք պատկանում են **«յուրաքանչյուրին»**: Ինչ վերաբերում է այն իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին, որոնք Հայաստանի քաղաքացիները ձեռք են բերում քաղաքացիության ուժով (քաղաքական իրավունքներ, ազատություններ և պարտականություններ), ապա Սահմանադրությունը դրանք վերապահում է **«յուրաքանչյուր քաղաքացու»**: Հետևաբար, Հանրապետության Հիմնական օրենքը տարբերում է օտարերկրացու իրավունքներն ու պարտականությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացու իրավունքներից ու պարտականություններից՝ այն առումով, որ քաղաքացին ունի նաև մարդու համար սահմանված բոլոր իրավունքները, իսկ **օտարերկրացին չունի քաղաքացու համար նախատեսված իրավունքները**: Այսպես, Սահմանադրության 28 հոդվածը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին իրավունք է վերապահում ստեղծելու կուսակցություններ և անդամագրվելու դրանց, 30 հոդվածում սահմանվում է քաղաքացիների իրավունքը՝ մասնակցելու պետության գործերի կառավարմանը և ընտրություններին: Սահմանադրությամբ նախատեսված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նաև մի շարք այլ իրավունքներ՝ հողի սեփականության (31 հոդվ.) և այլ բնագավառներում:

Օտարերկրացիների իրավական վիճակն ավելի մանրամասն կարգավորվում է 2006թ. դեկտեմբերի 25-ին ընդունված՝ «Օտարերկրացիների մասին» օրենքով: Դրանում ամրագրված են օտարերկրացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու, բնակվելու, տեղաշարժվելու, տարանցիկ ուղևորություններ կատարելու, ելքի, կացության կարգավիճակ ստանալու կարգը, ինչպես նաև նրա իրավունքներն ու պարտականությունները:

Օտարերկրացի է համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձը, որն ունի այլ պետության քաղաքացիություն կամ չունի որևէ պետության քաղաքացիություն: Նա օգտվում է միջազգային իրավունքի նորմերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավունքներից ու ազատություններից: Միաժամանակ, օտարերկրացին պարտավոր է պահպանել Հայաստանի Հանրապետության օրենքները, հարգել մեր ժողովրդի ազգային սովորույթներն ու ավանդույթները:

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակը օրենքը կապում է նրանց **կացության կարգավիճակի հետ**: Սահմանվում է կացության երեք կարգավիճակ՝ ա) ժամանակավոր, բ) մշտական, գ) հատուկ:

Կացության ժամանակավոր կարգավիճակ տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե վերջինս հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավելի ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ: Այդպիսի հանգամանքները կարող են լինել՝ ա) ուսումը, բ) աշխատանքի թույլտվության առկայությունը, գ) ՀՀ քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում օրինական կարգով բնակվող օտարերկրացու հետ ամուսնությունը, դ) ՀՀ քաղաքացու կամ Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու մերձավոր ազգականը (ծնող, եղբայր, քույր, ամուսին, զավակ, տատ, պապ, թոռ) լինելը և ե) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը (հոդվ. 15):

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է **մինչև մեկ տարի** ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ մեկ տարով երկարացնելու հնարավորությամբ:

Կացության ժամանակավոր կարգավիճակ ունեցող օտարերկրացիների իրավական վիճակից էապես տարբերվում է **կացության մշտական կարգավիճակ** ունեցող անձանց իրավական վիճակը: Դա, ամենից առաջ, պայմանավորված է կացության այդ տեսակի ձեռքբերման հիմքերի առանձնահատկությամբ: **Մշտական** կացության կարգավիճակ տրվում է օտարերկրացուն, եթե նա՝ ապացուցում է՝ ա) Հայաստանում մերձավոր ազգականների (ծնող, ամուսին, եղբայր, քույր, զավակ, տատ, պապ, թոռ) առկայությունը, բ) Հայաստանի Հանրապետությունում ապահովված է բնակարանով և գոյության միջոցներով, որոնք բավարար են իր և իր խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամների գոյության ծախսերը հոգալու համար, կամ ունի ընտանիքի անդամ (անդամներ), որոնք ի վիճակի են միջոցներ հատկացնել նրա կեցության համար (հոդվ. 16):

Օրենքի համաձայն, մշտական կացության կարգավիճակ կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող օտարերկրացուն:

Մշտական կացության կարգավիճակ տրվում է **5 տարի ժամկետով՝** յուրաքանչյուր անգամ **նույն ժամկետով երկարաձգելու** հնարավորությամբ: Նման կարգավիճակ ունեցող անձինք Հայաստանի Հանրապետությունից 6 ամսից ավել բացակայելու դեպքում այդ մասին պարտավոր է գրավոր ծանուցել ՀՀ ոստիկանության լիազորված պետական կառավարման մարմին: Նշված պահանջի խախտումը կարող է հիմք հանդիսանալ կացության կարգավիճակ տալու մասին որոշման ուժը կորցրած ճանաչելու համար:

Կացության հատուկ կարգավիճակ տրվում է առավելապես **ծագումով հայ օտարերկրացիներին**, ինչպես նաև այն անձանց, ովքեր ցանկություն են հայտնում Հայաստանի Հանրապետությունում զբաղվելու տնտեսական և մշակութային գործունեությամբ: Այս կարգավիճակի սահմանումը նպատակ ունի պայմաններ ստեղծել սփյուռքի հայությանը և օտարերկրյա գործարարներին Հանրապետության տնտեսական և մշակութային զարգացմանը ներգրավելու խնդրում: Այդ կապակցությամբ «Օտարերկրացիների մասին» օրենքը (18 հոդվ.) նրանց համար նախատեսում է Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Կացության հատուկ կարգավիճակը տրվում է **տասը տարի** ժամանակով, որը կարող է **տրվել մեկից ավելի անգամ:**

Կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց հաշվառումն իրականացնում է ՀՀ ոստիկանության համապատասխան լիազորված մարմինը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Կացության հատուկ կարգավիճակ տալու կամ մերժելու որոշումը կայացնում է Հանրապետության Նախագահը, որը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Բացի իրենց կացության կարգավիճակից բխող իրավունքներից և պարտականություններից, օտարերկրյա քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում ունեն նաև մի շարք իրավունքներ և պարտականություններ, որոնք Մահմանադրությամբ վերապահված են յուրաքանչյուր մարդու: Մասնավորապես, օտարերկրյա քաղաքացին Հայաստանի Հանրապետությունում ունի մտքի, խոսքի, խղճի, կրոնի ազատության իրավունք, իր ազգային լեզուն, մշակույթը և սովորույթները պահպանելու իրավունք: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նրա համար ապահովված է անձնական և ընտանեկան կյանքի՝ անօրինական

միջամտությունից օրենքով պաշտպանության, անձի և բնակարանի անձեռնմխելիության, հաղորդակցության գաղտնիության, պատվի և արժանապատվության, կյանքի և առողջության, անձնական ազատության և գույքի դեմ ոտնձգություններից դատական պաշտպանության՝ ՀՀ քաղաքացուն հավասար իրավունք: Օտարերկրյա քաղաքացին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ունի սեփականության, աշխատանքի և ձեռնարկատիրական գործունեության իրավունք: Նա ՀՀ քաղաքացուն հավասար իրավունք ունի ժառանգելու, կտակելու կամ նվիրաբերելու իր սեփականությունը, օգտվելու ապահովագրական, և այլ ծառայություններից, անդամակցելու բարեգործական, մշակութային, արհմիութենական, մարզական և մյուս հասարակական կազմակերպություններին՝ առանց դրանց ղեկավար մարմիններում պաշտոն զբաղեցնելու, եթե դա չի հակասում այդ կազմակերպությունների կանոնադրություններին:

Դրա հետ մեկտեղ, օտարերկրյա քաղաքացու **իրավական վիճակի առանձնահատկություններից է** նաև այն, որ նա Հայաստանի Հանրապետությունում չունի ընտրական իրավունք, չի կարող ընտրվել կամ նշանակվել այնպիսի պաշտոնների կամ զբաղվել այնպիսի գործունեությամբ, որոնց համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվում է ունենալ ՀՀ քաղաքացիություն:

Օտարերկրյա քաղաքացին Հայաստանի Հանրապետությունում վճարում է հարկեր, տույքեր և կատարում ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումներ: Նա ՀՀ զինված ուժերում ծառայելու պարտականություն չի կրում:

Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական, վարչական կամ այլ բնույթի իրավախախտում կատարած օտարերկրյա քաղաքացին ենթակա է պատասխանատվության ՀՀ քաղաքացիների հետ հավասար հիմունքներով: Իսկ եթե խախտումը կատարված է նրա կացության կարգավիճակի հետ, ապա կարող է գրկվել կացության կարգավիճակից, որից հետո նա պարտավոր է կացության կարգավիճակից զրկվելու մասին որոշման մեջ նախատեսված ժամկետում հեռանալ Հայաստանի Հանրապետությունից: Այդ դեպքում համապատասխան պաշտոնատար անձինք պարտավոր են ոչ ոչ, քան քսանչորս ժամվա ընթացքում այդ մասին տեղյակ պահել օտարերկրյա քաղաքացու շահերը պաշտպանող պետության ներկայացուցչությանը, իսկ փախստականների դեպքում՝ ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարին:

Օտարերկրացիների իրավական վիճակի վերաբերյալ վերը շարադրված դրույթները, բացի նրանց կացության կարգավիճակներից, հավասարապես վերաբերում են նաև Հայաստանի Հանրապետությունում

բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց: Բացառություն են կազմում միջազգային պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված արտոնություններն ու դիվանագիտական անձեռնմխելիությունը, որոնք վերապահված են օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների ծառայողներին:

§ 5. Մարդու իրավունքների միջազգային իրավական հիմքերը

Թեև մարդու իրավունքների հարգման և պահպանման գաղափարն ունի վաղեմի պատմություն, այնուհանդերձ, այն միջազգային հանրության կողմից որպես սոցիալական բարձր արժեք ճանաչվել, ձևավորվել և իրավաբանական պաշտպանության է վերցվել վերջին հարյուրամյակում:

Պատմական տարբեր փուլերում «մարդու իրավունքներ և ազատություններ» հասկացության բովանդակությունն ու ծավալը միատեսակ չեն եղել: Մինչև XX դարի սկիզբը մարդու իրավունքների վերաբերյալ հարցերը կարգավորվել են առափնյապես ներպետական օրենսդրությամբ: Պետություններն ու նրանց իշխանավորներն իրենց հպատակներին ավելի շատ ծանրաբեռնել են պարտականություններով, քան օժտել իրավունքներով:

Հիշյալ շրջանում միջպետական հարաբերություններ կառուցելիս պետություններն անվերապահորեն ելնում էին այն կանխադրույթից, թե պետության և նրա հպատակների փոխհարաբերությունը յուրաքանչյուր պետության ներքին գործն է և չի կարող միջպետական հարաբերությունների հարց հանդիսանալ:

Միաժամանակ, բուրժուական հեղափոխությունների ժամանակաշրջանի սահմանադրությունները, որոնք կրում էին այդ հեղափոխությունների կողմից առաջ քաշված հավասարության և եղբայրության կարգախոսների ազդեցությունը, թեկուզ ձևականորեն, սակայն օրենսդրորեն արդեն հռչակել էին մարդու քաղաքացիական իրավունքների բնական և անօտարելի բնույթը:

Մարդու բնական իրավունքների տեսությունը, որի համաձայն քաղաքացիական և քաղաքական իրավունքները յուրաքանչյուր անձի ի ծնե պատկանող բնական և անօտարելի իրավունքներ են, բուրժուական հեղափոխությունների մեծագույն նվաճումներից մեկն էր և ընկած էր 1789 թ. Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրի, 1787 թ. ԱՄՆ-ի Սահմանադրության և մարդու իրավունքների բնական

բնույթը ճանաչող այլ պետությունների կողմից ընդունված օրենսդրական ակտերի հիմքում: Ֆրանսիայի՝ 1789 թ. օգոստոսի 26-ի Մարդու և քաղաքացու իրավունքների վերաբերյալ հռչակագրում մասնավորապես ասվում է.

ա) մարդիկ ծնվում և ապրում են հավասար իրավունքներով.

բ) ազատությունը կայանում է այն ամենն անելու մեջ, ինչը մյուսներին վնաս չի պատճառում.

գ) ոչ ոք չի կարող մեղադրվել, ձերբակալվել կամ կալանվել այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված կարգի պահպանմամբ.

դ) յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ հակառակը չի ապացուցված.

ե) իր մտքերն ու կարծիքն ազատորեն արտահայտելը մարդու ամենաթանկ իրավունքներից մեկն է, այդ պատճառով յուրաքանչյուր ոք կարող է արտահայտվել, գրել և տպագրել ազատորեն: Այդ ազատության չարաշահման համար պատասխանատվություն կարող է կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում:

Եթե բուրժուական հեղափոխությունները և XIX-XX դարերում տեղի ունեցած սոցիալական մյուս խոշոր ցնցումները շատ երկրների կանգնեցրին ժողովրդավարացման ուղու վրա, որով հիմք դրվեց պետությունների ներսում մարդու իրավունքների և հիմնական ազատությունների ճանաչմանը, ապա առաջին համաշխարհային, հետագայում նաև երկրորդ համաշխարհային պատերազմներն առավել ցայտուն բացահայտեցին մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում գործող միջազգային իրավական համակարգի թերությունները: Այդ պատերազմների ընթացքում միլիոնավոր մարդիկ զրկվեցին ամենակարևոր իրավունքից՝ կյանքի, ապրելու իրավունքից:

Ճիշտ է, Ազգերի լիգայի կազմավորումից (1919 թ.) հետո ընդունվեցին մի շարք միջազգային համաձայնագրեր, որոնք վերաբերում էին կանանց և երեխաների առևտրի կանխմանը, ստրկության և ստրկավաճառության դեմ պայքարին, զինված ընդհարումների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանությանը, սակայն *մարդու իրավունքների համընդհանուր պաշտպանության միջազգային իրավական սկզբունքի և նորմերի ձևավորման հիմքը դրվեց ՄԱԿ-ի ստեղծմամբ:*

1945 թ. ՄԱԿ-ի կանոնադրության ընդունումը շրջադարձային եղավ մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության գործում: Դրանում մարդու իրավունքների և հիմնական ազատությունների վերաբերյալ հատուկ դրույթների նախատեսումը նպատակ ու-

ներ վերականգնել երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին միլիոնավոր մարդկանց ոսնահարված իրավունքներն ու ազատությունները:

ՄԱԿ-ի կանոնադրության առաջաբանում նշվում էր, որ միացյալ ազգերի ժողովուրդները վճռել են վերահաստատել հավատարմարդու հիմնական իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, տղամարդու և կնոջ իրավահավասարության նկատմամբ:

Կանոնադրության 1-ին հոդվածում, որպես անդամ պետությունների նպատակ, հռչակվում է մարդու իրավունքների և բոլորի համար հիմնական ազատությունների հարգման խրախուսումն ու զարգացումը՝ առանց ռասայական, սեռային, լեզվական և կրոնական խտրականության:

ՄԱԿ-ի կանոնադրությունը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հարգման հարցում ոչ միայն խտրականություն չի դնում սեռային, ազգային, ռասայական կամ այլ հատկանիշների առումով, այլև որևէ տարբերակում չի նախատեսում ինքնիշխան պետության տարածքում բնակվող անձանց և անկախությունից զրկված ազգերի ու ժողովուրդների ներկայացուցիչների միջև:

ՄԱԿ-ի կանոնադրությանը հաջորդեց 1948թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ «որպես առաջադրանք, որի կատարմանը պետք է ձգտեն բոլոր ազգերը և պետությունները»: Համընդհանուր հռչակագիրը ճանաչեց մարդու իրավունքների բնական բնույթը և առաջին իսկ հռչակվածում հռչակեց, որ «բոլոր մարդիկ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով ծնվում են ազատ և հավասար»: Չնայած այդ փաստաթուղթը կրում էր հռչակագրի բնույթ, սակայն այն, ըստ էության, բարեխղճորեն կատարվում է անդամ պետությունների կողմից:

ՄԱԿ-ի հովանու ներքո հետագայում ընդունվեցին մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ բազմաթիվ միջազգային պայմանագրեր, դաշնագրեր և համաձայնագրեր, որոնցով կարգավորվում և պաշտպանվում էին ինչպես մարդկանց առանձին խմբերի (կանանց, երեխաների, ազատագրվածների, փախստականների և այլն), այնպես էլ անհատ անձանց անձնական իրավունքներն ու ազատությունները:

Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության վերաբերյալ կարևորագույն փաստաթղթեր հանդիսացան Ցեղասպանության ոճրագործության կանխման և դրա համար պատժի մասին 1948թ. դաշնագիրը, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1965թ. դաշնագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. ընդունված միջազգային դաշնագիրը և դրան

կից արձանագրությունը, ինչպես նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. դաշնագիրը, 1975թ. ԵԱՀԽ եզրափակիչ ակտը և մարդու իրավունքների վերաբերյալ տարածաշրջանային մյուս կազմակերպությունների ընդունած փաստաթղթերը:

Ներկայումս մարդու իրավունքների պաշտպանությունը ճանաչված է որպես միջազգային իրավունքի *jus cogens* (հիմնական) սկզբունք: Մա նշանակում է, որ պետությունները, անկախ իրենց զարգացման մակարդակից, քաղաքական, տնտեսական և սոցիալական կառուցվածքից, պարտավոր են ստանձնել միասնական համընդգրկուն միջազգային իրավական պարտականություններ՝ ի շահ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, և դրանք ապահովել յուրաքանչյուրի համար՝ անկախ սեռից, ազգությունից, ռասայից, դավանանքից կամ այլ հատկանիշներից:

Պետությունները, մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրեր կնքելիս, հաճախ իրենց իրավունքների մի մասը կամովին զիջում են միջազգային այնպիսի մարմինների, ինչպիսիք են միջազգային դատարանները, հանձնաժողովներն ու կոմիտեները, որոնք իրավասու են հսկողություն իրականացնել պայմանագրի մասնակից պետության կողմից իր պարտավորությունների կատարման վրա: Սակայն մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմքում ընկած են մի շարք հանրաճանաչ նորմեր, որոնք պետությունները պարտավոր են պահպանել ամենայն բարեխղճությամբ՝ անկախ այդ կապակցությամբ միջազգային կառույցների կողմից իրականացվող վերահսկողության: Դրանք են՝ պետությունների ինքնիշխան հավասարությունը, նրանց ներքին գործերին չմիջամտելը, բոլոր մարդկանց իրավահավասարությունը և նրանց նկատմամբ խտրականության ազդեցումը, բոլոր պետությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների համընդհանուր հարգումն ու պահպանումը, մարդու առանձին իրավունքների ճանաչումը և պաշտպանությունը՝ անկախ ցանկացած արտակարգ իրավիճակից և պայմաններից:

Նշված սկզբունքները պետությունները հաշվի են առնում մարդու իրավունքների վերաբերյալ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ պայմանագրեր կնքելիս: Ընդ որում, եթե կնքվի որևէ պայմանագիր, որը կհակասի նշված և միջազգային իրավունքի մյուս *jus cogens* սկզբունքներին, ապա նման պայմանագիրը կհամարվի անիրավագոր:

Ներկայումս մարդու իրավունքներին առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ կնքվել են վիթխարի թվով միջազգային երկկողմ և բազմակողմ պայմանագրեր: Հայաստանի Հանրապետությունը միացել է մեծ թվով

միջազգային բազմակողմ պայմանագրերի, որոնք կարգավորում են մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող առավել կարևոր հարաբերությունները:

Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմքում ընկած շատ փաստաթղթեր նախատեսում են, որ մարդու համար կենսական նշանակություն ունեցող իրավունքները պետք է պաշտպանվեն ցանկացած իրադրության դեպքում: Այսպես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. դաշնագրի 4 հոդվածի համաձայն, նույնիսկ պետության մեջ արտակարգ դրության ժամանակ, երբ ազգի կյանքին վտանգ է սպառնում և դրա առկայության մասին հայտարարվում է պաշտոնապես, միևնույն է, չի կարելի որևէ շեղում թույլատրել մարդու այնպիսի իրավունքների նկատմամբ, որոնք առնչվում են ռասայական, սեռային, յեզվական կրոնական և այլ հատկանիշներին, ինչպես նաև չի կարող որևէ կերպ վտանգվել մարդու ապրելու, մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, նա չի կարող ենթարկվել խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Դաշնագիրը նախատեսում է նաև մի շարք այլ իրավունքներ, որոնք ցանկացած պարագայում չեն կարող սահմանափակվել:

Դրա հետ մեկտեղ, մարդու բնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային դաշնագրերին միացած պետությունները պարտավոր են **իրենց ազգային օրենսդրության մեջ արտացոլել** այդ դաշնագրերում բովանդակված նորմերի պահանջները: Այդ ճանապարհով է ընթացել Հայաստանի Հանրապետությունը, որի Սահմանադրության 2 գլխում («Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները») ամրագրված բոլոր նորմերն ընդօրինակված են իր կողմից ստորագրված միջազգային իրավական փաստաթղթերից: Ավելին, Հայաստանի Հանրապետությունը, ելնելով մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական նորմերից և սկզբունքներից, իր Սահմանադրության 43 և 44 հոդվածներում նախատեսում է, որ պետական ու հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների ու ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության նպատակով մարդու առանձին իրավունքներ օրենքի հիման վրա կարող են սահմանափակվել, միաժամանակ հատուկ նշելով, որ չեն կարող սահմանափակվել Հիմնական օրենքի 15, 17-22 և 42 հոդվածներում նշված իրավունքներն ու ազատությունները: Իսկ դրանք վերաբերում են մարդու կյանքի իրավունքին, որ մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, դաժան կամ նրա

արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի, որ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքն անօրինական միջամտությունից, իր պատիվն ու բարի համբավը ռսմնճությունից պաշտպանելու իրավունք և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանությունն այսօր իրագործվում է ինչպես ներպետական, այնպես էլ **միջազգային իրավական համակարգերի օգնությամբ**, որոնք գործում են ոչ թե որպես առանձին, միմյանցից անջատ, այլ մեկ միասնական համակարգի տարրեր ճյուղեր: Ավելին, միջազգային հարաբերությունների զարգացումը, պետությունների տնտեսական և քաղաքական ինտեգրացման խորացումն ի վերջո հանգեցրին նրան, որ այսօր աշխարհի շատ ու շատ երկրներ միարժեք ընդունում են միջազգային իրավունքի առաջնայնությունն իրենց ազգային օրենսդրության նկատմամբ:

§ 6. Իրավունքների և ազատությունների սահմանափակումը

Մարդու իրավունքները և ազատությունները նրա սուբյեկտիվ, անհատական իրավունքներն ու ազատություններն են: Սակայն դրանք իրականացվում են հասարակության մեջ, առավելապես կոլեկտիվ հիմունքներով, որը պահանջում է մարդկանց համագործակցություն: Այդ հանգամանքը պայմանավորում է իրավունքների և ազատությունների սահմանափակման անխուսափելիությունը:

Սակայն խնդիր կայանում է նրանում, թե ինչ հիմունքներով, որքան ժամանակով և ինչ սահմաններում պետությունը պետք է իրականացնի այդ: Նման դեպքերում պետական իշխանության համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ՝ **«ազատվելու կապանքներից», որին միշտ ձգտում է նա:** Ավելորդ գայթակղությունն այդ կապակցությամբ կարող է հասցնել չարաշահումների, որն էլ անթույլատրելի է: Այդ և պատճառը, որ աշխարհի գրեթե բոլոր երկրների սահմանադրությունները, ընդունելով իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը, միաժամանակ սահմանում են դրա կոնկրետ հիմքերը (հնարավորության սահմաններում սպառնչ) և իրականացման կարգը: Այսպես, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի 19 հոդվածում ասվում է. «Քանի որ ներկա Հիմնական օրենքի համաձայն հիմնական իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով կամ օրենքի հիման վրա, այդպիսի օրենքը պետք է լինի ընդհանուր գործողության, այլ ոչ թե տարածվի առանձին

դեպքի վրա»: Կամ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 55 հոդվածում (մաս 3) գրված է, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել դաշնային օրենքով միայն այն չափով, որքանով որ այն անհրաժեշտ է սահմանադրական կարգի, բարոյականության, այլ անձանց առողջության, իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, պետության անվտանգության և երկրի պաշտպանության ապահովման նպատակով:

Դժվար չէ նկատել, որ արտասահմանյան երկրների սահմանադրությունները, ընդունելով իրավունքների և ազատությունների սահմանափակման անհրաժեշտությունը, հոգ են տանում, որպեսզի այն իրականացվի օրենքի հիման վրա, դրանով իսկ զրկելով գործադիր մարմիններից այդ բնագավառում կամայականությունների հնարավոր դրսևորումներից: Սակայն դրանցում չկան նշումներ այն մասին, թե որ իրավունքներն ու ազատություններն են, որ ենթակա են սահմանափակման և ինչ ժամանակով: Այսինքն՝ արտասահմանյան շատ երկրների սահմանադրություններ այդ խնդրի լուծումը թողնում են օրենքին, ուրեմն և օրենսդրի կամայականությանը:

Այլ է քննարկվող հարցի դրվածքը Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքում: Դրա 43 հոդվածում գրված է. «...Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»:

Սահմանադրական այս նորմից հետևում է երկու կարևոր հանգամանք. ա) Սահմանադրությունն ուղղակի մատնացույց է անում, թե հատկապես որ իրավունքներն ու ազատություններն են ենթակա սահմանափակման և բ) սպառիչ կերպով թվարկում է այն քոլոր հիմքերը, որոնց առկայությամբ կարող են սահմանափակվել դրանք:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 43 հոդվածի չարադրանքից հետևում է, որ դրանում նշված հիմքերի առկայության դեպքում կարող են սահմանափակվել մարդու և քաղաքացու անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը, որն իր մեջ ներառում է առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ տեղեկություններ հավաքելու, պահպանելու և օգտագործելու անթույլատրելիությունը, նամակագ-

րության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը (հոդվ. 23), բնակարանի անձեռնմխելիության իրավունքը (հոդվ. 24), ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը (հոդվ. 25), կարծիքի և խոսքի ազատության իրավունքը (հոդվ. 27), միավորումներ և կուսակցություններ կազմելու իրավունքը (հոդվ. 28), խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը (հոդվ. 29), ընտրելու և ընտրվելու իրավունքը (հոդվ. 30), քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման իրավունքը (հոդվ. 30.1) և գործադրալի իրավունքը (հոդվ. 32, 3-րդ մաս): Նշված իրավունքների և ազատությունների սահմանափակման համար կարող են հիմք հանդիսանալ ա) պետական և հասարակական անվտանգության պաշտպանությունը, բ) հասարակական կարգի պահպանումը, գ) հանրության առողջության ու բարքերի պաշտպանությունը, դ) այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանությունը:

Թվարկված հիմքերն ինքնըստիներան կասկած չեն հարուցում, քանզի խոսքը գնում է մարդկանց տարբեր խմբերի, միգրացե մեծամասնության շահերի պաշտպանության մասին՝ հնարավոր չարաշահումներից, կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների իրացման վերաբերյալ անհրաժեշտ պայմաններ ստեղծելու մասին: Այստեղ ամբողջ հարցը նրանում է, որ Սահմանադրությամբ թվարկվում են իրավունքների սահմանափակման բավական մեծաթիվ հիմքեր, որոնց իմաստը, բովանդակությունն օրենսդրությամբ սահմանված չեն, որն էլ կարող է չարաշահումների պատճառ դառնալ: Օրինակ, ինչ պետք է հասկանալ «եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության համար» արտահայտության տակ: Այն ո՞ր արարքները, գործողությունները կամ դեպքերն են, որոնք կարող են վտանգ ներկայացնել պետական և հասարակական կարգի համար: Արդյո՞ք այդ արարքներն ու գործողությունները մարդու և քաղաքացու իրավունքները սահմանափակելու լիազորություն ունեցող պետական մարմինների կողմից չափից ավելի լայն մեկնաբանության չեն ենթարկվի, քան դրանք կլինեն իրականում: Չէ՞ որ խնդրի ողջ իմաստը կայանում է նրանում, որպեսզի թույլ չտրվեն չարաշահումներ:

Կամ՝ Սահմանադրությունը (43 հոդվ.) մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակումը վերապահում է ընթացիկ օրենսդրությանը: Հարց է առաջանում, այնպիսի կարևորագույն խնդիր, ինչպիսին իրավունքների և ազատությունների սահմանափակումն է, որն, ըստ էության, սահմանադրական կարգավորման հիմնական առարկաներից է, ինչո՞ւ չլուծել սահմանադրական օրենքի միջոցով: Այն

ավելի հեղինակավոր իրավական ակտ է և նման պարագաներում չարաչառումների հավանականությունն ավելի նվազ կլինի:

Նույն կարգով իրավական պարզաբանման, բացատրության կարիք ունեն իրավունքների և ազատությունների սահմանափակման մյուս հիմքերը՝ «ժանրության առողջության ու բարքերի», «պատվի և բարի համբավի» պաշտպանությունը: Ցանկացած բնույթի անհատություն կարող է առաջ բերել հասարակության համար ոչ ցանկալի հետևանքներ:

Բացի վերը նշված ընդհանուր բնույթի սահմանափակումներից, Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունը նախատեսում է նաև մարդու և քաղաքացու *առանձին իրավունքների և ազատությունների*՝ օրենքով սահմանված կարգով, ժամանակավոր սահմանափակման հնարավորություն, ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում (հոդվ. 44):

Դրա հետ մեկտեղ, սահմանափակման ենթակա չեն Սահմանադրության մի շարք հոդվածներում ամրագրված իրավունքներն ու ազատությունները: Այդ հոդվածներն ամրագրում են կյանքի իրավունքը (15 հոդվ.), անձի արժանապատվությունը (17 հոդվ.), իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը (18 հոդվ.), խախտված իրավունքներն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից վերականգնելու իրավունքը (19 հոդվ.), իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (20 հոդվ.), ինչպես նաև Սահմանադրության 21, 22 և 42 հոդվածներում նշված իրավունքներն ու ազատությունները: Այդ իրավունքները որևէ կերպ չեն կարող խանգարել պետական իշխանության իրականացմանը՝ ցանկացած արտակարգ իրավիճակի դեպքում:

Սահմանադրության համաշխարհային տեսության մեջ և պրակտիկայում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակումը ճանաչվում է իրավական կարգավորման ամենամոտրե հարցերից մեկը, որը պահանջում է ծայրաստիճան լուրջ ուշադրություն և վերաբերմունք: Այդ խնդրի լուծումները հնարավորինս պետք է հստակ և սպառիչ լինեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում է 2006թ. դեկտեմբերի 5-ին ընդունված «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքը, որը սպառիչ կերպով թվարկում է այն իրավունքների և ազատությունների ցանկը, որոնք կարող են սահմանափակվել ռազմա-

կան դրության ժամանակ (8 հոդվ.): Այն ընդգրկում է, մասնավորապես, մուտքի և ելքի հատուկ իրավական ռեժիմը, քաղաքացիների և տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումը («ո» կետ), կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և դրանց միավորումների գործունեության սահմանափակումը, ինչպես նաև ժողովների, հանրահավաքների, հավաքների, երթերի, ցույցերի և այլ զանգվածային միջոցառումների ու գործադուլների կազմակերպման և անցկացման արգելումը («ը» կետ):

Ռազմական դրության հայտարարումը սովորաբար ուղեկցվում է *պարետային ժամի* սահմանմամբ, ինչպես նաև սահմանափակվում է խոսքի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ազատությունը՝ նախնական գրաքննություն մտցնելու միջոցով («ծա» կետ): Արգելվում են բոլոր տեսակ ընտրովի պետական մարմինների ընտրությունները:

Որպես ժողովրդավարական երկիր, Հայաստանի Հանրապետությունը միացել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի միջազգային դաշնագրին, որի նորմերի պահանջներն իրենց արտացոլումն են ստացել Հանրապետության Հիմնական օրենքում և այլ իրավական ակտերում: Այդ դաշնագրի պահանջներից ելնելով՝ օրենքն (հոդվ. 14) նմրագրում է, որ ռազմական դրության պայմաններում իրականացվող միջոցառումները և ֆիզիկական անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները պետք է իրականացվեն այն սահմաններում, որոնք համարժեք են ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներին: Բացի այդ, դրանք (այդ սահմանափակումները) պետք է համապատասխանեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին և բխեն ռազմական դրության պայմաններում (արտակարգ իրավիճակներում) դրանցից շեղվելու վերաբերյալ միջազգային պարտավորություններին: Ազգային ժողովը յուրաքանչյուր դեպքում իրավունքների և ազատությունների սահմանափակման վերաբերյալ նորմեր բովանդակող օրենքներ ընդունելիս պետք է ցուցաբերի չափազանց զգույշ և հավասարակշռված մոտեցում: Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ամեն մի՝ ապօրինի սահմանափակման համար պետությունները պատասխանատվություն են կրում միջազգային հանրության առջև:

§ 7. Իրավունքների և ազատությունների դասակարգումը

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատություններն ու պարտականությունները բավական մեծաթիվ են և իրենց բովանդակությամբ խայտաբղետ: Մարդու որոշ իրավունքներ կոչված են նպաստելու նրա նյութական և հոգևոր կարիքների բավարարմանը, ուրիշները՝ նրա անձնական կյանքի ինտիմ կողմերն ապահովելու այդոց միջամտությունից: Կան նաև այնպիսի իրավունքներ և ազատություններ, որոնք կոչված են նպաստելու անձի հասարակական և քաղաքական ակտիվության իրականացմանը, երկրի քաղաքական կյանքին մասնակցությանը:

Այդ բոլոր իրավունքները և ազատություններն իրենց համակցությամբ կոչված են ապահովելու մարդու ազատությունը և անվտանգությունը, ամենից առաջ, իշխանությունների կամայականություններից: Ուստի դրանց ուսումնասիրությունն ու կիրառությունն ավելի դյուրին դարձնելու համար ընդունված է այդ իրավունքները, ազատությունները և պարտականությունները խմբավորել, դասակարգել ըստ որոշակի հատկանիշների:

1. Մարդն առաջին հերթին **քաղաքացիական հասարակության** անդամ է, ուստի ունի բնական իրավունքներ: Այդ իրավունքները նա ունի ի ծնե, և պետությունը պարտավոր է դրանք ճանաչել ու ամրագրել իր սահմանադրության մեջ: Մյուս կողմից, մարդը **քաղաքական հասարակության**, այսինքն՝ պետության անդամ է, նրա քաղաքացին: Ելնելով դրանից՝ ընդհանուր ճանաչում է ստացել գրեթե բոլոր ժողովրդավարական երկրներում այդ իրավունքների բաժանումը երկու խմբի՝ **ա) մարդու իրավունքների և բ) քաղաքացու իրավունքների**:

Քաղաքացիությունն անձի իրավական-քաղաքական կապն է տվյալ պետության հետ, որի ուժով նրա վրա տարածվում է պետության ողջ իրավունքի համակարգը, իսկ պետությունը պարտավորվում է իր քաղաքացուն պաշտպանել ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Մակայն ամեն մի պետության տարածքում, բացի իր քաղաքացիներից, ապրում են նաև մարդիկ, որոնք այլ պետությունների քաղաքացիներ են (օտարերկրացիներ), և մարդիկ, որոնք ոչ մի պետության քաղաքացիներ չեն (քաղաքացիություն չունեցող անձինք):

Որպես քաղաքացիական հասարակության անդամներ, ինչպես վերը նշվեց, բոլոր մարդիկ (և՛ քաղաքացիները, և՛ օտարերկրացիները, և՛ քաղաքացիություն չունեցող անձինք) ունեն միատեսակ իրավունքներ, ազատություններ և պարտականություններ: Մինչդեռ որպես քաղաքական (պետականորեն միավորված) հասարակության անդամներ նրանք (քա-

ղաքացիները) ունեն հավասար իրավունքներ միայն նրանց հետ, ովքեր նույն պետության քաղաքացիներ են: Վերջիններս ունեն ավելի լայն իրավունքներ և ազատություններ, քան օտարերկրացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք: Դրանում հեշտությամբ կարելի է համոզվել՝ ընթերցելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության երկրորդ գլուխը («Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները»): Բոլոր այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ընդհանրապես մարդու իրավունքներին, Սահմանադրությունն օգտագործում է «յուրաքանչյուր ոք», «մարդ», «մարդուն» ձևակերպումները: Իսկ երբ խոսքը վերաբերում է քաղաքացիների իրավունքներին և ազատություններին, ապա Սահմանադրությունն օգտագործում է «յուրաքանչյուր քաղաքացի» արտահայտությունը: Նույնն է դրվածքը նաև արտասահմանյան երկրների հիմնական օրենքներում:

2. Մարդու իրավունքները (ազատությունները և պարտականությունները) բաժանվում են նաև **ա) անհատական իրավունքների և բ) կոլեկտիվ իրավունքների**: Բոլոր մարդիկ, որպես անհատներ, ինչպես արդեն նշվեց, ունեն միատեսակ իրավունքներ, ազատություններ և պարտականություններ: Մակայն երբ նրանք համախմբվում են առանձին հանրությունների, կոլեկտիվների մեջ (աշխատանքային կոլեկտիվ, ընտանիք, կրոնական համայնք և այլն), ձեռք են բերում որոշ (կոլեկտիվի տեսակին համապատասխան) լրացուցիչ իրավունքներ: Ընդ որում, կոլեկտիվը կարող է իրականացնել անհատ անձանց համար սահմանված իրավունքները, մինչդեռ անհատ անձինք չեն կարող իրականացնել կոլեկտիվի համար նախատեսված իրավունքները: Այսպես, աշխատանքի իրավունքը կարելի է իրականացնել ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ ձևով: Մինչդեռ անհատ անձի կողմից գործադուլի իրավունքի իրականացումը կոլեկտիվի որպես չարամիտ գործալքում (պրոգրու) և նա կենթարկվի աշխատանքային օրենսդրությամբ այդ առթիվ սահմանված կարգապահական պատասխանատվության:

3. Մարդու իրավունքների առավել կիրառելի դասակարգումը՝ ըստ իրավունքների, ազատությունների և պարտականությունների **քովանդակության** դասակարգումն է: Այդ կապակցությամբ համաշխարհային սահմանադրական իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում լայն տարածում է գտել իրավունքների, ազատությունների և պարտականությունների տարբերակումը **երեք հիմնական խմբերի**: **Առաջին խումբն են կազմում մարդու անձնական կամ քաղաքացիական** իրավունքները, ազատությունները և պարտականությունները, **երկրորդ խումբը՝ քաղաքական** իրավունքները, ազատությունները և պարտականությունները և **երրորդ**

խումբը մարդու **տնտեսական, սոցիալական և մշակութային** իրավունքները, պարտականությունները և ազատությունները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ իրավունքները և ազատությունները հենց այդ հերթականությամբ են ամրագրված:

Անհրաժեշտ է նկատել, որ բերված դասակարգումը հիմնականում ունի պայմանական բնույթ, որովհետև նույն իրավունքը կամ ազատությունը կարող է դասակարգվել տարբեր խմբերում: Օրինակ, խղճի կամ խոսքի ազատությունը հավասարապես կարող է վերաբերել ինչպես անձնական, այնպես էլ քաղաքական իրավունքներին և ազատություններին: Պարզապես ստորև բերված դասակարգման ժամանակ նկատի է առնվել, թե այս կամ այն իրավունքն ու ազատությունն, ըստ էության, որ խմբին է ավելի մտա:

Իրավաբանական գրականության մեջ կարելի է հանդիպել մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և պարտականությունների մաս այլ դասակարգումների, որոնք անմիջապես պայմանավորված են առարկայի հետազոտման նպատակներով և հեղինակների սուբյեկտիվ մոտեցումներով:

ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§1. Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների հիմք

Արժանապատվությունը մարդկային հատկանիշ է, որը հավասարազոր է **հարգվելու իրավունքի և ուրիշներին հարգելու պարտականության**: Այն ձեռք է բերվում անձի զարգացման որոշակի շրջանում, երբ նա գիտակցում է իր ազատությունը և հավասարությունը մյուսների հետ, իր պաշտպանվածությունը, երբ մարդն սկսում է արժեվորել իրեն, գնահատել իր տեղը հասարակության մեջ: Արժանապատվության տակ նաև հասկացվում է մարդու և նրան շրջապատողների կողմից նրա որոշակի բարոյական և մտավոր կարողությունների ընդունումն ու ճանաչումը:

Մարդու արժանապատվությունը որոշվում է ոչ միայն սուբյեկտի ինքնագնահատականով, այլ մարդու օբյեկտիվ հատկությունների համակցությամբ, որոնցով բնութագրվում է նրա վարկանիշը հասարակության մեջ (բանականություն, բարոյական տվյալներ, գիտելիքների մակարդակ, սոցիալապես օգտակար հատկություններ, արժանավայել կենսաձև և այլն): Մարդն իր բնույթով լինելով հասարակական էակ, նրա արժանապատվության զգացումը առաջ է գալիս հասարակական հարաբերությունների ոլորտում:

Մարդու արժանապատվության համար ամենակարևոր նախադրյալը **նրա հնարավորությունների** (մարդու իրավունքների) ազատ և անարգել **իրագործումն է**: Բնականաբար, մարդու իրավունքների և ազատությունների ցանկացած ուսնահարում հանգեցնում է նրա արժանապատվության նսեմացմանը: Այդ է պատճառը, որ **արժանապատվության իրավունքը հանդիսանում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնական աղբյուրը**, որի պաշտպանությունը համարվում է պետության գոյության հիմնական պայմանը:

Հայաստանի Հանրապետությունում ճանաչված է մարդու արժանապատվության սկզբունքը, որն իր արտահայտությունն է գտել **Սահմանադրության 3 հոդվածում**. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: Իսկ Հիմնական օրենքի 14 հոդվածն ամրագրում է, որ մարդու արժանապատվությունը, որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության այս նորմը ուղղակիորեն բխում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, որի թիվ 1 հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով: Յուրաքանչյուր մարդու արժանապատվություն ենթակա է պաշտպանության, անկախ նրա ունեցած սոցիալական արժեքից: Ելնելով դրանից՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հռչակում է քաղաքացու պատվի, արժանապատվության իրավունքի դատական պաշտպանությունը ինչպես կենդանության օրոք, այնպես էլ նրա մահից հետո(հոդվ. 19):

Մարդու պատվի և արժանապատվության իրավունքն առավել հաճախ նսեմացվում է պաշտոնատար անձանց ունեցվածքային կազմակերպությունների հետևանքով: Այդ պատճառով, օրինակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը կտրականապես արգելում է մեղադրյալից ցուցմունք կորզել բռնության, խարեության, շանտաժի և այլ ճանապարհով: Իսկ Քրեական օրենսգիրքը խիստ պատժամիջոցներ է սահմանում (ազատագրկման ձևով) այն պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնց գործողություններով կամ անգործությամբ ոտնահարվել է մարդու արժանապատվությունը:

Պատշաճ վերաբերմունքի իրավունք ունեն ոչ միայն ազատ մարդիկ, այլ նաև մեղադրյալներն ու դատապարտվածները, որոնք իրենց պատիժն են կրում քրեակատարողական հիմնարկներում: Հայաստանի Հանրապետությունում գործող քրեակատարողական օրենսդրության նորմերը սահմանում են, որ պատիժը մեր երկրում ունի դաստիարակչական նշանակություն և չպետք է պատճառի ֆիզիկական տանջանք, ուղեկցվի անձի արժանապատվության նսեմացմամբ: Նշված հանգամանքների գիտակցմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հռչակում է, որ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պահվի ստորացուցիչ պայմաններում: Ավելին, արգելվում է անձին հարկադրել մասնակցելու իր արժանապատվությունը նվաստացնող դատավարական գործողությունների (հոդվ. 9):

Անազատության մեջ գտնվող մարդու պատվի և արժանապատվության իրավունքի պաշտպանությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով 2002 թ. փետրվարի 6-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքը, որը համակողմանիորեն սահմանում է ձերբակալված և կալանա-

վորված անձանց իրավունքները: Այդ օրենքի համաձայն (հոդվ. 13) վերոհիշյալ **անձինք իրավունք ունեն**՝ մայրենի լեզվով տեղեկություններ ստանալու իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, արժանապատվության բարեկիրք վերաբերմունքի, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի **բժշկական օգնություն**, իրավաբանական օգնություն և այլն:

Բացի վերոհիշյալ իրավունքները, օրենքը կալանավորված անձանց իրավունք է վերապահում նաև ստանալ կրթություն, զբաղվել ստեղծագործ աշխատանքով, աշխատել, կալանավորվածներին պահելու վայրի խանութից կամ կրպակից վարչակազմի միջոցով ձեռք բերել սնունդ և առաջին անհրաժեշտության առարկաներ, ստանալ և ուղարկել դրամական փոխանցումներ և այլն:

Հայաստանի Հանրապետությունում անձի դեմ ուղղված այնպիսի հանցագործությունների համար, ինչպիսիք են զրպարտությունը, վիրավորանքը և անձի արժանապատվությունը նսեմացնող այլ գործողությունները, քրեաիրավական նորմերով սահմանված են պատիժներ՝ այդ թվում ազատագրկման ձևով:

§2. Կյանքի իրավունք

Կյանքի իրավունքը մարդու բնական և անօտարելի իրավունքն է: Դա նշանակում է, որ ոչ ոք՝ ոչ պետությունը (պետական մարմինները), ոչ անհատ քաղաքացիները չեն կարող կամայականորեն մարդուն զրկել կյանքից:

Մարդու կյանքի իրավունքը ամրագրված է, նախ և առաջ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3 հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք: Իսկ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 6 հոդվածը հռչակում է, որ ապրելու իրավունքը յուրաքանչյուր մարդու անկասկալի իրավունքն է: Այդ իրավունքն ապահովվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի քմահաճ ձևով զրկել կյանքից:

Հենվելով վերոհիշյալ միջազգային-իրավական ակտերի վրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 15 հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Նույն հոդվածը սահմանում է նաև, որ ոչ ոք չի կարող դատապարտվել մահապատժի:

Մահապատժի, որպես բացառիկ պատժամիջոցի, վերացման կապակցությամբ մեր պետության վճռակառուցումը վերջնականորեն ամրապնդվեց դեռ այն ժամանակ, երբ ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվեց «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության» մասին եվրոպական կոնվենցիային կից 6-րդ արձանագրությունը, որը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին կտրակաճապես արգելում է կիրառել մահապատիժը նույնիսկ որպես բացառիկ պատժամիջոց:

Իհարկե, հնարավոր չէ հստակ ասել, թե որքան մարդիկ են դատարանների օրինական դատավճիռներով զրկվել կյանքից, սակայն միանշանակ կարելի է պնդել, որ հանցագործների ձեռքով սպանված մարդկանց թիվն անհամեմատ մեծ է: Ուստի վերջին տարիներին միջազգային հանրությունը վիճարկում էր մահապատժի կամ իրավաբանական սպանության նպատակահարմարության հարցը, որի արդյունքում այսօր աշխարհի մոտ 100 պետություններ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, իրենց ազգային օրենսդրությամբ վերացրել են մահապատիժը:

Ինչ վերաբերվում է *անհրաժեշտ պաշտպանության* կամ ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտին, այսինքն՝ երբ մարդն իր կամ ուրիշների կյանքը պաշտպանելիս սպանում է հանցագործին, ապա այդ հարցը աշխարհի գրեթե բոլոր պետություններում լուծված է հօգուտ պաշտպանվողի:

Ոչ մի հասարակական շահ չի կարող արդարացնել մարդուն կյանքից զրկելը: Սակայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիան հնարավոր է համարում պետության կողմից ուժի գործադրմամբ կյանքից զրկել, եթե բացարձակապես անհրաժեշտ է. ա) անձին անօրինական բռնությունից պաշտպանելու համար (օրինակ, եթե իշխանության մարմինների կողմից կրակ է բացվում այն անձանց վրա, ովքեր մարդկանց պատանդ են վերցրել կամ նրանց վարքագիծը ռեալ վտանգ է սպառնում վերջիններիս կյանքին), բ) օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար, գ) խոտվորությունը կամ ապստամբությունը օրենքին համապատասխան ճնշելու համար:

Ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը չի կարող քրեորեն հետապնդվել պատերազմական գործողությունների ժամանակ, եթե այն ուղղված է հակառակորդ բանակի *մարտնչող կազմի դեմ*: Կյանքի իրավունքի ապահովման տեսանկյունից Ժնևյան 1949թ. օգոստոսի 12-ի դաշնագրերը հստակ սահմանում են պատերազմական գործողությունների ժամանակ *«ձեռվանավորվող անձանց»* շրջանակը, որոնց կյանքի դեմ

ուղղված ոտնձգությունները պատժվում են ինչպես միջազգային մարդասիրական իրավունքին, այնպես էլ պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան: Ըստ այդ դաշնագրերի՝ հովանավորվող անձանց մեջ են մտնում գործող բանակներում վիրավորներն ու հիվանդները, ծովում զինված ուժերի վիրավորները, հիվանդները և նավաբեկյալները, ռազմագերիները, պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչությունը:

Հայաստանի Հանրապետությունում *մարդու կյանքի իրավունքի պաշտպանությունն* իրականացվում է մի շարք ուղղություններով: Առավել կարևորներից է պետության կողմից իրականացվող քաղաքականությունը բնակչության *բժշկական օգնության* և սպասարկման ոլորտում՝ ներառյալ *վերարտադրողական ատոլոգիայի* պետական նպատակային ծրագրերի իրականացումը: Նշված միջոցառումների իրագործումը նախատեսված է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով, որը հռչակում է մարդու *վերարտադրողական իրավունքը*: Մասնավորապես, օրենքի 9 հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ մարդու կյանքը սկսվում է ոչ թե ծննդյան պահից, այլ սաղմնային զարգացման որոշակի փուլից: Այս նկատառումներից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը 2004 թ. օգոստոսի 16-ին ընդունել է որոշում «Հղիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները հաստատելու մասին», համաձայն որի՝ հղիության արհեստական ընդհատման վիրահատություն թույլատրվում է կատարել *մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը*, բոլոր այն կանանց, ովքեր ցանկանում են ընդհատել հղիությունը և չունեն հակացուցումներ:

Միաժամանակ, նշված կարգից թույլատրվում է կատարել բացառություն՝ հղիության արհեստական *ընդհատումը կատարել մինչև 22 շաբաթական ժամկետը*՝ համապատասխան բուժանձնատեղի որոշմամբ հետևյալ դեպքերում՝ ա) հղիության ընթացքում ամուսնու մահը, բ) կնոջ կամ ամուսնու ազատագրկման վայրում գտնվելը, գ) մայրական իրավունքից զրկվելը հղիության ժամանակ, դ) ամուսնալուծությունը հղիության ժամանակ, ե) հղիությունը բռնաբարությունից հետո:

Ժամանակակից բոլոր պետությունների սահմանադրությունները պարտավորեցնում են համապատասխան երկրի իշխանություններին բոլոր միջոցները ձեռնարկել՝ պաշտպանելու մարդու կյանքի իրավունքը երբորդ անձանց ոտնձգություններից: Այստեղից բխում է պետության պարտականությունը՝ պաշտպանելու մարդու կյանքի իրավունքը մահ այն դեպքում, երբ վերջինս բացահայտորեն ցանկանում է *հրաժեշտ տալ իր կյանքին* (այդ թվում ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ էվթանազիայի ճանապարհով):

Գրանից անառարկելիորեն հետևում է, որ մարդու կյանքի իրավունքը այնպիսի պայմանների համակցություն է, որոնք կոչված են ապահովելու Երկիր մոլորակի վրա մարդու արժանավայել գոյությունը:

Այդ առումով մարդկությունը **խստագույնս դատապարտում է** որոշ պետությունների այնպիսի փարքագիծը, որն ուղղված է ամբողջ սոցիալական հանրությունների կյանքի իրավունքի ժխտմանը: Նմանատիպ փարքագիծը միջազգային հանրության կողմից բնորոշվում է որպես **գենոցիդ** (ցեղասպանություն, հունարեն genos-ցեղ, և լատիներեն caedere-վերացնել): Ժամանակակից առումով **ցեղասպանության տակ հասկացվում է պետական իշխանության կողմից բնակչության առանձին խմբերի կազմակերպված և կանխամտածված ոչնչացումը՝ պայմանավորված ազգային, ռասայական, կրոնական և այլ հատկանիշներով**: Վառ օրինակ է Օսմանյան կայսրության կողմից իրականացված անախարեպ ծավալների հասնող հայոց ցեղասպանությունը և գերմանացիների կողմից իրականացված հրեաների հոլոքոստը (ողջակիզում):

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունվեց «Ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին» դաշնագիրը, որով հստակ տրվում է ցեղասպանության հասկացությունը: Այդ հանցագործության կանխմանն ուղղված գործողությունները արդյունավետ դարձնելու նպատակով 1968 թ. նոյեմբերի 26-ին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից ընդունվեց «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» դաշնագիրը, որով ցեղասպանության հանցագործությունը դասվում է մարդկության դեմ ուղղված հանցագործությունների շարքը:

Մարդու կյանքի իրավունքի ապահովմանն են ուղղված **նաև պետության պաշտպանության և ազգային անվտանգության իրականացումը և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ուժեղացումն ու դրա արդյունավետությունը**:

§3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք

Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը մարդու կառուրագույն բնական իրավունքներից է, որը նա ձեռք է բերում ծննդյան պահից: Այդ իրավունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16 հոդվածում, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք:

Ազատության իրավունքի հասկացությունն իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 42 հոդվածում, որի համաձայն՝ յուրաքանչյուր

յուր ոք ազատ է կատարելու այն ամենը, **ինչն արգելված չէ օրենքով** և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Գրանից հետևում է, որ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Դրա հետ մեկտեղ, **անհատի ազատությունը չի կարող լինել քացարձակ**, քանի որ անսահմանափակ ազատությունը կարող է հանգեցնել ավելի ուժեղների կողմից բռնությունների ու դաժանությունների դրսևորումների: Մինչդեռ ազատությունը հավասարապես պատկանում է ցանկացած անձի, այդ թվում թույլին և չունեցողին: Այս հավասար իրավունքները պետությունը պարտավոր է պաշտպանել, սահմանելով անհատի ազատության սահմանները՝ այդ մասին ընդունված իրավական ակտերը իրապարակելով ի լուր ամենքի: Խնդիրն այն է, որ եթե անհատը նախապես տեղյակ չլինի, թե իր որ արարքն է հանգեցնում պետության քացասական արձագանքին ու սանկցիաներին, ապա ազատությունից ոչինչ չի մնա:

Մարդու ազատության իրավունքին համապատասխանում է պետական իշխանության մարմինների պարտականությանը՝ ոչ միայն հարգել մարդու ազատության իրավունքը, այլև սատար կանգնել դրան: Ահա թե ինչու Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3 հոդվածն ամրագրում է, որ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Ազատության իրավունքի հետ սերտորեն կապված է մարդու **անձեռնմխելիության իրավունքը**, որը տարածվում է նրա կյանքի, առողջության, պատվի և արժանապատվության վրա: Ոչ ոք իրավունք չունի ուժով և սպառնալիքով հարկադրել մարդուն կատարելու այս կամ այն գործողությունը: Մարդն իրավունք ունի ինքը տնօրինել իր ճակատագիրը, ընտրել իր կյանքի ուղին, ապրել իրեն հարմար կյանքով: **Պետությունը պարտավոր է** պաշտպանել մարդու կյանքը, առողջությունը, պատվն ու արժանապատվությունը ամեն տեսակ ռանձգություններից, ում կողմից էլ, որ դրանք կատարվելիս լինեն (պաշտոնատար անձանց, թե քաղաքացիների):

Այդ իրավունքն առավելապես պաշտպանվում է քրեական և քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված միջոցներով: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (հոդվ. 16) ամրագրելով մարդու ազատության և անձեռնմխելիության իրավունքը, միևնույն ժամանակ սպառիչ կերպով թվարկում է ազատությունից զրկելու բոլոր հիմքերը: Մասնավորապես, մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

ա) անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից.

բ) անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը.

գ) օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով.

դ) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով.

ե) անչափահասին դատախարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու նպատակով.

զ) վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով.

է) Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր համար ցանկալի անձին:

Ըստ նշված հոդվածի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցման, ինչպես նաև իր՝ ազատությունից զրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատական առյան:

Որպես անձի անձեռնմխելիության երաշխիք ՀՀ Սահմանադրությունը արգելում է մարդուն զրկել ազատությունից միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները: Բացի այդ, Սահմանադրությունը արգելում է մարդուն խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով (16 հոդվ. 5-րդ և 6-րդ մասեր):

Անձի ազատության և անձեռնմխելիության երաշխիքները առավել ծավալուն կերպով ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, որի 11 հոդվածի համաձայն՝ կալանավորելը, կալանքի տակ պահելը, բժշկական կամ դատախարակչական հաստատությունում անձին հարկադրաբար տեղավորելը թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ:

Մինչև դատարանի համապատասխան որոշումն ստանալը անձը չի կարող ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահվել 72 ժամից ավել ժամանակով: Բացի այդ, քրեական դատավարության ընթացքում արգելվում է անձին ենթարկել խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի ու ժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկելու, ինչպես նաև դաժան վերաբերմունքի: Ուրեմն մարդու ազատության և անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և օրինական կարգով: **Հարկադրանքի բոլոր միջոցների կիրառումը պետք է զստվի դատական վերահսկողության ներքո:**

Ասվածից հետևում է, որ մարդու անձնական անձեռնմխելիության տակ հասկացվում է մարդու մարմնական (ֆիզիկական) և հոգեկան անձեռնմխելիությունը, որն արտահայտվում է խոշտանգումների, դաժան, անմարդկային և նվաստացնող գործողությունների արգելման մեջ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական դաշնագրի անդամ պետություններում մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի սահմանադրական արգելքի շրջանակներում **արգելվում է նաև հանրակրթական դպրոցներում ուսուցիչներին**՝ մարմնական պատժի ենթարկել աշակերտներին (օրինակ քանոնով կամ ցուցափայտով աշակերտին հարվածելը): Այդպիսի արգելքների շարքը կարելի է դասել նաև, որպես կարգապահական պատժ, սննդից օգտվելուց զրկելը:

Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի իրականացման արդյունավետությունը մեծ չափով կախված է նրանից, թե ինչպես է Հանրապետությունում ապահովվում օրինականությունը, ինչքանով են կիրառվում Սահմանադրությունն ու օրենքները: Բացի այդ, մարդու ազատության և անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության գործում մեծ դեր կարող է խաղալ **իրավակիրք հասարակությունը:**

§ 4. Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք

Մասնավոր կյանքը կազմում է մարդու անձնական կյանքի այն կողմերը, որոնց մարդը, իր ազատության շնորհիվ, **չի ցանկանում հաղորդակից դարձնել ուրիշներին**: Դա, մի տեսակ, մարդու կյանքի այն մասն է, որն անձեռնմխելի է շրջապատի համար: Տվյալ դեպքում, այդ գաղտնիությունն ամենևին էլ չի թաքցնում ինչ-որ հակահասարակական գործունեություն: Այն արտացոլում է ամեն մի մարդու բնական ձգտումը՝ **ունենալու իր ինտիմ և գործարար հետաքրքրությունների անձնական աշխարհը, որը հեռու լինի ուրիշների միջամտությունից**: Այն առավելապես կարգավորվում է բարոյական նորմերի համձնարարականներով և համարվում է հասարակության զարգացման կարևոր խթան:

Մարդը հասարակության անդամ է, բնականաբար նաև՝ հասարակական կյանքի սուբյեկտ: Նրա կյանքի հիմնական մասն անցնում է ընտանիքում: Սակայն յուրաքանչյուր մարդ ունի իր անձնական, անհատական կյանքը: **Հասարակական կյանքը** անհատի, որպես հասարակության անդամի, քաղաքացու, արտադրողի կամ պրոֆեսիոնալի **գործունեությունն է**: Մինչդեռ մասնավոր կյանքը կապված է ամենից առաջ մարդու ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարման հետ (հանգիստ, զվարճանք, ժամանց և այլն): Մարդու մասնավոր կյանքի ոլորտի մեջ կարելի է ներառել նաև առողջությունը, նրա սոցիալական, քաղաքական, կրոնական և այլ հայացքները, մասնագիտական կյանքը, նյութական վիճակը:

Անձնական, մասնավոր և ընտանեկան կյանքը, չնայած իրենց բովանդակությամբ մոտ հասկացություններ են, այդուհանդերձ չեն համընկնում:

Մարդու **անձնական կյանքի իրավունքը յուրաքանչյուր անհատի արտահայտման և անհատականության պաշտպանության իրավունքն է**: Ենթադրվում է, որ այդ արտահայտումը չպետք է հակասի հասարակության բարոյականության նորմերին և ոտնահարի այլոց իրավունքները: Այդ պայմանները պահպանող ոչ մի մարդու անձնական կամ ընտանեկան կյանքը չի կարող ենթարկվել անօրինական և կամայական միջամտության: **Հակամարտությունն առաջանում է** այն ժամանակ, երբ հասարակության որոշ անդամների ընտանեկան կամ անձնական կյանքը չի համաձայնեցվում տվյալ հասարակության սոցիալական և բարոյական նորմերին և վերջիններիս կողմից նսեմացվում են այդ նորմերը:

Մասնավոր կյանքի մասին արված դատողություններն այնուամենայնիվ ի գործու չեն համակողմանիորեն որոշելու մարդու մասնավոր

կյանքի շրջանակները: Խնդիրն այն է, որ այդ երևույթն ունի խիստ սուբյեկտիվ բնույթ և մեծապես կախված է տվյալ հասարակության մեջ արմատավորված սովորույթներից: Այսպես, պատմությունից հայտնի է, որ շատ հաճախ պետությունների գլուխների (թագավորների) ընտանեկան կյանքը կազմակերպվել է հասարակական պահանջմունքների թելարանքով: Որպես դրա արդյունք, օրինակ պետության գլխի (թագավոր) հարսնացուն ընտանիքի կողմից ընտրվել է պետության շահերից ելնելով: Այդ խնդիրն ժամանակակից որոշ երկրների կողմից տրվում է սահմանադրական հիմնավորում: Այսպես, Իսպանիայի Սահմանադրության (հոդվ. 57, 4-րդ կետ) համաձայն՝ ամուսնությունը, առանց Թագավորի կամ Գլխավոր կորտեսների թույլտվության, գահաժառանգին գրկում է գահի իրավունքից:

Այդուհանդերձ, ընդհանուր գծերով կարելի է ներկայացնել մարդու մասնավոր կյանքի ոլորտը, որն իր մեջ առաջին հերթին ներառում է .

ա) **մարդու ոչ պաշտոնական շփումների շրջանակը**: Տվյալ դեպքում մարդն ինքնուրույն է որոշում, թե ում հետ հաղորդակից լինի կամ ում հետ խզի իր կապերը (քաղաքացուն չի կարելի հարկադրել ընկերակցել որոշակի մարդու կամ մարդկանց հետ): Որոշ դեպքերում այդ շփումը դառնում է պարտադրված, քանի որ մարդկանց որոշակի շրջանակի հետ ընկերակցությունը հասարակությունը համարում է պատվաբեր.

բ) **հարկադրված կապեր**: Այդ կապերն արտահայտվում են նրանում, որ կյանքի որոշակի հանգամանքներում մարդը չի կարող չշփվել արտաքին սուբյեկտների հետ, կապված իր ներքնաշխարհի որոշ տարրերի բացահայտման հետ: Այս դեպքում կողմնակի անձի հետ շփումը և վերջինիս կողմից տրված տեղեկատվությունը մտնում է անձի մասնավոր կյանքի ոլորտը: Այդպիսի տեղեկություններ են հանդիսանում, օրինակ, բժշկական, փաստաբանական, նոտարական գաղտնիքը և այլն,

գ) **մարդու սեփական ներաշխարհը**, որի մեջ մտնում են անձնական ապրումները, կարծիքները, համոզմունքները, կենցաղը, ձեռքբերումները, նախասիրությունը (հոբբին), սովորությունները, բնավորությունը, համակրանքները, հակակրանքները և այլն: Նշված առանձնահատկություններն էլ հենց որոշում են մարդու անհատականությունը: Բնականաբար կյանքի այս կողմերի վերաբերյալ հրապարակումները կարող են մարդու մոտ առաջացնել անհարմարություն, որի արդյունքում մարդը բարոյական վնաս է կրում,

դ) **ընտանեկան կապերը**: Այս ոլորտի մեջ կարելի է ներառել ինտիմ կապերը, երեխաների պլանավորումը, երեխաների դաստիարակության մեթոդները, ընտանեկան հարաբերությունները, որդեգրումը և այլն,

ե) **կրոնական համոզմունքը և հավատքը** (մահմեդականություն, քրիստոնեություն, բուդդայականություն, աթեիստական համոզմունքներ և այլն):

Սակայն քաղաքացիական հասարակությունը, որտեղ ապրում է մարդը, գիտակցում է, որ անձնական կյանքի գաղտնիությունը **կարող է չարաշահվել** առանձին անհատների կողմից: Այն կարող է արտահայտվել հանցագործներին թաքցնելու, հակահասարակական արարքներ կազմակերպելու ձևով և այլն: Բնականաբար, կարող է ծագել անձի **մասնավոր կյանքին միջամտության անհրաժեշտություն**:

Նման դեպքերում հասարակությունը ելնում է այն բանից, որ հանցագործությունը բացահայտելու նպատակով քաղաքացու մասնավոր կյանքի միջամտությունը պետք է կատարվի **միայն օրենքի հիման վրա**: Իսկ օրենքը սահմանում է, որ նման միջամտության համար անհրաժեշտ է, որպեսզի անձի մեղքը հիմնավորված լինի և այդ առթիվ հարուցված լինի քրեական գործ: Մյուս բոլոր դեպքերում մարդու անձնական կյանքը անձեռնմխելի է:

Մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ամենից առաջ, ամրագրվում է միջազգային իրավական փաստաթղթերում, որոնց դրույթներն արտացոլվում են պետությունների ազգային օրենսդրության մեջ: Այսպես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական դաշնագրի 8 հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք, և չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, երբ այն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի անտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Հենվելով միջազգային փաստաթղթերի վրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը բովանդակում է մի շարք նորմեր մարդու մասնավոր կյանքի ապահովման վերաբերյալ: Այսպես, ըստ Սահմանադրության **23 հոդվածի**՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը: Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Ար-

գելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

Դա նշանակում է, որ ոչ ոք իրավունք չունի **առանց անձի համաձայնության** որևէ մեկից տեղեկություններ պահանջել ընտանիքի անդամների կամ նրանց ազգականների ծագման մասին: Բանն այն է, որ ընտանիքում կարող են լինել որդեգրվածներ, տարբեր ծնողներից սերված երեխաներ, միայնակ մորից ծնված երեխաներ և այլն, որոնց վերաբերյալ տվյալները հրապարակման ենթակա չեն:

Արգելվում է նաև տվյալների հավաքումը ընտանիքի գործարար ակտիվության, ֆինանսական աղբյուրների, ինտիմ կապերի և այլնի վերաբերյալ: Իսկ եթե խախտվում են սահմանադրական այդ նորմի պահանջները, և անձի ու նրա ընտանիքի պատիվը և բարի համբավը ենթարկվում է նսեմացման ու վիրավորանքի, ապա նա իրավունք ունի դիմելու դատարան և պահանջելու, որպեսզի մեղավորը ենթարկվի պատասխանատվության:

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է նաև, որ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու, ինչպես նաև իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք: **Եթե մարդու պատիվը և բարի համբավը նսեմացնող գրպարտչական տեղեկությունները տպագրվել են մասնաշաղկապով**, ապա դատարանն իրավունք ունի պարտավորեցնել այդ նույն մասնաշաղկապի տարմնին (թերթ, շաբաթաթերթ, ամսագիր և այլն) հրապարակել հերքում այդ տեղեկությունների վերաբերյալ:

Սահմանադրությամբ ամրագրված է նաև անձի **նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք**, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ (23 հոդվ. 5-րդ մաս):

Հետևաբար, արգելվում է առանց քաղաքացու համաձայնության բացել նրա նամակները և փոստային մյուս առարկաները, լսել հեռախոսային և այլ բնույթի խոսակցությունները, ինչպես նաև հրապարակել այդ փաստաթղթերի և խոսակցությունների բովանդակությունը: Քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցության փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիության խախտումը ՀՀ քրեական օրենսգիրքը որակում է որպես հանցագործություն և նախատեսում խիստ պատժամիջոցներ (հոդվ. 146):

Մակայն, երբեմն առանձին հանցագործությունների բացահայտման և պետական այլ կարիքների բերումով անհրաժեշտ է լինում սահմանափակել քաղաքացիների նշված իրավունքները: Այն թույլատրվում է միայն դատարանի որոշման հիման վրա: Օրենսդրությունը սպառնիչ կերպով սահմանում է այն դեպքերը, որոնց կապակցությամբ փոստային հիմնարկներից առգրավվում են անձի նամակները և փոստային մյուս առաքումները, ինչպես նաև լսում են նրա հեռախոսային խոսակցությունները: Օրենսդրությամբ սահմանված են նաև այդ գործողությունների իրականացման կարգն ու իրականացնող պաշտոնատար անձանց շրջանակները:

§ 5. Բնակարանի անձեռնմխելիության իրավունք

Բնակարանն այն մասնավոր ոլորտն է, որը անհատին հնարավորություն է ընձեռում, ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ, կողմնակի միջամտությունից զերծ իրականացնել անհատական գործողություններ, ապահովել ազատ հանգստի, մտորումների, անհատի զարգացման կամ ինտիմ դրսևորումների համար պայմաններ:

Անձին պատկանող մասնավոր տարածքը կարող է միաժամանակ հանդիսանալ հասարակական, մշակութային և քաղաքական ակտիվության վայր, այդ թվում՝ մասնավոր շփումների և խոսակցությունների ժամանակ հնչած քննադատության, ընդդիմադիր հայացքների և դիմադրության կոչերի վայր: ՌԻ-տի ցանկացած ոչ ժողովրդավարական ռեժիմ ձգտում է սահմանափակել մարդու մասնավոր կյանքը:

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքի իրականացմամբ երաշխավորվում է մարդու անձնական անվտանգությունն ու անձեռնմխելիությունը՝ ինչպես պետական մարմիններից, այնպես էլ այլ անձանցից: Փաստորեն բնակարանի անձեռնմխելիությունն, ըստ էության, կազմում է մասնավոր կյանքի իրավունքի մի մասը: ՌԻ-տի այն հանդիսանում է մարդու անձնական ազատության և արժանապատվության անբաժան տարրը: **«Իմ տունն իմ բերդն է»**, - ասվում է անգլիական հայտնի ասացվածքում: Դրանով իսկ հաստատվում է այն գաղափարը, որ մարդն իրավունք ունի իր տանը, իր բնակարանում անել այն ամենը, ինչ որ մտքով կանցնի: Ոչ ոք իրավունք չունի մուտք գործել բնակարան, առանց այնտեղ ապրողների համաձայնության՝ ասված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 24 հոդվածում:

Դրա հետ մեկտեղ, օրենքով սահմանված հատուկ դեպքերում, որպես բացառություն (օրինակ՝ հանցագործության բացահայտման հա-

մար), թույլատրվում է մուտք գործել բնակարան նաև այնտեղ բնակվողների կամքին հակառակ: Այդ կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12 հոդվածը սահմանում է, որ **բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ**: Բնակարանի գնումը, այնտեղ դատավարական այլ գործողություններ կատարելը, ինչպես նաև տեխնիկական միջոցների գործադրմամբ մուտք գործելը՝ այն զբաղեցնող անձանց կամքին հակառակ, քրեական դատավարության ընթացքում կարող են կատարվել միայն հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի որոշմամբ:

Իսկ ինչ է նշանակում բնակարան: Այն որ՝ բնակելի տարածությունն է, որտեղ չի կարելի մուտք գործել՝ առանց այնտեղ ապրողների համաձայնության:

Բնակարան է համարվում այն տարածությունը, որտեղ մշտապես կամ ժամանակավոր ապրում է մարդը: Բնակարան է համարվում սեփական կամ վարձակալած բնակարանը, այգետնակը, հյուրանոցային համարը, բնակելի շինության նկուղն ու ձեղնահարկը, հանրակացարանը, ծերանոցը: «Բնակարան» հասկացությունը ներառում է նաև մասնավոր ավտոմեքենան, ծառայողական անձնակազմի աշխատանքային և ավտոմեքենան, արվեստանոցը: Այս նշված բոլոր տարածությունները համարվում են բնակարան և այդտեղ չի կարելի մուտք գործել՝ առանց այնտեղ ապրողների համաձայնության:

Իսկ ովքեր են համարվում **բնակարանի բնակիչներ**, որոնց համաձայնությունն անհրաժեշտ է բնակարան մուտք գործելու համար:

Բնակարանում ապրող է համարվում, ամենից առաջ, նրա սեփականատերը, որն իրավունք ունի պահպանելու իր սեփականությունը ամեն մի միջամտությունից: Այդպիսի բնակարանի ապրող է համարվում նաև բնակարանը օրինական ձևով վարձակալած, ինչպես նաև պայմանագրով բնակարանում ապրող քաղաքացին:

Դրա հետ մեկտեղ, բնակարանում կարող են ապրել մարդիկ, որոնք չունեն բնակարանի բնակիչների հստակ իրավունքը: Օրինակ, ընտանիքը մեկնել է ամառանոց և բնակարանը տրամադրել բարեկամներին, հարազատներին՝ ժամանակավոր օգտագործման համար: Նման դեպքում այնտեղ գտնվող անձանց համաձայնությունը չի կարող հիմք հանդիսանալ համապատասխան պաշտոնատար անձի կողմից բնակարան մուտք գործելու կամ այնտեղ խուզարկություն կատարելու համար:

Ովքեր և որ դեպքում իրավունք ունեն մուտք գործել բնակարան՝ այնտեղ ապրող անձանց կամքին հակառակ: Բնակարանի անձեռնմխելիության հիմնական իմաստը, բովանդակությունն այն է, որպեսզի կանխ-

վի իրավապահ մարմինների կողմից ապօրինի կերպով բնակարան ներ-
խուժելը և այնտեղ խուզարկություն կատարելը: Մյուս դեպքերում, ա-
ռանց բնակարանում ապրողի համաձայնության առանձին անձանց ներս
խուժելը կատարվում է գողության, քալանի և այլ հանցավոր նպատակնե-
րով: Բոլոր դեպքերում, ապօրինի մուտք գործելը բնակարան, անկախ
նրանից, թե ում կողմից է կատարվել այն, տուժողը կարող է դիմել դատա-
րան՝ պահանջելով, որ փոխհատուցվի պատճառված վնասը և մեղավորը
պատժվի:

Դրա հետ մեկտեղ, օրենքը թույլատրում է առանձին դեպքերում, անհ-
րաժեշտությունից ելնելով, և բացառապես **դատարանի որոշմամբ** մուտք
գործել քաղաքացու բնակարանն՝ առանց նրա համաձայնության: Նման ի-
րավունք վերապահված է **«Հոստիկանության ծառայողներին, եթե՝**

ա) հետապնդվում է հանցագործության մեջ կասկածվող անձը, որը
թաքնվում է բնակարանում.

բ) կան բավարար ապացույցներ, որ տվյալ բնակարանում կատար-
վել կամ կատարվում է հանցագործություն.

գ) տվյալ բնակարանում պատահել է դժբախտ պատահար, ինչպես
նաև անհրաժեշտ է ապահովել հասարակական և առանձին անձանց
անվտանգությունը.

դ) քրեական գործի քննության ժամանակ անհրաժեշտություն է ա-
ռաջանում խուզարկել մեղադրյալի բնակարանը, այնտեղ եղած իրերը,
առարկաները (զենք, զինամթերք, թմրադեղեր, տարադրամ և այլ արգել-
ված իրեր), որոնք կապ ունեն հանցագործության հետ, առգրավելու հա-
մար:

Նշված դեպքերի մասին ոստիկանական մարմինների աշխատա-
կիցները պարտավոր են 24 ժամվա ընթացքում տեղյակ պահել դատա-
խազին:

Անարգել կերպով քաղաքացու բնակարան մուտք գործելու իրա-
վունք ունեն նաև՝

ա) ՀՀ հարկային տեսչության և մաքսային կոմիտեի աշխատողնե-
րը, եթե անձը բնակարանում զբաղվում է անօրինական ճեռնարկատիրա-
կան գործունեությամբ.

բ) հակահրդեհային ծառայության աշխատողները՝ հրդեհի դեպքում:
Նշված բոլոր դեպքերում առանց համաձայնության բնակարան
մուտք գործելու կարգը մանրամասն սահմանված է Հայաստանի Հանրա-
պետության օրենքներով: Այդ կարգի խախտում թույլ տված անձինք
քրեական պատասխանատվություն են կրում ՀՀ քրեական օրենսգրքով
սահմանված կարգով (հոդվ. 147):

§ 6. Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք

Ժամանակակից մարդու կյանքի պայմանները այնպիսին են, որ նա
անհրաժեշտություն է ունենում տեղաշարժվել (իր ընտանիքի հանապա-
գօրյա հացը վստահելու, քիզնեսի կազմակերպման, շրջագայության, և
այլնի համար) հաճախակի փոխադրվել տեղից տեղ, ոչ միայն իր պե-
տության տարածքում, այլ նաև տեղափոխվել նրա սահմաններից դուրս:

Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու մարդու բնական ի-
րավունքը սկզբնական շրջանում պայմանավորված է եղել բնական հան-
գամանքներով՝ կյանքի առաջացման, էվոլյուցիոն գործընթացներով,
պատմական, աշխարհագրական, կրոնա-մշակութային և այլ հանգա-
մանքներով: Խնդիրն այն է, որ օղբ, ջուրը, հողը և շրջակա միջավայրը, ո-
րոնցով հիմնականում պայմանավորված է մարդ արարածի գոյությունը,
ամենևին էլ մարդկային աշխատանքի արդյունքում չեն ստեղծվել:
Դրանք գոյություն են ունեցել մարդու առաջացումից առաջ: Մարդն ըն-
դամենը ի գործ է ներագրելու դրանց վրա: Այդ է պատճառը, որ մարդ-
կության ծագման սկզբնական շրջանում Երկրագնդի վրա մարդիկ բնակ-
վել են այնպիսի վայրերում, որոնք առավելագույնս նպաստավոր էին գո-
յատևման համար: Բնությունը հենց ինքն էլ հող էր տանում վերջիններիս
անվտանգության և կյանքի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու
մասին:

Ազատ տեղաշարժման իրավունքը այնուհետև պետականորեն միա-
բերված հասարակությունում դարձավ պետության կողմից պաշտպան-
վող իրավունք: Սակայն այն օտարերկրյա քաղաքացիներին հնարավո-
րություն չի տալիս հավակնել իրենց կողմից ընտրված վայրում ապրելու
կամ բնակավայր պահանջելու իրավունքի:

Միջազգային իրավական փաստաթղթերի հիման վրա Հայաստանի
Հանրապետության Մահմանադրությունը Հայաստանի Հանրապետոթ-
յունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր մարդու վերապա-
հում է Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակա-
վայր ընտրելու, ինչպես նաև Հանրապետությունից դուրս գալու, իսկ ՀՀ
քաղաքացիներին և Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող-
ներին՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք (հոդվ.
25):

Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացու ազատ
տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը կարող է սահմանա-
փակվել միայն որոշ իրավիճակների հետ կապված: Օրինակ, արգելվում

է մուտք գործել սահմանամերձ գոտի, փակ զինվորական շրջաններ, բնապահպանական վթարի գոտի (երկրաշարժի, ջրհեղեղի, հրդեհի և այլնի դեպքերում), այն տարածքներ, որտեղ հայտարարված է հատուկ դրույթուն (թունավորման կամ համաճարակային հիվանդությունների տարածվածության, ռազմական գործողությունների հետ կապված և այլն): Հետևաբար, այդպիսի գոտիների սահմաններից դուրս ցանկացած տրանսպորտային միջոցի կամ հետիոտնի ազատ տեղաշարժի սահմանափակում չի թույլատրվում: Այդ իմաստով ազատ տեղաշարժման իրավունքի խախտում է այն, երբ պետական մարմինները առանց որևէ համոզիչ պատճառի պահում են անհատին և խոչընդոտում նրա ազատ տեղաշարժվելուն: Այսպես, միայն այն փաստը, որ անձն իր մոտ չունի անձը հաստատող փաստաթուղթ, բավարար չէ նրա տեղաշարժման իրավունքը սահմանափակելու համար: Անհրաժեշտ են հիմնավոր, ծանրակշիռ, օրինելի պատճառներ: Ոստիկանական ստուգումները պետք է լինեն առարկայորեն հիմնավորված: Տեղաշարժվող անձը կարող է պահվել միայն այն դեպքում, երբ նրա նկատմամբ կան հիմնավոր և բանական կասկածներ (օրինակ հանցանքի վայրում գտնվելը, հետախուզվող անձի հետ մնամությունը, պատկանելը այն խմբին, որը մեղադրվում է հանցավոր գործունեության մեջ և այլն): Ոչ միայն ապօրինի կալանքը և ձերբակալությունը, այլև հոգեբուժական կարճաժամկետ փորձաքննության ուղարկելը իրենցից ներկայացնում են տեղաշարժման ազատության դեմ ունեցվածություն:

Կարևոր է նաև Սահմանադրությունում ամրագրված՝ **Հանրապետությունից դուրս գալու և Հանրապետություն վերադառնալու** քաղաքացիների իրավունքը: Ժամանակավոր արտասահման մեկնելու համար քաղաքացին դիմում է իր բնակության վայրի ոստիկանության մարմնին, որը պարտավոր է **մեկ ամսվա** ընթացքում բավարարել կամ մերժել դիմումը: Մշտական բնակության համար արտասահման մեկնելու մասին դիմումը քննարկելու համար նախատեսվում է **երեք ամիս** ժամանակ: ՀՀ օրենսդրությամբ սպառնիչ կերպով թվարկվում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում կարող է մերժվել քաղաքացու դիմումը՝ արտասահման մեկնելու կապակցությամբ: Այդ հիմքերն են.

ա) եթե քաղաքացին տիրապետում է տեղեկությունների, որոնք պարունակում են պետական գաղտնիք,

բ) նրա նկատմամբ հարուցված է քրեական գործ,

գ) նա դատապարտված է քրեական հանցագործություն կատարելու համար,

դ) խուսափում է դատարանի կողմից իր վրա դրված պարտականության կատարումից,

ե) հաղորդել է իր մասին կանխամտածված սխալ տվյալներ,

զ) ենթակա է զորակոչի՝ քանակում ծառայելու համար,

է) դատարանում նրա նկատմամբ ներկայացված է քաղաքացիական հայց,

ը) դատարանի դատավճռով ճանաչվել է առանձնապես փտանգավոր կրկնահանցագործ կամ գտնվում է ոստիկանության կողմից վարչական հսկողության ներքո:

Նշված հիմքերից յուրաքանչյուրի գոյությունը դադարելուց հետո (պատիժը կրելը վերջացնելը, զինվորական ծառայության ավարտը, դատարանի կողմից առաջադրված պարտականության կատարումը և այլն) քաղաքացին կարող է ստանալ ելքի թույլտվություն և մեկնել արտասահման:

Ազատորեն արտասահման մեկնած քաղաքացիները նույնպես ազատորեն կարող են վերադառնալ հայրենիք: Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձանց համար չի պահանջվում մուտքի որևէ արտոնագիր կամ թույլտվություն:

§ 7. Խղճի և հավատքի (կրոնի) ազատության իրավունք

Մարդկությունը հորինել է տարբեր աստվածներ և տարբեր կերպ քացատրել նրանց կապը մարդու ստեղծման, նրա ապրելու և մահվան հետ: Այդ կապակցությամբ ստեղծվել են տարբեր կրոններ, որոնք այսօր դավանում են աշխարհի ժողովուրդները:

Խղճի և հավատքի ազատության իրավունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26 հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այն իր մեջ ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզելու, եկեղեցական արարողությունների՝ և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

Խղճի տակ հասկացվում է մարդու այնպիսի կոիտիկական հոգեբանական վիճակ, որը պայմանավորում է անհատի կյանքի և արարքների համար էթիկական և բարոյական սահմանները: Այսպես, ԱՄՆ Գերագույն դատարանը իր որոշումներից մեկում խիղճը բնորոշել է որպես կարևոր, անկեղծ կարծիք, որը մարդու կյանքում գրավում է ճիշտ այնպիսի տեղ, ինչպիսին զուգահեռաբար գրավում է աստված: Այդ պատճառով

էլ խղճի թելադրանքով ընդունված որոշումները կարելի է համարել առաջնահերթ կարևորության պահանջներ:

Խղճի ազատությունը ենթադրում է սեփական կամքին համաձայն բանական վարվելու հնարավորություն և ազատություն: Սեփական խղճին համաձայն վարվելը միշտ էլ համարվել է մարդկային բանականության բարձրագույն դրսևորման ձևը:

Խղճի ազատությունը միաժամանակ ենթադրում է այլոց հայացքների նկատմամբ հանդուրժողականություն:

Հավատքի կամ կրոնի ազատության տակ հասկացվում է **աշխարհայացքի** ազատության իրավունքը: Դա նշանակում է որ յուրաքանչյուր ոք ունի **անվերջանալի աշխարհը շոշափելի բանականությամբ ընկալելու ազատություն**: Դրա հետ մեկտեղ, աշխարհայացքի ազատությունը չի կարելի դասել մարդու բացարձակ իրավունքների շարքը, որովհետև յուրաքանչյուր անհատ յուրովի է պատկերացնում կյանքի իմաստը:

Հավատքի (կրոնի) ազատությունը տարբերվում է խղճի ազատության իրավունքից: Այն (հավատքի ազատությունը) առավել զուրբալ հասկացություն է, որը ենթադրում է ցանկացած խորքային հարցի հանդեպ անձի ազատ վերաբերմունքը: Այստեղ խոսքը գնում է աստվածայինի կամ տրանսցենդենտալ երևույթների վերաբերյալ մարդու բոլոր պատկերացումների մասին: Այս ազատությունը հավասարապես վերաբերվում է նաև աթեիստներին:

Հավատքի (կրոնի) ազատությունը հնարավոր չէ իրականացնել բացարձակ առունով, քանի որ այն ամենադժվար և բարդ իրականացվող ազատություններից մեկն է: Խնդիրն այն է, որ ամբողջ աշխարհում և յուրաքանչյուր երկրում միաժամանակ գործում են բազմաթիվ կրոններ, որոնցից յուրաքանչյուրը հաստատում է, որ ինքը միակ և ճշմարիտն է, իսկ մնացածը՝ ոչ: Բնականաբար այս պայմաններում կրոնների և դրանց դավանողների մերձեցումը դժվար իրականանալի է:

Հավատքի (կրոնի) ազատության բանաձևը պետք է արտահայտվի հետևյալ կերպ. հարգանքով վերաբերվել բոլոր հավատացյալ մարդկանց, անկախ նրանց դավանանքից: Յուրաքանչյուր մարդ պետք է հավատարիմ լինի իր հավատքին, մասնակցի ծիսակատարություններին, սակայն դավանի իր համար, խաղաղ, դրա համար նախատեսված հատուկ վայրերում: Այն համապատասխանում է աստվածաշնչյան պատվիրանին՝ «Անտեղի մի արտասանիր Տեր Աստծո անունը»: Ահա թե ինչու «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966թ. միջազգային դաշնագիրն ստորագրող պետությունները գտնում են, որ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն, որն

իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, արգելվում է օրենքով:

Սակայն Դաշնագրի ընդունումից հետո միջազգային հանրությունը գիտակցեց, որ կրոնական խտրականությունը միանգամայն տարբերվում է ռասայական խտրականությունից: Այդ պատճառով էլ 1981 թ. ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը ընդունեց «Կրոնի վրա հիմնված խտրականության և անհանդուրժողականության բոլոր ձևերի վերացման մասին» հռչակագիրը, որը հռչակում է՝ ա) կրոնի և հավատքի միասնության հիման վրա ծիսակատարությունների և հավաքների իրավունք՝ դրա համար հատուկ նախատեսված վայրերում, բ) համապատասխան բարեգործական և մարդասիրական ինստիտուտներ հիմնադրելու և դրանց աջակցելու իրավունք, գ) ծիսակատարությունների և կրոնական հավատքի սովորույթների հետ կապված անհրաժեշտ նյութեր և ապրանքներ պատրաստելու, ձեռքբերելու և օգտագործելու իրավունք, դ) հավատացյալների բնակության վայրերում համապատասխան հրապարակումներ հրատարակելու և տարածելու իրավունք, ե) ազգային և միջազգային մակարդակներում անհատների և կրոնական համայնքների միջև կապերի հաստատման և պահպանման իրավունք և այլն:

1991 թ. հունիսի 17-ին ընդունվել է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որը մանրամասնությամբ կարգավորում է խղճի և դավանանքի ազատության իրականացման հետ կապված հասարակական հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետությունում ապահովվում է քաղաքացիների խղճի և դավանանքի ազատությունը: Օրենքն արգելում է քաղաքացիների նկատմամբ կիրառել որևէ հարկադրանք կամ բռնություն՝ ժամերգություններին, կրոնական ծիսակատարություններին, կրոնի ուսուցման մասնակցելու կամ չմասնակցելու համար: Դավանանքի նկատմամբ քաղաքացու իրավունքի ամեն մի սահմանափակում, տարբեր կրոնական ուղղությունների պատկանող անձանց միջև թշնամանքի հարուցում համարվում է Սահմանադրության պահանջների խախտում, որի համար մեղավորները կարող են պատժվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործող օրենսդրությամբ արգելվում է նաև հավատացյալների կրոնական համոզմունքների, գրացմունքների հրապարակային վիրավորանքը, նրանց պաշտամունքի շենքերի (եկեղեցիներ, մատուցներ և այլն), հուշարձանների քանդումն ու վնասումը, դրանց վրա վիրավորական գրություններ և պատկերներ կատարելը: Այդպիսի գործողությունները նույնպես համարվում են հանցագործություն և կատարողների համար սահմանվում է պատիժ՝ ազատազրկման ձևով:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում 1997 թ. սեպտեմբերի 17-ին կատարված փոփոխությունների մասին օրենքի համաձայն՝ պետությունը ճանաչում է խոստովանության գաղտնիության իրավունքը: Դա նշանակում է, որ քննչական և դատական ատյաններում որպես վկա չի կարող հարցաքննվել ձեռնադրված հոգևորական-խոստովանահայրը գործի այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ:

Հայ ժողովուրդն աշխարհում առաջիններից մեկն է, որ ընդունել է քրիստոնեությունը և այն հռչակել որպես պետական կրոն (301թ.): Հայաստանի Հանրապետության տարածքում գործում է առավելապես Հայաստանյայց առաքելական եկեղեցին՝ իր ավանդական կազմակերպություններով: Այդ կապակցությամբ ՀՀ Սահմանադրության 8.1 հոդվածը հռչակում է, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հանրապետությունում եկեղեցին անջատված է պետությունից: Դա նշանակում է, որ պետությունը չի միջամտում եկեղեցու գործունեությանը, իսկ եկեղեցին՝ պետության: Սակայն դա չի նշանակում, որ նրանց միջև չկա ոչ մի կապ: Հայաստանյայց առաքելական եկեղեցին և մյուս կրոնական կազմակերպությունները իրենց գործունեության ընթացքում պարտավոր են կատարել պետության կողմից ընդունված օրենքների պահանջները:

Մյուս կողմից, պետությունը կրոնական կազմակերպություններին վերապահել է մի շարք իրավունքներ, որոնց ապահովումը հանդիսանում է նրա պարտականությունը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրությունում ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Դա նշանակում է, որ պետությունը պարտավոր է պաշտպանել կրոնական համայնքների սեփականությունը (ներանց շենքերը, պաշտամունքի և ծիսակատարությունների առարկաները, գույքը և այլն) ուրիշների ոտնձգություններից:

Կրոնական համայնքներին իրավունք է վերապահվում ստեղծել կրոնի ուսուցման համապատասխան խմբեր՝ իրենց անդամներին ու նրանց երեխաներին կրոնական կրթություն տալու համար: Քանի որ խղճի ազատության իրավունքից օգտվում են նաև երեխաները, ուստի **ժողովրդի իրավունք չունեն ստիպելու երեխաներին՝ ընդգրկվելու կրոնի ուսուցման այդ խմբերում:** Մյուս կողմից, **կրոնական համայնքներն իրավունք չունեն**

ենն երեխաներին ներգրավել կրոնական առարկաների ուսուցմանը՝ առանց ծնողների համաձայնության:

Խղճի ազատության իրավունքի իրագործումը կարող է **սահմանափակվել** միայն օրենքով նախատեսված դեպքերում: Կրոնական կազմակերպությունը կամ համայնքը համարվում է **հասարակական կազմակերպություն:** Ուստի, ինչպես ամեն մի հասարակական կազմակերպություն, կրոնական համայնքը նույնպես պետք է ունենա իր կանոնադրությունը և **գրանցվի օրենքով սահմանված կարգով:** Ներկայումս Հանրապետությունում կրոնական համայնքը կամ կազմակերպությունները իրավաբանական անձի կարգավիճակ են ստանում Հայաստանի Հանրապետության կառավարության Աշխատակազմի կրոնական կազմակերպությունների և ազգային փոքրամասնությունների հարցերով վարչության կողմից գրանցվելուց հետո:

Եթե կրոնական կազմակերպությունը խախտում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և իր կանոնադրությունը կամ գործում է առանց գրանցվելու, ապա նրա գործունեությունը կարող է օրենքով սահմանված կարգով դադարեցվել:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ բոլոր քաղաքացիներն օրենքի առջև հավասար են՝ անկախ կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից: Դա նշանակում է, որ գործող օրենսդրությամբ նախատեսված բոլոր քաղաքացիական պարտականությունները տարածվում են նաև կրոնական կազմակերպությունների հավատացյալ անդամների վրա՝ այլ քաղաքացիների հետ հավասար:

Եթե կրոնական կազմակերպությունն իր անդամներին քաղաքում է հրաժարվել իրենց քաղաքացիական պարտականությունների կատարումից (այդ թվում զինվորական ծառայությունից) կամ կատարել հակաիրավական գործողություն, ապա այդպիսի կազմակերպության գործունեությունը ոչ միայն կդադարեցվի, այլև մեղավոր անձինք կենթարկվեն պատասխանատվության:

Վեղջին տարիներին նկատվել են դեպքեր, երբ տալիքեր կրոնական ուղղությունների պատկանող հավատացյալների համայնքների միջև ծագել են հակասություններ, որոնք ավարտվել են զանգվածային անկարգությամբ: Նման դեպքերում հասարակական կապ ու կանոնի, քաղաքացիների անվտանգության ու առողջության, հասարակության մյուս անդամների իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով կարող է սահմանափակվել խղճի ազատության իրավունքի իրագործումը:

§ 8. Մտքի և խոսքի ազատության իրավունք

Միտքը, մտածելու ընդունակությունը մարդու անբաժան հատկությունն է, նրա գործողությունների հիմքը: Շրջակա միջավայրը, իրերը, առարկաները, իրադարձությունները մարդն ընկալում է մտովի և մտովի գնահատում դրանք ու ձևավորում իր վերաբերմունքը դրանց նկատմամբ: «Եւ մտածում եմ. նշանակում է ես գոյություն ունեմ»,- գրել է ֆրանսիացի ակադեմիկոս մտածող Դեկարտը:

Միտքը միշտ էլ ազատ է: Դա նրա գոյության պայմանն է: Եթե փորձենք մի պահ չմտածել, չի հաջողվի: Կարելի է տարբեր սպառնալիքներով մարդուն ստիպել ասելու այն, ինչը չի մտածում (օրինակ, ստիպել նրան ծեծի միջոցով խոստովանել չկատարած արարքը): Մակայն ստիպել նրան՝ մտածել կամ չմտածել, անհնար է: Բոլոր ժամանակների ոչ ժողովրդավարական ռեժիմ ունեցող պետությունների իշխանավորների նվիրական երազանքն է եղել գրկել միտքն ազատությունից, ստիպել իրենց հպատակներին՝ չմտածել կատարվող անօրինությունների մասին: Արդյունքը եղել է այն, որ ոչ թե միտքն է դադարել գործելուց, այլ ժողովուրդը կործանել է բռնաստիճակակա կարգերը:

Մարդն ավելի հաճախ մտածում է ինքն իրեն, իր մեջ, ուրիշներից գաղտնի: Եւ օժտված է խոսքի բարիքով, մտածելու, բնօրինակացնելու, կանխատեսելու ունակությամբ: Բնականաբար **նա չի կարող անտարբեր մնալ** շրջապատող աշխարհում տեղի ունեցող երևույթների նկատմամբ և չարձագանքել իր շուրջը տեղի ունեցող իրադարձություններին: Այդ կապակցությամբ նա անպայման պետք է իր մտորումների ու տազնապների շուրջ կիսվի մտերիմների հետ: Այդ պահանջմունքի իրականացումը կատարվում է **խոսքի միջոցով**: Այստեղ է, որ մարդուն անհրաժեշտ է լինում խոսքի ազատություն:

Երկար ժամանակ բանավոր խոսքը շարունակում էր մնալ որպես մարդկանց հաղորդակցության միակ աղբյուր: Բնավոր խոսքը մարդկանց հաղորդում էր, թե ինչպիսի որոշումներ են ընդունվել ավագների խորհրդի, առաջնորդների, կառավարողների կողմից, ինչ պետք է անեն մարդիկ դրանք իրագործելու համար: Միաժամանակ խոսքը դառնում էր ստի և իրականության խեղաթյուրման միջոց, որը ծառայում էր հասարակությանը մարդության մեջ զցելուն:

Խոսքն ի գործու է նաև **վիրավորելու մարդու պատիվն ու արժանապատվությունը**, սերմանելու հասարակության անդամների միջև թշնամանք և այլն: Այս հանգամանքներից ելնելով էլ հասարակությունն ստիպ-

ված սահմանում է որոշակի **սահմանափակումներ** այն մասին, թե ինչ կարելի է ասել և ինչ՝ ոչ:

Խոսքի ազատության իրավունքը եվրոպական երկրներում նոր ձևավորվող բուրժուազիայի առաջին պահանջներից մեկն էր, որն առաջին անգամ **ամրագրվեց 1689 թ. Իրավունքների անգլիական բիլլում**: Սկզբնական տեսքով այն սահմանափակվում էր միայն Պառլամենտի նիստերի դահլիճում: Անգլիական պառլամենտականները պնդում էին, որպեսզի պառլամենտում խոսքի և բանավեճերի ազատությունը հետագայում դատարանում կամ Պառլամենտից դուրս չօգտագործվի իրենց դեմ:

Այս դրույթն առավել կատարելագործվեց Մարդու իրավունքների ամերիկյան բիլլում (1789թ.), սոր տարածվում էր արդեն ԱՄՆ բոլոր քաղաքացիների վրա: Մասնավորապես, Սահմանադրության առաջին փոփոխման մեջ ասվում էր. «Կոնգրեսը չպետք է բնորոնի այնպիսի օրենքներ, որոնք սահմանափակեն խոսքի կամ տպագրության ազատությունը կամ չարաշահումները վերացնելու նպատակով խաղաղ հավասարվելու և կառավարությանը պետիցիաներով դիմելու իրավունքը»:

Ժամանակակից ընկալմամբ բավականին կատարելագործվել է այս իրավունքի բովանդակությունը, որը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդվ.19) ձևակերպված է հետևյալ կերպ. «Յուրաքանչյուր ոք ունի կարծիքի և դրանք արտահայտելու ազատություն. այն ներառում է առանց միջամտության կարծիքներ ունենալու, անկախ պետական սահմաններից տեղեկատվություն ու գաղափարներ փնտրելու, լրատվության ցանկացած միջոցով ստանալու և տարածելու ազատությունը»:

Արտահայտվելու ազատությունը ենթադրում է մտքեր, տեսակետներ, գնահատականներ, տեղեկություններ փնտրելու, ստանալու և այլ անձանց փոխանցելու իրավունք: Այն կարող է լինել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր կամ արվեստի ստեղծագործության տեսքով:

Վերոնշյալ միջազգային-իրավական փաստաթղթերի ձևակերպումներից կարելի է հետևություն անել, **որ ազատ խոսքը պետք է լինի ազնիվ, քարեկիրք, ռզեշնչող**: Այն պետք է օգտագործվի անարդարության, վիրավորանքի և նսեմացման վերացման, աղքատների ու բույրերի և բարու պաշտպանության, ինչպես նաև չարի դատապարտման համար: Բնականաբար չար, գրպարտչական, վիրավորական, անբարոյական, անազնիվ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, մարդկանց միջև շարություն սերմանող, ազգային, կրոնական և այլ զգացմունքները նսեմաց-

նող խոսքը, որը հակասում է հասարակական բարոյականությանը, չի կարող և չպետք է լինի ազատ:

Սակայն պրակտիկայում հաճախ է պատահում, որ լրագրողներն ու տեղեկատվության այլ տարածողները բացարձակապես չեն այդ իրավունքը՝ ձգտելով ձեռքագրելով հասարակության սոցիալական և քաղաքական ինստիտուտների կողմից իրականացվող վերահսկողությունից և հասարակության առջև պատասխանատվությունից: Արդյունքում վերջիններին կողմից ոտնահարվում են շատ քաղաքացիների իրավունքներն ու արժանապատվությունը: Նմանատիպ երևույթները կանխելու նպատակով ՀՀ օրենսդրությանը խոշոր նյութական պատասխանատվության է նախատեսում գրպարտության և վիրավորանքի համար:

Խոսքի ազատության իրավունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27 հոդվածում, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատություն տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

Այս նորմի բովանդակությունից հետևում է, որ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի **ինչպես գրավոր** (թերթերում, ամսագրերում, նկարներում, կինոնկարներում, դիմումներում և այլն), այնպես էլ **բանավոր ձևով** (հեռուստատեսությամբ, խորհրդարանում, հանրահավաքներում, ժողովներում և այլն) ազատորեն արտահայտել իր կարծիքը ցանկացած հարցի կապակցությամբ: Նա կարող է քննադատել կամ խրախուսել Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության, իրավապահ մարմինների, քաղաքական կուսակցությունների և մյուս կազմակերպությունների, ինչպես նաև առանձին պաշտոնատար անձանց և ոչ պաշտոնատար անձանց գործունեությունը:

Իրականում խոսքը հանդիսանում է ամեն ինչի ստեղծման աղբյուր: Անգամ Աստվածաշնչում է ասվում, որ խոսքը եղել է Աստծո կողմից տիեզերքի ստեղծման հիմքում: Խոսքը կարող է հսկայական **կառուցողական նշանակություն ունենալ**, եթե այն իրոք ուղղված է չարի, անարդարի, անբարոյականի դեմ, նպատակ ունի շտկելու հասարակության մեջ գոյություն ունեցող սխալը, կեղծիքը, անարդարությունը: Մյուս կողմից, խոսքը կարող է ունենալ **կործանարար ազդեցություն**, եթե ծառայում է չարին ու անարդարին: «Կարծիքներն են կառավարում աշխարհը»,- իրավամբ նկատում էր ֆրանսիացի մեծ մտածող Հոլբախը:

Խոսքի ազատությունը ժողովրդավարության մեծագույն նվաճումներից է: Այն հնարավորություն է ընձեռում ի հայտ բերել և հաշվի առնել

մարդկանց կարծիքների և հանդուժմանների բազմազանությունը: Միայն այդ ճանապարհով է հնարավոր բացահայտել ճշմարտությունը, որոշել հասարակության կարիքների ու հոգուերի ծավալը և հասնել դրա նվազեցմանը:

Խոսքի ազատության իրավունքն առանձին անձանց և կազմակերպությունների կողմից կարող է օգտագործվել նաև **ի վնաս հասարակության**, նրա անդամների շահերի և բարօրության: Այդ պատճառով էլ միջազգային փաստաթղթերը և դրանց հիման վրա պետությունների օրենսդրությունները նախատեսում են խոսքի ազատության իրավունքի **սահմանափակման** հնարավորությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն արգելում է իրավունքների և ազատությունների, այդ թվում խոսքի ազատության իրավունքն օգտագործել երկրի սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն և պատերազմ քարոզելու նպատակով (47 հոդվ., 2-րդ մաս): Քանի որ խոսքի ազատության իրավունքի չարաշահումը կատարվում է, ամենից առաջ, լրատվության միջոցներով, ուստի «Ձանգվածային լրատվության մասին» 2003 թ. դեկտեմբերի 13-ին ընդունված օրենքը հատուկ ուշադրություն է դարձնում այդ հարցին:

Ըստ այդ օրենքի՝ չի թույլատրվում զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող (պետական գաղտնիք պարունակող) տեղեկություններ կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող նյութեր, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը: Դրանից հետևում է, որ հրապարակման ենթակա չէ պատերազմ, բռնություն, ազգային ու կրոնական թշնամանք հրահրող, պոռնկություն, թմրամոլություն և քրեորեն պատժելի այլ արարքներ քարոզող, կեղծ ու չստուգված լրատվությունը: Այդ նույնը վերաբերում է նաև նման լրատվություն պարունակող տեսաֆիլմերին, կինոնկարներին, ամսագրերին և այլ դիտակալիկ նյութերին:

Օրենսդրական այդ նորմերը խախտող անձանց և կազմակերպությունների համար Հայաստանի Հանրապետության քրեական, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով սահմանված են պատասխանատվության միջոցներ:

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ
ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

§ 1. Միավորվելու իրավունք

Իրական կյանքում մարդը հակված է անձնամբ իրականացնելու իր իրավունքները: Սակայն երբևէն անհրաժեշտ է յիմում այս կամ այն իրավունքի իրականացման համար **համախմբել ջանքերը**, այսինքն՝ միավորվել այլ անձանց հետ: Օրինակ, մեկ հոգով, բնական է, հնարավոր չէ հանրահավաք, փողոցային երթեր, սպորտային միջոցառումներ և այլն կազմակերպել: Ելնելով դրանից, միջազգային փաստաթղթերում և դրանց հիման վրա պետությունների օրենսդրություններում սահմանվում է մարդու՝ այլ անձանց հետ միավորվելու իրավունքը: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 28 հոդվածում ասված է. «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհմիություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք»:

Սահմանադրաիրավական իմաստով միավորումը իրենից ներկայացնում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց խումբ, որոնք **հետապնդում են համատեղ** զարգացման, քաղաքական, մշակութային, մասնագիտական համընդհանուր օգուտակար նպատակներ: Մարդու միավորումներ կազմելու իրավունքը ներառում է այլոց հետ ազատորեն միավորումներ ստեղծելու, նրան անդամագրվելու, նրա գործունեությանը մասնակցելու և անդամությունից (մասնակցությունից) անարգել դուրս գալու իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային և այլ դրությունից, քաղաքացիությունից:

Այդ իրավունքը մարդկանց հնարավորություն է տալիս միավորվել և **կողնկտիվ ձևով իրականացնել** օրոշակի խնդիրներ, շահեր և նպատակներ: Օրինակ, պատանիներն ու **երիտասարդներն** իրենց այդ իրավունքի հիման վրա ստեղծում են գեղարվեստական (երաժշտական, նկարչական, պարային, գրական և այլն), սպորտային, բնության պահպանության և այլ բնագավառների վերաբերյալ կազմակերպություններ: **Աշխատանքային տարիքի հասած անձինք** իրենց աշխատանքի, աշխատավարձի, հանգստի, կենսաբաշխման և այլնի հետ կապված հարցերի լուծման համար միավորվում են **արհմիությունների մեջ** և այլն:

Միավորումների տեսակ են հասարակական կազմակերպությունները, որոնց գործունեությունը կարգավորվում է 2001 թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով: Ըստ այդ օրենքի՝ հասարակական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող կազմակերպության՝ հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա միավորվել են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական (հոգևոր) կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով (հոդվ. 3):

Ի տարբերություն քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպություններում անդամագրվելու իրավունքը պատկանում է **ման անչափահասներին**, ընդ որում՝ մինչև տասնչորս տարեկան անչափահասը կազմակերպությանը կարող է անդամագրվել օրինական ներակայացուցչի դիմումի հիման վրա, իսկ տասնչորսից տասնութ տարեկան անչափահասը՝ իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ: Հասարակական կազմակերպությունները իրենց գործունեությամբ աջակցում են պետությանը՝ հասնելու հասարակության կյանքի ամենատարբեր ոլորտներում իր առջև դրված խնդիրների իրականացմանը:

Հասարակական կազմակերպության տեսակ են **արհմիությունները**, որոնց վերաբերյալ 2000թ. դեկտեմբերի 25-ին ընդունված «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքը մանրամասն սահմանում է արհմիությունների կազմակերպման և գործունեության հետ առնչվող բոլոր հիմնախնդիրները:

Հասարակական միավորման տեսակ է **քաղաքական կուսակցությունը**: Դրա նպատակն է նպաստել ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը միավորվելու իրավունքը վերապահում է Հանրապետության տարածքում ապրող յուրաքանչյուր անձի, ապա քաղաքական կուսակցությունների մեջ միավորվելու իրավունքը վերապահում է ՀՀ քաղաքացիներին (հոդվ. 28, 2-րդ կետ): Ընդ որում, Հայաստանի Հանրա-

պետության քաղաքացին կարող է լինել միայն մեկ կուսակցության անդամ: Պատճառն այն է, որ քաղաքական կուսակցություններն իրավունք ունեն մասնակցելու պետական իշխանության իրականացմանը՝ ներկայացուցչական մարմիններում իրենց պատգամավորների միջոցով: ՀՀ քաղաքացու՝ այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի իրականացման ձևերն ու մեթոդները նախատեսված են «Կուսակցությունների մասին» 2002 թ. հուլիսի 3-ի ՀՀ օրենքով:

Հանրապետության Սահմանադրությունը որոշ **սահմանափակումներ է նախատեսում** կուսակցություններին անդամագրվելու հարցում: Մասնավորապես, կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամների նկատմամբ (հոդվ. 28, 3-րդ կետ):

Քաղաքացիների միավորման սահմանադրական իրավունքը հիմնված է **կամավորության**, կազմակերպության անդամների **իրավահավասարության** սկզբունքի վրա: Այդ պահանջը ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 28 հոդվածում, համաձայն որի՝ **չի կարելի մարդուն հարկադրել** անդամակցելու որևէ կուսակցության կամ միավորման: Դա նշանակում է, որ պետական մարմինները, հասարակական միավորումներն իրավունք չունեն ինչպես գրավոր (որոշում ընդունելու միջոցով), այնպես էլ բանավոր ձևով առիպել քաղաքացուն՝ հարկադրաբար անդամագրվել որևէ հասարակական միավորման:

Այն առանձնապես վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ կուսակցություններում միավորվելու իրավունքին. որը նրանք իրականացնում են ազատորեն՝ իրենց համոզմունքներին համապատասխան, կամավոր հիմունքներով կուսակցություններ ստեղծելու, նրանց ծրագրերն ու կանոնադրություններն ընդունելու պայմանով, նրանց անդամակցելու, գործունեությանը մասնակցելու, ինչպես նաև կուսակցությունից ազատորեն դուրս գալու միջոցով:

Կուսակցություններին քաղաքացիների անդամակցելը կամ չանդամակցելը չի կարող հիմք հանդիսանալ նրանց իրավունքները և ազատությունները սահմանափակելու (և) կամ պետության կողմից նրանց որևէ արտոնություն կամ առավելություն տրամադրելու համար:

§ 2. Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք

Ժողովրդավարական հասարակության պայմաններում հավաքվելու հնարավորությունը համարվում է մարդու հիմնական պահանջմունքներից մեկը: Այլ մարդկանց հետ հանդիպումը մարդուն հանում է մեկուսացումից, նրան տալիս է համերաշխության և համախմբվածության զգացում: Որպես այս իրավունքի երաշխիք՝ արգելվում է այնպիսի պետական միջոցառումների իրականացումը, որոնք խոչընդոտում են հավաքների կազմակերպմանն ու անցկացմանը, ինչպես նաև դրանց՝ մարդկանց մասնակցելուն կամ չմասնակցելուն: Եթե հավաքի անցկացման համար չի պահանջվում հասարակական տարածք, ապա դրա անցկացումը չի կարող կախման մեջ դրվել պետության թույլտվությունից: Հավաքները կարևոր կենտրոն են հանդիսանում հասարակական և քաղաքական կարծիքի ձևավորման համար: Այն կարևորվում է հատկապես մարդկանց այն խմբերի համար, որոնց համար ֆինանսական պատճառներով մատչելի չեն զանգվածային լրատվության միջոցները: Հավաքն այս դեպքում համախմբում է համանման մասնավոր շահեր ունեցող անձանց և նպաստում վերջիններիս ինտեգրացմանը հասարակության մեջ:

Հավաքների իրավունքը ենթադրում է մարդկանց ցանկացած կուտակումը մասնավոր կամ հասարակական վայրում, որը նպատակ է հետապնդում փոխանակել կարծիքներ կամ ծավալել երկխոսություն: Այլ խոսքով՝ հավաքները նպատակ են հետապնդում ձևավորել կարծիքներ:

Հավաքների անցկացման ձևերը բազմազան են: Դրանք կարող են դրսևորվել զեկույցների, մասնավոր կամ հասարակական բնույթի հանդիպումների, թեմատիկ երեկոյթների ձևով, որոնք կարող են անցկացվել ինչպես բաց երկնքի տակ (հրապարակ, մարզադաշտ և այլն), այնպես էլ փակ տարածքներում (բնակարան, դահլիճ, ռեստորան և այլն): Ծփման նպատակով մարդկանց ցանկացած կուտակում համարվում է հավաք, որի համար կարևոր նախադրյալ է համարվում **որոշակի կազմակերպվածությունը**: Սակայն այս սկզբունքը չի կարող վերաբերվել, օրինակ խոշոր վթարի ինչպես նաև առևտրային կամ ժամանցային բնույթի միջնացառումների ժամանակ մարդկանց կուտակմանը:

Հավաքների իրավունքը համարվում է իրավական պետության և ժողովրդավարական հասարակության նախապայմաններից մեկը: Որպես այդպիսին, այն կարող է իրականացվել բացառապես խաղաղ հանդիպումների և գործողությունների միջոցով, որոնք որևէ ձևով իրենց մեջ բռնություն չեն պարունակում: Որպես կանոն հավաքները, հատկապես

հանրահավաքներն ու ցույցերը, որոշ դեպքերում նպատակ են հետապնդում խախտել հասարակական խաղաղ կյանքի բնականոն ընթացքը, պետական մարմինների ուշադրությունը հրավիրելով իրենց կողմից բարձրացված հիմնահարցերի վրա: Մակայն դա չի նշանակում, որ մասնակիցները իրավունք ունեն իրենց ոչ իրավաչափ գործողություններով վնաս պատճառել այլ անձանց կամ պետության ունեցվածքին:

Հավաքների ազատության հիմնական բովանդակությունը համարվում է այդ միջոցառումներին մասնակցելու կամ չմասնակցելու իրավունքը: Այս տեսակետից արգելվում է մասնակիցների հարկադիր հավաքագրումը կամ գրանցումը: Հավաքների ազատությունը ենթադրում է նաև դրանց մասնակցելու մատչելիությունը, այսինքն՝ անարգել ժամանումը, մեկնումը և միջոցառման վայրը լքելը:

Հավաքների իրավունքի սահմանադրական ամրագրումը ենթադրում է, որ այդ իրավունքից օգտվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Իրավաբանական անձի մասնակցությունը առավելագույնս պայմանավորված է որպես հավաքի կազմակերպիչ հանդես գալով: Քանի որ այդ իրավունքը համարվում է խոսքի ազատության և կարծիքի պնդելու իրավունքի բաղկացուցիչ մաս, ուստի դիտարկվում է ոչ թե քաղաքացու, այլ մարդու իրավունք, ուստի և վերապահված է նաև օտարերկրացիներին: Մակայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 16 հոդվածն ամրագրում է, որ ոչինչ չի կարող խոչընդոտել հավաքների ազատության ոլորտում անդամ պետություններին սահմանափակումներ նախատեսելու օտարերկրացիների քաղաքական գործունեության համար: Կոնվենցիայի նշված դրույթից հետևում է, որ հատկապես հանրահավաքներին, երթերին և ցույցերին օտարերկրացիների մասնակցելու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29 հոդվածն ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք»: **Հավաքը երկու կամ ավելի անձանց խաղաղ և առանց զենքի ժամանակավոր ներկայությունն է որևէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք մեկտրելու կամ արտահայտելու մատղորությանը:** Ընդ որում, հավաքը **հանրային է**, եթե դրան կարող է մասնակցել յուրաքանչյուր ոք: Նշված բնույթի հավաքները որպես կանոն անցկացվում են պետական, համայնքային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող բացօթյա տարածքներում (փողոց, մալթ, պուրակ, այգի, հրապարակ և այլն) կամ շինություններում, որոնց համար պարտադիր նախապայման է

հանդիսանում դրանց **մատչելիությունը յուրաքանչյուր մարդու համար:** Միաժամանակ **հավաքը կարող է իրականացվել մեկ վայրում հավաքվելու կամ մեկ վայրից մյուսը տեղաշարժվելու միջոցով (երթ):**

Այդ իրավունքը սերտորեն կապված է քաղաքացիների մտքի և խոսքի ազատության իրավունքի հետ և, փաստորեն, հանդիսանում է դրանց իրականացման կոլեկտիվ ձև: Հավաքների իրավունքը դրսևորվում է **հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի միջոցով, որը** անձանց տրված հնարավորությունն է՝ հրապարակայնորեն արտահայտելու իրենց կարծիքը պետության գործունեության նկատմամբ: Մակայն **հանրահավաքները, երթերն ու ցույցերը** հիմնականում անցկացվում են այն ժամանակ, երբ քաղաքացիները համաձայն չեն հարցի այդ կերպ լուծմանը կամ պահանջում են իրենց հետաքրքրող հարցի անհապաղ լուծում: Օրինակ, քաղաքացիները կարող են հավաքվել (հանրահավաք կազմակերպել) Ազգային ժողովի շենքի առջև և պահանջել, որպեսզի Ազգային ժողովն ընդունի կրթական համակարգը բարելավելու վերաբերյալ ակտ, կամ գործազուրկ քաղաքացիները կարող են կազմակերպել փողոցային երթ (թափուր շարժվում է Երևանի որևէ կենտրոնական փողոցով) և պահանջել, որպեսզի կառավարությունը միջոցներ ձեռնարկի աշխատատեղեր ստեղծելու համար:

Սահմանադրությունը, քաղաքացիներին տալով հավաքելու կազմակերպելու իրավունք, միաժամանակ պահանջում է, որ դրանք լինեն խաղաղ, առանց զենքի: Խնդիրն այն է, որ հանրահավաքներին կամ ցույցերին մասնակցող անձանց առանձին խմբերի կարծիքն ու շահերը միշտ չէ, որ կարող են համընկնել: Արդյունքում կարող են ծագել ընդհայումներ: Որպեսզի այդ բնդիարումները չունենան արյունալի հետևանքներ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը թույլատրում է այդ հրապարակային միջոցառումները պայմանով, որ դրանք լինեն խաղաղ, առանց զենքի:

Բացի այդ, հանրահավաքները, երթերը և ցույցերն անցկացվում են փողոցներում, հրապարակներում, պետական մարմինների շենքերի առջև: Այդ միջոցառումները, ըստ էության, բավական դժվարություններ են ստեղծում հասարակական կարգի պահպանման, սրանսպորտի միջոցների և քաղաքացիների անխափան գործունեության համար: Այդ պատճառով էլ պետության կողմից սահմանվում է հավաքների կազմակերպման և անցկացման հատուկ կարգ: Այդ կապակցությամբ **2011 թ. ապրիլի 14-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հավաքների ազատության մասին»** օրենքը:

Օրենքը հավաքմերի մասնակցելու իրավունքը վերապահելով յուրաքանչյուր մարդու (քաղաքացիներ, օտարերկրացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք), միաժամանակ արգելում է պարտադրել անձին մասնակցել որևէ հավաքի կամ խոչընդոտել նրա մասնակցությունը այդ միջոցառմանը: **Հավաքի մասնակից է համարվում այն անձը, որը հավաքի անցկացման ժամանակ գտնվում է հավաքի վայրում՝ հավաքին մասնակցելու նպատակով:** Մինչդեռ միջոցառմանը կարող են ներկա գտնվել նաև անձինք, որոնք չեն համարվում հավաքի մասնակիցներ: Այդպիսիք են հանդիսանում հավաքի անցկացման վայրում հավաքի անցկացման ժամանակ իրենց լիազորություններն իրականացնելու կամ աշխատանքային պարտականությունները կատարելու, ստեղծագործական գործունեություն կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ գործունեություն իրականացնելու նպատակով գտնվող անձինք, ինչպես նաև հավաքի լուսարանման նպատակով ներկա գտնվող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները (հոդվ. 6):

Միաժամանակ, օրենքը քննարկվող ոլորտում սահմանափակում է որոշակի կատեգորիայի քաղաքացիների իրավունքները: Այսպես, օրենքի 8 հոդվածի համաձայն՝ **սահմանադրական դատարանի անդամներն ու դատավորները, ինչպես նաև զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողները հավաքներին մասնակցելիս պետք է ցուցաբերեն քաղաքական չեզոքություն և զսպվածություն:** Բացի այդ, զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողներին արգելվում է հավաքին մասնակցել ծառայողական համազգեստով:

Օրենքը նախատեսում է հավաքների երկու կատեգորիա՝ **ա) հանրային հավաքներ (100-ից ավել մասնակիցներ) և բ) մինչև 100 մասնակից ունեցող, ինքնաբուխ և շտապ հավաքներ:**

1. **Հանրային հավաքներ** անցկացնելու համար կազմակերպիչները պարտավոր են գրավոր իրազեկել լիազոր մարմնին (հավաքի անցկացման վայրի համայնքի ղեկավարին): Իրազեկումը նպատակ է հետապնդում պետության կողմից ապահովել հավաքի բնականոց և խաղաղ ընթացքը, ինչպես նաև անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել այլ անձանց սահմանադրական իրավունքների և հանրության շահերի պաշտպանության համար: Իրազեկումը կարող է ներկայացվել հավաքի անցկացման օրվանից ոչ **ուշ քան 7 օր, և ոչ շուտ, քան 30 օր առաջ:**

Իրազեկումը ներկայացվում է գրավոր՝ անձամբ կամ փոստով: Հանրային բնույթի հավաքի իրազեկման մեջ պետք է նշվեն հավաքի վայրը,

հավաքի սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը, հավաքի նպատակը, մասնակիցների սպասվող թիվը, հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները (պաստառներ, ջահեր, բարձրախոսներ և այլն), **կարգադրիչների նախատեսվող թիվը**, կրթի դեպքում՝ երթի ուղին և ժամանակացույցը, կազմակերպիչների անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները: Իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպելու դեպքում իրազեկման հետ պետք է ներկայացվի այդ մասին իրավաբանական անձի ղեկավար մարմնի որոշումը:

Լիազոր մարմնին իրազեկումը քննարկում է ըստ իրազեկումների մուտքագրման հերթականության: Եթե իրազեկումը ներկայացվել է հավաքի անցկացման օրվան նախորդող 30 օրից մինչև 14 օր առաջ, ապա համայնքի ղեկավարն իրազեկումը քննարկում է այն մուտքագրվելու պահից 5 օրվա ընթացքում, իսկ եթե իրազեկումը ներկայացվել է հավաքի անցկացման օրվան նախորդող 13 օրից մինչև 7 օր առաջ, ապա համայնքի ղեկավարն իրազեկումը քննարկում է այն մուտքագրվելու պահից 48 ժամվա ընթացքում: Համայնքի ղեկավարը իրազեկումը մուտքագրելուց հետո այն անհապաղ պետք է ուղարկի ոստիկանություն՝ հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով:

2. Մինչև 100 մասնակից ունեցող, ինքնաբուխ և շտապ հավաքների համար, ի տարբերություն հանրային հավաքների, իրազեկում նախատեսված չէ: **Ինքնաբուխ համարվում է այն հավաքը, որը անցկացվում է որոշակի իրադարձությանն անմիջապես արձագանքելու նպատակով:** Իսկ **շտապ հավաքները կազմակերպվում և անցկացվում են որևէ իրադարձությանը հրատապ արձագանքելու նպատակով և այդ նպատակին հնարավոր չէ հասնել իրազեկում ներկայացնելու՝ ժամկետի պահպանման պարագայում:**

Ինքնաբուխ հավաքը ենթադրում է կազմակերպիչների բացակայություն, սակայն, եթե այն ունի փաստացի կազմակերպիչ, ապա վերջինս պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել հավաքի անցկացման վայրի ոստիկանության ստորաբաժանմանը: Օրենքն ինքնաբուխ և շտապ հավաքների համար նախատեսում է ժամկետների սահմանափակումներ: Մասնավորապես, **ինքնաբուխ և շտապ հավաքները չեն կարող տևել վեց ժամից ավելի:**

Սահմանադրությամբ ամրագրված խաղաղ, առանց զենքի հավաքների հիմնարար իրավունքից բխում են մի շարք ածանցյալ իրավունքներ և պարտականություններ: Մասնավորապես, յուրաքանչյուր քաղաքացի

իրավունք ունի մասնակցելու հրապարակային միջոցառումներին, դադարեցնելու իր մասնակցությունը դրանց: Արգելվում է պարտադրել քաղաքացուն մասնակցելու որևէ հրապարակային միջոցառման: Բացի այդ, հրապարակային միջոցառման մասնակիցները կարող են ունենալ կամ կրել պատաստներ և ցուցադրական այլ նյութեր, ինչպես նաև օգտագործել բարձրախոսներ: Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի լուսանկարելու, նկարահանելու կամ ձայնագրելու հրապարակային միջոցառումները: Մասնակիցներին արգելվում է հրապարակային միջոցառումների ընթացքում կրել զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաներ, որոնք կարող են վնաս հասցնել այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին:

Միաժամանակ, հրապարակային միջոցառումների մասնակիցները պարտավոր են կատարել հավաքի ղեկավարի, կարգադրիչների կարգ ու կանոնի պահպանման վերաբերյալ ցուցումները, ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք նպատակաուղղված են հավաքի բնականոն ընթացքը խոչընդոտելուն, հավաքից հեռացվելու և հավաքը դադարեցվելու դեպքում անհապաղ հեռանալ հավաքի վայրից, չխոչըրդտել հավաքի անցկացման վայրում գտնվող կամ դրան հարող շենքերի, շինությունների կամ այլ տարածքների ազատ մուտքն ու ելքը:

Օրենքով սահմանված պահանջները խախտելու դեպքում, լիազորված մարմինների կողմից կարող են արգելվել ժողովների, հանրահավաքների, կոթերի և ցույցերի կազմակերպումը: Մասնավորապես, իրազեկման քննարկման արդյունքում լիազոր մարմնի որոշմամբ հանրային հավաքը կարող է արգելվել, եթե հավաքը նպատակ է հետապնդում տապալել սահմանադրական կարգը, բոլորքել ազգային, ռասայական, կրոնական ատելություն, քարոզել բռնություն կամ պատերազմ, եթե անցկացվելու է Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության նստավայրերից, դատարաններից կամ քրեակատարողական հիմնարկներից այնպիսի հեռավորության վրա, որի դեպքում այն սպառնում է դրանց բնականոն գործունեությանը, ինչպես նաև այն դեպքերում, եթե հավաքն անցկացվելու է ստրատեգիական նշանակության օբյեկտներից («Հայաստանի ատոմակայան» ՓԲԸ, գազի ստորգետնյա պահեստարաններ կամ դրանց սպասարկող կառույցներ, «Օրբիտա 2» վերգետնյա արբանյակային կայան և այլն) այնպիսի հեռավորության վրա, որը սպառնում է դրանց անվտանգությանը: Միաժամանակ արգելված հավաքին մասնակցելու քարոզչությունն արգելվում է:

Հանրային հավաքի անցկացումն արգելելու մասին որոշման մեջ պետք է հիմնավոր և հստակ շարադրվեն հանրային հավաքի անցկացման

արգելման պատճառները: Դրանց հետ անհամաձայնության դեպքում հանրային հավաքի կազմակերպիչները կարող են որոշումը բողոքարկել դատական կարգով: Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը հանրային հավաքի կազմակերպման և անցկացման սահմանված կարգը խախտող անձանց համար նախատեսում է նյութական պատասխանատվություն, (հոդվ. 180.1): Եթե նրանց հակաիրավական գործողությունների հետևանքով առաջացել է նյութական վնաս, ապա վերջիններս պարտավոր են հատուցել նաև նյութական վնասը:

§ 3. Տեղեկատվության ազատության իրավունք

Խոսքի և կարծիքի ազատությունը միշտ էլ կապվել է տեղեկատվություն ստանալու և տարածելու ազատության հետ: Մակայն ամբողջ խնդիրն այն է, թե ինչ բնույթի տեղեկատվություն կարող է մարդը ստանալ և տարածել:

Մարդուն անհրաժեշտ է ստանալ տեղեկատվություն իր առօրյա կյանքի ամենատարբեր կողմերի վերաբերյալ, որպեսզի կարողանա ճիշտ կողմնորոշվել տարբեր իրավիճակներում: Բնականաբար պետության քաղաքացիները՝ հասարակության անդամները, պետք է տեղյակ լինեն, թե *ինչով են զբաղված պետական մարմինները*, ինչ միջոցներ են ձեռնարկում հասարակության հետ առնչվող խնդիրները կարգավորելու և իրենց իրավունքներն ու ազատությունները իրականացնելու ուղղությամբ:

Ասվածը հավասարապես վերաբերվում է նաև միջազգային անցուդարձին: Իրական տեղեկատվությունը միաժամանակ նպաստում է հասարակության անդամների քաղաքական կամքի և իշխանությունների նկատմամբ որոշակի վերաբերմունքի ձևավորմանը: Այդ պատճառով երբեմն պետական մարմինները կամ առանձին անհատներ այդ տեղեկատվությունը վերածում են պետական կամ արտադրական գաղտնիքի, որպեսզի կարողանան խեղաթյուրել իրենց գործունեության իրական արդյունքները և բնակչության մեջ ձևավորեն իրենց մասին բարենպաստ կարծիք: Արդյունքում հասարակության համար երբեմն ձևավորվում են *երկու տարբեր աշխարհներ՝ իրական*, որը բնակչության մեծամասնության համար փակ ու գաղտնի է, և *մտացածին*, որը մատուցվում է հասարակությանը: Եվ երբ մարդը փորձում է կասկածի տակ առնել իրեն մատուցված տեղեկատվության ճշմարտացիությունը և փորձում է փնտրել իրականը, ապա հանդիպում է իշխանությունների անբարյացակամ վերա-

քերականությունները: Այստեղից էլ ծագում է գրաքննությունը, հեռուստատեսությունների նկատմամբ պետական վերահսկողությունը, հեռախոսային խոսակցությունների գաղտնալուծումները և այլն: Իսկ շատ հաճախ էլ զանգվածային լրատվության միջոցները սկսելով են հասարակության մեջ տարածել **ի-րենց սեփականատերերի հայացքներն** ու գաղափարները:

Ինչպես նկատում ենք, տեղեկատվության ազատությունը շատ հայաբերական է: Ժամանակակից մեթոդներն այսօր հնարավորություն են տալիս տարբեր լրագրողների անարգել թափանցելու արգելված վայրեր և տեղեկատվություն հավաքելու հասարակության մեջ **այքի ընկնող քաղաքացիների մասնավոր կյանքի վերաբերյալ**, ինչն արգելված է օրենքով: Ահա թե ինչու այդ ոլորտում քաղաքական և քաղաքացիական հասարակությունը պետք է համագործակցեն և անեն առավելագույնը, որպեսզի յուրաքանչյուր մարդու համար մատչելի լինեն հասարակության բնականոն գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվության արդյուրները: Միաժամանակ անհրաժեշտ է չիրապարակել ցանկացած տեղեկատվություն, որն առանշվում է պետական գաղտնիքի, հասարակության բարոյականության, ինչպես նաև այլոց անձնական կյանքին:

Տեղեկատվության ազատությունը հանդիսանում է իրավական պետության և քաղաքացիական հասարակության կարևոր տարրերից մեկը: Այն մեծապես նպաստում է հասարակության և անհատի տեղեկացված լինելուն, որը հասարակության տնտեսական և մշակութային առաջընթացի խթանման կարևոր պայման է:

Բացի դրանից, տեղեկատվություն ստանալու միջոցով հասարակությունը իրագեղ է դառնում հատկապես **քաղաքական կյանքի անցուղարձին** և այլ կարևոր իրադարձությունների: Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27 հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատություն՝ տեղեկատվության ցանկացած միջոցով, անկախ պետական սահմաններից: Սահմանադրական այս նորմից հետևում է, որ պետական մարմինները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունները պարտավոր են շահագրգիռ կողմին համապատասխան տեղեկատվություն տրամադրել իրենց գործունեության մասին, եթե այդ տեղեկատվությունը պետական գաղտնիք չի պարունակում:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը հիշեցնում է, որ արտահայտվելու իրավունքի իրականացումը հանգեցնում է հատուկ պարտավորությունների և պատասխանատվության: Ուստի, այն **ենթակա է որոշ սահմանափակումների**, որոնք սակայն պետք է միայն սահմանվեն օրենքով և անհրաժեշտ լինեն.

ա) այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը հարգելու համար,

բ) պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար (հոդվ.19):

Միևնույն ժամանակ դաշնագրի 20 հոդվածով **արգելվում է** պատերազմի ցանկացած քաղաքացիություն, այդ թվում՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քաղաքացիություն, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2003 թ. սեպտեմբերի 23-ին ընդունվել է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, որի 6 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական հիմնարկներին, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններին, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններին և դրանց պաշտոնատար անձանց ու ստանալու այդ տեղեկությունը:

Բացի նախ, օրենքը տեղեկատվություն տնօրինող վերոհիշյալ կազմակերպություններին պարտավորեցնում է անհապաղ հրապարակել կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնել իրենց տնօրինության տակ գտնվող այն տեղեկությանը, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարբերին, այլոց իրավունքներին ու ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը (հոդվ.7):

Դրա հետ մեկտեղ օրենքությամբ սահմանվում են տեղեկատվության իրավունքի **սահմանափակումներ**, եթե այն պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք, խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը, պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական ըննության տվյալներ, բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, փաստաբանական, նոտարական գաղտնիք), խախտում է հեղինակային իրավունքը կամ հարակից իրավունքները:

Տեղեկատվության իրավունքը առավելապես իրականացվում է զանգվածային լրատվության միջոցներով: Ըստ 2003 թ. դեկտեմբերի 13-ին ընդունված «Չանգվածային լրատվության մասին» օրենքի՝ զանգվածային լրատվության միջոցներ են համարվում մշտական անվանում, հերթական համար և ամսաթիվ ունեցող պարբերական թողարկումները, որոնց օրինակների քանակը պակաս չէ հարյուրից, հեռուստատաղիոհաղորդումները, լրատվական գործակալության և նմանատիպ բնույթի այլ կազմակերպությունների պարբերական հաղորդումները՝ անկախ տարածման ձևից, թողարկման, օրինակների քանակից կամ որևէ այլ չափանիշից (հոդվ. 3):

Տեղեկատվության տարածման իրավունքը սերտորեն կապված է յուրաքանչյուր ընթերցողի և ունկնդրի **ճշմարիտ տեղեկացված լինելու** իրավունքի հետ: Խնդիրն այն է, որ ապատեղեկատվությունը կարող է լրորջ սպառնալիք դառնալ ոչ միայն պետության ազգային անվտանգության, այլև միջազգային խաղաղության համար:

Այս հանգամանքի գիտակցմամբ 1952 թ. ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովն ընդունեց «Ռեդիոյան միջազգային իրավունքի մասին» դաշնագիրը: Նրանում մասնավորապես ասվում էր, որ ոչ ճիշտ զեկույցները, հատոր դագրություններն ու տեղեկատվությունը **խաչընդոտում են** ազգերի միջև փոխըմբռնման առաջխաղացմանը: Պետությունը, որի գործակալություններով և ալիքներով տարածվել է սուտը, պետք է ներկայացնի տեղի ունեցածի սեփական վարկածը, շարադրելով միայն փաստերն առանց մեկնաբանությունների (հոդվ. 2): Հինգ օրից ոչ ավել ժամանակահատվածում պետության այդ վարկածը պետք է տարածվի հենց այն ալիքների ու գործակալությունների միջոցով, որոնցով տարածվել է ապատեղեկատվությունը: Այն փոխանցվում է նաև տվյալ գործակալությունների բյուրոներին, որոնց լրագրողները կատարել են տեղեկատվության խեղաթյուրում:

Հայաստանի Հանրապետությունում զանգվածային լրատվության միջոցները ազատ են և գրաքննության չեն ենթարկվում: Հանրապետության քաղաքացիները ունեն զանգվածային լրատվության միջոցներով իրենց տեսակետները, կարծիքները արտահայտելու, հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատապ և **հավաստի լրատվություն ստանալու իրավունք**:

Քաղաքացիները իրենց տեսակետներն ու կարծիքները կարող են փոխանցել, արտահայտել և տարածել ցանկացած օրինական միջոցով: Դա նշանակում է, որ քաղաքացին այդ տեղեկատվությունը կարող է դարձնել հասարակության ձեռքբերումը՝ դրա իրական և ճշմարիտ լինելու կապակցությամբ կրելով անձնական պատասխանատվություն: Վերոհիշյալ իրավունքի իրականացման համար քաղաքացին կարող է հիմնել իր

սեփական թերթը, օգտագործել հեռուստատեսության պետական կամ մասնավոր ալիքը, հանդես գալ հրապարակային դասախոսություններով և այլն:

Տեղեկատվության ազատության չափաշահումներից խուսափելու համար պետության կողմից մանրամասնորեն սահմանվում են զանգվածային լրատվության միջոցների հիմնադրման պայմանները, լրագրողների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև տեղեկատվության ազատության չափաշահման համար պատասխանատվությունը:

Չանգվածային լրատվության ազատության չափաշահումը կարող է էական վնաս հասցնել հասարակությանը և պետությանը: Այն կարող է հանգեցնել հասարակական հարաբերությունների ապակայունացման և խախտել հասարակության համերաշխությունն ու ներդաշնակությունը: Այդ է պատճառը, որ զանգվածային լրատվության միջոցների մասին օրենքով արգելվում է գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը: Բացի այդ, արգելվում է նաև տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է առանց տեսաձայնագրման մասին անձին գզուշացնելու:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմապատկերում առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը:

§ 4. Պետության կառավարմանը մասնակցելու իրավունք

Պետության կառավարմանը մասնակցելու իրավունքի մեկնաբանությունը տրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21 հոդվածում, համաձայն որի՝

ա) յուրաքանչյուր ոք ունի անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք,

բ) յուրաքանչյուր ոք ունի իր երկրում պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք:

Կարևոր նախապայման է, որպեսզի երկրի կառավարման գործում ժողովրդի կամքը լինի իշխանությունների գործունեության հիմքը և արտահայտվի պարբերական և իրական ընտրություններում, որոնք պետք է

անցկացվեն հանրերկրամուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ կամ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարաբեկ ընթացակարգերի միջոցով:

Նշված փաստաթղթի դրույթներն արտացոլվել են Հանրապետության Սահմանադրության 30 հոդվածում, որն ամրագրում է. «Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք»:

Սահմանադրության նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ այդ իրավունքը պատկանում է միայն ՀՀ քաղաքացիներին, որը նրանք իրականացնում են ինչպես *անմիջապես, այնպես էլ իրենց ներկայացուցիչների միջոցով*:

Սահմանադրական այս նորմը փաստորեն որոշում է, թե քաղաքացին ինչպես կարող է մասնակցել պետության կառավարման գործերին (անմիջապես և իր ներկայացուցիչների միջոցով): Պետության կառավարմանը քաղաքացու մասնակցությունը ապահովվում է մի շարք իրավունքների միջոցով, որոնք նախատեսված են Սահմանադրության այլ հոդվածներով: Դրանք են՝ *ա) ընտրելու և ընտրվելու իրավունքը, բ) պետական ծառայության հավասար հնարավորության իրավունքը, գ) արդարադատության իրականացմանը մասնակցելու իրավունքը, դ) պետիցիաների իրավունքը*:

Ա) Ընտրելու և ընտրվելու իրավունքը քաղաքացու ամենակարևոր քաղաքական իրավունքն է: Դրա իրականացման միջոցով քաղաքացին մասնակից է դառնում պետության ներկայացուցչական մարմինների՝ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների (գյուղական և քաղաքային համայնքների ղեկավարների և ավագանու) ձևավորմանը: Քանի որ այդ մարմինները կազմում են պետական ապարատի հիմնական, կարևոր մասը, ուստի նրանց ընտրությունների միջոցով քաղաքացիները փաստորեն մասնակցում են պետական մարմինների ձևավորմանը: Քաղաքացու այդ իրավունքի իրականացման կարգն ու պայմանները մանրամասն սահմանված են ՀՀ ընտրական օրենսգրքով:

Ընտրելու իրավունքը քաղաքացուն տրվում է 18 տարեկան հասակից: Դա մարդու չափահաս դառնալու տարիքն է, երբ նա ի վիճակի է լրիվությամբ իրականացնել իր բոլոր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ:

Այդ տարիքն ընդունված է աշխարհի երկրների մեծ մասի սահմանադրություններում (Բացառություն է կազմում Վապոնիան, որտեղ ակտիվ ընտրական իրավունքը ծագում է 20 տարեկանից):

Ընտրելու իրավունքը նշանակում է, որ լիազոր մարմինը պարտավոր է քաղաքացուն ընդգրկել քվեարկության մասնակիցների ցուցակում, որը նրան հնարավորություն է տալիս մասնակցելու Հանրապետության ընտրովի մարմինների ընտրությանը: Ընտրելու իրավունքը նշանակում է նաև, որ քաղաքացին իրավունք ունի ցանկացած մեկի թեկնածությունն առաջադրելու ցանկացած ընտրովի պաշտոնի համար:

Ընտրվելու իրավունքը հնարավորություն է տալիս քաղաքացուն՝ զբաղեցնելու պաշտոններ ՀՀ ընտրովի մարմիններում: Այդ իրավունքի բովանդակությունը կայանում է նրանում, որ քաղաքացուն տրվում է հնարավորություն իր թեկնածությունն առաջադրելու ցանկացած ընտրովի պաշտոնում, իր օգտին տանելու նախընտրական քաղաքացու: Այդ իրավունքի ուժով քաղաքացին կարող է պահանջել նաև անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները, եթե տեղի են ունեցել համապատասխան խախտումներ:

Ընտրվելու իրավունքը ծագում է անձի տարբեր տարիքներում: Այն պայմանավորված է նրանով, թե քաղաքացին որ ընտրովի մարմնի համար է առաջադրել իր թեկնածությունը: Հանրապետության Նախագահի պաշտոնում ընտրվելու համար պահանջվում է 35 տարեկան հասակ: Ազգային ժողովի պատգամավոր և համայնքի ղեկավար ընտրվելու համար անհրաժեշտ է 25 տարեկան հասակ, ավագանու անդամ ընտրվելու համար՝ 21 տարեկան հասակ:

Մեր երկրում ինչպես ընտրելու, այնպես էլ ընտրվելու իրավունքը քաղաքացիների կողմից իրականացվում է միայն կամավորության հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի քաղաքացուն ստիպելու, որ նա զնա քվեարկության կամ պահանջելու, որ առաջադրի իր թեկնածությունը որևէ ընտրովի մարմնում:

Իհարկե, քիչ չեն այն երկրները, որտեղ ընտրական իրավունքը համարվում է նաև որպես սահմանադրական պարտականություն, և քաղաքացու կողմից իր այդ պարտականությունը չկատարելու համար նախատեսված են որոշակի պատժամիջոցներ: Այսպես, ընտրություններին քաղաքացիների մասնակցությունը դիտելով որպես ներկայացուցչական մարմինների լեգիտիմությունն ապահովելու միջոց, մի շարք երկրներ (օրինակ, Իտալիան, Արգենտինան, Բելգիան, Հունաստանը, Թուրքիան) քվեարկության մասնակցելը ամրագրում են որպես իրավաբանական պարտականություն:

Հետևաբար, քվեարկությանը չմասնակցելը հանգեցնում է բարոյական դատապարտման, տուգանքի, անգամ՝ ազատազրկման:

Բ) Պետական ծառայության համար հավասար հնարավորության իրավունքը վերաբերում է քաղաքացու՝ պետության կառավարման գործերին անմիջապես մասնակցելու ոլորտին: 1966 թ. ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 25 հոդվածը հռչակում է. «Յուրաքանչյուր քաղաքացի առանց որևէ խտրականության և առանց անհիմն սահմանափակումների պետք է իրավունք և հնարավորություն ունենա իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնել պետական ծառայության: Դաշնագրի այդ նորմին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունն ամրագրել է պետության կառավարմանը քաղաքացիների անմիջական մասնակցության իրավունքը (հոդվ. 30):

Պետական ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է ըստ պետության գործունեության ոլորտների: Այն կարգավորվում է 2001 թ. դեկտեմբերի 27-ին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով: Այդ օրենքի թիվ 1 հոդվածում **պետական ծառայությունը** ներկայացվում է որպես **հանրային ծառայության** տարատեսակ, որը մասնագիտական գործունեություն է և ուղղված է ՀՀ օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը: Նույն հոդվածի 3-րդ կետի բովանդակությունից բխում է, որ պետական ծառայությունն ընդգրկում է ծառայության հետևյալ տեսակները՝

- 1) քաղաքացիական ծառայություն,
- 2) դատական ծառայություն,
- 3) հատուկ ծառայություն (պաշտպանության, ազգային անվտանգության, ներքին գործերի, հարկային, մաքսային և արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմիններում),
- 4) դիվանագիտական ծառայություն և ՀՀ օրենքներով նախատեսված այլ ծառայություններ:

Այս իրավունքի բովանդակությունից բխում է, որ քաղաքացին՝ անկախ սեռից, ազգությունից, սոցիալական ծագումից, կուսակցական պատկանելությունից հավասար հնարավորություն ունի զբաղեցնելու ցանկացած պետական պաշտոն՝ իր մասնագիտական պատրաստվածության և ունակություններին համապատասխան: Այդ կապակցությամբ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի (հոդվ. 11) համաձայն՝

Հանրապետությունում առանց խտրականության պետական պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն բոլոր անձինք, եթե՝

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացի են,
- 2) համապատասխանում են քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջներին,
- 3) տիրապետում են հայերենին,
- 4) լրացել է նրանց 18 տարին:

Սա, ինտրևյե, **չի նշանակում**, որ քաղաքացու՝ դիմելուց անմիջապես հետո պետությունը պարտավոր է ամիսապաղ նրան նշանակել իր ցանկացած պաշտոնում: Ինքսը վերաբերում է յուրաքանչյուր քաղաքացու համար ստեղծված հավասար հնարավորություններին: Եթե քաղաքացին իր հավակնած պաշտոնի կապակցությամբ ունի մասնագիտական պատշաճ որակավորում, և այդ պաշտոնն էլ թափուր է, ապա պարտավոր են նրան ընդունել: Չի կարելի այս դեպքում քաղաքացուն մերժել, նկատի ունենալով նրա սեռը, ծագումը, ազգությունը, գույքային դրությունը և այլ հանգամանքներ:

Պետական ծառայության մեջ քաղաքացին կարող է ընդգրկվել **նշանակման, ընտրության և մրցույթի** միջոցով: Օրենսդրությունը սպառնչ կերպով թվարկում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում մերժվում է անձին պետական ծառայության մեջ ընդունելը: Այդ հիմքերն են՝

- ա) դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելը,
- բ) դատաճան կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը .
- գ) ՀՀ կառավարության կողմից հաստատված հիվանդությունների ցանկով նախատեսված այնպիսի հիվանդություններով տառապելը, որը քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը,
- դ) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով համված կամ մարված չէ,
- ե) խուսափել է ժամկետային պարտադիր զինորական ծառայությունից:

Հանրապետության Մահմանադրությունը միաժամանակ արգելում է որոշ պետական պաշտոնների համատեղությունը: Օրինակ, Հանրապետության Նախագահը, վարչապետը, նախարարները, պատգամավորները, մարզպետները իրավունք չունեն զբաղեցնելու այլ պետական պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, զբաղվել ձեռնարկատի-

րական գործունեությանը, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Աշխատանքային օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանվում են պետական ծառայության մեջ գտնվելու քաղաքացու տարիքային ցենզը և այլն:

Գ) Արդարադատության իրականացմանը մասնակցելու իրավունքը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր քաղաքացու, առանց որևէ խտրականության գրադեցնել դատավորի պաշտոնը:

Դատավորի պաշտոնը զբաղեցնելու համար Հանրապետության օրենսդրությունը նախատեսում է մի շարք պայմաններ. ա) լրացած լինի անձի 22 տարին, բ) ունենա բարձրագույն իրավաբանական կրթություն, գ) անցնի որակավորման ստուգում, դ) Արդարադատության խորհրդում քվեարկելու արդյունքում ստանա անհրաժեշտ թվով ձայներ (ՀՀ Դատական օրենսգրքի 115-135 հոդվ.): Դրանց համար հիմք է հանդիսացել Հանրապետության կանխամանր և իրավախախտների հետ վարվելաձևին մվիրված ՄԱԿ-ի Յոթերորդ Կոնգրեսի կողմից 1985 թ. ընդունված Դատական մարմինների աշխատակիցների անկախության հիմնարար սկզբունքները, որոնք երաշխավորելով դատավորների անկախության ու անաչառության համար բարենպաստ պայմաններ, միաժամանակ սահմանում են նրանց որակավորման, ընտրության և պատրաստվածության չափանիշները:

Կ) Պետիցիայի իրավունքը ենթադրում է մարդու իրավունքը անհատական կամ կոլեկտիվ դիմումների, բողոքների և առաջարկությունների միջոցով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելու հնարավորությունը, ինչպես նաև վերջիններիս կողմից ընդունելության արժանանալը, լաված լինելը՝ առանց հետևանքներից զգուշանալու: Բանտարկյալները, որոնք բողոքում են բանտի վատ պայմաններից, չեն կարող դրա համար ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

Պետիցիայի իրավունքի միջոցով ապահովվում է անհատի կամ կոլեկտիվի հաղորդակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Այս իրավունքը կարեորվում է հատկապես այն հանգամանքով, որ այն անձինք (օտարերկրացիներն ու ապաքաղաքացիները), որոնք չեն օգտվում քաղաքական իրավունքներից (օրինակ քնտրվու և քնտրվու, կամ հանրային ծառայության անցնելու), պետիցիայի իրավունքը նրանց համար հնարավորություն է ընձեռում ներկայացնելու իրենց տեսակետները քաղաքական գործընթացների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է **կոլեկտիվ պետիցիաներին**, ապա դրանք պետական մարմինների համար ծառայում են որպես «նախնական ծանուցում» հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների մասին:

Պետիցիայի առարկա կարող են հանդիսանալ ինչպես անձնական, այնպես էլ հասարակական շահեր ներկայացնող հարցերը:

Պետիցիաների իրավունքը իր մեջ ներառում է նաև միջազգային ատյաններին դիմելու իրավունքը: Տվյալ դեպքում պետական մարմիններն իրավունք չունեն խոչընդոտելու այդ գործընթացին: Այդ կապակցությամբ Հանրապետության Սահմանադրության 18 հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:

Իրա հետ մեկտեղ, Սահմանադրության 27.1 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները իրավունք ունեն նաև **անձամբ ներկայանալ** պետական համապատասխան մարմինն, ընդհուպ մինչև Հանրապետության Նախագահին, բացատրել նրան իրենց խախտված իրավունքների մասին, պահանջելու այն կանխել և մեղավորներին ենթարկել պատասխանատվության:

Այդ նույն պահանջներով քաղաքացիները կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին անհատական կամ կոլեկտիվ դիմումի ձևով: Պետական և տեղական ինքնակառավարման բոլոր մարմինները (այդ թվում՝ Հանրապետության Նախագահը) պարտավոր են պատասխանել քաղաքացիների դիմումներին, բողոքներին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Գործնականում քաղաքացիների իրավունքներն ավելի հաճախ խախտվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների **պաշտոնատար անձանց կողմից**: Այդ առնչությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Այդ միջոցներից է հանդիսանում քաղաքացիների կողմից պաշտոնատար անձի անօրինական գործողությունները բողոքարկելը:

Քաղաքացու բողոքի հիման վրա ծագում է գործադիր իշխանության մարմինների պարտականությունը՝ վարչական ենթակայության կարգով

քննարկելու ստորադաս մարմնի նկատմամբ քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները:

Այս ոլորտում գործադիր իշխանության մարմինների կոնկրետ պարտականությունները կարգավորվում են 1999 թ. նոյեմբերի 24-ին ընդունված «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» և 2004 թ. փետրվարի 18-ին ընդունված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքներով և վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով: Առաջին օրենքը իր ուժը պահպանել է միայն քաղաքացիների առաջարկությունների մասով:

Քաղաքացիների **դիմումները, բողոքները** քննարկելու մանրամասն ընթացակարգը նախատեսված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով, որը կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությանը հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:

Պետական մարմիններին քաղաքացիների դիմելու իրավունքը կարևոր միջոց է բնակչության կողմից **վերահսկողություն իրականացնելու** պետական մարմինների գործունեության նկատմամբ: Այն հնարավորություն է ընձեռում արդյունավետ կերպով իրականացնել քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը անբարեխիղճ պաշտոնատար անձանցից:

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների քվանտալությունը: Մարդու համար կենսական նշանակություն ունի նրա նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարումը: Դրա համար նա պետք է հայթայթի սնունդ, հագուստ և կենսաապահովման համար այլ բարիքներ:

Սակայն մարդկանց մեծ մասը այդ խնդիրը չի կարող լուծել միայն իր սեփական ուժերով: Լինելով ազատ, մարդը միաժամանակ կախման մեջ է գտնվում այլ մարդկանցից, որոնք ունեն բոլորովին այլ շահեր: Օրինակ, մարդը պետք է աշխատի, որպեսզի իր աշխատանքի դիմաց ստացած աշխատավարձով ձեռք բերի սնունդ, հագուստ և այլ անհրաժեշտ պարագաներ: Բայց ձեռնարկության սեփականատերը կարող է նրան չընդունել աշխատանքի կամ վարձատրել ավելի քիչ, քան կատարված աշխատանքն է: Ահա անհրաժեշտություն է առաջանում պաշտպանել մարդու կենսական շահերը սեփականատիրոջ կամայականություններից, սոցիալական անարդարություններից: Այն իրականացվում է պետության կողմից մարդուն տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ վերապահելու միջոցով:

Այդ իրավունքները ինքնըստիներյան մարդու համար չեն ապահովում նյութական և հոգևոր բարիքների առատություն: Պետությունը նույնպես չի կարող և պարտավոր չէ մարդկանց բաժանել այդպիսի բարիքներ: Սակայն նա պարտավոր է նրանց համար **սպասելի հնարավորություն՝** պաշտպանելու իրենց իրավունքները՝ արժանապատիվ կյանքի համար: Դրա համար անհրաժեշտ է խելամիտ կերպով սահմանափակել ուրիշների, սեփականատերերի իրավունքները:

Այս իրավունքների կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք պատկանում են յուրաքանչյուր անձի, այսինքն՝ կապված չեն քաղաքացիության փաստի հետ, ինչպես մարդու քաղաքական իրավունքները:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները խայտարեկտ են ու բազմաբնույթ:

§ 1. Մասնավոր սեփականության իրավունք

Մարդու կյանքը, ընտանիքը և աշխատանքային գործունեությունը սերտորեն կապված են սեփականության հետ, կոչված են այն բազմապատկելու և նպաստելու դրա, որպես գոյատևման հիմնական միջոցի, արդյունավետ իրացմանը: Սեփականությունն այն է, ինչը պատկանում է մարդուն անհատապես կամ այլ անձանց հետ համատեղ, որը նրանք կարող են ազատորեն տնօրինել, ինչը կերակրում և սատարում է մարդուն, նրան վստահություն է տալիս վաղվա օրվա համար:

Սեփականությունը հանդես է գալիս ամենատարբեր ձևերով՝ շարժական և անշարժ, անձնական և մասնավոր, անհատական և խմբակային, կորպորատիվ, պետական, հասարակական, ինչպես նաև ամբողջ մարդկության ձեռքբերումը:

Սեփականություն ունենալու և այն պաշտպանելու ցանկությունը մարդկանց մեծ մասի բնական ձգտումն է: Ցանկացած երկրում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, հասարակության տնտեսական հարաբերությունների հիմքում ընկած է սեփականությունը: Այդ է պատճառով, որ Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքի «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխում առանձնահատուկ տեղ է հատկացված սեփականության իրավունքի պաշտպանությանը: Մասնավորապես, դրա 8 հոդվածը հռչակում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Սակայն այդ իրավունքը չպետք է լինի անսահմանափակ, օգտագործվի կամայականորեն, որովհետև կարող է հանգեցնել տնտեսական անկարգությունների: Առավել ևս, երբ սեփականության միջոցներն ու գործիքները կուտակվում են առանձին մարդկանց ձեռքում, որոնք չեն տիրապետում տնտեսավարման գիտելիքներին ու արվեստին: Արդյունքում, շուկայում առաջանում են կամայական գներ, որոնք մատչելի չեն բնակչության ամենալայն շերտերին: Նկատի ունենալով այս հանգամանքը, Սահմանադրության այդ նույն հոդվածը հռչակում է, որ սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 հոդվածը, հենվելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 17 հոդվածի և «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական դաշնագրի թիվ 1 արձանագրության առա-

ջին հոդվածի վրա, հռչակում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը չի թվարկում Հանրապետությունում թույլատրվող սեփականության ձևերը, չնայած այդ խնդիրը հանդիսանում է բացառապես սահմանադրական կարգավորման առարկա: Դրա փոխարեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում սահմանված են սեփականության հասկացությունը և ձևերը: Ըստ օրենսգրքի 163 հոդվածի՝ **սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:**

Տիրապետման իրավունքի տակ հասկացվում է գույքի (ունեցվածքի) փաստացի տիրապետման իրավաբանորեն ապահովված հնարավորությունը:

Օգտագործման իրավունքը գույքից (ունեցվածքից) դրա օգտակար, բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Տնօրինման իրավունքը գույքի (ունեցվածքի) ճակատագիրը որոշելու իրավաբանորեն որոշված հնարավորությունն է:

Քաղաքացիական օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետությունում սեփականության թույլատրվող ձևերն են՝ քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետական և համայնքների սեփականությունը:

Անրագրելով **յուրաքանչյուր անձի սեփականության իրավունքը**, Սահմանադրությունը միաժամանակ նախատեսում է, որ **հողի** սեփականության իրավունքը պատկանում է միայն ՀՀ քաղաքացիներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Օգտագործելով թույլատրված բացառությունը և նկատի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում հանգրվանած փախստականները ազգությամբ հայեր են, Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991 թ. հուլիսի 29-ին ընդունեց օրենք «ՀՀ տարածքում մշտական բնակություն հաստատած փախստականների համար հողի սեփականաշնորհման որոշ հարցերում արտոնություններ սահմանելու մասին», որով նման իրավունք վերապահվեց Հայաստանում բնակվող փախստականներին: Ներկայումս ՀՀ հողային օրենսգիրքը (հոդվ. 4) նման իրավունք ընձեռում է միայն ծագումով հայ՝ կացության հատուկ կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիներին: Ինչ վերաբերվում է քաղաքացիություն չունեցող անձանց և կացության այլ կարգավիճակ ունեցող օտարերկրացիներին:

րին (այդ թվում՝ փախստականներին), ապա վերջիններս հողի նկատմամբ կարող են ունենալ միայն օգտագործման իրավունք:

Սեփականության իրավունքի հռչակումը դեռևս անհրաժեշտ նախադրյալ չէ այդ իրավունքի իրականացման համար: Դրա պաշտպանության գործում անհրաժեշտ են լուրջ օրենսդրական երաշխիքներ: Այդպիսի երաշխիք է նախատեսում Մահմանադրության 31 հոդվածը, համաձայն որի՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, այն էլ դատական կարգով: Իսկ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ **գերակա հանրային շահերի** դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Մահմանադրության նշված նորմից հետևում է, որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման բացառիկ հիմքը **գերակա հանրային շահն** է, որի համար պահանջվում է՝ **ա) օտարումը իրականացվի օրենքով սահմանված կարգով, բ) օտարվող սեփականության դիմաց տրվի նախնական համարժեք փոխհատուցում:**

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թ. նոյեմբերի 27-ին ընդունվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքը, որը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահի հասկացությունը և դրա որոշման կարգը: Մասնավորապես, գերակա հանրային շահը որոշելիս պետությունն առաջնորդվում է մի շարք կարևորագույն սկզբունքներով՝

ա) հանրային շահը պետք է գերակա լինի օտարվող սեփականության սեփականատիրոջ շահերից, բ) գերակա հանրային շահի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց տվյալ սեփականության օտարման, գ) սեփականության օտարումը չպետք է չիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը, դ) հանրային շահը գերակա է ճանաչվում կառավարության որոշմամբ, ե) գերակա հանրային շահի առկայության փաստը կարող է վիճարկվել դատական կարգով:

Դրա հետ մեկտեղ, օրենքը սպառիչ կերպով թվարկում է գերակա հանրային շահի ծագման պայմանները, որոնք անհրաժեշտ են ապահովելու՝ ա) պետության պաշտպանությունը և հասարակության անվտանգությունը, բ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարումը, գ) միջազգային և հանրապետական նշանակության պատմության և մշակութային

արժեքների կամ հուշարձանների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը կամ պահպանությունը, դ) էներգետիկայի, հեռահաղորդակցության, ընդերքի հետախուզման, ընդերքօգտագործման, տրանսպորտի, հաղորդակցության ուղիների զարգացման և այլ բնագավառներում կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացումը և այլն:

Օրենքով սահմանվում են նաև այն ոլորտները, որոնց ապահովումը չի կարող համարվել բացառիկ՝ հանրային գերակա շահ: Օրինակ՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջե լրացուցիչ եկամուտների ապահովման նպատակը:

Սեփականության իրավունքի երաշխիք է համարվում նաև օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը **նախնական համարժեք փոխհատուցումը**: Օրենքի համաձայն՝ (հոդվ. 11) համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը:

Մասնավոր սեփականության իրավունքի հետ սերտորեն առնչվում է **ժառանգման իրավունքը**: Այդ իրավունքի ուժով սեփականատիրոջ մահվանից հետո նրա ամբողջ ունեցվածքը (չարժական և անշարժ գույքը) կտակով կամ օրենքով սահմանված կարգով անցնում է ժառանգներին:

Ժառանգման իրավունքի կարևորությունն այն է, որ սեփականատերը, համոզված լինելով, որ իր ստեղծած միջոցները իրենից հետո անցնելու են իր ժառանգներին, աշխատում է պահպանել, բազմապատկել դրանք, կուտակել իր ժառանգների համար: Ժառանգության տակ հասկացվում է մահացածի գույքի (ժառանգության) **անվտանգ փոխանցում** անցումը այլ անձանց: Ընդ որում, դրանք (ժառանգները) կարող են լինել ինչպես անհատներ, այնպես էլ իրավաբանական անձինք:

Ժառանգության իրավունքի հետ կապված քոլոր իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Դրան համապատասխան՝ ժառանգությունը կատարվում է **օրենքով և ըստ կտակի**: Ընդ որում, ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի՝ եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը:

Ժառանգության իրավունքի իրականացումը նշանակում է ոչ միայն ժառանգատուի ունեցվածքի պատշաճ փոխանցումը իրական ժառանգորդին, այլ նաև ժառանգատուի և ժառանգորդի պատվի ու արժանապատվության պատշաճ պաշտպանություն: Այդ կապակցությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1191 հոդվածը հռչակում է, որ ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգությունից մեկուսացվում են այն անձինք, ովքեր դի-

տավորյալ խոչընդոտել են ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը, դիտավորյալ կյանքից զրկել են ժառանգատուին կամ հնարավոր ժառանգներից մեկին, կամ մահափորձ են կատարել նրանց կյանքի նկատմամբ: Բացի դրանից, ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, անհրաժեշտությունից ելնելով, կարող է **սահմանափակել ժառանգման իրավունքը**՝ երաշխավորելով ժառանգատուի խնամքի տակ գտնվող առաջին հերթի ժառանգմանը չհանդիսացող անչափահասների և անգործունակ անձանց պարտադիր բաժնի իրավունքը:

Սեփականությունը կարող է հանդես գալ ոչ միայն նյութական, այլև **հոգևոր արտահայտությամբ**: Օրինակ, կրթություն ստանալը, ազատ ստեղծագործելը, մշակութային կյանքին մասնակցելը և այլն: Ուստի ցանկացած հասարակության մեջ նյութական արտադրության կողքին միշտ էլ գոյություն ունի հոգևոր արտադրությունը:

Հոգևոր արժեքները, որոնց դերն ու նշանակությունը մարդու կյանքում օրեցօր աճում է. նույնպես համարվում են սեփականության օբյեկտներ: Մեր օրերում դրանք հանդես են գալիս **մտավոր սեփականության ձևով**: Դրանց թվին դասվում են գիտական, գրական, գեղարվեստական ստեղծագործությունները, գյուտերը, լուսանկարները, տեսալսողական արտադրանքը, առևտրային նշանները, արդյունաբերական դիզայնը, օրիգինալ անվանումները և այլն:

Միջազգային հանրությունը ճանաչում է մարդու մտավոր սեփականության և ժառանգման իրավունքը: Այդ կապակցությամբ դեռևս 1886 թ. Բեռնում ստորագրվեց «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքի մասին» դաշնագիրը: Այն հետագա հարյուրամյակներում քազում անգամներ վերանայվել և լրացվել է նոր դրույթներով: Այսօր՝ երբոք հազարամյակի սկզբին, աշխարհի ավելի քան 130 պետություններ հանդիսանում են Բեռնի դաշնագրի անդամներ: Նրա հիմնական գաղափարն այն է, որ բոլոր ստեղծագործական աշխատանքները (գիտական, գեղարվեստական, դերասանական), որոնք ստեղծված են դաշնագրի անդամ պետություններից որևէ մեկում, մնացած բոլոր երկրներում այդ աշխատանքները պետք է հավասարապես պաշտպանվեն այնպես, ինչպես իրենց սեփական քաղաքացիների աշխատանքները:

Ժամանակակից առումով մտավոր սեփականության իրավունքի տակ հասկացվում է երեք ավանդական իրավական ոլորտներ՝ հեղինակային իրավունք (անգլոսաքսոնական և մայրցամաքային մեկնաբանությամբ), պատենտային իրավունք և ապրանքային նշանների իրավունք:

Հեղինակային իրավունքը հեղինակի իրավունքն է ստեղծելու իր ստեղծագործությունը որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Բեռնի դաշնագրի համաձայն՝ հեղինակային իրավունքը պահպանվում է հեղինակի ամբողջ կյանքի ընթացքում, իսկ նրա ժառանգների համար՝ հեղինակի մահվան օրվանից **հիսուն տարվա ընթացքում**:

Կիրառական արվեստի և լուսանկարների բնագավառում հեղինակային իրավունքը պահպանվում է ստեղծագործության **առաջին ցուցադրումից հետո 25 տարվա** ընթացքում: Հեղինակներն ու ժառանգները հավասարազոր վարձատրությամբ կարող են աշխարհի ցանկացած երկրի քաղաքացիների և կազմակերպությունների թույլատրել օգտվելու վերը նշված իրավունքներից:

Հայաստանի Հանրապետությունում 1999 թ. դեկտեմբերի 8-ին ընդունվել է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքը, որը կարգավորում է Հանրապետությունում գիտության, գրականության, արվեստի ոլորտների ստեղծագործությունների (հեղինակային իրավունք), կատարումների, հնչյունագրերի (ֆոնոգրամ), հեռարձակվող կազմակերպությունների հաղորդումների (հարակից իրավունքներ) ստեղծման և օգտագործման հետ կապված հարաբերությունները:

Օրենքն ամենայն մանրամասնությամբ (հոդվ. 5) թվարկում է հեղինակային իրավունքի օբյեկտները, որոնց շարքին են դասվում՝ աշխարհագրությանը, ստուգաբանությանը, երկրաբանությանը, ճարտարապետությանը և այլ գիտություններին վերաբերող քարտեզները, գծագրերը, էսքիզները:

Նրանում թվարկվում են նաև **ածանցյալ ստեղծագործությունները**՝ այլ ստեղծագործությունների թարգմանությունները, մշակումները, ստեղծագործությունների ժողովածուները, գրական և գիտական ստեղծագործությունները, բոլոր տեսակի համակարգչային ծրագրերը, գեղանկարչության, քանդակագործության, գրաֆիկային և կերպարվեստի այլ ստեղծագործությունները, դրամատիկական և երաժշտադրամատիկական ստեղծագործությունները, սցենարները, դիզայնի ստեղծագործությունները, լուսանկարչական եղանակով ստեղծված ստեղծագործությունները, ճարտարապետության և քաղաքաշինության, պարարվեստի, մնջախաղի, տեսալսողական ստեղծագործությունները և այլն:

Դրա հետ մեկտեղ, սահմանվում են նաև այն ստեղծագործությունները, որոնք **չեն կարող հանդիսանալ հեղինակային իրավունքի օբյեկտներ**: Դրանց մեջ են մտնում՝ ժողովրդական ստեղծագործության երկերը, օրվա նորությունների մասին ժամույի սեղեկատվությունը, պաշտոնական փաստաթղթերը (օրենքներ, որոշումներ, վճիռներ և այլն), պետական

խորհրդանիշերն ու նշանները (դրոշներ, զինանշաններ, շքանշաններ, դրամանիշեր) և այլն:

§ 2. Աշխատանքի ընտրության ազատություն

Աշխատանքը մարդու արժանավայել կյանքի միակ և անփոխարինելի պայմանն է, միաժամանակ նրա իրավունքն ու պարտականությունը: Այս իրավունքն իր ամրագրումն է ստացել ինչպես ՄԱԿ-ի Կանոնադրության, այնպես էլ աշխարհի շատ երկրների սահմանադրություններում: Պատճառն այն է, որ աշխատանքի իրավունքը ոչ պակաս կարևոր է, քան մարդու կյանքի իրավունքը, որովհետև եթե չկա կյանք՝ առանց գոյության միջոցների, ապա առանց աշխատանքի չեն կարող լինել գոյության միջոցներ: Ավելին, աշխատանքի իրավունքի իրականացումը և աշխատանքի արդարացի պայմանները կարևոր նշանակություն ունեն հասարակական հարաբերությունների ներդաշնակության և սոցիալական խաղաղության ամրապնդման համար:

Այս դրույթն իր ամրագրումն է ստացել Աշխատանքի միջազգային կազմակերպության Կանոնադրության ներածության մեջ, որտեղ ասված է. «Աշխատանքի պայմանները, որոնք հիմնված են անարդարության, մեծ թվով մարդկանց կարիքի և զրկանքների վրա, ծնում են այնպիսի խառնաշփոթ, որը վտանգի է ենթարկում խաղաղությունն ու ներդաշնակությունը աշխարհում»:

Նշված միջազգային փաստաթղթի հիման վրա պետությունների մեծ մասի սահմանադրություններում իր կայուն ամրապնդումն է ստացել մարդու աշխատանքի իրավունքը և աշխատանքի ազատությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (հոդվ. 1) համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է որպես սոցիալական պետություն: Իսկ սոցիալական պետության բովանդակության հիմնական մասն է կազմում յուրաքանչյուր չափահաս քաղաքացու կողմից իր և իր ընտանիքի նվազագույն կենսապայմանները ապահովելու համար սեփական աշխատանքով միջոցներ վաստակելու հնարավորության ապահովումը: Նման հնարավորությունը կարող է առկա լինել, ամենից առաջ, **աշխատանքի իրավունք ունենալու դեպքում**: Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32 հոդվածն ամրագրում է ընդամենը յուրաքանչյուրի աշխատանքի ընտրության ազատությունը:

Սահմանադրական այս ձևակերպման բովանդակությունը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ. **ա) ինչ է նշանակում աշխա-**

տանքի իրավունք, բ) ինչ է նշանակում աշխատանքի ընտրության ազատություն:

Աշխատանքի իրավունքը նշանակում է, որ պետությունը պարտավոր է անձին, քաղաքացուն ապահովել իր մասնագիտական որակին, կրթությանը համապատասխան աշխատանքով: Մակայն շուկայական հարաբերությունների պայմաններում, երբ Հանրապետությունում ձեռնարկությունների մեծ մասը գտնվում է մասնավոր անձանց ձեռքում, պետությունը չի կարող (որքան էլ որ ցանկանա) իր բնակչությանը ապահովել աշխատանքով:

Խնդիրն այն է, որ սեփականատերը իր ձեռնարկության աշխատանքը կազմակերպում է այնպես, որպեսզի ստանա հնարավորինս մեծ եկամուտ: Նա ձգտում է կրճատել ոչ պիտանի, ցածր որակավորում ունեցող աշխատողներին և ընդունել ավելի գիտակ, բանիմաց, գործարար մարդկանց:

Պետությունը իրավունք չունի արգելել սեփականատիրոջը այդպես վարվելու, որովհետև դրանով իսկ կոտմահարվի նրա սեփականատիրական իրավունքները: Քանի որ Հայաստանի Հանրապետությունը չի կարող յուրաքանչյուր քաղաքացու ապահովել աշխատատեղով, ուստի նրանց համար սահմանում է աշխատանքի ընտրության ազատություն:

Աշխատանքի ընտրության ազատությունը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ազատորեն ընտրում է իր մասնագիտությունը և զբաղմունքի տեսակը: Մարդն իրավունք ունի իր ընդունակություններին և մասնագիտական որակին համապատասխան կատարելու այս կամ այն աշխատանքը կամ չկատարելու ոչ մի աշխատանք: Նա ազատ է նաև թողնելու իր աշխատանքը և փոխադրվելու իր համար ավելի հարմար և եկամտաբեր աշխատանքի:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը աշխատանքի ընտրության ազատության իրականացման ոլորտում նախատեսում է **տարիքային սահմանափակումներ**: Մասնավորապես, արգելվում է մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելը:

Աշխատանքի ազատությունը **քացառում է հարկադիր աշխատանքը**: Ոչ ոք իրավունք չունի հարկադրանքի ցանկացած ձևի (սպառնալիքի, պատժի և այլն) օգնությամբ ստիպելու մարդուն, իր կամքին հակասակ պայմաններում կատարելու աշխատանք:

Դրա հետ մեկտեղ, հարկադրական աշխատանք չի համարվում, եթե մարդը կատարում է իր գինվորական ծառայությունից բխող աշխատանք: Այդպիսին չի համարվում նաև արտակարգ իրավիճակի պայմաններում

կամ դատարանի դատավճռով նախատեսված աշխատանքների կատարումը:

Աշխատանքի ազատ ընտրության իրավունքը ամենևին էլ **չի նշանակում, որ պետությունը ոչ մի պարտականություն չի կրում** բնակչության աշխատանքի իրավունքի իրականացման գործում: Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2005 թ. հոկտեմբերի 24-ին ընդունվել է օրենք «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին», որի հիման վրա ստեղծված է **զբաղվածության պետական ծառայություն**: Այդ ծառայությունը կատարում է աշխատանք փնտրող քաղաքացիների հաշվառում, այն ներկայացնում է գործատուներին (սեփականատերերին): Գործատուները իրենց ձեռնարկության պահանջներից ելնելով՝ ընտրում են համապատասխան որակավորում ունեցող աշխատողների:

Զբաղվածության պետական ծառայությունը հաշվառման է վերցնում նաև գործազուրկներին և նրանց վճարում **գործազուրկի նպաստ**: Այդ նպաստը քաղաքացուն վճարվում է գործազուրկի կարգավիճակ ստանալու օրվանից սկսած առավելագույնը 12 ամսվա ընթացքում, իսկ նվազագույն տևողությունը սահմանված է վեց ամիս: Գործազրկության նպաստը ստանում է, որպեսզի անձը մինչև աշխատանքի տեղավորվելը ունենա ապրուստի միջոց:

Մարդկանց գործատու սեփականատերերի կամայականություններից պաշտպանելու համար պետությունը սահմանում է աշխատանքային հարաբերությունների կարգավորման պայմանագրային ձև: Աշխատանքի անցնելու համար քաղաքացու և գործատուի միջև կնքվում է պայմանագիր, որտեղ նախատեսվում են երկու կողմերի բոլոր պայմանները, այդ թվում՝ վարձատրության չափը:

Աշխատողների շահերը պաշտպանելու նպատակով Հանրապետության օրենսդրությամբ սահմանված է աշխատանքի վարձատրության նվազագույն չափը, որից ցածր գործատուն իրավունք չունի վճարելու աշխատողին: Բացի դրանից, վարձու աշխատանք կատարող անձը իրավունք ունի գործատուից պահանջել՝ **ապահովելու անվտանգության և հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմաններ**, ինչը ամրագրված է Սահմանադրության 32 հոդվածում:

Անձանց աշխատանքային իրավունքների պաշտպանությանն է ուղղված նաև նրանց **գործադուլի իրավունքը**: Գործադուլը դա աշխատողների կողմից աշխատանքի դադարեցումն է, որի նպատակն է ճնշում գործադրել գործատուի վրա՝ բանվոր-ծառայողների տնտեսական, սո-

ցիալական և աշխատանքային պահանջները բավարարելու նպատակով: Գործադուլը չի նշանակում, թե քաղաքացիները չեն ուզում աշխատել սովյալ գործատուի մոտ: Այդ պատճառով էլ գործատուն իրավունք չունի օրենքով սահմանված կարգով գործադուլ արած անձանց ազատել աշխատանքից:

Գործադուլը թույլատրելի է, եթե այն կազմակերպվում է վարձու աշխատողների կազմակերպության կողմից և վերաբերվում է բացառապես աշխատանքային հարաբերություններին և չի ոտնահարում աշխատանքային իրավահարաբերությունների ոլորտում խաղաղության պահպանման ոչ մի պայմանագրային պարտավորություն:

Քննարկվող հիմնահարցի առումով պետք է ենթադրել, որ **պետական ծառայողների ու պաշտոնյաների գործադուլի իրավունքը** այնքան էլ հիմնավոր չէ: Խնդիրն այն է, որ գործադուլն ուղղված է սեփականատեր գործատուի դեմ և սպառնում է վատթարացնել նրա վիճակը ազատ շուկայում, եթե վերջինս չկատարի գործադուլավորների պահանջը:

Մինչդեռ պետական ծառայողների և պաշտոնյաների գործադուլն արդեն կարող է անմիջապես վնաս պատճառել պետությանը: Այդ պատճառով էլ ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը (հոդվ. 75) արգելում է գործադուլ հայտարարել ոստիկանությունում, զինված ուժերում, պահպանության ծառայությունում և դրան հավասարեցված այլ ծառայություններում: Ժողովրդավարական հասարակության մեջ պետության վրա ազդելու միջոցներ են Խորհրդարանի կամ օմբուդսմենի միջոցով ազատությունը, ընտրությունները, պետիցիաները (պետական մարմիններին ուղղված դիմում-բողոքները) և այլն:

Գործադուլի պատճառով աշխատանքից ազատելն արգելվում է: Օրենսդրությամբ գործադուլը կարող է արգելվել ժողովրդական տնտեսության որոշ ճյուղերում, օրինակ, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման կազմակերպություններում, անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններում, տարեբային աղետի գոտիներում և ռազմական դրության ժամանակ: Այդ ճյուղերն անմիջապես կապված են մարդկանց **կենսաապահովման ոլորտի հետ**: Ելնելով ժողովրդական տնտեսության մի շարք ճյուղերի կարևորությունից, կարող է սահմանափակվել այդ ոլորտների աշխատողների գործադուլը: Այս դեպքում գործադուլ արած մարդիկ կարող են ազատվել աշխատանքից:

Աշխատանքի իրավունքի հետ սերտորեն առնչվում է **հանգստի իրավունքը**: Հանգստի իրավունք ունի յուրաքանչյուր ոք, ով կատարում է

աշխատանք: ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանվում են աշխատանքային ժամանակի տևողությունը, հանգստի և տոնական օրերը, ամենամյա վճարովի արձակուրդները: Գործող աշխատանքային օրենսգրքով (հոդվ. 139) սահմանվում է աշխատաժամանակի առավելագույն տևողությունը՝ շաբաթական 40 ժամ:

§3. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 33.1 հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այդ իրավունքի բովանդակությունը պարզաբանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (հոդվ. 2), համաձայն որի՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքների վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքն անմիջականորեն բխում է աշխատանքի ընտրության ազատությունից: Այն անձի գործունեության ինքնուրույն ոլորտ է, որի կազմակերպման և իրականացման հարցում պետությունը որևէ մասնակցություն չունի: Սակայն մարդու ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը չի կարող դուրս մնալ պետության հսկողությունից, ուստի և այդ իրավունքը գործնականում ծագում է իրավաբանական անձ կազմավորելու կամ քաղաքացու, որպես անհատ ձեռնարկատեր, գրանցվելու պահից (Քաղ. օր. հոդվ. 26):

Բացի այդ, Սահմանադրության մույն հոդվածն (31.1) ամրագրում է, որ շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են:

Մենաշնորհի առաջացումը նշանակում է, որ շուկայի որոշակի հատվածում գործում է մեկ միակ արտադրող և այլ ձեռներեցների համար շուկան մատչելի չէ: Մենաշնորհի անբույլատրելիության նպատակն է կանխել տնտեսության այս կամ այն ոլորտի կենտրոնացումը, որի արդյունքում կարող են կամայականություններ դրսևորվել գնագոյացման հարցում, նպաստել ազատ շուկայական տնտեսության իրացմանը:

Սակայն գոյություն ունեն ոլորտներ, որոնք ելնելով հանրության շահերից, պետք է գտնվեն **պետության քաջատիկ իրավասության ներքո** և այդ օբյեկտների սեփականաշնորհումը պետք է արգելվի (օրինակ ըն-

դերք, քրային պաշարներ, ատոմակայան, երկաթգծեր, ճանապարհներ, անտառային ֆոնդ, օդային տարածություն և այլն): Դրա հետ մեկտեղ, պետության մենաշնորհը ամենևին էլ չպետք է խոչընդոտի ազատ շուկայական տնտեսության իրականացման օբյեկտիվ օրենքներին: Այդ պատճառով էլ Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը:

Ձեռնարկատիրական գործունեության ազատության տակ հասկացվում է մարդու հնարավորությունը՝ իրականացնելու ցանկացած բնույթի մասնավոր տնտեսական գործունեություն, որն ուղղված է շահույթ կամ եկամուտ ստանալուն:

Որպես կանոն, մասնավոր տնտեսական գործունեությունն իրականացվում է այնտեղ, որտեղ մասնավոր իրավունքի սուբյեկտներն արտադրում, առաջարկում, ձեռք են բերում կամ փոխանցում ապրանքներ կամ ծառայություններ, որոնք ունեն շուկայական արժեք:

Ձեռնարկատիրական գործունեության իրավունքից բխում է նաև ազատ շուկայական տնտեսական հարաբերություններում իրականացվող ապրանքների փոխանակման և ծառայությունների մատուցման ազատությունը, կամ պայմանագիր կնքելու ազատությունը: Այստեղ ապրանքներ և ծառայություններ մատուցողներն ու սպառողները, որպես ազատ շուկայական տնտեսության մասնակիցներ, պետք է օգտվեն հավասար պաշտպանությունից:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի ոլորտի մեջ են մտնում նաև **ինքնուրույն կամ ոչ ինքնուրույն, հիմնական կամ օժանդակ մասնավոր տնտեսական գործունեության ընտրության ազատությունը** (օրինակ, արտադրություն և առևտուր, արհեստներ, տարբեր բնույթի ծառայությունների մատուցում, գյուղատնտեսություն և անտառտնտեսություն, ազատ մասնագիտություններ, բժշկական մասնագիտություններ, մասնավոր ուսումնական հաստատություններ, ժամանցներ, սպորտ, խաղային ապարատների պատրաստում և շահագործում և այլն): Նշված իրավունքն իր մեջ ներառում է հետևյալ ոլորտները՝

- ա) աշխատանքային կամ մասնագիտական գործունեության վայրի ազատ ընտրություն,
- բ) գովազդի ազատություն,
- գ) աշխատանքային հարաբերությունների ազատ կարգավորում և աշխատակիցների ազատ ընտրություն,
- դ) արտադրական հարաբերությունների ձևավորման ազատություն,

ե) մատակարարների և սպառողների, գործընկերների և մրցակիցների միջև գործնական հարաբերությունների ձևավորման ազատություն,

զ) արտադրության նյութական միջոցների ընտրության ազատություն,

է) ձեռնարկության ձևի ընտրության ազատություն (բաժնետիրական ընկերություն, անհատ ձեռներեցություն և այլն),

ը) արտաքին տնտեսական գործունեության ազատություն:

Տնտեսական գործունեության իրավունքից բխում է, որ պետությունը պարտավոր է հավասարապես վերաբերվել շուկայական հարաբերությունների մասնակիցներին: Սրա հիմնական իմաստն այն է, որ այդ հարաբերություններում պետությունը պետք է չեզոք դիրք գրավի ազատ շուկայում մրցակիցների նկատմամբ:

Ձեռնարկատիրության իրավունքից բխում է աշխատանքի ընտրության ազատությունը: Սակայն այն **չպետք է տարածվի պետական պաշտոններ զբաղեցնելու վրա**: Խնդիրն այն է, որ հասարակական և պետական խնդիրներով զբաղվող անձանց գործունեությունը չի կարող մտնել ձեռնարկատիրական գործունեության մեջ, քանի որ վերջիններս վարձատրվում են պետական քյոջեից: Այդ է պատճառը, որ Հանրապետության Սահմանադրությունը արգելում է պատգամավորին(հոդվ.65) և կառավարության անդամին (հոդվ.88) զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

§4. Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 33.2. հոդվածն ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը»:

Այս իրավունքը համարվում է մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներից մեկը, քանի որ այն շոշափում է նրա կենսագործունեության հիմքերը, և որի միջոցով ապահովվում են մարդու կյանքի համար բարենպաստ բնապահպանական, տնտեսական և էսթետիկական պայմաններ: **Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունքի էությունը** կայանում է նրանում, որ յուրաքանչյուր ոք պետք է հնարավորություն ունենա ապրել առողջ, միջազգային չափանիշներին համապատասխան միջավայրում, այսինքն այնպիսի կենսոլորտի վիճակում, որն ապահովում է առավելագույն ֆիզիկական և հոգեկան առողջություն:

«Շրջակա միջավայր» հասկացությունը պետք է մեկնաբանել նրա լայն նշանակությամբ, որն իր մեջ ներառում է ոչ միայն բնական միջավայրը, այլև՝ արհեստական միջավայրի որոշակի տարրեր (բնակելի կառույցներ, արդյունաբերական ձեռնարկություններ, ջրանցքներ, ջրամբարներ և այլն): **Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքը ենթադրում է աշխատանքի, ապրելու, կենցաղի, հանգստի, դաստիարակության և կրթության, սննդամթերքների և ժողովրդական տնտեսության արտադրանքների անվտանգության ու բարձր որակի, ինչպես նաև բնական միջավայրի բարենպաստ պայմանների իրավունքները:**

Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու սահմանադրական իրավունքն, ըստ էության, **ունի հավաքական և հիմնարար բնույթ** և բաղկացած է մի շարք այլ իրավունքներից: Դրանք իրենց ամրագրումն են ստացել 1991 թ. հուլիսի 7-ին ընդունված «Բնության պահպանման մասին» ՀՀ օրենսդրության հիմունքներում, որի 11 հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի՝ **օգտվել բնության առողջարար հատկություններից**, նրա բարիքներից, ստանալ շրջակա միջավայրի աղտոտման, էկոլոգիական վթարի կամ աղետի հետևանքով առողջությանը պատճառած վնասի լրիվ հատուցում, ժամանակին ստանալ ամբողջական ու ճշգրիտ տեղեկություն շրջակա միջավայրի իրավիճակի մասին և այլն:

Նշված իրավունքի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (հոդվ. 10) պետությանը պարտավորեցնում է ապահովելու շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը:

Բնության պահպանությունը շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության ապահովման, **բնական պաշարների խնայողաբար օգտագործման** և վերարտադրության գործնական միջոցառումների իրականացումն է: Հանրապետության տարածքում աղտոտումից, փչացումից, վնասումից, սպառումից և վերացումից պետական պահպանության ենթակա են հողը, նրա ընդերքը, բուսական և կենդանական աշխարհը, մթնոլորտային օդը, ջրերը, բնության հատուկ պահպանվող տարածքները (արգելոցները, արգելավայրերը, հազվագյուտ բնական օբյեկտները), առողջաբանային, պատմական կարևորագույն իրադարձությունների հետ կապված վայրերը, լանդշաֆտները:

Այդ կապակցությամբ օրենքի 6 հոդվածը պետության վրա դնում է մի շարք պարտականություններ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունը **պարտավորվում է՝**

ա) Հանրապետության բոլոր քաղաքացիների համար ապահովել անվտանգ, առողջ և բարենպաստ բնական պայմաններ, բ) բացառել մարդկանց առողջության և էկոլոգիական անվտանգության համար սպառնալիքի առաջացումը, գ) ապահովել բնության առանձին կամ մի քանի բաղկացուցիչ մասերի ընդհանուր էկոլոգիական հաշվեկշիռը և այլն:

Մարդու բնապահպանական իրավունքների իրականացման հարցում հատկապես կարևորվում է շրջակա միջավայրի մասին հավաստի տեղեկատվություն ունենալու իրավունքը, որը նշանակում է շահագրգռված անձի հնարավորությունը՝ ստանալու օրենքով նախատեսված միջոցներով շրջակա միջավայրի վերաբերյալ օբյեկտիվ և չխեղաթյուրված տեղեկատվություն: Այդպիսի տեղեկատվությունը քաղաքացիներին կարող է հնարավորություն ընձեռել ժամանակին ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ պաշտպանելու մարդու կյանքը, առողջությունը, ունեցվածքը *անբարենպաստ բնական երևույթների, բնական և տեխնոգեն աղետների ներգործությունից*: Այդ կապակցությամբ քաղաքացիները և հասարակական միավորումները իրավունք ունեն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, եղանակային ծառայություն իրականացնող հաստատություններից, կազմակերպություններից պահանջել շրջակա միջավայրի և դրա պահպանության միջոցների վերաբերյալ ամբողջական և հավաստի տեղեկատվություն: *Այդ իրավունքը երաշխավորելու նպատակով* Սահմանադրությունը պաշտոնատար անձանց նկատմամբ նախատեսում է պատասխանատվություն՝ բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

Մարդկության գոյության հազարամյակների ընթացքում Երկիր մոլորակի վրա մշակվել են բազմաթիվ նորմեր ու սկզբունքներ, որոնք վերաբերվում են *մարդու և բնության փոխհարաբերություններին*, և որոնց ճշմարտացիությունն արդեն վաղուց ի վեր ապացուցված է: Գրանցով ոչ միայն պարտավոր են ղեկավարվել անհատներն, այլև ողջ մարդկությունը: Այդպիսի սկզբունքներ են հանդիսանում շրջակա միջավայրի համար մարդու բարձրագույն պատասխանատվությունը և բնության խնամքի ու մաքրության պահպանության գաղափարը:

Ճառացած խնդիրը գիտակցելով, համաշխարհային հանրությունը փորձում է ինչ-որ կերպ սահմանափակել բնությանն իր միջամտությունը: Աստղաֆիզիկոսների հաշվարկներով միայն 1990 թ. Երկրագնդի մթնոլորտ է արտանետվել 5. 943 միլիոն տոննա ածխածին, որը կազմում է Երկրագնդի յուրաքանչյուր բնակչի հաշվով մեկ տոննա: Այս գազերի քաղաղությունը, որի հիմնական տարրը համարվում է ածխածնի դիօքսիդը,

գոյանում է ածխի, մավթի և գազի այրումից: Այդ քիմիական նյութերի սպառման այսօրվա տեմպերի պահպանման դեպքում մինչև 2020 թվականը ածխածնի դիօքսիդը կարող է ավելանալ 75 տոկոսով¹:

Բնապահպանական ճգնաժամի կանխման նպատակով միջազգային հանրությունը վերջին տարիներին ընդունել է մի քանի եռյակագրեր ու համաձայնագրեր, որոնք կոչված են կարգավորելու շրջակա միջավայրի նկատմամբ պետության և հասարակության վերաբերմունքը: Գրանք են՝ «Վտանգավոր և այլ թափոնների միջսահմանային տեղափոխման և հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու վերաբերյալ» (Բազել, 1989 թ.), «Միջսահմանային կոնտեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» (Էսպո, 25.02.1991 թ.), «Միջազգային լճերի և միջսահմանային ջրահոսքերի պահպանության և օգտագործման մասին» (Հելսինկի, 17.03.1992 թ.), «Արտադրական վթարների միջսահմանային ազդեցության մասին» (Հելսինկի, 17.03.1992 թ.), «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրիուս, 25. 06. 1998 թ.) և այլն:

Նշված բոլոր փաստաթղթերի *գլխավոր նպատակն է* հոգ տանել, որ պետական մարդկության հետագա սոցիալ-տնտեսական առաջընթացը կազմակերպվի առանց շրջակա միջավայրի վատթարացման: Յուրաքանչյուր սերունդ, բավարարելով իր պահանջները, պետք է նմանատիպ հնարավորություն ընձեռի մալ հետագա սերունդներին: Պետություններն իրավունք ունեն տնօրինելու իրենց սեփական պաշարները, սակայն նրանք չպետք է վնաս պատճառեն այլ պետությունների շրջակա միջավայրին:

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը հավանություն է տվել շրջակա միջավայրին վերաբերող երկու կարևոր փաստաթղթերի՝ «Կլիմայի փոփոխության շրջանակային» և «Կենսաբազմազանության մասին» դաշնագրերին: Առաջինն ուժի մեջ է մտել 1994 թ. մարտի 21-ին, իսկ երկրորդը՝ 2002 թ. սկզբներին: Այն վավերացվել է աշխարհի 186 երկրների կողմից: Դաշնագրերը ելնում են նրանից, որ *գլոբալ կլիման պետք է պաշտպանվի* ներկա սարդոսների և հետագա սերունդների համար: Չարգացած պետությունների վրա պարտավորություն է դրվում բոլոր քայլերը ձեռնարկել

¹Տե՛ս Johannesburg Summit 2002. New Report from UN Secretary-General outlines Vision for Building a Secure Future at Next Year's Johannesburg Summit on Sustainable development. New York, 2002.

կլիմայի բացասական ազդեցությունը կանխելու համար, քանի որ մթնոլորտ արտանետվող թունավոր գազերի մեծամասնությունը կատարվում է այդ երկրներից:

§ 5. Բավարար կենսամակարդակի, կենսապայմանների բարելավման և բնակարանի իրավունք

Յուրաքանչյուր պետության հզորության ու հասարակական հարաբերությունների ներդաշնակության **հիմնական երաշխիքը** իր քաղաքացիների արժանավայել կենսապայմանների ապահովումն է: Միայն այս դեպքում է, որ հնարավոր է կառուցել ժողովրդավարական և քաղաքացիական հասարակություն, իրականացնել իրավական ու սոցիալական պետության կերտման գաղափարը:

Այն իր հերթին նպաստում է, որպեսզի անհատն իր իրավունքներին վերաբերի որպես բարձրագույն արժեք և առվելագույնս զերծ մնա պետական իշխանության հետ հակամարտություններից: Թերևս այս նկատառումներով էլ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն (հոդվ. 25) ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ սննդի, հագուստի, բնակարանի և առողջապահության ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունների իրավունք:

Նշված ոլորտներում Երկրի վրա ապրող հանրության ամենատառջնահերթ խնդիրը շարունակում է մնալ մարդկությանը **սննդամթերքով ապահովելու հիմնահարցը**, որը բավարար կենսապայմանների իրավունքի առաջնային հիմքն է:

Մենդի նկատմամբ մարդկանց պահանջումները միատեսակ են: Տարբերությունները պայմանավորված են միայն աշխատանքի բնույթով, գործունեության արդյունավետությամբ, կենսաձևով, օրգանիզմի առանձնահատկություններով, բնական միջավայրով: Միլիոնավոր մարդիկ Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներում, իսկ այսօր նաև՝ ԱՊՀ երկրներում, **զրկված են սնունդ հայթայթելու**, իրենց նվազագույն պահանջները բավարարելու հնարավորությունից: 1974 թ. նոյեմբերին արդյունաբերության վերաբերյալ միջազգային խորհրդաժողովում ընդունվեց «Քաղցի և թերսնուցման վերացման համընդհանուր հռչակագիրը», որը հավանության արժանացավ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից:

Մասնավորապես, խորհրդաժողովում այն տագնապալի իրողությունն էր նշվում, որ զարգացող երկրներում, որտեղ ապրում է աշխարհի բննակչության 2/3-ը, արտադրվում է համաշխարհային ապրանքների ծավալի միայն 1/3-ը: Այս իրավիճակը լուրջ սպառնալիք է մարդու իրավունքների ու ազատությունների հիմնական սկզբունքներին ու արժեքներին, ինչպես նաև մարդկանց արժանապատվության իրավունքի իրականացմանը: Ուստի Հռչակագիրը սահմանում է, **որ յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա իրավունք ունի զերծ մնալու քաղցից և թերսնուցումից, որպեսզի ամբողջությամբ կարողանա զարգացնել և սատարել իր ֆիզիկական և մտավոր հնարավորությունները:**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 34 հոդվածը յուրաքանչյուր անձի ընծեռում է իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Այդ իրավունքից հետևում է պետության պարտականությունը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու դրա իրականացման համար:

Քաղաքացիների կյանքի նվազագույն պայմաններ ստեղծելու համար պետությունը նախևառաջ պարտավոր է միջոցներ ձեռնարկել նրանց **կենսապահովման նվազագույն զամբյուղի**, այսինքն՝ մարդու առողջության պահպանման և կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ՝ միջազգայնորեն ընդունված ֆիզիոլոգիական, առողջապահական և սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների նվազագույն քանակի ապահովման ուղղությամբ:

Այդ կապակցությամբ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թ. մարտի 16-ին ընդունված «Կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի հաշվարկման և հաստատման իրավական հիմքերը, ինչպես նաև կարգավորում է պետության սոցիալական քաղաքականության իրականացման հետ կապված հարաբերությունները:

Սակայն մինչ օրս գործադիր իշխանության կողմից որևէ կոնկրետ հաշվարկ չի կատարվել և հստակ չի սահմանվել նվազագույն զամբյուղի և կենսապահովման բյուջեի չափը, որը հնարավորություն կընձեռի քաղաքացիներին հոգալու իրենց նվազագույն տարրական կարիքները: Այդ է վկայում 2003 թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված և 2010 թ. նոյեմբերի 16-ին փոփոխության ենթարկված

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքը, որը Հայաստանում ամսական **նվազագույն աշխատավարձը սահմանվում է 32500 դրամ**, որով հնարավոր չէ ապահովել քաղաքացիների նվազագույն կենսապայմանները:

Ինչ վերաբերում է **բնակարանի իրավունքին**, ապա պետք է ենթադրել, որ այն օրինական կարգով բնակարան ունեցող անձին տրված հնարավորությունն է ազատորեն օգտվել այդ բնակատարածությունից, կամ սեփական միջոցներով քարելավել իր բնակարանային կարիքները, քանզի պետությունը **անգամ փորձ չի անում** բնակարան չունեցող անձանց այդպիսին տրամադրել, բացառությամբ զինծառայողների և աղետի գոտում բնակվող ընտանիքների: Ոչ ոք իրավունք չունի ինչ-որ պատրվակով մարդուն զրկել այդ բնակարանից:

Քաղաքացու բնակարանի իրավունքը (Սահմանադրության 34 հոդվ.) չի նշանակում, որ ցանկացած մարդ, որը չունի բնակարան կամ գտնվում է բնակարանային սուղ պայմաններում, իրավունք ունի որևէ մեկից (այդ թվում նաև պետությունից) պահանջելու, որպեսզի իրեն անհապաղ տրամադրեն բնակարան կամ բարելավեն բնակարանային պայմանները:

«Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» 1993 թ. հունիսի 29-ի օրենքով հնարավորություն տրվեց ՀՀ քաղաքացիներին անհատույց կերպով իրենց մասնավոր սեփականությունը դարձնել պետական և մունիցիպալ սեփականության բնակարանային ֆոնդի բնակարանները: Քաղաքացիներն այժմ իրավունք ունեն ազատ կերպով վաճառել, նվիրել, վարձակալության տալ և իրենց հայեցողությամբ օգտագործել այդ բնակատարածությունները:

§ 6. Անուսնության և ընտանիք կազմելու իրավունք: Մայրության և մանկության պաշտպանությունը

Երկրի վրա մարդու կյանքի անընդհատության էական պայման է նրա մշտական վերարտադրությունը: Բնությունը կյանքի կրողներին բաժանել է տարբեր սեռերի, որոնց համագործակցությունը ապահովում են նոր կյանքի վերարտադրությունը: Բացի այդ, բնությունը այդ երկու սեռերին օժտել է համապատասխան ունակություններով, որոնք անհրաժեշտ են նոր ստեղծվող էակի կյանքի պաշտպանության և աջակցության հա-

մար:Այդ տեսանկյունից մարդկային ցեղի վերարտադրության ու շարունակության համար **ընտանիքը հանդիսանում է** ամենաառաջին և ամենահզոր միջոցներից մեկը:

Երեխայի ծննդի պահից ամուսինները դադարում են լինել միայն ամուսիններ կամ ընտանիքի հիմնադիրներ. այլ ձեռք են բերում նոր պարտականություններ, որոնց բարեխիղճ իրականացումը ոչ միայն նրանց, այլ նաև պետության և հասարակության առաջնահերթ խնդիրներից մեկն է: Հենց այդ նկատառումներով էլ «Մոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 10 հոդվածը հռչակում է, որ անդամ պետությունների կողմից ընտանիքին, որը հասարակության բնական ու հիմնական խմբային միավորն է, պետք է հնարավորինս տրամադրվեն ամենալայն պաշտպանություն և աջակցություն, մասնավորապես, ընտանիքի կազմավորման ժամանակ և քանի դեռ ընտանիքը պատասխանատու է երեխաների խնամքի ու կրթության համար:

Խոսելով ընտանիքի պաշտպանության մասին, այդուհանդերձ պետք է նշել, որ ո՛չ միջազգային իրավական փաստաթղթերը, ո՛չ էլ պետությունների հիմնական օրենքները **հստակ չեն սահմանում «ընտանիք» հասկացությունը**, որպեսզի պարզ լինի այն անձանց շրջանակը, որոնք ենթակա են պաշտպանության: Ընտանիք երևույթը չի կարող սահմանափակվել միայն ամուսիններով ու երեխաներով: Այդ կապակցությամբ հենվելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական դաշնագրի 8 հոդվածի վրա (որը ամրագրում է ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը), Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ընտանիքի շրջանակներում պաշտպանում է ամուսինների (այդ թվում՝ ոչ ավանդական ամուսնական կապերով կապված), ծնողների և երեխաների, եղբայրների և քույրերի, տատիկների, պապիկների և նրանց թոռների ու ընտանիքի համար կարևորություն ներկայացնող մերձավոր ազգականների միջև հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35 հոդվածն ամրագրում է, որ ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք: Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից:

Սահմանադրության նշված **հոդվածի երկրորդ մասից բխում է**, որ ընտանիք կազմելու իրավունքը կարող է իրականացվել որոշակի տարիքի հասնելու հետ կապված: Որպես կանոն՝ միջազգային-իրավական փաս-

տաթղթերը այս ոլորտում ճանաչում են մարդու իրավունքը առանց որևէ սահմանափակման: Այդ կապակցությամբ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 16 հոդվածը սահմանում է, որ չափահաս տղամարդիկ ու կանայք, առանց ռասայական, ազգային կամ կրոնական որևէ սահմանափակման, իրավունք ունեն ամուսնանալ և ընտանիք կազմել: Նրանք հավասար իրավունքներ ունեն ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս:

Ամուսնության տարիքի հետ կապված հարցերը կարգավորվում են պետությունների ներպետական օրենսդրությամբ: Այդ հանգամանքն արդարացի է, որովհետև մարդ արարածի ամուսնության առումով հասունացումը տարբեր երկրներում և ժողովուրդների մոտ պայմանավորված է տարբեր հանգամանքներով (բնակլիմայական պայմաններով, աշխարհագրական դիրքով, պատմական ավանդույթներով, կրոնով և մի շարք այլ հանգամանքներով): Այդ պատճառով էլ ամուսնական տարիքը կարող է տարբեր երկրներում տարբեր լինել:

Մեղ երկրում ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք: Ամուսնությունը կնքվում է քաղաքացիության կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ: Ամուսնության համար անհրաժեշտ են համապատասխան տարիքի հասած (կնոջ համար՝ 17, տղամարդուն՝ 18 տարեկան) ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 10 հոդվ.):

Ամուսնության իրավունքը, որպես մարու բնական կացության վիճակ, չի սահմանափակվում անգամ այն դեպքերում, երբ մարդը զրկված է ազատությունից: Արդյունքում, **յնայսժ ազատագրված լինելը խոչընդոտում է** ամուսնական պարտականությունների կատարմանը, սակայն **հիմք չի հանդիսանում անձին ամուսնության իրավունքից զրկելուն**, քանի որ ամուսնությունը ինքնակամ պարտականությունների ստանձնում է, նույնիսկ եթե դրանք հնարավոր չէ իրականացնել:

Ընտանիքի գաղափարն ամենևին էլ չի սահմանափակվում ամուսնությամբ և երեխաներ ունենալու հանգամանքով: Ծնողները ոչ միայն իրավունք ունեն, այլև պարտավոր են հոգ տանել իրենց **երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար**: Նշված պարտականություններից խուսափելը օրենքով սահմանված կարգով կարող է հանգեցնել դատարանի կողմից ծնողական իրավունքներից զրկելուն: Այսպես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի համաձայն՝

(հոդվ. 59) ծնողները կամ նրանցից մեկը **կարող են զրկվել ծնողական իրավունքներից**, եթե նրանք՝

ա) չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, ընդ որում՝ այլմեճտ վճարելուց,

բ) առանց հարգելի պատճառների հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից,

գ) չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, իրենց հակաբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխաների վրա,

դ) դաժանաբար են վարվում երեխաների հետ, ֆիզիկական կամ էոզեկան բռնություն են գործադրում նրանց նկատմամբ,

ե) տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ բնրամոլությամբ,

զ) կատարել են իրենց երեխայի դեմ դիտավորյալ հանցագործություն:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ **ամուսնալուծությունը** կատարվում է երկու կարգով՝ դատական և արտադատական: Ամուսինների միջև ամուսնալուծվելու վերաբերյալ **փոխադարձ համաձայնության դեպքում** ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում: Որպես կանոն ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, երբ քացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը:

Մայրության և մանկության պաշտպանությունը սերտորեն առնչվում է ընտանիքի իրավունքի պաշտպանության Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 1952թ. ընդունված «Մայրության պաշտպանության մասին» դաշնագրի դրույթներին: Դաշնագիրը պարտավորեցնում է պետություններին ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի հոյի և կրծքով կերակրող կանայք չկատարեն այնպիսի աշխատանք, որը կարող է վնաս պատճառել մոր և մանկան առողջությանը (հոդվ. 3):

Այդ խնդիրների իրականացումը երաշխավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991 թ. հուլիսի 8-ին ընդունել է «Կանանց, մայրության, մանկության պաշտպանության և ընտանիքի ամրապնդման առաջնահերթ միջոցառումների մասին» որոշումը, որը նախատեսում է մանկահասակ երեխաներ ունեցող կանանց համար աշխատանքային իրավունքների լրացուցիչ երաշխիքներ: Մաս-

նավորապես, սահմանափակվում է կանանց գիշերային աշխատանքը, կրծքով կերակրող մայրերի համար աշխատանքի ժամերին տրվում է լրացուցիչ ընդմիջում՝ երեխային կերակրելու համար, երեխաներին խնամելու համար տրվում է մինչձննդյան և հետձննդյան արձակուրդ՝ 140 օր տևողությամբ և այլն: Որոշմամբ հանձնարարվում է հիմնարկների, ձեռնարկությունների դեկավարներին (անկախ սեփականության ձևից) բժշկական պահանջներին համապատասխան սահմանել այն աշխատանքներն ու աշխատանքի տեսակները, որոնք կարող են կատարել հղի կանայք, ինչպես նաև ստեղծել նրանց աշխատանքի կիրառման հատուկ արտադրամասեր:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35 հոդվածն ամրագրում է, որ մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության և ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նոր ծնված երեխայի խնամքի կամ երեխայի որդեգրման համար արձակուրդի իրավունք:

Մանկության և մայրության պաշտպանության համար լրացուցիչ երաշխիքներ սահմանելու նպատակով ՀՀ Ազգային ժողովը 2002 թ. դեկտեմբերի 11-ին ընդունել է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքը, որը կնոջն իրավունք է վերապահում հղիության ընթացքում ստանալ հղիության և ծննդաբերության հետ կապված անվճար բժշկական օգնություն և սպասարկում՝ պետության երաշխավորած առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը մայրության ու մանկության պաշտպանությունը հռչակում է տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներից մեկը (հոդվ. 48):

Սակայն, հարկ է նշել, որ մեր երկրի ազգային օրենսդրությունը շարունակում է լռություն պահպանել, միջազգային իրավական ակտերում առաջ քաշված, գյուղական վայրերում ապրող կանանց իրավական վիճակի բարելավման հարցում: Հողի սեփականաշնորհումն ավելի է ծանրացրել գեղջկուհու վիճակը: Մի կողմից, գյուղատնտեսական աշխատանքների ամոգ դժվարությունները, մյուս կողմից՝ կենցաղային սպասարկման գրեթե բացակայությունը, ծանր կացության առաջ են կանգնեցրել գյուղական բնակչությանն ընդհանրապես, կանանց՝ մասնավորապես: Վերջին տարիներին նաև զգալի աճել է կանանց մասնակցությունը գյուղատնտեսության և անտառտնտեսության աշխատանքներին:

Աշխատունակ տղամարդկանց զգալի մասը շարունակում է ընտանիքի կերակրման համար միջոցներ հայթայթելու հույսով մեկնել Հանրապետությունից դուրս՝ ընտանիքի խնամքի ամբողջ ծանրությունը թողնելով կնոջ վրա: Եթե դրան ավելացնենք մարդկային ցեղի վերարտադրությունը, որը հիմնականում ապահովվում է գյուղական բնակչության կողմից, ապա պատկերը պարզ կլինի: Այդ կապակցությամբ նպատակահարմար է, որպեսզի Հայաստանի Հանրապետության կառավարությունը անհետաձգելի միջոցառումներ մշակի գյուղական վայրերում ապրող կանանց աշխատանքային, սպասարկման, առողջապահության և կենցաղային պայմանները բարելավելու ուղղությամբ:

§ 7. Սոցիալական ապահովության իրավունք

Սովորաբար յուրաքանչյուր մարդ պարտավոր է ինքը հոգավ իր ապրուստի միջոցները, սեփական ուժերով ապահովել իր գոյությունը հասարակության մեջ: Սակայն ամեն մի երկրում էլ կան մարդիկ, որոնք տարբեր հանգամանքների բերումով (տարիքը, առողջական վիճակը և այլն) ի վիճակի չեն այդ անել: Միայնակ կանայք, հաշմանդամները, բազմադամ ընտանիքները պարբերաբար հայտնվում են կարիքի մեջ: Անաշխատունակ անձինք խնամքի կարիք են զգում: Հասարակությունը չի կարող մտան մարդկանց թողնել բախտի քմահաճույքին: Ահա այդ մարդասիրական սկզբունքներից ելնելով, պետությունը ստեղծում է նրանց նյութական բարիքներով հասարակության հաշվին ապահովելու մի համակարգ, որն **անվանվում է սոցիալական ապահովություն:**

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն (հոդվ. 25) այդ կապակցությամբ ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ սննդի, հագուստի, բնակարանի և առողջապահության ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունների իրավունք, ինչպես նաև ապահովության իրավունք՝ գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ հանգամանքներում գոյության միջոցներից զրկվելու դեպքում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (հոդվ. 37) յուրաքանչյուր մարդու ընձեռում է **ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով** նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Սահմանադրական այս նորմի հիման վրա Հանրապետությունում ընդունվել են մի շարք օրենքներ, որոնք մանրամասն կարգավո-

րում են նշված յուրաքանչյուր դեպքում կենսաթոշակների նշանակման կարգը, պայմաններն ու տրվող դրամական միջոցների չափը: Դրանք են՝ 1993 թ. մայիսի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», 1998 թ. դեկտեմբերի 30-ի «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին», 2002 թ. սեպտեմբերի 24-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», 2010 թ. դեկտեմբերի 22-ի «Պետական կենսաթոշակների մասին», օրենքները և այլ իրավական ակտեր:

Հանրապետությունում քաղաքացիներին տրվող պետական կենսաթոշակներն, ըստ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի (հոդվ. 8), բաժանվում են՝ **ա) աշխատանքային** (տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մասնակի) կենսաթոշակներ **բ) զինվորական** (երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, սոցիալական) **գ) սոցիալական** (ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում) կենսաթոշակներ:

Տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունքից օգտվում է 63 տարին լրացած անձը՝ 25 տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում: Ընդ որում տարիքային կենսաթոշակը նշանակվում է ցմահ (հոդվ. 9):

Արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակի իրավունք վերապահված է **ա)** առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում առնվազն 15 տարի աշխատած անձին՝ 55 տարին լրանալու դեպքում, եթե ունի 25 տարվա աշխատանքային ստաժ, **բ)** 59 տարին լրացած անձին՝ 25 տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում, որից 20 տարին վնասակար՝ ծանր պայմաններում, **գ)** հիպոֆիզարային թզուկությամբ (լիլիպոտ) հիվանդ անձին՝ 45 տարին լրանալու և 20 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում (հոդվ. 10):

Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակից օգտվելու իրավունքը պատկանում է **քաղաքացիական ավիացիայի** աշխատողներին: Մասնավորապես, երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն **ա)** թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական և թռիչքային անձնակազմի անդամները՝ 45 տա-

րեկան դառնալու և 25 տարի ծառայած լինելու դեպքում, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատված անձինք՝ 20 տարի ծառայած լինելու դեպքում, **բ)** օդային երթևեկության կառավարման ծառայության կարգավարի (դիսպետչերի) վկայական ունեցող աշխատողները՝ 50 տարեկան դառնալու և 25 տարի ծառայած լինելու դեպքում, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքից ազատված անձինք՝ 25 տարի ծառայած լինելու դեպքում, **գ)** ինժեներատեխնիկական ծառայության աշխատողները՝ 55 տարեկան դառնալու և 25 տարվա ապահովագրական ստաժ ունենալու դեպքում, որից 20 տարին անմիջականորեն զբաղված են եղել օդային երթևեկության կառավարման աշխատանքներով, **գ)** ինժեներատեխնիկական անձնակազմի անդամները՝ 55 տարեկան դառնալու և 25 տարվա ապահովագրական ստաժ ունենալու դեպքում, **դ)** որից 20 առարին զբաղվել են երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքներով (հոդվ. 11):

Հաշմանդամության կենսաթոշակ նշանակվում է քժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին՝ **ա)** աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով, **բ)** ընդհանուր հիվանդության հետևանքով (հոդվ. 12):

Կերակրողին կորցնելու դեպքում ապահովագրական կենսաթոշակի իրավունքը վերապահվում է ընտանիքի այն անդամներին, որոնք բավարարում են հետևյալ չափանիշները. **ա)** մահացածի 18 տարին չլրացած երեխան, եղբայրը, քույրը և թոռը, ընդ որում, եղբայրը, քույրը և թոռը, եթե չունեն աշխատունակ ծնողներ և չեն աշխատում, **բ)** ամուսինը կամ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը՝ անկախ տարիքից ու աշխատունակությունից, եթե նա զբաղված է մահացած կերակրողի 14 տարին չլրացած երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան խնամքով և չի աշխատում, **գ)** կերակրողի մահվան պահին հաշմանդամ ճանաչված զավակները, ծնողները, ամուսինը, եթե չեն աշխատում, **դ)** ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողը՝ մինչև ուսումնական հաստատությունն ավարտելը, բայց մինչև իր 23 տարին լրանալը: (հոդվ. 13)

Մասնակի կենսաթոշակի իրավունքը պատկանում է **ա)** կրթության, մշակույթի որոշ կատեգորիայի աշխատողներին, եթե լրացել է

նրանց 55 տարին և ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, բ) թատերական և թատերահանդիսային կազմակերպությունների որոշ կատեգորիաների դերասաններին, եթե լրացել է նրանց 50 տարին և ունեն առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ (հոդվ. 14):

Չինվորական կենսաթոշակի իրավունք վերապահված է ա) ՀՀ պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների և Հայաստանի փրկարար ծառայության համակարգի իրամասնատարական և ոչ իրամասնատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմի ծառայողներին, բ) վարձական հավաքների կանչված զինապարտներին և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցներին, գ) ՀՀ արտարադատության նախարարության քրեակատարողական ծառայողներին և դատական ակտերի հարկադիր կատարողներին (հոդվ. 17):

Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ է նշանակվում վերը նշված մարմիններում ծառայած այն անձանց, ովքեր ա) ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ ունեն առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ, բ) սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ կամ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ ունեն առնվազն 25 օրացուցային տարվա ստաժ, գ) հաստիքների կրճատման կամ առողջական վիճակի պատճառով ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ առնվազն 45 տարեկան են և ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ (հոդվ. 19):

Հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված այն զինծառայողին, որը հաշմանդամ է ճանաչվել զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից արձակվելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, սակայն զինծառայության ժամանակ ծագած հիվանդության, ստացած վնասվածքի կամ խեղճան հետևանքով: Ընդ որում, հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվում է անկախ զինվորական ծառայության տևողությունից, հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար (հոդվ. 20):

Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք վերապահված է գոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին անկախ զինծառայողի գոհվելու (մահանալու) պատճառից,

անցած ժամանակաժրջանից և ծառայության տևողությունից: Կենսաթոշակի իրավունքը պատկանում է նաև ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաև մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքի անդամները (հոդվ. 22):

Ինչ վերաբերում է **սոցիալական կենսաթոշակներին**, ապա դրանք նշանակվում են **անկախ տվյալ անձի աշխատանքային գործունեության** մեջ ընդգրկված լինելու համգամանքից: Այսպես, ծերության սոցիալական կենսաթոշակները նշանակվում են աշխատանքային կամ գինվորական կենսաթոշակի իրավունք չունեցող անձանց՝ 65 տարին լրանալու դեպքում (հոդվ. 25):

Իսկ հաշմանդամության սոցիալական կենսաթոշակի իրավունքից օգտվում են հաշմանդամության աշխատանքային կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող հաշմանդամները, ինչպես նաև հաշմանդամ երեխաները (հոդվ. 26):

Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակների իրավունք ունեն՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կամ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող անձինք:

Կենսաթոշակից զատ, Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամներին ցույց են տրվում նաև **սոցիալական այլ բնույթի օգնություններ**: Ըստ նրանց ֆիզիկական պակասության՝ հատկացվում են համապատասխան տեխնիկական միջոցներ (ավտոմեքենաներ, քիկնասայլակներ, պրոթեզաօրթոպեդիկ սարքեր, հատուկ տառատեսակներով տպագիր արտադրանք, ձայնաուժեղացուցիչ սարքեր և այլն), ինչպես նաև կատարվում են կենցաղային սպասարկման, բժշկական, մասնագիտական, սոցիալական վերականգնման և այլ ծառայություններ:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ապահովվում է հանրակրթական, մրցութային կարգով միջին մասնագիտական, բարձրագույն կրթություն, անվճար բժշկական օգնություն և սպասարկում, անվճար սննդի ապահովում, երեխաների առողջության վերականգնման և հանգստի կազմակերպում, սոցիալակն աջակցություն՝ սոցիալական ադապտացման և սոցիալ-հոգեբանական վերականգնման միջոցառումներ և այլն:

**§ 8. Առողջության պահպանման և բժշկական
օգնության իրավունք**

Մարդու առողջությունն ամեն ինչի հիմքն է, և *հաճախ այն նույնացվում է երջանկության հետ* ու բարձր դասվում ցանկացած հարստությունից: Այդ կապակցությամբ Շոպենհաուերը արդարացիորեն նկատում էր. «Առողջ աղքատն ավելի երջանիկ է, քան հիվանդ թագավորը»: Մարդու առողջությունը, մաքուր օդն ու ջուրը անգին հարստություններ են, որոնց նշանակությունը ցավոք մարդիկ գիտակցում են այն ժամանակ, երբ զգում են դրանց պակասը:

Մարդու առողջության իրավունքը *քացարձակ չէ*, ուստի և չի կարող երաշխավորվել ամենուրեք և բոլոր հանգամանքներում: Շատ հիվանդություններ համարվում են *բնական հանգամանքների հետևանք*, որը միատեսակորեն ազդում է բոլոր մարդկանց վրա: Բնակչության առավել խոցելի խավերը (անապահովները, անտունները, բնակարանային վատ պայմաններում ապրողները, գործազուրկները) *ավելի շատ են դատապարտված հիվանդությունների*, ինչը նրանց դուրս է թողնում ակտիվ աշխատանքային գործունեությունից և ավելի է վատթարացնում նրանց նյութական վիճակը, համապատասխանաբար՝ և առողջությունը:

Հիվանդանալով, նրանք *սպառնալիքի տակ են դնում նաև շրջապատող մարդկանց* առողջությունը, քանի որ շատ հիվանդություններ վարակիչ են և «չեն ճանաչում թույլատրելի սահմանները»: Այստեղից էլ ծագում է բնակչության առողջության պահպանման գործում պետությունների պարտականությունները: Այդ կապակցությամբ «Մոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (հոդվ. 12) պարտավորեցնում է անդամ պետություններին՝ ճանաչելու յուրաքանչյուրի՝ ֆիզիկական և հոգեկան առողջության հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 38 հոդվածն ամբազրում է. «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք»: Դրանից, առաջին հերթին, բխում է *բնակչության առողջության պահպանման իրավունքը*, որի համար պետությունը պարտավոր է իրականացնել մի շարք միջոցառումներ: Առաջին հերթին, անհրաժեշտ է պատրաստել *որակյալ, բանիմաց բժշկական կադրեր*: Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված է բժշկական կրթական հաստատությունների լայն ցանց:

Բնակչության առողջության պահպանման համար պետությունը պարտավոր է իրականացնել նաև լայն *սանիտարահամաճարակային միջոցառումներ*: Դա նշանակում է, որ պետությունը պետք է ունենա առողջապահական հիմնարկները, որոնք պարտավոր են պարբերաբար ստուգել բնակչության առողջական վիճակը (հիմնարկներում, ձեռնարկություններում, ուսումնական հաստատություններում): Որոշ հիվանդությունների կանխարգելման նպատակով կատարվում են նաև երեխաների պարտադիր պատվաստումներ:

Բնակչության առողջության պահպանման համար չափազանց կարևոր է առողջապահական հիմնարկների կողմից՝ բնակչությանը մատակարարվող *սննդամթերքի նկատմամբ իրականացվող վերահսկողությունը*: Առողջապահական հիմնարկների համապատասխան ծառայությունները պարտավոր են պարբերաբար ստուգումներ կատարել և *արգելել նախատեսված որակին չհամապատասխանող սննդամթերքի և խմիչքի վաճառքը*: Վերոհիշյալ համակցված միջոցառումների ամբողջությունն ընդգրկում է մարդու *առողջության պահպանման իրավունքը*:

Այս իրավունքի իրականացման երաշխիքներն մանրամասն սահմանված են Ազգային ժողովի կողմից 2002 թ. մայիսի 7-ին ընդունված «Պարենային անվտանգության ապահովման մասին» օրենքով, որի 7 հոդվածը պարենային անվտանգության ապահովման ոլորտում Հանրապետության տնտեսական քաղաքականության հիմք է հռչակում միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ *քաղաքացիների լիարժեք սնվելու և սովից զերծ լինելու իրավունքի ապահովումը*: Նշված խնդրի իրագործման նպատակով օրենքը ՀՀ կառավարությանը պարտավորեցնում է ապահովել սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը, ինչպես նաև բնակչության սպառման համար մատակարարվող սննդամթերքի անվտանգությունը: Այդ առնչությամբ ՀՀ կառավարությունը հետևում է, որպեսզի սննդամթերքի որակը համապատասխանի օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին և պահանջներին:

Հասարակության և պետության համար լուրջ կարևորություն ունի ոչ միայն ֆիզիկական, այլև *հոգեկան առողջության պահպանումը*: Այդ կապակցությամբ Ազգային ժողովի կողմից 2004 թ. մայիսի 25-ին ընդունված «Հոգեբուժական օգնության մասին» օրենքի համաձայն՝ հոգեկան առողջության պահպանումը ներառում է հոգեկան առողջության բարելավումն ու հոգեկան խանգարումների կանխարգելումը, հոգեկան խանգարումներով տառապող անձանց անհրաժեշտ բազմակողմանի և մատչելի բժշկական օգնության, խնամքի և օգնության այլ ձևերի ապահովումը, հոգեկան խանգարումներով տառապող անձանց նկատմամբ հասարակության

կողմից համապատասխան վերաբերմունքի, առաջին հերթին, հանդուրժողականության ու բարյացակամության ձևավորումը (հոդ. 5):

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է **բժշկական օգնության իրավունքը տարրերով առողջության պահպանման իրավունքից:**

Բժշկական օգնության իրավունքը մարդու բնական իրավունքն է՝ հիվանդության դեպքում ստանալու անհրաժեշտ բուժում: 1996 թ. ապրիլի 4-ին ընդունված՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի համաձայն՝ **բժշկական օգնություն և սպասարկում** նշանակում է բնակչությանը կանխարգելիչ, բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերում, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացում և ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցում:

Բնակչության բժշկական օգնությունն ու սպասարկումը, նշված օրենքի 2 հոդվածի համաձայն, իրականացվում է երկու ուղղությամբ՝ ա) **առաջնային բժշկական օգնության** և բ) **մասնագիտացված բժշկական օգնության** ձևով:

Բնակչության բժշկական օգնությունն ու սպասարկումը կազմակերպվում են **հիվանդանոցային** ձևով, երբ անհրաժեշտ է բժշկական միջոցառումների համալիր կիրառում՝ ախտորոշում, բուժում, տևական հսկողություն և հատուկ խնամք (մասնագիտացված բժշկական օգնություն), ինչպես նաև **արտահիվանդանոցային** (ամբուլատոր) ձևով, երբ դրա իրականացման համար չեն պահանջվում հիվանդանոցային պայմաններ (առաջնային բժշկական օգնություն):

Առողջության պահպանման իրավունքի իրականացման փուլում ծագում են մի շարք իրավունքներ, որոնք անհրաժեշտ են մարդու կյանքի, պատվի և արժանապատվության ապահովման համար: Մասնավորապես, բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև **բժշկական օգնություն և սպասարկում** ստանալիս, օրենսդրությամբ անձին **իրավունք է վերապահվում**

ա) ընտրել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին.

բ) ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ հիգիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում.

գ) պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում, բացի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերից.

դ) իրագեկ լինել իր հիվանդությանը և համաձայնություն տալ բժշկական միջամտության համար.

ե) հրաժարվել բժշկական միջամտությունից, բացի օրենսդրությամբ նախատեսված դեպքերից.

զ) արժանանալ հարգալից վերաբերմունքի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից:

Բացի դրանից, օրենքը սահմանում է նաև բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման ընթացքում **մարդու առողջությանը հասցված վնասի հատուցման իրավունքը:**

Բժշկական օգնության և սպասարկման իրավունքի ոլորտի մեջ են մտնում նաև **մարդու վերարտադրողական առողջության իրավունքը:** Այդ կապակցությամբ Ազգային ժողովի կողմից 2002 թ. դեկտեմբերի 11-ին ընդունված «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 4 հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ընտանիք կազմել և իր երեխաների թիվն ու նրանց ծնվելու ժամկետները որոշելու նպատակով պտղաբերության կարգավորման ծառայություններից **առանալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն** սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ, օգտվել բարձրորակ բուժկանխարգելիչ ծառայություններից և պաշտպանված լինել առողջության համար վտանգ ներկայացնող մեթոդների, այդ թվում՝ գիտական փորձերի կիրառումից, օգտվել վերարտադրողականության նոր տեխնոլոգիաներից:

Մարդու բժշկական օգնության և սպասարկման իրավունքի իրականացման **որդան ընդլայնվում է** բժշկական գիտության բնագավառում նոր ձեռքբերումներին զուգընթաց: Այս տեսանկյունից հիշատակաման արժանի է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002 թ. ապրիլի 16-ին ընդունված «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքը, որը իրավունք է վերապահում կենդանի դոնորից կամ դիակից կատարել օրգանի փոխպատվաստում, եթե մյուս բժշկական միջոցառումները չեն կարող երաշխավորել հիվանդի կյանքի փրկությունը և (կամ) առողջության վերականգնումը (հոդվ. 2): Ընդ որում, մարդուն օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստումը կատարվում է առանց դրամական փոխհատուցում ստանալու պայմանով, եթե փոխպատվաստման համար դոնորի գրավոր համաձայնության մեջ այլ բան նախատեսված չէ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48 հոդվածը հռչակում է նաև, որ պետության խնդիրն է՝ իրականացնել բնակչության **առողջության պահպանման ծրագրեր:** Դա նշանակում է, որ պետությունը պարտավոր է համապատասխան միջոցներ տրամադրել ֆիզկուլտուրայի և սպորտի կազմակերպման համար, սպորտի տարբեր ձևերի զար-

գացման համար կառուցել մարգարահիլճներ, լողավազաններ, մարգար-
բապարակներ և այլ կառույցներ:

Մարդու առողջության իրավունքը սերտորեն **կապված է նրա կյան-
քի որակի հետ**, որը ազդում է ինչպես անհատի, այնպես էլ ամբողջությ-
յամբ վերցրած՝ հասարակության առողջության վրա: Այն իր մեջ բացի
նյութական, ֆիզիոլոգիական, կենսաբանական այլ հանգամանքները նե-
րառում է նաև որոշակի սոցիալ-քաղաքական և հոգևոր հանգամանքներ՝
հասարակական հարաբերությունների ներդաշնակությունը, դրանց
մարդասիրությունը, հասարակության հանդուրժողականությունը, մարդու
և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը, և այլն:

Հասարակության առողջական վիճակը մեր օրերում հիմնականում
որոշվում է դրանում առկա հիվանդություններով և դրանց բուժման հնա-
րավորություններով: Իրականում ոչ պակաս կարևոր նշանակություն ունի
անհատի և հասարակության համար մտածելակերպի և հոգևոր անառող-
ջության վիճակը: **Հոգեպես անառողջ մարդկանց շարքը** կարելի է դասել
ինչպես արական, այնպես էլ իգական սեռին պատկանող սեռական փոք-
րամասնություններին, թմրամոլներին, հարբեցողներին և այլ շեղումներ
ունեցող հոգեկան հիվանդներին, որոնցից հասարակության ցանկացած
առողջ անդամ ձգտում է հնարավորինս հեռու մնալ: Հենց այդ կարգի
մարդկանց շնորհիվ էլ 20-րդ դարի 70-80-ական թվականներին հայտնա-
բերվեց ՄԻԱՎ/ՉԻԱՀ (ՍՊԻԴ) հիվանդությունը, որով վերջին տասնամ-
յակներին վարակվել են ավելի քան 60 միլիոն մարդ, որոնցից 22 միլիոնն
արդեն մահացել է:

Վերջին երկու տարվա կանխատեսումների համաձայն՝ աշխարհի
առավել զարգացած 45 երկրներում ՉԻԱՎ-ը կխլի ևս 68 միլիոն կյանք¹⁶:
Այդ հիվանդությունը այնքան մեծ սպառնալիք է մարդկությանը, որ ՄԱԿ-
ի Գլխավոր վեհաժողովի 26-րդ հասուկ նստաշրջանը (25-27 հունիսի
2001 թ.) նվիրվեց այդ հիմնահարցին: Արդյունքում առանց քվեարկության
ընդունվեց ՉԻԱՎ-ի դեմ «մարտի պլանը»՝ «ՉԻԱՎ-ի արգելափակման
միջոցառումների մասին հռչակագիր» անվանմամբ: Այդ փաստաթղթի
համաձայն՝ ՄԱԿ-ի անդամ պետությունները պարտավորվեցին ձեռնար-
կել միջոցառումներ, որպեսզի ՉԻԱՎ-ով տառապող հիվանդների նկատ-
մամբ վերացվեն բոլոր տեսակի խտրականությունները, երաշխավորվեն
վերջիններս և հասարակության խոցելի մյուս խավերի հիվանդության
զաղտնիության պահպանումը:

¹⁶ Տե՛ս WHO. Report on the global HIV/ AIDS epidemic 2002. A global overview of
the epidemic, Geneva, 2002, ch. 3.

§ 9. Կրթության իրավունք

Կրթությունը հասարակության տնտեսական, հոգևոր և սոցիալական
առաջընթացի հիմնական միջոցն է: Միաժամանակ, կրթությունը հանդի-
սանում է յուրաքանչյուր մարդու զարգացման, նրա դաստիարակության
և բարեկեցության պայմանը: Այդ պատճառով էլ քաղաքակիրթ պետու-
թյունները հսկայական միջոցներ են ներդրում կրթության, դաստիարա-
կության ուղղությամբ՝ գիտակցելով, որ այդ միջոցները ապագայում կվե-
րադարձվեն հասարակությանը՝ գիտական հայտնագործությունների,
մշակութային արժեքների, որակյալ աշխատուժի և այլնի ձևով: Գաղտ-
նիք չէ, **որ միայն կրթված, դաստիարակված մարդն է ընդունակ կատա-
րելու** գիտական հայտնագործություն, ստեղծելու արվեստի և գրակա-
նության մեծարժեք գործեր, կատարելու որակյալ աշխատանք և լինելու
պարզապես բարեկիրթ քաղաքացի:

Կրթության իրավունքը մարդու հիմնական իրավունքներից է, իսկ
դրա իրականացումը՝ մարդկանց միջև հավասարության և ազատության
հասնելու գործուն միջոց: Ելնելով դրանից՝ Մարդու իրավունքների հա-
մընդհանուր հռչակագիրը (հոդվ. 26), «Մարդու իրավունքների և հիմնա-
րար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական դաշնա-
գիրը (առաջին արձանագրության 2 հոդվ.), «Տնտեսական, սոցիալական
և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (13, 14
հոդվ.), «Երեխայի իրավունքների մասին» դաշնագիրը (հոդվ. 29) հռչա-
կում են յուրաքանչյուր մարդու կրթության իրավունքը:

Ընդհանուր առմամբ **«կրթություն» բառը նշանակում է** «առաջխա-
ղացման և դաստիարակության գործընթաց»: Ինչպես գրում էր ճանաչ-
ված լուսավորիչ Ջ. Դյուին. «Չնավորելով մատաղ սերունդը, հասարա-
կությունը կերտում է իր սեփական ապագան»¹⁷:

Մինչև 20-րդ դարի սկիզբը կրթված էր համարվում այն մարդը, որը
գիտեր գրել ու կարդալ: Գիտատեխնիկական և տեղեկատվական հե-
ղաշրջման դարաշրջանում կրթվածությունն արդեն հասկացվում է այլ
կերպ: Այսպես, ՅՈՒՆԵՍԿՕ-ն (ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և
մշակութային կազմակերպությունը) առաջարկում է կրթությունը դիտար-
կել որպես սոցիալական կյանքի ամբողջական գործընթաց, որի միջոցով
անհատները և սոցիալական խմբերը, ազգային և միջազգային հանրու-
թյան շրջանակներում, սովորում են սեփական շահի համար զարգացնել ի-

¹⁷ Տե՛ս Dewey J. Democracy and Education: An Introduction to the Philosophy of
Education. New York, 2001. էջ 23, 25, 93:

րենց անձնական ընդունակությունները, հարաբերությունները, ձիրքերը և գիտելիքները¹⁸:

Քանի որ կրթությունը *սկսվում է մանուկ հասակից*, ուստի կրթության գործընթացի առավել հստակ սահմանումը տրված է «Երեխայի իրավունքների մասին» դաշնագրում, որի 29 հոդվածն ամրագրում է, որ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի՝

ա) երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով,

բ) մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը,

գ) երեխայի ծնողների, նրա (երեխայի) մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, երեխայի բնակության երկրի ազգային արժեքների, նրա ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը,

դ) երեխային ազատ հասարակության մեջ փոխընթացման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով, պատասխանատու կյանքով ապրելուն նախապատրաստելուն,

ե) շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը:

Կրթությունն ու ուսուցումը սերտորեն կապված են միմյանց հետ, փոխադարձաբար լրացնում են միմյանց: **Ուսուցումը** մարդու կողմից նախոյդ սերունդների ջանքերով մշակված գիտելիքների և կյանքի հմտությունների տիրապետման գործընթաց է, որն ապահովում է նրա մուտքը դեպի կյանք: Մինչդեռ **կրթությունը** ուսուցման նպատակն ու արդյունքն է: Կրթվածության չափանիշներ են համարվում դարաշրջանի գիտելիքների ծավալին համապատասխանող գրագիտությունը, մշակույթի ընդհանուր մակարդակը: Ուսուցված լինելու չափանիշներ են համարվում այս կամ այն որակի աշխատանքը կատարելու, տարբեր բնույթի փորձությունները հաղթահարելու կարողությունները:

¹⁸ See The Recommendation Concerning Education for International Understanding, Cooperation and Peace and Education Relating to Human Rights and Fundamental freedoms. 1974. 19 November.

Կրթության իրավունքի իրականացման ոլորտում դրոշակի ձեռքբերում կարելի է համարել կրթության միջազգային չափանիշների և ստանդարտների հաստատումը, ինչպես նաև աստատատների ու *դիպլոմների միջազգային ճանաչումը*: Ուստի կարելի է ենթադրել, որ աշխարհի բոլոր պետություններում էլ կրթությունը պետք է հետապնդի միևնույն նպատակները, որոնք անկասկած պետք է համադրեն քաղաքակրթության համամարդկային արժեքները ազգայինի հետ: Այդ կապակցությամբ միջազգային կազմակերպությունների կողմից ընդունվել են մի շարք հռչակագրեր և դաշնագրեր: Դրանց համաձայն՝ *մարդասիրական կրթության վերջնական նպատակը* պետք է դառնա *յուրաքանչյուր անհատի մտտ համամարդկային արժեքների ընկալումն ու դրան համապատասխան վարքագծի ձևավորումը*, որի վրա հիմնված է մարդկության մշակույթը: Կրթությունը պետք է օգնի մարդուն զարգացնելու ազատությունը գնահատելու հնարավորությունները, սովորեցնելու քաղաքացիներին կառավարելու դժվարին և անորոշ իրավիճակները, ձևավորելու անհատական պտասխանատվության և քաղաքացիական պարտականությունների ընկալումը, զարգացնել արժեքները ճանաչելու և ընկալելու, մարդկանց հետ համագործակցելու և միմյանց հարգելու ունակությունները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (39 հոդվ.) հռչակում է, որ *յուրաքանչյուր* ոք ունի կրթության իրավունք:

Կրթություն ասելով՝ հասկացվում է անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որի նպատակն է պահպանել գիտելիքները և դրանք փոխանցել հաջորդ սերունդներին: **Կրթության իրավունքը** մարդու իրավունքն է՝ ստանալու որոշակի գիտելիքներ, մշակութային դաստիարակություն և մասնագիտական կողմնորոշում՝ ժամանակակից հասարակության բնականոն կենսագործունեության համար: Ինչ վերաբերում է քաղաքացիների կոնկրետ կրթության իրավունքին, ապա դրա սակ հասկացվում է քաղաքացու կողմից որոշակի կրթական մակարդակի (ցենզի) ձեռքբերում և հաստատում, որն ամրագրվում է համապատասխան փաստաթղթով:

Ամրագրելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կրթության իրավունքը՝ Սահմանադրությունը միաժամանակ հռչակում է, որ *հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է*, իսկ միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր *քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար* պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով: Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆի-

նանսական և աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին:

Սահմանադրական այդ նորմի պահանջները իրենց մանրամասն արտևացումն են գտել 1999 թ. ապրիլի 14-ին ընդունված՝ «Կրթության մասին» օրենքում, որը սահմանում է կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և կրթության համակարգի կազմակերպակիրական ու ֆինանսատնտեսական հիմքերը: Մասնավորապես, օրենքը կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը հռչակում է որպես **պետականության ամրապնդման կարևոր գործոն**: Այդ նպատակով պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը:

Կրթության իրավունքի իրականացման համար պետության կողմից սահմանվում են մի շարք **երաշխիքներ**: Մասնավորապես, պետությունը անվճար կրթության իրավունքն ապահովում է կրթական համակարգի բնականոն գործունեությանը և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ: Բացի դրանից, պետական հանրակրթական դպրոցների առաջին դասարանների աշակերտներին պետությունը, իր բյուջեի միջոցների հաշվին, անվճար ապահովում է դասագրքերով, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով (հոդվ. 6, կետ 4): Միաժամանակ, պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների կրթության համար՝ զարգացման շեղումները շտկելու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:

Հայաստանի Հանրապետությունում ոչ պակաս կարևոր է նաև պետության կողմից քաղաքացու **բարձրագույն կրթություն** ստանալու իրավունքի ապահովումը: Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերադասակարգումն է, ինչպես նաև միջնակարգ ընդհանուր և միջնակարգ մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության, զարգացման պահանջմունքների բավարարումը: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թ. դեկտեմբերի 14-ին ընդունվել է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը, որը սպառնիչ կերպով թվարկում է հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների տեսակները: Դրանք են՝ **համալսարանը, ինստիտուտը, ա-**

կադեմիան և կոնսերվատորիան, ինչպես նաև բարձրագույն ռազմական և ստտիկանական ուսումնական հաստատությունները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բարձրագույն կրթություն ստանալու իրավունքն իրականացվում է երկու ուղղությամբ՝ **ա) անվճար՝ մրցութային հիմունքներով և բ) վճարովի:**

Անվճար բարձրագույն կրթության իրավունքի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է **պետական պատվեր** ըստ մասնագիտությունների և ուսումնական հաստատությունների:

Ինչ վերաբերում է **վճարովի** բարձրագույն ուսուցման կազմակերպմանը, ապա բարձրագույն ուսումնական հաստատությունն ինքն է սահմանում ուսանողական համակազմի վճարովի չափաքանակը, միաժամանակ նախատեսելով անվճար ուսուցման տեղեր (առնվազն 10 տոկոսի սահմաններում)՝ հիմք ընդունելով ուսանողների առաջադիմությունը (հոդվ. 28, կետ 6):

Սակայն, պետք է նկատել, որ եթե անվճար միջնակարգ կրթությունը մատչելի է բոլորի համար, ապա նույնը չի կարելի ասել անվճար բարձրագույն կրթություն ստանալու մասին: Գտնվելով սոցիալապես ունեզուրկ վիճակում՝ հատկապես գյուղական վայրերում ապրող երիտասարդները գրեթե զրկված են մայրաքաղաքում ապրելու և պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստանալու հնարավորությունից: Ուստի, պետությունը պարտավոր է հոգ տանել գյուղական երիտասարդության՝ բարձրագույն կրթություն ստանալու, ինչպես նաև արդեն իսկ բուհերում սովորող գյուղաբնակ ուսանողների համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմաններ ստեղծելու մասին, քանզի զաղտնիք չէ, որ մեր պետության մտավորականության մի զգալի մասը կազմում են հենց գյուղական միջավայրից սերված մարդիկ:

§ 10. Ստեղծագործության ազատության իրավունք

Այս ազատությունը, ինչպես և մարդու մյուս բոլոր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ու ազատությունները, նախատեսված են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդվ. 27) և «Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, որի 15 հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են հարգել գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ ազատությունը:

Ստեղծագործության ազատությունն իր մեջ ներառում է *արվեստի, գիտական ստեղծագործության, հետազոտության, դասավանդման և ուսումնառության ազատությունը*:

Արվեստն իրենից ներկայացնում է սոցիալական շփումների գործընթաց, ուստի պետության խնդիրն է ոչ միայն հեղինակի պատրաստի գեղարվեստական ստեղծագործությունը, այլև *դրա արարման գործընթացը պաշտպանել արտաքին ազդեցություններից*: Արվեստը որոշակի նյութական ձև կարող է ընդունել միայն այն ժամանակ, երբ որոշակի հնարավորություն կա երկխոսություն ծավալելու հեղինակի և երկի երկրպագուների միջև: Այսինքն, հասարակայնությունը միայն կարող է ստեղծագործությունն ըստ արժանավայն արժեքավորել, գնահատել:

Գիտական ստեղծագործության ազատությունն իր մեջ ներառում է հետազոտության, տեսությունների, գիտելիքների կիրառման և դասավանդման ազատությունը: Այս հիմնարար իրավունքը պաշտպանում է հետազոտության առարկայի և մեթոդի ազատ ընտրությունը և ստացված արդյունքները տարածելու ազատությունը:

Գիտությունը, ինչպես և արվեստը, ի վիճակի է անսպասելիորեն և հիմնովին փոխել իրականության վերաբերյալ մեր ունեցած ավանդական համոզմունքները, որոնք ձևավորվել են պետական, քաղաքական և հասարակական կառույցների գործունեության արդյունքում: Այդ է պատճառը, որ գիտությունը նույնպես չի կարող ամբողջովին ազատ լինել քաղաքական, գաղափարախոսական, հասարակական ազդեցությունից, ուստի և հակամարտություններից խուսափելու համար անհրաժեշտ է երկկողմանի հանդուրժողականություն:

Հետազոտությունը գիտական մեթոդներով իրականացվող գիտելիքների որոնում է և դրանց հաղորդումը շահագրգիռ գիտական շրջանակներից կամ լայն հասարակայնությանը՝ զեկույցի, գրույցի կամ հրապարակման միջոցով: Այս ոլորտում, մասնավորապես, պաշտպանվում է հարցադրման ընտրությունը և հետազոտության իրականացման մեթոդի ազատությունը, աշխատանքի պլանավորման և նյութերի հավաքման ազատությունը, զեկույցների կազմումը, ընդհանրացումը, հետազոտության արդյունքների գնահատումն ու քննադատությունը և այլն:

Դասավանդման ոլորտում գիտնականն իր պատասխանատվությամբ մատուցում է սեփական կամ ձեռք բերված գիտելիքներ: Դասավանդման ազատությունը տարածվում է ինչպես գիտության, այնպես էլ *արվեստի ոլորտում*: Դա նշանակում է, որ դասավանդողը կարող է ինք-

նորույն որոշել ուսումնական գործընթացի բովանդակությունը, մեթոդը և ընթացքը: Դասավանդման ազատությունն այսօր առավելապես իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատություններում: Դասախոսները պետք է հավատարիմ մնան ուսումնական ծրագրին, դասատախտակին և քննությունների սահմանված կարգին: Սակայն դասավանդվող նյութի կոնկրետացումն արդեն իրականացվում է դասավանդման ազատության շրջանակներում, որի համար պատասխանատվություն է կրում գիտնականը:

Ուսումնառության ազատությունը նշանակում է, որ դասատախտակի և ուսումնական ծրագրերի շրջանակներում ուսանողը կարող է ազատորեն որոշում ընդունել իր կրթության, մասնավորապես իր գիտական աշխատանքի վերաբերյալ: Ուսումնառության ազատությունն իրականացվում է դասավանդողների և ուսանողների միջև բնականոն փոխառաբերությունների պայմաններում, և արգելվում է դասավանդողների կողմից ուսանողներին հարկադրել յուրացնելու որոշակի քաղաքական, աշխարհայացքային, գաղափարախոսական արժեքներ կամ առանձին գիտական կարծիքներ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը Հանրապետության տարածքում ապրող յուրաքանչյուր անձի համար նախատեսում է *գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության* իրավունք (հոդվ. 40):

Բնական է, որ այս ազատությունից կարող են օգտվել այն անձինք, ովքեր զբաղվում են ստեղծագործական աշխատանքով: Գրողը, օրինակ, իրավունք ունի ստեղծելու գրական գործ (վեպ, պատմվածք, հեքիաթներ և այլն)՝ *ցանկացած թեմայով և ցանկացած բովանդակությամբ*: Նույնպիսի իրավունք ունեն նաև նկարիչները, քանդակագործները, գիտնականները, գյուտարարները և այլոք:

Կրթության մասին օրենքի 28 հոդվածի (2-րդ մաս) համաձայն ուսումնական հաստատությունների ուսուցիչներն ու դասախոսները ազատ են դասազրբեր կազմելու, իրենց մտքերը աշակերտների և ուսանողների առջև ազատորեն արտահայտելու, դասավանդվող նյութի շարադրման և դասավանդման մեթոդների ընտրության գործում և այլն:

Ստեղծագործության ազատությունը նշանակում է նաև, *որ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք չունեն միջամտելու քաղաքացիների ստեղծագործական գործունեությանը, թելադրելու ինչի մասին գրել և ինչպես գրել*:

Հասարակության հոգևոր-մշակութային առաջընթացը մեծապես պայմանավորված է մարդկանց ստեղծագործելու շնորհքով: Ուստի պետությունը պարտավոր է ամենուրեք պաշտպանել և խրախուսել ստեղծագործական աշխատանքը, պայմաններ ստեղծել դրա ծավալման համար:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը **անթույլատրելի է համարում ստեղծագործության ազատությունն օգտագործել ի վնաս հասարակության, մյուս մարդկանց:** Պետությունը պարտավոր է խոչընդոտել այնպիսի «ստեղծագործությունը», որն ուղղված է պատերազմի, բռնության, դաժանության, անբարոյակամության, ազգային և կրոնական բռնամանքի քարոզչությանը: Այդպիսի ստեղծագործությունների հեղինակները և դրանց հրատարակիչները ենթակա են օրենքով սահմանված պատասխանատվության:

Դրա հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրում է, որ «Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով»: Սահմանադրական այդ նորմի հիման վրա 1999 թ. դեկտեմբերի 5-ին ընդունված՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքը սահմանում է գիտության և արվեստի բնագավառում ինչպես հրատարակված, այնպես էլ չհրատարակված երկերի վերաբերյալ ստեղծողների հեղինակային իրավունքը՝ անկախ այդ երկի նշանակությունից, արժանիքներից, բովանդակությունից, նպատակից, ծավալից, ինչպես նաև արտահայտման եղանակից (հոդվ. 5):

Մտավոր սեփականության իրավունքը էապես տարբերվում է սեփականության իրավունքից, ինչով պայմանավորված են մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության առանձնահատկությունները: Դա բացատրվում է նրանով, որ **հեղինակի կողմից երկի, որպես առարկայական օբյեկտի, օտարումը դեռևս չի նշանակում հեղինակային իրավունքի օտարում:** Ելնելով այդ հանգամանքից, օրենքի 43 հոդվածը հռչակում է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանությունը, համաձայն որի՝ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների կրողն իր իրավունքները պաշտպանելիս կարող է պահանջել՝

ա) իր իրավունքների ճանաչումը, բ) մինչև իրավախախտումը գոյություն ունեցած իրավիճակի վերականգնում և իրավունքը խախտողի գործողությունների կասեցում, գ) նմանակված օրինակի բռնագրավում կամ ոչնչացում, դ) վնասի հատուցում, ներառյալ կորցրած օգուտը:

Հեղինակային և հարակից իրավունքները կրողի պահանջները չբավարարվելու դեպքում օրենքը թույլ է տալիս խախտված իրավունքները պաշտպանել դատական կարգով:

§ 11. Մշակութային կյանքին մասնակցելու իրավունք

Այս իրավունքը ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստներից, գիտական առաջընթացից և դրա բարիքներից օգտվելու իրավունք (հոդվ. 27):

Մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու իրավունքը իր բնույթով շատ նման է կրթության իրավունքին: Դրա իրականացման համար պետությունները որոշակի պարտավորություններ են կրում: Մասնավորապես, վերջիններս պարտավոր են ստեղծել այնպիսի պայմաններ և իրականացնել միջոցառումներ, որոնք մարդկանց իրական հնարավորություն կտան օգտվելու մշակույթի, արվեստի և գիտության արժեքներից: Ըստ «Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի՝ պետությունների կողմից ձեռնարկվող միջոցներն ամիրաժեշտ են կրթության ու մշակույթի նվաճումների պահպանման, զարգացման և տարածման համար:

Այս իրավունքը Հայաստանի Հանրապետությունում հնարավորություն է ընձեռում **ազատորեն օգտվել մշակութային կազմակերպություններից**, հաղորդակից լինել մշակութային արժեքներից: Պետությունը պարտավոր է ապահովել պայմաններ, որպեսզի բոլոր մարդիկ կարողանան հաճախել թատրոններ, գեղարվեստական ցուցահանդեսներ, թանգարաններ և այլուր:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 40 հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք: Դա, առաջին հերթին, ենթադրում է պետության պարտականությունը՝ յուրաքանչյուրի համար ապահովելու մշակութային հաստատությունների մատչելիությունը: Յուրաքանչյուր ոք իրավունք է ձեռք բերում ազատորեն հաղորդակցվելու մշակութային արժեքներին՝ օգտվելու պետական գրադարաններից, թանգարաններից, արխիվային ֆոնդերից և այլն:

Մշակութային կյանքին մասնակցելու սահմանադրական իրավունքը մանրամասն կարգավորվում է Ազգային ժողովի կողմից 2002 թ. նոյեմբերի 20-ին ընդունված «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքով, որտեղ սահմանվում են հանրապետության մշակութային օբյեկտները, դրանց իրավական վիճակը և օգտագործման կարգը:

Առանձնահատուկ կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում **երեխաների մասնակցությունը մշակութային կյանքին:** Դա մատուց սերնդի դաստիարակման կարևոր միջոց է:

Մշակութային արժեքներից օգտվելու քաղաքացիների իրավունքի իրականացումը պայմանավորված է նրանով, թե բնակչությունը որքանով է ապահովված մշակութային հաստատությունների ծառայություններով (գրադարաններ, թատրոններ, համերգասրահներ, թանգարաններ, պատկերասրահներ, կինոթատրոններ և այլն):

Մշակութային կյանքին մասնակցելու *մատչելիությունը պայմանավորված է նաև բնակչության սոցիալական վիճակով*: Այս խնդրի լուծման կապակցությամբ 2004 թ. ապրիլի 28-ին Ազգային ժողովն ընդունել է «Մշակույթի պահպանման, տարածման և զարգացման 2004 թվականի պետական տարեկան ծրագիրը հաստատելու մասին» օրենք: Մասնավորապես, քաղաքացիների մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրականացման արդյունավետության նպատակով Ծրագիրը խնդիր է դնում պահպանել Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգությունը և մշակութային ներուժը, ապահովել մշակութային կյանքի բազմազանության աջակցմանը զուգընթաց *հայկական մշակույթի ավանդական և ոչ ավանդական ձևերի զարգացումը*, ապահովել յուրաքանչյուր անհատի՝ անկախ նրա բնակավայրից և սոցիալական խմբի պատկանելությունից, մշակութային արժեքներին հաղորդակցվելու, մշակույթի բոլոր ոլորտներում մշակութային ծառայություններից ու բարիքներից օգտվելու մատչելիությունը, աջակցել յուրաքանչյուր անհատի մասնագիտական և ոչ մասնագիտական (սփրոդական) ստեղծագործական գործունեությանը: Բացի այդ, ծրագիրը կոչված է ապահովելու մասնագիտական ստեղծագործական գործունեության զարգացմանը նպաստող պայմանների ստեղծումը և քաղաքացիների մասնակցությունը մշակութային կյանքին, պատմամշակութային անշարժ հուշարձանների վերականգնումը, պահպանումը և օգտագործման պայմանները, թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի, պարարվեստի, կրկեսային արվեստի կայուն զարգացումը և այլն: Այդ կապակցությամբ *բարեգործական քայլ կլինեն*, եթե պետությունը որոշակի արտոնություններ սահմաներ նախադասարանական և դպրոցական տարիքի երեխաների, ուսանողների, հաշմանդամների, կենսաթոշակառուների, ժամկետային զինծառայողների և այլ կատեգորիայի անձանց համար՝ կինոթատրոնների, թանգարանների, համերգասրահների և մշակութային այլ հաստատությունների տոմսեր ձևաչափեր վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 13.

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

§1. Իրավունքների և ազատությունների երաշխիքների հասկացությունը և բովանդակությունը

Մարդու հիմնական իրավունքների սահմանադրական երաշխիքներ ասելով հասկանում ենք Սահմանադրության մեջ ամրագրված այն ընդհանուր պայմաններն ու հատուկ (իրավաբանական) միջոցները, որոնք փաստացի հմարավորություն են ընձեռում օգտվելու հիմնական իրավունքներից, բավարարելու շահերը և հուսալիորեն պաշտպանելու դրանք:

Իրավունքի իրականացումը կարող է ապահովվել, առաջին հերթին, այն դեպքում, երբ այդ իրավունքին համապատասխանում է ինչ-որ մեկի պարտականությունը:

Սահմանադրական իրավունքի տեսանկյունից մարդու և քաղաքացու իրավունքներին համապատասխանում է *պետության պարտականությունը*, որի գործնական իրացումը միայն կարող է իրական երաշխիք հանդիսանալ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման համար:

Անշուշտ, միայն *իրավական* միջոցները բավարար չեն իրավունքները և ազատությունները գործնականում իրացնելու համար: Նվազ կարևոր չեն (եթե ոչ ավելի կարևոր) նաև *տնտեսական* երաշխիքները: Տնտեսական երաշխիքների տակ հասկացվում է տնտեսական և քաղաքական պայմանների համակցությունը, որը իրավունքները դարձնում է իրական: Իսկապես, Հայաստանի Հանրապետության ոչ միայն Սահմանադրության մեջ, այլև բոլոր օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում եթև ամրագրվի, թե Հայաստանի քաղաքացին ունի կրթության, առողջության ապահովման, ժառանգման, բնակարանի և կենսապայմանների բարելավման իրավունք և այլն. միևնույն է, եթե նա չունի նյութական և ֆինանսական միջոցներ (տնտեսական երաշխիք), ապա այդ իրավունքները անիրական են և արժևոզուրկ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ մարդու իրավունքները և ազատություններն ամրագրված են տարբեր ձևակերպումներով: Որոշ դեպքերում կոնկրետ իրավունք սահմանող *նորմը բո-*

վանդակում է նաև դրա ապահովման երաշխիքը: Օրինակ, 16 հոդվածը ամրագրում է անձի անձեռնմխելիության իրավունքը: Հենց այդ նույն հոդվածի շարունակությունը ազդարարում է. «...Մարդուն չի կարելի ձեռքակալել, խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով: Նա կարող է կալանավորվել դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով»: Կամ 23 հոդվածում ամրագրված է մարդու անձնական և ընտանեկան կյանքը՝ անօրինական միջամտությունից, իր պատիվը և բարի համբավը ունձագությունից պաշտպանելու իրավունքը: Այդ նույն հոդվածով «Արգելվում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը և տարածելը»:

Առանձին հոդվածներում իրավունքներն ամրագրված են սոսկ որպես **պետության կամ օրենքի կողմից պաշտպանվող օրյեկտ**, առանց կոնկրետացնելու դրանց ապահովման միջոցներն ու եղանակները: Այսպես, յուրաքանչյուր քաղաքացի ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: «Պետությունը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում այս իրավունքի իրականացման համար» (հոդվ. 34): Կամ՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային դրություններում պետության հիմնական խնդիրներն են՝ 1) պաշտպանել և հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը » (հոդվ. 48) և այլն:

Սակայն մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների նման ձևակերպումները Հանրապետության Հիմնական օրենքում չեն նսեմացնում դրանց նշանակությունը: Սահմանադրությունը համարվում է ուղղակի գործողության իրավական ակտ, ուստի իրավունքի սահմանումը՝ իրացման երաշխիքի հետ մեկտեղ, կարող է պարզապես դյուրինացնել դրա պաշտպանությունը պարտավոր պետական մարմինների կողմից:

Իրավունքների և ազատությունների երաշխիքների առնչությամբ խնդրի նման լուծման հետ մեկտեղ, Սահմանադրությունը բովանդակում է նաև **հատուկ նորմեր**, որոնք ուղղակի վերաբերվում են իրավունքների և ազատությունների **իրացման երաշխիքներին**: Այդ նորմերում իրենց արտահայտությունն են գտել մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների որոշակի համակարգը, ինչպես նաև պետության պարտականությունները՝ այդ իրավունքների և ազատությունների ապահովման գործում: Ընդ որում, նման բովանդակության նորմերը կարող են ամրագրված լինել ոչ միայն Հիմնական օրենքում, այլև իրավունքի այլ ճյուղերի նորմերում:

§2. Իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետության պարտականությունն է

Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքը ամրագրում է պետության պարտականությունը՝ ապահովել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան (հոդվ. 3): Սահմանադրական այս նորմի պահանջներին համապատասխան պետությունը իրավական տարբեր միջոցներով ջանում է իրականացնել դրանց արդյունավետ կարգավորումը, պաշտպանել այդ իրավունքներն ու ազատությունները: Այդ խնդրի լուծմամբ զբաղվում են Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովը, Կառավարությունը, դատական իշխանության մարմինները և պետական ապարատի մյուս ստորաբաժանումները:

Հայտնի է, որ հենց պետական մարմիններն են, որ ունեն առավելագույն հնարավորություններ՝ **ինչպես ապահովելու, այնպես էլ խախտելու** մարդու իրավունքներն ու ազատությունները: Եվ որպեսզի պետական մարմինները ոչ մայն պաշտպանեն, այլև չխախտեն դրանք, Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով ամրագրվում է նրանց **իրավասությունը**, իրավունքների և պարտականությունների շրջանակները, որոնց շրջանցման կամ չարաշահման դեպքում իրավազանց պաշտոնատար անձի նկատմամբ կարող են կիրառվել իրավաբանական պատասխանատվության միջոցներ:

1. Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում լուրջ պարտականություններ ունի **Հանրապետության Նախագահը**: Սահմանադրության 49 հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Այստեղից հետևում է, որ Հանրապետության Նախագահը պատասխանատվություն է կրում Սահմանադրությամբ ամրագրված ցանկացած իրավունքի ապօրինի խախտման համար՝ լինի դա պետական մարմինների, թե կազմակերպությունների ու անհատ անձանց կողմից: Այդ պարտականության արդյունավետ իրականացման համար Հանրապետության Նախագահը տիրապետում է անհրաժեշտ կազմակերպական և իրավական միջոցների: Այսպես, Սահմանադրության 5 հոդվածի համաձայն՝ «Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ»: Ուրեմն եթե պետական ապարատի, մասնավորապես, գործադիր և դատական իշխա-

նության մարմինները կամ նրանց պաշտոնատար անձինք կատարել են **օրենսդրությամբ չնախատեսված գործողություն** կամ դրսևորել են **անգործություն**, որոնցով խախտվել է քաղաքացու իրավունքը, ապա Հանրապետության Նախագահը իրավասու է Սահմանադրության 55 (4 կետ) և 95 (1 և 5 կետեր) հոդվածների հիման վրա պաշտոնանկ անել մեղավոր պաշտոնատար անձանց: Իսկ եթե իրավունքները խախտվել են օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենքի միջոցով, ապա Հանրապետության Նախագահը Սահմանադրության 55 հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով իր վետոյի իրավունքի իրականացման ճանապարհով կարող է հասնել այդ օրենքի կամ դրա՝ մարդու իրավունքները ռոնահարող նորմերի վերանայմանը:

2. Իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու պարտականությունը մտնում է նաև **Հանրապետության կառավարության** լիազորությունների մեջ: Երկրի Հիմնական օրենքը հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի լիազորությունների շարքում հատուկ առանձնացնում է «օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման, **սեփականության և հասարակական կարգի պահպանման**» ուղղությամբ իրականացվող լիազորությունները:

Ավելին, Կառավարության պարտականությունների մեջ է մտնում ոչ մայն ՀՀ քաղաքացիների, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի և անվտանգության ապահովումը, այլ նաև ուրիշ պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը՝ այդ պետությունների օրենսդրության և միջազգային պայմանագրերին համապատասխան:

Փորձը ցույց է տալիս, որ գործադիր իշխանության բնագավառում մարդու իրավունքներն ու ազատությունները առավելապես ռոնահարվում են **հասարակական կարգի պահպանության մարմինների պաշտոնատար անձանց կողմից**: Այդ կապակցությամբ, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար լրացուցիչ երաշխիքներ սահմանվեցին ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թ. ապրիլի 16-ին ընդունված «Ոստիկանության մասին» օրենքով, որով հստակ կանոնակարգվում են ոստիկանության պարտականությունները մարդու իրավունքների իրականացման բնագավառում: Մասնավորապես, ոստիկանությունը պարտավոր է հանցավոր և հակաիրավական այլ ռոնձգություններից պաշտպանել մարդու կյանքն ու առողջությունը, իրավունքներն ու ազատությունները, սեփականությունն ու օրինական շահերը՝ անկախ նրա քաղաքացիությունից, ռասայից, սեռից, լեզվից, ազգությունից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից,

գույքային կամ այլ դրությունից, կուսակցական կամ որևէ կազմակերպության պատկանելությունից:

Միաժամանակ ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում պարտավոր են անձին անմիջապես ներկայացնել սահմանափակման հիմքերը և բացատրել նրա իրավունքներն ու պարտականությունները: Ոստիկանությունը պարտավոր է ձեռքբերված կամ կալանավորված անձանց իրական հնարավորություն ընձեռել օգտվելու իրավական օգնություն ստանալու իրենց սահմանադրական իրավունքից, տեղյակ պահել նրանց հարազատներին, աշխատանքի կամ ուսումնական հաստատության վարչակազմին՝ նրանց գտնվելու վայրի մասին, անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկել նրանց բժշկական և այլ օգնություն ցույց տալու, ինչպես նաև ձեռքբերված կամ կալանավորման կապակցությամբ անձի կամ նրա ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու ուղղությամբ: Ոստիկանության աշխատակցի կողմից մարդուն խոշտանգելը, նրա նկատմամբ դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելը կամ նրա նկատմամբ բռնություն կիրառելն առաջ է բերում ընդհուպ մինչև քրեական պատասխանատվություն:

Գործադիր իշխանության մարմինների կողմից քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում կարևոր նախադրյալ է նրանց դիմում-բողոքները քննարկելու, սահմանված ժամկետում դրանց պատասխանելու պահանջը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Այդ միջոցներից է հանդիսանում դիմում-բողոքների միջոցով պաշտոնատար անձի անօրինական գործողությունները գանգատարկելը: Այդ կապակցությամբ Սահմանադրության 27.1 հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի՝ իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը: Քաղաքացու գանգատի հիման վրա ծագում է գործադիր իշխանության մարմնի պարտականությունը՝ վարչական ենթակայության կարգով քննարկելու ստորադաս մարմնի նկատմամբ քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգատները: Այդ ոլորտում գործադիր իշխանության մարմինների կոմկրետ պարտականությունները կարգավորվում են «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» (ուժը

կորցրել է դիմումների և բողոքների մասով 31.12.04 թվականից), «Վարչա-րարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքներով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով:

«Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» օրենքը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին պարտավորեցնում է ապահովել յուրաքանչյուր **առաջարկության** ժամանակին և համակողմանի քննարկումը, դրանց առթիվ հիմնավորված որոշումների ընդունումը, քաղաքացիների առաջարկությունների վերաբերյալ ընդունված որոշումների փաստացի կատարումը (4 հոդվ.): Օրենքը պահանջում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներից՝ անհրաժեշտության դեպքում կատարելու քաղաքացիների ամենական ընդունելություն (5 հոդվ.): Օրենքը նաև հատակ ժամկետներ է սահմանել հարցը ըստ էության լուծելու պարտավոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար: Վերջիններս պարտավոր են դիմումին կամ առաջարկությանը ընթացք տալ այն ստանալուց մեկ ամսվա ընթացքում, իսկ լրացուցիչ ուսումնասիրություն և ստուգում չպահանջվող առաջարկություններին՝ 15 օրից ոչ ուշ:

Ինչ վերաբերում է քաղաքացիների խախտված իրավունքների կապակցությամբ զանգատների քննարկմանը, ապա այն կարգավորվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով: Այն սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և քաղաքացիների միջև հարաբերությունները: Վարչական մարմիններ են համարվում Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները, այսինքն՝ նախարարությունները և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինները, մարզպետները, Երևանի քաղաքապետը, տեղական ինքնակառավարման մարմինները:

Վարչական մարմինների կողմից քաղաքացու խախտված իրավունքների կապակցությամբ դիմումների և զանգատների քննարկումն իրականացվում է վարչական վարույթի միջոցով, որի հարուցման համար հիմք են հանդիսանում ինչպես անձի դիմումը, զանգատը, այնպես էլ վարչական մարմնի նախաձեռնությունը (հոդվ. 30):

3. Պետության կողմից մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում իր ուրույն տեղն ունի իշխանության **օրենսդիր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը**: Ի տարբերություն գործադիր և դատական իշխանության մարմինների, Ազգային ժողովի կողմից մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը իրականացվում է **միջնորդավորված ձևով**: Ազգային ժողովն ընդունում է օրենքներ, որոնք կամ սահմանում են իրավունքներ և ազատություններ, կամ էլ ուղղված են անձի սոցիալ-տնտեսական, հոգևոր և մշակութային պահանջմունքների բավարարմանը: Ինչ վերաբերում է մարդու և քաղաքացու իրավունքների կոնկրետ, անմիջական պաշտպանությանը, ապա Ազգային ժողովի սահմանադրական կարգավիճակը նրան նման հնարավորություն չի ընձեռում: Հանրապետության օրենսդիր մարմինը ունի որոշ **վերահսկողական** լիազորություններ կառավարության նկատմամբ, որի միջոցով կարող է ազդել գործադիր մարմինների կողմից մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ իրականացման վրա: Այդ ազդեցության ձևը պատգամավորների կողմից **վարչապետին և կառավարության մյուս անդամներին հարցեր տալն է**: Սակայն վերահսկողության այդ ձևը բավարար չափով արդյունավետ չէ, որովհետև այն սկսվում և ավարտվում է լեկ Ազգային ժողովի նիստերի դափնեման, և Ազգային ժողովը այդ կապակցությամբ **որևէ որոշում չի ընդունում**:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Ազգային ժողովի դերը բարձրացնելու նպատակով, ի թիվս այլ մշտական հանձնաժողովների, ձևավորվեց **«Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի» մշտական հանձնաժողովը**, որի տնօրինման ոլորտի մեջ են մտնում այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, փաստաբանական և նոտարական ծառայությունները, երեխայի իրավունքները, կուսակցություններն ու այլ հասարակական միավորումները, կրոնը, գեներային հարցերը, ազգային փոքրամասնությունները, տեղեկատվությունը և այլն: Հանձնաժողովի աշխատանքներում պրակտիկավորվում է նաև պարբերաբար քաղաքացիների ընդունելության կազմակերպումը, որի արդյունքների ամփոփումը հանձնաժողովի անդամներին հնարավորություն կընձեռի հանդես գալ համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ:

Արտասահմանյան շատ երկրներում կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը խախտումներից պաշտպանելու ամենատարածված միջոցներից է **մարդու իրավունքների հարցերով խորհրդարանական լիազորի (ombudsman) սկանդինավյան ինստիտուտը**, որը տարբեր երկրներում տարբեր կերպ է անվանվում (Անգլիայում՝ խորհրդարանական կոմի-

սար, Ավստրիայում՝ ժողովրդական պաշտպան, Ֆրանսիայում՝ միջնորդ և այլն): Այդ ինստիտուտը համարվում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության խորհրդարանական ամենաարդյունավետ կառույցներից մեկը: Դա բացատրվում է վերջինիս ժողովրդավարական շատ հատկանիշներով՝ նրա անկախ լինելը, խորհրդարանի կողմից նշանակվելը, անվտոնիստությունը, օրենսդրական նախաձեռնության իրավունքը, քաղաքացիների համար մատչելիությունը, դիմում-զանգաստների ըննարկման ձևական ընթացակարգերի բացակայությունը, քաղաքացիներին անվճար օգնությունը և այլն:

2003 թ. հոկտեմբերի 21-ին Ազգային ժողովի ընդունած «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքով հիմք դրվեց «ombudsman»-ի ինստիտուտին հայ իրականության մեջ, իսկ 2005թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխություններով այն վերածվեց սահմանադրական ինստիտուտի: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.1 հոդվածի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Այդ իրավունքներն ու ազատությունները պաշտպանելիս նա կարող է անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամիավորումներ, անձանց հարկադիր պահման վայրեր, այդ թվում՝ նախնական կալանքի և ազատագրկման: Բացի այդ Պաշտպանը ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից իրավունք ունի պահանջել և ստանալ բոլորին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից կամ նրանց պաշտոնատար անձանցից և պետական ծառայողներից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ բոլորում արձարձված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, իրավասու պետական մարմիններին հանձնարարել՝ բոլորքում պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ անցկացնել փորձագիտական հետազոտություններ և պատրաստել եզրակացություններ, ծանոթանալ բոլորին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի:

Պաշտպանի որոշումները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից պարտադիր կատարման ենթակա չեն: Դրանք խորհրդատվական բնույթի են և առավելագույնս ունեն բարոյական ազդեցություն, ուստի չեն կարող հանգեցնել մեղավոր պաշտոնատար անձի պատասխանատվությանը: Սակայն

Պաշտպանը իրավասու է իրականացնել մի շարք գործողություններ, որոնք կարող են նպաստել նրա կողմից ընդունված որոշումների կատարմանը: Այսպես, **Պաշտպանը, անհրաժեշտության դեպքում, իր գործունեության վերաբերյալ հատուկ զեկույց է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին:** Այդ ճանապարհով նա մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործին փաստորեն ներգրավում է Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին:

Բացի այդ, Պաշտպանն իրավասու է, մարդու իրավունքների և ազատությունների մասին տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքների հիման վրա, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու դրանց պաշտոնատար անձանց ուղարկել խորհրդատվական բնույթի պարզաբանումներ և առաջարկություններ:

Չնայած այդ խորհրդատվական բնույթի պարզաբանումները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար պարտադիր իրավաբանական ուժ չունեն, սակայն դրանք արտահայտում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց բարոյական վարկն ու նրանց գործունեության վերաբերյալ հանրության կարծիքը: Դրանք կարող են մեծապես ազդել իրավախախտ մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց հեղինակության վրա:

§3. Իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը

Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմներից առավել տարածված ձևը դատական պաշտպանությունն է: Այն կարևորվում է ոչ միայն «Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, այլ նաև Մարդու իրավունքների հանընդիմանոր հռչակագրում, որի 8 հոդվածում գրված է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարվելու դեպքում, իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»:

Իշխանությունների բաժանման սկզբունքի հիման վրա պետական իշխանության մարմիններից հենց դատարանի վրա է դրված ինչպես անհատի իրավունքների, այնպես էլ պետության շահերի պաշտպանության առաքելությունը: Դատական իշխանության մարմինները կոչված են ապահովելու, մի կողմից, պետության և անհատի, մյուս կողմից, պետական

իշխանության մարմինների միջև փոխհարաբերությունների ներդաշնակությունը, որի խախտման արդյունքում, առաջին հերթին, ոսումահարվում են մարդու իրավունքներն ու ազատությունները:

Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական միջոցների շարքում դատական պաշտպանությունը առավել քաղաքակիրթ և արդյունավետ ձև է, քանի որ վերջինս իրականացվում է հրապարակայնորեն և հասարակայնության ներկայությամբ: Բացի այդ, դատարանի կողմից ցանկացած գործի կապակցությամբ կայացված որոշումը պարտադիր է կատարման ինչպես անհատի, այնպես էլ բոլոր պետական և ոչ պետական կազմակերպությունների կողմից:

Միջազգային իրավական ակտերով սահմանված մարդու իրավունքների դատական պաշտպանության սկզբունքն իր արտացոլումն է ստացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածում, ուր ասված է. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Սահմանադրության այդ նորմի կատարման համար անհրաժեշտ են մի շարք նախապայմաններ, որոնցից առավել կարևոր է օրենքի հիման վրա ստեղծված և անկախության ու անկողմնակալության պահանջները բավարարող դատարանի առկայությունը:

Առանձին կարևորություն ունի **դատարանի անդամների անկախության հարցը**: Միջազգային իրավունքում այն սովորաբար կապվում է դատավորների նշանակման կարգի, լիազորության ժամկետների և ետևանչման եղանակների, ինչպես նաև նրա գործունեության վրա արտաքին ճնշումների հնարավորության հետ: Ընդ որում դատարանների անդամների անկախության գլխավոր պայման է համարվում այն, որ նրանք չեն կարող ետ կանչվել գործադիր մարմինների կողմից իրենց լիազորությունների ժամկետի ընթացքում:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դատավորների թեկնածությունների ցուցակներում արդարադատության խորհրդի կողմից կարող են ընդգրկվել 22 տարին լրացած բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող ՀՀ այն քաղաքացիները, ովքեր սահմանված կարգով անցել են որակավորման ստուգում (ՀՀ դատական օրենսգրքի 116 և 117 հոդվ.): Միաժամանակ սահմանված է դատավորի անփոփոխելիության սկզբունքը, որը իրավունք ունի պաշտոնավարելու մինչև 65 տարին (Սահմանադրության 96 հոդվ.):

Դատավորների անփոփոխելիությունը, անշուշտ, նրանց անկախության համար կարևոր երաշխիք է: Մակայն հայտնի է, որ մինչև սահմանադրական փոփոխությունները (2005թ.) Հանրապետության գործադիր մարմինները էական ազդեցություն ունեին դատավորների նշանակման, ետևանչման և նրանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման հարցում, որն, ըստ էության, կասկածի տակ էր դնում նրանց անկախության հարցը: Ներկայումս Սահմանադրությամբ գործադիր իշխանությունը, հանձին արդարադատության նախարարի, որևէ ազդեցություն չունի դատական իշխանության ձևավորման վրա: Այդ իրավունքը վերապահված է բացառապես արդարադատության խորհրդին, որն օրենքով սահմանված կարգով կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակը և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները:

Մարդու իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության գործում դժվար է գերազանհատել **դատավորների անկողմնակալության** սկզբունքի դերը: Մովորաբար դատավորը համարվում է անկողմնակալ այնքան ժամանակ, քանի դեռ չի ապացուցվել հակառակը: Մակայն անկողմնակալության երևույթը շատ ավելի առարկայական է, տեսանելի, քան թվում է առաջին հայացքից: Անգլիական ասացվածքը հռչակում է. «Արդարադատությունը ոչ միայն պետք է իրականացվի, այլև տեսանելի լինի» (Justice must not be only done, it must also be seen to be done): Դա նշանակում է, որ արդարադատություն իրականացնելիս ցանկացած դատավոր պետք է վստահություն մերշնչի դատավարության մասնակիցներին, և եթե կան հիմքեր ենթադրելու, որ դատավորի կողմից խախտվել են անկողմնակալության պահանջները, ապա այդ դատավորը պետք է անմիջապես հանդես գա ինքնաբացարկով:

Հանցավորության կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի Յոթերորդ կոնգրեսի կողմից 1985 թ. ընդունվել են դատական մարմինների աշխատակիցների անկախության հիմնարար սկզբունքները, որոնք հաստատվել են ԵԱՀԿ-ի Մարդկային չափանիշի Խորհրդածողովի 1991 թ. Մոսկվայի խորհրդակցության կողմից: Այդ սկզբունքները մասնավորապես արգելում են դատավորների վրա ճնշում գործադրելը, երաշխավորում են նրանց անկախությունը և ծառայության համար բարենպաստ պայմանները, սահմանում նրանց որակավորման, ընտրության և պատրաստվածության չափանիշները¹⁹:

¹⁹ Տե՛ս ԵԱՀԿ-ի Մարդկային չափանիշի Խորհրդածողովի Մոսկվայի Խորհրդակցության փաստաթուղթը: Մարդու իրավունքները և դատավարությունը, էջ 239:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, հենվելով վերը նշված միջազգային փաստաթղթերի վրա, լուրջ նախադրյալներ է ամրագրում նրանցում բովանդակված պահանջների բավարարման կապակցությամբ: Այսպես, համաձայն Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների դատական պաշտպանության իրավունք:

Դատական պաշտպանությունը ճանաչելով մարդու իրավունքների իրականացման կարևոր երաշխիք, օրենսդիրը միաժամանակ հոգ է տարել նաև դատարանի գործունեության օրյեկտիվությունը ապահովող միջոցների սահմանման մասին, նկատի ունենալով, որ դատարանի վրա ճնշում կարող է գործադրվել մասնավորապես այն դեպքերում, երբ քննվում է պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների խախտման վերաբերյալ գործեր: Այդ առնչությամբ Սահմանադրության 97 հոդվածը հռչակում է. «Արդարադատություն իրականացնելիս դատավորը և սահմանադրական դատարանի անդամը անկախ են և ենթարկվում են միայն օրենքին»: Բացի այդ, ՀՀ դատական օրենսգիրքը սահմանում է, որ արդարադատություն իրականացնելիս դատավորը հաշվետու չէ որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի, և արգելում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու նրանց պաշտոնատար անձանց, կուսակցություններին, հասարակական միավորումներին և լրատվության միջոցներին՝ միջամտելու դատավորի գործունեությանը՝ դրա համար նախատեսելով պատասխանատվություն:

Մարդու իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության խնդրում կարևորվում է նաև **դատարան դիմելու մատչելիությունը**: Դա նշանակում է, որ իր իրավունքների պաշտպանությամբ զբաղվող յուրաքանչյուր անձ պետք է հասնի նրան, որ իր գործը քննվի դատարանում՝ առանց որևէ իրավական և գործնական խոչընդոտների:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով (հոդվ. 14), յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք (հոդվ. 18): Ընդ որում, Հանրապետությունում նախատեսված է դատական մարմինների կոնկրետ համակարգ, որը կոչված է իրականացնելու բոլորի համար միատեսակ դատական իշխանություն: Հանրապետությունում արտակարգ դատարանների ստեղծումն արգելված է (հոդվ. 92):

Սահմանադրությամբ ամրագրված անկողմնակալ դատարանի կողմից քաղաքացու գործի քննության իրավունքին համապատասխան՝ պե-

տությունը պարտավոր է ապահովել օրենքի և դատարանի առաջ քաղաքացիների հավասարության սկզբունքը և գործի քննությունը այնպիսի դատարանի կողմից, որն իր մասնագիտական որակով իրավասու է քննելու տվյալ գործը: Դատավորներին՝ կոնկրետ գործեր քննելու հարցով իրավասու լինելու խնդրի կապակցությամբ, ներկայացվող պահանջներն իրենց ամրապնդումն են ստացել ՀՀ դատական օրենսգրքում: Ըստ այդ օրենսգրքի, դատավորը անկախ է, չի թույլատրվում նրա գործունեությանը միջամտել, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար նախատեսվում է պատասխանատվություն, դատարանը ապաքաղաքականացված է, դատավորը անփոփոխելի և անձեռնմխելի է: Օրենսգրքում սահմանված են նաև դատավորի իրավունքներն ու պարտականությունները, նրա գործունեության նյութական ու սոցիալական երաշխիքները (բաժին 2):

Մարդու իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության կարևոր պայման է **գործերի քննության հրապարակայնությունը**: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք:

Գործի հրապարակային քննության իրավունքը նշանակում է, որ դատավարությանը կարող են ներկա գտնվել ինչպես տուժողի, այնպես էլ մեղադրյալի հարազատները, քաղաքացիներ, ուղիղի, հեռուստատեսության, մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների աշխատողներ, հասարակայնության ներկայացուցիչներ: Հրապարակայնության սկզբունքը նպաստ է հետապնդում պաշտպանելու անձին նրա նկատմամբ գաղտնի և հասարակության հսկողությունից դուրս իրականացվող դատավարությունից, որը կարող է գործի լուծման կապակցությամբ սուբյեկտիվ վերաբերմունքի հնարավորություն ընձեռել:

Դատական քննության հրապարակայնությունն ունի ևս մեկ կարևոր գործառույթ. այն օժանդակում է քաղաքացիների իրավական դաստիարակությանը և իրավագիտակցության ձևավորմանը, նրանց կողմից կատարվելիք իրավախախտումների նախագոյշացմանը: Արդյունքում նրանք ձգտում են առավելագույնս խուսափել ցանկացած բնույթի իրավական հակամարտությունից:

Դրա հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հնարավոր է համարում հանրության բարբեղի, հասարակական կարգի, պետական անվտանգության, կողմերի անձնական կյանքի

կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության արգելումը դատական քննության ընթացքում կամ նրա մի մասում (հոդվ. 19): Նման մոտեցումը չի կարելի դիտել որպես քաղաքացու գործի քննության հրապարակայնության սահմանադրական իրավունքի խախտում, քանի որ այն ունի դիպվածային և ժամանակավոր բնույթ: Սակայն այս դեպքում առաջանում է դատաքննությանը լրատվության միջոցների և հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությանը խոչընդոտող հանգամանքների պաշտոնական մեկնաբանման անհրաժեշտություն (օրինակ, ինչ պետք է հասկանալ «հանրության բարքեր», «պետական անվտանգություն», «արդարադատության շահ» և Սահմանադրության 19 հոդվածում թվարկված մյուս հանգամանքների տակ, որոնց առկայությամբ կարող է արգելվել լրատվության միջոցների և հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությունը գործի դատական քննությանը): Նման ճանապարհով կարելի կլինի խուսափել քաղաքացիների գործի քննության հրապարակայնության սկզբունքի հնարավոր խախտումներից և ապօրինի սահմանափակումներից:

Մարդու իրավունքների դատական պաշտպանությունը ի սկզբանե առոչինչ կլինի, եթե **գործի դատական քննությունը ամբողջ ծավալով չընթանա արդարության հունով**: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ճանաչում է յուրաքանչյուրի համար իր խախտված կամ վիճարկելի իրավունքների վերականգնման կապակցությամբ «արդարադատության բոլոր պահանջների պահպանմամբ» դատական քննության իրավունք (հոդվ. 19):

Դատական քննության արդարությունը ենթադրում է կողմերի համար հավասար պայմաններում մրցակցության ապահովում, գործի քննության այնպիսի ելք, որի արդարացիության մեջ երկու կողմերն էլ համոզված լինեն: Այն մեծ չափով կախված է գործը քննող դատավորի մասնագիտական որակից, բարոյական և մարդկային հատկանիշներից: Դրանք այնքան բարձր ու ազդեցիկ պետք է լինեն, որ կարողանան ցանկացած անձի համոզել նրա (դատավորի) կողմից ընդունված վճռի, դատավճռի կամ որոշման արդարացիությունը, որպեսզի անձը այլևս անհրաժեշտ չհամարի դիմելու վերադաս դատարան, կամ այլ ատյաններ:

Շատ ժողովուրդների լեզուներում «արդարադատություն» և «արդարություն» հասկացությունները արտահայտվում են մեկ բառով, կամ օգտագործվում են որպես հոմանիշներ: Որքան բարձր է արդարադատություն իրականացնող մարմինների հեղինակությունը, որքան ինքնուրույն և անկախ են նրանք պետական իշխանության մարմինների համակար-

գում, այնքան բարձր է երկրում օրինականության և ժողովրդավարության մակարդակը, այնքան հուսալի է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ամեն տեսակ ոտնձգություններից:

§ 4. Իրավունքների և ազատությունների միջազգային իրավական պաշտպանությունը

Պետությունները, որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ, անմիջական պարտականություն են կրում իրենց ստանձնած պայմանագրային, այդ թվում՝ մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական բնույթի պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Նրանք այդ պարտավորությունները կատարում են, գլխավորապես, **միջազգային իրավունքի նորմերը ներպետական իրավունքի նորմերի վտխակեցվելու և դրանց իրականացումն ապահովելու ճանապարհով**: Սակայն, նկատի ունենալով, որ միջպետական հարաբերություններում չկա մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ նորմերի և սկզբունքների հարկադրական կատարումն ապահովող հատուկ միջազգային մարմին, ուստի պետությունները ստեղծել են դրանց **կատարման վերահսկողությունն իրականացնող** միջազգային որոշակի համակարգ:

Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության համակարգը և՛ ձևի, և՛ բովանդակության առումով բավականին բաղդ ու բազմաբնույթ է, որտեղ հսկողական գործառույթներով օժտված են ինչպես **միջազգային համընդգրկուն (ունիվերսալ), այնպես էլ տարածաշրջանային մարմինները**:

Այդ մարմինների գլխավոր խնդիրն է միջազգային հանրության անունից հսկողություն իրականացնել պետությունների կողմից մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավական պարտավորությունների կատարման նկատմամբ, ինչպես նաև տարբեր ձևերով ու մեթոդներով նրանց աջակցել այդ հարցում:

Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության համակարգում գլխավոր դերը պատկանում է **Միավորված ազգերի կազմակերպությանը**: ՄԱԿ-ի կանոնադրության մի շարք հոդվածներ, որոնք նվիրված են մարդու իրավունքների պաշտպանության հիմնահարցերին, միաժամանակ սահմանում են այս ոլորտում ՄԱԿ-ի վերահսկողական գործառնությունները: Նման գործառնություններով օժտված են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան, Տնտեսական և սոցիալական խորհուրդը, Մարդու իրավունքների հանձնաժողովը, Կամանց իրավունքների հանձնաժողովը, Փոքրամասնությունների խտրականության արգելման և պաշտպանու-

յան ենթահանձնաժողովը, Մարդու իրավունքների կենտրոնը, որի գործունեությունը կանոնակարգում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալը: **ՄԱԿ-ի կանոնադրության 55 հոդվածում նշվում է, որ Միավորված ազգերի կազմակերպությունը քաջալերում է՝ «բոլորի համդեպ և բոլորի համար համընդհանուր հարգանք և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների պահպանում՝ անկախ ցեղից, սեռից, լեզվից կամ դավանանքից»:**

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան, որպես ՄԱԿ-ի հիմնական մարմին, համաձայն նրա կանոնադրության 13 հոդվածի, տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական և առողջապահության ոլորտներում միջազգային համագործակցությունը խթանում է և առանց ցեղային, սեռի, լեզվի ու դավանանքի տարբերակման՝ բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների իրագործմանը նպաստելու նպատակով **նախաձեռնում է ուսումնասիրություններ և ներկայացնում հանձնարարականներ:** Գլխավոր ասամբլեան կարող է մարդու իրավունքների վերաբերյալ հարցերը քննել ինչպես անմիջականորեն, այնպես էլ իր կոմիտեների միջոցով: Նա այդ հարցերի մեծ մասը, որպես կանոն, հանձնում է **երրորդ կոմիտեին**, որն զբաղվում է սոցիալական, մարդասիրական և մշակութային հիմնահարցերով:

Մարդու իրավունքների պաշտպանության հարցերով Գլխավոր ասամբլեան ունի նաև լրացուցիչ մարմիններ, որոնք են՝ **ապագադուրացման հատուկ կոմիտեն**, ՄԱԿ-ի **Նամիբիայի վերաբերյալ խորհուրդը**, **ապարտեհի դեմ հատուկ խորհուրդը** և այլ մարմիններ:

Տնտեսական և սոցիալական խորհուրդը, ՄԱԿ-ի կանոնադրության 62 և 64 հոդվածներին համապատասխան, կարող է հանձնարարականներ ներկայացնել բոլոր պետություններին՝ մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքն ու դրանց պահպանումը խթանելու համար, ինչպես նաև ՄԱԿ-ի անդամներից և մասնագիտական հաստատություններից **զեկուցագրեր պահանջել** իր հանձնարարականների կատարման առնչությամբ: Այդ զեկուցագրերի վերաբերյալ կարող է իր դիտողությունները հայտնել Գլխավոր ասամբլեային: Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է նշված հարցերով համաձայնագրերի նախագծեր պատրաստել՝ Գլխավոր ասամբլեային ներկայացնելու համար: Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 68 հոդվածի, Տնտեսական ու սոցիալական խորհուրդը իրավասու է հիմնել տնտեսական, սոցիալական և մարդու իրավունքների քաջալերման բնագավառների հանձնախմբեր:

Տնտեսական և սոցիալական խորհուրդը, որը կազմված է 54 անդամներից, տարեկան անցկացնում է, որպես կանոն, մեկ կազմակերպական բնույթի նստաշրջան և երկու հերթական նստաշրջան:

Մարդու իրավունքների հանձնաժողովը ստեղծվել է 1946 թ., որը մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող գլխավոր մարմինն է: Նա կատարում է Գլխավոր ասամբլեայի, ինչպես նաև Տնտեսական և սոցիալական խորհրդի հատուկ հանձնարարականները՝ նախապատրաստում է մարդու իրավունքների հարցերով ուսումնասիրություններ, հանձնարարականներ և միջազգային փաստաթղթերի նախագծեր: Հանձնաժողովը քննության է առնում մարդու իրավունքների խախտման վերաբերյալ դիմումները և զբաղվում նման խախտումների մասին հաղորդումների քննարկումներով: Սակայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 2006թ. մարտի 15-ին իր 72-րդ լիազումար նիստում որոշեց Մարդու իրավունքների հանձնաժողովի փոխարեն հիմնել Մարդու իրավունքների խորհուրդ՝ որպես Գլխավոր ասամբլեայի օժանդակ մարմին:

Մարդու իրավունքների խորհուրդը կոչված է նպաստելու բոլոր մարդկանց իրավունքների և ազատությունների համընդհանուր հարգանքը և պաշտպանությանը առանց որևէ տարբերության՝ արդարության և իրավահավասարության հիման վրա:

Խորհուրդը քննության է առնում այն իրավիճակները, որոնք կապված են մարդու իրավունքների խախտման հետ, այդ թվում՝ կոպիտ և շարունակական խախտումները, և դրանց կապակցությամբ ընդունում է հանձնարարականներ: Այն իր աշխատանքի ընթացքում պետք է ղեկավարվի ունիվերսալության, անկողմանակության, օբյեկտիվության, ոչ ընտրովիության և կառուցողական միջազգային երկխոսության սկզբունքներով:

Մարդու իրավունքների խորհրդի կազմի մեջ են մտնում 47 անդամ պետություններ, որոնցից յուրաքանչյուրն ընտրվում է Գլխավոր ասամբլեայի մեծամասնության կողմից ուղղակի գաղտնի քվեարկությամբ: Խորհրդի անդամները պետք է ընտրվեն արդարացի աշխարհագրական բաշխման սկզբունքի հիման վրա: Խորհրդի աշխատանքի մեթոդները պետք է լինեն թափանցիկությունը, արդարությունը և անկողմնակալությունը:

Փոքրամասնությունների խտրականության արգելման և պաշտպանության ենթահանձնաժողովը հիմնվել է Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից՝ 1947թ.: Ենթահանձնաժողովի նպատակն է հանձնաժողովին ներկայացնելու համար հետազոտություններ անցկացնել և առաջարկություններ նախապատրաստել՝ կապված մարդու իրավունքների և հիմնական ազատությունների ոլորտում ցանկացած բնույթի ռասայա-

կան, ազգային, կրոնական և լեզվական խտրականության կանխման հետ: Ենթահանձնաժողովը կոչված է կատարելու մաս ցանկացած այլ գործառույթներ, որ նրա վրա կարող է դնել Տնտեսական և սոցիալական խորհուրդը կամ Մարդու իրավունքների հանձնաժողովը:

Ենթահանձնաժողովը կազմված է 26 անդամից, որոնք ընտրվում են Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից՝ չորս տարի ժամկետով: Թեև ենթահանձնաժողովի անդամներն ընտրվում են ՄԱԿ-ի անդամ պետությունների առաջադրած փորձագետների թեկնածուներից, սակայն հանդես են գալիս ոչ թե որպես պետության ներկայացուցիչ, այլ անձնական հասկանիչներով:

Ենթահանձնաժողովը իր լիազորությունների շրջանակում իրականացրած գործունեության այդուցեով կարող է ընդունել **բանաձևեր ու որոշումներ**: Ենթահանձնաժողովը տարեկան նստաշրջանների ընթացքում կատարված աշխատանքի մասին զեկույց է ներկայացնում Մարդու իրավունքների հանձնաժողովին:

Կանանց իրավունքների հանձնաժողովը ստեղծվել է 1946թ.: Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից: Նա լիազորված է կանանց քաղաքական, տնտեսական, քաղաքացիական, սոցիալական և մյուս իրավունքների պաշտպանության խրախուսման վերաբերյալ առաջարկություններ և զեկույցներ նախապատրաստել Տնտեսական և սոցիալական խորհրդի համար, ինչպես նաև խորհրդին առաջարկություններ ներկայացնել կանանց իրավունքների առավել հրատապ և շուտափույթ լուծում պահանջող հիմնահարցերի վերաբերյալ:

Հանձնաժողովը կազմված է ՄԱԿ-ի անդամ 32 պետությունների ներկայացուցիչներից, որոնք ընտրվում են Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից՝ չորս տարով: Հանձնաժողովի նիստերը, սովորաբար, գումարվում են երկու տարին մեկ անգամ՝ նստաշրջանի ձևով, երեքշաբաթյա տևողությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում կարևոր լիազորություններով են օժտված նաև **միջազգային պայմանագրերի ու կոնվենցիաների հիման վրա ստեղծված մարմինները**: Դրանցից կարելի է հիշատակել՝ **Մարդու իրավունքների կոմիտեն, Ռասայական խտրականության վերացման կոմիտեն, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների գծով կոմիտեն, Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն, Խոշտանգումների դեմ կոմիտեն, Ապարտեիդի հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին 1973 թ. կոնվենցիայի հիման վրա ստեղծված «Երեքի խումբը» և այլն:**

Մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավական նորմերի և սկզբունքների կատարման նկատմամբ վերահսկո-

ղական գործառույթներով են **օժտված նաև ՄԱԿ-ի մասնագիտացված կազմակերպությունները**: **Դրանցից կարելի է հիշատակել՝ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը, Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և այլն:**

Մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվում է նաև ՄԱԿ-ի կառուցվածքի մեջ մտնող և նրա գլխավոր քարտուղարի տեղակալի կողմից ղեկավարվող **Մարդու իրավունքների կենտրոնը**, որը գտնվում է Ժնևում: Վեց սեկցիաներից բաղկացած այդ Կենտրոնի նպատակն է Գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի մյուս մարմիններին աջակցել մարդու իրավունքների պաշտպանության հարցերում:

Հայաստանի Հանրապետությունը միացել է վերը նշված միջազգային համընդգրկուն պայմանագրերին ու կոնվենցիաներին, ինչպես նաև անդամակցում է միջազգային միջկառավարական հիշատակված կազմակերպություններին:

Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության մեխանիզմներ գործում են նաև տարածաշրջանային մակարդակով: **Կարելի է ասել, որ դրանց մեջ առավել արդյունավետը** Եվրոպայի խորհրդի **համակարգում գործող հսկողության տարրերակն է, որի համաձայն** քաղաքացիները կարող են իրենց իրավունքների պաշտպանության նպատակով դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան և որի որոշումներն ունեն պարտադիր բնույթ:

Հարկ է նկատել, որ գնալով մեծանում է միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների դերը մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության գործում:

§ 5. Իրավունքների և ազատությունների ինքնապաշտպանությունը

Իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում պետության պայտականությունը սահմանելուց զատ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը իրավունք է վերապահում նաև յուրաքանչյուր մարդու անձամբ պաշտպանելու իր իրավունքներն ու ազատությունները՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով (հոդվ. 18): Այդ միջոցները բազմաթիվ են ու բազմազան, որոնց թվում գործնականում առավել հանդիպող և կիրառական են՝ **պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության բողոքարկումը**, զանգվածային լրատվության միջոցներին դիմելը, իրավապաշտպան կազմակերպությունների և հասարակական միավորումների (արհմիությունների և մարդու իրավունք-

ների պաշտպանությանը զբաղվող այլ կազմակերպությունների) օգնությանը դիմելը, **զենքի գործադրմանը** իր իրավունքների պաշտպանությունը և այլն:

Իրավական պետության մեջ պետք է նախատեսվի այնպիսի ընթացակարգ, որը հնարավորություն ընձեռի մարդուն և քաղաքացուն վեճի մեջ մտնելու պետական մարմինների (այդ թվում օրենսդիր մարմնի) և նրանց պաշտոնատար անձանց հետ՝ իր իրավունքների մասին: Այդ վեճի առարկա կարող է լինել **պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման կամ գործողության (անգործության) իրավականությունը**, որը առնչվում է իրավունքներին և ազատություններին:

Բողոքարկման օբյեկտը, որպես կանոն, որոշվում է օրենսդրի կողմից՝ այն մարմինների, կազմակերպությունների, անձանց (պաշտոնատար) շրջանակը սահմանելու ճանապարհով, որոնց որոշումները և գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել դատարան: Օրենքով սահմանվում են նաև այն պայմանները, որոնց առկայությունը հիմք է հանդիսանում բողոքարկելու այդ որոշումներն ու գործողությունները:

Ռուսաստանի Դաշնությունում, ինչպես վերը նշվեց, դեռևս 1993թ. ապրիլի 27-ին ընդունվել է «Քաղաքացիների իրավունքները և ազատությունները խախտող որոշումները և գործողությունները դատարան բողոքարկելու մասին» օրենքը: Նման բովանդակությանը օրենքներ վաղուց ի վեր ընդունվել և գործում են արտասահմանյան բազմաթիվ երկրներում: Հայաստանի Հանրապետությունում այդպիսի օրենքի բացակայությունը մեծ չափով խոչընդոտում է քաղաքացիների կողմից պետական մարմինների և պաշտոնատար անձանց՝ քաղաքացիների իրավունքները և ազատությունները ոտնահարող որոշումների և գործողությունների (անգործության) բողոքարկմանը դատարան: Մասնավորապես, քաղաքացիների ճնշող մեծամասնության համար չորջ ոժժվաբություն կարող է հարուցել այն հարցը, թե որ պետական մարմնի, կամ որ պաշտոնատար անձի հատկապես որ որոշումը կամ գործողությունը (առավել ևս՝ անգործությունը) կարելի է բողոքարկել դատարան:

Իրավունքների և ազատությունների ինքնապաշտպանության կարևոր եղանակ է **անհրաժեշտ պաշտպանությունը**, որի դեպքում օրենքը թույլատրում է զենքի գործադրում: «Չենքի մասին» 1998թ. հունիսի 3-ի օրենքը քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում ձեռք բերելու զենքի որոշ տեսակներ՝ ոստիկանության իրավասու մարմնի կողմից տրված լիցենզիայի հիման վրա: Քաղաքացին իրավունք ունի ձեռք բերելու որսորդական երկարափող որոշակ հրազեն, գազային ատրճանակ, ազդանշանային զենք, որոնք եմթակա են գրանցման ոստիկանության հա-

մապատասխան մարմնում՝ երկշաքաթյա ժամկետում: Օրենքը նախատեսում է, որ ՀՀ քաղաքացիները օրինական հիմքով իրենց մոտ գտնվող զենքը կարող են գործադրել կյանքի, առողջության և սեփականության պաշտպանության համար՝ միայն **անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում**:

Դրա հետ մեկտեղ, շնախատեալված և շրջապատի համար վտանգավոր հետևանքներից խուսափելու նպատակով օրենքը զենք գործադրելու իրավունքի բազմաթիվ սահմանափակումներ է նախատեսում: Չենքը գործադրողը պետք է նախապես նախազգուշացնի այն անձին, ում նկատմամբ գործադրում է զենքը, բացառությամբ այն դեպքերի, երբ գործադրման ձգձգումը կարող է անմիջական վտանգի տակ դնել մարդկանց կյանքը, առաջացնել այլ ծանր հետևանքներ:

Օրենքը **արգելում է** հրազենի գործադրումը **կանանց, հաշմանդամների և անչափահասների նկատմամբ**, եթե վերջիններիս տարիքն ակնհայտ է կամ հայտնի է հրազեն գործադրողին, բացառությամբ նրանց կողմից զինված կամ խմբակային հարձակման կամ զինված դիմադրության դեպքերի: Չի թույլատրվում զենքի գործածությունը մարդկանց գզալի **կուտակումների ժամանակ**, երբ հրազենի գործադրումից կարող են տուժել այլ անձինք: Եթե զենքի գործադրման հետևանքով վնաս է պատճառվել մարդու առողջությանը, ապա զենք գործադրողը պարտավոր է անհապաղ, քայք ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում այդ մասին հայտնել տվյալ վայրի ոստիկանության մարմնին (հոդվ. 24):

Օրենքը բազմաթիվ նախնական պայմաններ է սահմանում նաև քաղաքացիների կողմից զենքի ձեռքբերման, հաշվառման և կրելու կապակցությամբ (հոդվածներ 6, 9, 13, 14, 22, 26 և այլն):

§ 6. Իրավաբանական օգնության և պաշտպանություննալու իրավունքը

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը սահմանադրական իրավունքի տեսանկյունից կարելի է մեկնաբանել՝ ա) լայն և բ) նեղ առումներով:

Լայն առումով իրավաբանական օգնությունն ընդգրկում է պետական մարմինների, ձեռնարկությունների, կազմակերպությունների իրավաբանական ծառայությունները, իրավաբանական խորհրդատվությունը, քրեական, քաղաքացիական և վարչական վարույթներում իրականացվող փաստաբանական ծառայությունը:

Նեղ առումով իրավաբանական օգնության իրավունքի տակ հասկացվում է քրեական, քաղաքացիական և վարչական վարույթներում իրականացվող փաստաբանական ծառայությունը: Այդ իրավունքը ենթադրում է, որ որակյալ իրավաբանական ծառայության կարիք ունեցող յուրաքանչյուր անձ կարող է դիմել փաստաբանի և ստանալ համապատասխան օգնություն: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թ. դեկտեմբերի 14-ին ընդունված «Փաստաբանության մասին» օրենքի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի օրինական շահերի պաշտպանությանը օրենքով չարգելված միջոցներով ու եղանակներով: Այն իր մեջ ներառում է վատահորդներին խորհրդատվություն տրամադրելը, նրանց իրավունքների ու պարտավորությունների, դատական համակարգի՝ վստահորդների իրավունքներին առնչվող գործունեության կապակցությամբ փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը, ներկայացուցչությունը՝ ներառյալ դատական ներկայացուցչությունը և քրեական գործերով պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20 հոդվածի առաջին մասի շարադրանքից պարզորոշ երևում է, որ յուրաքանչյուր անձի վերապահելով իրավաբանական օգնության իրավունք՝ Սահմանադրությունը նկատի ունի դրա իրացումը նեղ առումով: Խնդիրն այն է, որ բոլոր տեսակի իրավաբանական ծառայությունները (ինչպես պետական և ոչ պետական կազմակերպություններում, այնպես էլ քրեական, քաղաքացիական ու վարչական վարույթներում) իրականացվում են **վճարովի հիմունքներով**: Մինչդեռ Սահմանադրության 20 հոդվածը (2-րդ մաս) պահանջում է օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնություն ցույց տալ **անվճար**: Իսկ անվճար իրավաբանական օգնությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (հոդվ. 10) հիման վրա կասկածյալին կամ մեղադրյալին կարող է տրամադրել միայն քրեական վարույթն իրականացնող մարմինը՝ ելնելով նրանց **գույքային դրությունից**:

Այսպիսով, կարելի է ասել, որ իրավաբանական օգնության իրավունքը, որպես մարդու իրավունքների և ազատությունների ապահովման **իրավական երաշխիք**, առավելապես վերաբերում է այն անձանց, որոնք ձերբակալվել են հանցագործություն կատարելու կասկածանքով: Հենց այդ կատեգորիայի անձանց, (որոնք գտնվում են նյութապես անապահով վիճակում) իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն է, որի ապահովումը համարվում է պետության պարտականությունը:

Խնդիրն այն է, որ ոչ բոլոր քաղաքացիներն են հաղորդակից Հայաստանի Հանրապետության դատավարական իրավունքի սկզբունքներին ու նորմերին և կարող են ինքնուրույն պաշտպանել իրենց իրավունքները: Մինչդեռ ոչ միշտ է, որ անձի ձերբակալումը՝ հանցագործություն կատարելու կասկածներով, կարող է արդարացի լինել, և քննչական մարմինների գործողությունները այդպիսի իրավիճակներում կարող են խախտել մարդու իրավունքները և ազատությունները: **Փաստաբանի մասնակցությունը** քրեական վարույթի սկզբնական փուլում, ճիշտ է, դժվարացնում է նախաքննությունը, սակայն կարող է էապես նպաստել գործի հանգամանքների բացահայտմանը, քննչական գործողությունների իրականացմանը՝ օրենքին համապատասխան, ինչպես նաև անձի անմեղության ապացուցմանը: ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում մասնաձև կարգավորվում են փաստաբանի իրավունքներն ու գործողությունները քրեական դատավարության բոլոր փուլերում:

§ 7. Անմեղության կանխավարկածը

Անմեղության կանխավարկածը, որպես **սահմանադրական երաշխիք**, նույնպես կոչված է ապահովելու հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձի իրավունքներն ու ազատությունները: Այն իր ամբողջումն է ստացել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդվ. 11), «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում (հոդվ. 14), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական դաշնագրում (հոդվ. 6) և ժողովրդավարական կարգ ունեցող երկրների սահմանադրություններում:

Անմեղության կանխավարկածից բխում է, որ իրենց պարտականությունները կատարելիս նախաքննության և դատաքննության մարմինները չպետք է գործին մոտեման կանխավ ձևավորված կարծիքով՝ թե կասկածյալը, մեղադրյալը կամ ամբաստանյալը կատարել է այն հանցագործությունը, որում մեղադրում են նրան՝ այնքան ժամանակ, քանի դեռ չի ապացուցվել նրա մեղքը: Իսկ հանցագործություն կատարելու մեջ անձի մեղավորությունը կարող է որոշել միայն դատարանը՝ այդ կապակցությամբ ընդունելով մեղադրական դատավճիռ, որը հիմք է հանդիսանում պատասխանատվության համար՝ օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո (Սահմանադրության 21 հոդվ.):

Այդ սկզբունքը հանդիսանում է արդարադատության իրականացման անկյունաքարը: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (հոդվ. 3 և 4) պարտավորեցնում է դատարանին, դատախազին, քննիչին և հետաքննության մարմնին՝ պարզելու հանցագործության դեպքը, հայտնաբերելու հանցագործության կատարման մեջ մեղավոր անձանց և նրանց ենթարկել պատասխանատվության՝ օրենքով սահմանված հիմունքներով և կարգով: Հետևաբար, անմեղության կանխավարկածից բխում է, որ անձի նկատմամբ մեղադրանք առաջադրելով՝ հետաքննության և նախաքննության մարմինները իրենք են պարտավոր ապացուցել նրա մեղավորությունը: Ընդ որում, չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի: Խոսքը վերաբերում է այն փաստերին, հանգամանքներին ու տեղեկություններին, որոնց բազմակողմանի ուսումնասիրության և ստուգումների արդյունքում հնարավոր չէ ապացուցել անձի մեղավորությունը: Անգամ անձի ինքնախոստովանությունը՝ հանցագործություն կատարելու մասին, չի կարող հիմք հանդիսանալ մեղադրական դատավճիռ արձակելու համար, եթե այն հիմնավորված չէ ծանրակշիռ ապացույցների համակցությամբ: Նման դեպքերում հետաքննության կամ նախաքննության մարմինը պարտավոր է կարճել գործը և հայտարարել անձին անմեղ, իսկ եթե գործը գտնվում է դատաքննության փուլում, ապա դատարանը պարտավոր է կայացնել արդարացնող դատավճիռ:

Անմեղության կանխավարկածը որոշում է մեղադրյալի իրավական վիճակը ոչ միայն քրեական դատավարությունում, այլև բոլոր այն հասարակական հարաբերություններում, որոնցում մա հանդես է գալիս որպես մասնակից: Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը մեղադրյալի համար, երբ նույնիսկ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, պահպանվում են մարդու աշխատանքային, ընտանեկան և մյուս իրավունքներն ու ազատությունները: Սահմանադրական այդ նորմը (հոդվ. 21), որպես ուղղակի գործողության նորմ, արգելում է առանց դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրող դատավճռի որևէ մեկին վերաբերել որպես իրավախախտման մեջ մեղադրվող անձի:

Այլ է խնդիրը, երբ առկա են տվյալ մեղադրյալի կողմից կատարված հանցագործության վերաբերյալ հիմնավոր կասկածներ: Այդ դեպքում նախատեսվում է անձի որոշ իրավունքների (օրինակ, ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության) սահմանափակման հնարավորություն՝ օրենքով նախատեսված կարգով:

Անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքի բոլոր պահանջները կոչված են նպաստելու արդարադատության իրականացման մեկ կարևոր խնդրի լուծմանը՝ *արգելել մեղադրելու անմեղներին*:

§8. Օրենքի հետադարձ ուժի արգելումը

Ժամանակակից ժողովրդավարական կարգ ունեցող երկրների սահմանադրությունները ամրագրում են պատժի անհատականացման սկզբունքը: Դա նշանակում է, որ ամեն մարդ քրեական պատասխանատվության պետք է կանչվի հենց իր կատարած հանցագործության համար, որի նկատմամբ կիրառվող պատժաչափը պետք է համարժեք լինի իրավախախտման ծանրությանը: Այդ պահանջն իր ամրագրումն է ստացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 22 հոդվածում (3-րդ մաս), ուր ասված է. «Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության պահին գործող օրենքով»:

Սահմանադրությունը արգելում է նաև հանցագործության մեջ մեղավոր ճանաչել մարդուն, եթե արարքի պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել (4-րդ մաս): Այսինքն, եթե որևէ արարք քրեական օրենքով չի նախատեսված (հետևաբար, քրեաիրավական առումով հակաօրինական չէ), ապա անկախ դրա վտանգավորության աստիճանից, այն չի կարող հանցագործություն համարվել և դրա կատարողին չի կարելի պատժի ենթարկել: Միայն օրենսդիրն է իրավասու որոշելու, թե որ արարքն է համարվում հանրորեն վտանգավոր և այդ կապակցությամբ ընդունելու օրենք՝ նրանում նման արարքների հեղինակների նկատմամբ սահմանելով համապատասխան պատժամիջոցներ:

Հասարակական հարաբերությունների զարգացումը հաճախ առաջացնում է գործող օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն: Կախված հասարակական պահանջումեցներից և հարաբերության օբյեկտի առանձնահատկություններից՝ փոփոխությունները կարող են, մի դեպքում, ընթանալ այս կամ այն արարքի վերաբերյալ պատասխանատվության մեղմացման, մեկ այլ դեպքում՝ խստացման ուղությամբ: Եվ կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ պատիժը կրող անձը կարող է ենթարկվել ավելի խիստ պատժամիջոցի, եթե օրենքը խստացրել է պատասխանատվությունը նրա կողմից նախկինում կատարված հանցագործության կապակցությամբ: Կան անձը նախկինում կատարել է արարք, որի համար օրենսդրությամբ պատասխանատվություն չի նախատեսվել, սակայն նոր ընդունված օրենքով այդ արարքը որակվել է որպես

հանցագործություն, որի արդյունքում վերջինս կարող է հայտնվել քանտում: Նման արտառոց իրավիճակից մարդուն երաշխավորելու համար Սահմանադրությունը ամրագրում է նորմ, որի ուժով «Պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

Մինչդեռ, եթե ընդունվում է նոր օրենք (կամ կրում է փոփոխություն), որը վերացնում կամ մեղմացնում է պատիժը, ապա, ելնելով մարդասիրության սկզբունքից, ճանաչվում է օրենքի հետադարձ ուժը: Այսպես, ՀՀ Սահմանադրության 22 հոդվածում գրված է. «Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը հետադարձ ուժ ունի»: Կան նշանակում է, որ նման օրենքների գործողությունը տարածվում է նաև դրա հրապարակումից առաջ կատարված արարքների վրա:

Օրենքի գործողության այդ կանոնը ամրագրված է նաև ՀՀ քրեական դատավարության, վարչական իրավախախտումների մասին և աշխատանքային օրենսգրքերում ու այլ օրենսդրական ակտերում: Բացառություն են կազմում ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (հոդվ. 5) և քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (հոդվ. 1), որոնք մերժում են նշված ոլորտներում օրենսդրական ակտերի՝ հետադարձ ուժ ունենալու հնարավորությունը: Խնդիրն այն է, որ քաղաքացիաիրավական հարաբերությունների կողմերը քաղաքացիներ են կամ իրավաբանական անձինք, ուստի նոր ընդունված օրենքի կիրառությունը, մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների նկատմամբ, եթե կողմերից մեկի համար ընդունելի լինի, ապա մյուս կողմի շահերին անպայման վնաս կպատճառի:

ԳԼՈՒԽ 14.

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՅՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. Սահմանադրական պարտականությունների հասկացությունը և հիմնական գծերը

Անձի իրավական վիճակը, իրավունքներից ու ազատություններից զատ, բնութագրվում է նաև նրա պարտականություններով: Դրանով է քացատրվում, որ Սահմանադրության 2 գլուխը (Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները), չնայած իր անվանման մեջ նշում չի բովանդակում պարտականությունների մասին, սակայն հենց այդ գլխի տակ են ամրագրված (45-47 հոդվ.) մարդու և քաղաքացու հիմնական պարտականությունները: Իրականում պետականորեն միավորված հասարակության մեջ անհնար է պատկերացնել մարդուն, որն ունի միայն իրավունքներ ու ազատություններ և ընդհակառակը՝ միայն պարտականություններ:

Մարդու բնական և անօտարելի իրավունքների գաղափարը էլնում է նրանից, որ հիմնադրելով պետություն, պետական իշխանություն, մարդիկ *օտարում են նրա օգահն իրենց բնական ազատությունների որոշ մասը* և այդ սահմաններում *պարտավորվում են ենթարկվել իրենց ստեղծած պետական իշխանությանը*: Այդ ճանապարհով, փաստորեն, պետության և անհատի միջև ստեղծվում է երկու տեսակ հարաբերություն: *Մի դեպքում*, մարդը պետական իշխանության նկատմամբ ունի բնական իրավունքներ և ազատություններ, որոնց համապատասխանում է *պետության անվերապահ պարտականությունը*՝ ճանաչել, պահպանել և պաշտպանել այդ իրավունքներն ու ազատությունները, *մյուս դեպքում*, որպեսզի պետությունը կարողանա պաշտպանել հասարակության անդամների ազատությունը, անվտանգությունն ու սեփականությունը և լուծի սոցիալական խնդիրներ, *նա պետք է օժտված լինի հրամայելու, թելադրելու, հարկադրանք կիրառելու* իրավասությամբ: Ահա այդ երկրորդ տեսակի հարաբերությունների շրջանակներում պետությունն ունի իրավունք՝ ընդունել օրենքներ, իսկ հասարակության անդամները՝ պարտականություն՝ *պահպանելու այդ օրենքները*:

Փաստորեն ստացվում է, որ մարդը (քաղաքացին) պետության հանդեպ չունի այլ պարտականություն, քան պահպանել սահմանադրությունը

և օրենքները: Ընդ որում, *օրինապահ լինելու հանգամանքը պարտադիր է այնքանով, որքանով որ օրենքները չեն խախտում նրա բնական և անօտարերի իրավունքները*: Այսպես, *օրենքով սահմանված հարկերը, եթե չափից ավելի են*, կարող են մեկնաբանվել որպես սեփականության իրավունքի բովանդակությանը հակասող, չնայած ամրագրված է հարկեր վճարելու սահմանադրական պարտականությունը: Այսինքն՝ կարելի է Սահմանադրության մեջ անգամ չամրագրել առանձին պարտականություններ (հարկեր, տուրքեր մուծելը, այլոց իրավունքներն ու ազատությունները հարգելը, երեխաներին ու ծնողներին խնամելը և այլն), *այլ բավարարվել միայն Սահմանադրությունը և օրենքները հարգելու պարտականությամբ*, որովհետև ցանկացած պարտականություն, որը չի հակասում բնական իրավունքներին ու ազատություններին, օրինական է այնքանով, որքանով որ այն նախատեսված է օրենքով:

Մարդու բնական իրավունքների գաղափարի տեսանկյունից պարտականությունները հանդիսանում են զուտ օրենսդրի կամադրատախայտության արդյունք: Եթե *իրավունքներն ու ազատություններն ունեն բնական ծագում*, այսինքն՝ կախված չեն օրենսդրի կամքից, ապա *պարտականությունները սահմանվում են օրենսդրի հայեցողությամբ*՝ հաշվի առնելով տվյալ պահին հասարակության պահանջումները: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 46 հոդվածը Հանրապետության *պաշտպանությանը* մասնակցելը համարում է յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունը: Իսկ եթե օրենսդիրը գտնի, որ հայրենիքին անհրաժեշտ է պրոֆեսիոնալ բանակ, ապա նա կարող է սահմանափակվել պրոֆեսիոնալ սկզբունքով բանակում ծառայելու վերաբերյալ պահանջի ձևակերպմամբ:

Մարդու և քաղաքացու պարտականություններն առնչվում են հասարակական բազմաբնույթ հարաբերությունների ամենատարբեր ոլորտների հետ: Դրանք *իրենց բնույթով շատ խայտաբղետ են*: Կան պարտականություններ, որոնք արդյունք են պետության քաղաքացիությանը պատկանելուն և *վերապահվում են միայն քաղաքացիներին*: Կան պարտականություններ, որոնք վերագրվում են պետության տարածքում ապրող *բոլոր անձանց*: Որոշ պարտականությունների գոյությունը պայմանավորված է անձի իրավական վիճակի բնույթով (բանվոր, ծառայող, սովորող, սեփականատեր, մեղադրյալ, պաշտպան և այլն), ուրիշների գոյությունը՝ այս կամ այն *կազմակերպության կամ միավորման* (քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային և այլն) *անդամ լինելու* փաստով: Այդ կապակցությամբ պարտականությունները կարող են կարգավորվել ինչպես իրավունքի բոլոր ճյուղերի նորմերով, այնպես էլ հասա-

րակական կամ քաղաքական կազմակերպությունների կանոնադրություններով, որոնք չունեն իրավական բնույթ:

Սահմանադրաիրավական պարտականություններն էապես տարբերվում են ինչպես իրավունքի մյուս ճյուղերի կողմից, այնպես էլ ոչ իրավական ակտերով սահմանված պարտականություններից:

Առաջին, սահմանադրական իրավունքով ամրագրված է *անձի, որպես սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտի* (ընտրող, պատգամավոր, պետական իշխանության մարմինների և պետական ինքնակառավարման մարմինների ծառայող և այլն), պարտականությունների շրջանակը:

Երկրորդ, սահմանադրական իրավունքով ամրագրվում են ոչ թե մարդու և քաղաքացու պարտականություններն ընդհանրապես, այլ նրանց *հիմնական պարտականությունները*, որոնք ունեն համընդհանուր բնույթ, կապված չեն անձի կոնկրետ իրավական վիճակի հետ և ամրագրվում են սահմանադրական մակարդակով:

Երրորդ, սահմանադրական իրավունքով ամրագրված պարտականություններն *անձը կրում է անմիջականորեն հասարակության հանդեպ, իսկ քաղաքացին՝ պետության հանդեպ*: Քաղաքացիության իմաստը, ինչպես արդեն ասվել է, արտահայտվում է մարդու և պետության փոխադարձ իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության մեջ: Ընդ որում, իրավունքի տարբեր ճյուղերի կողմից սահմանված են պարտականությունները չկատարելու համար (ինչպես պետության, այնպես էլ անձի կողմից) իրավական պատասխանատվության տարբեր միջոցներ, այդ թվում՝ քրեաիրավական:

§ 2. Սահմանադրության և օրենքների պահպանումը

Մա մարդու և քաղաքացու ամենակարևոր պարտականությունն է (եթե չասենք՝ միակը) հասարակության և պետության հանդեպ, որն ամրագրված է Սահմանադրության *47 հոդվածում*: Մարդը, ինչպես ասվեց վերևում, միավորվելով պետության մեջ, իր բնական իրավունքները պաշտպանելու համար պետությանն է վերապահում հասարակության բոլոր անդամների համար *միատեսակ վարքագծի կանոններ սահմանելու իրավունքը*, պայմանով, որ այդ կանոնները մպատակաուղղված լինեն նրա բնական իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Այստեղից առաջանում է *մարդու «բնական» պարտականությունը*՝ հարգելու, պահպանելու պետության կողմից ընդունված օրենքները և ենթաօ-

քննադրական ակտերը, որոնց մեջ համակարգված են այդ վարքագծի կանոնները:

Սահմանադրության և օրենքների պահպանման պարտականությունը հավասարապես վերաբերում է ինչպես քաղաքացիներին, այնպես էլ **օտարերկրացիներին ու քաղաքացիություն չունեցող անձանց**: Պատճառն այն է, որ պետությանը հանձնված վարքագծի կանոններ սահմանելու իրավունքը, որը նրա կողմից իրացվում է օրենքներ ընդունելու միջոցով, ոչ թե քաղաքացու հատուկ իրավունք է, այլ մարդու բնական իրավունքներից է: Փաստորեն, այդ իրավունքը պետությանը զիջելով՝ **մարդը սահմանափակում է իր բնական ազատությունը**: Ուստի սահմանադրությունը և օրենքները պահպանելը համընդհանուր կանոն է, որը չի ճանաչում որևէ բացառություն:

Սահմանադրության և օրենքների պահպանման պարտականությունը ներառում է **մի քանի պահանջներ**:

Առաջին, մարդու և քաղաքացու կողմից **օրենքները չխախտելը**: Սա պարտականության իրացման **պասիվ ձևն է**, երբ անձը, որպես օրինապահ մարդ (քաղաքացի), չի խախտում օրենքներում ամրագրված հանձնարարականները: Սակայն նման վարքագիծը բավարար չէ հասարակության և պետության նկատմամբ այդ պարտականության կատարման համար: Անհրաժեշտ է, որպեսզի մարդը (քաղաքացին) **իր ակտիվ գործողություններով նպաստի** պետության իրավունքի համակարգի իրականացմանը, որը Սահմանադրության և օրենքների պահպանման պարտականության **երկրորդ պահանջն է**:

Երրորդ, Սահմանադրության 47 հոդվածի (2-րդ մաս) համաձայն՝ «Արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական **կարգը բռնի տապալելու**, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով»: Դա նշանակում է, որ բացի Սահմանադրությունը և օրենքները պահպանելու ընդհանուր պարտականությունից, 47 հոդվածը բոլոր անձանց ուղղակիորեն պարտավորեցնում է պահպանել **սահմանադրական արգելքները**: Իսկ արգելքները, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ և ընթացիկ օրենսդրությամբ, **բավականին շատ են**:

Այսպես, Սահմանադրությունն արգելում է. ա) իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անձի կողմից՝ համարելով այն հանցագործություն (2 հոդվ., 3-րդ մաս), բ) պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից այնպիսի գործողությունների կատարումը, որոնց համար նրանք լիազորված չեն (5 հոդվ., 2-րդ մաս), գ) այն օրենքների կիրառումը, որոնք պաշտոնապես հրապարակված չեն (6 հոդվ., 3-րդ

մաս) և այլն: Սահմանադրության նշված և մի շարք այլ նորմեր կոնկրետացնում են մարդու (քաղաքացու) սահմանադրական պարտականությունը՝ պարտավորեցնելով նրան ձեռնպահ մնալ նշված գործողությունների կատարումից:

Չորրորդ, պետք է ենթադրել, որ նշված սահմանադրական պարտականությունը չի վերաբերում միայն Սահմանադրության և օրենքների պահպանմանը: Հայտնի է, որ **վարքագծի կանոններ են սահմանվում** մասնապետական իշխանության մյուս մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ակտերում, որոնց զգալի մասը առնչվում է մարդու իրավունքների պաշտպանությանը: Ուստի յուրաքանչյուր ոք, որպես օրինահնազանդ անձ, **պարտավոր է պահպանել հանրապետության գործող օրենսդրությունը**, որը լայն առումով իրենում ներառում է ինչպես օրենքները, այնպես էլ ենթաօրենսդրական ակտերը:

Հինգերորդ, օրենսդրության պահպանման պարտականությունն ունի մեկ այլ կարևոր պահանջ ևս: Վարքագծի կանոններ բովանդակող իրավական ակտերը սահմանում են իրավահարաբերությունների սուբյեկտների, տվյալ դեպքում՝ անձանց իրավունքները և պարտականությունները, որտեղ մեկի իրավունքին համապատասխանում է մյուսի պարտականությունը: Եթե որևէ անձ խախտում է օրենքը, այսինքն՝ չի կատարում օրենքները պահպանելու իր պարտականությունը, ապա դրանով իսկ **վտանգի տակ է դնում իր սեփական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը**: Չէ՞ որ իրավունքները միայն այն ժամանակ են դառնում իրական, երբ հասարակության և **պետության մեջ իշխում է կարգ ու կանոնը**, որն ըստ էության, հենց ինքը՝ իրավունքների և պարտականությունների միասնությունն է: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ Սահմանադրության 47 հոդվածը յուրաքանչյուրից պահանջելով պահպանել Սահմանադրությունը և օրենքները, միաժամանակ պարտավորեցնում է **հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը**:

Այլոց իրավունքների և արժանապատվության հարգումը ոչ միայն իրավական պահանջ է, այլ նաև **բարոյական սկզբունք**, որը ենթադրում է բարձր, զարգացած իրավագիտակցություն, առավել ևս, երբ ուրիշի իրավունքը խոչընդոտում է սեփական ցանկությունների իրականացմանը: Ուրիշի իրավունքների ոտնահարման հաշվին նեղ-անձնական բարեկեցության ապահովումը ոչ միայն իրավական, այլ նաև բարոյական նորմերի խախտում է, որը կարող է հանգեցնել մարդկանց միջև հակամարտությունների սերմանելուն, և որի արդյունքում ինչպես կողմերը, այնպես էլ հա-

սարակառուցումը՝ անբողոքովին վերցրած, **կարող են հայտնվել անկարգության և քառսի վիճակում:** Այդ իմաստով Սահմանադրությունն առաջարկում է նման վիճակից խուսափելու միակ ճիշտ ուղին՝ հարգել միմյանց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

§ 3. Հայրենիքի պաշտպանությունը

Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, ասված է Սահմանադրության 46 հոդվածում: Հայրենիքի պաշտպանությունն **ինքնընտանրան ենթադրվող պարտականություն է**, քանզի առանց պետական սահմանների անխախտության, առանց հզոր և ամուր պետականության՝ անիմաստ կլինի ակնկալել անվտանգ և ապահով կյանք, իրավունքների և ազատությունների կենսագործում:

«Հայրենիք» հասկացությունը դասվում է հավերժական արժեքների շարքը, որը արտահայտում է յուրաքանչյուր մարդու կապը իր նախնիների և նրանց գործերի հետ, նրանում մարմնավորված է ազգի, ժողովրդի հերոսական պատմությունը, մշակույթը, հոգևոր հարստությունը: Ուստի հայրենիքի պաշտպանության պարտականությունն ավելի շատ բարոյական պահանջ է, **հոգու կանչ**, քան իրավական հանձնարարական:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը բազմիցս ապացուցել է այդ գաղափարի անառարկելիությունը: Այդ մասին են վկայում **Ավարայրի ճակատամարտը, Մարդարասպատի հերոսամարտը, Արցախ աշխարհի ազատագրական պայքարը** և բազմաթիվ այլ հերոսամարտեր, ուր ժողովուրդը (առանց տարիքի, սեռի, դասային պատկանելության և այլ չափանիշների) հայրենիքի կանչով զինվորագրվել է և կենաց ու մահու կռիվ տվել օտար զավթիչների դեմ՝ երկիրը պաշտպանելու և ազատագրելու համար:

Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու քաղաքացիների սահմանադրական պարտականությունն օրենսդրությամբ ներկայացվում է երկու առումով՝ ա) զինվորական ծառայություն անցնելու և բ) հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու:

Քաղաքացիները զինվորական ծառայության են անցնում 1998թ. սեպտեմբերի 16-ին ընդունված՝ «Զինապարտության մասին» օրենքի (2006թ. հունիսի 1-ին կատարված փոփոխություններով և լրացումներով) հիման վրա: Օրենքը տարբերում է զինվորական ծառայության երկու տեսակ՝ **ժամկետային ու պահեստագորային:** Ժամկետային ծառայությունը իր հերթին լինում է **պարտադիր և պայմանագրային:**

Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-27 տարեկան **արական սեռի բոլոր քաղաքացիները**, ովքեր առողջական վիճակով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում (11 հոդվ.): Օրենքը մանրամասն սահմանում է նաև այն պայմանները, որոնց առկայության դեպքում քաղաքացին **ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից** կամ ստանում է տարկետում: Մասնավորապես, պարտադիր զինվորական **ծառայությունից ազատվում են՝** ա) հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով **ծառայության համար ոչ պիտանի** ճանաչված քաղաքացին, բ) ընտանիքի միակ արու գավակը, որի հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) զոհվել (մահացել) է հանրապետության պաշտպանության կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, գ) կառավարության որոշմամբ (12 հոդվ.):

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից **տարկետում** տրվում է՝ ա) ընտանեկան դրության բերումով, բ) ուսումը շարունակելու համար, գ) առողջական վիճակի պատճառով, դ) այլ հիմքերով:

Ընտանեկան դրության բերումով տարկետում տրվում է այն զորակոչիկին, որն ունի՝ ա) անաշխատունակ ծնողներ կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր, եթե նրանք չունեն պարտադիր զինվորական ծառայության մեջ **չգտնվող** այլ աշխատունակ զավակ, բ) առանց մոր մեծացող երեխա, գ) երկու և ավելի երեխա, դ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին, ե) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին և երկրորդ կարգի հաշմանդամ կամ դատարանի վճռով անզործունակ ճանաչված հարազատ քույր կամ եղբայր, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի այլ աշխատունակ անդամ:

Օրենքը լայն հնարավորություն է ընձեռում սովորող երիտասարդությանը՝ նախատեսելով նրանց համար **ուսումը շարունակելու կապակցությամբ** տարկետում ստանալու իրավունք: Այդ իրավունքի սուբյեկտներ են համարվում՝ ա) կառավարության հաստատած ցանկում ընդգրկված պետական բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման ուսանողները, բ) պետական գիտակրթական համակարգի ասպիրանտուրայում սովորողները, գ) պետական պատվերով, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետություններում սովորող ուսանողները, օրդինատուրայում, ինտերնատուրայում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում սովորողները:

Տարկետման իրավունքը կորցնում են այն ուսանողները, ովքեր ակադեմիական առաջադիմության կամ անկարգապահության համար հեռացվում են նշված ուսումնական հաստատություններից (14 հոդվ.):

Առողջական վիճակի պատճառով և այլ հիմքերով տարկետում տալու պայմանները սահմանված են օրենքի 15 և 16 հոդվածներում:

Զինապարտության մասին օրենքը մախատեսում է նաև *պայմանագրային* հիմունքներով զինվորական ծառայության հնարավորություն, որտեղ կարող են ընդունվել ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք:

Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու քաղաքացիների սահմանադրական պարտականությունը, բացի գինվորական ծառայության, արտահայտվում է նաև *հայրենիքի պաշտպանության իմաստով*, որն իր մանրամասն կարգավորումն է ստացել 1997թ. մայիսի 29-ին ընդունված՝ «Պաշտպանության մասին» օրենքով: Ըստ այդ օրենքի թիվ 1 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության *պաշտպանությունը ներկայացվում է որպես քաղաքական, տնտեսական, ուսումնական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների համակարգ*, որն ուղղված է հանրապետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովմանը:

Հոդվածի շարադրանքից պարզորոշ հետևում է, որ, ի տարբերություն գինվորական ծառայության, որը իրականացվում է առավելապես *խաղաղ ժամանակ*, հայրենիքի պաշտպանությունը անհրաժեշտ է դառնում առավելապես երկրի վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության Նախագահը հայտարարում է *ռազմական դրություն*: Ռազմական դրության ժամանակ պաշտպանության իրականացմանը կարող են ներգրավվել ՀՀ սահմանապահ զորքերը, մեյքին զորքերը, ազգային անվտանգության և քաղաքացիական պաշտպանության զինված ստորաբաժանումները:

Կարևոր առանձնահատկություն է այն, որ եթե զինվորական ծառայության պարտականությունը վերաբերում է միայն քաղաքացիներին (այն էլ որոշակի տարիքի հասած), սպա հայրենիքի պաշտպանությունը հանդիսանում է ինչպես քաղաքացիների (առանց տարիքի և սեռի սահմանափակման), այնպես էլ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և զինված ուժերի պարտականությունը (գլուխ III):

Ինչպես զինվորական ծառայության, այնպես էլ պաշտպանության կազմակերպման բնագավառում Հայաստանի Հանրապետության օ-

բնադրությունը խախտելու համար մեղավոր անձինք պատասխանավորություն են կրում ՀՀ քրեական օրենսգրքով (214 և 215 հոդվ.) սահմանված կարգով:

Դրա հետ մեկտեղ, նկատի ունենալով, որ բնակչության մեջ կան որոշ թվով քաղաքացիներ, որոնց համոզումները կամ *հավատքը հակասում է զինվորական ծառայության կատարմանը*, Հայաստանի Հանրապետությունը արտասահմանյան շատ երկրների (Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա և այլն) օրինակով 2003թ. դեկտեմբերի 17-ին ընդունած «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքով *իրավունք վերապահեց* Հայաստանի Հանրապետության գորակոչի տարիքի քաղաքացիներին՝ անցնելու այլընտրանքային (գեների հետ կապ չունեցող) զինվորական ծառայության (հոդվ. 3):

§ 4. Այլ պարտականություններ

Բացի Սահմանադրության մեջ ամրագրված համընդհանուր պարտականություններից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն նաև որոշ այլ պարտականություններ, որոնք չնայած չեն ամրագրվել Հանրապետության Հիմնական օրենքի՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխում, սակայն դրանք նույնպես սահմանադրական պարտականություններ են: Այդպիսիք են համարվում՝ ա) հոգատարությունը պատմության և մշակույթի հուշարձանների նկատմամբ, բ) բնության և շրջակա միջավայրի պահպանումը, գ) հոգատարությունը երեխաների և անաշխատունակ ծնողների նկատմամբ, դ) հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելը և այլն:

Ա. Պատմության և մշակույթի հուշարձանների և մշակութային այլ արժեքների պաշտպանությունը և դրանց նկատմամբ հոգածությունը Սահմանադրությամբ դրված է պետության վրա (11 հոդվ.), որը հոգ է տանում նաև այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանման ուղղությամբ:

Բնական է, որ այդ պարտականությունը *չի կարող զրվել միայն պետության վրա*, առավել ևս, որ բազմաթիվ մշակութային արժեքներ գտնվում են քաղաքացիների տնօրինության ներքո՝ որպես նրանց սեփականություն: Այդ բնագավառի հարաբերությունները կարգավորվում են 1998թ. նոյեմբերի 11-ին ընդունված՝ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքով: Դրանում տրվում է պատմության և *մշա-*

կույթի հուշարձանների ցանկը (1 հոդվ.), ինչպես նաև դրանց դասակարգումը՝ ըստ արժեքավորման չափանիշների, տնօրինող սուբյեկտների, և քվարկվում են դրանցից յուրաքանչյուրին պատկանող հուշարձանների տեսակները (6 հոդվ.):

Օրենքը հատուկ ուշադրություն է դարձնում **հուշարձանների պահպանման ու օգտագործման խնդիրներին**՝ մանրամասն սահմանելով այդ բնագավառում համապատասխան սուբյեկտների (ՀՀ կառավարության, նրա լիազորած մարմնի, պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների) իրավունքներն ու պարտականությունները: Առանձնակի ընդգծվում է **հուշարձանը տնօրինող ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունը**՝ ապահովել դրա անվթարությունը:

Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության պարտականությունից զատ, քաղաքացիները՝ իրավաբանական անձանց հետ մեկտեղ, իրենց անմիջական մասնակցությամբ, նախաձեռնությամբ, հովանավորությամբ, նվիրատվությամբ ու ֆինանսական օգնությամբ կարող են աջակցել հուշարձանների հայտնաբերման, ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներին:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է պատասխանատվություն՝ հուշարձանների պահպանման և օգտագործման կանոնների խախտման համար: Իսկ հուշարձաններին կամ դրանց պահպանման գոտիներին վնաս պատճառած ֆիզիկական և իրավաբանական անձինք **պարտավոր են վերականգնել դրանց նախկին վիճակը**, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հատուցել պատճառված վնասները:

Բ. Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նույնպես Սահմանադրությամբ դրված է ինչպես պետության, այնպես էլ քաղաքացիների վրա: **Համաձայն 10 հոդվածի**՝ «Պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը»: Իսկ համաձայն **33.2 հոդվածի**՝ «Յուրաքանչյուր ոք... պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և քարելավել շրջակա միջավայրը»: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է անշեղորեն կատարել այդ կապակցությամբ պետական մարմինների կողմից ընդունված ակտերի պահանջները:

Խնդիրն այն է, որ մարդկության գոյատևման համար չկա ավելի մեծ վտանգ, քան բնության ոչնչացումը, հողի, ջրի և օդի աղտոտումը: Շրջակա միջավայրի պահպանության խնդիրը մեր ժամանակներում

ծեռք է բերել համամարդկային հնչեղություն: Համաշխարհային հանրությունը այն համարում է առաջին կարևորության խնդիր և պարտականություն՝ ոչ միայն յուրաքանչյուր պետության, այլ նաև հողագնդի յուրաքանչյուր մարդու համար:

Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական հարաբերությունների կարգավորման կապակցությամբ ընդունվել են մի շարք օրենքներ, որոնցում մանրամասն սահմանվում են պետության և քաղաքացիների իրավունքները և պարտականությունները: Այսպես, 1991թ. հուլիսի 29-ին ընդունված բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության **օրենսդրության հիմունքներում** ամրագրված է **պահպանման ենթակա բնության օբյեկտների ցանկը**, որոնց թվում՝ հողը, դրա ընդերքը, բուսական ու կենդանական աշխարհը, մթնոլորտային օդը, ջրերը, բնության հատուկ պահպանվող տարածքները (արգելոցները, արգելավայրերը, հազվագյուտ բնական օբյեկտները), առողջաբանային, պատմական կարևորագույն իրադարձությունների հետ կապված վայրերը, լանդշաֆտները (2 հոդվ.):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին իրավունք է վերապահվում **օգտվել բնության առողջաբար հատկություններից**, դրա բարիքներից, իսկ շրջակա միջավայրի աղտոտման, էկոլոգիական վթարի կամ աղետի հետևանքով առողջությանը պատճառված վնասի դեպքում՝ **ստանալ վնասի լրիվ հատուցում**:

Դրա հետ մեկտեղ, Հիմունքները պարտավորեցնում են յուրաքանչյուր քաղաքացու «անշեղորեն կատարել բնապահպանական օրենսդրության պահանջները, աջակցել բնության պահպանությանը» (11 հոդվ.):

Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքների հիման վրա վերջին տարիներին հանրապետությունում ընդունվել են **մի շարք օրենսգրքեր և օրենքներ**, այդ թվում՝ ՀՀ անտառային օրենսգիրքը, Հողային օրենսգիրքը, ՀՀ ջրային օրենսգիրքը, «Ընդերքի մասին» ՀՀ օրենքը, «Կենդանական աշխարհի մասին», «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության մասին», «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «ՀՀ ջրի ազգային ջրագծերի մասին» օրենքները և այլն:

Ընդունված և կիրառության մեջ գտնվող **օրենքներից և օրենսգրքերից յուրաքանչյուրն** իր կարգավորման բնագավառում սահմանում է քաղաքացիների պարտականությունը, համապատասխան օբյեկտների պահպանության կապակցությամբ օրենքների պահանջները չխախտելու

առումով, որը կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով առաջ բերել ինչպես գույքային, վարչական, այնպես էլ քրեական **պատասխանատվություն**:

9. Հոգատարությունը երեխայի և անաշխատունակ ծնողների նկատմամբ, մասնավորապես հայ իրականության մեջ, ավելի շուտ բնական, բարոյական վեհ պարտականություն է, քան իրավական: Չնայած դրան, Հանրապետության Մահմանադրությունը, հաշվի առնելով երկրում ծնող-երեխա կապերի և հարաբերությունների դրվածքը՝ մի կողմից, **պարտավորեցնում է ծնողներին**²⁰՝ հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության մասին, մյուս կողմից, **չափահաս և աշխատունակ երեխաներին պարտավորեցնում է** հոգ տանել իրենց անաշխատունակ ծնողների նկատմամբ (հոդվ. 36):

Գրա հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35 հոդվածի համաձայն՝ «Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է»: Այդ առնչությամբ պետությունը հովանավորում է մայրության հետ կապված խնդիրների լուծումը:

Հասկանալի է, որ ընտանիքի հետ կապված բոլոր խնդիրների լուծումը չի կարող դրվել միայն պետության վրա, առավել ևս, որ պետությունը չի տիրապետում այնպիսի առատ նյութական և ֆինանսական միջոցների, որպեսզի կարողանա լիարժեք ապահովել բոլոր կարիքավոր անձանց հիմնական սոցիալ-տնտեսական պահանջումները և ինքնուրույն կերպով կազմակերպել բոլոր անչափահաս անձանց դաստիարակությունը կրթական, ֆիզիկական, բարոյական և այլ ուղղություններով:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության **ամուսնաընտանեկան օրենսդրությունը նախատեսում է քաղաքացիների երկու կարգի պարտականություն**:

Առաջին, ծնողները (ամուսինները) պարտավոր են **խնամել երեխաներին, հոգ տանել նրանց մասին**, զբաղվել նրանց դաստիարակությամբ, մի խոսքով՝ ապահովել երեխաների ընտանեկան դաստիարակությունը: Գործող ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքում (հոդվ. 41)²⁰ ուղղակի ասված է, որ «երեխաների դաստիարակության հարցերը և ընտանեկան կյանքի մյուս հարցերը ամուսինները լուծում են համատեղ»:

Այս պարտականության ապահովման համար ամուսնաընտանեկան օրենսդրությամբ սահմանվում են համապատասխան սանկցիաներ: Մասնավորապես, եթե ծնողները կամավոր չեն կատարում իրենց պար-

տականությունները, ապա դատարանի վճռով նրանք **կարող են զրկվել ծնողական իրավունքից** (հոդվ.59), ինչպես նաև նրանցից ալիմենտ է բռնագանձվում հարկադրական կարգով (17 հոդվ.):

Երկրորդ, աշխատունակ չափահաս **երեխաները պարտավոր են հոգալ անաշխատունակ ծնողների մասին**: Որպես կանոն, չափահաս զավակները կամավոր պահում են իրենց կարիքավոր անաշխատունակ ծնողներին, հոգում նրանց ապրուստը, անկախ նրանից՝ ապրում են ծնողների հետ, թե՛ ոչ: Այս պարտականությունը չկատարելու դեպքում, օրենքով սահմանված կարգով չափահաս աշխատունակ զավակներից դատարանի միջոցով ալիմենտ է բռնագանձվում ծնողներին նյութապես ապահովելու համար:

Ծնողների կողմից երեխաների դաստիարակության կապակցությամբ հոգ տանելու խնդրի հետ սերտորեն առնչվում է ևս մեկ կարևոր հարց: Դա երեխաների պարտականությունն է՝ ստանալու **հիմնական ընդհանուր կրթություն**, իսկ ծնողների պարտականությունը՝ ապահովել, որպեսզի երեխաներն ստանան այդ կրթությունը: Այս պահանջն անբազրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 39 հոդվածում, որի համաձայն՝ «Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքով կարող է սահմանվել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ»:

Սահմանադրական այդ նորմի դրույթներն ավելի մանրամասն իրենց ամրագրումն են ստացել 1999թ. մայիսի 8-ին ընդունված «Կրթության մասին» օրենքում: Ըստ այդ օրենքի, **հիմնական ընդհանուր կրթությունը** (որն ընդգրկում է 1-8 դասարանները) **պարտադիր է**, որի պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը, եթե այն չի բավարարվել ավելի վաղ (18 հոդվ., կետ 7):

Սակայն օրենքը այդ պարտականության գործնական իրացումը որևէ իրավական միջոցներով չի ապահովում: Այսինքն՝ **այդ պարտականությունը չկատարելու** (ինչպես երեխաների, այնպես էլ նրանց ծնողների կողմից) **համար որևէ սանկցիա** կամ պատասխանատվության **միջոց չի ամրագրվում**: Մինչդեռ մնան իրավական սանկցիաների օրենսդրական ամրագրումը անհրաժեշտ է:

²⁰ Ընդունվել է 09.11.04թ., ուժի մեջ է մտել 01.06.2005թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ**

§ 1. Քաղաքացիության հասկացությունը

Ամեն մի պետության մեջ ապրող մարդկանց ամբողջությունը համարվում է **նրա բնակչությունը**, որի հիմնական մասը կազմում են առանձին կատեգորիայի ֆիզիկական անձինք՝ տվյալ պետության **քաղաքացիները**: Նրանք, որպես կանոն, տվյալ երկրի արմատական ազգի (ազգության) ներկայացուցիչներն են, որոնց անունով էլ (կամ նրանց ապրած պատմական տարածքի անունով, օրինակ, ԱՄՆ, Իտալիա, Անգլիա և այլն) կոչվում են նրանց ստեղծած պետությունները (օրինակ, Հայաստան, Վրաստան, Գերմանիա, Ռուսաստան և այլն): Քաղաքացու իրավական վիճակն էապես տարբերվում է երկրում ապրող մյուս անձանց իրավական վիճակից: Այն պահպանվում է նաև այն դեպքերում, երբ այս կամ այն պետության քաղաքացին մշտապես կամ ժամանակավոր բնակվում է այլ պետության տարածքում:

Քաղաքացիություն ունենալու հանգամանքն այն հիմնական նախապայմանն է, որի շնորհիվ անձին վերապահվում են համապատասխան պետության օրենսդրությամբ նախատեսված **բոլոր իրավունքներն ու ազատությունները**, իրականացվում է նրա շահերի պաշտպանությունը ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Ներկայումս քաղաքացիության հետ կապված բոլոր հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (11.3 հոդվ.) և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995թ. նոյեմբերի 16-ի (207թ. փետրվարի 26-ի փոփոխություններով ու լրացումներով) օրենքով:

Համընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն՝ **քաղաքացիությունը պետության հետ անձի կայուն իրավական կապն է՝ հիմնված պետության կողմից տվյալ անձին որպես իր քաղաքացի իրավաբանական ճանաչման վրա, որն օրենքով նախատեսված դեպքերում պետության և քաղաքացու համար առաջ է բերում փոխադարձ իրավունքներ, պարտականություններ և պատասխանատվություն:**

Այս սահմանման մեջ պարզորոշ առանձնացվում են քաղաքացիությունը բնութագրող առավել կարևոր, **էական գծերը**՝ ա) պետության և ան-

ձի կապի իրավական բնույթը, բ) պետության կողմից անձին որպես իր քաղաքացի ճանաչելը, գ) պետության և անձի միջև կապի կայունությունը, դ) փոխադարձ իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության առաջացումը:

1. **Պետության և անձի միջև կապի իրավական բնույթը** արտահայտվում է նրանում, որ **պետությունը ճանաչում է անձին, որպես իր քաղաքացի, և համապատասխան օրենքով ամրագրում է այդ կապը**, սահմանում քաղաքացիության ձեռքբերման պայմաններն ու կարգը, տարածում է իր իրավունքի համակարգը անձի վրա և ստանձնում նրա նկատմամբ որոշակի պարտականություններ: Ընդ որում, տվյալ դեպքում որևէ նշանակություն չունի քաղաքացին պետության ներսում է գտնվում, թե բնակվում է այլ երկրներում (մշտական կամ ժամանակավոր)՝ պետությունը պարտավոր է նրան իր պաշտպանության տակ առնել: Այդ մասին ուղղակի գրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 11.3 հոդվածում, որի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո»: Իսկ ՀՀ քաղաքացիության մասին **օրենքի 7 հոդվածի համաձայն**՝ «Հայաստանի Հանրապետությունը, նրա դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները և դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են պաշտպանել այլ պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները, ինչպես նաև՝ միջոցներ ձեռնարկել նրանց խախտված իրավունքները վերականգնելու համար՝ այդ պետությունների օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան»:

Այդ նորմի կարևորությունը հատկապես արժեքավորվում է նրանով, որ մեծ թվով Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ մշտական բնակություն են հաստատել արտասահմանյան երկրներում (մեծամասամբ Ռուսաստանի Դաշնությունում), որոնց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը:

Անձը պետության քաղաքացի է համարվում ոչ թե այն պատճառով, որ ապրում է նրա տարածքում (այդ տարածքում բնակվում են նաև օտարերկրացիներ ու քաղաքացիություն չունեցող անձինք), այլ պետության և քաղաքացու միջև գոյություն ունեցող հատուկ կապերի հետևանքով, որոնք կազմում են քաղաքացիության բովանդակությունը: **Այդ կապերը**

պետության կողմից ամրագրվում են հատուկ իրավական ակտերում՝ որպես քաղաքացիության հարաբերությունների ճանաչում:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքում սահմանվում են **Հայաստանի քաղաքացի ճանաչվելու հիմքերը** (3 հոդվ.), քաղաքացիության ձեռքբերման (9 հոդվ.) և դադարման հիմքերը (23 հոդվ.), այդ հարցերի լուծման կարգը (29 հոդվ.):

Քաղաքացիության ճանաչումը կամ հաստատումը ձևակերպվում է հատուկ փաստաթղթերով, որոնք են՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը, որը տրվում է 16 տարին լրացած անձանց, իսկ մինչև 16 տարին լրանալը՝ ծննդյան վկայականը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող վկայականը:

Անձնագիրը համարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձը հաստատող հիմնական փաստաթուղթը Հայաստանի տարածքում, որը պետք է ունենան համապատասխան տարիքի հասած բոլոր քաղաքացիները:

Անձնագրում ամրագրվում են քաղաքացու անձի մասին մի շարք տեղեկություններ, որոնք են՝ ազգանունը, անունը, սեռը, քաղաքացիությունը, ծննդյան թիվն ու ամսաթիվը, ծննդավայրը, դրա տրման և ուժի մեջ գտնվելու ժամկետը, ում կողմից է տրվել: Արվում են նաև նշումներ ըստ բնակության վայրի քաղաքացու գրանցման և գրանցումից դուրս գալու, օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետների և այլնի մասին: Անձնագիրը լրացվում է հայերեն ու անգլերեն լեզուներով և համարվում է Հայաստանի Հանրապետության **սեփականությունը**: Անձնագիրը տրվում է 10 տարի ժամանակով:

3. **Պետության և անձի միջև կապերի կայունությունը**, որպես քաղաքացիության կարևոր բնորոշ գիծ, արտահայտվում է դրանց **մշտական բնույթի մեջ**: Այդ կապերը, որպես կանոն, սկսում են անձի ծննդյան (իսկ երբեմն էլ դեռևս չծնված, սաղմնային վիճակում գտնվելու) պահից և ավարտվում են նրա մահվամբ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքով սահմանվում է **քաղաքացիության դադարման հատուկ կարգ**, համաձայն որի՝ քաղաքացին միակողմանի չի կարող իր հայեցողությամբ դադարեցնել քաղաքացիությունը, այսինքն՝ Հայաստանի քաղաքացիությունից հրաժարվելը կամ այլ պետության քաղաքացիությունն ընդունելը ինքնին չի հանգեցնում Հանրապետության քաղաքացիությունը կորցնելուն (հոդվ. 1, 4-րդ մաս): Նույն կարգով ՀՀ քաղաքացու անուսնությունն օտարերկրյա քաղաքացու հետ ինքնին քաղաքացիության փոփոխման չի հանգեց-

նում, ամուսիններից մեկի քաղաքացիություն փոխելը ինքնին չի հանգեցնում մյուս ամուսնու քաղաքացիության փոփոխման:

Օրենքով **արգելվում է նաև պետությանը՝ միակողմանի**, իր հայեցողությամբ, ապօրինաբար (օրենքի 23 հոդվածում թվարկված հիմքերից դուրս) **դադարեցնելու** Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, մտացածին հիմքերով անձին գրելել քաղաքացիությունից կամ նրան հանձնել այլ պետության (5 հոդվ.): Ավելին, հանրապետության ոչ մի պետական մարմին իրավասու չէ չընդունելու արտասահմանում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն, եթե նա ցանկանում է վերադառնալ հայրենիք:

Հայաստանի քաղաքացուն չհանձնելը, որը կատարել է հանցագործություն այլ պետության տարածքում, դեռևս չի նշանակում, որ նա ազատվում է պատասխանատվությունից: Հայաստանի Հանրապետությունը, ինչպես որ նախատեսված է իրավական օգնության վերաբերյալ միջազգային պայմանագրերում, պարտավոր է իր օրենքներով պատասխանատվության ենթարկել նման անձանց և տեղյակ պահել այդ կապակցությամբ շահագրգռված պետությանը: Ինչ վերաբերում է արտասահմանյան քաղաքացուն իր պետությանը վերադարձնելուն (որը կատարել է հանցագործություն ու փախել Հայաստան), ապա այն նույնպես կարգավորվում է միջպետական պայմանագրով: Այդպիսի պայմանագրի բացակայության դեպքում հարցի լուծման եղանակը մնում է Հայաստանի Հանրապետության հայեցողությանը:

4. Քաղաքացիության ուժով **պետության և անձի միջև փոխադարձ իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության առաջացումը** մեծ չափով պայմանավորված է տվյալ երկրի **քաղաքական և պետական ռեժիմներով**: Իրական ժողովրդավարական երկրում պետությունը և քաղաքացին հանդես են գալիս որպես հավասար, իրավահարաբերության նույն մակարդակի վրա գտնվող սուբյեկտներ: Պետությունը իրավաբանորեն ճանաչում և հարգում է իր քաղաքացու արժանապատվությունը և բնական իրավունքները՝ իր ողջ ծավալով: Քաղաքացին, իր հերթին, որպես օրինապահ անձ, բարեխղճորեն կատարում է պետության հանդեպ ստանձնած իր բոլոր պարտականությունները:

Քաղաքացիության ինստիտուտը ցանկացած պետության ոչ միայն կարևորագույն հատկանիշն է, այլև նրա քաղաքականության ամենանորր, ամենօրյա ուշադրություն պահանջող ոլորտը: Պետության և նրա քաղաքացիների միջև փոխհարաբերությունների ճիշտ կառուցումը ցանկացած տիպի ժողովրդավարության հանգուցային խնդիրն է:

Հիմնախնդիրն իր արմատներով գնում է մինչև անտիկ աշխարհ:
Սկսած Արիստոտելից, տեսաբանները արդեն տարբերություն էին դնում պետության քաղաքացիների և **սուբյեկտների** միջև: Քաղաքացիներ էին համարվում միայն ազատ մարդիկ, որոնք ակտիվ կերպով մասնակցում էին երկրում ծավալվող քաղաքական գործընթացներին, իսկ սուբյեկտները՝ մարդկանց այն խմբերն էին (գյուղացիությունը, օտարերկրացիները, կանայք և երեխաները), որոնք, ըստ էության, համարվում էին քաղաքական գործընթացների պասիվ օբյեկտներ:

Ֆեոդալիզմի ժամանակաշրջանում գոյություն ունեւ **հպատակության** ինստիտուտը, որի իմաստը՝ բնակչության ենթակայությունը, պատկանելությունն էր միապետին: Սահմանադրական միապետություններում քաղաքացիությունը, որը փոխարինելու եկավ հպատակությանը, հանդիսացավ հասարակության բոլոր անդամների իրավահավասարության սկզբունքի կարևոր դրսևորումներից մեկը: Մակայն այդ իրավահավասարությունը, ինչպես արդեն նշվել է, վերաբերում է միայն քաղաքացիներին, որոնք տիրապետում են պետության սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների ողջ ծավալին:

Ինչ մնում է **օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց**, ապա վերջիններս ամբողջ ծավալով չեն օգտվում քաղաքացու համար նախատեսված **քաղաքական իրավունքներից և ազատություններից**: Այդ տարբերությունների վերացման նպատակով Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է հանրապետությունում բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի քաղաքացիություն ձեռք բերելը, ինչպես նաև չի խոչընդոտում նրանց այլ պետության քաղաքացի դառնալուն:

§ 2. ՀՀ քաղաքացիության սկզբունքները

Քաղաքացիության հետ կապված խնդիրներն իրականացնելիս՝ **պետություններն առաջնորդվում են մի շարք սկզբունքներով**, որոնք ըստ բովանդակության կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) **ընդհանուր սկզբունքներ** (որոնք կիրառվում են բոլոր պետությունների կողմից) և բ) **մասնավոր սկզբունքներ** (որոնք կիրառվում են առանձին պետությունների կողմից՝ ըստ նպատակահարմարության):

1. **Ընդհանուր սկզբունքները** երկուսն են՝ ա) «արյան իրավունքը» և բ) «հողի իրավունքը»:

«Արյան իրավունքի» սկզբունքի իմաստն այն է, որ տվյալ պետության քաղաքացիներից ծնված երեխան, անկախ այն բանից, թե որտեղ, որ երկրում է ծնվել, համարվում է այդ պետության քաղաքացի:

«Հողի իրավունքի» սկզբունքը, ի տարբերություն «արյան իրավունքի», նշանակում է, որ տվյալ պետությունում քաղաքացիություն է շնորհվում բոլոր այն անձանց, որոնք ծնվել են նրա տարածքում՝ անկախ այն բանից, թե ովքեր են նրանց ծնողները:

Նշված սկզբունքներից յուրաքանչյուրի ընտրությունը պայմանավորված է առավելապես ժողովրդագրության (դեմոգրաֆիայի) բնագավառում պետության կողմից իրականացվող քաղաքականությանը: Եթե պետությունը **շահագրգռված է իր բնակչության թվաքանակի աճով**, ապա առաջնորդվում է **«հողի իրավունքի» սկզբունքով**: Այդ սկզբունքի կիրառությունը տարածված է առավելապես Ամերիկյան մայրցամաքի երկրներում (Մեքսիկա, Արգենտինա, Բոլիվիա, Գվատեմալա և այլն):

Այդ սկզբունքը **նպատակային կերպով** կիրառում են նաև այն երկրները, **որոնք ունեն ավելի նպաստավոր կենսապայմաններ** և պլանավորված ձևով ամեն տարի իրենց մոտ մշտական բնակչության են ընդունում տարբեր երկրներից եկած տնտեսության, գիտության, մշակույթի բնագավառի **քարձորակ մասնագետների** (օրինակ՝ ԱՄՆ):

«Արյան իրավունքի» սկզբունքը հատուկ է առավելապես այն պետություններին, որտեղ կենսապայմանները և երկրի ներսում ստեղծված հասարակական-քաղաքական իրավիճակը անբարենպաստ է, որի պատճառով **ժողովուրդը զանգվածաբար հեռանում է** աշտեղից: Նշված սկզբունքի կիրառման ճանապարհով պետությունը ձգտում է պահպանել իր բնակչության թվաքանակը (Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Ադրբեջան, Ղազախստան և այլ երկրներ):

Կան նաև պետություններ, որոնք շահագրգռված են իրենց բնակչության թվաքանակի **արագ աճով**: Ուստի նրանց օրենսդրության մեջ **զուգակցվում է այդ երկու սկզբունքների կիրառությունը** (օրինակ՝ Բրազիլիայի 1988թ. Սահմանադրության 12 հոդվ.): Ավելի տարածված եղանակ է, երբ պետությունը քաղաքացիության հարցում ընդունելով նշված սկզբունքներից որևէ մեկը, միաժամանակ կիրառում է մյուս սկզբունքի ուրոշ տարրեր: Այսինքն «արյան իրավունքի» և «հողի իրավունքի» կիրառությունը պետությունների կողմից **«մաքուր» վիճակում** չունի լայն տարածում:

2. **Մասնավոր սկզբունքները** մեծամասամբ պայմանավորված են կոնկրետ պետության կառավարման ձևով, քաղաքական ու պետական ռեժիմներով և այլ հանգամանքներով:

Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունը և քաղաքացիության մասին օրենքը ամրագրում են մի շարք սկզբունքներ, որոնք պայմանավորում են քաղաքացիության հետ կապված հարաբերությունների էական գծերը, դրանց բովանդակությունը:

Առաջին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները իրավահավասար են: Մահմանադրությանը (14.1 հոդվ.) նրանք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ պայմաններից, ունեն հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները: Դա նշանակում է, որ օրենսդրությունը հանրապետության քաղաքացի հանդիսացող անձանց իրավական վիճակում որևէ հիմքով որևէ տարբերություն չի նախատեսում: Այդպիսիք չեն նախատեսվում նաև քաղաքացիության ձեռքբերման տարբեր հիմքերի և ժամանակի դեպքերում:

Միաժամանակ, չպետք է շփոթել **քաղաքացիների իրավաբանական** հավասարությունը նրանց **փաստացի հավասարության** հետ, որովհետև անձի իրավական վիճակի ձևավորման վրա, ինչպես նշվել է վերևում, ազդում են մի շարք հանգամանքներ, որոնց ուժով տարբեր քաղաքացիներ կարող են ունենալ իրավունքների, ազատությունների և պարտականությունների ոչ միատեսակ փաստացի ծավալ:

Երկրորդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությանը հատուկ է կամավորության և բոլորի համար բաց լինելու սկզբունքը:

Կամավորության սկզբունքի էությունը պայմանավորված է նրանով, որ քաղաքացիություն ձեռք բերելը միջազգային-իրավական ակտերով համարվում է **մարդու բնական իրավունքը** և ոչ ոք (այդ թվում պետությունները) իրավունք չունի անձին ստիպել ձեռք բերելու այս կամ այն պետության քաղաքացիություն: Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքը, հետևելով միջազգային-իրավական ակտերով նախատեսված պահանջներին, իր **առաջին հոդվածում** յուրաքանչյուր մարդու իրավունք է վերապահում օրենքով սահմանված կարգով ձեռք բերելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Կամավորության սկզբունքի արտահայտություն է նաև այն, որ Հայաստանի Հանրապետությունը նպաստում է ասպաքաղաքացիության կրճատմանը, խրախուսում է (և ոչ թե ստիպում) հանրապետությունում բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն և չի խոչընդոտում նրանց՝ իրենց կամաարտահայտությամբ այս կամ այն պետության քաղաքացիություն ստանալուն: Այդ կապակցությամբ նա հետևում է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի բանաձևին հա-

մապատասխան 1961թ. ընդունված ասպաքաղաքացիության կրճատման մասին համաձայնագրին: Այդ համաձայնագրում հանձնարարվում է պետություններին քաղաքացիություն տրամադրել փախստականներին և պետության տարածքում բնակվող այլ անձանց, եթե նրանք դատապարտված չեն եղել ծանր հանցագործություններ կատարելու համար:

Կամավորության սկզբունքի էությունը արտահայտվում է նաև նրանում, որ «Քաղաքացիության մասին» օրենքի (24 հոդվ.) համաձայն, Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի **իրավունք ունի փոխել իր քաղաքացիությունը**՝ դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն: Այդ իրավունքից ոչ ոք չի կարող զրկվել: Այսինքն՝ պետության հետ անձի իրավական ամուր կապը, որը հատուկ է քաղաքացիությանը, ամենևին չի նշանակում անձին հարկադիր կերպով քաղաքացիության մեջ պահել: Այդ մասին է վկայում նաև օրենքի 6 հոդվածը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ամուսնությունն օտարերկրյա քաղաքացու հետ **մեխանիկորեն չի հանգեցնում** ամուսիններից որևէ մեկի քաղաքացիության փոփոխման, ինչպես նաև ամուսիններից մեկի քաղաքացիություն փոխելը չի հանգեցնում մյուս ամուսնու քաղաքացիության փոփոխման:

Երրորդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել իր քաղաքացիությունից: Դա նշանակում է, որ պետությունը միակողմանի, առանց քաղաքացու համաձայնության, **չի կարող լուծարել անձի քաղաքացիությունը**: «Քաղաքացիության մասին» օրենքով (թիվ 1 հոդվ.) սահմանված է, որ անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնում է դրա դադարեցման հետևանքով, և որ նա չի կարող զրկվել այդ քաղաքացիությունից, բացի օրենքով նախատեսված դեպքերից: **Իսկ այդ դեպքերը սվարկված են** օրենքի 25 հոդվածում:

Եթե քաղաքացիության դադարեցումը, ընդհանուր առմամբ, երկկողմանի (պետության և քաղաքացու փոխհամաձայնությամբ) ակտ է, ասպա **քաղաքացիության դադարեցումը՝ անձին քաղաքացիությունից զրկելու ձևով**, կատարվում է պետության կողմից միակողմանի ակտի հիման վրա՝ հարկադրաբար, որպես պետության կողմից **կիրառվող պատժամիջոց**: Այդպիսի որոշման համար, բնականաբար, հիմք է հանդիսանում անձի կողմից քաղաքացիության հարաբերությունները կարգավորող **նորմերի կոպիտ խախտումները**: Այն կրում է խիստ անհատական բնույթ և, որպես կանոն, **կիրառվում է միայն իրենց դիմումի հիման վրա (նատուրալիզացիա) քաղաքացիություն ձեռք բերած անձանց նկատմամբ**, ընդ որում, ձեռք բերելուց հետո համեմատաբար ոչ մեծ ժամանակահատվա-

ծում: Այսպես, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտասահմանում մշտապես բնակվող Հայաստանի քաղաքացին պարտավոր է **յոթ տարվա ընթացքում հյուպատոսական հաշվառման կանգնել**: Անհարգելի պատճառով նշված ժամկետում հաշվառման չկանգնելը գնահատվում է որպես պետության հետ կապի խզում և անձը կարող է հանրապետության իրավասու մարմնի միակողմանի ակտի ուժով գրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից:

Անձը քաղաքացիությունից կարող է զրկվել նաև այն դեպքերում, երբ այն ձեռք է բերել **կեղծ տվյալների կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա**, ինչպես նաև ՀՀ քաղաքացիության մասին **օրենսդրությունը խախտելով**¹ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն (25 հոդվ., 2-րդ և 3-րդ կետեր):

Քաղաքացիության մասին օրենքով անձին քաղաքացիությունից զրկելու արգելքը բխում է մարդու՝ քաղաքացիություն ստանալու իրավունքից, պետության և մարդու միջև կապերի երկկողմանի բնույթից, որը ենթադրում է այդ կապերի լուծարումը թե՛ մեկ և թե՛ մյուս կողմից, միայն փոխադարձ համաձայնությամբ:

Չորրորդ, 1995թ. Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում էր **քաղաքացիության քացատիկության սկզբունքը**: Դա նշանակում էր, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացին միաժամանակ չէր կարող լինել այլ պետության քաղաքացի» (14 հոդվ.):

Սակայն վերջին տարիներին հանրապետության քաղաքական շրջանակներում ակտիվ խոսակցություն էր գնում Հայաստանի Հանրապետության կողմից **երկրադարացիության ճանաչման անհրաժեշտության** մասին: Այդ գաղափարի հեղինակներն իրենց ցանկությունը հիմնավորում էին նրանով, որ այդ ճանապարհով իբր հնարավոր կլինի արտասահմանյան հայության կապիտալը ներգրավել երկրի տնտեսության մեջ, որն անհնար կլինի առանց ներդրողներին քաղաքացիություն շնորհելու: Արդյունքում 2005թ. Սահմանադրության փոփոխությունների և լրացումների ժամանակ Հանրապետության Հիմնական օրենքում ամրագրվեց դրույթ, որը թույլատրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ձեռք բերելու նաև այլ պետությունների քաղաքացիություն (հոդվ. 30.1, 4-րդ մաս):

Սահմանադրության այդ նորմի հիման վրա «Քաղաքացիության մասին» 1995թ. ՀՀ օրենքը լրացվեց նոր (2007թ.) 13¹ «Երկրադարացիություն» վերտառությամբ հոդվածով, որտեղ Հայաստանի Հանրապետության երկրադարացուն վերապահվում է ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը,

քացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի:

Երկրադարացիությունը ճանաչելուց հետո պետությունը փաստորեն պարտավոր է իր քաղաքացիությունն ընդունած այլ պետության քաղաքացուն տրամադրել այն բոլոր իրավունքները, ազատություններն ու պարտականությունները, որոնք ունեն իր քաղաքացիները: Այսինքն՝ երկրադարացին իրավունք ունի բնակվելու քաղաքացիության երկու պետություններում, երկու երկրներում էլ միաժամանակ կատարել զինծառայություն, մուծել հարկեր և տուրքեր, հավատարիմ լինել երկու պետություններին էլ:

Այս ամենը ցույց է տալիս, որ **երկրադարացիությունը նորմալ վիճակ չէ**: Այն միջադեպեր կարող է ստեղծել և **պետության** (եթե երկու երկրների միջև առկա է հակասություն, մանավանդ ռազմական իմաստով), և **անհատի** (եթե պահանջվում է երկու երկրներում էլ զորակոչվել զինվորական ծառայության կամ երկուսին էլ մուծել հարկեր և տուրքեր) համար:

Երկրադարացիությունը դիտելով որպես անբնական երևույթ, համաշխարհային հանրությունը պայքարում է դրա կրճատման, նվազեցման համար: Եվրախորհրդի կողմից 1963թ. ընդունված Բազմաքաղաքացիության դեպքերի կրճատման և բազմաքաղաքացիության դեպքում զինվորական պարտականությունների մասին դաշնագրի համաձայն, յուրաքանչյուր անձ պետք է ունենա մեկ երկրի քաղաքացիություն, և որ միջազգային համայնքի ջանքերը պետք է ուղղված լինեն երկրադարացիության վերացմանը, քանի որ դրանից ծագում են բազմաթիվ հակամարտություններ:

Երկրադարացիությունը, եթե **Մեծ տերությունների** (ԱՄՆ, ՌԴ, ԳՖՀ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և այլն) **համար կարող է շատ ցավոտ չլինել** (երբեմն էլ ձեռնտու լինել), ապա փոքր երկրների համար կարող է շատ անհարմարություններ առաջացնել: Օրինակ, եթե Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի ընտրություններին մասնակցեն արտերկրից Ռուսաստանի քաղաքացի (երկրադարացի) հանդիսացող երկու միլիոն ընտրող, ապա հազիվ թե նրանք կարողանան էական ազդեցություն ունենալ երկրում քաղաքական ուժերի հարաբերակցության, ինչպես նաև Դումայի ընտրությունների արդյունքների վրա: Իսկ այդ երկու միլիոն ընտրողները եթե մասնակցեն Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի ընտրություններին...

Ինչ վերաբերում է **օտարերկրացի ազգությամբ հայ ներդրողներին**, ապա վերևում (9-րդ գլխի 4-րդ պարագրաֆում) արդեն ասվել է, որ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների մասին օրենքով

նրանց համար սահմանված է կացության հատուկ կարգավիճակ, որի շնորհիվ նրանց տրվում է Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր՝ 10 տարի ժամանակով (որը կարող է երկարացվել ևս մի քանի անգամ՝ 10-ակն տարով), ինչը նրանց հնարավորություն է տալիս Հանրապետությունում զբաղվել տնտեսական և այլ գործունեությամբ, ինչպես նաև ցանկացած ժամանակ անարգել մուտք գործել Հանրապետություն և այնտեղից մեկնել:

Բացի դրանից, անհրաժեշտ է նշել, որ քաղաքացիության բացառիկության (միաքաղաքացիության) **ապահովումը հաճախ կախված չէ միայն մեկ պետության կամքից**: Տարբեր երկրներում քաղաքացիությունը կարգավորող նորմերի բախման (կոլիզիայի) արդյունքում կարող է առաջանալ այնպիսի իրադրություն, երբ նույն անձն ակամա ճանաչվի երկու և ավելի պետությունների քաղաքացի: **Երկրադաքացիությունը պատմականորեն սկիզբ է առել ներգաղթի և արտագաղթի երկրներում քաղաքացիության վերաբերյալ սկզբունքների («արյան իրավունքի» և «հողի իրավունքի») տարբերությունից**: Օրինակ, լեհ ծնողներից ԱՄՆ-ի տարածքում ծնված երեխան ձեռք է բերում **ամերիկա-լեհ քաղաքացիություն**:

Երկրադաքացիության հիմք է նաև առանց սկզբնական քաղաքացիությունը կորցնելու նոր քաղաքացիության ձեռքբերումը: Հաճախ պատահում է, որ անձը ստանում է պետության քաղաքացիություն, որի օրենսդրությամբ չի նախատեսվում որպես պայման անձի կողմից իր սկզբնական քաղաքացիության դադարեցումը: Կամ իր սկզբնական ծագման երկրի օրենքներով նույնպես չի նախատեսվում, որ ձեռք բերելով այլ երկրի քաղաքացիություն՝ անձը ավտոմատ կերպով պետք է կորցնի սկզբնական քաղաքացիությունը: Օրինակ, դա կարող է պատահել այն դեպքում, երբ ֆրանսիացին ձեռք է բերում Մեծ Բրիտանիայի քաղաքացիություն և դառնում **անգլո-ֆրանսիական երկրադաքացի**:

Երկրադաքացիության առաջացման հաջորդ պատճառը դա տարբեր քաղաքացիություն ունեցող ծնողներից սերված երեխայի ծնունդն է: Երբ երեխան ըստ ծննդի (ծագման) ձեռք է բերում հոր, ինչպես նաև մոր քաղաքացիությունը, նա դառնում է երկքաղաքացի: Օրինակ, դա կարող է պատահել թուրք հայր և գերմանացի մայր ունեցող երեխայի հետ՝ երեխան ծննդյան պահից կլինի թուրք-գերմանական երկքաղաքացի:

Դրա հետ մեկտեղ, ինչպես արդեն նշվել է, քաղաքացիության խնդիրը **ավելի շատ ներպետական է**, քան միջազգային-իրավական: Եվ միջազգային հանրությունը ի վիճակի չէ պետություններին (առավել ևս՝ մեծ տերություններին) հարկատրել՝ ընդօրինակել այդ կապակցությամբ իր

կողմից սահմանված կանոնները: 1994թ. Եվրախորհուրդը ձեռնամուխ եղավ 1963 թվականի Դաշնագրի արմատական վերանայմանը: Վերացվեց այն դիրքորոշումը, որը պահանջում էր խուսափել երկքաղաքացիությունից: Սա յուրաքանչյուր երկրի թույլ կտա ճանաչել կամ չճանաչել երկքաղաքացիությունը և այդ հարցում ընդունել տվյալ երկրին հարմար սկզբունքներ:

Հինգերորդ, Հայաստանի հանրապետության օրենսդրությունն արտասահմանում սպրդող անձանց բույրատրում է պահպանել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: Այդ սկզբունքը բխում է մարդու բնական իրավունքից՝ ընտրելու իր բնակության վայրը, ազատորեն մեկնել հանրապետությունից և առանց խոչընդոտների վերադառնալ, ինչը ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25 հոդվածում:

Վեցերորդ, ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք են բերում պարզեցված կարգով: Այդ սկզբունքը ամրագրված է հանրապետության Սահմանադրության 11.3 հոդվածում: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար քաղաքացիության մասին օրենքը սահմանում է մի շարք պայմաններ, որոնց թվում՝ վերջին երեք տարում Հայաստանի Հանրապետությունում ապրելը (13 հոդվ. 1-ին կետ): Ծագումով հայերի նկատմամբ, որոնք բնակություն են հաստատել Հայաստանի Հանրապետությունում, քաղաքացիություն շնորհելու համար նման նստակեցության ցեեզ չի պահանջվում:

Յոթերորդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը մերժում է օտարերկրյա քաղաքացու հետ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ամուսնության դեպքում, ինչպես նաև՝ օտարերկրացի ամուսնու քաղաքացիության փոփոխման դեպքում մեխանիկորեն նրա (Հայաստանի քաղաքացու) քաղաքացիության փոփոխությունը: Այս սկզբունքը ուղղակիորեն բխում է քաղաքացիության կամավոր լինելու սկզբունքի բովանդակությունից, որի շնորհիվ պետությունը միակողմանի, օրենքով սահմանված կարգով, **առանց քաղաքացու փոխադարձ համաձայնության**, իրավասու չէ լուծարելու կամ փոփոխելու անձի քաղաքացիությունը: Բացի դրանից, բերված նորմը ելնում է Ամուսնացած կանանց մասին 1957 թվականի միջազգային դաշնագրի պահանջներից: Կանանց իրավունքները պաշտպանելու նպատակով այն նախատեսում է, որ օտարերկրացու հետ ամուսնության և ամուսնալուծության, ինչպես նաև ամուսնու կողմից քաղաքացիության փոփոխման դեպքերը **չպետք է մեխանիկորեն ազդեն կնոջ քաղաքացիության վրա**:

Հայաստանի Հանրապետության համար մեր օրերում այդ նորմը ունի չափազանց արդիական նշանակություն, որովհետև արտասահմանյան երկրների հետ կապերի՝ գնացող ընդլայնումը և **տարբեր երկրների քաղաքացիների հետ անձնական շփումները հնարավոր են դարձնում մեզնիս ամուսնությունների անը**: Այդ առնչությամբ «Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (6 հոդվ.) ամրագրել է երկու կարևոր դրույթ. ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացու ամուսնությունն օտարերկրյա քաղաքացու հետ ինքնին քաղաքացիության փոփոխման չի հանգեցնում և բ) ամուսիններից մեկի քաղաքացիության փոխելը ինքնին չի հանգեցնում մյուսի քաղաքացիության փոփոխման:

Ութերորդ, Հայաստանի Հանրապետությունը պաշտպանում և հովանավորում է հանրապետությունից դուրս ապրող իր քաղաքացիներին: Այդ սկզբունքը ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 11.3 և քաղաքացիության մասին օրենքի 7 հոդվածներում: Ըստ այդ նորմերի, Հայաստանի Հանրապետությունը, արտերկրներում գտնվող նրա դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները և դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են պաշտպանել իրենց՝ հավատարմագրած պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել նրանց խախտված իրավունքները վերականգնելու համար՝ այդ պետությունների օրենսդրությանը և Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին համապատասխան:

§ 3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերը և կարգը

Քաղաքացիության մասին օրենքի 9 հոդվածը սահմանում է քաղաքացիություն **ձեռք բերելու 7 հիմք**: Դրանք են. ա) քաղաքացիության ճանաչումը, բ) ծննունդը, գ) քաղաքացիություն ստանալը, դ) քաղաքացիությունը վերականգնելը, ե) քաղաքացիության խմբային ձեռքբերումը, զ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերը, է) սույն օրենքով նախատեսված այլ հիմքերը:

1. **Քաղաքացիության ճանաչումը**, որպես դրա ձեռքբերման հիմք (հոդվ. 10), ունի իր օրենսդրական ամրագրման առանձնահատկությունը: Խորհրդային Միության տարածքում գործում էր **միասնական քաղաքա-**

ցիությունը, այսինքն՝ միութենական հանրապետությունների քաղաքացիները միաժամանակ համարվում էին միութենական պետության քաղաքացիներ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անկախ Հայաստանի Հանրապետությունը, բնականաբար, չէր կարող որևէ այլ հիմքերով ձևակերպել միլիոնավոր անձանց քաղաքացիությունը, որը ոչ միայն հնարավոր չէր, այլև նպատակահարմար չէր: Ահա թե ինչու կիրառվեց **քաղաքացիության ճանաչման հիմքը**, որը հնարավորություն էր ընձեռում որոշելու, թե քաղաքացիության մասին օրենքի ուժի մեջ մտնելու պահին նախկին Խորհրդային Հայաստանի քաղաքացիներից ովքեր են, որ պահպանում են քաղաքացու իրենց կարգավիճակը: Օրենքի 10 հոդվածի (1-ին մաս) համաձայն՝ դրանք Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին ՀԽՍՀ քաղաքացիներն են, **ովքեր մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելը (1995թ. հուլիսի 5-ը) ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն** կամ հրաժարվել են դրանից՝ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից (1995թ. նոյեմբերի 26-ը) **մեկ տարվա ընթացքում**:

Նախկին ԽՍՀՄ-ն իր տարածքում ապրող մոտ 100-ից ավելի ազգերի ու ազգությունների մերձեցման, միասնական տնտեսական համակարգ ստեղծելու, առավել ևս խորհրդային **ժողովուրդներին ձուլելու** նպատակով պլանավորված կերպով կատարել էր հսկայական միգրացիոն (ժողովուրդների տեղափոխություն մեկ հանրապետությունից մյուսը) գործընթացներ: Ուստի ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, երբ նրա կազմում գտնվող պետություններն անկախացան, բազմաթիվ ժողովուրդների հոծ բազմություններ միմյանց ազգային պետությունների տարածքում ակամա հայտնվեցին ազգային փոքրամասնությունների կարգավիճակում:²¹

Հայաստանի Հանրապետության տարածքում նույնպես, չնայած փոքր թվով, ապրում էին այլ հանրապետությունների քաղաքացիներ (որոշ մասը մշտական հիմունքներով), ուստի քաղաքացիության մասին օրենքը, ամրագրելով քաղաքացիության ճանաչման սկզբունքը, չէր կարող հաշվի չառնել այդ հանգամանքը: Օրենքի 10 հոդվածով (2-րդ կետ.) Հայաստանի Հանրապետության քաղաքացի են ճանաչվում Հայաստանի Հանրապետությունում **մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները, ովքեր մինչև 2009թ. դեկտեմբերի 31-ը դիմում են ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար**:

²¹ Մասնավորապես, 25 մլն. ռուսալեզու քաղաքացիներ, որոնցից 11.5 միլիոնը Ուկրաինայում, 6.3 միլիոնը՝ Լատվիաստանում, մոտ 3 միլիոնը՝ Անդրկովկասում և Միջին Ասիայում, 1.4 միլիոնը՝ Սերժբարիկայում (С.А.Авакьян, Гражданство Российской Федерации, М., 1994, էջ 17):

Ավելի մեծ թիվ էին կազմում այլ հանրապետություններում ապրող հայազգի քաղաքացիները, ուստի օրենքը, առանց խախտելու քաղաքացիություն ստանալու կանախորության սկզբունքը, նրանց քաղաքացիության հարցը նույնպես լուծում է ճանաչման հիմքի վրա: Օրենքի 10 հոդվածի (3-րդ կետ) համաձայն՝ **Ցագումով հայ նախկին ՀՆՄՀ** այն քաղաքացիները, **ովքեր ձեռք չէին բերել այլ պետության քաղաքացիություն**, ճանաչվեցին ՀՀ քաղաքացիներ:

Օրենքի այդ պարզ ժողովրդավարական նորմերը կարճ ժամանակում սահմանեցին Հայաստանի Հանրապետության բնակչության ճնշող մեծամասնության քաղաքացիությունը, իսկ մնացած մասի վերաբերյալ օրենքով ամրագրված են ընդհանուր ճանաչում ստացած հիմքեր:

2. Այդ հիմքերից իր գործնական և մշտական կիրառությամբ առանձնանում է **քաղաքացիության ձեռքբերումը ծնունդով**: Այն կապված չէ անձի կամահայտնության հետ և **իրականացվում է ինքնին (ավտոմատ կերպով)**՝ գործող օրենսդրության հիման վրա: Այդ հիմքը ելնում է քաղաքացիության ձեռքբերման երկու սկզբունքների՝ «արյան իրավունքի» (որը կառուցված է ծնողների քաղաքացիության վրա) և «հողի իրավունքի» (որը պայմանավորված է ծննդավայրով) գուգակցումից:

«Արյան իրավունքի» սկզբունքի կիրառման արտահայտություն է այն, որ օրենքի 11 հոդվածի համաձայն՝ երեխան, որի ծնողները նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Եթե երեխայի ծնվելու պահին ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ, երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Ծնողների՝ տարբեր երկրների քաղաքացիության պատկանելու դեպքում, եթե մեկը երեխայի ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, ապա երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Դրա բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն՝ եթե ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, կամ եթե ծնողները մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետությունում, կամ էլ եթե երեխան կարող է դառնալ քաղաքացիություն չունեցող անձ (11 հոդվ. 3-րդ և 4-րդ մասեր):

«Հողի իրավունքի» սկզբունքը կիրառվում է այն երեխաների քաղաքացիությունը որոշելիս, **որոնց ծնողները հայտնի չեն**: Քաղաքացիության մասին օրենքի 20 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող երեխան, որի ծնողները անհայտ են, համարվում է ՀՀ քաղաքացի: Այդ նույն սկզբունքը տարածվում է նաև Հայաստանի Հանրա-

պետությունում ծնված երեխաների վրա, որոնց ծնողները ապաքաղաքացիներ են (12 հոդվ.):

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության վերը նշված երկու հիմքերը, եթե կապված են հատուկ պայմանների առկայության հետ (այս կամ այն առնչությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հետ), ապա **քաղաքացիություն ստանալու** (օրենքի 13 հոդվ.) **հիմքը կապված չէ որևէ պայմանի հետ**: Այդ հիմքով քաղաքացիություն կարող են ձեռք բերել 18 տարին լրացած բոլոր անձինք, ովքեր օրենքով սահմանված կարգով, **վերջին երեք տարիներին մշտապես բնակվել են Հայաստանի Հանրապետությունում**, ի վիճակի են բացատրվել հայերենով, ծանոթ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և դիմել են ՀՀ քաղաքացիություն ստանալու համար:

Պահանջվող **երեք տարվա նստակեցության ցեմզը** անհրաժեշտ է, որպեսզի անձը հասցնի տիրապետել հայերենին և աշխատանքային հարաբերություններում (այդ թվում պետական ապարատում պաշտոն զբաղեցնելիս) կարողանա հաղորդակցվել հայերենով, ինչպես նաև ծանոթանա Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Դրա հետ մեկտեղ, քաղաքացիություն ստանալու հարցում օրենքը նման պահանջներ չի առաջադրում այն անձի համար, որը՝ ա) անուսմացել է ՀՀ քաղաքացու հետ կամ ունի ՀՀ քաղաքացի երեխա, բ) որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է ՀՀ քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, և որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, գ) Ցագումով հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ, դ) 1995թ. հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել ՀՀ քաղաքացիությունից (19 հոդվ. 2-րդ մաս):

Օրենքով սահմանված են նաև այն հիմքերը, որոնց առկայության դեպքում կարող է **մերժվել** Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու՝ անձի միջոցորդությունը: Դա վերաբերում է այն անձանց, ովքեր **իրենց գործունեությամբ վնասում են պետական և հասարակական անվտանգությանը**, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարեբրին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին և բարի համբավին:

Քաղաքացիության ընձեռումն իրականացվում է անձնական խնդրանքի (որը ձևակերպվում է դիմումի տեսքով) հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից: Քաղաքացիություն ստացողը Հայաստանի Հանրապետությանը **տալիս է հավատարմության երդում** (որի տեսքով շարադրված է օրենքի 13 հոդվածում):

4. Քաղաքացիության ձեռքբերման ինքնուրույն հիմք է **քաղաքացիության մեջ վերականգնելը**: Այդպիսի հնարավորություն վերապահվում է այն անձանց, **ովքեր ինչ-որ պատճառներով կորցրել են իրենց** քաղաքացիությունը:

Օրենքը ոչ մի նշում չունի այն մասին, թե ինչ պատճառներով քաղաքացիությունը կորցրած անձինք իրավունք ունեն վերականգնել ՀՀ քաղաքացիությունը: Նրանում ամրագրված կարգի համաձայն, քաղաքացիության մեջ վերականգնվելու համար **անձը պետք է դիմում ներկայացնի** համապատասխան իրավասու մարմիններին, ինչը, ըստ էության, շատ նման է քաղաքացիություն ստանալու գոյծընթացին:

Օրենքը քաղաքացիության մեջ **վերականգնվելու համար առաջադրում է որոշ պահանջներ**. ա) վերականգնվողի գործունեությունը չպետք է վնաս պատճառի պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին և բարի համբավին, բ) վերականգնման խնդրանքով դիմողի քաղաքացիության կորուստը չպետք է լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից զրկվելու հիմքով (14 հոդվ.), ինչը համարվում է պետության կողմից կիրառվող պատժամիջոց՝ քաղաքացիության վերաբերյալ օրենսդրությունը կոպիտ կերպով խախտող անձանց նկատմամբ: Մյուս բոլոր դեպքերում նախկինում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ցանկացած անձ կարող է Հայաստանի **քաղաքացիության մեջ վերականգնվելու մասին միջնորդություն ներկայացնել**:

5. Գործնականում համեմատաբար քիչ կիրառվող հիմքերից է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության **խմբային ձեռքբերումը**: Քաղաքացիության մասին օրենքի 15 հոդվածի համաձայն՝ նման հիմքով քաղաքացիության ձեռքբերումը իրականացվում է առավելապես ներգաղթի ժամանակ՝ Հանրապետության Նախագահի կրանմանագրով:

Քաղաքացիության խմբային ձեռքբերման հիմքն առավելապես **ուղղված է ապագային**, քանզի մեր ժամանակներում Հայաստանի քաղաքացիները զանգվածաբար հեռանում են, և բացառված չէ, որ ապագայում նրանք կարող են նույն կերպ՝ **զանգվածաբար վերադառնալ** հայրենիք: Հայ իրականության մեջ քաղաքացիության խմբային ձեռքբերում առաջին (և միակ) անգամ իրականացվել է 1946 թվականին, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով արտասահմանից Հայաստան ներգաղթած մի խումբ հայերի շնորհիվ Հայկական ԽՍՀ (ուստի և ԽՍՀՄ) քաղաքացիություն՝ հանրապետության տարածք մուտք գործելու պահից:

6. Օրենքն ամրագրելով քաղաքացիության ձեռքբերումը այլ հիմքերով՝ նկատի ունի **որդեզրումը, խնամակալությունը**, ծնողների համաձայնությունը երեխայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության վերաբերյալ և այլն (16-22 հոդվ.):

§ 4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցումը

Քաղաքացիության դադարեցումը, փաստորեն, Հայաստանի Հանրապետության հետ **անձի իրավական կապի կորուստն է**, որն, ըստ «Քաղաքացիության մասին» օրենքի, հնարավոր է հետևյալ հիմքերով. ա) ՀՀ քաղաքացիությունը փոխելու հետևանքով, բ) ՀՀ քաղաքացիությունից հարկադրաբար զրկվելով, գ) ՀՀ միջազգային պայմանագրերի հիման վրա, դ) օրենքով նախատեսված այլ հիմքերով (23 հոդվ.):

1. **Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելը** կարող է իրականացվել երկու ձևով՝ **քաղաքացիությունից դուրս գալու և այլ պետության քաղաքացիություն ընդունելու** միջոցով:

Քաղաքացիությունից դուրս գալը կարող է տեղի ունենալ միայն քաղաքացու ցանկությամբ: Քաղաքացիության մասին օրենքի 24 հոդվածում գրված է, որ 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի **ցանկացած ժամանակ փոխել իր քաղաքացիությունը**, այսինքն դուրս գալ Հանրապետության քաղաքացիությունից կամ ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն:

Եթե քաղաքացիությունից դուրս գալը կարող է տեղի ունենալ **միայն անձի ցանկությամբ**, ապա այլ պետության քաղաքացիության ձեռքբերումը ոչ միշտ է, որ կատարվում է անձի ցանկությամբ: Տարբեր երկրներում քաղաքացիության ձեռքբերման և դադարման սկզբունքների տարբերությունները էական ազդեցություն են ունենում այդ խնդրի լուծման գործում: Հաճախ **անձն իր կամքից անկախ կարող է հայտնվել ինչպես ապաքաղաքացիության, այնպես էլ բազմաքաղաքացիության** վիճակում:

Քաղաքացիությունից դուրս գալու և քաղաքացիությունը փոխելու ազատությունը չպետք է ընկալել որպես բացարձակ հնարավորություն: Պետությունը, ելնելով իր շահերից և հաշվի առնելով նաև որոշ այլ հանգամանքներ, **կարող է որոշակի սահմանափակումներ մտցնել** այդ հարցում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին գործող օրենքը սահմանում է **երկու խումբ հիմքեր**, որոնք խոչընդոտում են քաղաքացիության դադարեցմանը:

Առաջին խումբ հիմքերի առկայության դեպքում **անձը ժամանակավորապես չի կարող դադարեցնել իր իրավական կապը** Հանրապետության հետ, այսինքն՝ խոչընդոտող հանգամանքները վերականգնելուց հետո միայն նա կարող է միջնորդել Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու խնդրանքով: **Այդպիսի հիմքեր են համարվում՝** անձի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը, նրա նկատմամբ դատարանի օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճռի և վճռի առկայությունը: Առաջին խումբ հիմքերի թվին են պատկանում նաև անձի կողմից պետության, ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված **չկատարված պարտականությունները:**

Եթե առաջին խմբում բերված խոչընդոտների վերացման դեպքում (քրեական հետապնդման դադարումը, ազատագրվման ժամկետի ավարտը, պետության, ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունների կատարումը) անձը կարող է վերականգնել քաղաքացիության դադարեցման իր իրավունքը, **սպա երկրորդ խումբ հիմքերն ընդհանրապես բացառում են** քաղաքացիությունից դուրս գալու հնարավորությունը: **Այդպիսի հիմք է համարվում** Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը: Օրենքը այդ կապակցությամբ բովանդակում է հատուկ նորմ, որի համաձայն, քաղաքացիությունից դուրս գալու քաղաքացու դիմումը մերժվում է, եթե ՀՀ քաղաքացիությունից նրա դուրս գալը հակասում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին (24 հոդվածի 3-րդ կետ):

Օրենքը չի նշում, թե ինչ պետք է հասկանալ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահ» ասելով: Պետք է ենթադրել, որ նշված սահմանափակումը վերաբերում է այն անձանց, ովքեր տիրապետում են Հայաստանի Հանրապետության կարևորագույն պետական գաղտնիքների:

2. Քաղաքացիության դադարեցումը կատարվում է նաև **քաղաքացիությունից զրկելու** միջոցով: Այն կրում է խիստ անհատական բնույթ և, սովորաբար, հանդիսանում է **պետության կողմից կիրառվող սանկցիա** հակաօրինական գործողություն կատարած անձի նկատմամբ: Այսինքն, սա այն դեպքն է, երբ քաղաքացիությունը դադարեցվում է անձի կամահայտնությանը հակառակ:

Քաղաքացիության մասին օրենքը ամրագրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից **զրկելու երեք հիմքեր**, որոնք են՝ ա) բնակվելով արտասահմանում՝ յոթ տարվա ընթացքում առանց հարգելի պատճառների հյուպատոսական հաշվառման չկանգնելը, բ) ՀՀ քաղա-

քացիություն ձեռք բերելը կեղծ տվյալների կամ փաստաթղթերի հիման վրա, գ) այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը՝ քաղաքացիության մասին ՀՀ օրենսդրության խախտմամբ:

Եթե առաջին և երրորդ հիմքերով, անձին զրկելով քաղաքացիությունից, **պետությունը նրա նկատմամբ իսկապես կիրառում է սանկցիա** (որովհետև առաջին դեպքում վերջինս խախտել է արտերկրում ապրող քաղաքացիների և հանրապետության միջև կապի պահպանման վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջները, իսկ երրորդ դեպքում ՀՀ օրենսդրությունը խախտելով՝ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն), ապա այդ նույնը չի կարելի ասել **երկրորդ հիմքի կապակցությամբ**: Այստեղ, փաստորեն, Հայաստանի Հանրապետությունը **ուղղակի վերանայում է անձին քաղաքացիություն շնորհելու մասին իր որոշումը**, որը կախացվել է նրա կողմից քաղաքացիություն ստանալու վերաբերյալ ներկայացված կեղծ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա:

§ 5. Երեխաների քաղաքացիության որոշման կարգը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքը հատուկ գլուխ է նվիրել երեխաների քաղաքացիության կարգավորմանը՝ նրանց ծնողների կողմից ՀՀ քաղաքացիության ձեռքբերման, այն կորցնելու, որդեգրման, խնամակալության, հոգաբարձության և այլ դեպքերում (16-22 հոդվ.): Ընդ որում, օրենքն այդ խնդիրում առաջնորդվում է մի շարք սկզբունքներով, որոնք ելակետային են համարվում **մարդասիրական, ժողովրդավարական հիմունքներով** երեխաների քաղաքացիությունը կարգավորելու համար: Այդ սկզբունքներն են՝ ա) բնտանիքի բոլոր անդամների համար միատեսակ քաղաքացիության ապահովումը, բ) երեխաների կարծիքի հաշվառումը, գ) երեխաների ապաքաղաքացիության բացառումը, դ) երեխաների շահերից ելնելով հնարավորինս նրանց ՀՀ քաղաքացիությամբ ապահովելը:

1. **Ընտանիքի բոլոր անդամների համար միատեսակ քաղաքացիության ապահովման** կարևոր երաշխիք է «Քաղաքացիության մասին» օրենքով սահմանված **այն ընդհանուր կանոնը**, համաձայն որի, մինչև 14 տարեկան երեխաները **ձեռք են բերում իրենց ծնողների քաղաքացիությունը**: Ըստ այդ նորմի՝ ՀՀ քաղաքացիություն ունեցող ծնողների մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն (16 հոդվ.): Նույն կարգով, **ՀՀ քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչև 14 տարեկան երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը**, եթե նա ձեռք է րկում այլ պետության քաղաքացիություն (17 հոդվ.):

Ընտանիքի անդամների համար միատեսակ քաղաքացիության ասպանովմանը մեծ չափով նպաստում է նաև այն, որ օրենքը հաճախ թույլատրում է տարբեր քաղաքացիություն ունեցող *ծնողներին՝ փոխադարձ համաձայնությանը* որոշելու իրենց մինչև 14 տարեկան երեխայի քաղաքացիությունը: Այդպիսի նորմեր են բովանդակում օրենքի 11, 18 և այլ հոդվածները:

2. *Համապատասխան տարիքի հասած երեխաների կարծիքը հաշվի առնելը՝ քաղաքացիության քննարության ժամանակ*, երբ փոխվում է ծնողների քաղաքացիությունը, հանդիսանում է ընդհանուր կանոն, որը ամրագրված է բոլոր ժողովրդավարական կարգ ունեցող երկրների օրենսդրություններում: ՀՀ քաղաքացիության մասին օրենքը (հոդվ. 22) ուղղակի ամրագրում է. «Ծնողների քաղաքացիությունը փոխվելու դեպքում 14-18 տարեկան երեխաների քաղաքացիությունը փոխվում է սույն օրենքով սահմանված կարգով՝ *երեխաների համաձայնության առկայության դեպքում*»:

3. Օրենքի կարևոր խնդիրներից է երեխայի քաղաքացիության կարգավորման ժամանակ նրա *ապարքաղաքացիության բացառումը*: Բոլոր այն դեպքերում, երբ ծնողների (որդեգրողների, խնամակալների և հոգաբարձուների) փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում երեխան կարող է *հայտնվել ապարքաղաքացիության կարգավիճակում*, ապա օրենքի կողմից նա ճանաչվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Այսպես, Օրենքի 11 հոդվածի համաձայն, այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխայի քաղաքացիությունը *որոշվում է ծնողների գրավոր համաձայնությանը*: «Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, կամ եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ...»: Սույն կարգով, եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը օտարերկրյա քաղաքացի է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե «երեխան քաղաքացիություն չունեցող անձ է կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ» (18 հոդվ., 3-րդ կետ):

4. Հայաստանի Հանրապետությունը, ինչպես արդեն ասվել է վերևում, քաղաքացիության կարգավորման հարցում առաջնորդվում է «արյան իրավունքի» սկզբունքով: Երեխաների քաղաքացիության որոշման խնդրում հանրապետության օրենսդրությունը այդ սկզբունքին հա-

տուկ պահանջները գուցակցում է *երեխայի շահերի պաշտպանության և նրա համար հնարավորինս ՀՀ քաղաքացիության ասպանովման հետ*: Այդ տրամաբանությամբ են շարադրված օրենքի 3-րդ գլխի («Երեխայի քաղաքացիությունը ծնողների քաղաքացիության փոփոխման կամ որդեգրման դեպքում») բոլոր հոդվածները: Այսպես, օրինակ, օրենքի 19 հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են օտարերկրյա քաղաքացիները կամ այնպիսի ամուսիններ, որոնցից մեկը ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, պահպանում է ՀՀ քաղաքացիությունը:

Եթե երեխային որդեգրել են քաղաքացիություն չունեցող անձինք կամ որդեգրած ամուսիններից մեկը ապաքաղաքացի է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, մույնպես պահպանվում է ՀՀ քաղաքացիությունը: Ավելին, ՀՀ քաղաքացիների երեխան, որի նկատմամբ հաստատված է ՀՀ քաղաքացիների խնամակալություն կամ հոգաբարձություն, պահպանում է ՀՀ քաղաքացիությունը՝ անկախ նրա ծնողների ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու հանգամանքից: Նման դեպքում երեխան ծնողների դիմումով կարող է դուրս գալ ՀՀ քաղաքացիությունից միայն այն դեպքում, եթե վերջիններս զրկված չեն ծնողական իրավունքից (21 հոդվ.):

Երեխայի քաղաքացիության որոշման հարցում ծնողների, որդեգրողների, խնամակալների և հոգաբարձուների միջև ծագած վեճերը քննարկվում են դատական կարգով և լուծվում *ելնելով երեխայի շահերից*:

§ 6. Քաղաքացիության վերաբերյալ գործերի լուծման կարգը

Քաղաքացիության ձեռքբերման և դադարման հիմնահարցերի իրավական կարգավորման հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքն զգալի տեղ է հատկացրել նաև դրանց իրացման կազմակերպման խնդիրներին: Օրենքը հստակ սահմանում է *այն պետական մարմինները*, որոնք զբաղվում են քաղաքացիության մասին գործերով, այդ առնչությամբ նրանց վերապահված լիազորությունները, ամրագրում է գործերի քննարկման և դրանց գանգատարկման կարգը: Այդ պետական մարմինների թվին են պատկանում՝ *Հանրապետության Նախագահը, Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովը, կառավարությունը, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ինչպես նաև ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ծառայությունները*:

Թվարկված մարմիններից, քաղաքացիության հետ կապված հարցերի լուծման գործում, հիմնական լիազորությունները վերապահված են **Հայաստանի Հանրապետության Նախագահին**: Սահմանադրությունը ամրագրում է նորմ (55 հոդվ., կետ 15), որի համաձայն՝ Նախագահը «Օրենքով սահմանված կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ... հետ կապված հարցերը»:

Քաղաքացիության մասին օրենքը հստակեցնում է Նախագահի լիազորությունները այդ ոլորտում: Մասնավորապես, Հանրապետության Նախագահը լուծում է ՀՀ քաղաքացիություն ստանալու, ՀՀ քաղաքացիությունը վերականգնելու, ՀՀ քաղաքացիության խմբային ձեռքբերման, ՀՀ քաղաքացիության դադարեցման հարցերը, ինչպես նաև սահմանում է քաղաքացիության վերաբերյալ դիմումների քննարկման կարգը (26 հոդվ.): Նշված բոլոր հարցերի վերաբերյալ Նախագահը հրապարակում է **հրամանագրեր**:

Քաղաքացիության հարցերով զբաղվող մյուս մարմինները իրականացնում են **միայն նախապատրաստական գործողություններ**: Այդ մարմիններից համեմատաբար լայն լիազորություններ ունի **Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովը**: Օրենքի 27 հոդվածին համապատասխան՝ այդ հանձնաժողովը կազմավորում և նրա կանոնադրությունը հաստատում է Հանրապետության Նախագահը: Այդ նորմի հիման վրա Հայաստանի Հանրապետության Նախագահը 1999թ. հունիսի 23-ին ընդունել է երկու հրամանագիր, որոնցով հաստատել է հանձնաժողովի կազմը և կանոնադրությունը:

Ինչպես նախատեսված է կանոնադրության մեջ, հանձնաժողովը **խորհրդակցական մարմին է**, և ինչպես նրա նախագահը, այնպես էլ անդամները հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական կարգով: Սակայն դա չի խանգարում, որպեսզի հանձնաժողովն զբաղվի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության վերաբերյալ գործերով և ապահովի պետության միասնական քաղաքականությունը քաղաքացիության ոլորտում: Հանձնաժողովի իրավասության մեջ է մտնում ՀՀ քաղաքացիություն ստանալու, ՀՀ քաղաքացիությունը վերականգնելու, ՀՀ քաղաքացիության խմբային ձեռքբերման, ՀՀ քաղաքացիության դադարեցման վերաբերյալ **դիմումների նախնական քննարկումը և դրանց կապակցությամբ Հանրապետության Նախագահին առաջարկություններ ներկայացնելը** (3-րդ կետ):

Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող՝ ՀՀ քաղաքացիության վերաբերյալ նյութերի նախապատրաստումն իրականացվում է Հանրապետության Նախագահի աշխատակազմի **ներման, քաղաքացիության,**

պարզևների և կոչումների վարչությունը: Այդ վարչության միջոցով հանձնաժողովը իր քննարկմանը ներկայացված նյութերի վերաբերյալ պետական մարմիններից կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

Քաղաքացիության հարցերով **նախապատրաստական աշխատանքներ** է կատարում նաև **Հայաստանի Հանրապետության կառավարությունը**: Այդ կապակցությամբ նրա խնդիրները սահմանված են քաղաքացիության մասին **օրենքի 28 հոդվածում**: Ըստ այդ հոդվածի, կառավարությունը իրավասու մարմինների (ՀՀ ոստիկանության և ՀՀ արտաքին գործերի նախարարության) միջոցով ընդունում է քաղաքացիության **վերաբերյալ դիմումներ** և այլ փաստաթղթեր, ստուգում դրանց իսկությունն ու հիմնավորվածությունը և համապատասխան **եզրակացություններով ուղարկում** Հանրապետության Նախագահին: Կառավարությունը անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում Հանրապետության Նախագահին առաջարկություն է ներկայացնում նաև քաղաքացիությունը դադարեցնելու մասին, կատարում է քաղաքացիների հաշվառում և պարզում անձանց պատկանելությունը ՀՀ քաղաքացիությանը:

Օրենքը կառավարության իրավասությանն է վերապահել ՀՀ քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերի ձևակերպման և դրանք քաղաքացիներին հանձնելու կարգի, ինչպես նաև քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի և նմուշների սահմանումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության վերաբերյալ հարցերի իրականացմանը որոշ մասնակցություն ունեն նաև **ՀՀ ոստիկանությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, դիվանագիտական ներկայացուցչություններն ու հյուպատոսական ծառայությունները**: Նրանց լիազորությունների մեջ են մտնում՝ ՀՀ քաղաքացիության հարցերով **դիմումների և միջնորդությունների ընդունումը**, ներկայացված փաստերի և փաստաթղթերի ստուգումը, փաստաթղթերը՝ իրենց եզրակացությամբ, կառավարությանն ուղարկելը և այլն:

Քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումներն ու միջնորդությունները ներկայացվում են **գրավոր** անձի բնակության վայրի ոստիկանության ծառայության պետին, իսկ եթե անձը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, ապա՝ համապատասխան դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկություն: Դիմումները քննարկվում են **մեկամսյա** ժամկետում, որոնց մերժման դեպքում կրկին կարելի է դիմել մերժման օրից մեկ տարի հետո՝ ՀՀ քաղաքացիության մասին օրենքով սահմանված կարգով:

Քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծման օրինականության պահպանման համար կարևոր երաշխիք է համարվում այն, որ այդ կապակցությամբ ընդունված **որոշումները կարող են բողոքարկվել** օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Այսպես, ՀՀ քաղաքացիության մասին օրենքի 30 հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձանց կողմից քաղաքացիության հարցերով դիմումները չընդունելը, քննարկման ժամկետները խախտելը, ինչպես նաև նրանց այլ անօրինական գործողությունները կարող են **գանձատարվել դատական կարգով:**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը համարվում է ձեռք բերված կամ դադարեցված Հանրապետության Նախագահի կողմից այդ կապակցությամբ հրամանագրի հրապարակման պահից: Հրամանագրի **կատարման վերահսկողությունը**, Հանրապետության Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովի կանոնադրությամբ (կետ 12), դրված է Նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզևների և կոչումների վարչության վրա:

**§ 7. Փախստականների իրավական վիճակը
Հայաստանի Հանրապետությունում**

Փախստականների հիմնահարցը եղել և մնում է **քաղաքակիրթ պետությունների հոգածության առարկան** և արդյունավետ լուծում պահանջող հիմնախնդիրներից մեկը: Այն ավելի է կարևորվում **21 դարի շեմին**, երբ տեղի են ունենում աշխարհաքաղաքական խոշոր տեղաշարժեր, ավելի են սրվում ազգամիջյան հակասությունները, խոչանում է ռազմաքաղաքական և սոցիալական ճգնաժամը: Տարածված լինելով ամբողջ աշխարհում, փախստականությունը իրեն ավելի ցավոտ կերպով զգացնել է տալիս հատկապես նախկին **խորհրդային Միության** տարածքում ձևավորված նորանկախ հանրապետություններում:

Փախստականության հիմնախնդիրը **ավելի ցավոտ արտահայտվեց** Հայաստանի Հանրապետությունում: Տուրք շտաբով պատմական փաստերի շարադրմանը (այդ դեպքերը և տարիները հայ ժողովրդի կյանքում բավական շատ են) նշենք, որ 20-րդ դարի 80-ականների վերջին և 90-ականների սկզբներին Ադրբեջանում (Մուսգայիթ, Բաքու) հայազգի քաղաքացիների նկատմամբ իրականացված ցեղասպանության և նախկին **խորհրդային Միության** մյուս հանրապետությունների տարածքներում ազգամիջյան բախումների պատճառով մոտ կես միլիոն հայեր արտա-

գաղթեցին աշխարհի տարբեր երկրներ, այդ թվում մոտ **350000-ը՝ Հայաստանի Հանրապետություն²²:**

Մոտ 3 մլն բնակիչ ունեցող Հայաստանի համար դա բավական մեծ թիվ էր, մանավանդ եթե հաշվի առնենք, որ առանց այդ էլ հանրապետությունում տիրում էր լարված սոցիալ-քաղաքական իրադրություն: Նման դեպքերում փախստականների առկայությունը կարող է անցանկալի բեռ հանդիսանալ առանձին երկրների համար, ուստի այդ խնդիրը վաղուց ի վեր դուրս է եկել ներպետական շրջանակներից և դարձել միջազգային կարգավորման առարկա (դեռևս 20-րդ դարի 20-ական թվականներից):

Միջազգային մակարդակով փախստականների իրավական վիճակը, փախստականի կարգավիճակ տալու պայմաններն ու կարգն ամրագրված են այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1951թ. հունիսի 28-ին ընդունված փախստականների կարգավիճակի մասին համաձայնագիրը և 1966թ. դեկտեմբերի 16-ի արձանագրությունը, 1954թ. ապրիլի 22-ի համաձայնագիրը և 1967թ. հոկտեմբերի 4-ի արձանագրությունը և այլն:

Եթե միջազգային-իրավական ակտերով միայն սահմանվում են անձին փախստական ճանաչելու չափանիշները և ընթացակարգը, ապա նրանց իրավունքների և ազատությունների գործնական իրականացման և պաշտպանության խնդիրը թողնված է պետություններին՝ ելնելով նրանց ազգային, կրոնական, էթնիկական, աշխարհագրական և այլ առանձնահատկություններից:

Հայաստանի Հանրապետությունը **1993թ. հոկտեմբերի 4-ին միացել է փախստականների կարգավիճակի մասին համաձայնագրին**, իսկ հուլիսի 6-ին՝ արձանագրությանը և այդ ակտերի դրույթները արտացոլել է իր ազգային օրենսդրության մեջ:

1988-1992թթ. ընդունելով ավելի քան 350000 փախստականներ, Հանրապետության առանց այն էլ ծանր վիճակը (որը հետևանք էր անկախության համար համաժողովրդական շարժումների պատճառով տնտեսության քայքայման և 1988թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժի) **ավելի վատթարացավ:** Լուրջ դժվարություններ էր առաջացնում հիմնախնդրի կարգավորման հարցում համապատասխան օրենսդրական ակտերի բացակայությունը: Փախստականների (որոնց ճնշող մեծամաս-

²² Փախստականների շարժի մասին Հայաստանի Հանրապետությունում տես Վարդան Այվազյան. Մարդու իրավունքներ: Երևան, 2007, էջեր 256-257:

նությունը հայազգի էին) ամենակենսական պահանջմունքների բավարարումը դարձավ ՀՀ կառավարության առաջնահերթ խնդիրը: Միայն 1990-1996թթ. ՀՀ կառավարության կողմից այդ կապակցությամբ ընդունվել է ավելի քան **50 որոշում**: Այսպես, ՀՀ կառավարության 1991 թ. հունիսի 16-ի «Աղյուսեզանական ԽՍՀ-ն հարկադրաբար լքած քաղաքացիների բնակարանների ու գույքի փոխհատուցման և մշտական բնակության վայրերում տեղավորման հետագա միջոցառումների մասին» որոշմամբ հանձնարարվում էր համապատասխան նախարարություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին հյուրանոցներ, հանգստյան տներ և հանրակացարաններ ունեցող գերատեսչություններին՝ ժամանակավոր կացարաններից մշտական բնակության վայրերը մեկնող ընտանիքներին անհատույց հատկացնել առօրյա օգտագործման գույք: 1992թ. ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում փախստականների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման միջոցառումների մասին» որոշումը պարտավորեցնում էր պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին իրականացնելու միջոցառումներ՝ կապված **փախստականների բնակարանային շինարարության վարկավորման**, վագոն-տնակների ձեռքբերման և տեղադրման ծախսերի ֆինանսավորման և այլ հարցերում օգնություն կազմակերպելու հետ:

ՀՀ կառավարության կողմից հետագա տարիներին ընդունված որոշումներն ուղղված էին փախստականների սննդի ապահովման, կենսաթոշակներ և նպաստներ վճարելու և այլ հրատապ հարցերի լուծմանը:

Փախստականների իրավական վիճակի ավելի համակողմանի կարգավորման համար Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 1999թ. մարտի 3-ին ընդունեց «Փախստականների մասին» օրենքը: Նրանում առաջին անգամ օրենսդրական մակարդակով սահմանվեց, թե «փախստական» ճանաչելու համար ինչ չափանիշների պետք է բավարարի անձը: Ըստ օրենքի (հոդվ. 1), փախստական է համարվում այն անձը, որը՝ ա) չի հանդիսանում ՀՀ քաղաքացի, բ) գտնվում է իր քաղաքացիության պատկանելության պետությունից դուրս (որևէ պետության քաղաքացիություն չունենալու դեպքում՝ իր նախկին հիմնական բնակության պետությունից դուրս), գ) հետացել է մշված երկրից հիմնավոր երկյուղ ունենալով, որ կարող է հետապնդումների գոհ դառնալ՝ ռասայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական համոզմունքների համար, դ) այդ երկյուղի պատճառով չի կարող կամ չի կամենում վերադառնալ այդ պետություն և օգտվել նրա պաշտպանությունից:

Հայաստանի հանրապետության Ազգային ժողովը 2008թ. նոյեմբերի 28-ին ընդունեց նոր օրենք «Փախստականների և ապաստանի մասին», որտեղ ավելի մանրամասն է կարգավորվում փախստականի իրավական վիճակի բոլոր հանգամանքները: Ըստ այդ օրենքի նշված կատեգորիայի անձինք փախստականի կարգավիճակ ստանալու համար **դիմում են** ներկայացնում **լիազորված մարմին** (եթե գտնվում են ՀՀ տարածքում և այլ պետության կողմից չեն ստացել փախստականի կարգավիճակ) կամ լիազորված մարմնի ներկայացուցչին (եթե գտնվում են ՀՀ սահմանակետում): Փախստականի կարգավիճակ հայցողին, ՀՀ մուտք գործելուց հետո, լիազորված մարմինը ժամանակավորապես տեղավորում է **ժամանակավոր կացարանում**: Այնուհետև, «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 13 հոդվածում սահմանված կարգով, ժամանակավոր կացարաններում տեղավորված անձինք՝ ըստ այդ կացարանի գտնված վայրի, գրավոր դիմում են լիազորված մարմնին՝ ապաստանի և փախստականի կարգավիճակ ստանալու միջնորդությամբ: Դիմումները պարտադիր կերպով ընդունվում և սահմանված կարգով գրանցվում են, ժամանակավոր կացարանում նրանք ապահովվում են անհրաժեշտ կենսապայմաններով և այնտեղ նրանք կարող են ապրել մինչև դիմումի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը:

Փախստականի կարգավիճակ ստացած անձին լիազորված մարմինը տալիս է **փախստականի վկայական**, որը Հայաստանի Հանրապետությունում համարվում է փախստականի անձը հաստատող փաստաթուղթ և տրվում է 16 տարին լրացած բոլոր անձանց (16 տարին չլրացած փախստականների տվյալները նշվում են նրանց ծնողների փախստականի վկայականում) (29 հոդվ.):

Փախստականի կարգավիճակ ստացած անձը Հայաստանի Հանրապետությունում ունի օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար սահմանված իրավունքներն ու ազատությունները: Նա իրավունք ունի ազատ տեղաշարժվել ՀՀ տարածքում և ընտրել բնակավայր, ունենալ սեփականություն, աշխատել, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն և այլն (Օրենքի 2-րդ գլուխ, 15-18 հոդվ.):

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ փախստականների համար սահմանված են մի շարք արտոնություններ: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (31 հոդվ.) Հայաստանի Հանրապետությունում հողի սեփականության իրավունքից չեն կարող օգտվել օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող ան-

ծինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում: Ակնհայտ է, որ Սահմանադրությունը նման բացառություն է անում փախստականների համար: 1991թ. հուլիսի 29-ին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության տարածքում մշտական բնակություն հաստատած փախստականների համար հողի սեփականաշնորհման որոշ հարցերում արտոնություններ սահմանելու մասին» օրենքով հողի նկատմամբ սեփականության իրավունք էր վերապահվում նաև փախստականներին: Նշված օրենքով նրանց տրվում են լրացուցիչ արտոնություններ եկամտահարկի և ամասնագլխահարկի արժեքի վճարման հարցերում: Ավելին, Հանրապետության Հիմնական օրենքը թույլատրում է փախստականներին՝ օգտվել որոշ քաղաքական իրավունքներից: Նրա 30 հոդվածում (2-րդ մաս) ամրագրված դրույթի համաձայն՝ օրենքով կարող է սահմանվել ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունք:

Դրա հետ մեկտեղ, փախստականները պարտավոր են, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մուծել հարկեր, տուրքեր և կատարել այլ պարտադիր վճարումներ, կատարել ՀՀ օրենսդրության պահանջները, հարգել այլոց իրավունքներն ու ազատությունները:

Փախստականների և ապաստանի մասին օրենքը նախատեսում է նաև այն հիմքերը, որոնց առկայության դեպքում կարող է մերժվել փախստականի կարգավիճակ ստանալու միջնորդությունը և դադարեցվել փախստականի կարգավիճակը:

Փախստականի կարգավիճակ տալը մերժվում է, եթե այն հայցող անձը մինչև Հայաստանի Հանրապետություն մուտք գործելը կատարել է հետևյալ հանցագործություններից որևէ մեկը՝ ա) խաղաղության դեմ ուղղված, բ) մարդկության դեմ ուղղված, գ) զինվորական, դ) ոչ քաղաքական, ե) ՄԱԿ-ի նպատակներին ու սկզբունքներին հակասող հանցագործություն: Կարող է մերժվել նաև այն դեպքերում, եթե փախստականի կարգավիճակ տալը կարող է վնասել ՀՀ անվտանգությանը, եթե անձը ունի մի քանի պետության քաղաքացիություն, բայց առանց հիմնավոր պատճառների չի օգտվում այդ պետություններից որևէ մեկի պաշտպանությունից (օրենքի 10 հոդվ.):

Փախստականի կարգավիճակի ձեռքբերման խնդրում, օրինակաբար, օրենքը իրավունք է վերապահում անձին՝ դիմումը մերժելու վերաբերյալ **իրավասու մարմնի որոշումը մեկամսյա ժամկետում բողոքարկել դատական կարգով: Իսկ եթե ոչ իր մեղքով բաց**

է բողոք այդ ժամկետը, ապա մերժելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալուց հետո կարող է այն բողոքարկել երեք ամսվա ընթացքում:

Փախստականը, իր կամքին հակառակ, չի կարող վերադարձվել այն երկիր, որտեղից նա հեռացել է (հոդվ. 9): Սակայն նա կարող է կորցնել փախստականի կարգավիճակը, եթե Հայաստանի Հանրապետության կամ որևէ այլ պետության քաղաքացիություն է ձեռք բերել, մշտական բնակության համար մեկնել է այլ պետություն, կամավոր կերպով ընդունել է իր նախկին քաղաքացիության պետության պաշտպանությունը (10 հոդվ.) և այլն:

Մերժում ստացած փախստականի կարգավիճակ հայցողը, ինչպես նաև փախստականի կարգավիճակը կորցրած կամ դրանից զրկված անձինք պարտավոր են օրենքով սահմանված ժամկետում հեռանալ Հայաստանի Հանրապետությունից: Հրաժարվելու դեպքում՝ լիազորված մարմինների կողմից նրանք հարկադրաբար վտարվում են երկրից՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

§ 8. Քաղաքական ապաստանի իրավունքը

Քաղաքական ապաստանի իրավունքը համընդհանուր ճանաչում ստացած սահմանադրաիրավական ինստիտուտ է, որը ժամանակի ընթացքում ձեռք է բերել նաև միջազգային իրավական ճանաչում: Քաղաքական ապաստանի տրամադրման և դրա իրավական հետևանքների հետ կապված հարցերը կարգավորվում են ինչպես ներպետական իրավական ակտերով, այնպես էլ միջազգային փաստաթղթերով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55 հոդվածում (15-րդ կետ) նշվում է, որ Հանրապետության Նախագահը «Լուծում է քաղաքական ապաստան տալու հարցը»: ՀՀ իրավունքի համակարգում, բացի սահմանադրական այս նորմից, գոյություն չունի որևէ այլ նորմատիվ ակտ կամ դրույթ՝ նվիրված քաղաքական ապաստանի տրամադրմանն առնչվող հարցերի կարգավորմանը:

Քաղաքական ապաստանի տրամադրման միջազգային իրավական ընդհանուր հիմք է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: Նրա 14 հոդվածում նշվում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի հետապնդելիս՝ ապաստան որոնելու այլ երկրներում և օգտվելու նրան տրամադրված ապաստանից: Սակայն **այդ իրավունքը չի կարող տրվել, եթե անձի հետապնդման հիմքում ընկած է ոչ քաղաքական բնույթի հանցագործության կամ այնպիսի արարքի կատարումը, որը հակասում է**

Միացյալ ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին:

Քաղաքական ապաստանի տրամադրման վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը 1967 թ. դեկտեմբերի 14-ին ընդունել է **Տարածքային ապաստանի մասին հռչակագիրը**: Համաձայն այդ Հռչակագրի, ապաստան տալու իրավունքը պայմանավորված է պետության ինքնիշխանությամբ, որը պետք է հարգվի մյուս պետությունների կողմից: Յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում անձին քաղաքական ապաստան տրամադրելու կամ չտրամադրելու հարցը: Սակայն, պետություններն այս հարցում բացարձակապես ազատ չեն. նրանք պարտավոր են հաշվի առնել այն հանգամանքը, որ մի շարք միջազգային պայմանագրեր, հատկապես միջազգային մարդասիրական իրավունքի բնագավառում գործող դաշնագրերը, արգելում են խաղաղության և մարդկության դեմ ուղղված հանցագործություն կամ զինվորական հանցագործություն կատարած անձանց նկատմամբ կիրառել վաղեմության ժամկետ: Բնական է, որ, նման անձանց քաղաքական ապաստան տրամադրելով, պետությունը կխախտի այդ միջազգային փաստաթղթերով նախատեսված պարտավորությունները: Այդ մասին ուղղակի նշում կա Տարածքային ապաստանի մասին հռչակագրի թիվ 1 հոդվածի 2-րդ կետում, ուր ասվում է, որ անձը ապաստան խնդրելու և դրանից օգտվելու իրավունք չունի, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա կատարել է խաղաղության դեմ ուղղված հանցագործություն, ռազմական հանցագործություն, կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություն:

Քաղաքական ապաստան տրամադրելու հարցը երբեմն վերաժվում է միջպետական վեճի, որովհետև հաճախ դժվար է լինում որոշելը՝ հետապնդվող անձի կատարած արարքը քաղաքական շարժառիթներ ունի, թե՞ ընդհանուր բնույթի քրեական հանցագործություն է: Նման դեպքերում պետությունները հենվում են ինչպես իրենց ազգային օրենսդրության, այնպես էլ միջազգային ճանաչում ստացած նորմերի և սկզբունքների վրա:

Տարածքային քաղաքական ապաստանից բացի, միջազգային պրակտիկայում կիրառվում է նաև **դիվանագիտական ապաստանի ինստիտուտը**: Թեև միջազգային պրակտիկայում արգելվում է նման ապաստան տալը, այնուհանդերձ, հատկապես Լատինական Ամերիկայի առանձին երկրներում այդ ինստիտուտն ունի որոշակի կիրառում: Դրա էությունն այն է, որ հետապնդվող անձին հնարավորություն է տրվում, այդ երկրում գտնվող օ-

տարերկրյա պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության շենքում թաքնվելով՝ խուսափել իր երկրի իշխանությունների կողմից իրականացվող քաղաքական հետապնդումից:

Քաղաքական ապաստանի տրամադրումն առաջացնում է մի շարք ներպետական և միջազգային իրավական հետևանքներ: **Ներպետական** առումով ապաստան ստացած անձն օժտվում է այնպիսի իրավունքներով, ինչպիսիք տրամադրվում են քաղաքացիություն չունեցող անձանց և նույնիսկ օտարերկրացիներին: Իսկ ապաստան տալու **միջազգային իրավական** գլխավոր հետևանքն այն է, որ ապաստան տվող պետությունը պարտավոր է օրինական միջոցներով ու մեթոդներով պաշտպանել և հովանավորել տվյալ անձին:

ԲԱԺԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 16.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

§ 1. Հայաստանի Հանրապետության տարածքը

Հայաստանի Հանրապետության, որպես ինքնիշխան պետության, սահմանադրական կարգավիճակի կարևոր բնութագրիչներից է նրա տարածքը: **Պետական տարածք** ասելով հասկանում ենք հողագնդի մի որոշակի մաս՝ ներառյալ ցամաքը, ջրերը և նրանց վրա գտնվող օդային տարածությունը, որոնք գտնվում են պետության սահմանների շրջանակներում և նրա ինքնիշխանության ներքո: Այն պետության գոյության նյութական հիմքն է: Պետական տարածքի շրջանակներում պետության ինքնիշխանությունը կրում է հանրային իրավական բնույթ: Իրավունքի տեսակետից պետությունը, ժողովրդի կամքին համապատասխան, գերիշխում է իր տարածքի սահմաններում և տիրում է տարածքին՝ ի շահ ժողովրդի և նրա անունից: Պետության իշխանությունը լիովին տարածվում է իր տարածքում գտնվող անձերի և իրերի վրա: Մի պետության իշխանությունն այլ պետության տարածքում կարող է գործել միայն բացառիկ դեպքերում, այն էլ վերջինիս ուղղակի և բացահայտ համաձայնությամբ և նրա օրենսդրությամբ սահմանված շրջանակներում:

Հայաստանի Հանրապետության տարածքն, ըստ պաշտոնական տվյալների, ներկայումս կազմում է 29,8 հազ.քառ.կմ: Ինքնիշխան պետության տարածքը մեկ այլ ինքնիշխան պետության տարածքից տարանջատվում է պետական սահմաններով: **ՀՀ պետական սահմանը** այն գիծն է, և այդ գծով անցնող այն ուղղահայաց մակերևույթը, որոնք որոշում են ՀՀ տարածքի ցամաքի, ջրերի, բնօրրի, օդային տարածության շրջանակները: Պետական սահմանը որոշվում է ՀՀ միջազգային պայմանագրերով և «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին» 2001 թվականի նոյեմբերի 20-ի օրենքով:

Պետական սահմանը տեղորոշելիս և փոփոխելիս, սահմանակից պետությունների հետ հարաբերությունները, ինչպես նաև սահմանամերձ շրջաններում և միջազգային հաղորդակցության ոլորտներում իրավահարաբերությունները կարգավորելիս Հայաստանի Հանրապետությունն առաջնորդվում է ՀՀ անվտանգության և ՀՀ տարածքային ամբողջականության պաշտպանության, օտարերկրյա պետությունների հետ բազմակողմ փոխշահավետ համագործակցության և սահմանային հարցերի խաղաղ լուծման սկզբունքներով:

ՀՀ պետական սահմանի պահպանությունն ընդգրկում է քաղաքական, իրավական, տնտեսական, ռազմական, օպերատիվ, կազմակերպչական, տեխնիկական, ռեժիմային, բնապահպանական, մշակույթային և այլ միջոցառումներ:

Ցամաքում և սահմանային ջրերում պետական սահմանի պահպանությունն իրականացնում են սահմանապահ զորքերը, իսկ օդային տարածքում՝ հակաօդային պաշտպանության զորքերը:

ՀՀ պետական սահմանը, ըստ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին օրենքի, տեղորոշվում է

1) ցամաքում՝ ըստ ռելիեֆի բնորոշ կետերի ու գծերի կամ պարզ տեսանելի կողմնորոշիչների.

2) գետերում (վտակներում)՝ դրանց կենտրոնով կամ գետի գլխավոր գետաբազկի կենտրոնով.

3) ջրավազաններում՝ այն ուղիղ գծով, որը պետական էլքերը միացնում է ջրավազանի ափերին.

4) հիդրոտեխնոլոգիայի ջրամբարներում և այլ արհեստական ջրավազաններում՝ պետական սահմանի այն գծին համապատասխան, որն անցնում էր այդ տեղանքով՝ մինչև դրանց լցնելը.

5) երկաթուղային և ավտոճանապարհային կամուրջների, ամբարտակների վրա ու այլ կառույցներում՝ այդ կառույցների կենտրոնով կամ դրանց տեխնոլոգիական առանցքով՝ անկախ պետական սահմանի անցումից:

Գետով (վտակով) և ջրավազանով անցնող պետական սահմանը չի տեղաշարժվում ինչպես դրանց ափերի գծագրության կամ ջրի մակարդակի փոփոխման, այնպես էլ գետի (վտակի) հունը այս կամ այն կողմ խոտորվելու դեպքում:

Պետական սահմանի ռեժիմը որոշվում է Հայաստանի պետական սահմանի մասին օրենքով, ՀՀ միջազգային պայմանագրերով, ինչպես նաև ՀՀ իրավական այլ ակտերով:

Պետական սահմանի ռեժիմն ընդգրկում է՝ պետական սահմանի խնամքի կանոնները, պետական սահմանի հատման կանոնները, անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի՝ պետական սահմանով քացթողման կանոնները, պետական սահմանին հարող գոտում տնտեսական գործունեություն ծավալելու կանոնները, սահմանակից պետությունների հետ սահմանային միջադեպերի լուծման կարգը և այլն:

Պետական սահմանը հատող անձինք, տրանսպորտային միջոցները, կենդանիները, բեռները և այլ գույքը ենթակա են սահմանային, սահմանադաշնակարգային, անասնաբուժական վերահսկողության և մաքսային հսկողության:

Սահմանային գոտին այն տարածքն է, որը ՀՀ պետական սահմանագծից ծավալվում է դեպի ՀՀ տարածքի խորքը մինչև հինգ կիլոմետր լայնությամբ: Այդ գոտում մշտապես չբնակվող անձը սահմանային գոտում երեք օրից ավելի կարող է գտնվել միայն ՀՀ ոստիկանության մարմինների թույլտվությամբ, եթե ՀՀ կառավարությունն այլ կարգ չի սահմանել:

ՀՀ կառավարությունը, պետական սահմանում պատշաճ կարգ ապահովելու նպատակով, գործող օրենսդրությանը համապատասխան սահմանում է սահմանային ռեժիմ, որը կարգավորում է ՀՀ քաղաքացիների և այլ անձանց սահմանային գոտի մուտքի, այնտեղ ժամանակավորապես գտնվելու, բնակվելու, տեղափոխվելու, տնտեսական և այլ գործունեություն իրականացնելու հետ կապված հարաբերությունները:

Գործող օրենսդրությունը քրեական և վարչական պատասխանատվության միջոցներ է նախատեսում բոլոր այն անձանց նկատմամբ, ովքեր կփորձեն խախտել Հայաստանի Հանրապետության պետական սահմանի ռեժիմը և պետական սահմանը հատելու կանոնները:

§ 2. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն

Հայաստանի Հանրապետության կարևոր քննադիրչներից է նրա պետական լեզուն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (հոդվ.12) Հայաստանի պետական լեզու ճանաչում է հայերենը, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Ընդ որում, **ՀՀ պաշտոնական լեզուն զրական հայերենն է:** Այն պետության հիմնական լեզուն է, որն օգտագործվում է օրենսդրության և պաշտոնական գործավարության, դատավարության, հանրակրթական ուսուցումը կազմակերպելու ժամանակ և այլն:

Պաշտոնական լեզվի սահմանումը, իհարկե, **չի քացառում կենցաղում և տվյալ պետության առանձին տարածքային միավորումներում, որտեղ կոմպակտ կերպով բնակվում են ազգային փոքրամասնություններ, այլ լեզուների գործածությունը:** Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունն ու զարգացումը (Սահմանադրության 37 հոդվ):

Նշված սահմանադրական նորմերի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում 1993 թ. ապրիլի 7-ին ընդունվել է «Լեզվի մասին» օրենքը, որտեղ **սահմանվում են երկրի լեզվական քաղաքականության հիմնական դրույթները**, կարգավորվում պետական իշխանության մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների լեզվահարաբերությունները:

Օրենքը հատուկ ուշադրություն է դարձնում **կրթական համակարգում** լեզվի օգտագործման խնդրի վրա: Դրա 2 հոդվածի համաձայն՝ ՀՀ տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգելում դասավանդման և դաստիարակության լեզուն հայերենն է: Դրա հետ մեկտեղ, **ազգային փոքրամասնությունների համայնքներում** հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, սակայն հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել միայն կառավարությունը: Հանրապետության բոլոր միջնակարգ մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր է:

Օրենքով սահմանվում են նաև պետական և ոչ պետական հաստատությունների լեզվական իրավունքները և պարտականությունները: Մասնավորապես, նշվում է, որ պաշտոնատար անձինք և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող ՀՀ քաղաքացիները պարտավոր են տիրապետել հայերենին: Արտասահմանյան երկրներում և միջազգային կառույցներում Հայաստանը մերկայացնող անձանց պաշտոնական ելույթները պետք է հայերեն լինեն, եթե դա չի հակասում տվյալ միջազգային ասլանում ընդունված կարգին:

Միաժամանակ, Հայաստանի տարածքում գտնվող ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները այլ երկրների պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպություն-

ների և քաղաքացիների հետ կարող են հաղորդակցվել **փոխադարձաբար ընդունելի լեզվով:**

Լեզվի մասին օրենքը (4 հոդվ.) Հայաստանում գործող պետական մարմիններին, ձեռնարկություններին, հիմնարկներին, կազմակերպություններին պարտավորեցնում է.

ա) գործավարությունը կատարել հայերեն,

բ) համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, ատենախոսությունների հրապարակային պաշտպանության և պաշտոնական ու զանգվածային այլ միջոցառումների ժամանակ ապահովել ոչ հայերեն ելույթների զուգահեռ հայերեն թարգմանությունը,

գ) ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները ձևավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով:

Հանրապետության տարածքում գտնվող արտասահմանյան պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, լեզվի մասին օրենքի պահանջով, պարտավոր են պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերն, իրենց ազգային լեզվով կազմելուց հետո, զուգակցել հայերեն օրինակով: Իսկ Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների կազմակերպություններն իրենց փաստաթղթերը, ձևաթղթերը, կնիքները պարտավոր են ձևակերպել հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ թարգմանությամբ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված է պատասխանատվություն «Լեզվի մասին» օրենքի պահանջները խախտելու համար:

§3. Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները

Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգավիճակը բնութագրվում է նաև նրա խորհրդանիշներով, որոնք հանդիսանում են յուրաքանչյուր ինքնիշխան պետության անօտարելի պաշտոնական խորհրդանիշները: Դրանք են՝ զինանշանը (գերբ), դրոշը, օրհներգը (հիմն) և մայրաքաղաքը: Դրանց նկարագրությունը և գործածման կարգը սահմանված է «Հայաստանի Հանրապետության զինանշանի», «Հայաստանի Հանրապետության դրոշի» և «Հայաստանի Հանրապետության օրհներգի» մասին ՀՀ օրենքներով, որոնք ընդունվել են 2006 թ. հոկտեմբերի 15-ին:

1. Պետական զինանշանը պետության պաշտոնական խորհրդանիշն է: Դրա բովանդակությունը դրսևորվում է երկու առումով.

ա) որպես պետության ինքնիշխանության խորհրդանիշ և բ) կիրառական նշանակությամբ:

Չինանշանը դիտելով պետության **ինքնիշխանության խորհրդանիշ**, այնուամենայնիվ, այն կերտողները զինանշանի մեջ տեսնում են որոշակի իմաստ, խորհուրդ, բովանդակություն: Խնդիրն այն է, որ պատմությանը հայտնի շատ զինանշաններ, որոնք հանդիսացել են կոնկրետ պետության կամ իշխող դինաստիայի զինանշանը, այդ պետության կամ դինաստիայի՝ պատմական ասպարեզից հեռանալուց հետո այլևս չեն ճգտագործվել ուրիշների կողմից: Այսպես, **Հին Հունաստանի զինանշանը եղել է բուն, Հին Հռոմի՝ արծիվը, Կորինթ քաղաքինը՝ թռչող ձին և այլն:**

Միջնադարում նույնպես ստեղծվեցին այնպիսի զինանշաններ, որոնք կիրառվել են միայն տվյալ պետությունների կողմից: Օրինակ, **Ֆրոնցիայի պետական զինանշանի վրա պատկերված էր կարմիր կակաշ, Վենետիկինը՝ թևավոր առյուծ, Սամարղանդինը՝ երեք օղակներ, Մոսկվայինը՝ զինվոր՝ ձիու վրա, Վաղինիինը՝ առյուծ, Կազանինը՝ թևավոր օձ և այլն:**

Պատմության ընթացքում հայկական պետությունների և թագավորական դինաստիաների փոփոխության հետ միասին փոխվել են նաև զինանշանները: Այսպես, **Ուրարտական թագավորական զինանշանը յոթգլխանի վիշապ էր**, որը խորհրդանշում էր Ուրարտուի յոթ մարզերը: Այդ նույն զինանշանը պահպանվել է նաև **Երվանդունիների թագավորական դինաստիայի կողմից: Արտաշեսյան դինաստիայի** (մ.թ.ա.189 - մ.թ.1թ) օրոք **զինանշանի կենտրոնում արդեն պատկերված էր արծիվ**, որը պահպանվեց նաև **Արշակունիների օրոք** (1-5 դարը): **Կիլիկիայի հայկական թագավորության զինանշանը Ռուբինյան դինաստիայի օրոք պատկերում էր առյուծ²³:**

«Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» 1992թ. ապրիլի 19-ի օրենքով հաստատվեց ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի և նկարիչ Հակոբ Կոջոյանի գծած Հայաստանի պետական զինանշանի նախագիծը՝ որպես Հայաստանի Հանրապետության պետական զինանշան: Այդ զինանշանի կենտրոնում փահանի վրա պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով և պատմական Հայաստանի թագավորություններից չորսի՝ վերևից ծախ՝ Բագրատունիների, վերևից աջ՝ Արշակունիների, ներքևից ծախ՝ Արտաշեսյանների, ներքևից աջ՝ Ռուբին-

²³ Տե՛ս «Հայրենիքի ձայն», Երևան, 14 փետրվարի 1968թ.:

յանների զինանշանները: Վահանը պահում են արծիվը (ծախից) և առյուծը (աջից), իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խորձ, շղթա և ժապավեն:

Հայաստանի Հանրապետության զինանշանի հիմնական գույնն է ոսկեգույնը, պատմական Հայաստանի թագավորություններինը՝ վերևից ձախ՝ կարմիր, վերևից աջ՝ կապույտ, ներքևից ձախ՝ կապույտ, ներքևից աջ՝ կարմիր, և կենտրոնում՝ վահանի վրա պատկերված Արարատ լեռը՝ նարնջագույն: Նշված գույները խորհրդանշում են Հայաստանի Հանրապետության դրոշի գույները:

Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը (գունավոր) հետևյալ տեսքն ունի՝



Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների զինանշանները, կազմակերպությունների խորհրդանշանները, ինչպես նաև այլ խորհրդանշաններն ու զինանշանները պետք է տարբերվեն Հայաստանի Հանրապետության զինանշանից:

Չինանշանն ունի նաև **կիրառական նշանակություն**: «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» 2006թ. հունիսի 15-ի օրենքի համաձայն՝ պետական զինանշանի **գունավոր տարբերակը** պատկերվում է Հայաստանի Հանրապետության **օրենքների**, Հանրապետության Նախագահի **հրամանագրերի և կարգադրությունների**, **կառավարության, վարչապետի, սահմանադրական դատարանի որոշումների, դատարանների կողմից ընդունված ակտերի, ՀՀ պաշտոնական տեղեկագրերի,**

ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ձևաթղթերի վրա:

Հայաստանի Հանրապետության զինանշանի **միագույն պատկերը** գործածվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների **անձնագրերի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի**, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման այն մարմինների **կնիքների և ձևաթղթերի վրա**, որոնց՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը գործածելու իրավունքը վերապահված է օրենսդրությամբ (հոդվ. 4):

Պետական զինանշանն ունի նաև իր **տեղադրման** վայրերը: Դրա պատկերը **մշտապես տեղադրվում է**՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, սահմանադրական դատարանի նախագահի, Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, կառավարության աշխատակազմի ղեկավարի, կենտրոնական բանկի նախագահի, վերահսկիչ պալատի նախագահի, մարդու իրավունքների պաշտպանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների, ՀՀ օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների) ղեկավարների, ՀՀ դատավորների և դատախազների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետի) **աշխատասենյակներում**, Ազգային ժողովի, կառավարության, դատարանների նիստերի դահլիճներում, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների հանդիսությունների **սրահներում և շենքերի վրա**, Հանրապետության Նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, սահմանադրական դատարանի, Կառավարության, դատախազության մարմինների, կենտրոնական բանկի, մարդու իրավունքների պաշտպանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետի), նոտարական գրասենյակների **շենքերի վրա**, դիվանագիտական ծառայության մարմինների (ղեսպանատների, ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների), օտարերկրյա պետությունների տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության այլ պաշտոնական ներկայացուցչությունների **շենքերի վրա** և դրանց ղեկավարների աշխատասենյակներում, ուսումնական հաստատությունների սրահներից կամ նախասրահներից մեկում, Հայաստանի Հանրապետության պաշտոնական ինտերնետային կայքերում:

Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը տեղադրվում է նաև հիմնական *սահմանային նշանների* վրա, ինչպես նաև պետական սահմանի անցագրային կետերում:

Վերը նշված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (հոդվ.5):

Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության զինանշանը օտարերկրյա պետության զինանշանի հետ միաժամանակ տեղադրելու դեպքում *այլ պետությունների պետական զինանշանների չափերը չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության զինանշանի չափերը:*

Հայաստանի Հանրապետության զինանշանը օտարերկրյա պետության զինանշանի հետ միաժամանակ տեղադրելու դեպքում Հայաստանի Հանրապետության *զինանշանը չի կարող տեղադրվել ավելի ցածր*, քան օտարերկրյա պետության զինանշանը:

Հայաստանի Հանրապետության զինանշանը օտարերկրյա պետության զինանշանի հետ միաժամանակ տեղադրվելու անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության զինանշանը պետք է *տեղադրվի տվյալ շենքի ձախ կողմից* (դեմքով դեպի այդ շենքը): Եթե միաժամանակ տեղադրվում է կենտ թվով մի քանի զինանշան, ապա Հայաստանի Հանրապետության զինանշանը պետք է տեղադրվի դրանց մեջտեղում: Եթե տեղադրվում են գույգ թվով (2-ից ավելի) զինանշաններ, ապա Հայաստանի Հանրապետության զինանշանը պետք է տեղադրվի կենտրոնից ձախ:

Հայաստանի Հանրապետության զինանշանը կարող է տեղադրվել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության *սահմանապահ զորքերի դրոշմների վրա*, ՀՀ ոստիկանության զորքերի, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողների, զինծառայողների և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության շարքային ու դեկավար կազմի *տարբերանշանների վրա:*

Հայաստանի Հանրապետության զինանշանը կարող է պատկերվել Հայաստանի Հանրապետության դրամական միավորների, շքանշանների ու մեդալների վրա:

Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին օրենքի պահանջների խախտումը առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

2. Պետական դրոշը նույնպես պետության ինքնիշխանության պաշտոնական խորհրդանիշն է: Այն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13 հոդվածում: Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝ վերևից ներքև կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով: *Կարմիր գույնը* խորհրդանշում է Հայկական բարձրավանդակը, հայ ժողովրդի մշտական պայքարը հարատևման, քրիստոնեական հավատքի, Հայաստանի անկախության և ազատության համար: *Կապույտ գույնը* խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո: *Նարնջագույնը* խորհրդանշում է հայ ժողովրդի արարչական տաղանդը և աշխատասիրությունը: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունն է՝ 1:2-ի: Հայաստանի Հանրապետության դրոշի լայնության և երկարության վերը նշված հարաբերության չափերի պահպանմամբ կարող է օգտագործվել նաև փոքր կամ մեծ չափի դրոշ:

Դրոշն ունի հետևյալ տեսքը:



Հետաքրքիր է, որ 1773թ. լույս տեսած Շահամիր Շահամիրյանի «Ռոբոզայթ փառաց» աշխատության մեջ նկարագրված է Հայաստանի ապագա պետական դրոշը՝ կարմիր, կապույտ, դեղին գույներով: Այդ գույները շատ մեծան են ներկայիս դրոշի գույներին:

Պետական դրոշը ինքնիշխանության խորհրդանիշ լինելուց գատ, ունի *կիրառական նշանակություն*: «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» 2006թ. հունիսի 15-ին ընդունված օրենքի համաձայն՝ պետական դրոշը *բարձրացվում է*.

ա) *մշտապես*՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, կառավարության, սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության դատարանների, դատախազության մարմինների, մարդու իրավունքների պաշտպանի, կենտրոնական

բանկի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների, ՀՀ օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների), տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի) **շենքերի վրա:**

բ) օտարերկրյա պետությունների տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանատների, ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների) և Հայաստանի Հանրապետության այլ պաշտոնական ներկայացուցչությունների շենքերի վրա՝ **միջազգային իրավունքի նորմերին, դիվանագիտական արարողակարգի կանոններին և ընդունող պետությունների սովորույթներին համապատասխան:**

գ) Հայաստանի Հանրապետության դրոշը բարձրացվում է Հայաստանի Հանրապետության **մարզական** պաշտոնական ամաջնությունների բացման և իջեցվում է փակման արարողությունների ժամանակ:

դ) Հայաստանի Հանրապետության դրոշը **մշտապես տեղադրվում է** պաշտոնական, աշխատանքային և հանդիսավոր արարողությունների համար նախատեսված՝ Հանրապետության Նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, կառավարության, դատարանների դատական նիստերի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի **նիստերի դահլիճներում:**

ե) Հայաստանի Հանրապետության դրոշը տեղադրվում է՝ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի և Ազգային ժողովի այլ մարմինների, վարչապետի, սահմանադրական դատարանի նախագահի, Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Կառավարության աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, կենտրոնական բանկի նախագահի, վերահսկիչ պալատի նախագահի, մարդու իրավունքների պաշտպանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների, ՀՀ օրենքով ստեղծած մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների) ղեկավարների, դատավորների և դատախազների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետի), օտարերկրյա պետությունների տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանատների, ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների) **ղեկավարների աշխատասենյակներում, ուսումնական հաստատությունների սրահներից կամ նախասրահների մեկում:**

Նշված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության դրոշը կարող է տեղադրվել այլ վայրերում, շենքերի, շինությունների, այդ թվում՝ բնակելի շենքերի վրա:

զ) Բացի այդ, Հայաստանի Հանրապետության դրոշը **կարող է ամրացվել** Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, արտաքին գործերի նախարարի **փոխադրամիջոցների վրա**՝ միայն արտասահմանյան պատվիրակությունների այցերի ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի հիմնադրույթներին համապատասխան, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունների ղեկավարների, դիվանագիտական և մշտական ներկայացուցչությունների ղեկավարների **փոխադրամիջոցների վրա**՝ ընդունող պետությունների արարողակարգին համապատասխան:

է) Հայաստանի Հանրապետության սահմանադրական պաշտոններում նշանակվող անձանց կամ օրենքով սահմանված այլ անձանց կողման արարողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո (հոդվ.3):

ՀՀ դրոշի մասին օրենքը սահմանում է նաև դրոշի գործածության կարգը Հայաստանի Հանրապետության մահացած (**զոհված**) **քաղաքացուն** զինվորական հարգանքի տուրք մատուցելու նպատակով կազմակերպված սգո արարողությունների ժամանակ: Աճյունը հողին հանձնելուց առաջ Հայաստանի Հանրապետության դրոշը հանձնվում է մահացածի (զոհվածի) հարազատներին:

Պաշտոնապես հայտարարված սգո օրերին կամ սգո արարողությունների ժամանակ Հայաստանի Հանրապետության դրոշը իջեցվում է մինչև դրոշածոդի մեջտևը: Գրոշի վերևի մասում ամրացվում է սև ժպավեն, որի երկարությունը հավասարեցվում է դրոշի երկարությանը:

Բացի նշված դեպքերից, օրենքը կարգավորում է նաև Հայաստանի Հանրապետության դրոշի գործածությունը ՀՀ տարածքում օտարերկրյա պետության դրոշի հետ, ինչպես նաև ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի կողմից: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության դրոշը օտարերկրյա պետության դրոշի հետ միաժամանակ բարձրացնելու անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության դրոշը պետք է բարձրացվի սվայլ շենքի ձախ կողմից (դեմքով դեպի այդ շենքը): Եթե միաժամանակ բարձրացվում են կենտ թվով մի քանի դրոշներ, ապա Հայաստանի Հանրապետության դրոշը պետք է բարձրացվի դրանց մեջտեղում: Եթե բարձրացվում են

գույզ թվով (2-ից ավելի) դրոշմեր, ապա Հայաստանի Հանրապետության դրոշը պետք է բարձրացվի կենտրոնից ձախ:

Հայաստանի Հանրապետության դրոշն այլ պետությունների դրոշների հետ միաժամանակ բարձրացվելու դեպքում այլ պետությունների դրոշների չափերը չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության դրոշի չափերը (հոդվ. 6):

Հայաստանի Հանրապետության դրոշը բարձրացվում է Հայաստանի զինված ուժերի և այլ զորքերի առանձին ստորաբաժանումների, ինչպես նաև այլ զորքերի մշտական տեղակայման վայրերում՝ **հանդիսալությունների և պաշտոնական արարողությունների ժամանակ** (գորահանդես, շարային ստուգատես, զինվորական երգում, տոնական միջոցառումներ և այլ հատուկ դեպքեր):

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կանոնադրություններով նախատեսված դեպքերում գորահան **մարտական դրոշը դուրս բերելիս** դուրս է բերվում նաև Հայաստանի Հանրապետության դրոշը: Հայաստանի Հանրապետության դրոշը գորահան մարտական դրոշի հետ միաժամանակ դուրս բերելու և տեղադրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նշված օրենքով դրոշին և դրա տեղադրմանը ներկայացվում են որոշ պահանջներ: Մասնավորապես, բարձրացված Հայաստանի Հանրապետության դրոշը պետք է լինի մաքուր և չգունաթափված, ընդ որում, դրոշի ներքևի մասը պետք է գտնվի գետնից 2,5 մետրից ոչ պակաս բարձրության վրա: Դրոշի երկարության հարաբերությունը դրոշածողի երկարության նկատմամբ կարող է լինել 1:1,7-ից ոչ պակաս: Այն ուղղահայաց դիրքով կախելու դեպքում պետք է ժամացույցի սլաքի ուղղության հակառակ 90 աստիճանով շրջել այնպես, որ դեմքով դեպի դրոշը կանգնելիս կարմիր, կապույտ, նարնջագույն գույների հերթականությունը ձախից աջ չխախտվի: Օրենքով սահմանված կարգով մշտապես բարձրացված Հայաստանի Հանրապետության դրոշը **գիշերային** ժամերին պետք է լուսավորվի: Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների դրոշները պետք է տարբերվեն Հայաստանի Հանրապետության դրոշից:

Դատելով օրենքի կողմից Հայաստանի պետական դրոշի գործածության ոլորտներից՝ կարելի է ենթադրել, որ այն սպառիչ կերպով չի սահմանում այդ ոլորտները: Արդյունքում Հանրապետության կառավարությանը իրավունք է վերապահվում սահմանել, օրենքով նախատեսված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության դրոշի և դրա պատկերի գործածման կարգը այլ դեպքերում:

Կառավարությունը սահմանում է նաև Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման, իջեցման և փոխանցման արարողակարգը:

3. Հայաստանի Հանրապետության պետական խոփադանիչ է նաև **օրհներգը**: Այն սահմանվել է «Հայաստանի Հանրապետության օրհներգի» մասին ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2006 թ. հոկտեմբերի 15-ին:

Հայաստանի Հանրապետության օրհներգը հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է, որը կատարվում է օրենքով սահմանված կարգով վոկալ, գործիքային, նվագախմբային, երգչախմբային, նվագախմբային-երգչախմբային տարբերակներով: Հայաստանի Հանրապետության օրհներգը պետք է կատարվի նշված օրենքի հավելվածով հաստատված երաժշտական խմբագրությամբ և տեքստի համապատասխանությամբ:

Այդ օրենքի դրույթներից ելնելով՝ պետական համապատասխան մարմինների կողմից սահմանված կարգով անցկացվեց մրցույթ, որը պետք է որոշեր ՀՀ օրհներգի երաժշտությունը և դրա խոսքերը: Մրցույթի արդյունքում, որպես օրհներգի երաժշտություն ընտրվեց Արամ Խաչատրյանի երաժշտությունը, որը հանդիսանում էր Հայաստանի երկրորդ հանրապետության օրհներգի երաժշտությունը: Իսկ ինչ վերաբերում է օրհներգի խոսքերին, ապա այն մրցույթի արդյունքում չընտրվեց: Հետագայում անցկացվելիք մրցույթի արդյունքում կընտրվի նաև, ըստ էության, նոր օրհներգի խոսքերը: Սակայն մինչև նոր օրհներգի վերջնական ընդունումը, պետք է գործի նախկին օրհներգը՝ «Մեր Հայրենիքը», որի տեքստը վերցված է Մ. Նալբանդյանի «Խտալացի աղջկա երգը» բանաստեղծությունից:

«Օրհներգ» հասկացությունն ունի հունական ծագում, որը թարգմանաբար նշանակում է **հանդիսավոր երգ**: Հին Հունաստանում օրհներգերը մկիրվել են ասավածներին: Հայտնի են էպիկական պատմողական օրհներգեր՝ **հոմերոսյան** (վերագրված Հոմերոսին), **օրփեոսյան** (ուշ հելլենիստական շրջան) և այլն:

Քրիստոնեության հաստատումից հետո եկեղեցական օրհներգերը կազմել են ժամերգության և աղոթքի մասը: Օրհներգերի ազգային տարատեսակ են **հայկական շարականները**:

Հետագայում օրհներգերը սկսեցին հնչեցնել զինվորական միջոցառումների ժամանակ: Բուրժուական հեղափոխության լավագույն օրհներգը «Մարտելյոզն» է, իսկ հեղափոխական պրոլետարիատինը՝ «Ինտերնացիոնալը»:

Ժամանակակից բոլոր պետություններն ունեն իրենց պետական օրհներգը, որը պետական դրոշի և զինանշանի հետ մեկտեղ հանդիսանում է տվյալ պետության պետական պաշտոնական խորհրդանիշը:

«Հայաստանի օրհներգի մասին» օրենքով սահմանվում է դրա **կատարման դեպքերը, վայրերը և ժամանակը**: Այսպես, Հայաստանի Հանրապետության օրհներգը **պարտադիր** կատարվում է՝

ա) Հայաստանի Հանրապետության Նախագահի ելույթի արարողության ժամանակ՝ նրա կողմից պաշտոնը ստանձնելիս.

բ) Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի և վարչապետի մասնակցությամբ պաշտոնական և հանդիսավոր արարողությունների ժամանակ.

գ) Նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահին, ինչպես նաև հերթական նստաշրջանների բացման և փակման ժամանակ.

դ) Հանրապետության տարածքում անցկացվող պաշտոնական արարողությունների ժամանակ Հայաստանի Հանրապետության դրոշը բարձրացնելիս.

ե) օտարերկրյա պետությունների նախագահների, օրենսդիր և գործադիր մարմինների ղեկավարների, պաշտոնական ներկայացուցիչների, միջպետական և միջկառավարական կազմակերպությունների ղեկավարների՝ Հայաստանի Հանրապետություն պետական և պաշտոնական այցելի ժամանակ.

զ) Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվող գործադարձության ժամանակ, Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի գործադարձության՝ առավելության Հանրապետության դրոշի բարձրացման և երեկոյան՝ դրոշի իջեցման ժամանակ, ինչպես նաև զինվորական կանոնագրքերով և կանոնադրություններով նախատեսված այլ դեպքերում.

է) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բարձրագույն կրթական հաստատություններում՝ անկախ սեփականության ձևից, ուսումնական տարվա սկիզբն ու ավարտը ազդարարելիս.

ը) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր հանրակրթական դպրոցներում՝ անկախ սեփականության ձևից, ամեն երկուշաբթի դասերը սկսելուց առաջ:

Օրենքով թույլատրվում է Հայաստանի Հանրապետության **կառավարության սահմանած կարգով կատարել օրհներգը՝**

ա) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոչ պետական կազմակերպությունների և այլ անձանց կողմից անցկացվող հանդիսավոր արարողությունների և միջոցառումների ժամանակ.

բ) պետական տոների, պատմական իրողություններին նվիրված հանդիսավոր նիստերի, ժողովների ժամանակ.

գ) հուշարձանների, հուշաքանդակների և հուշատախտակների բացման հանդիսավոր արարողությունների ժամանակ:

Հայաստանի Հանրապետության օրհներգը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվող միջազգային պաշտոնական միջոցառումների բացման և փակման ժամանակ, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ տվյալ պետության օրենսդրությանը համապատասխան:

Հայաստանի Հանրապետության օրհներգը հեռարձակվում է Հայաստանի տարածքում գործող բոլոր հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից՝ անկախ սեփականության ձևից, ամեն օր՝ ա) հեռարձակման սկզբին և ավարտին.

բ) ժամը 6.00-ին և 24.00-ին՝ շուքօրյա հեռարձակման դեպքում.

գ) Ամառոյի գիշերը (ժամը 24-ին)՝ Երևան քաղաքի Հանրապետության հրապարակի ժամացույցի զարկերից հետո:

Հայաստանի Հանրապետության օրհներգի կատարումները կարող են օգտագործվել ձայնագրությամբ, տեսագրությամբ, հեռուստառադիոհեռարձակման միջոցով:

Հայաստանի Հանրապետության պետական կամ այլ պաշտոնական պատվիրակության մասնակցությամբ օտարերկրյա պետությունների տարածքում անցկացվող պաշտոնական ու հանդիսավոր արարողությունների և միջոցառումների ժամանակ Հայաստանի Հանրապետության օրհներգը հնչում է Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի հիմնադրույթներին և տվյալ օտարերկրյա պետության օրենսդրությանը համապատասխան:

Օրենքով նախատեսված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության օրհներգի երաժշտության օգտագործման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

1) Հայաստանի Հանրապետության օրհներգի կատարման ժամանակ բոլորը հռտնկայա են (դրոշի առկայության դեպքում՝ դեմքով շրջված դեպի դրոշը, իսկ պաշտոնական արարողությունների ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի հիմնադրույթներին համապատասխան), տղամարդիկ՝ առանց գլխարկի:

2) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զինվորական ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրհներգի

կատարման ժամանակ ներկայացվող պահանջները սահմանվում են գինվորական կանոնագրքերով ու կանոնադրություններով:

3) Հայաստանի Հանրապետության օրիներգի նկատմամբ խորին հարգանքը յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է:

Հայաստանի Հանրապետության օրիներգը «Մեր հայրենիք»-ն է: Դրա տեքստը և երաժշտությունը ուժի մեջ են մինչև Հայաստանի Հանրապետության նոր օրիներգի տեքստն ու երաժշտությունը օրենքով սահմանելը:

Մեր Հայրենիք, ազատ, անկախ,
Որ ապրել է դարերդար,
Իր որդիքը արդ կանչում են
Ազատ, անկախ Հայաստան:

Նայիր նրան՝ երեք գույնով
Նվիրական մեկ նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող միշտ պանծա Հայաստան:

Ահա երբայր, քեզ մի դրոշ,
Չոր իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուքով լվացի:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կգոհվի:

4. **Մայրաքաղաքը** նույնպես պետության ինքնիշխանության կարևոր խորհրդանիշ է: Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը Երևանն է: Նրա կարգավիճակը սահմանվել է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008թ. դեկտեմբերի 26-ի օրենքով:

Երևանում է գտնվում Հայաստանի Հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինների (ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի և Կառավարության) նստավայրերը, նախարարությունները, ՀՀ սահմանադրական դատարանը, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական մերկայացուցչությունները:

§ 4. Հայաստանի Հանրապետության մաքսային, դրամական և հարկային համակարգերը

Հայաստանի Հանրապետության, որպես ինքնիշխան պետության, սահմանադրական կարգավիճակի կարևոր բնութագրիչներից են նրա մաքսային, դրամական և հարկային համակարգերը:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է **միասնական մաքսային քաղաքականություն**, որը նրա արտաքին և ներքին քաղաքա-

կանության քաղկացուցիչ մասն է կազմում: Այն իրականացվում է 2000 թ. հուլիսի 6-ին ընդունված Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի և այլ օրենսդրական ակտերի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության **մաքսային սահմանով** ապրանքների և այլ առարկաների տեղափոխման կարգը, մաքսային հարկումը, ձևակերպումը, հսկողությունը և մաքսային քաղաքականության կենսագործման մյուս միջոցները սահմանված են հիշյալ օրենսգրքով: Հանրապետության տարածքը կազմում է միասնական մաքսային տարածք, որի սահմանը համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հետ: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ ՀՀ կառավարության կողմից ՀՀ տարածքում ստեղծվում են **ազատ մաքսային գոտիներ**, որոնց կարգավիճակը սահմանում է կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների հիմնական խնդիրներն են՝

1) ապահովել ՀՀ տնտեսական ինքնիշխանությունը և տնտեսական անվտանգությունը, հանրապետության շուկայի պաշտպանվածությունը և մաքսային գործի վերաբերյալ ՀՀ օրենսդրության իրականացումը:

2) ապահովել ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ և այլ առարկաներ փոխադրելիս մաքսատակազմային քաղաքականության իրականացումը, ապրանքների և այլ առարկաների ներմուծման ու արտահանման թույլտվության կարգի արդյունավետ կիրառումը, մաքսատուրքերի և մաքսավճարների հավաքումը և մուծումը հանրապետության բյուջե:

3) պայքարել մաքսամենզության և ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ և այլ առարկաներ փոխադրելիս մաքսային կանոնների խախտման դեմ, աջակցել միջազգային ահարկչության դեմ մղվող պայքարին ու կասեցնել ապօրինի միջամտությունը միջազգային տրանսպորտային հաղորդակցության միջոցների գործունեության նկատմամբ:

4) ապահովել հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնված պարտավորությունների կատարումը՝ մաքսային գործին վերաբերող մասերով, համագործակցությունը օտարերկրյա պետությունների մաքսային և այլ իրավասու մարմինների, մաքսային գործին վերաբերող հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ:

Հանրապետության սահմանով տեղափոխվող ապրանքների և այլ առարկաների համար վճարվում է մաքսատուրք, որը ենթակա է վճարման ՀՀ մաքսային սահմանը հատելու պահին:

Հայաստանի Հանրապետության կարգավիճակը էապես բնութագրվում է նաև նրա կողմից իրականացվող **ինքնուրույն հարկային գործառնություններով**: Սահմանադրության 46 հոդվածի համաձայն, «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել

հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»։ Սահմանադրական այդ նորմին համապատասխան 1997 թ. մայիսի 12-ին ընդունված՝ «Հարկերի մասին» օրենքով սահմանվել են Հայաստանի Հանրապետությունում հարկի հասկացությունը և հարկերի տեսակները, հարկային վեճերի լուծման կարգը, հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվությունը, ինչպես նաև այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում են հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը։

Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական, իրավաբանական անձանցից և տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում։ Հարկերը վճարվում են ՀՀ պետական և համայնքների բյուջեներ։

Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ, որն ընդգրկում է հարկերի հետևյալ տեսակները՝ **շահութահարկ, եկամտահարկ, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկ, գույքահարկ, հողի հարկ**։ Բացի դրանից, պետության բյուջե են ուղղվում նաև պետության ոչ հարկային եկամուտները, որոնք գոյանում են գանձվող տուրքերից, ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման համար գանձվող վճարումներից, կազմակերպությունների և քաղաքացիների ապահովագրական և այլ վճարներից։ Պետական բյուջե են հավաքագրվում նաև պետական արժեթղթերի թողարկումից և տեղաբաշխումից, պետական վիճակախաղերի անցկացումից, պետական սեփականության մասնավորեցումից և ապապետականացումից, ինչպես նաև տուգանքներից ստացվող եկամուտները։

Պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից պետական և համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր գանձույթ է։ Այդ ծառայությունների ցանկը և դրանց դիմաց նախատեսվող միջոցների գանձման կարգը սահմանված է 1998 թ. հունվարի 10-ին ընդունված՝ «Պետական տուրքի մասին» օրենքով։ Ըստ այդ օրենքի՝ պետական տուրքը գանձվում է՝ դատարան տրվող հայցադիմումների, վճարեկ բողոքների, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, ՀՀ քաղաքացիություն ստանալու, մշակութային արժեքները արտահանելու իրավունքի վկայական տալու համար, գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշաններ

րի, ֆիրմային անվանումների և այլնի համար, ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու և այլ ծառայությունների կամ գործողությունների համար։

Բացի համապետական տուրքերից և պարտադիր վճարներից, գոյություն ունեն նաև **տեղական տուրքեր և վճարներ**։ Հայաստանի Հանրապետությունում տեղական տուրքերի և վճարների հասկացությունը, դրանք վճարողների շրջանակը, տեղական տուրքերի և վճարների սահմանման, դրանց գանձման կարգն ու պայմանները սահմանվել են «Տեղական տուրքերի և վճարների մասին» 1998 թ. հունվարի 9-ին ընդունված ՀՀ օրենքով։

Տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված **լիազորությունների իրականացման դիմաց** նշված օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է։ Իսկ **տեղական վճարը** տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված **գործողությունների համար**, հիշյալ օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե գանձվող **պարտադիր գանձույթ** է։

Հայաստանի Հանրապետության ինքնիշխան կարգավիճակը բնութագրվում է նաև նրա **ինքնուրույն դրամական համակարգով**։ Այն ընդգրկում է **պաշտոնական դրամական միավորը**՝ դրամը, դրամական էմիսիայի կարգը, դրամաշրջանառության կազմակերպումն ու կարգավորումը։

ԽՍՀՄ փլուզումից հետո, նրա նախկին տարածքի մեծ մասը մտնում էր, այսպես կոչված, ռուբլու գոտու մեջ, որտեղ վճարման միջոց էր համարվում խորհրդային ռուբլին։ 1993թ. հուլիսի 1-ից Ռուսաստանի Դաշնային Հանրապետության կենտրոնական բանկը թողարկեց Ռուսաստանի ազգային խորհրդանիշով ռուբլի և սկսեց իր տարածքում հետևողականորեն խորհրդային ռուբլին փոխարինել ռուսական ռուբլով՝ շարունակելով նախկին խորհրդային հանրապետություններին տրամադրել միայն խորհրդային ռուբլիներ։ Դրանով իսկ Ռուսաստանը ստեղծեց իր սեփական ռուբլու գոտին՝ նախկին խորհրդային հանրապետություններին դուրս թողնելով այդ գոտուց։ Դա բխում էր Ռուսաստանի ազգային շահերից և նպատակ էր հետապնդում պաշտպանել իր ներքին շուկան։

1993թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսը, Ղազախստանը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանը և

Ռեֆրենսատանը կնքեցին պայմանագիր՝ «Նոր տիպի ռուբլու գոտի ստեղծելու ուղղությամբ գործնական միջոցառումների մասին»: Մինչ այդ, Հայաստանի Հանրապետությունը համաձայնագիր էր կնքել Ռուսաստանի Դաշնության հետ՝ «Հայաստանի Հանրապետության դրամական համակարգը Ռուսաստանի Դաշնության դրամական համակարգի հետ միավորելու մասին»: Այդ երկու համաձայնագրերն էլ վավերացվեցին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից՝ 1993թ. հոկտեմբերի 13-ի որոշմամբ, սակայն տարբեր պատճառներով դրանք գործնական կիրառում չգտան: Որոշ ժամանակ անց, Հանրապետության Գերագույն խորհուրդը ստեղծեց Հայաստանի Հանրապետության **դրամաշրջանառության պետական հանձնաժողով**, որն ընդունեց Հայաստանում դրամաշրջանառության կարգավորմանն ուղղված մի շարք որոշումներ: Դրանցից ամենակարևորը՝ 1993թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետությունում ազգային դրամը (դրամ և լումա) շրջանառության մեջ դնելու մասին որոշումն էր: Այն ուժի մեջ մտավ 1993թ. դեկտեմբերի 1-ին:

Այդ որոշմամբ խորհրդային ռուբլին ազգային դրամով փոխարինվեց՝ 1-ը 200-ի հարաբերությամբ (մեկ դրամի դիմաց երկու հարյուր ռուբլի): Սա չափազանց, ժողովրդականություն չվայելող, սակայն ծայրահեղ անհրաժեշտ քայլ էր՝ փրկելու հանրապետության դրամական համակարգը: Դրամը դարձավ հանրապետությունում վճարման միակ օրինական միջոցը: Սահմանվեց դրա **ներքին փոխարկման, այսպես կոչված, լողացող կուրս**:

Ազգային դրամի դրամաշրջանառության մեջ մտցնելու գործընթացում առկա էին մի շարք **լուրջ սխալներ**: Նախ, Հայաստանը, այսպես կոչված, «նոր ռուբլու գոտու» հանրապետություններից նախավերջինն էր, որ մտցրեց իր ազգային դրամը. դրա հետևանքով այլ հանրապետություններից հսկայական քանակությամբ շրջանառությունից դուրս եկած խորհրդային ռուբլի ներխուժեց հանրապետության ներքին շուկա: Դա նպաստեց դրամի արժեզրկման տեմպերի գլխապտույտ արագացմանը, իսկ հետագայում՝ շրջանառության մեջ մտած նոր դրամանիշի՝ լումայի անկենսունակությանը: Այդ գործընթացին նպաստեց նաև **ԱՄՆ-ի դոլարի հետ դրամի ոչ հիմնավորված սկզբնական կուրսի (փոխարկելի արժեքի) հաստատումը**: Միայն հետագայում, ՀՀ կենտրոնական բանկի ճիշտ և հիմնավորված քաղաքականության շնորհիվ, դրամի կուրսը կայունացվեց, դրա արժեզրկման տեմպերը նվազեցին, սակայն լուման փաստորեն դուրս մնաց դրամաշրջանառությունից:

Պետության կողմից իրականացվող դրամաշրջանառության կարգավորման գործընթացին մասնակցում են մի շարք պետական մարմիններ:

Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների միջոցով կարգավորվում են կարևորագույն դրամավարկային հարաբերությունները: Կառավարությունը ապահովում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականության իրականացումը (Սահմանադրության 89 հոդվ., 4-րդ կետ):

Դրամաշրջանառության բնագավառում կենտրոնական տեղ է գրավում ՀՀ կենտրոնական բանկը: «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» 1996 թ. հունիսի 30-ին ընդունված օրենքի համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկը ստեղծում և զարգացնում է գործում վճարահաշվարկային համակարգ, օրենքով սահմանված կարգով թողարկում է ՀՀ արժույթը, կազմակերպում և կարգավորում է դրամաշրջանառությունը:

§ 5. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային միավորումներին

Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի նորմերին համապատասխան իրականացնում է արտաքին քաղաքականություն: Այդ քաղաքականության նպատակն է հաստատել բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ բոլոր պետությունների հետ: Հայաստանի Հանրապետությունը, որպես ինքնիշխան պետություն, օժտված է քացարձակ իրավասուրբեկությունը: Նա կնքում է միջազգային պայմանագրեր, մասնակցում է միջազգային կազմակերպությունների, կոլեկտիվ անվտանգության համակարգերի, տարածաշրջանային միջպետական միությունների աշխատանքներին:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում և հարգում է բոլոր պետությունների ինքնիշխանությունը և իրավահավասարությունը, միջազգային հանրաճանաչ սկզբունքները: Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ է: Հատկապես կարևոր նշանակություն ունի նրա անդամակցությունը Անկախ Պետությունների Համագործակցությանը՝ ԱՊՀ-ին: 1991 թ. վերջերին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ստեղծվեց ԱՊՀ-ն, որի 11 հիմնադիրներից էր Հայաստանի Հանրապետությունը: Ներկայումս նախկին միութենական հանրապետություններից միայն մերձքաղաքային հանրապետություններն են, որ չեն հանդիսանում ԱՊՀ անդամ:

ԱՊՀ-ի իրավական բնույթի վերաբերյալ իրավաբանների մտտ միասնական կարծիք չկա: Նրանց մի մասը գտնում է, որ այն կարելի է համա-

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՉԵՎԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԺԻՍՏՐ**

§ 1. Կառավարման ձևի հասկացությունը և տեսակները

Կառավարման ձևն ունի հիմնարար նշանակություն պետության կազմակերպման և գործունեության սահմանադրաիրավական կարգավորման խնդրի ուսումնասիրման գործում: Դա այն բանալին է, որի օգնությամբ հնարավոր է բացահայտել համապատասխան պետության սահմանադրությամբ ամրագրված պետական իշխանության մարմինների այս կամ այն համակարգի գոյության իմաստը:

Հայաստանի Հանրապետությունում գործող կառավարման ձևի բովանդակության ճիշտ ընկալմանը մեծ շափով կնպաստի դրա հետ սերտորեն առնչվող այնպիսի հիմնահարցերի համառոտ ուսումնասիրությունը, ինչպիսիք են *կառավարման ձևի հասկացությունը, տեսակներն ու դրանց առանձնահատկությունները*:

«Կառավարման ձև» հասկացությունն իր արտահայտությունն է գտել բազում երկրների, մեր օրերում գործող, հիմնական օրենքներում: «Ռուսաստանի Դաշնությունը՝ Ռուսաստանը հանրապետական կառավարման ձևի ժողովրդավարական դաշնային իրավական պետություն է», ասված է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության քիվ 1 հոդվածում: «Կառավարման ձև» հասկացությունը բովանդակվում է նաև մի շարք այլ երկրների սահմանադրություններում:

Կան նաև երկրներ, որոնց հիմնական օրենքներում (Ֆրանսիայի 1958թ., Բուլղարիայի 1991թ., Ռումինիայի 1991թ., Չինաստանի 1982թ. և այլ երկրների սահմանադրություններում) կառավարման ձևը ուղղակի չի նշվում, սակայն դրանցում գրեթե մշտապես ամրագրվում են կառավարման ձևերի (միապետության կամ հանրապետության) հիմնական սկզբունքները: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը չի վկայակոչում կառավարման որևէ ձև, սակայն նրա անվանումից (Հայաստանի Հանրապետություն) հետևում է, որ այն կառավարման հանրապետական ձևի պետություն է:

րել կոնֆեդերացիա: Մյուսներն այն համարում են տարածաշրջանային միջազգային կազմակերպություն: Իրավաբանների երրորդ խումբն այն համարում է թե կոնֆեդերացիա, և թե միջազգային կազմակերպություն: Իրավաբանների մեկ այլ խումբ այն ընդհանրապես համարում է ամորֆ կազմավորում:

ԱՊՀ-ի հիմնադիր փաստաթղթերը, նրա կանոնադրությունը, պրակտիկ գործունեությունը թույլ են տալիս անելու հետևություն, որ այն տարածաշրջանային միջազգային կազմակերպություն է: Այն ստեղծվել է ինքնիշխան պետությունների կողմից միջազգային պայմանագիր կնքելու միջոցով: ԱՊՀ-ին տրված է ՄԱԿ-ի դիտորդի կարգավիճակ:

Իրավաբանական գրականության մեջ առկա են տարբեր մտացումներ կառավարման ձևի հասկացության կապակցությամբ: Այն մեկնաբանվում է **ճեղ և լայն** առումներով: Սակայն կանգ չառնելով այդ տեսություններից յուրաքանչյուրի բովանդակության քննական վերլուծության վրա (որը բավական բարդ և ծավալուն խնդիր է), ուսումնական նպատակներով բավարար է նաև կառավարման ձևի այնպիսի սահմանումը, որն իր մեջ ընդգրկում է **պետության գլխի, իշխանության բարձրագույն օրենսդիր և գործադիր մարմինների կազմակերպման, իրավական վիճակի և փոխհարաբերությունների համակարգը**:

Բերված սահմանման բոլոր բաղադրամասերն էլ կարևոր են կառավարման ձևի որոշման հարցում: Սակայն առավել էական է նշված պետական մարմինների իրավական վիճակը և նրանց միջև փոխհարաբերությունների բնույթը: Այդ իմաստով ժամանակակից պետություններում գործող բազմաթիվ կառավարման ձևերը, ըստ էության, հանդիսանում են կառավարման երկու հիմնական ձևի տարատեսակներ, որոնք են՝ **միապետությունը և հանրապետությունը**:

1. **Միապետությունը** հունական ծագում ունի, որը նշանակում է **միահեծանություն կամ մենիշխանություն**: Սակայն, ժամանակակից իմաստով, միապետությունը նշանակում է ոչ միայն մենիշխանություն, այլև **ժառանգական իշխանություն**:

Կախված միապետի իրավական վիճակից, միապետությունը հանդես է գալիս՝ ա) բացարձակ միապետության և բ) սահմանադրական միապետության ձևերով:

Բացարձակ միապետությունը բնութագրվում է նրանով, որ միապետի ձեռքում է կենտրոնացած ողջ պետական իշխանությունը: Նա է ընդունում օրենքները, անձամբ կամ իր կողմից նշանակված մարմինների միջոցով իրականացնում գործադիր իշխանությունը, նա է իրականացնում բարձրագույն արդարադատությունը: Իրավաբանորեն միապետի իշխանությունը ոչնչով սահմանափակված չէ, նրա հպատակները չունեն իրավունքներ և նրանց նկատմամբ միապետը չի կրում որևէ պարտականություն:

Մեր ժամանակներում բացարձակ միապետություն «մաքուր տեսքով» գործնականում գոյություն չունի: Դրա (բացարձակ միապետության) որոշ տարրեր պահպանվել է Օմանում, Արաբական Միացյալ Էմիրությունում և Սաուդյան Արաբիայում, որտեղ գործում են միապետների կողմից շնորհված սահմանադրություններ (Սաուդյան Արաբիայում ըն-

դունվել է 1992թ., Օմանում՝ 1996թ., Արաբական Միացյալ Էմիրությունում՝ 1996թ.):

Սահմանադրական միապետությունը գործնականում հանդես է գալիս 2 ձևով՝ ա) դուալիստական միապետության և բ) խորհրդարանական միապետության ձևերով:

Դուալիստական միապետության ժամանակ օրենսդիր իշխանությունն անջատվում է գործադիր իշխանությունից և իրականացվում ընտրովի մարմնի (խորհրդարանի) կողմից: Միապետի ձեռքին են մնում գործադիր և դատական իշխանությունները, որոնք իրականացվում են նրա կողմից անմիջապես, կամ իր կողմից նշանակված մարմինների միջոցով: Կառավարությունը (եթե այդպիսին կա) պատասխանատվություն է կրում միայն միապետի առջև: Նա (միապետը) օգտվում է նաև **բացարձակ վետոյի** իրավունքից, որի համաձայն՝ խորհրդարանի կողմից ընդունված օրենքը չի կարող ուժի մեջ մտնել առանց միապետի ստորագրության: Դուալիստական միապետությունը, որպես կառավարման ձև, իր «մաքուր» տեսքով ներկայումս նույնպես գրեթե գոյություն չունի:

Խորհրդարանական միապետությունը, որպես կանոն, գործում է բարձր զարգացում ունեցող երկրներում, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան, Իսպանիան, Դանիան, Բելգիան, Շվեդիան, Ճապոնիան, Կանադան և մի շարք այլ երկրներ: Նշված պետություններում միապետի իրական իշխանությունը տարածվում է միայն պետության գլխի իրավասությանը վերաբերող բնագավառների վրա: Ինչ վերաբերում է իշխանության կոնկրետ թևերին (օրենսդիր, գործադիր և դատական), ապա միապետը դրանց նկատմամբ չունի որևէ էական ազդեցություն: Նա պարզապես համարվում է ազգի միասնության խորհրդանիշը: Կառավարությունը այդ երկրներում հաշվետու է և պատասխանատու բացառապես խորհրդարանի առջև: Դատական իշխանությունը գործում է անկախ:

2. **Հանրապետությունը**, որպես կառավարման ձև, բնութագրվում է, ամենից առաջ, նրանով, որ **պետության գլուխն ընտրովի է և կոչվում է նախագահ** (պրեզիդենտ): Բոլոր այլ հավասար պայմանների առկայության դեպքում հանրապետությունն ավելի ժողովրդավարական կառավարման ձև է, քանզի ենթադրում է, որ իշխանության ցանկացած ճյուղի, նրա ցանկացած բարձրագույն մարմնի (այդ թվում պետության գլխի) լիազորությունները, վերջին հաշվով, արդյունք են ժողովրդի կողմից տրված մանդատի:

Օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերությունների բնույթից ելնելով, հանրապետական կառավարման ձևը հանդես է գա-

լիս երկու տարատեսակով՝ ա) նախագահական հանրապետության և բ) խորհրդարանական հանրապետության ձևերով:

Նախագահական հանրապետությունը բնութագրվում է նրանով, որ պետության գլուխը՝ Նախագահը, միաժամանակ հանդիսանում է գործադիր իշխանության գլուխ և իր մանդատը, օրենսդիր իշխանության նման, ստանում է ժողովրդից՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ընտրությունների միջոցով: Նախագահն իր հայեցողությամբ նշանակում է կառավարության անդամներին (որոշ երկրներում՝ ԱՄՆ, Նիդերլանդներում, խորհրդարանի վերին պալատի համաձայնությամբ), որոնցից յուրաքանչյուրը՝ առանձին վերցրած, ենթակա է նախագահին: Փաստորեն, նախագահական կառավարման ձևի դեպքում կառավարությունը, որպես կոլեգիալ մարմին, գոյություն չունի: Ուստի բացակայում է գործադիր իշխանության պատասխանատվությունը խորհրդարանի առջև:

Նախագահական հանրապետությունում առկա է իշխանությունների հստակ տարանջատում՝ Նախագահը իրավասու չէ վաղաժամկետ արձակելու խորհրդարանը, վերջինս էլ իրավասու չէ ազատելու նախարարներին (անկասկած, այն վերաբերում է նաև կառավարության գլխին՝ Նախագահին) անվստահություն հայտնելու ճանապարհով:

Խորհրդարանական հանրապետությունը, առանձնապես նրա «մաքուր» ձևով, (Բուլղարիա, Հնդկաստան, Բուլղարիա, Հունգարիա, Չեխիա և այլն) համեմատաբար քիչ տարածում ունի, քան նախագահականը: Այստեղ Նախագահը սովորաբար ընտրվում է անուղղակի ճանապարհով (կամ խորհրդարանի, կամ էլ նրա ընդլայնված կազմի կողմից), որպեսզի իր մանդատի ուժով չկարողանա հակադրվել խորհրդարանին:

Խորհրդարանական հանրապետության գլխավոր առանձնահատկությունն այն է, որ **կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում միայն խորհրդարանի առջև**: Այստեղ անվստահության քվեի դեպքում կառավարությունը պարտավոր է հրաժարական տալ: Ճիշտ է, այս դեպքում Նախագահը իրավունք ունի չընդունելու հրաժարականը, արձակելու խորհրդարանը և նշանակելու նոր ընտրություններ, որի արդյունքները եթե հոգուտ կառավարությանը սատարող կուսակցությանը չլինեն, ապա կառավարությունը պարտավոր է հրաժարական տալ:

Խորհրդարանական հանրապետությունում նույնպես **կառավարությունը նշանակվում է Նախագահի կողմից**: Մակայն այստեղ այն կրում է գուտ ձևական բնույթ՝ Նախագահն իր հայեցողությամբ չի ընտրում կառավարության գլխի թեկնածությունը (որն էլ ներկայացնում է կառավարության կազմը): Նա պարտավոր է նշանակել այն անձին, որը վայելում է խորհրդարանի (ներքին պալատի) վստահությունը, այլ կերպ վերջինս չի հաստատվի խորհրդարանի կողմից: Կառավարության գլխի պաշտոնը սովորաբար զբաղեցնում է խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցության առաջնորդը կամ միավորված կուսակցությունների կողմից առաջադրված թեկնածուն:

րության կազմը): Նա պարտավոր է նշանակել այն անձին, որը վայելում է խորհրդարանի (ներքին պալատի) վստահությունը, այլ կերպ վերջինս չի հաստատվի խորհրդարանի կողմից: Կառավարության գլխի պաշտոնը սովորաբար զբաղեցնում է խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցության առաջնորդը կամ միավորված կուսակցությունների կողմից առաջադրված թեկնածուն:

Գրա հետ մեկտեղ, 20-րդ դարի երկրորդ կեսին առանձին եվրոպական երկրներում սահմանադրական բարեփոխումների ընթացքում կամ սահմանափակվեցին նախագահների լիազորությունները նախագահական հանրապետություններում (Պորտուգալիա), կամ էլ ընդհակառակը՝ էապես ընդլայնվեցին դրանք խորհրդարանական հանրապետություններում (Ֆրանսիա): Արդյունքում առաջ եկան կառավարման **որոշ նոր խառնածին ձևեր՝ կիսանախագահական, կիսախորհրդարանական հանրապետություններ**, այսինքն՝ նախագահական հանրապետություններ՝ կառավարման խորհրդարանական ձևի տարրերով, և խորհրդարանական հանրապետություններ՝ կառավարման նախագահական ձևի տարրերով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ որևէ նշում չկա կառավարման հանրապետական ձևի որևէ տարատեսակության մասին: Մակայն, դատելով պետության գլխի, օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների իրավական վիճակը և նրանց փոխհարաբերությունները կարգավորող նորմերի բովանդակությունից, կարելի է ասել, որ **Հայաստանը կիսանախագահական հանրապետություն է, այսինքն՝ նախագահական հանրապետություն է՝ որոշ խորհրդարանական տարրերով**:

Այսպես, Սահմանադրության 49 հոդվածի համաձայն՝ Նախագահը «այսինքն է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը»: Այդ խնդրի իրականացումը **հատուկ է նախագահական** կառավարման ձևին, որի կապակցությամբ նրան անհրաժեշտ են մի շարք լիազորություններ:

Առաջին, ամենից առաջ, Հանրապետության Հիմնական օրենքը նրան օժտում է առաջնային մանդատի իրավունքով՝ Հանրապետության Նախագահն ընտրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից (հոդվ. 50): Ամփոփապես ժողովրդից ստանալով իր մանդատը, Նախագահը փաստորեն խորհրդարանի հետ գտնվում է նույն մակարդակի վրա (համեմատյալ դեպք, նրանից ոչ ցածր): Ճիշտ է, Նախագահն իր պաշտոնը ստանձնում է Ազգային ժողովի հատուկ նիստում, սակայն

դա գուտ արարողակարգ է, որովհետև այդ պաշտոնն տոանճնելիս երդում է տալիս ոչ թե խորհրդարանին, այլ ժողովրդին (54 հոդվ.), որից ստացել է իր մանդատը:

Երկրորդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (55 հոդվ. 4-րդ կետ) Նախագահին իրավունք է վերապահված ԱԺ պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ նշանակելու պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, վերջինիս առաջարկությամբ նշանակելու և ազատելու կառավարության անդամներին: Դա նշանակում է, որ կառավարությունն, ամենից առաջ, պատասխանատու է Հանրապետության Նախագահի առջև, որն իր հայեցողությամբ, խորհրդարանից անկախ, ցանկացած ժամանակ կարող է փոփոխել նրա կազմը՝ նշանակել կամ ազատել կառավարության անդամներին:

Երրորդ, հատկանշական է, որ Նախագահն ինքն է սահմանում (վարչապետի ներկայացմամբ) կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը, այդ մասին հրապարակելով հատուկ հրամանագիր (հոդվ. 85): Կառավարության նիստերը հրավիրում և վարում է վարչապետը: Մակայն արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստը կարող է հրավիրել և վարել Հանրապետության Նախագահը (հոդվ. 86):

Այսպիսով, գործադիր իշխանության ոլորտում ունեցած լիազորությունները հնարավորություն են ընձեռում Նախագահին ոչ միայն ակտիվորեն ընդգրկվելու Ազգային ժողովի հետ ունեցած փոխհարաբերություններում քաղաքական գործընթացների մեջ, այլև ապահովելու Սահմանադրությամբ իրեն վերապահված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:

Դրա հետ մեկտեղ, ինչպես նշվեց վերևում, Հայաստանի Հանրապետությունում նախագահական կառավարման ձևն ընդգրկում է նաև խորհրդարանական հանրապետության որոշ տարրեր, որոնք էլ նրան դարձնում են կիսանախագահական հանրապետություն:

Սուտղին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85 հոդվածի համաձայն, «Կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից»: Իսկ 86 և 87 հոդվածների համաձայն՝ վարչապետը հրավիրում և վարում է կառավարության նիստերը, ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը: Նման լիազորություններով **կառավարության կազմում վարչապետի գոյությունը հատուկ է խորհրդարանական հանրապետությանը:**

Երկրորդ, Նախագահի կողմից նշանակված կառավարությունը որոշ առումով **պատասխանատվություն է կրում նաև խորհրդարանի առջև:** Մասնավորապես, կառավարությունն իր կազմավորումից հետո քսանօրյա ժամկետում պարտավոր է Ազգային ժողովի հավանությանը ներկայացնել իր ծրագիրը (հոդվ. 74): Ազգային ժողովն իրավունք ունի այդ ծրագիրը չհաստատելու ճանապարհով անվստահություն հայտնել կառավարությանը, որի դեպքում վերջինս պարտավոր է հրաժարական տալ, իսկ Հանրապետության Նախագահը պարտավոր է տասնօրյա ժամկետում նշանակել նոր վարչապետ և քսանօրյա ժամկետում կազմավորել կառավարություն (55 հոդվ., 4-րդ կետ):

Երրորդ, Սահմանադրության 74.1 հոդվածի համաձայն, Նախագահը Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ **կարող է արձակել Ազգային ժողովը,** որը, ըստ էության, հատուկ չէ ոչ նախագահական, ոչ էլ խորհրդարանական հանրապետությանը: Մակայն, եթե նախագահական կառավարման ձևի երկրներում ընդհանրապես քացակայում է Նախագահի նման լիազորությունը, ապա խորհրդարանական որոշ հանրապետություններում Նախագահին վերապահված է այդպիսի լիազորություն: Ուստի Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից խորհրդարանի արձակումը կարելի է բնութագրել որպես **խորհրդարանական հանրապետությանը հատուկ երևույթ:**

Խոսելով կառավարման խառը ձևերի մասին, հաճախ դժվար է լինում ընդհանրապես որոշել՝ այն կիսանախագահական է, թե կիսախորհրդարանական: Վերջներք թեկուզ Հայաստանի Հանրապետության օրինակը: Հանրապետության Նախագահը, ըստ Սահմանադրության, գրեթե ազատ է վարչապետ նշանակելու և կառավարություն ձևավորելու խնդրում, սակայն նա այդ կապակցությամբ խորհրդակցում է Ազգային ժողովի բոլոր քաղաքական ուժերի հետ և, որպես կանոն, վարչապետ է նշանակում խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ղեկավարին և կառավարության կազմում ընդգրկում տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների: Այդ հանգամանքը արդեն իսկ նշանակում է, որ ծանրության կենտրոնը կիսանախագահականից տեղափոխվում է դեպի կիսախորհրդարանական կառավարման ձևը:

Անկախ բոլոր հանգամանքներից, հանրապետական կառավարման խառը ձևը (լինի դա կիսանախագահական, թե կիսախորհրդարանական) կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե խորհրդարանական մեծամասնության վրա հենված կառավարությունը և Նախագահն

ունեն միատեսակ կողմնորոշում: Հակառակ դեպքում, մի կողմից, Նախագահի և, մյուս կողմից, վարչապետի ու խորհրդարանական մեծամասնության միջև կարող են ծագել հակասություններ, որոնք ոչ միշտ է, որ հնարավոր է հարթել սահմանադրական միջոցներով:

§ 2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառուցվածքը

Պետության տարածքն իրենից ներկայացնում է հողագնդի այն հատվածը, որի վրա տարածվում է նրա իշխանությունը: Այն իր մեջ ընդգրկում է ինչպես ցամաքը, այնպես էլ նրա վրա բարձրացող օդի սյունը և ջրային տարածքները:

Աշխարհի գրեթե բոլոր երկրների սահմանադրություններն այս կամ այն ծավալով բովանդակում են պետության տարածքային կառուցվածքին վերաբերող նորմեր: Մի երկրի սահմանադրությունում այդ նորմերը վերաբերում են միայն վարչատարածքային բաժանման հարցերի կարգավորմանը, մյուսում՝ ընդգրկում են պետության սահմանների սահմանադրական ամրագրումը, երրորդում՝ վերաբերում են պետության այս կամ այն մասի ինքնիշխանության հարցերին, չորրորդում՝ դաշնության և սուբյեկտների փոխհարաբերություններին և այլն: Մի խոսքով, առանձին վերցրած երկրներում պետության տարածքային կառուցվածքի սահմանադրաիրավական ինստիտուտի բովանդակությունը կարող է միատեսակ չլինել: Սակայն ուսումնական դասընթացի ծավալով և մակարդակով հանրնրհանուր ճանաչում է գտել այդ ինստիտուտի հետևյալ սահմանումը. **պետության տարածքային կառուցվածքը կամ պետության տարածքային կազմակերպումն ամբողջովին վերցրած դա պետության կենտրոնական իշխանության և տարածքային բաղկացուցիչ մասերի միջև փոխհարաբերությունների համակարգն է:**

Կենտրոնական իշխանության և տարածքային բաղկացուցիչ մասերի միջև փոխհարաբերությունների բնույթի հետ կապված պետությունները լինում են **բարդ (կամ դաշնային) և պարզ (կամ ունիտար):**

Դաշնային ձևի ժամանակ բարձրագույն տարածքային միավորն իրենից ներկայացնում է պետական կազմավորում կամ նույնիսկ պետություն՝ դաշնության անդամ (սուբյեկտ): Օրինակ, «ճահանգ» բառը (ԱՄՆ-ի, Մեքսիկայի, Բրազիլիայի և այլ դաշնությունների սուբյեկտների անվանումը) անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն և այլ լեզուներում նշանակում է «պետություն»: Ուստի **դաշնային պետություններում**

կենտրոնական իշխանության և սուբյեկտների միջև առկա չեն անվերապահ ենթակայության փոխհարաբերություններ: Նրանց միջև գոյություն ունի ազդեցության ոլորտների (իրավասության) սահմանազատում, որն ամրագրվում է սահմանադրությամբ, և կողմերն այն խախտելու իրավունք չունեն:

Միևնույն ունիտար պետությունը բաժանված է միայն վարչական միավորների, որոնց իրավասությունը սահմանվում է կենտրոնական իշխանության ընթացիկ ակտերով:

Հայաստանի Հանրապետությունը տարածքային կառուցվածքի առումով ունիտար պետություն է, որովհետև նրա տարածքը բաժանված է միայն վարչական միավորների: Նման բաժանման նպատակը տեղեղում պետական իշխանության կազմակերպումն է, որոնց (այդ միավորներին) համապատասխան ստեղծվում են պետական կառավարման և ինքնակառավարման տեղական մարմինները:

Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունը (11.1 հոդվ.) ամրագրում է վարչատարածքային բաժանման երկաստիճան համակարգ՝ **մարզեր և համայնքներ:** ՀՀ Ազգային ժողովի կողմից 1995թ. նոյեմբերի 7-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով (թիվ 1 հոդվ.) հանրապետության տարածքը բաժանվել է տասը մարզի: Մարզերը և նրանց վարչական կենտրոններն են՝ Արագածոտն (Աշտարակ), Արարատ (Արտաշատ), Արմավիր (Արմավիր), Գեղարքունիք (Գավառ), Լոռի (Վանաձոր), Կոտայք (Հրազդան), Ծիրակ (Գյումրի), Սյունիք (Կապան), Վայոց Ձոր (Եղեգնաձոր), Տավուշ (Իջևան):

Օրենքով (դրա 1, 2, 3 և 4 հավելվածների համաձայն) սահմանվում են նաև մարզերի տարածքները և դրանցում ընդգրկված համայնքների ու բնակավայրերի անվանումներն ու սահմանները: Երևան քաղաքն ունի համայնքի կարգավիճակ, որը «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի (86 հոդվ.) համաձայն բաժանված է 12 վարչական շրջանների (Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Մերաստիա, Նոր Նոքք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Զանաքեռ-Զեյթուն) և տրված է համապատասխան վարչական շրջանների սահմանների նկարագրությունը:

Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային բաժանումն իրականացվում է մի շարք սկզբունքների հիման վրա:

Առաջին, կարևորագույնը դրանցից **տնտեսական սկզբունքն է:** Վարչատարածքային միավորների կազմավորման ժամանակ (անկախ

մակարդակից) աներաժեշտ է հաշվի առնել *տարածքի տնտեսության մասնագիտացվածությունը* (արդյունաբերական, գյուղատնտեսական, անասնապահական և այլն), նրա զարգացման ուղղությունները, բնակչության աշխատուժի մասնագիտական կազմը (մեծ մասը բանվորներ են, հողագործներ, անասնապահներ, թե այլ մասնագիտության կամ զբաղմունքի մարդիկ), հաղորդակցության ճանապարհների և միջոցների վիճակը: Այդ սկզբունքի ճիշտ իրացումը մեծ չափով կնպաստի ինչպես, ամբողջովին վերցրած, երկրի տնտեսական առաջընթացի ապահովմանը, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համապատասխան տարածքի սոցիալ-տնտեսական խնդիրների հաջող լուծմանը:

Երկրորդ, Հայաստանի Հանրապետությունը բնակչության ազգային կազմով համեմատաբար միատարր է (այլազգիները կազմում են նրա ընդամենը 3 տոկոսը), սակայն վարչատարածքային միավորների կազմավորման գործում կարևոր նշանակություն ունի *բնակչության կազմի հաշվառումը* այն առումով, որպեսզի տվյալ վարչական միավորը հնարավորինս ընդգրկի կոմպակտ բնակվող ազգային փոքրամասնություններին: Այսպես, Ազգությունների հանրապետական միության (ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպության) 2009թ. տվյալներով Հանրապետությունում բնակվում են մոտ 7000 ասորիներ, որոնք ապրում են հիմնականում Դիմիտրով, Արզնի, Դվին և Արտագերս գյուղերում. մոտ 6000 եզդիներ՝ Ալավերդի, Մտեփանավան, Հրազդան և Գյումրի քաղաքներում. մոտ 60000 քրդեր՝ Արագածոտնի մարզում (19 գյուղ), Արմավիրի մարզում (2 գյուղ), 18000 ռուսներ՝ հիմնականում Ֆիոլետովո, Լեբնոնտով և Դիլիջան բնակավայրերում: Նշված բնակավայրերի համայնքների տարածքում կոմպակտ բնակվող ազգային փոքրամասնությունների հնարավորինս ընդգրկումը կնպաստի նրանց սոցիալ-մշակութային զարգացմանը, լեզվական, սովորութային, կրոնական և ազգային այլ առանձնահատկությունների հաշվառմանը, ազգամիջյան խաղաղությանը, համագործակցության ոլորտներում՝ առաջընթացի ապահովմանը:

Երրորդ, բնակչության սոցիալ-տնտեսական և այլ պահանջումներների բավարարման կապակցությամբ պետական իշխանության տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների առջև ծառայած խնդիրների հաջող լուծումը մեծ չափով կախված է այն բանից, թե որքանով են այդ մարմինները մոտեցված բնակչությանը և որքանով են սատարվում նրա կողմից: Դրա համար էլ *տարածքային կառավարման (մարզերի) և տեղական ինքնակառավարման մարմինների առավելա-*

գույն մերձեցումը բնակչությանը նույնպես համարվում է վարչատարածքային կառուցվածքի կարևորագույն սկզբունքներից մեկը:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառուցվածքի կարևոր հարցերից է տարբեր վարչատարածքային միավորների (մարզերի և համայնքների, այդ թվում նաև Երևան քաղաքի) *կազմավորման, վերակազմավորման և նրանց տարածքների սահմանների փոփոխության և լիկվիդացման հարցը*: Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքի համաձայն (6 հոդվ.), մարզային բաժանման, նրանց սահմանների և կենտրոնների, վարչական շրջանների, բնակավայրերի և քաղամասերի տարածքների սահմանների փոփոխումը, նոր համայնքների կամ բնակավայրերի հիմնումը, դրանց դասակարգման փոփոխումը կատարվում է կառավարության ներկայացմամբ՝ Ազգային ժողովի կողմից: Հանրապետության օրենսդիր մարմնի իրավասությանն է վերապահված նաև մարզերի, բնակավայրերի, քաղամասերի, համայնքների և վարչական շրջանների անվանումների հաստատումը՝ կառավարության ներկայացմամբ:

Բնակավայրերի վերանվանումները կատարվում են միայն պատմական անվանումները վերականգնելու, օտար, ոչ բարեհունչ և կրկնվող անվանումները վերացնելու նպատակով՝ հաշվի առնելով բնակավայրի բնակչության կարծիքը:

§ 3. Հայաստանի Հանրապետության պետական ռեժիմը

Պետական ռեժիմը հանդիսանում է պետության ձևի երրորդ տարրը, որը էական նշանակություն ունի նրա բովանդակության դրսևորման համար: Եթե կառավարման ձևը, ըստ էության, իրենից ներկայացնում է պետական բարձրագույն մարմինների միջև փոխհարաբերությունների իրավաբանական մոդելը, ապա պետական ռեժիմը դա նրանց կողմից (այդ փոխհարաբերությունների ընթացքում) *պետական իշխանության իրականացման, հասարակության կառավարման ձևերն ու մեթոդներն են*:

Երկար ժամանակ սահմանադրական իրավունքում, ինչպես նաև պետության և իրավունքի տեսության մեջ, պետական ռեժիմը քննարկվում էր քաղաքական ռեժիմի հետ, որը ներկայացվում էր *լայն և նեղ առումով*: *Լայն առումով* քաղաքական ռեժիմը վերագրվում էր հասարակության քաղաքական համակարգին՝ ընդհանրապես, նրա բաղկացուցիչ մասերին՝ պետությանը, քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, շարժումներին, զանգվածային լրատ-

վամիջոցներին և այլն: **Նեղ առումով** քաղաքական ռեժիմը վերագրվում էր միայն պետությանը, որի գործունեության իրականացումը երբեմն անվանվում էր ոչ թե քաղաքական, այլ պետական ռեժիմ:

Դրա հետ կապված սահմանադրական իրավունքում նույնպես երկար ժամանակ պահպանվում էր պետական ռեժիմի դասակարգման հարցում քաղաքագիտական մոտեցում՝ ժողովրդավարական, ավտորիտար (քրոնակալական), տոտալիտար (ամբողջատիրական): Օգտագործվում էին անգամ ավելի մանրացված բաժանումներ՝ զինվորական, թեոկրատական, օլիգարխիական, լիբերալ, կիսաժողովրդավարական և այլն:

Անշուշտ, քաղաքական ռեժիմի նշված տեսակներն ունեն իրենց ազդեցությունը պետական իշխանության իրականացման գործընթացի վրա, սակայն դրանք ամբողջովին չեն որոշում այդ գործընթացում կիրառվող ձևերն ու մեթոդները, այսինքն՝ պետական ռեժիմը: Իրավաբանական նորազույն գրականության մեջ առաջարկվում են այլ բաժանումներ, որոնք նպատակ ունեն, սահմանադրական իրավունքի տեսանկյունից, ավելի հստակ սահմանազատել **պետական ռեժիմը** նրա քաղաքական բնութագրությունից:

Սահմանադրական իրավունքը նախատեսում է պետական իշխանության իրականացման տարբեր ձևեր և մեթոդներ: Դրանց դասակարգման չափանիշ կարող է հանդիսանալ **պետության կամաարտահայտությունը**: Այդ իմաստով կարելի է սահմանազատել **պետական մարմինների գործունեության այնպիսի ձևեր ու մեթոդներ**, ինչպիսիք են **խթանելը (խրախուսելը), թույլատրելը, պաշտպանելը, պահանջելը, արգելելը**: Սահմանադրական իրավունքում նշված ձևերից ոչ բոլորն են, որ ունեն միատեսակ կիրառություն: Անգամ տարբեր քաղաքական ռեժիմի դեպքում դրանց կիրառությունը տարբեր է: Օրինակ, ավտորիտար ռեժիմի դեպքում շեշտը առավելապես դրվում է **պահանջի և արգելքի** վրա, իսկ ժողովրդավարականի դեպքում՝ **թույլտվության և պաշտպանության** վրա:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում պետական ռեժիմի նշված դրսևորումները տարբեր արտացոլում են ստացել: Ընդհանուր առմամբ, Սահմանադրությունը չի ամրագրում և ի վիճակի չէ ամրագրելու **պետական իշխանության իրականացման բոլոր ձևերն ու մեթոդները**, որոնք օգտագործվում են պետության տարբեր մարմինների կողմից (օրինակ, ընտրովի մարմինների ընտրությունների կազմակերպումը, վարչական պատասխանատվություն կիրառելու իրավունք ունեցող մարմինների կողմից տարբեր խախտումների վերաբերյալ տուգանք նշանակելու կարգը, վկաներին հարկադիր կարգով դատարան կանչելը և այլն): Մակայն նրանում բովանդակվում են նորմեր, որոնք ինչպես ուղ-

ղակի, այնպես էլ անուղղակի կերպով վկայում են պետական մարմինների կողմից այս կամ այն մեթոդի կիրառման մասին:

Խթանման մեթոդը, շնայած սահմանափակ դեպքերում, բայց և այնպես ստացել է սահմանադրական ամրագրում: Այսպես, Սահմանադրության 11.3 հոդվածում գրված է. «...Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով»: Դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունը շահագրգռված է, որպեսզի արտասահմանյան երկրներում ապրող ազգությամբ հայերը և հանրապետությունում բնակվող հայազգի փախստականները ձեռք բերեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Այդ նպատակով Սահմանադրությամբ վերջիններիս համար նախատեսված է ավելի հեշտացված ընթացակարգ, որը, ըստ էության, ունի **խթանիչ նշանակություն**:

Խրախուսման մեթոդը սերտորեն կապված է խթանման հետ՝ այն հաճախ կարող է ունենալ նաև **խթանող նշանակություն**: Պետական իշխանության իրականացման արդյունավետության գործում էական նշանակություն կարող է ունենալ ինչպես քաղաքացիների, իրավաբանական անձանց, այնպես էլ պետական մարմինների խրախուսումը: Այսպես, Սահմանադրության 95 հոդվածում գրված է, որ արդարադատության խորհուրդը կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածուների ցուցակը և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները (1-ին կետ): Իսկ 2007թ. փետրվարի 21-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի» 135 հոդվածի համաձայն՝ «Արդարադատության խորհրդի անդամը, դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակի կազմման, դատարանի նախագահի, առաջին առյանի մասնագիտացված, վերաքննիչ դատարանի դատավորի, վճռաբեկ դատարանի պալատի դատավորների և նախագահի նշանակման հետ կապված, **քվեաթերթիկներով քվեարկելիս** հաշվի է առնում հետևյալ հատկանիշները. 1) դատավորի մասնագիտական գիտելիքները՝ հաշվի առնելով դատավորի մասնագիտական և հետքուհական կրթությունը. 2) դատավորի մասնագիտական հեղինակությունը. 3) աշխատանքային ունակությունները... և այլ հատկանիշներ: Հետևաբար, պաշտոնում առաջխաղացման միջոցով պետությունը շահագրգռում, **խրախուսում** է դատավորներին, որպեսզի վերջիններս աշխատեն բարձրացնել իրենց մասնագիտական, գործնական և բարոյական որակները, ինչը կնպաստի դատական իշխանության ավելի որակյալ իրականացման գործին:

Սահմանադրությունը քաղաքացիների և իրավաբանական անձանց խրախուսման վերաբերյալ հատուկ նորմեր չի բովանդակում: Մակայն, դատելով դրա 55 հոդվածի 16-րդ կետի բովանդակությունից, համաձայն որի՝ Նախագահը «պարզեատրում է Հայաստանի Հանրապետության մեղավներով ու շքանշաններով, շնորհում բարձրագույն զինվորական և պատվավոր կոչումներ...», կարելի է եզրահանգել, որ խրախուսման մեթոդը կիրառվում է նաև քաղաքացիների ու կազմակերպությունների նկատմամբ:

Թույլտվության մեթոդը, որը կիրառվում է ինչպես ֆիզիկական և իրավաբանական անձանց, այնպես էլ պետական մարմինների վարքագիծը կարգավորելիս, սահմանադրական իրավունքում օգտագործվում է բավական լայն: Տիպիկ օրինակ է Սահմանադրության 29 հոդվածը, որը քաղաքացիներին իրավունք է վերապահում անցկացնելու խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր: Այդ մեթոդը զերիշխում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների համակարգում՝ թույլատրվում է աշխատանքի ազատ ընտրություն (32 հոդվ.), միավորումներ կազմել և կուսակցություններ ստեղծել (28 հոդվ.), մասնակցել պետության կառավարմանը (30 հոդվ.), մտքի, խղճի և կրոնի ազատություն (26 հոդվ.) և այլն:

Թույլտվության մեթոդը լայնորեն կիրառվում է նաև պետական մարմինների և պաշտոնատար անձանց բազմաբնույթ գործունեությունը կարգավորելիս: Այն վերաբերում է կառավարության և Ազգային ժողովի պատգամավորների օրենսդրական նախաձեռնությանը (75 հոդվ.), որոնց ներկայացրած նախագծերը խորհրդարանը պարտավոր է քննարկել, Նախագահի վետոյի իրավունքին, Ազգային ժողովի և Նախագահի նախաձեռնությանը՝ Սահմանադրության վերանայման կապակցությամբ և այլն: Մի խոսքով, պետական մարմինների և քաղաքացիների գործողությունների մեծ մասը, որոնք կապված են երկրում ժողովրդավարական պետական ռեժիմի ձևավորման հետ, իրականացվում են նրանց վերապահված իրավունքների միջոցով, այսինքն՝ թույլտվության ճանապարհով:

Պաշտպանության մեթոդը նույնպես **պետական մարմինների գործունեության մեջ** ունի լայն կիրառություն: Որպես ժողովրդավարական պետություն, Հայաստանի Հանրապետությունում այն ուղղված է առաջնապես սահմանադրական կարգի և հասարակության կյանքի տարբեր բնագավառներում ձեռք բերված ժողովրդավարական նվաճումների ապահովմանը: Այսպես, Սահմանադրության 2 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին, և այդ իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ ան-

հատի կողմից դիտվում է որպես հանցագործություն՝ իր բոլոր իրավական հետևանքներով: Կամ՝ պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը (10 հոդվ.): Պետության հոգածության և պաշտպանության ներքո են գտնվում նաև պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային մյուս արժեքները (հոդվ. 11) և այլն:

Պաշտպանության մեթոդը լայնորեն **օգտագործվում է նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց** վարքագիծը կարգավորելիս: Սահմանադրությունը բովանդակում է բազմաթիվ նորմեր՝ քաղաքացիների սեփականության իրավունքի ճանաչման և պաշտպանության, սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման (հոդվ. 8), սպառողների շահերի պաշտպանության (հոդվ. 31.1), մտավոր սեփականության պաշտպանության (31 հոդվ.) և այլ իրավունքների վերաբերյալ:

Պահանջելու մեթոդը լայնորեն օգտագործվում է **պետական մարմինների կողմից** քաղաքացիների և սահմանադրական իրավունքի այլ սուբյեկտների նկատմամբ՝ իրենց կառավարչական գործունեությունն իրականացնելիս: Հանրապետության Հիմնական օրենքը պահանջում է, որ յուրաքանչյուր ոք պահպանի Սահմանադրությունը, հարգի այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը (47 հոդվ.), երթերի, ցույցերի և հանրահավաքների գնա առանց զենքի (29 հոդվ.), իր սեփականությունն օգտագործելիս վնաս չպատճառի շրջակա միջավայրին, չխախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը (հոդվ. 31) և այլն:

Արգելքը, որպես պետական իշխանության իրականացման մեթոդ, հանդիսանում է պետական ռեժիմի անբաժան մասը: Արգելող նորմերը Հանրապետության Սահմանադրության մեջ բավականին մեծ թիվ են կազմում: Այդ նորմերի զգալի մասն ուղղված է **պետական մարմինների այնպիսի գործողությունների արգելմանը**, որոնց հետևանքով կարող է խախտվել քաղաքացու այս կամ այն իրավունքը: Սահմանադրությունը **արգելում է** մարդուն ձեռքակալել, խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով (16 հոդվ.), նրան ենթարկել խոշտանգումների, դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի, առանց նրա համաձայնության ենթարկել բժշկական կամ գիտական փորձերի (17 հոդվ.), ապօրինի կերպով նրա անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ հավաքել, օգտագործել և տարածել (23 հոդվ.), նրա կամքին հակառակ մուտք գործել բնակարան (24 հոդվ.) և այլն:

Սահմանադրությունը բովանդակում է նորմեր, որոնք ուղղակի արգելում են պետական մարմինների գործողությունները նաև որոշակի ոլորտ-

նեղում, առանց դրանք կապելու մարդու իրավունքների իրականացման հետ: Հանրապետության Հիմնական օրենքը *արգելում է* պատգամավորներին զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից (65 հոդվ.), կամ կառավարության անդամին արգելում է լինել որևէ ներկայացուցչական մարմնի անդամ, զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք (հոդվ. 88):

Սահմանափակ թվով նորմեր կան Հիմնական օրենքում, որոնք արգելք են բովանդակում նաև *քաղաքացիների և կազմակերպությունների* գործողությունների վերաբերյալ: Արգելվում է, մասնավորապես, իրավունքների և ազատությունների օգտագործումը քաղաքացիների կողմից երկրի սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բողոքելու, բռնություն և պատերազմ քարոզելու նպատակով (47 հոդվ.): Սահմանադրությունը նաև կուսակցություններին է արգելում իրականացնելու այնպիսի գործունեություն, որը հակասի Սահմանադրությանը, օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին (7 հոդվ.):

§ 4. Հայաստանի Հանրապետության անկախացման իրավական հիմքերը

Հոկտեմբերյան (1917թ.) Սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ ցարական Ռուսաստանի փլատակների վրա ստեղծվեցին խորհրդային անկախ հանրապետությունները: Հայ ժողովուրդը, որի պետականության արմատները սկիզբ են առնում մ.թ.ա. XII դարի վերջերից, XIV դարում կորցնելով այն, հարյուրամյակներ շարունակ ձգտել էր ազատագրական պայքարի միջոցով վերականգնել ազգային պետականությունը: Վերապրելով 1915 թ. Մեծ եղեռնը, պատմական Հայաստանի տարածքի ոչ մեծ մասի (մոտ 29 հազ. քառ. կիլոմետր) վրա 1918 թ. մայիսի 28-ին նորից ստեղծեց իր պետականությունը: Երկու և կես տարի անց (1920 թ. նոյեմբերի 29-ին) Հայաստանում հաստատվեց նոր՝ խորհրդային իշխանություն: Չեռք բերված անկախությունն ապահովելու և սոցիալիստական հասարակարգ կառուցելու խնդիրը նորաստեղծ սոցիալիստական հանրապետությունները չէին կարող լուծել տարանջատ, մեկուսացված պայմաններում: Հակասոցիալիստական ուժերին դիմակայելու համար անհրաժեշտ էր ստեղծել տնտեսական, քաղաքական, ռազմական և այլ բնույթի սերտ կապեր ու փոխհարաբերություններ: Այդ

կապերի զարգացման արդյունքում 1922թ. դեկտեմբերի 30-ին ստեղծվեց միութենական պետություն, որի իրավական հիմքերը հանդիսացան ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրն ու հռչակագիրը: Խորհրդային դաշնությունն ստեղծվեց ինքնիշխան և իրավահավասար սոցիալիստական հանրապետությունների միավորման հիման վրա, որոնք ինքնորոշվել էին որպես ինքնուրույն պետություններ՝ մինչև ԽՍՀՄ կազմավորումը: Ուստի ԽՍՀՄ կազմավորման ժամանակ վերջիններս հռչակեցին դաշնության կազմից ազատորեն դուրս գալու իրենց իրավունքը: Այդ իրավունքը հետագայում ամրագրվեց ԽՍՀՄ 1924, 1936, 1977 թվականների և միութենական հանրապետությունների (Հայկական ԽՍՀ-ն Միության կազմի մեջ էր մտել Անդրֆեդերացիայի կազմում, որը լուծարվեց 1936թ.) 1937 և 1978 թվականների սահմանադրություններում:

Մակայն նորաստեղծ միութենական պետությունը իր գոյության հենց առաջին տարիներին ցույց տվեց, որ այն ձևական միություն է: Չնով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական հռչակված ինքնիշխան սուբյեկտները փաստորեն չունեին ոչ մի իրական իշխանություն, քանզի կառավարման գլխավոր լծակները գտնվում էին Միության կոմունիստական կուսակցության, որպես ինտերնացիոնալ ուժի, ձեռքին, որն էլ ձևական դաշնային պետությունը վերածել էր վաստորեն ունիտար պետության: Ավելին, քողարկված ինտերնացիոնալիզմի գաղափարների տակ, երկրում ծաղկում էր ազգայնամոլությունը, որը առանձնապես վտանգավոր էր այնտեղ, որտեղ ապրում էին էթնիկական տարբեր խմբերի պատկանող ժողովուրդներ, ինչպես նաև քմահաճ կերպով քաշխված տարածքներում: Այդպիսի հասարակություններում և տարածքներում ազգային պետականությունը, բնականաբար, այլազգիների նկատմամբ իրականացնում էր խտրականության քաղաքականություն, առավել ևս, որ նրա ղեկավար մարմիններում նշանակվում կամ «ընտրվում» էին առավելապես իշխող ազգի ներկայացուցիչները:

Այդ գաղափարի ճշմարտության մեջ համոզվելու համար բավական է թեկուզ վկայակոչել հայ ժողովրդի իրավական վիճակը ԽՍՀՄ կազմում: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո հենց առաջին տարիներին նրա պատմական տարածքի մի զգալի մասը հանձնվեց հարևան խորհրդային հանրապետություններին: Այսպես, 1921թ. մարտի 16-ին Խորհրդային Ռուսաստանի և Քենալական Թուրքիայի միջև Մոսկվայում կնքված պայմանագրով Նախիջևանի մարզը հանձնվեց Ադրբեջանական ԽՍՀ-ին: Ավելի վաղ Հայաստան աշխարհի Ջավախք հատվածը՝ իր մոտ 240000 հայազգի բնակչությամբ, հանձնվել էր Վրացական ԽՍՀ-ի տնօրինությանը: 1921թ. հուլիսի 5-ին, առանց իրավական հիմքի

(կուսակցության կովկասյան բյուրոյի ապօրինի որոշմամբ) և հայազգի բնակչության կամաարտահայտության, Լեռնային Ղարաբաղը միացվեց Ադրբեջանական ԽՍՀ-ին:

Նշված ապօրինություններն այնուհետև ուղեկցվեցին Ադրբեջանական Հանրապետությանը միացված տարածքներում հայազգի բնակչության մկատմամբ ազգային խտրականության քաղաքականությամբ՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավար շրջանների կողմից: Դա կատարվում էր հենց խորհրդային ֆեդերացիայի կուսակցական և պետական ղեկավար մարմինների աչքի առաջ, չնայած ինչպես ԽՍՀՄ կազմավորման մասին հռչակագրում, այնպես էլ 1924, 1936 և 1977թ. սահմանադրություններում հանդիսավոր կերպով հռչակված էր խորհրդային քաղաքացիների իրավահավասարությունը՝ անկախ նրանց ազգային, ռասայական, կրոնական և այլ պատկանելությունից: Արդյունքը եղավ այն, որ եթե 1917թ. Նախիջևանի Հանրապետության ներկայիս տարածքում ապրում էր 53.9 հազար (ընդհանուր բնակչության թվի մոտ 40 տոկոսը) հայ, ապա 1926թ. այդ քանակը կրճատվեց ավելի քան 5 անգամ (մնաց 11276 մարդ), իսկ ներկայումս այնտեղ չի ապրում և ոչ մի հայազգի քաղաքացի (վերջին 1.5 հազար հայերին Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունից վտարեցին 1988թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին):

Նույնն էր վիճակը նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում: Արցախում հայազգի բնակչության թիվը 1986թ. պակաս էր 8 հազարով, քան 1939թ., իսկ ադրբեջանական բնակչությունը այդ նույն թվականին՝ 33 հազարով ավելին էր, քան 1939թ.: Միայն 1985-1989 թթ. Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից վարվող հակահայկական քաղաքականության պատճառով մարզից հեռացել են 16.5 հազար հայեր: 1959-1979 թթ. մարզում հայազգի բնակչությունը աճել է ընդամենը 11.8 տոկոսով, իսկ ադրբեջանական բնակչությունը՝ 107.2 տոկոսով:

Միութենական մակարդակով պետական իշխանության կենտրոնացումը այնքան արագ էր ընթանում, որ ԽՍՀՄ 1936թ. և ՀԽՍՀ 1937թ. սահմանադրությունների ընդունման ժամանակ պետությունը, ըստ էության, արդեն դարձել էր ունիտար: Երկրի տարածքում բնակվող բազմաթիվ ազգերի և ազգությունների ինքնորոշման իրավունքը՝ ազգային-պետական միավորումներ (ինքնավար հանրապետություն, ինքնավար մարզ, ինքնավար օկրուգ) կազմավորելու ուղղությամբ չէր ճանաչվում: Անգամ ազգերի և քաղաքացիների իրավահավասարության վերաբերյալ սահմանադրական երաշխիքները ի գործու չէղան թեկուզ ինչ-որ չափով ազդելու կոմունիստական կուսակցության կողմից ողջ երկրի մասշտաբով իրականացվող բռնությունների քաղաքականության վրա, որի արդյունքում բազմա-

թիվ ժողովուրդներ ենթարկվեցին բռնի տեղահանման (1941թ.՝ Պոլովժեի գերմանացիները, 1943թ.՝ կալմիկները և կարաչալցիները, 1944թ.՝ չեչենները, ինգուշները և բալկարները, Ղրիմի թաթարները, թուրք-մեսխեթցիները, կորեացիները, հույները, քրդերը, հայերի մի մասը և այլն), միլիոնավոր անմեղ քաղաքացիներ դարձան արտադատական հաշվեհարդարի զոհեր:

ԽՍՀՄ նոր (1977թ.) Սահմանադրությունը (և դրա հիման վրա ընդունված ՀԽՍՀ 1978թ. Սահմանադրությունը) որևէ լուրջ փոփոխություն չմտցրեց միութենական հանրապետությունների (և մյուս ազգային պետական միավորումների) կարգավիճակում, ինչպես նաև կենտրոնական իշխանությունների հետ նրանց ունեցած փոխհարաբերությունների հարցում: Այսպես, եթե ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագրի 1 հոդվածով նրա իրավասությանն էր վերապահվել դատարանակազմության և դատավարության, ինչպես նաև քաղաքացիական և քրեական օրենսդրության հիմունքների, աշխատանքի մասին հիմնական օրենքների սահմանումը, ապա ԽՍՀՄ 1977 թ. Սահմանադրության 73 հոդվածով Միության իրավասությանն էր վերապահված «ԽՍՀՄ ամբողջ տարածքում օրենսդրական կարգավորման միասնության ապահովումը, ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների օրենսդրական հիմունքների սահմանումը»:

ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների փոխհարաբերություններում օրենսդրական իշխանության նման կենտրոնացումը նույնությամբ պահպանվեց նաև 1988թ. դեկտեմբերի 1-ին ընդունված «ԽՍՀՄ Սահմանադրության (Հիմնական օրենքի) փոփոխությունների և լրացումների մասին» օրենքում (113 հոդվ., կետ 6):

Միութենական մակարդակով չափից ավելի կենտրոնացած էր մնում նաև գործադիր իշխանությունը: Բավական է ասել, որ ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագրով (հոդվ. 11) նախատեսված էր ընդամենը 10 միութենական ժողովրդական կոմիտարիատներ (նախարարություններ), որոնցից 5 ընդհանուր միութենական, 5 միութենական-հանրապետական: Իսկ 1980-ականների վերջում միութենական մինիստրությունների ու պետական կոմիտեների թիվը հասնում էր 80-ի (տես ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի մասին օրենքի 23-26 հոդվածները):

Խորհրդային պետական շինարարության փորձը պարզորոշ ցույց տվեց, որ տոտալիտարիզմն ու ֆեդերալիզմն անհամատեղելի են: Ինտերնացիոնալիզմը և ժողովուրդների բարեկամությունը, որն, ըստ էության, համարվում է կոմունիստական վարչակարգի հիմնական «նվաճումը», իրականում գոյատևում էր վախի և բռնության միջոցով: Ֆեդերացիան ծա-

ռայում էր կոշտ կենտրոնացված պետության համար լոկ որպես բող, որի ներքո փորձեր էին կատարվում հիմնավորել ազգերի ձուլման, որպես օբյեկտիվ օրինաչափության, գաղափարը: Այդ պատճառով էլ ազգային պետականության գաղափարը Խորհրդային Միության ժողովուրդների գիտակցության մեջ խոր արմատներ էր գցել, որի հետ էին կապում նրանք իրենց գոյատևման երաշխիքը:

Կոմունիստական կուսակցության առաջնորդները զգալով վտանգը՝ փորձում էին փրկել դրությունը: Այդ կապակցությամբ առաջ քաշվեց վերակառուցման (перестройка) գաղափարը, որի նպատակն էր իբր զբաղվել Միության շրջանակներում կուտակված չլուծված և ֆեդերացիայի կատարելագործման հարցերով՝ ժողովրդավարացման ուղղությամբ: 1988թ. դեկտեմբերի 1-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ընդունեց «Պետական շինարարության բնագավառում քաղաքական ռեֆորմի իրագործման հետագա քայլերի մասին» հայտնի որոշումը: Դրանում առաջարկվում էր ապահովել ԽՍՀՄ ազգային-պետական կառուցվածքի հատուկացած հարցերի լուծմանը վերաբերող առաջարկությունների խոր մշակում, «նկատի ունենալով հանրապետությունների իրավասությունն ընդլայնելու, ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների փոխհարաբերություններում ավելորդ կենտրոնացումը վերացնելու...» խնդիրը: Նախատեսվում էր նաև առաջարկություններ նախապատրաստել ԽՍՀ Միության և հանրապետությունների իրավասությունը սահմանազատելու վերաբերյալ՝ «ելնելով նրանց քաղաքական ու սոցիալ-տնտեսական շահերի առավել լրիվ ապահովումից, ազգամիջյան հարաբերությունների ներդաշնակեցումից, ամբողջ երկրի հետագա զարգացման խնդիրները առավելագույն չափով հաշվի առնելուց»:

Սակայն երկրի հասարակական կյանքի բոլոր կողմերի ժողովրդավարացումը, տոտալիտար ռեժիմի աստիճանաբար թուլացումը, որն արդյունք էր վերակառուցման և դրան հաջորդած բարեփոխումների, ուժեղացրին միութենական հանրապետությունների բնակչության ձգտումը՝ ձեռք բերելու իրական անկախություն: Իշխանությունների անկարողությունը՝ գտնելու ստեղծված օբյեկտիվ քաղաքական ճգնաժամի հանգուցալուծման համարժեք միջոցներ՝ ժողովրդավարացնելու պետական կառուցվածքը, հանգեցրեց ԽՍՀՄ-ի փլուզմանը:

Անկախության ձգտման ճանապարհին Հայաստանի Հանրապետության առաջին քայլը հանդիսացավ 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումը: Դրանում ամրագրվում էր նորանկախ Հայաստանի իշխանությունների հավատարմությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներին և մի-

ջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին: Հռչակագրով Հայաստանի Հանրապետությունը հայտարարվում էր ինքնիշխան պետություն՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ և լիիրավությամբ: Պետականության, պետական իշխանության միակ աղբյուր էր ճանաչվում Հայաստանի Հանրապետության ժողովուրդը, որն իր իշխանությունը իրագործում է անմիջականորեն և նրա կողմից ընտրված ներկայացուցչական մարմինների միջոցով: Հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները հայտարարվում են որպես ազգային հարստություն և հայ ժողովրդի սեփականությունը:

Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումից հետո (և դրա հիման վրա) հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում կատարվեցին մի շարք էական տեղաշարժեր, որոնք առաջադրեցին 1978թ. Սահմանադրության մի շարք փոփոխություններ (1990թ. նոյեմբերի 17-ին, նոյեմբերի 5-ին, 10-ին և 13-ին և այլն): Հռչակագրի ընդունման հենց հաջորդ օրը՝ օգոստոսի 24-ին ընդունվեց օրենք, որով Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն կամ կրճատ՝ Հայաստան: Փոփոխություններ կրեցին նաև պետական դրոշը, զինանշանը և օրհներգը: Ընդունվեցին համապատասխան օրենքներ, որոնցով, փաստորեն, վերականգնվեցին Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդանիշները:

Հայաստանի անկախ պետականության ամրապնդման գործընթացում մեծ նշանակություն ունեցան ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված սահմանադրական օրենքները: 1990թ. դեկտեմբերի 10-ին ընդունվեց սահմանադրական օրենք՝ «Հայաստանի անկախության մասին հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին», որի համաձայն մինչև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը՝ դադարեցվում էր գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին Հայաստանի անկախության մասին հռչակագրի հիման վրա ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին: Իսկ այդպիսի դրույթները բավական շատ էին, ուստի մինչև նոր սահմանադրության ընդունումն անհրաժեշտ էր ընդունել մի այնպիսի օրենսդրական ակտ, որում ամրագրվեին երկրի և պետության կենսագործունեությանը վերաբերող առավել կարևոր հարաբերությունները: 1991թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունեց «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը:

Չնայած իր համառոտությանը (այն բաղկացած էր ընդամենը 16 հոդվածից), սահմանադրական օրենքն ուներ համալիր բնույթ՝ ընդգրկելով ինչպես պետական, այնպես էլ հասարակական կյանքի գրեթե բոլոր կարևոր կողմերը: Մասնավորապես, հայ իրականության մեջ առաջին անգամ ամրագրվում էր իշխանությունների տարանջատման գաղափարը, համաձայն որի հանրապետության տարածքում պետական իշխանությունը իրականացվում էր օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջոցով: Օրենքով առաջին անգամ հանրապետությունում մտցվում էր Նախագահի ինստիտուտը, որը գլխավորում էր գործադիր իշխանությունը և ներկայացնում Հայաստանի Հանրապետությունը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:

Տնտեսական, քաղաքական և մշակութային շինարարությանը վերաբերող մի շարք այլ հանգուցային նորմեր բովանդակելուց զատ, սահմանադրական օրենքը (հոդվ. 16), փաստորեն, դադարեցնում էր 1978թ. Սահմանադրության գործողությունը երկրի տարածքում՝ մշելով, որ մինչև նոր Սահմանադրության ընդունումը գործող Սահմանադրությունը և նախկին ՀԽՍՀ օրենքները գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին և Հայաստանի անկախության մասին հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին:

1995թ. մարտի 27-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության ևս մեկ սահմանադրական օրենք, որով սահմանվում էին ՀՀ օրենսդիր մարմնի կազմակերպման և կառուցվածքի հիմնական չափանիշները: Այդ օրենքի հիմքի վրա 1995թ. ապրիլի 4-ին ընդունվեց ՀՀ պատգամավորների ընտրությունների մասին օրենքը, որով, փաստորեն, ավարտվեցին ծավալված սահմանադրական բարեփոխումները Հանրապետությունում: 1995թ. հուլիսի 5-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որով ավարտվեց անկախ պետականության հաստատման գործընթացը, որի սկիզբը դրվել էր Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունմամբ:

ԲԱԺԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 18.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

§ 1. Պետական իշխանությունը որպես սահմանադրական իրավունքի ինստիտուտ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հազվադեպ է օգտագործում «իշխանություն» կամ «պետական իշխանություն» արտահայտությունը: Այն բովանդակող նորմերը վերաբերում են առավելապես իշխանության (կամ պետական իշխանության) բնույթին և, որպես կանոն, բավական համառոտ են: Այսպես, Սահմանադրությունն ամրագրում է, որ *Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին (հոդվ. 2) կամ պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա (հոդվ. 5):*

Պետական իշխանության մասին սահմանադրական ձևակերպումների համառոտությունն ամենևին չի նսեմացնում դրանց նշանակությունը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (ինչպես և ցանկացած երկրի հիմնական օրենքի) *կարևորագույն խնդիրներից մեկը հենց պետական իշխանության իրականացման եղանակների, ձևերի ու մեթոդների կարգավորումն է:* Նրանում տեղ են գտել բազմաթիվ նորմեր, որոնք այս կամ այն կերպ վերաբերում են պետական իշխանության մարմինների համակարգին, նրանց միջև փոխհարաբերություններին, գործունեության ձևերի ու մեթոդների կարգավորմանը և այլն: Այդ իմաստով էլ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքում (ինչպես նաև ցանկացած երկրի սահմանադրական իրավունքում) գոյություն ունի *պետական իշխանության ինստիտուտը*, որը իրավունքի այդ ճյուղի համակարգում զբաղեցնում է կարևոր տեղ:

Սահմանադրաիրավական նորմերի քննական վերլուծության արդյունքները վկայում են, որ պետական իշխանության ինստիտուտը քաղ-

կացած է մի շարք տարբեր տեսակի իրավական նորմերից՝ ա) պետական իշխանության աղբյուրի և նրա սոցիալական կրողի (սուբյեկտի) մասին, բ) պետական իշխանության կառուցվածքի մասին, գ) պետական իշխանությունն իրականացնող մարմինների մասին:

1. **Պետական իշխանության աղբյուրի** և նրա սոցիալական կրողի (սուբյեկտի) մասին սահմանադրական նորմը բավարարվում է միայն նշումով՝ թե ում է պատկանում իշխանությունը: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2 հոդվածի համաձայն՝ Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Զույգված իշխանության աղբյուրի (նրա սուբյեկտի) մասին սահմանադրական այդ ձևակերպման համառոտությանը, այն ունի սկզբունքային նշանակություն Հանրապետության Հիմնական օրենքի հետագա տեքստի, դրանում նախատեսված ինստիտուտների համար: Օրինակ, **է-թե իշխանության աղբյուրը ժողովուրդն է, ապա նրա կամքը**, բնականաբար, իր արտահայտությունն է գտնում, ամենից առաջ, ընտրագանգվածի (ընտրություններում, հանրաքվեներում և անմիջական ժողովրդավարության այլ ձևերում) **ընդունած որոշումների մեջ**, որտեղ բացառվում է ամեն տեսակ սահմանափակումներ՝ սոցիալական, դասակարգային, ազգային, ռասայական և այլ պատկանելության նկատառումներով: Իսկ դա նշանակում է, որ ժողովրդի կամքը արտահայտող պետական մարմնի (խորհրդարանի) կազմավորումը պետք է իրականացվի համընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

Ժողովրդին ճանաչելով որպես իշխանության միակ աղբյուրի (սուբյեկտի)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը միաժամանակ **ամրագրում է այդ իշխանության բնույթը, դրա իրացման հիմնական ուղղությունները**: Դրա 2 հոդվածում (երկրորդ մաս) ասված է. «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»:

Այդ հոդվածում փաստորեն ձևակերպված են ժողովրդաիշխանության իրականացման չորս ուղղություններ (ձևեր)՝ ա) անմիջական (ուղղակի) ժողովրդաիշխանության ձևով, բ) պետական իշխանության մարմինների, գ) տեղական ինքնակառավարման մարմինների, դ) պաշտոնատար անձանց միջոցով:

Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը: Ժողովրդաիշխանության թվարկված առաջին երեք ձևերը հայտնի են և ամ-

րագրված են բոլոր այն երկրների սահմանադրություններում, որտեղ ժողովուրդը ճանաչվում է որպես իշխանության միակ աղբյուր: Ինչ վերաբերում է չորրորդ ձևին (պետական իշխանության իրականացումը պաշտոնատար անձանց միջոցով), ապա դրա իսկությունը տարակարծության տեղիք է տալիս: Խնդիրն այն է, որ պետական իշխանությունը, բացի անմիջական ժողովրդավարության ձևերից, կարող է իրականացվել միայն պետական մարմինների միջոցով, որոնք հանդես են գալիս պետության անունից և օժտված են պետաիշխանական լիազորություններով, իսկ պետական մարմիններում ընդգրկված **պաշտոնատար անձինք կոչված են իրականացնելու պետական մարմնի լիազորությունները և կարող են հանդես գալ միայն պետական մարմնի անունից**: Օրինակ, Սահմանադրության 79 հոդվածի համաձայն՝ «Ազգային Ժողովի նախագահը տնօրինում է Ազգային Ժողովի նյութական միջոցները, ապահովում է նրա բնականոն գործունեությունը»: Այդ նորմի հիման վրա Ազգային Ժողովի կանոնակարգ օրենքը մանրամասն ամրագրում է Ազգային Ժողովի նախագահի լիազորությունները, որոնց միջոցով վերջինս ապահովում է երկրի օրենսդիր մարմնի բնականոն գործունեությունը (հոդվ. 18): Դատելով կանոնակարգ օրենքում ամրագրված ԱԺ նախագահի լիազորություններից, կարելի է հավաստել, որ **դրանք բոլորն էլ ունեն կազմակերպական բնույթ** և չեն բովանդակում պետաիշխանական լիազորություններ:

Կամ կառավարության միստերը հրավիրելու և վարելու իրավունքը Սահմանադրությունը վերապահում է վարչապետին (հոդվ. 86), որը դեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը: Ակնհայտ է, որ վարչապետը իրավասու է ընդունել որոշումներ՝ բացառապես կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով (հոդվ. 87): Նա իրավունք չունի իրականացնելու պետաիշխանական լիազորություններ, ինչպես և ԱԺ նախագահը:

Նույն կարգով նախարարը կամ նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների (գլխավոր վարչություններ, վարչություններ, բաժիններ և այլ ծառայություններ) ղեկավարները **կարող են հանդես գալ միայն նախարարության անունից**, որովհետև դրանք կոչված են իրականացնելու տվյալ նախարարությանը վերապահված լիազորությունները և գործում են նրա կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում:

Խոսելով պետական իշխանության՝ ժողովրդին պատկանելու մասին, անհրաժեշտ է նշել, որ այդ հարցում առկա իրական վիճակը երբեմն չի համապատասխանում սահմանադրական նորմերին՝ ոչ միայն Հայաս-

տանի Հանրապետությունում, այլև արտասահմանյան շատ երկրներում: Այսպես, զարգացած երկրներում իշխանության հիմնական լծակները գտնվում են քաղաքական վերնախավի ձեռքում, իսկ պետական իշխանության հենարանը սովորաբար հանդիսանում է հասարակության միջին խավը, որը ձգտում է կայունության և կարգ ու կանոնի: **Չարգացող երկրներում** իշխում է խոշոր կապիտալիստների և կալվածատերերի խավը կամ էլ խոշոր ֆինանսական բուրժուազիան և կիսաֆեոդալական վերնախավը: Ժամանակակից որոշ նախկին սոցիալիստական երկրներում կառավարման իրական լծակները նույնպես գտնվում են խոշոր պաշտոնատար անձանց և ձևավորվող «նոր բուրժուազիայի» դաշինքի ձեռքում, որը հաճախ սերտաճում է կլանային կառույցների հետ²⁴:

2. **Պետական իշխանության կառուցվածքի մասին** սահմանադրական դրույթները պայմանավորված են յուրաքանչյուր կոնկրետ երկրում քաղաքական համակարգի բնույթով, նրանում առկա քաղաքական ռեժիմով: **Ժողովրդավարական համակարգի** դեպքում երկրի հիմնական օրենքը ամրագրում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, **դիկտատորական (տոտալիտար)** համակարգը ելնում է, առավելապես, պետական իշխանության միասնության սկզբունքից:

Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական պետություն է և **Սահմանադրության 5 հոդվածին համապատասխան** նրա պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Սահմանադրական այդ նորմի բովանդակությունից հետևում է իշխանությունների **բաժանման սկզբունքի երկու մոտեցում՝ ա) աջիդուզիական (իշխանության պատկանելությունը ժողովրդին) և բ) կազմակերպական-իրավական (իշխանության բաժանումը երեք թևերի):**

Առաջին դեպքում Սահմանադրությունը ընդգծում է իշխանության միասնության գաղափարը, **երկրորդ դեպքում՝** դրա տարբեր մասերի (թևերի, ճյուղերի) իրականացումը պետական տարբեր մարմինների միջոցով: Նման մոտեցումը հատուկ է նաև արտասահմանյան շատ երկրների սահմանադրություններին:

ա) Պետական իշխանության միասնության գաղափարը հայտնի է մարդկությանը իշխանությունների բաժանման տեսության ի հայտ գալուց շատ առաջ: Հին Հունաստանի քաղաք-պետությունների բռնապետները, Հռոմի էտրուսկների (այդպես էին կոչվում Հին Իտալիայի բնակիչները) կայսրները, մահմեդական երկրների էմիրները և սուլթանները, եվ-

րոպական երկրների բացարձակ միապետները, Չինաստանի և Ճապոնի երկնքի կայսր-որդիները, ռուսական կայսր-ինքնակալները և շատ այլ պետությունների գլուխներ իրենց ձեռքում էին կենտրոնացնում ամբողջ իշխանությունը, և համապատասխան օրենսդրական ակտերը բացառում էին իշխանության որևէ բաժանում: Միջին դարերում ձևավորվեց անգամ հատուկ տեսություն (Ժամ Բողենի կողմից), որը պահանջում էր իշխանությունը (ինքնիշխանությունը) վերագրել մեկ անձի՝ միապետին:

Իշխանության միասնության (անհատապաշտական, ինդիվիդուալիստական տեսության) հետ մեկտեղ, առաջ եկավ նաև իշխանության միասնության, այսպես կոչված, **խմբային (կոլեկտիվիստական)** տեսությունը (Ժ.Ժ. Ռուսո), որը իշխանության օրենսդիր, գործադիր և դատական թևերը համարում էր **ժողովրդի միասնական գերագույն իշխանության հատուկ դրսևորում:**

բ) Իշխանությունների բաժանման տեսությունը նախատեսում է պետական իշխանության երեք թևերի (օրենսդիր, գործադիր և դատական) իրականացումը համապատասխանաբար օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների միջոցով, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են **միմյանցից հարաբերական անկախ վիճակում:**

Սակայն իշխանությունների բաժանման տեսությունը ամենևին էլ չի ենթադրում **իշխանության տարբեր թևերի միջև անջրպետի անցկացում:** Դա հնարավոր էլ չէ, որովհետև այստեղ խոսքը վերաբերում է մեկ միասնական ինստիտուտի, միասնական պետական իշխանության, քանզի պետության մեջ չեն կարող գոյություն ունենալ մի քանի, իրենց էությամբ տարբեր իշխանություններ՝ **պետական իշխանությունը սուվերեն է, ուստի երկու սուվերեն իշխանություն կողք-կողքի գոյություն ունենալ չի կարող:**

Այլ խոսք, որ չի կարելի իշխանության թևերից որևէ մեկին, անգամ իր գործունեության ոլորտում, **թողնել առանց վերահսկողության**, որպեսզի այն կամայական ձևով չիրականացնի իր լիազորությունները: Սահմանադրություններն այդ խնդիրը լուծում են համապատասխան **զսպումների և հակակշիռների** ամրագրման միջոցով:

Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ Հանրապետության Նախագահը կարող է արձակել Ազգային ժողովը (հոդվ. 74.1), վետո դնել նրա կողմից ընդունված օրենքների վրա (հոդվ. 55, 2-րդ կետ): Ազգային ժողովն, իր հերթին, կարող է պաշտոնանկ անել Հանրապետության Նախագահին (հոդվ. 57), պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ հատթահարել նրա վետոն (հոդվ. 72), անվստահություն հայտնել Կառավարությանը (հոդվ. 74) և այլն:

²⁴ Stetn Comparative constitutional law. M., 2002, էջ 236-237:

Իշխանությունների հավասարակշռման և հակակշիռների ու գաղտնիների համակարգի հետ մեկտեղ, իշխանությունների բաժանման տեսությունը նախատեսում է ևս մեկ կարևոր հանգամանք՝ *իշխանությունների տարրեր թևերի փոխադարձ կախվածության և համագործակցության անհրաժեշտությունը*՝ պետական քաղաքականության սկզբունքային հարցերի լուծման դեպքում: Իսկապես, եթե իշխանության երեք թևերը գործեն միմյանցից լրիվ անկախ և չհամագործակցեն ու փոխադարձաբար չհամաձայնեցնեն իրենց գործողությունները հասարակական և պետական կարևորություն ունեցող հարցերի վերաբերյալ, *ապա երկրում կտիրի քաոս և անարխիա*:

Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքն այդ խնդրի լուծման համար *հանձնարարում է Հանրապետության Նախագահին*՝ հետևել Սահմանադրության պահպանմանը և ապահովել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը (հոդվ. 49): Այդ խնդիրների իրականացման համար հանրապետության Հիմնական օրենքը Նախագահին վերապահել է անհրաժեշտ ծավալով լիազորություններ:

3. *Պետական իշխանության մարմինների մասին* նորմերը պետական իշխանության ինստիտուտում իրենց ծավալով զբաղեցնում են գերակշռող տեղ: Պետական մարմինների համակարգը, նրանց փոխհարաբերությունները կարգավորող նորմերը Հանրապետության Հիմնական օրենքում զբաղեցնում են 3-6 գլուխները:

Սահմանադրությամբ պետական իշխանությունն իրականացնող մարմինների այս կամ այն համակարգի, նրանց միջև փոխհարաբերությունների ամրագրումը պայմանավորված է բազմաթիվ հանգամանքներով՝ *գոյություն ունեցող կառավարման ձևով, պետության քաղաքական-տարածքային կառուցվածքի* եղանակով, պետական իշխանության կառուցվածքով (գործում է իշխանությունների բաժանման^ա, թե՞ միասնության սկզբունքը) և այլն:

Հայաստանի Հանրապետությունը կիսանախագահական կառավարման ձևի ունիտարը հանրապետություն է, որտեղ իշխանությունն իրականացվում է իշխանությունների քաժանման սկզբունքի հիման վրա: Թվարկված հանգամանքներին համապատասխան կազմակերպվում է պետական մարմինների համակարգը և սահմանվում նրանց միջև փոխհարաբերությունները: Այդ հանգամանքները մանրամասն քննարկվում են աշխատության համապատասխան գլուխներում: Այստեղ նշենք միայն քննարկվող հիմնահարցի *վերաբերյալ մեկ կարծիք*: Արտասահմանյան նորագույն իրավաբանական գրականության մեջ առաջ է քաշ-

վում այն գաղափարը, որ ժամանակակից պետության պայմաններում պետական իշխանության եռանդամ (օրենսդիր, գործադիր և դատական) կառուցվածքը բավական չէ նրա բովանդակության ամբողջական, համակողմանի դրսևորման համար: Աստիճանաբար հատունանում է *չորրորդ՝ վերահսկողական իշխանության անջատման անհրաժեշտությունը*, որն ունի զգալի առանձնահատկություններ, ինչպես այն իրականացնող մարմինների կառուցվածքի, այնպես էլ նրանց գործունեության ձևերի և մեթոդների առումով: Պատահական չէ, որ որոշ նորանկախ պետությունների սահմանադրություններում (օրինակ, Մոլդովայի 1994թ., Ղազախստանի 1995թ.) սահմանադրական դատարաններին և սահմանադրական խորհուրդներին, որոնք իրականացնում են վերահսկողական գործունեություններ, նվիրված են առանձին գլուխներ: Նպատակահարմար կլիներ նույն կարգով Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքում սահմանադրական դատարանին հատկացվել առանձին գլուխ:

§ 2. Պետական իշխանության մարմնի հասկացությունը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը չի օգտագործում «պետական իշխանության մարմիններ» հասկացությունը, այլ միայն «պետական մարմիններ» (հոդվ. 2, 5): Սակայն այդ հասկացությունների միջև չկա հակասություն, որովհետև խոսքը վերաբերում է նույնատիպ, միատեսակ երևույթների: Ընդ որում, *Սահմանադրությունը «պետական մարմին» արտահայտության տակ նկատի ունի, առաջին հերթին, հենց պետական իշխանության մարմիններին*՝ Ազգային ժողովին, կառավարությանը և արդարադատության մարմիններին, որոնցից յուրաքանչյուրին հանձնարարվում է իշխանության համապատասխան թևի (օրենսդիր, գործադիր և դատական) իրականացումը:

Նշված յուրաքանչյուր պետական մարմին բնութագրելով որպես պետական իշխանության մարմնի տարատեսակ, միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կան պետական մարմիններ, օրինակ, *դատախազությունը* (հոդվ. 103), որոնք *չեն ներգրվում իշխանությունների բաժանման սահմանադրական սխեմայի մեջ*, այսինքն՝ համապատասխանաբար օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների յուրանակներում: Նրա գործունեությունը իր բնույթով տարբերվում է իշխանության բոլոր երեք թևերը բնութագրող գործունեության ձևերից և մեթոդներից:

Ոյուրակի յուրահատկությամբ առանձնանում է նաև *սահմանադրական դատարանը*, չնայած Սահմանադրությամբ այն ընդգրկված է դա-

տական իշխանության մարմինների համակարգում: Սահմանադրական դատարանը կոչված է որոշելու օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը, որպիսի գործունեությունը, ըստ էության, հսկողական (եզրակացություն տալը) և վերահսկողական (որոշումներ ընդունելը) գործունեություն է: Իսկ վերջիններս ավելի շուտ հատուկ են կառավարման, քան դատական իշխանության մարմինների:

Ինչ վերաբերում է **տեղական ինքնակառավարման մարմիններին**, ապա Սահմանադրության համաձայն՝ նրանք չեն մտնում պետական իշխանության մարմինների համակարգի մեջ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն (հոդվ. 2)՝ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Այստեղից հետևում է, որ պետական մարմինների գործունեությունը ժողովրդին պատկանող իշխանության իրականացման ձևերից մեկն է:

Պետական մարմիններն ունեն մի շարք բնորոշ գծեր, որոնցով տարբերվում են պետական և ոչ պետական այլ կազմակերպություններից ու նրանց մարմիններից:

1. Անեն մի պետական մարմին հանդիսանում է ինքնուրույն կազմակերպական միավոր, միաժամանակ **պետական միասնական ապարատի բաղկացուցիչ մաս**: Պետական ապարատն իրենից ներկայացնում է պետական մարմինների և պետական բնույթ ունեցող օղակների ու ծառայությունների համակարգ: Սակայն նրանում միայն պետական մարմիններն են, որ իրենց իրավական վիճակով հանդիսանում են պետական իշխանության մարմիններ: Ինչ վերաբերում է առանձին օղակներին ու ստորաբաժանումներին, որոնք համարվում են պետական ապարատի բաղկացուցիչ մաս, ապա **դրանք չեն հանդիսանում պետական մարմիններ**, այլ լոկ համապատասխան պետական մարմինների ներքին կառուցվածքային օժանդակ մարմիններ են (նախարարությունների և գործադիր իշխանության այլ մարմինների կադրային, ֆինանսական, լրատվական և այլ վարչություններ, բաժիններ ու ծառայություններ): Պետական ապարատի բաղկացուցիչ մասը կազմող պետական մարմին, որպես պարտադիր պայման, հատուկ է **կազմակերպական առանձնացվածությունը և ինքնուրույնությունը**:

2. Պետական մարմինը **կազմավորվում է պետության կողմից սահմանված հատուկ կարգով**: Այսպես, Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրության կարգն ամրագրված է Սահմանադրությամբ (հոդվ. 50-53) և ՀՀ ընտրական օրենսգրքով (14-19 գլուխներ): Ազգային ժողովի պատգամավորների ընտրության կարգը նույնպես սահմանված է Սահմանադրությամբ (հոդվ. 63, 64 և 68) և ՀՀ ընտրական օրենսգրքով (20-25 գլուխներ): Կառավարության կազմավորման կարգը սահմանված է Հանրապետության Հիմնական օրենքում (հոդվ. 55, 4-րդ կետ), իսկ դատական իշխանության մարմիններինը՝ Սահմանադրությամբ (հոդվ. 55, 11-րդ կետ) և ՀՀ դատական օրենսգրքով (գլուխ 15 և 16):

3. Պետական մարմինն **օժտված է պետաիշխանական լիազորություններով**, որը նրան հնարավորություն է ընձեռում պետության կողմից տրված լիազորությունների շրջանակներում լուծելու որոշակի խնդիրներ: Այդ կապակցությամբ պետական մարմինն իրավասու է ընդունելու և հրապարակելու իրավական ակտեր, որոնք պարտադիր են կատարման բոլոր այն մարմինների և կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար, որոնց հասցեագրված է այդ ակտը:

Պետաիշխանական լիազորությունների ուժով պետական մարմինը հնարավորություն ունի ապահովելու իր ակտերում բովանդակված վարքագծի կանոնների **կատարումը պետական հարկադրական ուժի կիրառման միջոցով**: Նման լիազորությունները հատուկ են Հայաստանի Հանրապետության բոլոր պետական մարմիններին, որի համար էլ դրանք կոչվում են իշխանության մարմիններ: Սակայն այդ լիազորությունները նրանցից յուրաքանչյուրն իրականացնում է իրեն հատուկ ձևերով ու մեթոդներով:

Պետաիշխանական լիազորություններն իրենց արտահայտությունն են գտնում պետական մարմնի **իրավասության մեջ**, որը ներառում է նրա կոնկրետ գործառնությունները (ֆունկցիաները) և լիազորությունները (իրավունքները և պարտականությունները), որոնք նա իրականացնում է իր տնօրինությանը վերապահված առարկաների (ոլորտների) նկատմամբ:

Գործառնությունները ցույց են տալիս պետական մարմնի գործունեության հիմնական ոլորտներն ու ուղղությունները, իսկ **լիազորությունները**՝ թե կոնկրետ մարմինը ինչ կարող է և պետք է անի կոնկրետ ոլորտի վերաբերյալ: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55 հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ Նախագահը «իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր դեկավարումը»: Պարզ է, որ այստեղ խոսքը գնում է Նախագահի գործունեության հիմնական ոլորտի մասին ու ամենևին պարզ չէ, թե այդ բնագավառում Նախագահը ինչ

լիազորություններ ունի: Այդ հարցի պատասխանը ամրագրված է նույն հոդվածի 8-րդ կետում, ուր ասված է. Նախագահը «նշանակում և ետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին, ընդունում է օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը»:

Պետական մարմնի իրավասության մասին խոսելիս՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ, ի տարբերություն մասնավոր անձի, որն իրավունք ունի անելու այն ամենը, ինչը արգելված չէ օրենքով, պետական մարմինը կարող է անել միայն այն, ինչը ուղղակի նախատեսված է օրենքով: Ավելին, պետական մարմինը չունի «գոտ» իրավունքներ՝ այդ հասկացության սահմանադրական խնատով, այսինքն՝ նրան տրված հնարավորություն՝ ազատորեն որոշելու իր վարքագծի չափը: Նրան տրված լիազորությունները նա *պարտավոր* է իրականացնել: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մենաշնորհն է օրենքների ընդունումը: Սակայն դա չի նշանակում, որ Հանրապետության խորհրդարանը ազատ է Սահմանադրությամբ իրեն վերապահված տվյալ լիազորության իրացման հարցում (երբ ցանկանա կրնում է օրենքներ, երբ չցանկանա՝ չի ընդունի): *Նա պարտավոր է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունը:* Նույնը վերաբերում է պետական իշխանության մյուս մարմիններին:

Պետական մարմինների իրավասությունը սահմանվում է Հանրապետության Հիմնական օրենքով, ՀՀ օրենքներով, Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կառավարության որոշումներով և այլ նորմատիվ իրավական ակտերով: Պետական մարմինների իրավասությունն իրացվում է նրանց կողմից ընդունված ակտերի և նրանց գործողությունների միջոցով:

4. *Պետական մարմինները մասնակցում են պետության խնդիրների և գործառնությունների իրականացմանը:* Նրանցից յուրաքանչյուրի գործունեության բնույթը այդ կապակցությամբ պայմանավորված է պետության խնդիրներով ու գործառնություններով, որն էլ (պետությունը) լիազորում է պետական մարմիններին համապատասխան ծավալով ու եղանակներով մասնակցել այդ խնդիրների իրականացմանը: Այդ մասին են վկայում Սահմանադրությամբ ամրագրված Հայաստանի Հանրապետության պետական իշխանության ցանկացած մարմնի լիազորությունները: Այսպես, Սահմանադրության 89 հոդվածի համաձայն, կառավարության իրավասությանն է վերապահված պետական սեփականության

կառավարումը, պետական միասնական քաղաքականության իրականացումը ֆինանսատնտեսական, վարկային և հարկային հարաբերությունների բնագավառում, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և այլ բնագավառներում:

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է նկատել, որ պետական մարմնի կառուցվածքում ընդգրկված ներքին օժանդակ ստորաբաժանումները (օրինակ, նախարարությունների վարչությունները, բաժինները և մյուս ծառայությունները) *չունեն նման իրավական վիճակ*, այսինքն՝ հանդես չեն գալիս պետության անունից և նրա հանձնարարությամբ, այլ իրականացնում են տվյալ մարմնի կոնկրետ և սահմանափակ ծավալով գործառնություններ:

5. *Պետական մարմիններն ունեն պետության կողմից նրանց համար սահմանված գործունեության հատուկ կարգ:* Այն պայմանավորված է պետական մարմիններից յուրաքանչյուր տեսակի բնույթով և յուրահատկությամբ, նրանց իրավասությամբ և կազմակերպական կառուցվածքով: Այսպես, Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության *օրենսդիր իշխանության մարմնի* համար գործունեության յուրահատուկ *ձև է նստաշրջանը (հոդվ. 69)*, այսինքն՝ պատգամավորների ժողովը, որտեղ քննարկվում և լուծվում են խորհրդարանի իրավասության մեջ մտնող հիմնական հարցերը:

Գործադիր իշխանության մարմինները կիրառում են գործունեության բազմապիսի կազմակերպական ձևեր՝ կառավարության միստեր, նախարարությունների կոլեգիաներ, նախարարների անհատական աշխատանքի կազմակերպում և այլն:

Պատարաններն իրենց գործունեությունն իրականացնում են դատական միստերի ժամանակ՝ քրեական, քաղաքացիական և վարչական գործեր լսելիս, որոնց վերաբերյալ ընդունում են դատավճիռներ, վճիռներ և որոշումներ:

Իր ուրույն գործունեության ձևերն ունի *դատախազությունը*, որը միասնական կենտրոնացված համակարգ է: Դատախազությունն իր գործառնություններն իրականացնում է իրեն հատուկ միանձնյա *ձևերով՝ ատիճանակարգված ենթակայության սկզբունքի հիման վրա:* Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության «Դատախազության մասին» 2007թ. փետրվարի 22-ի օրենքի համաձայն, դատախազությունում, գլխավոր դատախազի գլխավորությամբ ստեղծվում է կոլեգիա, որի կազմի մեջ մտնում են գլխավոր դատախազի տեղակալները և նրա կողմից նշանակված այլ դատախազներ:

§ 3. Պետական մարմինների տեսակները և սահմանադրաիրավական առանձնահատկությունները

Հայաստանի Հանրապետության պետական մարմիններն իրենց համակցության մեջ կազմում են **մեկ միասնական համակարգ**: Դա պայմանավորված է նրանով, որ այդ համակարգի համար հիմք է հանդիսանում **պետական իշխանության միասնական համակարգը**: Պետական իշխանության միասնությունը բխում է նրա բովանդակությունից: Այն ի հայտ է եկել որպես միասնական կամքի (միապետական կառավարման ձևի դեպքում որպես մեկ անձի՝ միապետի, թագավորի, ցարի և այլնի կամքի, իսկ հանրապետական կառավարման ձևի դեպքում՝ որպես ժողովրդի միասնական կամքի) արտահայտություն:

Պետական իշխանությունն ընդգրկում է օրենսդիր (կամ իրավաստեղծ), **գործադիր** (կամ կատարողական) և **դատական** (կամ իրավապահ) գործառնությունները: Ահա միասնական իշխանության այդ երեք դրսևորումների իրականացման համար Հայաստանի Հանրապետությունը կազմավորել է համապատասխան (օրենսդիր, գործադիր և դատական) մարմիններ, որոնց ամբողջությունը կազմում է պետական ապարատի հիմնական մասը:

Այսպիսով, ինչպես վերը նշվեց, Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանությունն իրականացվում է ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության և ՀՀ դատարանների (և նրանց աջակցող մարմինների) միջոցով, որոնք էլ հանդիսանում են Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինները:

Իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքին համապատասխան՝ պետական իշխանության մարմինները բաժանվում են օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների: Այդ մարմիններից յուրաքանչյուրը փաստորեն իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների միասնական համակարգի ենթահամակարգը, որն իր հերթին կարող է տարբեր հատկանիշներով իր ներսում բաժանվել օղակների և ծառայությունների:

1. Հայաստանի Հանրապետության Նախագահը հանդիսանում է պետության գլուխը: Սահմանադրության 49 հոդվածի համաձայն՝ նա հանդես է գալիս որպես հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը: Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Նախագահը հանրապետության Սահմանադրությամբ (հոդվ. 55) իրեն

վերապահված լիազորություններն իրականացնում է **միանձնյա**, այդ կապակցությամբ **հրամանագրեր և կարգադրություններ** հրապարակելու միջոցով (հոդվ. 56), որոնք ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում:

2. Ազգային ժողովը՝ Հայաստանի Հանրապետության խորհրդարանը (պառլամենտը), հանդիսանում է ՀՀ ներկայացուցչական և օրենսդիր մարմինը: Ազգային ժողովը հանրապետության իշխանության մարմիններից տարբերվում է մի շարք առանձնահատկություններով: Նա՝ ա) ՀՀ խորհրդարանն է (պառլամենտը), բ) ՀՀ քաղաքագույն ներկայացուցչական մարմինը, գ) ՀՀ միակ օրենսդիր մարմինը:

Ազգային ժողովը պետական մյուս մարմիններից տարբերվում է իր **կազմակերպման կարգով և կառուցվածքով**: Այն ընտրվում է անմիջապես բնակչության կողմից՝ ուղղակի, հավասար, համընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա՝ փակ գաղտնի քվեարկությամբ: Նա **գործադիր և դատական իշխանության մարմիններից տարբերվում է նաև իր ներքին կառուցվածքով**: Սահմանադրության 73 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովում կարող է ստեղծվել ոչ ավել, քան տասներկու մշտական հանձնաժողով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովները խորհրդարանի օժանդակ մարմիններն են, որոնք կոչված են օգնելու նրան՝ իրականացնելու իր իրավասությանը ենթակա խնդիրներն ու լիազորությունները: Մշտական հանձնաժողովներն ստեղծվում են օրենքների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ տալու համար: Իսկ ժամանակավոր հանձնաժողովների խնդիրն է առանձին օրենքների նախագծերի նախնական քննարկման և որոշակի իրադարձությունների ու փաստերի մասին **Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելը**:

Ազգային ժողովի կառուցվածքային ստորաբաժանման օղակներ են կոմիտեները, ըստ էության, նաև **պատգամավորական խմբերն ու խմբակցությունները**, որոնք նույնպես զգալի աշխատանք են կատարում նրա սույլ զրկված խնդիրների արդյունավետ իրականացման գործում:

Ազգային ժողովն աչքի է ընկնում նաև իր **գործունեության առանձնահատկությամբ**: Նա կոլեգիալ մարմին է, որն իր աշխատանքները կազմակերպում է ճստաշրջանների, մշտական հանձնաժողովների և պատգամավորների անհատական գործունեության ձևերով: Իր իրավասությանը ենթակա հարցերով Ազգային ժողովն ընդունում է օրենքներ, որոշումներ, լուչակագրեր, ուղերձներ և այլն, որոնք պարտադիր են կատարման

երկրի ամբողջ տարածքում, իսկ օրենքով նախատեսված առանձին դեպքերում՝ նաև նրա սահմաններից դուրս:

Ազգային ժողովի իրավական վիճակի և աշխատանքի կազմակերպման ձևերի վերը նշված տարբերիչ գծերը պայմանավորված են օրենսդիր իշխանության յուրահատուկ բնույթով, պետական մարմինների համակարգում նրա զբաղեցրած տեղով և դերով:

3. Պետական իշխանության գործադիր մարմիններն ունեն էական առանձնահատկություններ օրենսդիր և դատական իշխանության մարմինների համեմատ: Գործադիր իշխանության մարմինները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, նախարարությունները, գերատեսչությունները և պետական կառավարման տարածքային մարմինները, **կազմում են մեկ միասնական համակարգ:**

Գործադիր իշխանության մարմինների համար բնութագրական է այն, որ վերջիններս (վերից վար) նշանակվում են համապատասխան վերադաս մարմնի ղեկավարի կողմից: Այսպես, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Սահմանադրության համաձայն (հոդվ. 55, 4-րդ կետ), կազմավորվում է հետևյալ կերպ. Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ վարչապետի ներկայացմամբ՝ կառավարության անդամներին (նախարարներին): Տարածքային կառավարման ղեկավարին՝ մարզպետին, նշանակում և ազատում է կառավարությունը (հոդվ. 107):

Գործադիր իշխանության մարմինները տարբերվում են նաև իրենց **գործունեության առանձնահատկությամբ:** Այն պայմանավորված է գործադիր իշխանության գործառնությունների յուրահատկությամբ՝ **այն ունի գործադիր և կարգադրիչ բնույթ** և կոչված է գործնականում ապահովելու **օրենքների և այլ իրավական ակտերի կատարման կազմակերպումը:**

Իրենց լիազորությունների շրջանակներում գործադիր իշխանության մարմիններն ընդունում են ակտեր՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև վերադաս գործադիր մարմինների ակտերի հիման վրա և ի կատարումն դրանց, որոնց միջոցով ապահովում են ներկայացուցչական մարմինների ակտերի և Նախագահի հրամանագրերի կատարումը:

Գործադիր իշխանության մարմիններն ունեն իրենց յուրահատուկ կառուցվածքն ու աշխատանքի կազմակերպման ձևերը:

Սահմանադրությամբ (հոդվ. 85) կառավարության կառուցվածքը կառավարության առաջարկությամբ սահմանվում է օրենքով, իսկ գործունեության կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապե-

տության Նախագահի հրամանագրով: Սահմանադրական այդ նորմի հիման վրա Հանրապետության Նախագահը 2007թ հուլիսի 18-ին հրապարակել է հրամանագիր, որտեղ մանրամասն սահմանվում են կառավարության գործունեության կազմակերպման՝ նիստերի նախապատրաստման, հրավիրման, որոշումների ընդունման և դրանց կատարման ապահովման, այդ բնագավառում կառավարության և նրա որոշումները կատարողների միջև ծագած մյուս հարաբերությունների կարգավորման հիմունքները:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ Սահմանադրությունը (85 հոդվ.) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության իրականացումը, ըստ էության, վերապահելով Հանրապետության կառավարությանը՝ որևէ նշում չի բովանդակում գործադիր իշխանության այնպիսի մարմինների մասին, ինչպիսիք են **նախարարությունները:** Մինչդեռ վերջիններս, ըստ էության, սահմանադրական մարմիններ են և, ինչպես պետական իշխանության գործադիր մարմինների, այնպես էլ ընդհանրապես հանրապետության իշխանության մարմինների համակարգում **գրադեցնում են ակնհեր տեղ:** Ուստի, հազիվ թե օրինաչափ համարվի այն հանգամանքը, որ **նախարարությունների իրավական վիճակը սահմանվում է նրանց կանոնադրություններով** (որը հատուկ է առավելապես ամեն տեսակի ու որակի հասարակական կազմակերպություններին), որոնք հաստատվում են վարչապետի կողմից: Այդ խնդրի լուծումն անհրաժեշտ է իրականացնել իրավական ակտի բարձր մակարդակով՝ **Սահմանադրությամբ կամ, թերևս, կառավարության մասին օրենքով** (որի ընդունումը Սահմանադրությամբ նախատեսված է, քայց անհայտ պատճառներով ուշանում է), որտեղ նախարարությունների իրավական վիճակը կստանա համալիր ամրագրում:

Ներկայումս գործնականում լուծված չէ նաև պետական կառավարման այնպիսի գործադիր մարմինների կազմակերպման կարգի և իրավական վիճակի հարցերն, ինչպիսիք են **գերատեսչությունները: Միայն Հանրապետության Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի հրամանագրի հավելվածում** (կոչվում է **Կարգ** «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման») ի թիվս Հանրապետության գործադիր մարմինների նշվում են նաև «կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները» (8-րդ կետ) և տրվում դրանց կառուցվածքը (14-րդ կետ):

Ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, այնպես էլ ընթացիկ օրենսդրությունը իրավունք չեն վերապահում կառավարությանը անհրաժեշտության դեպքում իրեն առընթեր կազմավորելու

կառավարման մարմիններ (գերատեսչություններ): Սակայն գործնականում ներկայումս Հանրապետությունում գործում են երկու տասնյակից ավելի գերատեսչություններ (օրինակ, լեզվի տեսչությունը, էներգետիկայի հանձնաժողովը, բարձրագույն որակավորման հանձնաժողովը (ԲՈՀ) և այլն): Նրանցից մի մասի իրավական վիճակը նույնիսկ սահմանված է օրենքով (օրինակ, լեզվի տեսչությունը գործում է «Լեզվի մասին» ՀՀ օրենքի հիման վրա): Սակայն այդ մարմինների կազմակերպման ու գործունեության հիմքերը, դրանց ենթակայության հարցը որևէ իրավական ակտով համակարգված չէ: Մինչդեռ վերջիններս պետական իշխանության գործադիր մարմինների համակարգում իրականացնում են զգալի լիազորություններ:

Գործադիր իշխանության մարմինների համակարգը, ինչպես երևաց վերը բերված շարադրանքից, աչքի է ընկնում կոնկրետ պետական մարմինների բազմաքանակությամբ և խայտաբղետությամբ, որոնք ունեն ինչպես ընդհանուր գծեր (որի շնորհիվ կազմում են մեկ միասնական համակարգ), այնպես էլ էական առանձնահատկություններ՝ պետական մարմինների համակարգում ունեցած տեղով ու դերով, գործունեության ձևերով, կազմակերպական կառուցվածքով, իրավասությամբ, հրապարակած ակտերի յուրահատկությամբ և այլն:

Գործադիր իշխանության մարմինների համակարգը գլխավորում է **ՀՀ կառավարությունը**՝ ՀՀ գործադիր իշխանության բարձրագույն մարմինը: Նրա կազմակերպման կարգին ու իրավական վիճակի ամրագրմանն է նվիրված Սահմանադրության 5 գլուխը: Այդ գլխի շարադրանքից հետևում է, որ **կառավարությունն ընդհանուր իրավասության մարմին է**, որը ղեկավարում է հանրապետության գործադիր գործունեության բոլոր ճյուղերն ու ոլորտները կամ, համեմայն դեպքս, դրանց մեծ մասը (հոդվ. 89):

Բացի այդ, կառավարությունը մաս **կոլեգիալ մարմին է**, որը ՀՀ Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի հրամանագրի համաձայն՝ իր աշխատանքները **կազմակերպում է նիստերի ձևով** (կետ 34): Կառավարության նիստերը իրավիրվում են դրանց վերաբերյալ կազմված ամենամսյա ժամանակացույցին համապատասխան, որով նախատեսվում են **հերթական նիստերի անցկացման օրերը (հինգշաբթի)**, օրակարգի հարցերը, զեկուցողները և հրավիրվող անձանց ցուցակը: **Արտահերթ նիստերը** իրավիրվում են ՀՀ Նախագահի կամ վարչապետի նախաձեռնությամբ կամ կառավարության որոշմամբ (IV բաժին):

Գործադիր իշխանության մարմինների համակարգում, կառավարությունից հետո, իրենց կարևորությամբ, իրավական վիճակով և գործունեության իրականացման ձևերով առանձնանում են **ՀՀ նախարարու-**

յունները: Նախարարության իրավական վիճակի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն հանդիսանում է **պետական կառավարման կենտրոնական մարմին**, որը կոչված է ղեկավարություն իրականացնելու իրեն հանձնարարված ճյուղերի կամ կառավարման ոլորտի նկատմամբ: Նախարարությունը գլխավորում է նախարարը, որը ՀՀ կառավարության անդամ է: **Նա միանձնյա կերպով ղեկավարում է** նախարարության տնօրինությանը վերապահված ժողովրդական տնտեսության կամ սոցիալ-մշակութային շինարարության ճյուղը, գործունեության ոլորտը և անձնական պատասխանատվություն է կրում նախարարության վրա դրված գործառնության արդյունավետ իրականացման համար:

Ըստ իրավասության բնույթի՝ նախարարությունները լինում են **ճյուղային և ֆունկցիոնալ:**

Ճյուղային են համարվում այն նախարարությունները, որոնք իրականացնում են ժողովրդական տնտեսության և սոցիալական զարգացման այս կամ այն ճյուղի կառավարումը: Վերջիններս կազմում են ՀՀ նախարարությունների ճնշող մեծամասնությունը (էներգետիկայի, առողջապահության, կրթության և գիտության, տրանսպորտի և կապի և այլն):

Ֆունկցիոնալ նախարարությունների յուրահատկությունը կայանում է նրանում, որ նրանց հանձնարարված է իրականացնել կառավարման որոշակի կարևորություն ներկայացնող **գործառնություն** (ֆունկցիա): Օրինակ, հանրապետության ֆինանսական ոլորտի գործունեության կազմակերպման համար ստեղծվել է ֆինանսների նախարարությունը:

Հանրապետության գործադիր իշխանության մարմինների համակարգում իրենց կազմակերպման, գործունեության և իրավական վիճակի բնորոշ գծերով առանձնանում են նաև **տարածքային կառավարման մարմինները** և գործադիր իշխանության մյուս մարմինները, որոնց մասին ավելի մանրամասն կխոսվի դասագրքի 22 գլխում:

4. Դատական իշխանության մարմինները՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանն, ինչպես նաև առաջին ատյանի և վերաքննիչ վարչական դատարանները, իրենց համակցությամբ կազմում են Հայաստանի Հանրապետության **դատական համակարգը**: Սահմանադրության 92 հոդվածի համաձայն՝ Հանրապետությունում օրենքով նախատեսված ղեկավարում կարող են ստեղծվել նաև մասնագիտացված այլ դատարաններ:

Դատական իշխանության մարմիններն իրենց խնդիրներով ու նպատակներով, կազմակերպման կարգով, կառուցվածքով, գործունեության ձևերով ու մեթոդներով, իրավական վիճակով **էապես տարբերվում են** պե-

տական իշխանության մարմինների մյուս տեսակներից: Մասնավորապես, արդարադատություն իրականացնող մարմինների խնդիրը՝ **մարդու և քաղաքացու, պետության, իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է**: Այդ մարմիններն իրենց առջև դրված խնդիրն իրականացնում են **դատական միատերում**՝ փարկված սուբյեկտների շահերը շոշափող քաղաքացիական, քրեական և վարչական բնույթի իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և լուծելու միջոցով: Դատաքննության արդյունքում արդարադատության մարմիններն ընդունում են **վճիռներ, դատավճիռներ և որոշումներ**, որոնք իրենց բնույթով էապես տարբերվում են պետական իշխանության մյուս մարմինների կողմից ընդունված ակտերից:

Տարբեր են նաև դատական իշխանության մարմինների **կազմակերպման և գործունեության սկզբունքները**: Բոլոր աստիճանների դատարանների դատավորները **նշանակվում են Հանրապետության Նախագահի կողմից**՝ արդարադատության խորհրդի կողմից կազմված դատավորների թեկնածուների ցուցակի և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակների հիման վրա: Դատական իշխանության բոլոր մարմինների **գործունեությանը հատուկ են**՝ դատավորների անկախության, անձեռնմխելիության, գործի դատաքննության հրապարակայնության, դատավարության մրցակցության, կողմերի հավասարության և այլ սահմանադրական սկզբունքներ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը «Դատական իշխանություն» գլխի (6) տակ ամրագրել է նաև սահմանադրական դատարանի կարգավիճակը, դրանով իսկ վերջինիս դասելով դատական իշխանության մարմինների շարքը:

Սահմանադրական դատարանը, ինչպես արդեն նշվել է, իսկապես ունի ընդհանուր գծեր արդարադատության մարմինների հետ (գործունեության իրականացումը սահմանադրական դատավարության միջոցով, դատավորների անկախությունը, անփոփոխելիությունը և այլն), սակայն **ունի նաև էական առանձնահատկություններ**: Տարբեր են նրա կազմակերպման կարգը, կառուցվածքը, իրավասության շրջանակները, ընդունած ակտերի ձևերն ու բովանդակությունը և այլն, որպիսի հանգամանքը սահմանադրական դատարանի գործունեությանը հաղորդում է **յուրահատուկ բնույթ**: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը սահմանելով հանրապետության դատական համակարգը, նրա մեջ չի ներառում սահմանադրական դատարանը:

Պետական մարմինների ինքնուրույն, հատուկ խումբ են կազմում **դատախազական մարմինները**, որոնք, չնայած Սահմանադրությամբ ներկայացված են «Դատական իշխանություն» գլխի տակ (գլուխ 6), սա-

կայն չեն մտնում պետական իշխանության երեք թևերի (օրենսդիր, գործադիր և դատական) մարմիններից և ոչ մեկի մեջ:

Հայաստանի Հանրապետության դատախազությունը Սահմանադրության համաձայն (հոդվ. 103)՝ միասնական կենտրոնացված համակարգ է, որը ղեկավարում է հանրապետության գլխավոր դատախազը:

Դատախազական մարմինների հիմնական տարբերիչ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ Սահմանադրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում՝ հանցավոր ոտնձգություններից պաշտպանում են քաղաքացիների, իրավաբանական անձանց և պետության շահերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը, միջոցներ են ձեռնարկում երկրում օրինականությունն ամրապնդելու, օրենքների կատարումն ապահովելու, օրինախախտումների պատճառները և դրանց կատարմանը նպաստող պայմաններն ու հանգամանքները բացահայտելու և վերացնելու համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն, Հանրապետության Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը 6 տարի ժամանակով նշանակում է գլխավոր դատախազին, վերջինիս առաջարկությամբ Հանրապետության Նախագահը նշանակում և ազատում է գլխավոր դատախազի տեղակալներին (55 հոդվ. 9-րդ կետ):

Հայաստանի Հանրապետության դատախազության լիազորությունները, կազմակերպման և գործունեության կարգը սահմանված է «Դատախազության մասին» 2007թ. փետրվարի 22-ին ընդունված օրենքով:

Պետական իշխանության մարմիններից բացի, Հայաստանի Հանրապետության պետական մարմինների համակարգում գործում են նաև տարբեր օժանդակ, խորհրդակցական և նման բնույթի այլ գործառնություններ իրականացնող մարմիններ, որոնց իրավական վիճակը սահմանվում է պետական իշխանության այն մարմնի կողմից, որին կից գործում են: Այդ մարմիններից են, օրինակ, **Հանրապետության Նախագահի աշխատակազմը** (որը ապահովում է Նախագահի գործունեությունը), **անվտանգության խորհուրդը** (որը պայմաններ է ստեղծում քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պահպանման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի սահմանադրական իրավունքների իրականացման համար), ԱԺ աշխատակազմը և մի շարք այլ մարմիններ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԸ**

**§ 1. Ընտրական իրավունքի և ընտրական համակարգի
հասկացությունը և հարաբերակցությունը**

Սահմանադրական իրավունքի պատմությունը վկայում է, որ «ընտրություն» հասկացությունն ունի խոր արմատներ: Այն սկիզբ է առնում տոհմատիրական կարգերից, և պետականության բաղադրամասերից է եղել հին ստրկատիրական պետություններում, ինչպես նաև ֆեոդալիզմի շրջանի քաղաք-պետություններում: Ընտրությունները, ընտրական իրավունքը և ընտրական համակարգն առանձնահատուկ տարածում գտան նաև կապիտալիստական կարգերի առաջացման և զարգացման ժամանակաշրջանում:

Իրավաբանական գրականության մեջ «ընտրություն» հասկացությունը մեկնաբանվում է որպես *համապատասխան մարմնի կազմավորման կամ պաշտոնատար անձին լիազորություններով օժտելու գործընթաց, որն իրականացվում է իրավագործ անձանց քվեարկության միջոցով:*

Ընտրությունների միջոցով են կազմավորվում խորհրդարանները, տեղական ինքնակառավարման մարմինները, որոշ երկրներում՝ պետության գլուխը, կառավարությունը, դատական մարմինները:

Ընտրությունների միջոցով քաղաքացիներն իրականացնում են իրենց կարևորագույն քաղաքական իրավունքներից մեկը, որոշում իրենց ներկայացուցիչներին համապատասխան ընտրովի մարմնում և օժտում նրանց ժողովրդախիշխանության իրականացման մանդատներով՝ սահմանադրությամբ նախատեսված շրջանակներում:

Եթե «ընտրություններ» եզրույթը, ինչպես արդեն նշվեց, մեկնաբանվում է որպես որևէ մարմնի կազմավորումը քվեարկության միջոցով և այս առումով հատուկ պարզաբանման կարիք չունի, ապա «ընտրական իրավունք» հասկացությունը, որպես կանոն, օգտագործվում է երկու իմաստով՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ:

Սուբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքը քաղաքացուն տրված հնարավորություն է մասնակցելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորմանը՝ ընտրելու (ակտիվ ընտրական ի-

րավունք) և ընտրվելու (պասիվ ընտրական իրավունք) միջոցով:

Սուբյեկտիվ ընտրական իրավունքը քաղաքացու կոնկրետ իրավունքների համակարգ է, որի մեջ առանձնանում է *ակտիվ* և *պասիվ* ընտրական իրավունքը: *Ակտիվ ընտրական իրավունքն* անվանում են նաև *ձայնի իրավունք* կամ ընդհանուր ընտրական իրավունք: *Պասիվ ընտրական իրավունքը* ենթադրում է ընտրություններում իր թեկնածությունն առաջադրելու իրավունքը կամ առաջադրվելու համաձայնություն տալու իրավունքը:

Այսինքն, սուբյեկտիվ իմաստով «ընտրական իրավունք» հասկացությունն ընդգրկում է ինչպես ընտրելու, այնպես էլ ընտրվելու իրավունքը:

Օբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքն այնպիսի իրավական նորմերի համակարգ է, որը կարգավորում է ընտրովի մարմինների կազմավորման վերաբերյալ հասարակական հարաբերությունները, այսինքն՝ այդ մարմինների կազմավորման կարգը:

Այսպիսով՝ *ընտրական իրավունքը* (սուբյեկտիվ և օբյեկտիվ իմաստով), որպես սահմանադրաիրավական նորմերի ամբողջություն, կազմում է սահմանադրական իրավունքի բաղկացուցիչ մասը, նրա կարևոր ինստիտուտներից մեկը և կարգավորում է այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք առաջանում են պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում, ինչպես նաև անմիջական ժողովրդախիշխանության իրացման այլ գործընթացներում (հանրաքվե, ժողովրդական նախաձեռնություն և այլն):

Օբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքի հետ սերտորեն կապված է *ընտրական համակարգը*, այսինքն՝ այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են որևէ մարմնի ընտրությունների կապակցությամբ: Մասնավորապես, *«ընտրական համակարգն* ընդգրկում է Սահմանադրությամբ և 2011թ. մայիսի 26-ին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) ընտրական իրավունք ունեցող անձանց կողմից անմիջականորեն Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգը:

Դրա հետ մեկտեղ, ընտրությունների կարգը սահմանվում է սահմանադրաիրավական նորմերով, որոնց ամբողջությունը կազմում է ընտրական իրավունքը օբյեկտիվ իմաստով:

Հետևաբար, ընտրական համակարգի և ընտրական իրավունքի փոխադարձ անխզելի կապն ակնհայտ է, սակայն *դրանք չի կարելի հակադրել միմյանց կամ նույնացնել:*

Ընտրական համակարգը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգն է:

Ընտրությունների այդ կարգը սահմանող սահմանադրավական նորմերի ամբողջությունը կազմում է **ընտրական իրավունքը**:

Հանրապետության նորմատիվ իրավական այն ակտերի ամբողջությունը, որոնք բովանդակում են ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ նորմեր, հանդիսանում են **ՀՀ ընտրական իրավունքի աղբյուրներ**: Այդպիսիք են՝ ՀՀ Սահմանադրությունը, Ընտրական օրենսգիրքը, ինչպես նաև համապատասխանաբար Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կազմակերպելու և անցկացնելու վերաբերյալ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, ՀՀ Նախագահի հրամանագրերը, կառավարության, մարզպետների, պետական այլ մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները:

Սահմանադրական իրավունքի գիտության մեջ **ընտրական համակարգը** մեկնաբանվում է լայն և նեղ իմաստով:

Լայն իմաստով՝ ընտրական համակարգը հանրային իշխանության մարմինների ընտրությունների կապակցությամբ կարգավորված հասարակական հարաբերություններ են, որոնք կազմում են ընտրությունների կարգը:

Նեղ իմաստով՝ ընտրական համակարգը համարվում է մանդատները թեկնածուների միջև բաշխելու միջոց՝ հաշվի առնելով ընտրողների քվեարկության արդյունքները:

Սահմանադրական իրավունքի պատմությունը ցույց է տալիս, որ առաջին ընտրական համակարգը եղել է **մեծամասնական (մաժորիտար)** համակարգը, որը ֆրանսիական ծագում ունի: Այս համակարգը կիրառվում է առավելապես միամանդատ ընտրատարածքներում, որի էությունը կայանում է նրանում, որ տվյալ ընտրատարածքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է սահմանված ձայների մեծամասնությունը:

Մեծամասնական ընտրական համակարգն դրսևորվում է մի շարք տարատեսակներով՝ ա) հարաբերական մեծամասնության, բ) բացարձակ մեծամասնության և գ) որակյալ մեծամասնության:

Մեծամասնական համակարգի հարաբերական մեծամասնության դեպքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է ավելի շատ ձայներ, քան իր հետ քվեարկվող մյուս թեկնածուներն առանձին-առանձին վերցրած: Չայների հավասարության դեպքում անցկացվում է

վիճակահանություն: Այս համակարգը կիրառվում է հիմնականում Ազգերի բրիտանական համագործակցության անդամ երկրներում:

Մեծամասնական համակարգի բացարձակ մեծամասնության դեպքում՝ ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է ավելի շատ ձայներ, քան ընտրատարածքում գյուցակված բոլոր թեկնածուները միասին վերցրած, այսինքն՝ ձայների ընդհանուր թվի կեսից ավելին: Տարբեր երկրներում «ձայների ընդհանուր թիվ» հասկացությունը տարբեր մեկնաբանություններ ունի՝ ցուցակներում **ընդգրկված ընտրողների**, կամ **մասնակիցների** ձայների, կամ տրված **իրական ձայների** կեսից ավելին:

Մեծամասնական համակարգի որակյալ մեծամասնության էությունն այն է, որ ընտրված է համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրողների ձայների կեսից զգալի թվով ավելի ձայներ ստացած թեկնածուն (երկու երրորդը):

Մեծամասնական ընտրական համակարգի բոլոր տարատեսակները կարող են կիրառվել ինչպես միամանդատ, այնպես էլ բազմամանդատ ընտրատարածքներում:

Համամասնական ընտրական համակարգի գաղափարը ծագել է Ֆրանսիայում 18-րդ դարի վերջին, այնուհետև 19-րդ դարի առաջին կեսերին այդ կապակցությամբ նախագծեր են առաջարկվել Ամերիկայում և Շվեյցարիայում: Մասկայն համամասնական ընտրական համակարգն առաջին անգամ կիրառվել է 1889 թ. Բելգիայում: Արդեն 20-րդ դարի սկզբին հայտնի էին ընտրական այդ համակարգի 152 տարատեսակներ:

Համամասնական ընտրական համակարգը կիրառվում է պատգամավորների ընտրությունների ժամանակ և անհրաժեշտ է, որպեսզի ընտրություններն անպայման լինեն **կուսակցական ցուցակներով**²⁵: Այս համակարգի դեպքում պատգամավորական մանդատներ ստանալու համար յուրաքանչյուր կուսակցություն, որպես կանոն, պետք է ստանա ընտրական օրենսդրությամբ սահմանված որոշակի թվով ձայներ՝ **քվոտաներ**: Դրանից էլ կախված է համապատասխան կուսակցության պատգամավորական տեղերի թիվը, որը որոշելու համար կիրառվում են տարբեր մեթոդներ: Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ստացած մանդատների թիվը համապատասխանում է դրա թեկնածուների օգտին տրված ձայների թվին:

Համամասնական ընտրական համակարգը հաճախ գնահատվում է ավելի նախընտրելի և ժողովրդավարական, քան մեծամասնականը, քա-

²⁵ Այդ համակարգով է անցկացվում նաև Երևանի ավագանու ընտրությունները (տես Օրենսգրքի 150 հոդվածը):

նի որ առաջինը համեմատաբար ճիշտ է արտահայտում հասարակական կարծիքը:

Յուրաքանչյուր ընտրական համակարգի (մեծամասնական, համամասնական կամ խառը) կիրառումը համապատասխան երկրներում կախված է օրենսդիր մարմնում քաղաքական ուժերի հարաբերակցությունից և այս առումով այն սուբյեկտիվ բնույթ է կրում:

Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է ինչպես մեծամասնական (հարաբերական մեծամասնության) ընտրական համակարգը, այնպես էլ համամասնական ընտրական համակարգը:

§ 2. Ընտրություններին ՀՀ քաղաքացիների մասնակցության սկզբունքները

ՀՀ Սահմանադրությամբ, Ընտրական օրենսգրքով և մյուս նորմատիվ իրավական ակտերով նախատեսված՝ Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի հիմնական երաշխիքները կազմում են ՀՀ ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հիմքը: Դրանք հնարավորություն են ընձեռում ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիներին անմիջականորեն, կամքի ազատ արտահայտությամբ և կանավոր հիմունքներով մասնակցել ընտրություններին:

Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Ընդհանուր ընտրական իրավունքը նշանակում է, որ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային և այլ դրությունից:

Եթե Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները, ապա Հանրապետության Հիմնական օրենքի (30 հոդվ.) և Օրենսգրքի (2 հոդվ.) համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, բացի ՀՀ քաղաքացիներից, մասնակցելու իրավունք ունեն նաև ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձիք, ովքեր համապատասխան համայնքի բնակչության ռեզիստություն մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում ունեն: Ընտրական իրավունքով օժտված նշված անձանց վրա տարածվում են նաև տեղական ինքնակառավարման մար-

մինների ընտրությունների ժամանակ ՀՀ քաղաքացիների համար Օրենսգրքով նախատեսված իրավունքներն ու պարտաւթյունները:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը **որոշակի ցնճեր** է նախատեսում քաղաքացիների ընտրվելու իրավունքի (պասիվ ընտրական իրավունք) իրականացման բնագավառում: Այսպես, Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել 35, Ազգային ժողովի պատգամավոր՝ 25 (Սահմանադրության 50 և 64 հոդվածներ), համայնքի ղեկավար՝ 25, ավագանու անդամ՝ 21 տարին լրացած Օրենսգրքով նախատեսված անձինք (132 հոդվ.):

Բացի տարիքային ցնճից, ընտրական օրենսդրությունը սահմանում է նաև **որոշ այլ ցնճեր**, որոնք հիմնականում առնչվում են **քաղաքացիության**, համապատասխան **տարածքում բնակվելու ժամկետի**, ինչպես նաև **ընտրական գրավի** հետ: Այսպես, Հայաստանի Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրվելու համար պահանջվում է ոչ պակաս, քան վերջին 10 տարվա ՀՀ քաղաքացիության, Հանրապետությունում վերջին 10 տարվա մշտական բնակության ժամկետ: Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուի համար՝ 5 տարվա քաղաքացիության և 5 տարվա մշտական բնակության ժամկետ, իսկ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուի համար՝ տվյալ համայնքի բնակչության ռեզիստություն մինչև քվեարկության օրը առնվազն վերջին վեց ամսվա հաշվառում և ընտրելու իրավունք:

Բացի այդ, Հանրապետության Նախագահի թեկնածու գրանցելու համար պահանջվում է **ընտրական գրավ՝** նվազագույն աշխատավարձի 8000-ապատիկի չափով, Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրական ցուցակի գրանցման դեպքում՝ 8000-ապատիկի, իսկ մեծամասնական ընտրակարգի դեպքում՝ 1000-ապատիկի չափով: Ընտրական գրավի համապատասխան գումարներ է պահանջվում նաև համայնքի ղեկավար և ավագանու անդամ առաջադրված թեկնածուներից՝ նկատի ունենալով ընտրողների թիվը (Օրենսգրքի 133 հոդվ.):

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է նաև այն դեպքերը, երբ քաղաքացին **չի կարող մասնակցել ընտրություններին**: Մասնավորապես, ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող քաղաքացիները (30 հոդվ.): Ընտրական օրենսգրքի 2 հոդվածի (4-րդ մաս) համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների և **Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով** ընտրությունների ժամանակ քվեարկությանը **չեն**

կարող մասնակցել պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքների անցնող զինծառայողները, ձերբակալված կամ կալանավորված անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիները: Նույն հոդվածի (5-րդ մաս) համաձայն՝ Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիները համապետական (ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով) ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցում են Օրենսգրքով սահմանված կարգով ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու դեպքում:

Առանձին դեպքերում որոշակի մարմիններում աշխատելու հանգամանքը նույնպես արգելք է հանդիսանում Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու գրանցվելու և տեղական ինքնակառավարման մարմիններում որպես թեկնածու առաջադրվելու համար: Օրինակ, Ազգային ժողովի *պատգամավորի թեկնածու չեն կարող առաջադրվել սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, դատախազները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողները, զինծառայողները: ՀՀ այն քաղաքացիները, ովքեր ունեն այլ պետության քաղաքացիություն չեն կարող առաջադրվել և գրանցվել Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու (Օրենսգրքի 107 հոդվ.):*

Այն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներն ու պաշտոնատար անձինք, որոնց վրա չեն տարածվում նշված սահմանափակումները, պատգամավորի թեկնածու գրանցվելուց հետո *մինչև նախընտրական քարոզչության ավարտը ժամանակավորապես ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները* կատարելուց, բացառությամբ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանցից:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, դատախազները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովի անդամները:

Հայաստանի Հանրապետությունում ընտրություններն իրականացվում են *հավասար* ընտրական իրավունքի սկզբունքի հիման վրա: Դրանից բխում է, որ յուրաքանչյուր ընտրող Հանրապետության Նախագահի,

Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների լիակատարությունների ժամանակ *ունի մեկ ձայն*, և բոլոր ընտրողներն այդ լիակատարություններին մասնակցում են *հավասար հիմունքներով*: Չնայած Ազգային ժողովի ընտրությունները տարբեր ընտրակարգերով են անցկացվում, այնուամենայնիվ, յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայնի իրավունք՝ համամասնական ընտրակարգով ընտրության և մեկ ձայնի իրավունք՝ սեծամասնական ընտրակարգով ընտրության ժամանակ, բացառությամբ Օրենսգրքով սահմանված դեպքերի (104 հոդվ.): Յուրաքանչյուր ընտրող մեկ ձայնի իրավունք ունի նաև համայնքի ղեկավարի ընտրության և համայնքի ավագանու անդամի ընտրության ժամանակ (131 հոդվ.):

Այսպիսով, քաղաքացիների հավասար ընտրական իրավունքը կազմված է *երկու բաղադրամասերից: Առաջին բաղադրամասը՝* յուրաքանչյուր ընտրող ընտրությունների ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք, և դա ապահովվում է նրանով, որ ընտրական իրավունք ունեցող բոլոր քաղաքացիներն ընդգրկվում են ընտրողների միայն մեկ ցուցակում:

Հավասար ընտրական իրավունքի *երկրորդ բաղադրամասը՝* ընտրություններին Հանրապետության քաղաքացիների մասնակցելու հավասար հիմունքներն, ապահովվում են նրանով, որ ոչ մի ընտրող մյուսակատարմամբ որևէ առավելություն չունի, և այդ մպատակով ստեղծվում են նաև հնարավորինս հավասար ընտրողների քանակով ընտրական տեղամասեր: Պետությունը հավասար պայմաններ է ապահովում ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման համար:

Ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքի իրականացումը նշանակում է, որ հանրապետության ընտրովի մարմինները, բացառությամբ Նրևանի քաղաքապետի, ընտրվում են *անմիջականորեն ընտրողների կողմից՝* քվեարկության միջոցով: Այս առումով նշված ընտրովի մարմինները հանդիսանում են անմիջականորեն ժողովրդի ներկայացուցչական մարմիններ: Անմիջականորեն կամ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով քաղաքացիները մասնակցում են պետության կառավարմանը և նրանց հնարավորություն է ընձեռվում մշտական կապ պահպանել իրենց կողմից ընտրված մարմինների հետ և մշտական վերահսկողություն իրականացնել վերջիններիս գործունեության նկատմամբ:

Հանրապետության օրենսդրությամբ *արգելվում է* ոչ անմիջական, անուղղակի ընտրական (քվեարկության) իրավունքի իրականացման սկզբունքը, բացառությամբ Երևանի քաղաքապետի ընտրության դեպքում:

Ոչ անմիջական (անուղղակի) ընտրական իրավունքի էությունը կայանում է նրանում, որ, ի տարբերություն ուղղակի ընտրական իրավունքի, կարող է իրականացվել երկու ձևով՝ **ընտրողների միջոցով և բազմաստիճան**:

Առաջին դեպքում ակտիվ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներն ընտրում են **ընտրիչներ**, իսկ վերջիններս էլ ընտրում են ներկայացուցիչներ (պատգամավորներ) կամ այլ անձանց (օրինակ, պետության գլխին):

Բազմաստիճան ընտրական իրավունքի ժամանակ ստորադաս ներկայացուցչական մարմինները ներկայացուցիչներ են ընտրում վերադաս ներկայացուցչական մարմինների համար:

Ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների՝ ընտրություններին անմիջականորեն, կամքի ազատ արտահայտությամբ մասնակցելու իրավունքի հետ սերտորեն կապված է **կամավոր** հիմունքներով ընտրություններին մասնակցելու սկզբունքը: Այս սկզբունքի համաձայն, որևէ մեկն իրավասու չէ ստիպելու ընտրողներին՝ մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին: Նրանք իրավունք ունեն ազատորեն արտահայտելու իրենց ընտրական կամքը:

Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում **քվեարկությունը գաղտնի է**: Քվեարկության գաղտնիության սկզբունքը ենթադրում է, որ պետք է բացառվի քվեարկողների կամքի ազատ արտահայտման նկատմամբ որևէ **վերահսկողություն**: Ընտրողի համար նշված սկզբունքը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Պետական մարմիններն ապահովում են ընտրողների քվեարկության գաղտնիության սկզբունքը, ուրի խախտումն առաջ է բերում օրենքով սահմանված իրավական պատասխանատվություն: Քվեարկությունը կատարվում է այդ նպատակով կահավորված սենյակում, և քվեարկության խցիկը (սենյակը) նույնպես պետք է կահավորված լինի այնպես, որ ընտրողը կարողանա գաղտնի լրացնել քվեաթերթիկը: Բացի դրանից, արգելվում է քվեաթերթիկը լրացնելիս որևէ այլ անձի ներկայությունը քվեարկության խցիկում, բացառությամբ Օրենսգրքով նախատեսված դեպքերի: Լրացված քվեաթերթիկն ընտրողն անձամբ է գցում քվեատուփի մեջ:

Ընտրությունների հրապարակայնության սկզբունքի իմաստն այն է, որ դրանք նախապատրաստվում և անցկացվում են հրապարակայնորեն: Այդ նպատակով ընտրական հանձնաժողովների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ընտրությունների նախապատրաստ-

մանն ու անցկացմանը վերաբերող **որոշումները հրապարակվում են** Օրենսգրքով սահմանված կարգով: Ընտրական հանձնաժողովների նիստերին և քվեարկության ամբողջ ընթացքում տեղամասային կենտրոնում ներկա լինելու իրավունք ունեն վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, վերադաս ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ՝ այդ հանձնաժողովի անդամները: Ներկա լինելու իրավունք ունեցող անձինք, բացառությամբ հանձնաժողովների անդամների, կարող են լուսանկարել, տեսանկարահանել քվեարկության ընթացքը՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը: Վերջիններիս կարգավիճակը մանրամասնված է Օրենսգրքի 29-33 հոդվածներում: Զաղաքացիները տեղեկացվում են ընտրական հանձնաժողովների կազմի, աշխատաժամերի, ընտրական տեղամասերի և տեղամասային կենտրոնների կազմավորման, ընտրողների ցուցակների, թեկնածուների առաջադրման ու գրանցման, քվեարկության օրվա, ընտրությունների ընթացքի և դրա արդյունքների ամփոփման, ինչպես նաև ընտրությունների նախապատրաստման և անցկացման այլ տվյալների մասին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (այսուհետ՝ ԿԸՀ) որոշումները սահմանված կարգով տեղադրվում են հանձնաժողովի **համաժանգային կայքում**: Դրանում կարող են տեղադրվել համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերը, ինչպես նաև ընտրական ցուցակների գրանցման համար իրենց գույքի և ֆինանսական միջոցների վերաբերյալ հայտարարագրեր: Վերջիններս պատճենները գրավոր դիմումի հիման վրա սպառնադրվում են ընտրական հանձնաժողովների անդամներին, վստահված անձանց, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին և դիտորդներին:

ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ յուրաքանչյուրին առաջ 30-րդ օրվանից և քվեարկության նախորդ օրը ՀՀ ընտրողների ռեգիստրը վարող ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանությունը (այսուհետ՝ լիազոր մարմին) հրապարակում է ռեգիստրում լուրջորված ընտրողների ընդհանուր թիվը՝ նշելով նաև յուրաքանչյուր յուրուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը:

ԿԸՀ համապետական ընտրությունների օրը երեքժամյա պարբերականությամբ Հայաստանի հանրային ռադիոյով և հանրային հեռուստու-

տեսությանը տեղեկություններ է հրապարակում ընտրությունների ընթացքի, դրանց մասնակցած ընտրողների թվի, ինչպես նաև ստացված դիմում-բողոքների վերաբերյալ:

§ 3. Ընտրական գործընթացի փուլերը

Սահմանադրական իրավունքում *ընտրական գործընթացը* բնորոշվում է որպես *անհատների, մարմինների, կազմակերպությունների և խմբերի՝ օրենքով ու սոցիալական մյուս նորմերով կարգավորված գործողությունների՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման ու անցկացման կապակցությամբ:*

Ընտրական գործընթացը, որպես սուբյեկտիվ ընտրական իրավունքի իրականացման ձև, արտացոլում է իշխանության իրականացմանը քաղաքացիների մասնակցության կառուցակարգերը: Այն ներառում է օրենքով սահմանված *ընտրական փուլերի ամբողջությունը*, որոնք բաղկացած են կոնկրետ գործողություններից:

Իրավաբանական գրականության մեջ ընտրական գործընթացը փուլերի բաժանելու հարցում միակարծություն չկա: Մասնագետների մի մասը հակված է այն բաժանել ավելի փոքրածավալ (մոտ տասը), իսկ մյուսները՝ ավելի խոշոր (երեք) փուլերի: Անհրաժեշտ է ընդգծել, որ դրանց միջև էական տարբերություններ չկան, քանի որ ընտրական գործընթացը խոշոր փուլերի բաժանելու դեպքում այն ընդգրկում է նաև ընտրությունների հետ կապված կազմակերպական միջոցառումների փոքրածավալ փուլերը:

Ուսումնական խնդիրների հարմարավետության առումով ընտրական գործընթացը նպատակահարմար է բաժանել երեք փուլերի՝

- 1) նախապատրաստական,
- 2) քվեարկության,
- 3) քվեարկության արդյունքները որոշելու և դրանք հրապարակելու:

Օրենսգիրքը յուրովի է կարգավորում ընտրական գործընթացի փուլերի բաղադրամասերը: Այսպես, Օրենսգրքի համաձայն՝ ընտրությունների նախապատրաստական փուլն ավելի տարողունակ է, քան քվեարկության կամ քվեարկության արդյունքները որոշելու փուլերը:

Ընտրական օրենսդրությունն ուղղակի կամ անուղղակի ձևով կանոնակարգում է նշված կազմակերպական միջոցառումների ժամանակացույցը:

§ 4. Ընտրությունների նախապատրաստումը

Հայաստանի Հանրապետությունում անցկացվող ընտրությունների նախապատրաստական փուլն ընդգրկում է մի շարք կազմակերպական միջոցառումներ, այդ թվում՝ ա) ընտրություններ նշանակելը, բ) ընտրողների ցուցակներ, ընտրատարածքներ, ընտրական տեղամասեր և տեղամասային կենտրոններ կազմելը, գ) ընտրական համաձայնագրեր կազմելը, դ) թեկնածուների առաջադրումը և գրանցումը, ե) նախընտրական քարոզչությունը, զ) ընտրությունների ֆինանսավորումը:

Ա. Ընտրություններ նշանակելը: Ընտրությունների նախապատրաստական փուլի այս միջոցառման էությունն ընտրությունների ժամանակաթիվ (տարի, ամիս և ամսաթիվ) նշանակելն է:

ՀՀ Սահմանադրությամբ *Հանրապետության Նախագահի* հերթական ընտրությունն անցկացվում է նրա լիազորությունների ավարտից 50 օր առաջ (51 հոդվ.): Ընտրության օրվա մասին հանրային ռադիոյով և հանրային հեռուստատեսությամբ հաղորդազրույթամբ հանդես է գալիս ԿԸՀ-ի նախագահը՝ ընտրության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ (Օրենսգրքի 96 հոդվ.):

Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է նրա լիազորությունների ավարտին նախորդող ոչ շուտ, քան 40, և ոչ ուշ, քան 30 օր առաջ (Սահմանադրության 68 հոդվ.): Ընտրությունների ստույգ օրվա մասին Հանրապետության Նախագահը հրամանագիր է հրապարակում՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ (Օրենսգրքի 127 հոդվ.):

Սահմանադրության համաձայն ՀՀ նախագահի և Ազգային ժողովի ընտրություն չի անցկացվում *ռազմական կամ արտակարգ* դրության ժամանակ: Այդ կապակցությամբ նշված մարմինները սահմանված կարգով շարունակում են իրենց լիազորությունների կատարումը, իսկ ընտրությունն անցկացվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո սահմանված ժամկետներում (53.1 և 63 հոդվածներ):

Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները, բացառությամբ Երևանի ավագանու ընտրությունների, կարող են անցկացվել տարին մինչև չորս անգամ: Ընդ որում, քվեարկության օրերը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է ԿԸՀ-ը: *Այդ մարմինների ընտրությունները նշանակում է համապատասխան մարզպետը՝* համայնքի ղեկավարի, ավագանու անդամների լիազորությունների ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 70 օր առաջ (Օրենսգրքի 145 հոդվ.):

Երևանի ավագանու հերթական ընտրություններն անցկացվում են նրա լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 40 և ոչ ուշ, քան 30 օր

առաջ: Այդ ընտրությունները *նշանակվում են ՀՀ կառավարության որոշմամբ* այն հաշվարկով, որպեսզի նշված որոշումն ուժի մեջ մտնի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ (Օրենսգրքի 152 հոդվ.):

Այսպիսով, և՛ Հանրապետության Սահմանադրությունը, և՛ Օրենսգրքը Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների հեղինակալ ընտրությունների ստույգ օր չեն որոշում: Գրանք սահմանում են միայն նրանց ընտրությունների անցկացման վերը նշված առավելագույն տևողության ժամկետները: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր դեպքում լրացուցիչ ակտ է հրապարակվում՝ սահմանելով ընտրության կոնկրետ օրը:

ՀՀ Սահմանադրությամբ և Օրենսգրքով սահմանվում են Հանրապետության Նախագահի ընտրությունների երկրորդ փուլ, նոր և արտահերթ ընտրություններ, Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրություններ, Ազգային ժողովի արտահերթ, տեղական ինքնակառավարման մարմինների նոր և արտահերթ, Երևանի ավագանու արտահերթ ընտրություններ անցկացնելու ժամկետները:

Հանրապետության Նախագահի ընտրությունների *երկրորդ փուլը* անցկացվում է *քվեարկությունից հետո 14-րդ օրը*: Դրան կարող են մասնակցել այն երկու թեկնածուները, որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: Երկրորդ փուլն անցկացվում է այն դեպքում, եթե քվեարկվել են երկուսից ավելի թեկնածուներ և նրանցից ոչ մեկն ընտրվելու համար չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ:

Նախագահի ընտրությունն *անվավեր կամ չկայացած* ճանաչելու, ինչպես նաև Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար անհաղթահարելի ճանաչված խոչընդոտները չվերանալու դեպքում, նշանակվում են *նոր ընտրություններ*: ՀՀ Նախագահի *հրաժարականի, մահվան*, լիազորությունների կատարման անհնարիմության և *պաշտոնակալ անելու* դեպքում, նշանակվում է *արտահերթ ընտրություն*: Հայաստանի Հանրապետության Նախագահի *նոր* և *արտահերթ* ընտրության մասին ԿԸՀ-ի նախագահը՝ հանրային ռադիոյով և հանրային հեռուստատեսությամբ հաղորդագրությունը հրապարակվում է ընտրության օրվանից ոչ ուշ, *քան 39 օր առաջ*:

Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորի լիազորությունների վաղաժամկետ դադարելու հետևանքով մանդատը թափուր մնալու դեպքում համապատասխան ընտրատարածքում *լրացուցիչ ընտրություններն* անցկացվում են հեղինակալ ընտրությունների համար սահմանված կարգով, այդ մանդատը թափուր մնալուց հետո՝ 80-օրյա ժամկետում: Մեծամասնական ընտրակարգով լրա-

ցուցիչ ընտրություններ չեն անցկացվում օրենսդիր մարմնի լիազորությունների վերջին տարում:

Ազգային ժողովի՝ *համամասնական ընտրակարգով* ընտրված պատգամավորի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքում նրա մանդատը ԿԸՀ-ի որոշմամբ մեկշաբաթյա ժամկետում տրվում է համապատասխան կուսակցության (կուսակցության դաշինքի) ընտրական *ցուցակի հերթական համարի հաջորդ թեկնածուին*: Եթե ընտրական ցուցակում այլ թեկնածու չկա, ապա մանդատը բաշխվում է դրա բաշխմանը մասնակցելու իրավունք ստացած մյուս կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև՝ ըստ մնացորդների մեծության հերթականության(Օրենսգրքի 125 հոդվ.):

Արտահերթ ընտրություններն անցկացվում են Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում՝ Ազգային ժողովն արձակվելուց ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 40 օրվա ընթացքում: Ազգային ժողովն արձակելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի հետ միաժամանակ հրամանագիր է հրապարակվում արտահերթ ընտրություններ նշանակելու մասին:

Տեղական ինքնակառավարման մարմիններում նոր ընտրություններ անցկացվում են ընտրված և լիազորությունները չստանձնած համայնքի ղեկավարի *մահվան կամ հրաժարականի*, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամների *ընտրությունները չկայացած ճանաչելու* վերաբերյալ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումն ընդունելուց կամ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող *40-օրյա ժամկետի վերջին կիրակի օրը*: Նոր ընտրությունը նշանակում է մարզպետը:

Համայնքի ղեկավարի *արտահերթ ընտրությունն* անցկացվում է նրան պաշտոնակալ անելու կամ լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 40-օրյա ժամկետի վերջին կիրակի օրը: Նշված որոշումներն ընդունվում են միաժամանակ: *Նույն կարգով և ժամկետում ավագանու անդամների արտահերթ* ընտրություն է անցկացվում այն դեպքում, երբ համայնքի ավագանու անդամների ընդհանուր թիվը կիսով չափ նվազել է:

Երևանի ավագանու լիազորությունների ժամկետը կրճատելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 40 օր հետո՝ կիրակի օրը անցկացվում են Երևանի ավագանու արտահերթ ընտրություններ: Ավագանին արձակելու և ընտրություններ նշանակելու որոշումները հրապարակվում են միաժա-

մանակ:

Բ. Ընտրողների ցուցակներ, ընտրատարածքներ, ընտրական տեղամասեր և տեղամասային կենտրոններ կազմելու կարգը: Ընտրողներին ընտրական ցուցակներում ընդգրկելը քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման անհրաժեշտ պայմաններից է: Այդ հիմնահարցը մանրամասնված է ՀՀ ընտրական օրենսգրքում:

ՀՀ ընտրողների ռեզիստորը կազմվում է ըստ մարզերի ու համայնքների և մշտապես վարվող փաստաթուղթ է: Դրանում ընդգրկվում են ՀՀ բնակչության պետական ռեզիստրում ընդգրկված, ՀՀ որևէ համայնքում հաշվառված և ընտրելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիները: Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում քվեարկելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք ՀՀ նշված ռեզիստրում չեն ընդգրկվում, որը չի սահմանափակում ընտրողների ցուցակում ընդգրկված լինելու նրանց իրավունքը:

ՀՀ ընտրողների ռեզիստորը վարում և ընտրողների ցուցակը կազմում է բնակչության պետական ռեզիստորը վարող լիազոր մարմինը, որը պատասխանատու է այդ փաստաթղթերը պատշաճ վարելու և կազմելու համար:

Ընտրողների ցուցակներն Օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով կազմում են նաև **քրեակատարողական հիմնարկների, ձեռքարկապվածներին պահելու վայրերի և զինվորական մասերի ղեկավարները:**

Ընտրողների ցուցակները կազմվում են մատյանի ձևով և էջակազմվում մինչև 1000 ընտրողի քանակով, բայց այն հաշվարկով, որ դրանից ավելի ընտրող ունեցող ընտրական տեղամասին հատկացվող ընտրողների ցուցակների յուրաքանչյուր մատյան մերառի մոտավորապես հավասար քվով ընտրողների տվյալներ: Ընտրողների ցուցակի յուրաքանչյուր էջում կարող են նշվել առավելագույնը 20 ընտրողի վերաբերյալ տվյալներ: Ընտրողների ցուցակը, սահմանված դեպքերում լիազոր մարմնի կողմից կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակը կազմում, էջակազմում, էջերը ստորագրում և կնքում է լիազոր մարմինը:

ՀՀ ընտրողների ռեզիստրի հիման վրա ըստ ընտրական տեղամասերի կազմվում է **համայնքի ընտրողների ցուցակ**, որում ընդգրկվում են համապատասխան ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք (Օրենսգրքի 2-րդ հոդվ.): Ընդ որում, յուրաքանչյուր ընտրության ժամանակ ընտրողը կարող է ընդգրկվել ընտրողների միայն մեկ ցուցակում և միայն մեկ անգամ:

Օրենսգրքի 8 հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման

մարմինների ընտրությունների ժամանակ համայնքի ընտրողների ցուցակում չեն ընդգրկվում այն քաղաքացիները, ովքեր տվյալ համայնքում հաշվառվել են **ընտրությունները նշանակվելուց հետո**, բացառությամբ այն քաղաքացիների, ովքեր հաշվառվել են ամուսնության, պարտադիր ժամկետային ծառայությունից զորացրվելու, ազատագրվման ձևով պատիժը կրելուց ազատվելու, մշտական բնակություն հաստատելու կամ անշարժ գույք ձեռք բերելու կապակցությամբ:

Այլ համայնքի հաշվառում ունեցող ընտրողները համապետական ընտրությունների դեպքում քվեարկությունից ոչ ուշ, քան 7 օր առաջ դիմում են լիազոր մարմին՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու մասին՝ նշելով քվեարկության օրը գտնվելու վայրի հասցեն: Նշված մարմինը դիմումն ստանալուց հետո **եռօրյա ժամկետում** դիմողին տալիս է տեղեկանք՝ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից նրա տվյալները հանելու և գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկելու մասին: Դիմումի և տեղեկանքի ձևերը սահմանում է ԿԸՀ-ը:

Ցուցակներում ընտրողներին ընդգրկելու ժամանակ տարբեր իրավիճակների դեպքում Օրենսգրքը որոշակի առանձնահատկություններ է նախատեսում: Մասնավորապես, ընտրական իրավունք ունեցող բայց **ՀՀ-ում հաշվառում չունեցող ՀՀ քաղաքացիները համապետական ընտրություններում** քվեարկությանը մասնակցելու համար, քվեարկությունից ոչ ուշ, քան 7 օր առաջ լիազոր մարմին դիմում են ներկայացնում՝ ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին՝ նշելով գտնվելու վայրի հասցեն: Նշված մարմինը **եռօրյա ժամկետում** ընտրողին ընդգրկում է նրա գտնվելու վայրին **մոտակա ընտրական տեղամասի ընտրողների** լրացուցիչ ցուցակի մեջ և այդ մասին տալիս է համապատասխան տեղեկանք:

Նույն կարգով համապետական ընտրությունների ժամանակ պարտադիր ժամկետային ծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողները սահմանված կարգով ժամանակավոր արձակվելու դեպքում հանվում են զորամասի ընտրողների ցուցակից և մշտական բնակության վայրում կարող են հայտ ներկայացնելու դեպքում ընդգրկվել ընտրողների ցուցակում:

Համապետական ընտրությունների ժամանակ քվեարկության օրը **ընտրական տեղամասեր գործողված ոստիկանության ծառայողները** լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով հանվում են իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և գործադրման վայրում կազմվում է տեղամասում քվեարկող ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակ:

Համապետական ընտրությունների ժամանակ *ժամկետային զինծառայողները*, զորամասի տեղակայման տարածքում հաշվառված *պայմանագրային զինծառայողները* և ընտրելու իրավունք ունեցող նրանց ընտանիքների անդամները, վարժական հավաքներ անցնող քաղաքացիները ընդգրկվում են համապատասխան զորամասի ընտրողների ցուցակում: Այդ ընտրությունների ժամանակ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ զինվորական մասերում հաշվառված ընտրողների թիվը ՀՀ պաշտպանության մախարարությունը ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին և լիազոր մարմին ու ԿԸՀ: Օրենսգրքի պահանջները վերաբերվում են նաև ՀՀ ազգային անվտանգության և ոստիկանության զորքերին:

Ձորամասի տարածքից դուրս հաշվառված պայմանագրային զինծառայողները ցուցակում ընդգրկվում են ընդհանուր հիմունքներով:

Կալանավորված անձանց պահելու վայրում գտնվող ընտրողների ցուցակները կազմվում է քվեարկությունից 3 օր առաջ՝ քրեակատարողական հիմնարկի ղեկավարի կողմից: Նշված հիմնարկների ղեկավարներն են կազմում, էջակալում, ստորագրում և կնքում ընտրողների ցուցակները:

Համապետական ընտրությունների ժամանակ *ստացիոնար բուժման մեջ գտնվող անձանց* բուժհաստատության ղեկավարը քվեարկությունից 5 օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում այդ անձանց և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող՝ քվեարկությանը մասնակցել ցանկացող անձանց ցուցակը և նրանց հաշվառման վայրի հասցեն: Հիմք ընդունելով ներկայացված ցուցակը, լիազոր մարմինը նշված անձանց հանում է իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և կազմում քվեարկությանը մասնակցող ընտրողների լրացուցիչ ցուցակ:

Լիազոր մարմինը ընտրողների հիմնական և լրացուցիչ ցուցակները երկու օրինակից, ինչպես նաև լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը քվեարկությունից 2 օր առաջ տրամադրում է տեղամասային ընտրական հանձնաժողովների մախագահներին, իսկ ցուցակները էլեկտրոնային կրիչով՝ ԿԸՀ-ին:

Ձինվորական մասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմված ընտրողների ցուցակները հանձնվում են համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին:

ՀՀ ընտրողների ցուցակները, բացառությամբ զինմասերում կազմվող և ընտրողների ստորագրած ցուցակների, ազատ են ծանոթության համար: Ընդ որում, ընտրողների կողմից ստորագրված ցուցակները հրա-

պարակման ենթակա չեն և դրանցից լուսապատճեններ չեն հանվում, չեն լուսանկարվում և տեսանկարահանվում:

Քվեարկությունից 40 (զինմասերում 10) օր առաջ *ընտրողների ցուցակը և դրանում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու կարգը* փակցվում է տեղամասային կենտրոններում՝ բոլորի համար տեսանելի տեղում, իսկ ճշտումներից հետո վերջնական օրինակը, այդ թվում լրացուցիչ ցուցակները՝ 2 օր առաջ և մնում է փակցված մինչև տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունների դադարման օրը:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկությունից ոչ ուշ, քան 5 օր առաջ դիմելու լիազոր մարմին՝ ընտրողների ցուցակներում անճշտությունները (այդ թվում իրեն չվերաբերող) վերացնելու մասին Լիազոր մարմինը 5-օրյա ժամկետում, սակայն քվեարկությունից ոչ ուշ, քան 4 օր առաջ, ընտրողների ցուցակում կատարում է փոփոխություններ կամ ուղղումներ և գրավոր հայտնում դիմողին:

Ընտրողների ցուցակներում ընդգրկվելու վերաբերյալ դիմումները, որոնք ներկայացվում են քվեարկությունից առաջ 4 օրվա ընթացքում, լիազոր մարմինը քննարկում և որոշում է կայացնում այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը: Դրա հիման վրա տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է լրացուցիչ ցուցակ:

Ընտրողների ցուցակներում *անճշտությունները վերացնելու* և լրացում կատարելու վերաբերյալ *վեճերը լուծվում են* ՀՀ վարչական դատարանի օրենսգրքով (այսուհետ՝ Վարչ.դատ.օր.) սահմանված կարգով և ժամկետներում: Դատարանի վճռի պատճենը ուղարկվում է լիազոր մարմին և տեղամասային ընտրական հանձնաժողով՝ քաղաքացիներին ընտրողների ցուցակում ընդգրկելու համար:

Ընտրական հանձնաժողովներն իրավունք չունեն սեփական մախագահներին որևէ փոփոխություն կատարելու ընտրողների հիմնական և լրացուցիչ ցուցակներում, բացառությամբ քվեարկության օրը տառասխալների և տեխնիկական վրիպակների ուղղման և Օրենսգրքի 13 հոդվածով սահմանված դեպքի: Վերջինիս համաձայն ընտրողին լրացուցիչ ցուցակում ընդգրկելու մասին փաստաթղթերի հիման վրա, որոնք կցվում են այդ ցուցակին, տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է ընտրողների լրացուցիչ ցուցակ՝ ավելացնելով մեկ սյունակ՝ դատարանի վճռի կամ լիազոր մարմնի տեղեկանքի համարը և ամսաթիվը նշելու համար:

Ընտրողների լրացուցիչ ցուցակի էջերը ստորագրում և կնքում է տեղամասային ընտրական հանձնաժողովի մախագահը քվեարկության ա-

վարտից հետո, նշելով այդ ցուցակում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը:

Տարբեր երկրներում ընտրողների ցուցակները կազմվում են բազմակերպ՝ յուրաքանչյուր *ընտրությունից առաջ* (Կանադա), *յուրաքանչյուր տարի* (Մեծ Բրիտանիա), *ընտրողների դիմումի հիման վրա* (ԱՄՆ, Ֆրանսիա): Որպես կանոն, ընտրողների ցուցակները մշտական են և դրանցում փոփոխություններ են կատարում կամ յուրաքանչյուր տարի, կամ ընտրություններից առաջ:

Ընտրությունները կազմակերպելու և անցկացնելու համար ՀՀ տարածքում կազմավորվում են Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով նախատեսված պատգամավորների *մանդատների թվին հավասար ընտրատարածքներ*: Դրանք կազմավորում և համարակալում է ԿԸՀ՝ *հաշվի առնելով մարզերի սահմանները, տարածքի աշխարհագրական, տեղագրական և ֆիզիկական առանձնահատկությունները, գոյություն ունեցող սոցիալական և այլ գործոններ*: Որպես միասնական տարածք՝ *ընտրատարածքը չի կարող ընդգրկել տարբեր մարզերի համայնքներ, իսկ մարզում՝ ոչ սահմանակից բնակավայրեր*: Երևան քաղաքում *ձևավորվող ընտրատարածքները չեն կարող ներառել այլ համայնքներ*:

Ընտրատարածքը, նայած թե ինչպես է այն կազմված, կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, ուստի համապատասխան տարածքն ընտրատարածքների բաժանելու հարցին տրվում է կարևոր *քաղաքական նշանակություն*: Ընտրողների հավասար ընտրական իրավունքի սկզբունքն ապահովելու նպատակով ընտրական տարածքները կազմավորվում են մոտավորապես *հավասար թվով ընտրողներից*: Այսպես, մարզում (Երևան քաղաքում) ընտրատարածքներից յուրաքանչյուրում ընտրողների թիվը չպետք է ավելի քան 10 տոկոսով գերազանցի կամ պակաս լինի մարզի (Երևան քաղաքի) ընտրողների ընդհանուր թվի հարաբերությունից:

Ազգային *ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով* պատգամավորական տեղերի քանակով (41) ՀՀ տարածքում կազմավորվում են 41 ընտրատարածքներ: Ուստի, Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորների մանդատների թվի փոփոխության դեպքում միայն փոխվում է յուրաքանչյուր մարզի (Երևան քաղաքի) ընտրատարածքների թիվը: *Ընտրատարածքների սահմանները* փոփոխության չեն ենթարկվում նաև Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի լրացուցիչ ընտրությունների ժամանակ:

Հանրապետության Նախագահի ընտրության ժամանակ ՀՀ ամբողջ

տարածքը համարվում է *մեկ մեծամասնական ընտրատարածք*, իսկ Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում՝ *մեկ բազմամանդատ* ընտրատարածք՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորների թեկնածուների թվից 90 պատգամավոր ընտրելու համար:

Համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է միամանդատ մեծամասնական ընտրատարածք, իսկ *համայնքի ավագանու ընտրության* ժամանակ՝ մեկ բազմամանդատ մեծամասնական ընտրատարածք՝ համապատասխանաբար հինգ, յոթ, ինը, տասնմեկ, տասնհինգ և քսանմեկ մանդատով, հաշվի առնելով համայնքի բնակչության թիվը:

Երևան քաղաքի ավագանու ընտրության ժամանակ Երևանի ողջ տարածքը համարվում է մեկ բազմամանդատ ընտրատարածք:

Ընտրական տեղամասերը կազմավորվում են քվեարկության համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով՝ քվեարկությունից ոչ ուշ, քան 45 օր առաջ, հաշվի առնելով տեղական պայմանները և այլ հանգամանքներ:

Ընտրական տեղամասերը կազմավորում է լիազոր մարմինը՝ համայնքի ղեկավարի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի մասնակցությամբ: Ընտրական տեղամասը կազմավորման պահին չպետք է ունենա ավելի, քան 2000 ընտրող: Այդ թիվը կարող է փոփոխվել ընտրողների ցուցակների ճշգրտման ու դրանցում ընտրողների ընդգրկման դեպքերում: Նշված տեղամասերը կազմավորվում են հերթական համարակալմամբ՝ ԿԸՀ-ի սահմանած կարգով և չեն կարող ընդգրկել տարբեր բնակավայրեր:

Համայնքի ղեկավարը ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 43 օր առաջ, յուրաքանչյուր ընտրական տեղամասում (նախատեսված դեպքերում նաև քրեակատարողական հիմնարկի ղեկավարը) կազմավորում է *տեղամասային կենտրոն*՝ այդ մասին տեղյակ պահելով լիազոր մարմնին, համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին: Տեղամասային կենտրոնը կազմավորվում է այնպես, որպեսզի հնարավորին չափ մոտ լինի տվյալ ընտրական տեղամասում գտնվող բնակելի շենքերին ու տներին: Այն պետք է ասպահովի քվեարկության բնականոն ընթացքը: Անհրաժեշտության դեպքում համայնքի ղեկավարը կարող է վարձակալել համապատասխան տարածքներ:

Հաշմանդամների ընտրական իրավունքի իրականացման մատչե-

լիությունն ապահովելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինները տեղամասային կենտրոններում իրականացնում են անհրաժեշտ միջոցառումներ:

Համապետական ընտրությունների ժամանակ տեղամասային կենտրոններ են ստեղծվում նաև կալանավորված անձանց պահելու վայրերում:

Տեղամասային կենտրոն չի կարող կազմավորվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, ռազմական ուսումնական հաստատությունների, գորամիավորումների և առողջապահության հիմնարկների գրադեցրած շենքերում:

Եթե տեղամասային կենտրոնում տարբեր պատճառներով անհնարին է քվեարկություն անցկացնել, ապա համայնքի ղեկավարը, քվեարկությունից ոչ ուշ, քան 5 օր առաջ՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով փոխում է տեղամասային կենտրոնի գտնվելու տեղը: Բացառիկ դեպքերում (տարերային աղետ, վթար, հրդեհ կամ անհաղթահարելի ուժ)՝ դա կարող է տեղի ունենալ նաև, քվեարկության օրը՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ: Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը փոխելու դեպքում համայնքի ղեկավարն այդ մասին քաղաքացիներին տեղեկացնում է անհապաղ:

Տեղամասային կենտրոնում քվեարկության բնականոն ընթացքն ապահովող անհրաժեշտ կահավորման համար պատասխանատու է տվյալ համայնքի ղեկավարը:

Գ. Ընտրական հանձնաժողովները: Ընտրությունների նախապատրաստական փուլի կարևոր միջոցառումներից է նաև ընտրական հանձնաժողովների կազմավորումը: Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում են ընտրական հանձնաժողովներ, որոնք ապահովում են ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը Օրենսգրքին համապատասխան: Հանրապետությունում ստեղծվում են՝ **կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ:**

Ընտրական հանձնաժողովները գործում են օրինականության, կոլեգիալության և իրապարակայնության սկզբունքների հիման վրա և իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններից: **Վերջիններս** ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին անհատույց ապահովում են անհրա-

ժեշտ աշխատատարածքով և գույքով, աջակցում նրանց բնականոն աշխատանքային գործունեությանը:

Օրենսգրքի 36 հոդվածի համաձայն՝ ԿԸՀ-ն ընդունում է նորմատիվ և անհատական, իսկ ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովները՝ անհատական իրավական ակտեր, որոնք ենթակա են պարտադիր կատարման, եթե ընդունվել են իրենց լիազորությունների շրջանակում:

Ընտրական հանձնաժողովներ կազմավորելու հիմունքներին համապատասխան, դրանց կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիները: Մասնավորապես, Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում կարող են ընդգրկվել հրապարակային հասարակական-քաղաքական գործունեություն չծավալող, բարձրագույն կրթություն և աշխատանքային ստաժ ունեցող քաղաքացիները (Օրենսգրքի 40 և 41 հոդվ.), իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովում՝ այն քաղաքացիները, որոնք ԿԸՀ-ի սահմանած կարգով անցել են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել որակավորման վկայականներ (Օրենսգրքի 39 հոդվ.): Յուրաքանչյուր քաղաքացի կարող է ընդգրկվել միայն մեկ ընտրական հանձնաժողովի կազմում:

Ընտրական հանձնաժողովի անդամ չեն կարող լինել ՀՀ քր. օր. 149-154⁶ հոդվածներով (ընտրական իրավունքի իրականացման դեմ ուղղված հանցագործություններ) նախատեսված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձիք:

Ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների **անդամ չեն կարող լինել**՝ Ազգային ժողովի պատգամավորները, սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, դատախազները, նախարարները և նրանց տեղակալները, մարզպետները և նրանց տեղակալները, համայնքների ղեկավարները և ավագանու անդամները, ազգային անվտանգությունում, ոստիկանությունում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, քրեակատարողական հիմնարկներում ծառայողները, զինծառայողները, լիսգոր ներկայացուցիչները, վստահված անձինք, դիտորդները, թեկնածուները:

Ընտրական հանձնաժողովի անդամների արդյունավետ գործունեությունն ապահովելու համար Ընտրական օրենսգիրքը սահմանում է մի **շարք երաշխիքներ**:

Այսպես, հանձնաժողովի անդամը **իրավունք ունի նախապես ծանոթանալու** հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին ու փաստաթղթերին, ներկայացնել առաջարկություններ և պահանջել այդ առթիվ

անցկացնել քվեարկություն, ելույթներ ունենալ, միատի մասնակիցներից տալ հարցեր և ստանալ պատասխաններ: Հանձնաժողովի *անդամը պարտավոր է* կատարել հանձնաժողովի մախագահի հանձնարարությունները:

Հանձնաժողովի անդամին վերապահված լիազորությունների իրականացման կապակցությամբ ընտրատարածքային և տեղամասային ընտրական *հանձնաժողովների անդամները ազատվում են* արտադրական կամ ծառայողական պարտականությունները կատարելուց: Նրանք ազատվում են գորահավաքներից և վարժական հավաքներից, իսկ համապետական ընտրությունների ժամանակաընթացքում՝ նաև գորակոչից: ԿԸՀ-ի անդամները ազատվում են նաև գորահավաքից:

Ընտրական հանձնաժողովների *ֆինանսավորումը* և ընտրական հանձնաժողովների անդամների վարձատրությունը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների աշխատավարձը նրանց հիմնական աշխատավայրում պահպանվում է: Վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները, հանձնաժողովի մախագահի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ իրավունք ունեն խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու ստորադաս ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության օրը՝ գտնվելու քվեարկության սենյակում:

ԿԸՀ-ի անդամները չեն կարող կախնավորվել կամ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկվել առանց ԿԸՀ-ի համաձայնության:

ԿԸՀ-ի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամներն աշխատում են *մշտական հիմունքներով* և չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ ու զբաղվել քաղաքական գործունեությամբ: ԿԸՀ-ի անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտամանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին և կատարել իր լիազորությունները, գործում է անկախ և չի ներկայացնում իրեն նշանակողին:

Ընտրական հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հանձնաժողովի միատուն հրապարակայնորեն ընթերցում և ստորագրում է հանձնաժողովի անդամի պարտավորության տեքստը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմված է *յոթ անդամից*, որոնց նշանակում է Հանրապետության Նախագահը՝ ՀՀ մարդու ի-

րավունքների պաշտպանի, վճարել դատարանի մախագահի, փաստաբանների պալատի մախագահի առաջարկությամբ, *վեց տարի ժամկետով*: Ընդ որում, հանձնաժողովի անդամներից երեքն առաջարկվում են Մարդու իրավունքների պաշտպանի, երկուսը՝ Վճարել դատարանի մախագահի, երկուսը՝ Փաստաբանների պալատի մախագահի կողմից: Վերջինիս և վճարել դատարանի մախագահի կողմից առաջարկված *երկուական անդամներից առնվազն մեկը պետք է ունենա իրավաբանական կրթություն* կամ իրավունքի ոլորտում գիտական աստիճան²⁶:

ԿԸՀ-ի անդամների թեկնածուների տվյալները Հանրապետության Նախագահի աշխատակազմ են ներկայացվում ԿԸՀ-ի անդամի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 20 օր առաջ: ԿԸՀ-ի անդամների նշանակման վերաբերյալ Հանրապետության Նախագահի հրամանագիրը հրապարակվում է հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտից ոչ ուշ, քան 7 օր առաջ:

ԿԸՀ-ի անդամի լիազորությունների *վաղաժամկետ դադարման* կամ դադարեցման դեպքում թափուր տեղը համարվում է 21-օրյա ժամկետում: Նման դեպքում նոր անդամը նշանակվում է նախկին անդամի պաշտոնավարման համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար: Եթե այդ *ժամկետը պակաս է մեկ տարուց*, սպա նոր անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է նախորդ անդամի մնացած ժամանակահատվածին գումարած վեց տարի:

ԿԸՀ-ն իր կազմից, հանձնաժողովի անդամների առաջադրմամբ, բաց քվեարկությամբ *ընտրում է հանձնաժողովի մախագահ, մախագահի տեղակալ և հանձնաժողովի քարտուղար*: Եթե նշված պաշտոնների համար քվեարկվել է մեկ թեկնածու, ապա նա համարվում է ընտրված՝ քվեարկության մասնակիցների *ձայների կեսից ավելին* ստանալու դեպքում, իսկ մեկից ավելի թեկնածուի պարագայում՝ առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուն: Չայների հավասարության դեպքում առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է վիճակահանություն:

ԿԸՀ-ն ընտրությունները կազմակերպող և ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող *պետական մարմին է և գործում է մշտական հիմունքներով*:

ԿԸՀ-ի *լիազորությունները* բավականին լայն են: Օրենսգրքի 49 հոդ-

²⁶ ԿԸՀ-ի և մյուս ընտրական հանձնաժողովների անդամներին պաշտոնի նշանակելու առնչությամբ ներկայացվող պահանջները մանրամասնված են Օրենսգրքի 40 և 41 հոդվածների 3-րդ մասերում, 42 հոդվ. 2-րդ մասում:

վածի համաձայն՝ վերահսկում է ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար հատկացված պետական բյուջեի միջոցների օգտագործման նկատմամբ, վերահսկողություն է իրականացնում Օրենսգրքի միատեսակ կիրառման նկատմամբ, սահմանում է քվեաթերթիկների և ընտրական այլ փաստաթղթերի ձևերը, իր լիազորությունների շրջանակներում ընդունում է որոշումներ, որոնք պարտադիր են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում:

ԿԸՀ-ը վերացնում, ուժը կորցրած, անվավեր կամ չեղյալ է ճանաչում մյուս հանձնաժողովների՝ Օրենսգրքին հակասող որոշումները, բացառությամբ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր, համայնքի ղեկավար կամ ավագանու անդամներ ընտրվելու վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումների, լսում է ընտրական հանձնաժողովների և պետական մարմինների հաղորդումներն ընտրությունների նախապատրաստման ու անցկացման մասին, նշանակում է Ազգային ժողովի լրացուցիչ ու նոր ընտրություններ: ԿԸՀ-ը վերահսկողություն է իրականացնում կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ և իրականացնում այլ լիազորություններ:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կազմված է յոթ անդամից, որոնք նշանակվում են վեց տարի ժամկետով՝ ԿԸՀ-ի կողմից: Հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է երկուսից պակաս լինի: Օրենսգրքի 41 հոդվածը (3-րդ մաս) որոշակի պահանջներ է ներկայացնում հանձնաժողովի կազմում ընդգրկվելու վերաբերյալ:

Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով թեկնածուներ ընտրելու համար ԿԸՀ-ը հայտարարություն է տարածում ՁԼՄ-ների միջոցով: Եթե ներկայացրած դիմումների թիվը բավարար չէ, ապա թափուր տեղերը լրացնում է ԿԸՀ-ը՝ դասընթացներ անցած և որակավորման վկայականներ ստացած անձանցից: ԿԸՀ-ի որոշումը հանձնաժողովների անդամներ նշանակելու մասին ընդունվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի լիազորությունների ավարտման օրվանից ոչ ուշ, քան 14 օր առաջ:

Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում այն համարում է ԿԸՀ-ը՝ 21 օրյա ժամկետում:

Հանձնաժողովի առաջին նիստը գումարում է ԿԸՀ-ը՝ գործող հանձնաժողովի լիազորությունների ավարտման օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ: Մինչև հանձնաժողովի նախագահ ընտրելը նիստը վարում է նոր

հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարն ընտրվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրության համար սահմանված կարգով:

Ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը մշտական հիմունքներով գործող պետական մարմին է: Հանձնաժողովը վերահսկում է ընտրատարածքում Օրենսգրքի պահանջների կատարումը, հաստատում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեաթերթիկների մուշնները և հայտարարում այդ մարմինների ընտրությունների օրը, սահմանում է ընտրական տեղամասերի հերթական համարները և իրականացնում մի շարք այլ լիազորությունները (50հոդվ.):

Տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմված է առնվազն յոթ անդամից, որոնց նշանակում են՝

1) Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները՝ մեկական անդամ՝ եթե խմբակցությունների թիվը մեծ է 4-ից, և երկուական անդամ, եթե խմբակցությունների թիվը փոքր է 5-ից.

2) համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝ երկու անդամ:

Ընդ որում, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի յուրքանչյուր անդամ (բացառությամբ հանձնաժողովի նախագահի) կարող է ներկայացնել մեկ թեկնածու: Եթե վերջիններիս թիվը երկուսից ավելի է, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովի երկու անդամին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ընտրում է վիճակահանությամբ:

Օրենսգրքի 42-րդ հոդվածին համապատասխան, տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու վերաբերյալ հայտերը սահմանված կարգով ԿԸՀ են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ, իսկ արտահերթ ընտրությունների ժամանակ՝ համապատասխանաբար 20 և 18 օր: Եթե սահմանված կարգով ու նշված ժամկետներում տեղամասային հանձնաժողովի անդամներ նշանակող սուբյեկտները հանձնաժողովի անդամ չեն նշանակում կամ պակաս են նշանակում, ապա թափուր տեղերը լրացնում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին և քար-

տողարհին նշանակում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Եթե կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը հանձնաժողովի կազմում նշանակել է երկու անդամ, ապա նշում է, թե նրանցից ով է գրադեցնելու հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի պաշտոնը: Վերջիններիս բաշխումը կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների միջև որոշվում է Օրենսգրքի 42 հոդվածի 5-րդ մասով նախատեսված բանաձևով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը հրավիրվում է տեղամասային կենտրոնում հանձնաժողովի կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը: Հանձնաժողովի *անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման* կամ դադարեցման դեպքում թափուր տեղը համալրվում է 7-օրյա ժամկետում, սակայն քվեարկությունից ոչ ուշ, քան 3 օր առաջ: Եթե նշված ժամկետում հանձնաժողովի անդամ չի նշանակվել, ապա այդ տեղերը լրացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու իրավունք ունեցող անձանցից:

Եթե քվեարկության օրը՝ ժամը 8⁰⁰-ին, մինչև 1000 ընտրող ունեցող ընտրական տեղամաս *5-ից պակաս քվով տեղամասային հանձնաժողովի անդամ է ներկայացել*, ապա չներկայացած անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարում են և անդամների թիվը մինչև 5-ը լրացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ տեղամասային հանձնաժողովներում ընդգրկվելու իրավունք ունեցող անձանց քվից: Հարցը նույն կարգով է լուծվում, եթե ժամը 8⁰⁰-ին 1000-ից ավելի ընտրող ունեցող ընտրական տեղամաս են ներկայացել 7-ից պակաս քվով տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի *լիազորությունները դադարում են* քվեարկությունից 5 օր հետո, եթե ընտրությունների արդյունքները չեն բողոքարկվել, իսկ բողոքարկվելու և վերաքվեարկություն անցկացնելու դեպքում՝ վերաքվեարկությունից 5 օր հետո:

Ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը, պատշաճ կարգ ու կանոնը պարտավոր են ապահովել *ՀՀ ոստիկանության կենտրոնական ու տարածքային մարմինները*, դրանց ծառայությունները և ստորաբաժանումները: Հանձնաժողովի նախագահի պահանջով նրանք աջակցում են հանձնաժողովներին, ապահովում ընտրական փաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու պահպանումը հանձնաժողովներում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը Օրենսգրքի 51 հոդվածի

կամուսույն՝ կազմակերպում է քվեարկությունը, ամփոփում դրա արդյունքները, կազմում քվեարկության արդյունքների արձանագրություն և բվևարկության մյուս փաստաթղթերի հետ ներկայացնում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և իրականացնում այլ լիազորություններ:

Ընտրական հանձնաժողովների նախագահներին, նրանց տեղակայներին, հանձնաժողովների քարտուղարներին պաշտոնանկելու և հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելու կարգը սահմանված է Օրենսգրքի 43 հոդվածով:

Եթե *կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի* նշված անձինք պատշաճորեն չեն իրականացնում իրենց վերապահված լիազորությունները, ապա կարող են հանձնաժողովի անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն 2/3-ով պաշտոնանկվել, իսկ եթե նու գրավոր ինքնաբացարկ է հայտնել, ապա նրա լիազորությունները կամարվում են դադարած:

Ձայների նույն հարաբերակցությամբ *տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը* կարող են պաշտոնանկվել, եթե քվեարկության նախորդ օրը կամ քվեարկության օրը ակնհայտ անգործություն են դրսևորել, որը կարող է վտանգել քվեարկության նախապատրաստումը կամ բնականոն ընթացքը, կամ արդյունքների ամփոփումը:

Օրենսգրքի 43 հոդվածով (4-րդ մաս) սահմանվում է նաև հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքերը (օրինակ, եթե չունի հանձնաժողովում նշանակվելու իրավունք, դատապարտվել է ՀՀ քր. օր. համապատասխան հոդվածներով, ինքնաբացարկ է հայտնել, զորակոչվել է և այլն):

Եթե կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամները խախտել են Օրենսգրքի դրույթները, ապա վարչական դատարանը կարող է վաղաժամկետ դադարեցնել նրանց լիազորությունները, համապատասխանաբար՝ ՀՀ նախագահի և ԿԸՀ-ի պահանջով: Նույն խախտման համար ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկությունից ոչ ուշ, քան 5 օր առաջ կարող է վաղաժամկետ դադարեցնել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները՝ նրան նշանակած կամ առաջադրած սուբյեկտի պահանջով:

Կենտրոնական կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը համապատասխան հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է դադարեցնել հանձնաժողովի ան-

դամի լիազորությունները, *եթե երեք օրացուցային ամսվա ընթացքում նա ունի երեք կամ ավելի անհարգելի բացակայություն* հանձնաժողովի հերթական նիստերից:

Հանձնաժողովի *աշխատանքները ղեկավարում է հանձնաժողովի նախագահը*, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ տեղակալը, տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավարը՝ քարտուղարը: Կենտրոնական և ընտրատարածքային հանձնաժողովների նախագահները սահմանում են հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը, հրավիրում արտահերթ նիստեր՝ սեփական նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի անդամների 1/3-ի գրավոր պահանջով՝ վերջիններիս նշած ժամկետում: Տեղամասային ընտրական հանձնաժողովի *արտահերթ նիստ* հրավիրում է հանձնաժողովի նախագահը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով:

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե մասնակցում է դրա անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարել է *ներկա անդամների կեսից ավելին*, բացառությամբ Օրենսգրքով նախատեսված դեպքերի: Մասնավորապես, ընտրության արդյունքների վերաբերյալ որոշում ընդունելիս ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է (44 հոդվ.): Հանձնաժողովի անդամը պարտավոր է մասնակցել ոչ միայն հանձնաժողովի նիստերին, այլև քվեարկությանը:

Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթն ունի որոշ առանձնահատկություններ:

Այդ հանձնաժողովները, որպես մշտական հիմունքներով գործող պետական մարմիններ, վարչական վարույթն իրականացնում են *ստացված դիմումների* (բողոքների) կապակցությամբ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»²⁷ 2004թ. փետրվարի 18-ին ընդունված ՀՀ օրենքին համապատասխան՝ Ընտրական օրենսգրքով նախատեսված ժամկետներում: Վարչական վարույթի կապակցությամբ հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին մասնակցում են վարույթի մասնակիցները:

ԿԸՀ-ի ընդունած վարչական ակտն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելուց հետո՝ հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու պահից, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովինը՝ հանձնաժողովում, բոլորի համար տեսանելի տեղում ակտի օրինակը փացնելու պահից: Օրենսգրքով սահմանված կարգով հանձնաժողովի

²⁷ ՀՀ ՊՏ 2004 № 18 (317), 31.03.04:

վարչական ակտն եռօրյա ժամկետում ուղարկվում է վարչական վարույթի մասնակիցներին:

Օրենսգրքի 46 հոդվածին համապատասխան, ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները և անգործությունը կարող է բողոքարկել յուրաքանչյուր ոք, եթե խախտվել է իր ընտրական իրավունքը, ինչպես նաև՝ փստահված անձը, դիտորդը և հանձնաժողովի անդամը, եթե խախտվել է վերջինիս իրավունքները: Իսկ թեկնածուի, կուսակցության և կուսակցության դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու կամ ընտրությունների արդյունքները բողոքարկելու վերաբերյալ դիմում կարող են ներկայացնել թեկնածուն և ընտրական ցուցակ ներկայացրած սուբյեկտները:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմում կարող են ներկայացնել թեկնածուն, կուսակցությունները, փստահված անձը և ԿԸՀ-ի անդամները: Եթե ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված բողոքը կամ դիմումը չի համապատասխանում այդ հոդվածի պահանջներին, ապա մերժում է վարչական վարույթի հարուցումը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) և քվեարկության արդյունքները կարող են բողոքարկվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները, անգործությունը (բացառությամբ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի և համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների) *կարող են բողոքարկվել ԿԸՀ*, մեծամասնական ընտրակարգով պատգամավորինը՝ *սահմանադրական դատարան*, իսկ համայնքի ղեկավարինը և ավագանու անդամներինը՝ *վարչական դատարան*:

Եթե դիմումի կամ բողոքի քննարկման արդյունքով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հանգում է եզրակացության, որ կատարված խախտումները էապես ազդել են քվեարկության արդյունքների վրա, և հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, ապա անվավեր է ճանաչում տեղամասում քվեարկության արդյունքները և նյութերը ուղարկում է դատախազություն:

Ընտրական հանձնաժողովին ներկայացվող դիմումներին ու բողոքներին, ինչպես նաև դրանց քննարկման ժամկետներին և պատասխաններին ներկայացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված որոշակի պահանջներ: Մասնավորաբար, դիմողի վերաբերյալ տվյալներ չպարունակող կամ կեղծ տվյալներ ներառող դիմումները չեն քննարկվում, իսկ եթե

դիմումին կից փաստաթղթերը ամբողջական չեն, ապա դիմողին առաջարկվում է սահմանված ժամկետում համալրել այն: Դիմումում բարձրացված հարցերն ուսումնասիրվում են հանձնաժողովի անդամների կողմից և նրանցից յուրաքանչյուրը իրավունք ունի ներկայացնել դրա վերաբերյալ որոշման նախագիծ և, եթե վերջինս (հանձնաժողովը) չի մերժում վարչական փարույթի հարցումը, ապա վարույթը համարվում է հարուցված: Դիմողն իրավունք ունի մասնակցելու հանձնաժողովի նիստում իր դիմումի քննարկմանը (Օրենքի 47 հոդվ.):

Եթե թեկնածուն, վստահված անձը ներկա են եղել տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, իսկ հանձնաժողովի անդամը արդյունքների ամփոփման արձանագրությունում քվեարկության կարգի վերաբերյալ հատուկ կարծիք է հայտնել, ապա իրավունք ունեն **քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին** (այսուհետ՝ վերահաշվարկ) սահմանված ժամկետում դիմել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Վերահաշվարկն սկսվում է դիմումի ընդունման հաջորդ օրը և դադարեցվում է քվեարկության օրվանից հետո 5-րդ օրը: Հանձնաժողովը վերահաշվարկում է նաև քվեարկության բոլոր այն արդյունքները, որոնց արձանագրությունների, այդ թվում՝ անճշտությունների, ուսումնասիրմանը ծագել են կասկածներ արդյունքների սխալ ամփոփման վերաբերյալ:

Օրենսգրքի 48 հոդվածի համաձայն՝ վերահաշվարկը կատարվում է ընտրական տեղամասում, բացառությամբ սահմանված մոտիչ քվեարկության ծրարների թվի հաշվարկի: Վերահաշվարկի ընթացքում **չսահմանված մոտիչ ծրար է համարվում** սահմանված մոտիչից ակնհայտ տարբերվող կամ չկնքված կամ այլ կնիքով կնքված քվեարկության ծրարը, իսկ **չսահմանված մոտիչ քվեաթերթիկ**՝ սահմանված մոտիչից ակնհայտ տարբերվող քվեաթերթիկը:

Վերահաշվարկը կարող է կատարվել **հանձնաժողովն՝ առնվազն երեք անդամի կազմով**: Նման դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարում է ընտրատարածքային հանձնաժողովի նախագահի տեղակալը կամ հանձնաժողովի քարտուղարը, իսկ եթե դրանք ընդգրկված չեն այդ կազմում, ապա ընտրատարածքային հանձնաժողովի նախագահի նշանակած անդամը: Մեկ տեղամասի վերջնահաշվարկի տևողությունը չի կարող գերազանցել 4 ժամը: Նիստին կարող են ներկա լինել համապատասխան տեղամասային հանձնաժողովի անդամները, ներկա լինելու իրավունք ունեցող անձինք, վերահաշվարկի դիմում ներկայացրած անձը, թեկնածուն և

վստահված անձը: Դիմողի բացակայությունը հիմք չէ վերահաշվարկ չկատարելու կամ այն դադարեցնելու համար:

Դ. Թեկնածուի առաջադրումը, գրանցումը և իրավական վիճակը: Ընտրությունների նախապատրաստական փուլի առավել պատասխանատու միջոցառումներից է թեկնածուների առաջադրման և գրանցման խնդիրները:

Թեկնածուների առաջադրումը կարևորվում է նրանով, որ առաջադրված անձանց թվից են ընտրվում ժողովրդի լիազոր ներկայացուցիչները և կազմավորվում պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները: Առաջադրված թեկնածուների գործարար հատկանիշներից է կախված կազմավորվող մարմինների գործունեության արդյունավետությունը:

Սահմանադրական իրավունքի տեսությամբ հայտնի են թեկնածուների առաջադրման հետևյալ եղանակները՝ **ինքնաառաջադրումը, առաջադրումն ընտրողների խմբի կողմից** (օրենսդրությամբ սահմանված թվով ընտրողների կամ իրենց լիազորություններն ավարտած պատգամավորների ստորագրությունների հավաքման միջոցով), **առաջադրումը կուսակցությունների կամ հասարակական այլ միավորումների կողմից**:

ՀՀ ընտրությունների ժամանակ թեկնածուներ (թեկնածուների ցուցակներ) առաջադրելու իրավունք ունեն **կուսակցությունները** (կուսակցությունների դաշինքները), ինչպես նաև **անմիջականորեն քաղաքացիները (ինքնաառաջադրման ձևով)**: Սակայն Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի պատգամավորի, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածություններ առաջադրելու իրավունքի սուբյեկտներից յուրաքանչյուրն ունի բնորոշ առանձնահատկություններ՝ ելնելով թեկնածուներին ներկայացվող պահանջներից:

Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները՝ իրենց համագումարի կամ մշտապես գործող մարմնի որոշմամբ և քաղաքացիները՝ ինքնաառաջադրման միջոցով՝ **ԿԸՎ ներկայացնելով նոտարական կարգով վավերացված դիմում**: Ընդ որում, Հանրապետության Նախագահի ընտրության ժամանակ յուրաքանչյուր կուսակցություն իրավունք ունի առաջադրելու նախագահի մեկ թեկնածու:

Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով **պատգամավորի թեկնածուներ** (թեկնածուների ցուցակներ) առաջադրելու իրավունք ունեն **կուսակցությունները** և կուսակցությունների դաշինքները (առնվազն երկու կուսակցության դաշինք):

Ազգային ժողովի՝ **մեծամասնական** ընտրակարգով պատգամավորի

թեկնածու առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները՝ յուրաքանչյուր ընտրատարածքում պատգամավորի մեկ թեկնածու, ինչպես նաև քաղաքացիները՝ ինքնառաջադրման կարգով:

Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը կազմվում է դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ներկայացրած առանձին ցուցակից: Այդ ընտրական ցուցակում 2-րդ համարից սկսած զանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես մինչև ցուցակի ավարտը) յուրքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը **չպետք է գերազանցի 80 տոկոսը**: Յուրաքանչյուր կուսակցության (կուսակցության դաշինքի) ցուցակում պետք է ընդգրկվի առնվազն 25 թեկնածու և այդ թիվը չի կարող գերազանցել ԱԺ համամասնական ընտրակարգով պատգամավորների մանդատների չձ ընտրական օրենսգրքով սահմանված թվի եռապատիկը: Այդ ցուցակում կարող են ընդգրկվել նաև **անկուսակցականներ**:

Դաշինքից որևէ կուսակցության դուրս գալու դեպքում դաշինքի ցուցակից հանվում են տվյալ կուսակցության թեկնածուները: Բացի այդ, դաշինքում ընդգրկված կուսակցությունները ընտրությունների ընթացքում չեն կարող ընդգրկվել այլ կուսակցությունների դաշինքում:

Հանրապետության Նախագահի թեկնածու և Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներ առաջադրվելու իրավունք ունեն նաև **քաղաքացիները՝ ինքնառաջադրման կարգով**:

Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի թեկնածուներն կարող են առաջադրել կուսակցությունները իրենց համապատասխան տարածքային (սկզբնական, տեղական) ստորաբաժանումների ուրոշմամբ, ինչպես նաև ընտրվելու իրավունք ունեցող քաղաքացիները՝ **ինքնառաջադրման կարգով**:

Յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) մշտապես գործող մարմինը **իր առաջադրման մասին ընդունում է որոշում**, որը պետք է պարունակի թեկնածուի (թեկնածուների ցուցակի) վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված տվյալներ: Որոշման հետ մեկտեղ, համապատասխան ընտրական հանձնաժողով է ներկայացվում կուսակցության կանոնադրությունը (դաշինքի մեջ մտնող կուսակցությունների կանոնադրությունները), իսկ կուսակցության մշտապես գործող մարմինը հանձնաժողովում գրանցվելու համար՝ ներկայացնում է լիազոր ներկայացուցիչ (ներկայացուցիչների) տվյալները: Ընդ որում, Հանրապե-

տության Նախագահի թեկնածուի, Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների վերաբերյալ տվյալները ներկայացվում են ԿԸՀ, իսկ Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներին՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում:

Հանրապետության Նախագահի թեկնածուին և համամասնական ընտրակարգով Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակները գրանցում է ԿԸՀ-ը, իսկ Ազգային ժողովի՝ **մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորի թեկնածուներին, համայնքի ղեկավար և ավագանու անդամ առաջադրված թեկնածուներին՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը**:

Ինքնառաջադրման կարգով ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով թեկնածուներ առաջադրվելու վերաբերյալ դիմումը քաղաքացիները համապատասխանաբար ԿԸՀ և ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են Օրենսգրքով սահմանված ժամկետում: Դիմումին կից սահմանված փաստաթղթերը և երկու լիազոր ներկայացուցիչների տվյալներն անձամբ ներկայացնում է թեկնածու առաջադրվող քաղաքացին կամ իր լիազոր ներկայացուցիչը: Ներկայացվող փաստաթղթերը պետք է պարունակեն նաև նշում քաղաքացու՝ **այլ պետության քաղաքացիություն չունենալու** վերաբերյալ:

Ինքնառաջադրման դիմումի ձևը սահմանում է ԿԸՀ-ը: Առաջադրված թեկնածուի (կուսակցական ընտրական ցուցակի և դրանում ընդգրկված թեկնածուի) **գրանցումը մերժվում է**, եթե՝ նրա վրա տալիս լավում են օրենսդրությամբ նախատեսված **սահմանափակումները**, գրանցման և (կամ) առաջադրման համար ներկայացված փաստաթղթերը կեղծ են:

Թեկնածուների գրանցման համար ներկայացված փաստաթղթերում անճշտությունների կամ փաստաթղթերը թերի լինելու դեպքում, համապատասխան ընտրական հանձնաժողովը 48 ժամ ժամանակ է տալիս անճշտությունները վերացնելու կամ փաստաթղթերը լրացնելու համար: Եթե այդ ժամկետում անճշտությունները չեն վերացվում կամ փաստաթղթերը չեն լրացվում, ապա թեկնածուների գրանցումը մերժվում է: Նույն ժամանակահատվածում անճշտությունները վերացնելու կամ փաստաթղթերը լրացնելու դեպքում կուսակցության ցուցակը, պատգամավորի, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամ առաջադրված թեկնածուն գրանցվում է:

Ընտրական հանձնաժողովն առաջադրված թեկնածուի (կուսակցական ընտրական ցուցակի և դրանում ընդգրկված թեկնածուի) **գրանցումն անվավեր է ճանաչում**, եթե գրանցումից հետո հայտնի են դարձել այնպիսի փաստեր, որոնց ուժով թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակների վրա տարածվում են Օրենսգրքով նախատեսված սահմանափակումները, ինչպես նաև գրանցման և (կամ) առաջադրման համար ներկայացված փաստաթղթերը կեղծված են:

Թեկնածուի (կուսակցական ընտրական ցուցակի և դրանում ընդգրկված թեկնածուի) **գրանցումը մերժելու** կամ **անվավեր ճանաչելու** վերաբերյալ ընտրական հանձնաժողովի որոշումն ընդունվում է հանձնաժողովի անդամների **ընդհանուր թվի ձայների երկու երրորդով**: Հանձնաժողովի այդպիսի **որոշումը կարող է վիճարկվել վարչական դատարան**: Եթե վերջինս անվավեր է ճանաչում հանձնաժողովի որոշումը, ապա անձը, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ցուցակը կամ դրանում ընդգրկված քաղաքացին համարվում է գրանցված կամ վերագրանցված:

Թեկնածուն կարող է համապատասխան ընտրական հանձնաժողով դիմում ներկայացնել **ինքնաբացարկի մասին**, որի հետևանքով թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում: Այդպիսին կարող է ճանաչվել նաև լուծարված կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը:

Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի պատգամավորի, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուները, օրենսդրությամբ սահմանված կարգով, ունեն հավասար իրավունքներ ու պարտականություններ:

Հանրապետության Նախագահի թեկնածուները, բացառությամբ քաղաքական պաշտոն զբաղեցնողների, որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց: Թեկնածուներն իրավունք չունեն օգտագործելու իրենց պաշտոնեական դիրքը նախընտրական քարոզչության ժամանակ առավելություն ստանալու համար:

Հանրապետության Նախագահի թեկնածուն **ազատվում է գորահավաքներից և ուսումնավարժական հավաքներից**, իսկ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուները՝ **գորահավաքներից, ժամկետային զինվորական ծառայությունից և ուսումնավարժական հավաքներից**՝ մինչև ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումը:

Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները ոչ ուշ, քան քվեարկությունից **10 օր առաջ իրավունք ունեն նոտարական կարգով վավերացված դիմում ներկայացնելու դեպքում հանել իրենց թեկնածությունը**: Վերջիններս դա կարող են անել նաև քվեարկության օրվանից հետո: Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող **կուսակցությունները**, կուսակցությունների դաշինքները **նույն ժամկետում և կարգով իրավունք ունեն հանելու իրենց ընտրական ցուցակները**, ինչպես նաև դրանցում գրանցված ցանկացած թեկնածուի՝ կուսակցության մշտապես գործող մարմնի (դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների վավերացված) որոշմամբ: Թեկնածությունը (կուսակցական ցուցակը) հանելու վերաբերյալ փաստաթուղթը ներկայացվում է համապատասխանաբար կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Քվեարկությունից ոչ ուշ, քան 10 օր առաջ **համայնքի ղեկավար և ավագանու անդամ առաջադրված թեկնածուն կարող է ինքնաբացարկի մասին դիմում ներկայացնել** ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, որի հիման վրա թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում: Թեկնածությունը հանելու և ինքնաբացարկի դեպքերում ընտրական գրավը և նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:

Օրենսգրքով սահմանված կարգով, **թեկնածուներն օգտվում են անձեռնմխելիության իրավունքից**: Այսպես, Հանրապետության Նախագահ առաջադրված թեկնածուները և ընտրված նախագահը մինչև Հանրապետության նախագահի պաշտոն ստանձնելը, ինչպես նաև Ազգային ժողովի՝ համամասնական և մեծամասնական ընտրակարգերով առաջադրված թեկնածուները, ընտրված պատգամավորը՝ մինչև պատգամավորի լիազորությունները ստանձնելը, չեն կարող ձեռքակալվել կամ կալանափորվել կամ նրանց նկատմամբ դատական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել, առանց ԿԸՀ-ի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդի համաձայնության: Նշված դրույթը չի տարածվում մինչև թեկնածու գրանցվելը ձեռքակալված կամ կալանավորված քաղաքացիների, ինչպես նաև ձեռքակալությունը կալանքով փոխելու և կալանավորված թեկնածուի կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքերի վրա:

Թեկնածուները (կուսակցությունների ընտրական ցուցակները), սահմանված կարգով գրանցվելուց հետո, ընտրական հանձնաժողովներում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հետ փոխ-

հարաբերություններում, իրենց շահերը պաշտպանելու նպատակով կարող են ունենալ **ընտրական տեղամասերի թվի եռապատիկին հավասար թվով վստահված անձինք**: Օրենսգիրքը սահմանում է, թե ովքեր կարող են լինել վստահված անձինք, ինչպես նաև նրանց գրանցման և հետ կանչման կարգը, իրավունքները, պարտականություններն ու գործունեության երախիքները (32 և 33 հոդվածներ):

Ե. Նախընտրական քարոզչությունը: Իրավաբանական գրականության մեջ և քաղաքական պրակտիկայում հավասարապես օգտագործվում են **«նախընտրական քարոզչություն», «քարոզչություն» և «քաղաքական քարոզչություն»** հասկացությունները: Դրանց օգտագործումը, ըստ էության, համապատասխանում է նախընտրական քարոզչության էությանն ու բովանդակությանը:

Նախընտրական քարոզչությունն ընտրական իրավունքի կարևոր քաղաքականասերից է և համարվում է ընտրությունների նախապատրաստական փուլի **էական տարրերից մեկը**: Այն, որպես ընտրողների գիտակցության վրա ազդելու միջոց, կարող է վճռորոշ նշանակություն ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների համար:

Նախընտրական քարոզչությունը Հանրապետության քաղաքացիների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) **օրենքով չարգելված ձևերով գործունեությունն է** նախապատրաստելու և տարածելու այնպիսի տեղեկատվություն, որի նպատակն է քարոզչություն կատարել թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի **օգտին կամ դեմ**: Միաժամանակ, նախընտրական քարոզչությունն **այն ժամանակահատվածն է**, որի ընթացքում թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, և քարոզչություն իրականացնելու Օրենսգրքով նախատեսված կանոնները: Նշված ժամանակահատվածը (նախընտրական քարոզչության) սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար Օրենսգրքով սահմանված ժամկետի **վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկությունից մեկ օր առաջ**: Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունն արգելվում է:

Ընդ որում, սահմանված ժամանակահատվածը չի բացառում Օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:

Օրենսգրքի դրույթներն ապահովում են քաղաքացիների, կուսակցությունների **հավասար հիմունքներով** նախընտրական քարոզչության ազատ իրականացումը: Այն արտահայտվում է ընտրություններին մասնակցող թեկնածուներին ու կուսակցություններին, ԿԸՀ-ի սահմանած ժա-

մանակացուցակով և կարգով, **հավասար հիմունքներով անվճար դահլիճներ, այլ շինություններ տրամադրելու մեջ**՝ նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով: Հավասար պայմաններ են երաշխավորվում նաև **զանգվածային լրատվամիջոցներից օգտվելու համար**:

Ընտրության նշանակվելուց հետո թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կարող են կազմավորել ընտրական շտաբներ, որոնց թիվը չի կարող գերազանցել ընտրական տեղամասերի թիվը:

Թեկնածուներն ու կուսակցությունները նախընտրական քարոզչության համար կարող են հավասար հիմունքներով անարգել հրապարակել և տարածել **պաստառներ, թերթիկներ և քարոզչական այլ տպագիր նյութեր**: Ընդ որում, քարոզչական տպագիր նյութերը պետք է տեղեկություններ բովանդակեն այն անձանց և կազմակերպությունների մասին, որոնք պատասխանատու են դրանց հրապարակման համար, ինչպես նաև՝ տպագրողի և տպաքանակի մասին: **Արգելվում է անանուր քարոզչական տպագիր նյութեր տարածելը**:

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող թեկնածուները նախընտրական քարոզչություն իրականացնում են իրենց վստահված անձանց միջոցով: Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում նրանց իրավունք է վերապահվում օրական մինչև 2 ժամ տևողությամբ հանդիպումներ ունենալ մինչև երեք վստահված անձի հետ:

Քաղաքական և այլ նկատառումներով նախընտրական քարոզչություն **չեն կարող կատարել և քարոզչական նյութ չեն կարող տարածել** պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողները՝ իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս, սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, դատախազները, ոստիկանության, ազգային անվտանգության, քրեակատարողական հիմնարկների ծառայողները, զինծառայողները, դատախազության մարմինների աշխատակիցները (ծառայողները), ինչպես նաև ընտրական հանձնաժողովների անդամները:

Հանրապետության Նախագահի թեկնածուները և ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) հանրային ռադիոյով ու հանրային հեռուստատեսությամբ **անվճար և վճարովի** (այդ թվում՝ ուղիղ եթերով) եթերաժամերի իրավունք ունեն: Նշված ռադիոհեռուստաընկերությունները պարտավոր են հավասար

պայմաններ ապահովել բոլոր թեկնածուների և կուսակցությունների (կուսակցության դաշինքների) համար: Վերջիններիս կողմից իրականացվող նախընտրական քարոզարշավի վերաբերյալ պետք է ներկայացվի անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն՝ ապահովելով արդար և հավասար պայմանների պահպանումը:

Անվճար և վճարովի եթերաժամեր տրամադրելու կարգը և ժամանակացույցը յուրաքանչյուր համապետական և Երևանի ավագանու ընտրության համար սահմանում է ԿԸՀ-ը՝ թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար նախատեսված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը:

Թեկնածուները և կուսակցություններն իրավունք ունեն հավասար պայմաններով օգտվելու նաև (անկախ սեփականության ձևից) այլ ռադիոհեռուստատիվային և հեռուստաընկերության եթերաժամերից: Նշված ռադիոհեռուստատիվային և հեռուստաընկերություններն ընտրություններ նշանակելուց **10 օր հետո պետք է սահմանեն վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը, որը չի կարող գերազանցել մինչև ընտրությունները նշանակելը վերջին վեց ամսվա համար առտրային գովազդի միջին գինը** և մինչև քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել:

Հավասար պայմաններ են ապահովվում նաև **պարբերական մամուլում** (անկախ դրանց հիմնադիրներից, բացառությամբ կուսակցության կողմից հիմնադրված թերթերի և ամսագրերի)՝ նախընտրական քարոզչական նյութեր հրատարակելիս:

Ընտրություններ նշանակվելուց հետո 21-օրյա ժամկետում համայնքի ղեկավարը համայնքի տարածքում, յուրաքանչյուր ընտրական տեղամասում առանձնացնում է հարմար, բոլորի համար հավասար անվճար, ինչպես նաև վճարովի տեղեր՝ քարոզչական պաստառներ փակցնելու համար (Օրենսգրքի 20 հոդվ., 3-րդ կետ):

Թեկնածուներին (կուսակցություններին) արգելվում է նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով **ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:**

Եթե քարեգործական կազմակերպությունների անվանումները նմանվում են (ասոցացվում են) թեկնածուների, կուսակցությունների անուններին(անվանմանը), չեն կարող բարեգործություն իրականացնել այնտեղ, որտեղ այդ թեկնածուների մասնակցությամբ անցկացվում են ընտրություններ:

Ընտրություններին մասնակցող թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) **վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման** արդյունքներ հրատարակելիս պետք է պահպանվեն Օրենսգրքի 21 հոդվածով սահմանված պահանջները:

Կենտրոնական, ընտրատարածքային և տեղամասային **ընտրական հանձնաժողովները վերահսկողություն են իրականացնում** նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ: Խախտումներ հայտնաբերելու դեպքում թեկնածուին, կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ՝ դրանք կանխելու կամ խախտում կատարած թեկնածուի, կուսակցության, (կուսակցության դաշինքի) նկատմամբ կիրառելու նախագոյացում՝ եռօրյա ժամկետում խախտումը դադարեցնելու համար: Այդ ժամկետում խախտումը չդադարեցնելու դեպքում **հանձնաժողովը դիմում է դատարան՝ տվյալ թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար:**

Զ. Ընտրությունների ֆինանսավորումը: Հերթական, նոր ու արտահերթ, երկրորդ փուլի և լրացուցիչ ընտրությունների նախապատրաստման, անցկացման, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական ուսուցման, ընտրողների ծանուցման, ընտրողների ցուցակները կազմելու և վարելու, ընտրական հանձնաժողովների գործունեությունն ապահովելու **անհրաժեշտ ծախսերը կատարվում են պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին**՝ առանձին հոդվածով:

Ընտրությունների համար, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովների պահպանման նպատակով նախատեսված միջոցները, հատկացվում են ԿԸՀ-ի աշխատակազմին, որը Օրենսգրքով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով **տնօրինում է այդ միջոցները** և պատասխանատու է դրանք ԿԸՀ-ի սահմանած նախահաշիվներին համապատասխան օգտագործելու համար:

Թեկնածուները և համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) ԿԸՀ-ի հաշվեհամարին մուծում են **ընտրական գրավ:** Օրենսգրքի 24 հոդվածը սպառիչ սահմանում է այն դեպքերը, երբ վերադարձվում է այդ գումարը (ընտրվելու կամ համամասնական ընտրակարգով մանդատների բաշխմանը մասնակցելու, քվեաթերթիկների թվի 5-ից ավելի տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստանալու և այլն): Մյուս դեպքերում գրավի գումարը չի վերադարձվում:

Իրենց նախընտրական քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) իրավունք ունեն ստեղծել **նախընտրական հիմնադրամ**: Միայն համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները և կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները առանձին նախընտրական հիմնադրամ ձևավորել չեն կարող (Օրենսգրքի 25 հոդվ.): Հիմնադրամը ստեղծվում է թեկնածուի անձնական միջոցներից, նրան առաջադրած կուսակցության տրամադրած միջոցներից, ինչպես նաև ընտրելու իրավունք ունեցող անձանց կամավոր մուծումներից: Բերված հոդվածում չնշված ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նախընտրական հիմնադրամների հաշվին մուծած գումարները փոխանցվում են պետական բյուջե:

Օրենսգրքի 26 հոդվածի (2-րդ մաս) համաձայն՝ նախընտրական քարոզչության համար թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին թույլատրվում է օգտագործել միայն իրենց նախընտրական հիմնադրամի միջոցները: Եթե նրանք, բացի դրանից, օգտագործում են նաև այլ միջոցներ, ապա ԿՀԸ-ի դիմումով դատարանը կարող է ուժը կորցրած ճանաչել թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումը:

Օրենսգրքը սահմանում է թեկնածուի, կուսակցության նախընտրական հիմնադրամ մուծվող միջոցների և կամավոր մուծումների առավելագույն չափերը: Մասնավորապես, **Հանրապետության Նախագահի թեկնածուի** անձնական մուծումների չափը չպետք է գերազանցի ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի 5000-ապատիկը, նրան առաջադրած կուսակցությանը՝ 25000-ապատիկը, իսկ յուրաքանչյուր ֆիզիկական անձինը՝ մինչև 100-ապատիկը:

Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուն, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը իրավունք ունեն հիմնադրամ մուծել. թեկնածուն՝ նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի, իսկ թեկնածուին առաջադրած կուսակցությունը՝ մինչև 2000-ապատիկի չափով. համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությանը՝ դաշինքի հիմնադրամում մինչև 15000-ապատիկի չափով. յուրաքանչյուր ֆիզիկական անձ՝ թեկնածուի և կուսակցության (կուսակցության դաշինքի) հիմնադրամներում՝ մինչև 100-ապատիկի չափով գումար:

Հանրապետության Նախագահի թեկնածուների, համամասնական

ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դրանց դաշինքների) նախընտրական հիմնադրամի միջոցները հավաքվում են **ՀՀ կենտրոնական բանկում**, իսկ մյուս թեկնածուներինը (ԱԺ մեծամասնական ընտրակարգով առաջադրված)՝ Հանրապետության բոլոր մարզերում մասնաճյուղեր ունեցող որևէ առևտրային բանկում՝ յուրաքանչյուրի գրավոր դիմումի համաձայն իր անունով բացված ժամանակավոր հատուկ հաշվեհամարներում: Նրանք պարտավոր են նախատեսված կարգով երեք աշխատանքային օրը մեկ ԿԸՀ-ի վերահսկիչ և վերստուգիչ ծառայություն տեղեկանք ներկայացնել նախընտրական հիմնադրամներում ֆինանսական մուտքերի ու ելքերի վերաբերյալ:

Նախընտրական հիմնադրամի միջոցների օգտագործման սահմանված կարգը խախտելու համար Օրենսգրքի 26 հոդվածով նախատեսում է դրամական տույժի միջոցներ, որոնք անհրաժեշտության դեպքում գանձվում են դատական կարգով:

Ընդամին, նախընտրական հիմնադրամից Հանրապետության Նախագահի թեկնածուների կատարած ծախսերի չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 100000-ապատիկը, Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուներինը՝ 10000-ապատիկը, կուսակցություններինը, նրանց դաշինքներինը՝ 100000-ապատիկը:

Նախընտրական հիմնադրամների հաշիվների վերաբերյալ գործառնությունները դադարեցվում են քվեարկության օրվանից, սակայն թեկնածուների, կուսակցությունների դիմումով ԿԸՀ-ը թույլ է տալիս վճարումներ կատարել նաև այդ օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար:

Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո հիմնադրամում մնացած միջոցները թեկնածուները, կուսակցություններն եռամսյա ժամկետում իրենց հայեցողությամբ օգտագործում են րարեգործական նպատակներով: Այդ ժամկետը լրանալուց հետո հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:

Ընտրությունները չկայացած ճանաչվելու դեպքում՝ նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները սառեցվում են մինչև նոր ընտրությունների համար թեկնածուներ (կուսակցությունների ցուցակներ) գրանցելը, որոնք կրկին գրանցվելուց հետո կարող են օգտագործել նշված միջոցները: Այդ ընտրություններին նրանց չմասնակցելու դեպքում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:

Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով ընտրական հանձնաժողովներին, ԿԸՀ-ի աշխատակազմին տրված միջոցների նպատակային օգտագործման, նախընտրական հիմնադրամ-

ներ կատարվող մուծումների, դրանց հաշվարկման և ծախսերի նկատմամբ *վերահսկողությունն իրականացնում է ԿԸՀ-ի կողմից ստեղծված վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը:*

Բյուջետային միջոցներ ստանալու, օգտագործելու, նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների և ծախսերի հաշվառումը ՀՀ օրենսդրության համաձայն՝ կատարվում է ԿԸՀ-ի սահմանած կարգով:

Ընտրություններից հետո 20-օրյա ժամկետում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում ԿԸՀ, վերջինս՝ ՀՀ վերահսկիչ պալատ, իսկ ԿԸՀ-ի աշխատակազմը՝ ԿԸՀ-ի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

§ 5. Քվեարկության կազմակերպումը և անցկացումը

Ընտրական գործընթացի *երկրորդ՝ վճռական փուլն է կազմում քվեարկության կազմակերպումը և անցկացումը:* Օրենսգիրքը հանգամանորեն կարգավորում է քվեարկության նախապատրաստման, կազմակերպման, ընտրողների գրանցման, քվեաթերթիկը լրացնելու և քվեարկության կարգը, դրա իրականացման երաշխիքները, ինչպես նաև քվեարկության հետ առնչվող մյուս հարցերը: Քվեարկության գործընթացի ամրագրումն Օրենսգրքում էական նշանակություն ունի, քանի որ այն ընտրարշավի ամենազլխավոր, ավարտական փուլերից է, որի ընթացքում գործնականում իրականացվում է ժողովրդի կամքի ազատ արտահայտությունը:

Քվեարկությունն անցկացվում է միայն ՀՀ տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում, ժամը 8⁰⁰-ից մինչև 20⁰⁰-ն: Համապետական ընտրությունների ժամանակ *ստացիոնար բուժման մեջ գտնվող* և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող ընտրողների համար քվեարկությունը կազմակերպվում է ստացիոնար բուժհաստատությունում: Այդ անձանց քվեարկությունը կազմակերպում է քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստում վիճակահանությանը որոշված հանձնաժողովի առնվազն մեկ անդամ՝ շրջիկ արկղի միջոցով: Այն անցկացվում է սահմանված կարգով քվեարկության գաղտնիության պահպանմամբ, և քվեարկության կազմակերպմանը կարող են ներկա լինել նաև փստահված անձինք, դիտորդներ և ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

Եթե համապետական ընտրությունների քվեարկության օրը ՀՀ դի-

վանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտրելու իրավունք ունեցող ընտանիքի անդամները գտնվում են ՀՀ տարածքից դուրս, ապա կարող են մասնակցել ընտրություններին՝ *քվեարկելով էլեկտրոնային եղանակով:* Այս եղանակով քվեարկությունը կարող է իրականացվել թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման ժամկետի ավարտից հետո, բայց *քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ:* Նշված դրույթները տարածվում են նաև ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից), բայց *արտերկրում տեղակայված ներկայացուցչությունների* ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցների և նրանց հետ բնակվող ընտանիքի անդամների վրա:

Չերթակալված ընտրողները քվեարկությանը մասնակցում են այն ձևով, ինչպես ստացիոնար բուժհաստատություններում բուժվողները և քվեարկությունն ավարտվում է մինչև ժամը 18⁰⁰-ը:

Կալանավորված անձանց պահելու վայրում քվեարկությունը նախապատրաստում և կազմակերպում է քրեակատարողական հիմնարկի ղեկավարը և, ելնելով ընտրելու իրավունք ունեցող անձանց թվից, քվեարկությունն սկսվում է ժամը 9⁰⁰-ից հետո՝ ԿԸՀ-ի սահմանած հեթքականությանը, և քվեարկությունը պետք է ավարտվի ժամը 20⁰⁰-ին:

Օրենսգրքին համապատասխան՝ քվեարկությունը կատարվում է այդ նպատակով կահավորված սենյակում՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասում մեկ սենյակ հաշվարկով:

Քվեարկության գործընթացը պետք է հնարավորություն ընձեռի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներն և քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա կանոնավոր աշխատանքի իրականացմանը և տեսադաշտում պահելու քվեարկության խցիկները, քվեատուփը, ինչպես նաև քվեարկության խցիկներից մինչև քվեատուփն ընկած հատվածը: Յուրաքանչյուր 750 ընտրողի հաշվարկով պետք է հատկացվի առնվազն մեկ խցիկ, որը պետք է կահավորված լինի ամեն անհրաժեշտով, որպեսզի ընտրողը կարողանա տեղամասային կենտրոնում գտնվող անձանցից գաղտնի լրացնել քվեաթերթիկը:

Քվեաթերթիկի ձևը և շարադրանքը սահմանում է ԿԸՀ-ը: Քվեաթերթիկը պետք է լինի դակված (պերֆորացված), որի հատման գծից վերև՝ ելումդի վրա, նշվում է քվեաթերթիկի հեթքական համարը, իսկ հատման գծից ներքև՝ ձախ կողմում, այբբենական հեթքականությանը նշվում են

թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) անվանումները, իսկ այ կողմում՝ «կողմ եմ» և «դեմ եմ» բառերի նշումի համար մախատեսված դատարկ քառանկյուններ:

Քվեաթերթիկները տպագրվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ: Դրանք թողարկելուց հետո թեկնածուի գրանցումը, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչվելու, ինչպես նաև նշված կուսակցությունների դաշինքի լուծարման դեպքերում նշվածների անվանումը քվեաթերթիկներից հանվում են ԿԸՀ-ի սահմանած կարգով:

Քվեաթերթիկները և քվեարկության ծրարները տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվում են քվեարկության մախորդ օրը տեղամասում ընտրողների թվի մինչև 3 տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս, քան ընտրողների թվից 2 քվեաթերթիկ ավելի: Միաժամանակ, տարբեր քվեարկություններ անցկացնելու դեպքում քվեաթերթիկները և ծրարները պետք է պատրաստվեն այնպես, որ ակնհայտորեն տարբերվեն միմյանցից:

Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի ընտրությունների քվեաթերթիկների նմուշը հաստատում, քվեաթերթիկների տպագրումը և պատրաստումը ապահովում է ԿԸՀ-ը, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները:

Յուրաքանչյուր քվեաթերթիկ պարունակում է ծանուցում դրա լրացման կարգի մասին: Բացի դրանից, տեղամասային կենտրոնում կամ դրա մտքի մոտ փակցվում են քվեաթերթիկների նմուշները, ինչպես նաև ՀՀ Նախագահի թեկնածուների լուսանկարները և նրանց կենսագրությունները, իսկ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ՝ քվեարկվող կուսակցությունների (դրանց դաշինքների) ընտրական ցուցակները:

Քվեարկությունը մախապատրաստում են տեղամասային ընտրական հանձնաժողովները, որոնց մախագահները քվեարկության ընթացքում ապահովում են Օրենսգրքի պահանջների կատարումը և անհրաժեշտ կարգուկանոնը՝ տեղամասային կենտրոնում:

Ընտրական հանձնաժողովների կմիքների, դրոշմակնիքների և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքների նմուշները պատրաստվում են ԿԸՀ-ի պատվերով և քվեարկությունից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ հանձնվում է նրանց:

Դրանք պահվում են քվեարկության սենյակում գտնվող չիրկիզվող պահարանում և ընտրությունների ավարտից հետո սահմանված կարգով ու ժամկետներում վերադարձվում են ԿԸՀ:

Օրենսգրքին համապատասխան, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը և վստահված անձը սեփական կնիք ունենալու դեպքում, այն կարող է օգտագործել 58 հոդվածի 9-րդ մասով մախատեսված դեպքերում և կարգով (օրինակ, իր ստորագրության փոխարեն դրանով կնքել քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների բոլոր էջերը):

Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության մախորդ օրը իր միատում վիճակահանությամբ որոշում է **հանձնաժողովի այն երեք անդամներին**, ովքեր մինչև ժամը 24.00 պետք է ստորագրեն կամ անհատական կնիքով կնքեն բոլոր քվեաթերթիկները և ընտրական ցուցակների բոլոր էջերը և համապատասխան գրառում կատարեն գրանցամատյանում:

Քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին **հանձնաժողովը նույն կարգով որոշում է ընտրողների գրանցումն իրականացնող**, քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող, քվեարկության ծրարների կնքման և քվեատուփի համար պատասխանատու, շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող հանձնաժողովի անդամին, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ գործառույթների հեքթափոխը: Ընդ որում, հանձնաժողովի մախագահը և քարտուղարը վիճակահանությանը չեն մասնակցում: Այնուհետև, տեղամասային ընտրական հանձնաժողովի մախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկությանը ներկա լինելու իրավունք ունեցող անձանց **ներկայությամբ քացում է չիրկիզվող պահարանը**, հանում դրանում պահվող փաստաթղթերը և հանձնում է դրանք տնօրինող հանձնաժողովի անդամներին, համապատասխան գրառում կատարելով գործավարության մատյանում, որից հետո ժամը 8⁰⁰-ին հայտարարում է քվեարկության սկիզբը:

Արգելվում է տեղամասային կենտրոն մուտք գործել զենքով և ռազմամթերքով, այդ թվում զինժառայողներին, ոստիկանության և ազգային անվտանգության գործերի ծառայողներին: Սակայն ընտրությունների բնականոն ընթացքի վտանգման դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի մախագահի թույլատրությամբ միայն ոստիկանության ծառայողները կարող են տեղամասային կենտրոն մուտք գործել զենքով:

Տեղամասային կենտրոնում հանձնաժողովի անդամներից և քվեարկողներից քացի կարող են ներկա լինել թեկնածուների վստահված ան-

ծինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները և վերադաս ընտրական հանձնաժողովների անդամները, իսկ թեկնածուն՝ չի կարող գտնվել տեղամասային կենտրոնում կամ տեղամասային կենտրոնին հարող՝ մինչև 50 մետր շառավղով տարածքում, բացառությամբ քվեարկությանը մասնակցելու դեպքի:

Քվեարկության սենյակում միաժամանակ չի կարող ներկա լինել 15-ից ավելի քվեարկող: Քվեարկության մատչելիությունը ապահովելու նպատակով ԿԸՀ-ը պարտավոր է քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար սահմանել լրացուցիչ հնարավորություններ՝ նրա կամքի ազատ արտահայտման և քվեարկության գաղտնիության ապահովման համար:

Քվեարկության ներկայացած յուրաքանչյուր ընտրող, ներկայացնելով **անձը հաստատող փաստաթուղթ**՝ անձնագիրը, նույնականացման քարտը, անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթ՝ լիազոր մարմնի կողմից տրված, իսկ զինծառայողները՝ զինվկայականը կամ զինգրքույկը, որի տվյալները գրանցվում է ընտրողների ցուցակում: Պարտադիր ժամկետային զինծառայողները ծառայությունից ժամանակավոր արձակված լինելու դեպքում իրենց մշտական բնակության վայրում քվեարկությանը մասնակցում են՝ ներկայացնելով արձակվելու վերաբերյալ փաստաթղթի պատճենը և զինգրքույկը:

Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն ստորագրել ընտրողների ցուցակում, ապա նա իրավունք ունի դիմել այլ քաղաքացու օգնության՝ բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամների: Գրանցվելուց հետո հանձնաժողովի անդամն ընտրողին է հանձնում քվեաթերթիկը, որը կնքվում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկները կնքող անդամի կողմից:

Յուրաքանչյուր ընտրող քվեարկության ժամանակ ստանում է մեկ քվեաթերթիկ ու քվեարկության ծրար և քվեաթերթիկներ ու ծրարներ՝ միաժամանակ մի քանի քվեարկություններ անցկացնելու դեպքում: Նույն ժամանակ, տարբեր ընտրություններ անցկացնելու դեպքում, քվեաթերթիկները պատրաստվում են այնպես, որպեսզի դրանք ակնհայտորեն տարբերվեն միմյանցից: Ընդ որում, քվեաթերթիկների տրամադրման համար պահուստի սահմանում հանձնաժողովի անդամը անջատում է քվեաթերթիկի ելունդը և քվեաթերթիկի ներքևի հատվածը քվեարկության ծրարի հետ հանձնում է ընտրողին: **Քվեաթերթիկների ելունդները** հանձնվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որը դրանք տեղադրում է չիրկիզվող պահարանում:

Յուրաքանչյուր ընտրող քվեարկում է անձամբ: Այլ անձանց փոխարեն քվեարկություն չի բույլատրվում: Արգելվում է քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում որևէ այլ անձի ներկայությունը: Եթե ընտրողը քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունի, ապա նա իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրել այլ անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի և վստահված անձի: Նույն անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի:

Ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի, քվեարկության խցիկում: **Եթե նա կարծում է, որ սխալ է լրացրել քվեաթերթիկը** կամ վնասել է այն, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար: Նոր քվեաթերթիկ հատկացնելու դեպքում ընտրողների ցուցակում ընտրողի ազգանվան դիմաց համապատասխան նշում է կատարվում: Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկին ամրացվում է քվեաթերթիկի ցանկացած մեկ ելունդ, և քվեաթերթիկն անհապաղ մարվում է:

Քվեաթերթիկը լրացնելիս ընտրողը սահմանված ձևով միատեսակ նշում է կատարում այն թեկնածուի անվան, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվան դիմացի քառանկյունում, ում կողմ է քվեարկում, իսկ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ «կողմ եմ» կամ «դեմ եմ» բառերի դիմաց և այն (քվեաթերթիկը) տեղավորում է քվեարկության ծրարի մեջ, իսկ մի քանի քվեարկություն անցկացվելու դեպքում՝ յուրաքանչյուր քվեաթերթիկ՝ համապատասխան ծրարում: Ծրարը հանձնաժողովի համապատասխան անդամը սահմանված կարգով կնքում և այն քվեատուփի մեջ օգնելու հնարավորություն է ընձեռում ընտրողին:

Եթե հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը գտնում է, որ քվեարկության ընթացքում քվեարկության կարգի խախտում է կատարվել, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի գրանցամատյանում:

Արտասահմանյան երկրներում քվեարկության ժամանակ սովորական քվեաթերթիկների փոխարեն հաճախ օգտագործվում են **հատուկ մեքենաներ**, որոնք երաշխավորում են ընտրությունները հնարավոր խախտումներից: Դրանց միջոցով հեշտացվում է նաև քվեարկության նկատմամբ վերադիտումը և քվեարկության արդյունքների արագ որոշումը: Սակայն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մեքենաները մարդու մտքի արդյունք են և ղեկավարվում են նրա կողմից:

Տարբեր է նաև քվեարկության բուն գործընթացը՝ ընտրողների գրանցման կապակցությամբ ներկայացվող փաստաթղթերի տեսակները, ինչպես նաև ընտրությունների ժամանակ իրենց բնակության վայրում չգտնվելու դեպքում քվեարկության կազմակերպումը (փոստով քվեարկությունը և լիազորագրով քվեարկությունը):

Քվեարկությանն *կամավոր* մասնակցելուց զատ, կիրառվում է նաև *պարտադիր քվեի* իմաստաբանությունը: Եթե առաջինը ենթադրում է, որ ընտրողն ինքն է որոշում՝ մասնակցել ընտրություններին, թե՛ ոչ, ապա առանձին երկրներում պարտադիր քվեն՝ ընտրողի պարտականությունն է մասնակցել քվեարկությանը: Չմասնակցելու դեպքում կարող են կիրառվել իրավաբանական պատասխանատվության միջոցներ:

§ 6. Քվեարկության արդյունքները որոշելու և դրանք հրապարակելու կարգը

Ընտրությունների *ավարտական (3-րդ) փուլն է հանդիսանում ձայների հաշվումը և քվեարկության արդյունքների որոշումը*: Օրենսգրքին համապատասխան՝ ընտրություններն ավարտվելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովն սկսում է *քվեարկության արդյունքների ամփոփման նիստը*, որն անցկացվում է քվեարկության ավարտից հետո և առանց ընդհատվելու շարունակվում մինչև տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելը: Այդ նիստին մասնակցում են դրա իրավունքը ունեցող անձինք (օրինակ, վստահված անձինք) և, ցանկության դեպքում՝ նաև թեկնածուներ:

Հանձնաժողովն այդ նպատակով փաթեթավորում և կնքում է հանձնաժողովի անդամների անհատական կնիքները և տեղավորում ընտրական փաստաթղթերի պարկում, հաշվարկում է ընտրողների կողմից չօգտագործված, ոչ ճիշտ լրացված և հետ վերադարձված քվեաթերթիկների ընդհանուր թիվը, մարում դրանք, այնուհետև փաթեթավորում է օգտագործված քվեաթերթիկների ելուղները, կնքում է դրանք ու տեղադրում պարկում: Ընտրողների ցուցակների հիման վրա հաշվում է *քվեարկության մասնակիցների թիվը*, փաթեթավորում է նշված ցուցակները և կնքում փաթեթը:

Վերը նշված արդյունքները հանձնաժողովն արձանագրում է գործառնության մատյանում և հրապարակում, իսկ քվեարկության մասնակիցների թվի մասին անհապաղ հայտնում է *ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին*, իսկ չօգտագործված քվեարկու-

յան ծրարները, փաթեթավորում է և ընտրական փաստաթղթերի պարկի հետ ներկայացնում նույն հանձնաժողով:

Այնուհետև, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, դրանից հանում քվեարկության մեկ ծրար, հայտարարում դրա սահմանված կամ չսահմանված մնուշի լինելը, հետո ծրարից հանում է քվեաթերթիկը, հայտարարում է վավեր, անվավեր կամ չսահմանված մնուշի լինելու մասին և վավերի դեպքում՝ ինչպես է քվեարկված(ում օգտին) և, ըստ քվեարկության նշումի, քվեաթերթիկը դնում է համապատասխան թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին տրված քվեաթերթիկների վրա, իսկ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ:

Պահանջի դեպքում քվեարկության ծրարը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Վերջիններիս կողմից առարկության դեպքում կասկած հարուցող հարցը դրվում է հանձնաժողովի քվեարկությանը: *Չսահմանված մնուշի քվեարկության ծրարները* (այսինքն՝ սահմանված մնուշից ակնհայտ տարբերվող կամ չկնքված կամ այլ կնիքով կնքված ծրարները, ինչպես նաև քվեաթերթիկ չպարունակող, մեկից ավելի վավեր կամ անվավեր քվեաթերթիկ կամ չսահմանված մնուշի քվեաթերթիկ, ինչպես նաև ընտրողի ինքնությունը բացահայտող նշումներ պարունակող քվեարկության ծրարները) և դրանցում գտնվող քվեաթերթիկներն անհապաղ մարվում են և փաթեթավորվում:

Սահմանված մնուշի *քվեաթերթիկն անվավեր է համարվում*, եթե մեկից ավելի թեկնածուի (կուսակցությունների) օգտին նշումներ է պարունակում, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում միաժամանակ «կողմ են» և «դեմ են» բառերի դիմաց նշումներ է պարունակում, չի պարունակում որևէ նշում, բացի սահմանված կամ դրան մնանվող նշումից ներառում է ալի՝ ընտրողի ինքնությունը բացահայտող նշում, հանձնաժողովի անդամի կողմից ստորագրված, դրոշմված կամ կնքված չէ, ինչպես նաև խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու ձևը:

Չսահմանված մնուշի են համարվում այն քվեաթերթիկները, որոնք տարբերվում են սահմանված մնուշից, քվեարկության չսահմանված մնուշի ծրարում գտնվող քվեաթերթիկը, ինչպես նաև քվեարկության սահմանված մնուշի ծրարում գտնվող մեկից ավելի քվեաթերթիկները, քվեատուփում գտնվող՝ առանց քվեարկության ծրարի քվեաթերթիկները:

Սահմանված մնուշի ծրարում մեկից ավելի կամ չսահմանված մնուշի քվեաթերթիկ գտնվելու դեպքում քվեաթերթիկը հետ է դրվում ծրարի մեջ, իսկ ծրարը՝ չսահմանված մնուշի ծրարների փաթեթում:

Քվեաթերթիկների ծրարների տեսակավորման ժամանակ **հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել**, ինչպես նաև իրենց մոտ ունենալ նշումներ կատարելու առարկաներ:

Քվեատուփում առկա քվեարկության ծրարները և քվեաթերթիկները տեսակավորելուց հետո, հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների ներկայությամբ հաշվարկում է անվավեր ճանաչված քվեաթերթիկների, յուրաքանչյուր թեկնածուի, կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը, իսկ մեկ թեկնածուի քվեարկվելու դեպքում՝ կողմ կամ դեմ քվեարկված թերթիկների թիվը: Նշված արդյունքները ամփոփելիս չսահմանված նմուշի ծրարները և քվեաթերթիկները հաշվի չեն առնվում:

Հաշվարկված քվեքը հրապարակվում են և արձանագրվում գրանցամատյանում, իսկ հաշվարկված և տեսակավորված քվեարկության ծրարներն ու քվեաթերթիկները սահմանված կարգով փաթեթավորվում են և կնքվում: Փաթեթների վրա պետք է լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: **Դրա իրավունքն ունեն նաև հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք:**

Հիմք ընդունելով վերը նշված հաշվարկները, տեղամասային ընտրական հանձնաժողովը սահմանված կարգով **կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն**, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը, անդամները և կնքվում հանձնաժողովի նախագահի կողմից:

Հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել արձանագրությունը, իսկ եթե արձանագրության տվյալների վերաբերյալ առարկություն (հատուկ կարծիք) ունի, ապա այդ մասին նշում է կատարում արձանագրության՝ դրա համար նախատեսված տեղում:

Հանձնաժողովի նիստի վերջում, բայց **քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 10 ժամ հետո հանձնաժողովն ավարտում է արձանագրության կազմումը** և հանձնաժողովի նախագահը հրապարակում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը:

Հանձնաժողովի **արձանագրությունը կազմվում է 4 օրինակից՝** մեկ օրինակը փաստաթղթերի հետ միասին փաթեթավորվում, կնքվում և դրվում է նախապես համարակալված հատուկ պարկում, իսկ մեկ օրինակը՝ փակցվում է տեղամասային կենտրոնում: Պարկի վրա պետք է լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս իրավունք ունեն ստորագրել պարկի վրա, որոնց վերաբերյալ գրառում է կատարվում հանձնաժողովի

գրանցամատյանում՝ սահմանված կարգով: Պարկը պետք է փակվի տեղամասային ընտրական հանձնաժողովում:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված **արձանագրությունից քաղվածքը՝** վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով՝ հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով տրվում է նրանց:

Քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը վստահված անձանց, դիտորդների, ՉԼՄ-ների ներկայացուցիչների կողմից կարող է **տեսանկարահանվել և լուսանկարահանվել:**

Սահմանված կարգով փաթեթավորված և պարկի մեջ դրված ընտրական փաստաթղթերը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության երկու օրինակը, գործավարտության մատյանը և տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը, ինչպես նաև մյուս փաստաթղթերը քվեարկության ավարտից հետո ոչ ուշ, **քան 12 ժամվա ընթացքում հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ներկայացնում են** համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ ԿԸՀ-ի սահմանած կարգով:

Հիմք ընդունելով իր ամփոփիչ արձանագրության տվյալները, տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է **անճշտությունների չափի** վերաբերյալ արձանագրություն: **Այդ չափը հաշվարկելու համար համադրվում է** հանձնաժողովին տրված քվեաթերթիկների թիվը՝ մարված քվեաթերթիկների քվի, քվեատուփում առկա վավեր և անվավեր քվեաթերթիկների քվի գումարի հետ: **Այնուհետև համադրվում է** ընտրողների ցուցակում ստորագրությունների թիվը քվեատուփի վավեր և անվավեր քվեաթերթիկների քվերի գումարի հետ: **Քացի այդ, համադրվում է** քվեատուփում առկա սահմանված նմուշի ծրարների թիվը քվեատուփի վավեր և անվավեր քվեաթերթիկների քվերի գումարի հետ: **Իմի բերելով նշված երեք համադրությունների անճշտությունների քվեքը**, դրանց գումարը համարվում է տվյալ ընտրական տեղամասում անճշտությունների գումարային չափ:

Քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչվելու դեպքում տվյալ տեղամասում քվեարկության մասնակիցների թիվն արձանագրվում է որպես տեղամասում անճշտությունների գումարային չափ:

Ընտրատարածքում արձանագրություն կազմելիս մյուս տեղամասերի քվեարկության արդյունքներին գումարվում են քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչված տեղամասի ընտրողների թիվը, հատկացված քվեաթերթիկների թիվը և ելունդների համարները: Յուրաքանչ-

յուր գործողություն կատարվում է հեքթականությամբ և ավարտվում է համապատասխան արձանագրություն կազմելուց հետո:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրություններն ստանալուց հետո ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը դրանց տվյալները մուտքագրում է համակարգիչ և յուրաքանչյուր 3 ժամը մեկ կատարում է ընտրատարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորում ըստ ընտրական տեղամասերի: Քվեարկության արդյունքների վերաբերյալ տեղամասերի արձանագրությունների տվյալների համակարգիչ մուտքագրումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ավարտում է **քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում:** Քվեարկության արդյունքներն ըստ տեղամասերի աղյուսակավորվում, կնքվում և վավերացվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի կողմից:

Քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում նույն կարգով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ամփոփում է ընտրատարածքում **Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով** ընտրությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախնական արդյունքները և **կազմում արձանագրություն**, իսկ քվեարկության օրվանից 5-րդ օրը կազմում է արձանագրություն՝ ընտրատարածքում քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը ներկայացնում է ԿԸՀ, իսկ ընտրատարածքում քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրություն չի կազմում, սակայն ուսումնասիրում է տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում արձանագրված խախտումները, ընդունում համապատասխան որոշում և ներկայացնում ԿԸՀ:

ԿԸՀ-ը ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 24 ժամ հետո, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված տվյալների հիման վրա, ամփոփում է համապետական ընտրությունների նախնական արդյունքները, արձանագրությամբ վավերացնում այն և ուղիղ եթերով պաշտոնապես հրատարակում է դրանք: Այնուհետև քվեարկության օրվանից **հետո՝ 7-րդ օրը**, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկությունների արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է քվեարկության արդյունքների մասին արձանագրություն: ԿԸՀ-ը նույն օրը սահմանված կարգով ամփոփում է ընտրությունների արդ-

յունքները և որոշում ընդունում ընտրությունների արդյունքների մասին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ամփոփելով Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքները, քվեարկության օրվանից հետո 7-րդ օրը ընդունում է հետևյալ չորս որոշումներից մեկը (ա) Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին, բ) ընտրության 2-րդ փուլ անցկացնելու մասին, գ) ընտրությունն անվավեր ճանաչելու և ՀՀ Նախագահ չընտրվելու մասին և դ) ընտրությունը չկայացած ճանաչելու և Հանրապետության Նախագահ չընտրվելու մասին:

Այդ որոշումներից **ոչ** մեկի վիճարկման վերաբերյալ սահմանադրական դատարան դիմում կարող է ներկայացվել ընտրությունների արդյունքների պաշտոնական հրատարակման օրվանից հետո՝ 5-րդ օրը:

Նույն հանձնաժողովը **Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներն ամփոփելուց հետո** որոշում է՝ ա) Ազգային ժողովի պատգամավորներ ընտրվելու մասին բ) առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին, գ) ընտրություններն անվավեր ճանաչելու և ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու մասին, դ) ընտրություններն անվավեր ճանաչելու և նոր ընտրություն նշանակելու մասին:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն Ազգային ժողովի **մեծամասնական ընտրակարգով**, ինչպես նաև համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությունների արդյունքների հիման վրա ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ **պատգամավոր, համայնքի ղեկավար, ավագանու անդամներ ընտրվելու մասին**, առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին, պատգամավորի, համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների **ընտրությունն անվավեր ճանաչելու մասին**, պատգամավորի, համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների **ընտրությունը չկայացած ճանաչելու** մասին:

Հայաստանի Հանրապետության **Նախագահ ընտրված է համարվում այն թեկնածուն**, որին կողմ է քվեարկել բոլոր թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի կեսից ավելին, իսկ եթե քվեարկվել է մեկ թեկնածու՝ կողմ քվեարկած քվեարկության մասնակիցների կեսից ավելին:

Հանրապետության Նախագահի ընտրության **երկարդ փուլում** ընտրված է համարվում այն թեկնածուն, որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:

ԿԸՀ-ը Հանրապետության Նախագահի ընտրության ցանկացած փուլում այն **անվավեր** է ճանաչում, եթե ընտրության նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղի են ունեցել Օրենսգրքի այնպիսի

խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքների վրա:

Հանրապետության Նախագահի ընտրությունը *չկայացած* է ճանաչվում, եթե քվեարկված միակ թեկնածուին կողմ չեն քվեարկել ամհրաժեշտ թվով ընտրողներ կամ ընտրվելու համար անհրաժեշտ թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած թեկնածուն մահացել է մինչև ընտրության արդյունքներն ամփոփելը:

Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգի համար նախատեսված 90 մանդատները կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից բաշխվում են ընտրություններին մասնակցած այն կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն՝ կուսակցության դեպքում՝ 5, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 7 տոկոսը:

Եթե կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի համապատասխանաբար առնվազն 5 և 7 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել է ընդամենը մեկ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակ, ապա *մանդատների բաշխմանը մասնակցում են հաջորդ երկու՝ համեմատաբար առավել շատ կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած կուսակցությունները* (կուսակցությունների դաշինքները):

Իսկ եթե քվեարկությանը մասնակցել է *մինչև երեք կուսակցություն* (կուսակցությունների դաշինք), ապա մանդատները բաշխվում են բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև՝ դրանցից յուրաքանչյուրին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվին համամասնորեն: Այս ընտրակարգով ընտրված թեկնածուին հասանելիք մանդատը, եթե նա ընտրվել է նաև Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով, տրվում է այդ կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հաջորդ թեկնածուին:

Ազգային ժողովի՝ *համամասնական ընտրակարգով* ընտրություններն *անվավեր են ճանաչվում*, եթե քվեարկության ընթացքում եղել են Օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա: Այդ դեպքում ԿԸՀ-ն առանձին ընտրական տեղամասերում նշանակում է վերաքվեարկություն:

Ընտրություններն անվավեր են ճանաչվում նաև, եթե այդ խախտումները տեղի են ունեցել ընտրությունների նախապատրաստման ժամանակ կամ առանձին տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելիս: Անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 15 և ոչ ուշ, քան 30 օր հետո անցկացվում է վերաքվեարկու-

յուն: Իսկ վերաքվեարկության արդյունքներն անվավեր ճանաչվելու դեպքում ոչ ուշ, քան 70 օր հետո անցկացվում է *նոր ընտրություն*:

Այս սկզբունքն է կիրառվում նաև քվեարկության և ընտրությունների նախապատրաստման ընթացքում Օրենսգրքի պահանջների խախտման դեպքում՝ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրությունների ժամանակ (126, 143 և 144 հոդվածներ):

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ Ազգային ժողովի՝ *մեծամասնական ընտրակարգով* պատգամավոր *ընտրված է համարվում* այն թեկնածուն, որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում նա ընտրված է համարվում, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին: Եթե երկու և ավելի թեկնածուներ ստացել են հավասար թվով առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ, ապա ընտրված թեկնածուին որոշելու համար նրանց միջև անցկացվում է վիճակահանություն:

Համայնքի ղեկավար ընտրված է համարվում այն թեկնածուն, որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ, իսկ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին: Եթե երկու և ավելի թեկնածուներ ստացել են հավասար թվով առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ, ապա նրանց միջև անցկացվում է վիճակահանություն՝ ընտրված թեկնածուին որոշելու համար:

Համայնքի ավագանու անդամների ընտրության դեպքում՝ ընտրված են համարվում առավելագույն թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած, Օրենսգրքի 130 հոդվածի 3-րդ մասով սահմանված, *համապատասխան թվով ավագանու անդամի թեկնածուները*: Կողմ քվեարկված քվեաթերթիկների հավասարության դեպքում ընտրված թեկնածուին որոշելու համար անցկացվում է վիճակահանություն: Վիճակահանության կարգը սահմանում է ԿԸՀ-ը:

Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունների (և՛ համամասնական, և՛ մեծամասնական ընտրակարգով) արդյունքների վերաբերյալ ընդունված *որոշման վիճարկման դեպքում դիմումը կարող է ներկայացվել սահմանադրական դատարան*՝ ընտրության արդյունքների *պաշտոնական հրապարակումից հետո 5-րդ օրը*, իսկ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները՝ *ՀՀ վարչական դատարան*՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում:

Օրենսգրքի համաձայն, ընտրությունների արդյունքներն ամփոփելուց և համապատասխան արձանագրությունը կազմելուց հետո, ընտրական բոլոր փաստաթղթերն ընտրական տեղամասերից անհապաղ ուղարկվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Վերջինս ընտրական փաստաթղթերը, բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին վերաբերող փաստաթղթերի, ընտրությունների արդյունքները վերջնական ամփոփելուց հետո, ներկայացնում է ԿԸՀ: Քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովն ընտրական փաստաթղթերը պահպանության է հանձնում ՀՀ պետական արխիվ:

§ 7. Երևան քաղաքի ավագանու ընտրությունը

ՀՀ ընտրական օրենսգիրքը հատուկ անդրադարձել է նաև Երևանի ավագանու ընտրությանը: Ի տարբերություն Հանրապետության մյուս համայնքների, Երևանի ավագանին ընտրվում է յուրահատուկ ընտրակարգով:

Օրենսգրքին համապատասխան, **65 հոդուց կազմված** մայրաքաղաքի **ավագանին ընտրվում է համամասնական ընտրակարգով՝** Երևանի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրը առնվազն վերջին 6 ամիսն ընդգրկված և Օրենսգրքի 2 հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններ ընտրելու իրավունք ունեցող անձանց կողմից՝ **4 տարի ժամկետով:** Ավագանու ընտրության ժամանակ Երևանի ողջ տարածքը համարվում է մեկ բազմամանդատ ընտրատարածք:

Երևանի ավագանու անդամի թեկնածուին Օրենսգիրքը ներկայացնում է այն մույն պահանջները (151 հոդվ.), որոնք ներկայացվում են Հանրապետության մյուս համայնքների ավագանու անդամների թեկնածուներին (132 հոդվ.):

Մայրաքաղաքի ավագանու հերթական և արտահերթ ընտրությունները նշանակվում են **ՀՀ կառավարության որոշմամբ:** Հերթական ընտրություններն անցկացվում են ավագանու լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 40, և ոչ ուշ, քան 30 օր առաջ, իսկ արտահերթ ընտրությունները՝ ավագանու լիազորությունների ժամկետը կրճատելու որոշումը և ավագանին արձակելու վերաբերյալ կառավարության միաժամանակյա որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 40 օր հետո՝ կիրակի օրը: Արտահերթ ընտրությունների օրվա մասին հանրային ռադիոհեռուստատեսությամբ հանդես է գալիս ԿԸՀ-ի նախագահը՝ քվեարկությունից ոչ ուշ, քան 29 օր առաջ: Հերթական և արտահերթ ընտ-

րությունների կապակցությամբ ընտրական ցուցակների գրանցման, ընտրական տեղամասերի և տեղամասային կենտրոնների սահմանման ժամկետներն ու կարգը նախատեսված են Օրենսգրքի 152-153 հոդվածներով:

Ավագանու անդամի թեկնածուներն առաջադրվում են կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված ընտրական ցուցակներով, որոնք ներկայացվում են ԿԸՀ՝ գրանցման: Ընդ որում, ընտրական ցուցակը պետք է ընդգրկի առնվազն 25 թեկնածու և չի կարող գերազանցել Երևանի ավագանու անդամի՝ Օրենսգրքով սահմանված մանդատների թվի եռապատիկը, պահպանելով Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներ առաջադրելու վերաբերյալ 108 հոդվածով նախատեսված յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թվի հարաբերակցությունը:

Ընտրական ցուցակների գրանցումը, մերժումը, անվավեր և ուժը կորցրած ճանաչելը, ինչպես նաև դրանց բողոքարկման հարցերը կանոնակարգվում են Օրենսգրքի 109-113 հոդվածներով սահմանված կարգով:

Ավագանու թեկնածու գրանցվելուց հետո պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողներն ու պաշտոնատար անձինք, բացառությամբ քաղաքական և հայեցողական պաշտոն գրադեցնողների, մինչ նախընտրական քարոզչության ավարտը ժամանակավորապես ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց, ինչպես նաև գորահավաքներից, ժամկետային զինձառայությունից և ուսումնավարժական հավաքներից: Ինչպես թեկնածուն, այնպես էլ կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը քվեարկությունից ոչ ուշ, քան 10 օր առաջ սահմանված կարգով **կարող են ինքնաքաղաքակ հայտնել,** իսկ թեկնածուն՝ նաև քվեարկության օրվանից հետո:

Օրենսգրքի 162 հոդվածին համապատասխան, ավագանու ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզչությունը իրականացվում է 18-22 հոդվածներով սահմանված կարգով ու ժամկետներում և այս կապակցությամբ բացում են նախընտրական հիմնադրամ, որը համարվում է Օրենսգրքի 25 հոդվածում նախատեսված կամավոր մուծումներից: Կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը հիմնադրամում կարող են կատարել միակազույն աշխատավարձի մինչև 10000-ապատիկի չափով մուծում, իսկ ֆիզիկական անձը՝ մինչև 100-ապատիկի չափով: Ընդամեն, նախընտրական քարոզչության ֆինանսավորման համար իրավունք ունեն ծախսել միակազույն աշխատավարձի մինչև 75000-ապատիկը չգերազանցող գումար:

Ավագանու ընտրությունների քվեաթերթիկում, ինչպես Ազգային ժո-

դովի համաձայնակաճան ընտրակարգով ընտրությունների դեպքում (124 հոդվ.), նշվում են կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների անվանումները՝ այբբենական հերթականությամբ և ընտրական ցուցակի առաջին երեք թեկնածուների ազգանունները, անունները և հայրանունները:

Երևան քաղաքի ավագանու ընտրությունների ավարտից հետո ԿԸՀ-ն Օրենսգրքի 75 հոդվածով սահմանված կարգով ու ժամկետներում ամփոփում է ավագանու անդամների ընտրության արդյունքները և ընդունում համապատասխան որոշումներ:

Ավագանու ընտրությունների արդյունքները ամփոփելուց հետո *մանդատները բաշխվում են այն կուսակցությունների,* կուսակցությունների դաշինքների թեկնածուների ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների գումարի առավելագույն կուսակցությունների դեպքում՝ 6 տոկոս, իսկ կուսակցությունների դաշինքների դեպքում՝ 8 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ: Եթե ընտրությանը մասնակցել է երեք կուսակցություն, կուսակցությունների դաշինք, ապա մանդատների բաշխմանը մասնակցում են բոլորը:

Եթե մանդատների բաշխման արդյունքով կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից *մեկը ստանում է տեղերի 40 տոկոսից ավելին,* սակայն ոչ բացարձակ մեծամասնությունը, ապա տեղերի բացարձակ մեծամասնությունը տրվում է այդ կուսակցությանը, կուսակցության դաշինքին: Եթե 40 տոկոսից ավելին ստանում են վերջիններիցս երկուսը, ապա տեղերի բացարձակ մեծամասնությունը տրվում է այն կուսակցությանը, կուսակցության դաշինքին, որը ստացել է առավել թվով մանդատներ:

Մնացած մանդատները դրանց բաշխմանը մասնակցելու իրավունք ստացած մյուս կուսակցությունների ընտրական ցուցակների միջև բաշխելուց հետո ավագանու անդամ ընտրված թեկնածուների վերաբերյալ ԿԸՀ-ը կազմում է արձանագրություն: Եթե վերջինս գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել Օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել քվեարկության ընթացքում կատարված խախտումները, իսկ եթե այդ ճանապարհով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա անվավեր է ճանաչում ավագանու ընտրությունները և նշանակում այդ ընտրությունների վերաքվեարկություն:

Օրենսգրքի համաձայն՝ վերաքվեարկությունն անցկացվում է մեկ անգամ և դրանից հետո ընտրությունն անվավեր ճանաչվելու դեպքում, սահմանված կարգով ու ժամկետներում նշանակվում է նոր ընտրություն:

Ընտրությունների կազմակերպման և անցկացման ցանկացած փուլում ընտրությունների վերաբերյալ օրենսդրության խախտումների դեմ պայքարի նպատակով Օրենսգիրքը նախատեսում է մի շարք կազմակերպական, նյութական և իրավաբանական երաշխիքներ:

Այսպես ընտրական գործընթացի բոլոր փուլերում ընտրական *օրենսդրության կատարումն* ապահովում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ընտրական հանձնաժողովները, կենտրոնական ընտրական հանձնաժողովին աղընթեր վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը, վստահված անձինք, դիտորդները, միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական որոշ կազմակերպություններ, լրատվական միջոցների ներկայացուցիչները, ինչպես նաև ՀՀ ոստիկանության կենտրոնական և տարածքային մարմինները, դրանց ծառայություններն ու ստորաբաժանումներն և դատարանները: Օրենսգրքի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք, օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում, պատասխանատվություն են կրում ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման օրինականության համար:

Ընտրությունների վերաբերյալ ՀՀ գործող օրենսդրությունը նախատեսում է *պատասխանատվություն* քաղաքացիների ընտրական իրավունքների խախտման համար: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանել *քվեարկության կամ դրան նախորդող օրը* նախընտրական քարտզրություն կատարելու, ընտրական հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելու, ընտրական փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելու, ՁԼՄ-ներով նախընտրական քարտզրության իրականացման համար օրենքով սահմանված կարգը խախտելու, թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշերի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների հրապարակման համար օրենքով սահմանված կարգը խախտելու և այլնի համար²⁸:

²⁸ Տես ՀՀ ՊՏ 36 (839), 16.06.11:

ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխան, քրեական պատասխանատվություն է նախատեսված քաղաքացու ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու, ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելու, ընտրողների ցուցակները կազմելու, տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելու, մեկից ավելի անգամ կամ այլ անձի վտխարեն քվեարկելու, քվեարկության գաղտնիությունը խախտելու, ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար և այլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

§ 1. Հայաստանի Հանրապետության Նախագահի իրավական կարգավիճակը պետական իշխանության մարմինների համակարգում

Պետության ղեկավարի պաշտոնը գոյություն ունի կառավարման բոլոր ձևերում: Միապետություններում դա ժառանգական միապետն է, հանրապետություններում՝ ընտրովի նախագահը: Պետությունը կարիք է զգում այնպիսի ինստիտուտի առկայության, որն ապահովի սահմանադրական կարգ ու կանոնը, իշխանության կառուցակարգերի հաջորդականությունը (շարունակականությունը), ինչպես նաև միջազգային հարաբերություններում՝ բարձրագույն ներկայացուցչությունը:

Այդ ամենը կոչված է իրականացնելու պետության ղեկավարը (գլուխը), որը սովորաբար հանդես է գալիս որպես **պետության յուրօրինակ խորհրդանիշ և ժողովրդի պաշտոնական ներկայացուցիչ**: Պետության ղեկավարը կոչված է համախմբել և ամրակայել պետական իշխանությունը, սահմանադրական եղանակով ապահովել պետական իշխանության մարմինների միջև ծագող բախումների լուծումը:

Կառավարման տարրեր ձևերում պետության ղեկավարի լիազորությունները տարբեր են: Որոշ երկրներում պետության ղեկավարի գործառնությունները **սոսկ ձևական են**, մյուսներում՝ մարմնավորում են **իրական իշխանությունը**: Սակայն, բոլոր պայմաններում, պետության ղեկավարը պահպանում է որոշակի սեփական լիազորություններ՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին աշխարհում, և այդ իր լիազորություններն իրականացնելիս ոչ մեկի կողմից վերահսկելի և ոչ մեկի առջև հաշվետու չէ:

Պետության ղեկավարի կոնկրետ կարգավիճակը և երկրի կյանքում նրա ունեցած փաստացի դերը յուրաքանչյուր երկրում պայմանավորված են նաև տվյալ **երկրի քաղաքական իրավիճակով և պատմական ավանդույթներով**:

Խորհրդարանական միապետության երկրներում (Մեծ Բրիտանիա, Ճապոնիա, Բելգիա և այլն), օրինակ, պետության ղեկավարը **«թագավորում է, բայց չի կառավարում»**, և նրա գործառնություններն արտաքինա-

պես սուկ ներկայացուցչական են: Դրանք նույնատիպ են մաս խորհրդարանական հանրապետություններում (ԳՖՀ, Իտալիա և այլն): Սակայն, եթե պետությունն ընտրում է նախագահական (ԱՄՆ) կամ կիսանախագահական (Ֆրանսիա, Հայաստան) հանրապետության ձևը, ապա այն գիտակցաբար ստեղծում է հանրապետության Նախագահի ուժեղ իշխանություն:

Պետական իշխանության մարմինների համակարգում *պետության ղեկավարի* կարգավիճակը մեծ չափով պայմանավորված է երկրի *օրենսդիր և գործադիր* իշխանության մարմինների հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթով: Ժողովրդավարական կարգ ունեցող պետությունում, որպես կանոն, գործում է իշխանությունների բաժանման սկզբունքը, որի համաձայն՝ ցանկացած պաշտոնատար անձի իշխանական լիազորությունները վերաբերում են երեք իշխանություններից (օրենսդիր, գործադիր և դատական) որևէ մեկին: Մինչդեռ պետության ղեկավարի իրավասությունն առնչվում է բոլոր երեք իշխանություններին:

Իրենց առանձնահատկությամբ էապես տարբերվում են պետության ղեկավարի և գործադիր իշխանության մարմինների փոխհարաբերությունները: Նույնիսկ խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում, որտեղ պետության ղեկավարը չի մտնում երեք իշխանություններից և ոչ մեկի մեջ, այնուամենայնիվ, ինչպես ընդունված է իրավագետների կողմից, *պետության գլուխը հենվում է գործադիր իշխանության թևի վրա:*

Դրա հետ մեկտեղ, երկրների հիմնական օրենքները սահմանում են պետության ղեկավարի *հատուկ կարգավիճակը*, որը կառուցված է նրա սեփական լիազորությունների՝ սահմանադրության իրականացման երաշխավորը լինելու և բարձրագույն ներկայացուցչությունն իրականացնելու պարտավորությունների վրա: Առավել ևս *կիսանախագահական հանրապետություններում*՝ Նախագահը, լինելով պետության գլուխ, չնայած չի մտնում իշխանության որևէ ճյուղի մեջ, սակայն ավելի սերտ կապված է գործադիր իշխանության հետ և նրա որոշ լիազորություններ թույլ են տալիս ասել, որ որոշ իրավիճակներում վերջինս կարող է հանդես գալ որպես գործադիր իշխանության ղեկավար:

Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգավիճակը ամրագրված է Սահմանադրության 3 գլխում: Այդ գլխի 49 հոդվածը հռչակում է, որ Հանրապետության Նախագահը պետության գլուխն է: Նա հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր,

գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Բացի դրանից, նշված հոդվածը Հանրապետության Նախագահին ճանաչում է Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավոր:

Ամրագրելով Նախագահի, որպես պետության ղեկավարի (գլխի), կարգավիճակին բնորոշ կողմերը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 49 հոդվածը ընդհանրացված ձևով նախատեսում է այդ կարգավիճակի հետ կապված *հիմնական գործառնությունները*: Դրանք, ըստ էության, վերաբերում են պետության և հասարակության կենսագործունեության հիմունքներին: Մասնավորապես, Հանրապետության Նախագահը հետևում է *Սահմանադրության պահպանմանը*: Դա նշանակում է, որ Նախագահը անձնական պատասխանատվություն է կրում, որպեսզի Սահմանադրության դրույթների պահպանման կառուցակարգերը գործեն անխափան, և դրանց իրագործումը այս կամ այն պատճառներով չխաթարվի:

Այնուհետև, Նախագահը *Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է*, ապահովում է *պետական իշխանության մարմինների համաձայնեցված գործունեությունը և փոխգործակցությունը* (բնականոն գործունեությունը): Այդ խնդիրները իրականացնելիս՝ Նախագահը կարող է օգտագործել միայն իրեն ամրագրված սահմանադրական լիազորությունները և գործել միմիայն Սահմանադրության շրջանակներում:

Դա վերաբերում է Նախագահի մաս այնպիսի լիազորությանը, ինչպիսին է կառավարության հետ համատեղ երկրի արտաքին քաղաքականության մշակումը և իրականացումը, դրա ընդհանուր ղեկավարումը: Այդ քաղաքականությունը ձևավորվում է Սահմանադրությանը և օրենքներից համապարտասխան, ուստի Նախագահի գործունեությունն այդ բնագավառում չի կարող հակասել դրանց:

Որպես պետության գլուխ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահն *ուղերձով դիմում է Ազգային ժողովին և ժողովրդին*, որոնցում ձևակերպվում են երկրի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Դրանց հիման վրա պետական մարմինները, պատգամավորները, կուսակցությունները և մյուս հասարակական կազմավորումները *ճշգրտում են իրենց գործունեության ձևերն ու մեթոդները*: Այդ ուղերձների շնորհիվ ապահովվում է մաս պետական կառույցների փոխգործունեության ներդաշնակությունը, ինչպես մաս դրանց մկատմամբ հասարակական և սոցիալական շարժումների ազդեցությունը:

Պետության գլխի կարգավիճակի արդյունք է մաս այն, որ Նախագահը Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է **երկրի ներսում և միջազգային հարաբերություններում:**

Նախագահի կարգավիճակի բնութագրման համար կարևոր հանգամանք է Սահմանադրության մեջ Հանրապետության Նախագահին նվիրված գլխի բուն տեղը: Այդ գլուխն է բացում Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններին նվիրված ինստիտուտների շարքը: Դա անմիջական իրավական ապացույցն է այն իրողության, որ Հանրապետության Նախագահը ուղղակիորեն ներառված չէ իշխանության երեք ճյուղերից (օրենսդիր, գործադիր, դատական) որևէ մեկում: Այդ հանգամանքը հանդիսանում է Նախագահի կողմից Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների փոխհամաձայնեցված գործունեությունն ապահովող կարևոր նախադրյալ:

Վերը նշվածից պարզորոշ հետևում է, որ Հանրապետության Նախագահը **առանձնահատուկ տեղ է զբաղեցնում պետական իշխանության մարմինների համակարգում և անմիջականորեն չի մտնում այդ իշխանության ճյուղերից և ոչ մեկի մեջ:**

Սակայն այդ դրույթը հիմք չի տալիս նախագահական իշխանությունը դիտել որպես իշխանության **առանձին ճյուղերից վեր դասված իշխանություն:** Իշխանության թևերի մարմիններից յուրաքանչյուրն իրականացնում է իր սահմանադրական լիազորությունները, գործում է իշխանության մյուս մարմինների հետ համագործակցված: Նախագահն իր լիազորություններն իրականացնում է Սահմանադրության շրջանակներում՝ փոխգործակցելով Ազգային ժողովի և ՀՀ կառավարության հետ:

Դրա հետ միասին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը բովանդակում է երաշխիքների մի համակարգ, որը խոչընդոտում է Նախագահին դառնալ ավտորիտար կառավարիչ: Այդ երաշխիքներն են՝ ա) **Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունների սահմանափակումը որոշակի ժամանակահատվածի շրջանակներում (հնգամյա ժամկետով),** բ) **նրա ընտրության համաժողովրդական, ուղղակի կարգը,** գ) **երկու ժամկետից ավելի Նախագահի պաշտոնն անընդմեջ զբաղեցնելու անթույլատրելիությունը,** դ) **պաշտոնանկության հնարավորությունը,** ե) **սահմանադրական դատարանի որոշման հիման վրա նրա նորմատիվ ակտերը Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչվելու հնարավորությունը** և այլն:

§ 2. Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրության և լիազորությունների դադարման հիմքերն ու կարգը

Նախագահի ընտրության կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (հոդվ. 50, 51, 52) և դրա հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքով (14–20 գլուխներ): Սահմանադրության համաձայն՝ պետության ղեկավարի ընտրությունն իրականացվում է **ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի իրականացման հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:**

Սահմանադրությունն ամրագրել է այն **պահանջները**, որոնց պետք է համապատասխանի Նախագահի թեկնածուն: Պետության ղեկավարի պատասխանատու գործառնություններն իրականացնելու համար Նախագահի թեկնածուն պետք է ունենա որոշակի **կենսակործ:** Այդ պատճառով էլ սահմանված է, որ Նախագահ կարող է ընտրվել **երեսունհինգ տարին լրացած** Հայաստանի Հանրապետության քաղաքացին: Բացի դրանից, Նախագահի թեկնածուն **վերջին տասը տարում պետք է մշտապես բնակված լինի Հայաստանի Հանրապետությունում, հանդիսանա նրա քաղաքացին և ունենա ընտրական իրավունք:**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ի տարբերություն մի շարք այլ երկրների սահմանադրությունների, չի նշում տարիքային վերին սահմանային ցեմը: Դա բացատրվում է նրանով, որ, ինչպես վկայում է արտասահմանյան բազմաթիվ երկրների փորձը, զգալիորեն հաստնացած տարիքում մարդը կարող է պահպանել առողջությունը, եռանդի, կազմակերպական ընդունակությունների բավականին բարձր մակարդակ՝ արդյունավետորեն օգտագործել իր քաղաքական հարուստ փորձը:

Հայաստանի Հանրապետությունում **վերջին տասը տարում մշտապես բնակվելու** պահանջը կարելի է պատճառաբանել նրանով, որ Նախագահի թեկնածուն պետք է քաջաժանոթ լինի երկրի իրավիճակին, նրա հոգսերին ու նվաճումներին, իսկ ընտրողները պետք է ճանաչեն նրան:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը մանրամասն կարգավորում է Նախագահի ընտրության նշանակման, թեկնածուների առաջադրման և գրանցման, նախընտրական քարոզչության անցկացման, համապատասխան միջոցառումների ֆինանսավորման, տարբեր մակարդակի ընտրական հանձնաժողովների կազմավորման և աշխատանքի կազմակերպման, դրանց որոշումների և գործողությունների բողոքարկման, ընտրացուցակների կազմման, քվեարկության, դրա արդ-

յունքների անփոփման, հրապարակման և ընտրական այլ գործընթացների կարգը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է, որ նույն անձը չի կարող *ավելի, քան երկու անգամ անընդմեջ ընտրվել* Հանրապետության Նախագահի պաշտոնում: Այդ սահմանափակումը նպատակ ունի խոչընդոտել կառավարող անձանց կողմից անփոփոխ «ընտրախմբերի» ձևավորմանը, կայուն մեկուսախմբերի ի հայտ գալուն և գոյատևմանը, ճանապարհ բացել իշխանության մարմիններում թարմ ուժերի, քաղաքական գործիչների և նոր սերնդի առաջամարտիկների ընդգրկման համար:

Նախագահի ընտրությունն անցկացվում է նրա լիազորությունների ավարտից հիսուն օր առաջ (51 հոդվ.): Ընտրություններն անցկացնելիս *Հանրապետության տարածքը հանդես է գալիս որպես մեկ միասնական միասնանդատ ընտրատարածք*: Ընդ որում, ընտրությունների ընթացքում սպառնալից են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված քաղաքացիների ընտրական իրավունքի բոլոր երաշխիքները:

Հանրապետության նորընտիր Նախագահն իր պաշտոնն ստանձնում է Հանրապետության նախորդ Նախագահի լիազորությունների ավարտման օրը: Նա պաշտոնն ստանձնում է Ազգային ժողովի *հատուկ նիստում, ժողովրդին տրված հետևյալ երդմամբ*. «Ստանձնելով Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները՝ հարգել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ապահովել Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը՝ ի փառս Հայաստանի Հանրապետության և ի բարօրություն Հայաստանի Հանրապետության ժողովրդի» (Սահմանադրության 54 հոդվ.):

Պաշտոնը ստանձնելուց հետո նրա անձը ձեռք է բերում անձեռնմխելիության կարգավիճակ: Հանրապետության Նախագահն իր լիազորությունների ժամկետներում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար (Սահմանադրության 56.1 հոդվ.):

Սահմանադրությունը պատշաճ մակարդակով կարգավորում է նաև Հանրապետության Նախագահի *լիազորությունների դադարման հիմնախնդիրը*՝ նպատիչ կերպով թվարկելով բոլոր այն հիմքերը, որոնց առկայության դեպքում վաղաժամկետ կարող են դադարել նրա լիազորությունները: Այդպիսի հիմքերի թվում վկայակոչվում են՝

ա) Հանրապետության Նախագահի հրաժականը, բ) առողջական անբավարար վիճակը, գ) պաշտոնանկությունը, դ) մահը և ե) քաղաքացիությունը փոխելը կամ կորուստը:

Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքը հստակ սահմանում է *Նախագահի հրաժարականի* արարողակարգը: Նա իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողով, որից հետո *տասնօրյա ժամկետը* լրանալուն պես, *երկօրյա ժամկետում* հրաժարականը կրկին ներկայացնելու դեպքում Հանրապետության Նախագահի հրաժարականը համարվում է ընդունված, և Սահմանադրությամբ նախատեսված կարգով ու ժամկետներում անցկացվում է արտահերթ ընտրություն (58 հոդվ.):

Դրա հետ միասին, կարելի ենթադրել, որ սահմանված ժամկետում եթե Հանրապետության Նախագահը չի կրկնում իր հրաժարականը, նշանակում է, որ նա ետ է վերցնում այն և շարունակում է իր նախագահական գործունեությունը:

Սահմանադրությամբ մանրամասն կարգավորվում է նաև *առողջական խնդիրների հետ կապված* պարտականությունների դադարեցման հարցը: Մասնավորապես, Սահմանադրության 59 հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահի *ժանր հիվանդության* կամ նրա լիազորությունների կատարման համար այլ *անհատաբանարելի խոչընդոտների* առկայության դեպքում, որոնք տևականորեն անհնար են դարձնում նրա լիազորությունների կատարումը, կատարությունը դիմում է Ազգային ժողով՝ առաջարկելով քննարկել Նախագահի լիազորությունների դադարեցման հարցը: Դրա հիման վրա Ազգային ժողովը պատգամավորների *ընդհանուր քվի ձայների մեծամասնությամբ* ընդունված որոշմամբ դիմում է սահմանադրական դատարան՝ Հանրապետության Նախագահի առողջական վիճակի և նրա լիազորությունների կատարման համար այլ անհատաբանարելի խոչընդոտների առկայության վերաբերյալ եզրակացություն ստանալու պահանջով:

Դրական պատասխանի դեպքում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր քվի ձայների առնվազն *երկու երրորդով* որոշում է ընդունում Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին: Իսկ եթե սահմանադրական դատարանի եզրակացությամբ Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության հիմքերը բացակայում են, ապա կատարությունը չի կարող նման առաջարկով դիմել Ազգային ժողով:

Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը պաշտոնանկության *ճանապարհով*՝ Սահ-

մանադրությունը կապում է նրա կողմից *պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործություն կատարելու հետ*: Այդ ինստիտուտը, որը արտասահմանյան սահմանադրական իրավունքում հայտնի է *«հիմ-պիչմենտ»* անվամբ, գործում երաշխիք է պետության ղեկավարի կողմից իշխանությունը չարաշահելու և սահմանադրական կարգը խախտելու դեմ: Այն մշտապես ենթադրում է բարդ ընթացակարգ և չափազանց հազ-վադեպ է կիրառվում (օրինակ, ԱՄՆ-ում ավելի քան երկուհարյուրամյա պատմության ընթացքում գրանցվել է իմպիչմենտի կարգով Նախագա-հին պաշտոնանկ անելու ընդամենը երկու փորձ, և երկուսն էլ ավարտվել են անարդյունավետ):

Հանրապետության Նախագահի պաշտոնանկության ընթացակար-գի սկիզբը շաղկապված է *մեկ պարտադիր պայմանի կատարման հետ*: Ազգային ժողովի կողմից Նախագահին պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործություն կատարելու մեջ մեղադրելը պետք է հաստատվի ՀՀ սահմանադրական դատարանի եզրակացությամբ: Իսկ բուն պաշտոնանկության ընթացակարգը բաղկացած է երկու փուլից.

1) Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ դիմում է ՀՀ սահմանադրական դատարան՝ վերջինիս եզրակացությունն ստանալու համար.

2) Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մասին ո-րոշումը կայացվում է սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայ-ների երկու երրորդով: Սակայն, եթե սահմանադրական դատարանի եզ-րակացությամբ նշվում է որ, Հանրապետության Նախագահին պաշտո-նանկ անելու հիմքերը բացակայում են, ապա հարցը համվում է Ազգային ժողովի քննարկումից:

Նախագահի պաշտոնանկությունը դադարեցնում է նրա կողմից իր պարտականությունների կատարումը: Նախկին Նախագահը կորցնում է իր սահմանադրական անձեռնմխելիությունը և, որպես սովորական քա-ղաքացի, կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության:

Ինչ վերաբերվում է *մահվան քաղաքացիությունը* փոխելու կամ *կորցնելու դեպքերում* Հանրապետության Նախագահի լիազորություննե-րի վաղաժամկետ դադարեցման ընթացակարգին, ապա դրա մասին ինչ-պես երկրի Հիմնական օրենքում, այնպես էլ ԱԺ կանոնակարգում ոչինչ չի ամրագրված: Սակայն, բոլոր այն դեպքերում, երբ Հայաստանի Հան-րապետության Նախագահը ի վիճակի չէ կատարել իր պարտականու-թյունները, դրանք ժամանակավորապես կատարում է Ազգային ժողովի

նախագահը, իսկ վերջինիս կողմից այդ պարտականությունների կա-տարման անհնարինության դեպքում՝ վաղապետը, ինչը տրամաբանա-կան է, քանի որ Հայաստանի Հանրապետությունում բացակայում է փոխնախագահի պաշտոնը:

Ազգային ժողովի նախագահը կամ վարչապետը Հանրապետության Նախագահի պաշտոնակատար են դառնում Նախագահի մահվան, հրա-ժարականի կամ առողջական վիճակի պատճառով իր պարտականու-թյունները կատարելու անընդունակության կապակցությամբ լիազորու-թյունների վաղաժամկետ դադարեցման դեպքերում: Նշված հնարավոր դեպքերում Նախագահի պարտականությունների կատարումը հիմնվում է հենց Սահմանադրության վրա և այդ իսկ պատճառով որևէ մեկի կողմից պաշտոնակատարի նշանակում չի պահանջվում: Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում նշանակվում է արտահերթ ընտրություն և ժողովուրդն ընտրում է Հանրապետության նոր Նախագահ:

§ 3. Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունները

Հանրապետության Նախագահը պետական կյանքի տարբեր ո-լորտներում օժտված է լայն լիազորություններով: Որոշ դեպքերում այդ լիազորությունները կրում են *անհատական բնույթ*, այսինքն՝ պատկա-նում են միայն իրեն, այլ դեպքերում՝ առնչվում են պետական իշխանու-թյան *մյուս մարմինների* լիազորություններին: Նախագահի լիազորու-թյունների հանրազումարը հավասարակշռված է պետական իշխանության այլ մարմինների լիազորություններով՝ կազմելով համագործակցության և փոխադարձ հակակշիռների մի համակարգ, որի նպատակն է հնարավո-րինս բացառել միակողմանի ավտորիտար լուծումները:

Ըստ իրավազորության առարկաների և պետական իշխանության այլ մարմինների հետ փոխհարաբերությունների յուրահատկության՝ Նա-խագահի լիազորությունները կարող են ստորաբաժանվել հետևյալ հիմ-նական խմբերի. ա) պետության գլխի գործառնությունների իրականաց-ման, բ) օրենսդիր իշխանության, գ) գործադիր իշխանության, դ) դատա-կան իշխանության, ե) պաշտպանության ոլորտներում և զ) արտակարգ լիազորություններ:

1. *Անկախ պետության կառավարման ձևից* (խորհրդարանական, նախագահական, թե՛ խառը), Նախագահը, ամենից առաջ, *պետության*

գլուխն է, նրա ղեկավարը, ուստի նրա իրավական վիճակի միջուկն են կազմում պետության գլխի համար նրան վերապահված լիազորությունները: Այդ լիազորությունները, ինչպես արդեն ասվեց, ունեն **անհատական**, մյուսական բնույթ, իսկ պետական իշխանության տարբեր թևերի վերաբերյալ նրա լիազորություններն ունեն առավելապես **կազմակերպական**, փոխգործակցության բնույթ:

Որպես պետության գլուխ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահն ունի լայն լիազորություններ **արտաքին հարաբերությունների ոլորտում**: Իր սահմանադրական կարգավիճակով Նախագահը միջազգային հարաբերություններում պետության գլխավոր ներկայացուցիչն է և օժտված է համապատասխան լիազորություններով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55 հոդվածի (7-րդ կետ) համաձայն՝ Հանրապետության Նախագահը Հայաստանը ներկայացնում է միջազգային հարաբերություններում: Այսինքն, նա մարմնավորում է Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտ, որպես ինքնիշխան և անկախ երկիր: Դա, առաջին հերթին, նշանակում է, որ միայն Նախագահն է իրավասու ստորագրել միջազգային պայմանագրերը, Հայաստանի անունից մասնակցել միջպետական բանակցություններին կամ այն համձմարարել մեկ այլ պետական պաշտոնատար անձի:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (55 հոդվ., 7-րդ կետ) Նախագահին է վերապահում նաև **երկրի արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը**: Դրա հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հանրապետության Նախագահի հետ համատեղ **մշակում է** երկրի արտաքին քաղաքականությունը (հոդվ.85) և անմիջականորեն ղեկավարում դրա կենսագործումը:

Արտաքին քաղաքական գործունեությունը Հանրապետության Նախագահին իրականացնում է, անհրաժեշտության դեպքում, **արտաքին գործերի նախարարության միջոցով**, իսկ առավել սկզբունքային հարցերով՝ անձամբ ուղղակի շփվում է պետությունների ղեկավարների հետ՝ այցելելով արտասահմանյան երկրներ, ընդունելով վերջիններիս ղեկավարներին, վարելով նրանց հետ բանակցություններ, այցելելով ազդեցիկ միջազգային կազմակերպություններ, ուղղակի հեռախոսային բանակցություններ վարելով սահմանակից և այլ պետությունների ղեկավարների և վարչապետների հետ, մասնակցելով կարևորագույն միջազգային կազմակերպությունների, հատկապես ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդատվություններին:

Դրա հետ մեկտեղ, հայտնի է, որ Սահմանադրության 89 հոդվածի (6-րդ կետ) համաձայն՝ արտաքին քաղաքականության իրականացումն ապահովում է **Հայաստանի կառավարությունը**: Դա վկայում է Նախագահի և կառավարության որոշ լիազորությունների համատեղելիության մասին, ինչը ընդունված է նաև արտասահմանյան կիսամախազահական կառավարման ձևի բազմաթիվ հանրապետություններում: Սակայն, բոլոր դեպքերում, Նախագահը պահպանում է արտաքին քաղաքական գործընթացներում **նախաձեռնության իրավունքը** և երբեմն, կառավարության դիրքորոշումից անկախ, միջազգային հարաբերությունների ոլորտում իր հայեցողությամբ հանդես է գալիս ինքնուրույն նախաձեռնություններով:

Որպես պետության գլխի, Նախագահի լիազորությունների իրականացման առավել կարևոր ոլորտներից է **միջազգային պայմանագրերի կնքումը**: Նախագահը Հայաստանի Հանրապետության անունից անձամբ է ստորագրում կարևոր միջազգային պայմանագրերը: Դրա համար նրան հարկավոր չէ լիազորող փաստաթուղթ: Ընդհակառակը, Նախագահը, անհրաժեշտության դեպքում, պայմանագիր ստորագրելու համար իր անունից կարող է լիազորել այլ անձի՝ նրան տալով համապատասխան փաստաթուղթ (լիազորագիր):

Անհրաժեշտ է նշել, որ հանրապետության որևէ պետական մարմնի ակտով նախատեսված չէ, թե Նախագահը պարտավոր է միջազգային պայմանագրի բովանդակությունը **համաձայնեցնել** որևէ պետական մարմնի հետ: Իհարկե, նա կարող է խորհրդակցել Ազգային ժողովի ղեկավարության, համապատասխան հանձնաժողովի անդամների, արտաքին գործերի նախարարի, վարչապետի հետ: Սակայն ոչ խորհրդարանը, ոչ կառավարությունը սահմանադրական լիազորություններ չունեն բանակցային գործընթացին միջամտելու:

Հայաստանի Հանրապետության **Ազգային ժողովը** միջազգային պայմանագրի բովանդակության նկատմամբ իր վերաբերմունքը կարող է դրսևորել միայն այն բանից հետո, երբ այդ պայմանագիրն արդեն կնքվել է Նախագահի կողմից և **վավերացման նպատակով** հասցեագրվել Ազգային ժողովին: Այդ դեպքում հանրապետության խորհրդարանը կարող է հավանության արժանացնել կամ մերժել այդ պայմանագիրը, կամ էլ դրա ուժի մեջ մտնելը պայմանավորել տարբեր ուղղումներով ու վերապահումներով: Գործնականում, նման դեպքերում Նախագահը գերադասում է Ազգային ժողովի հետ «հաշտությանը» լուծել հարցը:

Խորհրդարանի կողմից միջազգային պայմանագիրը վավերացվելուց հետո, Նախագահը ստորագրում է դրա վավերագիրը, որից հետո այն հրապարակվում և ուժի մեջ է մտնում: Հանրապետության Նախա-

գանը իրավասու է նաև հաստատելու, կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը:

Պետության գլխի կարգավիճակին հատուկ ուղորտ է **պատերազմի և խաղաղության հարցերի լուծումը**: Արտաքին քաղաքական ոլորտի այդ կարևոր հարցի վերաբերյալ որոշում ընդունելու պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում **վերապահված է խորհրդարանին**: Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին: Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Հանրապետության նախագահը (Սահմանադրության 81 հոդվ., կետ 3):

Պետության գլխի անհատական (բացառիկ) լիազորություններից է **դեսպանների և արտասահմանյան պետություններում տվյալ երկրի այլ լիազոր ներկայացուցիչների նշանակումը**: Հանրապետության Նախագահի այդ իրավունքը ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55 հոդվածում (կետ 8), որի համաձայն՝ Հանրապետության Նախագահը նշանակում ու հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին: Նախագահը իր այդ լիազորությունն իրականացնում է **արտաքին գործերի նախարարի հետ մեկտեղ**՝ նշանակում է դեսպաններ, հյուպատոսներ, միջազգային կազմակերպություններում և միություններում պետության ներկայացուցիչներ, միջազգային բանակցություններին և գիտաժողովներին մասնակցող պատվիրակությունների անդամներ և այլն:

Այդ լիազորության անբաժան մասն (շարունակությունն) է կազմում Նախագահի կողմից Հայաստանի Հանրապետությունում աշխատող օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների **հավատարմագրերի և հետկանչագրերի ընդունումը**: Այդ հավատարմագրերն օտարերկրյա պետությունների դեկավարների կողմից հասցևագրվում են Հայաստանի Հանրապետության դեկավարին:

Հավատարմագրերում նշվում է, որ այն ներկայացնող անձին հանձնարարված է ներկայացնել իր պետության շահերը, և որ նրա խոսքերին և գործողություններին պետք է հավատ ընծայել: Հավատարմագրերը հանձնելիս, սովորաբար, կարող է ներկա լինել (թեև դա պարտադիր չէ) արտաքին գործերի նախարարը: Դիվանագիտական ներկայացուցիչը հայտնում է, թե որ պետությունն է ինքը ներկայացնում, Հանրապետության Նախագահին հանձնում է հավատարմագիրն ու ներկայացնում իր

ամենամտ աշխատակիցներին: Հավատարմագիրն ընդունելուց հետո, Հայաստանի Նախագահը հակիրճ գրույց է ունենում նոր դեսպանի հետ:

Այսպիսով, Նախագահի պետության առաջին բարձրաստիճան ներկայացուցիչն է, որ պաշտոնական փոխհարաբերություններ է հաստատում երկիր ժամանած օտարերկրյա պետության դիվանագիտական ծառայության ղեկավարի և նրա աշխատակիցների հետ: Նույն արարողակարգով, ժամկետը ավարտվելուց կամ այլ պատճառաբանությամբ երկրից հեռանալիս, այս կամ այն երկրի դեսպանը Հայաստանի Հանրապետության Նախագահին է ներկայացնում իր երկրի դեկավարի **հետկանչագիրը**:

Այլ պետությունների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ որոշման ընդունումը մույնպես վերապահված է Հանրապետության Նախագահի իրավասությանը: Նախագահը, մինչև օտարերկրյա պետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու կամ այդ հարաբերությունները վերականգնելու մասին որոշում ընդունելը, փորձագետների և քաղաքագետների, ինչպես նաև օրենսդիրների հետ լայնածավալ խորհրդակցություններ է անցկացնում և վերջիններին կարծիքները կարող է հանգամանորեն հաշվի առնել: Սակայն դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ որոշում ընդունելու պատասխանատվությունը կրում է Նախագահը:

Հայաստանի Հանրապետության Նախագահի, որպես պետության գլխի, կարգավիճակը ձևավորող լիազորությունների թվում առանձնակի կարևորվում է այն, որ նա օրենքով սահմանված կարգով լուծում է ՀՀ քաղաքացիության և քաղաքական ապաստան տալու հետ կապված հարցերը (հոդվ. 55, կետ 15):

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահն իր հրամանագրով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խնդիրն ձեռքբերման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման հարցերը, սահմանում է քաղաքացիության վերաբերյալ դիմումների քննարկման կարգը:

Հանրապետության Նախագահին է վերապահված նաև **քաղաքական ապաստան տալու իրավունքը**: Նրա կողմից քաղաքական ապաստան տալու իրավունքն ունի ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային առումով կարևորություն: Խնդիրն այն է, որ քաղաքական ապաստանը տրվում է օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան: Նման նորմեր են բովանդակվում, մասնավորապես, *Sw-*

քաձքային ապաստանի մասին հռչակագրում, որն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1947թ. դեկտեմբերի 14-ի բանաձևով, համաձայն որի՝ ապաստանի իրավունքը տրվում է քաղաքական, կրոնական, գիտական, ստեղծագործական գործունեության համար հետապնդվող անձանց: Ընդ որում, տալով քաղաքական ապաստան, պետությունը պարտավոր է տվյալ անձին վերապահել իր երկրի օրենսդրությամբ օտարերկրյա քաղաքացիներին ու քաղաքացիություն չունեցող անձանց տրված բոլոր իրավունքներն ու ազատությունները:

Խնդրո առաքկայի միջազգային-իրավական առումով կարևորությունը դրսևորվում է նրանում, որ քաղաքական ապաստան տվող պետությունը, եթե ապաստանի իրավունք տա (թեկուզ սխալմամբ) քրեական հանցագործի, ապա կարող են ծագել միջպետական հակամարտություններ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որոշ լիազորություններ է վերապահում Հանրապետության Նախագահին՝ **օրենսդիր իշխանության բնագավառում**:

Խորհրդարանի հետ ունեցած փոխհարաբերություններում Նախագահի լիազորությունների ծափալը, ըստ էության, պայմանավորված է երկրի **կառավարման ձևով**: Հայաստանի Հանրապետությունը կիսանախագահական կառավարման ձևի հանրապետություն է, որպիսի տարբերակը, մի կողմից, սահմանափակում է Նախագահի լիազորությունները օրենսդրական գործընթացում (նա չունի անգամ օրենսդրական նախաձեռնության իրավունք), մյուս կողմից, նրան օժտում է խորհրդարանը լուծարելու լիազորությամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է Նախագահի և Ազգային ժողովի փոխհարաբերությունների հետևյալ ուղղությունները՝ ա) օրենսդրական գործընթացում (Նախագահի կողմից վետոյի իրավունքն իրականացնելիս), բ) կառավարության կազմավորման դեպքում, գ) խորհրդարանի լուծարման ժամանակ, դ) խորհրդարանի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս:

Ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55 հոդվածի (2-րդ կետ) համաձայն՝ խորհրդարանի ընդունած օրենքն ստանալուց հետո 21 օրվա ընթացքում **Նախագահը ստորագրում և հրապարակում է այն**: Այս լիազորությունը Նախագահի՝ օրենսդիր իշխանության ոլորտում ունեցած հիմնական լիազորություններից մեկն է, որով նա, ըստ էության, եզրափակում է օրենքի ընդունման գործընթացը՝ դրանով իսկ հնարավորություն ընձեռելով քոլոր պետական և ոչ պետական կազմակերպություններին ու քաղաքացիներին ձեռնամուխ լինելու օրենքի կատարմանը:

Խորհրդարանից ստանալով օրենքը, Նախագահը կարող է ստորագրել կամ չստորագրել այն և, օգտագործելով իր վետոյի իրավունքը, փորձել կասեցնել դրա ուժի մեջ մտնելը և վերադարձնել օրենքը նոր քննարկման՝ իր դիտողություններով հանդերձ:

Ազգային ժողովի կողմից երկրորդ անգամ ընդունվելուց հետո Նախագահը հինգ օրվա ընթացքում ստորագրում է օրենքը: Ընդ որում, եթե պետության ղեկավարի դիտողությունները և առաջարկությունները Ազգային ժողովի կողմից չեն ընդունվում, ապա օրենքը վերստին ընդունվում է (կամ Նախագահի վետոն հաղթահարվում է) պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, այն դեպքում, երբ Սահմանադրության 71 հոդվածի համաձայն՝ օրենքի առաջին ընդունման համար, որոշ բացառություններով, բավարար է **քվեարկությանը մասնակցած** պատգամավորների ձայների մեծամասնությունը, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

Այդ հարցի վերաբերյալ տարբեր պետություններ ցուցաբերում են տարբեր մոտեցումներ: Օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում նախագահական վետոն հաղթահարվում է նիստին ներկա պատգամավորների որակյալ մեծամասնությամբ, իսկ Լիտվայի Սահմանադրության 72 հոդվածի համաձայն՝ «...Սեյմում կրկին քննարկված օրենքը համարվում է ընդունված, եթե ընդունվել են Հանրապետության Նախագահի ներկայացրած ուղղումներն ու լրացումները, կամ, եթե հօգուտ օրենքի քվեարկել է Սեյմի բոլոր անդամների 1/2-ից ավելին...»:

Բ. Հայաստանի Հանրապետության Նախագահը համագործակցում է Ազգային ժողովի հետ նաև **կառավարության կազմավորման** ժամանակ: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 55 հոդվածը (4-րդ կետ) նախատեսում է, որ Հանրապետության Նախագահն Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա, վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին:

Գ. **Խորհրդարանական և խառը կառավարման ձևի** երկրների նախագահների իրավական վիճակին հատուկ է նաև **խորհրդարանը արձակելու իրավունքը**: Որոշ երկրներում նախագահն ունի իր հայեցողությամբ խորհրդարանն արձակելու անսահմանափակ իրավունք, այլ երկրներում՝ այդ իրավունքը սահմանափակված է կառավարության, խորհրդարանի ղեկավարության, խորհրդարանական խմբակցությունների դիրքորոշումներով և այլ հանգամանքներով:

Ազգային ժողովն արձակելու իրավունք ունի նաև Հայաստանի Հանրապետության Նախագահը: Նման իրավունք նրան վերապահում է Հանրապետության Հիմնական օրենքի 55 հոդվածը (կետ 3): Սահմանադրության նշված նորմը նախատեսում է, որ Հանրապետության Նախագահը Սահմանադրության 74.1 հոդվածով նախատեսված դեպքերում ու կարգով արձակում է Ազգային ժողովը և նշանակում արտահերթ ընտրություն: Իսկ ՀՀ Սահմանադրության 74.1 հոդվածը նախատեսում է, թե որ դեպքում Հանրապետության Նախագահը կարող է իր հայեցողությամբ արձակել Ազգային ժողովը և որ դեպքերում է դա կատարում Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ:

Ընդհանուր առմամբ, խորհրդարանն արձակելու Նախագահի իրավունքը պետության ղեկավարին իրական հնարավորություն է ընձեռում ակտիվորեն նյաստել մի շարք փակուղային իրավիճակների հաղթահարմանը, որոնք կարող են առաջանալ ինչպես խորհրդարանի ներսում, այնպես էլ խորհրդարանի և կառավարության փոխհարաբերություններում:

Ազգային ժողովը արձակելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55 հոդվածը բավականին **լուրջ պայմաններ և վերապահումներ է նախատեսում** Նախագահի համար: Ազգային ժողովն արձակելուց՝ Նախագահը պարտավոր է արտահերթ ընտրություններ նշանակել, իսկ ՀՀ Սահմանադրության 68 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովն արձակելուց հետո ոչ շուտ, քան երեսուն և ոչ ուշ, քան քառասուն օրվա ընթացքում:

Ազգային ժողովը **չի կարող արձակվել** ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, ինչպես նաև երբ Հանրապետության Նախագահին պաշտոնոնկ անելու հարց է հարուցված (Սահմանադրության 63 հոդվ.):

Ազգային ժողովի արձակման իրավունքը Հանրապետության Նախագահի ձեռքին հզոր միջոց է օրենսդիր իշխանությանը զսպելու համար: Սակայն չպետք է մտածել, որ այն գործադիր իշխանության մարմիններին միայն միակողմանի առավելություն է տալիս: Չէ որ արձակման հետևանքով կառավարության վիճակը կտրուկ փոխվում է, առավել ևս, եթե Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն է հայտնվել **նրա ծրագրին երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում** հավանություն չտալու միջոցով: Նման դեպքում, մինչև Ազգային ժողովի նոր ընտրությունները, կառավարությունը զբաղվում է միայն ընթացիկ գործերով: Իսկ ընտրություններից հետո Հանրապետության Նախա-

գահը պետք է նոր կառավարություն կազմի, և նա պարտավոր չէ դրա կազմավորումը հանձնարարել նախկին վարչապետին:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և այլ օրենսդրական ակտերով սահմանված են նաև **Նախագահի և խորհրդարանի հաղորդակցման ձևերը**: Այդ ձևերի թվում առավել արդյունավետը **նախագահական ուղերձներն են** (55 հոդվ. կետ 1): Նրանցում բովանդակվում են երկրի կյանքում տեղի ունեցած առավել կարևոր փոփոխությունները, որոնք կարող են ազդել պետության ներքին և արտաքին քաղաքականության ճշգրտման վրա: Նախագահը Ազգային ժողովում անձամբ է ընթերցում իր ուղերձը, ինչպես նաև ժամանակ առ ժամանակ տարբեր խնդիրների շուրջ կարող է ելույթ ունենալ օրենսդիրների առջև:

Ընդհանրապես, կիսանախագահական հանրապետություններում խորհրդարանի առջև բարձրագույն գործադիր իշխանության համար պատասխանատվությունն առավելապես կրում են նախարարների կաբինետը և նրա ղեկավարը, և ոչ թե պետության գլուխը: Այդ պատճառով Նախագահը, համեմայնդեպս արտաքնապես, օրենսդիրների հետ փոխհարաբերություններում չի դրսևորում այն ակտիվությունը, որը հատուկ է նախագահական հանրապետությունների (օրինակ, ԱՄՆ-ի) նախագահներին:

Չնայած դրան, Հայաստանի Նախագահը նույնպես բավականաչափ ժամանակ է հատկացնում օրենսդիրների հետ փոխգործակցությանը: Նախագահը, անհրաժեշտության դեպքում, **անձամբ ներկա է գտնվում խորհրդարանի նիստերին** և հանդես գալիս ելույթով: Դրա հետ մեկտեղ, նա կարող է հաճախակի ներկա չգտնվել խորհրդարանի նիստերին, սակայն իր պաշտոնական նստավայրում պարբերաբար հանդիպումներ ունենալ օրենսդիրների հետ:

Ամեն դեպքում, գործադիր և օրենսդիր իշխանությունները, եթե դրանք գործում են ժողովրդավարության և իշխանությունների բաժանման պայմաններում, կախված են միմյանցից: Այդ պատճառով Նախագահը, կառավարությունը և խորհրդարանը միասնական պետական քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացում օգտագործում են **հաղորդակցման ամենատարբեր ձևեր**: Ընդ որում, Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին հնարավորություն է տալիս հաղորդակցվել խորհրդարանի հետ նաև այն դեպքերում, երբ վերջինս նիստեր չի գումարում: Այդ ժամանակ, առավելապես արտակարգ իրավիճակների դեպքում, պետության ղեկավարը **կարող է ուղերձով դիմել** օրենսդիր մարմին, որը կարող է հավաքվել արտահերթ նիստի:

3. Հանրապետության Նախագահը Սահմանադրությամբ ավելի լայն լիազորություններով է օժտված երկրի **կառավարման խնդիրների լուծման ոլորտում**: Հանրապետության Հիմնական օրենքը երկրի գործադիր իշխանության ղեկավարման խնդրում սահմանել է **յուրօրինակ երկակիություն**՝ այն, մի կողմից, ղեկավարում է Նախագահը, մյուս կողմից՝ վարչապետը:

Հանրապետության Նախագահի և վարչապետի լիազորությունները հաճախ **սերտորեն միահյուսվում են**, երբ պաշտոնապես որոշում ընդունելու համար պահանջվում է **երկուսի համաձայնությունը**: Այդ նախապահով է հարցը լուծվում, օրինակ, նախարարներ նշանակելիս:

Բացի այդ, Սահմանադրության 86 հոդվածի համաձայն, կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը, սակայն Հանրապետության Նախագահը կարող է կասեցնել կառավարության որոշումների գործողությունը մեկ ամիս ժամկետով և դիմել սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը պարզելու համար:

Վարչապետի և նախարարների նշանակումը երկու տարբեր փուլեր են: Վարչապետին, ինչպես արդեն նշվել է, նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովում պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա՝ պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին:

Մինչդեռ կառավարության անդամներին Հանրապետության Նախագահը նշանակում է **վարչապետի առաջարկությամբ**:

Սակայն դրանից չի հետևում, թե Հանրապետության Նախագահը պարտավոր է **մեխանիկորեն նշանակել** վարչապետի առաջարկած բոլոր թեկնածուներին: Կամ ասելով, որ Նախագահն է նշանակում նախարարներին, չի կարելի կարծել, որ նա կարող է մերժել վարչապետի առաջարկած ցանկացած թեկնածուի և նշանակել միայն իրեն ձեռնտու անձանց: Այդ խնդիրը կարող է լուծվել միայն **փոխադարձ համաձայնությամբ**:

Սահմանադրությունը նախատեսել է նաև Հանրապետության Նախագահի կողմից **նախարարներին պաշտոնանկ անելու** հնարավորությունը: Նրանում ուղղակիորեն սահմանվում է, որ Նախագահը նրանց նշանակում և ազատում է վարչապետի առաջարկությամբ (55 հոդվ. 4-րդ կետ): Այսինքն, տվյալ դեպքում պահպանվում է Սահմանադրական հայտանի սկզբունքը՝ ինչ կարգով նշանակվում են նախարարները, նույն կարգով էլ պաշտոնանկ են արվում:

Հանրապետության Նախագահն ունի լիազորություններ նաև **կառավարության ղեկավարման ոլորտում**: Սահմանադրության 86 հոդվածի համաձայն՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության միտ կարող է հրավիրել և փարել Հանրապետության Նախագահը:

4. Հանրապետության Նախագահն իրականացնում է որոշ լիազորություններ **դատական իշխանության** ոլորտում: Մասնավորապես՝ հանրապետության Նախագահն **արդարադատության խորհրդի առաջարկությամբ** նշանակում է վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին ու դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին, դադարեցնում է նրանց լիազորությունները, համաձայնություն է տալիս նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:

Հանրապետության Նախագահն **արդարադատության խորհրդի եզրակացությամբ** նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին (Սահմանադրության 55 հոդվ. կետ 11): Հանրապետության Նախագահը մասնակցում է նաև արդարադատության խորհրդի կազմավորմանը. նշանակում է այդ խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամներին:

Բացի այդ, Սահմանադրության 55 հոդվածը (9-րդ կետ) նախատեսում է, որ Հանրապետության Նախագահն Ազգային ժողովին առաջարկում է **գլխավոր դատախազի թեկնածությունը**, ինչպես նաև գլխավոր դատախազի առաջարկությամբ նշանակում է և ազատում նրա տեղակալներին:

ՀՀ Սահմանադրությունը դատական իշխանության մարմինների համակարգի մեջ է ընդգրկում նաև **սահմանադրական դատարանը**, որի վերաբերյալ Հանրապետության Նախագահի լիազորությունները կարելի է համարել դատական իշխանության ոլորտի լիազորություններ: Նախագահը **նշանակում է** սահմանադրական դատարանի ինը անդամներից **չորսին** և սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները կամ համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:

Դատական իշխանության ոլորտում Նախագահի լիազորություններին ցանկացած կարևոր է **ներում շնորհելու** նրա սահմանադրական իրավունքը: Այն իր ծագմամբ, ըստ էության, ունի միապետական բնույթ և համարվում է Նախագահի բացառիկ լիազորությունը (հոդվ. 55, կետ 17):

Հայաստանի Հանրապետությունում ներման իրավունքը տարածվում է պատժի բոլոր տեսակների վրա և իրականացվում է պետության ղեկավարի **կողմից միանձնյա**: Իհարկե, նա կարող է խորհրդակցել արդարադատության խորհրդի հետ, սակայն վերջինիս կարծիքը ոչ մի կերպ չի պարտավորեցնում Նախագահին, որը լրիվ ազատ է որոշում կայացնելիս: Այդ իրավունքի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ դատապարտյալի դիմումը Նախագահին՝ հանցագործության համար դատարանի նշանակած և արդեն ուժի մեջ մտած պատժամիջոցը փոխելու կամ դրանից ազատելու վերջին հնարավորությունն է:

5. Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը լինելու հանգամանքը պայմանավորում է նաև նրա լիազորությունների ծավալը որպես **զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի**: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հստակորեն ամրագրում է, որ Հանրապետության Նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը (հոդվ. 55, կետ 12):

Նրա այդ կարգավիճակի սահմանադրական ամրագրումից հետևում է, որ Հանրապետության Նախագահը՝ ա) Հայաստանի զինված ուժերի գլուխն է, բ) նշանակում և պաշտոնից ազատում է զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը, գ) իրավունք ունի հայտարարել ռազմական դրություն և ընդհանուր կամ մասնակի զորահավաք, դ) իրավունք ունի որոշում կայացնել զինված ուժերի օգտագործման մասին: Բացի դրանից, **հերթական գորակոչերը**, ըստ ձևավորված ավանդույթի, անցկացվում են Նախագահի հրամանագրերի հիման վրա:

Հանրապետության Նախագահը խաղաղ պայմաններում, սովորաբար, իրականացնում է զինված ուժերի սոսկ ամենաընդհանուր քաղաքական ղեկավարումը: Մինչդեռ զինված ուժերի կոնկրետ ղեկավարմամբ և շինարարությամբ զբաղվում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ **զորքերի օպերատիվ կառավարումն** իրականացնում է պաշտպանության մարտարարը՝ իրեն ենթակա ծառայությունների և զորավետների միջոցով:

Արտակարգ իրավիճակի պայմաններում, Հանրապետության Նախագահը կարող է ստանձնել որոշ գործառնականությունների և գործառնական անմիջական ղեկավարումը և, որպես գերագույն գլխավոր հրամանատար, պաշտպանության մարտարարին համապատասխան հրամաններ տալ: Նախագահը կարող է նաև ստանձնել բանակի անմիջական հրամանատարությունը՝ պատերազմի, օտարերկրյա պետության կողմից երկրի վրա զինված հարձակման դեպքում:

Ինչ վերաբերում է **բարձրագույն զինվորական կազմի նշանակմանը**, ապա, պետք է ենթադրել, որ այն, որպես կանոն, կատարվում է պաշտպանության մարտարարի ներկայացմամբ, ինչը սակայն Նախագահին ոչնչով չի պարտավորեցնում:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը Նախագահին վերապահում է նաև որոշ **արտակարգ լիազորություններ**: Այսպես, երկրի վրա զինված հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության դեպքում, Հանրապետության Նախագահը հրապարակում է **ռազմական դրություն** հայտարարելու վերաբերյալ հրամանագիր: Ռազմական դրություն կարող է հայտարարվել ինչպես երկրի **ամբողջ տարածքում**, այնպես էլ **նրա առանձին վայրերում**, որոնք ենթարկվել կամ կարող են ենթարկվել հարձակման կամ էլ առանձնահատուկ նշանակություն ունեն երկրի պաշտպանության համար:

Ռազմական դրություն հայտարարելու վերաբերյալ Նախագահի իրավունքը չունի անվերապահ բնույթ: Խնդիրն այն է, որ Սահմանադրության 55 հոդվածի (կետ 13) համաձայն՝ զինված ուժերի օգտագործման կամ ռազմական դրություն հայտարարվելու դեպքերում **իրավունքի ուժով** անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ, որը Սահմանադրության 81 հոդվածի (3-րդ կետ) ուժով **կարող է չեղյալ հայտարարել** հիշյալ միջոցառումների իրականացումը:

Նույն կարգով, Սահմանադրության 55 հոդվածի (14-րդ կետ) համաձայն՝ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, Նախագահն հայտարարում է արտակարգ դրություն և իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին: Այս դեպքում նույնպես Սահմանադրության 81 հոդվածի (3-րդ կետ) ուժով Ազգային ժողովը կարող է չեղյալ հայտարարել նախատեսված հիշյալ միջոցառման իրականացումը:

Հանրապետության Նախագահի նշված արտակարգ լիազորությունները, ըստ էության, իրացվում է Հայաստանի ամբողջ տարածքում կամ նրա առանձին վայրերում՝ **ռազմական դրություն** կամ **արտակարգ դրու-**

յում հայտարարելու միջոցով: Նախագահը հրապարակում է արտակարգ դրություն հայտարարելու վերաբերյալ **հրամանագիր**, որում պետք է նշվեն այն հանգամանքները, որոնց հիման վրա հայտարարվում է արտակարգ դրություն, դրա անհրաժեշտության հիմնավորումը, արտակարգ միջոցառումների ցանկը և սահմանները, քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակումների սպառիչ ցանկը, արտակարգ դրության իրականացման համար պատասխանատու պետական մարմինները, այդ մարմինների լիազորությունների ճշգրիտ շրջանակները, արտակարգ դրության տարածքային սահմանները, հրամանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթիվը, արտակարգ դրության գործողության ճշգրիտ ժամկետը:

Արտակարգ դրության ժամանակահատվածում հրամանագրով կարող են սահմանվել նաև արտակարգ դրության գործողության տարածքում մուտքի և ելքի, հատուկ տեղաշարժերի կարգը, հասարակական կարգի և բնակչության կենսագործունեությունն ապահովող օբյեկտների խստացված պահպանության խնդիրները, ժողովներ, հանրահավաքներ, ցույցեր և այլ զանգվածային միջոցառումներ, գործադրվելու կազմակերպելու արգելքը, փոխադրամիջոցների տեղաշարժերի սահմանափակումը և այլն:

Սահմանադրական կարգի բռնի փոփոխմանը նպատակաուղղված գործողությունների դեպքում, լրացուցիչ կարող են կիրառվել՝ պարետային ժամ, նախնական զրաքննություն սահմանելու միջոցով մամուլի անառության սահմանափակում, բազմացնող սարքերի ժամանակավոր անգրավում, քաղաքական կուսակցությունների գործունեության ժամանակավոր կասեցում (նախագուշացումից հետո), փաստաթղթերի ստուգում, անձնական զննում, տվյալ տարածքից հասարակական կարգը խախտողների արտաքսում՝ նրանց մշտական բնակության վայրեր: Եթե արտակարգ դրություն է հայտարարվում տարեբային աղետների պայմաններում, ապա կարող են կիրառվել նաև լրացուցիչ այլ միջոցառումներ. բնակչության դուրսբերում, սննդամթերքի բաշխման հատուկ կարգ, կարանտին, ձեռնարկությունների աշխատանքային ռեժիմի փոփոխություն, փրկարար և այլ աշխատանքների իրականացման նպատակով աշխատունակ բնակչության ներգրավում և այլն:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի համաձայն՝ արտակարգ դրություն հայտարարելիս՝ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել միայն այն չափով, որ չափով դա անհրաժեշտ է սահմանադրական կարգը, բարոյականությունը, բնակչության առողջությունը, իրա-

վունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, պետության պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովելու համար: Արտակարգ դրություն հայտարարող ակտում նշվում են մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակման սահմանները, ինչպես նաև այդ սահմանափակումների գործողության ժամկետը:

Դրա հետ մեկտեղ, քաղաքացիների որոշ իրավունքներ, Սահմանադրությամբ նախատեսված կարգով, **չեն կարող սահմանափակվել**. արտակարգ դրությունը չի կարող հիմք հանդիսանալ խոշտանգումների, մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորման, կյանքի իրավունքի, խղճի և դավանանքի ազատության սահմանափակման համար:

§ 4. Հայաստանի Հանրապետության Նախագահի ակտերը և աշխատակազմը

Սահմանադրության 56 հոդվածի համաձայն՝ «Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագրեր և կարգադրություններ, որոնք չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին ու ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում:

Հրամանագրերը նորմատիվ ակտեր են, որոնք վերաբերում են ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկություններին, կազմակերպություններին, ձեռնարկություններին:

Կարգադրությունները, որպես կանոն, անհատական բնույթի ակտեր են: Նախագահի հրամանագրերը և կարգադրությունները գործողության մեջ մտնելու համար վերաստորագրման, այսինքն՝ վարչապետի կամ նախարարներից մեկի կողմից լրացուցիչ ստորագրման անհրաժեշտություն չունեն, ինչպես դա տեղի է ունենում խորհրդարանական հանրապետություններում (օրինակ, Հնդկաստանում, Իտալիայում) կամ արտասահմանյան մի շարք կիսանախագահական հանրապետություններում (օրինակ, Յրանսիայում):

Նախագահի նորմատիվ հրամանագրերի սահմանադրականության հարցը, անհրաժեշտության դեպքում, լուծում է ՀՀ սահմանադրական դատարանը:

Հրամանագիրը կարող է կրել նաև իրավակիրառիչ բնույթ և, հետևաբար, չունենա նորմատիվ նշանակություն: Ոչ նորմատիվ նշանակության հրամանագրերը վերաբերում են, օրինակ, այս կամ այն անձի՝ ո-

րոշակի պաշտոնի նշանակմանը: *Կարգադրությունն* անհատական կազմակերպական բնույթի ակտ է:

Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները ենթակա են *պարտադիր պաշտոնական հրապարակման*, քացառությամբ այն ակտերի կամ դրանց առանձին դրույթների, որոնք բովանդակում են *պետական գաղտնիք* հանդիսացող տեղեկություններ:

Հանրապետության Նախագահի կողմից իր ծավալուն և բազմաբովանդակ լիազորությունների հրականացման գործում լուրջ օգնություն է ցուցաբերում նրա *աշխատակազմը*: Հանրապետության Նախագահը աշխատում է՝ հենվելով օգնականների, խորհրդականների և այլ աստիճանավորների վրա, որոնք միավորված են նրա *աշխատակազմում*: Նախագահի աշխատակազմը պետության ղեկավարի գործունեությունն ապահովող *պետական մարմին* է:

Աշխատակազմի գործառնություններն ընդգրկում են բազմաթիվ հարցեր. Ազգային ժողով վերադարձվող օրենքի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների նախապատրաստում, Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների նախագծերի և ուղերձների տեքստերի նախապատրաստում և հրապարակում, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի գործունեության ապահովում, օրենքների և Նախագահի հրամանագրերի կատարման վերահսկողության և ստուգման իրականացում, քաղաքական կուսակցությունների և հասարակական միավորումների, ինչպես նաև արտասահմանյան պետությունների պետական մարմինների և պաշտոնատար անձանց, միջազգային կազմակերպությունների հետ փոխգործակցության ապահովում, ՀՀ սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումների նախապատրաստում, կադրերի և պետական ծառայության ոլորտում պետական քաղաքականության իրագործման ապահովում և այլն:

Այդ ընդհանուր խնդիրներն իրականացնելով՝ Նախագահի աշխատակազմը փոխգործակցում է Ազգային ժողովի, կառավարության և պետական իշխանության մյուս բոլոր մարմինների հետ, ապահովում է մարդու իրավունքների պաշտպանության, զանգվածային լրատվության միջոցների ազատության երաշխավորման ոլորտներում՝ պետական մարմինների գործունեության համաձայնեցվածությունը:

Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի մեջ են մտնում՝ *աշխատակազմի ղեկավարը*, նրա առաջին տեղակալն ու տեղակալները, Նախագահի գրասենյակի վարիչը, գլխավոր վարչությունների և վարչությունների պետերը, մամուլի քարտուղարը, Նախագահի օգնական-

ները (ներառյալ արձանագրային բաժնի ղեկավարը), ռեֆերենտները, լիազոր ներկայացուցիչները, խորհրդականները: Հայաստանի Հանրապետության Նախագահին անմիջականորեն ենթարկվող և նրա կողմից նշանակվող վերոհիշյալ պաշտոնատար անձինք ունեն իրենց աշխատակազմերը, որոնք մույնպես ներառված են Նախագահի միասնական աշխատակազմում: Աշխատակազմն ապահովում է նաև Նախագահին կից գործող խորհրդակցական և խորհրդատվական մարմինների (հանձնաժողովների, խորհուրդների) գործունեությունը:

Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմում առաջատար դերը պատկանում է նրա *ղեկավարին*: Նա իրականացնում է օգնականների, մամուլի քարտուղարի գործառնության ղեկավարումը, իր տեղակալների, ինքնուրույն ստորաբաժանումների ղեկավարների, ռեֆերենտների, լիազոր ներկայացուցիչների, խորհրդականների օպերատիվ ղեկավարումը: Աշխատակազմի ղեկավարն է Նախագահին ներկայացնում աշխատակազմի բոլոր ենթաաշխատակազմերի կառուցվածքը և հաստիքների թվաքանակը (աշխատողների նշանակման և ազատման իրավունքով), բաշխում է իր տեղակալների միջև պարտականությունները, տնօրինում է աշխատակազմի ֆինանսական միջոցները և այլն:

Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց ընդհանուր պաշտոնեական պարտականությունները և ենթակայությունը կանոնակարգվում է աշխատակազմի կանոնադրությամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ**

**§ 1. Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության
պառլամենտն է, նրա ներկայացուցչական և
օրենսդիր մարմինը**

1. Ժամանակակից գրեթե բոլոր պետությունների սահմանադրություններով **օրինաստեղծ գործառնությունը** վերապահվում է ընտրովի ներկայացուցչական մարմիններին: Տարբեր երկրներում այդ մարմիններն ունեն տարբեր անվանումներ՝ Ֆեդերալ ժողով (Ռուսաստանի Դաշնությունում և Շվեյցարիայում), Կոնգրես (ԱՄՆ-ում), Ստորտինգ (Նորվեգիայում), Կնեսետ (Իսրայելում), Ալտինգ (Իսլանդիայում), Գլխավոր կորտեսներ (Իսպանիայում), Գլխավոր կոնգրես (Մեքսիկայում), Ժողովրդական ժողով (Եգիպտոսում), Գերագույն խորհուրդ (Ուկրաինայում) և այլն:

Սակայն, քանի որ օրինաստեղծ գործունեությունը ներկայացուցչական մարմինների **միակ գործառնությունը չէ**, ուստի դրանց անվանման համար օգտագործվում է հավաքական՝ **«պառլամենտ»** արտահայտությունը: Այն ծագում է լատինական «Parlare» (խոսել) բառից, որը նշանակում է մարմին, որտեղ խոսում են (հայերեն այն կոչվում է խոսելատեղ կամ խորհրդարան):

Պառլամենտը, որպես պետաիրավական ինստիտուտ, ունի բազմադարյան պատմություն. այն առաջին անգամ կազմակերպվել է Անգլիայում՝ դեռևս 12-13-րդ դարերում: Սակայն ժամանակակից պառլամենտները, որոնք բուրժուական հեղափոխությունների հաղթանակների արդյունքում հանդես եկան որպես պետական իշխանության կարևորագույն մարմիններից մեկը, ձեռք են բերել **մի շարք նոր բնորոշ գծեր**, որոնց շնորհիվ կազմում են հասարակության պետական կառավարման յուրահատուկ համակարգ:

Տարանջատված իշխանությունների պայմաններում պառլամենտը, որպես օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին, **«առաջինն է հավասարների մեջ»**: Օրենքներ ընդունելուց զատ, նրա իրավասության ոլորտի մեջ են մտնում պետության ներքին և արտաքին քաղաքականության հիմքերի որոշումը, հիմնարար ծրագրերի մշակումը և ընդունումը, բյուջեի հաստատումը և այլն: Օրենքներում ամրագրված սկզբունքներին

պարտավոր են հետևել գործադիր իշխանության մարմինները, դրանց հիման վրա է կազմակերպվում և գործում դատական համակարգը: Նշված և մյուս, ըստ էության, **համակարգող գործողություններն են**, որ ընդգծում են պառլամենտների առանձնակի նշանակությունը:

Ամրագրելով Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանության մարմնի՝ Ազգային ժողովի կազմակերպման ու գործունեության հիմունքները, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (գլուխ 4) սակայն **որևէ նշում չի բովանդակում** հանրապետության օրինաստեղծ մարմնի **պառլամենտական և ներկայացուցչական** բնույթի մասին, ինչն իր արտահայտությունն է գտել արտասահմանյան շատ երկրների սահմանադրություններում:

Խնդիրն այն է, որ ընտրովի օրինաստեղծ մարմնի առկայությունը դեռևս չի վկայում պառլամենտի, առավել ևս՝ **պառլամենտարիզմի** մասին: Վերջիններս միմյանց հետ սերտորեն կապված, **սակայն ոչ հավասարազոր հասկացություններ են**: Եթե պառլամենտարիզմը չի կարող գոյություն ունենալ առանց պառլամենտի, ապա պառլամենտը կարող է գոյություն ունենալ առանց պառլամենտարիզմի կարևորագույն տարրերի: Վերջիններս **կարող են ինչպես չստեղծվել** պառլամենտական գործունեության ընթացքում (համապատասխան փորձի, ավանդույթների, իրավագիտակցության և այլնի պակասի պատճառով), այնպես էլ **կարող են կորսվել** (քաղաքական ռեժիմի փոփոխության պատճառով): Պառլամենտարիզմի կարևորագույն տարրերի թվին են դասվում

- ա) իշխանությունների տարանջատումը,
- բ) ներկայացուցչությունը,
- գ) օրինականությունը,
- դ) օրինաստեղծ գործունեությունը:

2. Պառլամենտարիզմի բովանդակության դրսևորման հարցում առանձնակի կարևորվում է **ներկայացուցչությունը**: Ըստ էության, միայն ժողովրդի անկաշխանդ և բոլոր տեսակի ազդեցություններից (նյութական, բարոյական և ֆիզիկական) **ազատ կամքի** արտահայտման դեպքում է, որ պառլամենտը կարող է ձեռք բերել իրական ժողովրդավարական և օրինական (**լեգիտիմ**) **ներկայացուցչական մարմնի** բնույթ: Ներկայացուցչական այդպիսի համաժողովը միայն կարող է հանդես գալ որպես ժողովրդի ինքնիշխանության կրող և համարվել պառլամենտական ժողովրդավարության վրա հիմնված պետության ձև:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ինչպես նշվեց, չի բովանդակում նորն Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթի մասին, ինչը մույնպես **երկմտանքի տեղիք է տալիս** այն առումով,

թե արդյոք Հանրապետության օրենսդիր մարմինը իրավունք ունի հանդես գալու ժողովրդի ինքնիշխանության կողմի դերում: Խնդիրն այն է, որ պետական մարմինների *ներկայացուցչական բնույթը, սովորաբար, կապում են ժողովրդի կողմից ընտրությունների միջոցով համապատասխան մանդատ ստանալու և ընտրողների կամքն ու շահերը ներկայացնելու հետ:*

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները նույնպես ընտրվում են բնակչության կողմից: Սակայն հանրապետության պառլամենտի ձևավորումը՝ ընտրությունների միջոցով, դեռևս նրան չի դարձնում ներկայացուցչական մարմին: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի ընտրությունները լինեն *օրինական*, զերծ բոլոր տեսակի կեղծիքներից ու այլ խախտումներից, ինչը պառլամենտարիզմի կարևորագույն տարրերից մեկն է: Միայն այդ ճանապարհով կարելի է ապահովել Ազգային ժողովի լեգիտիմությունը, նրա ներկայացուցչական բնույթը և ընտրված պատգամավորները պետական և հասարակական կյանքի առաջնային խնդիրներ լուծելիս՝ իրականում կներկայացնեն իրենց ընտրողների կամքն ու շահերը:

Դրա հետ մեկտեղ, *Ազգային ժողովի կարգավիճակի վրա* էական ազդեցություն ունի Հանրապետությունում արմատավորված *կիսանախագահական կառավարման ձևը*, որը ներառում է կառավարման նախագահական և պառլամենտական համակարգերի տարրեր: Այստեղ օրենսդիր մարմինը, ըստ էության, մասնակցություն չունի կառավարության ձևավորմանը: Այն, որ Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին պարտավորեցնում է վարչապետին նշանակելիս խորհրդակցի ԱԺ խմբակցությունների հետ (55 հոդվ. 4-րդ կետ), դեռևս չի վկայում կառավարության ձևավորմանն Ազգային ժողովի մասնակցության մասին, որովհետև Սահմանադրությունը չի բովանդակում Հանրապետության Նախագահի կողմից նրանց (խմբակցությունների) *կարծիքը հաշվի առնելու կառուցակարգեր:*

Ազգային ժողովը չունի նաև կառավարության գործունեությունը *վերահսկելու ուղղությամբ արդյունավետ միջոցներ:* Մինչև Սահմանադրության փոփոխությունները, Ազգային ժողովը կառավարության գործունեության նկատմամբ իր վերահսկողական գործառույթն իրականացնում էր վերահսկիչ պալատի միջոցով, որն ԱԺ մարմին էր: Մակայն 2005թ. Սահմանադրության փոփոխությունների արդյունքում այն ճանաչվեց որպես ինքնուրույն, անկախ մարմին (հոդվ. 83.4):

Այս ամենի արդյունքում մեր հասարակության մեջ ձևավորվել է որոշակի *անվստահություն ներկայացուցչական մարմինների*, առանձնա-

պես հանրապետության օրենսդիր մարմնի նկատմամբ: Նրանում լնդգրկված ակտիվ քաղաքական ուժերի առանձին ներկայացուցիչների նշանակումը կառավարության կազմում ավելի է թուլացնում Ազգային ժողովի *ինքնուրույնությունը:* Այդ առնչությամբ քաղաքական շրջանների շատ ներկայացուցիչներ գիտակցում են, որ *պատլամենտի հեղինակագրկումը* կարող է մեծ չափով խարխլել հանրապետությունում չնայած դժվարությամբ, բայց աստիճանաբար արմատավորվող ժողովրդավարության հիմքերը: Մինչդեռ ամեն մի երկրում *պատլամենտը հանդես է գալիս որպես սովյալ ազգի, ժողովրդի քաղաքական ավանդույթների, սովորույթների և քաղաքական մշակույթի մակարդակի յուրօրինակ մարմնավորողը:*

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ եթե ասված չէ Ազգային ժողովի պատլամենտականության և ներկայացուցչական բնույթի մասին, ապա նույնը չի կարելի ասել նրա՝ *օրենսդիր մարմին լինելու վերաբերյալ:* Սահմանադրության 62 հոդվածում հստակ ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը»:

Սահմանադրության այդ նորմը կարելի է մեկնաբանել երկու իմաստով՝

ա) Հայաստանի Հանրապետությունում օրինաստեղծ գործունեությամբ կարող է զբաղվել միայն Ազգային ժողովը, որովհետև Սահմանադրության նշված նորմում օրենսդրական գործառույթուն իրականացնող այլ սուբյեկտներ չեն թվարկված:

բ) Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովը միակ պետական մարմինը չէ, որն օժտված է օրինաստեղծ իրավասությամբ, քանզի Սահմանադրության 62 հոդվածում նշված չէ, որ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է միայն Ազգային ժողովը:

Դատելով Սահմանադրության 62 հոդվածի (1-ին մաս) բովանդակությունից, կարելի է եզրահանգել, որ Հայաստանի Հանրապետությունում օրինաստեղծ իշխանությունը վերապահված է միայն Ազգային ժողովին: Սակայն Հանրապետության Հիմնական օրենքի տարբեր դրույթների ամբողջական վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության օրենսդիր քնի կողմից իշխանության իրականացման գործընթացին, Ազգային ժողովի հետ մեկտեղ, լնդգրկված են նաև մի շարք այլ պետական մարմիններ:

1) Նրանցից առավել ակտիվ կերպով իր նորմաստեղծ լիազորություններից օգտվում է Հայաստանի Հանրապետության *Նախագահը:*

Այսպես, 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հստակ չէր սահմանագատում Ազգային ժողովի օրինաստեղծ իրավասության շրջանակները, որը հնարավորություն էր ընձեռում Հանրապետության Նախագահին երբեմն ընդունել նորմատիվ հրամանագրեր այնպիսի ոլորտների վերաբերյալ, որոնց կարգավորումը պետք է կատարվեր օրենքներով, սակայն որոնք բացակայում էին տվյալ պահին:

Մակայն 2005թ. նոյեմբերի 27-ին կատարված սահմանադրական փոփոխությունների արդյունքում նրանում ամրագրվեց նոր՝ 83.5 հոդվածը, որը սպառնիչ կերպով թվարկում է այն ոլորտները, որոնք կարող են կարգավորվել բացառապես օրենքներով:

Դրանք են՝

1) ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը.

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, նրանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների տեսակները, չափը, վճարման կարգը.

3) իրավաբանական անձանց, ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու դեպքերը, պայմանները և կարգը.

4) իրավաբանական անձ ստեղծելու, դրա գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու կարգը և պայմանները.

5) ֆիզիկական անձանց անձնական և ընտանեկան, ինչպես նաև իրավաբանական անձանց՝ առևտրային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկը.

6) քրեական, վարչական, տնտեսական (գույքային), կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը, կարգը, պայմանները, քրեական պատիժների իրականացման կարգը, դատական և վարչական ակտերի հարկադիր կատարման կարգը փաստաբանների կարգավիճակը և լիազորությունները.

7) հանրաքվեների, Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը.

8) պետական բյուջեի ձևավորման և ծախսման կարգը.

9) ՀՀ միջազգային պայմանագրերի կնքման, չեղյալ համարելու կարգը և պայմանները.

10) կուսակցությունների և այլ հասարակական միավորումների, վանգվածային լրատվության միջոցների իրավական կարգավիճակը.

11) ՀՀ վարչատարածքային միավորները և դրանց սահմանները:

Միայն օրենքով կարգավորվող ոլորտների ամրագրումը Սահմանադրությամբ նշանակում է, որ այդ ոլորտների վերաբերյալ Հանրապետության Նախագահն այլևս չի կարող ընդունել հրամանագրեր:

Դրանից բացի, Նախագահն ունի ևս մեկ կարևոր միջոց, որով կարող է ազդել Ազգային ժողովի օրենսդրական գործունեության վրա: **Դա հետաձգող արգելքն է (վետոն):**

Ազգային ժողովի օրենսդրական գործունեության վրա կարող է ազդել Հայաստանի Հանրապետության **կառավարությունը**՝ օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացման միջոցով: Կառավարությունն ինքն է սահմանում իր կողմից ներկայացված օրենքների նախագծերի քննարկման հաջորդականությունը և կարող է պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն **միայն իր համար ընդունելի ուղղումներով**: Ավելին, Սահմանադրության 75 հոդվածի (5-րդ մաս) համաձայն, կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Այն Ազգային ժողովի վրա **ճնշում գործադրելու** յուրատեսակ միջոց է՝ իրեն ձեռնառու օրինագիծը անցկացնելու համար: Նույն կարգով, պետական բյուջեի նախագծի՝ Ազգային ժողովում հաստատվելու առնչությամբ կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեության վրա էական ազդեցություն ունի **սահմանադրական դատարանը**: Նրա հիմնական խնդիրներից է օրենքների և այլ ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության որոշումը: Դա նշանակում է, որ Ազգային ժողովի ընդունած օրենքները, որոնք ստորագրվել և հրապարակվել են Նախագահի կողմից, կարող են սահմանադրական դատարանի կողմից **ճանաչվել ոչ սահմանադրական**, այսինքն՝ իրենց ուժը կորցրած, այլևս գոյություն չունեցող իրավական ակտեր:

Օրենսդիր իշխանության իրականացման իրավասությունը վերապահելով Ազգային ժողովին, Սահմանադրությունը դրանով իսկ ամրագրում է կարևոր մի սկզբունք, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության ոչ մի օրենք չի կարող ընդունվել, եթե այն չի քննարկվել Ազգային ժողովի կողմից, չի արժանացել նրա հավանությանը: Իսկ Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ օրենսդրության ոլորտում օժտված է լայն լիազորություններով: Այդ է վկայում, ինչպես նշվեց, Սահմանադրության 83.5 հոդվածի շարադրանքը, որի համաձայն՝ հասարակական կյանքի բազում ոլորտներ կարգավորվում են բացառապես օրենքներով: Դա

նշանակում է, որ օրենսդիր մարմնի դերը Հայաստանի Հանրապետության պետական մարմինների համակարգում շատ մեծ է, միայն թե *նրա սահմանադրափրակական հնարավորությունները դեռևս մինչև վերջ չեն օգտագործվում*:

§ 2. Ազգային ժողովի կազմակերպման կարգը և կառուցվածքը

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը բովանդակում է Ազգային ժողովի ձևավորման կապակցությամբ *միայն որոշ սկզբունքներ*: Ինչ վերաբերում է ընտրությունների կազմակերպման կարգին, ապա այն սահմանվում է ՀՀ ընտրական օրենսգրքով: Սահմանադրությունը (4 հոդվ.) Ազգային ժողովի և հանրապետության մյուս ընտրովի մարմինների կազմակերպման համար, որպես արմատական սկզբունքներ, վկայակոչում է ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքները, որոնք իրականացվում են գաղտնի քվեարկության միջոցով: Ընդ որում, *ակտիվ ընտրական իրավունքի* (ընտրելու իրավունքի) համար Սահմանադրությունը (30 հոդվ.) նախատեսում է տասնութ տարվա տարիքային ցեղ:

Սահմանադրության մակարդակով են կարգավորվում նաև *պասիվ ընտրական իրավունքի* (ընտրվելու իրավունքի) որոշ պայմաններ: Ըստ դրա 64 հոդվածի՝ Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել 25 տարին լրացած, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության *քաղաքացի* հանդիսացող, *վերջին հինգ տարում* Հանրապետությունում *մշտապես բնակվող* և *ընտրական իրավունք ունեցող* յուրաքանչյուր օր:

Հանրապետության Հիմնական օրենքը, որպես կարևորագույն սկզբունք, ամրագրում է *ընտրական իրավունքի սահմանափակման* դեպքերը: Համաձայն Սահմանադրության 30 հոդվածի (3-րդ մաս)՝ *ընտրել և ընտրվել չեն կարող* դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրվման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

Նշված սահմանադրական սկզբունքների հիման վրա Ազգային ժողովի ձևավորման կարգն ավելի մանրամասն իրավական կարգավորման է ենթարկվում 2011 թ. մայիսի 26-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը բաղկացած է 131 պատգամավորից, որոնք ընտրվում են համամասնական և մեծամասնական ընտրակարգերով: Ընդ որում, 90 պատգամավոր ընտրվում է համա-

մասնական ընտրակարգով (հանրապետության ամբողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից)՝ կուսակցությունների ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորության թեկնածուների թվից, իսկ 41 պատգամավոր ընտրվում է միամանդատ ընտրատարածքներից՝ մեծամասնական ընտրական համակարգի հարաբերական մեծամասնության ընտրակարգով, յուրաքանչյուր ընտրատարածքից՝ մեկ պատգամավոր:

Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Ազգային ժողովը, որն ընտրվել էր 1995 թ. հուլիսի 5-ին «Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» 1995 թ. ապրիլի 4-ի օրենքին համապատասխան, բաղկացած էր 190 պատգամավորից, որից 150 պատգամավոր ընտրվել էր մեծամասնական ընտրական համակարգով, իսկ 40-ը՝ համամասնական ընտրակարգով (2 հոդվ.): Այդ ժամանակից սկսած Հանրապետության քաղաքական շրջաններում ակտիվ գաղափարական պայքար էր տարվում այդ հարաբերակցության փոփոխման ուղղությամբ՝ հօգուտ կուսակցական ցուցակներով ընտրությունների: Արդյունքում երկրորդ գումարման Ազգային ժողովում ընտրված (1999 թ. մայիսի 30-ին) 131 պատգամավորից արդեն 56-ն ընտրվեցին համամասնական ընտրակարգով, երրորդ գումարման ժամանակ (2003թ. մայիսի 25-ին)՝ 75, իսկ չորրորդ գումարման ժամանակ՝ (2007թ. մայիսի 12-ին)՝ 90 պատգամավոր:

Ներկայումս այդ գաղափարի կողմնակիցները գտնում են, որ Ազգային ժողովի ձևավորումը նպատակահարմար է իրականացնել *միայն համամասնական ընտրակարգով* (կուսակցական ցուցակներով)՝ պատճառաբանելով, որ այն կնպաստի կուսակցությունների կայունացմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից քաղաքական որոշումների ընդունման հեշտացմանը, որին, իբր, մեծապես խոչընդոտում են մեծամասնական ընտրական համակարգով ընտրված անկուսակցական պատգամավորները: Վերջիններս քվեարկությունների ժամանակ, միանալով այս կամ այն խմբակցությանը, փոխում են ուժերի հարաբերակցությունը:

Խնդիրն այն է, որ Ազգային ժողովի (որպես պետական իշխանության օրենսդիր մարմնի) և նրանում պատգամավորական տեղեր տուացած կուսակցությունների (որպես պետական իշխանության իրականացման մասնակիցների) դերն ու նշանակությունը հաճախ ճիշտ չի ընկալվում: Պետք է նշել, որ Ազգային ժողովը, *ամենից առաջ*, պետական մարմին է՝ պետական իշխանության օրենսդիր մարմին, որը Սահմանադրության 62 հոդվածի հիման վրա կոչված է իրականացնելու Հայաստանի Հանրապե-

տության օրենսդիր իշխանությունը: Նա պետք է ընդունի օրենքներ և այլ օրենսդրական ակտեր, որոնցով կարգավորվեն երկրի հասարակական և պետական կյանքի առաջիկ կարևոր ոլորտների հարաբերությունները: **Ազգային ժողովի անհարկի քաղաքականացումը** շեղում է նրան իր հիմնական խնդիրներից, դարձնում անգործունակ մի կառույց:

Երկրորդ, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը լայն հնարավորություններ է ընձեռում կուսակցություններին՝ անգամ խառը ընտրական համակարգի պայմաններում Ազգային ժողովը ամբողջությամբ ձևավորել կուսակցական հիմքի վրա: Այսպես, օրենսգրքի 106 հոդվածի համաձայն՝ կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները իրավունք ունեն համամասնական ընտրակարգով (ցուցակներով), իսկ 114 հոդվածի համաձայն՝ նաև մեծամասնական ընտրակարգով (դարձյալ ցուցակներով) առաջադրելու Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուներ: Ընդ որում, այդպիսի իրավունք ունեն բոլոր կուսակցությունները՝ անկախ խորհրդարանում պատգամավորական տեղեր ունենալու հանգամանքից: Դա նշանակում է, որ կուսակցությունները լայն հնարավորություն ունեն պայքարելու ինչպես համամասնական այնպես էլ մեծամասնական ընտրական համակարգով Ազգային ժողովում նախատեսված պատգամավորական տեղերի համար:

Յրրորդ, ինքնաառաջադրման կարգով մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման կարգից հրաժարվելը էապես կնեղացնի ժողովրդաիշխանության իրացման ներկայացուցչական ժողովրդավարության հիմքերը: Բացի դրանից, մեծամասնական ընտրական համակարգը, ըստ էության, ունի անվիճելի առավելություններ համամասնական ընտրակարգի նկատմամբ այն առումով, որ պատգամավորի հետ ընտրողների ավելի սերտ կապերի ստեղծման համար անհրաժեշտ է, որպեսզի վերջիններս քվեարկեն հոգուտ կոնկրետ թեկնածուի, և ոչ թե՝ կուսակցության կամ դրանց դաշինքի կողմից պատրաստված պատգամավորության թեկնածուների ցուցակի:

Այլ հարց է, որ մեր օրերում արդյունավետ չեն ինչպես համամասնական ընտրակարգով, այնպես էլ մեծամասնական ընտրակարգով կազմավերված Ազգային ժողովի ընտրությունները:

Առաջին դեպքում կուսակցությունների և դրանց դաշինքների կողմից կազմված պատգամավորության թեկնածուների ցուցակներում համախ ընդգրկվում են այնպիսի անձինք, որոնք իրենց մասնագիտական, բարոյական և այլ որակներով որևէ առնչություն չունեն պաշտամենտի և պաշտամենտարիզմի հետ:

Երկրորդ դեպքում ընտրությունների արդյունքների վրա իր կնիքն է թողնում ժողովրդի սոցիալական ծանր վիճակը և պառլամենտական ավանդույթների ու մշակույթի պակասը, որն էլ օգտագործվում է Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածուների կողմից:

2. Նորընտիր Ազգային ժողովի **առաջին նստաշրջանը** գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն **երկու երրորդի** ընտրություններից հետո: Առաջին նստաշրջանի հենց առաջին նիստում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ձեռնամուխ է լինում **իր մարմինների, ներքին կառուցվածքային այլ ստորաբաժանումների ձևավորմանը**:

Ազգային ժողովի 2002թ. փետրվարի 20-ին ընդունած կանոնակարգ օրենքի (առ 2011թ. դեկտեմբերի 30-ը կատարված) փոփոխություններով ու լրացումներով) 2-րդ հոդվածի (3-րդ մաս) համաձայն՝ Ազգային ժողովի մարմիններ են հանդիսանում՝ **ԱԺ նախագահը, նրա տեղակալները, պատգամավորները և հանձնաժողովները**: Ազգային ժողովում կազմավորվում են խմբակցություններ և կարող են ստեղծվել պատգամավորական խմբեր (4-րդ կետ):

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ունի միասպալատ կառուցվածք, որի աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է Ազգային ժողովի առաջին նստաշրջանում պատգամավորների թվից՝ գաղտնի քվեարկությամբ ընտրված **նախագահը**:

Նա ընտրվում է «ԱԺ լիազորությունների ամբողջ ժամկետով» (կան երկրներ (Բելգիա, Դանիա, Ֆինլանդիա, Շվեյցարիա, Շվեդիա և այլն), որոնք պառլամենտի ղեկավարին ընտրում են միայն մեկ նստաշրջանի համար):

Նախագահի թեկնածությունը, սովորաբար, առաջադրում են այն կուսակցությունները, որոնք պառլամենտում ունեն համեմատաբար մեծ թվով պատգամավորներ: Ազգային ժողովի կանոնակարգի համաձայն (17 հոդվ.) Ազգային ժողովի նախագահի պաշտոնում ընտրվելու համար թեկնածությունների առաջադրման իրավունք ունեն միայն պատգամավորները: Բոլոր թեկնածությունների կապակցությամբ Ազգային ժողովում անցկացվում են քննարկումներ, որոնց ընթացքում, քվեարկվելու համար իրենց թեկնածությունը թողնելու համաձայնություն տված անձինք Ազգային ժողովի նիստում հանդես են գալիս ելույթով, պատասխանում պատգամավորների հարցերին: Քվեարկության արդյունքում՝ Ազգային ժողովի պատգամավորների **ընդհանուր թվի ձայների մեծամասնությունն** ստացած թեկնածուն համարվում է ընտրված:

Ազգային ժողովի նախագահի երկու տեղակալները ընտրվում են նույն կարգով, միայն թե այս դեպքում, ընտրվելու համար պահանջվում է **նիստին ներկա պատգամավորների ձայների կեսից ավելին:**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով ԱԺ նախագահին վերապահված են լայն լիազորություններ՝ երկրի օրենսդիր մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու համար: Գատելով, մասնավորապես, Կանոնակարգի 18 հոդվածի բովանդակությունից, կարելի է ասել, որ **այդ լիազորություններն իրականացվում են երկու ուղղությամբ՝** ա) ԱԺ նիստերի ժամանակ և բ) նիստերի միջև ընկած ժամանակամիջոցում:

Առաջին դեպքում (նիստերի ժամանակ) Ազգային ժողովի նախագահը հրավիրում և վարում է ԱԺ նիստերը (այդ թվում արտահերթ նստաշրջաններն ու նիստերը): Նա հետևում է կանոնակարգի պահպանմանը, ելույթի համար ծայն է տալիս, անցկացնում քվեարկություն և հրապարակում արդյունքները, վերահսկում է նիստը սպասարկող աշխատակազմի աշխատանքը: Նա խորհրդարանի հաստատմանն է ներկայացնում նստաշրջանի և չորսօրյա նիստերի օրակարգերի նախագծերը, ինչպես նաև սահմանադրական դատարանի կազմից՝ սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնում նշանակելու համար առաջարկում է թեկնածու և այլն (Սահմանադրության 83 հոդվ. 2-րդ կետ):

Ազգային ժողովի նախագահի լիազորություններն ավելի ծավալուն են **նիստերի միջև ընկած ժամանակահատվածում:** Այդ ընթացքում ԱԺ նախագահը, Սահմանադրությամբ նախատեսված կարգով, Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում, մինչև նորընտիր Նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը, կարող է կատարել վերջինիս պարտականությունները: Նա ներկայացնում է Ազգային ժողովը ինչպես երկրի ներսում՝ պետական իշխանության և ոչ պետական կազմավորութունների հետ հարաբերություններում, այնպես էլ միջազգային կառույցներում, ստորագրում և հրապարակում է ԱԺ որոշումները, ուղերձները և հայտարարությունները, շրջանառության մեջ է դնում օրենքների և Ազգային ժողովի որոշումների նախագծերը, նշանակում է գլխադասային հանձնաժողով, և հաստատում է ԱԺ մշտական հանձնաժողովների կազմը:

Ազգային ժողովի նախագահը կարևոր լիազորություններ է իրականացնում ԱԺ գործունեությունը կազմակերպական առումով ապահովելու ուղղությամբ: Նա հաստատում է Աշխատակազմի կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը, նշանակում և ազատում է Աշխատակազմի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին,

սահմանադրական դատարանում ԱԺ ներկայացուցչին, հաստատում ժամանակավոր հանձնաժողովների փորձագետների (մասնագետների) թվաքանակը, տնօրինում է Ազգային ժողովի նյութական միջոցները և իրականացնում կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

Ազգային ժողովի նախագահի տեղակալը սովորաբար փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ: Իսկ նախագահի ներկայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ վարում է Ազգային ժողովի նիստը, համակարգում հանձնաժողովների աշխատանքները և կատարում նախագահի այլ հանձնարարականներ: ԱԺ նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում նրա պարտականությունները կատարում է այն տեղակալը, որը պաշտոնում ընտրվելիս ստացել է առավել շատ ձայներ:

ԱԺ կանոնակարգով նախատեսված են նաև ԱԺ նախագահի և նրա տեղակալների լիազորությունների դադարման հիմքերը և կարգը (հոդվ. 20):

2) Ազգային ժողովում իրենց կազմակերպական կառուցվածքով և իրավական վիճակի բնորոշ գծերով առանձնանում են **խմբակցությունները և պատգամավորական խմբերը:** **Խմբակցությունների** ձևավորման, դրանց կարգավիճակի և գործունեության հարցերը սահմանված են Ազգային ժողովի կանոնակարգում (գլուխ 2): Այսպես, կանոնակարգի 14 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքով համաձայնակալ ընտրակարգով ընտրված, կուսակցության կամ ընտրական միավորման նախընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորները կազմում են նույնանուն (կուսակցության կամ կուսակցության դաշինքի անունով) **խմբակցություն**՝ անկախ պատգամավորների թվաքանակից:

Հատկանշական է, որ Ազգային ժողովի 2002թ. փետրվարի 20-ի խմբագրությամբ ընդունված կանոնակարգով խմբակցության անդամ կարող էր դառնալ նաև այն պատգամավորը, որն ընդգրկված էր եղել համապատասխան կուսակցության մեծամասնական ընտրակարգով առաջադրված նախընտրական ցուցակում: Սակայն 2007թ. փետրվարի 26-ի խմբագրությամբ կանոնակարգը մնան պահանջ չի առաջադրում: Այսինքն՝ կարելի է կարծել, որ կուսակցության մեծամասնական ընտրակարգով պատգամավորության նախընտրական ցուցակում առաջադրված անձինք պատգամավոր ընտրվելուց հետո իրենց հայեցողությամբ կարող են և չընդգրկվել համապատասխան խմբակցության մեջ:

Դրան հակառակ, Կանոնակարգը նման պահանջ առաջադրում է **կուսակցությունների դաշինքի մեծամասնական ընտրակարգով** առաջադրված ցուցակում ընդգրկված անձանց, որոնք ընտրվել են պատգամավոր: Այսպես, ըստ 14 հոդվածի (1.«բ»կետ)՝ «կուսակցությունների դա-

շինքի առաջադրմամբ ընտրված պատգամավորների միավորմամբ ստեղծված խմբակցությունում ընդգրկվում են նաև այդ դաշինքը կազմած կուսակցությունների առաջադրմամբ մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորները»:

Ազգային ժողովի կանոնակարգի 14 հոդվածը (3-րդ մաս) սահմանում է **խմբակցությունից պատգամավորի դուրս գալու կարգը**: Ըստ այդ հոդվածի՝ պատգամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից այդ մասին գրավոր տեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին: Այսինքն, խմբակցությունից դուրս գալը չի հանգեցնում պատգամավորական լիազորությունների դադարման:

Սակայն հարցի նման լուծումը չի բխում կուսակցության ցուցակով համամասնական կարգով պատգամավոր ընտրվելու հիմնախնդրի բովանդակությունից: Ամբողջ խնդիրն այն է, որ պատգամավորական խմբակցությունից դուրս գալը, ըստ էության, **նշանակում է հրաժարվել կուսակցության նախընտրական հրահրից**, որի օգտին քվեարկել է ժողովուրդը, և որի արդյունքում ինքը դարձել է պատգամավոր:

Այդ հանգամանքի հաշվառմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը 2009թ. հունիսի 30-ի որոշմամբ (ՄԴՌ-810) Կանոնակարգի 14 հոդվածի 3-րդ մասի շարադրանքը ճանաչեց ՀՀ Սահմանադրության թիվ 1, 2 և 7 հոդվածների պահանջներին հակասող և անվավեր: Դա նշանակում է, որ կուսակցական ցուցակներով (համամասնական ընտրակարգով) ընտրված պատգամավորները խմբակցություններից դուրս գալու դեպքում պետք է վայր դնեն իրենց պատգամավորական մանդատը:

Խմբակցությունները և պատգամավորական խմբերը, ըստ էության, **պատգամավորական գործունեության խմբային ձևեր են, որոնք ունեն անհատ պատգամավորների իրավական վիճակի հետ ինչպես ընդհանուր գծեր, այնպես էլ առանձնահատկություններ**:

Ընդհանրությունն այն է, որ խմբակցություններում և պատգամավորական խմբերում ընդգրկված պատգամավորներն ունեն Ազգային ժողովի պատգամավորի համար Սահմանադրությամբ և ընթացիկ օրենսդրությամբ նախատեսված բոլոր իրավունքներն ու պարտականությունները: Դրա հետ մեկտեղ, խմբակցությունների և պատգամավորական խմբերի իրավական վիճակին բնորոշ են որոշ **առանձնահատկություններ**:

ա) Կանոնակարգի համաձայն (16 հոդվ., 1-ին մաս)՝ Ազգային ժողովի նիստերի դահլիճում յուրաքանչյուր խմբակցությանը և պատգամավորական խմբին հատկացվում է առանձին հատված: Նիստերում հարցեր քննարկելու ժամանակ խմբակցությունների և պատգամավորական

խմբերի (պատգամավորների ելույթներից հետո) ներկայացուցիչներին նախագահողը մինչև 12 րոպե տևողությամբ ելույթի համար ձայն է տալիս (55 հոդվ. 9-րդ կետի գ) ենթակետ): Բացի դրանից, Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում խմբակցություններին տեղեր են հատկացվում նրանց թվաքանակի համամասնությամբ և խմբակցության ներկայացմամբ նրա անդամներն ընդգրկվում են այդ հանձնաժողովներում:

բ) Եթե խմբակցությունները կազմավորվում են կուսակցական սկզբունքով, առանց հաշվի առնելու տվյալ կուսակցությանը կամ ընտրական միավորին (կուսակցությունների դաշինքին) պատկանող պատգամավորների քանակը, ապա պատգամավորական խմբերում ընդգրկված պատգամավորների թիվը **չպետք է պակաս լինի 10 հոգուց**՝ անկախ կուսակցական պատկանելությունից:

Կանոնակարգով սահմանված է պատգամավորական խմբի **կազմակերպման և լուծարման կարգը**: Խումբը Ազգային ժողովի նախագահին հայտարարություն է ներկայացնում իր ստեղծման մասին՝ նշելով անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունը և ազգանունը: Հայտարարությունն ստորագրվում է խմբի բոլոր անդամների կողմից և նիստի նախագահողը այն հայտարարում է Ազգային ժողովի հերթական նիստում: Խմբի անվանումը չի կարող համընկնել գործող, կասեցված կամ արգելված որևէ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի անվան հետ:

Պատգամավորական խումբը լուծարվում է իր որոշմամբ կամ ինքնաբերաբար, եթե նրա **անդամների թիվը նվազում է 10-ից և չի լրացվում** փոփոխության մասին նիստում արված հայտարարությունից **հետո երկու շաբաթվա ընթացքում**: Այդ կապակցությամբ (խմբի լուծարման) Ազգային ժողովի նախագահը հայտարարում է Ազգային ժողովի առաջիկա նիստում:

Պատգամավորական խմբի կարգավիճակը հիմնականում նման է խմբակցության կարգավիճակին:

Հայաստանի Հանրապետության չորրորդ գումարման Ազգային ժողովի 131 պատգամավորներից տեղեր էին ստացել **հինգ կուսակցություն**, որոնք ձևավորել էին նույնանուն խմբակցություններ: Այդ խմբակցությունների կազմը 2007թ. սեպտեմբերի 10-ի դրությամբ ուներ հետևյալ պատկերը՝ «Հայաստանի Հանրապետական կուսակցություն»-65, «Բարգավաճ Հայաստան»-25, «Հայ հեղափոխական դաշնակցություն»-16, «Օրինաց երկիր»-8, «Ժառանգություն»-7 պատգամավորներ: Ազգային ժողովի 10 պատգամավորներ չեն ընդգրկվել ոչ խմբակցությունների, ոչ էլ պատգամավորական խմբի մեջ:

§ 3. Ազգային ժողովի պատգամավորը

1. **Պատգամավորի կարգավիճակի ընդհանուր բնութագիրը.** Ազգային ժողովի կանոնակարգի 2 հոդվածում, ի թիվս Ազգային ժողովի մարմինների, նշվում է նաև պատգամավորը:

Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակը պայմանավորված է խորհրդարանում նրա՝ **մշտական հիմունքներով աշխատելու հանգամանքով**, որի ուժով՝ ա) պատգամավորը հանդիսանում է Հանրապետության ողջ ժողովրդի ներկայացուցիչը Ազգային ժողովում, բ) նա օժտված է ազատ մանրատուվ և գ) Սահմանադրությամբ նրա մանդատը համարվում է անհամատեղելի պետական իշխանության այլ մարմիններում պաշտոն զբաղեցնելու հետ:

Ա. **Ազգային ժողովի պատգամավորի՝ Հանրապետության ողջ բնակչության ներկայացուցիչը լինելու հանգամանքը** պայմանավորված է, **ամենից առաջ**, նրանով, որ Ազգային ժողովն ինքը Հայաստանի Հանրապետության ժողովրդին պատկանող **իշխանության օրենսդիր թևի** իրավասությունն իրականացնող մարմին է, որի ընդունած օրենքները և մյուս իրավական ակտերը պարտադիր են կատարման Հանրապետության ողջ տարածքում:

Օրինաստեղծ գործունեությունից զատ, Ազգային ժողովն իրականացնում է լիազորությունների վերաբերյալ Հանրապետության հասարակական և պետական կյանքին վերաբերող **առավել կարևոր այլ խնդիրներ**: Պատգամավորները մասնակցելով հանրապետության օրենսդիր մարմնի աշխատանքներին՝ դրանով իսկ **լուծում են համապետական** նշանակության խնդիրներ:

Երկրորդ, Հանրապետության Հիմնական օրենքը չի սահմանում պատգամավորական մանդատի **կրամայական բնույթը**, այսինքն՝ Ազգային ժողովի պատգամավորն ազատ է իր պատրամենական գործունեության ուղղվածության, օրենսդիր մարմնում (որի անդամն է ինքը) բնակչության կամքի արտահայտման ձևերի ու մեթոդների ընտրության հարցում: Սահմանադրությունը չի բովանդակում հրամայական մանդատի այնպիսի անկապտելի հատկանիշներ, ինչպիսիք են **ընտրողների պատվիրանները պատգամավորին, նրա հետկանչը, ինչպես նաև պատգամավորի հաշվետվությունը նրան առաջադրած ընտրական միավորումների և ընտրողների առջև**: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն Ազգային ժողովի պատգամավորին լիազորում է խորհրդարանական գործունեության ընթացքում առաջնորդվել « իր խղճով և հանդգնունքներով»(հոդվ.66):

Երրորդ, Ազգային ժողովի 131 պատգամավորներից 90-ը ընտրվում է համամասնական ընտրակարգով, որոնց համար **Հանրապետության ողջ տարածքը հանդիսանում է մեկ միասնական ընտրատարածք**: Դա նշանակում է, որ կուսակցությունների և նրանց միավորումների՝ համամասնական ընտրակարգով առաջադրած ցուցակներից ընտրված պատգամավորները հանդիսանում են Հանրապետության ողջ ժողովրդի ներկայացուցիչները Ազգային ժողովում:

Չորրորդ, Ազգային ժողովի պատգամավորների՝ Հանրապետության ողջ բնակչության ներկայացուցիչները լինելու հանգամանքի մասին է վկայում նաև այն, որ Սահմանադրությամբ **պատգամավորը չի կարող** զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Ազգային ժողովի պատգամավորի մանդատի՝ պետական ապարատում պաշտոն զբաղեցնելու և այլ վճարովի գործունեությամբ զբաղվելու, անհամատեղելիության սահմանադրական պահանջը նպատակ ունի կանխել պատգամավորի ուշադրության ամեն մի շեղում իր մշտական խորհրդարանական գործունեությունից: Բացի դրանից, մնան դեպքում պատգամավորին հնարավորություն կլնծեովի իր պատգամավորական պարտականությունները կատարելիս զերծ մնալ ամեն տեսակի կախվածությունից և կողմնակի ազդեցություններից: Եվ, վերջապես, պաշտոնների համատեղման արգելումը բխում է **իշխանությունների բաժանման սկզբունքից**, որի էությունը օրենսդիր և գործադիր իշխանությունների՝ միևնույն մարմինների կամ անձանց ձեռքում կենտրոնացման արգելումն է:

Սահմանադրության 65 հոդվածում բովանդակված արգելքից բացառություն է նախատեսվում միայն այն անձանց համար, ովքեր զբաղվում են մանկավարժական, գիտական և այլ ստեղծագործական գործունեությամբ: Այդ բացառությունն, իհարկե, **չի տարածվում** գիտական, մշակութային, ուսումնական հաստատությունների **վճարովի վարչական պաշտոնների վրա**:

Եթե պատգամավորն իր գրավոր համաձայնությամբ նշանակվում կամ ընտրվում է պատգամավորի կարգավիճակի հետ անհամատեղելի պաշտոնում, ապա այդ մասին համապատասխան մարմինը **երկօրյա ժամկետում** պաշտոնապես տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին: Այնուհետև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կա-

նոնակարգի 13 հոդվածի համաձայն՝ պատգամավորի լիազորությունների դադարեցման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում է Ազգային ժողովի նախագահը և հնգօրյա ժամկետում ուղարկում կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Բ. Ժողովրդի ներկայացուցիչ և «ազատ» մանդատով օժտված լինելուց զատ, Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակը բնութագրվում է ևս մեկ կարևոր կողմով՝ նա որոշ իմաստով հանդիսանում է նաև *ի-րեն ընտրած ընտրատարածքի բնակչության ներկայացուցիչն Ազգային ժողովում և նրա մանդատն ունի «ժրամայական» մանդատի որոշ դրսևորումներ:*

Ինչպես վերը նշվեց, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66 հոդվածը (առաջին մաս) Ազգային ժողովի պատգամավորին իրավունք է վերապահում իր գործունեության ընթացքում ազատորեն առաջնորդվել «իր խղճով և համոզմունքներով»: Սակայն *կարո՞ղ է Ազգային ժողովի պատգամավորը լինել քացարձակ ազատ և իր գործունեությունն իրականացնել միայն իր հայեցողությամբ*, առանց կողմնակի ազդեցության: **Բնական է, որ՝ ոչ:** Նման եզրահանգման համար կան մի շարք պատճառներ:

Առաջին, կուսակցական ցուցակներով ընտրված պատգամավորների ընտրությունն ապահովում են համապատասխան կուսակցությունները և ընտրական միավորումները (կուսակցությունների դաշինքները): Բնականաբար, Ազգային ժողովում ձևավորված նույնանուն խմբակցություններում ընդգրկված պատգամավորները *պարտավոր են կատարել* տվյալ կուսակցության ցուցումներն ու հանձնարարությունները: Եթե պատգամավորն անհնազանդություն է դրսևորում, ապա կարող է դուրս գալ (կամ վտարվել) խմբակցությունից, դրանով իսկ խզելով կապերը տվյալ կուսակցության հետ, և հաջորդ ընտրություններում կրկին նրա աջակցությունից:

Երկրորդ, այն, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն Ազգային ժողովի պատգամավորի համար չի ճանաչում հրամայական մանդատը, որի պատճառով քացակայուն է նաև ընտրողների կողմից նրան հետ կանչելու իրավունքը, դեռևս նրան չի ազատում ընտրողների ազդեցությունից, քանի որ պատգամավորի մանդատի ճակատագիրը, վերջին հաշվով, վճռվում է նրանց ընտրողների կամարտահայտությամբ: Մասնավորապես, *մեծամասնական ընտրակարգով* առաջադրված պատգամավորության թեկնածուներն ընտրվում են կոնկրետ ընտրատարածքներում՝ այնտեղ ապրող ընտրական տարիքի հասած քաղաքացիների կողմից տրված ձայների հիման վրա: Այսինքն՝ նրանք,

առաջին հերթին, տվյալ ընտրատարածքի բնակչության ներկայացուցիչներն են Ազգային ժողովում և պարտավոր են այնտեղ, ամենից առաջ, ներկայացնել իրենց ընտրատարածքի բնակչության կամքն ու շահերը: Պատահական չէ, որ Ազգային ժողովում, որպես կանոն, մեծամասնական ընտրակարգով ընտրված ամեն մի պատգամավոր ելույթ ունենալիս՝ ներկայանում է որպես կոնկրետ ընտրատարածքի ներկայացուցիչ (վկայակոչելով իր ընտրատարածքի համարը) և ներկայացնում իր ընտրատարածքի բնակչությանը հուզող խնդիրներ:

Երրորդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը չի բովանդակում այնպիսի նորմեր, որոնք պարտավորեցնեն Ազգային ժողովի պատգամավորին՝ կապ պահպանել իր ընտրողների հետ, լսել նրանց դիմումները, բողոքները և առաջարկությունները: Սակայն վերջիններս (համեմայն դեպս, նրանց ճնշող մեծամասնությունը) կանոնավոր կերպով հանդիպումներ են ունենում իրենց ընտրողների հետ, կատարում ընդունելություն, տեղեկություններ հաղորդում իրենց գործունեության մասին և նրանց առաջարկությունները ներկայացնում Ազգային ժողով:

Ելնելով այս հանգամանքից (և գործընթացին կազմակերպված տեսք տալու համար), Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգը ամրագրել է, որ պատգամավորը հանդիպումներ է ունենում քաղաքացիների հետ, ընդունելություն է կազմակերպում իր ընտրատարածքում, ուսումնասիրում և օրենսդրությանը համապատասխան ընթացք է տալիս ընտրողներից ստացած առաջարկություններին և դիմումներին:

Պատգամավորի կողմից օրենսդրության այդ պահանջը (որը հրամայական մանդատին հատուկ հատկանիշ է) արդյունավետ իրականացնելու համար Կանոնակարգի 7 հոդվածը (5-րդ մաս) պարտավորեցնում է տեղական ինքնակառավարման մարմիններին՝ խմբակցության, պատգամավորական խմբի կամ պատգամավորի պահանջով, ամսական առնվազն մեկ օր կահավորված սենյակ կամ դահլիճ հատկացնել դիմողին՝ քաղաքացիների ընդունելության և նրանց հետ հանդիպելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակի բնութագրության համար կարևոր է նաև նրա **լիազորությունների ծազման և դադարման հիմքերի պարզումը:**

Ա) Ներկա պայմաններում Ազգային ժողովի պատգամավորի պատգամավորական լիազորությունների **ծազման հարցում** քացակայուն է կոնկրետությունը, այսինքն՝ որևէ իրավական ակտով սահմանված չէ, թե **որ պահին են ծազում նրա պատգամավորական լիազորությունները**՝ քվեարկության արդյունքները ամփոփելու և հրապարակելու՞, պատգա-

մավորական վկայականը ստանալու՝, թե՞ տվյալ գումարման Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվելու պահից:

Խնդիրն այն է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68 հոդվածի(4-րդ մաս) համաձայն՝ «Նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ **երրորդ հինգշաբթի օրը**»: Դա նշանակում է, որ Ազգային ժողովի առանձին պատգամավորների ընտրության ժամկետը կարող է տարբեր լինել: Ռիստի պետք է ենթադրել, որ Ազգային ժողովի **պատգամավորի լիազորություններն սկսվում են նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ծագման հետ**: Այդ հետևության համար հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63 հոդվածը (2-րդ մաս), որի համաձայն՝ Ազգային ժողովի լիազորություններն սկսվում են նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահից: Այդ օրն էլ պետք է համարել Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունների ծագման սկիզբը:

Ինչ վերաբերում է լրացուցիչ ընտրությունների միջոցով պատգամավոր դարձածներին, ապա վերջիններին պատգամավորական լիազորությունները ծագում են Ազգային ժողովի նիստում ԱԺ նախագահի կողմից նրանց՝ պատգամավոր ընտրվելու վերաբերյալ արված հայտարարության պահից:

Բ. Եթե գործող օրենսդրությամբ առանձնապես հստակ չի սահմանված Ազգային ժողովի պատգամավորի մանդատի գործողության սկիզբը, ապա այդ չի կարելի ասել դրա **դադարման հարցի լուծման վերաբերյալ**: Հանրապետության Հիմնական օրենքն սպառնիչ կերպով թվարկում է այն բոլոր հիմքերը, որոնց առկայության դեպքում կարող են դադարել Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունները:

Ըստ ՀՀ Սահմանադրության 67 հոդվածի, պատգամավորի լիազորությունները դադարում են՝ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու, նրա արձակման, պետական այլ պաշտոն զբաղեցնելու կամ վճարովի այլ աշխատանք կատարելու, ՀՀ քաղաքացիությունը կորցնելու, մեկ հեթանակական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելու, ազատագրկման դատապարտվելու, անգործունակ ճանաչվելու և հրաժարականի դեպքերում:

Պատգամավորի լիազորությունների **դադարման կարգը** սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգով: Այսպես, պատգամավորի մահվան, ՀՀ քաղաքացիությունը կորցնելու մասին ներկայացված համապատասխան տեղեկանքի, ազատագրկման դատապարտվելու կամ անգոր-

ծունակ ճանաչվելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի և որոշման հիման վրա կազմվում է պատգամավորի լիազորությունների դադարման մասին **արձանագրություն**, որն ստորագրում է Ազգային ժողովի նախագահը և **հնգօրյա ժամկետում** ուղարկում կենտրոնական ընտրական հանձնաժողով (12 հոդվ.):

Որոշ առանձնահատկություն ունի պատգամավորի **հրաժարական տալու արարողակարգը**: Կանոնակարգի 13 հոդվածի համաձայն պատգամավորն իր հրաժարականի մասին դիմումը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին, որն էլ առաջիկա նիստում Ազգային ժողովին տեղեկացնում է այդ մասին: Եթե նիստում հրաժարականը **հրապարակվելուց 15 օր հետո պատգամավորը հետ չի վերցնում** հրաժարականի մասին իր դիմումը, ապա նրա լիազորությունների դադարման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում է Ազգային ժողովի նախագահը և **հնգօրյա ժամկետում** ուղարկում է կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Սակայն հարկ է նշել, որ Ազգային ժողովը պատգամավորի հրաժարականի յուրաքանչյուր դեպք նպատակահարմար է, որպեսզի քննության առնի և պարզի հրաժարականի իրական հիմքերն ու դրդապատճառները: Ամենին բացառված չէ, որ պատգամավորի հրաժարականը կապված լինի պատգամավորական լիազորությունների կատարման կապակցությամբ նրա նկատմամբ գործադրված արտաքին ճնշումների և ահաբեկչության հետ: Նման դեպքում Ազգային ժողովը պետք է ոչ միայն չընդունի պատգամավորի հրաժարականը, այլև ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ պատգամավորի գործունեության համար նորոշյալ պայմաններ ապահովելու և մեղավորին պատասխանատվության ենթարկելու կապակցությամբ:

Կանոնակարգն ավելի մանրամասն կարգավորում է պատգամավորական լիազորությունների **դադարման արարողակարգը**՝ մեկ նստաշրջանի ընթացքում քվեարկությունների կեսից պատգամավորի անհարգելի բացակայության դեպքում (99 հոդվ.):

Սակայն պետք է նշել, որ, ինչպես Սահմանադրության, այնպես էլ Կանոնակարգի նշված նորմերում սահմանված կառուցակարգերը **արդյունավետ չեն գործում**: Ամենքին է հայտնի, որ Ազգային ժողովի նիստերին պարբերաբար քվորում չլինելու (պատգամավորների չներկայանալու) պատճառով երկրի համար կարևոր օրենքների նախագծերի քննարկումները հետաձգվում են, մշտական հանձնաժողովների աշխատանքներից պատգամավորների հաճախակի բացակայության պատճառով ձգձգվում են օրինագծերի քննարկման աշխատանքները: Սակայն հանրապետության օրենսդիր մարմնի գործունեության ավելի քան 20 տարի-

ների ընթացքում դեռևս որևէ պատգամավորի լիազորություն չի դադարեցվել՝ Ազգային ժողովի աշխատանքներին անհարգելի պատճառով չմասնակցելու համար: Այն, որ կանոնակարգով (6 հոդվածի 1.1 կետ) Ազգային ժողովի կամ մշտական հանձնաժողովների նիստերից անհարգելի բացակայության համար (բացակայած օրերի համար) պատգամավորին **աշխատավարձը չեն վճարում**, նույնպես արդյունավետ միջոց չէ երկրի օրենսդիր մարմնում կարգապահության ապահովման հարցում, քանզի պատգամավորների ճնշող մեծամասնությունը նյութապես ապահովված է:

Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմինը գործում է մշտական հիմունքներով, այսինքն՝ պատգամավորները պետական ծառայողներ են և պարտավոր են սահմանված ժամկետում (աշխատանքն սկսվելու պահից) ներկայանալ աշխատանքի և աշխատել օրենքով նրանց համար նախատեսված ժամաքանակի սահմաններում, չնայած նրանց աշխատանքը նորմավորված չէ: Այդ կապակցությամբ նպատակահարմար կլինի նրանց վրա տարածել ՀՀ աշխատանքային օրենսդրության նորմերը, իհարկե, հաշվի առնելով Ազգային ժողովի, որպես ընտրովի ներկայացուցչական մարմնի, գործունեության առանձնահատկությունները:

3. Պատգամավորի կարգավիճակի և գործունեության օրենսդրական ամրագրումը: Պատգամավորի կարգավիճակն ընդգրկում է նրա իրավունքների և պարտականությունների ամբողջությունը, որի իրականացման էլ ուղղված է նրա գործունեությունը: Հանդես գալով որպես ժողովրդի լիազոր ներկայացուցիչ, պատգամավորը **պարտավոր** է մասնակցել Ազգային ժողովի նիստերին և զբաղվել օրինաստեղծ գործունեությամբ: Այդ իմաստով նրա լիազորություններն ածանցված են Ազգային ժողովի լիազորություններից (քանի որ խորհրդարանի գլխավոր խնդիրն օրինաստեղծ գործունեությունն է) և պետք է նպատակաուղղված լինեն օրենքների առավել որակյալ նախագծերի նախապատրաստմանն ու ընդունմանը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 65 հոդվածում (3-րդ մաս) ուղղակի ամրագրված է, որ «Պատգամավորի կարգավիճակը և գործունեության երաշխիքները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»: Սակայն առ այսօր Հանրապետության օրենսդիր մարմնի կողմից չի ընդունվել պատգամավորի կարգավիճակի մասին օրենք: Նրա միայն մի քանի առավել կարևոր լիազորություններ իրենց ամրագրումն են ստացել Սահմանադրության մեջ (հոդվ. 65, 66, 70, 75, 80, 84) և որոշ լիազորություններ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրեն-

քում, որն առավելապես ոչ նյութական, այլ ընթացակարգային բնույթի նորմեր բովանդակող օրենք է:

Այդ օրենսդրական ակտերում զետեղված պատգամավորի կարգավիճակի և նրա գործունեության վերաբերյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ Ազգային ժողովի պատգամավորի գործունեությունն ընթանում է 2 ուղղությամբ՝ Ազգային ժողովում և ընտրատարածքի բնակչության շրջանում:

Ա **Ազգային ժողովում** պատգամավորի կարգավիճակի առանցքն է կազմում նրա **օրենսդրական նախաձեռնության իրավունքը**: Սահմանադրական իրավունքի տեսության համաշխարհային փորձը վկայում է, որ, կախված **օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների շրջանակից**, պատրամենտները կարելի է դասակարգել 2 խմբի՝ ա) որտեղ այդ շրջանը բավական մեղ է և բ) որտեղ օրենսդրական նախաձեռնության իրավունքը վերապահված է մեծ թվով սուբյեկտների:

Օրինագծերի նախապատրաստումը պահանջում է բարձր պրոֆեսիոնալիզմ և օրինաստեղծ սուբյեկտների փոխհամաձայնեցված գործունեություն, ամբողջ ուշադրության կենտրոնացում կոնկրետ և կարևոր օրինագծերի մշակման վրա: Նման խնդրի իրականացումը հնարավոր է միայն **սահմանափակ թվով սուբյեկտների** օրինաստեղծ գործունեության դեպքում, որի արդյունքում միայն կարելի է ակնկալել առավել որակյալ օրինագծերի աշխարհ գալը:

Օրենսդրական նախաձեռնության իրավունքի վերապահումը մեծ թվով սուբյեկտների (օրինակ, ՌԴ Սահմանադրության 104 հոդվածի համաձայն օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն ՌԴ Նախագահը, Դաշնության խորհուրդը, Դաշնության խորհրդի անդամները, Պետական Դումայի պատգամավորները, ՌԴ կառավարությունը, ՌԴ սուբյեկտների օրենսդիր մարմինները, ՌԴ սահմանադրական դատարանը, ՌԴ գերագույն դատարանը, ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանը), մի կողմից, վկայում է ներկայացուցչական մարմինների օրենսդրական գործունեության կազմակերպման մեջ **ժողովրդավարական սկզբունքների ընդլայնման մասին**, մյուս կողմից, այն տանում է դեպի նորմաստեղծ գործընթացի բարդացում, որը արդյունք է օրինագծեր մշակող մեծ թվով անձանց և կազմակերպությունների **միջև կապի և փոխհամաձայնության բացկայության**: Այն հնարավորություն չի տալիս օրենսդրական գործընթացը միավորել մեկ միասնական ամբողջության մեջ և չի նպաստում աշխատանքների կենտրոնացմանը կոնկրետ օրինագծերի վրա:

Հայաստանի Հանրապետությունը պատկանում է *առաջին խումբ պետությունների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Հնդկաստան և այլն) քվին*: Երկրի Հիմնական օրենքի 75 հոդվածի համաձայն, Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է *պատգամավորներին և կառավարությանը*:

Պատգամավորներն իրենց օրենսդրական նախաձեռնությունն իրականացնում են Կանոնակարգի 47-50 հոդվածներում սահմանված կարգով: Համաձայն 47 և 48 հոդվածների, պատգամավորն իր օրենսդրական նախաձեռնությունն իրականացնում է Ազգային ժողովի քննարկմանն *օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի*, ինչպես նաև նախագծերի առաջադրման ձևով: Օրենքի նախագծերի փաթեթն ներառում է առաջադրվող օրենքի նախագիծը և օրենքի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ օրենքների նախագծեր:

Օրենքի նախագիծ կամ նախագծերի փաթեթ ներկայացնելիս պատգամավորը *պարտավոր է հիմնավորել օրենքի ընդունման անհրաժեշտությունը*: Եթե նախագիծը վերաբերվում է այս կամ այն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելուն, ապա նախագիծն պետք է կցվի տեղեկանք, որտեղ ներկայացվում է գործող օրենքի փոփոխվող հոդվածը: Արգելված է օրենքի նախագիծում ընդգրկել մեկից ավելի օրենքներում փոփոխություն կամ լրացում կատարելու մասին դրույթներ:

Օրինագիծն Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով ներկայացվում է Ազգային ժողովի նախագահին, որն էլ այն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է մշտական հանձնաժողովներ՝ նշելով գլխադասայինը (այն հանձնաժողովը, որը ԱԺ նիստում ներկայացնում է նախագիծը), և կառավարություն՝ վարչապետին:

Պատգամավորն իրավունք ունի մասնակցելու հանձնաժողովում իր նախաձեռնության քննարկմանը: Գլխադասային հանձնաժողովը 30 օրում, իսկ կառավարությունը 20-օրյա ժամկետում եզրակացություն են տալիս ստացված նախագծի վերաբերյալ, որից հետո Ազգային ժողովի նախագահը նախագիծը և դրա մասին առկա եզրակացությունները ներկայացնում է Ազգային ժողովի հերթական չորսօրյա նիստին՝ քվեարկության դնելով մտաշրջանի օրակարգում օրենսդրական նախաձեռնությունն ընդգրկելու մասին հարցը:

Պատգամավորների օրենսդրական նախաձեռնությունը չորսօրյա նիստերի օրակարգ է մտնում ոչ ուշ, քան մտաշրջանի օրակարգում ընդգրկվելուց 60 օր հետո (հոդվ. 54):

Պատգամավորի հաջորդ կարևոր լիազորությունը, որը նա իրականացնում է Ազգային ժողովում, Սահմանադրության 80 հոդվածին համա-

պատասխան, *հարցերով կառավարությանը* դիմելու իրավունքն է: Հերթական մտաշրջանի չորսօրյա նիստերի *յուրաքանչյուր չորեքշաբթի օրվա վերջին* նիստում վարչապետը և կառավարության անդամները ներկայանում են Ազգային ժողով և պատասխանում պատգամավորների հարցերին: Ընդ որում, հարցերը տրվում են ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր (կանոնակարգի 105 հոդվ.):

Գրավոր հարցը պատգամավորը հանձնում է Ազգային ժողովի աշխատակազմ, որը պարտավոր է նույն օրն ուղարկել կառավարություն: Վարչապետը կամ նրա հանձնարարությամբ՝ կառավարության համապատասխան անդամը, հարցը ստանալուց հետո *երկշաբաթյա ժամկետում* պարտավոր է Ազգային ժողովի նիստում պատասխանել պատգամավորի հարցին՝ այդ մասին վաղօրոք տեղյակ պահելով վերջինիս և Ազգային ժողովի աշխատակազմին: Պատգամավորն իր հարցի պատասխանը ստանում է գրավոր:

Կանոնակարգի 105 հոդվածի (6-րդ մաս) համաձայն՝ Ազգային ժողովի նիստում երեք լուպեի ընթացքում պատգամավորը խոսափողից կրկնում է կառավարությանն ուղղած իր գրավոր հարցը, իսկ նրան գրավոր պատասխանած կառավարության անդամը (կամ վարչապետը) նույն կարգով խոսափողից ներկայացնում է պատասխանը՝ *երեք լուպեի ընթացքում*: Եթե պատգամավորին չի բավարարում պատասխանը, ապա իրավունք ունի երկու լուպեի ընթացքում շարադրել իր կարծիքը կամ առարկությունները պատասխանի վերաբերյալ, որին կառավարության անդամը (կամ վարչապետը) կարող է արձագանքել նույն տևողությամբ (2 լուպե) պատասխանով:

Դրա հետ մեկտեղ, Կանոնակարգով սահմանված՝ Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով կառավարությանը դիմելու կարգը չի սահմանափակում պատգամավորի իրավունքը *ցանկացած ժամանակ նաև ուղղակի գրավոր դիմել կառավարությանը* և օրենքով սահմանված կարգով ստանալ իր հարցի պատասխանը:

Մակայն խնդիրն այն է, որ կառավարությանը պատգամավորների կողմից հարցեր տալը (ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր)՝ ինչպես ԱԺ նիստերում, այնպես էլ նրանից դուրս, Ազգային ժողովի կողմից կառավարության նկատմամբ իրականացվող վերահսկողության ոչ արդյունավետ միջոց է: Այն փաստորեն ունի զուտ բարոյական բնույթ, որովհետև Ազգային ժողովն այդ կապակցությամբ *չի ընդունում իրավական հետևանքներ ունեցող որոշումներ*, որոնց հիման վրա հնարավոր լինի պատասխանատվության ենթարկել իր գործունեության մեջ թերացած կառավարության անդամին:

Օրենսդրության ոլորտում առկա այդ բացը որոշ չափով կարծես թե, լրացվեց 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում, երբ երկրի Հիմնական օրենքի 80 հոդվածը լրացվեց **հարցապնդման ինստիտուտի վերաբերյալ նոր դրույթով**: Ըստ այդ նորմի, խմբակցությունները և պատգամավորական խմբերը իրավունք ստացան հարցապնդումներով դիմելու կառավարությանը: Ընդ որում, «Հարցապնդումները ներկայացվում են գրավոր և քննարկումից առնվազն տասն օր առաջ»:

Հարցապնդումներով դիմելու, քննարկում կազմակերպելու և դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով: Ըստ Կանոնակարգի 105¹ հոդվածի «Հարցապնդումը կառավարության իրավասությանը վերապահված որոշակի հարցի վերաբերյալ խմբակցության կամ պատգամավորական խմբի կողմից կառավարությանն ուղղված գրավոր հարցումն է, որը կարող է քննարկվել Ազգային ժողովում, և որի վերաբերյալ Ազգային ժողովը կարող է կայացնել որոշում»:

Հարցապնդումը հանձնվում է ԱԺ աշխատակազմ, որը նույն օրն այն ուղարկում է կառավարություն: Հարցապնդմանը կից կարող են ներկայացնել դիմում առնչվող տեղեկանքներ, եզրակացություններ, տեղեկատվական ու վերլուծական այլ նյութեր:

Հարցապնդումը ստանալուց հետո՝ 20 օրվա ընթացքում կառավարությանը գրավոր պատասխանում է հարցապնդման հեղինակ խմբակցությանը կամ պատգամավորական խմբին: Հարցապնդումներն այնուհետև, ըստ դրանց պատասխանների ստացման հաջորդականության, ընդգրկվում են հերթական նստաշրջանի առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգում: Օրակարգում ընդգրկված հարցապնդումները քննարկվում են հերթական նստաշրջանի չորսօրյա նիստերի յուրաքանչյուր չորեքշաբթի օրվա երկրորդ նիստում:

Հարցապնդման քննարկումն ավարտվում է նրանով, որ հարցապնդման հեղինակ խմբակցության կամ պատգամավորական խմբի ներկայացուցիչն իր եզրափակիչ ելույթում կարող է առաջարկել Ազգային ժողովին՝ ընդունել հարցապնդման վերաբերյալ **իրավասու պետական կառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց առաջարկություններ ներկայացնելու մասին որոշում**: Եթե այդ կապակցությամբ ընդունվում է որոշում, ապա ԱԺ նախագահն ստորագրում է այն և 24 ժամվա ընթացքում ուղարկում համապատասխան մարմիններին, որոնք պարտավոր են ԱԺ նախագահին ուղարկել իրենց գրավոր պատասխանները մինչև առաջիկա չորսօրյա նիստերի սկիզբը: ԱԺ նախագահը դրանք հնչեցնում է

հերթական նստաշրջանի չորսօրյա նիստերի յուրաքանչյուր չորեքշաբթի օրվա առաջին նիստի սկզբում:

Ազգային ժողովի կանոնակարգի բերված հոդվածի (105¹) բովանդակությունից պարզորոշ հետևում է, որ հարցապնդման ինստիտուտը, ինչպես որ ամրագրված է Կանոնակարգում, նույնպես չի բովանդակում գործադիր իշխանության նկատմամբ օրենսդիր մարմնի կողմից իրականացվող վերահսկողության արդյունավետ կառուցակարգեր: Ասվածի համար հիմք են ծառայում հետևյալ հանգամանքները:

Առաջին կանոնակարգը Ազգային ժողովին չի պարտադրեցնում պարտադիր կերպով քննության առնել խմբակցությունների և պատգամավորական խմբերի կողմից կառավարությանն ուղղված հարցապնդումները և ընդունել պարտադիր որոշում, այլ նա (Ազգային ժողովը) **«կարող է քննարկել հարցապնդումը»** և դրա վերաբերյալ **«կարող է կայացնել որոշում»** (105¹ հոդվ. 1-ին կետ):

Երկրորդ, խմբակցությունը կամ պատգամավորական խումբը նույն նստաշրջանի ընթացքում կառավարությանը հարցապնդումով կարող է դիմել **ընդամենը մեկ անգամ**: Իսկ ինչպես վարվել, եթե կառավարության գործունեության մեջ վերջիններս մեկ նստաշրջանի ընթացքում մկատում են մեկից ավել խախտումներ և թերություններ:

Երրորդ, հարցապնդումների քննարկման արդյունքում Ազգային ժողովը ոչ թե ընդունում է կառավարության գործունեության մեջ տեղ գտած թերությունները դատապարտող և իրավական հետևանքներ ունեցող որոշում, այլ՝ խմբակցությունների կամ պատգամավորական խմբերի կողմից գործադիր մարմիններին կամ նրանց պաշտոնատար անձանց առաջարկություններ ներկայացնելու մասին որոշում: Նման որոշումներն, ըստ էության, պետական իշխանության գործադիր մարմիններին որևէ ձևով չեն պարտավորեցնում, ուստի չեն կարող նրանց նկատմամբ օրենսդիր իշխանության կողմից իրականացվող արդյունավետ վերահսկողության միջոց հանդիսանալ:

Պատգամավորական հարցապնդման ինստիտուտը, որպես գործադիր իշխանության նկատմամբ պաշտամենտական վերահսկողության ավելի փորձված և ազդեցիկ միջոց, վաղուց ի վեր կիրառվում է արտասահմանյան շատ երկրների պաշտամենտական գործունեության պրակտիկայում:

Հարցապնդման իմաստն այն է, որ պատգամավորը կամ պատգամավորական խումբը իրավունք ունի խորհրդարանի նիստում գրավոր դիմելու երկրի գործադիր և դատական իշխանության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին և նրանց ղեկավարներին՝ վեր-

ջիններիս իրավասությանն ենթակա հարցերով: Մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են նիստում բանավոր կամ գրավոր պատասխանել առաջադրված հարցին անհապաղ կամ խորհրդարանի կողմից սահմանված ժամկետում (օրինակ, ՌԳ խորհրդարանում հարցապնդման գրավոր պատասխանի համար նախատեսվում է մինչև 15 օր): Հարցապնդման վերաբերյալ պառլամենտը **պարտադիր կերպով ընդունում է որոշում**, որը կարող է առաջ բերել իրավական հետևանքներ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը պատգամավորին իրավունք է վերապահում նաև **պահանջելու հրավիրել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան** (հոդվ. 70), անվստահություն հայտնել կառավարությանը (հոդվ. 74 և 84), ընդգրկվել Ազգային ժողովի կողմից կազմված հանձնաժողովներում, հանդես գալ ելույթներով, հարցեր տալ ելույթ ունեցողներին, մասնակցել կառավարության դռնբաց նիստերին և իրականացնել իր կարգավիճակից բխող այլ լիազորություններ:

Պատգամավորներն Ազգային ժողովում և համապատասխան մշտական հանձնաժողովում, որի անդամն են իրենք, քննարկվող բոլոր հարցերի վերաբերյալ ունեն վճռական ձայնի իրավունք:

Ազգային ժողովում իրականացվող լիազորություններից գառ, պատգամավորն ունի նաև որոշ **պարտականություններ**: Նա պարտավոր է մասնակցել Ազգային ժողովի նիստերին և այն հանձնաժողովի աշխատանքներին, որի անդամն է ինքը: Այդ պարտականությունը բարելիսդն կերպով չկատարելու դեպքում Կանոնակարգի 99 հոդվածում նախատեսված կարգով նա կարող է զրկվել պատգամավորական մանդատից:

Ազգային ժողովի պատգամավորը **պարտավոր է պահպանել պատգամավորական էթիկայի կանոնները**: Մասնավորապես, ելույթ ունենալու ժամանակ նա իրավունք չունի օգտագործել կոպիտ, վիրավորական արտահայտություններ, որոնցով նսեմացվի մյուս պատգամավորների և այլ անձանց պատիվն ու արժանապատվությունը, թույլ տալ ելույթ մեկի հասցեին անհիմն մեղադրանքներ, օգտագործել կանխակալ սուտ լուրեր և տվյալներ, անօրինական գործողությունների կոչ անել: Նշված կանոնների խախտման դեպքում, Ազգային ժողովի կանոնակարգի 45 հոդվածով (3-րդ մաս) սահմանված կարգով, նիստը նախազգախորհրդով զգուշացնում է կարգազանցին, իսկ եթե հոետորն անտեսում է դա, ապա առանց զգուշացնելու անջատում է խոսափողը:

Բ. Ազգային ժողովի պատգամավորը լայն գործունեություն է ծավալում իր ընտրատարածքի բնակչության շրջանում: Հանդիսանալով իրենց ընտրողների ներկայացուցիչները, Ազգային ժողովի պատգամավորները մշտական կապ են պահպանում նրանց հետ: **Մեծամասնական ընտրա-**

կարգով միամանդատ ընտրատարածքներից ընտրված պատգամավորները կապ են պահպանում իրենց **ընտրատարածքի բնակչության հետ**, իսկ **համամասնական ընտրակարգով** ընտրված պատգամավորները (որոնց համար հանրապետության ողջ տարածքը համարվում է մեկ միասնական ընտրատարածք) կապ են պահպանում համապատասխան խմբակցության կողմից որոշված տարածքի (որը, որպես կանոն, բնդրկում է հանրապետության այն տարածքը, որտեղից տվյալ **կուսակցությունը ավելի շատ ձայներ է ստացել**) բնակչության հետ:

Պատգամավորը կարող է ընտրողների հետ հանդիպել ըստ անհրաժեշտության: Սակայն օրենսդրությունը պարտավորեցնում է տեղական ինքնակառավարման մարմիններին պատգամավորի պահանջով ընտրատարածքում **ամիսն առնվազն մեկ օր** կահավորված սեմյակ հատկացնել նրան՝ քաղաքացիների ընդունելության համար:

Աշխատելով ընտրողների հետ, պատգամավորները պարտավոր են միջոցներ ձեռնարկել ապահովելու ընտրատարածքի բնակչության իրավունքները, ազատությունները և օրինական շահերը. իրենց լիազորությունների շրջանակներում ուսումնասիրել և օրենսդրությանը համապատասխան՝ ընթացք տալ նրանց առաջարկություններին ու դիմումներին. ուսումնասիրել հասարակական կարծիքը և, անհրաժեշտության դեպքում, այդ կապակցությամբ առաջարկություններ կայացնել պետական իշխանության համապատասխան մարմին, տեղական ինքնակառավարման մարմին կամ հասարակական կազմակերպություն:

Պատգամավորի գործունեությունը բնակչության շրջանում հանդիսանում է օրենսդիր մարմնի աշխատանքի կազմակերպման **բովանդակային կողմը**: Խնդիրն այն է, որ պատգամավորներից յուրաքանչյուրը հանդիպելով իր ընտրողների հետ, լսելով նրանց կարծիքները, առաջարկություններն ու քոլոքները՝ ինչպես ընտրատարածքի սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ հարցերի, այնպես էլ ողջ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի մասին, ամփոփում է այն և ներկայացնում օրենսդիր մարմին: Այստեղ, բոլոր պատգամավորների կողմից ներկայացված տվյալների ամփոփման հիման վրա, պառլամենտը պարզում է երկրի մասշտաբով տարբեր ոլորտներում տիրող իրավիճակը, որն էլ դրվում է օրենսդիր մարմնի գործունեության հիմքում: Օրինակ, եթե այդ ամփոփումներից պարզվում է, որ առողջապահության կամ կրթության վիճակը երկրի մեծ մասում անմխիթար է, ապա խորհրդարանը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան օրենքի ընդունմանը: Այդ ճանապարհով ընդունված օրենքը դառնում է իրավական, որովհետև ընդուն-

վում է սոցիալական արդարության, ժողովրդի մեծամասնության կամաարտահայտության հիման վրա:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեությանը մասն է որակ հաղորդելու համար նպատակահարմար կլինի օրենսդրական մակարդակով ամրագրել ընտրողների հետ պատգամավորների ավելի հաճախակի հանդիպումները, որոնք առատ նյութ կտան Ազգային ժողովի իրավաստեղծ գործունեության համար:

4. Պատգամավորի գործունեության երաշխիքները: Պատգամավորների վրա դնելով ամենապատասխանատու պարտականություններ (իրավաստեղծ գործունեությունը), օրենսդրությունը միաժամանակ նրանց աշխատանքի համար նախատեսում է բոլոր անհրաժեշտ պայմանները: Այդ պայմաններն այն **երաշխիքներն են**, որոնք կոչված են ապահովելու պատգամավորների արդյունավետ գործունեությունը: Այդպիսի երաշխիքներ նախատեսվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Ազգային ժողովի կանոնակարգով և այլ օրենսդրական ակտերով:

Պատգամավորի գործունեության երաշխիքները սահմանադրական իրավունքի գիտության մեջ պայմանականորեն բաժանում են (ուսումնասիրությունը և կիրառությունը հեշտացնելու համար) երեք խմբի՝ ա) կազմակերպական, բ) տնտեսական և գ) պատգամավորի անձեռնմխելիության իրավունքի:

ա) կազմակերպական երաշխիքները կապված են առավելապես տարբեր տեսակի պետական և ոչ պետական մարմինների հետ, որոնց օրենսդրությունը պարտավորեցնում է աջակցել, **օժանդակել պատգամավորին՝** իր գործունեությունն իրականացնելիս: Ընդ որում, պատգամավորի տարբեր լիազորությունների իրականացման կազմակերպման խնդիրներն ապահովում են տարբեր մարմիններ:

Ազգային ժողովում պատգամավորի գործունեության բոլոր հարցերով նրան օգնելու, օժանդակելու պարտականությունը դրված է Ազգային ժողովի **աշխատակազմի** և Ազգային ժողովի ղեկավար մարմինների (Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, հանձնաժողովների, խմբակցությունների և խմբերի ղեկավարների) վրա: Այսպես, Կանոնակարգի 47 հոդվածի համաձայն՝ օրինագիծ ներկայացնելիս՝ պատգամավորը միաժամանակ ներկայացնում է գործող օրենքների և Ազգային ժողովի որոշումների մեջ դրանից բխող անհրաժեշտ փոփոխությունները և այլ տեղեկություններ: Այդ կապակցությամբ, մինչև օրենսդրական նախաձեռնությունը ներկայացնելը, **Ազգային ժողովի աշխատակազմը** նա-

խաձեռնության հեղինակին, նրա պահանջով, ներկայացնում է անհրաժեշտ փոփոխությունների ցանկը: Կամ օրինագիծն ստանալուց հետո աշխատակազմի ղեկավարը պարտավոր է այն ուղարկել Ազգային ժողովի նախագահին, որն էլ կանոնակարգով սահմանված ժամկետում ու կարգով պարտավոր է այն **քննել** շրջանառության մեջ (հոդվ. 51):

Ավելի բարդ է **պատգամավորի գործունեության կազմակերպումն ընտրատարածքում:** Իր գործունեության առանձնահատկությունների բեյուումով պատգամավորը հաճախ անհրաժեշտություն է ունենում հանդիպել պետական մարմինների ղեկավար աշխատողների հետ, **տարբեր հարցերով դիմել առանձին պետական և այլ կազմակերպություններ** ու նրանց պաշտոնատար անձանց: Որպեսզի պատգամավորը կարողանա իր խնդիրներն արդյունավետ լուծել, օրենսդրությունը նշված մարմինների և պատգամավորի փոխհարաբերություններում սահմանում է որոշակի կարգ:

Այսպես, կանոնակարգի 5 հոդվածի («ը» կետ) համաձայն՝ պատգամավորն իր ընտրատարածքի բնակչության իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության կապակցությամբ **իրավունք ունի հարցումներով և առաջարկություններով դիմել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, նրանց պաշտոնատար անձանց, հիմնարկներ և կազմակերպություններ:** Պաշտոնատար անձը, ում հասցեագրված է հարցումը կամ առաջարկությունը, պարտավոր է **10-օրյա ժամկետում գրավոր պատասխանել պատգամավորին:** Վերջինս իրավունք ունի անմիջականորեն մասնակցել իր կողմից բարձրացված հարցերի քննարկմանը, որի մասին **պարտավոր են նրան տեղեկացնել ոչ ուշ, քան քննարկումից երեք օր առաջ** (7 հոդվ. «բ» և «գ» կետեր):

Բացի դրանից, որպեսզի պատգամավորն ավելորդ ժամանակ չծախսի իր առաքելության իրականացման համար, օրենսդրությունը նրան վերապահել է նախարարությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, կազմակերպությունների, գործառնաբերի և ռազմականացված ստորաբաժանումների ղեկավարների և պաշտոնատար անձանց կողմից **անհետաձգելի ընդունելության իրավունք:**

Ընտրատարածքում պատգամավորի գործունեության կազմակերպման առումով օրենսդրության կարևոր պահանջներից է այն, որ եթե պատգամավորը հանդիպում է ունենում քաղաքացիների հետ և կազմակերպում ընտրողների ընդունելություն, ապա տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են պատգամավորի պահանջով ընտ-

քառաբաժքում ամիսն անվազն մեկ օր նրան հատկացնել կահավորված սենյակ: Բացի դրանից, պատգամավորին իրավունք է վերապահված, անհրաժեշտության դեպքում, օգտվել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող **կապի միջոցներից:**

Պատգամավորի աշխատանքի կազմակերպման համար չափազանց կարևոր է նրան անհրաժեշտ **տեղեկատվությանը ապահովելու խնդիրը:** Ազգային ժողովում այդ պարտականությունը դրված է **աշխատակազմի վրա**, որը պատգամավորին ժամանակին տրամադրում է Ազգային ժողովի կողմից ընդունված փաստաթղթերը, Հանրապետության Նախագահի, կառավարության, սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի, գլխավոր դատախազության կողմից ընդունված ակտերը և նրանց աշխատակազմերի կողմից հրապարակված պաշտոնական տեղեկատվական նյութերը, ինչպես նաև պետական այլ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական միավորումների կողմից հրապարակված տեղեկատվությունը:

Նույն կարգով, պետական իշխանության բոլոր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական միավորումների, հիմնարկների, կազմակերպությունների պաշտոնատար անձինք, որոնց դիմում է պատգամավորը պառլամենտական գործունեության հարցերով, **պարտավոր են ապահովել մասնագիտական խորհրդատվությանը**, անհապաղ տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր, անկախ գաղտնիության աստիճանից՝ Հայաստանի Հանրապետության «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» 1996 թ. դեկտեմբերի 3-ին ընդունված օրենքին համապատասխան:

Պատգամավորներն ունեն նաև **պետական լրատվամիջոցներով** իրենց գործունեության մասին հանդես գալու նախապատվության իրավունք: Նրանց կողմից ներկայացված նյութերը ենթակա են պարտադիր հրապարակման պետական լրատվամիջոցների կողմից՝ պատգամավորի հետ պայմանավորված ժամկետում:

բ) Ազգային ժողովի պատգամավորի գործունեությունն երաշխավորելու նպատակով պետությունը նրա համար ապահովում է ոչ միայն աշխատանքի, այլ նաև **կյանքի արժանավայել պայմաններ:** Այդ պայմանների ամբողջությունն ընդունված է անվանել **պատգամավորի գործունեության տնտեսական երաշխիքներ:**

Պատգամավորը, որպես Ազգային ժողովի անդամ, մշտական հիմունքներով պետական մարմնի ծառայող, իր կատարած աշխատանքի

դիմաց օրենքով սահմանված չափով ստանում է աշխատավարձ. որը հավասար է Հայաստանի Հանրապետության **կառավարության անդամի դրույքայափին:** Բացի դրանից, պատգամավորն իր պատգամավորական գործունեության համար ստանում է **ամսական փոխհատուցում** (որի չափը սահմանված է օրենքում), որն ազատվում է հարկումից: Պատգամավորների **առողջապահական սպասարկումն** ու հանգստի կազմակերպումն իրականացվում է **կառավարության անդամների համար սահմանված կարգով:**

Որպես կարևոր երաշխիք, կանոնակարգի 8 հոդվածի համաձայն պատգամավորի լիազորությունների ժամանակաշրջանը հաշվվում է որպես **ընդհանուր անընդհատ ստաժ:** Անընդհատ աշխատանքային ստաժը պահպանվում է, եթե պատգամավորն իր լիազորությունների ավարտից հետո **վեց ամսվա ընթացքում** ընդունվում է աշխատանքի:

Ազգային ժողովի պատգամավորին իր լիազորությունների ժամկետով տրվում է **դիվանագիտական անձնագիր, վկայական և կրծքանշան:** Վկայականը նրա անձը, որպես պատգամավորի, և լիազորությունները հաստատող փաստաթուղթն է: Վկայականը պատգամավորին իրավունք է տալիս անարգել այցելել պետական իշխանության բոլոր մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնակցել նրանց կոլեգիալ մարմինների նիստերին, ինչպես նաև անարգել այցելել հիմնարկներ, ձեռնարկություններ, զինվորական մասեր և հասարակական միավորումներ:

Ազգային ժողովի պատգամավորի օրինական պահանջների (այդ թվում իրավախախտումը կանխելու և հետևանքները վերացնելու վերաբերյալ) չկատարումը կամ նրա գործունեության իրականացման վերաբերյալ խոչընդոտների հարուցումը համապատասխան պաշտոնատար անձանց նկատմամբ առաջ է բերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

գ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է նաև մի շարք երաշխիքներ Ազգային ժողովի պատգամավորի **անձեռնմխելիության վերաբերյալ:** Դրանք առնչվում են պատգամավորի իրավունքների պաշտպանությանը՝ վարչաիրավական, քրեաիրավական և քրեադատավարական հարաբերությունների ոլորտներում: Դրա 66 հոդվածի համաձայն, պատգամավորն իր պատգամավորական լիազորությունների **ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել** և պատասխանատվության ենթարկվել պատգամավորի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար, **եթե այն գրպարտություն կամ վիրավորանք** չի պարունակ-

կում: Նրան չի կարելի որպես մեղադրյալ մերգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել առանց Ազգային ժողովի համաձայնության:

Բացի այդ, պատգամավորին չի կարելի ձեռքարկել առանց Ազգային ժողովի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռքարկությունն իրագործվում է հանցագործության կատարման պահին: Այս դեպքում անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

Պատգամավորի անձեռնմխելիությունը տարածվում է նաև նրա բնակարանի, անձնական և ծառայողական տրանսպորտային միջոցների, գրազբոսայտի, նրա կողմից օգտագործվող կապի միջոցների և փաստաթղթերի վրա: Այդ կապակցությամբ օրենսդրությունը պատգամավորի ձեռքարկման կամ խուզարկության դեպքում պարտավորեցնում է համապատասխան մարմին՝ նշված գործողությունների կատարման անհրաժեշտության հիմքերի մասին անհապաղ տեղյակ պահել Ազգային ժողովի նախագահին:

Պատգամավորական անձեռնմխելիությունը, ըստ էության, Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված պաշտպանական միջոցներ են, որոնք նպատակ ունեն գերծ պահել ժողովրդի ընտրյալների շահերն ու իրավունքները պետական մարմինների և մասնավոր անձանց ռեզիդենցիայից, պատգամավորի արդյունավետ աշխատելուն խանգարելու փորձերից:

Պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու մասին համաձայնության հարցը գլխավոր դատախազի ներկայացմամբ որոշում է Ազգային ժողովը: Պատգամավորն իրավունք ունի մասնակցելու Ազգային ժողովում իր հարցի քննարկմանը: Քննարկումից հետո էլեկտրոնային համակարգի միջոցով գաղտնի քվեարկությամբ ընդունվում է որոշում: Այն ընդունվում է միստին ներկա պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին (Կանոնակարգի 98 հոդվ.):

§ 4. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները

1. Մշտական հանձնաժողովների ընդհանուր բնութագիրը: Ազգային ժողովի կառուցվածքային ստորաբաժանումների (մարմինների) համակարգում առանձնակի կարևորություն ունեն **նրա մշտական հանձնաժողովները:** Դրանք, ըստ էության, **օժանդակ մարմիններ են**, որոնք կազմ-

ված են պատգամավորներից և կոչված են օգնելու Ազգային ժողովին իր լիազորությունների իրականացման գործում:

Մշտական հանձնաժողովների համակարգը և տեսակները պետությունների մեծ մասում **խանապատասխանում են** նրանց նախարարությունների համակարգին, որոնց գործունեությունը, որոշ իմաստով, վերահսկվում է համապատասխան մշտական հանձնաժողովների կողմից: Այդ պատճառով էլ մշտական հանձնաժողովների **որոշ տեսակներ** գրեթե բոլոր երկրների խորհրդարանների կողմից պարտադիր կերպով կազմակերպվում են և ունեն միատեսակ իրավասություն: Այդպիսիք են, օրինակ, **ֆինանսարդյունաբերության, արտաքին հարաբերությունների, պաշտպանության, ներքին գործերի և ազգային անվտանգության հարցերով** ու մի շարք այլ ոլորտների վերաբերյալ մշտական հանձնաժողովները: Պատասխանական չէ, որ որոշ երկրների սահմանադրություններում, անգամ այդ կարգի (անփոփոխ) մշտական հանձնաժողովները թվարկվում են, չնայած պառլամենտների և մշտական, և որոշ ժամանակավոր հանձնաժողովներ (օրինակ, հաշվիչ հանձնաժողովը) սովորաբար թվարկվում են պառլամենտների կամ նրանց պալատների կանոնակարգերում:

Այդ առումով երկար ժամանակ տարակուսանքի տեղիք էր տալիս այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (1995թ. խմբագրությամբ) 73 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովում ստեղծվում էին ընդամենը **վեց մշտական հանձնաժողովներ**՝ (1) արտաքին հարաբերությունների, 2) գիտության կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի, 3) պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի, 4) սոցիալական ապահովության, առողջապահության և բնության պահպանության հարցերի, 5) պետական-իրավական հարցերի, 6) ֆինանսավարկային, քաղաքացիական և տնտեսական հարցերի:

Խնդիրն այն է, որ մշտական հանձնաժողովները, ըստ ՀՀ Սահմանադրության (73 հոդվ.) ստեղծվում են օրենսդրական ակտերի նախագծերի և այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնելու համար: Մինչդեռ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների թվի նման սահմանափակումը հանգեցրել էր նրանց տնօրինման ոլորտների չափից ավելի լայնացմանը, որն զգալիորեն նվազեցրել էր վերջիններիս (հանձնաժողովների) աշխատանքների արդյունավետությունը: Այսպես օրինակ, 27 հոգուց բաղկացած պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի տնօրինության մեջ էր մտնում 19 ոլորտների (մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, սահմանադրական փոփոխություն-

ներ. պետական մարմիններ, հասարակական, քաղաքական կազմակերպություններ, պետական ծառայություն, արդարադատություն, դատարանակազմություն, դատախազություն, փաստաբանական և նոտարական ծառայություն, քաղաքացիական, քրեական, վարչական և այլ օրենսդրություն, տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, ԱԺ կանոնակարգ, ընտրական համակարգ) վերաբերյալ հարցեր: Չկար հստակ սահմանազատում նաև մշտական հանձնաժողովներին ենթակա քննազավառների հարցում:

Հիմնախնդրի նման դրվածքը ժամանակին քննադատության ենթարկվեց(տես «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» դասագիրքը 2005թ., էջեր 470-472), որի արդյունքում 2005թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունների համալուծումով վերանայվեց Սահմանադրության 73-րդ հոդվածը և այն (առաջին մասը) շարադրվեց հետևյալ կերպ. «Ազգային ժողովը կարող է ստեղծել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով»:

Սահմանադրության այդ նորմի հիման վրա 2007թ. մայիսի 12-ին ընտրված չորրորդ գումարման Ազգային ժողովում ներկայումս ձևավորվել են տասներկու մշտական հանձնաժողովներ, որոնց անվանումները և գործունեության ոլորտները իրենց ամրագրումն են ստացել ԱԺ կանոնակարգի 21 հոդվածում: Այդ հանձնաժողովներն են՝

ա) *արտաքին հարաբերությունների ք) գիտության կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի* գ) *Եվրոպական ինտեգրման հարցերի* դ) *պետական-իրավական հարցերի* ե) *մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի* զ) *պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի* է) *սոցիալական, առողջապահության, մայրության և մանկության* թ) *տնտեսական հարցերի* բ) *ֆինանսավարկային և բյուջետային հարցերի* ժ) *գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի*. ժբ) *տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովներ:*

2. *Մշտական հանձնաժողովների կազմակերպման կարգն ու կառուցվածքը* սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգով: Դրանք կազմավորվում են Ազգային ժողովի կողմից, *միայն պատգամավորների* թվից: Հերթական գումարման առաջին նստաշրջանում, Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալների հետ մեկտեղ, գաղտնի քվեարկությամբ միատիպ ներկա պատգամավորների կեսից ավելի ձայներ ստանալու դեպքում *ընտրվում են նաև մշտական հանձնաժողովների նախագահները:*

Ազգային ժողովն իր մշտական հանձնաժողովները կազմակերպում է, որպես կանոն, խմբակցություններից և պատգամավորական խմբերից՝ համաձայնական ներկայացուցչության սկզբունքի հիման վրա: Այսինքն՝ հանձնաժողովի կազմը պետք է արտահայտի Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի և որևէ խմբակցության կազմում չընդգրկված պատգամավորների *թվական հարաբերակցությունը (մեծ թիվ ունեցողներից՝ շատ, քիչ ունեցողներից՝ քիչ):*

Դրա հետ մեկտեղ, Կանոնակարգի 25 հոդվածի (6-րդ մաս) համաձայն՝ խմբակցությունը, պատգամավորական խումբը յուրաքանչյուր մշտական հանձնաժողովում ունի առնվազն մեկ պատգամավոր ներկայացնելու իրավունք: Սակայն, եթե խմբակցության, պատգամավորական խմբի անդամների ընդհանուր թիվը փոքր է մշտական հանձնաժողովների ընդհանուր թվից, ինչպես օրինակ, «Օրինաց երկիր» (ութ) և «Ժառանգություն» (յոթ) խմբակցությունները, ապա խմբակցությունը, պատգամավորական խումբն իրավունք ունի իր անդամին ներկայացնելու ոչ ավելի, քան երկու մշտական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար՝ յուրաքանչյուր մշտական հանձնաժողովի կազմում ապահովելով մեկական պատգամավոր (6.1-րդ կետ):

Կանոնակարգի նշված հոդվածի համաձայն՝ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորները հանձնաժողովներում ընդգրկվում են արձանագրային կարգով՝ խմբակցության ներկայացմամբ և իրենց դիմումի համաձայն:

Ազգային ժողովի բոլոր պատգամավորները, նախագահից և տեղակալներից բացի, պարտադիր կերպով ընդգրկվում են որևէ մշտական հանձնաժողովի կազմում, իսկ *խմբակցությունների և պատգամավորական խմբերի ղեկավարները կայտղ են իրենց ցանկությամբ չընդգրկվել մշտական հանձնաժողովների կազմում:* Մշտական հանձնաժողովների վերջնականորեն ճշտված թվակազմը, հաստատվում է Ազգային ժողովի նախագահի կողմից՝ Կանոնակարգի 25 հոդվածում սահմանված սկզբունքներին համապատասխան:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահի տեղակալ, որն աշխատում է մշտական հիմունքներով: Նա իրականացնում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները և վերջինիս բացակայության դեպքում փոխարինում է նրան:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չէ մշտական հանձնաժողովների անդամների թվաքանակը: Միայն կանոնակարգի 25 հոդվածում (1-ին մաս) ասված է, որ մշտական հանձնաժո-

դովանրից յուրսանչյուրի թվարանակը հաշվասար է պատգամավորների ընդհանուր թվի 1/12-ին: Երկրամ հողվածից հետևում է, որ մշտական հանձնաժողովներում ընդգրկված են **հավասար թվով պատգամավորներ:**

3. **Մշտական հանձնաժողովներն ունեն իրենց կարգավիճակին հատուկ գործունեության կազմակերպական ձևեր:** Դրանցից Վխսավորը հանդիսանում է **մշտական հանձնաժողովի նիստը**, որտեղ քննարկվում և լուծվում են հանձնաժողովի իրավասությանը ենթակա բոլոր կարևոր հարցերը: Ազգային ժողովի կանոնակարգի 27 հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը նիստեր է գումարում ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ՝ ուրբաթ օրը: Լրացուցիչ (կամ արտահերթ) նիստ կարող է գումարվել հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի կամ էլ հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ:

Հանձնաժողովի նիստի օրակարգում կարող են ընդգրկվել շրջանառության մեջ դրված, առաջին կամ երկրորդ ընթերցումներով ընդունված Աժ օրենքների և որոշումների նախագծերը, եթե հանձնաժողովը այդ նախագծերի քննարկման համար նշանակվել է որպես Գլխադասային, ինչպես նաև հանձնաժողովի անդամների կողմից առաջարկվող հարցերը:

Հանձնաժողովի նիստերը դնքաց են, բացառությամբ Կանոնակարգով նախատեսված դեպքերի: Դռնփակ նիստում, բացի պատգամավորներից, կարող են ներկա գտնվել Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովում Հանրապետության Նախագահի մշտական և լիազոր ներկայացուցիչները, ինչպես նաև հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք (28 հոդվ., 2-րդ մաս):

Հանձնաժողովի դնքաց նիստում, հանձնաժողովի անդամ պատգամավորներից բացի, կարող են խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա գտնվել փորձագետներ (մասնագետներ), պատգամավորների օգնականներ, հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձինք, Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և այլ անձինք:

Հանձնաժողովի նիստում նախագծի կամ դրա վերաբերյալ առաջարկությունների քննարկմանն իրավունք ունեն մասնակցել փաստաթղթերի հեղինակները:

Հանձնաժողովի **նիստի իրավագործության համար** օրենսդրությամբ պահանջվում է երկու պայմանի առկայություն՝ ա) եթե նիստը վարում է հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը կամ հանձնաժողովի որոշմամբ լիազորված՝ հանձնաժողովի անդամը և բ) եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն 1/4-ը:

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությամբ մասնակցած հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կոչմ են քվեարկել հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/4-ը:

Մշտական հանձնաժողովն իրավունք ունի իր գործունեությանը ներգրավել փորձագետներ, նշանակել օրինագծերի անկախ փորձաքննություն: Հանձնաժողովի **նիստին կարող են հրավիրվել** փորձագետներ, ինչպես նաև շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Մշտական հանձնաժողովը իրավունք ունի պետական մարմինների և այլ կազմակերպությունների ղեկավարներից պահանջել նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր: Կառավարության անդամները և մարզպետները իրավունք ունեն հանձնաժողովների նիստերում հանդես գալ հաղորդումներով:)

Օրինագծերի նախապատրաստման հարցերի ղրվածքի և հանձնաժողովի իրավասությանն ենթակա այլ ոլորտների կապակցությամբ գործերի փաստական վիճակի և հասարակական կարծիքի բացահայտման համար Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները յուրաքանչյուր հերթական նստաշրջանում առնվազն մեկ անգամ կարող են կազմակերպել **խորհրդարանական լսումներ** (32 հոդվ.):

Իր աշխատանքների կազմակերպման համար հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղաբյուրների գծով կարող է ստեղծվել **ենթահանձնաժողովներ**, իսկ նիստում քննարկվող հարցերի նախապատրաստման համար՝ նաև **աշխատանքային խմբեր**:

Մշտական հանձնաժողովը պատգամավորների թվից ընտրում կամ նշանակում է ենթահանձնաժողովի կամ աշխատանքային խմբի նախագահ կամ ղեկավար: Նրանց (ենթահանձնաժողովի կամ աշխատանքային խմբի) կազմում կարող են ընդգրկվել ինչպես տվյալ հանձնաժողովի անդամ պատգամավորները, այնպես էլ հանձնաժողովի, խմբակցությունների, պատգամավորական խմբերի փորձագետներ (մասնագետներ), պատգամավորների օգնականները և այլ մասնագետներ: Ենթահանձնաժողովի նախագահը և աշխատանքային խմբի ղեկավարը կատարում են մշտական հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

Մշտական հանձնաժողովների գործունեության ապահովման համար ստեղծվում են հանձնաժողովների **օժանդակ ապարատներ**, որոնք գործում են մշտական հիմունքներով: Ազգային ժողովի կանոնակարգի 21 հոդվածի համաձայն (6-րդ կետ)՝ մշտական հանձնաժողովի կազմակերպչական, փաստաթղթային, տեղեկատվական, վերլուծական և մաս-

նագիտական գործունեությունն ապահովում է *մշտական հանձնաժողովի քարտուղարությունը*, որը նրա (մշտական հանձնաժողովի) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է և գործում է մշտական հանձնաժողովի ու Աշխատակազմի կանոնադրություններով սահմանված կարգով՝ մշտական հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ:

Մշտական հանձնաժողովներից յուրաքանչյուրն ունի Աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված *մեկ գործավար* (օգնական) և *3 փորձագետ* (մասնագետ): Մշտական հանձնաժողովի գործավարը (օգնականը) աշխատանքի ընդունվում և ազատվում է հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ, իսկ փորձագետները (մասնագետները) ԱԺ աշխատակազմում պետական ծառայության մասին օրենսդրությանը համապատասխան (7-րդ կետ):

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (73 հոդվ., 3-րդ մաս) Ազգային ժողովին իրավունք է վերապահում առանձին օրենքների նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի հարցերի, իրադարձությունների և փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար ստեղծել *ժամանակավոր հանձնաժողովներ*:

Ազգային ժողովը ժամանակավոր հանձնաժողովներ ստեղծելիս՝ սահմանում է նրա խնդիրները, գործունեության ժամկետը և կարգը՝ Սահմանադրության և օրենքների շրջանակներում: Իր գործունեության արդյունքների մասին ժամանակավոր հանձնաժողովը պարտավոր է զեկուցել Ազգային ժողովի նիստում՝ նրա կողմից սահմանված ժամկետում:

§ 5. Ազգային ժողովի իրավասությունը

1. ԱԺ իրավասության ընդհանուր բնութագիրը: Ամեն մի խորհրդարան (այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը), որպեսզի կարողանա հաջողությամբ իրականացնել իր առջև դրված սոցիալական խնդիրները (գործառնությունները), տվյալ երկրի սահմանադրությունը նրան վերապահում է անհրաժեշտ լիազորություններ, որոնք կիրառման ոլորտների (տնօրինման առարկաների) հետ մեկտեղ կազմում են նրա *իրավասությունը*:

Կախված այն բանից, թե սահմանադրություններն ինչ ծավալի իրավասություն են ամրագրում օրենսդիր մարմիններին, կարելի է առանձնացնել խորհրդարանների 3 տեսակ՝ ա) անսահմանափակ իրավասությամբ, բ) բացարձակ սահմանափակ իրավասությամբ և գ) հարաբերական սահմանափակ իրավասությամբ խորհրդարաններ:

Անսահմանափակ իրավասություն ունենալը հատուկ է *խորհրդարանական կառավարման ձևի* երկրների օրենսդիր իշխանության մարմիններին: Այդ առումով դասական օրինակ է *Մեծ Բրիտանիայի խորհրդարանը*, որի մասին պատկերավոր ձևով ասել են, թե նա կարող է ամեն ինչ, *բացի կնոջը տղամարդու վերածելուց և ընդհակառակը*: Անգլիայի չգրված սահմանադրությամբ խորհրդարանն իրավունք ունի քննարկելու և լուծելու ցանկացած հարց: Նույն բովանդակությամբ նորմ էր ամրագրված նաև նախկին ԽՍՀՄ 1977 թ. Սահմանադրության մեջ: Անսահմանափակ իրավասությամբ խորհրդարանների լիազորությունները, որպես կանոն, տվյալ երկրի սահմանադրության մեջ չեն թվարկվում, որն էլ վկայում է նրա իրավասության անսահմանափակության մասին:

Բացարձակ սահմանափակ իրավասություն ունեցող խորհրդարանների լիազորությունները, որպես կանոն, սպառիչ կերպով թվարկվում են երկրի սահմանադրության մեջ: Այդպիսի երկրի *դասական օրինակ է Ֆրանսիան*, որի Սահմանադրությունը (34, 35, 49 հոդվ.) բովանդակում է խորհրդարանի իրավասությանն ենթակա *հարցերի ճշգրիտ ցանկը*, որոնց վերաբերյալ նա կարող է ընդունել օրենքներ և այլ որոշումներ: Մնացած բոլոր հարցերը, ըստ էության, թողնված են գործադիր իշխանության (առավելապես կառավարության) իրավասությանը: Ընդ որում, եթե խորհրդարանն ընդունի օրենք Սահմանադրությամբ իրեն չվերապահված ոլորտների վերաբերյալ, ապա կառավարությունն իր կողմից ընդունված ղեկրեստով (որն ստորագրում է Նախագահը) *կարող է փոփոխել կամ վերացնել այդ օրենքը*:

Համեմատաբար ավելի մեծ թիվ են կազմում այն երկրները, որոնց խորհրդարաններն ունեն *հարաբերական սահմանափակ իրավասություն*: Դրա իմաստն այն է, որ սահմանադրություններն սպառիչ կերպով չեն թվարկում խորհրդարանի լիազորությունները, կամ էլ թվարկելով դրանք, միաժամանակ նշում են այն ոլորտները, որոնց վերաբերյալ վերջինիս գործունեությունն արգելվում է (տե՛ս Կոլումբիայի 1991 թ. Սահմանադրության 136 հոդվածը):

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը հարաբերական սահմանափակ իրավասությամբ օրենսդիր մարմին է, որովհետև Սահմանադրությունը նրա տնօրինության առարկաները և լիազորություններն ամրագրել է ոչ սպառիչ տեսքով: Դրանք թվարկված են 4-րդ գլխի 62, 74-77 և 81-84 հոդվածներում, իսկ 71, 72 և 75 հոդվածներում խոսվում է օրենքների ընդունման արարողակարգի մասին:

Մակայն, չնայած Սահմանադրության 4-րդ գլուխը («Ազգային ժողովը») ամբողջովին նվիրված է Ազգային ժողովի կարգավիճակին, *այն չի*

սպառում նրա բոլոր լիազորությունները: Այդպիսիք բովանդակվում են նաև Սահմանադրության մյուս գլուխներում, որտեղ կարգավորվում են Ազգային ժողովի և կառավարության, Ազգային ժողովի և դատական իշխանության մարմինների փոխհարաբերությունները:

2. Ազգային ժողովի գործունեության հիմնական ուղղությունները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված Ազգային ժողովի իրավասության վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել **նրա գործունեության մի քանի ուղղություններ:**

Ա. Օրենսդրության ոլորտում: Օրենքների ընդունումն Ազգային ժողովի գործունեության հիմնական և գլխավոր ոլորտն է: Այստեղ խոսքը գնում է հատկապես **օրենքների ընդունման**, և ոչ թե հրապարակման կամ դրանց մախազների մախապատրաստման մասին, որոնց մասնակցում են նաև Հանրապետության Նախագահն ու կառավարությունը:

Դեռևս ֆրանսիացի լուսավորիչները (Շ. Մոնտեսքյո և Ժ.Շ. Ռուսո) հիմնավորել են օրենքների գերակայությունը նրանով, որ դրանք ժողովրդի ընդհանուր (միասնական) կամքի արտահայտությունն են և կարգավորում են առավել կարևոր, աչքի ընկնող և կայուն հասարակական հարաբերությունները: Ընդ որում, նման բովանդակության ակտի ընդունման իրավունքը վերապահվում էր ժողովրդի կողմից ընտրված պետական իշխանության ներկայացուցչական մարմնին, որը հանդիսանում էր ժողովրդի ինքնիշխանության կրողը: Սակայն, հետագայում օրենքի միասնական հասկացությունն երկփեղկվեց և այն ներկայացվեց երկու իմաստով՝ **ձևական և նյութական:**

Ձևական առումով օրենք էր համարվում այն ակտը, որն ընդունվում էր պետության հիմքը հանդիսացող մարմնի կողմից, որը սովյալ երկրում ճանաչվում էր որպես ժողովրդի ինքնիշխան կամքն արտահայտող մարմին:

Նյութական առումով օրենք էր համարվում ամեն մի ակտ, որն իր էությանը հանդիսանում էր օրենք, անկախ այն ընդունող պետական մարմնի տեսակից:

Օրենքի հասկացության երկիմաստության այդ տեսական մեկնաբանությունը հիմք ծառայեց, այսպես կոչված, **պատվիրակված օրենսդրության** ինստիտուտի ստեղծմանը, որն իրականացվում է գործադիր իշխանության մարմինների կողմից: Օրինակ, Հայաստանի Հանրապետության 1995թ. խմբագրությամբ Սահմանադրության 78 հոդվածում նշվում էր, որ «Կառավարության գործունեության ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով Ազգային ժողովը կարող է լիազորել կառավարությանն ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ...»:

Պրոֆեսիոնալ խորհրդարանի (Ազգային ժողովի) առկայության պայմաններում, որն աշխատում է մշտական հիմունքներով, Սահմանադրության մեջ նման նորմի առկայությունն ավելի քան արհեստական էր: Այդ դրույթը ժամանակին հիմնավոր քննադատության արժանացավ(տես«Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» 2005թ., էջ 477-478), որի արդյունքում 2005թ. նոյեմբերի 27-ին կատարված սահմանադրական փոփոխություններում նշված նորմը (հոդվ. 78) ճանաչվեց ուժը կորցրած:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում, Ազգային ժողովի օրենսդրական գործունեության կապակցությամբ, լուծվեց ևս մեկ կարևոր խնդիր՝ ավելի կոնկրետացվեց, առարկյական դարձավ Հանրապետության խորհրդարանի օրենսդրական իրավասությունը: **Սահմանադրությունը լրացվեց 83.5 հոդվածով, որտեղ թվարկված են այն ոլորտները, որոնք բացառապես կարգավորվում են Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքներով:** Դա նշանակում է, որ պետական իշխանության ոչ մի մարմին այլևս չի կարող ներխուժել նշված նորմում թվարկված ոլորտները և դրանց վերաբերյալ ընդունել ենթաօրենսդրական ակտեր, ինչը հնարավոր էր մինչև սահմանադրական բարեփոխումները:

Այդ ոլորտների թվին Սահմանադրությունը վերապահում է՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմաններն ու կարգը, նրանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, պարտականություններն ու պատասխանատվության տեսակները, նրանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների տեսակները, չափը, վճարման կարգը (կետ (1 և 2) և այլն:

Կասկածից վեր է, որ երկրի օրենսդիր մարմնի իրավաստեղծ գործունեության ոլորտների հստակ սահմանումը ավելի քան կարևոր է և ամերաժեշտ Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգի կայունացման և ներդաշնակ դարձնելու առումով:

Սակայն, առ այսօր մնում է չլուծված այն հարցը, թե **ինչպես մշակել գրագետ օրենքներ**, որպեսզի դրանցում ձևավորված վարքագծի կանոնները չնման լոկ թրթի վրա, այլ կարողանան իրապես խոր ազդեցություն ունենալ հասարակական հարաբերությունների վրա: Այդ հարցին սահմանադրական իրավունքի գիտության համաշխարհային փորձը տալիս է հստակ պատասխան՝ **օրենքները պետք է ընդունվեն սոցիալական արդարության հիմքի վրա, արտահայտեն հասարակության անդամների մեծամասնության կամքն ու շահերը:** Այս սկզբունքների կիրառությունը

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեության արդյունավետության համար ունի գերկարևոր նշանակություն:

Բ. Ֆինանսների ոլորտում: Ազգային ժողովի իրավասությունն այս ոլորտում, ամենից առաջ, արտահայտվում է **պետության եկամուտների և ծախսերի ծավալի հաստատման**, ինչպես նաև **հարկերի սահմանման** հարցում իրացվող լիազորությունների մեջ: Չնայած նշված լիազորություններն իրացվում է, որպես կանոն, **բյուջեի մասին օրենք ընդունելու ձևով**, սակայն այն իրենից ներկայացնում է խորհրդարանի իրավասության յուրահատուկ մասը: Այդ է վկայում **բյուջեի մասին օրենքի ընդունման հատուկ արարողակարգը**, որը տարբերվում է սովորական օրենքների ընդունման արարողակարգից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 76 հոդվածի համաձայն, Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն: Կառավարությունը, Սահմանադրության 90 հոդվածի համաձայն, պարտավոր է բյուջեի նախագիծը Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել **բյուջետային տարին սկսվելուց առնվազն 90 օր առաջ**: Այդ ժամկետը նրա համար է, որպեսզի պատգամավորները կարողանան մանրամասն ծանոթանալ բյուջեի եկամուտների գոյացման աղբյուրների և ծախսերի կատարման ոլորտների հետ և անեն համապատասխան առաջարկություններ:

Նշված հոդվածի (90) համաձայն, կառավարությունն իրավասու է պահանջելու Ազգային ժողովից, որ ներկայացված նախագիծը՝ իր կողմից ընդունված ուղղումներով, քվեարկության դրվի մինչև այդ ժամկետի (90 օրվա) ավարտը: Խնդիրն այն է, որ մինչև բյուջետային տարվա սկիզբը, եթե պետական բյուջեն չի հաստատվում, ապա ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեում նախատեսված համամասնություններով՝ մինչև բյուջեի հաստատումը, որը կարող է չհամապատասխանել նոր բյուջեով նախատեսված ծավալներին:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգը մանրամասն կարգավորում է պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկման և ընդունման կարգը: Ազգային ժողովի նիստում նախագծի քննարկումն սկսվում է ոչ ուշ, քան բյուջետային տարվան նախորդող դեկտեմբեր ամսվա առաջին չորսօրյա նիստում:

Պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը կառավարությունից ստանալուց հետո Ազգային ժողովի նախագահը երկօրյա ժամկետում ուղարկում է պատգամավորներին և մշտական հանձնաժողովներին: Նախագծի նախնական քննարկումներին մասնակցում են նաև կառավարության անդամներ: Նախնական քննարկումների ժամանակ բյուջեի

նախագծում պատգամավորների և հանձնաժողովների կողմից փոփոխություն կատարելու վերաբերյալ արված առաջարկություններն ուղարկվում են կառավարություն, որոնց հիման վրա կառավարությունը կարող է փոփոխություններ մտցնել նախագծում:

Բյուջեի մասին օրենքի նախագծում կատարված փոփոխությունները ԱԺ նիստում ներկայացնելու համար **կառավարությանը արվում է մինչև երեք զեկուցում**՝ մինչև 90 րոպե ընդհանուր տևողությամբ:

Հարակից զեկուցումների իրավունքը վերապահված է **ՀՀ կենտրոնական բանկի նախագահին և մշտական հանձնաժողովներին**, որոնց հանդես գալու համար կանոնակարգով սահմանված է մինչև 30 րոպե ժամանակ:

Որպես կանոն, հարակից զեկուցումներով ելույթ են ունենում՝

ա) ՀՀ կենտրոնական բանկի նախագահը՝ դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

բ) Ազգային ժողովի ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը.

գ) Ազգային ժողովի պաշտպանության, Ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը՝ պետական բյուջեի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսերի օրինակաչափային և հիմնավորվածության հավաստմամբ (81 հոդվ.): Հարակից ելույթով կարող են հանդես գալ նաև մյուս մշտական հանձնաժողովները՝ ըստ ցանկության: Այնուհետև կատարվում է **մտքերի փոխանակություն**, որի ավարտից հետո նախագահողը հայտարարում է հարցի քննարկման **ընդմիջում՝ առնվազն չորս օրով (82 հոդվ.):**

Հարցի քննարկումն ընդմիջելուց հետո, պատգամավորները պարտավոր են 24 ժամվա ընթացքում իրենց առաջարկությունները, իսկ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները՝ իրենց առաջարկություններն ու եզրակացությունները ներկայացնել Ազգային ժողովի աշխատակազմ, որն իր հեթքին դրանք հանձնում է կառավարությանը:

Կանոնակարգի 84 հոդվածի համաձայն, կառավարությունը պարտավոր է պետական բյուջեի քննարկումը վերսկսելուց առնվազն 24 ժամ առաջ Ազգային ժողովի աշխատակազմ ներկայացնել պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակը, որը նրա կողմից հնարավորինս սեղմ ժամկետներում հանձնվում է պատգամավորներին:

Քննարկումները վերսկսելուց հետո ԱԺ նիստում վարչապետը կամ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը մինչև 30 րոպե տևողությամբ զեկուցումով տեղեկանք են ներկայացնում **կառավարության կողմից ընդունված կամ մերժված առաջարկությունների մասին**: Պատգամավորնե-

րին վաղօրոք ներկայացված պետական բյուջեի մասին օրենքի նախագծի վերջնական տեքստը՝ կառավարության կողմից ընդունված ուղղումներով, որովում է քվեարկության՝ ամբողջությամբ ընդունելու համար:

Եթե Ազգային ժողովի պատգամավորների կողմից արված առաջարկությունների ու դիտողությունների հիմնական մասը կառավարության կողմից մերժվում է և վերջինս կասկած ունի, որ պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը կարող է մերժվել Ազգային ժողովի կողմից, ապա վերջինիս նկատմամբ ճնշում գործադրելու միտումով կառավարությունը բյուջեի հաստատման առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Եթե Ազգային ժողովը Սահմանադրության 75 հոդվածում նախատեսված կարգով կառավարությանն անվստահություն չի հայտնում, ապա պետական բյուջեն՝ **կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված:**

Սահմանադրության 90 հոդվածին համապատասխան՝ կառավարությանը անվստահություն հայտնելու դեպքում նոր կառավարությունը Ազգային ժողովին **բյուջեի նախագիծ է ներկայացնում իր ծրագրի հավանության արժանանալուց հետո 10 օրվա ընթացքում**, որը քննարկվում և հաստատվում է նույն հոդվածով նախատեսված կարգով՝ **30 օրվա ընթացքում:**

Հաստատելով պետական բյուջեն, Ազգային ժողովը, մի կողմից, կառավարությանը լիազորում է ծախսել պետական միջոցները՝ հաստատված ծավալների շրջանակներում, որից այն կողմ կառավարությունն անցնել չի կարող, իսկ, մյուս կողմից, կառավարության վրա պարտավորություն է դնում պետական եկամուտներն ապահովելու համար հավաքել հարկերից և այլ աղբյուրներից ստացվելիք անհրաժեշտ գումարը:

Ազգային ժողովի ֆինանսական գործունեության ոլորտի կարևոր լիազորություններից է **բյուջեի կատարման վերաբերյալ կառավարության հաշվետվության հաստատումը**: Ազգային ժողովի նիստում, մինչև հերթական բյուջետային տարվա պետական բյուջեի հաստատումը, Ազգային ժողովը քննարկում է ընթացիկ տարվան նախորդող տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 77 հոդվածի համաձայն, Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը քննարկում և հաստատում է Հայաստանի Հանրապետության **վերահսկիչ պալատի եզրակացության ամփայտյալով**:

Պետական բյուջեի կատարման վերաբերյալ կառավարության տարեկան հաշվետվությունը Ազգային ժողովը քննարկում է գրեթե նույն ըն-

թացակարգով (տես կանոնակարգի 87-89 հոդվ.), ինչպես բյուջեի ընդունումը: Եթե պետական բյուջեի կատարման մասին տարեկան **հաշվետվությունը քվեարկությամբ չի հաստատվում, ապա դրվում է կառավարության անվստահության հարցը**:

Կառավարությանն անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծ չներկայացվելու, կամ նման որոշում չընդունվելու դեպքում ներկայացված հաշվետվությունը համարվում է հաստատված, իսկ եթե կառավարությանն անվստահություն է հայտնվում, ապա ներկայացված հաշվետվությունը նույնպես համարվում է հաստատված (Կանոնակարգի 89 հոդվ. 8-րդ կետ):

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսական գործունեության ոլորտում իրենց կարևորությամբ առանձնանում են **պետության հարկային քաղաքականության վերաբերյալ լիազորությունները**: Դրանք, ըստ էության, մտնում են խորհրդարանի բացառիկ իրավասության մեջ, չնայած Սահմանադրությամբ այդ մասին ոչինչ չի սահմանվում: Այդ է վկայում «Հարկերի մասին» 1997 թ. մայիսի 12-ին ընդունված օրենքը (2 հոդվ.), որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորվում են հարկային օրենսդրությամբ, որը բաղկացած է սույն օրենքից և առանձին հարկատեսակների մասին օրենքներից: Օրենքը առանձին դեպքերում թույլ է տալիս նշված հարաբերությունների կարգավորումը նաև կառավարության և գործադիր այլ մարմինների կողմից ընդունված ակտերով, սակայն հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և սահմաններում:

Հարկերի մասին օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը (12 հոդվ.), հարկային արտոնությունների համակարգը (13 հոդվ.), մանրամասն ամրագրում է հարկ վճարողների իրավունքներն ու պարտականությունները (14-15 հոդվ.), վերահսկողությունը հարկերի վճարման նկատմամբ (16-20 հոդվ.), պատասխանատվությունը հարկային օրենսդրությունը խախտելու համար (21-32 հոդվ.) և այլն:

Ազգային ժողովի կողմից տարբեր ժամանակներում ընդունվել են օրենքներ՝ առանձին տեսակի հարկերի և տուրքերի մասին:

Գ. Արտաքին հարաբերությունների ոլորտում: Արտաքին հարաբերությունների ոլորտում Ազգային ժողովի լիազորություններն ամրագրված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 81 հոդվածում (2-րդ և 3-րդ կետեր), որի համաձայն՝ **Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը**, որոնց շրջանակը սահմանված է օրենքով:

Միջազգային պայմանագրերի վավերացումը նշանակում է, որ պետությունը վերջնականորեն համաձայնվում է կնքել ներկայացված ձևի և բովանդակությամբ պայմանագիրը: Մինչդեռ *պայմանագրի չեղյալ հայտարարումը*, ընդհակառակը, նշանակում է նշված ձևով պետության կամ անհայտնությունը՝ պայմանագրի լուծարման վերաբերյալ:

Պատմականորեն միջազգային պայմանագրերի վավերացման և չեղյալ հայտարարելու իրավունքը պատկանել է *պետության գլխին*: Սակայն ժամանակի ընթացքում *միջազգային պայմանագրերը սկսեցին ավելի ու ավելի թափանցել պետությունների ներպետական իրավունքի համակարգ*՝ ստիպելով վերջիններիս դրանցում բովանդակված դրույթներին համապատասխան փոփոխություններ մտցնել ներպետական օրենսդրության մեջ: Իսկ վերջին տարիներին համաշխարհային հանրությունը հաստատեց *միջազգային նորմերի գերակայության* սկզբունքը ազգային օրենսդրության նկատմամբ: Այդ սկզբունքը ուղղակի կերպով ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6 հոդվածում, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավունքի համակարգի թաղկացուցիչ մասն են: Եթե դրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը:

Ասվածից պարզորոշ հետևում է միջազգային պայմանագրերի վավերացման և չեղյալ հայտարարելու գործին օրենսդիր իշխանության մարմնի մասնակցության անհրաժեշտությունը: Որպեսզի միջազգային պայմանագրերի և ներպետական օրենսդրության միջև չձագեն էական հակասություններ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է Ազգային ժողովի մասնակցությունը միջազգային պայմանագրերի վավերացման և չեղյալ հայտարարելու հարցի լուծմամբ: Ըստ նրա 81 հոդվածի՝ Ազգային ժողովի վավերացմանը ենթակա են այն միջազգային պայմանագրերը, որոնք՝

ա) ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ կամ նախատեսում են պետական սահմանի փոփոխություն:

բ) վերաբերում են մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին:

գ) ֆինանսական պարտավորություններ են նախատեսում Հայաստանի Հանրապետության համար:

դ) որոնց կիրառումը նախատեսում է օրենքների փոփոխություն կամ նոր օրենքների ընդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորմեր:

ե) որոնցով նախատեսված է վավերացում:

զ) օրենքով սահմանված այլ դեպքերում:

Ազգային ժողովը միջազգային պայմանագրերը վավերացնում է այն բանից հետո, երբ Սահմանադրության 100 հոդվածի (2-րդ կետ) համապատասխան *ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է* դրանցում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը:

Արտաքին հարաբերությունների ոլորտում Ազգային ժողովի լիազորությունների թվին պետք է դասել նաև *արտասահմանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական ծառայությունների իրավական վիճակի օրենսդրական կարգավորումը*: 2001թ. հոկտեմբերի 24-ին ընդունվեց օրենք «Արտասահմանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կարգավիճակի մասին», իսկ 1996 թ. հունիսի 7-ին՝ «Հյուպատոսական ծառայության մասին» օրենքը: Այդ օրենքներում հանգամանորեն սահմանված են Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական ծառայությունների պարտականությունները՝ արտասահմանյան երկրներում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործում:

Արտաքին հարաբերությունների ոլորտին է վերաբերում նաև «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական աստիճանների մասին» օրենքը, որն ընդունվել է 1992 թ. մայիսի 5-ին:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններից և լրացումներից (2005թ. նոյեմբերի 27-ից) հետո *զգալիորեն ակտիվացել է Ազգային ժողովի միջազգային գործունեությունը*: Եթե մինչ սահմանադրական քարեփոխումները Ազգային ժողովը իր միջազգային կապերն իրականացնում էր միայն Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի միջոցով, ապա այժմ խորհրդարանում ստեղծվել է այդ ոլորտում ևս մեկ հանձնաժողով՝ *Եվրոպական ինտեգրացման* հարցերի մշտական հանձնաժողովը, որն զբաղվում է Եվրոպական Միության և Եվրախորհրդի հետ Հայաստանի Հանրապետության կապերի, ինչպես նաև եվրոպական օրենսդրության հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցման հարցերով:

Դ) Պաշտպանության և ազգային անվտանգության ոլորտում: Այդ բնագավառում Ազգային ժողովի լիազորություններից առավել կարևորն է *պատերազմ հայտարարելը*: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 81 հոդվածի (3-րդ մաս) համաձայն, Ազգային ժողովը, Հան-

րապետության Նախագահի առաջարկությամբ, հայտարարում է պատերազմ:

Դրա հետ մեկտեղ, պետք է նկատի ունենալ, որ Սահմանադրության 55 հոդվածի (12 և 13 կետեր) համաձայն, Հայաստանի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը Հանրապետության Նախագահն է, և նա է ընդունում որոշում զինված ուժերի օգտագործման մասին: Սակայն Հանրապետության վրա զինված հարձակման, որն անմիջական վտանգի առկայության կամ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու դեպքում Հանրապետության **Նախագահը հայտարարում է ռազմական դրություն** և կարող է անցկացնել ընդհանուր կամ մասնակի զորահավաք:

Ռազմական դրություն հայտարարվելու կամ զինված ուժերի օգտագործման դեպքում իրավունքի ուժով անհապաղ իրավիրվում է Ազգային ժողովի **հատուկ նիստ**:

Նույն կարգով, Սահմանադրության 55 հոդվածը (կետ 14) հնարավորություն է տալիս Հանրապետության Նախագահին երկրի սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, հայտարարել **արտակարգ դրություն** և իրականացնել իրավիճակից թելադրվող միջոցառումներ:

Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում նույնպես իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:

Ինչպես պատերազմ հայտարարվելու դեպքում **ռազմական դրություն** հայտարարելու (55 հոդ. 13 կետ), այնպես էլ սահմանադրական կարգին սպառնացող վտանգի դեպքում արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ (55 հոդ. 14 կետ) հրավիրված Ազգային ժողովի հատուկ նիստի խնդիրն է որոշելու ֆայտարարված իրավիճակների և դրանց առթիվ ձեռնարկված (և ձեռնարկվելիք) միջոցառումների օրինաչափությունն ու անհրաժեշտությունը:

Եթե Ազգային ժողովը գտնում է, որ չկան հիմքեր երկրում պատերազմական, կամ արտակարգ դրություն հայտարարելու, ապա Սահմանադրության 81 հոդվածի ուժով (3-րդ մաս) **կարող է չեղյալ հայտարարել** 55 հոդվածի 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված միջոցառումների իրականացումը:

Այս հիմնահարցի հետ սերտորեն առնչվում է ևս մեկ կարևոր հանգամանք: Հատկանշական է, որ **«հին» սահմանադրությունները** (օրինակ, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Լեհաստանի) ամրագրում էին խորհրդարանի՝ պատերազմ հայտարարելու իրավունքը: Մինչդեռ ժամանակակից սահմա-

նադրությունները, որոնք ընդունվել են այն բանից հետո, երբ միջազգային իրավունքը չի ընդունում պետությունների համար ազդեցիվ պատերազմներ վարելու իրավունքը, հիշատակում են, սովորաբար, միայն **պատերազմական դրություն հայտարարելու իրավունքը** (օրինակ, Կուբայի, Իտալիայի, Հունգարիայի սահմանադրությունները): **«Պատերազմական դրություն»** արտահայտությունը նշանակում է, որ պետության վրա կատարվել է հարձակում և նա ստիպված է պաշտպանվել: Այդ իմաստով կարելի է մտածել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ հարցի նման կարգավորման մասին:

Սահմանադրության նշված նորմը (81 հոդ.) երկրի օրենսդիր մարմնին վերապահում է նաև **խաղաղություն հաստատելու վերաբերյալ որոշումներ ընդունելու իրավունք**:

Միջազգային իրավունքով նախատեսված կարգով խաղաղությունը հաստատվում է պատերազմող կողմերի միջև համապատասխան պայմանագիր կնքելու միջոցով, որը ենթակա է վավերացման Ազգային ժողովի կողմից:

Ե. Պետական մարմինների ձևավորման, պաշտոնատար անձանց նշանակման կամ ընտրության ոլորտում: Ազգային ժողովի լիազորությունները այս ոլորտներում շատ խայտաբղետ են: Այն պայմանավորված է տարբեր պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց նշանակմանը, կամ ընտրությանը Ազգային ժողովի մասնակցության ձևերի ու մեթոդների առանձնահատկություններով:

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.3 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը, Հանրապետության Նախագահի առաջարկությամբ, **նշանակում է կենտրոնական բանկի նախագահ վեց տարի ժամանակով:** Այս հանգամանքը պայմանավորված է այն կարևոր դերով, որ ունի կենտրոնական բանկը Հանրապետության կյանքում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը երկրում գների կայունությունն ապահովելն է: Նրան է վերապահված նաև Հանրապետությունում դրամավարկային քաղաքականության ծրագրերի մշակումը, հաստատումը և իրականացումը: Կենտրոնական բանկը բողոքելու է Հայաստանի Հանրապետության արժույթը՝ հայկական դրամը:

Կենտրոնական բանկի նախագահի պաշտոնում նշանակվելու համար Հանրապետության Նախագահի կողմից **առաջադրվում է մեկ թեկնածու:** Նա չի կարող լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, զբաղվել քաղաքական գործունեությամբ, զբաղեցնել պետական այլ

պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ատեղծագործական աշխատանքից:

Կենտրոնական բանկը, չնայած անկախ մարմին է, նա իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողով:Պրա հետ մեկտեղ, հաշվի առնելով, որ Կենտրոնական բանկը անկախ մարմին է, Կանոնակարգի 103 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովում նրա հաշվետվության քննարկման արդյունքում որևէ փաստաթուղթ (օրույում) չի ընդունվում: Չնայած դրան, օրենքով սահմանված դեպքերում, Հանրապետության Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է աջատոնանկ անկ կենտրոնական բանկի նախագահին:

2) Ազգային ժողովն այլ պետական մարմինների նկատմամբ (մինչև Սահմանադրության 2005թ. փոփոխությունները) իր հիմնական վերահսկողական լիազորություններն իրականացնում էր Ազգային ժողովի **վերահսկիչ պալատի միջոցով**: Այդ պատճառով էլ վերահսկիչ պալատն ամբողջովին ձևավորվում էր Ազգային ժողովի կողմից և ենթակա էր միայն նրան: Սակայն սահմանադրական բարեփոխումների արդյունքում Հանրապետության Հիմնական օրենքը լրացվեց 83.4 հոդվածով, որը Ազգային ժողովի վերահսկիչ պալատը վերանվանեց «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատ» և այն հռչակեց անկախ մարմին:

Դիչա և, Վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը հաստատվում է Ազգային ժողովի կողմից և նա տարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ Ազգային ժողով է ներկայացնում իր վերահսկողական աշխատանքների հաշվետվությունը, սակայն այն արդեն չի համարվում Ազգային ժողովի մարմին և ենթակա չէ նրան:

Վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է Ազգային ժողովի կողմից՝ Հանրապետության նախագահի առաջարկությամբ՝ վեց տարի ժամանակով:

Վերահսկիչ պալատի կազմակերպման կարգը, կառուցվածքը, գործունեության ձևերն ու մրողները սահմանված են «Վերահսկիչ պալատի մասին» 2006թ. դեկտեմբերի 25-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքով:

3) Հայաստանի Հանրապետությունում **Մարդու իրավունքների պաշտպանի** (օմբուդսման) ինստիտուտի հիմնադրման հետ կապված Սահմանադրությամբ (83.1 հոդվ.) Ազգային ժողովին իրավունք վերապահեց պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսը հիմնադրելով՝ վեց տարի ժամանակով բնութեկ մարդու իրավունքների պաշտպանին:

Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Նրա իրավական կարգավիճակը և գործունեության ձևերն ու մեթոդները մանրամասն կարգավորվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2003թ. հոկտեմբերի 21-ին ընդունված ՀՀ օրենքով:

4) Սահմանադրության 83.2 հոդվածի համաձայն՝ հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է **անկախ կարգավորող մարմին**, որի անդամների կեսը վեց տարի ժամանակով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը վեց տարի ժամանակով նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից: Ազգային ժողովն այդ մարմնի անդամներին բնարում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5) Ազգային ժողովն ունի որոշ մասնակցություն նաև Հանրապետության **դատական իշխանության մարմինների համակարգի ձևավորմանը**: Սահմանադրության 83 հոդվածի համաձայն, Ազգային ժողովն իր նախագահի առաջարկությամբ նշանակում է սահմանադրական դատարանի հինգ անդամ (կեստ 1) և սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, Աժ նախագահի առաջարկությամբ սահմանադրական դատարանի կազմից նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ (կեստ 2-րդ): Բացի դրանից, Ազգային ժողովը սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է դատարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները, համաձայնություն առկա նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու, կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:

5) Ազգային ժողովը Հանրապետության նախագահի առաջարկությամբ՝ վեց տարի ժամկետով **նշանակում է գլխավոր դատախազին**: Օրենքով սահմանված դեպքերում Հանրապետության նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է պաշտոնանկ անկ գլխավոր դատախազին (Սահմանադրության 103 հոդվ.):

2. Պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության վերահսկողության ոլորտում: Վերահսկողության գործառնությունը և դրանով պայմանավորված որոշակի լիազորությունները հատուկ

ևն գործնականում յուր խորհրդարաններին՝ անկախ երկրի կառավարման ձևից: Այն իր արտահայտությունն է գտնում սահմանադրություններում, օրենքներում կամ կանոնակարգերում: Ընդ որում, **պատարմենտական վերահսկողության օրենսդրությունը**, **ամենից առաջ, հանդիսանում են գործադիր իշխանության մարմինները**: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 77 հոդվածի համաձայն, Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ: Ազգային ժողովն այդ վերահսկողությունն իրականացնում է ինչպես անմիջապես՝ բյուջեի կատարման վերաբերյալ իր նիստում տարին մեկ անգամ լսելով կառավարության հաշվետվությունը, այնպես էլ վերահսկիչ պալատի միջոցով:

Ինչպես արդեն նշվեց, վերահսկիչ պալատը անկախ մարմին է և չի հանդիսանում Ազգային ժողովի վերահսկողություն իրականացնող մարմինը: Սակայն վերջինս օժանդակում է երկրի օրենսդիր մարմնին, իրականացնելու իր վերահսկողական գործառնությունները ինչպես ընդհանրապես, այնպես էլ կոնկրետ գործադիր իշխանության մարմինների նկատմամբ: Մասնավորապես, վերահսկիչ պալատը պետական բյուջեի կատարման մասին կառավարության տարեկան հաշվետվության, պետական գույքի մասնավորեցման վերաբերյալ տարեկան ծրագրի կատարման մասին կառավարության հաշվետվության վերաբերյալ տալիս է եզրակացություններ, որոնք վերահսկիչ պալատի խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ Ազգային ժողովում քննարկվելուց տասն օր առաջ, ներկայացվում են Ազգային ժողով («Վերահսկիչ պալատի մասին» օրենքի 6 հոդվ., 3-րդ կետ):

Բացի դրանից, **տարվա ընթացքում մեկ անգամ** Ազգային ժողովն իր որոշմամբ կարող է լսել կառավարության հաղորդումը բյուջեի կատարման ընթացքի մասին: Իսկ պատգամավորներն իրավունք ունեն **օրենսդրական նախաձեռնության կարգով** առաջարկել օրակարգ ընդգրկել կառավարության հաշվետվությունը՝ օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման մասին:

Ազգային ժողովը վերահսկում է նաև կառավարության **ընթացիկ գործունեությունը**: Այն իրականացվում է երեք եղանակով՝ ա) յուրաքանչյուր քառօրյա նիստերից մեկում պատգամավորների հարցերին կառավարության պատասխանների, բ) խմբակցությունների ու պատգամավորական խմբերի հարցապնդումների, գ) կառավարությանը՝ Սահմանադրության

յությամբ և Ազգային ժողովի կանոնակարգով նախատեսված կարգով, անվստահություն հայտնելու միջոցով:

Սահմանադրության 80 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորներն իրավունք ունեն **հարցերով դիմելու կառավարությանը**, որի համար հատկացվում են նիստերի հատուկ օրեր և ժամեր: Ըստ Ազգային ժողովի կանոնակարգի 105 հոդվածի (3-րդ կետ)՝ հերթական նստաշրջանի քառօրյա նիստերի յուրաքանչյուր **չորեքշաբթի օրվա վերջին նիստում** վարչապետը և կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների հարցերին:

Ինչպես նշվեց վերևում, չնայած պատգամավորների և կառավարության հարց ու պատասխանի ինստիտուտի՝ որպես Ազգային ժողովի կողմից կառավարության ընթացիկ գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության **ոչ այնքան արդյունավետ** ձևին, այնուամենայնիվ, այն մեզանում լայն կիրառում է գտել և ձեռք բերել որոշակի հասարակական հնչեղություն: Եթե Ազգային ժողովին հաջողվի խուսափել այս ինստիտուտի ձևականացումից (ինչն արդեն իսկ նկատելի է որոշ պատգամավորների կողմից տրված մտացածին հարցերից և կառավարության որոշ անդամների կողմից երբեմն տրված արհամարհական պատասխաններից), ապա հայտնի չափով կապահովվի խորհրդարանական վերահսկողության այս ձևի արդյունավետությունը, ինչը տեղի ունի խորհրդարանական ավանդույթներ ունեցող ժողովապարական շատ երկրներում:

Նկատի առնելով պատգամավորական հարցման ինստիտուտի ոչ այնքան արդյունավետ լինելու հանգամանքը՝ Սահմանադրությունը իր 80 հոդվածի բարեփոխված տեքստում ամրագրեց կառավարության նկատմամբ Ազգային ժողովի վերահսկողության ավելի արդյունավետ միջոց՝ հարցապնդման ինստիտուտը, որն իրականացվում է խմբակցությունների և պատգամավորական խմբերի կողմից: Ինչպես արդեն նշվեց վերևում (գլուխ 21, §3), հարցապնդման ինստիտուտը հարցման հետ համեմատած ավելի արդյունավետ վերահսկողության ձև է Ազգային ժողովի համար, սակայն այն, ըստ էության, նույնպես չի առաջացնում իրավական հետևանքներ:

Ազգային ժողովի կողմից գործադիր իշխանության նկատմամբ իրականացվող վերահսկողության ավելի արդյունավետ ձև է **կառավարությանը անվստահություն հայտնելը**: Այն իրականացվում է երկու առումով՝ ա) երբ Ազգային ժողովն իր նախաձեռնությամբ, որպես անմիջական վերահսկողության միջոց, անվստահություն է հայտնում կառավարությանը

և բ) երբ կառավարությունը, որոշ հանգամանքներից ելնելով, ինքն է դնում իր վստահության հարցը:

ա) Առաջին դեպքում Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 84 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իրավունք ունի անվստահություն հայտնել կառավարությանը: Ընդ որում, կառավարությանն անվստահություն հայտնելու մասին **որոշման նախագիծ կարող են ներկայացնել Հանրապետության Նախագահը և պատգամավորների մեկ երրորդը**: Այդ իրավունքից Հանրապետության Նախագահը և պատգամավորները չեն կարող օգտվել Սահմանադրությամբ նախատեսված երկու դեպքում՝ **ռազմական դրության** ժամանակ և երբ երկրում հայտարարված է **արտակարգ** դրություն:

Ազգային ժողովի կանոնակարգը ամրագրել է կառավարությանը անվստահություն հայտնելու արարողակարգի հիմնական կանոնները (գլուխ 14): Այսպես, կանոնակարգի 107 հոդվածին համապատասխան՝ հերթական մատաչքանում կառավարության անվստահության հարցը, եթե բարձրացնում է պատգամավորների մեկ երրորդը, ապա ԱԺ աշխատակազմից նրանք պետք է ստանան ձևաթուղթ, ստորագրեն և 24 ժամվա ընթացքում (ձևաթուղթն ստանալու պահից) հանձնեն ԱԺ նախագահին: Նշված ժամկետում ձևաթուղթը ԱԺ նախագահին չհանձնելու դեպքում այն (ձևաթուղթը) համարում է մարված, իսկ եթե սահմանված ժամկետում և անհրաժեշտ քանակի ստորագրություններով ձևաթուղթը հանձնվում է Ազգային ժողովի նախագահին, ապա վերջինս պարտավոր է 24 ժամվա ընթացքում կազմակերպել կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագծի քննարկումը:

բ) Երկրորդ դեպքում կառավարությունը Ազգային ժողովի նիստում ինքն է դնում իր վստահության հարցը: Այն կարող է տեղի ունենալ հետևյալ դեպքերում՝ ա) իր գործունեության ծրագրի հետ կապված, բ) բյուջեի մասին գրենքի նախագծի հաստատման առնչությամբ, գ) իր ներկայացրած օրենքի նախագծի առնչությամբ: Այս երեք դեպքերում էլ իր վստահության հարցի խնդիրը կառավարությունն օգտագործում է որպես Ազգային ժողովի վրա ճնշում գործադրելու միջոց:

Այսպես, Սահմանադրության 74 հոդվածի (1-ին մաս) համաձայն, կառավարությունն իր կազմավորումից հետո քաանօրյա ժամկետում Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր ծրագիրը՝ Ազգային ժողովի նիստում դնելով իր վստահության հարցը: Ծրագրի քննարկումից հետո անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը իրավունք ունի ներկայացնելու պատգամավորների առնվազն մեկ երրորդը՝

վստահության հարցը դնելուց 24 ժամվա ընթացքում: Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացնելուց **ոչ շուտ, քան 48, և ոչ ուշ, քան 72 ժամվա** ընթացքում (Կանոնակարգի 107 հոդվածի 4-րդ կետ): Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Այդ ժամկետները նրա համար են, որ, մի կողմից, պատգամավորները հնարավորություն ունենան **զնահատելու ներկայացված ծրագրի դրական և բացասական կողմերը** (ոչ շուտ, քան 48 ժամվա ընթացքում), մյուս կողմից, կառավարության ծրագրին հավանություն չտալու դեպքում, որպեսզի Հանրապետությունը տևական ժամանակով չմնա առանց կառավարության (ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում):

Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ չներկայացնելու կամ նման որոշում չընդունելու դեպքում նրա գործունեության ծրագիրը համարվում է հավանության արժանացած, իսկ կառավարությունը՝ Ազգային ժողովի վստահությանն արժանացած:

Իսկ եթե Ազգային ժողովը անվստահություն է հայտնում կառավարությանը, ապա վարչապետը պարտավոր է դիմում ներկայացնել Հանրապետության Նախագահին՝ կառավարության հրաժարականի մասին, որն էլ Սահմանադրության 55 հոդվածի (4-րդ կետ, 2-րդ պարբերություն) համաձայն՝ պարտավոր է ընդունել կառավարության հրաժարականը, 10-օրյա ժամկետում նշանակել նոր վարչապետ և 20-օրյա ժամկետում կազմել կառավարություն:

Գրեթե նույն ընթացակարգով է լուծվում բյուջեի մասին օրենքի նախագծի հաստատման և իր կողմից ներկայացված սովորական օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ կառավարության վստահության հարցը:

Ազգային ժողովի կողմից **վերահսկողության** ոլորտում իրականացվող լիազորությունների թվում իր առանձնահատկությամբ տարբերվում է **Հանրապետության Նախագահի պաշտոնանկության հետ կապված լիազորությունը**: Այստեղ խոսքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (57 հոդվ.) նախատեսված Նախագահի հարկադիր պաշտոնանկությանը, որը կարող է կատարվել **պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար**: Այդ ինստիտուտը, որն արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքում հայտնի է որպես **«իմպիչմենտ»**, հանդիսանում է յուրզ հակակշիռ պետության գլխի կողմից իշխանության չարաշահման և երկրի սահմանադրական կարգը խախտելու դեմ:

Սակայն դա չի խանգարում, որպեսզի Ազգային ժողովի կողմից «իմպիչմենտը» համարվի որպես ԱԺ վերահսկողական գործունեության և-

ղանակ, որովհետև Հանրապետության Նախագահի կողմից Սահմանադրությանը նախատեսված խախտումների (հայրենիքի դավաճանություն կամ այլ ծանր հանցագործությունների կատարման) վերաբերյալ **հարցը կարող է քարձրացվել միայն պատգամավորների կողմից՝ Ազգային ժողովի նստաշրջանում:**

Սահմանադրությունը (57 հոդվ.) և ԱԺ կանոնակարգը (հոդվ. 95) ամրագրում են Հայաստանի Հանրապետության Նախագահին պաշտոնաճանկ անելու ընթացակարգի կանոնները:

Պաշտոնանկության գործընթացի արդյունքում, եթե Հանրապետության Նախագահը ճանաչվում է մեղավոր և հարցը ավարտվում է պաշտոնանկությամբ, ապա նա կորցնում է իր սահմանադրական անձեռնմխելիությունը և կարող է քրեական պատասխանատվության կանչվել ինչպես սովորական քաղաքացին:

Է. Ազգային ժողովի լիազորություններն այլ ոլորտներում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 81 հոդվածին (1-ին կետ) համապատասխան, Հանրապետության Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը հայտարարում է **համաներում (ամնիստիա):** Այդ կապակցությամբ ընդունված ակտին համապատասխան վրա են հասնում **որոշակի հետևանքներ:** Այսպես, եթե հանցագործության և այլ իրավախախտումների վերաբերյալ նյութերով քրեական գործ չի հարուցվել, ապա դրա հարուցումը մերժվում է. եթե գործը հարուցվել է, ապա կարճվում է. եթե անձն արդեն դատապարտվել է և կրում է պատիժը, ապա ազատվում է պատժի հետագա կրելուց կամ կրճատվում է պատժի ժամկետը:

Համաներման մասին ակտերն ընդունվում են պետական-քաղաքական կարևոր իրադարձությունների առթիվ և տարածվում են որոշ տեսակի հանցագործությունների վրա: Այսպես, 1990թ. նոյեմբերի 27-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունեց օրենք «Հայաստանի անկախության հռչակագրի ընդունման առթիվ մասին». 1992թ. հոկտեմբերի 5-ին՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման տարեդարձի առթիվ ամնիստիայի մասին»: ՀՀ Ազգային ժողովը 1995թ. սեպտեմբերի 26-ին ընդունեց որոշում՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման կապակցությամբ համաներում հայտարարելու մասին», 2009թ. հունիսի 19-ին՝ «Համաներում հայտարարելու մասին», 2011թ. մայիսի 26-ին՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (2 հոդվ., 2-րդ մաս) Հանրապետությանում ժողովրդաիշխանության իրականաց-

ման ձևերի շարքում հատուկ ընդգծում է **հանրաքվեն:** Հանրաքվեի միջոցով են լուծվում երկրի պետական և հասարակական կյանքի առավել կարևոր հարցերը, այդ թվում՝ Սահմանադրության ընդունումն ու դրանում փոփոխությունների կատարումը, **օրենքների ընդունումը և դրանցում փոփոխությունների կատարումը,** Հայաստանի Հանրապետության կարգավիճակի փոփոխման վարաբերյալ հարցերը և այլն: Այդ առնչությամբ Սահմանադրությունը (հոդվ. 111) հանրաքվեի նշանակման իրավունքը վերապահում է Հանրապետության Նախագահին, որն այն կարող է իրականացնել **միայն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնության առաջարկով կամ համաձայնությամբ:**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 82 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը կառավարության առաջարկությամբ, **սահմանում է հանրապետության վարչատարածքային բաժանումը:** Սահմանադրական այդ նորմի պահանջն իր մանրամասն արտացոլումն է ստացել 1995 թ. դեկտեմբերի 4-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում, ուր ամրագրված է հանրապետության նոր վարչատարածքային կառուցվածքը:

Սահմանադրության 39 հոդվածին համապատասխան՝ Հանրապետության Նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքում Ազգային ժողովը, կառավարության առաջարկով և սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդի առկայությամբ **որոշում է ընդունում Հանրապետության Նախագահի կողմից իր լիազորությունների կատարման անհնարիմության մասին:**

Եթե սահմանադրական դատարանի եզրակացությամբ Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման համար անհաղթահարելի խոչընդոտները բացակայում են, ապա հարցը հանվում է Ազգային ժողովի քննարկումից:

§ 6. Ազգային ժողովի աշխատանքների կազմակերպման ձևերը

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը հանդիսանում է մշտապես գործող մարմին է, որի համար առանձնակի կարևորություն է ստանում նրա գործունեության ճիշտ և հստակ կազմակերպումը: Այդ խնդիրն իր ամրագրումն է ստացել ինչպես Սահմանադրության մեջ, այնպես էլ, սովի մանրամասն, ԱԺ կանոնակարգում: Եվ Սահմանադրու-

յունը, և Կանոնակարգը Ազգային ժողովի գործունեության հիմնական կազմակերպական ձևեր են համարում *նստաշրջանները, նիստերը, մշտական և ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքը, ինչպես նաև պատգամավորների գործունեությունը Ազգային ժողովում և բնակչության շրջանում*։

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68 հոդվածի (4-րդ մաս) համաձայն՝ նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն *երկու երրորդի ընտրությունից հետո՝ երրորդ հինգշաբթի օրը*։ Այստեղից պարզորոշ հետևում է, որ Ազգային ժողովն ամբողջ կազմով գործում է միայն *նստաշրջաններում*։ Ուրեմն, նստաշրջաններում է, որ Ազգային ժողովը լայն կոլեկտիվության և հրապարակայնության պայմաններում քննարկում և լուծում է իր իրավասությանը վերապահված բոլոր կարևոր հարցերը։ Գործունեության նստաշրջանային կարգը հնարավորություն է ընձեռում պատգամավորների ընդհանուր կամքի և կարծիքի դրսևորման, հետևաբար նաև՝ քննարկվող հարցերի ճիշտ և օբյեկտիվ լուծման համար։

Նստաշրջանում է, որ Ազգային ժողովն իրականացնում է իր օրենսդրական իրավասությունը, ընտրում կամ նշանակում է Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին և պաշտոնատար անձանց։

Սահմանադրությունը տարբերում է *հերթական և արտահերթ նստաշրջանները*։

Ազգային ժողովը մշտապես, ամենօրյա գործող պետական իշխանության մարմին է, ուստի կարևոր նշանակություն է ստանում նրա նստաշրջանների կանոնավոր հրավիրումը։ Այն լուրջ երաշխիք է պետական իշխանության ներկայացուցչական և օրենսդիր մարմնի նորմալ գործունեության ապահովման համար։ Ահա, թե ինչու օրենսդրությունը հստակ որոշում է Ազգային ժողովի *հերթական նստաշրջանների գումարման պարբերականությունը և կայուն ժամկետները*։ Ըստ Կանոնակարգի 35 հոդվածի, Ազգային ժողովը տարեկան գումարում է երկու հերթական նստաշրջան՝ սեպտեմբերի երկրորդ երկուշաբթի օրից մինչև դեկտեմբեր ամսվա երկրորդ հինգշաբթին և փետրվարի առաջին երկուշաբթի օրից մինչև հունիսի երկրորդ հինգշաբթի օրը։ Հերթական նստաշրջաններն անցկացվում են *երեք շաբաթը մեկ գումարվող չորսօրյա նիստերի միջոցով*։

Ազգային ժողովի արտահերթ նստաշրջաններ կարող են հրավիրվել ըստ անհրաժեշտության։ Սահմանադրության 70 հոդվածի համաձայն, Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարում է Աժ

Նախագահը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի, ՀՀ Նախագահի կամ կառավարության նախաձեռնությամբ։ Արտահերթ նստաշրջանն անցկացվում է նախաձեռնողի կազմած օրակարգով և սահմանած ժամկետում։

Ազգային ժողովի կանոնակարգը (39 հոդվ.) սահմանել է արտահերթ նստաշրջան անցկացնելու վերաբերյալ պատգամավորների նախաձեռնության իրականացման կարգը։ Նրանք արտահերթ նստաշրջան անցկացնելու մասին իրենց նախաձեռնությունն իրականացնում են որոշման նախագիծը՝ *անհրաժեշտ թվով պատգամավորների ստորագրություններով*, Ազգային ժողովի նախագահին հանձնելու միջոցով։

Արտահերթ նստաշրջանը չի կարող տևել վեց օրից ավել։

Պատգամավորների նախաձեռնությունն *արտահերթ նիստ* գումարելու վերաբերյալ, կանոնակարգի 41 հոդվածի (3-րդ կետ) համաձայն, իրականացվում է նույն ընթացակարգով, ինչպես արտահերթ նստաշրջան հրավիրելու վերաբերյալ նախաձեռնության ընթացակարգը։

Ազգային ժողովի նիստերը *դռնբաց են*։ Դռնփակ նիստ կարող է գումարվել Ազգային ժողովի որոշմամբ։

Նիստերի դռնբաց լինելը վկայությունն է այն բանի, որ հանրապետության օրենսդիր իշխանության մարմնի գործունեության մեջ արմատավորված է *հրապարակայնության սկզբունքը*։ Դրա իմաստն այն է, որ նիստին, պատգամավորներից բացի, կարող են ներկա լինել Հանրապետության Նախագահը, վարչապետը, կառավարության անդամները, Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, Ազգային ժողովի ղեկավարների խորհրդակցանները, հրավիրված պետական մարմինների, հասարակական կազմավորումների ներկայացուցիչներ, մասնագետներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ և այլն։

Ազգային ժողովի կանոնակարգում (հոդվ. 43) սահմանված է նաև *դռնփակ նիստի կարգավիճակը*։ Դռնփակ նիստին, բացի պատգամավորներից, կարող են ներկա գտնվել Հանրապետության Նախագահը, նրա կողմից լիազորված ներկայացուցիչը, վարչապետը, նրա լիազորված ներկայացուցիչը, սահմանադրական դատարանի նախագահը, կառավարության անդամները, ՀՀ զլխավոր դատախազը, վճարելի դատարանի նախագահը, կենտրոնական բանկի նախագահը, վերահսկիչ պալատի նախագահը, Աժ աշխատակազմի ղեկավարը և նրա կողմից սահմանված ցանկով նիստի սպասարկումն ապահովող աշխատակիցները, ինչպես նաև նիստը վարողի հրավիրված անձինք։

Ազգային ժողովի իրավասության արդյունավետ իրականացման համար կարևոր նշանակություն ունի *նստաշրջանի համակողմանի և կանոնավոր նախապատրաստումը*: Այն ընթանում է երկու ուղղությամբ. ա) օրակարգի մեջ մտած հարցերի նախապատրաստում և բ) կազմակերպական-տեխնիկական բնույթի հարցերի լուծում:

Կախված այն բանից, *թե ում առաջարկությանը է հարցն ընդգրկվել օրակարգը*, նա էլ մասնակցում է նախապատրաստական աշխատանքներին: Նրանց թվում են պատգամավորները, մշտական հանձնաժողովները, գործադիր իշխանության մարմինները, հասարակական կազմակերպությունները: Նստաշրջանի նախապատրաստման աշխատանքները ղեկավարում են Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալները:

Որոշակի առանձնահատկություններ ունի *նորընտիր Ազգային ժողովի* հերթական գումարման *անդրանիկ նստաշրջանը*: Ըստ Սահմանադրության (հոդվ. 68) և Ազգային ժողովի կանոնակարգի՝ Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երրորդ հինգշաբթի օրը:

Անդրանիկ նստաշրջանի առանձնահատկությունների վերաբերյալ Ազգային ժողովի կանոնակարգը բովանդակում է առանձին հոդված (34): Առաջին նստաշրջանի գումարման գրվա մասին հայտարարում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Մինչև Ազգային ժողովի նախագահի ընտրությունը, Ազգային ժողովի *անդրանիկ նստաշրջանը բացում է վարում է տարիքով ավագ պատգամավորը*: Նստաշրջանի բացման առթիվ ռոզուլյնի խոսքի իրավունք ունեն Հանրապետության Նախագահը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նրանց խոսքից հետո պատգամավորները երդվում են՝ «Համու՛ն համագգային նպատակների իրականացման և հայրենիքի հզորացման ու բարգավաճման՝ երդվում են բարեխղճորեն կատարել ժողովրդի առաջ ունեցած պարտավորություններս, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, նպաստել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և շահերի պահպանմանը, անել ամեն ինչ քաղաքացիական համերաշխության, ազգային ու համամարդկային արժեքների պահպանման համար»:

Պատգամավորների երդումից հետո նիստը վարողը ներկայացնում է պատգամավորներին՝ կարդալով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, ընտրատարածքի համարը կամ կուսակցության (դաշինքի) անվանումը, որից հետո կատարվում է պատգամավորների գրանցում:

Կանոնակարգում ամրագրված է *անդրանիկ նստաշրջանի օրակարգը* (հոդվ. 34, կետ 6-րդ), որտեղ թվարկված հարցերը պարտադիր են Ազ-

գային ժողովի բոլոր գումարումների առաջին նստաշրջանների համար: Այդ հարցերն են՝

ա) հաշվիչ հանձնաժողովի ընտրություն.

բ) Ազգային ժողովի նախագահի ընտրություն.

գ) Ազգային ժողովի նախագահի երկու տեղակալների ընտրություն.

դ) Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների ընտրություն.

ե) մշտական հանձնաժողովների կազմավորում.

զ) կառավարության ծրագրին հավանություն տալու հարցը:

Ազգային ժողովի կանոնակարգն առանձին հոդվածներ է պարունակում նաև *հերթական նստաշրջանների* (36 հոդվ.) և *չորսօրյա նիստերի* (37 հոդվ.) *օրակարգերի* վերաբերյալ:

Ազգային ժողովի *հերթական նստաշրջանի օրակարգը* հաստատվում է նստաշրջանի առաջին նիստում և կարող է լրացվել նստաշրջանի ընթացքում: Առաջին նիստում Ազգային ժողովի նախագահը Ազգային ժողովին է ներկայացնում նստաշրջանի օրակարգի նախագիծը, որը, որպես կանոն, կազմված է լինում *երեք մասից*:

1) *Առաջին մասում* ընդգրկվում են այն օրենսդրական նախաձեռնությունները, որոնց վերաբերյալ Ազգային ժողովի համապատասխան գլխադասային հանձնաժողովը տվել է *դրական եզրակացություն*:

2) *Երկրորդ մասում* ընդգրկվում են այն օրենսդրական նախաձեռնությունները, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը տվել է *բացասական եզրակացություն*:

3) *Երրորդ մասում* ընդգրկվում են պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցերը, որոնք նստաշրջանի օրակարգ են մտնում առանց քննարկման և քվեարկության: Դրանք թվարկված են կանոնակարգի 36 հոդվածի 3-րդ կետում:

Չորսօրյա նիստերն սկսվում են չորսօրյա նիստերի օրակարգի հաստատմամբ: Օրակարգի նախագծում կարող են ընդգրկվել միայն նստաշրջանի օրակարգում առկա և նախորդ չորսօրյայում չքննարկված և չավարտված հարցերը, ինչպես նաև Սահմանադրությամբ և Կանոնակարգով նախատեսված արտահերթ, քննարկման համար ժամկետ ունեցող հարցերը: Այդ հարցերի ցանկը սպառիչ կերպով ամրագրված է կանոնակարգի 37 հոդվածի 3-րդ կետում:

2. Ազգային ժողովի գործունեության կազմակերպական ձևերի շարքում կարևոր է նաև *պատգամավորի գործունեությունը*: Այն իրականացվում է երկու ուղղությամբ՝ ա) Ազգային ժողովում և բ) ընտրողների շրջանում:

Ըստ Ազգային ժողովի կանոնակարգի՝ **պատգամավորը պարտավոր է ներկա լինել** Ազգային ժողովի յուրաքանչյուր նստաշրջանի յուրաքանչյուր նիստին և ակտիվորեն մասնակցել Ազգային ժողովի և նրա մարմինների աշխատանքներին:

Ազգային ժողովի գործունեությանը պատգամավորների մասնակցության մյուս կարևոր ձևը նրանց աշխատանքի կազմակերպումն է **ընտրողների շրջանում**: Այդ աշխատանքի կոնկրետ բովանդակությունն ու կազմակերպական ձևերը ունեն որոշակի առանձնահատկություն՝ հատկապես, եթե նկատի ունենանք, որ Հանրապետությունում զուգակցվում են մեծամասնական և համամասնական ընտրակարգերը:

Պատգամավորը պետք է մշտական կապի մեջ լինի իր ընտրողների հետ, պարբերաբար հանդիպումներ ունենա նրանց հետ, կատարի քաղաքացիների ընդունելություն, ուսումնասիրի և գործող օրենսդրությանը համապատասխան ընթացք տա ընտրողներից ստացված առաջարկություններին ու դիմումներին: Պատգամավորի կողմից դիմում-առաջարկություններում բովանդակված գաղափարների ամփոփումը, որի արդյունքները պատգամավորը ներկայացնում է Ազգային ժողով, պետք է հանդիսանա հանրապետության իշխանության օրենսդիր և ներկայացուցչական մարմնի օրինաստեղծ գործունեության հիմքը:

Իր ընտրատարածքի բնակչությանը անհրաժեշտ օգնություն կազմակերպելու համար պատգամավորը համակողմանիորեն պետք է ուսումնասիրի ընտրատարածքը, ծանոթանա մարդկանց հետաքրքրող և հուզող հիմնահարցերին, մշտական կապեր հաստատի համապատասխան տարածքի կազմակերպությունների ու պետական մարմինների հետ:²⁹

Պատգամավորի գործունեության արդյունավետությանը (թե՛ Ազգային ժողովում, և թե՛ ընտրատարածքում) մեծ չափով կնպաստի **պատգամավորների օգնականների ինստիտուտի անրատավորումը** Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում, ինչի մասին անառարկելիորեն վկայում է արտասահմանյան բազում երկրների պառլամենտական շինարարության պրակտիկան: Աժ կանոնակարգի 11 հոդվածի համաձայն՝ պատգամավորը կարող է ունենալ երկու օգնական, որոնցից մեկն աշխատում է վճարովի, իսկ մյուսը՝ հասարակական հիմունքներով:

Պատգամավորի համաձայնությամբ օգնականը նախապատրաստում է Աժ քննարկմանը ներկայացվող փաստաթղթերը, պատգամավորի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ վերլուծական,

տեղեկատվական և այլ նյութեր, կազմակերպում է պատգամավորի մոտ քաղաքացիների ընդունելությունը, վարում է գործավարությունը և այլն:

3. Ազգային ժողովի աշխատանքների կազմակերպման հաջող կարևոր ձևն է **մշտական հանձնաժողովների գործունեությունը**: Մշտական հանձնաժողովները կարևոր դեր են կատարում Ազգային ժողովի իրավասության իրականացման գործում: Նրանք ապահովում են խորհրդարանի գործունեության անընդհատությունը և նրա առջև դրված խնդիրների իրականացումը: Մշտական հանձնաժողովները, ըստ Սահմանադրության 73 հոդվածի, ստեղծվում են օրենքների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնելու համար:

Ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են առանձին օրենքների նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի իրադարձությունների և փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ կամ տեղեկանքներ ներկայացնելու համար:

Մշտական հանձնաժողովները Ազգային ժողովի մշտապես գործող օժանդակ մարմիններն են, որոնք կոչված են իրականացնելու Ազգային ժողովի լիազորությունները: Իրենց վերապահված իրավասության շրջանակներում նրանք իրավունք ունեն առաջարկություններ ներկայացնել ինչպես նստաշրջանի, այնպես էլ՝ նիստերի օրակարգի վերաբերյալ: Մշտական հանձնաժողովների ներկայացուցիչները իրավունք ունեն նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ հանդես գալու հիմնական զեկուցմամբ և հարակից զեկուցմամբ: Տարբեր մշտական հանձնաժողովներ կարող են գումարել համատեղ նիստ, եթե քննարկվող օրինագիծը կամ հարցը իր բովանդակությամբ համապատասխանում է նրանց գործունեության բնույթին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կարող են իրենց գործունեության հիմնական ուղղություններով կազմավորել **ենթահանձնաժողովներ և աշխատանքային խմբեր**:

Մշտական հանձնաժողովների գործունեությունն, ըստ էության, ունի **նախապատրաստական և խորհրդատվական** բնույթ:

Նրանց գործունեությունը **նախապատրաստական** է, որովհետև, ինչպես ամրագրված է Սահմանադրության 73 հոդվածում, մշտական հանձնաժողովներն ստեղծվում են օրենքների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ տալու համար: Այսինքն՝ մշտական հանձնաժողովները նախապատրաստում և Ազգային ժողովի քննարկմանն են ներկայացնում օրենքների և Ազգային ժողովի կողմից քննարկ-

²⁹ Պատգամավորի գործունեության մասին ավելի մանրամասն խոսվել է § 3-ում:

վող այլ հարցերի վերաբերյալ որոշման նախագծեր: Եվ քանի որ այդ նախագծերի վերջնական ճակատագիրը (ընդունել կամ չընդունելը), դրանցում փոփոխություններ կատարելը կամ չկատարելը որոշում է Ազգային ժողովը, ուստի մշտական հանձնաժողովների գործունեությունն այդ փմաստով կրում է խորհրդատվական բնույթ³⁰:

§ 7. Օրենսդրական գործընթացը Ազգային ժողովում

Ազգային ժողովի (ինչպես նաև ամեն մի պետական մարմնի) իրավասության իրացման իրավական ձևը՝ նրա կողմից ակտերի ընդունումն է: Ազգային ժողովի, որպես պետական իշխանության օրենսդիր մարմնի, հիմնական ակտը՝ **օրենքն է**: Ազգային ժողովի կողմից օրենքն ընդունվում է հատուկ կարգով, որը սահմանադրական իրավունքի գիտության մեջ ընդունված է անվանել **օրենսդրական գործընթաց**: Այն իրենից ներկայացնում է գործողությունների մի ամբողջություն, որոնց միջոցով իրականացվում է Ազգային ժողովի օրենսդրական գործունեությունը:

Օրենսդրական գործընթացը Ազգային ժողովում ընդգրկում է՝ ա) օրինագծի նախնապատրաստման, բ) օրինագծի քննարկման, գ) օրինագծի ընդունման, դ) օրենքի ստորագրման և հրապարակման փուլերը:

1. Օրենսդրական գործընթացի առաջին փուլը՝ օրինագծի նախապատրաստումը, սերտորեն կապված է **օրենսդրական նախաձեռնության իրավունքի** և դրա սուբյեկտների հետ: Օրենսդրական նախաձեռնության իրավունքը նշանակում է Ազգային ժողովի քննարկմանը օրինագծեր ներկայացնելու իրավունք: Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75 հոդվածի՝ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է **պատգամավորներին և կառավարությանը**:

Այդ երկու սուբյեկտները օրենսդրական նախաձեռնության հետ կապված իրենց կարգավիճակով էապես տարբերվում են միմյանցից: Խնդիրն այն է, որ պատգամավորների օրենսդրական նախաձեռնությունը սահմանափակված չէ ԱԺ իրավասության ոլորտների շրջանակներում: Այսինքն՝ պատգամավորը կարող է հասարակական և պետական կյանքի ցանկացած ոլորտի կապակցությամբ հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ: Մինչդեռ կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության իրավունքը կարող է իրականացվել միայն նրա իրավասությանը ենթակա հարցերի վերաբերյալ:

³⁰ Մշտական հանձնաժողովների մասին ակտի մանրամասն խոսվել է § 4-ում:

Պատգամավորն իր օրենսդրական նախաձեռնության իրավունքն իրականացնում է օրենքների և Ազգային ժողովի որոշումների նախագծերի առաջադրման միջոցով: Ընդ որում, նախաձեռնության հեղինակը պարտավոր է հիմնավորել դրա անհրաժեշտությունը՝ ներկայացնելով օրենքի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ օրենքների նախագծերը:

Նախագծերը ներկայացվում են Ազգային ժողովի աշխատակազմ, որն էլ դրանք հանձնում է Ազգային ժողովի նախագահին: Վերջինս պարտավոր է երկու աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուղարկել հանձնաժողովներ (րատ տնօրինման ոլորտների)՝ նշելով գլխադասայինը, ինչպես նաև կառավարություն՝ վարչապետին և աշխատակազմ:

Կառավարությունը, Ազգային ժողովի կանոնակարգի 51 հոդվածի համաձայն, պարտավոր է 20-օրյա ժամկետում իսկ հանձնաժողովը՝ 30 օրվա ընթացքում տալ եզրակացություն ստացված նախագծերի վերաբերյալ: Ընդ որում, կառավարությունը եզրակացություն է տալիս օրենքի նախագծի ընդունման դեպքում պետական եկամտներում և ծախսերում սպասվող փոփոխությունների մասին: Այդպիսի նախագծերը Ազգային ժողովը, Սահմանադրության 75 հոդվածի (3-րդ մաս) համաձայն, ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Դրա հետ կապված՝ կառավարության ներկայացմամբ Ազգային ժողովի կողմից պետական բյուջեում կատարվում է համապատասխան փոփոխություն:

Որոշակի առանձնահատկություն ունի **կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության իրականացումը**: Այն հիմնական գծերով ամրագրված է Սահմանադրությամբ (75 հոդվ.), իսկ մանրամասն՝ Ազգային ժողովի կանոնակարգում (60 հոդվ., կետ 3):

Սահմանադրության 75 հոդվածին համապատասխան՝ կառավարությունը որոշում է իր ներկայացրած օրենքների նախագծերի քննարկման հաջորդականությունը և կարող է պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն **միայն իր համար ընդունելի ուղղումներով**: Բացի դրանից, կառավարությունն ինքն է որոշում իր կողմից մշակված օրինագծերի կարևորության աստիճանը: Եթե նա գտնում է, որ տվյալ օրենքի **նախագիծը անհետաձգելի քննարկման կարիք ունի**, ապա կանոնակարգի 51 հոդվածի (6-րդ կետ) համաձայն՝ Ազգային ժողովը պարտավոր է դրա քննարկումն ու քվեարկությունը կազմակերպել **երկու ամսվա ընթացքում**:

Կառավարությունն իր կողմից մշակված օրենքի նախագիծը ուղարկում է Ազգային ժողովի նախագահին, որն էլ երկու օրվա ընթացքում այն ուղարկում է հանձնաժողովներին՝ նշելով գլխադասայինը: Գլխադասային հանձնաժողովը նախագծի վերաբերյալ իր եզրակացությունը Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում մեկ ամսվա ընթացքում: Այդ

կերակացությունը ստանալուց հետո Ազգային ժողովի նախագահը նախագիծը և դրա վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է Ազգային ժողովի հեքթական քառօրյա նիստին՝ մատաչքջանի օրակարգում այն ընդգրկելու վերաբերյալ հարցը լուծելու համար:

Օրենսդրական նախաձեռնության խնդրում **կառավարության նախապատվության իրավունքը** պայմանավորված է նրանով, որ գործադիր իշխանությունը, ունենալով մասնագիտական ծավալուն ապարատ, օրինագծեր նախապատրաստելու ավելի լայն հնարավորությունների է տիրապետում, քան Ազգային ժողովի պատգամավորները: Բացի դրանից, գործադիր իշխանությունը, զբաղվելով ամենօրյա օպերատիվ գործունեությամբ, ավելի հաղորդակից է համարակության կյանքում տեղի ունեցող փոփոխություններին, որոնց հետ կապված է բազմաթիվ թելերով: Առավել ևս, որ իրավակիրառ գործունեությունը նրան հնարավորություն է ընձեռում ճշտությամբ որոշելու, թե օրենքներում բովանդակված որ սկզբունքային դրույթներն են համապատասխանում տվյալ ժամանակահատվածում հասարակության պահանջներին, որոնք՝ ոչ: Այդ ամենը կառավարությանը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ իրականացնել օրենսդրական նախաձեռնության իր իրավունքը:

2. Օրենսդրական գործընթացի երկրորդ փուլը ընդգրկում է օրինագծերի քննարկումը Ազգային ժողովում: ԱԺ կանոնակարգի 63 հոդվածի համվճայն, օրենքների **նախագծերը քննարկվում և ընդունվում են երեք ընթերցմամբ**, եթե Ազգային ժողովի կողմից կոնկրետ օրինագծի վերաբերյալ, Կանոնակարգին համապատասխան, այլ որոշում չի ընդունվում:

Ազգային ժողովը պատրաստի օրինագիծը քննարկում է ոչ շուտ, քան նախագիծը և դրանում կատարված փոփոխությունները պատգամավորներին բաժանելուց 24 ժամ հետո: Այդ ժամկետը կարող է փոփոխվել միայն նախագահողի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կայացրած որոշմամբ:

Նախագծի **առաջին ընթերցման** ժամանակ զեկուցողը ներկայացնում է հիմնական սկզբունքները, դրա համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, դրա կարևորությունը և գործնական նշանակությունը: Ձեկուցմամբ հանդես է գալիս օրենսդրական նախաձեռնության **հեղինակը**: Եթե նախաձեռնությունը պատկանում է կառավարությանը, ապա **հիմնական զեկուցողի** դերում հանդես է գալիս **կառավարության ներկայացուցիչը**, իսկ **հարակից զեկուցմամբ՝ գլխադասային հանձնաժողովը**: Իսկ եթե կառավարությունը օրենսդրական նախաձեռնության հեղինակը չէ, ապա նա ունի **հարակից զեկուցման** իրավունք: Օրինագծի քննարկման ժամանակ լսվում են ԱԺ պատ-

գամավորների, պատգամավորական խմբերի և խմբակցությունների, կառավարության ներկայացուցիչների և հրավիրված անձանց կողմից արված առաջարկություններն ու դիտողությունները (կանոնակարգի 55 և 64 հոդվածներ):

Առաջին ընթերցմամբ օրինագծի քննարկման արդյունքում Ազգային ժողովը կարող է՝ ա) ընդունել այն առաջին ընթերցմամբ և առաջարկել նախաձեռնության հեղինակին վերանայել այն՝ արված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա. բ) մերժել օրինագիծը. գ) ընդունել այն որպես օրենք:

Մերժված օրինագիծը վերադարձվում է օրենսդրական նախաձեռնության հեղինակին, իսկ օրինագիծը առաջին ընթերցմամբ ընդունելու դեպքում Ազգային ժողովը կանոնակարգի 67 հոդվածում սահմանված կարգով կարող է **որոշել այն երկրորդ ընթերցման ներկայացնելու ժամկետը**: Նշված հոդվածի համաձայն, նախագծի երկրորդ ընթերցումը մտնում է քառօրյա նիստերի **օրակարգ ոչ ուշ, քան առաջին ընթերցման ավարտից մեկ ամիս հետո**:

Երկրորդ ընթերցման համար քառօրյա նիստերի օրակարգ մտած նախագծի վերաբերյալ առաջին ընթերցման ժամանակ արված առաջարկությունները **14-օրյա ժամկետում** գրավոր ներկայացվում են ԱԺ աշխատակազմ, որն էլ 24 ժամվա ընթացքում դրանք ուղարկում է հիմնական զեկուցողին, եթե Ազգային ժողովը այլ ժամկետ չի սահմանել:

Գլխադասային հանձնաժողովը և հիմնական զեկուցողը (նախաձեռնության հեղինակը) նախագիծը երկրորդ ընթերցման են ներկայացնում նոր խմբագրությամբ, դրան **կցելով ժամանակին ներկայացված բոլոր առաջարկությունները՝ համապատասխան եզրակացություններով**: Այդ եզրակացություններում, ըստ էության, հիմնավորվում են այն առաջարկությունների կարևորությունը, որոնք ընդունվում են, և այն առաջարկությունների անընդունելի լինելը, որոնք մերժվում են:

Երկրորդ ընթերցման ժամանակ հիմնական զեկուցողը (նախաձեռնության հեղինակը կամ նրա ներկայացուցիչը) հանդես է գալիս զեկուցումով, իսկ գլխադասային հանձնաժողովը՝ հարակից զեկուցումով, որոնք ներկայացնում են **միայն նախագծում կատարված փոփոխությունները**:

Յուրաքանչյուր փոփոխություն քննարկվում և քվեարկվում է առանձին: Եթե նախագծի հեղինակը ընդունում է գլխադասային հանձնաժողովի և պատգամավորների առաջարկությունները, ապա դրանք չեն քվեարկվում: Իսկ եթե նա համաձայն չէ փոփոխության վերաբերյալ հանձնաժողո-

վի առաջարկություններին, ապա փոփոխության հիմնավորման վերաբերյալ հանձնաժողովին տրվում է երեք թույն ելույթի իրավունք:

Ազգային ժողովի կանոնակարգի 71 հոդվածի համաձայն՝ **օրենքի նախագիծը երկրորդ ընթերցմամբ ընդունվելուց հետո՝ 30-օրյա ժամկետում հեղինակը կարող է նրանում կատարել խմբագրական փոփոխություններ և ներկայացնել Ազգային ժողովի նախագահին, որն էլ այն ընդգրկում է հաջորդ չորսօրյա նիստերի օրակարգ՝ քննարկումը երրորդ ընթերցմամբ կազմակերպելու համար:** Այդ ընթացքում նոր առաջարկություններ չեն ընդունվում: Մինչև 10-ական թույն տևողությամբ ելույթ են ունենում միայն հիմնական զեկուցողը և գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը:

3. Օրենդրական գործընթացի երրորդ փուլը ընդգրկում է օրենքների ընդունման բուն արարողակարգը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 71 հոդվածի համաձայն, օրենքները և Ազգային ժողովի որոշումները, որպես կանոն, ընդունվում են **նիստին ներկա պատգամավորների ձայների մեծամասնությամբ**, եթե քվեարկությանը մասնակցել են պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

Դրա հետ մեկտեղ, Սահմանադրության նշված նորմը այդ ընդհանուր կանոնից նախատեսում է բացառություններ, երբ Ազգային ժողովի կողմից առանձին հարցերի վերաբերյալ օրենքներ և որոշումներ ընդունելու համար պահանջվում է պատգամավորների **ընդհանուր թվի ձայների պարզ կամ որակյալ մեծամասնությունը**: Այսպես, Հանրապետության Նախագահի վետոյի հաղթահարման (72 հոդվ.), կառավարության գործունեության ծրագրին հավանություն տալու հետ կապված կառավարության վստահության քվեի հարցի լուծման (74 հոդվ.), պետության եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող օրենքների ընդունման (75 հոդվ. 3-րդ մաս), Ազգային ժողովի նախագահի ընտրության (79 հոդվ., 1-ին մաս), Ազգային ժողովի կողմից նշանակված սահմանադրական դատարանի անդամի լիազորությունների դադարեցման (83 հոդվ. 3-րդ կետ), կառավարությանն անվստահություն հայտնելու (84 հոդվ.) և հանրաքվե նշանակելու առաջարկության (111 հոդվ.) վերաբերյալ հարցերով պահանջվում է Ազգային ժողովի պատգամավորների **ընդհանուր թվի ձայների պարզ (կեսից ավելին) մեծամասնությունը**:

Մինչդեռ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու (57 հոդվ.) և նրա կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության մասին որոշում ընդունելու (59 հոդվ.) կապակցությամբ պահանջվում է ԱԺ պատգամավորների **ընդհանուր թվի ձայների որակյալ (երկու երրորդ) մեծամասնությունը**:

Օրենքներ և Ազգային ժողովի որոշումներ ընդունելու քվեարկությունը, որպես կանոն, կատարվում է էլեկտրոնային համակարգի միջոցով: Վերջինիս չգործելու դեպքում, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից որոշված դեպքերում, ձայների հաշվումը կատարվում է պատգամավորական վկայականները բարձրացնելու միջոցով: Չայները հաշվում է ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը: Պատգամավորը պարտավոր է քվեարկել անձամբ, արգելվում է ձայնի իրավունքի փոխանցումն այլ պատգամավորի:

4. Օրենդրական գործընթացի չորրորդ՝ ավարտական փուլը հանդիսանում է օրենքի ստորագրումը և հրապարակումը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախատեսված կարգով (55 հոդվ., կետ 2) Ազգային ժողովի ընդունած օրենքն ուղարկվում է Հանրապետության Նախագահին՝ ստորագրման և հրապարակման: Այդ գործողությունների համար հատկացվում է 21 օր ժամանակ: Նախագահը այդ ժամկետում կարող է չստորագրել օրենքը և իր դիտողություններով ու՝ առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Սահմանադրության 72 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի վերադարձրած օրենքը քննարկում է արտահերթ և նրա առարկություններն ու առաջարկությունները չընդունելու դեպքում վերստին ընդունում է այն՝ **պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ**:

2002թ. ապրիլի 29-ին հրապարակվեց Հայաստանի Հանրապետության օրենքը «Իրավական ակտերի մասին»: Օրենքի 6-րդ գլխի բովանդակությունից հետևում է, որ այն սահմանում է ՀՀ օրենքների, մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող ՀՀ միջազգային պայմանագրերի, Հանրապետության Նախագահի նորմատիվ հրամանագրերի և կարգադրությունների, Ազգային ժողովի նորմատիվ որոշումների, կառավարության և վարչապետի նորմատիվ որոշումների հրապարակման և ուժի մեջ մտնելու կարգը, ինչպես նաև օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության որոշումների՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին սահմանադրական դատարանի որոշումների հրապարակման և ուժի մեջ մտնելու կարգը:

Ըստ վերը նշված օրենքի (64 հոդվ.)՝ Հայաստանի Հանրապետության օրենքները և մյուս նորմատիվ իրավական ակտերը պարտադիր կերպով պետք է հրապարակվեն «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում», որը համարվում է պաշտոնական հրապարակում: Այն լույս է տեսնում ոչ պակաս, քան ամիսը երկու անգամ: Օրենք-

ները և այլ նորմատիվ ակտերը ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, եթե տվյալ օրենքով կամ նորմատիվ իրավական ակտով այլ ժամկետ նախատեսված չէ:

Օրենքները հրապարակում է Հանրապետության Նախագահը: Մյուս նորմատիվ իրավական ակտերը հրապարակում են դրանք ընդունող մարմինների ղեկավարները կամ պաշտոնատար անձինք:

§ 8. Ազգային ժողովի աշխատակազմը

Ազգային ժողովի գործունեության իրականացման արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է նրա աշխատակազմի բանիմաց և ակտիվ աշխատանքով: «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքի համաձայն (1 հոդվ.), Ազգային ժողովի աշխատակազմը պետական կառավարչական հիմնարկ է, որն իրականացնում է անկախ մասնագիտական գործունեություն՝ Ազգային ժողովի լիազորությունների և գործառույթների իրականացմանն ապահովման ուղղությամբ³¹:

Ազգային ժողովի աշխատակազմը՝ իր կանոնակարգին համապատասխան (1-ին կետ), լուրջ խնդիրներ է իրականացնում Ազգային ժողովի և նրա մարմինների՝ մշտական հանձնաժողովների, խմբակցությունների ու պատգամավորական խմբերի, ինչպես նաև պատգամավորների գործունեության իրավական, կազմակերպական, տեղեկատվական, փաստաթղթային, վերլուծական, ֆինանսական, նյութատեխնիկական և սոցիալ-կենցաղային ապահովման ուղղությամբ: Նշված խնդիրները պատշաճ պրոֆեսիոնալ մակարդակով իրականացնելու համար Ազգային ժողովի աշխատակազմում ձևավորվել են համապատասխան վարչություններ, բաժիններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ:

Ա. Ազգային ժողովի գործունեության իրավական ապահովման գործում լուրջ խնդիրներ ունի աշխատակազմի **օրենսդրության վերլուծության վարչությունը**, որի կազմում առանձնանում են **քրեական իրավունքի, քաղաքացիական իրավունքի, վարչական իրավունքի և միջազգային իրավունքի բաժինները**: Վարչությունը նշված կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով օգնություն է ցույց տալիս օրենսդրական նախաձեռնության սուբյեկտներին՝ իրավաբանական փորձաքննության ենթարկելով նրանց կողմից համապատասխան ոլորտների վերաբերյալ ներկայացված օրենքների և ԱԺ ոլորտումների նախագծերը: Վարչությունը ըստ

³¹ Ընդունվել է 04.12.2002թ., ուժի մեջ է մտել 26.12.2002թ.:

անհրաժեշտության իրավաբանական խորհրդատվական ծառայություն է մատուցում Ազգային ժողովի ղեկավարությանը, խմբակցություններին, պատգամավորական խմբերին, ինչպես նաև անհատ պատգամավորներին:

Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեության առավել պատասխանատու մասն է համարվում նրա կողմից **տնտեսական ոլորտի** վերաբերյալ օրինագծերի մշակումն ու ընդունումը: Այդ կապակցությամբ նույնպես լուրջ խնդիրներ է դրված Ազգային ժողովի օրենսդրական վերլուծության վարչության վրա: **Նա իր կազմում գործող սոցիալական, հարկարյուջետային և ֆինանսատնտեսական բաժինների միջոցով ապահովում է պատգամավորներին հանրապետության տնտեսության զարգացման այն հիմնախնդիրների վերաբերյալ վերլուծական նյութերով**, որոնք պահանջում են օրենսդրական կարգավորում և օրենսդրական գործընթացի արդյունավետություն: Այդ կապակցությամբ վարչությունն իրականացնում է օրենքների և Ազգային ժողովի ոլորտումների **նախագծերի տնտեսագիտական փորձաքննություն**:

Բացի դրանից, օրենսդրական վերլուծության վարչությունը խորհրդատվություն է մատուցում Ազգային ժողովի ղեկավարությանը, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին, պատգամավորական խմբերին և պատգամավորներին՝ Ազգային ժողովի քննարկման համար Հանրապետության տնտեսության հետ առնչվող հարցեր նախապատրաստելիս:

Բ. Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքում իր կարևորությամբ և աշխատանքի ծավալով առանձնանում է **արտաքին հարաբերությունների վարչությունը**: Դա պայմանավորված է Ազգային ժողովի ունեցած միջազգային լայն կապերով, միջպետական հարաբերություններում իրականացվող լայն լիազորություններով:

Ազգային ժողովն, ամենից առաջ, միջխորհրդարանական կապեր է հաստատել աշխարհի մեծ թվով պետությունների հետ: Այդ կապերի կազմակերպական ապահովման նպատակով արտաքին հարաբերությունների վարչությունը **արտերկրներ մեկնող** Ազգային ժողովի պատվիրակությունների և պատգամավորների՝ միջազգային խորհրդարանական կազմակերպություններում արդյունավետ գործունեության համար տրամադրում է իր կողմից ձեռք բերված և համակարգված անհրաժեշտ **տեղեկատվական-վերլուծական նյութեր**:

Վարչությունն Ազգային ժողովին և նրա մարմիններին աջակցում է այլ պետությունների խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների հետ կապերի հաստատմանն ու զարգացմանը՝ միջխորհրդարա-

նական կապերի վերաբերյալ ծրագրերի մշակմանն ու իրականացմանը մասնակցելու միջոցով:

Ազգային ժողովի կողմից արտաքին հարաբերություններում իրակա-նացվող գործունեության կազմակերպական ապահովման խնդրով է պայմանավորված նաև Ազգային ժողովի աշխատակազմի *արարողա-կարգի վարչության* կարգավիճակը: Վերջինս կոչված է ապահովելու Ազ-գային ժողովի նախագահին, նրա տեղակալներին, Ազգային ժողովի հանձ-նաժողովների նախագահներին, նրանց մասնակցությամբ Ազգային ժող-ովի պատվիրակությունների՝ հանրապետությունում և օտարերկրյա պե-տություններ կատարած այցերի արարողակարգային միջոցառումների նախապատրաստումն ու իրականացումը:

Գ. Ազգային ժողովի գործունեության հրապարակայնության ապա-հովման գործում Ազգային ժողովի աշխատակազմի կանոնակարգը (19 կետ) լայն լիազորություններ է վերապահում *հասարակայնության հետ կապերի վարչությանը*: Վարչությունն իրականացնում է Ազգային ժողովի գործունեությանը վերաբերող պաշտոնական տեղեկատվության օպերա-տիվ տարածումը, Ազգային ժողովում ապահովում է զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների աշխատանքը, կազմակերպում է մամուլի ասուլիսներ, ճեպագրույցներ, այլ միջոցառումներ, պատրաս-տում է տեղեկատվական-վերլուծական նյութեր:

Դ. Ազգային ժողովի աշխատանքների կազմակերպման օպերատի-վությունն ու արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է աշ-խատակազմի *քարտուղարության և գործերի կառավարչության* աշխա-տանքների որակական չափանիշներով: Այդ երկու ծառայություններն ի-րենց գործունեության ոլորտների ծավալով և յուրահատկությամբ էապես տարբերվում են Ազգային ժողովի աշխատակազմի մյուս ծառայություն-ներից:

Քարտուղարության վրա է դրված Ազգային ժողովի նստաշրջաննե-րի և նիստերի օրակարգերի պատրաստումը, օրենքների և Ազգային ժո-ղովի որոշումների նախագծերի շեղվածական, խմբագրական փորձաքն-նությունը և սրբագրումը: Քարտուղարությունը պատասխանատվություն է կրում նաև նիստերի կազմակերպական-տեխնիկական սպասարկման, սղագրությունների վերծանման և սրբագրման աշխատանքների կազմա-կերպման համար: Նրա պարտականությունների մեջ է մտնում փաստի ընդունումը և գրանցումը, գործավարության միասնական համակարգի վարումը, Ազգային ժողովի արխիվում գործերի ընդունումն ու պահպա-նումը:

Քարտուղարության գործունեության մեջ առանձնակի կարևորվում է *Ազգային ժողովի ընդունարանի* հստակ աշխատանքի ապահովումը: Խնդիրն այն է, որ ընդունարանն իրականացնում է Ազգային ժողովին ուղղված քաղաքացիների դիմումների (որը մեծ թիվ է կազմում) գրանցու-մը և հաշվառումը, կազմակերպում և կատարում է քաղաքացիների ընդու-նելությունը, ռուսումնասիրում է նրանց դիմումները, դրանք ուղարկում է Ազգային ժողովի աշխատակազմի համապատասխան ստորաբաժա-նումներ, պետական այլ մարմիններ և կազմակերպություններ, վերլուծում է դիմումների բնույթը, բովանդակությունը և պատրաստում համապա-տասխան տեղեկատվական-վերլուծական նյութեր: Քարտուղարության պարտականությունների մեջ է մտնում նաև արտաքին և ներքին համա-կարգային ցանցում տեղեկատվական-վերլուծական նյութերի պատ-րաստման և տեղադրման ապահովումը:

Գործերի կառավարչության կարգավիճակն ունի առավելապես *տնտեսական ուղղվածություն*: Նրա լիազորությունների իրականացման հիմնական ոլորտներն են համարվում Ազգային ժողովի պատգամավոր-ների գործունեության ֆինանսական, նյութատեխնիկական և սոցիալ-կենցաղային ապահովումը: Բացի դրանից, գործերի կառավարչությունն իրականացնում է պաշտոնական միջոցառումների արարողակարգային ապահովումը, Ազգային ժողովի նիստերի, լսումների, այլ միջոցառումնե-րի նյութատեխնիկական, տնտեսական, տրանսպորտային ապասարկու-մը, հրատարակչական գործունեությունը: Նրա պարտականությունների մեջ է մտնում Ազգային ժողովի շենքի, շինությունների և տարածքի վերա-նորոգումն ու բարեկարգումը:

Գործերի կառավարչությունը պատասխանատվություն է կրում Ազ-գային ժողովի հեռահաղորդակցության համակարգերի որակյալ սպա-սարկման և զարգացման, Ազգային ժողովի պատգամավորների և աշխա-տակազմի ստորաբաժանումների աշխատանքների տեղեկատվական-տեխնոլոգիական ու հեռահաղորդակցության ապահովման համար:

Ե. Ազգային ժողովի և նրա մարմինների գործունեության կազմա-կերպմանը յուրջ օգնություն և օժանդակություն են ցույց տալիս համա-պատասխան կառույցների *մասնագետները, փորձագետները և գործա-վարները*: Նրանք ապահովում են հանձնաժողովների, խմբակցություննե-րի և պատգամավորական խմբերի փաստաթղթային, իրավական, խորհրդատվական, տեղեկատվական, կազմակերպական, տեխնիկական և այլ գործունեության իրականացումը: Վերոնշյալ աշխատողները հան-դիսանում են պետական ծառայողներ և ենթարկվում են Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ՀՀ պետական մարմինների համակարգում

Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեության տեղեկատվական ապահովման խնդրում լուրջ ծառայություններ է մատուցում *Ազգային ժողովի գրադարանը*։ Այն զբաղվում է պատվամենտականության և իրավական հարցերի վերաբերյալ գրադարանային ֆունդի ձևավորման, մասնագիտական ուղեցույցների պատրաստման, Ազգային ժողովի պատգամավորներին անհրաժեշտ գրականություն և վերլուծական նյութեր տրամադրելու և այլ հարցերով։

Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքում գործում են ևս երկու կարևոր կառուցվածքային ստորաբաժանումներ՝ առաջին բաժինը և կադրերի կառավարման վարչությունը։ *Առաջին բաժինը* իրականացնում է պետական գաղտնիք ներկայացնող տեղեկությունների պաշտպանվածությունը, իսկ *կադրերի կառավարման վարչությունը* կատարում է կադրային աշխատանքի հետ կապված փաստաթղթային ձևակերպումները, պատրաստում է վկայականներ, գործուղման փաստաթղթերը, մասնակցում է անցագրային ռեժիմի կազմակերպմանը և այլն։

Ազգային ժողովի աշխատակազմն ունի *պետական հիմնարկի կարգավիճակ*, իր անվամբ կնիք ու ձևաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով։ Նրա աշխատողների աշխատանքային պայմանները, նյութական, նյութատեխնիկական, սոցիալ-կենցաղային, այդ թվում՝ բժշկական և մշակութային, ապահովման կարգն ու մակարդակը սահմանվում է Հանրապետության Նախագահի և կառավարության աշխատակազմերի աշխատակիցների համար սահմանված մակարդակին համապատասխան։

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ կառավարությունը բնութագրվում է որպես պետության վարչական (գործադիր ու կարգադրիչ) գործունեությունը ղեկավարող ընդհանուր իրավասության կոլեգիալ մարմին։ Ելնելով պետական կառավարման ձևից և տվյալ երկրի քաղաքական փորձից, տարբեր պետություններում կառավարությունների սահմանադրական անվանումը տարբեր է՝ կառավարություն, մինիստրների խորհուրդ, մինիստրների կաբինետ, պետական խորհուրդ, ֆեդերալ խորհուրդ, ֆեդերալ կառավարություն, վարչական խորհուրդ, գործադիր վեչե և այլն։

Հայաստանի Հանրապետությունում գործադիր իշխանությունն իրականացնում են Հանրապետության կառավարությունը, նախարարությունները, կառավարությանն ենթակա պետական կառավարման մյուս մարմինները, ինչպես նաև գործադիր գործառույթներ իրականացնող այլ մարմիններ։ Կառավարության կարգավիճակը, որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմնի, ամրագրված է ՀՀ Սահմանադրության 5 գլխում (85-90 հոդվ.)։ Բացի դրանից, Սահմանադրության մյուս գլուխների բազմաթիվ հոդվածներ մույմպես բովանդակում են դրույթներ (55 հոդվ. 4-րդ կետ, 59, 74-77, 80, 82, 84, 109-110 և այլ հոդվ.) Հանրապետության կառավարության իրավական վիճակի վերաբերյալ՝ տարբեր ոլորտներում։

Սահմանադրության վերը նշված հոդվածները և դրույթները, ինչպես նաև Հանրապետության մյուս նորմատիվ իրավական ակտերում կառավարության վերաբերյալ ամրագրված հիմնադրույթները բացահայտում են նրա տեղն ու դերը ինչպես պետական իշխանության միասնական մարմինների, այնպես էլ գործադիր իշխանության մարմինների համակարգում։

Լինելով ՀՀ գործադիր իշխանության ընդհանուր իրավասության բարձրագույն կոլեգիալ մարմին և իրականացնելով պետական կառավարում՝ ՀՀ կառավարությունն ուղղություն է տալիս նախարարություններին, պետական կառավարման մյուս հանրապետական ու տարածքային

մարմինների գործունեությանը և վերահսկողություն իրականացնում դրանց նկատմամբ: Նշված մարմինները ենթակա են կառավարությանը և պատասխանատու նրա առջև՝ հանձնարարված խնդիրների լուծման համար:

Իր իրավասությանը վերապահված հարցերը կառավարությունը լուծում է ինքնուրույն: Ընդ որում, նրա գործադիր ու կարգադրիչ գործունեությունն իրականացվում է ՀՀ ամբողջ տարածքում, ապահովելով գործադիր իշխանության իրագործող մարմինների համակարգի տարբեր օղակների փոխհամաձայնեցված գործունեությունը:

ՀՀ կառավարությունն ամենօրյա գործունեության ընթացքում **գործնականում իրականացնում է** Հանրապետության օրենքները և դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերը, կազմակերպում է այդ ակտերի կենսագործումը գործադիր իշխանության մյուս մարմինների կողմից:

Գործադրելով ՀՀ օրենքները, կառավարությունը գործադիր իշխանության խնդիրները լուծելու նպատակով իրականացնում է **կարգադրիչ գործունեություն**՝ ի կատարումն այդ օրենքների՝ ընդունում է համապատասխան իրավական ակտեր, որոնք ենթակա են կատարման բոլոր պարտավոր սուբյեկտների կողմից:

Կառավարությունն անմիջականորեն կամ գործադիր իշխանության համակարգի մյուս մարմինների միջոցով ղեկավարում է Հանրապետության տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական ոլորտները: Հանրապետության գործադիր իշխանության մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը կառավարության մասնակցության ծավալը պայմանավորված է նրանով, որ նա կոչված է գլխավորելու այդ մարմինների համակարգը:

Սահմանադրության 85 հոդվածից հետևում է, որ կառավարությունը Հանրապետության **գործադիր իշխանության բարձրագույն կոլեզիալ մարմինն է կազմված վարչապետից և նախարարներից**: Նրա կառուցվածքը և կարգավիճակը, որը որոշված է Սահմանադրությամբ, կոնկրետացվում և զարգացվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգ» սահմանելու մասին Հանրապետության Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի հրամանագրով³² և այլ նորմատիվ իրավական ակտերով: Նշված հրամանագիրը սահմանում է կառավարությանը Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման կազմակերպական հիմունքները, նրա գործունեության կազմակերպման, նիստերի նախապատրաստման և հրա-

վիրման, որոշումների ընդունման և դրանց կատարման ապահովման կարգը:

Այսպիսով, իր սահմանադրաիրավական կարգավիճակով կառավարությունը **կարևոր տեղ է գրավում** ինչպես պետական իշխանության մարմինների, այնպես էլ **գործադիր իշխանության մարմինների** համակարգում: Առավել ևս, որ կառավարությունը միաժամանակ **բարձրագույն քաղաքական մարմին է**, որը գլխավորում է Հանրապետության գործադիր իշխանության միասնական համակարգը և իրականացնում համազգային, համապետական կառավարում:

Կառավարության սահմանադրաիրավական վիճակը բնութագրվում է նրանով, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում, իշխանությունների բաժանման սկզբունքին համապատասխան, նորովի են տրվում գործադիր իշխանության իրականացման, դրա մարմինների կազմավորման և գործունեության ձևերն ու մեթոդները:

§ 2. Կառավարության կազմավորման կարգն ու կառուցվածքը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85 հոդվածի համաձայն՝ Հանրապետության կառավարության անհատական կազմի մեջ են մտնում վարչապետը և նախարարները: **Կառավարության կառուցվածքը, Հանրապետության կառավարության առաջարկությամբ, սահմանվում է օրենքով**:

ՀՀ կառավարությունը, որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմին, էապես տարբերվում է Հանրապետության գործադիր իշխանության մյուս մարմիններից՝ ոչ միայն այդ մարմինների համակարգում զբաղված դիրքով, այլև **կազմավորման առանձնահատուկ կարգով**: Կառավարության կազմավորման հետ կապված գործընթացները նախատեսված են Սահմանադրությամբ (55 հոդվ. 4-րդ կետ): Դրան համապատասխան կառավարության կազմավորման սկսվում է վարչապետի նշանակումից: Հանրապետության Նախագահն Ազգային ժողովում պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների արդյունքում վարչապետ է նշանակում խորհրդարանի պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին: Նշված դրույթից կարելի է ենթադրել, որ սահմանված կարգով վարչապետ կարող է նշանակվել ոչ միայն Ազգային ժողովի պատգամավորների թվից, այլև այդպիսի մանդատ չունեցող անձը: Վարչապետին նշա-

³² ՀՀ ՊՏ, 2007, N37(561), 25.07.07:

նակում է Հանրապետության Նախագահը՝ կառավարության հրաժարականն ընդունելուց հետո **տասնօրյա** ժամկետում:

Վարչապետի նշանակումից հետո՝ **քսանօրյա ժամկետում** Հանրապետության Նախագահը կազմավորում է կառավարությունը: Կառավարության անդամներին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում Հանրապետության Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Կառավարությունը համարվում է կազմավորված, **եթե նշանակվել են նրա բոլոր անդամները**: Կառավարությունն ընդհանուր առմամբ գործում է Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ընթացքում և իր լիազորությունները վայր է դնում նոր ընտրված Հանրապետության Նախագահի առջև:

Եթե մինչև Սահմանադրության 2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխությունները վարչապետին պաշտոնից անմիջականորեն ազատում էր Հանրապետության Նախագահը, ապա ներկայումս այդպիսի անհրաժեշտություն առաջանալու դեպքում վերջինս (Հանրապետության Նախագահը) **կարող է միայն կառավարությանն անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծ ներկայացնել Ազգային ժողով**: Հետևաբար, վարչապետին պաշտոնից ազատելու մասին որոշում ընդունելու բացառիկ լիազորությունը վերապահված է Ազգային ժողովին:

Սահմանադրությամբ սպառիչ կերպով ներկայացվում են նաև Հանրապետության Նախագահի կողմից **կառավարության հրաժարականն ընդունելու դեպքերը և օրը**. ա) նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի, բ) Հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու, գ) կառավարությանն անվստահություն հայտնվելու, դ) կառավարության ծրագրին հավանություն չտալու, ե) վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու, զ) վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը (55 հոդվ. 4-րդ կետ): Թվարկված հիմքերով Հանրապետության Նախագահի կողմից կառավարության հրաժարականն ընդունվելու դեպքերում ՀՀ կառավարությունն **ամբողջ կազմով հրաժարական է տալիս**: Սակայն դրանից հետո հրաժարական տված կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև նոր կառավարության կազմավորումը:

ՀՀ Ազգային ժողովը, Սահմանադրությանը համապատասխան, **կարող է անվստահություն հայտնել կառավարությանը հետևյալ դեպքերում**՝ ա) երբ հավանություն չի տալիս կառավարության ծրագրին (74 հոդվ.), բ) կառավարության ներկայացրած օրենքի նախագծի ընդունման ստեղծությանը (75 հոդվ.), գ) եթե չի հաստատում կառավարության կողմից ներկայացված ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը (90 հոդվ.) և պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը՝ ի-

հարկե, եթե դրանց կապակցությամբ կառավարությունն Ազգային ժողովի նիստում դրել է իր վստահության հարցը:

Կառավարությանն անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծ կարող են ներկայացնել նաև **պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը**, ինչպես նաև Հանրապետության Նախագահը կամ առանձին պատգամավոր՝ **օրենսդրական նախաձեռնության կարգով**: Նշված որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուտ, քան 48, և ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում: Նման դեպքերում Ազգային ժողովը կարող է կառավարությանն անվստահություն հայտնել պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (Սահմանադրության 84 հոդվ.):

Այդ իրավունքից նրանք չեն կարող օգտվել ուղղակի կամ արտակարգ դրության ժամանակ: Կառավարությունն ամեն դեպքում հրավիրվում է իր նկատմամբ անվստահության հարցի քննարկմանը, և նրա անդամներն արտահերթ ելույթի իրավունք ունեն:

Գործնական կարևորություն ունի նաև Հայաստանի Հանրապետության **կառավարության կառուցվածքի** հիմնախնդիրը: Այն բաղադրամասերի (կառուցվածքային տարրերի) առումով փոփոխություն չի կրել սահմանադրական բարեփոխումների արդյունքում, սակայն **փոխվել է նրա կառուցվածքը սահմանող իրավական հիմքը**: Այսպես, եթե 1995թ. խմբագրությամբ Սահմանադրության համաձայն (85 հոդվ., 3-րդ մաս)՝ կառավարության կառուցվածքը վարչապետի ներկայացմամբ սահմանվում էր Հանրապետության Նախագահի հրամանագրով, ապա 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո այն է կառավարության առաջարկությամբ **սահմանվում է օրենքով**: Նման կարգը բացառում է Հանրապետության Նախագահի կողմից Կառավարության կառուցվածքի սահմանումը սեփական նպատակահարմարությունից ելնելով:

ՀՀ գործող Սահմանադրության 85 հոդվածի (3-րդ մաս) համաձայն՝ կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից, որոնցից մեկը կարող է վարչապետի առաջարկությամբ Հանրապետության **Նախագահի կողմից նշանակվել փոխվարչապետ և փոխարինել վերջինիս բացակայության ժամանակ**:

Հանրապետության վարչապետն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Հայաստանի կառավարության կազմում: Վարչապետի պաշտոնը Հանրապետության բարձրագույն և առանցքային պաշտոններից է: Գլխավորելով հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն մարմինը, վարչապետը կառավարության առջև դրված խնդիրները լուծում է ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և Հանրապետության Նախագահի հրամանագրերին ու կարգադրություններին, կառավարու-

յան որոշումներին համապատասխան: Վարչապետը ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը:

Հանրապետության Սահմանադրությունը (88 հոդվ.) և օրենսդրական մյուս ակտերը որոշակի պահանջներ են ներկայացնում կառավարության անդամներին: *Նրանք չեն կարող զբաղվել* ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Ինչպես վարչապետը, այնպես էլ նախարարները *պետք է լինեն ՀՀ քաղաքացի* (85 հոդվ.): ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն (39 հոդվ.)՝ նախարարները և փոխնախարարները չեն կարող լինել ընտրական հանձնաժողովի անդամ:

§ 3. ՀՀ կառավարության իրավասությունը

ՀՀ կառավարության լիազորությունները կազմում են նրա սահմանադրաիրավական կարգավիճակի կարևոր և անբաժանելի մասը: Կառավարությունը, որպես երկրի գործադիր իշխանության բարձրագույն մարմին, օժտված է *յուրահատուկ բնույթի և ծավալի իրավասությամբ՝* պետական ու հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ինքնուրույն իրականացնելով ՀՀ գործադիր իշխանությունը, կառավարությունն իր իրավասության սահմաններում իրականացում է Հանրապետության տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական գործունեության բոլոր հիմնական բնագավառներն ու ճյուղերի կառավարումը:

Որպես պետական իշխանության բարձրագույն գործադիր ու կարգադրիչ մարմին, կառավարությունն օժտված է առաջնային լիազորություններով: *Նա մշակում և իրականացնում է Հանրապետության ներքին քաղաքականությունը*, իսկ արտաքին քաղաքականությունը՝ Հանրապետության Նախագահի հետ միասին: Կառավարության իրավասությանն են ենթակա Հանրապետության պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին:

Որպես ընդհանուր իրավասության գործադիր իշխանության համապետական մարմին, կառավարությունը Հանրապետության Նախագահի 2007թ. հուլիսի 7-ի հրամանագրի համաձայն, լուծում է կառավարման կարևորագույն հարցերը՝ ապահովում է պետության քաղաքականության

իրականացումը ՀՀ Սահմանադրությամբ (89 հոդվ.) նախատեսված ոլորտներում, ղեկավարում և ուղղություն է տալիս տնտեսական, սոցիալ-մշակութային, պետական կառավարման մյուս բնագավառների գործունեությանը: Նա համակարգում, միավորում և վերահսկում է ՀՀ նախարարությունների, պետական կառավարման մյուս հանրապետական և տարածքային մարմինների աշխատանքը, որոշում է դրանց խնդիրները, միջոցներ է ձեռնարկում այդ մարմինների համակարգը, աշխատանքի ձևերն ու մեթոդները կատարելագործելու ուղղությամբ:

Կառավարությունն անհրաժեշտության դեպքում կարող է պետական կառավարման *իր իրավասության որոշ հարցերի լուծումը վերապահել նախարարություններին*, մյուս հանրապետական և տարածքային պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև իրեն ենթակա մյուս մարմիններին, եթե այդ լիազորությունները ՀՀ օրենսդրությամբ չեն վերաբերում կառավարության բացառիկ իրավասությանը:

Կառավարության լիազորությունների իրականացման ոլորտները ամրագրված են Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով: Նշված նորմատիվ իրավական ակտերի համաձայն, ՀՀ կառավարությունն իր գործունեությունն իրականացնում է մի շարք ուղղություններով:

1. ՀՀ կառավարությունը կարևոր լիազորություններ է իրականացնում *երկրի բյուջեի ձևավորման և իրականացման ոլորտում*: Բյուջետային տարին սկսվելուց առնվազն իննսուներեք օր առաջ Ազգային ժողովի բննարկմանն է ներկայացնում հանրապետության *պետական բյուջեի վերաբերյալ օրենքի նախագիծը* և կարող է պահանջել, որ այն իր կողմից բնորոշված ուղղումներով քվեարկության դրվի մինչև այդ ժամկետի (90 օրվա) ավարտը: Կառավարության անդամները և կառավարության կողմից լիազորված ներկայացուցիչները մասնակցում են բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական քննարկումներին՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների և դրանց համատեղ նիստերում: Նախնական քննարկումների արդյունքով կառավարությունը կարող է փոփոխություններ կատարել բյուջեի նախագծում:

Կառավարությունը կարող է ընդունել կամ մերժել քննարկումների ժամանակ արված առաջարկությունները: Իսկ եթե պնդում է, որ միայն իր ուղղումներով ու փոփոխություններով պետք է ընդունվի բյուջեի մասին օրենքի նախագիծը, ապա դրա հաստատման կապակցությամբ կառավարությունը կարող է ղնել իր վստահության հարցը: Եթե Ազգային ժողովը, Աստիճանադրության 75 հոդվածով նախատեսված կարգով, կառավար-

րությանն անվստահություն չի հայտնում, ապա բյուջեն՝ կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված:

Անվստահություն հայտնելու դեպքում նոր կառավարությունը պետական բյուջեի նախագիծ է ներկայացնում իր ծրագիրը հավանության արժանանալուց հետո **տասն օրվա ընթացքում**, իսկ նախագիծը քննարկվում և **հաստատվում է երեսուն օրվա ընթացքում**: Եթե մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չի հաստատվում, ապա ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեով նախատեսված համամասնություններով:

Կառավարությունն ապահովում է Ազգային ժողովի կողմից հաստատված պետական բյուջեի կատարումը՝ սահմանում է դրա կատարման կարգը, օրենսդրական նախաձեռնության կարգով և առաջարկություն է ներկայացնում հաստատված բյուջեում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին, վերահսկողություն է իրականացնում բյուջեի կատարման նկատմամբ և պատասխանատու է դրա կատարման համար:

Կառավարությունը պարտավոր է Ազգային ժողովի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել նաև **պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը**:

Եթե Ազգային ժողովը բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը չի հաստատում, ապա դրվում է կառավարության անվստահության հարցը: Կառավարությանը անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չներկայացվելու կամ այդպիսի որոշում չընդունվելու դեպքում, այնպես էլ անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշում **ընդունվելու** դեպքում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

2. ՀՀ Սահմանադրությամբ կառավարության իրավասությանն է վերապահված **պետական սեփականության կառավարումը**: Իր իրավասության սահմաններում կառավարությունն իրականացնում է Հանրապետության սեփականության տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը, սահմանում է պետական սեփականության իրավունքի ծագման հիմքերն ու կարգը, կանոնակարգում պետական սեփականություն հանդիսացող օբյեկտների **սեփականաշնորհման** և **ապասպետականացման ծրագրերը**: և Ազգային ժողովին տարեկան հաշվետվություն է ներկայացնում այդ ծրագրերի կատարման մասին: Կառավարությունը վերահսկողություն է իրականացնում գյուղական համայնքների տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող **պահուստային ֆոնդի հողերի օտարման նկատմամբ**:

3. Պետական սեփականության կառավարման հետ սերտորեն կապված է կառավարության գործունեությունը Հանրապետության **տնտեսության զարգացումը ապահովելու ոլորտում**: Այստեղ առանձնակի կարևորվում է կառավարության կողմից պետական կառավարման **ճյուղային և տարածքային սկզբունքների հաշվառումը**, կենտրոնացված կառավարումը զուգակցելով պետական կազմակերպությունների տնտեսական ինքնորոյնության և նախաձեռնության հետ: Նա իրականացնում է **տարածքային զարգացման** պետական քաղաքականությունը:

Կառավարությունն աջակցում է **ոչ պետական կազմակերպությունների** գործունեությանը, իր իրավասության շրջանակներում վերահսկում է դրանց գործունեությունը: Նա (կառավարությունը) մասնակցում է համաքաղաքական սոցիալ-տնտեսական համալիր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, միջոցներ է ձեռնարկում տնտեսության ճյուղերի զարգացման, արտադրության արդյունավետության, արտադրանքի որակի բարձրացման ուղղությամբ:

Կառավարությունն, իրականացնելով իր լիազորությունը պետական սեփականության տնօրինման ոլորտում, ամենից առաջ, սահմանում է **ընդերքի** պետական միասնական ֆոնդի ստեղծումն ու պահպանումը, մշակում և իրագործում է ընդերքի պահպանության ծրագրերը, պետական վերահսկողություն է իրականացնում ընդերքի օգտագործմանն ու պահպանության նկատմամբ, որոշումներ է ընդունում բնապահպան տարածքներում գտնվող և համապետական նշանակություն ունեցող հանքավայրերի հետազոտման և օգտագործման վերաբերյալ:

Բացի դրանից, կառավարությունն ընդհանուր ղեկավարություն է իրականացնում **օտարերկրյա պետությունների հետ արտաքին տնտեսական կապերի և համագործակցության բնագավառում**: Միջոցառումներ է մշակում այդ կապերի զարգացման ու արդյունավետության բարձրացման, այդ իմաստով տնտեսական անվտանգության և **ներքին շուկայի պաշտպանվածության ուղղությամբ**, սահմանում է պետության շահերի և սպառողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ նորմեր:

Երկրի տնտեսության կազմակերպումը անհնար կլիներ առանց համապատասխան **ֆինանսական միջոցների**: Հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն մարմինը լուրջ խնդիրներ ունի երկրի **ֆինանսական քաղաքականության ոլորտում**: Նա միջոցներ է ձեռնարկում **դրամական, վարկային համակարգի անրապնդման**, պետական ապահովագրության կազմակերպման և իրականացման ուղղությամբ, **ղեկավարում է արտարժույթային և վարկային հարաբերությունները** Հանրապետությունում և Հայաստանի ու օտարերկրյա պետությունների միջև, **կարգավորում է արժեթղթերի շուկան**:

Կառավարությունն ընդհանուր ղեկավարություն է իրականացնում նաև հանրապետության *միասնական մաքսային քաղաքականության ուղղուում*, երկրի տնտեսության շահերը պաշտպանելու և տնտեսական գործունեությունը խրախուսելու նպատակով *կիրառում է հակազդման մաքսային միջոցառումներ*՝ ի պատասխան Հայաստանի հանդեպ այլ պետությունների կամ նրանց միությունների խտրական գործողությունների:

Կառավարությունը Հանրապետության տարածքում կարգավորում է *հարկային հարաբերությունները*, սահմանում է հարկ վճարողների հաշվառման, ստացված եկամուտների գծով շահութահարկի հաշվարկման և վճարման, ինչպես նաև գույքահարկի, հաստատագրված վճարների հաշվարկման և վճարման կարգը:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը լայն լիազորություններ է իրականացնում Հանրապետության *սոցիալ-մշակութային* հարաբերությունների կառավարման ոլորտներում: Այստեղ առանձնակի կարևորվում է նրա գործունեությունը *գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում* պետական քաղաքականության իրականացման խնդրում:

ՀՀ կառավարությունն իրականացնում է պետական քաղաքականությունը *գիտության ու կրթության* ոլորտում: Այդ լիազորության իրականացման արտահայտությունն է այն, որ կառավարությունը *քննարկում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից ներկայացված միասնական գիտատեխնիկական քաղաքականության* հայեցակարգի մոտեցումները: Նա միջոցներ է ձեռնարկում ապահովելու գիտատեխնիկական առաջադիմության արագացումը և մասնակցում է միասնական քաղաքականության կիրառմանը գիտության և տեխնիկայի ասպարեզում, մշակում և իրականացնում է միջոցառումներ դրանց զարգացման ուղղությամբ:

Կառավարությունը մշակում է *գիտական հետազոտությունների* արդյունավետությունը բարձրացնելու, դրանց արդյունքները ներդնելու միջոցներ: Բացի դրանից, կառավարությունը մշակում է գիտության զարգացման և հիմնարար հետազոտությունների *պետական ծրագրերը և ֆինանսական աջակցություն ցուցաբերում* դրանց իրականացմանը, հաստատում է Ազգային ակադեմիայի օրինադրությունը և ուղղություն է տալիս դրա գործունեությանը: Կառավարությունը կազմակերպում է գիտական հիմնարկների կառավարումը, կարգավորում է Ազգային ակադեմիայի, կրթության և գիտության ու մյուս նախարարությունների, գերատեսչությունների փոխհարաբերությունները գիտահետազոտական աշխատանքների ոլորտում:

Կառավարությունը մշակում է *կրթության* բնագավառում պետական քաղաքականության իրականացման հիմնադրույթները՝ *կրթության զարգացման պետական ծրագրերը* և ներկայացնում Ազգային ժողովի հաստատմանը, հաստատում է պետական *կրթական չափորոշիչները*, ուսուցանվող մասնագիտությունների ցանկը, հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերը, *պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները*, պետական մուշի ավարտական փաստաթղթերի ձևերը: Կառավարությունն է հաստատում *կրթական գործունեության լիցենզավորման և պետական հավատարմագրման կարգը*, սահմանում *լրացուցիչ* կրթության իրականացման կարգը, որոշում է պետական պատվերների չափն ըստ մասնագիտությունների և ուսումնական հաստատությունների, պետական վերահսկողություն է իրականացնում ուսուցման որակի նկատմամբ:

Հանրապետության կառավարությունն ապահովում է պետական քաղաքականության իրականացումը *մշակույթի* ոլորտում: Նա միջոցներ է ձեռնարկում մշակութային հիմնարկների ցանցի զարգացման, կատարելագործման և ընդլայնման, *հոգևոր արժեքների պահպանության* և օգտագործման ուղղությամբ, աջակցում է արվեստի և ժողովրդական *գեղարվեստական ստեղծագործության զարգացմանը*:

Կառավարությունը *միջոցներ է ձեռնարկում նաև ազգային փոքրամասնություններին* պատկանող քաղաքացիների ավանդույթների պահպանման, լեզվի և մշակույթի զարգացման բնագավառում նրանց իրավունքների իրացման ուղղությամբ: Այդ կապակցությամբ սահմանում է հանրապետական մշակութային նյութական և հոգևոր- մշակութային արժեքների օգտագործման կարգը:

Հայաստանի կառավարությունը, *միջազգային իրավունքի սկզբունքների* ու նորմերի սահմաններում, *նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը*, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը, այլ *պետությունների տարածքում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների հաշվառման, ուսումնասիրման, պահպանման և վերականգնման* միջոցառումների իրականացմանը, նպաստում է մշակութային ժառանգության պահպանմանը, միջազգային մշակութային համագործակցությանը, Հայաստանի և այլ պետությունների ժողովուրդների մշակութային հաղորդակցմանը:

Առողջապահության բնագավառում ՀՀ կառավարությունը միջոցներ է ձեռնարկում առողջապահության համակարգի, դրա կազմակերպական, իրավական, տնտեսական և նյութատեխնիկական բազայի զարգացման, բնակչության առողջության պահպանման ու ամրապնդման ուղղությամբ:

Բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է առողջապահության բնագավառի պահպանումը և զարգացումը:

Կառավարությունը, Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով, իրականացնում է բնակչության *սանիտարաեմանա-րակային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականություն*: Նա մշակում է *հիվանդությունների կանխարգելման, վերացման, տարերային աղետների հետևանքների, բնակչության զանգվածային հիվանդությունների վերացման*, կանխարգելման բնագավառում գիտատեխնիկական նվաճումների ներդրմանն ուղղված *պետական ծրագրեր*: Բնակչության շրջանում կազմակերպում է *հիգիենիկ դաստիարակությունը* և ուսուցումը, սանիտարաեմանա-րակային իրավիճակի վերաբերյալ ապահովում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ ինչպես հանրապետական, այնպես էլ տեղական մարմինների միջոցով:

Կառավարության հոգածության առարկան է *ղեղերի պատրաստման*, ղեղաչափերի բացթողման և օգտագործման ցուցումների, Հանրապետության տարածքում գործող ղեղերի և ղեղանյութերի արտահանման և ներմուծման միասնական կարգի սահմանումը, *հսկվող ղեղերի (թմրաղեղեր, հոգեմետ ղեղեր) ցանկի հաստատումը, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը*:

Սոցիալական ապահովության ասպարեզում կառավարությունը միջոցներ է ձեռնարկում պետության կողմից սահմանված պահանջները բավարարող աշխատանքային պայմանների ստեղծման ուղղությամբ բնակչության տնտեսական, սոցիալական, աշխատանքային շահերի պաշտպանության, ընտանիքի, մայրության և մանկության հովանավորության ու պաշտպանության և սոցիալական ապահովության այլ իրավունքների իրականացման համար: Նա մշակում և Ազգային ժողովի հաստատման է ներկայացնում *աշխատանքային կենսաթոշակների համար* պահանջվող գործունեության տեսակների ցանկը, պետական նպատակային ծրագրերի իրականացման միջոցով ապահովում է սոցիալական առանձին խմբերի սոցիալ-տնտեսական արտոնությունների իրագործումը: Սահմանում է գործազրկության բազային նպաստները, դրա իրավունքը չունեցող անձանց դրամական օգնության կարգը:

Բնության պահպանության բնագավառում ՀՀ կառավարության պարտականությունն է *ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը, վերարտադրությունը և քարելավումը*, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը, մշակել և իրականացնել բնապահպանական միջոցառումներ, պետության պահպանության տակ վերցնել *բնական հուշարձանները*, միջոցներ ձեռնարկել կանխելու և վերացնելու տարերային աղետների ու խոշոր վթարների հետևանքները:

Կառավարությունը պարտավոր է մշակել *մթնոլորտային օդի* պաշտպանության համալիր միջոցառումների ծրագիր, սահմանել մթնոլորտային *օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունները* և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, արտանետումների պետական հաշվառման կարգը:

Հայաստանի կառավարության իրավասության ոլորտում է գտնվում *բուսական ու կենդանական աշխարհի պահպանությունը*: Այդ կապակցությամբ կառավարությունը իրականացնում է բուսական և կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության պետական քաղաքականությունը, այդ կապակցությամբ մշակում է պետական ծրագրեր և դրանք ներկայացնում Ազգային ժողովի հաստատմանը:

Կառավարությունը սահմանում է նաև բուսական և կենդանական աշխարհի *օգտագործման ենթակա օբյեկտների ցանկը*, դրանց գիտականորեն հիմնավորված օգտագործման և պահպանման կարգը: Հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի բացառիկ լիազորությունն է նաև երկրի բուսական և կենդանական աշխարհի պաշարների օգտագործման դեպքում վճարումների չափը, դրանց զանձման, սոցիալապահովի (վերահսկողության) կազմակերպման և իրականացման, ինչպես նաև կադաստրի վարման կարգի սահմանումը:

Կառավարությունը հաստատում է *բույսերի և կենդանիների կարմիր գրքերը*, իրականացնում է միջազգային համագործակցություն բնության պահպանության հիմնախնդիրներով և օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Ջրային հարաբերությունների կարգավորման բնագավառում կառավարությունը *տնօրինում է պետական միասնական ջրային ֆոնդը*, սահմանում է ջրերն օգտագործելու, դրանք աղտոտումից, աղակալումից և սպառումից պահպանելու, ջրերի վրա վնասակար ներգործությունը կանխելու և վերացնելու կանոնները, *ջրերի պետական հաշվառումը, պետական ջրային կադաստրի վարման կարգը*, ջրերի օգտագործման, պահպանության պետական վերահսկողությունը և դրա իրականացման կարգը:

Կառավարությունը որոշում է նաև Հանրապետության *հողային ֆոնդի կատեգորիաների կազմը*, մշակում և կազմակերպում է հողերի պահպանման կարգը, վերահսկողություն է իրականացնում դրանց օգտագործման և պահպանման մկատմամբ:

5. ՀՀ կառավարության գործունեության կարևոր ուղղություններից է Հանրապետության *պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացման ապահովումը*:

ՀՀ պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման նպատակով Հանրապետության կառավարությունը մշակում և հաստատում է **ռազմական քաղաքականության** հիմնական ուղղությունները, զինված ուժերի զարգացման, գորահավաքային նախապատրաստման, տեղակայման և օգտագործման ծրագրերը, սահմանում է **զինված ուժերի թվաքանակը և կառուցվածքը**, ծրագրում և ապահովում է **ռազմական արդյունաբերության և ռազմական գիտության զարգացումը**: Իր իրավասության սահմաններում կառավարությունը կազմակերպում, **ղեկավարում և վերահսկում է պետական կառավարման մարմինների գործունեությունը** զինված ուժերի սպառազինման, բնակավորման, ֆինանսավորման և քիկունքային ապահովման բնագավառներում, ապահովում է պահեստագրի նախապատրաստումը, կազմակերպում է գորահավաքային ծրագրերի, առաջադրանքների և **պետական պահեստի կուտակման պլանների մշակումը**: Սահմանում է գորակոչի ենթակա քաղաքացիների թվաքանակը, կազմակերպում է ընդհանուր և մասնակի գորահավաքների անցկացումը, ղեկավարում է տնտեսության գորահավաքային (մոբիլիզացիոն) նախապատրաստությունը և, անհրաժեշտության դեպքում, դրա **փոխադրումը ռազմական դրության հաստի ռեժիմի**:

Կառավարությունն իրականացնում է **տարածքային և քաղաքացիական պաշտպանության** ընդհանուր ծրագրումը և վերահսկում է դրա կատարումը, մշակում է բնակչության շրջանում տարվող **ռազմահայրենասիրական դաստիարակության պետական ծրագրերը**, կազմակերպում է զինժառանգների, նրանց հավասարեցված անձանց և ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովությունը և սոցիալական պաշտպանվածությունը, ստեղծում է պաշտպանական հիմնարկներ, կազմակերպություններ, ռազմատսումնական հաստատություններ:

Ռազմական դրություն հայտարարվելուց հետո կառավարությունն իրականացնում է տնտեսության մոբիլիզացիոն ծավալումը՝ ապահովելով տնտեսության անցումը խաղաղ պայմաններից պատերազմականի, ապահովում է զինված ուժերի ռեսուրսային բավարարումը, ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ օրինականության և իրավակարգի պահպանության, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ապահովման համար:

Չինսպարտության բնագավառում կառավարությունը սահմանում է զինվորական հաշվառման կարգը, հանրակրթական դպրոցներում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում նախագորակոչային պատրաստության կարգը, գորակոչի ենթակա **շարքային կազմի և պահեստագործի սպանների թվաքանակը**, պարտադիր զինվորական ծառայության գորակոչին անցկացնելու համար գորակոչային հանձ-

նաժողովների ստեղծման կարգը, կազմում է տարածքային գորակոչային հանձնաժողովներ, վերջիններիս և տեղական գորակոչային հանձնաժողովների աշխատանքը ղեկավարելու և նրանց գործունեությունը վերահսկելու համար ստեղծում է **հանրապետական գորակոչային հանձնաժողով**:

Չորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ոլորտում կառավարությունն իր իրավասության սահմաններում ղեկավարում և վերահսկում է գորահավաքային նախապատրաստության և գորահավաքի գործընթացը, այդ կապակցությամբ կազմակերպում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների համաձայնեցված գործունեությունը: Կառավարությունն է որոշում **սպառազինության և տեխնիկայի, կարևորագույն քաղաքացիական արտադրանքների քանակը**, բնակչության կենսաապահովման կարգը, գորահավաք հայտարարվելու դեպքում կազմակերպում է տնտեսության փոխադրումը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի, վերահսկում է զինված ուժերի և այլ գործերի փոխադրումը ռազմական դրության կազմակերպական կառուցվածքի, կազմակերպում է գորահավաքի անցկացումը:

Կառավարությունը որոշում է Հանրապետության **սահմանային ռեժիմը**, պետական սահմանի պահպանման կանոնները, պետական սահմանով հաղորդակցության իրականացման, դրա սահմանափակման կամ դադարեցման կարգը, ինչպես նաև կարգավորում է ՀՀ քաղաքացիների և այլ անձանց՝ սահմանային գոտի մուտքի, այնտեղ ժամանակավորապես գտնվելու, բնակվելու, տեղափոխվելու և այլ գործունեություն իրականացնելու հետ կապված հարաբերությունները:

Պաշտպանության հարցերով կառավարությունն օտարերկրյա պետությունների հետ վարում է բանակցություններ, **կնքում միջկառավարական պայմանագրեր** (համաձայնագրեր), որոշում է ռազմական վտանգի միջոցներ և Հայաստանի ու օտարերկրյա պետությունների **փոխադարձ վստահության ամրապնդման միջոցները** և կազմակերպում է այդ կապակցությամբ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարումը: Հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության բնագավառում կառավարությունն իրականացնում է նաև այլ լիազորություններ:

ՀՀ կառավարությունը կարևոր խնդիրներ ունի **արտաքին քաղաքականության** ասպարեզում: Այստեղ նա Հանրապետության **Նախագահի հետ համատեղ մշակում և իրականացնում է Հանրապետության արտաքին քաղաքականությունը**: Իր իրավասության սահմաններում ապահովում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ հարաբերությունների իրականացումը, ինչպես նաև

Հանրապետության ներկայացուցչությունն օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում: Կառավարությունը սահմանում է բանակցություններ վարելու կարգը, ՀՀ կառավարության անունից բանակցություններ վարելու և պայմանագրերն ստորագրելու համար **տալիս է հատուկ լիազորագրեր:** Միջոցներ է ձեռնարկում ՀՀ միջազգային պայմանագրերից (համաձայնագրերից) բխող պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ:

6. ՀՀ կառավարությունն ակտիվ գործունեություն է ծավալում **օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման և հասարակական կարգի պահպանման ուղղությամբ:**

Կառավարությունը մասնակցում է **օրինականության պահպանման** ու ամրապնդման **պետական քաղաքականության մշակմանն** ու իրականացմանը, նորմատիվ-իրավական և կազմակերպական միջոցներ է ձեռնարկում օրինականության ապահովման կապակցությամբ օրենսդրության կատարելագործման ու զարգացման ուղղությամբ: Միջոցառումներ է իրականացնում քաղաքացիների, **փախստականի կարգավիճակ ունեցող անձանց իրավունքների ու ազատությունների**, օրինական շահերի և անվտանգության ապահովման բնագավառում:

Կառավարության պարտականությունների մեջ է մտնում նաև **այլ պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների իրավունքների** պաշտպանությունը, նրանց խախտված իրավունքների վերականգնումը՝ այլ պետությունների օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան:

Կառավարությունը ղեկավարում է բնակչության պաշտպանությունն **արտակարգ իրավիճակներում**, հաստատում է բնակչության պաշտպանության ծրագրերը և վերահսկում դրանց կատարումը, դրա հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման կարգը: Սահմանում է **արտակարգ իրավիճակներում քաղաքացիների սեփականության տիրապետման և ժամանակավոր օգտագործման կարգը**՝ հասարակության և պետության կարիքների համար, հետագա համարժեք փոխհատուցմամբ: Իրականացնում է միջոցառումներ հասարակական կարգի պահպանման, իրավախախտումների և հանցագործությունների դեմ պայքարի ուղղությամբ:

ՀՀ Սահմանադրության 75 հոդվածին համապատասխան՝ Հանրապետության կառավարությունն Ազգային ժողովում **օրենսդրական նախաձեռնության իրավունք ունի:** Այդ իրավունքը կառավարությունն իրականացնում է Ազգային ժողով ՀՀ օրենքների կամ Ազգային ժողովի որոշումների նախագծեր ներկայացնելու միջոցով: Օրենսդրական նախա-

ձեռնության կարգով նախագծերը, նախքան Ազգային ժողով ներկայացնելը, քննարկվում են կառավարության նիստում և ընդունվում համապատասխան որոշում:

Կառավարությունն օրենսդրական նախաձեռնության կարգով **Ազգային ժողովի որոշումների նախագծեր է ներկայացնում** Սահմանադրությամբ նախատեսված մի շարք այլ հարցերով՝ ա) Հանրապետության Նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կատարման համար այլ անհատափոխարին խոչընդոտների առկայության դեպքերում, որոնք տևականորեն անհնարին են դարձնում նրա լիազորությունների կատարումը (59 հոդվ.), բ) օրենքների նախագծերը հանրաքվեի դնելու վերաբերյալ (112 հոդվ.) և այլն:

Կառավարությունն Ազգային ժողովի **արտահերթ նստաշրջան**, ինչպես նաև **արտահերթ նիստ գումարելու նախաձեռնության իրավունք ունի**, որն անցկացվում է կառավարության սահմանված օրակարգով և ժամկետում (70 հոդվ.):

ՀՀ կառավարությունը, իր իրավասության շրջանակներում, ապահովում է **գործադիր իշխանության իրականացումը** Հանրապետության ամբողջ տարածքում: Այս առումով նա վերահսկողություն է իրականացնում նախարարությունների, պետական կառավարման հանրապետական և տարածքային մյուս մարմինների գործունեության, ինչպես նաև կառավարության, վարչապետի որոշումների և հանձնարարականների կատարման նկատմամբ: Կառավարությունը, Սահմանադրության 89 հոդվածին համապատասխան, իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված այլ գործառնություններ և լիազորություններ:

§ 4. ՀՀ կառավարության գործունեության կազմակերպումը

ՀՀ կառավարությունն իր գործունեությունը կազմակերպում է Հանրապետության Սահմանադրությանը, ՀՀ միջազգային պայմանագրերին, ՀՀ օրենքներին, Ազգային ժողովի որոշումներին, Հանրապետության Նախագահի հրամանագրերին ու կարգադրություններին, ինչպես նաև կառավարության որոշումներին համապատասխան:

Հանրապետության կառավարությունը գլխավորում է **վարչապետը:** Նա ղեկավարում և կազմակերպում է կառավարության գործունեությունը, համակարգում է նախարարների և մյուս հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների աշխատանքը, վերահսկում գործադիր իշխանության մարմինների գործունեությունը: Վարչապետը ՀՀ կառավար-

րությունը *Ներկայացնում է երկրի ներսում և միջազգային հարաբերություններում*, ստորագրում է կառավարության որոշումները, ընդունում է որոշումներ:

Կառավարության քաղաքականությունն առանձին ոլորտներում մշակում և իրականացնում են *Հանրապետական գործադիր մարմինները* (նախարարությունները, կառավարությանն առընթեր պետական կառավարման այլ մարմինները), որոնք ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ վարչապետի առաջարկությամբ:

Վարչապետը Հանրապետության Նախագահին պարբերաբար տեղյակ է պահում կառավարության գործունեության մասին, առաջարկություն է ներկայացնում կառավարության անդամներին, քաղաքացիական ծառայության խորհրդի անդամներին պաշտոնի նշանակելու, պաշտոնից ազատելու մասին և այլն:

ՀՀ *նախարարները* վճռական ձայնի իրավունքով մասնակցում են կառավարության նիստերին, նրա աշխատանքային ծրագրերի մշակմանը և իրականացմանը, ղեկավարում են կառավարման հանձնարարված բնագավառը: Նախարարներն ենթակա և հաշվետու են Հանրապետության Նախագահին, կառավարությանը և վարչապետին:

Կառավարության գործունեությունն իրականացվում է ըստ *յուրքանչյուր տարվա համար* կազմված միջոցառումների *ծրագրի*: Այն կազմվում է կառավարության գործունեության առանձին ուղղությունների կառավարությամբ, ելնելով Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման վիճակից, հեռանկարներից, առանձին տարածքների զարգացման անհրաժեշտությունից և արտակարգ իրավիճակների առաջադրած պահանջներից: Նշված ծրագրի նախագիծը մշակում է կառավարության աշխատակազմը՝ հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների և նարկայետների (Երևանի քաղաքապետի) առաջարկությունների հիման վրա:

Իր գործունեության խնդիրների լուծման, առանձին իրավական ակտերի նախագծերի, այլ հարցերի նախապատրաստման և քննարկման կամ որոշակի իրադարձությունների և փաստերի վերաբերյալ կառավարությանն առաջարկություններ, եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար կառավարությունը կարող է ստեղծել հանձնաժողովներ:

Կառավարության գործունեության վերաբերյալ միջոցառումների ծրագիրը քննարկվում և հաստատվում է *ճիստում*: Այդ ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է կառավարության աշխատակազմը: Վերջինս *յուրաքանչյուր եռամսյակ* նախապատրաս-

տում և տեղեկանք է ներկայացնում քննարկված հարցերի, իսկ ընթացիկ տարվա ավարտից հետո՝ կառավարության գործունեության տարեկան ծրագրի և գերակա խնդիրների կատարման մասին:

Իր իրավասությանը ենթակա բոլոր հարցերը կառավարությունը լուծում է *կոլեգիալ կարգով*: Նա իր գործունեության կազմակերպումն իրականացնում է *ճիստերի միջոցով*:

Ճիստերը հրավիրում և վարում է վարչապետը, որը և հաստատում է ճիստերի ժամանակացույցը: Սակայն, հաշվի առնելով Հանրապետության Նախագահի առանձնահատուկ սահմանադրական լիազորությունները և մեծ ազդեցությունը Հանրապետության արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության ընդհանուր ղեկավարման բնագավառներում, Սահմանադրությունը նրան իրավունք է վերապահում նշված հարցերով հրավիրել և վարել կառավարության նիստ:

Կառավարության *հեղթական ճիստերը*, յուրպես կանոն, հրավիրվում են յուրաքանչյուր *շաբաթվա հինգշաբթի օրը*: Կառավարության նիստեր կարող են հրավիրվել նաև այլ, այդ թվում՝ ոչ աշխատանքային օրերի: Անհրաժեշտության դեպքում, Հանրապետության Նախագահի կամ վարչապետի նախաձեռնությամբ կամ էլ կառավարության որոշմամբ կարող են հրավիրվել *արտահերթ ճիստեր*:

Հանրապետության Նախագահի նախաձեռնությամբ՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կամ վարչապետի նախաձեռնությամբ կարող են անցկացվել նաև կառավարության *արտագնա ճիստեր*:

Կառավարության անդամների մասնակցությունը ճիստերին՝ պարտադիր է: Նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է կառավարության անդամների առնվազն կեսից ավելին:

Կառավարության *ճիստերը դռնբաց* են, սակայն առանձին հարցեր կարող են քննարկվել նաև *դռնփակ ճիստերում*: Մասնավորապես, եթե քննարկվում են պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ *գաղտնիքի առնչվող հարցեր*, ինչպես նաև Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման *անհնարինության մասին* ՀՀ սահմանադրական դատարան կամ Ազգային ժողով դիմելու հարցը:

Կառավարության նիստերին (այդ թվում՝ դռնփակ) *խորհրդակցական ձայնի իրավունքով* մասնակցում են Հանրապետության Նախագահի և կառավարության *աշխատակազմերի ղեկավարները*: Խորհրդակցական ձայնի իրավունքով կառավարության նիստերին կարող են մասնակցել նաև ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող հանձնաժողովների (ծառայությունների, խորհուրդների) ղեկավարները, ՀՀ գլխավոր դատախազը, կենտրոնական բանկի նախագահը, Գիտությունների ազգա-

յին ակադեմիայի պրեզիդենտը և այլ անձինք: Կառավարության նիստերին կարող են հրավիրվել վարչապետի խորհրդակցանները, կառավարության աշխատակազմի աշխատողներ, ինչպես նաև այլ անձինք:

Կառավարության հրաժարականից հետո՝ մինչև վարչապետ նշանակվելը, կառավարությունը կարող է սահմանված ընդհանուր կարգով անցկացնել նիստեր և ընդունել որոշումներ: Վարչապետի պաշտոնը թափուր մնալու դեպքում կառավարության նիստերը հրավիրում և վարում է փոխվարչապետը՝ մինչև վարչապետի նշանակումը:

Կառավարության քննարկմանը **հարցեր ներկայացնելու** իրավասությամբ օժտված են **Հանրապետության Նախագահը՝** կառավարման ոլորտում իր իրավասությանը վերապահված հարցերով, **վարչապետը**, նախարարները, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ նրանց համապատասխան տեղակալները:

Նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինները, տարածքային կառավարման մարմինները, նախարարությունների կազմում գործող գործակալությունները և տեսչությունները կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնում են **տվյալ բնագավառի գործունեությունը համակարգող նախարարի միջոցով**, իսկ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները, ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող համձնաժողովները (խորհուրդները, ծառայությունները), ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, ՀՀ գլխավոր դատախազը, ՀՀ կենտրոնական բանկի նախագահը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ **վարչապետի միջոցով**: Ընդ որում, այդ հարցերը կառավարության քննարկման են ներկայացվում կառավարության **որոշումների նախագծերի ձևով**:

Բացի դրանից, Հանրապետության նախագահի 2007թ. հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» հրամանագրի համաձայն՝ այդ նախագծերը ներկայացվում են նաև որպես ՀՀ օրենքների նախագծեր խորհրդարանում կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացման հարցերով, ինչպես նաև եզրակացությունների նախագծեր՝ կառավարության կարծիքին ներկայացված Ազգային ժողովի պատգամավորների օրենսդրական նախաձեռնությունների հարցերով (30 և 31-րդ կետեր):

Նշված նախագծերը, ինչպես նաև վարչապետի որոշումների նախագծերը համաձայնեցվում են շահագրգիռ նախարարների և ՀՀ արդարադատության նախարարի հետ, իսկ ՀՀ դատախազության, ՀՀ դատական համակարգի, ՀՀ կենտրոնական բանկի գործունեության վերաբեր-

յալ նախագծերը կառավարության քննարկմանը ներկայացվում են այդ մարմինների ղեկավարների կարծիքը ստանալուց հետո: Մարդու իրավունքներին ու ազատություններին վերաբերող օրինագծերը նույն կարգով ուղարկվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի (հրամանագրի 40 և 42-րդ հոդվածներ):

Վերոհիշյալ համաձայնեցումները **կատարում է հարցը ներկայացնողը**: Ներկայացված փաստաթղթերը կառավարության քննարկման են դրվում վարչապետի մակագրությամբ՝ կառավարության աշխատակազմի ղեկավարի ներկայացմամբ:

Կառավարության **նիստերի նախապատրաստման** ամբողջ աշխատանքը, ինչպես նաև նիստերի անցկացումն ապահովում է **կառավարության աշխատակազմը**: Աշխատակազմի կառուցվածքը, իրավասությունը և գործունեության կարգը որոշվում են **կառավարության կողմից հաստատված կանոնադրությամբ**: **Կառավարության աշխատակազմը** ղեկավարում է աշխատակազմի ղեկավարը:

Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում **նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը**, իսկ գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոններում, ինչպես նաև քաղաքացիական ծառայության պաշտոնների ցանկում չընդգրկված անձանց՝ կառավարության **աշխատակազմի ղեկավարը**:

Կառավարության աշխատակազմն ապահովում է կառավարության և վարչապետի բնականոն գործունեությունը և մասնակցությունը քաղաքացիական իրավահարաբերություններին: Կառավարության աշխատակազմը մասնակցում է կառավարության գործունեության ծրագրերը կազմելուն և ստուգում է դրանց կատարումը: Պարբերաբար կառավարությանը և վարչապետին **զեկուցագիր է ներկայացնում նշված ծրագրերի կատարման վերաբերյալ**: Բացի դրանից, աշխատակազմը նախապես քննարկում է տարբեր պաշտոնատար անձանց և մարմինների կողմից կառավարություն ներկայացված փաստաթղթերը՝ անհրաժեշտության դեպքում մասնակից դարձնելով դրանց հեղինակներին և շահագրգիռ մարմիններին: Աշխատակազմը ապահովում է նաև վարչապետի քննարկմանը ներկայացված հարցերի, այդ թվում՝ **վարչապետի որոշումների նախագծերի նախապատրաստումը**: Նա եզրակացություններ, վերլուծական, տեղեկատվական նյութեր, առաջարկություններ է տալիս կառավարության և վարչապետի քննարկմանը ներկայացվող հարցերի վերաբերյալ:

Կառավարության աշխատակազմն ապահովում է **Կառավարության և վարչապետի որոշումների կատարումը**: Վարչապետը կամ նրա հանձնարարությամբ կառավարության աշխատակազմի ղեկավարը վերահս-

կում և պարբերաբար քննության է առնում հանրապետական գործադիր մարմինների, տարածքային կառավարման մարմինների կողմից կառավարության ու վարչապետի իրավական **ակտերի, հանձնարարականների կատարման արդյունքները** և միջոցներ ձեռնարկում թերությունները վերացնելու համար:

Կառավարության աշխատակազմը վարչապետի ստորագրած կառավարության որոշումները և Սահմանադրության 88.1 հոդվածով նախատեսված կառավարության վավերացված որոշումներն ստանալուց հետո **երկօրյա ժամկետում առաքում է Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, հանրապետական գործադիր և տարածքային կառավարման մարմինների աշխատակազմերին:**

Կառավարության աշխատակազմը կազմակերպում է նաև **քաղաքացիների ընդունելություն, ինչպես նաև նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկումը կառավարությունում**, վերլուծում և ամփոփում է դրանք և պարբերաբար վարչապետին տեղեկացնում աշխատանքների վիճակի մասին: Աշխատակազմն ստուգում է այդ ուղղությամբ պետական կառավարման հանրապետական մարմինների կողմից տարվող աշխատանքը, առաջարկում այն բարելավելու միջոցառումներ: Այս առթիվ կառավարությունում տարված աշխատանքի արդյունքները, ինչպես նաև այդ աշխատանքի վիճակի վերաբերյալ հանրապետական գործադիր իշխանության, մարմինների հաշվետվությունները պարբերաբար քննարկվում են կառավարության նիստերում:

§ 5. ՀՀ կառավարության և վարչապետի ակտերը

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանադրական կարգավիճակը կանխորոշում է նրա ընդունած իրավական ակտերի էությունը, տեղն ու դերը պետության միասնական իրավունքի համակարգում: Կառավարության որոշումներում արտահայտվում է նրա լիազորությունների ծավալը և քնույթը, որոնց միջոցով կարգավորվում են հանրապետության պետական, տնտեսական և սոցիալ-մշակութային կյանքի ամենօրյա խնդիրները: Հենց այդ հրապարակված ակտերի միջոցով է իրականացվում պետական կառավարումը:

Կառավարության որոշումներն ընդունվում են Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ Հանրապետության Նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով: Կառավարության որոշումները **ենթակա են կատարման ՀՀ ամբողջ տարածքում:**

Կառավարության և վարչապետի լիազորություններն իրականացվում են նրանց կողմից ընդունվող իրավական ակտերի միջոցով, որոնք հրապարակվում են **որոշումների ձևով:** Այդ որոշումներն անմիջական կարգավորիչ դեր ունեն ոչ միայն պետական ու հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, այլև պետական **կառավարման մյուս մարմինների ակտերի ձևավորման, բովանդակության, կատարելագործման** ու զարգացման գործում:

ՀՀ կառավարության ակտերին բնորոշ է **ուղղակի կապը օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների հետ և խստիվ ենթաօրենսդրականությունը, բազմապրոֆիտությունը և միջնադասարանությունը**, ինչպես նաև գործադիր իշխանության համակարգում բարձր նորմատիվությունն ու համապարտադիր բնույթը:

Կառավարության և վարչապետի որոշումները կազմում են հանրապետության պետական կառավարման բոլոր մարմինների կողմից հրավարակվող **ակտերի բուրգի գագաթը:** Վերջիններս իրենց ակտերն ընդունում են կառավարության և վարչապետի որոշումներին համապատասխան:

Կառավարության որոշումների նախագծերը կառավարության քննարկմանն են ներկայացնում Հանրապետության Նախագահը, վարչապետը, նախարարները կամ նրանց փոխարինող տեղակալները և սահմանված կարգով՝ պաշտոնատար անձինք, պետական կառավարման հանրապետական և մյուս մարմինները: Նախագծերը պետք է անհրաժեշտ հիմնավորումներ ունենան, **համաձայնեցված լինեն շահագրգիռ մարմինների հետ:** Եթե դրանք նորմատիվ բնույթի են, ապա պետք է անպայման համաձայնեցվեն ՀՀ արդարադատության նախարարի հետ:

Կառավարության և վարչապետի որոշումների ընդունման, ստորագրման, դրանց կատարման ապահովման, այդ ոլորտում կառավարության և վարչապետի իրավունքների սահմանազատման հարաբերությունները կարգավորվում են Սահմանադրությամբ, «Իրավական ակտերի մասին» 2002թ. ապրիլի 29-ի օրենքով, Հանրապետության Նախագահի վերը նշված 2007թ. հուլիսի 18-ի հրամանագրով:

Կառավարության որոշումներն ընդունվում են նիստի օրակարգում ընդգրկված **յուրաքանչյուր հարցի վերաբերյալ:** Որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ և համարվում են ընդունված, **եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցող կառավարության անդամների կեսից**

ավելին: Չայնեթի հավասարության դեպքում՝ վարչապետի ձայնը վճռորոշ է:

Կառավարության որոշումներն **ստորագրում է վարչապետը**, իսկ մարզպետներն նշանակելու և ազատելու վերաբերյալ կառավարության որոշումները վարչապետը ստորագրելուց հետո ներկայացնում է **Հանրապետության Նախագահի վավերացմանը**: Կառավարության և վարչապետի որոշումների հավելվածներն ստորագրում է կառավարության աշխատակազմի ղեկավարը:

Վարչապետի պաշտոնը թափուր մնալուց հետո, եթե կան դեռևս չստորագրված որոշումներ, ապա մինչև նոր վարչապետի նշանակումը, դրանք ստորագրում է փոխվարչապետը, իսկ վարչապետ նշանակվելուց հետո՝ վարչապետը:

«Երավական ակտի մասին» ՀՀ օրենքի 62 հոդվածի համաձայն՝ կառավարության և վարչապետի որոշումներն ստանալու **օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում հրապարակվում** են «ՀՀ պաշտոնական տեղեկագրում», որը համարվում է պաշտոնական հրապարակում: Նույն օրենքի 46 հոդվածին համապատասխան, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքները և ազատությունները սահմանափակող կամ պարտականություններ ու պատասխանատվություն սահմանող, խստացնող, փոփոխող, հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող, փոփոխող, նշված անձանց **իրավական փիճակը վատթարացնող նորմատիվ իրավական ակտերն** ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող **տասներորդ օրը**, եթե դրանցով ավելի ուշ ժամկետ չի նախատեսված կամ օրենքով ուղղակի այլ բան չի սահմանված: Այդպիսի իրավական ակտերը կիրառող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են այդ մասին իրազեկել շահագրգիռ իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ կառավարության սահմանած կարգով:

Կառավարության անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց ընդունմանը հաջորդող օրվանից, եթե այլ բան չի նախատեսված տվյալ անհատական ակտով կամ օրենքներով, իսկ վարչապետի նորմատիվ որոշումներն ուժի մեջ են մտնում դրանցում նշված ժամկետներում, եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

ՀՀ պետական, ծառայողական և օրենքով պահպանվող **այլ գաղտնիք թովանդակող կառավարության որոշումները**, դրանց առանձին մասերը կամ առանձին կետերը **ենթակա չեն հրապարակման**: Այդ կարգի ակտերն ուժի մեջ են մտնում դրանց ընդունմանը հաջորդող օրվանից:

Կառավարության ընդունած իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանելու, նկատմամբ յուրովի վերահսկողություն է իրականացնում Հանրապետության **Նախագահը**: Վերջինս, անհրաժեշտության դեպքում, կարող է մեկ ամիս ժամանակով **կասեցնել** կառավարության որոշուման գործողությունը և դրա՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը պարզելու համար, դիմել սահմանադրական դատարան:

ՀՀ Սահմանադրությունը և Հանրապետության Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի հրամանագիրը Հայաստանի **վարչապետի** համար նախատեսել են լայն լիազորություններ: Դրանք իրենց արտահայտությունն են գտնում նրա կողմից ընդունվող **որոշումներում**: Այդ որոշումները վարչապետն ընդունում է Սահմանադրությամբ, օրենքներով և Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով և կառավարության որոշումներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում՝ կառավարության անդամների առաջարկությամբ և իր նախաձեռնությամբ:

Վարչապետն ընդունում է որոշումներ **կառավարության գործունեության կազմակերպմանն** առնչվող հարցերով, այդ թվում՝

ա) **միջազգային հարաբերությունների բնագավառում**՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով **ստորագրում է ՀՀ միջազգային պայմանագրերը**, տալիս է միջկառավարական պայմանագրեր ստորագրելու լիազորություն և հանձնարարականներ, նշանակում է միջազգային և միջկառավարական մարմիններում կառավարության ներկայացուցիչներին, ներկայացնում է Հանրապետության կառավարությունն օտարերկրյա պետություններում ու միջազգային կազմակերպություններում:

բ) **կազմակերպական և կադրային քաղաքականության ոլորտում**՝ վերահսկում է գործադիր իշխանության մարմինների գործունեությունը, ընթացիկ հարցերի լուծման նպատակով կազմում է աշխատանքային լսմբեր, հանձնաժողովներ, օրենսդրությամբ սահմանված դեպքերում հաստատում է նախարարությունների, կառավարությանն առընթեր պետական և տարածքային կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակը:

Վարչապետը նշանակում և պաշտոնից ազատում է կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարներին, ինչպես նաև նախարարների տեղակալներին՝ խորհրդակցելով համապատասխան հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի հետ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, նշանակում է:

կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում, իր խորհրդակցականներին, մամուլի քարտուղարին, ռեֆերենտներին, օգնականներին, սահմանում է կառավարության և իր որոշումների, հանձնարարականների կատարման վերահսկողության կարգը:

Վարչապետը, օրենքով նախատեսված դեպքերում, *կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գերատեսչական նորմատիվ ակտերը*, իր կողմից նշանակվող անձանց նկատմամբ կիրառում է կարգապահական ներգործության միջոցներ, իրականացնում Մահմանադրությամբ, օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

Հանրապետության Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի հրամանագրին համապատասխան, առանձնակի կարևորվում են ՀՀ գործադիր իշխանության որոշ մարմինների ղեկավարների և դրանց տեղակալների պաշտոնի նշանակման և պաշտոնից ազատելու հարցերը: Մասնավորապես, կառավարությանն առընթեր *ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին, ՀՀ ռատիկանության պետին, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, պետական եկամտատների կոմիտեի ղեկավարներին, ինչպես նաև ՀՀ պաշտպանության և արտաքին գործերի նախարարների*, ազգային անվտանգության ծառայության տնօրենի և ՀՀ ոստիկանության պետի տեղակալներին *պաշտոնի է նշանակում և ազատում Հանրապետության Նախագահը:*

Վարչապետը կարող է, նպատակահարմարությունից ելնելով, իր իրավասության մեջ մտնող առանձին հարցերի քննարկումը կազմակերպել կառավարության նիստերում:

Հանրապետության վարչապետի *նորմատիվ որոշումները*, որոնք ենթակա են պարտադիր պաշտոնական հրապարակման, *ուժի մեջ են մտնում* դրանցում նշված ժամկետներում, եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

Վարչապետի անհատական որոշումներն ուժի մեջ են մտնում դրանք *ընդունվելուց հաջորդող օրվանից*, եթե այլ բան չի նախատեսված օրենքներով կամ տվյալ անհատական իրավական ակտով:

Վարչապետը Հանրապետության Նախագահի, կառավարության և իր իրավական ակտերի *կատարման ընթացքի և դրանց կատարման սպասելի մոնիթորինգ* ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարբերաբար լսում է նախարարների, հանրապետական գործադիր մյուս մարմինների և տարածքային կառավարման մարմինների ղեկավարների հաշվետվությունները:

§ 6. ՀՀ պետական կառավարման տարածքային կազմակերպումը

ՀՀ Մահմանադրության 88.1 հոդվածին համապատասխան, կառավարության տարածքային քաղաքականությունը Հանրապետությունում իրականացնում են *մարզպետները: Նրանք համակարգում են հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը՝* բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Մարզերում պետական կառավարման իրականացման հարցերը մանրամասնվում են «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի հրամանագրով:

Մարզպետները պաշտոնի են նշանակվում և պաշտոնից ազատվում կառավարության որոշմամբ և հաշվետու ու պատասխանատու են վերջինիս առջև: Մարզպետը գլխավորում է մարզպետարանը, որի միջոցով մարզում իրականացնում է պետական կառավարումը:

Մարզպետի տեղակալին պաշտոնի է նշանակում և ազատում վարչապետը՝ մարզպետի առաջարկությամբ: Նա (մարզպետի տեղակալը) իրականացնում է մարզպետարանի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները, մարզպետի բացակայության դեպքում փոխարինում է նրան և վերջինիս հանձնարարությամբ իրականացնում նաև այլ լիազորություններ:

Մարզպետը և նրա տեղակալը չեն կարող լինել համայնքի ավագանու անդամ, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Մարզերում պետական կառավարումն ապահովվում է մարզպետի կողմից՝ Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Այդ կապակցությամբ մարզպետը կազմակերպում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, մարզպետարանի աշխատակազմի և մարզի տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ և փոխհամաձայնեցված գործունեությունը: Իր այդ բարդ և բազմաբնույթ գործունեության իրականացման համար մարզպետը մարզի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից սահմանված կարգով ստանում է տեղեկատվություն:

Տարածքային զարգացման պետական քաղաքականությունը Սահմանադրությանը համապատասխան իրականացնում է կառավարությունը: Կառավարության տարածքային քաղաքականությունը մարզպետն իր իրավասության շրջանակներում իրականացնում է ֆինանսների, քաղաքաշինության, գյուղատնտեսության, տրանսպորտի, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի, սպասարկման, բնության ու շրջակա միջավայրի պահպանության և այլ բնագավառներում:

Նշված խնդիրներն իրականացնելու համար *մարզպետը մարզի տարածքում ապահովում է. ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության ու վարչապետի որոշումների և մյուս նորմատիվ իրավական ակտերի կատարումը*, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին, պետական բյուջեի նախագծի, ինչպես նաև կառավարության տարածքային քաղաքականության մշակման աշխատանքներին:

Մարզպետն *առաջարկություններ է ներկայացնում* կառավարություն՝ մարզի տարածքում գտնվող համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ, ինչպես նաև նրա հաստատմանն է ներկայացնում մարզի բնակավայրերի *գլխավոր հատակագծերը*: Ընդհանրացնում է օրենսդրության կիրառման պրակտիկան և, անհրաժեշտության դեպքում, օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում կառավարություն:

Մարզպետն իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում *քաղաքացիների իրավունքներն ու ազատություններն ապահովելու*, պետական սեփականության պահպանության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Իր գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին ընդհանուր հաշվետվություններ է ներկայացնում կառավարությանը և ընթացիկ հաշվետվություններ՝ վարչապետին:

Մարզպետը համագործակցում է Հանրապետության գործադիր իշխանության մարմինների հետ և դրանց քննարկմանն է ներկայացնում վերջիններիս իրավասությանը ենթակա, մարզին առնչվող հարցեր: Պարտադիր կարգով քննության է առնում այդ մարմինների կողմից մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և դրանց ղեկավարների աշխատանքի վերաբերյալ առաջարկությունները և սահմանված ժամկետում այդ մարմիններին տեղեկացնում ձեռնարկված միջոցների մասին: Սահմանված կարգով տեղեկություններ է տալիս

նշված մարմիններին՝ իր կողմից տվյալ բնագավառում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման վերաբերյալ:

Մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնելու նպատակով *մարզպետը համակարգում է պաշտպանության, ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության, կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների*, քաղաքացիական պաշտպանության և այլ բնագավառներում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: *Մարզպետն իրավասու է հանձնարարականներ տալ և կարգադրություններ անել ազգային անվտանգության ծառայության և ոստիկանության ոլորտի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներին՝* մարզի տարածքում հասարակական կարգի պահպանման և ամրապնդման նպատակով, իսկ կապի, էներգետիկայի բնագավառների, հանրապետական մյուս գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներին՝ *պարտադիր կատարման համար կարգադրություններ անել:*

Վերը նշված խնդիրների լուծման հարցերով մարզպետն օժանդակում է հանրապետական գործադիր մարմինների համապատասխան տարածքային ծառայությունների ղեկավարներին, ապահովում նրանց համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության հետ:

Հանրապետական գործադիր մարմինների և մարզպետի միջև ծագած տարաձայնությունները լուծվում են վարչապետի կողմից:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով *մարզպետը վերահսկում է պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորության կատարման ընթացքը և պարտադիր լիազորությունների կատարումը*, կանխում, կասեցնում և վերացնում է ասպրինի հոլօգտագործումը, վերացնում կամ կասեցնում է մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների օրենսդրությանը հակասող իրավական ակտերը:

Մարզպետն իր իրավասության սահմաններում ընդունում է *որոշումներ և կարգադրություններ*: Եթե մարզպետի ակտերը հակասում են օրենսդրությանը, ապա ուժը կորցրած են ճանաչվում վարչապետի կամ դատարանի որոշմամբ:

Մարզպետարանի կառուցվածքը հաստատում է կառավարությունը, իսկ աշխատողների թվաքանակը՝ վարչապետը: Մարզպետի խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի պաշտոնները և թվաքանակը սահմանվում է մարզպետարանի կանոնադրությամբ:

Մարզպետը պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում իր խորհրդակցանին, մամուլի քարտուղարին և օգնականին, իսկ օրենքով սահմանափակված դեպքերում և կարգով՝ մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին:

Մարզպետարանի աշխատակազմի աշխատողներ են համարվում մարզպետարանի աշխատակազմի **քաղաքացիական ծառայության** պաշտոններ զբաղեցնող անձինք և տեխնիկական ապաստարկում իրականացնող անձնակազմը: Մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը մարզպետը ներկայացնում է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հաստատմանը:

Մարզպետարանի **աշխատակազմն իրականացնում է** օրենսդրությամբ և մարզպետարանի կանոնադրությամբ նախատեսված գործառնություններ ու լիազորություններ: Աշխատակազմի գործունեության կազմակերպումն ու ղեկավարումն իրականացնում է **աշխատակազմի ղեկավարը**:

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին նշանակում և ազատում է ՀՀ վարչապետը՝ մարզպետի առաջարկությամբ: **Աշխատակազմի ղեկավարն** իր լիազորությունների սահմաններում **կազմակերպում է մարզպետարանի աշխատակազմի գործունեությունը** և իրականացնում է կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների վարչական համակարգումը, **ապահովում է մարզպետի որոշումների, կարգադրությունների ու հանձնարարականների կատարման ընթացքը** և զեկուցում մարզպետին:

Նա մշակում և մարզպետի հաստատմանն է ներակայացնում աշխատակազմի աշխատանքային **տարեկան ու եռամսյակային ծրագրերը**, վերահսկողություն է իրականացնում դրանց կատարման ժամկետների նկատմամբ և արդյունքների մասին զեկուցում մարզպետին: Կազմակերպում է քաղաքացիների ընդունելությունը, նրանց առաջարկությունների, դիմումների և բողոքների սահմանված կարգով քննարկումը և իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Մարզպետին կից ստեղծվում է խորհրդակցական մարմին՝ **մարզի խորհուրդ**: Խորհրդի կազմի մեջ են մտնում մարզպետը և համայնքների ղեկավարները: **Մարզպետը հրավիրում և վարում է մարզի խորհրդի** նիստերը՝ իր կողմից սահմանված օրակարգով:

Մարզի խորհրդի նիստերին մարզպետի հրավերով կարող են մասնակցել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարները, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և այլ անձինք:

Մարզի խորհուրդը քննարկում է կառավարությանը և վարչապետին ներկայացվող **մարզպետի հաշվետվությունները**՝ մարզում ընդհանուր առցիալ-տնտեսական վիճակի և իր գործունեության մասին, ինչպես նաև նրա առաջարկությունները մարզի սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան ու երկարաժամկետ ծրագրերի, ՀՀ պետական բյուջեի նախագծի՝ մարզին վերաբերող հատվածի, պետական բյուջեից համայնքների բյուջեին հատկացումների վերաբերյալ:

Խորհրդի նիստերում մարզպետը համայնքների ղեկավարներին ծանոթացնում է ՀՀ օրենքներին, Հանրապետության Նախագահի, կառավարության, վարչապետի և իր իրավական ակտերին և դրանցից բխող տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրներին, լսում է վերջիններիս ղեկավարների առաջարկություններն ու դիտողությունները մարզպետարանի, մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության մասին, ծանոթանում համայնքներում տիրող իրավիճակին՝ տարվող աշխատանքների ընթացքին ու ծագած խնդիրներին և այլն:

Վարչապետը կամ նրա հանձնարարությամբ կառավարության աշխատակազմի ղեկավարը, պարբերաբար քննության են առնում տարածքային կառավարման մարմինների կողմից կառավարության և վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման արդյունքները և միջոցներ ձեռնարկում եղած թերությունները վերացնելու ուղղությամբ: **Վարչապետը պարբերաբար լսում է նշված մարմինների ղեկավարների հաշվետվությունները**՝ կառավարության և վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման ընթացքի և դրանց կենսագործման ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին:

Երևան քաղաքն ունենալով համայնքի կարգավիճակ՝ իրականացնում է նաև տարածքային կառավարմանը հատուկ որոշ գործառնություններ, որոնց առանձնահատկությունները սահմանված են 2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով: Ըստ այդ օրենքի՝ **տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է տարածքային կառավարման նախարարությունը**: Ընդ որում, նախարարությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով մարզպետներին վերապահված լիազորություններն այնքանով, որքանով դրանք չեն հակասում նշված օրենքին (9 հոդվ.): Մասնավորապես, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 54-69 հոդվածներում ամրագրված են Երևանի քաղաքապետի բոլոր այն լիազորությունները (ֆինանսների, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, հասարակական կարգի պահպանության, տրանսպորտի և ճանապարհաշինութ-

յան, գյուղատնտեսության, հողագործման, կրթության, մշակույթի և այլ ոլորտներում), որոնք իրականացնում են մարզպետները իրենց ղեկավարած մարզի տարածքում:

Երևանի քաղաքապետը, նշված օրենքով կամ կառավարության սահմանած կարգով, կազմակերպում և ղեկավարում է նաև պետության կողմից *պատվիրակված լիազորությունների* իրականացումը, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին, ավագանու հավանությանն արժանացած քաղաքի գլխավոր հատակագիծը ներկայացնում է կառավարության հաստատմանը և իրականացնում մի շարք այլ լիազորություններ, որոնք հատուկ են մարզպետներին:

ԳԼՈՒԽ 23.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

§ 1. Դատական իշխանության էությունը և սկզբունքները

Իշխանությունների բաժանման սկզբունքը, որպես կանոն, դիտարկվում է իշխանության ճյուղերի ինքնուրույնության և հավասարակշռման ծիրում, ինչը պայմանավորում է *իշխանության տարրեր ճյուղերի միջև ծագած վեճերի լուծման այնպիսի համակարգ*, որը առավելագույնս կհամապատասխանի իշխանության ճյուղերի բաժանման և հավասարակշռման սահմանադրական հիմքերին:

Ա. «Դատական իշխանություն» եզրույթի առնչությամբ հետխորհրդային իրավագիտությունում *դեռևս չի ձևավորվել միասնական դիրքորոշում*: Այն համարվում է դեռևս ոչ բավարար չափով և համարժեք ընկալված հասկացություն: Բոլոր դեպքերում, գերիշխող է այն տեսակետը, ըստ որի «դատական իշխանությունը», որպես իշխանության ինքնուրույն ճյուղ, բացառապես ներառում է արդարադատության իրականացման լիազորություններն ու գործառույթները: Ինչ վերաբերում է *դատարաններին*, ապա վերջիններս համդես են գալիս իշխանության տվյալ ճյուղով պայմանավորված գործառույթներն իրականացնողներ՝ ինչպես ընդունված է իշխանության ցանկացած այլ թևի պարագայում, որտեղ համդես են գալիս որոշակի պետական մարմիններ:

Իշխանության ճյուղերի հավասարակշռման խնդիրը, առավել գործնական նշանակություն ունի հատկապես գործադիր իշխանության մարմինների հետ դատական իշխանության մարմինների փոխհարաբերություններում: Ընդ որում, հենց *գործադիր իշխանությունն* է առավել հսկված *սահմանափակելու* դատական իշխանությունը և կաշկանդելու վերջինիս ինքնուրույնությունը: Ընդ որում, գործադիր իշխանության նկատմամբ դատարանների կողմից իրականացվող վերահսկողությունը ոչ միայն օրինականության ապահովման երաշխիք է, այլև կոչված է նպաստելու իշխանությունների այդ թևերի միջև անհրաժեշտ հավասարակշռությանը:

Այսպիսով, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքով էլ հենց պայմանավորված է *դատական իշխանության գերխնդիրը*՝ արդարադատության իրականացումը:

Խորհրդային իրավունքի համակարգը տասնամյակներ շարունակ դատական իշխանությունը չի ճանաչել որպես իշխանության ինքնուրույն քև: Մասնավորապես, Խորհրդային Հայաստանի առաջին Սահմանադրությունում ընդհանրապես բացակայել է որևէ հիշատակում դատարանի մասին: Դատական իշխանությունը իշխանության այլ ճյուղերից տարանջատելու գաղափարը առաջին անգամ ամրագրվել է Հայկական ԽՍՀ 1978թ. Սահմանադրության մեջ:

Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանությունն իրականացվում է միայն դատարանների կողմից՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Ընդ որում, **դատական իշխանության մարմինների համակարգը** իր մեջ ներառում է՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել նաև մասնագիտացված դատարաններ (ներկայումս գործում է միայն վարչական դատարանը): ՀՀ Սահմանադրությունը (92 հոդված) դատական իշխանության մարմինների համակարգի մեջ է ներառում նաև ՀՀ սահմանադրական դատարանը: **Արտակարգ դատարանների** ստեղծումը արգելված է:

Անդրադառնալով դատական իշխանության խնդիրներին՝ կարելի է շեշտել, որ այն արդարադատություն իրականացնելու միջոցով նպաստում է Հանրապետության սահմանադրական կարգի, ժողովրդավարության, օրինականության և իրավակարգի ամրապնդմանը, որով և ընդգծվում է վերջինիս կարևորագույն դերը իշխանության ճյուղերի համակարգում:

Դատական իշխանությունը հանդես է գալիս առավելապես գործադիր իշխանության անիրավաչափ գործողությունները նախականխողի դերում: Դատարանը, օժտված լինելով անկախության որոշակի երաշխիքներով, փաստորեն ունի գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրական հնարավորություն, որի շնորհիվ ի վիճակի է կանխելու պետական մարմինների ու պաշտոնատար անձանց **հնարավոր կամայականությունները**: Դրան նպաստում է դատական իշխանության **անկախությունը, որը հեռու է պահում դատարաններին բոլոր տեսակի քաղաքական բնույթի ճնշումներից**:

Դատարանները ոչ մի պարագայում չպետք է հանդես գան որպես քաղաքական ուժ կամ գործեն քաղաքական պատվերներով: Իսկ դա նշանակում է, որ արդարադատությունը պետք է իրականացվի՝ անկախ դրա հետևանքով ծագող քաղաքական կամ այլ բնույթի հետևանքներից: Թերևս դա է պատճառը, որ ժողովրդավարական երկրներում հասարա-

կությունը դատական մարմինների նկատմամբ **տաժում է առավել մեծ փաստադրություն**:

ՀՀ Սահմանադրությամբ «դատական իշխանություն» եզրույթի պարզաբանմանը նվիրված են մի շարք դրույթներ, որոնք ընդգրկում են ինչպես դատական համակարգի կազմակերպումը, այնպես էլ դատարանների գործունեության **սկզբունքները**: Այս հասկացության հետ մեկտեղ, Սահմանադրությունում օգտագործվում է **նաև «արդարադատություն»** հասկացությունը, որը բնորոշում է դատարանների գործունեության բովանդակությունը:

ՀՀ Սահմանադրությամբ **«արդարադատություն»** եզրույթի բնորոշումը սահմանված չէ: Արդարադատության իրականացման էությունը ամրագրված էր 1998թ. հուլիսի 18-ին ընդունված՝ «Դատարանակազմության մասին» օրենքի (որը ներկայումս չի գործում) 3 հոդվածում. «Արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է՝

1) մարդու և քաղաքացու ազատությունների, իրավունքներն ու օրինական շահերը, պետության և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը շոշափող քաղաքացիական, տնտեսական վեճերի վերաբերյալ գործեր դատական նիստերում քննելու և լուծելու միջոցով,

2) վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և լուծելու միջոցով,

3) դատական նիստերում հանցագործությունների վերաբերյալ գործեր քննելու, հանցանք կատարած անձանց մեղավոր ճանաչելու, նրանց նկատմամբ օրենքով սահմանված պատիժ նշանակելու, հանցանք չկատարած անձանց անպարտ ճանաչելու և արդարացնելու միջոցով»:

Ընդ որում, վերը նշված բնորոշումը չէր կարող համարժեք ու ամբողջական համարվել: Մասնավորապես, դրանում վարչական դատավարությանը տրված էր ակնհայտ սահմանափակ մեկնաբանություն, որը չէր բացահայտում վարչական պատասխանատվության բուն էությունն ու բովանդակությունը: Մինչդեռ՝ վարչական այսպարադատության Լուծումը հենց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ապօրինի իրավական ակտերի, գործողությունների ու անգործության իրավաչափության վերաբերյալ գործերի քննությունն է: Այնուամենայնիվ, իրավակիրառ պրակտիկայի համար հիշյալ եզրույթի օրենսդրական բնորոշումը դրական մոտեցում էր:

Ինչ վերաբերում է **«արդարադատություն» եզրույթի արդի բնորոշմանը**, ապա այն կարող է բխեցվել քրեական, քաղաքացիական և վարչական դատավարական օրենսգրքերից, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքից, որոնցում սպառնչ սահմանված է կոնկ-

րեա դատավարության շրջանակներում քննության ենթակա գործերի շրջանակը: **Այդ գործերի դատական քննությունն էլ հենց կկազմի** «արդարադատություն» եզրույթի բովանդակությունը:

«Արդարադատություն» եզրույթը բովանդակային առումով իր մեջ ներառում է ոչ միայն դատավարությունն իր 4 եղանակներով՝ սահմանադրական, վարչական, քրեական և քաղաքացիական, այլև այն գործերը, որոնց կապակցությամբ դրանք կիրառվում են:

Այսպիսով, արդարադատությունը բնորոշվում է, որպես դատական իշխանության իրականացման միջոց, իսկ դատավարության տեսակները՝ որպես արդարադատության իրականացման եղանակներ:

Հայաստանի Հանրապետությունում իրականացված **դատաիրավական բարեփոխումների առաջին փուլի շրջանակներում** (առավելապես 1998թ.) ընդունվեցին մի շարք կարևոր օրենքներ, որոնք կոչված էին ապահովելու արդարադատության իրականացման սկզբունքների միասնական ու անշեղ կիրառումը, բարձրացնելու դատական իշխանության հեղինակությունը և երաշխավորելու դրա անկախությունը:

Հիշյալ իրավական **ակտերի գերակշիռ մասը ներկայումս կորցրել է** իր իրավական ուժը, ինչը հիմնականում պայմանավորված է Սահմանադրությունում կատարված էական փոփոխություններով և ազգային օրենսդրությունը միջազգային իրավունքի չափանիշներին համապատասխանեցնելու հրամայականով: Ընդ որում, այդ գործընթացը դեռևս շարունակվում է: Բոլոր դեպքերում ներկայումս հիշյալ հարաբերությունների օրենսդրական կարգավորմանն են նվիրված ՀՀ դատական օրենսգիրքը (ընդունվել է 2007թ. փետրվարի 21-ին), «Դատախազության մասին» (2007թ. փետրվարի 22-ի), «Փաստաբանության մասին» (2004թ. դեկտեմբերի 14-ի) ՀՀ օրենքները, բարեփոխված դատավարական օրենսգրքերը, որոնց ավելացել է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (ընդունվել է 2007թ. նոյեմբերի 28-ին) և այլն:

Բ. Իշխանությունների ճյուղերի համակարգում դատական իշխանության էությունը համարժեք բացահայտելու համար հարկ է անդրադառնալ իշխանության այդ ճյուղի ընդհանուր (սահմանադրական) և հատուկ սկզբունքներին: 1) **Ընդհանուր սկզբունքները**, առնչվում են դատական իշխանության առավել էական բաղադրիչներին և, սահմանված փյունկով Սահմանադրությամբ, միաժամանակ լրացուցիչ ամրագրված են ընթացիկ օրենսդրական ակտերով, իսկ 2) **հատուկ սկզբունքները** ամբողջական տեսքով իրենց արտացոլումն են ստացել դատավարական օրենսգրքերում, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքում և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում: Ընդ որում, իրավական կարգա-

վորման այդպիսի եղանակը բխում է Սահմանադրության 97 հոդվածից (2-րդ մաս). «Դատավորի և սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»: Բնականաբար, Սահմանադրությամբ ամրագրված են դատական իշխանության առավել առանցքային նշանակություն ունեցող և դատական իշխանությունը, որպես իշխանության ինքնուրույն ճյուղ, բնութագրող սկզբունքները:

1. **Ընդհանուր սկզբունքները**, մասնավորապես ամրագրված են ՀՀ Սահմանադրության «Դատական իշխանությունը» վերտառությամբ 6 գլխում և համակարգված տեսքով ունեն հետևյալ պատկերը՝

1) արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից.

2) դատարանների անկախությունը.

3) դատավորի անփոփոխելիությունը.

4) դատավորի անկախությունը.

5) դատավորի անձեռնմխելիությունը.

6) դատավորի՝ որոշակի գործունեության տեսակներով զբաղվելու սահմանավակումը.

7) դատավորի ապաքաղաքականացվածությունը:

Հավելենք, որ այս սկզբունքներն իրենց ամրագրումն են ստացել նաև մի շարք միջազգային իրավական ակտերում, մասնավորապես՝ ՄԱԿ-ի 7-րդ կոնգրեսում 1985թ. դեկտեմբերի 13-ին ընդունված «Դատական մարմինների անկախության Հիմնարար սկզբունքները» թիվ 40/146 բանաձևում, 1998թ. օգոստոսի 8-10-ին ընդունված Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիայում և ԵԽ մասնակից պետությունների Նախարարների կոմիտեի կողմից 1994թ. ընդունված «Դատարանների անկախության, արդյունավետության և դերի մասին» թիվ R(94 հանձնարարականում):

Սահմանադրության 91 հոդվածում, որպես դատական իշխանության ընդհանուր **սկզբունք ամրագրված է Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունը միայն դատարանների կողմից իրականացնելը**: Սա իշխանությունների բաժանման և հավասարակշռման կարևոր երաշխիք է, քանի որ հիշյալ սկզբունքի հետևողական կիրառումը բացառում է դատական իշխանությանը բնորոշ գործառնությունների իրականացումը իշխանության որևէ այլ ճյուղին պատկանող պետական մարմնի կողմից:

Այդ սկզբունքից միաժամանակ բխում է, որ արդարադատության իրականացումը չի կարող վերապահվել նաև, այսպես կոչված, արտա-

կարգ դատարաններին: Ընդ որում, Սահմանադրությունը հիմնարար դրույթներ է բովանդակում դատարանների լիազորությունների, կազմավորման ու գործունեության կարգի վերաբերյալ (94-95 հոդվ.), ինչը բացառում է ընթացիկ օրենսդրական ակտերում այնպիսի դրույթների ամրագրումը, որոնք այս կամ այն կերպ խոցելի կդարձնեն դատական իշխանությունը: Բնորոշ է հատկապես այն, որ *դատավորների նշանակման*, նրանց կարգապահական *պատասխանատվության* հարցերում զլխավոր դերը վերապահված է *արդարադատության խորհրդին*, որը որոշակիորեն մեղմում է գործադիր իշխանության ազդեցության հնարավորությունը, իսկ լրացուցիչ լծակների պարագայում կարող է և բացառել այդպիսի ազդեցությունը:

Դատական իշխանության հաջորդ ընդհանուր սկզբունքը *դատարանների անկախությունն* է, որը ամրագրված է Սահմանադրության 94 հոդվածով: Տեսական գրականությունում, ցավոք, «դատարանների անկախություն» եզրույթն *անհարկի նույնացվում է «դատավորի անկախության» եզրույթի* հետ³³, մինչդեռ՝ դրանք բովանդակային կտրվածքով խիստ տարբեր են:

Դատարանների անկախությունը բնութագրում է ողջ *դատական իշխանության անկախությունը՝ քաղաքական համակարգում*: Բնորոշ է այն, որ Սահմանադրության նույն 94 հոդվածով, որպես դատարանների անկախության սկզբունքի քաղադրիչ, ամրագրվել է դատարանների կազմավորման կարգը, լիազորությունները միայն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանելու հիմնադրույթը: Այլ կերպ ասած, տվյալ դեպքում վճռորոշը ոչ թե կոնկրետ արդարադատություն իրականացնելիս գործը քննող դատավորին հնարավոր ապօրինի միջամտություններից զերծ պահելն է, ինչը բնորոշ է դատավորի անկախության սկզբունքին, այլ՝ դատական իշխանության մարմինների անկախությունը՝ հատկապես գործադիր իշխանության մարմիններից:

Թերևս, այդ է պատճառը, որ դատարանների անկախության սկզբունքը ամրագրված է Սահմանադրության 94 հոդվածով, իսկ դատավորի անկախությունը՝ 97 հոդվածով:

Ըստ այդ հոդվածի (97), արդարադատություն իրականացնելիս *դատավորն անկախ է* և ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքին: Դատավորի գործունեությանն օրենքով չնախատեսված միջամտությունն արգելվում է:

³³ Տե՛ս. օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի - էր.: «Երավունք», 2010, էջեր 925-928:

Դատավորների անկախությունը երկակի նշանակություն ունի. այն, մի կողմից, երևաշխավորում է դատավորների բնականոն գործունեությունը և միտված է պաշտպանելու դատավորների օրինական շահերը, մյուս կողմից՝ ապահովում է արդար դատաքննությունը:

Դատավորի անկախության սկզբունքը այս կամ այն կերպ խաթարող արարքների համար նախատեսված է ինչպես *քրեական, այնպես էլ՝ վարչական* պատասխանատվություն: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 332 հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում արդարադատության իրականացմանը խոչընդոտելու համար: Դատավորի անկախության իրավական երաշխիքներից է նաև դատավորի նկատմամբ *անհարգալից վերաբերմունքի* համար քրեական պատասխանատվություն սահմանելը (նշված օրենսգրքի 343 հոդվ.): Ակնհայտ է, որ դատավորի անկախությունը կարող է խաթարվել նաև նրա նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու միջոցով, քանզի այդպիսի վերաբերմունքը հաճախ հետապնդում է հենց արդարադատությանը ապօրինի միջամտելու նպատակ:

Իրավական մեծ նշանակություն ունի դատավորի *անփոփոխելիության սկզբունքը*: ՀՀ Սահմանադրության 96 հոդվածի համաձայն՝ դատավորն անփոփոխելի է և պաշտոնավարում է մինչև 65 տարին լրանալը: Վերջիններիս լիազորությունները դադարեցվում են միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:

Այս սկզբունքը փոխկապակցված է հատկապես դատավորի անկախության սահմանադրական սկզբունքի հետ և երաշխավորում է դատավորների՝ հնարավորինս ինքնուրույն գործելը: Սա կարևորագույն հակակշիռ է նաև դատավորների նշանակման գործող կարգին: Ակնհայտ է, որ մինչև 65 տարին լրանալը պաշտոնավարելու վերաբերյալ դրույթը հնարավորություն է տալիս դատավորին գործելու հնարավորինս անկախ, անտեսելու միջամտությունները և զերծ մնալու դրանցով պայմանավորված բացասական հետևանքներից: Մասնավորապես, որոշակի ժամկետով ընտրվելու դեպքում մեծանում է, այսպես կոչված, *«անհնազանդ» դատավորին* հաջորդ ժամկետով կրկին չնշանակելու հավանականությունը:

Ընդ որում, այս սկզբունքը բավանդակային առումով լայն է և չի սահմանափակվում սոսկ պաշտոնավարության համար վերին տարիքային սահման ամրագրելով: Այս սկզբունքից բխում է նաև, որ *դատավորը չի կարող իր կամքին հակառակ նշանակվել այլ պաշտոնի կամ այլ դատարանի կազմում*, կամ էլ տեղափոխվել այլ պաշտոնի կամ այլ դատարան՝ նույնիսկ պաշտոնի բարձրացման պայմանով: Իհարկե, առանձին

երկրներում գործում է դատավորներին որոշակի ժամկետով նշանակելու կարգ, սակայն այս դեպքում արդեն գործում են դատավորի անկախությունը երաշխավորող այլ կազմակերպարավական լծակներ:

Դատավորների բնականոն գործունեության կարևոր երաշխիքներից է անձեռնմխելիությունը: ՀՀ Սահմանադրության 97 հոդվածի համաձայն՝ Դատավորը չի կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրա նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց արդարադատության խորհրդի համաձայնության: Նա չի կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում են Հանրապետության Նախագահը և վճռաբեկ դատարանի նախագահը:

Վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահների և դատավորների, վերաբնիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահների նկատմամբ նշված պատասխանատվության միջոցների կիրառման պարագայում՝ անհրաժեշտ է նաև Հանրապետության Նախագահի համաձայնությունը, ինչը նախատեսված է ՀՀ Սահմանադրության 55 հոդվածով (11-րդ կետ): Ընդ որում, նույն այդ դատավորների պարագայում Հանրապետության Նախագահն օժտված է նաև նրանց՝ որպես մեղադրյալ, ինչպես նաև նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու համար համաձայնություն տալու իրավասությամբ: Դրանով ընդգծվում է դատական համակարգում առավել պատասխանատու կարգավիճակ ունեցող դատավորների համար լրացուցիչ անձեռնմխելիության երաշխիքներ սահմանելու անհրաժեշտությունը:

Հարկադրանքի որոշ տեսակներ ընդհանրապես չեն կարող կիրառվել դատավորի նկատմամբ: Այսպես, դատավորին չի կարելի բերման ենթարկել, իսկ առանց փաստաթղթերի բերման ենթարկված դատավորի ինքնությունը պարզելուց հետո իրավասու պետական մարմինը պետք է անմիջապես ազատ արձակի նրան:

Դատավորի անձեռնմխելիությունը համարվում է դատավորի անկախության կարևորագույն երաշխիքը: Այն հնարավորություն է տալիս նրան գործելու առավել անկաշկանդ: Սակայն այդ սկզբունքը չի ենթադրում դատավորի բացարձակ անձեռնմխելիություն: Ինչպես և մյուս քաղաքացիները, դատավորները, վերոհիշյալ սահմանափակումներով հանդերձ, կրում են քրեական, վարչական, կարգապահական և քաղաքացիաիրավական պատասխանատվություն:

Դատաիրավական բարեփոխումների արդյունքում էապես վերանայվել է նաև դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտը: Հիշյալ ինստիտուտը կանոնակարգված է դատական օրենսգրքի 153-167 հոդվածներով: Ըստ 153 հոդվածի, դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերն են՝ արդարադատության իրականացնելիս՝ նյութական և դատավարական օրենքների նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումը, աշխատանքային կարգապահությունը պարբերաբար կամ կոպիտ խախտելը, դատավորի վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտելը և այլն:

Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն արդարադատության նախարարը, արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը և վճռաբեկ դատարանի նախագահը:

Դատավորի անկախության ամրապնդման նկատառումներով է պայմանավորված նաև գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու սահմանափակումը: Այսպես, ՀՀ Սահմանադրության 98 հոդվածի համաձայն՝ դատավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական իքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Դատավորի անկախությունը տվյալ դեպքում գրկում է դատավորի վրա ազդելու գործադիր իշխանությանն իրական հնարավորությունից: Բացի այդ, միջազգային իրավական փաստաթղթերի վերլուծությունից բխում է, որ այս սկզբունքը կոչված է նպաստելու դատավորների նկատմամբ հանրության անհրաժեշտ վստահության ձևավորմանը:

Դատավորի ապաքաղաքականացվածության սկզբունքի (ՀՀ Սահմանադրության 98 հոդվ.) համաձայն՝ դատավորը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Ցանկացած իրավիճակում դատավորը պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Սահմանափակված, ընտրություններին մա կարող է մասնակցել միայն որպես ընտրող, ընդ որում, արգելվում է նրա կողմից նախընտրական քարոզչությանը մասնակցելը:

Դրա հետ մեկտեղ, ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում չի համարվում. «Դատավորների կամ դատավորների մասնագիտական միավորումների կամ դատավորների ինքնակառավարման մարմինների կողմից՝ դատական իշխանության գործունեությունը կարգավորող կամ դրանց առնչվող իրավական ակտերի նախագծերի վերա-

բերյալ մասնագիտական քննարկումները կամ եզրակացությունները, դատական իշխանության բնականոն գործունեության վերաբերյալ քննարկումները և հայտարարությունները, այդ թվում՝ հրապարակային» (ՀՀ Դատական օրենսգրքի 10 հոդվ.):

Այս սկզբունքն **ունի երկակի նշանակություն**. այն, մի կողմից, ապահովում է դատավորի անկախությունը հնարավոր քաղաքական ներգործությունից ու միջամտությունից, մյուս կողմից, բացառում է դատավորների կողմից իրենց դիրքի օգտագործմամբ քաղաքական գործընթացների վրա ներազդելու հնարավորությունը: Եթե օրենսդիր և գործադիր իշխանությունները ոչ միայն մշտապես և անխուսափելիորեն գտնվում են քաղաքական ճնշումների ազդեցության տակ, այլև իրենք են հաճախ իրենցից ներկայացնում քաղաքական ակտիվ ուժ, ապա դատարանը պետք է **գերծ մնա քաղաքականությունից**, որպեսզի կարողանա անաչառ լինել և քաղաքական գործընթացներում իրավական վեճերի վերաբերյալ գործեր քննելիս ղեկավարվի ոչ թե քաղաքական նպատակահարմարությամբ, այլ Սահմանադրությամբ և օրենքով:

ՀՀ դատական օրենսգրքի 8-20 հոդվածներում ամրագրված են դատական իշխանության մարմինների գործունեության սկզբունքները, որոնց ընդունված է համարել դատական իշխանության **հատուկ սկզբունքներ**: Դրանք են՝

- 1) դատական իշխանության ինքնավարությունը.
- 2) դատարանի ինքնուրույնությունը.
- 3) հավասարությունը օրենքի և դատարանի առջև.
- 4) արդարադատության արդյունավետ իրականացումը.
- 5) դատական քննության մրցակցությունը.
- 6) դատավարության լեզուն.
- 7) գործերի քննության հրապարակայնությունը:

Դատական իշխանության ինքնավարության սկզբունքը, որն ամրագրված է ՀՀ դատական օրենսգրքի 9 հոդվածով, երաշխավորում է դատական իշխանության **ինքնակառավարմը**, որի իրականացման կարգն ու այն ներկայացնող մարմինները նախատեսված են ՀՀ դատական օրենսգրքով: Այս սկզբունքը բացառում է դատական իշխանության ներհամակարգային կառավարման գործընթացում գործադիր իշխանության որևէ միջամտություն:

Դատարանի ինքնուրույնության սկզբունքը (ամրագրված է ՀՀ դատական օրենսգրքի 11 հոդվածով) դատավորի անկախության սահմանադրական սկզբունքի առավել տարածական մեկնաբանության արդյունք է: Ըստ էության, օրենսդիրը փորձել է ոչ միայն ամրագրել սահմանադրա-

կան սկզբունքը, այլև՝ կարգավորել դրա իրավական երաշխիքները, ինչի արդյունքում նպատակահարմար է համարվել սկզբունքի առավել ընդգրկուն անվանումը: Մասնավորապես, նշված հոդվածով ամրագրված են մի շարք կարևոր այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են դատավորի նկատմամբ միջամտության դեպքերի մասին ՀՀ դատարանների նախագահների խորհրդին իրազեկելը, պաշտոնավարման ընթացքում և լիազորությունները դադարեցվելուց հետո իր քննած գործերի վերաբերյալ դատավորին որպես վկա հարցաքննելու արգելքը և այլն:

Օրենքի և դատարանի առջև հավասարության սկզբունքն ամրագրված է ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդվածով: Ի տարբերություն իրավահավասարության սկզբունքի, որը սահմանադրական սկզբունք է, այս հատուկ սկզբունք է, այն առումով, որ առնչվում է կոնկրետ արդարադատության իրականացման շրջափուլին: Տվյալ դեպքում, որպես ելակետ է ընդունվում այն, որ հիշյալ սկզբունքից յուրաքանչյուր շեղում անհամեմատ ավելի ծանր հետևանքներ կարող է ունենալ: Դրանով ընդգծվում է դատավարությանը ներգրավված կողմերի հավասարության կարևորությունը դատական իշխանության գործունեության մեջ:

Այս սկզբունքի ցանկացած շեղում խոցելի է դարձնում ողջ դատական իշխանությունը, քանզի տվյալ դեպքում գերխնդիր ոչ թե պարզապես դատարանների անկախությունն է կամ ինքնուրույնությունը, այլ սեղախիք մատչելի ու արդար քննության իրականացմանը ծառայեցնելի:

Արդարադատության արդյունավետ իրականացման սկզբունքը ներառում է մի քանի պահանջներ (մատչելի արդարադատություն, գործի դատական քննության նախապատրաստական փուլ, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում պարզեցված ու արագացված քննության իրականացման հնարավորություն, գործի քննությունը, որպես կանոն, սեկ միատույն ավարտելու կարգ, ողջամիտ ժամկետներում գործի դատաքննության նախապատրաստության և բուն դատաքննության իրականացում և այլն), որոնք ուղղված են մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետությանը: Այս սկզբունքն ամրագրված է ՀՀ դատական օրենսգրքի 16 հոդվածով, որի էիմքում ընկած են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական Կոնվենցիայի 6 հոդվածի դրույթները:

Դատական քննության մրցակցության սկզբունքի (ՀՀ դատական օրենսգրքի 17 հոդվ.) արդյունքում դատաքննությունն իրականացվում է կողմերի մրցակցության պայմաններում: Ընդ որում, որպես կանոն, վերջիններիս վրա է դրված իրենց պահանջի հիմնավորվածության ապա-

ցուցման պարտականությունը: Մրցակցության պայմաններից շեղում թույլատրվում է բացառապես օրենքով նախատեսված դեպքերում: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ գործի բնույթից ելնելով՝ չկան կողմեր (օրինակ, հատուկ վարույթի դեպքերում):

Այն, որ վարչական դատավարությունում կողմը կարող է առանձին դեպքերում ազատվել իր պահանջի հիմնավորվածության ապացուցման պարտականությունից, չի կարող գնահատվել որպես մրցակցության սկզբունքից շեղում: Այսպես, վարչական դատավարությունում անձը ազատվում է իր իրավունքները և ազատությունները խախտող իրավական ակտի ոչ իրավաչափ լինելը հիմնավորելու պարտականությունից, ինչը պայմանավորված է տվյալ դեպքում կողմերի՝ մի դեպքում՝ անձի, մյուս դեպքում՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, փաստացի կարգավիճակով: Ընդ որում, հիմք ընդունելով անձի փաստացի սահմանափակ հնարավորությունները, ապացուցման բեռը դրվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի վրա:

Դատավարության լեզուն (ՀՀ դատական օրենսգրքի 19 հոդվ.) Հայաստանի Հանրապետությունում հայերենն է, ինչը միանգամայն համաեռուն է Սահմանադրության 12 հոդվածում ամրագրված դրույթին. «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է»: Միաժամանակ, գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալ իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն քարգմանությունը:

Դատական իշխանության այս սկզբունքը բնավ չի հակասում պետական լեզվի վերաբերյալ սահմանադրական սկզբունքին, քանի որ գործավարության լեզուն մնում է հայերենը, պարզապես իրավահավասարության, արդարադատության մատչելիության և դատավարության մյուս սկզբունքներին համապատասխան, կողմին իրավունք է վերնապահվում դատավարությունում հանդես գալ այն լեզվով, որին նա տիրապետում է:

Գործերի քննության հրապարակայնության սկզբունքը բխում է տեղեկատվության ազատության վերաբերյալ սահմանադրական դրույթներից և կոչված է ապահովելու արդարադատության իրականացման փաստիկությունը: Հրապարակայնության սկզբունքը բխում է հանրային վերահսկողության գաղափարից և, միաժամանակ, միտված է հասարակության իրավազիտակցության բարելավմանը: Ըստ ՀՀ դատական օրենսգրքի 20 հոդվածի (1-ին մաս), Հանրապետության դատարաններում գործերի քննությունը դռնբաց է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Դատական քննությունը կամ դրա մի մասն անցկացվում է դռնփակ՝ միայն դատարանի որոշմամբ, օրենքով նախատեսված դեպքերում և

կայրով՝ հանրության բարձրի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով»: Օրինակ, որդեգրման գործերով որդեգրողի պահանջով դատական քննությունը կարող է անցկացվել դռնփակ:

Հրապարակայնության սկզբունքը ամրագրված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով, որով պարտադիր համարելով դատավճռի հրապարակումը, թույլ է տրվում որոշակի հիմքերով սահմանափակել հրապարակային քննությունը. «Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ դրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բայության կանոններով, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»:

§ 2. Դատական իշխանության մարմինների համակարգը, կազմակերպման և գործունեության կարգը

ՀՀ դատական իշխանության մարմինները կազմում են Հանրապետության դատական համակարգը: Այն ամրագրված է Սահմանադրության 92 հոդվածում, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ»:

Ըստ էության, Սահմանադրությամբ նախանշվել է դատական համակարգի արմատական վերակառուցումը: Նախկին Խորհրդային Հայաստանում գործող էրկոդակ համակարգի փոխարեն (ժողդատարաններ և գերագույն դատարան) սահմանվում է եռօղակ համակարգ, որի թե՛ կազմավորման, և թե՛ գործունեության հիմնական սկզբունքներն էապես տարբերվում են նախկին համակարգից: Ընդ որում, Սահմանադրությամբ կարգավորված են դատական մարմինների կազմակերպման ու գործու-

մեության ընդհանուր սկզբունքային դրույթները, որոնք կոնկրետացվել են այլ օրենսդրական ակտերում:

ՀՀ Սահմանադրությամբ (92 հոդվ.) հստակ ամրագրված է, այսպես կոչված, արտակարգ դատարաններն արգելելու մասին դրույթ. «...արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները»: Սահմանադրական այդ նորմի պահանջն իր արտացոլումն է գտել ՀՀ դատական օրենսգրքի 8 հոդվածում և քրեական դատավարության օրենսգրքի 24 հոդվածում (1-ին մաս), որի համաձայն՝ «...դատարանների լիազորությունների յուրացումը պատժվում է քրեական օրենքով»:

ՀՀ Սահմանադրության 92 հոդվածը, ներկայացնելով Հանրապետության դատական համակարգը, միաժամանակ ամրագրում է, որ օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել նաև մասնագիտացված դատարաններ:

Անհրաժեշտ է նկատել, որ ՀՀ **դատական օրենսգրքով** նախատեսված **դատարանների համակարգը չի համապատասխանում** ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված համակարգին: Մասնավորապես, նշված օրենսգրքում անտեսվել է այն, որ Սահմանադրությամբ ընդհանուր իրավասության են համարվում ոչ միայն առաջին ատյանի, այլև վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, բացառությամբ մասնագիտացված դատարանների: Նշված օրենսգրքում ընդհանուր իրավասության են համարվում միայն առաջին ատյանի դատարանները: **Այս անհամապատասխանությունը շտկելու փորձ է** արվել միայն հետագայում, երբ ստեղծվեց վարչական՝ վերաքննիչ դատարանը, սակայն օրենսդիրը միայն մասնակիորեն է անդրադարձել խնդրին՝ որպես մասնագիտացված դատարաններ ճանաչելով ոչ միայն վարչական դատարանը, այլև վարչական վերաքննիչ դատարանը:

Անհարկի շփոթ չստեղծելու նկատառումով ստորև մենք նշված օրենսգրքում օգտագործված «ընդհանուր իրավասության դատարաններ» արտահայտությունը կփոխարինենք «ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ» արտահայտությունով, ինչը հնարավորություն կտա հստակեցնելու, որ տվյալ դեպքում խոսքը ոչ թե ընդհանրապես ընդհանուր իրավասության, այլ բացառապես ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների մասին է:

ՀՀ դատական օրենսգրքով (3 հոդվ. 4-րդ մաս) նախկինում նախատեսված էին հետևյալ մասնագիտացված դատարանները՝ քրեական դատարանները, քաղաքացիական դատարանները և վարչական դատարանը, սակայն հետագայում՝ 2009թ. փետրվարի 5-ին ընդունված օրենքով կատարված փոփոխությամբ քրեական և քաղաքացիական դատարան-

ները վերացվեցին: Ներկայումս, ինչպես արդեն ասվեց, նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի (5-րդ մաս) համաձայն՝ մասնագիտացված դատարաններ են համարվում վարչական դատարանը և վարչական վերաքննիչ դատարանը:

ՀՀ Սահմանադրությունն անդրադարձել է նաև **բարձրագույն դատական ատյանի** հարցի կարգավորմանը. 92 հոդվածի համաձայն այդպիսին, **բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է**: Ընդ որում, վճռաբեկ դատարանը կոչված է **այստեղից օրենքի միատեսակ կիրառությունը**:

Գործնականում այս դրույթը հաճախ ընկալվում է որպես նախադեպային իրավունքի սահմանադրական հիմք, սակայն անհրաժեշտ է նկատել, որ հիշյալ դրույթը չի կարող բավարար իրավական հիմք լինել դատական իմաստով նախադեպային իրավունքի ձևավորման համար:

Այսպիսով, **դատական իշխանության մարմինների համակարգը բաղկացած է ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարաններից, վճռաբեկ դատարանից և երկու մասնագիտացված դատարաններից՝ վարչական դատարանից և վարչական վերաքննիչ դատարանից**:

Հայաստանի Հանրապետությունում գործում է ընդհանուր իրավասության **առաջին ատյանի տասնվեց դատարան**: Հանրապետության յուրաքանչյուր մարզում գործում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի մեկ դատարան, որի դատական տարածքը տվյալ մարզի վարչական տարածքն է: Բացառություն են կազմում **Վայոց ձորի և Արարատի մարզերը**, որոնց տարածքում գործում է մեկ ընդհանուր իրավասության դատարան, որի նստավայրը գտնվում է Արարատի մարզի վարչական տարածքում: **Երևան քաղաքում** գործում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի 7 դատարան, որոնցից յուրաքանչյուրի դատական տարածքը տվյալ վարչական շրջանի (վարչական շրջանների) տարածքն է:

ՀՀ Սահմանադրությամբ և դատական օրենսգրքով մանրամասն կարգավորվում է նաև Հանրապետության **դատական իշխանության մարմինների կազմակերպման կարգը**: Մասնավորապես, Սահմանադրության 55 հոդվածի (11-րդ կետ) համաձայն՝ Հանրապետության Նախագահը **արդարադատության խորհրդի առաջարկությամբ** նշանակում է վճռաբեկ դատարանի և դրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին, **արդարադատության խորհրդի եզրակացությամբ** նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին:

Դրա հետ մեկտեղ, դատավորների թեկնածությունների ցուցակը կազմելու և հաստատելու, դատարանների դատավորների և դատարանների նախագահների նշանակման կարգը հանգամանորեն ամրագրված է ՀՀ դատական օրենսգրքի 115-152 հոդվածներով:

Մասնավորապես, նշված օրենսգրքի 117 հոդվածի (2-րդ մաս) համաձայն, արդարադատության խորհուրդը դատավորների թեկնածությունների ցուցակը լրացնելու նպատակով անցկացնում է **քվեաթերթիկներով գաղտնի քվեարկություն**: Նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Ցուցակի կազմման ժամանակ հաշվի է առնվում սեռային (գեղեղեային) հավասարակշռությունը: Եթե **որևէ սեռի դատավորների թիվը պակաս է** դատավորների ընդհանուր թվի 25 տոկոսից, ապա այդ սեռի թեկնածուներին ցուցակում կերաշխավորվի առնվազն 5 տեղ»:

Օրենսդրությամբ ամրագրված են նաև այն սահմանափակումները, որոնք կիրառվում են դատավոր նշանակելու ժամանակ, մասնավորապես նշված օրենսգրքի՝ 119 հոդվածի (1-ին մաս) համաձայն դատավոր չի կարող նշանակվել այն անձը.

«1) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից.

2) որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով.

3) որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում.

4) որն ունի դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն.

5) որը չի անցել պարտադիր գինավորական ծառայություն, բացառությամբ այն անձանց, ովքեր ազատվել են նման ծառայությունից կամ ունեն տարկետում՝ օրենքով նախատեսված կարգով ու հիմքով»: Ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը սահմանում է կառավարությունը:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին ենթակա են բոլոր գործերը, բացառությամբ վարչական դատարանի ենթակայությանը վերաբերող գործերի (ՀՀ դատական օրենսգրքի 22 հոդվ.): Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով, վերահսկողություն է իրականացնում քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ վերաքննիչ դատարան:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում **իրապարակման պահից մեկ ամիս հետո**: Օրենքով կարող է նախատեսվել այդ ակտերի ուժի մեջ մտնելու նաև այլ ժամկետ: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը բացառիկ դեպքերում կարող են կայացման պահից դատարանի կողմից հայտարարվել ուժի մեջ մտած, եթե դա չանելը անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ կողմի համար: Այդ ակտերը կարող են բողոքարկվել նույն դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած ակտերի համար սահմանված կարգով:

Առաջին ատյանի դատարան է հանդիսանում նաև **վարչական դատարանը**, որին նվիրված է դատական օրենսգրքի 6 գլուխը (35-38 հոդվ.), և որը քննում է վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

Այս դատարանի դատական տարածքը Հանրապետության տարածքն է, ինչը հանդիսանում է վարչական դատարանի համար անկախության լրացուցիչ եական գործոն: Ընդ որում, նկատի ունենալով, վարչական դատարանի կողմից քննվող գործերի բնույթը, որոնք հիմնականում առնչվում են պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավական ակտերի, գործողության և անգործության վիճարկման հետ, օրենսդիրը նախատեսել է **անկախության այլ լրացուցիչ երաշխիքներ**: Օրինակ, որոշ գործերի քննությունը նախատեսված է կոլեգիալ կազմով: Այսպես, նշված օրենսգրքի 137 հոդվածի համաձայն, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը վարչական դատարանը **քննում և լուծում է կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով**, 142.3 հոդվածի համաձայն, հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը վարչական դատարանը քննում և լուծում է **կոլեգիալ՝ 3 դատավորի կազմով** և 145 հոդվածի (1-ին մաս 1-ին կետ) համաձայն, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների, թեկնածուների ու կուսակցությունների ընտրական ցուցակները, ցուցակներում ընդգրկված թեկնածուներին գրանցելու, չգրանցելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ վարչական ակտերի իրավաչափությունը վիճարկելու մասին գործերի, որոնք, ըստ էության, քննում եւ լուծում է վարչական դատարանը՝ կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով:

Վերաքննիչ դատարանների կարգավիճակին, կազմին և տեղաբաշխմանն առնչվող հարաբերությունները կարգավորված են ՀՀ դատական օրենսգրքի 39-49 հոդվածներով:

Վերաքննիչ դատարանի տարածքը Հանրապետության ողջ տարածքն է: **Նրա նստավայրը Երևան քաղաքն է:** Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիման վրա իր իրավասության սահմաններում վերանայում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների և վարչական դատարանի՝ **գործն ըստ էության լուծող դատական ակտերը:** Վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերը վերանայում է օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում: Միջանկյալ են համարվում գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, օրինակ՝ գործի վարույթի կասեցման, գործի վարույթի հետաձգման մասին որոշումները և այլն:

Հայաստանի Հանրապետությունում գործում է **երեք վերաքննիչ** դատարան՝ ա) վերաքննիչ **քաղաքացիական** դատարան՝ նախագահի և 15 դատավորի կազմով, բ) վերաքննիչ **քրեական** դատարան՝ նախագահի և 15 դատավորի կազմով և գ) **վարչական** վերաքննիչ դատարան՝ նախագահի և 6 դատավորի կազմով:

Դատական ակտը վերանայվում է վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններում: Այնհայտ է, որ այս դրույթն էապես տարբերվում է նախկին օրենսդրությամբ ամրագրված դրույթից, որի համաձայն՝ վերաքննիչ դատարանը կաշկանդված չէր վերաքննիչ բողոքների փաստարկներով և կարող էր գործը քննել լրիվ ծավալով:

Վերաքննիչ դատարանի դատական ակտերն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Վերաքննիչ դատարանի լիազորություններն ամրագրված են ՀՀ դատական օրենսգրքի 48 հոդվածով, համաձայն որի.

«1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անվտուխ թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով

նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ.

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը եւ հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը.

4) մասնակիորեն բեկանում է փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները, իսկ քրեական գործերով նաև քրեական վերաքննիչ դատարանին նոր ներկայացված ապացույցների հիման վրա նրա հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, եւ եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը եւ կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը»:

Ինչ վերաբերում է միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքների առնչությամբ վերաքննիչ դատարանի լիազորություններին, ապա վերջինս բերված բողոքների քննության արդյունքում մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որը **օրինական ուժի մեջ մտնում կայացման պահից:**

Դատավարության տեսակով պայմանավորված վերաքննության առանձնահատկությունները հիմնականում սահմանված են դատավարության օրենսգրքերով:

Վերաքննիչ դատարանի նախագահի լիազորությունները նման են առաջին ատյանի դատարանի նախագահի համար սահմանված լիազորություններին և միտված են դատարանի բնականոն աշխատանքը ապահովմանը:

Վճարելի դատարանի կարգավիճակին, կազմին և տեղաբաշխմանն առնչվող հարաբերությունները կարգավորված են ՀՀ դատական օրենսգրքի 8 գլխում (50-62 հոդվ.): Վճարելի դատարանի դատական տարածքը ՀՀ տարածքն է:

Հայաստանի Հանրապետությունում գործում է մեկ վճարելի դատարան (նստավայրը Երևան քաղաքն է), որ կազմված է վճարելի դատարանի նախագահից և **վճարելի դատարանի երկու պալատից**՝ 1) քրեական պալատ (կազմված է պալատի նախագահից և 5 դատավորից), 2) **քաղա-**

բացիական և վարչական պալատ (կազմված է պալատի նախագահից և 9 դատավորից):

Վճռաբեկ դատարանը բողոքի հիման վրա վերանայում է վերաքննիչ դատարանների դատական ակտերը: Ներկայումս օրենսդրությամբ նախատեսվում է բողոքներն ընդունելու միանգամայն նոր ինստիտուտ, որի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե նրա կարծիքով բողոքում հիմնավորված է, որ՝

«1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտը առերեսույթ (prima facie) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներին, կամ

3) ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերեսույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ, կամ

4) եթե առկա են նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներ» (50 հոդվ. 3-րդ մաս):

Վճռաբեկ դատարանը վերանայում է ստորադաս դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը և վերաքննիչ՝ դատարանի կողմից միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները: Միջանկյալ դատական ակտերը վերանայվում են օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում: Վերանայումն իրականացվում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վճռաբեկ դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Այդ ակտերը ենթակա են պաշտոնական հրապարակման՝ «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»:

Վճռաբեկ դատարանի լիազորություններն ամրագրված են ՀՀ դատական օրենսգրքի 60 հոդվածով, որի համաձայն.

«1) մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անվիճաբան թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ.

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը եւ հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը.

4) մասնակիորեն բեկանում է փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, եւ եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը եւ կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը.

6) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում վճռաբեկ դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված»:

Նույն հոդվածի համաձայն, միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀՀ դատական օրենսգրքով սահմանվել են բողոքարկման էական սահմանափակումներ: Այսպես, եթե նույն հիմքերով դատական ակտը չի բողոքարկվել վերաքննության կարգով, ապա այն այլևս չի կարող բողոքարկվել վճռաբեկության կարգով, եթե հիշյալ ակտերը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չեն: Անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի միայն իր համար անբարենպաստ մասի դեմ:

Վճռաբեկ դատարանի նախագահն, ի տարբերություն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների, օժտված է նաև մի շարք այլ լիազորություններով. օրենքով նախատեսված կարգով և դեպքերում կարգապահական վարույթ է հարուցում վճռաբեկ դատարանի

պալատի նախագահի կամ պալատի դատավորի նկատմամբ, վարում է Արդարադատության խորհրդի նիստերը և այլն:

Դատարանների անկախությունը երաշխավորված դարձնելուն նպաստում են նաև դատական իշխանության համակարգում ինքնակառավարման մարմինները, որպիսիք են՝ 1) **ՀՀ դատավորների ընդհանուր ժողովը** և 2) **դատարանների նախագահների խորհուրդը**: Այս երկու մարմինների լիազորությունները սահմանված են ՀՀ դատական օրենսգրքի համապատասխանաբար 71 և 72 հոդվածներով:

Այսպես, 71 հոդվածի համաձայն՝ **դատավորների ընդհանուր ժողովը** դատական իշխանության ինքնակառավարման բարձրագույն մարմինն է, որը կազմված է ՀՀ բոլոր դատավորներից: Վերջինիս որոշումները գերակա են դատարանների նախագահների խորհրդի որոշումների նկատմամբ: Նշված մարմնի իրավական կարգավիճակի մասին պատկերացում են տալիս վերջինիս հետևյալ լիազորությունները՝

1) քննարկում է դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարց, այդ թվում՝ Դատարանների նախագահների խորհրդի իրավասությանը վերապահված:

2) ընտրում է արդարադատության խորհրդի ինը դատավոր անդամներին:

Բավականին լայն լիազորություններով է օժտված **Դատարանների նախագահների խորհուրդը**, ինչը պայմանավորված է այն գործոնով, որ այն հանդիսանում է մշտապես գործող ինքնակառավարման մարմին և կոչված է իրականացնելու այնպիսի գործառնություններ, որոնք երաշխավորում են դատական իշխանության անկախությունը: Դրանք մանրամասն թվարկված են ՀՀ դատական օրենսգրքի 72 հոդվածում:

Բոլոր վերը նշված մարմինների առկայությունը հնարավորություն է տալիս դատարանների կազմակերպման ու գործունեության խնդիրները լուծելիս գերծ մնալ գործադիր իշխանության մարմինների հնարավոր ներազդեցությունից:

Սակայն, դատական իշխանության անկախության սկզբունքի առավել **նշանակալից ինստիտուցիոնալ երաշխիքը արդարադատության խորհուրդն** է, որի որոշ լիազորություններին արդեն անդրադարձանք՝ կապված դատական իշխանության սկզբունքների լուսաբանման հետ:

Այս ինստիտուտի համար հիմք հանդիսացավ արտասահմանյան երկրների փորձը: Մասնավորապես, նույնաբնույթ մարմիններ են գործում Ֆրանսիայում, Ռուսիայում, Հունաստանում (**որտեղ դրանք անվանվում են** մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդ), Իտալիայում (մագիստրատուրա), Բուլղարիայում (բարձրագույն դատական խոր-

հուրդ), Իսպանիայում (դատական իշխանության գերագույն խորհուրդ) և այլն:

Սկզբնական փուլում, (մինչև 2005թ. սահմանադրական փոփոխությունները) արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում էին Հանրապետության Նախագահի կողմից հինգ տարի ժամկետով նշանակված տասնչորս անդամ, որոնցից երկուսը՝ իրավաբան գիտնական, ինը՝ դատավոր, երեքը՝ դատախազ: Արդարադատության խորհուրդը գլխավորում էր Հանրապետության Նախագահը, իսկ արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը արդարադատության խորհրդի փոխնախագահներն էին:

Սակայն հետագայում հիմք ընդունվեց այն սկզբունքային դիրքորոշումը, ըստ որի հիշյալ պաշտոնյաների ընդգրկումը արդարադատության խորհրդի կազմում հակասում է դատարանների անկախության սկզբունքին:

Հետևաբար, 2005թ. Սահմանադրության փոփոխությունների արդյունքում դրա 94.1. հոդվածի համաձայն, արդարադատության խորհրդի կազմի մեջ են մտնում ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով, օրենքով սահմանված կարգով, ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Այս մարմնի միստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկելու իրավունքի, այսինքն՝ վերջինս օժտված չէ արդարադատության խորհրդի նախագահի կարգավիճակով և չպետք է միջամտի դրա գործունեությանը՝ վերջինիս որոշումները կանխորոշելու միտումով:

§ 3. Դատավորների սահմանադրաիրավական կարգավիճակը

ՀՀ Սահմանադրությունում առանձնահատուկ տեղ է տրվել դատավորների սահմանադրաիրավական կարգավիճակին՝ ամրագրելով այդ հարցին առնչվող մի շարք էական հիմնադրույթներ, որոնք **եղակետային նշանակություն ունեն** դատավորների կարգավիճակի, սոցիալական և նյութական ապահովության, գործունեության երաշխիքների, դատավարական լիազորությունների օրենսդրական կարգավորման համար: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի «Դատավորի կարգավիճակը» վերտառությամբ 2-րդ բաժինն ամբողջությամբ նվիրված է այդ հարցադրումներին՝ դատավորի աշխատավարձին, նրա արձակուրդին, կրթական ծրագ-

րերին մասնակցելու իրավունքին, վարքագծի կանոններին, ոչ դատական գործունեությանը, նրա այլ սոցիալական և նյութական երաշխիքներին և այլն:

Դատավորի սահմանադրական կարգավիճակի բնութագրիչներն իրենց արտացոլումն են ստացել դատական իշխանությանը նվիրված ՀՀ Սահմանադրության նորմերում, որոնց բովանդակությանն անդրադարձել ենք: Այսպես, դատավորի կարգավիճակը բնորոշող սահմանադրական դրույթներից են ա) դատարանների անկախությունը Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորելը, բ) դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը միայն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանելը, գ) դատավորների նշանակման, առաջխաղացման և կարգապահական պատասխանատվության հարցերի լուծման գործում արդարադատության խորհրդին վճռորոշ դեր վերապահելը, դ) դատավորի անփոփոխելիությունը, ե) դատավորի անկախությունը և նրա ենթարկվելը միայն Սահմանադրությանը և օրենքին դատավորի անձեռնմխելիության իրավունքը (94-97 հոդվ.) և այլն:

Նշված հիմնադրույթներն իրենց արտացոլումն են ստացել նաև ՀՀ դատական օրենսգրքում. ընդ որում, դրանք ուղեկցվել են որոշակի քրացուցիչ երաշխիքներով: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 84 հոդվածի համաձայն՝ «Դատավորը և նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության հատուկ պաշտպանության ներքո: Դատավորի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության մեթոդները ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում դատավորի կամ դատարանի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դատավորի, նրա ընտանիքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական շինությունների **անվտանգությունն ապահովելու ուղղությամբ**»: Նույն օրենսգրքի 86 հոդվածի համաձայն՝ դատավորն անհապաղ ընդունելության իրավունք ունի ՀՀ արդարադատության նախարարի և վճռաբեկ դատարանի նախագահի մոտ:

Դատավորների համար օրենսդրությամբ սահմանված է բարձր պաշտոնային դրույթաչափ: Այսպես, նշված օրենսգրքի 75 հոդվածի համաձայն (2-րդ մասի 5-րդ կետ), յուրաքանչյուր դատավորի վճարվում է հավելավճար՝ դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար. առաջին 5 տարիների համար՝ յուրաքանչյուր տարի 2-ական տոկոսի (ընդամենը 10 տոկոս), իսկ 6-րդ եւ դրան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար՝ 5-ական տոկոսի չափով: Աշխատավարձը և դրա նկատմամբ

սահմանված հավելավճարները չեն կարող պակասեցվել նրա պաշտոնավարության ընթացքում:

Օրենսդիրը հանգամանորեն կարգավորել է նաև դատավորի կողմից ոչ դատական գործունեությանը զբաղվելու, այդ գործունեության համար հատուցում ստանալու, նվերներ ստանալու, եկամուտների հայտարարագիր ներկայացնելու կարգն ու սահմանափակումները (ՀՀ դատական օրենսգրքի 92-96 հոդվածներ):

Դատավորի սահմանադրաիրավական կարգավիճակի բաղադրիչներից է նաև նրա վարքագծի կանոնների ինստիտուտը: Օրենսդիրը նպատակահարմար է գտել ամրագրելու դատավորի պատշաճ վարքագծին ներկայացվող առավել առանցքային պահանջները: Խնդիրն այն է, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի (15-րդ կետ) համաձայն, **դատավորները համարվում են բարձրաստիճան պաշտոնատար անձինք**, որոնց համար սահմանված են գործունեության որոշակի սահմանափակումներ և սոցիալական երաշխիքներ: Դրա հետ մեկտեղ, օրենքով ամրագրված են բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները և նվերներ ընդունելու վերաբերյալ դրույթները, որոնք տարածվում են նաև դատավորների վրա:

Դատական իշխանության անկախության, ինչպես նաև դատավորների կարգավիճակի երաշխավորման տեսանկյունից էական դերակատարում ունի նաև **դատական ծառայության ինստիտուտը**, որն իրականացվում է **Դատական ղեկարգումների միջոցով**: Նույն խնդիրների լուծմանն է ուղղված նաև **դատական կարգադրիչների** ծառայությունը: Այն պետական ծառայության հատուկ տեսակ է, ստեղծվել ու գործում է Դատական ղեկարգումների կազմում (ՀՀ դատական օրենսգրքի 196 հոդվ.): Այս ծառայության վերաբերյալ ամբողջական պատկերացում են տալիս դատական կարգադրիչի գործառույթները: Նույն այդ գործառույթները սահմանադրական դատարանում վերապահված է աշխատակազմին:

Այս պետական մարմինները, ըստ էության, հանդիսանում են դատական իշխանության ներքո գործող գործադիր իշխանության մարմիններ, բացառապես կոչված են ապահովելու դատարանների և դատավորների բնականոն գործունեությունը և գործնականում կոչված են բացառելու գործադիր իշխանության մարմինների, այդ թվում՝ կառավարության միջամտությունը և հնարավոր ներազդեցությունը դատական իշխանության մարմինների գործունեության վրա:

Այսպիսով, **դատավորի սահմանադրաիրավական կարգավիճակը** միտված է հնարավորինս երաշխավորելու և պաշտպանված դարձնելու

նշված անձանց, գերծ պահելու ապօրինի ազդեցություններից, ապահովելու պատշաճ նյութական և սոցիալական պայմաններ:

Միաժամանակ, այս հարցերի իրավական կարգավորմանը նվիրված սահմանադրական և օրենսդրական դրույթները ներառում են այնպիսի իրավական լուծումներ, որոնք կոչված են բացառելու դատական համակարգում հնարավոր կոռուպցիոն հանցագործությունները, վարքագծի կանոններից անհարկի շեղումները, երևույթներ, որոնք, վերջին հաշվով, անխուսափելիորեն հանգեցնելու են արդարադատության խաթարմանը: Թերևս, հենց այս նկատառումով է ՀՀ Սահմանադրության 97 հոդվածը ամրագրում ոչ թե դատավորների բացարձակ անկախություն, այլ՝ նրանց **ենթարկվելը Սահմանադրությանը և օրենքներին:**

§ 4. ՀՀ դատախազության կազմակերպման և իրավասության սահմանադրական հիմունքները

Դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանը մասնակցում են տարբեր պետական մարմիններ, որոնք այս կամ այն կերպ աջակցում են երկրում արդարադատության արդյունավետ իրականացմանը: Այդ տեսանկյունից հատկապես էական է **դատախազության** դերը:

Իր իրավական կարգավիճակով և գործունեության նպատակային նշանակությամբ **դատախազությունն ինքնուրույն պետական մարմին է**, որը չի մտնում դատական իշխանության համակարգի մեջ, ուստի չի կարող լինել դատական իշխանության ինստիտուտներից մեկը: Ըստ էության, կարելի է ասել, որ **դատախազությունը համարվում է դատական իշխանությանն աջակցող պետական մարմին:** Հենց այդ հանգամանքն է նկատի ունեցել օրենսդիրը, որ դատախազության վերաբերյալ նորմերը գետեղել է Սահմանադրության «Դատական իշխանությունը» գլխի տակ:

Միաժամանակ, դատախազության կարգավիճակի համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն իր խնդիրներով և լիազորությունների յուրահատկությամբ չի կարող լինել սուկ դատական իշխանությանն աջակցող մարմին: Վերջինիս սահմանադրական կարգավիճակից բխում է, որ այն հանդես է գալիս իրեն ինքնուրույն, **միասնական համակարգ**, որը ղեկավարվում է Հանրապետության գլխավոր դատախազի կողմից:

Մինչև 2005թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեով կատարված փոփոխությունները, ՀՀ Սահմանադրությունը, դատախազության կարգավիճակը բնորոշելիս, օգտագործում էր նաև «կենտրոնացված» եզրույթը: Սակայն, հաշվի առնելով պետական այդ մարմնի առնչությամբ միջազգային

իրավական մի շարք փաստաթղթերում ամրագրված դրույթները, նախապատվությունը տրվեց դատախազությունը սուկ միասնական համակարգ համարելուն, ինչը գործնականում հանգեցրեց դատախազության կառավարման կենտրոնացված համակարգի վերանայմանը՝ ընդլայնվեցին համակարգի առանձին ստորաբաժանումների լիազորությունները և դատախազության կառավարման մի շարք հարցեր հանձնվեցին կոլեգիալ մարմինների իրավասությանը: Այդպիսի կոլեգիալ մարմիններ են դատախազության կոլեգիան, էթիկայի և որակավորման հանձնաժողովները: Այսպես, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի (1-ին մաս) համաձայն, դատախազության գործունեության կազմակերպման հիմնարար հարցեր քննարկելու համար դատախազությունում գլխավոր դատախազի նախագահությամբ **գործում է կոլեգիա:** Այն կազմված է գլխավոր դատախազից և 12 անդամից, որոնք են գլխավոր դատախազի տեղակալները, գլխավոր դատախազության վարչությունների պետերը, գլխավոր դատախազի հրամանով նշանակվող այլ դատախազներ (22 հոդվ., 2-րդ մաս):

Ինչ վերաբերում է էթիկայի և որակավորման հանձնաժողովներին, ապա վերջիններս օժտված են որոշակի լիազորություններով՝ դատախազների նշանակման, առաջախաղացման, նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերում:

Այնուամենայնիվ, դատախազության համակարգը դեռևս պահպանել է կենտրոնացվածության նկատելի տարրեր, ինչն անհրաժեշտ է այդ համակարգի արդյունավետ գործունեության համար, մասնավորապես, այն կարող է նպաստել միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը, պատշաճ կատարողական կարգապահությանը և այլն:

Դատախազության կազմակերպման կարգը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» 2007թ. փետրվարի 22-ին ընդունված ՀՀ օրենքով: Այսպես, «Դատախազության մասին» օրենքի 8 հոդվածի համաձայն՝ դատախազությունը **կազմված է 1)** գլխավոր դատախազությունից, **2)** զինվորական կենտրոնական դատախազությունից, **3)** կայազորների զինվորական դատախազություններից և **4)** տարածքային դատախազություններից (Երևան քաղաքի դատախազություն, Երևան քաղաքի թվով 7 վարչական շրջանների դատախազություններ և մարզերի դատախազություններ):

Գլխավոր դատախազությունն իր հերթին կազմված է վարչություններից ու բաժիններից, որոնց ստեղծում և լուծարում է Հանրապետության գլխավոր դատախազը: Գլխավոր դատախազության վարչություններում և բաժիններում գործում են ավագ դատախազներ և դատախազներ: Գլխավոր դատախազությունում ևս գործում են ավագ դատախազներ և դատախազներ:

«Դատախազության մասին» օրենքով դատախազության կազմում չի գործում քննչական ստորաբաժանում, իսկ դատախազներն օժտված չեն քրեական գործեր քննելու լիազորությամբ:

ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի (2-րդ մաս) համաձայն՝ գլխավոր դատախազին Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ 6 տարի ժամկետով: Գլխավոր դատախազի տեղակալներին նշանակում և պաշտոնից ազատում է Հանրապետության Նախագահը՝ գլխավոր դատախազի առաջարկությամբ (55 հոդվ. 9-րդ կետ): Մյուս դատախազների նշանակման կարգն ամրագրված է «Դատախազության մասին» ՀՀ օրենքում (31-36 հոդվ.): Ընդ որում, բոլոր դատախազներին նշանակում և պաշտոնից ազատում է Հանրապետության գլխավոր դատախազը:

Դատախազության լիազորությունները սահմանված են ՀՀ Սահմանադրության 103 հոդվածով, որի համաձայն՝

- 1) հարուցում է քրեական հետապնդում.
- 2) հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինակաչության նկատմամբ.
- 3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.
- 4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարանում.
- 5) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.
- 6) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ:

Նշված լիազորությունների իրականացման կարգը հանգամանորեն սահմանված է ինչպես «Դատախազության մասին» ՀՀ օրենքով (24-29 հոդվ.), այնպես էլ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով և այլ օրենսդրական ակտերով:

Տարբեր պետություններում պետական մարմինների համակարգում դատախազության ունեցած դիրքը շատ խայտաբղետ է: Այսպես, կան երկրներ, որտեղ՝

ա) դատախազությունը գործում է արդարադատության նախարարության համակարգում (ԱՄՆ, Ֆրանսիա, Լեհաստան, Ճապոնիա, Նիդեռլանդներ).

բ) դատախազությունը գործում է դատարաններին առընթեր (Իսպանիա, Իտալիա).

գ) դատախազությունն ինքնուրույն համակարգ է և հաշվետու է խորհրդարանին (ՉԺՀ, ԿԺԴՀ).

դ) դասական իմաստով դատախազություն ընդհանրապես գոյություն չունի (Մեծ Բրիտանիա):

ՀՀ **դատախազության կարգավիճակը**, ըստ էության, ամբողջությամբ չի համապատասխանում վերոհիշյալ խմբերից որևէ մեկին: Այն գործում է իբրև առանձնացված համակարգ և հաշվետու չէ ինչպես Ազգային ժողովի, այնպես էլ որևէ այլ պետական մարմնի առջև: Տվյալ դեպքում, Ազգային ժողովին իր գործունեության մասին տարեկան հաղորդում ներկայացնելը («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5 հոդվ.) չի կարող համարվել, որպես հաշվետվության բաղադրիչ:

ՀՀ Սահմանադրությամբ դատախազության կարգավիճակը ներկայացված է խիստ ընդհանուր գծերով: Մասնավորապես, դատախազին քրեական հետապնդում հարուցելու իրավասությամբ օժտելը, ըստ էության, սահմանադրական նորամուծություն է: Հարկ է նկատել, որ այդ հասկացության վերաբերյալ գործող օրենսդրությունում դեռևս չկան հստակ ու սպառիչ սահմանումներ, ինչը վկայում է, որ հիշյալ նորամուծության վերաբերյալ առայժմ բացակայում են նաև բավարար տեսական վերլուծությունները:

ՀՀ դատախազության **կազմակերպման ու գործունեության հիմնարար սկզբունքները** սահմանված են դատախազության մասին օրենքի 5-7 հոդվածներում, որոնց վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու հետևյալ սկզբունքները՝ ա) դատախազության գործունեության հրապարակայնությունը, բ) դատախազի ինքնուրույնությունը և նրա գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը, գ) դատախազի ապաքաղաքականացվածությունը: Բնականաբար, վերոհիշյալ սկզբունքները սպառիչ չեն, դրանք պարզապես առավել համարժեքորեն են նախանշում դատախազության մարմինների կարգավիճակը:

Այսպես, «Դատախազության մասին» օրենքով պետությունը դատախազների համար երաշխավորում է ծառայողական պարտականությունների կատարման անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ (հոդվ. 57): Օրենսդրական զարգացումները վերջին շրջանում հանգեցրին նրան, որ **դատախազների պարագայում անհիմն համարվեց անձեռնմխելիության** ինստիտուտի որևէ տարր պահպանելը: Ընդ որում, ելակետ ընդունվեց այն գաղափարը, որ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար ծավալելու տեսանկյունից հարկի չէ անձեռնմխելիությամբ օժտել այն պաշտոնյաներին, որոնց համար ՀՀ Սահմանադրությամբ անձեռնմխելիություն սահմանված չէ:

§ 5. Փաստաբանությունն ու դատական իշխանությանն աջակցող մյուս մարմինները

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների համատեքստում արմատապես վերակառուցվել է նաև **փաստաբանության համակարգը**։ Գատական իշխանության շրջանակներում այս համակարգի ուսումնասիրությունը պայմանավորված է սոսկ այն նկատառումով, որ վերջինս առանցքային **դեր ունի արդարադատության աջակցության գործում**։ Ընդ որում, ներկայումս նկատվում է փաստաբանության փաստացի դերի ու իրավական կարգավիճակի նկատելի բարելավում։

ՀՀ Սահմանադրությունն ամրագրել է այս ինստիտուտի մի շարք հանգուցային նշանակություն ունեցող դրույթներ։ Մասնավորապես, դրա 20 հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք։ Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին։ Յուրաքանչյուր ոք ունի ձեռքակալման, խափանման միջոցի րնտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք»։

Փաստաբանության կարգավիճակն առավել հանգամանորեն սահմանված է «Փաստաբանության մասին» 2004թ. դեկտեմբերի 14-ի ՀՀ օրենքով։ Ըստ այդ օրենքի (3 հոդվ.)՝ «Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ։ Փաստաբանությունը գործում է անկախության, օրինականության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա»։ Նույն օրենքի 5 հոդվածի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով։

«Փաստաբանության մասին» օրենքի 7 հոդվածի համաձայն, փաստաբանությունը կազմակերպվում է փաստաբանների մասնագիտական, անկախ և ինքնակառավարվող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող **փաստաբանների պալատի միջոցով**։ Վերջինիս խնդիրներն են՝ ա) իր անդամների կողմից մասնագիտական գործունեություն իրականացնելու համար պայմաններ ստեղծելը, բ) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհա-

րաբերություններում, ինչպես նաև դատարանում իր անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, գ) իր անդամների մասնագիտական ուսուցման և վերապատրաստման կազմակերպումը, դ) իր անդամների կողմից փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ե) փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը և գ) օրենքով նախատեսված դեպքերում յուրաքանչյուրի համար հավասարապես մատչելի և արդյունավետ անվճար իրավաբանական օգնության իրականացումն ապահովելը։

Հիմք ընդունելով փաստաբանի գործունեության իրավասոցիալական մեծ նշանակությունը՝ օրենսդրությամբ վերջինիս համար ևս ամրագրված են **գործունեության լայն երաշխիքներ ու իրավական պաշտպանության** կարևոր լծակներ։ Այսպես, «Փաստաբանության մասին» օրենքի 21 հոդվածի համաձայն՝ փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է միայն Սահմանադրությամբ և օրենքներով, փաստաբանի վարքագծի կանոնագրքով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ։ Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք, կուսակցությունները և հասարակական միավորումները, զանգվածային լրատվության միջոցները **չեն կարող միջամտել փաստաբանական գործունեությանը**։ Փաստաբանը չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված պահանջներին համապատասխան իրականացրած ցանկացած գործողության, ներառյալ՝ իր մասնագիտական պարտականությունները բարեխիղճ կատարելու դատարանում, հետաքննության և այլ մարմիններում հայտնած կարծիքի և դիրքորոշման համար։

«Պետական իրավասու մարմինները պարտավոր են ձեռնարկել փաստաբանի պաշտպանության համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված միջոցներ, եթե իր մասնագիտական պարտականությունների հետ կապված՝ նրան կամ նրա ընտանիքի անդամներին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ, գույքի ոչնչացմամբ կամ այլ անօրինական գործողություններով» (Օրենքի 22 հոդվ.)։

Փաստաբանության համակարգի կարևոր բաղադրիչներից է **հանրային պաշտպանի ինստիտուտը**, ինչը կոչված է ապահովելու արիեստավարձ իրավաբանական անվճար ծառայություն՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածով նախատեսված դեպքերում։ Ընդ որում, նշված հոդվածը նախատեսում է անվճար իրավաբանական օգնություն՝ նաև փաստաբանների նախաձեռնությամբ։

Դատական իշխանությանը համագործակցող մարմինների կարգավիճակը հազվադեպ է արտացոլվում սահմանադրություններում: ՀՀ Սահմանադրությունում նույնպես բացակայում են դատական իշխանությանը համագործակցող այլ մարմինների կարգավիճակի մասին դրույթներ: Միաժամանակ, գործող օրենսդրության վերլուծությունը հնարավորություն է տալիս ներկայացնել այդ մարմինների համակարգը՝

1) դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն (ԴԱՀԿԵ):

2) հետաքննության մարմիններ.

3) քննչական մարմիններ.

4) քրեական պատիժն իրականացնող մարմիններ.

5) օպերատիվ-հետախուզական մարմիններ.

6) նոտարիատներ.

7) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններ:

Նշված համակարգը անցել է բարեփոխումների խիստ կարևոր փուլ, սակայն բազմաթիվ հարցադրումներ դեռևս իրենց սպառիչ լուծումը չեն ստացել:

Վերոհիշյալ մարմինների վերաբերյալ դրույթներ են պարունակում, օրինակ, Ռումինիայի (դատական ոստիկանության մասին), Սլովենիայի (նոտարիատի մասին), Բուլղարիայի (քննչական մարմինների մասին) և այլ պետությունների սահմանադրությունները:

Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության կայացման համար էական նշանակություն ունի *դատական ակտերի անշեղ կատարման* ինստիտուտի ձևավորման խնդիրը: Ընդ որում, «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի համաձայն, դատական ակտերի կատարումը ևս համարվում է արդարադատության փուլ:

Միաժամանակ, հարկ է նակտել, որ բազմաթիվ երկրներում հիշյալ պետական մարմինների (դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն, նոտարիատ և այլն) կամ համայնքային ծառայությունների մի մասն ամբողջովին կամ մասամբ լուծարվել է, իսկ դրանց գործառույթներն իրականացվում են ձեռնարկատիրության հիմունքներով: Կարծում ենք, այդ զարգացումները ևս կարող են դատահրավակյան բարեփոխումների հիմքում դրվել, քանզի միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը, նկատելիորեն թեթևացնում է պետական ապարատի անհարկի ծանրաբեռնվածությունը և այլն:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

§1. Սահմանադրական արդարադատությունը՝ սահմանադրական վերահսկողության համակարգում

Սահմանադրական արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում, որպես ինքնուրույն և ամբողջական համակարգ, կործում է 1996 թ. փետրվարից՝ ՀՀ սահմանադրական դատարանի կազմավորումից հետո:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության թիվ 1 հոդվածով ամրագրված՝ իրավական պետության գլխավոր բնութագրիչներից մեկը երկրի Հիմնական օրենքի գերակայության ապահովումն է՝ նադրկանց բնական իրավունքների ու ազատությունների երաշխավորման, ժողովրդավարության, արդարության ու քաղաքացիական համերաշխության սկզբունքներին համապատասխան: *Դա ենթադրում է*, որ պետական իշխանության բոլոր մարմինների գործողությունները պետք է համապատասխանեն սահմանադրական նորմերին ու սկզբունքներին, որոնք գործում են անմիջականորեն: Այդ է պահանջում Հայաստանի Հանրապետության *Սահմանադրության 6 հոդվածը*, որտեղ ամրագրված է. «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին»:

Սահմանադրության գերակայության ապահովման սկզբունքի կենսագործումը ենթադրում է.

Առաջին՝ բուն Սահմանադրության մեջ ամրագրել նրա ինքնապաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ, որոնք կապահովեն Սահմանադրության նպատակների, սկզբունքների ու նորմերի ներդաշնակություն, պետական իշխանության հստակ ու հավասարակշռված տարանջատում, դրա (իշխանության) թևերի հակակշիռների ու փոխադարձ զսպումների արդյունավետ համակարգ:

Երկրորդ՝ ձևավորել սահմանադրական վերահսկողության գործուն համակարգ, որում հստակեցված կլինեն սահմանադրական վերահսկո-

դություն և հսկողություն իրականացնող յուրաքանչյուր մարմնի կոնկրետ լիազորությունները:

Սահմանադրական վերահսկողության համակարգի գլխավոր առաքելությունն է՝ ապահովել Սահմանադրության գերակայությունն ու կայունությունը, երաշխավորել իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշռի պահպանումը և մարդու ու քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: **Սահմանադրական դատարանի կողմից** նման վերահսկողական գործառույթի իրականացումը **կազմում է սահմանադրական արդարադատության բովանդակությունը:**

Այդ գործառույթը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 93 հոդվածում, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի թիվ 1 հոդվածի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը»:

Խոսելով սահմանադրական վերահսկողության համակարգի մասին, անհրաժեշտ է առանձնացնել երկու սկզբունքային հարցադրում:

Առաջին. **սահմանադրական վերահսկողությունը չի սահմանափակվում** միայն սահմանադրական արդարադատության շրջանակներում: Այստեղ նկատի պետք է ունենալ նաև **իշխանության մյուս թևերի մարմինների դերը**: Սահմանադրական վերահսկողություն իրականացնող պետական մարմինների թվում են երկրի Նախագահը, օրենսդիր մարմինը, կառավարությունը, դատարանները:³⁴

Երկրորդ՝ սահմանադրական վերահսկողությունը՝ որպես տարբեր իրավասություն ունեցող մարմինների գործառույթների քարոզ ու միաժամանակ ներդաշնակություն պահանջող համակարգ, կարող է գոյություն

ունենալ և արդյունավետ գործել միայն **որոշ նախապայմանների առկայության դեպքում**: Դրանցից առավել կարևորներն են՝ հասարակական հարաբերությունների սահմանադրական համակարգավածությունը, երկրում ժողովրդավարական սկզբունքների արմատավորումը, վերահսկողության անկախությունը, հասարակության անդամների համար դրա մատչելիությունը, սահմանադրական վերահսկողության հրապարակայնությունը և այլն:

Հայտնի է, որ ցանկացած հասարակություն, այդ թվում՝ **նախասահմանադրական շրջանում**, ունեցել է կենսագոյի գրված ու չգրված կանոններ, ինչպես նաև այդ կանոնների պահպանության ամբողջական համակարգ: Դրա կարևոր բաղադրիչներն են եղել **հավատը (եկեղեցին)**, քաղոյական վարքագծի նորմերը, **ավանդույթները** (հասարակական, ընտանեկան), իրավական նորմերը և այլն:

Այս բոլորի հետ մեկտեղ, պետության **հիմնական օրենքի ընդունումը թելադրում է մոտեցման նոր կերպ**, նոր եղանակ: «Լերջինիս Լուսյունը հանգում է նրան, որ սահմանադրական վերահսկողության գործառնական խնդիրներին համապատասխան ձևավորվում են այն իրականացնող սահմանադրական ինստիտուտներ, ինչպես նաև դրանց կազմակերպական հատուկ կառուցվածք: Միայն այս դեպքում է հնարավոր համակողմանիորեն հաշվի առնել տվյալ հասարակության հիմնական բնորոշիչները և արմատավորել դրանց պահպանության գործուն համակարգ:

Սահմանադրական վերահսկողության մարմինները նման դեր իրականացնում են ամենից առաջ նրանով, որ իրենց լիազորությունների շրջանակներում ապահովում են Սահմանադրության գերակայությունը, յուրում են պետական իշխանության մարմինների սահմանադրական լիազորությունների հարցով առաջացած վեճերը: Այսինքն՝ սահմանադրական վերահսկողությունն այն միջոցն ու հնարավորությունն է, որն ապահովում է հասարակության կայունությունը, զարգացման հաջորդայնությունն ու առաջընթաց բնույթը:

Սահմանադրական վերահսկողությունը նաև խթան է պետական իշխանության համակարգն անընդհատ կատարելագործելու և հարավորտիս հասարակական հարաբերությունների բնույթին ներդաշնակելու համար: Այն **ձևավորում է նաև պետական մտածողության ճաշակ** ու անհրաժեշտ հասարակական գիտակցություն: Հստակ գործող սահմանադրական վերահսկողությունը ոչ միայն պետական իշխանության մարմիններին, այլև հասարակության յուրաքանչյուր անդամի մղում է իրավական, սահմանադրական գործելակերպի:

³⁴ Պետական իշխանության առանձին մարմիններ ոչ թե սահմանադրական վերահսկողության, այլ հսկողության գործառույթ են իրականացնում: Վերահսկողության դեպքում՝ վերահսկող սուբյեկտն իրավասու է ուժը կորցրած ճանաչել վերահսկվող ակտը: Հսկողությունը պասիվ բնույթ ունի: Այն նպատակ ունի ուշադրություն իրավիճել կամ առաջարկ անել հակասահմանադրական ակտի կամ դրա առանձին դրույթի (դրույթների) գործողության դադարեցման վերաբերյալ, իսկ ակտի գործողության կասեցումը կամ ուժը կորցրած ճանաչելն այդ ակտն ընդունողի կամ դրա համար հատուկ լիազորված պետական մեկ այլ մարմնի իրավասության հարցն է:

Նշված խնդիրների լուծման գործում վերջին երկու հարյուրամյակների ընթացքում բացառիկ կարևոր դեր վերապահվեց դատական սահմանադրական վերահսկողությանը, որի շնորհիվ Սահմանադրության գերակայության ապահովման կարևոր երաշխիք է դառնում սահմանադրական արդարադատությունը:

Սահմանադրական արդարադատության էությունը կայանում է նրանում, որ արդարադատության օբյեկտ են դառնում նորմատիվ իրավական ակտերն ու պետական իշխանության մարմինների գործողությունները, գնահատվում է դրանց համապատասխանությունը երկրի Հիմնական օրենքին և ապահովվում է այդ ակտերի ու գործողությունների սահմանադրականությունը:

Սահմանադրական արդարադատությունը ներառում է իրավական նորմերի այն համակարգը, որոնք կարգավորում են սահմանադրական վերահսկողությանը պայմանավորված հանրային բնույթի իրավահարաբերությունները և սահմանադրական դատավարության հիմք են հանդիսանում: Այլ կերպ՝ սահմանադրական արդարադատությունն իրականացվում է դատական սահմանադրական վերահսկողության միջոցով՝ հիմք ունենալով սահմանադրական իրավունքի և սահմանադրական դատավարության իրավանորմերի համակարգը:

Պայմանականորեն կարելի է առանձնացնել սահմանադրական արդարադատության պատմական զարգացման *հետևյալ փուլերը*. ա) 1803 - 1920թթ., բ) 1920 - 1940 թթ., գ) 1945 - 1990 թթ., դ) 1990 թվականից մինչև մեր օրերը:

Առաջին փաստաթուղթը, որն իրավական հիմք դրեց ընդհանուր իրավասության դատարանների համար լուծելու նաև նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերը, դա ԱՄՆ Գերագույն դատարանի որոշումն էր՝ «Ուիլյամ Մերբերին ընդդեմ Մեդիսոնի» գործով, որն ընդունվեց 1803թ. փետրվարի 24-ին: Այդ որոշմամբ, փաստորեն, հակասահմանադրական համարվեց 1789 թ. Կոնգրեսի ընդունած դատավարական ակտի այն մասը, որը վերաբերում էր Գերագույն դատարանին վերապահված լիազորություններին (պարբ. 13)³⁵:

Գասական բանաձևում է դարձել 1803թ. փետրվարի 24-ի որոշման առնչությամբ ԱՄՆ Գերագույն դատարանի նախագահ Ջոն Մարշալի այն միտքը, որ «Միայն և միայն դատական ճյուղի պարտականությունն է ասել, թե ինչ է իրենից ներկայացնում օրենքը: ... Սահմանադրությանն

³⁵ John E. Nowak, Ronald D. Rotunda, Constitutional Law, Fifth edition. West Publishing Co. 1995, էջ 4:

անհամատեղելի օրենքն անվավեր է»:³⁶ Այս միտքն այսօր դարձել է սահմանադրական վերահսկողություն իրականացնող ընդհանուր իրավասության դատարանների գործունեության գլխավոր նշանաբանը:

Երկրորդ փուլը համընկնում է դատական սահմանադրական վերահսկողության առաջին մասնագիտացված ինստիտուտի ստեղծման հետ: Դա 1920 թ. կազմավորված Ավստրիայի Բարձրագույն սահմանադրական դատարանն էր (ինչպես նաև նույն ժամանակաշրջանում ձևավորված Չեխոսլովակիայի սահմանադրական դատարանը):

Այս փուլը կարելի է նաև պայմանականորեն համարել նոր մտայնման փիլիսոփայության ծնակման փուլ: Ինչ վերաբերում է գործնականում նոր համակարգերի ներդրմանը, ապա կատարվեցին միայն առաջին, ու ինչ -որ տեղ նաև՝ ձախողված, փորձեր (այդ թվում նաև Չեխոսլովակիայում, ու հետագայում՝ Իսպանիայում):

Երրորդ փուլը հետպատերազմյան շրջանն է, երբ եվրոպական երկրներում գրեթե համատարած կազմավորվեցին սահմանադրական դատարաններ՝ առաջնահերթ խնդիր ունենալով ապահովել օրենքների ու նորմատիվ այլ ակտերի համապատասխանությունը հիմնական օրենքին:

Այս շրջանում *սոցիալիստական համակարգի երկրներում* դատական սահմանադրական վերահսկողության ինստիտուտներն չստեղծվեցին: Դրանք ավելի շուտ դիտարկվում էին որպես *քուրժուական շքեղություն*: Դրան հակառակ, եվրոպական երկրներից շատերը (Ավստրիա, Գերմանիա, Իսպանիա, Իտալիա և այլն) ստեղծեցին սահմանադրական դատարաններ՝ սահմանադրական արդարադատության առանցքային հարցը համարելով հասարակության զարգացման կայունության ապահովումն ու մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների երաշխավորված պաշտպանությունը: Բնականաբար, հետպատերազմյան շրջանում այս երկրների սահմանադրական դատարանները ոչ միայն օժտվեցին մեծ լիազորություններով, այլև քաղաքացիներն իրավունք ստացան ընդիույ սահմանադրական դատարանում պաշտպանելու իրենց իրավունքները:

Իշխանությունների տարանջատումը և հակակշիռների ու զսպումների հստակ համակարգի արմատավորումը, դրա օգնությամբ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների ներդաշնակ աշխատանքի ապահովումը ենթադրում էր նաև իշխանության տարբեր թևերի միջև լիազորությունների հարցով առաջացած վեճերի լուծման արդյունավետ համակարգի արմատավորում: Եվրոպական երկրների փորձը վկայում է, որ

³⁶ Այդ մասին մանրամասն տես Sylvia Snowiss, Judicial Review and the Law of the Constitution, Yale University Press, 1990, էջ 108-174:

հետպատերազմյան շրջանում ձևավորվող սահմանադրական վերահսկողության մասնագիտացված դատական մարմինների համար այս խնդիրը նույնպես եղել է առանցքայիններից մեկը:

Չորրորդ փուլը համընկնում է համաշխարհային ժողովրդավարական գործընթացների որակական նոր պիլքի՝ ԽՍՀՄ փլուզման, և նրա տարածքում ու Արևելյան Եվրոպայում բազմաթիվ նորանկախ պետությունների կազմավորման շրջանի հետ:

Արդեն իսկ նկատի ունենալով Արևմտյան Եվրոպայի երկրների փորձը, նորանկախ պետությունները պետական շինարարության ու ժողովրդավարական ինստիտուտների զարգացման առաջին քայլերից մեկը համարեցին սահմանադրական վերահսկողության ամբողջական համակարգերի ստեղծումը: Դա նաև պայմանավորված էր, գրեթե բոլոր երկրներում, զգալի դժվարություններով մշակված ու ընդունված հիմնական օրենքի հուսալի պաշտպանության, հասարակությունը ճգնաժամային կառավարման հարթությունից դիմամիկ զարգացման հարթություն փոխադրելու, պետական ու հասարակական կայունությունն ամրապնդելու անհրաժեշտությամբ:

Ինչու՞ 20-րդ դարի Եվրոպան չընդունեց դատական սահմանադրական վերահսկողության ամերիկյան մոդելը: Այս հարցին շատերն են փորձել պատասխանել: **Մի դեպքում**, պատասխանը փնտրվել է «օրենք» և «սահմանադրություն» հասկացությունների տարաբնույթ ընկալման հարթությունում: **Մեկ այլ դեպքում՝** շեշտը դրվել է դատարանակազմության և դատավորների գործելակերպի առանձնահատկությունների վրա (հատկապես կարևորելով դատարանի անկախության աստիճանի և դատավորների կողմից օրենքի սահմանադրականության հարցով վճիռ կայացնելու ունակության պարագաները): **Երրորդ դեպքում՝** առաջին պլան են մղվել տվյալ երկրում հասարակության առջև ծառայած խնդիրների բնույթն ու դրանց լուծմանը բնորոշ առանձնահատկությունները:

Այսպես, թե այնպես, **մեկ դարից ավելի** ամբողջ աշխարհում դատական սահմանադրական վերահսկողության լիազորություններն իրականացրեցին ընդհանուր իրավասության դատարանները: Սակայն 20-րդ դարի սկզբների հասարակական կյանքի վայրիվերումները մասնագետների շրջանում առաջ բերեցին մի շարք մտահոգություններ.

1. հնարավոր էր դառնում օրենքի միջոցով իշխանության չափազանց մեծ կենտրոնացում, ընդհուպ՝ բռնազավթում³⁷.

³⁷ Թերևս պատահական չէ, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջիններից Իտալիան (1948թ.) ու Գերմանիան (1949թ.) էին, որ նոր Սահմանադրությամբ հաստատագրեցին սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ինստիտուտների՝ դատարանների, ստեղծման հանգամանքը:

2. հասարակական կյանքի և դրան համապատասխան օրենսդրության արագ փոփոխման պայմաններում միայն կոնկրետ գործերով իրականացվող վերահսկողությունն **ակնհայտորեն անբավարար էր** սահմանադրական արդյունավետ վերահսկողության համար.

3. իշխանությունների տարանջատման պայմաններում հասարակական անկայունության գլխավոր խթանիչը դարձել էր իշխանության **տարբեր ճյուղերի պայքարը**՝ միմյանցից լիազորություններ կորզելու համար:

Բացի վերոհիշյալներից, այլ էր նաև մոտեցման մեթոդաբանությունը: Առաջին պլան մղվեց ոչ միայն կոնկրետ մարդու կոնկրետ շահերից բխող և միայն նրան առնչվող խնդրի լուծումը, այլ օրենսդրական դաշտի **սահմանադրականության** ապահովման միջոցով հասարակական առաջընթացի խթանման խնդիրը: Ելակետ ընդունվեց **կայուն պետություն, դիմամիկ առաջընթաց** կարգախոսը:

Եվրոպական համակարգում ըստ առաջնայնության առանձնացվեց երեք գերխնդիր.

ա) **նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովում** և դրա միջոցով իշխանության տարանջատված թևերի սահմանադրորեն ամրագրված գործառնական հավասարակշռության պահպանում,

բ) լիազորությունների հարցով իշխանության տարբեր մարմինների միջև առաջացած **վեճերի լուծման խնդիր** հատակ կանոնակարգում.

գ) մարդու սահմանադրական իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության առավել ամբողջական և հուսալի համակարգի ստեղծում:

Այլ է հարցը, թե ինչպես լուծվեցին այս խնդիրները դարասկզբին: Սակայն, իրականությունն այն է, որ նոր, հատուկ մասնագիտացված ու կենտրոնացված համակարգով սահմանադրական արդարադատության իրականացումն ապահովում է այդ խնդիրների աստիճանաբար, փուլ առ փուլ լուծումը, և այդ միտումն է ընկած այսօր համակարգի զարգացման ներքին տրամաբանության հիմքում:

Այս համակարգերին բնորոշ **առանձնահատկությունը միայն այն չէ**, որ վերահսկողությունն իրականացվում է հատուկ մասնագիտացված մարմնի միջոցով: Առանձնահատուկ կարևորություն է ստանում այն պարագան, որ էապես **փոխվում են նաև վերահսկման ձևն ու բնույթը**: Մասնավորապես, այս համակարգին են բնորոշ միայն նախնական, վերացական (արստրակտ) և պարտադիր վերահսկողությունը: Նման մոտեցման շնորհիվ է, որ սահմանադրական վերահսկողությունը ձեռք է բերում ամբողջական, համալիր բնույթ, և կարող է իրականացվել հետևողականորեն ու արդյունավետ: Դա առավել ևս կարևոր է այն պատճառով, որ մայրց-

մաքային իրավական համակարգում օրենքի հիմքում դրվում է ոչ թե ար- դարադատական նախադեպը, այլ՝ քաղաքական փոխհամաձայնություն- նը:

§ 2. Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը, կազմավորման կարգն ու անկախության երաշխիքները

Տարբեր երկրների սահմանադրական արդարադատություն իրակա- նացնող մասնագիտացված դատական մարմինների առջև Սահմանադ- րությամբ կամ օրենքներով դրվում են **տարբեր խնդիրներ**: Ընդհանուր առմամբ, այդ խնդիրները հանգում են հետևյալներին.

ա) օրենքների ու նորմատիվ այլ ակտերի սահմանադրականության հարցի որոշումը և ապահովումը:

բ) միջազգային պայմանագրերի սահմանադրականության որոշու- մը,

գ) Սահմանադրության և նորմատիվ այլ ակտերի պաշտոնական մեկնաբանումը,

դ) պետական իշխանության տարբեր մարմինների միջև սահմա- նադրական լիազորությունների շուրջ ծագած վեճերի լուծումը.

ե) կենտրոնական ու տեղական իշխանությունների միջև լիազորու- յունների շուրջ ծագած վեճերի լուծումը.

զ) մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը.

է) ժողովրդավարության պաշտպանությունը, մասնավորապես՝ ընտ- րությունների, հանրաքվեների, կուսակցությունների գործունեության սահմանադրականության ապահովումը և այլն:

Սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմիննե- րի կողմից նշված խնդիրների լուծումը մեծապես նպաստում է երկրում օ- րենսդրական քաղաքականության իրականացմանը, հասարակական արժեքների պահպանման, դրանց էփոյուցիոն զարգացման, հեղափոխա- կանության կանխման և իրավունքի գերակայության ապահովման խնդիրների արդյունավետ լուծմանը:

Սահմանադրական արդարադատությունը, ինչպես վեց, **սահմա- նադրական վերահսկողության հիմնական ձևն է**, և աշխարհի հարյուրից ավելի երկրներում նշված խնդիրների լուծումն իրականացվում է հատուկ մասնագիտացված դատարանների միջոցով: Պետական իշխանության

այս գործառնությով էլ պայմանավորված է սահմանադրական դատարա- նի իրավական կարգավիճակը:

«Ն սահմանադրական դատարանը հանդես է գալիս որպես դատա- կան իշխանության մարմին»³⁸ և Սահմանադրության 96-101 հոդվածնե- րում ամրագրված նորմերի ուժով իրականացնում է դատական սահմա- նադրական վերահսկողություն՝ Սահմանադրության 100 հոդվածով սահ- մանված լիազորությունների շրջանակներում:

Դատական սահմանադրական վերահսկողության առանցքային և, թերևս, ամենակարևոր հարցերից են **վերահսկման օբյեկտների հստա- կեցման և սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների որոշման հարցերը**:

Կախված այն բանից, թե ինչ օբյեկտների նկատմամբ է իրակա- նացվում **վերահսկողությունը**, պարզ է դառնում, թե ինչ խնդիրներ են դրված սահմանադրական դատարանի առջև:

Ճշտելով այն հարցի պատասխանը, թե **ովքեր են իրավասու դիմել սահմանադրական դատարան**, կարելի է ամբողջական պատկերացում կազմել տվյալ դատարանի կենսունակության մասին:

Միջազգային փորձը վկայում է, որ դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմիններ ունեցող երկրները կա- րելի է պայմանականորեն բաժանել **երեք խմբի**.

1. Որտեղ սահմանադրական դատարանների վրա է դրված՝

ա) օրենքների և այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցի լուծման խնդիրը.

բ) լիազորությունների հարցերով պետական իշխանության մարմին- ների միջև առաջացած վեճերի լուծումը.

գ) մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վե- րահսկողությունը:

2. Որտեղ իրականացվում են առաջին կետի միայն ա) և բ) ենթակե- տերով նախատեսված լիազորությունները:

3. Որտեղ սահմանադրական դատարանները հիմնականում իրակա- նացնում են առաջին կետի ա) և գ) ենթակետով նախատեսվող գործա- ռույթներ:

Առաջին խմբին կարելի է դասել հետևյալ երկրները. Ավստրիա, Գերմանիա, Իսպանիա, Լեհաստան, Պորտուգալիա, Իտալիա, Ռուսաս- տան, Սլովակիա, Հունգարիա, Սլովենիա, Վրաստան, Ադրբեջան և այլն:

³⁸ Առանձին երկրներում (օր. Իտալիան) սահմանադրական դատարանը չի դի- տարվում որպես դատական իշխանության մարմին և Սահմանադրության մեջ ներկայացվում է ինքնուրույն բաժնով:

Երկրորդ խմբին, որտեղ գլխավոր շեշտը դրվում է իշխանությունների գործունեության սահմանադրական հաշվեկշռի պահպանման վրա, կարելի է դասել Հունաստանը, Բուլղարիան, Թուրքիան, Կրդգստանը, Լիտվան և այլն:

Երրորդ խմբում, որում է նաև Հայաստանը, տեղ են գտել այն երկրները, որտեղ Սահմանադրությամբ էապես սահմանափակված է սահմանադրական դատարանների գործողության ոլորտը:

Նկատենք նաև, որ տարբեր խմբերի մեջ մտնող երկրների մեծ մասում հատուկ կարևորվում են ընտրությունների ու հանրաքվեների անցկացման, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների գործունեության օրինականության ու սահմանադրականության ապահովման խնդիրները, և դրանք դարձել են սահմանադրական վերահսկման առարկա:

Սահմանադրական դատարանի գործունեության արդյունավետությունը նախ պայմանավորված է նրանով, թե որոնք են **վերահսկման օբյեկտները**, ինչպիսի մոդալիտիվ ակտերի սահմանադրականության (առանձին երկրներում՝ նաև օրինականության) հարցեր պետք է քննության առնի սահմանադրական դատարանը:

Հիմնականում դրանք սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ ակտերն են, միջազգային պայմանագրերը, օրենքները, նորմատիվ այլ ակտերը, դատարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների որոշումները:

Սահմանադրական արդարադատության **ստանդարտին հարցերից է**, թե ու՞րքե՞ն են դատարանը դիմող սուբյեկտները և ի՞նչ կարգով են իրականացնում հատկապես վերացական (աբստրակտ) վերահսկողության իրենց իրավասությունը: Որպես կանոն, դրանց թվին են դասվում պետության գլուխը, պառլամենտը և դրա անդամների որոշակի մասը (սովորաբար 1/5-ը), կառավարությունը, ընդհանուր իրավասության դատարանները, քաղաքացիները, յուրաքանչյուր անձ:

Մինչև 2005թ. Նոյեմբերի 27-ի հանրաքվեով իրականացված սահմանադրական փոփոխությունները, ՀՀ Սահմանադրության 101 հոդվածով սահմանված էր, որ սահմանադրական դատարան կարող են դիմել՝ 1) Հանրապետության Նախագահը, 2) պատգամավորների առնվազն մեկ երրորդը, 3) Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով, 4) կառավարությունը՝ Սահմանադրության 59 հոդվածով նախատեսված դեպքում:

Ներկայումս պատկերն արմատապես փոխվել է, որին կանոնադրական ստորև:

Մասնագիտացված կամ կենտրոնացված սահմանադրական վերահսկողության դատական համակարգը տարբեր երկրներում հանդես է գալիս տարբեր անվանումներով սահմանադրական խորհուրդ (Ֆրանսիա, Մարոկկո, Մոզամբիկ, Ղազախստան), գերագույն դատարանի սահմանադրական պալատ (Հունաստան, Բուրկինա - Ֆասո, Գվինեա, Կոստա - Ռիկա), սահմանադրական հետաքննության խորհուրդ (Եթովպիա):

Որոշակի առանձնահատկություններ ունեն Պորտուգալիայի, ԱՄՆ-ի, Իրանի Իսլամական Հանրապետության և մի շարք այլ երկրների սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինները:

Սահմանադրական դատարանների արդյունավետ գործունեությունն ապահովելու համար քաջադիկ կարևոր նշանակություն ունի դրանց կազմավորման կարգը: Դա վերաբերում է նրան, թե ինչպիսին է **դատարանի անդամների ընտրության կարգը, քանի տարով են ընտրվում** կամ **նշանակվում** դատարանի անդամները և ինչ պահանջներ են ներկայացվում դատարանի **անդամներին**:

Սահմանադրական վերահսկողության մարմնի անդամները հիմնականում նշանակվում (կամ ընտրվում) են **իշխանության տարբեր քեթից**: Օրինակ, Հունգարիայում, Լեհաստանում, Պերուում, Սլովակիայում, Գերմանիայում, Լատվիայում, Բելառուսում սահմանադրական վերահսկողության մարմնի բոլոր անդամները նշանակվում են **պառլամենտի կողմից**, Ավստրիայում, Ալբանիայում, Հայաստանում, Ֆրանսիայում, Լիտվայում, Բենինում, Կրդգստանում, Ռումինիայում, Ռուսաստանում նշանակվում են **Նախագահը և պառլամենտը**, Բուլղարիայում, Գարոնում, Իտալիայում, Իսպանիայում, Լիտվայում, Մադագասկարում, Մոլդովայում, Ռեյնլանդիայում, Վրաստանում, Մոնղոլիայում, Թուրքիայում, Կոբեայում նշանակվում են **Նախագահը, պառլամենտը և դատական իշխանության ինստիտուտները** (այսինքն՝ ապահովվում է երեք իշխանությունների մասնակցությունը):

ՀՀ սահմանադրական դատարանի կազմավորման կարգը սահմանված է Սահմանադրությամբ: Դրա 94 հոդվածը սահմանում է. «Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով: ՀՀ Սահմանադրության 99 հոդվածի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կազմված է ինն անդամից»: 83 հոդվածն, իր հերթին, նախատեսում է. «Ազգային ժողովը՝

1) Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ նշանակում է սահմանադրական դատարանի հինգ անդամ:

2) սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեսուրյա ժամկետում, Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ սահմանադրական դատարանի կազմից նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ:

3) սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները, համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ...»:

Միաժամանակ, Սահմանադրության 55 հոդվածը (10-րդ կետ) սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահը «նշանակում է սահմանադրական դատարանի չորս անդամ, իսկ Ազգային ժողովի կողմից Սահմանադրության 83 հոդվածով (2-րդ կետ) սահմանված ժամկետում սահմանադրական դատարանի նախագահ չնշանակվելու դեպքում՝ սահմանադրական դատարանի կազմից սահմանադրական դատարանի նախագահ»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը (3 հոդվ.) նախատեսում է, որ. «1. Սահմանադրական դատարանի անդամ կարող է լինել 35 տարին լրացած, Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացին, որը չունի այլ պետության քաղաքացիություն, ունի բարձրագույն իրավաբանական կրթություն կամ սահմանադրական իրավունքի ոլորտում գիտական աստիճան, ինչպես նաև իրավունքի ասպարեզում առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ և տիրապետում է հայերենին:

2. Սահմանադրական դատարանի անդամ նշանակելիս Ազգային ժողովը և Հանրապետության Նախագահը պետք է հաշվի առնեն նաև սահմանադրական դատարանի անդամի թեկնածուի բարոյական հատկանիշները:

3. Սահմանադրական դատարանի անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, որը չպետք է խոչընդոտի

սահմանադրական դատարանի անդամի լիազորությունների իրականացմանը և չի կարող հարգելի պատճառ համարվել սահմանադրական դատարանի նիստերից բացակայելու համար:

4. Սահմանադրական դատարանի անդամը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ»:

Դրա հետ մեկտեղ, կան երկրներ, որտեղ սահմանադրական դատարանի անդամ կարող են լինել ոչ միայն իրավաբաններ, այլև իրավունքի գծով դասախոսներ, պետական ծառայողներ, քաղաքական գործիչներ, այդ թվում՝ ոչ իրավաբաններ:

Որոշ երկրներում ոչ իրավաբանների թիվն օրենքով սահմանվում է (Գաբոնում և Մալիում՝ 9-ից 2-ը, Եվեդիայում ոչ իրավաբան կարող է լինել դատավորների ընդհանուր թվի 1/3-ը): Բելգիայում սահմանադրական դատարանի անդամ կարող են դառնալ ոչ միայն դատավորներն ու իրավունքի պրոֆեսորները, այլև այն անձինք, ովքեր եղել են պատգամավոր: Իսկ, օրինակ, Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի անդամների համար մասնագիտական որևէ սահմանափակում չի դրվում:

Կարևոր է նաև դատարանի անդամների նշանակման ժամկետի և դատարանի կազմի քարմացման կարգի խնդիրը: Գործնականում տարբեր երկրներում կան տարաբևեռ լուծումներ:

Կան երկրներ, որոնք գտնում են, որ դատական սահմանադրական վերահսկողության անկախությունն ապահովելու նպատակով այն իրականացնող մարմնի անդամները պետք է ընտրվեն անփոփոխելիության սկզբունքով (ԱՄՆ, Ավստրիա, Բելգիա, Դանիա, Ռուսաստանի Դաշնություն, Եվեդիա, Իռլանդիա, Մալթա, Հայաստան և այլն):

Երկրների մյուս խումբը գտնում է, որ նշանակման կամ ընտրության ժամկետը պետք է լինի սահմանափակ (սովորաբար այն տատանվում է 7-15 տարվա միջակայքում): Այս երկրների թվին կարելի է դասել Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան և այլն: Նման երկրներում նաև նախատեսվում է աստիճանական քարմացման կարգ (սովորաբար՝ երեք տարին մեկ):

Տարբերությունից զատ, գրեթե բոլոր երկրներում կան նաև սահմանադրական դատարանի ձևավորման **նույնական լուծումներ**: Ամենից առաջ դա վերաբերում է դատարանի անդամներին ներկայացվող որոշ պահանջներին:

Առաջին՝ նրանք չեն կարող այլ վճարովի աշխատանքով զբաղվել (մի շարք երկրներում բացառություն է կազմում գիտամանկավարժական և ստեղծագործական աշխատանքը):

Երկրորդ՝ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի անդամը չի կարող լինել քաղաքական կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ (զգալի թիվ են կազմում նաև այն երկրները, որոնք օրենքով արգելում են սահմանադրական դատարանի անդամներին լինել արհմիության կամ որևէ այլ հասարակական կազմակերպության անդամ):

Երրորդ՝ եթե նույնիսկ նշանակումը չի կատարվում անփոփոխելիության սկզբունքով, միևնույնն է, կիրառվում է որոշակի տարիքային ցենզ (65-70 -ից բարձր և 35-40 -ից ցածր տարիք ունեցող անձը, որպես կանոն, դատարանի անդամ չի նշանակվում կամ ընտրվում): Բացի դրանից, զրեթե բոլոր երկրներում նրանց վրա տարածվում է **անձեռնմխելիության սկզբունքը**, և իրենց պարտականություններն ստանձնելուց առաջ նրանք նրդում են տալիս:

Երկրներից մեծ մասում միայն դատարանն է իրավասու պաշտոնից ազատելու իր անդամին՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում (Ալբանիա, Բուլղարիա, Գերմանիա, Լատվիա, Պորտուգալիա, Ռումինիա, Շվեյցարիա, Թուրքիա և այլն):

Երկրների մեկ այլ խմբում դատարանի եզրակացության հիման վրա վերջնական որոշումը կայացնում է նրանց նշանակված մարմինը (Սլովակիա, Հայաստան, նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետություն և այլն): Ֆինլանդիայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Լիտվայում դատավորին պաշտոնից ազատելու համար գործում է **պաշտոնանկության հասուկ կարգ:**

Սահմանադրական դատարանները սովորաբար լինում են **միապալատ կամ երկպալատ:**

Երկպալատ դատարանները հիմնականում բնորոշ են դաշնային կառուցվածք ունեցող երկրներին: Երկպալատ դատարանների պարագայում օրենքը կարգավորում է պալատների ձևավորման, դրանց նիստերում հարցերի քննարկման և լուծման կարգը, սահմանում է հարցերի այն շրջանակը, որոնց լուծման բացառիկ իրավունքը վերապահված է դատարանի ամբողջ կազմին՝ լիազուսար նիստին:

Սահմանադրական վերահսկողության դատական մարմինների կազմավորման առանձնահատկություններն իրենց հիմքում ունեն նաև այն ընդհանուր նպատակը, որ, յուրաքանչյուր երկրի հասարակական հարաբերությունների բնույթից ու զարգացման խնդիրներից ելնելով, նպատակ է դրվում ստեղծել անկախ, քաղաքական ներազդեցություններից զերծ, բարձր բարոյական սկզբունքներով առաջնորդվող մի մարմին, որն ի գործու լինի ապահովել երկրի հիմնական օրենքի ու իրավունքի գե-

րակայությունը, նպաստել հասարակության կայուն ու դինամիկ զարգացմանը:

Այս հարցը սահմանադրական արդարադատության **առանցքային հարցերից մեկն է**, որի լուծումը, սակայն, յուրաքանչյուր երկիր գտել է յուրովի:

§ 3. Դատական սահմանադրական վերահսկողության ձևերը

Մասնագիտացված ինստիտուտների կողմից դատական սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է տարբեր կերպ: Տարբեր են նաև վերահսկողության բնույթը, կարգը, առանձին ձևերի ներդաշնակումն ու գործադրման առանձնահատկությունները:

1. Նախնական վերահսկողություն: Սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմնի կողմից իրականացվող **նախնական** և **հետագա** վերահսկողությունն հասկացությունների տարանջատման հիմքում միայն պարզ ժամանակային գործոնը չէ, որ դրված է: Այդ տարբերակումն ունի յուրջ բովանդակային ընդգրկում: **Նախնական վերահսկողությունը ենթադրում է**, որ նորմատիվ ակտը, մինչև ուժի մեջ մտնելը, դառնում է սահմանադրական արդարադատության օբյեկտ՝ հնարավոր հակասահմանադրական իրավիճակները նախապես կանխելու նպատակով: Այստեղ հնարավոր է երկու տարբերակ. մի դեպքում՝ դատական սահմանադրական վերահսկողության օբյեկտ է նորմատիվ ակտի նախագիծը, մյուս դեպքում՝ արդեն ընդունված, սակայն դեռևս չստորագրված և ուժի մեջ չմտած նորմատիվ ակտը:

Առաջին տարբերակն առավելապես բնորոշ է, այսպես կոչված, ֆրանսիական - եվրոպական մոդելին: Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի գործունեության բնութագրիչ կողմը հենց օրգանական օրենքների նախագծերի նախնական պարտադիր վերահսկումն է:

Միջանկյալ փուլում նորմատիվ ակտի սահմանադրական վերահսկողության բնութագրիչ օրինակ կարող է ծառայել Ռումինիան: Այս երկրում օրենքի նկատմամբ սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է, երբ այն պառլամենտն ընդունել է, սակայն դեռևս Նախագահը չի ստորագրել ու չի մտել ուժի մեջ:

Մի շարք երկրներում նախնական վերահսկողություն իրականացվում է հատկապես պառլամենտի պալատների կանոնակարգերի նկատմամբ, որպեսզի օրենքի միջոցով իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշիռը չխախտվի:

Հայաստանի Հանրապետությունում նախնական վերահսկողություն իրականացվում է միայն միջազգային պայմանագրերի նկատմամբ:

2. Հետագա վերահսկողություն: Մինչև դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների ձևավորումը վերահսկողությունն իրականացվում էր միայն գործողության մեջ դրված կոնկրետ նորմատիվ ակտերի նկատմամբ: Հետագա վերահսկողության նպատակն է ապահովել իրավանդության տահմանադրականությունը *դրանց ուժի մեջ մտնելուց հետո* ցանկացած փուլում: Նման խնդիր կարող է առաջանալ ոչ միայն այն դեպքում, երբ քննության առարկա է որևէ իրավախախտում, այլև այն դեպքերում, երբ սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից այս կամ այն իրավական ակտի, դրա առանձին դրույթների սահմանադրականությունը ճշտելու անհրաժեշտություն է առաջանում:

Սահմանադրական արդարադատության ամերիկյան համակարգի առանձնահատկությունն այս հարցում այն է, որ հետագա վերահսկողությունն իրականացնում են բոլոր դատարանները, *միայն կոնկրետ գործեր քննելիս* և կայացրած վճիռը կամ որոշումը վերաբերում է տվյալ իրավադատությունների սուբյեկտներին՝ քննվող գործի կողմերին: Չնայած դրան, յուրաքանչյուր նախադեպ էական նշանակություն ունի հետագայում նմանատիպ գործեր քննելիս:

Հետագա վերահսկողության եվրոպական համակարգն ունի այն առանձնահատկությունը, որ կարող են լինել կամ չլինել ժամանակային սահմանափակումներ: Օրինակ, որպես կանոն, հանրաքվեների արդյունքներին առնչվող հարցերով սահմանադրական դատարան կարելի է դիմել արդյունքները հրապարակվելուց հետո մեկամսյա ժամկետում (Հայաստանում՝ յոթնօրյա ժամկետում):

Եթե նախնական վերահսկողության ժամանակ հիմնականում փոխհարաբերվում են իշխանության առանձին քեթեր, ապա հետագա վերահսկողությունը ներառում է հասարակության գրեթե բոլոր շերտերը և հնարավորություն է տալիս խորությամբ հաշվի առնել նաև իրավակիրառական պրակտիկայի առանձնահատկությունները: Սա հաճախ դառնում է նաև օրենսդրական պահանջ: Օրինակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածով (1-ին մաս) նախատեսված է, որ «1. Իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը զննատու է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան»:

Հետագա վերահսկողության գլխավոր առաքելությունը փաստորեն հանգում է նրան, որպեսզի *ապահովվեն հարափոփոխ հասարակական*

հարաբերությունների սահմանադրական ներդաշնակությունն ու կայունությունը:

3. Կոնկրետ վերահսկողություն: Ըստ բնույթի դատական սահմանադրական վերահսկողությունը կարող է լինել *կոնկրետ կամ վերացական* (աբստրակտ):

Կոնկրետ վերահսկողությունը կազմում է սահմանադրական արդարադատության ամերիկյան համակարգի հիմնական բովանդակությունը և ենթադրում է, որ նորմատիվ ակտի սահմանադրականության խնդիրն առնչվում է դատաքննության առարկա դարձած այս կամ այն կոնկրետ գործին: Եվրոպական շատ երկրներում նույնպես, առավել ևս, երբ գործում է անհատական սահմանադրական զանգառի համակարգը, սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է նաև կոնկրետ վերահսկողության կարգով:

4. Վերացական վերահսկողություն: Վերացական (աբստրակտ) վերահսկողությունը բնորոշ է միայն դատական սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգին: Այն ենթադրում է, որ նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը կարող է օրենքով նախատեսված իրավասու անձը բարձրացնել՝ անկախ որևէ կոնկրետ գործի քննությունից:

Սովորաբար վերացական վերահսկողության դեպքում, որպես կանոն, *դիմող սուբյեկտները պետական իշխանության մարմիններն են*: Սակայն կան երկրներ, որտեղ քաղաքացիները՝ ոչ միայն կոնկրետ գործով, այլ նաև որպես վերացական վերահսկողության սուբյեկտ, նույնպես կարող են դիմել (Բրազիլիա, Մալազիա): Եվրոպական շատ երկրներում, որտեղ քաղաքացին նորմատիվ ակտի սահմանադրականության հարցով անմիջապես սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի, նույնպես գործում է վերացական վերահսկողության համակարգը (Բուլղարիա, Պորտուգալիա):

Վերացական վերահսկողության դերն առավել կարևորվում է *անցումային փուլերում գտնվող երկրների համար*, երբ ակտիվ վերափոխվում է երկրի օրենսդրական համակարգը, ընդունվում է նոր Սահմանադրություն կամ կատարվում են էական սահմանադրական փոփոխություններ: Նորանկախ երկրների համար մեծ կարևորություն են ստանում նաև միջազգային հասարակական հարաբերություններին ինտեգրվելն ու միջազգային պայմանագրերի սահմանադրականության ապահովման խնդիրը:

Վերացական վերահսկողությունն *ունի կանխարգելիչ մեծ լիցք*՝ այն պաշտպանում է Սահմանադրության գերակայությունը նորմատիվ ակտերի նախապատրաստման, ընդունման ու գործադրման բոլոր փուլեր-

րում: Վերահսկողության այս ձևը երաշխիք է դառնում իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշռի պահպանման և դրանց (իշխանությունների) ներդաշնակ գործունեության ապահովման համար: Այս խնդրի արդյունավետ լուծման պայմաններից մեկը վերացական վերահսկողության կարգով սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ճիշտ ընտրությունն է:

Տարբեր են նաև վերացական վերահսկողության օբյեկտները: Այսօր դասական կարող է համարվել այն համակարգը, որում վերացական վերահսկողության օբյեկտ են պետական իշխանության բոլոր մարմինների կողմից ընդունվող նորմատիվ ակտերը:

5. Պարտադիր վերահսկողություն: Ըստ կարգի՝ դատական սահմանադրական վերահսկողությունը կարող է լինել **պարտադիր** կամ **ֆակուլտատիվ**:

Պարտադիր է այն վերահսկողությունը, երբ նորմատիվ ակտը սահմանված կարգով պարտադիր քննության է առնվում և որոշվում է դրա սահմանադրականության հարցը: Նման օրինակ կարող են ծառայել օրգանական օրենքների սահմանադրական վերահսկողությունը Ֆրանսիայում կամ միջազգային պայմանագրերինը՝ Հայաստանում:

Պարտադիր վերահսկողության օբյեկտ են հաճախ դառնում նաև պառլամենտի պալատների կանոնակարգերը, քանի որ դրանք պարունակում են իշխանության այլ թևերի հետ հարաբերությունները կարգավորող նորմեր:

Պարտադիր վերահսկողությունը հիմնականում կանխարգելիչ բնույթ ունի և նպատակ է հետապնդում նախապես բացառել առավել կարևոր նշանակության իրավական ակտերում հակասահմանադրական նորմի հնարավոր առկայությունը: Այս կարգը նույնպես մեծ կարևորություն ունի անցումային փուլում գտնվող երկրների համար:

Ի տարբերություն շատ երկրների, Հայաստանի Հանրապետությունում պարտադիր վերահսկողության օբյեկտ են պետության անունից կնքվող բոլոր միջազգային պայմանագրերը: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 6 հոդվածում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերը ուժի մեջ են մտնում միայն վավերացումից հետո: Վավերացման համար, մինչև Ազգային ժողով դիմելը, ՀՀ Նախագահին օրենքով սահմանված կարգով դիմում է սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանի որոշումը միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ, պայմանագրի վավերացման համար դառնում է պարտադիր նախապայման:

6. Ֆակուլտատիվ վերահսկողություն: Ֆակուլտատիվ վերահսկողությունն իրականացվում է, երբ նորմատիվ ակտի սահմանադրականության որոշման հարցով, սահմանված կարգով, ըստ ցանկության, լիմում է օրենքով դրա իրավունքն ունեցող սուբյեկտը:

Ֆակուլտատիվ վերահսկողությունը կարող է իրականացվել **միայն վերացական** վերահսկողության ձևով: Իր բնույթով ֆակուլտատիվ վերահսկողությունը կարող է լինել ինչպես **նախնական**, այնպես էլ **հետագա**:

Նախնական ֆակուլտատիվ վերահսկողությունը հիմնականում բնորոշ է այն երկրներին, որտեղ վերահսկողության օբյեկտ են պառլամենտի կողմից ընդունված, սակայն Նախագահի կողմից դեռևս չստորագրված ու ուժի մեջ չմտած օրենքները:

Հետագա ֆակուլտատիվ վերահսկողությունն արդյունավետ է այն դեպքում, երբ ժամանակային սահմանափակում չկա, և նման վերահսկողության հարցը կարող են առաջ քաշել հնարավոր մեծ թվով դիմող սուբյեկտներ:

Ֆակուլտատիվ վերահսկողության դեպքում **պարտադիր չէ դիմող սուբյեկտի համոզվածությունը** տվյալ ակտի կամ դրա առանձին դրույթի՝ Սահմանադրությանը չհամապատասխանելու վերաբերյալ: Հակառակում համոզված չլինելը նույնպես քավարար հիմք է հարցը սահմանադրական վերահսկողության մարմնում քննության առարկա դարձնելու համար:

Վերահսկողության այս ձևը հնարավորություն է տալիս առաջել ճկուն դարձնել սահմանադրական վերահսկողությունը, Սահմանադրության գերակայության ապահովման գործին ակտիվ մասնակից դարձնել իշխանության բոլոր թևերին:

7. Ըստ ձևի և ըստ բովանդակության վերահսկողություն: Սահմանադրական վերահսկողությունը կարող է լինել **ձևական** և **նյութական** կամ **բովանդակային**:

Առաջին դեպքում վերահսկման առարկա է դառնում իրավական ակտի ընդունման ձևի սահմանադրականության կամ օրինականության հարցը: Սահմանադրական վերահսկողության յուրաքանչյուր մարմին պարտավոր է անհրաժեշտ ուշադրություն դարձնել այս հանգամանքին: Հաճախ հակասահմանադրական կարող է լինել **նաև ակտի ընդունման գործընթացը**:

Առանձին երկրներ (օրինակ, Թուրքիան) հատուկ կարևորում են **ձևական վերահսկողության** պարագան: Թուրքիայի Սահմանադրության 148 հոդվածի համաձայն, սահմանադրական դատարանը քննում է օ-

րենքների, օրենքի ուժ ունեցող դեկրետների և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ընթացակարգային կանոնների սահմանադրականությունը:

Սակայն սահմանադրական լրացումներն ու փոփոխությունները պետք է քննվեն և ստուգվեն միայն դրանց ընդունման կարգի պահպանման տեսակետից: Սահմանադրական դատարանի կողմից չի կարող քննվել օրենքի ուժ ունեցող այն իրավական ակտերի (դեկրետների) սահմանադրականության հարցը, որոնք ընդունվել են արտակարգ իրավիճակներում, ռազմական դրության կամ պատերազմի պայմաններում:

Բովանդակային վերահսկողությունը վերաբերում է նորմատիվ ակտի էությանը: Խնդիրն այն է, թե դրանում բովանդակվող լուծումները որքանով են համապատասխանում Սահմանադրությամբ ամրագրված նպատակներին, սկզբունքներին, կոնկրետ լուծումների բնույթին: Սահմանադրական վերահսկողության մարմինների համար չափազանց կարևոր է, որպեսզի նման հարցերի քննության ժամանակ Սահմանադրությունը դիտվի որպես մի ամբողջություն՝ ներդաշնակ լուծումների մի համակարգ: Անկախ նրանից՝ սահմանադրական վերահսկողության մարմինն օժտված է Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման իրավասությամբ, թե՛ ոչ, վերահսկողության մասն ձևն ամուղղակիորեն ենթադրում է նաև Սահմանադրության մեկնաբանություն:

§ 4. Սահմանադրական դատարանի լիազորություններն ու դրանց իրականացման առանձնահատկությունները

Սահմանադրական դատարանի լիազորությունները, որպես կանոն, սահմանվում են Սահմանադրությամբ: Բոլոր լիազորությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի. ա) հիմնական կամ բնորոշ լիազորություններ, Բ) լրացուցիչ կամ անցուցյալ լիազորություններ:

Հիմնական լիազորությունների կարգին կարելի է դասել նորմատիվ ակտերի սահմանադրականության որոշումը, Սահմանադրության դրույթների պաշտոնական մեկնաբանումը, լիազորությունների հարցով իշխանության տարբեր մարմինների միջև ծագած վեճերի լուծումը, մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանությունը:

Ածանցյալ լիազորությունների թվին են դասվում ընտրությունների նկատմամբ վերահսկողությունը, տարբեր հարցերի առնչությամբ եզրակացություններ տալը, կուսակցությունների գործունեության առնչությամբ հարցերի քննությունը և այլն:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի լիազորություններն ամբողջությամբ ամրագրված են Սահմանադրության

100 հոդվածում: Համաձայն այդ հոդվածի՝ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով.

«1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.

2) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը.

3) լուծում է հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը.

3.1) լուծում է Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.

4) անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները.

5) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.

6) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին.

7) եզրակացություն է տալիս սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.

8) եզրակացություն է տալիս համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին.

9) օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին»:

Սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների լիազորությունների ու նրանց կողմից սահմանադրական արդարադատության իրականացման առանձնահատկությունները պայմանավորում են նաև **դատարան դիմելու կարգն** ու դրա առանձնահատկությունները: Դրա հետ մեկտեղ, կան ընդհանրություններ, որոնք բնորոշ են գրեթե բոլոր սահմանադրական դատարաններին: Դրանցից հիմնականն այն է, որ սահմանադրական դատարանները գործեր կարող են քննության ընդունել միայն **համապատասխան դիմումի առկայության դեպքում**: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101 հոդվածում ամրագրված է. «Սահմանադրական դատարանը գործը

քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում»։ Նույն հոդվածով նախատեսված է նաև, թե ինչ տիպի գործերով չվ կարող է դիմել սահմանադրական դատարան։

Համաձայն Սահմանադրության 101 հոդվածի. «Սահմանադրությանը և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել՝

«1) Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 2, 3, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

2) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

3) պատգամավորների առնվազն մեկ երեքերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

4) կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 6, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

5) տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով.

6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը.

7) դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով.

8) մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.

9) Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ և 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով»։

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածն ամրագրում է նաև դիմումին ներկայացվող պահանջները։ Համաձայն այդ հոդվածի՝ դիմումը սահմանադրական դատարան է ներկայացվում **գրավոր**՝ իրավասու անձի, անձանց կամ մարմնի կողմից ստորագրված։

Դրա մեջ պետք է նշվեն՝ սահմանադրական դատարանի անվանումը, դիմողի անունը (անվանումը), հասցեն, դիմողի ներկայացուցչի մասին անհրաժեշտ տվյալներ, եթե կան այդպիսիք, Սահմանադրության այն հոդվածը, որը սահմանադրական դատարան դիմելու իրավունք է տալիս. դիմողի

դիպրոտումն իր առաջարկած հարցի առնչությամբ՝ Սահմանադրության համապատասխան նորմերին կատարված հղումներով, սահմանադրական դատարանին ներկայացվող խնդրանքը՝ դիմումի էությունը, դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը։

Օրենքով սահմանվում է նաև (հոդվ. 28), թե դիմումին կից ինչ փաստաթղթեր կարող են ներկայացվել և ինչ կարգով ։

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածով նախատեսված է, որ սահմանադրական դատարան ներկայացված դիմումը կարող է դիմողի կողմից **հետ վերցվել** մինչև սահմանադրական դատարանի նիստում գործի դատաքննության սկսվելը։ Նման կարգն արդեն իսկ ենթադրում է, որ գործի քննությունն սկսելուց հետո, անկախ դիմողի ցանկության ու դիրքորոշման փոփոխության, սահմանադրական դատարանը պարտավոր է շարունակել գործի քննությունը և ընդունել որոշում։

Առանձին լիազորություններ իրականացնելիս սահմանադրական դատարանը հաշվի պետք է առնի գործի քննության կոնկրետ առանձնատեսությունները, ինչպես նաև օրենքով սահմանված ընդհանուր պահանջները։ Մասնավորապես, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածով (7-րդ մաս) նախատեսված է, որ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը քննելիս սահմանադրական դատարանը դիմումում առաջադրված հարցի առնչությամբ պարզում է դրանում նշված իրավական ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը, հիմք ընդունելով.

«1) իրավական ակտի պահանջվող տեսակը.

2) իրավական ակտն ընդունելու և գործողության մեջ դնելու Սահմանադրությանը նախատեսված կարգի պահպանվածությունը.

3) մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությանը ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը.

4) Սահմանադրությանը նախատեսված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման ապահովվածությունը.

5) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները.

6) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը»:

Այս պահանջներն էական նշանակություն ունեն նաև սահմանադրական դատարանի այլ լիազորություններ իրականացնելիս:

§ 5. Սահմանադրական դատավարության ընթացակարգն ու դրա առանձնահատկությունները

Սահմանադրական դատարանի **գործունեության կարգը** սահմանվում է օրենքով, իսկ առանձին հարցեր հստակեցվում են դատարանի կողմից հաստատված **կանոնակարգով**: Մասնավորապես, օրենքով սահմանվում է դիմումի ընդունման, դրա նախնական ուսումնասիրման, գործը քննության ընդունելու կամ այն մերժելու, զեկուցողների նշանակման և գործի քննության նախապատրաստման, դատական նիստի հրավիրման և գործերի քննության ընդհանուր կանոնները:

Հայաստանի Հանրապետությունում այս հարցերը կարգավորված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 6, 7 և 8 գլուխներում: Մասնավորապես, օրենքի 29, 30 և 31 հոդվածները սահմանում են սահմանադրական դատարանի կողմից դիմումի ընդունման, դրա նախնական ուսումնասիրման և գործի քննության ընդունման կարգը: Այսպես, օրենքի 31 հոդվածը սահմանում է, որ.

1. **Դիմումի նախնական ուսումնասիրման արդյունքներով սահմանադրական դատարանի անդամը (անդամները) սահմանադրական դատարանի նախագահին զեկուցում է (զեկուցում են) դիմումի ուսումնասիրման արդյունքների մասին:**

2. **Չզեկուցումից հետո սահմանադրական դատարանի կանոնակարգով նախատեսված ժամկետում սահմանադրական դատարանի նախագահը հրավիրում է սահմանադրական դատարանի նիստ՝ գործը քննության ընդունելու հարցը լուծելու համար:**

3. **Գործն ընդունվում է քննության, եթե առկա չեն հիշյալ օրենքի 32 հոդվածում նախատեսված գործի քննությունը մերժելու հիմքերը:**

4. **Անհատական դիմումներով գործը քննության ընդունելու կամ դիմումի քննությունը մերժելու կարգը սահմանվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-8-րդ մասերով:**

5. **Գործը քննության ընդունելու մասին որոշմամբ սահմանադրական դատարանը լուծում է նաև գործի դատաքննությունն սկսելու ժամանակի, գործով զեկուցող նշանակելու, գործի դատաքննության ընթացա-**

կարգի հարցերը, ինչպես նաև գործը դատաքննության նախապատրաստելու հետ կապված այլ հարցեր:

6. Սահմանադրական դատարանի ընդունած **որոշման մասին** դատավարության **կողմերը տեղեկացվում են եռօրյա ժամկետում:**

Սահմանադրական դատարանում գործի քննության դատավարական ընթացակարգը կարելի է բաժանել երկու փուլի.

1. դիմումի ընդունում և գործի քննության նախապատրաստում.

2. գործի դատաքննություն:

Առաջին խումբ աշխատանքներն իրականացվում են դատարանի կողմից ընդունվող **աշխատակարգային որոշումների** հիման վրա: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածով նախատեսված է, որ սահմանադրական դատարանը գործերի քննության նախապատրաստման և քննության հարցերով, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հետ կապված այլ հարցերով ընդունում է աշխատակարգային որոշումներ՝ **նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ** (բացառությամբ նույն օրենքով նախատեսված այլ դեպքերի):

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի՝ **գործի բոլոր հանգամանքները սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե՝** չսահմանափակվելով սահմանադրական դատավարության մասնակիցների միջնորդություններով, առաջարկություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ տարբեր երկրներում սահմանադրական դատարաններում **գործերի քննությունն ունի մի շարք առանձնահատկություններ**: Նախ, դա պայմանավորված է նրանով, թե ինչ սկզբունքներ են դրվում գործերի քննության հիմքում: Հայաստանի պառագայում դրանց թվին դասվում են գործի հանգամանքների ի պաշտոնե պարզման (հոդվ. 19), կոլեզիալության (հոդվ. 20), մրցակցության և իրավահավասարության (հոդվ. 21), հրապարակայնության (հոդվ. 22), անընդհատության (հոդվ. 23) սկզբունքները:

Գործերի քննության առանձնահատկություններին է նվիրված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 10 գլուխը: Դրանում թվարկված առանձնահատկությունների շարքում առանձնակի կարևորվում է օրենքի 68 հոդվածով (9-րդ մաս) սահմանված դրույթը, որի համաձայն Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետում նշված որևէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը **պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթները**:

քի սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել նաև այդ դրույթները: Իսկ համաձայն նույն հոդվածի 12-րդ մասի իր որոշումը սահմանադրական դատարանն իրավասու է տարածելու նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետևանքներ:

Տվյալ պարագայում Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմատիվ ակտի, ինչպես նաև այդ ակտի կատարումն ապահովող այլ նորմատիվ ակտերի վրա հիմնված՝ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում ընդունված և կատարված վարչական կամ դատական ակտերը ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

Օրենքի 68 հոդվածը (13-րդ մաս) սահմանում է նաև, որ քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այդ դրույթն իրավաբանական ուժի կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից: Այդ դրույթի կիրառման վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական և վարչական ակտերը օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման:

Սահմանադրական դատարանում գործի քննության ընթացքում առավել կարևորվում են կողմերի իրավունքները և պարտականությունները: Սահմանադրական դատավարության կողմերն իրավունք ունեն՝ ծանոթանալ գործի նյութերին, անել քաղվածքներ, ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստաթղթեր, գործի առնչությամբ ներկայացնել իրենց դիրքորոշումը, հարցեր տալ մյուս կողմին, նրա ներկայացուցչին, մասնագետին, վկային, միջնորդություններ հայտցել, առաջարկություններ անել և այլն:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածով սահմանված է նաև դատավարության ընթացքում կողմերի պարտականությունները: Մասնավորապես, նրանք պարտավոր են՝ ներկայանալ սահմանադրական դատարանի հրավերով, բացատրություններ տալ և պատասխանել հարցերին, սահմանադրական դատարանի պահանջով ներկայացնել գործին առնչվող նյութեր, ինչպես նաև ենթարկվել սահմանա-

նադրական դատարանում գործերի քննության կանոններին: Օրենքը սահմանում է նաև (հոդվ. 51), որ կողմերն իրավունք չունեն իրենց ելույթներն օգտագործել քաղաքական հայտարարությունների համար:

Օրենքով որոշարկված է նաև նիստի ընթացակարգը (հոդվ. 49), ըստ որի՝ նախագահողը, նշանակված ժամին, հավաստիանալով, որ նիստն իրավագործ է, բացում է այն և հայտարարում քննության ենթակա գործը: Նա պարզում է կողմերի ու հրավիրված անձանց ներկայությունը և ստուգում կողմերի ներկայացուցիչների լիազորությունները, այնուհետև քննարկման է դնում գործի քննությունն սկսելու հարցը: Եթե դատարանը հնարավոր չի համարում սկսել գործի քննությունը, որոշում է կայացնել այն հետաձգելու մասին:

Քննությունն սկսելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո նախագահողը կողմերին պարզաբանում է նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Սահմանադրական դատարանի նիստում գործի քննությունն սկսվում է զեկուցողի զեկույցով: **Ձեկուցողին հարցեր կարող են տալ սահմանադրական դատարանի անդամները:** Ձեկուցման ավարտից հետո սահմանադրական դատարանը լսում է գործի նյութերի հետազոտման կարգի մասին դատարանի անդամների կարծիքը, կողմերի առաջարկությունները և այդ կապակցությամբ ընդունում որոշում:

Օրենքով սահմանվում է նաև սահմանադրական դատարանում փորձագետների եզրակացությունների և վկաների քացատրությունների ներկայացման կարգը:

Սահմանադրական դատավարությանը բնորոշ առանձնահատկություններից է այն, որ դատավարության սուբյեկտը ոչ թե անձն է կամ իրավախախտման հանգամանքները, փաստերը, այլ նորմատիվ ակտը, օրենքի, որոշման դրույթները, որոնց սահմանադրականության բացահայտման խնդիրն է դրված: Նաև այն դեպքերում, երբ սահմանադրական դատարանն իր իրավասության շրջանակներում վեճերի հարց է քննում, ապա նրա խնդիրը ոչ թե գործի հանգամանքներին զննահատական տալն է, այլ գործողության սահմանադրականության որոշումը:

Սահմանադրական դատարանի հեղինակության և դատական գործընթացը բնականոն իրականացնելու համար «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 50 հոդվածը նախատեսում է, որ դատական նիստում կարգը խախտելու դեպքում նիստը նախագահողն իրավունք ունի խախտում թույլ տված անձին նախագաղտազանցելու, իսկ սահմանադրական դատարանը՝ անհրաժեշտության դեպքում, նշանակելու տուգանք՝ նույն հոդվածով սահմանված կարգով և չափով, կամ կարգը խախտողին հեռացնելու նիստերի դահլիճից:

§ 6. Սահմանադրական դատարանի ակտերը

Սահմանադրական արդարադատության մարմինների **որոշումների բնույթով** է մեծապես պայմանավորված պետական իշխանության համակարգում նրանց տեղն ու դերը, Սահմանադրության գերակայությունն ապահովելու հնարավորությունը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի, սահմանադրական դատարանն ընդունում է **որոշումներ և եզրակացություններ**՝ Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված ժամկետներում և կարգով: Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրամի մասի իրավական **ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ**:

Սահմանադրական դատարանը Սահմանադրության 100 հոդվածի 1-4-րդ և 9-րդ կետերով նախատեսված հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ, իսկ 5-8-րդ կետերով նախատեսված հարցերով՝ եզրակացություններ: Եզրակացությունները և 9-րդ կետով նախատեսված հարցերով որոշումներն ընդունվում են անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, մնացած որոշումները՝ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Սահմանադրական դատարանի որոշումը պարտադիր է կատարման համար և վերանայման ենթակա չէ: Այդ որոշումները, իրենց հերթին, լինում են երկու կարգի. **համընդհանուր բնույթի**, որոնք պարտադիր են բոլորի համար, և **միայն տվյալ գործի հետ առնչվող իրավասուբյեկտներին վերաբերող**:

Իրավական հետևանքների առումով էապես տարբերվում են սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները: Եթե սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից ու պարտադիր են կատարման Հանրապետության ողջ տարածքում, ապա **եզրակացությունները դառնում են կողմնորոշիչ**՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 5-8 կետերում նշված հարցերով որոշում կայացնելու համար:

Սակայն կարևոր է այն պարագան, որ դատարանի եզրակացությունը ոչ թե խորհրդատվական նշանակություն ունի, այլ դատարանի բացասական եզրակացության դեպքում դրան հակառակ որոշում չի կարող ընդունվել: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 102 հոդվածով սահ-

մանված է, որ եթե սահմանադրական դատարանի եզրակացությունը բացասական է, ապա **հարցը դուրս է գալիս իրավասու մարմնի բնությունից**:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը (հոդվ. 63 և 64) սահմանում է դատարանի թե՛ որոշման, և թե՛ եզրակացության ձևակերպման նկատմամբ որոշակի պահանջներ, ինչպես նաև հստակեցնում է տեղեկությունների այն շրջանակը, որոնք պետք է արտացոլվեն որոշման կամ եզրակացության մեջ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 8-րդ մասում սահմանված է, որ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով նախատեսված գործերով սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

1) **վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.**

1.1) **վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.**

2) **վիճարկվող ակտն անբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին:**

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

§ 1. Տեղական ինքնակառավարման հասկացությունը

Համաձայն Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիայի, տեղական ինքնակառավարումը ժողովրդավարական ցանկացած հասարակարգի հիմքերից է: «Տեղական ինքնակառավարման սկզբունքը,– ազդարարում է խարտիայի թիվ 2 հոդվածը,– պետք է ճանաչվի երկրի օրենսդրությամբ և հնարավորինս՝ երկրի Մահմանադրությամբ»:

Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունը Հայաստանը հռչակելով ժողովրդավարական պետություն, ամրագրում է նրա ժողովրդավարության կարևորագույն հիմունքները, որոնք իրենց արտահայտությունն են գտնում, առաջին հերթին, ժողովրդաիշխանության մեջ, իշխանությունների բաժանման (օրենսդրի, գործադրի և դատականի), գաղափարախոսական և քաղաքական բազմազանության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մեջ:

Մահմանադրությունը (11.2, 104-110 հոդվ.) ճանաչում և երաշխավորում է տեղական ինքնակառավարումը: Որպես սահմանադրական կարգի հիմքերից մեկը, տեղական ինքնակառավարումը, իշխանության կազմակերպման և իրականացման հիմնադար սկզբունքներից է, որը սահմանադրական մյուս սկզբունքների հետ մեկտեղ կազմում է մեր երկրում ժողովրդավարական կառավարման համակարգը: Դրա ճանաչումը ենթադրում է կառավարման ապակենտրոնացման համակարգի հաստատումը մեր երկրում:

Մահմանադրությունը, ինքնակառավարումն ամրագրելով որպես Հանրապետության **սահմանադրական կարգի տարրերից մեկը**, երաշխավորում է տեղական ինքնակառավարման և դրա մարմինների կազմակերպական առանձնացումը պետության կառավարման համակարգում: Այդ մարմիններն ընդգրկված չեն պետական իշխանության մարմինների թվում: Հետևաբար, ի տարբերություն տարածքային կառավարման մարմինների, դրանք չեն կարող դիտվել կառավարման պետական համակարգի կառուցվածքային ստորաբաժանումներ: Այդ պատճառով էլ պետական մարմինները տեղական ինքնակառավարման մարմինների հա-

մար հանդես չեն գալիս որպես վերադաս ատյան, ամբողջությամբ չեն դեկավարում դրանց գործունեությունը և օժտված չեն այդ մարմինների որոշումները վերացնելու իրավասությամբ:

Ճանաչելով և երաշխավորելով տեղական ինքնակառավարումը՝ Մահմանադրությունն ամրագրում է, որ տեղական ինքնակառավարումն իր լիազորությունների սահմաններում, ինքնուրույն է: Դա նշանակում է տեղական նշանակության հարցերի ոլորտի առանձնացում, որի շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինները գործում են ինքնուրույն և պատասխանատու են, առաջին հերթին, համայնքի բնակչության առջև:

Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքը սպառնչ չի թվարկում ինքնակառավարման տնօրինման հարցերը: Նրա դրույթների հիման վրա՝ ՀՀ համապատասխան օրենքները սահմանում են տեղական ինքնակառավարման **տնօրինման առարկաները**, ինչպես նաև սահմանագատում տեղական ինքնակառավարման ու պետական իշխանության մարմինների լիազորությունները:

Եվրոպական խարտիան տեղական ինքնակառավարումը կապելով տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույն գործունեության իրավունքի հետ, առաջին հերթին, մատնանշում է **տեղական մարմինների դերը տեղական ինքնակառավարման իրականացման գործում**: Դրա հետ մեկտեղ, Եվրոպական խարտիան սահմանում է, որ այդ իրավունքն իրականացվում է ոչ միայն ինքնակառավարման ընտրովի մարմինների կողմից, այլ նաև տեղական ինքնակառավարման գործառնությունների իրականացմանը քաղաքացիների ուղղակի մասնակցության ձևերի միջոցով:

ՀՀ օրենսդրությունը տեղական ինքնակառավարման իրավունքի հիմնական սուբյեկտ է ճանաչում **համայնքների բնակչությանը**: Մասնավորապես, ՀՀ Մահմանադրության 104 հոդվածն ամրագրում է, որ տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով լուծելու տեղական նշանակության հարցեր:

Դրա հետ մեկտեղ, Մահմանադրությունը ելնում է նրանից, որ տեղական ինքնակառավարման իրավունքն իրականացվում է ինչպես բնակչության **կամքի ուղղակի արտահայտման ձևերի**, այնպես էլ տեղական ինքնակառավարման **մարմինների** միջոցով:

Պետությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարման մարմիններ ընտրելու և դրանցում ըմտրվելու, այդ մարմիններին դիմելու քաղաքացիների իրավունքը: Դրա հետ մեկտեղ, **պետությունը ճանաչում**

և երաշխավորում է նաև տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը՝ նրա փազոցությունների սահմաններում և պարտավորվում է անիրաժեշտ պայմաններ ստեղծել տվյալ իրավունքի իրականացման համար:

Պետությունը, սեփականության այլ ձևերի հետ մեկտեղ, ճանաչում և պաշտպանում է նաև **համայնքային սեփականությունը**, որը հանդիսանում է բնակչության կողմից տեղական ինքնակառավարում իրականացնելու իրավունքի կենսագործման **տնտեսական հիմքը**:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ամրագրելով տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը հասարակության կառավարման համակարգում, միաժամանակ այն համարում է ժողովրդաիշխանության իրականացման ձև: Նրա 2 հոդվածի համաձայն, ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է. ա) անմիջականորեն (այսինքն՝ հանրաքվեների, ընտրությունների միջոցով), բ) պետական իշխանության մարմինների միջոցով, գ) **տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով**, դ) պաշտոնատար անձանց միջոցով: Այստեղից պարզորոշ երևում է, որ տեղական ինքնակառավարումը ժողովրդի կողմից իրեն պատկանող իշխանության իրականացման ձևերից մեկն է:

Իմի բերելով ասածը կարելի է սահմանել, որ **տեղական ինքնակառավարումը** դա **Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ճանաչված և երաշխավորված՝ բնակչության ինքնուրույն գործունեության ոլորտ է, որը նպատակառոչված է անմիջականորեն կամ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով տեղական նշանակության հարցերի լուծմանը՝ ելնելով բնակչության շահերից, նրա պատմական և այլ տեղական ավանդույթներից**:

Այս սահմանումը հնարավորություն է ընձեռում առանձնացնել ժողովրդաիշխանության համակարգում տեղական ինքնակառավարման տեղը բնութագրող հիմնական հատկանիշները.

ա) տեղական ինքնակառավարումն ունի իր հատուկ սուբյեկտները՝ ի դեմս համայնքի բնակչության,

բ) տեղական ինքնակառավարման մարմինները չեն հանդիսանում կառավարման պետական կառուցակարգի (մեխանիզմի) բաղկացուցիչ մասը: Դրա հետ մեկտեղ, տեղական ինքնակառավարումը և պետական իշխանությունը սերտորեն փոխկապակցված են, ունեն միասնական աղբյուր՝ ի դեմս ժողովրդի,

գ) տեղական ինքնակառավարումն ունի կառավարման հատուկ օբյեկտ՝ տեղական նշանակության հարցերը, որոնք թվարկված են տեղական ինքնակառավարման մասին օրենքում (16, 32-45 հոդվ.),

դ) տեղական ինքնակառավարումն իշխանության կազմակերպման և իրականացման ինքնուրույն ձև է:

Տեղական ինքնակառավարման **ինքնուրույնությունը** երաշխավորվում է պետության կողմից: Այն իր արտացոլումն է գտնում, մասնավորապես, հասարակության, պետության կառավարման համակարգում տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպական առանձնացվածության մեջ: Բացի դրանից, տեղական ինքնակառավարման ինքնուրույնության կարևոր արտահայտություն է նաև այն, որ պետությունը ճանաչում է նրա կողմից ֆինանսատնտեսական ռեսուրսների օգտագործման (տնօրինման) իրավունքը, այն ռեսուրսների, որոնք անհրաժեշտ են տեղական ինքնակառավարման գործառնությունների իրականացման համար:

§ 2. Տեղական ինքնակառավարման համակարգը

1. Տեղական ինքնակառավարման խնդիրների արդյունավետ լուծման նպատակով համայնքի բնակչության իշխանությունը պետք է իրականացվի համապատասխան կազմակերպական-իրավական ձևերով: ՀՀ օրենսդրությունը այդպիսի ձևեր է հռչակում **ընտրությունները, հանրաքվեները**, ինչպես նաև **տեղական ինքնակառավարման մարմինները** և այլ ձևեր:

Նշված կազմակերպական-իրավական ձևերի միասնությունը, փոխկապակցվածությունը, քարենպաստ զուգակցումը և գործառնությունների իրականացումը կազմում են տեղական ինքնակառավարման համակարգը: Այսինքն՝ եթե սահմանելու լինենք ինքնակառավարման համակարգը, ապա կարելի է ասել, որ այն **համայնքի բնակչության կամքի ուղղակի արտահայտման ձևերը, ինքնակառավարման մարմինների ամբողջությունը, միջհամայնքային միավորումներն են**, որոնց միջոցով համայնքի բնակչությունն իրագործում է սահմանադրությամբ ճանաչված և երաշխավորված իր իշխանությունը, սեփական շահերից, պատմական և պետական այլ ավանդույթներից ելնելով՝ լուծում տեղական նշանակության հարցերը:

Տեղական ինքնակառավարման համակարգի **առաջին տարրը** բնակչության կամքի անմիջական արտահայտման ձևերն են, մասնավորապես՝ **տեղական հանրաքվեն**, տեղական ինքնակառավարման մարմինների **ընտրությունները**, տեղական ինքնակառավարման մարմիններին **դիմելը**, խաղաղ, առանց զենքի **հավաքներ անցկացնելը** և այլն:

Տեղական հանրաքվեն տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության կարևոր հարցերով քվարկությունն է: Տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունի համապատասխան համայնքում առնվազն վեց ամսվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող 18 տարին լրացած յուրաքանչյուր ոք: Տեղական հանրաքվին հետ կապված հարաբերությունները իրենց մանրամասն կարգավորումն են գտնում «Տեղական հանրաքվեի մասին» 2002թ. ՀՀ օրենքով:

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների **ընտրություններին**, ապա ՀՀ ընտրական օրենսգրքը նշում է, որ **համայնքի ղեկավար** կարող է ընտրվել 25 տարին լրացած, ընտրություն անցկացնող համայնքի բնակչության ռեզիստորում մինչև քվարկության օրը առնվազն վեց ամիս հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր անձ:

Իսկ **ավագանու անդամ** կարող է ընտրվել 21 տարին լրացած, բնությունը անցկացվող համայնքի բնակչության ռեզիստորում մինչև քվարկության օրը առնվազն վերջին վեց ամիսը հաշվառված՝ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր անձ (132 հոդվ.):

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու **չեն կարող առաջադրվել** սահմանադրական դատարանի անդամները և դատավորները, ոստիկանության, ազգային անվտանգության, պաշտպանության մարմինների և դատախազության աշխատակիցները:

ՀՀ ընտրական օրենսգրքի 133 հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի **թեկնածու կարող են առաջադրել կուսակցությունները** իրենց համապատասխան տարածքային ստորաբաժանումների որոշմամբ, ինչպես նաև ընտրվելու իրավունք ունեցող քաղաքացիները՝ **ինքնաառաջադրման կարգով** այդ մասին ներկայացնելով դիմում (որի ձևը սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը) ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներ առաջադրված քաղաքացիների **գրանցման կարգը** սահմանվում է նույն օրենսգրքի 134 հոդվածով: Գրանցվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ: Առաջադրված թեկնածուի գրանցման հարցը քննարկելիս՝ հանձնաժողովի նիստին անձամբ ներկա գտնվելու իրավունք ունի առաջադրված թեկնածուն և նրա լիազոր ներկայացուցիչը:

Համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի **գրանցումը մերժելու** կամ **անվավեր ճանաչելու** մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումը կարող է վիճարկվել ՀՀ

վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետում:

Որոշումն անօրինական ճանաչելու մասին դատարանի վճռի հիման վրա նա (համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն) համարվում է գրանցված:

Համայնքի ղեկավարի ընտրության արդյունքներն ամփոփվում են ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի 143 հոդվածի: **Ընտրված է համարվում** այն թեկնածուն, որն ստացել է առավելագույն «կողմ» ձայներ: Եթե քվարկվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրված է համարվում, եթե ստացել է քվարկության մասնակիցների ձայների կեսից ավելին:

Համայնքի ղեկավարի ընտրությունն **անվավեր է ճանաչվում**, եթե քվարկության ընթացքում տեղի են ունեցել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, որից հետո ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշում է առանձին ընտրական տեղամասերում անցկացնել վերաքվարկություն, որից հետո նույնպես հնարավոր չի լինում շտկել այդ խախտումները:

Ընտրությունն **անվավեր ճանաչվելու** դեպքում, ընտրությունից 21 օր հետո, ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և թեկնածուների նույն կազմով անցկացվում է վերաքվարկություն:

Ինչ վերաբերում է համայնքի **ավագանու անդամի ընտրությունների արդյունքների ամփոփմանը**, ապա ՀՀ ընտրական օրենսգրքի 144 հոդվածը նշում է, որ ընտրված են համարվում առավելագույն քվոյ կողմ քվարկված քվեաթերթիկներ ստացած համայնքի ավագանու անդամի թեկնածուները: Կողմ քվարկված քվեաթերթիկների հավասարության դեպքում ընտրված թեկնածուին որոշելու համար նրանց միջև անցկացվում է **վիճակահանություն** կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

Համայնքի ավագանու անդամների ընտրության արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղական ինքնակառավարման բնակչության մասնակցության կարևորագույն ձև է տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց **պաշտոնատար անձանց դիմելը**:

Որպես կանոն, տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելու բնակչության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին հասցեագրված առաջարկությունների, դիմումների, բողոքների և միջնորդությունների ընդհանրացված անվանումն է: ՀՀ Սահմանադրության 27.1

հողվածն անրագրում է, որ յուրաքանչյուր ուրի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և **ուղչամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք**: Սահմանադրական այս իրավունքը մանրամասն կարգավորվում է «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքով և «Կարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով:

Բնակչության կողմից տեղական ինքնակառավարման **անմիջական իրականացման ձևերից է ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելը**: Պետք է նշել, որ սահմանադրական այս իրավունքը (հոդվ. 29) մինչև 2005թ. սահմանադրական հանրաքվեի քաղաքական բնույթ ուներ, այսինքն՝ պատկանում էր միայն ՀՀ քաղաքացիներին: Սահմանադրության փոփոխություններից հետո այն դասվեց անձնական (քաղաքացիական) իրավունքների շարքը:

Այս ոլորտում ծագող հարաբերություններն իրենց մանրամասն կարգավորումն են գտել «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում:

2. Համայնքի բնակչությունը տեղական նշանակության հարցերի մեծ մասը լուծում է տեղական **ինքնակառավարման մարմինների միջոցով**, որոնք հանդիսանում են տեղական ինքնակառավարման համակարգի հիմնական տարրը: Դրանց իրավական փնտրելի առանձնահատկությունն այն է, որ **առաջին**՝ նրանք ներառված չեն պետական իշխանության մարմինների համակարգում, և **երկրորդ**՝ տեղական ինքնակառավարման մարմիններին պետական առանձին լիազորություններով օժտելու դեպքում, այդ մարմինները կարող են մասնակցել պետական գործառնությունների իրականացմանը:

Տեղական ինքնակառավարման մարմինների **կառուցվածքը** հիմնվում է նրանց կազմակերպման և գործունեության **ընդհանուր սկզբունքների վրա**: Այդ սկզբունքներին համապատասխան տեղի է ունենում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորումը, իրականացվում է տեղական նշանակության հարցերի լուծմանը նպատակամղված նրանց գործունեությունը: Վերոհիշյալ սկզբունքների թվին են պատկանում՝ **տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման և գործունեության ժողովրդավարական բնույթի և ինքնուրույնության սկզբունքները**:

Տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման և գործունեության **ժողովրդավարական բնույթը** դրսևորվում է, առաջին հերթին, նրանց **ձևավորման գործընթացում**: ՀՀ օրենսդրությունը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները ձևավորվում են, առաջին հերթին, բնությունների ընթացքում: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ համայնքում ընտրվում են տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինները՝ ավագանին և համայնքի ղեկավարը: ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև համայնքում վեց ամսվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ուր **ի-րավունք ունի ակտիվորեն մասնակցելու ինչպես տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը, այնպես էլ տեղական նշանակության հարցերի լուծմանը**:

Այդ իրավունքներն իրացվում են տեղական ինքնակառավարման իրականացմանը հավասար մասնակցության, տեղական ինքնակառավարման մարմինները ընտրելու և դրանցում ընտրվելու, այդ մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց դիմելու, ինչպես նաև նրանց տնօրինական ակտերն անվավեր ճանաչելու նպատակով վարչական դատարանի հայց ներկայացնելու ճանապարհով:

Տեղական նշանակության հարցերի լուծման ուղղությամբ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն ունի իր առանձնահատկությունները: Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի համաձայն, համայնքի ղեկավարը հաշվետու է ինչպես անմիջականորեն բնակչությանը, այնպես էլ ավագանուն:

ՀՀ օրենսդրությունը սահմանում է տեղական նշանակության հարցերի լուծման գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության ապահովման **իրավական երաշխիքները**: Դրանցից կարևորագույնը տեղական նշանակության հարցերի լուծման գործում **նրանց սեփական իրավասությամբ օժտելն է**:

Տեղական նշանակության հարցերի լուծման գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունն ապահովելու կարևոր երաշխիք են նաև համայնքային սեփականություն հանդիսացող օբյեկտները, տեղական ֆինանսները և համայնքի բնակչության պահանջներին բավարարմանը ծառայող այլ սեփականությունը:

3. Տեղական ինքնակառավարման համակարգի **հաջորդ տարրը միջհամայնքային միավորումներն են**: Համայնքների որոշակի խնդիրների համատեղ լուծման և ծախսերի նվազեցման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինները կարող են ստեղծել միջհամայնքային միավորումներ: Դրանք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ:

Միջհամայնքային միավորումներն *ստեղծվում են համայնքների ղեկավարների կողմից պայմանագրեր կնքելու միջոցով*, որոնք ենթակա են համայնքների ավագանու հաստատմանը: Միջհամայնքային միավորումը ղեկավարելու նպատակով ստեղծվում է համայնքների ղեկավարներից բաղկացած միավորման խորհուրդ, որն իր կազմից ընտրում է խորհրդի նախագահ: Խորհրդի նիստն իրավագոր է, եթե ներկա է խորհրդի անդամների կեսից ավելին: Որոշումները կայացվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ (Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 78, 79, 80 հոդվածներ):

§ 3. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները

Տեղական նշանակության հարցերի լուծման ուղղությամբ բնակչության ինքնուրույն գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է տեղական ինքնակառավարման մարմինների *լիազորությունների ծավալից*:

Տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենսդրությամբ սահմանված լիազորությունները թույլ են տալիս որոշելու նրանց գործունեության սահմանները, պատասխանատվության և վերահսկելիության շրջանակները, ինչպես նաև օրինականությունը:

Այդ լիազորությունները հնարավորություն են բնօրինակում համայնքի տարածքում իշխանության միասնական համակարգի ձևավորման համար: Բացի դրանից, լիազորությունների սահմանման միջոցով իրականացվում է հասարակական հարաբերությունների պետաիրավական կարգավորումը, որոնց մասնակից են տեղական ինքնակառավարման մարմինները:

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն ունեն իրենց *բնորոշ գծերը*: Անենից առաջ, դրանք ամրագրվում են Սահմանադրությամբ և օրենքով և հանդիսանում են նրանց իրավունքների և պարտականությունների միասնությունը, որը նրանք պարտավոր են իրականացնել: Տեղական ինքնակառավարման մարմինների ցանկացած լիազորություն իրագործվում է *վարչահրամայական* բնույթի իշխանական գործողությունների կատարման միջոցով: Այդ հատկանիշը պայմանավորված է նրանով, որ տեղական ինքնակառավարման մարմինները տեղական նշանակության հարցերը լուծելու համար օժտված են *սեփական իշխանական* լիազորություններով:

ՀՀ օրենսդրությունը *տեղական նշանակության* հարցերի շարքն է դասում համայնքային սեփականության կառավարումը, տեղական բյուջեի ձևավորումը, հաստատումը և կատարումը, տեղական հարկերի և տուրքերի սահմանումը և այլն (Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 5 և 6 գլուխներ):

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն ստորաբաժանվում են *սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների*:

Սեփական լիազորություններն իրենց հերթին բաժանվում են *պարտադիր և կամավոր* լիազորությունների:

Պարտադիր և պետության կողմից փոխանցված լիազորությունները ենթակա են համայնքի կողմից առաջնահերթությամբ և օրենքով սահմանված կարգով կատարման:

Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրականացնել նաև համայնքի շահերին վերաբերող և օրենքին չհակասող ցանկացած գործունեություն:

Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է տեղական ինքնակառավարման մասին օրենքով կամ կառավարության որոշմամբ, որոնք սահմանազատում են ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

Համայնքի ավագանին իր գործունեությունն իրականացնում է իր իսկ սահմանած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ գումարվող *նիստերի միջոցով*: Նիստերում կարող է քննարկվել համայնքի շահերը շոշափող ցանկացած հարց, որի վերաբերյալ ավագանին կարող է ընդունել որոշումներ և ուղերձներ (11 հոդվ.):

Ավագանու նիստը վարում է համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը, որն ունի խորհրդակցական ձայնի իրավունք: Նիստն իրավագոր է, եթե ներկա է ավագանու անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Համայնքի ավագանին նիստին կարող է հրավիրել և լսել ցանկացած անձի: Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները: Որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

Տեղական ինքնակառավարման մասին օրենքը սահմանում է *ավագանու լիազորությունները*, համաձայն որի ավագանին՝ ա) ընդունում է իր կանոնակարգը, բ) վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների

օգտագործումը, գ) որոշում է կայացնում առաջարկություն ներկայացնել մարզպետին, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետին, համայնքի ղեկավարին պաշտոնառնակ անելու վերաբերյալ, իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ (հոդվ. 16):

Օրենքի 17 հոդվածի համաձայն՝ համայնքի ավագանին իր անդամների ընդհանուր թվի ոչ պակաս, քան *մեկ երրորդի գրավոր պահանջով քննարկում է համայնքի ղեկավարի պաշտոնանկության վերաբերյալ առաջարկությունը*: Այդ առաջարկությունը համայնքի ավագանին կարող է անել համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջե փաստացի ստացված *եկամուտների սահմաններում պարտադիր լիազորությունները չկատարելու* կամ պետության պատվիրակված լիազորություններն անբավարար կատարելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ անվավեր են ճանաչվել համայնքի ղեկավարի՝ օրենքին կամ իրավական այլ ակտերին հակասող մի շարք որոշումները, կամ առկա է համայնքի ղեկավարի կողմից ավագանու որոշումները պարբերաբար խախտելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումը: Առաջարկությունն ընդունվում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Որոշումն ընդունվելուց հետո *եռօրյա ժամկետում ուղարկվում է մարզպետին*: Վերջինս եռօրյա ժամկետում պաշտոնանկության մասին առաջարկությունը ներկայացնում է կառավարություն՝ կցելով իր կարծիքը:

Համայնքի ղեկավարի պաշտոնանկության վերաբերյալ առաջարկությունը համայնքի ավագանին կարող է քննարկել ոչ շուտ, քան համայնքի ղեկավարի պաշտոնն ստանձնելուց *մեկ տարի անց*:

Դրա հետ մեկտեղ, համայնքի ղեկավարը կարող է պաշտոնառնակ արվել կառավարության կողմից նաև *մարզպետի նախաձեռնությամբ*՝ նույն, վերը նշված հիմքերով: Մարզպետը կառավարություն է ներկայացնում համայնքի ղեկավարի պաշտոնանկության մասին առաջարկությունը, որի պատճենն ուղարկում է համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը մարզպետի առաջարկության պատճենն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում գումարում է համայնքի ավագանու արտահերթ նիստ: Համայնքի ավագանին իր նիստում քննարկում է մարզպետի առաջարկությունը՝ համայնքի ղեկավարի պաշտոնանկության վերաբերյալ և կայացնում որոշում, որը ներկայացնում է կառավարություն: Վերջինս սահմանված կարգով քննարկում է համայնքի ղեկավարի պաշտոնանկության վերաբերյալ մարզպետի առաջարկությունը:

Կառավարությունը օրենքով նախատեսված դեպքերում կարող է համայնքի ղեկավարին պաշտոնառնակ անել *սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա*:

Տեղական նշանակության խնդիրների լուծման գործում լայն լիազորություններ ունի նաև *համայնքի ղեկավարը*: Դրանք սահմանված են տեղական ինքնակառավարման մասին օրենքի 4 գլխում, համաձայն որի՝ համայնքի ղեկավարը՝ հրավիրում և վարում է ավագանու նիստերը՝ օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով, համայնքի զարգացման ծրագիրը ներկայացնում է ավագանու հաստատմանը, հաստատում է աշխատակազմի, ինչպես նաև բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները մի իրականացնում է Սահմանադրությամբ և տեղական ինքնակառավարման մասին օրենքով նախատեսված այլ լիազորություններ (հոդվ. 32):

Օրենքը (4 գլուխ) համայնքի ղեկավարի լիազորությունները սահմանում է նաև ըստ գործունեության առանձին ոլորտների: Այսպես, *ֆինանսների բնագավառում* համայնքի ղեկավարը՝ ա) սահմանված կարգով կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, բ) տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները, սպահովում դրանց նպատակային օգտագործումը, գ) առաջարկություններ է ներկայացնում ավագանուն՝ տեղական տուրքեր և վճարներ սահմանելու վերաբերյալ, դ) ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը և այլն (34 հոդվ.):

Նույն կարգով, Օրենքը սահմանում է համայնքի ղեկավարի լիազորությունները քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության (հոդվ. 33), հասարակական կարգի պահպանության (հոդվ. 35), երկրի պաշտպանության (հոդվ. 36), քաղաքաշինության և հողօգտագործման (հոդվ. 37), կոմունալ տնտեսության և բարեկարգման (հոդվ. 38), տրանսպորտի (հոդվ. 39), առևտրի և սպասարկման (հոդվ. 40), կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների (հոդվ. 41), առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի (հոդվ. 42), աշխատանքի և սոցիալական ծառայության (հոդվ. 43), գյուղատնտեսության (հոդվ. 44), բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության (հոդվ. 45) բնագավառներում: Ընդ որում, Օրենքը յուրաքանչյուր դեպքում առանձնացնում է համայնքի ղեկավարի կողմից տվյալ բնագավառում իրականացվող *պարտադիր լիազորությունները*:

§ 4. Տեղական ինքնակառավարման երաշխիքները

Տեղական ինքնակառավարման խնդիրների արդյունավետ իրականացման կարևորագույն և անհրաժեշտ պայմանը տեղական ինքնակառավարման իրավունքների **երաշխիքների համակարգն է**, որն ընդգրկում է դրանց իրագործումը և իրավական պաշտպանվածությունն ապահովող պայմանների և միջոցների ամբողջությունը: Այն ներառում է **ընդհանուր երաշխիքները** (որոնց թվին են պատկանում տնտեսական, քաղաքական, հոգևոր) և **հատուկ** (քուն իրավաբանական) երաշխիքները:

1. Ընդհանուր երաշխիքները: Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, նրանց իրավունքներն իրականացվում են ուղղակի **սոցիալ-տնտեսական, քաղաքական պայմաններում**, որոնք հանդիսանալով հասարակության և պետության մեջ մարդկանց կենսագործունեության կարևորագույն հիմքերը, կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ներգործություն ինքնակառավարման գործընթացի վրա: Այդ պատճառով որպես տեղական ինքնակառավարման իրավունքների ընդհանուր երաշխիքներ կարելի է դիտել հասարակության **տնտեսական, քաղաքական այն հարաբերությունները և հոգևոր արժեքները**, որոնք ծառայում են որպես տեղական ինքնակառավարման զարգացումը խթանող նախադրյալներ, ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կայունությունը, ստեղծում են իրական հնարավորություններ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը սահմանող նորմերի իրագործման համար:

Տեղական ինքնակառավարման **տնտեսական երաշխիքը** հասարակության տնտեսական համակարգն է, որի հիմքում ընկած են տնտեսական գործունեության ազատության, սեփականության ձևերի (այդ թվում նաև համայնքային սեփականության), բազմազանության և իրավահավասարության, նրանց իրավական հավասար պաշտպանության և այլ սկզբունքները:

Տեղական ինքնակառավարման **քաղաքական երաշխիքները** մեր պետության քաղաքական-իրավական վարչակարգն է, իշխանությունների բաժանման վրա հիմնված պետական իշխանության համակարգը, անմիջականորեն ժողովրդի կողմից, ինչպես նաև պետական իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով իրականացվող ժողովրդաիշխանությունը, իր լիազորությունների սահմաններում տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը և այլն:

Որպես ինքնակառավարման **հոգևոր երաշխիքներ** հանդես են գալիս ամբողջությամբ վերցրած մարդու և հասարակության հոգևոր արժեքների համակարգը, **հասարակության քաղաքակրթվածության և իրավագիտակցության մակարդակը** և այլն: Տեղական ինքնակառավարման մարմինների և պետության կողմից պատմական, մշակութային, ազգային, ինչպես նաև տեղական ավանդույթների և սովորույթների անտեսումը կարող է էապես դժվարացնել տեղական ինքնակառավարման խնդիրների և նպատակների իրագործումը:

2. Տեղական ինքնակառավարման հատուկ (իրավական) երաշխիքները տեղական ինքնակառավարման գործունեության ապահովման իրավական միջոցներն են: Բացի համապետական իրավական ակտերից, տեղական ինքնակառավարման մարմիններն ընդունում են սեփական նորմատիվ ակտեր, որոնք նույնպես բովանդակում են տեղական ինքնակառավարման գործունեության վերաբերյալ իրավական միջոցներ (տեղական ինքնակառավարման մասին դրույթներ, կանոնադրություններ և այլն):

Երաշխիքների նպատակային դերը կայանում է նրանում, որպեսզի իրավական միջոցներով ապահովվեն տեղական նշանակության հարցերի լուծման գործընթացում ինքնակառավարման մարմինների ֆինանսանյութական ինքնուրույնությունը, բարենպաստ պայմաններ ստեղծվեն նրանց իրավունքների պաշտպանության և դրանց ամբողջական իրագործման համար:

Տեղական ինքնակառավարման **իրավական երաշխիքներից** են նաև տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունն ապահովող երաշխիքները, որոնց թվում՝

ա) տեղական ինքնակառավարման մարմիններն ընդգրկված չեն պետական իշխանության մարմինների համակարգում: Դա նշանակում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները չեն հանդիսանում պետական իշխանության մարմինների միասնական համակարգի ստորադաս օղակներ: Այդ իմաստով պետական իշխանության մարմինների և նրանց պաշտոնատար անձանց կողմից տեղական ինքնակառավարման իրականացումն արգելվում է,

բ) տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորումը, նրանց պաշտոնատար անձանց նշանակումը և կադրային քաղաքականությունն ընդհանրապես վերապահված են համայնքների իրավասությանը,

գ) ինքնակառավարման մարմինների և նրանց պաշտոնատար անձանց որոշումները կարող են չեղյալ համարվել միայն դրանք ընդունած

մարմինների և պաշտոնատար անձանց կողմից, կամ անվավեր ճանաչվել դատարանի կողմից.

դ) տեղական հարցերի և իրենց վրա դրված խնդիրների ինքնուրույն լուծման համար տեղական ինքնակառավարման մարմիններն օժտվում են սեփական իրավագործությամբ: Օրենքն ամրագրում է տեղական ինքնակառավարման տնօրինման առարկաները՝ թվարկելով տեղական նշանակության այն հարցերը, որոնք տեղական ինքնակառավարման մարմինները լուծում են ինքնուրույն:

Տեղական նշանակության հարցերի լուծման գործընթացում տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունն ապահովող կարևորագույն իրավական երաշխիք է տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությամբ ամրագրված **ֆինանսատնտեսական ինքնուրույնությունը**:

Տեղական ինքնակառավարման ֆինանսատնտեսական ինքնուրույնության համար կարևոր երաշխիք են հանդիսանում սահմանադրական հետևյալ դրույթները. համայնքի վարչական սահմաններում գտնվող հողը, բացառությամբ պետական կարիքների համար անհրաժեշտ, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է (հոդվ. 105.1), օրենքով պետք է սահմանվեն համայնքների ֆինանսավորման այնպիսի աղբյուրներ, որոնք կապահովեն վերջիններիս լիազորությունների իրականացումը, ինչպես նաև համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման (հոդվ. 106):

Որպես համայնքի պարտադիր անկապտելի հատկանիշներ, օրենքն ամրագրում է սեփականություն և տեղական բյուջե ունենալու նրա իրավունքը (46 և 54 հոդվածներ):

Տեղական ինքնակառավարման մարմիններն ինքնուրույն կառավարում են **համայնքի սեփականությունն**, որը սեփականության այլ ձևերի հետ մեկտեղ ճանաչվում և հավասարապես պաշտպանվում է պետության կողմից: Նրանք իրավասու են կատարել համայնքի սեփականության հետ կապված՝ օրենքով թույլատրված, ցանկացած գործարք: Մասնավորապես, տնտեսական գործունեության իրականացման նպատակով կարող են ստեղծել ձեռնարկություններ, հիմնադրված, կազմակերպություններ, լուծել դրանց վերակառուցման և լուծարման հարցերը:

Տեղական ինքնակառավարման ֆինանսական ինքնուրույնությունը երաշխավորվում է, ամենից առաջ, տեղական բյուջեն ինքնուրույն ձևավորելու, հաստատելու և կատարելու՝ տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական իրավունքով: Այդ իրավունքի ուժով

նրանք սահմանում են տնտեսական կարկեր, տուրքեր, ինչպես նաև դրանց վճարման հետ կապված պատանդություններ:

Նրանք, օրենքով սահմանված կարգով, իրավասու են իրականացնելու նաև **արտաքին տնտեսական** գործունեություն:

Տեղական ինքնակառավարման իրավական երաշխիքների շարքում առանձնակի կարևորվում է օրենսդրությամբ սահմանված **տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների պաշտպանությանը**, ինչպես նաև դրանց խախտումների կանխարգելմանը նպատակատուղված իրավական միջոցների համակարգը: Այդ համակարգում առանցքա-հատուկ տեղ ունի **դատական պաշտպանության** սահմանադրական իրավունքը: ՀՀ դատական իշխանությունը կոչված է նախատեսել և կատարել տեղ ունի **դատական պաշտպանության** սահմանադրական կարգի պաշտպանությանը, որի տարրերից մեկն էլ պետության կողմից ճանաչվող և երաշխավորվող տեղական ինքնակառավարման է:

Տեղական ինքնակառավարման իրավական պաշտպանության երաշխիք է տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց **որոշումների պարտադիր լինելը**: Նշված որոշումները պարտադիր ենթակա են կատարման համայնքի տարածքում գտնվող բոլոր ձեռնարկությունների, հիմնադրվածների և կազմակերպությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների կողմից: Ընդ որում, օրենքը նախատեսում է պատասխանատվություն, որն առաջանում է այդ որոշումները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում:

Տեղական ինքնակառավարման շահերի, նրա իրավունքների իրավական պաշտպանության կորևորագույն միջոց է նաև պետական իշխանության մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ուղղված **տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց դիմումները**: Այդ դիմումները, որոնցում քարձրացվում են տեղական ինքնակառավարման իրավունքների պաշտպանության, սոցիալ-տնտեսական և այլ հարկերի լուծման ժամանակ համայնքների շահերը, ենթակա են պարտադիր քննարկման, որոնց պետք է տրվեն պատճառաբանված պատասխաններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
5-րդ լրամշակված հրատարակություն

КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО
РЕСПУБЛИКИ АРМЕНИИ
5-ое издание, дополненное и переработанное

CONSTITUTIONAL LAW
OF THE REPUBLIC OF ARMENIA
5^d reviewed edition

Հրատարակչական խմբագիր՝ Ա. Կարապետյան
Համակարգչային ձևավորումը՝ Ա. Պետրոսյան

Չափը 60×84¹/₁₆: Թուղթը օֆսեթ:
46 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1000:

Երևանի պետական համալսարանի հրատարակչություն
ՀՀ, Երևան - 0025, Ալեք Մանուկյան 1



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Մայաք-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am